Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԼԿԱՏԻՆՅԻ
•
ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ
•
ԱՌԱՆՁԱՐ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ— 1982

ԳՄԴ 84 Հ1
Թ 652

Կազմող՝ ԱՐԱՔՍՅԱ ՔԻՇՈՅԱՆ

Թլկատինցի.

Երկեր (Թլկատինցի, Լ. Բաշալյան, Առանձար) կազմ. Ա. Քիշոյան։ Առաջաբան՝ Կ. Դանիելյանի.— Եր.։ Սովետ. գրող, 1982. 624 էջ։

Ժողովածուում զետեղված են Թլկատինցու պատմվածքներն ու քրոնիկները, ինչպես նաև «Գեղի նամակներ» շարքը։ Լևոն Բաշալյանը ներկայանում է ընտիր պատմվածքներով։ Առանձարից զետեղված են «Մորուքի սանտրը», «Վշտի ծիծաղը» և ուրիշ պատմվածքներ։

4702080100 (621)
Թ ———————— 82 ԳՄԴ 84 Հ1
705 (01) 82 Ար 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմողի, առաջաբանի և ձևավորման համար, 1982 թ.

ԵՐԵՔ ԴԻՄԱՆԿԱՐ

Թլկատինցին, Լևոն Բաշալյանը և Առանձարն ապրել և ստեղծագործել են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Նրանց ստեղծագործության մեջ ռեալիստորեն արտացոլվել են թուրքական բռնապետական ռեժիմի պայմաններում ապրող արևմտահայության, մասնավորապես գավառահայության կյանքն ու կենցաղը, սովորույթներն ու մարդկային տիպերը: Գավառահայ կյանքի պատկերահանները — այս բնորոշումը ավելի քան բնութագրում է նրանց ստեղծագործական մեթոդը: Ճշմարտապատում, հուշագրական տարրերով լի, կենցաղամոտ պատկերներում կարելի է գտնել արևմտահայ գավառական իրականության հուզիչ, ինքնատիպ, հայացի գեղեցկություններ, որ պահպանվել են մարդկային բնավորություններում ու ճակատագրերում, երկրի, հայրենի հողի զգայություններ, որ թանկ են որպես հոգևոր դրսևորումներ, և վերջապես, ազգային գիտակցության, հոգեբանության ու մտքի էական արժեքներ՝ պատումների ենթաբնագրային ծալքերում:

1

Քարբերդի գավառի Թլկատին գյուղում է ծնվել արևմտահայ գավառական գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Հովհաննես Հարությունյանը, որ հետո, հայրենի գյուղի անունն առնելով, սկսեց աշխատակցել պոլսահայ պարբերական մամուլին: «Գեղի մարդու հետ ու գեղի մը մխոտ երդիքներուն տակ ապրելու ճակատագիր մը այսօր ալ վաղն ալ հոգուս

ննենուքը կրմնա...»,— գրում էր Թլկատինցին[1]: Բանասիրությունը Թլկատինցու համար նշել է ծննդյան երեք թվական՝ 1850, 1858, 1860: Գրողի կենդանության ժամանակ երաշխավորված է եղել 1860-ը: Մեծանալով մի խեղճ հողագործի ընտանիքում, Հովհաննեսը շուտով տեսնում է չքավորության ու մոայլ եսասիրության ավերումները հենց իր հայրական տանը: Նախական դպրոցի աշակերտ էր, երբ մեռավ հայրը: Մայրը՝ տասնապատկելով սիրո զգացումը զավակների հանդեպ, Նոր Գեղի դպրոցն ուղարկեց որդուն՝ ուսումը շարունակելու: Բարեբախտություն եղավ: Այստեղ սյցելեց Քարբերդի մեծահարուստներից մեկը և լսելով Հովհաննեսի «Տեր ողորմյան»՝ վերցրեց իր հետ քաղաք՝ հոգալով ուսման ծախքերը: 1875-ին հիմնադրված Սմբատյան վարժարանում Թլկատինցին սովորեց երկու տարի: 1878-ից արդեն ուսուցչություն էր անում Ջնքուշ գյուղի գիշերօթիկ դպրոցում: Առաջին թղթակցությունները «Մասիսին» ուղարկել է 1879-ին: 80-ական թվականների սկզբներին աշխատում էր Քարբերդի առաջնորդարանում, ապա վերաբացված Սմբատյան վարժարանում, 1887 թվականից՝ Ազգային կենտրոնական վարժարանում մինչև իր եղերական մանը՝ 1915-ի մեծ աղետին:

Դեռ Սմբատյան վարժարանում ուսանելու տարիներին Թլկատինցին հրատարակում է «Թռչնիկ» վերնագրով ձեռագիր շաբաթաթերթը: «Մասիսում» Փառնակ և Հ. Հարությունյան ստորագրություններով տպագրած թղթակցությունների նյութը երիտասարդ ուսուցիչը քաղում էր Քարբերդի շրջակա գյուղերը կատարած ճամփորդություններից: Ուղեգնացական այդ ակնարկներով էլ նա սկսեց իր գրական գործունեությունը: «Քարբերդ և շրջակայք», «Դատմա վանքը», «Այցելություն Աբդլ Մսեհ վանուց ի Մասքառ», «Բալու», «Ճամփու տպավորություններ» ակնարկներում ցոլանում են զավառի կյանքը մոտիկից գիտցող շնորհաշատ գրչի առավելությունները: Գունեղ ու հայացի տեսողությունը՝ ճնարական մեղմություն և հույզի առատություն են ստեղծում նույնիսկ այնտեղ, ուր ուղեգրողը, թվում է, շատ է մոայլ և իրատես: Մինչդեռ մանկական հիշողությունները խոնվում են շուրջը, անդին՝ հովասուն և լուսառատ տարածությունների երջանկությունը ծփում է բնաշխարհիկ խանդաղատանքով:

Թլկատինցին մոայլ իրականության հոգսերից է պատմում՝ ունենալով միանգամայն կայուն այն համոզումը, թե դպրոցն է ազգային բարեբախտության միակ և անխախտ հենարանը: «Ամառին նոր արմաղանը» սիմվոլիկ պատկերում գրողը պարզում է ազգային փրկության իր ծրագիրը. «Դուք կրնաք ֆրֆցնել հարուստը, որ առատ տվչության մը զոհողությունով տոհմային դպրոցներու թիվը բարձրանա, դպրոցներ սակայն, որ անկախացված ու ազատ ըլլային ամբոխային ախտավարակ ազդեցություններեն. կփրկվեր այս ազգը *միայն ատ պայմանով*»,— ասում էր ուսուցիչը Արև-Արմաղանին: Եվ սա Թլկատինցու համոզումն է: Ազգային դպրոցը՝ կփրկե երկիրը: Գյուղացիական դեմոկրատիան պարզում էր իր համակրանքը գրչի և ուսման հանդեպ ոչ առանց մի հատուկ դիտավորության: Նրա կարծիքով «ամբոխային ախտավարակ» տրամադրություններն ու մտածումներն են շեղում մարդկանց «հայավայել, խաղաղ զարգացումից», և որ միայն այդ զարգացումը կարող է ապահովել ազգային փրկության ու տնտեսական վերաշինության ուղիներում մաքառող ժողովրդի սոցիալական ապագան:

«Քարբերդ և պանդխտություն» հոդվածում Թլկատինցին վերլուծում է պանդխտությունն առաջ բերող սոցիալական հանգամանքները և ցույց տալիս փողի ավերակող դերը գյուղական տրնտեսությունների կործանման ու օտար հորիզոններ չվերթի ելած գյուղացու բարոյական դիմահեղման գործում: Քաղաքի դրամատիրոջ և գյուղացու միջև հաստատված հարաբերությունը հողազրկության հետևանք է: Պարտամուրհակով գյուղացին փորում է իր գերեզմանը: Նահապետական համայնական ինքնօգնության բացակայությունը գյուղացուն հարկադրում է վերցնել պանդխտության ցուպը:

Այս թեմաներով գրած «Վերջին տեղը» (1901), «Ես կատարեցի իմ պարտքս» (1904), «Պատկերին տղան» (1908), «Գյուղացի կիները» (1907), «Կուլիկ ու վարժապետը» (1913), «Ախ Հոիփս, հոգիս...» (1914), պատկերներում պանդխտությունը դատապարտող հայացքը գեղարվեստական իրացում է ստանում՝ փոքրիկ ողբերգությունների անսփոփ տեսարանների մեջ, տեսարաններ, որ գրողը ուրվագծում է զարմանալի գունագեղությամբ ու անեզր թախիծով: «Ես պիտի ըսեմ, որ մարդիկ կան, կպարին արևին տակ մեր գեղին մեջ, որոնք ողջ ողջ թաղողը մեյ մեկ շեն քաղաք շինած կըլլար»,— գրում էր Թլկատինցին Մալկարացի Կարոյին «Գեղի համակներում»: Ցնցոտի խեղճությունների մոտով անցնող

[1] *Թլկատինցին և իր գործը, Պոստոն, 1927, էջ 340։*

ֆոդոֆալորին, որ արեւին է գնում պատմելու երկրի զարհուրանքը, ճողոպրած գյուղացիներն ասում են. «Աչքովդ տես անա, որ մեզ վրա չոր ոսկորն ու կաշին մը զատ ալ ոչինչ չէ մնացել: Կը մեռնի՞նք, կը մեռնի՞նք...»: Ծով թշվառություն, աղքատություն, փակ դռներ, անարդարության խրախճանք ու մոլեգնություն: Արևմտահայ գյուղը Թլկատինցու գրչի տակ ստանում է իր իսկատիպ- ներշմարիտ կենդանագրումը: Անա Բվիկ տեսնեն («Վերջին տեղը») լքված ու խեղճ, ծերունական աղոթքի հույսով ապրող՝ սրա նրա դռանը՝ «ճարյուրին մոտեցած մազ մորուքով մեկը»: «Հին ունևորեն բան մը չի մնացեր հիմա»: Երկու-երեք տղա ուներ. ոչ ոք չիմացավ, թե ինչպես և ուր պանդխտեցին: Հարսները լքեցին և մնաց ինքն իր հետ՝ կապուտիկ աստծուն ուղղած աղոթքների անվերջ մրմունջով: Բրշակի պատը փլվեց. Բվիկ տեսնեն հողի տակից կտոր-կտոր հանում և քթոցի մեջ էր տեղավորում թոռնիկը՝ գերեզմանոցին պահ տալու համար:

Մուտեցի Կարապետի և Լուսիկի կործանված սիրո պատմության մեջ («Ես կատարեցի իմ պարտքս») գյուղական դաժան ստորությանը հակադրված է պանդխտածի անտարբեր օտարությունը և նույնքան դաժան եսամոլությունը: Առողջ ու մաքուր մի սեր բրտորեն ծաղկաթափ է լինում, որքան էլ վերջում որպես թե «պարտքից ելնելով» Կարապետը փորձում է շտկել գործած սխալը: Զոհ գյուղական թեթևաբարո բամբասանքի, նա օտարության մեջ կորցնում է ամեն ինչ՝ այն պարզ նախնականն ու բնականը, որ Թլկատինցու կարծիքով գյուղի մարդկանց ամենամեծ հարստությունն է: Պանդխտության բարոյական վնասները, հողալքումի ամենօրյա փաստերը, երկիրը ամայացնող ոսկու տենդը, անգութ վայրագություններից խուսափող թշվառությունների խելահեղ վազքը՝ դեպի դուրս, դեպի Ամերիկա՝ գյուղացուն ուղեկցող սոցիալական անխուսափելի դժբախտություններն են: «Տուները պարպված են, կպարպվին, այսօր ամայացած վանդակներու ձևը առած են, որ վաղը իրենց տեղերուն վրա անպետ հողակույտերու վերածվին»:

Պանդխտությունը ամուսնությունների նոր ձև է մտցրել Քարբերդի գյուղերի մեջ: Ամերիկայեն Քարբերդ նշանվել ուզողը նշանառուի ծախքը՝ հետն էլ երիտասարդական տարիների նկարը, ուղարկում է իր հարազատներին: Միջնորդները «պատկերին տղայի» գովքը ուղեկցում են հեռավոր ու անմատչելի ափերում դղյակնե- կառուցած գործարարի հարստության առասպելական չափերն ուր-

վագծող զրույցներով: Շատով որը, կամ կիսաորը մի աղջիկ՝ առաջարկությամբ ծաղկող մարմնով ու դեմքով, մի խումբ կանանց ուղեկցությամբ եկեղեցի է տարվում. «Ամերիկա խրկվելիք հարսնացու մը է եղեր»: Ցիրանի անուշներով օրորուն, կապույտ ջրերից անդին իր երջանկությունը որոնելու ելած գյուղական աղջնակին դիմավորում է 40-ին մոտ ձախավեր մի դեմք, ուղտի սապատ ունեցող, տասը տարի առաջ ծերացած ու մաշված մի գործավոր:

Շողերը՝ հորեղբոր համաձայնությամբ ու ստիպմամբ դարձյալ հեռակա նշանված, մեկնում է Ամերիկա և այստեղ միայն հասկանում կատարած քայլի ճակատագրական վրիպանքը («Ա՜խ, Հռի՛փս, հոգիս...»): «Հոս ամեն օր կմեռնիմ ու թաղող ալ չունիմ»,— գրում է նա մորաքրոջ աղջկան՝ Հռիփսիմեին: «Կրակին դեմ բռնված միսի կտորին պես կեփվիմ, կխորովիմ»: Տունը, գյուղը, հայրենի հանդն ու դաշտն է միտքը, իր երազները, սերը և մաքուր ու պարզ երջանկության կարոտը, որ քրքրում է հոգին ու սիրտը: Վանտված ու անպատված հոգու խոր տառապանքը միացած է հայրենի եզերքի գեղեցկություններին ու անփոխարինելի մաքրության երազանքին: Ոչինչ շարժե հարստություն, նյութական ապահովություն այն դժոխքի մեջ, որ տունեն դուրս է. «Աղջիկ մը թող ուզածը, սիրածը գտնա, թող ձմրան ձյունին վրայեն բոբիկ քալե»: Շողերի հուսահատությունը գյուղական գեղջկունու առաքինության և քաղաքային վարք ու բարքի ընդհարումից է ծնվում: Այստեղ նա չի կարող ապրել, այստեղ ամեն ինչ խարդախված է և կեղծ, այստեղ մաքրություն, պարզ ու ջինջ հոգիներ չկան: «Վե՜ր՛ջը. վերջը, շատ չանցած ձուկերուն բերանը հեք այս հարսնուկը»:

Գեղջկուհիների անեզր համբերության ու կյանքի զրկանքները տանելու կարողության մեջ Թլկատինցին տեսնում էր հողի մարդկանց ուժն ու հմայքը: «Սգավոր, հացի մը կարոտվը կքված, կղզված բերաններ. աղվոր, ազնիվ քուրիկներ». ձեր կյանքը՝ համակ տառապանք, ձեր հոգին՝ աղոթքի մեջ, ձեր երազները՝ պանդուխտների սրտերում:

Գյուղական վարժապետին իր ցավերը պատմող Կուլիկը բնութագծում է դառնաղի այն ճակատագիրը, որ բաժին է ընկել պանդուխտի ընտանիքին, և նույնքան անավոր սառնությունը, օտարացումն ու խորթացումը իր որդու, որ ելել քաղաք է գնացել՝ «կենկան, շոնուխին» թողնելով ծայր թշվառության ու աղքատության մեջ: Եվ ինչն է զարմանալի,— ասում է Կուլիկը,— գյուղերում բո-

լորն են այսպես, մարդ չկա, որի փեշն ու գոգնոցը «սը կրակներեն» բռնված չլինի: «Ես որ գիտեմ բոլոր գեղն է էս բոցերուն մեջ»: Թե պարտքատերերից մեկը դռնից է դուրս ելնում, մյուսը երդիկից ներս է մտնում. «ալ չի դիմացվիր»: Երեք տարի է հարսը բոբիկ է, երեխաները՝ տկլոր: Մայրական «ամակս» էն ժամանակ հալալ կանեմ նրան, եթե «երկիր դառնա ու օնախես մուխ հանե»: Հուսահատեցնում է սրտառուչ, անկեղծ, միամիտ այս խոսքերին որդու ուղարկած պատասխանը. «Տիկին, ձեզի հետ եղող նա մյուսը կնոջ հետ, որ հարս կանվանեք, աշխատեցեք դուք ձեզի համար օգնել ու օգտվել»: Քաղաքի հանդեպ անսքող ատելությամբ էր նայում պանդուխտների բարոյական անկումն ու մարդկային ոչնչացումը դատապարտող գրողը: Իր հուշերի մեջ («Միշտ նույնը») խոստովանում էր, որ քաղաքը իրեն անգամ օգտակար չի եղել. «Ան գեղեն աս քաղաքը՝ սարդի կարն համփորդություն մը, նշանակալի վերելք չեղավ ինձի համար»: Եվ այսպես, նշմարիտ ժողովրդասերը պանծացնում էր խոնարհ հարկերի անբիծ առաքինությունները, հողի հետ մտերմացած մարդկանց խեղճության մեջ տեսնելով նաև աստվածահաճո գեղեցկություններ:

Թլկատինցու գրականությունը միայն այս շերտերից չէ, որ գոյանում է: Իրականության տխուր և աշխառու անարդարությունները դատապարտող գրողը գյուղի մարդ է հայտնապես, ամուր կապված այն ամենին, ինչ մերձեցնում է լեռների ու փապարների մեջ ապրող, հեռավոր ու անդնդախոր ձորերի պոնկներին թառած բնական ու գեղեցիկ մարդկանց, կուսական անտառներին, դաշտերին, արևին, սրսփուն ու կապտակոնակ արշալույսներին, շոգ կեսօրներին, վեհաշուք ու հանդիսավոր վերջալույսների խաղաղություններին:

Բազմախորհուրդ ու թանկ են նրա հոգուն ծղրիդի երգը, հրնձաններից բարձրացող բույրերը, հողի արգասաբեր ու խանդակաթ մշուշոտությունը, շվաքի տակ պառկած հողագործի հոգնած ու արդար նինջը, աղբյուրների կարկաչյունից ու գորտերի համանվագից ժխորած ամառվա տապը: «Այն կողմը քաղաք կա, կրսեին, որ գեղեն տարբեր աղվոր տեղ մրն է»: Սակայն երբեք այդ քաղաքը շրկարողացավ գրողի մեջ արթնացնել սիրո և գրգանքի զգացումներ: Նրանը՝ գյուղն էր, քիչ հովվերգական, անուշ ու սիրելի գյուղը, որ լուսահոգի մոր կերպարանքի նման մնում էր սրբասուրբ ու թանկ:

«Տանիքին աղջիկը» հովվերգության մեջ (որ շատ կողմերով

բնութագրում է Թլկատինցու ոճի բնարական ինքնատիպությունն ու գեղեցկությունը) գյուղն ու գյուղական իրականությունը իսկապես որ գունանկարված են պաշտամունքին հատուկ ներքին ուժի խոր դրսևորումների մեջ: Մղեղոտ դարավանդներին իջած իրիկունների տրտմության մեջ լողացող մշակների աղվոր դեմքերը, «հարսները հոգնածի նազոտ կոտրտունքներով», կեսուրները՝ իրենց խոստումներով, և զվարթությո՜ւն, զվարթությո՜ւն, զվարթությո՜ւն դաշտեն տունը այսպես, տունեն դաշտը ծծդերես», ամե՜ն, ամե՜ն ինչ՝ և՛ հալալ վաստակը, և՛ իրիկնահացը, և՛ նինջը տանիքի վրա, երազներն ու սերը, որ ձգվում են վերջալույսից հետո աստղային երկրնքի տակ, բերում են հովվերգական ու գունեղ պատկերներն իրոք այն ռեալության, որ գոյություն ունի տառապանքից ու զրկանքից անդին՝ դժբախտություններից և դաժանություններից հեռու, երբեմն-երբեմն երևացող գյուղական անանց երջանկությունների տեսիլքում: «Ժամերը կսահին մեղմով, հարդագողը, յոթնաղբյուրը ալ նույն տեղերը չեն երևնար: Իրիկվան թեթև հովերը հոգնած, ուժաթափ հոն կանաչ տերևներուն ծոցը, թաղին ինացողներեն աղվորին ծոցը, իրենք ալ աղաչողի փրսփսուկներով, հանգիստ մը կփնտրեն»: Արթուն է միայն տանիքի աղջիկը՝ աչքերը քույրերի կողմը, ականջը՝ կալերի, հոգու մեջ գիշերի ամբողջ մթությունը կուտակած, սպասում է անձկորեն, սպասում է ամբողջ էությամբ սիրած տղայի կանչին, կալվորի կանչին, որպեսզի ձայնը իր այրված հոգու մեջ խրե ու «այնպես նետե իր գլուխը բարձին»: Քույրերի խորհուրդն է հարցնում, ի՞նչ անել, ի՞նչ անել, փախչե՞լ, թե համակերպվել, ինչպես քույրերը՝ երկուսն էլ «բռնի նշանվածներ՝ չսիրածներուն հետ»: Ու խեղճ աղջիկը կուրծքը հովերին դեմ, ամբողջ գիշեր արթուն, երազների ու համբույրների մեջ սիրած տղայի հետ, վառվում է ու վառվում աստղալույսի տակ՝ տանիքի վրա:

Հովվերգության գեղեցկությունը գոյանում է ոչ միայն մաքուր ու պարզուկ հոգիների անբարբառ տվայտանքներից: Պատկեր առ պատկեր գյուղական բնանկարից մինչև կալվորի կանչին գողունի սպասող աղջկա հոգու փոթորիկը, գրողը կառուցում է հովվերգությունը: Եվ չի տարակուսում, որ դա է իսկական գյուղական կյանքը: «Տունդարձը» բնարական գյուղանկարում դարձյալ ու դարձյալ անաղարտության ու գեղեցկության ուժով է հմայում գրողը՝ մարդկանց տունդարձի հրավեր կարդալով: Դեպի ներսը՝ լու-

բյուններեր, ծունկ-ծնկի անփոփուկ կյանքի, մեղվափեթակի տառում պարապության հովիտները: Բավ է արդեն: Ծերուկ մայրը երկար պահեց ձեր ճամփան. դաշտի հեռավոր ծայրերից և տղմոտ վրտակների ծանծաղ ափերից այս կողմ. «Ալ ձմեռ է, դեպի ներս, ու գինին առատ, ամբարները լիք ձեզի կսպասեն, ձեզի համար են անոնք, ձեր հալալ վաստակին դուք եք տերը»: Այսպես գուրգուրան խանդաղատանքի մեջ լողում է նրա սիրտը դեպի կարոտյալները ու հեռավորները, դեպի հողի աշխատավորը, որ ավելի քան ապերջանիկ է ու զրկված, որ չի վայելում, որ տառապում է գրասի նման, և հացամբարն էլ դատարկ է հոգու պես: «Գյուղական ցավերը ոչ մեկն են, ոչ ալ երկուքը. եթե կտանին ու կդիմանան կրսեք՝ ալ հեղ մի այսպես են վարժվեր, հոս միսը ոսկոր եղած՝ ոսկորն ալ երկաթի պնդություն առած է»,— ա՛յո, դա ճիշտ է, ավելացրեք դրան ավելի զարհուրելին՝ ազգային գոյության ամբողջ մղձավանջը, և, այնուամենայնիվ, կա գյուղական երջանկությունը, որ սկիզբ է առնում սարվորի երգից և գնում անհետանում սուրբ այգաբացի լռություններեր վայելող ջրվորի արցունքոտ հայացքում:

Թլկատինցին դրանում համոզված է: Դրա վրա է խարսխված նրա ժողովրդասիրական ռոմանտիզմը: Քնարական մի այլ վերհուշում, որ կոչվում է «Ըսե ինձի ի՞նչ կա», վերակենդանացնելով անցած-գնացած պատկերներ և հենց նոր կորցրած մոր լուսեղեն դեմքը, գրողը մղվում է անդրշիրիմյան աշխարհը՝ անիմանալին իմանալու ոչ այն ծարավի բաղձանքով, որ հատուկ է միստիկներին, այլ մոր հետ մեկ անգամ ևս հանդիպելու անհուսորեն խոր ցանկության մղումով, կենդանի, իրական մի ցանկություն, որ ամենուրեք իր հետ է, քուն թե հարթմնի, երազում թե մշուշոտ ցրնորումների մեջ: Թլկատինցու գյուղասիրական զգացումները այսօրինակ զգացումներ են: Սիրո մեջ ոչ մի հավակնություն չկա և առանց այդ սիրո հնարավոր չէ ապրել: Այս է գրողի հանապարհը ուղենշող լույսի միակ աղբյուրը:

2

Լևոն Բաշալյանը ծնվել է 1868 թվականին, Պոլսում: Սովորել է տեղի Պերպերյան վարժարանում: Դեռ պատանի, սկսում է զբաղվել գրական գործունեությամբ: 1884-ին Ա. Արփիարյանը

հրատարակում է «Արևելք» օրաթերթը: Լ. Բաշալյանը այն երիտասարդներից մեկն էր, որոնք համախմբվեցին Արփիարյանի շուրջ և թարմ ու հասարակական տեսակետից կարևոր լիցք հաղորդեցին նորասկիզբ գրական-ռեալիստական շարժմանը:

1880—90-ական թվականներին Բաշալյանը գործուն մասնակցություն է բերում «Արևելք», «Մասիս», «Հայրենիք» պարբերականների հրատարակության աշխատանքներին: Առաջին հոդվածներն ու նորավեպերը, որ տպագրվեցին «Արևելքում» և «Մասիսում», երևան բերին օժտված մի երիտասարդի, որ շուտով համընդհանուր ճանաչում գտավ:

1896-ին Լ. Բաշալյանը թողեց Պոլիսը և անցավ Եվրոպա: 1897-ին Լոնդոնում հրատարակեց «Նոր կյանք» գրական կիսամսյա հանդեսը, որին աշխատակցում էին պոլսահայ վարանդի շատ գրողներ ու արվեստագետներ:

Տնտեսական ծանր պայմանները Բաշալյանին հարկադրում են թողնել գրականությունը: Լոնդոնից անցնելով Բաֆու, նա շուրջ քսան տարի աշխատում է նավթային ընկերության մի գրասենյակում, հետագայում դառնալով այդ ընկերության դիրեկտորը: 1920-ին հաստատվում է Փարիզում, խմբագրում ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Լը Ֆուայե» ամսագիրը:

Լ. Բաշալյանը վախճանվել է 1943-ին:

Լևոն Բաշալյանը ասպարեզ իջավ արևմտահայ գրական-ռեալիստական շարժման սկզբնավորման շրջանում: Սա անցումային շրջափուլ էր: Մի ամբողջ տասնամյակ պահանջվեց հասնելու համար ռեալիզմի այն որակին, որ կապվում է արևմտահայ 80-ականների գրական-գեղարվեստական գործունեության ձեռքբերումների հետ:

Լ. Բաշալյանը, որ այդ ժամանակ մեկ-երկու նորավեպի հեղինակ էր տեսականորեն ճիշտ ըմբռնելով գրական պրոցեսի յուրօրինակությունները, գործնականում ենթարկված էր վիպական դրպրության խորունկ ազդեցությանը: Նրա առաջին նորավեպը՝ «Հմայաթափ», անշուշտ թեմատիկ նորությամբ էր միայն աչքի ընկնում: Բայց «Միլվունային թոռնիկը» իր նամակներով, սիրահարությամբ, չղջային տագնապներով, բանաստեղծություններով և խենթությամբ ռոմանտիկ պատկերասրահից քաշված-հանված և Զյումպյուլյանների ապրանքը նետված մեկն էր, որքան էլ «իրականին ըմբռնումը» և «ինքնատիպ արտահայտությունը» նրան, համենայն դեպս,

օժտել էին ինչ-որ կենդանի և ռեալ գծերով: «Ղալաթիո Բեսդը» և «Դրացուհին» նորավեպերում դարձյալ կերպարի ու սյուժեի կառուցման ռոմանտիկական մտածողությունն է տիրապետողը: Արմենակ Սիմոնյանը, որ բողոքականների «Ռոպերտ Գոլեեն» է ավարտել և տիրապետում է չորս լեզվի, կիսահաղ ու մուրացիկ կյանք է վարում՝ «Ղալաթիո Բեսդի» աստվածահաճո և աղքատախնամ հիմնարկության դռները մաշելով: Մինչդեռ կարող էր մեծահամբավ և հարուստ մեկը լինել, եթե համաձայներ բողոքական դառնալու հորեղբոր առաջարկն ընդունել: Ֆանատիկ համառությունը հպարտ անձնասիրության սերմեր է ցանել նրա հոգում: Նա պատրաստ է նույնիսկ ծովը նետվել, բայց չկատարել հորեղբոր ցանկությունը: Այդ բարեկիրթ և աղքատ երիտասարդի անկոտրում կամքը ուղղակի զարմացնում է: Սակայն նույնքան էլ տարակուսելի է, թե ինչ հոգեկան, բարոյական ու հասարակական արդարացում ունի այդ կամքը: Գրողի համար խնդրի այս կողմը պարզապես գոյություն չունի: Նա միայն փորձում է Արմենակի թշվառությունը որպես պարսավանք նետել բողոքականների դեմքին: Չէ՞ որ դուք «Բեսդի» ճակատին գրել եք՝ «Աստված սեր է» կամ «Ամեն ինչ որ կընեք՝ Տիրոջը փառքին համար է». միթե՞ այդ խեղճ երիտասարդին աղքատության մատնելով կամ կործանելով՝ դուք չեք ոտնակոխում ավետարանի պատվիրանները:

Անդրանիկ նորավեպերում Բաշալյանը դեռ չունի հստակ սոցիալական հայեցություն. նա վճռականորեն դեմ է կյանքի անարդարություններին և ողբում է թշվառների ու խեղճերի ճակատագիրը: Առաջին լուրջ նորավեպը գրողը տպագրում է 1890 թվականին «Մասիսում, «Խաչախնին» վերնագրով: Զոհրապի «Այինկա» (1892) նորավեպից էլ առաջ, Բաշալյանը ստեղծում է բուն աշխատավորական խավերի ընդերքից ելած խաչախնու կերպարը՝ կորովի և համառ, որպես լինում են սեփական բախտը իրենց ձեռքով կոռող մարդիկ, ըմբոստ ու համարձակ-ժողովրդական վրիժառուների նման, մի մարդ, որին թշվառությունը մղել է գոյապաշտպան պայքարի՝ հացի ու փրկության համար: «Փախստյա» ծխախոտի առևտուրը Համբարձումին շատ բան էր սովորեցրել. «Բեժի դետերուն» դեմ ելնելու վտանգը՝ վեցհարվածյանն օգտագործելու վարժությունը. մեծ գերդաստանին շաբաթական մեկ ոսկի հասցնելու մտահոգությունը՝ խաչախնու «մասնագիտությունը»: Նա գիտե, որ հացը և մահը վինում են «Պոլսու թաղերուն» մեջ: Երկինքը բարեգութ է միայն նրանց

նկատմամբ, ովքեր վերցնում են իրենցը և փոխարենը ոչինչ չեն տալիս:

Ծխախոտի հսկա հակը հաղթ ու ջլապինդ թիկունքին, կեսգիշերային թանձրամած խավարի մեջ, առաջանում է նա Գուզկունճուքի ձորը մտնելու համար: «Կեցիր»,— բղավում է «դեսերուն մեծը»: «Համբարձումի համար երկվայրկյան մի անցավ, անուելի երկվայրկյան մը: Այն հանկարծական սրությամբ, զոր միտքը կունենա վտանգի նմանօրինակ վայրկյաններու մեջ, տեսավ իր բռնվիլը, իր քառասուն օխա ծխախոտին համար 80 օր բանտը պառկիլը, որովհետև ուսկից պիտի կրնար վճարել գրավյալ փախստյա ծխախոտի յուրաքանչյուր օխային համար երկու միճիտի կանոնադրական տուգանքը, և այդ 80 օրվա միջոցին՝ իր ընտանիքին շարչարանքը և գիշերները անոթի պառկիլը գուցե»: Ու ծնվում է վճռական որոշումը. «— Ճամփա բացեք, որ անցնիմ,— ձայնում է նա: Թե չէ, մեկիկ-մեկիկ ձիեն վար կիջեցնեմ ձեզի»: Վեցհարվածյանի որոտը խառնվում է վիրավոր թուրքի ցավագին աղաղակի հետ: Համբարձումը չի հասցնում երկրորդ անգամ կրակել: Թուրք պահնորդի հարվածը նրան գետին է տապալում: Մեռնում է խաչախնին «իր ծխախոտի բեռան տակ ծածկված»:

Փողի և աղքատության «տարածությունից» դուրս Բաշալյանը ոչ միշտ էր կարողանում հասնել տիպականության կամ ռեալիստական համոզչության: «Դրացուհին», «Այս է եղեր», «Վերջին համբույրը», «Անժել» նորավեպերը աչքի էին ընկնում թեմատիկ սահմանափակությամբ և առնասարակ գեղարվեստական բովանդակության աղքատությամբ:

Անծանոթ հույն աղջկա մահը նորավեպի համար նյութ է դառնում պարզապես մի սենտիմենտալ հոգեվիճակ պարզելու համար: Մի երիտասարդ ֆիզիոլոգիական կրքի շնչինությունն է հայտնաբերում բարոյական անկումից հետո: Կինը մեռնում է սիրած տղամարդուն վերջին անգամ համբուրելով: Անժելը մենաստանային կյանք է վարում, որովհետև ինքնասպան է եղել նրա նշանածը: Պատմություններ էին սրանք, որ թեև ինչ-որ սոցիալական շեշտ ունեին, բայց և այնպես սուբյեկտիվ ու տեղային էր դրանց բովանդակությունը, այնպես ամուր կապված միջադեպի և ժամանակի հետ, այնպես լրագրային ու հետաքրքրաշարժ, որ բացառում էին մեծ ընդհանրացումների հնարավորությունը: Բացի դրանից, ռեալիստական նորավեպի գեղարվեստական ձևերը այստեղ տակավին չէին

գատորոշվել ռոմանտիկականից. մեծ մասամբ գրական էֆեկտի համար խախտվում էր սյուժեի և կոմպոզիցիայի միասնությունը: Մեռնող կնոջը փրկելու է հրավիրվում անպայման այն բժիշկը, որ նախկինում ռոման է ունեցել նրա հետ, կամ թե մեծ ու խորունկ զգացումները, երբ դրանք պատասխան չեն գտնում, պիտի հասցնեն հոգեկան ու մտավոր խանգարման և այլն: Սրանք ռոմանտիկական դպրոցի այն «խորունկ» հետքերն էին, որ ինչպես պնդում էր Բաշալյանը, պետք է «բերվեին և ի բաց վանվեին» նոր գեղարվեստական մտածողությունից:

«Սյուզենիի վարպետը» կենցաղանկարը այսպիսի մի նախամտք ունի. «Պարզ պատմություն մըն է ընելիքս,— գրում էր Բաշալյանը:— Պատմություն բուն բառը չէ. մտացածին ու երևակայական դեպքերու այնպիսի ընկալյալ գաղափար մը կա այդ բառին մեջ, որ ճշդիվ չհամապատասխաներ իմ ներկայացնելիք իրական պատկերիս: Վերջ ու սկիզբ չունի. շատերուն ալ հետաքրքրություն չազդե գուցե: Մեր ընտանեկան խոնարհ հարկերու մեկ պարզ դրվագն է»: Գեղարվեստական պատկեր, որ ասես պոկված է իրականությունից, ուր չկան գրական պայմանականություններ, անվերջավոր և անսկիզբ մի պատմություն, որ կյանքի հրաշարժ ու բազմաձիգ երևույթների ինչ-որ օղակն է, նախորդների հետ նույնքան կապված, որքան հաջորդների հետ, և դրանցից չտարբերվող, ընդհանրական ու աշխարհ, պարզ, սրտամոտ և հուզող, ինչպես ինքը՝ կարիքի տեսքը ու միանգամայն որոշակի, որովհետև տվյալ առարկայականն է վերցնում: Հին կենցաղանկարն է սա, որ նորավեպի ազդեցությամբ ձեռք է բերել ոճական նոր գծեր, իսկատիպություն, որ նիշտ է, լուսանկարչական է թերևս, բայց որը վերառնում է հենց ընդհանրական երևույթները և մի ինչ-որ տեղ կապվում ճշմարիտ ռեալիզմի հետ: Նորավեպ-կենցաղանկարի ժանրը ձևավորվում է այս շրջանում և լայն տարածում գտնում մասնավորապես գավառական գրականության ներկայացուցիչների մոտ (Թլկատինցի, Ա. Հարությունյան, Գ. Հարությունյան, Գ. Անդրեասյան և այլք):

«Պալբխնի Գևորգ» հոյակապ կենցաղանկարում Բաշալյանը նույնիսկ նկարում է այն պատկերը, որ ձկնորսը գծել էր իր նամակի սկզբում՝ «սիրտ մը դաշույնով ծակված»: «Որչափ ալ իրականին ըմբռնումն ունենանք,— ասում էր գրողը,— երբեք չպիտի կրնանք գրել նամակ մը այդքան ազդեցիկ ու այդքան անկեղծ, երբեք չպի-

տի կրնանք այդ ձկնորսին զգացումները հայտնել նույնիսկ վայրագ բնականությամբ, ու իր սերը բացատրել իր հասկցած եղանակով»: «Վայրագ բնականություն», որ արվեստագետի առաջ պարզում է «մեկ ամբողջ դասակարգին ներքին աշխարհը... այնքան ճշմարտությամբ»: Գրական պայմանականությունների ժխտման այս տենդենցը լուսանկարչական ռեալիզմի առաջ մղման պահանջից չէր բխում. «Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի, ժողովրդյան կյանքին ծառայելու համար»— տեսական-էսթետիկական դրույթի մի այլ արտահայտությունն էր սա, որ աշխատավորական դեմոկրատիայի հասարակական մտայնությունն արտահայտող գրողների աչքում ժողովրդամոտ գեղարվեստի ստեղծման նախադրյալի ձև էր առնում, քանզի այդ գրողները, իրոք, մղվում էին կրճատել գրականության և ժողովրդի միջև ընկած տարածությունը: Կոպտորեն գեղեցիկ և ավշառատ գավառական գրականությունը, որ առաջին քայլերն էր անում «Մասիսի» և «Հայրենիքի» մեջ, շուտով իր «ծաղկազարդի օրերն էր» ապրելու: Գավառական գրողների քանքարավոր խումբը նույնիսկ վիճարկելու էր առաջնության տեղի համար: «Գրեթե քարը նեղքելով ու մեջեն ծնելով» գավառական գրականությունը փորձում էր իր ինքնուրույնությունն հաստատել՝ դիմադրելով «կենդրոնական, տոնմային և օտար համազգային գրականության ազդեցությանը»: «Արմաշի ուխտագնացությունը» ուղեգրական ակնարկներում, որ տպագրվեց «Հայրենիքի» մեջ 1892 թվականին, Բաշալյանը «Պալբխնի Գևորգի» վայրագ բնականության ստեղծագործական սկզբունքն է կիրառում՝ գավառի պատկերը գծելու համար: Գրողին այդ ուղղության հետ կապողը, անշուշտ, աշխարհայացքային համոզումներն էին: 1880-ական թվականների վերջերին Բաշալյանը Հնչակյան կուսակցության մեջ է մտնում: Դա շրջադարձի սկիզբն էր. այնուհետև մամուլը, գրականությունը նրա համար դառնում են գաղափարական պայքարի ասպարեզ: Երևան է գալիս գրողի հեղափոխական դեմոկրատիզմը մի հեղափոխական գունավորմամբ, որ, ինչպես ասում էր Ա. Զոպանյանը, «իրազեկներուն որոշապես հասկանալի» էր: «Խաչախնին» նորավեպից կարճ ժամանակ անց Բաշալյանը տպագրում է «Տերտերին ուխտը» հայտնի պատմվածքը, ուր արդեն ակներև էր հեղափոխական մտայնությունը:

Մի կտրիճ որսորդի մասին էր պատմում գրողը: Թորոսենց Ակոբը «այինկաճի» էր միաժամանակ. արհամարհում էր թուրք պան-

ճորդներին և փախստյա ծխախոտը or ցերեկով լեռներից ցած էր իջեցնում «ձիուն վրա կարմիր դրոշակ մը հաստատած»: «Իր հրացանը իր սիրուհին էր, գրեթե միշտ անկից անբաժան, ու կզրուցեին թե մինչև իսկ գիշերը մեկ ձեռքով հրացանը բռնած կ'քնանար, պաշտամունքի պես բան մըն էր անիկա, ու վառոդն էր խունկը զոր կմատուցաներ իբր նվեր այդ սրբությանը»: Բնավորության ու կերտվածքի նկարագրով Ակոբը շատ էր տարբերվում Համբարձումից. սա մի լեռնական զինվոր էր՝ ուժի և իրավունքի տեր. կարող էր պատժել և պատժում էր թուրքերին, որովհետև զենք ու զինակիցներ ուներ: Ազատ էր և ազատության սովոր. զինով էր ու երիտասարդ, խոլ խենթություններ կարող:

Հայրը՝ Թորոսենց Հանի Արքին աղան, «զավկի անզուսպ» եռանդը չափավորելու մտքով, ամուսնացնում է նրան արևերես «գյուղացի աղջկա մը հետ»: Սակայն ուժեղ էին «վայրի արուի» բնազդները. լեռներն ու անտառները քաշում-տանում էին նրան, և վերստին «ազատ ու աստանդական» կյանքը Ակոբին առնում էր իր գիրկը մի բռնի փարումով: Մնում էր վերջին միջոցը գործադրել: Եվ Արքին աղան Սրբազանի միջնորդությամբ որդուն ճանանա է ձեռնադրում: «Ակոբը ուրիշ բան չգտավ ընելիք, բայց եթե տղու մը պես լալ: Այդ լացը իր պարտությունն էր»: Բազմանշանակ ու ենթիմաստային էր այս նկատումը. «— Ուխտ ըրե, որ ալ ձեռքդ հրացան չառնես»: Ասես թե կտրում էին դաստակները. «— Կուխտեմ, Սրբազան, ըսավ, ու աչքերը լեցան»:

«Կնոջ ընել չկրցածը եկեղեցին ըրավ... իր բաղդին համակերպվեցավ, և անվեհեր որսորդեն ու խաչախեիեն տխուր ու անհնշան մարդ մը մնաց, որ կնունք կներ ու մեռել կթաղեր»:

Երեք տարի անցավ: Մի անգամ, անտառում, «գյուղացի որսորդի մը անվարժ ու անհարտար» զբաղումը տեսնելով, Ակոբը մոռացավ ուխտը և տերտերի կոչումը, վերցրեց շլմորած գյուղացու ձեռից հրացանն ու միանգամից տասներկու տատրակ «պառկեցուց»: Մինչ հյուր եկած Սրբազանը հանույթից խեղդվելով խժռում էր տատրակները և հետաքրքիր էր իմանալ, թե ով է որսի տերը, Ակոբը պարզում է գաղտնիքը. «Ուխտեդ կազատեմ բեզի,— ասում է Սրբազանը:— Բայց ասկից ետքը պատվական կտոր մը զարնելու ըլաս նե, Առաջնորդարանը դրկելու չմոռնաս»: Հեղեղատը ճեղքել էր ամբարտակը. ազատության վերադարձը շառաչյուն ու վայրագ մի բան ուներ իր մեջ. լեռները և անտառները արձագանքում էին

այն «հիմարական աղաղակին», որ դուրս էր հորդում կապանքներից արձակված հոգին.. «Ու սկսավ դողդողալով պագնել իր հրացանին բունը, փողը, բլթակը, ու իր խոլական հրճվանքին չկրնալով ատով հագեցում տալ, ափ մը վառոդ տարավ և սկսավ ուտել ձեռքեն թափթփելով, պեխերուն ու մորուքին մեջ խառնելով, մինչ արցունքի լայն կաթիլներ կուգային խառնվիլ փոշիին հետ և իր բերնին վրա, իր ռունգերուն բոլորտիքը սև խմոր մը շաղվել»: Սա այն եզակի պատկերներից մեկն էր, որ գրողը մաքսանենգորեն անց էր կացնում ցենզորական «դետերի» աչալուրջ և խուզարկու հայացքը վարագուրելով: Տեր-Մեսրոպի խենթ հափշտակության և մոլեգին կրքի մեջ՝ ազատաբաղձ ոգու հարատև ծավալման բազմախորհուրդ գաղտնիքը կար, ըմբոստության երշանկությունը, ուժի վայելքը, հաղթանակի ցնծությունը և խոլական եռքը այն մեծ զգացումի, որ ծրնում է ազատության կարոտը: Փրկության և հույսի այս ցնծագին աղաղակի մեջ սովերագծվում էր ժողովրդական ապստամբի վիթխարի ուրվանկարը:

Երբ 1898-ին Լոնդոնում Բաշալյանը հրատարակեց «Ցեղին ձայնը» պատմվածքը, մի ամբողջ «դարաշրջան» էր արդեն բաժանում նրան իր նախկին գաղափարական ոգորումներից: Մորթոտված մի ժողովուրդ հարություն էր առնում «բնության վերակենդանության հետ»: «Աշխատանքին լծված էին, ազատարար ու մխիթարող վաստակին... Ապրիլ կուզեին կոր ու պիտի ապրեին»: Ջարդերի սարսափները շատ բան փոխեցին մարդկանց հայացքներում և հոգեբանության մեջ: Ազգային զարհուրելի դրաման նրանց մղեց հիշտ գնահատելու «ստորին, անընդունակ, ապիկար ցեղի մը» բարբարոսական ուժը և վայրագությունը: Եվ սակայն մեջտեղ բերվեց գիտության և առաջադիմության տեսակետը: Բարբարոսության դեմ՝ խելք, վայրենության դեմ՝ խելք, յաթաղանի դեմ՝ խելք: Մանրբուրժուական դեմոկրատիան վախեցած էր ազգային սպանդից և ոչ միայն վախեցած. նա էլ էր կրել հարվածներից ծանրագույնը. և չնայած դրան, մղվում էր ոչ թե ըմբոստության, այլ հաշտության, ոչ թե վրիժառության, այլ խաղաղ, անարյուն հեղափոխության: Դասակարգի թուլությունը և գործնական անհարակությունը իր արտահայտությունն էր գտնում նրա գաղափարախոսների ազգային փրկության ծրագրերում:

3

Առանձարը (Միսակ Գույումճյան) ծնվել է 1877 թվականին, Արևմտահայաստանի Թալաս բնակավայրում, առևտրականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Կարինի Սանասարյան վարժարանում, ուր սովորել է 5—6 տարի, ապա վերադարձել ծնողների կալվածքը՝ Բաղդադի մոտ գտնվող Ֆելուճե գյուղամաղամ[1]: Այստեղ ևս սովորել է 3—4 տարի, հետո թողել հայրական տունը, անցել Եվրոպա, ուսանել Մյունխենի և Ցյուրիխի համալսարաններում: 1907 թվականին ավարտելով Ցյուրիխի համալսարանը, նա մի կարճ միջոց դասավանդել է Ալեքսանդրիայի (Եգիպտոս) հայկական դպրոցում, իսկ 1908-ից տեղափոխվել Ադանա և մինչև կյանքի վերջ աշխատել տեղի ազգային վարժարանում որպես ուսուցիչ և տեսուչ: Այստեղ էլ վախճանվել է 1913 թվականին:

Գրել սկսել է ուսանողական տարիներից: Առաջին ակնարկը տպագրել է 1899 թվականին Կահիրեի «Արշալույս» լրագրում: 1901-ից աշխատակցել է Թիֆլիսի «Մուրճ» ամսագրին, ուր և տպագրել է իր բոլոր նորավեպերը:

Այն, ինչ Առանձարը գրում էր արևմտահայ կյանքի մասին՝ անողոք ռեալիստականությամբ էր աչքի ընկնում: Նրա նորավեպերի երգիծական-զավեշտական շերտերը գոյանում էին Անատոլիայի խորքերում տեղի ունեցող անհեռակայելի անարդարությունների և օրինազանցությունների ռեալիստական վերարտադրությունից: Կյանքն էր այդպիսին: Անհավանական թվացող իրական դեպքերի մեջ ողբերգական-զավեշտական շատ բան կար, և երիտասարդ գրողը պարզապես առնում էր կյանքի ողբերգականը, որ պատճառների և հետևանքների շղթայում երևում էր թուրքական կառավարչապետության օրենքների, իրավական նորմերի ամբողջ նողկալի անհեթեթությամբ: Երգիծելու կամ զավեշտաբանելու կիրքը չէ, որ առաջ էր մղում գրողին, այլ՝ խուլ ու համր մի երկրի հասարակական զարհուրելի կյանքը, մարդկային իրավունքների ու պարտականությունների խեղված, հոշոտված, բռնաղատված և անօրինության արյունոտ դատաստանին հանձնված ճշմարիտ վիճակը:

[1] *Ստեփան Զորյանը «Վշտի ծիծաղ» (Երևան, 1947) ժողովածուի առաջաբանում վկայելով Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», հայտնում է, որ Առանձարը ծնվել է 1876-ին, Տիգրանակերտում: Բանասեր Ա. Հակոբջանյանը «Առանձարը» գրքույկում հավաստում է, որ գրողը ծնվել է Թալասում, 1877-ին: Տե՛ս Ա. Հակոբջանյան, Առանձար, Երևան, 1972, էջ 6):*

Առանձարի նորավեպերը բացում էին Թուրքիայում ապրող հայերի ազգային ու մարդկային գոյության ծանր պայմանները, ներկայացնում այն խոր դժբախտությունը, որ դարեր շարունակ բաժին էր ընկել հայրենի հողին կառչած երկրի իսկական տերերին: «Գյավուր» ասված հասկացությունը սև խարանի պես դաղում էր հայ մարդու ճակատը: Ուր ուզում ես գնա, որտեղ ուզում ես ոտքդ դիր, եթե հայ ես, ուրեմն ասված բեզ պատժել է, կարգն ու օրենքը, «զապթիյեն» և «կոմիսերը» քո դեմ են, մարդիկ, երեխաները, շներն անգամ լցված են ատելությամբ ու թույնով՝ հավատիդ, տեսքիդ, ապրուստիդ նկատմամբ:

1905 թվականին, Թիֆլիսում, առանձին գրքով հրատարակվեց Առանձարի պատմվածքների ժողովածուն («Վշտի ծիծաղ»), որպես առաջաբան ունենալով «Վշտի ծիծաղ» ավանդություն-պատմվածքը:

Այն խորհրդանշական ծալքեր ուներ և թարգմանում էր արևմտահայոց սարսափելի ճակատագիրը: Դարեր շարունակ անելանելի, անպատմելի, անազորույն տառապանքներից խենթացել էր հայը, կորցրել ոգու արիությունը և դիմանալու կարողությունը, նա ժրպտում էր ցավից, անօրինականությունից, կորցնում բանականությունը զարհուրելի սպանդի անվերջորեն երկարատև մղձավանջից:

1906 թվականին «Մուրճում» հրատարակած «Երկու պատկեր» պատմվածքը, «Բուրդի վանականությունս» (1902 թ.), «Կախաղանին ամուսնություն» (1902) «Մորուքի սանտրը» (1905) նորավեպերը, ներկայացնում էին Թուրքիայում ապրող հայության ազգային հոգեվարքի պահերը: Առանձարի հերոսները խեղճ մարդիկ են, բոլորովին անմեղ երեխաներ կամ իրենց գոյության ուղեծրի ետևից ընթացող հնարամիտներ, որոնք պաշտպանվում են միայն ենթարկվողի հնազանդությամբ, հավատարմության ուխտով, աղոթքով, արծաթով: Նրանց մեջ ուժ չկա, նրանք կորցրել են ամեն ինչ՝ և՛ պատիվ, և՛ տուն, և՛ երեխա, և՛ ինքնասիրություն, և՛ մոլեգնություն ու չարություն: Հոգու և մարդկային խղճի ինչ-որ անկյուններում նրանց մեջ ժամանակ առ ժամանակ գլուխ է բարձրացնում ցասումն ու ատելությունը, բայց նրանք վախենում են անգամ մտածել այդ մասին: Եվ տղամարդը լալիս է աննեռությունից, սեփական խեղճությունից, չարի ձեռքի ուժեղ և անվրեպ հարվածից:

«Երկու պատկեր» նորավեպը հատկանշական է այդ տեսակետից:

Գյավուր-Բոզան... սա քաղաքի այն «հարազատ մասն է», ուր

ապրում էր թուրֆ խուժանը: Մամիկը գրկել է սիրասուն թոռնիկին: Մանրիկ, ճպռոտ աչքերով եռանկյունի լայնանիստ քթով, աղտից սևացած մորթով փոքրիկ Դուրսունը երեք տարեկան է, «բայց արդեն բեկ տիտղոսը ստացած է իր մամիկեն»: Նայում է փոքրիկ որկրամոլը արևի շիկակարմիր սկավառակին և պահանջում այդ «աղվոր սեխը» բերել իրեն: Ֆաթման փորձառու աչքով տեսնում է թոռնիկի «հոյակապ ախորժակը» և գուրգուրանքով պատմում նրան արիության և ուժի մասին, որ անհրաժեշտ է «ոսկիե վիթխարի սեխին» տիրանալու համար:

Ֆաթմային մոտեցող խոշոր, սև շունը ամենօրյա ծանոթ է՝ աղբակույտերից: Թոռնիկի լացը զսպելու համար, Ֆաթման մի հիպոտ է դնում նրա բռան մեջ, «... իսկ լակոտը այս զենքով ավելի խրախուսված, իր անզոր բազուկներու ամբողջ ուժը կբափե տքալով ու քիթը վեր քաշելով»:

— Ջա՛րկ, մի վախնար, զա՛րկ սա շան գյավուրին:

Շունը կաղկանձելով փախչում է:

— Թևերդ զորանան, կտրին ձագս, թևերդ զորանան:

Ու հայտնվում են Ֆաթմայի մյուս թոռները, որ «գյավուրի լակոտի մը ծեծելով, քթեն-բերնեն արյուն բերելով» խլել էին նրա հավաքած չոր խոտն ու փայտի կտորտանքը:

— Ապրիք տղաս, շատ ապրիք...:

Երբ գալիս է տանտերը, Ֆաթման մանրամասն պատմում է թոռնիկների արիասիրտ սխրանքների մասին, մանավանդ Դուրսունի, որ կարողացել էր «շան գյավուրին» փախցնել: Իսկ հոնա՞ն:— Այդ իրիկուն կոտորածի ավարը բաժանել էին, և նա 20 ոսկի էր ստացել մարդկանց մորթելու համար:

Ջիբուխի ծխի միջից, նրագի աղոտ լույսի տակ երևում էր հոնայի կերպարանքը՝ Ղուրանը ձեռքին: «Փառաբանե անուն քու տիրոջդ՝ բարձելույն...»: «Դուրսը մութ գիշերի մեջ շուներու ամբողջ ռնմակը կատաղորեն կհաչե»:

Դիպուկ, կերպավորող ստվերագծերով Առանձարը մարմնավորում է ատելության ու մութ բնազդների այն միջավայրը, ուր ծնվում էր և մշակվում ցեղասպանության բարոյականությունը:

Այստեղ, այս կողմում, այն հայ ընտանիքն է, որ կոտորածներից փրկվել է, ճիշտ է, բայց մնացել է չոր տափի վրա նստած, մերկ ու քաղցած. «Օր առաջ սատկեինք, ազատեինք» ավելի լավ չէ՞ր,— մտածում էր վարպետ-արհեստավորը՝ «վշտակոծ գլուխը կուրծքին վրա հակած:

Երբ սրա տղան, 12-ամյա Արամը լալով պատմում է, թե ինչպես են թուրք լակոտները իր վրա հարձակվել, ծեծել ու ձեռքից խլել հավաքած փայտը, մայրը՝ Մարթան, ասում է.

— Ախ, հոգիս, աստուծմե գտնան, ինչ կրնանք ընել, աստուծմե գտնան:

Մշեցի գաղթական կանանց սևավորիկ լացի ձայնը, որ գալիս էր դրսից, քանդեցին տանտիրուհու սրտի կապանքները: «Ու կրկին փղձկելով կսկսի արտասվել, ձեռքերը իրար միացուցած և աչքերը հառած առաստաղին, ուր մոտ գերանների միջև սարդերը հապճեպ իրենց ոստայնները կհյուսեն վաղվան որսին համար»:

Մղձավա՜նջ, մղձավա՜նջ, մղձավա՜նջ...

«Բուրդի վաճառականությունս» և «Մորուքի սանտրը» նորավեպերում ընթերցողը կարող է գտնել այս նույն մղձավանջի շարունակությունը:

1895-ի մայիսն էր: «Անծանոթ սպառնալիք մը կբարդվեր օդին մեջ»: Լեռներից իջած ժանտատեսիլ մարդկանց խմբերը շրջում էին շուկաներում և «սպառազեն ու դաժան նայվածքներ կնետին մեր ապրանքներուն և մեր վրա»: Հուսահատ երկյուղի մեջ դողում էր հայությունը: Վերջապես փոքրիկը փրթավ ու քշեց-տարավ հույսն ալ, հուսահատությունն ալ»: Ամեն ինչ կորցրին, ոչ միայն ապրանքը, այլև խանութի տախտակներն անգամ: Գրիչը հոր արշինի հետ փոխած երիտասարդը փրկվեց: Դրամագլխի մի մասը, որ նույնպես հրաշքով կարողացել էր ազատել, արյունոտ օրերից հետո, փորձեց շահեցնել առևտրական մի ձեռնարկի մեջ, որ հեռանկարային էր թվում: Բայց դրա համար հարկավոր էր Կարինից Ճիզրե հասնել և սկսել բրդի առևտրի գործը: Փառք աստծո, 95-ի շարքերից հետո հայերին երկրում ազատ երթևեկելու արտոնություն էր տրվել:

Անցագիր ստանալու պահից սկսած մինչև Սղերդի ոստիկանատան մեջ վճարած հերթական կաշառքը, երիտասարդ առևտրականը անցնում է գեհենական մի ճանապարհ, օրերով նստում մութ ու լվոտ բանտերի մեջ, հալեցնելով դրամագլուխը՝ մարդկանց ազատ երթևեկելը հսկող կոմիսերների և ոստիկանների ագահ արծաթասիրությունը բավարարելով, տառապում քաղցից, անօրինությունից, արհամարհանքից, անիծում բրդի վաճառականությամբ զբաղվելու միտքն էլ, որոշումն էլ: Ճանապարհին ամեն օր և ամեն ժամի,— ասում է երիտասարդը,— «կհանդիպեինք «Համիդիե հեծելազորքերու, որոնք ամբողջ օրը ձիու վրա՝ դաշտերն ու ուղիները կշափ-

չրփեին, «վնասակար տարրերը» չնչելու, հայ գյուղացիները ցորենի, գույքի, անասունների ծանրաբեռնութենեն ազատելու և երկիրը միշտ այդպես խաղաղ պահպանելու պաշտոնով»:

Այն մանրամասները (մշտապես զավեշտական), որ պատմում է երիտասարդ առևտրականը՝ թուրք կառավարչության և օրենքների անհեթեթ վայրենաբարոյությունը ներկայացնելով, երկիրը ճարակող համատարած անօրինության ու հալածանքների չնչին մասն է: Մարդկային տարրական իրավունքների բացակայությունը Թուրքիայում, հայ ազգի դեմ եղած կենդանական ատելությունն ու թշնամանքը, բռնությունները, մորթելու սովորույթը և արյամբ չհագենալու մոլեգնությունը և այս բոլորովին անպաշտպան հայերի կամավոր հնազանդությունը, խեղճությունը, տագնապն ու վախը, Առանձարի պատկերած իրականությունը անմիջաբար կապում ու նույնացնում են Լենկթեմուրյան մղձավանջային օրերի հետ, խենթացած սեբաստացիների անհար ու ոռնացող թափորի հետ:

«Մորուքի սանտրը» նորավեպի ներքին շերտերը լի են այդ նույն անելանելիության ու սարսափի ծանր զգացումներով, վշտի ծիծաղով, հայ մարդու դժբախտ հակատագրի մռայլությամբ: «Տունքս-տեղս կուտամ դատ չեն բանար... Թուրքիո մեջ» — առածանքման այս խոսքը ձևակերպվում է Կարապետի մեջ, երբ արդեն անցել էին մորուքի մի սանր գնած թուրք կրոնավորի անաբեկիչ զբաղարտության համար 20 ոսկի վճարելու և մի կերպ բանտից փրկվելու ճանապարհը:

Առանձարը խորապես ճանաչում էր գավառահայության կյանքը:

Նրա գրական և հրապարակախոսական ելույթները լայն արձագանք էին գտնում արևելահայ միջավայրում: «Սրտատրուփ բսպասում էինք այդ ամսագրի («Մուրճ») համարներին,— պատմում է ժամանակակիցներից մեկը,— նրա բովանդակության մեջ Առանձարի անունը որոնում և ուղղակի հափշտակությամբ կարդում նրա պատմվածքները»:

Սրամիտ զվարթությամբ էին աչքի ընկնում Առանձարի այն պատկերները, որոնք նվիրված էին ժամանակակից գրական կյանքի հարցերին: «Նորավեպին նորավեպը» և «Հոսհոսն ու ինտելիգենտը» երգիծական պատումները նա տպագրեց «Մուրճի» 1901—1902 թվականների համարներում: Դրանք «գրական դասեր» էին, որ տալիս էր երիտասարդ գրողը իր երիտասարդ բարեկամներին, ծաղ-

ռաքանելով իրապաշտ ուղղությանը «հետևող» վեպերի ողբերգական վերջավորությունը և հոսոսի ու ինտելիգենտի նույնքան «ողբերգական» ծանոթությունն ու կարծիքների, ըմբռնումների, լեզվական տարակարծությունների զավեշտական մանրամասները:

Արևելահայ և արևմտահայ գրական-հասարակական մերձեցումն Առանձարի համար չափազանց կարևոր խնդիր էր: «Մեր գրականության շուրջը» հոդվածում նա զարգացնում էր տեսակետներ, որոնք անգամ այսօր չեն լիցքաթափվել: «Փոքրաթիվ ազգի մը երկու մեծագույն հատվածները,— գրում էր Առանձարը,— փոխադարձաբար անծանոթ կմնան իրարու գրականության:... Չեմ հերքեր բնավ քաղաքական բաժանումի մեծ ազդեցությունը այս չարիքին վրա, սակայն մյուս կողմե չեմ ալ ընդունիր, թե երեկվան սահմանները կրնան իրարմե այս աստիճան հեռացնել ընդհանուր ավանդություններով և ընդհանուր հիշատակներով հինցած բազմադարյան ազգի մը դրացի երկու մասերը»[1]:

Հասարակական լայն շահախնդրություններ հողի վրա էր ինում Առանձարը արևելահայ և արևմտահայ գրական-հասարակական մերձեցումների հարցը: Նա այն տեսակետին էր, որ արևելահայերի մեղքով է տեղի ունեցել և ունենում անշրջելի խորացումը ազգի երկու խոշոր հատվածների միջև: Ցույց տալով, թե ինչ մեծ ազդեցություն է թողել արևելահայ գրականությունը «թուրքահայ ժողովրդի բախտին վրա», նա առաջարկում էր ճանաչել արևմտահայ իրականությունը: Ռուսահայերը «... եթե ոչ բոլորովին անգիտացած, գեթ շատ հարևանցի, շատ մակերեսային կերպով ճանչցած են թուրքահայ ժողովրդին ազգային ներքին կյանքը, կրթական ու գրական զարգացման ամբողջ ընթացքը»[2]: Անտեղյակությունը ծնում էր անտարբերություն, անտարբերությունը՝ մոռացում, մինչև որ դարձյալ արևմտահայերի շանքերով 1880-ական թվականներից վերսկսվում է ռուսահայերի հետաքրքրությունը իրենց եղբայրների նկատմամբ: Առանձարը ցավով էր նշում, որ ժամանակ առ ժամանակ արթնացող շահախնդրությունները դյուրությամբ մոռացվում են և դաղարում երկու հատվածների միջև եղած փոխադարձ կապերը: Այդպես են ոչ միայն հասարակական, այլև գրական կապերը:

---

[1] «Մուրճ», 1903, №1, էջ 39։

[2] Նույն տեղում, էջ 41։

Արևելահայ ընթերցողին ծանոթացնելով «Վաղվան գրականության» հարցարանի շուրջ ծավալված վեճերին կամ լեզվաշինության արևմտահայ կողմնորոշումներին, Առանձարը համոզված էր, որ դրանով իսկ ինչ-որ չափով տեղաշարժում է արևելահայ և արևմտահայ մերձեցումների հարցը:

Փոքր-ինչ ճիշտ չէր պատկերացնում երիտասարդ գրողն այդ խնդրի սոցիալ-պատմական և գաղափարական ետնախորքը: Արևելահայ և արևմտահայ մերձեցումը եղել էր ու կար, միայն թե այս դեպքում անգիտացվում էր այն փաստը, որ մերձեցումը պետք է գնար միավորման ճանապարհով՝ բաղաքական միևնույն օրիենտացիայի ընդունման և գաղափարական համակիր դիրքորոշումների ճանապարհով, տվյալ դեպքում Ռուսաստանի և ռուսական դեմոկրատական մտքի հետ բաղաքական և հոգևոր դաշնություն ստեղծելու ճանապարհով:

Առանձարն արևմտահայ մանրբուրժուական դեմոկրատական թևի այն գրողներից էր, որոնք իրենց ստեղծագործություններում բերում էին ժողովրդական հույսերի և սպասելիքների ռեալիստական ձևակերպումները, ճշմարիտ հայրենասիրությամբ ողողում արտերը և տառապում համատարած մղձավանջից դուրս գալու ուղիների բացակայության գիտակցությունից:

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԹԼԿԱՏԻՆՅԻ

ԵՐԿԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԷՄԻԼԷ

Ամերիկացի միսիոնարուհիի տիպար մը

Ամերիկացի օրիորդ մըն է, ամերիկյան բարքով և միսիոնար աղջկան մը իսկատիպ դաստիարակությամբ։ Կիրակի օրեր, կաշիե փոքրիկ պայուսակ մը ձեռքը, տուն-տուն կպտտի, ուր եթե պատուհաններուն մեջ չտեսնվիր սիրուն գլխարկը ճակտին վրա բերած, ձայնը անտարակույս կրնա լսվիլ, որ կամ ճչող սուր երգ մըն է, բարակ երգարանեն բացված կամ մեծաշառաչ քրքիջ մը։

Միծաղ, զվարճություն սա ամերիկյան քաղքենիներուն դեմքին ու շրթունքին վրա, մեր գավառացիներուն համար հիմարական բաներ՝ կթվին։ «Ինչո՞ւ ուշացար մեզի գալու, քո՛ւյր Եղիսաբեթ» — «Հյուր ունեի, բամբիշ»,— կպատասխանե Հոութի Ընկերութենեն հայ հարսնուկ մը, որ իր ձեռքին տակ կազմված միության մեկ գործոն անդամուհին է։ Էմիլե տնոր պատասխանին բառերուն առաջին վանկը, տակավին առաջին ձայնը չրմբռնած՝ քահքահն արձակած է, քսան, երեսուն հոգիներով միացած խնդուք մը, տեսակ մը դաշն ժխոր։ Բայց դուք ըսեք, թե անակնկալ ի՞նչ կար կնոջ ըսածին, ըսելու ոճին մեջ։

Կիրակի օրերը շարունակ կպտտի, բողոքական տուներեն զատ կայցելե նաև այն լուսավորչական ընտանիքներն, որոնց հերիք է մեկ պառավին հանդիպեր է. այդ տեղերն ալ ահա բացած է պզտիկ ու ոսկեզօծիկ Ս. Գիրքն ու երգարանը, որ շատ ավելի իր գեղեցիկ պայուսակին զարդն ըլլալու հարմարած են, քան իր տաշեղե ձեռքին և որթի ճյուղի նմանող մատներուն։ Կերգե ու կկարդա շեշտելով ուժգնապես այնպիսի բառեր, որ պետք չունին շեշտի, հին Կտակարանեն ա՛յն տեսակ հատվածներ, որ ընտանյաց մեծին ու պզտիկին ականջեն կախվելու երբեք հարմարություն չունին. սակայն Էմիլեի համար այդ գիրքերուն կողքին տակ ծալված անսուրբ թերթ չկա բնավ։

Ուր նստի, հոն ժամեն պակաս չի մնար. ընթերցումներեն ու աղոթքներեն հետո երբ տակավին քանի մը վայրկյան կրնա հաշվել կիրակնօրյա դասերուն հասնելու, այդ քանի մը րոպեներն ալ կգործածե իր ունկնդիրներուն պատմելով Ամերիկայի պատմություններ, իր եղբորը տաղանդին կամ իր փեսին արժանիքներուն վրա։

25—30 տարիներե ի վեր միևնույն քաղաքին մեջ ապրելով՝ անծանոթ չեն մնացեր իրեն տեղային բարքերը։ Հայերեն սորված է գրքերու վրա, պոլսեցի հայուն ու Խարբերդցի ասորիին հայերենը հավասարապես կրնա հասկնալ, բայց մեր աշխարհաբարին չի հավնիր։ Կատուն կուտե մուկը, երկու գոյականներուն վրա ալ հոդ կա եղեր, ինչպե՞ս հասկցվի, թե ո՞վ զո՛վ կուտե, պիտի ըսեք, թե օ՞ր մըն ալ չանցուց մտքին թե անգլերենի դասին ինքն ալ այդ ճիշտ, այդ անպիտան հոդը կգործածե՞, երբ պետք կըլլա իրեն ըսել տնի քեզ իդս տնի մաուս։ Իր լոնկֆելլոն տարբեր պիտի գործածեր։

Տարի՞քը.— ատոր վրա որոշ բան չեմ գիտեր։ Առաջատամներեն, որ փիղի ժանիքներեն ալ երկար են, թիաձև, անջատ բան չէ կարելի ենթադրել։ Ճակտին գծերուն, պաղ կապույտ աչքերուն նայելով 35—40-ը հավանականություն մըն է։

Ո՛րչափ ալ քարոզչուհի մըն է և ուսուցչուհի՝ աղջկանց վարժարանին մեջ, Էմիլե ալ վերջապես աղջիկ մըն է։ Բոլորովին անհրապույր չպիտի գտնենք զինքը, եթե գիտնանք, որ ամիսն անգամ մը, անտարակույս՝ նորաձևության մեկ սուղ նշույլը ունի վրան։ Գլխարկը, շրջազգեստը շարունակ կփոխվին, առուծախին մարդ չի խառնվիր, մեծկակ գումար մը ամսական կընդունի իր հորմեն։

Էմիլե այդ ճոխ հանդերձեղեններուն մեջ պարուրված՝ կեքևի միշտ պատուհաններուն փեղկերուն ետև, փողոցին լայնքն ու նեղքը ոտքին տակ կմաշին, քալելու ատեն նաղուն սիգանք մը ունի զոր, կըսեն աջ ոտքին կաղության կպարտի, ու սոթթված քունքերեն ու ծոծրակեն կերևցնե այնչափ մաս միայն, որ ինքն ալ հայելիին առջև շատ աղեկ հասկցած է, թե դեռ շատ հրայրքներ կբռնկցնե սրտերու մեջ։

Չկարծեիք սակայն, թե անտուն կկու մըն է ինքը։ Ո՛չ։ Իր հորը բնակարանին մեջ ամերիկյան ճաշակով կահավորված սենյակ մըն ալ ունի։ Այդ սենյակն է, որ ամենեն խորհրդավոր երևույթը ինքը-

կայացնե, երկինքն աշխարհի վրա, կույսը պառավին մոտ, գանկ մը գլխարկի մը հետ, որու ի տես իր իսկ ամենեն մտերիմն ալ կվարանի եղեր անուն մը տալ սա աղջկան, որ դուրսը հանրային հարաբերությանց ու քարոզներուն մեջ երիտասարդությունը շար հասակ մը նկատել տալու փողար եղած է, ինք սակայն գերեզմաններեն հանված երիտասարդի գանկեր ձեռք ձգելով անբացատրելի գորովով մը իր գրասեղանին թանկագին զարդը կպահե, ու անոնց կից դրված է միևնույն գրասեղանին վրա իր ծաղկազարդ գլխարկներեն ամենեն սուղն ու սիրունը։

Աշակերտուհիներ, զորս իբրև մեղավոր արձանագրել տված է իր սիրական Շնորհումին, որուն միայն հավատացած է կյանքին գաղտնիքները, այս սենյակն առաջնորդելով՝ ծնկաչոք աղոթել կուտա անոնց, վարագույրները վար առնված՝ դուրսեն լույսի փշուր մը չերևցնելու հոգածությամբ, ապա ինքն ալ երկար աղոթքով մը կարձակե այդ անհարկի մեղավորները իրենց կապանքներեն և անոնց կպատվիրե, որ երթան ու պատմեն ինչ որ տեսան վարժուհիին սենյակը։

Գացեք, կըսե, դուք ալ ձեր ընկերներուն հասկցուցեք, որ վարժուհին ստույգ և ստույգ ս. հոգիին ընկերությունը կվայելե, գիշերները ցայգ անոր հետ կլուսցնե, մեղավոր աշակերտուհիներու դարձին համար անոր շնորհքը կխնդրե ու վերջապես ապահով է, թե պիտի կրնա խոսք հասկցնել։

Վարժուհին այդ պահուն ցույց կուտա իր բարձն ու անկողինը, որ ամբողջովին ջուր կտրած են։ Շատ լաց լացեր է, շատ առատ արցունք թափեր է Լուսնթագին ու Արյուսակին համար, գիշերը վերջապես պատասխանն ընդունած է աղոթքն, ու ըսած է Շնորհումին, որ այլևս մեղավորներուն ցանկեն ջնջե անոնց անունը։ Շնորհում վարժուհի իր ներքին գրագիրն է. պարտի-պահանջեի ահագին գումար մը այս աղջիկը առտու իրիկուն անութին տակ հետը կպտտցնե, պարտքի սյունակին մեջ մեղավորը նշանակված է, պահանջեին մեջ գրված են աղոթել սկսողներու անունները։ Ի՞նչ խորհիլ ստուգիվ սա արտակեդրոն բնավորության համար մարդ կհավատա, թե՝ այս ամերիկուհին եթե խարուկահանդեսներու օրերուն մեջ ծնած ըլլար, մեծ գործեր պիտի տեսներ ապահովապես։ Հիմակ ալ, մեղքը ըսողին վիզը, անլուր պատիժներ կգործադրե այն աղջկանց վրա, որ կամ աղոթելու ատեն աչվընին բաց պահած են կամ նորեն

աղոթելու ժամուն գլուխնին պետք եղածին չափ վար չեն խոնարհած։

Հայ վարժուհիներուն վրա բարձրեն կնայի, նույնիսկ իր հայրենակից պաշտոնակցուհիներուն հետ այնպես կվարվի, ինչպես բամբիշը աղախինին հետ։

Կպատվիրե աղջիկներուն չամուսնանալ բնավ. եթե ամուսնանալ հարկ էր, քրիստոնյա երիտասարդներուն, բողոքական տղայոց հետ։ Եվ մեր վերջին խոսքը հիմակ սաչափ հարցում է, թե գրասեղանի գանկոսկրը, որուն հետ իր գլխարկը պսակած կթողու գիշեր և ցորեկ, ամուսնության մը քարող ըսել չէ՞ր միթե. խե՜ղճ աղջիկ, գերեզմանին մեջ վարուժան կփնտրե, միևնույն ատեն տունմնա աղջկան մը կատաղի հուսահատությամբ՝ ամուսնանալու հուրը պահողին սրտին մեջ եղյամ կցանե։

1893

«ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ»

(Պատկեր գավառական կյանքեն)

Անցած ամառն էր, դեռ կարծես անցած օրն ըլլար։ Ի՞նչ տաք, տեր աստված, ի՜նչ տաք. գոնե սա հուղկահար ճանճերեն հեռու՝ բարձրկեկ զով տեղ մը գտնեինք, ուր քիչ մը հով խաղար։ Իզուր մաքրություն պիտի փնտրեիր, ըսի՞, որ մոտակա ավան մը գացած էի այն ատեն, աղտոտ՝ գլխեն մինչև ոտքը պիտի ըսեի, բայց ոտքերը բավական զերծ ապականություններե, Արածանիեն կլվացվին։ Ըսեմ, որ հասկնաք, թե ինչու միայն երեք օրը երեք տարվան ծանրությամբ հոգիս ճնշեց։

Էոշյուրի վարձակալության օրն էր, ու վարձակալները փութկոտությամբ հետամուտ կըլլային գիտնալու, թե վերջապես որո՞ւ մնաց Հավավը, Սղամը և այլն։

Բաց կոյանոցի մեծ առուն փողոցին երկայնությամբ կշոգիանար, կշոգիանար շոշափելի մուխի մը թանձրությամբ, քաղաք մը կթունավորեր։ Ոտքիդ տակ շորցած հավի ու կատվի մնացորդներ, ճեմիշներու պլշկած ու ցրցխտած ավելներ. շան իրան մը անդին, դեռ ողներուն վրա շառայլ արյուն. ճանճերու և մոծակներու աշխարհք մը կկերակրվի այդ հոտած ոսկորներուն, այդ շարավ ու ժահր իրար խառնված լեղերուն վրա։ Դեռ քալե՛, դեռ նայե՛ ամեն

կողմ տարածվող աղտեղությունը, գույներու ամբողջությամբ։ Քուրջերով մարմինը պարուրած լեռնցին իր հոգնութենեն տատանող իշուկին առաջը՝ ձեռքը սիկառ մը՝ կծխե. սիկառը՝ դաստակի հաստությամբ՝ ծխնելույզի մուխին առատությամբ ամպ մը կշինե շորս բոլորը. ապուշ դեմք մը. հուզկահարի աչքեր, աչքեր, որ լեռան վրա հեռավորն ու աննշմարելին նայելու վարժությամբ՝ նույն դիրքին մեջ պաղած կարծես, վար չեն կրնար նայիլ, միշտ դեմ ու հորիզոնական ուղղությամբ։ Ջուր չի կա. եղածը օդին հավասար տաք, անոր չափ ապականյալ ու լպրծուն է, կզգաս, թե շողիքի պես բանի մը բաղադրությունը կա մեջը։ Քանի անգամ ձյունով զով գավաթ մը խմելու փորձն եղավ, որդերը ձեռքով դուրս կնետեինք, ու ձեռք մը ձյուն 40 փարա։

Շարունակե՞մ։ Հեռո՛ւ, հեռո՛ւ, տեղ մը կաղաչեմ, ուր հացի պես սնունդն ալ մոռնալով բավականանանք սոսկ շնչելով օդին մաքրությունը, նոսր, վճիտ, որ քիթ չսոսկացնե, որմե չպտուտքի գլուխը։ Այդ պղծությանց մեջ վարդն ալ վար պիտի նետես ձեռքեդ։ Ո՞ւր կա փնտռածնիս։ Ծանոթ մը մեզի ս. Սահակ եկեղեցիին բակը կառաջնորդե, իրավ որ բավական բարձրադիր ու հովասուն։ Պզտիկ դռնե մը ժամուն բակը կանցնինք։ Այդտեղ անմիջապես եկեղեցիին դրան սեմին քով երկու քահանա նստած են դեմ-դիմաց, երկու ալ գգալ ձեռվնին՝ քացախ կխմեն, վարունգի և սխտորի խառնուրդով զովացուցիչ մը։

Կամաց-կամաց հին ու նորը իրար խառնելով՝ ժամի մը չափ մեր անուշ խոսակցության հյուսք մը շինեցինք։ Կարծեմ այստեղ էր, որ լսվեցավ, թե վարժապետին մեկը պահքը կերած է աշակերտներուն առջև, շատ կխմե, շատ կծխե,— վարժապետ է, ուզածնիս դնենք վրան— շատ կքնանա, շատ կլվացվի։ Է՞հ, վերջապես այդ բոլոր մեղքերը Պատրիարքարան տեղեկագրվելով՝ անկե հրաման կուգա, որ անմիջապես զարժանն տնօրինեն, դուրս ձգեն անպիտանը և նոր մը իրեն հաջորդ կարգեն։

Հանկարծ,— ուշադրություն ըրեք,— խեղդ, նվաղած ձայն մը կհասնի ականջիս և արդարությամբ վասն մեղաց մերո՞ց խոսքը կլսեմ հեռվեն որոշակի։ Առաջին լսելուս բան մը չկրցի խորհիլ։ Տեր հայրերուն հետ մեր խոսակցության կուռ մասը վերջացած՝ քամուք մը մնացեր է, պահ-պահ ալ կհորանջենք։ Բայց ձայնը երթալով շուտ-շուտ կկրկնվի.

— Մեղաց մերո՞ց, վասն մեղաց մերո՞ց։

Ժամեն չի գար այն, դուրսեն ո՞վ կրնա ըլլալ։ Ձայնը վրաս այն տպավորությունը կընե իրր, թե հորի մը մեջ ինկած անկար ուլիկ մը դուրսի աշխարհքեն վերջին հրաժեշտը կուտա, և կամ ձայն մըն է այդ, որ Հագարի գեղեցիկ խանձարուրեն կհասնի դարերու այնքան խորունկցած աչքերեն. ես այսպես ըսեմ, դուք այդ ձայնը ողջ թաղված երեխայի մը ավաշն ըմբռնեցեք։ Ու նորեն լռիկ հանդարտության մը մեջ.

— Վասն մեղա՞ց մերոց։

Ո՞վ է այս, կաղաչեմ, մա՞րդ բանտարկած եք, տեր հայր։ Պատասխանը խնդուք մըն է, բայց, իրավ կըսեմ, ի՞նչ կար հոն, ձայնը մեր թիկունքեն կուգա. այդ կողմը, ժամուն ետևը, պատուհանի պես ծակեր ու մութ նրբանցքներ կերևին։

Վերջապես տրված բացատրության մը հետևելով կհասկնանք, թե այդ կողմը դպրոցը կգտնվի և պատժված աշակերտ մըն է այն, զոր կերթամ անձամբ կտեսնեմ։

Քուն եղած հավի մը պես ոտքին մեկը վեր առած իբր պատիժ կանգնած է ու պիտի կրկնե Սաղմոսին այդ համարը ա՛յնչափ, մինչև որ ջուրի պես գոց ըսե։ Տասը-տասնամեկ տարեկան կա-չկա, գունատ, վտիտ ու խփված աչքերով։ Ամբողջ դպրոցը տասնամեկ աշակերտ ունի, ամենեն պզտիկ թաղին դպրոցն է։ Բոլորին ալ հասակը նույն կերևի։ Անոնք որ նստած են տոշակներու (մինտեր) վրա, տոշակները հատակին փոշիներուն մեջ կորսված, անոնք ալ սգավոր տան մը մանուկներու լացեն ու կոծեն հոգնած ու լլկված արտահայտությամբ, ամենեն տարօրինակ երևույթին առջև, թող կուզե տղտ մը առջևնին խաղ իյնա, անփույթ, անխռով, քթի բերնի վրա եկած ճանճերուն անգամ հաշտ կնային։ Թմրած ինկած են, մինչ թռչունները, իրենցմե ավելի պզտիկ, իրենցմե փետրավոր թևի մը տարբերությամբ զանազանված ըսենք, դուրսը հազար խաղ կընեն։

Ձեր հանցանքն ի՛նչ էր, ով ի՛մս ծաղիկներ, որ ձեր բունին վրա թշորնաք։ Կյանքը չապրած տակավին, հազիվ երեկ ու առջի օրը բերանեիդ մոր ստինքներեն զատված, այդտեղ նետած են զձեզ։ Դուք, կըսեմ, ձեր մեղքը ի՞նչ ծանրություն ուներ, որ դատապարտած են ձեզ ըսել, տակավին նոր լեզու ելած. «Արդարութեամբ եւ յիրաւի ածէր զայս ամէնայն վասն մեղաց մերո՞ց»։

ԱՅԳԻԻՍ ՓՇԵՆԻՆ

Բոլոր գեղին բերանը ծամ ձութի պես կտրորվի Մըյրեի անունը, որի մասին գեղովին ալ առտվան, իրիկվան խել խոլ մտածությունն է թե՝ ծովերու ձկտիքն ալ եթե օր մը լեզու ելլեն ու մարդու հետ կամ մարդու վրա խոսիլ փորձեն, անոնք ալ անտարակույս, առաջին թոթովումով մը, այդ գիժ քածին միսը պիտի խածկոտեն իրավամբ։

Խորթ մայր մը՝ Մըյրե, գլխուն մազերեն մինչև ոտվներուն ըղունգը կարիճի պատմություն ունի։ Առջի էրիկը հող գերեզման ընելեն ետքը, տարի չի բոլորիր, նոր մը կգտնե, ու այս վերջինին խաղաղիկ երդիքին տակ ալ նույն արինբերան կնիկը կմնա։

Խրատ, թելադրություն չի բռներ այնպես, ինչպես հուլիսի կատղած օձերը տրլըսում չեն բռներ, ու փրփուրով ժանիքավորված շրթունքով մը գիշերի, ցորեկի պահանջն է որ՝ էրիկը առջի կնկանեն ունեցած որբ աղջիկը՝ հազիվ ութը-տասը տարեկան՝ տունեն դուրս վռնդե մեկ անգամ, տունեն դուրս հորերն ու ջուրերը, որպեսզի իրենք էրիկ կնիկ՝ միսի ըղունգի պես իրարու փակչին, իրար ճանչընան, ու երկուքը, ո՛չ երրորդ մը, մեկ մեկու դունչ ու շողինք լզելով՝ ճամտեռտ կյանքը ապրին։ Հակառակ պարագային կըսե. «Հո՜ հա՜, երդում քեզի ան արևուն ու կանանչներուն վրա, որ տուն տեղ գլուխդ կհոսիմ, ու բուտիտ ալ կռնակը արընե շապիկ կհագցնիմ»։

Գըլեին ու Մըյրեին մեջ երկար, շատ երկար օրերով այս կռիվը միշտ լսողին ականջը կայրե թեև ու սիրտերու մեջ խըշխիշ ջուր մը վազցնե, բայց ո՞վ սիրտ կրնա ընել անոնց հասցեին բանաձև մը ապըսպրելու։ Մըյրեն կա բանին մեջ, շատերուն վախն է թե՝ այդ գեշ կնկան, այդ կովոծուծին շուքին վրա կոխողն անգամ յոթ տարի կդողցնե։ Աղջիկն ըսես, Կուլիկ, խելոքիք մրջյուն մըն է, մորուին ունքն ի վեր ալ չիշխեր հայիլ, ընկույզի պես կգլվի անոր ցցուցած բանտեղին ետևեն, ու նորեն կկոցի արագությունով, այդ մայր ըսված Քամոսուհիին դարձած, անոր նոր-նոր հրամանները կհասկնա։ Միշտ գերի ու գետնի հավասար, բայց Մըյրեն ամեն բանե ավելի լման ողջակեզի պահանջը կընե, իր ճոեն, որբուկի հորմեն. «Դո՜ւրս, աղջիկդ դո՜ւրս ըրե, համառ մարդ, եթե լեռը չէր հավներ, դաշտը կար, դաշտը չէր հավներ, գերեզմանոցներն հերտկեր, ու եթե տակավին ատ տեղվանքներեն ալ ողջ տուն դառնա, ան ատեն իր մազերը իրեն կախաղանը կընեմ»։

Տատասկի մխոցներով այս սուր՝ ածելիի մը չափ սուր հայ-

հուշներուն, սպառնալիքներուն պատասխան, քարերը գետնեն վերվեր կթռչկոտեին, ծառերն իրենց տերևները կթոթվեն, ինքը սակայն՝ գեղի այս դժբախտ մարդուկը, անվրդով կմնա. գոցած է ականջը, ու լեզուն իր բոլոր երկայնությունով ի վար հրելով, ձայն հանելու անճարկության մեջ կգտնե ինքզինք, և կամ ավելցուցեք ըսել որ՝ նա այդ կնոջական պոռչտուքներուն, որոտումներուն դիմացը այնքան հեգնոտ ականջ մը վարժեցուցեր է, որքան դարբինին ականջը իր մուրճին հանած շառաչներուն վարժված։ Կամաց-կամաց ինքն իր հոգիին մեջ մտիկ կընե հիմա ու կհասկնա վճիտ մանրամասնություններով թե՝ այդ կարմիր ձյունը իր իսկ ձեռքով բերավ իր գըլխուն, ու օր մը, ի՜նչ ծիծաղելի հիմարություն, հավկուրի աչքով մը ծակ հլուններուն մեջ, թանկագին մարգարիտ գտնողի բախտավորության մը տիրանալը կհռչակեր դեմը ելլողին. ցատկտելու ատենն ալ ագը կռնակին կդարներ։

Հիմա ալ կցատկտե, կպոռթկատա թեև, բայց ադ վիճակը ավելի ոտքերուն տակ կրակ կոխկոտող դատապարտյալի մը ցավատանջ գալարումները կմատնե, ուրկե պահ-պահ ազատելու մտքով, դուրս կուգա բըրշակեն ու դաշտին հեռավոր եզերքներուն վրա թափառկոտ ինքն իր շուքին հետ խոսող ու լացող ոճրագործի մը ստրջանքները կորոճա։

* * *

Տարիները կանցնին այսպես շփոթ ու փոթորկոտ։ Գըլեյի բույնին վրա շարունակ ձյունին կարմիրն ու կարկուտին քարը տեղալով, Մըյրե իր փեշերուն տակ ցրկնած ուրիշ աղջիկ մը կմեծցնե։ Մեծցած հասունցած շուտիկ մը, որը եթե այսօր չհնձվի, վաղը ատենն անցուցած ըլլիլը պիտի ըսեք։ Կուլիկին համար այս աղջիկը, այն մայրը, դժոխքեն արձկված գրողներ կդառնան։

Ցորեկը մօրուն է իր մորթը խարանողը, գիշերն ալ, պակաս մնացածը, անոր նորընծա որձակը կլմընցնե։

Տարին տասներկու ամիս, տանը մեջ ու տունեն դուրս ելած ծանր գործերը որբին քամակը կկապվին. ձյուն քերել, ջուր կրել, գիշերանց հաց թխել, առտվընե մինչև մթնշաղ ճախրակ դարձնել, եկող գացողին դեմն ելլել, ամառը՝ գլխիբաց արևուն տակ, ձմեռը՝ բոբիկ սառույցներուն վրա, որբ աղջկան բաժին հանված շարշա-

բանքները կըլլան։ Գերեզմանը հազար անգամ հեշտ վիճակ մը կհավատա իրեն համար. բայց ի՞նչ կրնա ընել։

Ի՞նչ կրնա ընել որ՝ Մըյրեի հարազատ ձեռքը հինայով նախշած՝ անդին Թոնիրին տաքուկ դումեն Թիզ մը հեռուն չապրիր. ավելն ուսկե կբռնվի չի գիտեր, փորը կուշտ, կոնակը Թանձր, հացը ուտելեն վերջը, սեղանն ալ ոտվընտրովը դեն կհրե որ՝ մնացած փշրանքները Կուլիկին ճաշը ըլլի։

Ու դեռ այս պղտիկ Մըյրեին վրա խոսքերնիս՝ նստուկ հանգըստուկ դիրքի մը մեջ միշտ, փետուրներուն տակ ձեռք զգացող էգ հնգկահավի մը քթուրտուքները կրնե ատեն-ատեն, ու շատ անգամ ալ մեղկորեն քով վրա ընկած՝ իր բոլորքը վազվոտող մծղոտած կատուներուն մոբլտուքները կունկնդրե ան հաճույքով, որ մինչև մազերուն արմատը անդիմադրելի հոսանք մը կելեքտրացնե։

Նորթ մայրը այդ բոլորեն ետքը նենգ փորձ մըն ալ կպահե, որի հետևանքը այս անգամ բաբախուն կուրծքով մը ան ավելորդ աղջկան գորուստն ըլլալը կհուսա վերջապես։— «Վե՛ր ել, աղջիկ, կրսե, առ սա կորեկ հացն ու բամպակը, կովը դաշտը տար, հոն արծե կուշտ մը, բամպակը մանե, իրիկունն ալ կովն առաջդ ու բանտը (մանածին կարժը կամ կծիկը) փեշդ՝ տուն դարձիր»։

Կուլիկին համար դժվար բան չէ համակերպիլը. ատ իսկ պահուն անմիջապես, կովն առաջը՝ գեղեն դուրս կելլե հանցավորի քայլերով։ Կկոխե դժվար առապարները, լեռները կանցնի ու Թուփերը ետև կթողու. բայց թե ո՞ւր պիտի ըլլի իրապես գնալիք տեղն ու գտնելիք արոտավայրը, մեկ մը սա է չգիտցածը, մեկն ալ այն՝ որ կխորհի, թե հացը հատնելե ետք ի՞նչ պիտի գտնի ուտելու. փեշը ծրարված պատառը հավի կտնամպարն չի կրնար լեցնել. ու հետո բամպակն ինչո՞վ վերածե թելի, ինչպե՞ս, ո՛չ ճաղ կա, ո՛չ ճախրակ։ Այս դժվար մտմտուքներով բեռցված՝ արյուն կուգա քիթեն կարծես, ու ողջ-ողջ ակռաներուն վրա՝ մեյ մեկ պողպատ աքցանի ծանրանալը կզգա։

Ցրտում ու խռովիչ մենության մեջ, որը հովվուհին իր անլեզու ընկերեն, անոր ստվերեն չի բաժնվիր, ծունկերը կթոտին, կծալվին, ինչպես մաշած զմելիի շեղը մը, որ իր կոթին վրա կիյնա ինքնիրեն. ալ անկարելի է առաջ երթալ. բամպակին ծրարիկը գետին կնետե, ձեռքին ճոկանն ալ, կնստի փուլի մը վրա, ուր աչքը շեշտ դեպի կովը, անոր գործունի ու շողոտ ցուկը կդիտե, որ մեկ չանչեղով

կապերտ մը տեղի խոտերը կհնձե։ Հոս Կուլիկին իր ալ ախորժակը շատ պահանջ կիմացնե իրեն, ու պահ մը կհամաձայնի ինքնիրեն հետ, որ վայրի բանջար ծամե հացին վերջին փշուրեն ետքը, բայց սա բամպակին համար ինչ կրնար ողջն ձևել. ինչո՞ւ Մըյրի տանը ճախրակը չտվավ։

Խեղճ որբուկին համար հոգ ընող շնչավորը ո՛վ պիտի ըլլա. գետնեն պիտի բուսնի այն թե երկինքեն սպասե։ Ոտքերուն տակը ոսկի բգեղներ, մեղուներ, գլխուն վերևը՝ չիլ ճնճղուկներն ու կարմրալանջը իրավ որ հարսնիքի երգեր կպոռացնեն, և որոնք իրեն կարծես ճախրակի մելամաղձոտ ճռինչներ ալ լսեցնելու զգայություն մը կբերեն. մտիկ կընե, կհուզվի, կուլա, որի՞ ինչ փույթ. օր մը այդ ապուշ փետրավորներուն կարավանները այսպես ու այսչափ զվարթ՝ ճագարի դժբախտ ընկեցիկին վրայեն ալ անցան, ու սակայն կարեկցողի արցունք մը՝ պուտ մը գոնե չկաթեցուցին գլխուն։

Լքված աղջկան ճակատագիրը այս աստիճան շփոթ ու անայլայլ՝ կրանիթի մը չափ պինդ կերևի ըլլալ։ Գլուխը ան հողկուռ փուլին վրա ու օրհասի հուսահատ խրումով՝ անգամ մըն ալ կմրմնջե.— «Ինչպես անիմ, ինչպես մանիմ, ինչպես կարժեմ, իրիկունը Մըյրեն զիս անոթի ծարավ՝ հավրունին մեջ կթաղե»։

Բաղամի իշուկեն առաջ թե վերջը, կով չորքոտանիին խոսքն ալ լսվա՞ծ էր.— «Մի՛ լար, հեգ աղջիկ, մի՛ հուսահատիր, ոտքի ել, բամպակը բերանս տուր, ու պահե մը վերջ առաջս անցիր որ՝ քըթիս ծակտիքներեն մանված թել կարժես»։

Աղջիկը անհունապես շլմորած ու ցնցահույզ ոստումով դեպի կովը կխոյանա, կշոյե, կհամբուրե. խոսքով չեն բացատրվիր իր հոգիեն անցածները։ Քիչ վերջը ահա իրավ ալ նոր լիսեռի մը վրայեն ժողվածի պես գունդ մը թել կկծկե թևերուն վրա։— «Սերկելի Շմեսս, հոգիս, կհարցնե Կուլիկ, բամպակը մանած եղավ, բարի՛, հիմա ալ ըսեիր, թե ինչպես մինչև իրիկուն կորեկ հացով մը պիտի ապրիմ»։— «Ան ատեն ալ, աղջի՛կ, բերանդ մեկ եզջյուրիս վրա, ուզածիդ չափ մեղր կթե»։

Որբին աղոնը ասված կաղա վերջապես. կփոխվի այս վայրկյանեն աղջկա բախտը, ինչ որ օր մը չէր սպասվեր. ամբողջ գարունը ու ամառը բարի Շմեեին եղովն ու մեղրովը հափրացած՝ կգիրնա հետզհետե, ու առջվան կմախք աղջիկը կլորիկ լորամարգիի մը նման աղվոր ձևերը կերևցնե երեսներուն ու ամբողջ մարմինին վրա։

Մըյրեն զայրույթեն մորթին վրա սպի կթավե, գաղտնիք մը հասկընալու շատ ալ փորձեր կընե, բայց բան չի կրնար հոտվըտալ։ Հիմա իր բուն բուտը որսի նիհար շուն մը կլմանի։

Աշունի նոսրկեկ արևով օր մը այս փետրփոխ եղած վառյակը՝ Կուլիկը, նորեն դաշտ կերթա, այս անգամ ինքն իր ստվերին հետ մինակ կքալե ու ինքնիրենը անուշ հովվերգության մը միամիտ սույլերը կպիսմակավորե գլխին վերևը հալող ծիրանի ամպերուն տակ.

Գարնա վրա սիրտս ընկեր էր կուման,
Դառնամ էտիս հայիմ, լեռները տուման,
Մորճիկ մըլ բուսցեր էր աղջկան նման։
Մորճիկը կըյրեցին, կթոց շինեցին,
Կթոցն ի էգին, խավող լեցուցին,
Խավողն ի կարաս գինի շինեցին։
Էլի՛ր, էլի՛ր քո քնուն, յաման,
Գինուն կարմիրը սիրե, խուրպան,
Աշխընին թուխը սիրե, խուրպան...

Հեռուն, հեռուն, նոր եզերք մը հասած՝ Կուլիկ ձմռան փակցանքի համար շոր բողկեկ ու տոշկուկ կժողվե, կծարվընա հոս, ու մոտի առվակին կողմը շիտկվելով, ջուր խմելու փորձ մը կընե. բայց ի՞նչ առվակ, ի՞նչ ջուր, կաթիլ մըն ալ չկա։ Այս ցամքած առուին կանանչ եզերքին վրա ճիշտ՝ աղջիկ ինքզինք նորանշան դեմքի մը առուջը կգտնե։ Արթուն, սակայն խառնակ, ահաբեկող երազի մը սարսուռովը աչքերը կոպիճներեն դուրս կպոռթկան։ Առաջին տպավորությունով մը անիկա ստվեր մը ըմբռնելե ետքը, բուն մարմինը կփնտռե, բուն իսկ մարմինն ալ ահա,— մարդ է եղեր։

Մարդ է եղեր, հին մրճոտ պառավ մը, այնչափ շոր ու ոսկրցած, որ կխորհիս թե՝ լուցկիի մը ծայրովը շոր խոռվի մը պես պիտի բռնկի։

Վերեն վար քայքայված է, ու եթե արևը աչքերուն ալ բռնվի, չպիտի խտղտի։ Առաջին տպավորությամբ մը, ո՛վ որ ալ ըլլա, պիտի մտածե անկասկած, թե այդ ծեր կնկան երեսին միսը, օր մը, երկաթ սանտրով խորունկ մը արորվելե ետքը, այն վիճակին մեջ հանկարծ քարացած ըլլալու սոսկալի դիմագիծը ստեղծեր է, որուն եթե մարդ գիշերը հանդիպի, վախեն ոտքին կաշին ալ ետևը մոռնալով՝ ինքզինք ջրհոր մը պիտի նետե։

Վհուկ մըն է այս, թե պատրանքներե շանթահարված նայատ մը, որ հոս երաշտ առվակի մը խռվացած կողերուն վրա մոլորուն՝ կանաչ հույսերու ծլարձակումին կսպասե։— «Ի՞նչ կընես հոս, մամիկ, կհարցնե աղջիկը, որո՞ւ կնայիս, ո՞վ կխորհիս»։

Մամիկը, հուզված լալկանի երևույթ մը կախելով դեմքեն, իր ջիղ ու չվան պարանոցին վրա տատանվող գլուխը, համր ու բրոնազբոս ձգտումով մը, այն ձայն ծնած դին կդարձնե։ Առաջին անգամ չի կրնար խոսիլ ու կհասկցվի,— որ չարչրկված գալարումը իր արդեն ջախջախ էությունը կտոր-կտոր կընե, կամ ավելի ճիշտ, վայրկյան մը ինքզինքդ անապատի ծեր օձի մը դիմացը կըմբռնես, որ հինցուցած խորխը վրայեն նետելու ատեն, մահվան չափ դժվար երկունքի մը ցավերուն մեջ կտառապի։

Խուլ ավաչ մը, կռինչ մը մամիկին կոկորդեն, խորունկ գետնադամբանի մը մեջեն պայթող կոծկոծանքի մը փշրանքները կլեցնեն լսողին ականջը ու մեր որբ գեղջկուհիին ալ ականջը, որ իր կեցած տեղեն քար կտրած, վախեն թե՝ զարմանքեն, անգամ մըն ալ կկրկնե.— «Ի՞նչ կընես, մամիկ, որո՞ւ կսպասես, ո՞վ կխորհիս»։

— «Արևուն կտաքնամ, կպատասխանե, ձագուկս, աշունին մեջ ձմեռին կծող ցուրտը կա, որ ոսկորներուս կթափանցե, մի՛ վախնար, առաջ եկուր, կավելցնե պառավը, որբուհիներուն պաշտպանուհին եմ ես, նստիր քովս, բախտիդ սպասե»։

Կուլիկ իր հին մայրը գտած ըլլալու շլացումը կունենա պահ մը, ու անձնատուր ու անձնվեր բոլորովին այս գորովոտ մորը շունչին տակ, անոր հետ ծունկ ծնկի մտիկ կընե.

— «Ես հիմա քնանամ պիտի, աղջիկ, բայց դուն արթուն կեցիր, վիս ու իրեղեններս հսկե. քնացած միջոցիս մեկ քանի տեսակ ջուր պիտի հոսի սա ցամքած առուեն. սև ջուրի երևումին մի՛ արթնացներ, կարմիրը անցնի՝ մի՛ շարժիր, համբերել գիտցիր. վերջը երբ ճերմակն ու դեղինը սկսեն վազել մեկ մեկու ետևե, ան ատեն շուտով ձայն հասցուր ինծի, կարթնանամ ու կտեսնես ըլլվելիքները»։

Շատ զգուշավոր ու շատ արթուն, մեկ-մեկ կգործադրե պառավին թելադրությունները. կարթննա այն ատենին, ու իր իսկ ալքու ճանկերովը աղջիկը սպիտակ ջուրին մեջ լոկցնելով շուշանի գույն մը կհագցնե անոր մորթին, ետքն ալ գլուխը առանձին դեղնորակ ջուրին մեջ լվալով՝ որբին մազերուն ոսկեշող երանգի մը կախարդիչ գեղեցկություն մը կուտա։

Կովին ու կնոջը այս եղական հանդիպումներեն անմիջապես վերջը, աղջկան գլխեն մինչև ոտքերուն մատը հլունի մը չափ տեղ չերևնար, որ առջևան ճղճիմ ու տգեղուկ էակը հիշեցնե։ Կուլիկ ալ բոլորովին ջրածին դիցանույշ մը կրնայիք հասկնալ, արևուն դեմ արևուն հետ կմրցի, մռայլ գիշերներու ծոցը ճրագի մը պես կվառի։ Անոր աչվրներեն ինկած հրայրքով այգիներուն ողկույզները կհասունանան ու երեսներուն գիրգ խնձորիկները այդքան շողարձակ ու թովող գիծերով՝ աստվածները կխելագարեն։ Նայեցե՛ք, հեղ մըն ալ նայեցե՛ք, եթե քիչ էր, անգամ մըն ալ խորունկցուցեք նայվածքնիդ այդ դաշտի աղջկանը վրա, որ հասկնայիք թե՝ հին որբեն ոչինչ կմնա ամոր մեջը, ու դուք ալ երդումով մը հաստատեք այն թե՝ վերբերը պտուտքող ամպերը օր մը, երկրի վրա իջնելու ատենին ադ իրենց ծոցեն ծնած հուրին, այդ ամայի դաշտերուն մեջ մոռցած ըլլալու անխոհեմության համար է որ այդքան զայրացկոտ կորոտան ու կպոռան։

Շատ չանցնիր, հարուստ շահապ մը կճամփորդե այս կողմերեն, որ հարավն ու հյուսիսը ոտքը քաշելե ետքը՝ հեղ մըն ալ աս գեղին ծածքերուն տակ կփնտռե ուզածը։ Ուզած աղջիկը, իր ասպետափառ թագին մեկ վառ գոհարը պիտի ըլլա, ու կուխտե, որ անոր հետ մինչև վերջը ոսկեհուռ բարձի ու գահույքի վրա ապրի կյանքը։ Երեք օր իրարու վրա մունետիկ կանչել կուտա, հրավեր տարտղնելով, որ բոլոր աղջիկները մեկտեղ գան ու իր քով եղած ոսկի մուճակը հագնին։ Այդ մուճակը, որ ոտքի մը հարմարվեցավ, վայլեց, ան աղջիկը պիտի ըլլա իր հավնած լուսնթագը ու ինքն ալ անոր անձնվեր վարուժանը։

Երեք օր ու գիշեր աղվոր, փոզփոզուն թռչուններու հանդիսավոր տողանցում մը կերկարի պերճաշուք երիտասարդին առջևեն. ամենքն ալ մեկ-մեկ կհագնին կոշիկը, բայց մեկուն ալ ոտքին չի կպիր այն ու չի վայլեր։ Կուլիկն ետև մոռցված է, ո՛վ գիտե ինչո՞ւ. քիչ վերջը կարգը անոր կտրվի ու փառքն ալ, իր բոլոր զգլխիչ պերճանքով Կուլիկին կըլլա։ Շահապը հետո ոսկի մուճակին հետ իր ամուսնին ոտքերուն տակ իր սիրտը ու աշխարհք մըն ալ հարստություն կդնե։

Մըյրե ու իր հարազատը անդին իրենց անորակելի ցավեն ու նախանձեն այնքան կհալին ու կսպառին, որ փետուրի մը հովն ալ կրնա զիրենք կործանել։

Մայր ու աղջիկ օրեն մեկը ալ տուն չեն կրնար դառնալ դաշտեն, ուր խռիվ հավաքելու գացած կըլլան. այնտեղ սոված գայլի մը ժանիքներուն տակ երկուքն ալ բզիկ-բզիկ կըլլվին միևնույն եղերական վերջով։

Գրլեն որովհետև վաղուց արդեն անհայտ կմնա տունեն, մեկն ալ իրենց հետքը հոտը չի փնտռեր. ինկած տեղերնին հող մոխիր կդառնան։

Կանցնին օրերն ու տարիները, երկրի չորս հովերը կելլեն, Մըյրեի ու իր աղջկան աճյունը կցանցրնեն լեռ ու սար, դուրին ու դաշտին վրա ամեն կողմ, ամեն ուղղությամբ։ Մըյրեի մոխիրին հատիկներեն գիժ, իժ փշենիները կծնին, աղջկանը ոսկորներուն կտորտանքներեն ալ սուր, արյունոտ տատասկները կբուսնին։

1898

ՃԱԽՐԱԿԻՆ ԱՌԱՋՔԸ

«Քը՛շ քը՛շ, քը՛շ, քը՛շ, գուգան, կերթըն, էրթիքս կգոցեն. դը քիշա, ճաթելվե՞ր, պատռելվե՞ր, թեփուրնին տիրվտուն աչքը բուսնի, մայրի՛կ, ի՛նչ ըլ քենց են, աչվին մխտես, չեն հերտրկիր»։

Իրավ որ, աներես հավերն ալ քշե, քշբանքե չեն հասկնար, երդիքին եզերքը ան ինչքան ալ խուժ ու խոշոր կտոց, սեեր, պիտակներ, պտպտուներ, ամեն քշվելու տասը կերթան, քոանը կուգան։ Իրավունք ունի Գուհարը,— լքված հարս մը,— իր սիրտը արդեն է՛նքան փլուկ է, ու՝ նեխած կզգա ցավերով, որ ա՛լ տանը սյունները մեյ մեկ դիվանք կերևան աչքին։ Ու մեյ մըն ալ հասկնայիք, թե իրեն ի՛նչ կար ադ հավձագերու խումբին մեջ. բոլորն ալ անոնք դրացնենց հավրնեն արձկվածներն են։ Ինք բունիկ չունի աշխարքի վրա։

«Մեղա՛ տեր, մեղա՛ տեր... ջայրս հիմա առջևես վեր պիտի քաշեն»։

Կուկլիկո՛ւկո՛ւ. կնկուկը վարը օղիկ օղիկ կըլլի բարկանքեն, ու քիչ կմնա, օր մեղա անունով ծառ մը բուսնի բերնեն դուրս, որու հողը, անգամ մըն ալ գիրուկ սրունքներով աքաղաղն է, որ թափ կուտա թևերուն ու իր կես բիտերուն վրա վետվետող իրանին մեջեն խոպոտ ճիչեր պարպելով Գուհարի գլխուն, լքված աս հարսին դըժբախտությանը վրա անգամ մըն ալ ինք կըլլի ծաղրող։

Գուհար սրվոր ու նրվոնց անհարկիություններն ատեն-ատեն անհամբեր ըլլիլը բռնելով, փեշերը ընդոստ գոտին կկպցնե, մեյ մը վեր ան ճաթելիքները կելե փախցնել, մեյ մըն ալ վար, ու ինքզինք գտած՝ իր ճախարակին առաջը կոքլի։

Այս մութ փակարանին մեջ, ուր ծղրիթն անգամ իր մտերիմը գտած է տխուր մենությունը մեկտեղ լալու, Գուհարն ալ իր հին բամպակի կրզնիկներուն տակ ծերացած ջայրեն զատ ա՛լ ոչինչ չունի։

Ինքն ու իր ճախրակը, այո՛։ Երբեմն կեսօրեն ետև ու իրիկուններն առաջ, կատու մըն ալ, հունա, իր մետաքս թաթերը մրեղի շյուղի մը իսկ չդպցնելու զգուշավորությունով, լռիկ՝ փեթկնուն տքտիքը կայցելե, շրջան մը կընե ան անկյունը ու սա ծակտիքներուն քովերը, վերջը բութ, հուսահատ մլավ մը, ու կատուն ալ անտարբեր իր ճամփան կերթա։

Գուհարի ընկերը, ուրեմն, ըսեինք անգամ մըն ալ, թե ան հրնուկ, մաշած ճախրակն է միայն։ Անոր թմբուկին առջև ծալլված ու կքուկ, թելը թելեն չի կտրեր, աջ ձեռքովը մանիչին ոլորք կուտա, ձախովն ալ անոր իլը կուռեցնե մանված ու մազի բարակությունով թելի մը կաթ սպիտակության տակ։

Կեսօրի արևը երդիքն ի վար լուսոտ շարվեց մը մեյնելով, մանող հարսին քուլային ու պայրոքներուն վրա, անոր աչքն ու ունք կշոյե, տաք շունչի մը հպումով, ու ատ աչքը, ատ տժգույն երեսները լույս աշխարհ հանելու միամիտ կատակ մը կընե։ Այս շերտ մը լույսին ցոլցլուն անդրադարձումովը, ալ որոշ կհասկցվեր թե՝ խրճիթին հարսնուկը դեռ շա՛տ ճահիլ, շա՛տ կենճ, ափ մը ջուր է կըսես։ Ու ճախրակեն ալ ի՛նչ ճըլվլտուքներ, ի՛նչ ներդաշնակություն, բանաստեղծ մը միայն պետք էի ըլլիլ ըսելու որ՝ նիտակին փաթը ծիծեռնիկները կշաղակրատեն, բութակին քովեն գիշերի պլպուլի մը կարկառուն հառաչանքները կփշրվին, լիսեռն ալ խիճերու վրայե վազող ծփլտուն ջրիկներուն խոլ գըլգիլը կկծկե ինքն իր վրա։

Անհոգի փայտեն երկնցած այս ձայնոլորքը, այս կռինչները միօրինակ որքան, այնքան լեզվանի և հուզիչ, որ դաշտի գարունի մը վառվառ ու բուրավետ հանդիսավորություններու անակնկալը ունին, մեր այս խրճիթի միանձնուհին, լքված հարսին ալ պատանքտած կուրծքեն չարչկված խորունկ արձագանք կքերեն։

Էրիկն ո՞ւր այս հարսին. ինք գոնե բան մը չգիտե՞ր, անկե իրեն թղթի կտո՞ր մըն ալ չի հասնիր. բայց ինք ինչպե՞ս տարին երկու ըրավ, երկուքը, հինգ, տասը։

— «Որբ աղջիկ մըն էի, կըսե, խուրպան, երկու խոսքով ահա Գուհարի պատմությունը բուն իսկ իր բերնեն. պապ, մեր մեռնելեն վերջը, երկու քոր էինք, ինձմե պզտիկը մեռավ, ես մնացի, հուսա, հունա, ոտք քաշելով, էրես ծեծանքով ապրեցա։ Ամառը թթի ծառերուն տակ թութ կըլլեր առտըվա և իրիկվա ուտածս, ձմեռն ու մեկալ օրերն ըլ, ինչ որ դնեին փեշս, դուռ դրացին. օր մըլ հայիմ գլոխս կտոցվեցան խելքեցին որ՝ գլխավորի մի շուքին տակ ապրիմ. ես դըր հովցուկ ջուր մի, 12 տարվան գայի չգայի, իմ պիսեկներս տահա հորթ կարծեին»։

«Ի՞նչ ճուղապ տայի, ի՛նչ ըսեի, վրաս ձեռք մի լաթ ձգեցին, ներս քաշեցին ու նետեցին փերտեին ետին։ Հարսնիքս կատարելու գնըց, սև հարսնիք ըլլեր։ Փերտեին էտին, քովս էլլող մտնող կնտոց հետտը հիսապը չի գա, էնոնց հետ պազի-պազի դիվու պես ըխթյար էրիկ մարդ մըլ կելլա կմտնա ամա, ի՞նչ գիտնամ։ Ըխթիյարը ամեն գալու ելլալու, քովս խոսող խնտմտացող էքսուկէթեկներուն խոշոր-խոշոր քյուֆուրներ կենե ու ետևէ ըլ քովս կայնեցուցած գինու բղղղե մը տափլիով բան մի կպարպե ու կերթա։ Ես բերանս կապեր կկենամ. նոր հարս մի, խոսալ խնդալ չըլլիր։ Մինչև կես գիշեր էս մարդը, էս ջեշիտ — կթաթխվի, կթաթխվի կերթա։ Է՛ն սողը, եփ ալ կնիկներ ըլ գացին քովես նը, էն մարդը գլտրվելեն, մըտրվելեն անգամ մի տահա էկավ էրվաց քովս նը պիրտենց վախնալ մը էրի ու բերնես մի քանի խոսք փախավ. «Մըյա, գրո՞ղ է, ի՞նչ է, իմ գըլխավորս չըլլի՞ էս հերիֆը. հա՛, իմ գլխավորս էնի է էղեր, իցցուն տարվա գուգգե մի»։ Ա՛լ ի՛նչ լամ գլոխս, ի՞նչ էնիմ, ճակտիս յազին էսի է, կըսեմ կմնը՞մ։ Էկո տես որ, իմ ախպարս, տարին երկուք չըլլիր, մարդս միտքը կպիյե եղեր իրեն երեսը ջուշկհալ գրող ըսելը, դուռն երեսիս փակելով դուրս կելլա, ա՛լ ունչ իզը, ունչ թոզը, և այլն, և այլն»։

Խեղճ աղջիկ, դուն արդեն դժբախտ մըն ես. ի՞նչ կրնան ընել քեզի, քանի ամուսնալուծություն չկա. ինչո՞ւ հիմա պարապը կմըղմըղաս, ցավերդ կցուցադրես. որո՞ւ հոգը. «Զօր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»։

1900

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԸ

Օ՜վ կար, որ հասկնար ու ըսեր ան վերևի Կապուտիկ աստըծուն գործերը։ Գարունն երբ աշվընին էրկինքն էր մնացեր, կզնիկ մը ամպ չարցուեց գետինը։ Հիմա որ աշնանքը կա, գյուղացին կարճ երկան իր տարեկան աշխատությունը պիտի խծպե, լեռ, լանջ, ծով կդառնա»։

Ա՜խ, մեր ալ սա Բուիկ Տեսեին գունտ գունտ մոթմոթուկները, գեղին մեջ միայն ինքն ու ինքը, որ քուն-արթուն վիճակին մեջ, երկնուց վրա միշտ ներշնչվողի մը խն խոհուն արտահայտությունով, երկինքի երևույթներուն վրա կժաժե պուկները։

Իրիկունները, կըսեն, անգամ մը անկողին մտնելե առաջ կկախվի կմնա երկինքեն, անգամ մը գիշերը կեսին ատենները կկենա ոտքի վրա, հեղ մըն ալ, մարդս լուսբացի պահուն դուրս կուգա առքին տակեն, աչք կպտտցնե ամպերու աշխարհքը, կհայի, կփնտռտե, ինքներեն հետ խոսողի շարժուձևերը կընե, կհայի հեռուն, մինչև աննշմար հորիզոնին ծերվըտիքը։ Բուիկ անկե վերջն է, որ իր հմայեկները կբաշխե։ Ամպերը հոն Հըլըզուրի սարերուն վրա կուտակվեր են (արևմուտք), վաղը, ըսեր է, ողորմություն պիտի թորա. ամպերը ծովուց ջուրը խմել իջեր են (հարավ), նշան մըն ալ այս, որ վաղվան անձրևները ընգհատ տարափներ պիտի ըլլան, թե՝ արևելքեն կամ արևելյան հարավեն վազող ամպերը հյուսիս—այգի կարմիրով — արևը վաղը ետին պիտի հայի, բաց օր մը պիտի ըլլա ըսել է։

Վաղորդայնի թափառկոտ մուժիկը—մշուշը—հաջորդ օրվան շփոթ երևույթներուն արհավրոտ նախանշանը կընդունի։ Ու հետո ամպերու տեսակ մը՝ սփյուռ, ու կաղնի գույնով, թուխ ու կապարի գույնով ամպերը զատ-զատ, եղանակին համեմատ մանավանդ այս մեր գեղի Գազիմիա Պապային համար թարմ թաց համբավ մը կապահովեն։ Բուիկ ըսավ, Բուիկ կըսե, երեկ ըսած է, այսօր ալ նույնը կպնգեր, թե լուսնին բակը, գիշերի լույսերուն շատ ցոլքտուն պաղպաջը, ցորեկի տժգույն նսեմ ոլորտը, բոլոր ասոնք ապահովաբար բարի անձրևներու — ողորմության նշան ըսել է։ Բուիկ բայց ինչչափ երկինքեն, այնչափ մըն ալ երկրի վրա անցդարձ ըրած բաներեն գիտե, իր մատ մը լեզվին վրա թանկագին մագաղաթի մը խնկոտ պատմությունները միացվեր են, որոնք սակայն ավելի պակաս շահեկանությունով, այնքան հաճախ ըսեր

կրկներ է քովիններուն, շատ ավելի իրմով հետաքրքրվող պիսեկներուն, որ շատերուն համար անակնկալ ոչինչ մնացեր է անոնցմե։

Հին տանտեր մը պիտի հասկնայիք Տեսեն, զավկի տեր, մալի ըռզակի տեր երբեմն, գեղին գործերը, էրիկ կնիկի հեռքն ու անհամաձայնությունը ժամու տերտերեն մինչև դաշտի ջրտվորներուն, թնճուկ, թքոտ գանգատները իր առջևեն կանցնեին ու ինք բոլորը հաշտ ու հեշտուկ միջոցներով իրարու հետ դուրեկ կարելու կենցաղիկ խելքովը, հարգանքի տեսակ մը սուղ ակնածանքը ցընցվեր էր գեղի ամբողջին մեջ։ Հիմա՞ — հիմա իրավ որ մարդուն բանը աստծու մնացեր է, անցած անհետացած մեղվընփեթակի մը ամայություն կա իր բոլորտիքը, իր մեջն ալ, որ անջուր հորին մեջ խեղդվողի տպավորությունը կթողու իրեն հանդիպողին ու պահ մը իր ի՛նչն ու ի՛նչպեսը հասկնալ ուզողին վրա։ Հին ունևորեն բան մը երբեք չէ մնացեր հիմա, ոչ իսկ մարդակ մը բրշակեն, որ աչքին դեմ բռնե, անով երեկն հիշե, ու գոնե տրտմանուշ երնեկով մը լեցնե հոգին։ Տունը քաղքի պարտքնտերներեն կգրավվի օր մը, հողի ջրի պես հարստություն հովցուքի պես կանցնի, տղաքը երկուք-երեք, ամենքն ալ կարգուկ, ոչ ինքը, ոչ ալ դուռ դրացին մը կրցավ գիտնալ թե՝ ո՛ւր գացին։ Այդ պանդխտացածներուն վրա, հարսներն ալ, դեռ հարսնիքի քողքերնին գլխին, թողին զինքը ու մեկիկ-մեկիկ մարանց երդերուն տակ գացին։

* * *

Բուիկի կյանքը անկե վերջը տառապանքով խաբանված կյանք մը կդառնա, տարին ի բուն ասոր անոր տանը բակին ու ձմեռն ալ շատ քուք օրերուն, աթոռն ու մսուրներուն վրա կքաշկռտե ինքզինքը, աչքն էլին ձեռքեն չի զատեր, կսպասե, որ շերտ մը հացը կատվի կերուքներեն ավելցած, ու դգալ մըն ալ տաքեն պաղեն իր ամբողջ շաբթվան սնունդը ըլլին։

Միսը պաբուկող լաթեղենը՝ շապիկ, բաճկոնակ, քղլիկ, վրայեն չեն գար։ Տվեր են, ողորմեր են, բայց ալ հայողը ո՞վ է, թե այդ գոտին, այդ քղլիկը, խեղճ մարդուն լենքին, երկայնքին չվայլող, կամ անոր խոշորկեկ մարմնույն ձույլը չի ծածկող բաներ կըլլան. գոմշուկին կոնակը պեպեքի շապիկը անցված, կամ ահագին բարտին

ձեռք մը թաշկինակով ծածկելու փորձն եղած։ Բայց վերջապես ինքն ալ ընդունած ու հավտրցած է, որ հասարակաց խղճին ու քմայքին մնացած մեկն է, մուրացիկ մը ըսվել կուզվի, որ պիտի տանե, որ պիտի կլլե, որ պիտի մարսե ինչ որ այդ հասարակութիւն ըսվածը կամք ընե, բան մըն ալ իրեն բաժին հանե։

Հագնի չի հագնի, կամ ուտե ալ չուտե ալ, աս է իր հոգածին տեսակն ու ամբողջությունը, հացն ալ, ան չոր հացը միայն, որ կուտան իրեն, չէ այն բարությունով, որ մարդը ապրի, կուտան որ՝ ամպերեն անդին Հիսուս Քրիստոսի մայրը՝ մեր բոլորիս ալ մայրիկը, հացթուխ տանտիկին մը եղած է քընծոր, ասկե բրդոնին փոխարեն, հարյուրապատիկ մը խլեն, դգալ մը փիլավն ալ հարկավ զատ պահանջ։ Բուիկ այս վիճակով ամառեն ձմեռը կճամփորդե, ձյունը կտափնե բոբիկ ոտքովը, ձյունը երեսին ու կուրծքին վրա կհալի միշտ, ու անգամ մըն ալ դեպի ամառը, այդ ոտքերը անգամ մըն ալ ամրան լույծ փոշիին միջեն կքաշքշե, այդ փոշին լույծ ու տաք ալ, որ գիտեք, թե հավկիթը կխաշե և որուն խշխիշ տաքին, կըսեն ուղտին ներբանն ալ չի դիմանար։

Բայց ա՛լ ինչպե՞ս, ինչո՞վ պիտի ապրեր, ատի հեղ մըն ալ իրեն հարցնեիք։ Տարիքը իրավ որ տարիքն է ան հինգերի ուռենիին, որ ճամփուն վրա, հոն իր աղկաղկ, նիհարուկ ոստերովը ճուկճուկ կըլլի ու կգերեկնա հովերուն, որ ա՛լ չի մոտենան իրեն, վերջին տերև մը, մորճ մը գոնե գոյության նշան թողուն։

Տարիներու այս բեռին տակ, ութսունն անցուկ շատունց, հարյուրին մոտեցած՝ մազ, մորուք, ունքերն ու մինչև աչքին թարթիչները բոց պիտակը հագած կերևան ալ։ Չի լսեր շատ, աչքին մեկն ալ վրա տված այն դեպքով, որ օր մը, մութին մեջեն, իր խըշտին գտնելու խարխափը կընե, ցիցի մը կզարնվի, աջ աչքը պիտի ըլա, այդ պահուն խաղողի պտուղի մը պես կպատռի։

Այդ մարմինին, սակայն, կյանքը այդ ցավերով զմուռը դնող, ապրողին համար, մեկ աչքն ալ բավական չէ՞ր կըսեք, երկուքով ի՞նչ ուներ տեսնելիք, աշխարհք, մարդիկ ի՞նչ համ բերին իր բերնին, հոգուն որոնց անուշ տեսքեն չուզեր անցնիլ, ատ արևն ալ աղե՞կ կընե, որ ո՛ւր երկննա, հոն լույս ու շարվեղ կմեյնե, շատ անգամ ինչ պետք կար սա արև ցորեկին ու ան լուսիկ գիշերին։

***

Բամպքաղի շաբաթն է հիմա, միտքս կուգա, որ այս Բուիկ Տեսեն ինքն ալ կարկտնուկ տուրուկ մը ուսն ի վար ձգած, գեղին աս կամ ան կողմը քաղի ելլող բազմության մեջ կերևար։ Կերթար, կերևար, կաղակուրտեր, բայց շիտակ չէ՞ որ դժբախտ ծնած մարդը, ուր ալ երթա, կակուղ բամպակին արտի մեջ ալ, հոն նորեն իրեն համար կակուղը, փափուկը, անուշ խոսքին ու ընդունելության փըշուրը գոնե բաժին չի հանվիր։

Ծերունին մյուս կենճ քաղվորներուն հետ ատենին տեղ չի կըրնար ժմնիլ, գործի գլուխը ուշ հասնողն է, այդ պատճառով ու անոնցմով ալ իր խոզան խճեճեն չի կրնար զատել կըսեն, շատ դանդաղ կշարժի կամ բնավ չի բանիր ու հաճախ արգելք մըն ալ մյուս բանվորներուն, իր երկար անվերջ հեքիաթներովը, որ՝ արևցքթուն կսկսի ու իրիկունը՝ արևմտուն դեռ ծայրը չի հանկուրցեր։ Հարս, աղջիկ, մեջկնիկներն ալ բերվընին բաց իրեն մտիկ կընեն, ասոնք իրիկունը, ծյուրած երեսով, մաղը գլխուն, թամ ճեճեկ կուզեն։ Սանկ շարք մը ահա պատճառներ, որով ո՛ւր երթա, ո՛ր հողտերի ալ դիմե, մարդով, միջնորդով մուտք խնդրե արտին մեջ, կքշեն կքշրեն ինչպես չղլած եզ մը, որ ջրբոսին կանանչը կավրե։

***

Անցած ամառը, չեմ հիշեր ո՛ր օր, ոտքս անգամ մըն ալ այն գեղը կիյնա. ս. Դավիթ բժիշկ սուրբ մըն է այդ գեղին մեջ, փոքրիկ Զավենս անոր ոտքը տարած էի որ հազեն դադրի։ Կիսափուլ պատին մը տակ, այնտեղ, գզված մազերով ճմռթկված տղեկ մը, ալքերեն փոխված թե՝ շվոտեն ծեծված, աչքիս կհանդիպի, որ բայ ու փետատ ձեռքը կտոր-կտոր բաներ մը կհանե հողեն ու խաղողի մեծկակ կթոցի մը մեջ կտեղավորե։

Տղեկը անտարբեր իր ըրածին, ոչ իսկ աճապարողի երևույթով, կթոցը լեցնելուն կհայի։ Ի՞նչ է ատ, կըսեմ, տղա՛, ի՞նչ է կընես, միևնույն անտարբեր արտահայտությունով։ Տետեիս մարմինն է, կպատասխանե, պատը փլավ, տակը մնաց, աս աղբերուն մեջ, պահ մըն ալ տանիմ, որ գերեզմնոցը պառկի։

Ու ծերունիին այս մոռցված թոռնիկը իր ամբողջ տետեին սակառին մեջ զետեղելով՝ կշալկե զայն թեթև տոպրակի մը պես,

•՞Ֆ մի միայն ու մոտ ճամփե մը գերեզմանին դին կանցնի։ Բուրեկ՝ դժբախտ ծնած արդեն, կհավատայի՞ք, որ անոր վերջին տեղը գնե երշանիկ հանգստարան մը ըլլար։

1900

ՏԱՆԻՔԻՆ ԱՂՋԻԿԸ

(Հովվերգություն)

Արևը Խաչո-Մելիքենց բլուրն ի վար արագ-արագ իր մուտքը կերթա։ Ծղիթները ասկե անկե վերահաս գիշերին սուգը եղեբերգելու անսիրտ սկսվածք մը կընեն։ Իրիկուն կպոռա աքաղաղը, ժամկոչն ալ իր փայտե կոշնակին բութ թիկթակովը կլոր-կլոր իրկուն «կձենե»։

Ծառաստանին շուքը պաբուրած է աբդեն հունա արագիլին ալ թառը, որ կիսավեր տունի մը ծխանին կատարիքը շիներ է։ Արագիլին բույնը, երբեմն ի վեր է, ինք չիկա հոն, ու անտեր բույնը շաղփաղփ ճնճղուկներուն հով, հանգիստ զբոսավայր մը կմնա։

Քիչ մը ետքը, ցորեկի ամայությունը կյանքոտ ժխորի մը տեղ կուտա, նախիրին գոռում գոչումը պիտի սկսի։ Նոր ծնածները խաղալեն խեղկտալեն իրենց մայրերը պիտի դիմավորեն, հորթը, ուլը, գառնուկը, ուռուցիկ, կաթնածոր ուրերու վրա պիծակներու պես պիտի փակչտին։ Ուրերը ուռուցիկ ու կաթով լեցուն, զմրուխտ սեպերուն հետ վայրի բազեղին ու խնձոր խլորեկներուն անուշ հյութովը շենցած են։

Բակին տեսարանը, ոչխարներու բակին եռուզեռը, այն պահուն, երբ մայրերն ու ձագտիքը կարոտցած հանկարծ կգտնեն իրար։

Անդին ծերուկ մաման բո՛ւֆ-բո՛ւֆ փիլավին կրակը կհրահրե. ծխաններեն վեր մուխերուն ծառ-ծառ վերելքն ու կազմած ճյուղերը, այնչափ մոտը կանանչ ծառաստանին, կապույտ ծառերով, կապույտ անտառի մը պատրանքը կուտան։

Բանվոր տղաքը, հարսները հոգնածի, նազոտ կոտրտուքներով, իրենց մեծերեն դիժար, իրավացի պահանջներ մը կընեն։ Պահանջներ, կատակներ ու պզտիկ հարսին անճրկությունը տնկարող հեգնությունները շաչող ծիծաղներով ընդմիջված, երկինքեն անցնող ճուռակներուն ցրված ճռինները կհիշեցնեն։ Կեսուրը հարսին մեկուն հյուսքը կշոյե բուխ գորովանքով, այն մյուսին մատին պատատը կկապե, ուր մանգաղը հետք մըն է ձգեր, պզտիկ հարսին խոստում, երգում, որ շաբաթ իրիկուն մարանցը խրկե։

Զվա՛րթ, զվա՛րթ, զվա՛րթ, դաշտեն տունը այսպես, տունեն դաշտը ծծղերես։ Տարին որ կանցնի, հաջորդ տարի մըն է եղեր, լոպը, մարախը, սերմնաքաղը վնաս մը չեն տվեր ցանվածին, մեկը տասը, մեկը տասնհինգ ու ավելի արդյունք կխոստանա, մանգաղին արծաթ բերեին վրա ոսկի հունձք մը ու նմանը քիչ անգամ տեսնված։

Երդիքին տակ, ճրագլուսուն, բանվոր ընտանիքը իր մեծերովը պզտիկներովը լայն առանձին շրջանակներով սեղաններ կբռլորեն, դգալներուն շարժքը, ելևէջքը դարբնոցին մուրճերուն գործոնի ջարժունությունը ճիշտ։

Կուտեն հնալով, կուտեն արտորնոք ու ախորժով կթխմեն, շոր հացին պատատը շաքրե կարկանդակի մը համովը կհալվի բերվընուն մեջ, ու կարմիր կուժին զուլալ, պաղ ջուրը ծարված եղջերուին խանձումովը բերեին բռնած՝ կարմրդարի գինեեն ալ անուշ, կազդուրիչ է կրսեն։

Հալալ վաստակ, հալալ վայելք։

Սեղանը կվերջանա, փշրանքները կժողվին, հենց առ փշրանքներեն թռշոր, ահագին սակառներ կլեցվին։ Քրտինքով օծված աշխատության հացն է, որ չոգատիր, ու դեռ առ հացին հետեն թափթրփուկներովը փողոցին անոթի շներն ալ պիտի կշտանան։

Հացեն ետքը հանգիստ մը տանիքին վրա։ Այդ անծածք, աղվոր ննջարանը գեղացիին, որուն մեկ ծայրեն մյուսը նետ նետես գետին չիյնար, դուր դաշտի մը երեսույթը ունի, ուրկե ծոթրինին հոտովը խնկված իրիկվա հովերը կճամփորդեն և որուն վերաքը, իրենց՝ աս արեորդիներուն ընտանի լուսնակ քեռին է, որ կեցեր հոն այնքան մոտ, կաղտամախիներուն գլուխը, վկա մը կըլլա տանիքին բազմության անցուցած աշխատալի օրվանը, վկա մը անոնց խորունկ քունին։

Տանիքը, անկողիններուն երկայնքին փռված, ու քարի չափ կարծր բարձը մեջքերնուն, որուն ալ վարժվեր էին, կթողուն պահ մը վարինները ու իրենց վերի դրացիներուն՝ լուսունկային դիմացը կթարթեն աչվրնին։ Ու վայրկյան մը լուսունկային դարձած, անոր հետ իրենց հեռավորներուն բարև, շատ բարևներ կխրկեն, կարո-

տով բարևներ, սիրավառ ոսկի ժպիտով բարևներ։ Մեղադրանքներ, խոստովանանքներ, կրակ ու բոց երազներ, զոր արտահայտող բառը ոչ լեզվի վրա կա, ոչ գիրքի մը փաթը, ծրարվուկ, ամենքը ան իրենց լուսնակ քեռիին, ծերուկ լուսնակ քեռիին ծիրանափայլ փեշը նետելով թեթևցած, մխիթարված՝ անկողին կմտնեն։

Ժամերը կսահին մեղմով, հարդագողը, յոթնաղբյուրը ալ նույն տեղերը չեն երևնար։ Իրիկվա թեթև հովերը հոգնած, ուժաթափ հոն կանաչ տերևներուն ծոցը, թաղին քնացողներեն աղվորին ծոցը, իրենք ալ աղաչողի փսփսուքներով, հանգիստ մը կփնտռեն։

Արթուն մնացողը այն բուն է, կերևա, որ այն կողմը լքված ավերակի մը ամայությունը կուլա, այն ծղրիթները, այն «գիշերի ձայները», որ մանկանց օրաններուն ու պառավանց անկողիններուն համար գինովցնող քներգը կերգեն։

Տանիքին անդիի ծայրեն, այն անշարժացած անկողիններու շարքը, ծալվող, ճմռթկվող վերմակի մը զգույշ, մեղմիկ դրոտոցքը կլսվի անձկոտ, անհանգիստ շարժումի մը նշանները կան այն կողմը։

Այն կողմն ալ աղջիկ մըն է քունին դեմ ոգորողը, երեկ ալ, այսօր ալ արթուն կմնա, կսպասե, որ իր սիրած տղուն հարենը կալերուն դիեն, մեյ մըն ալ լսե, այն ձայնը, մեյ մըն ալ առնե ու խրե իր էրած հոգիին մեջ ու այնպես նետե իր գլուխը բարձին։

Ամեն գիշեր, երբ արար աշխարհք քուն կըլլա, հոն լուռ ցվիքներուն եղերքը, դաշտերուն այն սիրահալ աղջիկն է, որ «թարթիչ վրա չի բերեր», արթուն, միշտ արթուն, երկու քուրվըտոց խորհուրդ կհարցնե, օր մըն ալ անոնք իրենց ցավերն ալ ունեին, իրեն պես բռնի նշանվածներ՝ չսիրածներուն հետ։ Ինք ալ հիմա այն տեսակ տարտով մը կմրկվի, «փախի՞լ իր ուզածին հետ՝ թե ճակատագրին համակերպիլ»։

Աչքերը սևեռած շեշտ ան երկու քուրվուկներուն, ականջն ալ կալերուն կողմը, իր սիրած տղուն կողմը, կսպասե երկար, գիշերին բոլոր մթությունը իր հոգիին մեջ լիցնելով, կսպասե երկար իր անկողնին մեջ քարացած պատասխան մը, արձագանք մը իր ինձկանքներուն — երբե՛ք, երբե՛ք։ Ու խեղճ աղջիկը այսօր ավելի ջախջախված քան երեկ, կուրծքը գիշերի հովին առջևը բաց ձգելու վիճակին մեջ կդնե հուսահատ, հովին հյուրընկալը կըլլա, ատ հովը շունչը գուցե իր սիրած տղուն, իր բամպակ լանջին վրա կսեղմե,

անոր հետ, գիշերն ի բուն անոր հետ, անվերջ համբույրներ, անհուն սրտազեղում ու կարոտի փարումը իր ուզածին հետ, այնպես կլուսցնե գիշերը տանիքին աղջիկը։

1902

ՄԵ՞ՂՔԸ, ՄԵ՞ՂՔԸ

«Գիր տարւոյն»-ը արդեն շատ աղեկը ցույց չէր ի տար։ Հովերը փչեր էին։ Տեր Պողոսին աչքը ընկած տեղը կպաղեր։ Խորան՝ն վրայեն օրը-օրին մարող ճրագները ալ երկրորդ անգամ լուսող չէին ունենար։ Գեղը փրոտն էր եկեր։

Ծերունի ավագերեցը դեռ կկասկածեր, որ աշխարհի վերջը հասած ըլլա արդեն, այդ պատճառով հավանականություն մը կորոճար, թե մյուս տարին ալ Գոգն ու Մարգոգը ըլլան եկողը։

Տեր Պողոսեն զատ ուրիշներ ալ կային, մեկ եկեղեցիին մեշտասը, տասնմեկ քահանա, որոնք օրվան ան ժամավեր համաճարակեն իրենց ծխատուները կարելիորեն ազատ պահելու կանխազգուշությունով, առտու իրկուն քիչ մը ավելի կանուխ կերթային եկեղեցին, ցերեկային այցելություններով ալ քիչ մը ավելի երկար մնալ ու մտմտալ կստիպվեին ան իրենցիններուն մոտը։ Բայց սամույրը մտած էր հավքունը ու հոն տեղավորված ալ։

Ժողովարանը այնտեղ հայ ժամեն քիչ մը անդին օրըստօրեաբար շեննալու հաջողության մեջ, դեպի ուր ամեն օր նոր ճամփորդ կար, քահանա հայրերուն դեմքը աշնանային մթություններու արցունքոտ թախիծովը կծածկեր կամ ծածկեր էր արդեն։

— Ի՞նչ պիտի ըլլի վերջը, տեր Ղազա՛ր, վարդապետը ձեռք մը չպիտի՞ երկնցնե, սրվոնց առաջքը չպիտի՞ առնե, բաներն ասանկ երթան նը, վաղը կերվա, որ մենք ալ Տեբոյենց բակերը պիտի երթանք, աղոթենք։

Ավագերեցին հուսահատ հարցումը քահանաներեն մեկուն, որը ինչքան ալ խորունկ հասկցողի համբավ վայելեր գեղին երդիքներուն տակ, բայց կվարաներ, կամ արդեն չէր կրնար տալ վճռական պատասխան մը, քանի որ չերևակայված զուգադիպություններով նույն միջոցներուն ինքն ալ օրվան առաջնորդ վարդապետին հետ խոսքը մեկ ըրած՝ գաղտնի բանակցություններ կկատարեր Պապական Գե-

բապայծառին մոտը։ Վարդապետը Պատրիարքարանեն քեն ըրած էր, քահանան ալ իրեններեն ցաված՝ ծառաստանի վեճերու հետևանքով մը, երկուքն ալ պապականություն ընդունելու որոշումին հանգած էին։

Ավագերեցը հետևաբար, շատ ավելի ինքն էր, որ մինակ կմընար այն երևույթներուն հանդեպ, մինչև իր երիկամունքներեն խշխշացողը։ Իսկ մյուս իր պաշտոնակիցները,— որոնք հասարակ գեղջուկե մը զատվելու համար ոչինչ ունեին իրենց ներսովն ու դրսերևույթովը,— անոնք ալ ահա իրենց խոստովանաորդիներուն առջև մնալու գորովանքով, դեռ եթե վերջին միջոց մըն ալ կրնային խորհիլ, ան էր, որ շաբթվան մեջ մեկ-երկու անգամ ծխատուներեն առաջավոր ճանչցված դեմքերը տուն հրավիրելով, անոնց ի պատիվ ճոխ-ճոխ սեղաններ կսարքեին, որ ատեն, խնծղոտ վարձկաններ, գինին երեցիին ձեռքով խմողը իր զվարթ կափկափներուն մեջ, հյուրընկալ տերտերուն կռնակը կծեծեր, անոր երեսին անգամ մըն ալ ըսելու կամ իր տաներեցը անգամ մըն ալ վստահացնելու, թե բոլոր գեղն ալ եթե հավատքն ուրանա, ինք վերջինը պիտի մնա։ Երբում սուրբ բաժկին վրա, երդում մանավանդ այն լոս հացին վրա, որ ինք վերջինը պիտի մնա։

Ու հաճախ գինիով ողողուն այդ սեղաններուն վրա, փրոտի մը ներքին ու արտաքին տարօրինակությունները զարմանքի ու հեգնության առարկա եղած՝ խոսքին հետ մինչև լույս առավոտ, բղողին ալ տակը կբերեին։ Անոնց համար տարօրինակ որ՝ Աստուրին Այրոնը՝ երեկվան հավդողը, սուրբերուն բարեխոսություն կուրանա, տարօրինակ, որ մրուր ծծող Թ.-ենց Թումիկը գինին օձ ըլլալը կքարոզե։ Պահքն ի՞նչ է, պատարագն ի՞նչ է, մեռոն, մկրտությունն ի՞նչ է, ասոնց վրա խոսող անօրենն ալ այն Մելխասը, որ վեց ամիս առաջ, աղբորը որբը, մորմե մերկիկ՝ տունեն դուրս քշելու անգթությունը կընե։

Դեռ ինչե՞ր, ի՞նչ տարօրինակություններ, որ ան Տերոյենց բակերը աղոթելու վազող փրոտի մը հոգիով նորոգվածի մը հատկանշությունը կոսկեզօծեին։

* * *

Անգամ մը, ակնարկված այն տարօրինակ նորույթներու կարգին, գլուխգործոց մը ցուցադրելու համար, եկեղեցիեն հեռացողներն ի՞նչ կրնային ընել ուրիշ, որուն ան ատեն մենք ալ մեր պզտիկի թարթիչներուն տակեն հանդիպաբար ականատես կըլլայինք։ Չեմ մոռցեր։

Գինիին օձ ըլլալը հավատացողներուն կարդին մասնավորապես եթե եղան անանկներ, որ իրենց խաղողաբեր այգիները քակեցին ու մշակելի արտերու վերածեցին, ոմանք նույնիսկ խաղող չուտելու անգամ թունդ ուխտը ըրած, բայց դեռ կհամբվեին անանկներն ալ, շատ ավելի սկսնակ հավատափոխները, որ այն տարին, ինչպես կպատահեր, առատ ալ գինի դրած էին ու սակայն ձեռքը-նին վրա չէր երթար, որ վերջապես ջուր մը դնեին կարասներուն գլխուն, որոնց հատակեն մինչև պռկունքը կարմիր օձն է, կեռա, կսպառնա. ի՞նչ ընեն, ի՞նչ կրնային ընել, քանի որ մյուս կողմեն շատ առիթներով իրենց հասցեին մեղադրանքներ ալ կըլլային եկեղեցիի անգամ ավագ եղբայրակիցներուն կողմեն։ Դիրակե առտու մը հայ ժամվորը եկեղեցիեն դուրս ելած՝ ճամփու վրա, տեսաբանին ու տարօրինակության բոլորովին խելահեղիչը կուենա առջևը։ Այն կողմե, ժամուն ալ մոտիկ նեղ փողոց մը, որուն երկայնքին ու երկու կողմերուն վրա ամբողջությունովը նորահավատներու տունները բռներ են, դուռներուն առաջքը լեցուն հակերու գիրքով կայնեցված մեծ-մեծ կարասներ կտեսնվին։ Կարասնե՛ր, հո՛ ըսեմ տասը, դուն հասկցիր քսան ու ավելի թիվով, փեթակի չափ խոշոր, խոշորափոր բաներ։ Ասոնց ամեն մեկուն կուշտին ալ, սոթքված թևերով մեյ-մեկ հոգի կեցած՝ խաղը խորհրդավորության մեջ վերջացնելու համար իրար հասկցող աճպարարներու ոգասանքը ունին կկարծես, և որոնք հետզհետե ժամեն ելլող ու ստվարացող բազմության կողմը լայն աչքեր մը կբանան։ Թափեցե՛ք... ճաթռտած կոկորդով ձայն մըն է կերկննա։ Նշանը տրված է, ու մեկեն մեկանգամով այն փեթակի պես բաները փորերնուն վրա ֆշրրշվին, գետին նետված ահագին գոմեշներ, որոնց կտրված շլլինքներուն ազբերացող արյունը իր վերջին կաթիլովը դուրս խուժել ուզե, այս երևույթը ճիշտ ու դուռներուն առաջքը վայրկենապես կարմիր ծով մը կկոհականա. աչքդ անգամ մըն ալ կբանաս, որ այս ծովը այն ինչ ուղղությամբ կարմիր գետի մը ընթացքը առած վազելու ասպարեզ կփնտռե, գալարքի ցավով մը կվազե, ու այդ վազքին մեջ վիրավորված վիշապի մը զայրույթովը կֆշշա։ Մեծ օձը, կարմիր մեծ վիշապն էր այն թողվածը, այո՛, որը հոն կերթա ու հողին ու ազգին մեջ իր անէանալու տեղը դտնե։

Այդ գործին հեղինակները հաղթանակը տանողի հպարտ ոռնումով մը կպոռան անոր ետևեն, մե՛ղքը, մե՛ղքը, մե՛ղքը...

Տեր Պողոս խենթերու այդ արարքին ի տես, կեցած տեղը կաթվածահար ըլլալու նոպա մը կանցնե։ Խենթեր, որ մայրերե չեն ծնված, հիմարներ, որոնց մեկ հատը դժոխք մը կլեցնե։ Ամեն բան, ամեն սրբություն, ոտքի տակ առնելու անօրենության հետ, հիմա ալ չլսված, չտեսնված ամպարշտություն, սուրբ բաժկին է, որ հոգին ու աղբին հետ կխառնեն։ Շուտ ըրե՛ք, կըսե, տղա՛ք, քովիններուն, շուտ անցնեինք սա տեղերեն, որ գլխընուս վրա կրակ չթափեր։

* * *

Այն օրեն ի վեր, քանի տարի անցեր է, չեմ գիտեր. իմ գիտցածս ան է միայն, որ այն հայ գեղին մեջ հեշտ պիտի ըլլար հիմա հաշվելը, թե մեղքերու քանի տեսակները կգործեին գեղացիք՝ ընդունված դրության մը սովորականությունով, զոր լվալ ստրկցնելու համար Եփրատի ջուրն ալ չպիտի օգտեր կարելի է։ Իմացված քրիստոնյա կյանքը ոչ ժամուն ժողովուրդը կապրեր հոն արդեն, ոչ ալ, ավա՜ղ, ժամեն հեռացող դասալիք այն հատվածը գիտցավ բան մը ընել։ Հոն աս վերջինները մանավանդ այնչափ տարիներ աչքերնին բեմին ոսկեզօծ ավետարանին վրա սևեռած պահելով մեկտեղ, մեղքի տեսակներու ու անոնց հետևանքին վրա միշտ նույն բեմեն ամեն օր բաներ մը լսելով մեկտեղ, հիմա իրենց ու մյուսներու բարոյականի աստիճանաչափը որ տեղեն կամ որ դիրքով պետք պիտի ըլլար դիտել, որ զգալի տարբերությունը ձեռվնիս իրենց համար նպաստավոր խեցեվճիռ մը փորձեինք։ Տարիներ առաջ ջնջած այգիներուն վրա այսօր իրենք են, որ կուլան։

Ու մեղքերը... քանի՜ տեսակ ու ի՜նչ եղանակավորված ձևերու մեջ։

Ցավելով կգրեի աս տողերը կամ բնական էր, որ խորունկ հոգոցով մը սկսեի այն ատեն, ուր կարասները կոտրվելով, անոնց մեջեն օձ-մեղքը եղավ դուրս նետածնին, որը հետո իր ձագտիքներովը պիտի վերադառնար ու սողոսկեր իրենց դեմքերեն ներս, ան ատեն ճիշտ, կամ անկե վերջը հետզհետե, ավելի աղեկ չպիտի՞ ըլլար, որ բաներ մըն ալ իրենց միսեն ու ոսկորներեն փրցնեին նետեին։ Այդ միսերը, այդ մորթերը, անոնց տակ ծածկված կնճռոտ բնաղդն ու ոսկրացած բարոյական խեղությունները, նախ ասոնց

վրա կատարեին հիմնական փոփոխությունը քարոզված ավետարանին մաքուր աղդեցության ներքև։

Տարիներ անցնելե վերջ կըսեմ, կարգ մըն ալ մեզի չէ՞ր տրվեր, որ մենք ալ հիմա պոռայինք, մե՛ղքը, մե՛ղքը, դեռ նույն մարդը, դեռ նույն տգեղությունը, նույն մութ նկարագիրները, աջ աչքերու, աջ ձեռքերու նույն մեղքը տակավին, որ կա ու կմնա գեղին բոլոր հայ համայնքին մեջ հավասարապես։

Շիտակ չէր ուրեմն, որ ըսեինք թե՝ հոն իրավ որ ո՛չ հայ քահանան կրցեր է բան մը ընել, ոչ ալ պատվելի քարոզիչը կարող եղեր է քրիստոնեական շինիչ բարոյական մը մշակել, գոնե ինչպես հասարակ կորեկ մը կմշակեին։

Եվ ինչո՞ւ...

1904

ՊԱՏԿԵՐԻՆ ՏՂԱՆ

Սովորություն մը իր տարօրինակության մեջ անողոք ըսվելու և հոչակվելու աստիճան ընթացք առած՝ այս վերջին քանի մը տարիներուն, տեղացի մեր աղջիկները անստույգ բախտախաղի մը զոհերը կպահե, որուն առջևն առնելու հնարավորությունը ես ալ խելքովս չէի կրնար ծրագրել, ուրիշի գյուտին վրա ալ հավատք չունիմ։ Երկրին տղաքը հայտնի է, թե ո՜ւր հաստատվեր են և ուսկե ձեն կուտան, ու անոնց ետևեն ան նոր գացողներն ալ ինչքան փութկոտ էին, որ հիմա նույնիսկ եղանակին բուքն ու քամին ալ բանի չի դնելով, օր առաջ լեռն անցնիլ ու տեղ հասնիլնին կնային։

Թե ինչո՞ւ կերթան, կամ աս նորերն ալ ինչո՞ւ ելեր կհեռանան, որոնք ետևնին ալ չնայելու համար շատերը ամբողջ ընտանիքով կճամփորդեն, առայժմ մնային ասոնք, ու դուք միայն ժամանակ գտնելով սա դողդողացող մատիս հետևեցեք, որ այն կողմը կպարզեմ «որշափություն» մը հասկցնելու համար։

Տունները պարպված են, կպարպվին, այսօր ամայացած վանդակներու ձևը առած են, որ վաղը իրենց տեղերուն վրա անպետ հողակույտերու վերածվին, ու դաշտն ալ, ուրիշ կողմ մը, փուշով ու տոշկուկով ծածկված ու կորդացած մողեսներուն փորին տակը խշխշա։ Բայց դեռ աս չէր ըսելիքս։

Երկրեն նախօրով բաժնվողները, որոնք հոն ամերիկյան միսի

մը վրա ակռա չի կրնալով բանացնել, անոր հետ շամուսնանալու շատ մը բարդ պատճառներ կունենան եղեր, գոնե ինչպես իրենց գրածներեն կիմացվի, դրեթե միշտ անոնք են կամ անանկներու մեջեն այն ծեր երիտասարդն է մանավանդ, որ գործավորի իր հաշված մարմնին դիմացկուն հենակ մը ապահով ըլլալու համար, որ քիչ մըն ալ գիտցված սիրուն ձուկ մը ըլլար, խելք կընե, անկե հոս մինչև, ոսկի կարթ մը կնետե, կարթ մը ոսկիե, անով շատ անգամ կհաջողի ճիշտ իր ուզածին ու նշան ըրածին հոգիեն բռնած ըլլալ, եթե սակայն կարող զայն մինչև վերջը իր ձեռքին մեջ կամ իր բարձին վրա պահել։

Խոսքս վեպի մը ստվերոտ մթամածութենեն ազատ պահելու համար կստիպվեի հոս քիչ մը կանգ առնել։ Ամերիկայեն Խարբերդ նշանվիլ ուզողը հոս իր ծնողքին, թե չուներ այս, իր ազգական ծանոթներեն մեկուն անունին կարևոր գումար մը հանելով, ճամփու ու նշանտուքի ծախսերուն օգտելու չափ գումար մը — կարտոներ զայն, որ բնավայրին թարմագեղ կուսություններեն հատի մը փնտռտուքն ըներ, ու անոր հետ օր առաջ ճամփա իյնար, եթե ինք չէր կրնար երթալ, ուրիշի մը հետ խրկեր ան բռնված ձկնիկը։ Ուզածին պես, ուզածեն ալ ավելի։ Հավնելիք հարսնացուն առ տունը եթե չկար, ան դռան ետևը անպատճառ երկուքը, երեքը մեկտեղ կգտնվեին։ Բազնիքը, եկեղեցին, որբանոցները, աղջկա պես ապրանքի մը ճոխ ցուցադրավայրերը, հաղարներ կային, որ հովիտներու շուշանի պես ծաղկեր են ու այսօր վաղը դաշտի կակաչներուն պես պիտի խամրեին։ Մեկ օրեն մյուսը՝ ուշ ալ չպիտի մնար բանը, գուռ մը կբացվի, աղջկա խնդրակը՝ կին մը, կամ կնկան հետ էրիկ մըն ալ ներս կմտնեն. բազմոցի վերին անկյունը անոնց տեղ կցուցվի, ընդունելության պայմանագրական կետերեն բան մը չպիտի մոռցվեր։ Մարդիկը առեր ու նստեր են, անոնց հետևը խնձոր ալ խրկվեր, չէին գար. հարգանքի իմաստով աս փաղաքուշ խոսքն ալ տանտիրուհիին առաջին խոսքը կըլլա։ Ան օրը դեմինին հետ բանակցությունը որոշ գույնի մը մեջ ապահովելու համար, տղուն կողմե այն կնիկը՝ մայր կամ ազգականուհի, անանկ ալ անուշ շառլթանություններ կստեղծեն ու կաբժեցնեն, որ օձը ծակեն դուրս քաշելու չափ հզոր հմայք մը կունենան։ Տղան հոն լորտ մըն է եղեր, տղան հոն շաբաթը այն ինչ չափով վաստակող մը, շատ հարուստներ աղջիկին վրան կձգեն եղեր, բայց ինք հարյուրներուն մեջ մեկ հատիկ խելացին, անոնց բոլորը մերժելու խոսքով, իր ուզածը ան-

պատճառ իր երկրեն տարված մը պիտի ըլլի եղեր։ Մայր կամ ազգականուհի, անգամ մըն ալ ան իրենցինին լուսանկարը քշելով ձեռքը աղջկան տերերուն, տարիքն ալ կավելցնե, քսանութը անցուկ՝ բայց դեռ քսանինը չըսվիր։ Թոսունի պես ճահիլ մը, որ իր պոսին աչքին լույսն է եղեր...

972

Պատկերին տղան, այն որ ութը, ինը տարի առաջ, աս տեղեն գնալու առույգ օրերու լուսանկարն է եղեր խրկածը անամոթ խորամանկությունով մը, իրավ որ հենց առաջին հարվածով քիչ շլացուցիչ չերևար։ Այն ինչ պերճանք է, որ մեկ թևին վրա քոթն ու քեբը կկրե, մյուս ձեռքն ալ սիրուն գավազան մը բռնած՝ փարթամի հով մը ունի, սքանչելի է, նայողին մինչև ըղունկներուն ծայրը անուշ սարսռունք մը կխաղա։ Ճակտին վրա դանգուրի սև փունջ մը ցնորեցուցիչ ոլորքով, կնոջական քնքշանք մը տվեր է գեմքին, որը կտրիճ առնականության մը գիծերն ալ միացնելով, մեռելին կուրծքին տակ ալ կրնա հանկարծ փոթորիկ մը հովել։ Ու դեռ գեղեցիկ՝ ո՛րը չէ. աղվոր ինչ բանը չէ տղային։ Զախ սրունքին բացվածքը հավակնոտ դիրքի մը մեջ, միայն աս երևույթը ասպետի կեցվածքով՝ ինքնին բավական պիտի ըլլար, որ զառամ պառավի մը հոգին անգամ դգալ մը կարագի պես հալեցներ։ Թե այն ասպետը սակայն, պատկերին այն լորտ-ասպետը, իր այն չի տեսնված շքեղանքին մեջ, մեր երբեմնի Իսպիրենց Բիբի-Թումիկն է եղեր, որ հոս իր ոտքը կաղալու օրերուն, ճարը հատած՝ իր դարձիկ քիթը կքակեր ու կգործածեր, իրիկունն ալ սպասելով, որ փողոցը վարունգի կեզևներ ըլլային իր սնունդը, հիմա կըսենք, ատ չէր խնդիրը։ Ան ատեն մարդերն ու բաները ինչ որ ըլլային, մեզ համար պատկերին լորտն է, ճենթըլմենն է խոսեցնողը։ Այսպես հետզհետե աղջկան տիրուն լեզուն թմբուկը թողած ալ կարծես դրմպլիկ կզարնե հիմա, հավաներ են, աղջիկը երևան կելլե, անոր պոյին պոսին հետ, ակնարկ մը անոր աչքին ունքին վրա կպտտեցնեն, տարիքը կհասկնան, մազերուն հյուսքն ու հանկորցները կշափչփեն, երկու կողմերն ալ կատարյալ հասկացողության մեջ, մյուս օրը ահա հարսնցուին կուրծքը խաթ-խաթ ոսկիներու տակ՝ գեղին դեմ, քաղքին դեմ, բոլորին աչքը քիչ մըն ալ նախանձի խոստուկով լայն բացված իր վրա կպահե։ Աղջկան ալ ուզա՞ծն էր ան եղած լմնցածը.— Ծնողքը քանի որ առաջին հավանողները եղած էին, անոր ո՞վ խոսք պիտի ձգեր։ Կարթը ոսկի ըլլալու եզականությունովը՝ շատ անգամ նույնիսկ ծնողքներ իրենք են, որ զայն իրենց զավակներուն կուրծքին շուլլե-

լու անգթությունը կգործեն։ Թե մինչև հիմա այդ տեսակ ոսկի կեռի մը հրապույրովը քանիները եղան, որ հոս միամիտ արտորքով մը բերաններին առին զայն կամ առնել ստիպվեցան ու գացին հոն արինի լերդեր փսխեցին ու այն կուլ տվածնին դուրս բերեն ու շաքաչար մահե մը ազատին, բոլորին ալ պատմությունը այդ միամիտ զոհերուն միտքս էր տակավին, երբ անցածները հատի մըն ալ հանդիպեցա, ականատես եղա ու չեմ գիտեր ինչպես, միտքս պահեցի։

— Ճամփու վրա խումբ մը կնիկներու կհանդիպիմ, որ թիկունքնին իրար կպած, քով քովի, դար վար գնացք մը կընեն, եկեղեցի կիջնեն, իմ ճամփաս անոնց հակառակ ուղղությունով ցից վերելք մըն է, ուր քիչ մը շունչ առնելու համար, բայց շատ ավելի այն կնիկներուն երևույթին անակնկալովը՝ կստիպվիմ մեկ քով ելլել, ես զիս հավասարակշռության մը կբերեմ, օրը կիրակի չէ. բայց այս խաթունները իրենց գլխու շալերուն տակ բավական մըն ալ լուրջ քայլվածքով կիրակի աղոթավորներու ձևը ունեին։ Հետերնին աղջիկ մըն ալ կա, որ ճամփուն ու կնիկներուն ալ ճիշտ մեջտեղեն կքալե նազոտ ու քիչ մըն ալ թափթփուն, բոլորին գլուխը անոր կողմը շտկված կերևա, ամենքը անոր կհետևին, մեկը եթե մայրն է, կմտածես, մյուսներն ալ անոր ազգականի պես դեմքեր պիտի ըլլան անպատճառ։

Աղջիկը՝ խումբին թարմ աղվորությունը, պսակելո՞ւ կտանին կըսեմ, անգամ մըն ալ ես ինծի։ Պատրաստ մտածություն մը, բայց չեմ ապահովվիր։ Մեկը կճանչնամ քիչ մը, մեզի դրացի պիտի ըլլա, երկայն հասակով, միջին տարիքով կնիկ մը, ու գուցե ամենքեն շատ ցյուրամատչելին անկե բան մը հասկնալու համար, կհարցնեմ, ո՞ւր բարի այսպես, խաթուն. բոլորը երեսնին իմ կողմը կդարձնեն ու խոսողը այն մեկն է միայն.— ժամ... էֆ... աղջիկնիս կխբրկենք, հիմա ժամ կտանինք, որ հաղորդ առնե, քիչ մը վերջն ալ առապատիին հանձնենք պիտի, բայց սպասել որ անձրևը կտրեր գոնե։ Ան օրն ալ իրավ որ երկինքը փլեր՝ վար կուգար։

Եկեղեցիին ճամփուն վրա օդը կուլա, կնիկները կուլան, արցունք մըն ալ այն աղջիկը կքըմրտե իր տրտմանուշ աչքերեն։ Ես իմ ճամփուս կհետևիմ, այն մայրն ու այն ամենքն ալ իրենց արցունքներուն մեջ, եկեղեցի կերթան։ Դեռ կնայիմ ետևս, թող տված են որ թափի ինչ որ կա վրանին, այնպես որ եթե իրարու այնքան մոտիկ կամ կոթնած չի քալեն, ճամփուն լայնքին վրա տակեն կըտըրված ծառներու պես պիտի շրջվին մեյ մեկ կողմ։ Կմոռնամ

վայրկենապես աղջիկը եկեղեցի առաջնորդող այն մայրն իր ցավին ահագնությանը մեջ, միտքս շատ ավելի այն ճամփորդ աղջկան վրա կպահեմ։ Ամերիկա խրկվելիք հարսնցու մըն է եղեր։

Կհասկնամ վերջապես թե՝ այն աղջիկն ալ իր կարգին կեռի մը բռնված ըլալու դեպքովն է, որ ճամփա ելեր է ու կերթա, որ հոն անծանոթ հեռավորության մը վրա իր պատրանքին մեջ խեղդվի։

Ամիս մը, ամիս ու կես անցնելե ետքը, երբ լեռներուն շարքը հատնի, երբ իր 16—17 տարեկան աղջկա ծիրանի անուրջներովը օրորուն, կապույտ ջուրերեն անդին, նոր եզերք մը կոխե, երբ հոն երկինքեն նայի ու ալ իրենց երդիքին արևն ալ չտեսնե, խեղճ աղջիկը, մտածել վայրկյան մը թե՝ ինչպես հանկարծ ինքզինք իր ամբողջության մեջ շանթահարված պիտի զգա, հոն ծովափին վրա մեկը տեսնելով, որ իրեն ձեռք կկարկառե։ Տարիքը քառասունի մոտ ձախավեր դեմք մը, փոսն ինկած աչքերով երիտասարդ մը, որ ուղտի սապատ ունի, տասը տարի առաջ ծերացած ու մաշած գործավոր մը, ու ոչինչ ավելի։

Ծովափը իր նշանածը դիմավորելու եկած է։ Աղջիկը իրմե առաջ հասնող իր լուսանկարին իսկական նմանությունը՝ ճիշտ նույն հրեշտակն է ապահովապես, որը դեռ կրնա ծովերեն ծնած պաշտելի նայադ մըն ալ ըսվիլ. անամոթը, ի՞նք հապա — Այն աղջիկն ալ հիմա իրավունք չունե՞ր, որ բուն իսկ պատկերին տղուն կամ անոր պես մը որոշեր փնտռել։

1905

ԻՆՉՊԵ՞Ս ԿՆՊԱՍՏԵՆ

Ա

Քահանան.— Սիրելի ժողովուրդ, հայտնի է ձեր աստվածասիրության թե՝ մեր եկեղեցին ու դպրոցը մեր նվերովը շեն կմնան, ուրիշներուն պես ուրիշ եկամուտ չունեինք, ուրիշները (միսիոնարն ու բաթերան) հազիվ իրենց համար կբավականանան ու անոնք հազիվ կընդունին, որ մենք ալ գոյության իրավունք մը ունինք սա աշխարհին մեջ։

Մեր լուման, մեր հինգնոցն ու տասնոցը մեզի համար շատ է, եթե տալու հոժարությունն ու կերպերը գիտնանք ու տվածնուս ալ

եաեր չուզենք հայիլ։ Աղեկ խորհեցեք, սիրելի՛ներ, խելքերնիդ գլխնիդ բերելու համար։ Վաղին ու մյուս օրվան մի՛ հայիք, վստահ եղեք անկասկած, թե մեկին տեղը հարյուրապատիկ, միուն փոխարեն հազարապատիկ պիտի ընդունեք։ Դուք գիտեք թե՝ գավաթ մը պաղ ջուրին ալ փոխարինությունը կա։ Այսօր ահա մեր լումաները մեկտեղելու համար օրն է, տոնի օր մըն է այսօր. ձեր տվածները պարապը չպիտի երթան, ու նորեն ուրիշ ճամփով մը ձեզի պիտի դառնան. ամեն մարդ իր կարյաց չափովը թող մեյմեկ բան գրվի եկեղեցիին ու դպրոցին համար, դրամ, բամպակ, ցորեն, ձեթ, եղ, գինի, գարի, ինչ որ կրնար, ինչ չափ որ կուզեր։ Տարիին մեջ արդեն շատ պատեհություն չի ներկայանար սանկ հավաքական ընծայաբերություն մը ընելու, հիմա ահա ձեզ տեսնեմ, սիրելիներ, տղաներ, հացալից քեհյաններ ու բարեպաշտուհի տանտիկիններ, խաթուն քույրեր ու ժամասեր մամիկներ, դուք ալ հիմա ցույց տվեք, թե բարին կսիրեք, ժամ, դպրոց կսիրեք, շեն սրտով մը բերվընիդ բացեք։

(Լռություն, ձայն չելլեր վայրկյան մը)։

Քահանան.— Օրհնյալ ըլլաք, Դավթի օրհնությունը ըլլի վրանիդ։

(Նորեն լռություն)։

Քահանան.— Դե՛հ, սիրելիներս, ձայն հանեցեք, ժամանակ չիկա երկար բարակ մտմտալու, գանձեցեք գանձ ձեր հերկինս կըսե, ավուրք մեր անցանեն որպես խոտ տանյաց, ըսած է Սաղմոսերգուն։

(Նույն անխոսությունը ժողովուրդին կողմեն)։

Քահանան.— (Հորանջելով մը ձեռքերը կճմռթկե)։ Չի՞նչ օգուտ է զաշխարհս շահիլ ու գանձն յուր տուժել, մի՛ մտածեք, մի՛ վարանիք, սիրելիներս, վաղը միայն երեք արշուն կտավ պիտի տանիք հետերնիդ։

(Ժողովուրդեն կսկսին պատասխանել)

Ա. — Երեք օխա ձեթ ինծիս գրե, տեր պապա՛։

Քահանան.— Օրհնյալ ըլլա, ձեթ և ճրագ ո՛չ պակասեսցի ի տանե քումե։

Բ.— Լիր մը բամպակ, տերտրամու։

Քահանա.— Բերան քու որպես բամպակ՝ կըսե, օրհնյալ ըլլիս, վարձս Նեեմա առցես։

Գ.— Ցորեն ու կես մայրուք փարա ինծիս գրե, տե՛ր պապա։

Քահանան.— Հիշյալ լիշիս առաջի ամմա գառին աստուծո, յոթը մահացու մեղքերեն ազատիս, որդյա՛կ։

(Ժամկոչը աս ատեն ժողովուրդին մեջ կպտտի, որ ոմանք բարձր ձայնով չըսելու համար իրենց տվածը, ժամկոչին ականջովը հասկցնեն տերտրուն)։

Ժամկոչը.— Չարեկ մը ցորեն, Եղնոյին տղա Գափոն, տեր պապա՛։

Քահանան.— Ցորենով առատասցի ամբարը Գաբրիելին, օրհնյալ ըլլա, Եղնոյին հարազատ որդին Գաբրիելը, սրբույն Հեղինեին օրհնությունն առցի։

(Լռություն պահ մը)։

Քահանան.— Շուտ, սիրելիներս, շուտ բացեք բերվընիդ, տամ-լա տամլա սել օլուր, կըսե, ախար կիտեր կյոլ օլուր, շուտ ըրեք այսօր վասն մեր ծովացյալ մեղաց, մեր երեցկինն ըլ հիվանդ է ու ճամփուս կհայի։ (Մեծ քրքիջ մը ժողովուրդեն)։

Ե.— Լիր մը գինի ինծիս գրե, տեր հայր։

Քահանա.— Օրհնյալ, օրհնյալ, երիցս, և չորիցս օրհնյալ լիցիս, ի պտղո, ցորենո, գինո և ձիթո յուրյանց լցուցեր զնոսա։

Զ.— Աղքատ տղի մը վարժարանի ծախսը, հայր սուրբ։

Քահանան.— Շե՛ն մնաք։

Է.— (Ժողովուրդեն մեկը) Ժամկոչ, ծո՛, ժամկոչ, գնա տերտերին անկճն ի վար փսփսա քի, սա տարին էկեր տղաս Ամերիկայեն եկավ ու երկու հարյուր կլորիկ բերեց նը, աստված մեծ է, ես զինքը պարապ չեմ հաներ։

Ժամկոչը (Տերտերին).— Զմոյին տղան կըսե, որ աստված մեծ է։

Քահանան.— (Խեռ նայվածքով մը դեպի ժամկոչը) Մե՛ծ է աստված, մե՛ծ են քարձունս, մե՛ծ են լերինս Լիբանանու, Զմոյին տղան մեծ չէ՞ր ըլլիր, ժամկոչ։

Ժամկոչը.— (Տերտերուն ականջն ի վար) Տղաս, կըսե, Ամերիկայեն գա նը, ես զինքը պարապ չեմ հաներ, երկու հարյուր դեղին կսպասե։

Քահանան.— Սրբույն Վարդանա լուսապսակին արժանասցուցե Զմոյին տղան Վարդանը, հերիք է, որ սրտեն բարի խորհուրդ կանցնե։

(Լռություն)։

Քահանան.— Մի՛ հազաք, ժողովուրդ, աստվածնիդ կսիրեք նը,

ատոր ատենը չէր հիմա, կտեսնաք քի դուրսն ըլ շատ բուք կընե, շուտ ըրեք, որ օրհնություն մըն ալ ու վերջ տամ քարոզիս։

Ժամկոչը.— (Տերտերուն ականջին).— Ձեր Եղսիկան թոռը Մարթան, տեր պապա, երկու կաժ մանած կուտա։

Քահանան.— (Հաղալով) — Շեն մնա մեր Մարթան. եկեղիս կընիկն էր մեր Մարթան, ասացեք աստված շեն և պայծառ պահե, քար բոնե ոսկի դառնա, եկեղս ալ խարիպ տեղը թենտրուղ պահե, օ՛ֆ, օ՛ֆ, պապամ եկեղս։

(Լռություն)։

Քահանան.— Ալ գրվող չկա կերևի, ժամկոչ, որոնք ետուն զլումաս յուրյանց հոժարս և առատանվերս, միույն փոխարեն բյուրապատիկս ընկալցին աստ և ի հանդերձելումն։ Պահպանիչ հավատացելոց, Հիսուս, պահյա պահպանյա զամենայն, որ սուրիեցին տուրս բարյաց և վայելուչս, արա զնոսա արժան ողորմության քում, զի քեզ վայել է փառք, իշխանություն այժ՝ և հավիտյանս, ամեն։

Բ

(Մեկ քանի օր անցնելե հետո ժամկոչը որ վարժապետե պոզմա մեկն է, կելլե, որ եկեղեցիին մեջ խոստացվածները ժողվե)։

Ժամկոչը.— Շեն մնա Պաղտիկ աղան, 3 օխա ձեթ գրվեր էր, շնորհք ըներ տե, լմնցնեիք ասար։

Պաղտիկ.— Մենք ձեթ չենք վառեր, ժամկո՛չ, սխալ եկեր ես, էտքան ըլ էճելե՛... փոխ չէիք տվեր, անանկ չէ՞։

Ժամկոչը.— Դուն գիտես, սիրելի՛ս, զոռ մը չունինք ա, երեսն ըլ քուկդ էր, աստառն ըլ։

(Ուրիշ դուռ մը)։

Ժամկոչը.— Լիր մի բամպա՛կը, Պողո՛ս, աս տարի փառք բարերարին, դուրսը բամպակ չմնաց տուն լեցուցիր։

Պողոս.— Տահա չենք կթներ, աղա ժամկոչ, աղաներուն ու տեր պապային բարև տար, ըսե, որ Պողոսին վրա հրմը թող իրենք առնելիք ունենան։

Ժամկոչը.— Գլխուս վրա, Պողոս, ինչ որ ըսես նե, էնի պիտի ըսեմ, ինչ որ տաս նը, ես էնի պիտի թեսլիմ ընեմ։

(Ուրիշ դուռ մը)։

Ժամկոչը.— Մեր ամօղլին աճապ իր յոթնուկես մայրուքը չէ՞ր տար։

Ամօղլին.— Քսան փարա կա քովս, ժամկոչ, մեյ մը հրլե սրվի տար, մեկալին համար ըլ աստված ողորմած է։

Ժամկոչը.— (Ինքն իր քթին տակ ուրիշ դուռ մը)։ Գեշ չէ, հավատա, ժամուն մեջ բերվընին լեկենի մը պես կբանան, հիմա որ տալու սրրան եկեր է նը, բերվընուն դեմ այլրխ կբռնեն։ Եղնոյին տղան Գափո՛ն (ցանկը կկարդա)։ Տե՛, Գափո, յա ցորենը, յա փարան, աստված աս տարի գետերուն ջուր, քու ամպրներդ (շտեմարան) ըլ օղորմություն լեցուց։

Գափո.— Պապս հիվանդ է, ժամկո՛չ, հրլե դուռը վրա բեր տե բացվիր էսօր։

Ժամկոչը.— Ասոր ալ փառք տանք։ (Առանձին) Սրվոնց նայե, որ չալըմնուն հայիս նը աչքդ կխտխտա, ասըլ իկիտության սրրան գա նը, պոշերնին պաճախնին կկոխեն. յա սա Մսրա մա՞րդն ինտոր մարդ է եղեր, որ քաղքի դպրոցին համար մեկ անգամեն 60 լիրա տվեց, անունն ալ պիլե մարդ չգիտցավ տված ատենը։ Կիտի մի թուքի ճանճե՛ր, կարծես տվածնին ժամկոչին ճեպը պիտի լեցնեն։

(Ուրիշ դուռ մը)։

Ժամկոչը.— Տե, Գրիգոր, ուրիշները ճեպս լեցուցին, դուն ըլ բերանս զահար, լիր մը գինի գրվեր ես եղեր, փարան կուտա՞ս, գինի՞ն կուտաս, թե կուժ մի թան կուտաս, ինչ տաս նը խոշ ժամկոչին չես տար, թեև գինի տայիր նը ավելի գործիս կուգար։

Գրիգոր.— Գալ տարի, պապա ժամկո՛չ, գալ տարի, երեկ խընամտեքս եկեր էին, հավատա, որ պուտ մըլ չի մընըց, կուշես գնա գյուրը ձեռքովդ խառնե։

(Ուրիշ դուռ մը)։

Ժամկոչը.— Աղքատ տղուն թոշակին գայինք։

Նվիրատուն.— Քեզի բան մը ըսե՞մ, ժամկոչ, ամա ինչ որ կըսեմ նը — մեջդ պիտի մնա, իրավ է գրվա ամա, պապամ, շատ խոշիս չի գար գիտես քի, գլուխս տաք էր էն օրը, ու խոսք մ՝էր որ հանեցի բերնես. բայց ինծի նայե, բան չըսես, դուռը զարկի, հոն չէր ըսե։

Ժամկոչը. — Աստված պելանիս տա, հերի՛ֆ, սա շողգմներուն ըլ անունը խնծոր դրեր են։

(Ուրիշ դուռ մը)։

Ժամկոչը.— Երկու հարյուր կլորիկը եկա՞վ, Զմոյին տղա՛ն, ախբրի դուն ի՞նչ կըսես։

Զմոյին տղան.— Թող հեմի բոլորն ըլ տային տե, բանը ինծի

մնար, Զաքա՛ր, տեսիմ տեմեսիմ, պե հերի՛ֆ, մարդ մարդու հալն չի հասկնար, կես գիշերուն ժամ կկանչե։

* * *

Ժամկոչը հուսահատ, այս վերջինեն ալ բաժնվելով, ալ ուրիշ դուռ մը չի զարներ, կերթա զինք զրկողներուն քովը, հանդիպածներուն տրամադրությունը կպարզե, անոնց հայտնելով նաև, որ ա՛լ երկրորդ անգամի մը համար ինք չպիտի ուզեր գրվածները հավաքելու ելլել։

1905

ԴՐԱՑԻՆԵՐՍ

Իմ դրացիներս։ Անոնցմե այս անգամ ներկայանալին ծերուկ դարբին մը պիտի ըլլար, շատ թիփիք դեմք մը, ու կապրի տակավին։ Ես եկա, ծերացա, մազ մորուք ճերմկցուցի, ու կամաց-կամաց դագաղիս ծայրերը կտեսնեմ։ Պեյրոս աղբար կապրի բայց, ու որոշեր է կարծես, որ ինք մնա, միշտ մնա իր մումիայի կյանքովը ու վաղը անհետացած սերունդի մը հետին շառավիղը ինքը ըլլա վերջապես։

Ութսուն տարիներու հովեր անցեր են վրայեն, բայց նա այն մարդը ութ տարեկաննոցի մը շենշող զվարթությունը կպահե, որ կրնա, երբ գործի չերթա, հունա քիչ մըն ալ լերան թիթեռնիկներուն հետ խաղալ։

Երկայն, շիփ-շիտակ հասակ մը ունի, ծուռ՝ ծռած ոչ մեկ կողմ, ոչ մեկ խոթություն։ Ծոծրակեն մինչև կրունկները որմնադիրի կապարալար մըն ալ կախվի, տեղ չպիտի դպնա չվանը, որևէ ցցվածք, կորություն արգելք մը չէ ուղիղ գծին։

Կանգուն հասակի մը վրա միշտ տինճ գլուխ մը կբռնե, աչքերը առանց ակնոցի կրնան ասեղին ծակին հետ անոր ծայրն ալ տեսնել։ Գլխուն սև մազերն ու պեխը դեռ անոնք են ապահովապես, որ այնինչ տարիքին, այնինչ օրը, այնինչ աղվոր օրը իր նշանածին առջևեն ժամը պսակվելու կերթար։

Բուն խարբերդցին է Պեյրոս աղբարը. աշխարհք ձև փոխեց, աշխարհ հագուստ կապուստի ձև, գույն փոխեց, գեղացիին հետինն ալ քիչ շատ ճաշակի նորույթով երևաց, բայց ան դրացիս պահեց, շատ զգուշավոր խնամքով պահեց ինչ որ ուներ, ինչպես ինք ան իսկ մնացեր է ինչ որ էր երբեմն իր անձրևի ու կարկուտի դեմ տվող կաշիին մեջ։

Հագածներուն ամբողջությենեն պակասը շարունակ բաճկոնը եղած է, որ օր մըն ալ չէ երևցուցած կուրծքին։ Ըսի՞ թե այդ կուրծքն ալ ամեն օր դարբնոցին կայծերովը խարանված, փուռի մը ներքնակողմի տակին չափ տարիներ ու տարիներ դիմանալ գիտցեր է և ինչպես անձրևին, կարկուտին, նույնչափ ու ավելի այն կայծի տարափներուն, որ օրը օրին իր վրա կնետվին, կուրծքին կարմիր միսերուն հետ շատ հեղ երեսներուն ու պեխին վրա ալ ճենճ մը մխացնելով։ Այս վիճակը, ամառը, այնպես ձմեռը, ու աս է բոլոր կյանքին մեջ։

Գրել կարդալն չի հասկնար։ Քահանայի մը հանդիպելուն, սուրբի մը երկրպագելու պես ծունկ ծռելու կերպ մը կընե, որ ատեն, երբեմն բուն կերպը մոռցած կամ շվարած՝ կուրծքին վրա խաչի ձև մը կըլլա ըրածը։

Կյանքին մեջ աղոթքեն ետ կեցած չունի երբեք, աղոթք, միշտ աղոթք, իր ըսածին նայելով, ան ծառները, որ հովերուն առաջը գլուխ կծռեն, աղոթք կընեն, ծիծեռնիկները, որ վերերը կսավառնին, աղոթելու համար պիտի ըլլա անտարակույս, դեռ ան հավն ու ձագն ալ, երբ ջուր խմելու ատեննին վեր վեր կշիտկեն կտուցնին, աստծու կաղոթեն։

Ու այսպես կանուխ առավոտով՝ շուկայե առաջ, իրիկունն ալ շուկայեն տուն դառնալուն, ժամ պիտի մտնե անպատճառ, ուր խաչ մը մերկ՝ միս կուրծքին վրա՝ ու շառաչուն համբույր մը քարեբուն, որ խաչի նշաններ ունին, համբույր, երկրպագություն եկեղեցիին դրան մինչև խաչանիշ դրանդիին, իր կլորած աղոթքին կերպն է, որ կրնա երբեմն մինչև տունը, մինչև շուկան ալ երկնցնել տակավին, վրայե վրա կոտրտած «Հայր մեր»-ը կծկելով, քակելով, իր շուրջն անգամ չնայելու ինքնամոռաց մեքենականությամբ մը իր իսկ անունն ալ մոռնալով ապահովապես։

Իր բոլոր գիտությունն է՝ ս. Գիրքեն՝ պատմությունը հայր Աբրահամի, ու մասնավոր նախասիրությամբ մը՝ պատմությունը Հովսեփ Գեղեցիկի վարքին, արարքին, որոնք կհիշե ան ատեն մանա-

վանդ, երբ իր դարբնի արհեստին շատ հին, շատ նախավոր ու սուրբ արհեստ մը ըլլալը պիտի հաստատե պատմությունովը։ Թովբելի, որ երկաթ ծեծող դարբիններու առաջին փիրն է եղեր։

Անգամ մը, մեռելի տուն մը ցավակցության գացած, ես ալ հոն գտնվեցա։ Քանի մը հնուկ դեմքեր անդենի հոգերով կորացած ու ճմռթկված՝ թողեր էին, որ ինք, աս Պեյրոս աղբարը խոսի։ Ես շատ լսեր եմ զինքը, բայց նորեն հիմա ալ անոր խոսելու միամիտ կերպերուն չախորժողը ես չպիտի ըլլայի։ Ամենքն ալ գլխընին կախ ու խորունկ մտմտուքներով, աս երիտասարդ ծերուկին մտիկ կընեն, որ անցավոր աս աշխարհիս կյանքեն հետո՝ հավիտենական եղող էնդի դեմին վրա իր համոզումները իբր հանձնարարելի ճշմարտություններ, ծերերուն մասնավորապես ունենալու ստիպողականության մը վրա կճառե։ Ես մեջ կմտնեմ որ ինք իր հայտնություններուն քիչ մը ավելի տեր մնալու իր բոլոր թափը, իր բոլոր պաշարը գործածե, ինչպես պիտի սիրեի լսել, երբ հին փապարաբնակ հավատավոր մը ըլլար խոսողը իր ոսկրացած հավատալիքներուն վրա։

— Դուն մեռնիս նը ո՛ւր պիտի երթաս, կըսեմ, Պեյրոս աղբար։

— Արդարիմ նը՝ խնկենի ծառին շուքը, մեղավորիմ նը՝ դըժոխքին կրակները։

— Է, դուն քեզի համար ի՞նչ մը գիտես, արդա՞ր ես, մեղավո՞ր ես։

— Էտի աստծու գիտցածն է, ա՛յ օղուլ, ես ի՞նչ գիտնայի։

— Արդար մարդն ինչպե՞ս է։

— Սուտ չի խոսար, հարամ հալալ չի խառնիր, պաք կկենա, աղոթք կընե, իշտե իմ գիտցածս։

— Դուն սուտ չե՞ս խոսեր երբեք, արհեստավորին առաջին սերմայեն չէ՞։

— Սուտ ամեն մարդ կխոսա, յա՛վրում, էտի իմ գիտցածս չէ ըսի յա։

— Ըսել է ստախոսներուն աստված ալ կներե երբեմն։

— Դուք անհավատ եք զաթի, անհավատ, անհավատ։

— Անհավատ ինչո՞ւ, դրացի, ես ալ քեզի պես ժամ կերթամ, աղոթք կընեմ։

— Ժամ կուգաք նը խաչ կհանե՞ք, ծունկ կչոքե՞ք, պաք կպահեք, որո՞ւ կհավատցնեք, հիմակվանները բոլորն ալ անհավատ։

— Ըսենք թե շիտակ արքայություն գացիր, Պեյրոս աղբար, հոն ի՞նչ պիտի ընես։

— Հրեշտակներուն հետ քեֆ տի քշեմ։

— Ուրի՞շ։

— Հայր աստված տի փառաբանեմ։

— Հապա թե Մարիամ խաթունը (մեռած կինը) դեմդ ելլա, կարոտը առնելու համար ուզե երեսներդ պագնել...

— Ես ալ իրեն երեսները...

— Մեղք չէ՞ բայց, աստծու առջև կնկա երե՞ս...

— Մեղք ինչո՞ւ, մարդ մը, որ իր կնիկը սիրե նը մե՞ղք կըլլի։

— Ըսել է, կհուսաս թե խաթունդ պիտի տեսնաս, կսպասես որ անոր հետ սիրվըտիս ալ։

— Երկուքս մեկտեղ կգտնվինք նը, զաթը կըլլին էտոնք չէ, էկեր որ զատ-զատ տեղեր եղանք նը, յաման է հալերնիս։

Հետո կխորհրդածե.

— Մեր ատենը կնիկ ըսված մի հե՞տտը ուներ, որ մինչև իսկ իր էրկան դեմ չենկե ցուկ բանար, ձենով բերանով տան մեջ տղա ըսվածի մը հետ խոսար, տղան մըլ պապուն դեմ լեզուն թրջոտեր, կամ տերտերի մը, վարդապետի մը շուք տեսնվելուն ատեն խաչ չի հանվեր, դուք կյոյե բա՞ն գիտեք։

— Դուն որ շատ բան գիտես, Պեյրոս աղբար, ինչո՞ւ հապա աղջիկ թոռներդ դպրոց չես խրկեր, մեղք են, աղջիկ են, աշխարքինն ինտոր, քուկիններդ ալ անանկ։

— Հը՛մմ...

— Հը՛մ, որ ի՞նչ։

— Գնա՛, կյոզըմ, գնա՛, գործիդ գնա՛, Պեյրոս աղբարը չոճուխ զան չանես։ Անապատի Կարապետ վարդապետ մը կար նը գիտե՞ս ինչ կըսեր, վաթսուն եթմիշ տարի կա ըսածս, վարդապե՞տ հիմակվաններուն պես. հիմակվանները անճաղ աղվընիկ խաղցընեն, անճաղ բահն ու փետատը ձեռվնին՝ ժամ, կրոնք քակեն, անանկներուն կրոնավոր ըսողին յոթը տարի ապաշխարանք կա, ապաշխարա՞նք. Հատ մը ունեինք, որ անճաղ չաղա չոճուղ շատցուց, ա՛լ պաշխա շնորհ մի, պաշխա մարիֆեթ մը ցցո՞ւց ժողովրդին. իմ ըսած վարդապետս իշտե պատարագ կայնելու ատենը ոտքերը գետնեն թիզ մը վեր կվերցվեին, ան կըսեր, որ սկիզբ իմաստության վախ աստծու. կարդալ մարդալն ի՞նչ էնիմ, աղջիկ մը կարդա որ ի՞նչ, ինչ ըսես նը էն կարդացողներուն մընե կելլա. մեր Մարիամ որ կարդալ չէր գիտեր նը կնկություն չէրա՞ց, ձենը դուրս ելա՞վ. ես որ իրեն գլխավորն էի, անոր չենկեին վարի թարաֆը պիլե չտեսա ամենեին,

չի տեսա, չի տեսա։ Դպրոցն ալ հայու ըլլի նը, նեիսե կըսես. էկո տես որ ան ալ չի կա, մեր աղջիկները էն փրոտներո՞ւն խրկեի, էն պաք ուտողներուն, շլլիքը տակը մնար Պեյրոս վարդապետին որ՝ օր մը էն փրոտ ըսվածը ինք թորեթմիշ ըրավ, անունն ալ անունս չըլլեր, որ հոգ էր։

— Բայց կըսեն, որ օր մը դուն ալ ժողովարան գացեր ես եղեր։

— Մեղա՜ ըսե, մեղա՜, մեղա՜, Պեյրոսն հոն անանկ տեղեր ոտք չի դներ, քեֆդ հայիր։

— Ինչո՞ւ, Պեյրոս աղբար։ Ժողովարան ինչո՞ւ չերթաս, չէ որ հիմա հոն կերթան, հոն կըլսեն, հոն կաղոթեն։

— Հը՜, հիմա էկոր ու բերանդ պագնիմ, զաթի պիրետի փրոտ, պիրետի ժողովարանճի, պատվելի՜, նե՞ արիերսըն, աստվածդ կսիրես նը ընծիս մի քրքրեր, հերիք է։

— Աս ալ լսե ու լմնցնենք, Պեյրոս աղբար, դուն ի՞նչ կըսեիր անոնց որ բոլոր տղա, աղջիկ անոնց դպրոցները լեցուցեր են։

— Համբերե՜, սպասելու եղիր, որ անոնց պոյը վաղը տեսնաս, դուն էլ փրոտ չե՞ս մեկեր, պաք չե՞ս ուտեր։

— Պահք ուտող մը փրո՞տ անմիջապես, դրացի, քիչ մը սափթըմիշ կընես, գինի խմելն ալ պահք ուտելու պես մեղք չէ՞։

— Ամենևին, ամենևին, գինի ըսվածը Քրիստոսա բաժկին է, գինին մե՞ղք է խմելը, սերսե՜մ, դուն չե՞ս խմեր։

Պեյրոս աղբար քրքիջ մը շինելով իր շուրջը, կմեկնի շուտ մը։ Ես ալ իրեն հետ կելլամ։ Նա շիտակ իր գործին կերթա, իր դարբնոցը, ուր Խաչոն և Գոգոն, երկու ժմնած տղաքները, սալին վրա դեմդեմի ու մեյմեկ ահագին մուրճ ձեռվնին՝ թի՜ք թաք, թի՜ք թաք, հրաշեկ երկաթ մը կձևավորեն։

Հայր ու տղաքներ կծեծեն երկաթը, բայց դեռ օր մըն ալ ան ծեծվածները ոսկիի ու արծաթի չեն կրցած փոխել, բանի մը չեն տիրացած, միշտ խեղճ դարբնոցապետը իր խանութին մեջ իր տըղաքներով ու միշտ խեղճ, որ օրը օրին շարունակ կռիվ մը կմղեն կյանքի դժբախտության հանդեպ։ Աղքատ կապրին, աղքատ ծներ են արդեն աղքատ Սադոյենք, կերևի Պեյրոս աղբոր հայրն ալ առ անունով ճանչցված, ինչ որ մինչև հիմա չի ջնջվելիք խարան մը կմնա իրենց ամեն մեկուն ալ շլլիքը խեղդող մղձավանջի մը խորհրդավորությունով՝ Խաչոն ու Գոգոն, իրենք չունին հայրերնուն ուժը, իրեք չեն այնպես։ Երկուքն ալ ճերմակ քունքերով ծերեր կեռնան արդեն, վատուժ, քայքայված, ու ծերություն մը այդքան կանխահաս՝ խանձարուրեն ժառանգած կարծես։

Ասոնց ձեռքը մուրճին ծանրությունը լողքարի մը չափ ծանր կզգացվի, մուրճը հեշտ չեն կրնար գործածել, ու կսպասեն որ սալին վրա վերջին հարվածը իջեցնողը հայրերնին ըլլա։

Գոգոն այն տեսակ ծանրության մը հետ խաղալու ատեն շատ անգամ ճուկ ճուկ կըլլի ու կտոր-կտոր կընե մեջքը, թևերը ու ամբողջ մարմինը։ Իր դերբուկ հասակը մուրճին կոթին հաղիվ երկու երեք անգամին չափ ու ոչ ավելի, ճշմարիտ ծաղրանկար մը կներկայացնե որ կշարժի ալ։ Թաղեցի պզտիկներուն խորոզն է ան, «խորոզ Գոգոն» ըսած են իրեն, որ խանութեն դուրս ապրելու ատեն, ելլել պըտըտելու պահերուն, խորոզի մը սիգանքները կպահե պորտ նետելով, կոնքերուն վրա, իրանին աջ ձախ շարժում մը տալով, որ ատեն երբեմն թիզ մը անդին մնացած հետույքն ալ լեցուն ուռուցիկ տոպրակի մը ծանրությունովը ետևեն քաշելու ծիծաղելի հևք մը կպահե։

Ինքն իր ծանրությունը չի կրցող կրողը մտածել անգամ մըն ալ գործիքին ծանրության տակ, որ ամեն վեր առնելու, վար իջնելու ջանքով վրեժխնդիր դեմքի մը ահռելիորեն ցասկոտ ծամածռություններն ու կծկումները կերևցնե, դուրս կիյնան աչքերը ու լեզուն ալ դուրս ձգած, նույն ատեն, անոր արմատը այնպես մը պինդ կխածնե այնչափ մը ժիր ու ձգտված, որ այն պզտիկ միսի կտորն ալ հնդկահավի մը քիթին պես կերերա այս մեր դարբին աքաղաղին ամեն մեկ շարժումին։

Հիմա երեսունե ավելի տարիքի մը մեջ, կարգվիլ չէ ուզած, չի կարգվիր, որ մեծ աղբորը, Խաչոյին զավկրները ապրեցնելու միշտ տրամադրելի առաքինություն մը պահե կըսեն, բայց շիտակը ըսելով ան է ավելի ստույգը, որ իրեն պես խորոզի մը հավնող հավի չի հանդիպեր տակավին։

Երկու աղբար, հայրերնին ալ երեք հոգի, մանգաղի պես գործիք մը հազիվ ամբողջ օր մը վատնելով կրնան շինել, գլուխ հանել, ու միշտ ալ գեշ շինողնեն են իրենք, ու ան հայր դարբինն ալ երբեմըն ինք առաջին համաձայնողն է իր այն խորոզին ու անճարկուկ Խաչոյին հետ, ինչպես ինք կուտա անոնց այն տեսակ անուններ մը, որ արհեստը ներկելու համար, քիչ մըն ալ հաճախորդին հետ աչք կապուկի խաղեր մը ընեն։ Պեյրոս աղբար պողպատի այնինչ չափով կտոր մը խորին ծայրը դնելով ունելիին բերանը տալու ատեն, երբ այն վիճակով կտորը հնոցը կմխե կասկածոտ հաճախորդի մը

աչքին տակ, անմիջապես ակնարկ մը կընե փքոցը քաշող աշկերտին, որ թափը ուժգնացնե. «Ժի՛ր տղա, ժի՛ր, ժի՛ր, բա՛ց, խրե՛, ոտքերդ մեկ կողմ մի՛ ծռեր, թևերդ ալ ղույգ գործածե»։ Ասոր հետևանքն այն, որ հնոցին մեջեն, քովերեն, փոշիի ու կայծերու հորդում մը դուրս կպոռթկա, ուսկե հնոցին քովը ու աչքերը շեշտ պողպատին կտորին վրա պահող գյուղացին մեկդի կփախի, ու դարբինը հեշտ պատեհություն մը կունենա այն կտորը, 20—40 փարա արժող պողպատի ծայր մը, ածուխին մեջ անհայտացնելով, սոսկ եռցած խոփը ծեծելու։ Հաճախորդը ոչինչ կգիտնա եղածեն. վարպետը անոր վրա ափ մը մոխիր սրսկած, շուտով մուրճին տակ ձգած կըլլա արդեն։

Պեյրոս աղբար այս կերպերն ալ իր տղաքներու հրիտակելով մեկտեղ, դեռ շատ ուրիշներ ալ անշուշտ, նորեն առտրվա-իրիկվա ճաշը առանց խաթեի կերած է ու կուտե։ Ջատիկի առավոտուն ալ նույն հին ապայովը իջած եկեղեցի, հաղուստի մաս մը, որ ասկե 40—50 տարի առաջ ապրող գյուղացին կկրեր։

Բայց դեռ աս չէր, հոս անմիջապես չէր վերջանար անոր դժբախտությունը։ Մեծ տղան չորս հասուկ աղջիկ ունի, որ կրնան ըսել, թե արևն ուսկե կելլե և ուր կխաղա չեն գիտեր։ Միշտ տունն են, տունեն չեն կրնար դատվիլ, ավելն ու ճառուտը ձեռքե չեն ձգեր, ու շարունակ տունին երեսեն աղտեղություն մը կստրկեն, որ հավն ու ձագը կթողուն ետևին։ Երկու աքաղաղ բակին մեջ հավերու մեծ բազմություն մը կշահին, ու ան իրենց մյուս ցեղակիցը սակայն Խորոշ Գոգոն. հատն մըն ալ չի պահեր։

Աղջիկները աղտեղության տեսակ մըն ալ մյուս երկու մանչերուն ետևեն կվերցնեն, որոնց մեծն ալ, պզտիկն ալ համր ծնած են։ Մեծը 18—19 տարեկան ճիվաղ մըն է, սոսկալի ցուցանք մը իր բոլոր ամբողջության մեջ, որ եթե երբեք պահ մը դուռը բաց կամ ինքզինքը վայրկյան մը թույլատրված գտնե, ա՛լ կարելի չըլլար բռնել, կփախի ինչպես ողջ թաղված մը գերեզմանեն կփախի ու հետապնդողին ձեռքը հեշտ ալ չիյնար։ Պզտիկ համրը առայժմ դեռ գետինին երեսեն սողալու տարիք մը ունի։ Աս երկուքն ալ արտակարգ ճաշակով հափհափողներ, առջևնին ինչ-որ նետվի, հացի կտոր, ու նույն ատեն կաշիի, թիթեղի ու ապակիի կտորներ ալ, շաքարի կըտորի մը պես կծամեն ու կոռնան, կճչեն ինչպես հեքիաթին դևերը կընեն իրենց մեկ ախորժած ճաշին վրա։

Իրենց տունը, որուն դուրսի առաջին դուռն ալ իր փոր տված դրանդիներով հիմա համ պահե մը վերջ փլելու հակամետ վտանգավոր ծովածքը ունի, ինքնին իր փորոքին մեջ բնակվող խեղությունները ուն համառ կյանքն ու կայունությունը կխորհրդավորե կարծես, տուն մը իր ներքնակողմի քայքայումներովն ու մթությունները ովն ալ շատ նման էր տերերուն, մեկ օրեն մյուսը անմիջապես չկործանիր տակավին, կանգուն կմնա, որ հենց անցորդը սարսռացնե, ինչպես Պեյրոս աղբար ու իր խեղճությունները իր դրացիները կլացնեն։

Խաչոյին կնիկը՝ աս ալ հիվանդ մը, ալ խեղճ հավ մը այլապես, որ անդարմանալի ու խոշոր ուռ մը ծածկելով իր վզին չիթերուն ներքևը, տարվե տարի ինքն ալ ահա այն տեսակ հավկիթներ ածեր է, կասկածելի ցեղայնության մը տգեղությունը մշտնջենավորելով։

Ասոնց մեջ ծայրահեղորեն արգահատելիները այն աղջիկներն են, այն ողորմելի խեղճերը, որ հակառակ քիչ մը իրենց բարեկազմիկ ձևույքին ու բանուկ ձեռքերուն, խնդրող մը չեն ունեցած ու չեն ունենար տակավին։ Երկուքը մանավանդ չափազանցապես հասուցած տանձեր, ո՞վ գիտե օր մը ինչ ըղունկներով պիտի փրցվին ու վերջն ալ տեսակ անակռա ու հոտած բերաններու մեջ պիտի ծամվին։

Խնդրողներ չեն ունեցած, ու ասի անոր համար որ համրերու այլանդակ սերունդ մը կներկայացնեն, թեև իրենք ազատ եղած ըլլային համբերության մը պես աղջկա համար մանավանդ մեռցնող խոթութենե մը։ Ասոնք երկու ուրիշ մորաքույրեր ալ ունին հոս հոն ամուսնացած. արի տես, որ իրենց մորը կարգին այն մյուսներն ալ մեկե ավելի համր մանչեր ծներ են, որոնց կուշտին աղջիկ ծնածները՝ մանչերուն դժբախտ, տարօրինապես դժբախտ զոհերը կմնան։

Պեյրոս աղբար ահա իր ութսուն տարեկաննոցի քամակովը այս դժբախտությունները կկրե. դեռ սակայն օր մըն ալ, երբեք օր մըն ալ տառապանքին հոգնությունը չի զգացած. գոնե կապրի տակավին, ինչպես խարխլած պատերու վրա իր տնակը կապրի։ Ինչի՞ն վերագրել տոկալը անոր այնքան ծանր ու անհանդուրժելի թշվառության մը բոլոր տեսակներուն։ Քիչ մը իր ապուշի անզգայության հանելով բաժին, մնացածը՝ բարոյական արիության մը, մնացածը՝ իր կրոնահայեցողության ըմբռնումի կերպերեն ապահովված չէ՞ր ըսվեր։

Ինչ որ ըլլա, լման հավատավոր մըն է իմ դրացիս, որ կսիրե

ապահովիլ թե մեկ անգամ, շատ հեզ միայն մեկ անգամ սրթողը պյութեան ազոթք մը ընելով առանձին կամ հասարակաց բազմութեան մը հետ, գժոխք մը չարիք կշեղոքացնե։

1906

ԿԱՎԸ ՉԻ ՓՈԽՎԻՐ

— «Գատգամախոսներ առենին չեն մեկներ, ատենին չեն դառնար, հսկելու գործը ընողներք ուրիշ կողմ, փոքված աչքերով սրձաններու պես ոտքի վրա կքնանան կուլքերք. ու երկինքին երեսը ծույլ վարանք մը կնշմարեմ։

«Ներթ ու դարձի սա շեղումները ու հսկոզներու այն կամովի կերպերն ու անհոգությունները իմ հավիտենապես անփոփոխ հրեշակած օրենքներուս խմաստը կձախողեն որ ինծի ազեկ չերևնար ուսիայն։ Արևին լույսին ու գնացքին նայող պաշտոնյան առաջինն է, որ անհարկի շտապում մը կցուցնե և մյուս լուսագունդերը գրեթե երեսի վրա թաղված արագ չեն անդրադառնար, աղվոր չեն ճառագայթեր։ Աստղերը՝ մեկ-մեկ անուններին չպիտի ուզեի հիշել՝ հինին պես ալ շատ անուշ լույսը չեն անձրևեր վարերը։ Հրատի ու Աբուլյակի աչքերու մեջ մարած բաներ մը կտեսնվին, լուսնկան իր մեռելության երեսովը ագեղ գանգ մըն է միայն, Ծիր Կաթին պղտոր գիր մը, որ կամաց կամաց իր դիրքին վրա կսառի։ Կապույտը՝ երկնակամարի կապույտը՝ վարերեն թոցված կայծերեն խանձոտած, տեղտեղ այրուցքի նշաններ կերևցնե։ Արշալույսին բոսաբը հետզհետե չորցած կակաչին երանգովը սկսնակ ճաշակի կտակած մը կուտա. անդին, վերջալույսի աղվորությունները, թողված են, որ սաբառնցուցիչ հյուսիսայգի մը պատկերը կախեն գեշերին ճակատը. ո՞րն ըսել։ Երկինքը այլևս իմ փառքը չի ցուցադրեր, երկիրն ալ իմ մեծությունս շեշտող քնարը լռեցուցած, ցնորակոծ կռինչներով կբավականանա։ Ան ալ միայն անոր համար, որ ծիածանը իր հալած լմնցածի անկումովը գեշ կամուրջ մըն է գարձեր պարզապես, որու վրայեն միայն ես կրնայի հասկնալ, թե դեպի երկիր մաքուր ներշնչումին ու աշխարհաշեն խաղաղության առաքումը օրը օրին ի՞նչ աբգելանքներու կհանդիպի, ու երկիր, աշխարհ, ինձմե առկավ հեռացած ըլլալու, ուծանելու խամ գայթումներով, ինչպես ձևազեղծություններու անձնատուր կմնա, ի՞նչ կնճռոտ բնազդներով կտառապի, ի՞նչ պիղծ երազներով կհևա։

«Բայց, է՜հ, ա՛լ չպիտի կրնայի համբերել, կըսեմ, սա վիճակներով դեռ կկասկածիմ, որ ինծի, իմ գորովանքիս ապավինող տիեզերքն ըլլա վաղը հանկարծ իմ գլխուս փլչողը. կմեռնիմ, կրնա ըլլալ. այն պահուն իմ գործերս ալ կմեռնին, այն ատեն դուք քիչ մըն ալ ձեր վիճակին խորհեցեք. ես հավասարապես ձեզի ալ կմեղքընամ»։

Խորունկ, անշշուք մտմտուք մը սկսավ այս մտքերը մտիկ ընելու կանչված երկնաբնակներուն մեջը։ Դարերե ի վեր առաջին մեղադրող ձայնն էր, որ կլսցներ աստված իր շուրջիններուն, որոնք իրավ է որ իրենց գործերը մոռցած ըլլալու աստիճան ստամբակ մեկուսացումով մը հիմարացած՝ երբեն ի վեր էր, սպասող կերևնային կարծես, որ ծերացած աստուծո մահեն մը ետքը անոր ծիրանին բաժնեն մեջերնին։

Խաբվեր էին սակայն, ու պատճառն ալ ի՞նչ դերբուկ, ո՜րչափ աշխարհիկ։ Խաբվածները, հիմարացածները՝ անհուն բազմություն մը շողուն իրաններով գեղեցիկ հրեշտակներու, այս շատ բանավոր ազդարարության վրա շնչահեղձ՝ որքան շանթահար, թե բացին մեկեն ու իրենց գործերուն վազեցին։ Հոն միայն մեկը կտնտնար։

— Օհ, քեզի հետ մնացինք հիմա, կավելցնե մեծ տերը, ըմբոստ մը չես կհուսամ։

— Իմ գործս շատ ծանր է, տե՜ր, չեմ կրնար։

— Ի՞նչ գործ, ի՞նչ ծանրություն։

— Ա՛լ ես ան աշխարհը չեմ կրնար երթալ, ինծի վիճակվածը դժնդակ պաշտոն մըն է. մարդիկ ամեն օր կրակե անեծքներ կնետեն գլխուս. անոնք այնպես են պաշտարվեր իբր թե՝ ես ըլլայի պատճառը իրենց լացերուն, մինչ ճշմարիտ է, թե ես մեռեղին միայն հոգիվարքին է, որ կհասնիմ, բայց որո՞ւ ըսես։ Անոնք դեռ ծնած ատենին ալ կուլան, խելքիս չի պատկիր։

— Շա՞տ կուլան։

— Շա՜տ, տե՜ր, շատ, նույն ճակատագրով վայելողներն ամենքն ալ, ամեն օր ալ այնպես։

— Քուկդ գոնե անիմաստ առարկություն մը, այնպես չէ՞։

— Անիմաստ ինչո՞ւ, տե՜ր, երդում քեզի, որ ետևես հայհոյողներ ալ կան։

— Վա՛յ...

— Ճարպիկ կըլլամ, որ ձեռվընին չեմ իյնար. եթե ոչ...

— Բայց անիրավություն է ըրածնին. արցունքներու մեջեն աչք թարթող նայողները գեղեցիկ կարմրալանջը սատկած ջղջիկ մը կտեսնան, ծուռ կտրամաբանեն. մարած այն ճրագներուն ետև ա՛լ իմ շունչս չկա, ես իրենց մահ չեմ տված, աղե՛կ հասկցիր։

— Մտիկ կընեմ, տե՛ր։

— Նախ իրենք պետք էին համոզվիլ, թե կյանքը հրաշալի ամբողջություն մը ընելու համար ի՞նչ ընտրություններու ելա, ի՞նչ թանկագին կավ գործեցի։ Մարդը գլխի ցավ ունեցավ վերջը, ասոր ես ի՞նչ ընեի, դուն ի՞նչ ընեիր։ Եվ իրավ, գլուխեն կանչողը ես ալ կըսեմ, թե հուսահատ բռնված մըն է, հիվանդ մը, որ իր մահը կանչե։ Մարդիկ աս ցավը բոլոր ուրիշներու հետ իրենք շինեցին. վերջն ալ բնական էր, որ գերեզմաններ շինե ու հարկ մը ծներ։ Շատերը անմիջապես օրրաններուն մոտ փորեցին այս փոսերը, ուրիշներն ալ քիչ մը անդին գացին, պեղեցին։ Իմ սխալս ո՛ւր ըլլար։ Այն գյուտն ալ ինքնին քի՞չ սքանչելի էր որ ամեն գույն, գեղեցկություն տեղն ի տեղը համադրելե ետքը, մարդուն կուշտը մազերով հրեշտակ մըն ալ տվի, գեղեցիկ կին մը։

— Բայց... տե՛ր... քիչ մը իմ ըսելիքիս կուգաք, ես ալ այն կնկան վրա պիտի...

— Անոր միայն ժպիտը մեղրավետող գիծերը՝ ժպիտին կախարդող հնարքը դառնալու համար՝ հազար տարի եմ մտածեր։

— Շիտակ է...

— Ի՛նչ հապա, դուն քուկդ ըսեիր։

— Պահ մըն ալ թող ուրիշ մը, ես չեմ կրնար...

— Պարզապես դասալիք մը, չըսե՞ս...

— Մի՛ մեղադրեր, տե՛ր, քեզի պես ո՞վ կրնա մտածել, կամ շիտակն ըսելով...

— Ըսե՛ք, մի՛ քաշվիք։

— Կամ սա խիզճն առ, քեզի ըլլա, կամ մանգաղը զատե ձեռքես։

— Ինչո՛ւ, ինչո՛ւ։

— Մինչև հիմա արդեն կտոր-կտոր եղեր է հոգիս, քիչ մը ես ալ մարդ կհոտվըտամ, շատ կմեռնին, շուտ կմեռնին։ Այդքան սմսեղ պղպջակի մը վերոքը ան հաստատուն ու հավիտենական արևն ալ չէր արժեր։

— Բայց ի՞նչ կրնայի ընել, առանց արևի չէր ըլլար։

— Կամ կավը փոխե, շատ դյուրաբեկ է, կամ վերցուր։

— Կի՞նը։

— Ցավերուն, մահերուն կեսեն ավելիին պատճառը, այո՛։ Այն ցավեն քիչ մըն ալ իմ գլուխս մտեր է։

— Ամբարիշտ դո՛ւն։

— Կամ այն կնկան աչքերեն գոնե քանի մը թարթիչ պակսեցուր, շատ գեղեցիկ են։

— Իմ մեծ գործս՝ կինը, անով միայն, որ իրավունք ունեցեր եմ տեր մնալու երկինքին, մի՛ քննադատեք։ Երկրի բոլոր գեղեցկություններուն կեդրոնը ան է միայն, կինը. նա դեռ ուրիշ շնորհքներ ալ ունի՝ երկինքեն իրեն օժիտ տրված, ինչ որ միշտ անհասկանալի՝ կամ մարդերը հուսահատեցնող առեղծվածներուն տեսակները պիտի մնան։ Դուք, հոս ապրողներդ ալ, չեք կրնար հասկընալ. պարապը մի՛ բարբաջեք։

— Ատկե ի՞նչ։

— Ատկե ի՛նչ։ Ան օրեն ի վեր գիտե՞ս, թե ի՞նչ կատաղի հընհընուքներով, ի՞նչ անսանձ անսահման մարմաջով սկսավ երդվիլ կինը, կնկան սերը։ Երկինք մը չի սեղմվող բանաստեղծությունը անոր կրծկալին ու գոգնոցին վրա խտացուցին։

— Կամաց-կամաց գործիս կխառնվիս. կնեղվիմ։

— Ես եղածն է կըսեմ. հիմա ալ մտիկ ըրե ու տես, թե օրին մեկը ձեր փառքերուն շուրջը սավառնող թևապարիկը ո՞ւր իջեր կթալթլա, ի՞նչն է ներշնչածը կամ ի՞նչ կասկածելի լարեր ավելցըվեր են կուրծքը Ռափսոտներու քնարին, որ ալ չեք ճանչնար անգամ։ Այն լարերուն եթե ոչ ամենքը՝ շատ ապահովապես կատվի ու աքաղաղի աղիքներով հյուսվեր են։ Մի՛ խնդաք, կաղաչեմ, նեղվելու ալ ի՞նչ պատճառ ըլլար։

— Ատի ես ալ կխոստովանեի, իրավունք ունիք, հապա՛ ինչ էր, որ կըսեի թե ձեր մեջեն այն ծիածանին կազմին ու գույներուն հսկողը մասնավորապես, էն վատ գործողն է եղեր։ Անկայուն, երբուն այն կամրջակին վրայեն ի՛նչ կրնայի ղրկել դեպի երկիր, դեպի մարդը։ Ներշնչումին պակասովը միայն բանաստեղծությունն էր, որ տուժեց, կըսես, մորացած ջուրերու հոտ արձակեց։ Աս չափը ես ալ գիտեի, ուրի՞շ։

— Ուրիշ ի՛նչ, տե՛ր, ուրիշ ի՛նչ։ Եթե չպիտի ուզեիր վերջապես, որ օձիք ազատեմ պաշտոնե մը, որուն ծանրությունը ոսկոր-

ներուս կսպառնա, թող քու կամքդ ըլլա, քանի որ դուն միայն քեզ գիտես։

Բանավեճ թե խնդիր, հաճելի վերջքով մը կփակվի, որուն վրա աստվածներուն աստվածը, մեծ բարին, կհավանի իսկույն, որ այն կնկան աչքի ու դեմքի զգլխիչ թովանքներեն բաներ մը կիսելով արևին ու կապույտներուն ղրկե, անոր գույնեն ու բուրումներեն անտառներուն խորքը նետված մենացած մանուշակին ու շահպրակներուն բաժնե։ Աղվոր բաժիններ մը հովիտներու ամայության վրա սարսռացող անանուն ծաղիկները ունեցան, մրմունջին անուշ շեշտերեն կիսեց գիշերի պլպուլին տվավ, աչքերու թարթիչներեն եղնիկին ու աղավնիին ղրկեց։ Նոր խորհրդավոր սրբագրություն մը եղավ ըրածը, իմաստուն համադրություն մը վերջին գեղեցկություններու, որոնց սքանչելի նորության վրա ինքն ալ զարմացավ, բայց «այն կավը չի՛ փոխվիր», ըսավ։

1906

ԳԱՎԱՌ ՄԸ ՄԻԱՅՆ

Օրհնյալ ժողովո՛ւրդ, հավատացյալ սիրելիներս, հիմա էնպես լսեր հասկցեր իմ թե՝ դուք որ մնացածներդ ըլ էն հերձվածներուն ու հերետիկոսներուն պիտոր հետևիք եղեր, ամենքնիդ ըլ էն կողմը պիտոր անցնիք, ազեկ ա, օրհնածնե՛ր, նախ հիմի հասկացեք դուք ըլ սանկ ոչիչը պյուռնուն համոզելու եղիք թե՝ էնոր ուր գացին հանեցին կոշիկնին, որ դուք էս ցեղ աղբլին օշխարներուն նմանակ էնոնց ետևեն ագի վերցուցեր եք կուրըզկուրայն։

«Դուք ի՛նչ ունիք որ, ձեր ցավն ի՛նչ ըլեր որ, ինչո՞ւ կփախչիք, փառք աստծու, սախաթ չէ ժմերնիս, փառք աստծու, նավի մտած չէ պոչերնուդ տակ։ Ձեզի ի՞նչ ըսել պետք է հրպը, սիրելինե՛րս, երբ գուք էս տեսակ մոլոր գնացքներով հոգեկս կխորվեք, կխռովեք, ի՛նչ ըսեմ ձեզի, որ ցավուս չափը հասկնաք։ Էն ատեն ինծի ըլ չիյնա՞ր մի ըսել, քանի որ դուք իրրև այծյամս ուստոստեք, քանի որ դուք ձերինը մոռնալով ուրիշ փարախներ կերթաք, կըլլցնեք, ուրիշ բույն բրշակներ կշենցնեք, էն ատեն ալ ի՛նչ ըսեմ ձեզի որ հախ ու իրավունք տաք լսողը, արդյոք խրիկ կապիմ օտվընխա թե՝ մանկուր ձգեմ շլինքնիդ, որ ալ ուզեք չուզեք, դոր ճեմբեն քելեք, ձեր իսկական բոն ու մսուրը ճանչնաք միայն, ձեր սուրբն ու սրբատեղիքը համբուրեք միայն։ Աստծու սիրուն ըսեք թե՝ ալ ինչ ճար ճամփա մնըց ինծի։

«Հեմի դուք ձեզի ըլ հեչ երբեք չի խորհեցաք, թե էն տեղ օր ժամ պատարագ չըլլվիր, էնտեղ օր մաս նշխարհ չօրհնվիր, խաչ չի հանվիր, կամ ծնկաչոք աղոթելու տեղը աչք խբելով կաղոթեն եղեր, ալ ինտոր հավատալնիդ գեր, թե հոն էնտեղ մայրս մեր եկեղեցիին մեջ եղածին պես, տերն մեր Հիսուս Քրիստոս կուգա իրազմի։

Հապա ինչպես սուր բարկության տյառն չիշնա մեր գլուխներուն, ի՛նտոր ի՛նչ կերպով ցածուցանել վերուստին իրավացի ցասումը։ Քանի տարի էր օր մեր վարուցանին վրա լոպն ու մրջյունները կալ կհանեն, քանի տարի է օր գեղին թարաֆ էթրաֆը մեր պես լի հայվրնակներուն գերեզմաններովը լեցվեցավ, ցավը, չոռ ամեն օր ախոռ կդարտկե, մեր տունուտեղը կպարպե, դուք ինչի՞ կուտաք էսոնց պատճառը,— մեր մեղքը, մեր ամբարշտությունները, մեր մոլար հիմար փախփխուկները անպատճառ։ Վաղը ի՛նչ ճուղապ տալ անոր, երբ հարցնելու ըլլի, ո՞ւր են քու մանկուքդ, տեր Գողոս, ո՞ւր քու սուրբ մանկունքներդ։ Ես պիտի կրնա՞մ սուրբ ըսել էն չարանավորդին, որ լուսավորչի հավատքը կփոխե։

Ու երբ էսպես, ես ըլ էն ահեղ դատաստանին օրը չպիտի՞ ըսեմ միթե, ահա սև մանկունք, սևերես մանկերանք իմ, տե՛ր, արա նոցա դինչ և կամիս։

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, որ բարեխոս սուրբերն ու սուրբ զաստվածինը չընդունողներուն հետ, մեկ գեղի հետ ապրեցանք, մեկ աղբիրե ու մեկ ջուրե խմեցինք, ու անոնց երեսին մենք ալ նույն պատիժով պատժվեցանք»։

Ներուկ գեղերեցը, ապա այս շարժումով ու միամիտ ուժգնությունով դեռ ուրիշ ու ավելի ծանր ծանր գուղձեր արձակելն հետո այն սևերեսներուն կամ նոր փորձերով երեսնին սեքնել պատրաստվողներու գլխուն, անգամ մըն ալ իր սովորականին պես, փաղաքշելի օրհնություններու նախշուն ագարաթ մը կբանաձևե հոգնածի կտրատ հեքուվ մը, որ սակայն...

Բոլոր այս խոսքերը նախշուն կամ նշանակալի, բոլոր այդ սեղատարափը անկեղծ արցունքին, որ բարի ու հավատավոր հին քահանային աչքերեն կրնային հոսիլ, բան մը չեն կրնար դրջել, ամեն անգամ ալ միշտ նույն Գեղեռններու գտակներուն վրա կիյնան։

«Պահելով հավատքը ձեր և մեր օրհնյալ նախնիքներուն շատ և շատ բարությանց պիտոր արժանավորիք, շատ հաճելին կընեք բարվույն աստծու առջև, ու ես ալ վստահ ի վկայություն սրբոց և բարեխոսությամբ սուրբ աստվածածնի՝ որ միշտ առատս պիտոր վայելեք, օրհնած սիրելինե՛ր, մեկ ցանելու ատեննիդ, երկուք պիտի քաղեք, մեկ խորով երաշտ առապարները պիտոր շենցնեք, ձեր անծինը ծնի, ձեր ամուլը բեղմնավորի, մահ մահտարաժամը վերնա, օրհնյալ եք և օրհնյալ լերուք, ամեն»։

Ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն... խեղդ մռունչներով տարտամ շշուկ մը վայրկենապես ու ոչինչ ավելի։ Ունկնդիրներու կողմեն քիչերն են, որ ան ամեններուն արձագանքող կըլլան, շատեր ատ պահուն կամ բոլոր ժամանակը քարոզին, ձանձրացածի հորանջումներով բերվընին կլորցնելու վիճակի մը մեջ, անբան հոգի մը կքնացնեն մեջերնին, այն կողմեն մաղասոտ հազ մը կպայթի ու առհասարակ ամեն կողմ խոշոր կարմրահատ համրիչներու շխշխկոցը կլեցնե, քանիներ անդին խածնող լուներուն ալն. փնտռտուքն ու քերվըտուքները կընեն հուսահատ մռթմռթուկներով, մինչ ուրիշներ՝ քիչ մը անամոթները թերևս, այն պահուն, որ քարոզիչը ձեռքը ձեղունին դեպի երկինք, հոն հավիտենականը ապրող երջանիկ երևայնություններու վրա կկերկերցնե ձայնը, իրենք կերևա ավելի մոտը, նախանձելի երջանկություններու, այն տարփոտ աղավնիներուն ըրածներովը կհետաքրքրվին, որոնք հոն եկեղեցիին կամարները միացնող երկաթ ձողերուն վրա տեղ գտած՝ կտուց-կտուցի մեջ իրարու փոխանակած համբույրներովը կգինովնան ու վարերը հեթանոս գայթակղության մը մեղծ շունչը կսրսկեն փետուրներու դարձդարձիկ ծվեններու մը հետ, որ կատաղի սերերու հով փրփուրները պիտի ըլլան ապահովաբար։

Կվերջանան քարոզ, պաշտամունք, ժողովուրդը համ մը չի տանիր հետը լսածներեն, որոնցմե որ կրած տպավորությունը աղի, լեղի, քայլ մը անդին հովերուն կցանցնե։

Ժամեն դուրս ու անկե առաջ պահ մը ժամուն մեջ ալ, անանուն հասցեներու հայհուշները կնետվին ու գրեթե ամենքն են, որ ձեռքերու խաղալիքը կորսնցնող պզտիկներուն խոժոռ մռուոը ոանին։ Այնպես կերևա, որ անոնք իրարու հետ ալ չեն խոսիր, ամեն մարդ օձիքն ականջին հասցուցած իր ոտքին բթամատինը կնայի միայն։

Շատեր արդեն քահանային կուրծքին վրա համբուրելու բռնված

ավետարանին ալ չի մոտեցան։ Բայց ասոնք ի՞նչ ունենան կմտածես, սատանան ասոնց ի՛նչ խնձոր կցուցնե։

Կար ժամանակ, որ անոնք լուռ աղոթք մըն ալ պատկերին սուրբին առաջքը կկատարեին, ու այս կերպով ավելի ջերմ, ավելի անկեղծ երկրպագողներ՝ հավատքին վերջին քամը ծծած դուրս կելլեին։ Պատկերին աստվածածինը եթե սպառած դեմքով պառավ մը կերևար, պատճառը ան պիտի ըլլար անտարակույս, որ գեղին հաղարումեկ տերտերով ցավվոր հարսներուն մեկ շունչով չէր կրնար ժմնիլ ու ինք գորովոտ մոր մը պես կհալեր։

Բայց հիմա ինչ ըլլար, որ հոն այն բարի սրբուհիին առաջքը աղոթող հարսներն ալ չեն երևար։

***

Ան օրերը՝ 34—40 տարիներ առաջ, հովերը ան գյուղին վրայեն անուղիղ վազքով մը կանցնին, աքաղաղը անժամանակ ճիչեր կարձակե, ծերերուն աչքը ինկած տեղը կպաղի, բնության մեջ վերեն վար արհավրոտ տարօրինակություն մը կա ու նույն պահուն տարօրինակ մըն ալ ան, որ գեղացին իր ժամը ետևը թողած՝ այն ինչ կողմը շիտկվեր է, շատեր այն կողմը՝ քուն աչքերով աղոթք մը կերթան կատարել։

Հոն խաչ չեն հաներ. արևելք չեն կայնիր. ծունկ գետինը չեն դպցնիր, կաղոթեն սակայն։ Այն կողմը անոնց կնիկներն ու աղջիկները ալ այնպես կաղոթեն։

«Գեղը փրոտն է եկեր»

Փրոտը ի՛նչ պիտի ըլլար։

Ու որոնք հենց առջի օրեն ատ անունը կունենան, ալ ոչ իսկ ետևնին կնային, ալ երբեք նույն երեկինը։

Երբեմնի սովորականություններու մասին զարմանալի պըժգանքներ մը կցուցնեն, խունկին հոտեն չեն ախորժիր, հին ժամուն մթնոլորտը հատկանշող որևէ բույր կամ ճենճ գեշ կծվածք մը կշինե իրենց բղող քիթերնուն մեջ։

Բոլոր ինչ որ երեկիններն են, ժանտ բուրող հիներն են կըսեն ու ախվախով մը կըսեն, թե մինչև այն օրը վրա տրված ժամանակը իրենց աչքերեն վրա տրված լույսն է եղեր։

Հիմա նոր կրոնքը, նոր ճշմարտությունը ժան, անպայման այն շատ մը դյուրությունները, որոնց որևէ մեկուն տիրացումովը

շատեր մխիթարությունն ունին հուսալու թե՝ շատ մը ձրի շնորհքներու տիրացած պիտի ըլլան կամ ոտքերու տակ մեկ-երկու աղյուս դնելով, գլուխնին ծածուկ երկինքի մը պիտի կրնան դպցնել, ինչպես այդ տեսակ անուշ մտածություն մը այն պզտիկներուն մեջ, երբ անոնք ալ կհավատան պահ մը թե՝ հոն լեռ մը ելլելով պիտի հաջողին երկինքի լույսերը՝ ոսկի ընկույզներ, իրենց գրպանները լեցնել։

Դեռ ինչե՞ր ուրիշ։

Գեղը ամբողջ այն կասկածելի նորություններուն բերած ազդեցության տակ կսարսռա, ալ չկա հոն հին համակերպող խաղաղությունը ընտանիքներու մեջ, ամեն ծածքի տակ բողոքող ճիչը բողոքական հովերը կշնչեն, որոնք նույն պահուն երբ մեկ կողմեն մեռնող խիղճերու ցավագին հոնդյունները կբերեն ականջի, ուրիշ կողմե ալ նոր ծնած հավատքին նախատոնը փառաբանողներուն գոռուն աղաղակները կլսցնեն։

Ժողովարանին զանգակը, ժողովարանին բառաչող երգերը ու ժողովարականին մանավանդ ճաթած կոկորդեն ժայթքող պոռոտ շեշտերը տուներու մեջ, փողոցը ու ամեն տեղ հինի ու նորի վեճերով, այն տեսակ աղմուկ մը կշինեն կհանրացնեն գեղին հետին իսկ ծակուծուկը, որ ատեն, մարդ՝ գոմեշի թոքեր ունեցող մարդն ալ դժվար շունչ մը կառնե ու վայրկյան մը կփորձե խորհիլ, որ այս գեղը այն տուներով համայնավեր հեղեղի մը բռնված ըլլա։

Կիրակեի այդ աղմուկներեն հետո երկուշաբթի կլուսնա, ու կտեսնվի ահա, որ կիրակեի արևով մարտիրոսացածի մը տրորված մարմինը սայլակի մը վրա նետված դատարան կփոխադրվի, որ հոն որոշվի իր վրա կատարված անիրավության չափն ու տեսակը։

Հարվածներու տակ ճզմվողները սուրբերը նախատող դավանափոխները կըլլան հավետ, մինչ մյուսները որոնք վայրկենապես փաստ կամ վկայություն գտնելու անհրկության մը ատեն, փողոցին քարերեն ու տանիքին ձողերեն կընեին իրենց մեջբերումները, հաստ բիրտ փայտերը հարդի պես մանրելով դեմիններուն գլխուն ու քամակին վրա — անոնք էին մասնավորապես, թունդ, հնամոլ ծուխերը տեր Պողոսին, որ ձեռվընին ժողովարանին պատին քսած ըլլալու անզգույշ սխալանք մը յոթը օր կուլային ու վերջն ալ յոթը ջուրով կլվային պղծված ձեռվընին։

Կիրակեն միշտ ըմբշամարտություն կար այս գյուղը, կիրակեն՝ ամբողջ օրը, հոն կովն ու եզը չէին բառաչեր միայն։ Այն օրը, մասնավորապես, ուր գեղը քով քովի կապրի, ժողովարանականը

Իրենցներուն հետ հպարտ անցք մը կընե ժամվորներու առջևեն, ու ահա հրավերը տրված կըլլար արդեն։

Այս վիճակը սակայն երկար չի տևեր, կանցնին տարիները ու նոր երևույթի մը նշանները կուգան աչքի տակ։ Գեղին կեսը ուրիշ կողմ կերթա, կաղոթե ու ալ ոչ իսկ փսփսուք մը վեճ ու կռիվ շինող։

Առջի օրերու անոթի, բոբիկ աղքատներու ետևե, որոնք պատառ մը հացին կարոտովը օձերուն լեզուն կծծեին, կուգա ատեն մը, ուր ջոջ տնվորներն ու թունդ պահպանողականներն ալ անձայն անձնատրվություն մը կընեն այն կողմին։

Այն կողմը հրապույրը, այն կողմը շահերը, այն կողմեն մոտիկ, ծածուկ երկինք մը։

Աս վերջինները ինչպես առաջինները զարմանալի է, որ անմիջապես ալ մոռնալով երեկի իրենց պաշտպանածներին, դեպի այն՝ սաքանեներովը կնետեն իրենց քարերը, հին եկեղեցին՝ կռատունը կամ հրեա սինակոկը իսկապես...

Անոնցմե շատերուն վրա մարիլ կուգա քահանա մը տեսնելու ատեններին ու աս շատերը հինին վերհիշումովը խելոռած խոզերուն պես ծուվն ու գետը կփնտռեին։

Հին եկեղեցին խեղճերու ատկտուք մը կմնա միայն անանկները, որ քահանաներուն ընտանիքն ու ազգականներն ըլլալով, իրենց մեծավոր հայրերուն անեծքներեն ու սպառնալիքներեն կվախնային, թեև իրավ է, որ ասոնք ու ասանկներ ալ երբեմն այն կողմին հավասովը կհնհնային։

***

Հարուստ տուներու ամենքն ալ դավանափոխ, էն վերջը այն տեսակ անակնկալ մըն ալ Շալճին կդնե մեջտեղ։

Ես ուշ կգտնեմ ըսելիքս, ես սակայն իրական վեպ մը պիտի պատմեմ ձեզի. վստահ եղիք թե՝ քուն բերող հուշագրությունով մը չպիտի գրավեմ ձեր ժամանակը։

Հետամնաց մը, որ ահա ան ալ իր տեղը կգտնե վերջապես։

Բազեն բազեին քով, ճայը ճայերուն բույնը։ Շալճի Արթինն ալ դավանափոխ մը, բայց ի՞նչ ունենար այս մեկը, ինք քանի որ իր շրջանակին հարգված մարդը՝ իր առջևեն անցնող ճնճղուկն ալ կբուռցը կուրծքին մեջ խրած՝ զինք պատվելու կերպ մը կըներ։

Այն կողմը ի՞նչ հրապույր ըլլար իրեն համար, կամ կրավե՞ր

այն, որ հոն որովհետև իր այարները տեղ գրավեր են ինքն ալ անպատճառ անոնց կուշտին պետք էր հաստատիլ, այս տեսակ բընազդ մը մենք կըսեինք ու աշխարհ ալ կվկայեր թե՝ մարդ չեղող կենդանին ունի միայն։ Իր անունը իր ծախած ապրանքին անունովը համբավված՝ Շալճին, աշխարհ անոր համար այս վկայությունն ալ կուտար թե՝ քաղաքամեջի վաճառականի մը չափ ու անկե ավելի շահ կհնձե անցած տեղերեն։ Զարշի մըն էր, բայց ոչ այն տեսակեն, որ ծախելիքը իրեղեններու ծրարները կոնակը պտտելու կելլե, Շալճին հեքիաթին պեզիրկեանին հովերովը կանցնի դուռներու առջևեն, ձիով կպտտի, ու այս բոլոր ժամանակը ապրանքը էշերու վրա բեռցուցած ուխտավորի կարավան մը կվարե կարծես ճամփու երկայնքին, մնացածը սպասավորը կլմնցնե։

Այս կերպով անոր ձեռք բերած հարստության վրա առասպելներ կպատմվին։ Հարուստ մը իր այն բաներովն ալ, որ վրան կկրեն։

Ականջին արծաթ օղերուն հետ ձեռքի մատներուն գրեթե բոլորին ալ վրա մեյմեկ թանկագին մատնի անցուցած կերևցնե, Սարդանաբաղ մը ու պակասը միայն դաստակին ապարանջանը կերևա։ Իր կապած շալ գոտին միայն ագարակ մը կգնե կըսեին, ու ինչ որ ունի կամ ինչ որ կկրե վրան, գլուխը անոր քանի մը տեսակները ու ավելի սուղերը ունի։

Աղոյենց Մղտես Ակոբին հետ երկրորդ մը ինք է, որ փիյրոլ ժամացույց մը կշաչեցնե ձեռքին մեջ կափարիչին ցուցամոլ խըբվածքովը, ժամացույց մը էն պզտիկ զարդամասը իր ունեցածներունն, որուն ճոխ շղթան գոտիեն դուրս վիժած պորտը կծեծե մինչև ու մնացած ավելիովն ալ կրնա իշու քուռկի մը դունչը սիրունկեկ պախուրց մը անցուիլ։

Քիչ մը ետքե տեսնողի ձևերը նշմարել կուտա վրան, բայց մեկեն կմտածես, որ գեղի քաղքցիի մը առաջին նմուշը պիտի ըլլա ան, կամ հին ծոփեցի թերևս։

Շալճին գեղեցիկ իր ամբողջ ձույլին մեջ։ Քառասունը անցած տարիքովը անկնճիռ ճակատ մը կպահե թուխ մույնքով մը։ Առնացի, թիկնեղ ու հասակն ալ աշտարակի բարձրություն մը։ Սև, թավ հոնքերուն տակ թարթած աչքերը այն տեսակ համոզիչ մեղմիլ բան մը ունին, որ կրնան վայրկենապես չոր ժայռին երեսն ալ կանանչ մամուռ մը ծնեցնել։

Պակասը, խոսելու պահին, իր ձայնին թոնը կամբողջացնե։ Թրթռակ խազերով մեղրոտ բառեր մը, կգենկեզնաս կարծես կամ

որոնք թերևս աղաչանք մը ըլլա այն նազոտ գեղջկուհիին, որ իր շալերուն այն ինչ հատին հավնելու ատեն անոր արժեքին մասին համառ անհասկացողություն մը կցուցնե։

Բայց մարդը գիտե մեջեն ելլել, ձեռք անցուցածը մրջնաբույծի մը պես կքմե։

Շատ ավելի գեղի կնիկներն են, որ անձկագին իրենց դուռներուն առջև Շալճիին կսպասեն։ Այն օրերը գեղի հարսնուկ մը իր հետույքին կլորության վրա պարսիկ շալ մը եռանկյուն մը կապել կարենալու համար, երեք օր, երեք գիշեր ծոմ կպահեր։ Այս ճաշակը տղամարդերուն մեջ ալ, որոնք անկե առաջ տեղական կտավով մը կպրկեին մեջքերնին։

Խ.-ցի Արթին առաջինն ինք կըլլա, որ ամբողջ դաշտը իր բերած գոտիին նորությովը կողողե։

Այս կերպով տուն բերած շահերը փեթակներ կլեցնեն, հազար ոսկի ունի կըսեին, է՜հ, չէ՜, հազարն ալ բա՞ն է կավելցնեին։ Մարդուն հարստության չափին վրա առասպելներ կպատմվեին։

Ու մենք չըսինք տակավին թե՝ այս տեսակ հաջողված բախտավոր ինչո՞ւ պիտի շապիկ փոխեր։

* * *

Արթինին այն ինչ մեկ ազգականը շատոնց բողոքական կրոնքին հետևող ու աս ալ հարուստ մը իր կարգին, ամեն օր անծեղ մը կապրի իր ազգականին ականջին տակ։ Ես այն մեկը Զուինկըլ մը անվանիմ, դուք նույն ինքը Լուտեր մը հասկցեք։ Օրվան միսիոնարեն փայփայված առաջին դեմքն է գեղին մեջ։

Միսիոնարը հոգիով աղքատներուն երեսները համբուրելու ատեն, մինչև հիմա ալ այնպես է, որ ոսկիով բեռնավորվածներն ալ իր աջ ծունկին վրա կնստեցնե։

Բաղդիկ Պաղսար, միսիոնարին հայացքներուն մազին ծառայելու իր անձնվեր գործունեության մեջ, կաշխատի, միշտ կաշխատի, որ այն գեղը ապրող արագիլներուն բույներն ալ բողոքական ժողովարանին տանիքին վրա շինել տա։

Պաղսարի դավանափոխությենեն ետքը Ֆերնատ ժողովասրահին ժամկոչը կմնա այլևս, այն միականի Զաքարն ալ սոսկ տամճիի ծառայության մը մեջ։ Պաղսար կաշիի վրա գործ ընող խաղախորդ մըն է, իր ստորագրությունը միայն, որովհետև բողոքական մըն է։

Ալեքսանդրապոլցի Թրամփյաններուն առջև անսահման վարկ մը ունի։ Պաղսարն է հանձնարարողը ու անոնք անոր ուզածին կրկնապատիկը կբերեցնեն։ Գեղին բոլոր մյուս խաղախորդները, որոնք հաբուստ դասակարգը կկազմեն, որպեսզի հաջողեին, միևնույն տեսակի շնորհքներ մը իրենք վայելել կաշխի այն ծանոթ վաճառականներուն կողմե, Պաղսարի դավանափոխութենեն վերջն էր, որ իրենք ալ միւսնարին փեշերուն տակ գացին ապաստանեցան։ Պետք եղած ատենը համոզվածներն էին ասոնք, որոնք նույն ատեն իրենց համոզումին անկեղծությունը հռչակելու արտորանքով մը իրենց այգիներու քակել քայքայելու ցույցը կընեին, որ խաղող չուտեն, խաղողեն որովհետև գինին կելլե, ու գինին այդ կարմիր օձը ամեն անփոստովանելի մեղքերու մայրը գլխավոր։

Բաղդիկ Պաղսար հարկ կա՞ ըսելու, թե վերջապես օր մըն ալ իր աղգականին գլուխը կգերծե։

Մեկ հատիկ աղջիկ մը ունի, որ շատ ուզողներ ունի, բայց ինք կնախընտրե անոր ամուսնությունը իրեն ծանոթ շրջանակի մը մեջ փակել, քանի որ հիմա հասի չհասի խնդիր ալ չկա, նոր կրոնքիկ մեկ թույլատու պայմանը երկու իրար հավնող ազգականներուն միջև։

Արթինի համար աս տեսակ խոստում մը չսպասվածը կըլլա, իր տղային համար պետք եղածն ալ իրավ է, որ այն տեսակ աղջիկ մըն է, վաղը նոր հարստություն մը անոր շնորհիվ, վաղը Կրեսոս մը դեղին մեջ, միայն թե՝ ու ի՞նչ հեշտ պայման, ինքն ալ ու իր ընտանիքը ամբողջ, փոխարեն այն խոստումին, խոսք տան, որ ժողովարանը աղոթեն։

Կվերջանա համաձայնությունը ու Արթինին տունին մեջ համառողը անոր կինը կըլլա միայն, ես քածի մը համար կրոնքս չեմ փոխեր կըսե աս վերջինը, հեմ մեղք է այդքան մոտավոր աղջիկ մը հարս բերել։

Մարդը մտիկ չըներ պինդ գլուխ կնկանը ու մեկ օրեն մյուսը Պաղսարին հետ ծունկ ծունկի ժողովարանական մը կըլլա։

Ամիսը երկուք չըլլար Շալճին կատարելապես համոզված քրիստոնյա մըն է կըսեն ու եկեղեցիի անդամ կհռչակեն։ Լեցած է արդեն ժողովարանը Շալճիի մը մուտքով, որու ստվերը Պ...յաններու տղոց համար միայն խռովիչ բան մը ունի։ Պաղսարին աղջկան առաջին հետամտողներն էին ասոնք, իրենք ալ եկեղեցիի անդամ թե, բայց մարդը գիշերն ալ իր հաշվին տերը, Արթինին միայն կխոստանա և

այս անոր համար որ կհուսա, թե վաղը անոր տուն փեսա բերելու համաձայնություն մըն ալ պիտի կրնա կնքել։ Օտար տղան շատ անդամ էգին ավրող աղվեսն է ճոխ տունի մը մեջ։ Շալճին բաղդավոր մը ու քանի մը տեսակ հաջողություններով։

Իրեն համար համոզված պարկեշտ քրիստոնյան է ըսին հենց առաջին երևումով, Պաղսարին հավասար պատվավոր անդամակից մը նորակազմ եկեղեցիին, որուն որևէ մեկ անհատին այլ մասնավորապես անդամ նշանակված եղբայրակցության մը շրջանակին մեջ, հին մեղվոր գյուղացին չի կա այլևս։ Այս կարգինները մեջեն դուրսեն լվացված սրբություններ են կըսեն, սուտ բնավ չեն խոսիր, բամբասող մը սատանին դայեկը կճանչնան, մեկ մեկու հետ քրիստոնեական համերաշխություն մը ունին, եղբայրներ են ամենքն այ, չեն հայհոյեր, մեջերնին կռիվ միջադեպ չի պատահիր, պատվիրված զգուշություններով կարծես իրարու հետ ժիր անգամ չեն խոսիր։ Ամեն մարդ իր ունեցածին տերը կմնա ու վայելքի մեջ նախանձի առարկա չի դառնար ուրիշե մը, յոթն օտար կնկուկ մը սիրելի քույր կկոչեն Քրիստոսով, ու կըսեն երբեք առջի հայրատ նայվածքը դեպի այն, կամ երբեք չար հետամտություն մը հինին պես նույնիսկ հրեշտակի դեմքով կնկան մը շուրջը։ Անոնք ինչ որ խոսին, սուրբ գիրքով կխոսին, սուրբ գիրքը անութներու տակ գարված հմայակ մը կցուցնեն։

Այս կերպով անոնք շատ բարձրեն կնային հին եկեղեցիին վերաբերվողներուն վրա, խեղճերը, որ պատկերին կհավատան ու խաչը կպաշտեն տակավին, հիմարները՝ որ Աբդլմսեհի պես կարգ մը սուրբերու բարեկամության կհուսան, ապուշները՝ որ քնաթաթախ հորանջումներով Տ. Պողոսի մը սնամեջ բարբառույքներովը կլուսցնեն, իրենք մինչդեռ աղջամղջային խավարեն ոտքով գլխով ազատվածներ՝ բյուրեղիկ ճշմարտություններու անմահական սնունդ ունին իրենց հոգիներուն համար, ջուրը ուղղակի ակեն կխմեն, տեր Հիսուսի կհավատան միայն, գառնուկին միջնորդությունը միայն։ Միայն աղոթք, միայն խնդիրք ու միշտ տեր Հիսուսի ձրի շնորհքներովը։

Մսավաճառ մը այնքան մոլի աղոթավոր մըն էր կըսեին, որ երկարկեկ աղոթք մըն ալ ենդանին մորթել սկսելեն առաջ պիտի կափկափեր, «էս չորքոտանին, վուոր պիտոր մահացնենք հիմա, ո՞վ տէր, քու անունովդ ու քու միածին գառնուկիդ սիրուն համար պիտոր սպանանիենք ենայն. ենայն»։

Ասոնց քարոզիչ պաշտոնյան, ըլլար միսիոնարը Հիվիլը կամ ասոր առաջինին Սիմոնիկը՝ կաղ Ֆերնատ, գրեթե միշտ անդրշիրիմի երանութիւններուն գաղափարը հատուկ պահելով իրենց բնազանցիկ քվքվանքներուն, արևի աշխարհին ունայնությունը կշեշտեին, երկիրը արցունքներու հովիտը, ուր ոչինչ կա տևական, անկայուն վաղանց պղպջակն է ան, որ ջուրերու երեսը կտեսնվի։

Ֆերնատ իր ժամկոչի ծառայության մեջ ալ ամպիոն ելլելու արտոնված՝ ամեն կիրակի, աշխարհի ունայնության հետ, աշխարհամարդուն ըրած, վայելած անմեղ զվարճություններն ալ մեղքերու սոսկալիները կպոռա «սոսկալի, եղբայրնե՛ր, սարսափելի է վիճակնիս, նույնիսկ պիտի ըսեմ թե՝ հենց պարապ տեղն ալ մի՛ խնդաք»։

Քարոզիչ պարոնը շատ անգամ խոսքը քրիստոնյա անունով մը ինքզինքին արդարացած սեպողներուն ուղղելով, «չէ՛, կըսե, իմ սիրելի եղբայրներս ու քույրերս, չէ՛, էն ատեն որ, դուք կըսեք, կպարծենաք թե արդարներ եք, ճիշտ էն ատեն է որ, սարսափելի մեղքը կգործեք. բացարձակ արդարը ինքն է միայն, միենք միեր բոլոր սրբություններովը, բոլոր իստակություններովը նորեն միեղավորներ կսեպվինք, խաս չեշիտով արդար չեք ըսվիր ախբրը, քանզի իմ սիրելի եղբայրներս, էն օրը որ կխորհիս թե՝ անմեղ արդար վիճակի մեջ տուն կդառնաս, մտածելու եղիր, որ թեև ձեռքդ դրացիին էգիին չես երկնցուցած, թեև ձեռքդ ծոցդ պեյեր ես, բայց նույն օրը կրնա ըլլիլ որ ոտքովդ ես մեղանչած վատնդի, եղբա՛յր, դուք ըլ չե՞ք համոզված թե՝ դաշտեն մինչև տունը շատ մը բանվոր անմեղ մրջյուններ ու մկլեզները կմահացնեն ձեր ոտքերովը, սպանության պես միեղքը խոշ մարդուն կաս տեվեի պես խոշորության վրա չըլլիր միայն։ Ահա թե ինչո՞ւ կըսեմ, որ միենք բացարձակ արդար չե՛նք կըրնար ըլլիլ»։

Նոր կրոնքին աս եսսենական հայացքները տարիներ առաջ այսպես շատ ուշագրավ թվական մը կհանդիսավորեին, ինչպես հոս Խ.-ի մեջ ինչպես ալ Իշմեի ու բուն քաղաքի մեջ, երեք կարևոր կեդրոնները միսիոնարական գործունեության, ուր ճարպիկ միսիոնարը իր առաջին տաղավարները հաստատելու գործունեությունը ցցուց։ Քիչ վերջը չորրորդ մը Հ... գյուղը կըլլա անոնց հետ։

Փակագիծս գոցելե առաջ ըսեմ որ այդ քարոզները պահ մը այն արդյունքն ունեցան, որ՝ ժողովուրդը՝ նախ անոնք, որ մոտեն ու մշտապես լսողները կըլլան անոնց, վերջը հետզհետե մյուսները ալ որոնք ան ատեն կամ անկե առաջ հայ տերտերին նկարագրած դժոխքին յոթը անկերով կաթսաներուն սարսափը միտք պահած էին, ժողովուրդը կըսեմ, ուրանա ալ ևս արևին տակ ժպտող գույներուն հմայքը, ուր իր մեջը միայն անդենականի հոգերը լեցնե, աշխարհե ու աշխարհիկ հաճույքներե մեկուսանալու լուրջ ստուգանքներու մեջ։

Եվ անկե վերջ իրավ որ գեղին լուսավորչական ապրող ան ատկտուքներով ալ շատը այնպես տեսա, որ դրացի իրենց աշխարհուրաց բողոքականին տրտմությունով սգավորի ճրագ մը կմըլմլցնեին տուներնուն մեջ։ Սգավորներ՝ պարի, պարխաղերու սովորություններե հրաժարված, սգավորներ՝ հարսնիքին թմբուկը իրենց ձեռքերովը խզտած։ Թախծոտ անժպիտ ինքնամփոփումի մը մեջ անոնք ամենքն ալ, երբ ալ բարեկենդանի գինողող տանիքներուն ցնծուն ծափերն ու քրքջանքներն ալ չեն լսեր կամ չեն ուզեր լսել։ Ցուլի և ըմբշամարտության խաղերու հերոսիկներն իրենց երդիկներուն տակ թաղված մեռելներ կմնան, որ չեն իշխեր ու չեն կրնար անգամ ըսել, որ երեկ ալ կյանք մը ունեին։ Բոլոր ասոնք ու այս կարգի սովորություններ մեղավոր հաճույքներ ճանչվեցան։

* * *

Փշիկ Սիմոյին տունը հարսնիքի եռուզեռ մը կա, ուր Շալճին ալ իր խատուտ հագուստի երանգներուն մեջ՝ իր տեղը կբռնե բազմոցին վերի կողմը, հիմա ու ամեն ատեն ալ միշտ այն դիրքն է անոր գրաված աթոռը։

Հարսնեատերը ու բոլոր ուրիշներ՝ ամենքն ալ լուսավորչական ու պարտականները շալավաճառին, շատ ավելի անոր կշռայլեն պատիվը, հարուստ մըն է մարդը ու նույն ատեն խաթրլի դրացի մը, որուն հիմա պարկեշտ ու պատվավոր բողոքականի անունն ալ գլխագրով կգրվի։

Սիմո ավելի պատիվ մը իր բողոքական դրացիին, այնպես արդեն կարգադրած կըլլա, որ դափի թմբուկի ձայն ձուն չըլլա բնավ, գինին ալ, է՜հ, կարելիորեն չափավոր ու երբեք գինովություն։ Խիստ պատվեր մը այսպես ճահիլ հարսնևորներուն ականջին «Հարսնիքը կանցնի, խախկությունը կմնա, տղա՛ք, ձեզ տեսնամ, քեամի՛լ, քեամի՛լ, քեամի՛լ»։

Քեամիլ իրավ որ մինչև օրանին ալ բզեզը, իսկապես բողոքական հարկինքի մը անշշուկ լռությունովը ու լրջությունովը կորակվի

եղածը, որուն ավելի ճիշտ պիտի ըլլա սգավորներու հավաքույթ մը ըսել։

Պատվասիրության մը այս կերպ շռայլանքները, ինչպես կակնարկեինք, քիչ մըն ալ այն պատճառով, որ Շալճին Փշիկեն ունեցած հին առնելիքներուն վրա նոր մըն ալ ավելցուցեր է անոր այս անգամ ալ ապառիկ տալով հարսանիքին համար հարկադրված գոտիները, վճարի պայմանն ալ դեմինը ինչպես որ կսպասեր։

Փշիկ ինքնին իր համակրելիության հետ ինկած երկրագործ մըն է, որ միշտ պատրաստ դրամ չունենար։ Ասանկներուն համար քսված է, թե անոնք շատ անգամ ախորին էշը կծախեն, որ տոնին հարս մը բերեն, երկոտանի իշուկ մը ավելի տնտեսական գտնելով։

Հարսնիքի վերջին իրիկունը, վերջին հացին կնստին, տարևորները առանձին սեղանի մը շուրջը, հետո կարգ մըն ալ ճահիլ փեսամանուկները պիտի ուտեն։ Վերջինները հավետ տրված պատվերներու մը համաձայն, ոտքերու բթամատի վրա արթուն ու ընդոստ՝ սեղանեն մինչև խոհանոցը կկոցի երթուղարձ մը կընեն։

Մեծերու այս սեղանին վրա կտուց կախողներուն մեջ՝ անգամ մըն ալ ըսեինք, թե դրացի Շալճիեն զատ ոչ ոք կա ուրիշ, որ ժողովարանը ներկայացնե։

Մյուսները տասնհինգ քսան հոգի՝ գինիին կարասին տակ քընացող լուսավորչական տուներու Թթուրիելներ՝ այն հիներն են, որ ժամուն ս. Ստեփանոսի պատմութենեն զատ բաներ մըն ալ շատշատ երկիրը իր վրա կրող մեծ եղին կյանքեն գիտեն։

Սեղանին վրա եկած երևցած կերակուրներու կարգին՝ գլուխգործոցը կերևա վերջապես, խորոված գառը գլխովը մեկտեղ, որուն ցակամեջը չես գիտեր ի՞նչ վայրագ հեգնություն մը խորհրդավորելու համար փունջ մը թարմ ազատքեղ կզետեղեն, բայց իրավ սքանչելի։ Դաշտեցիին թոնիրը եփված այդ գառը վայելելու համար մեկ ստամոքս ունենալ չի բավեր, մուպարե՞կը... Օ՜հ, մուրազ տվողը, որ վերջը կբերեն կրսեն, վերջը, որ վրան հարիր լիր խմվի կբերե Փշիկ— հարիր ալ երկու հարիր ալ կարձանագրե ուրիշ մը։ Շալճին անխոս, ու կերևի անոթի քիչ մըն ալ, աջ ձեռքի մատները եռաժանիի մը պես կխրե գառին կուրծքը, ուսկե վերցուցած պատառները այնպես կթաղե, ինչպես արագիլը դոդոշները կկլլե։ Գինին գառին վրա չի խմողը, երկու անգամ կմեռնի եղեր։ Մեռնողներ անոնք ալ, որ հարյուր լիթին ախորժակը ունին։

Ու դուլլերը մեկե ավելի սպասավորողներու ձեռքին մեջ՝ գը՛լ, գը՛լ, գը՛լ, բաղերու ձայն մը կհանեն։ Օ՜խ, անա՛մ, պապա՛մ, ճանրմ...

Գավաթը պարպողը գինիին ու տիրոջը պատիվ՝ անպատճառ կանենա ըսելիք մը։

Այն մեկը խաղողին թուփին տակ կպառկի, ուրիշ մը գինին բղողին մեջ սատկող մուկը կուզե ըլլալ, «գինի, գինի, հեփիմիզըն տե տինի ու էօմրի, կրսե տանտերը, իշտե ես էսոր համար չի փոխեցի մսուրս որ ամեն օր ըլ էս մուպարեկ մեռոնով օծվիմ, ի՞նչ ըսիր պարոն Արթին, դուն մինակ ուտելուդ ես տալմիշ եղեր, անուշներ ըլլի, սիրելիս, անուշներ խմողաց։ Պարոնը, Արթին իրավ է, որ կենճիթը սեղանին վրա միշտ՝ ուտելուն կնայի միայն, բայց ինչ ըսել է»։

Հարսնեատերը աչք մը կընե գինի մատուցողներուն ու անմիջապես գավաթ մըն ալ անոր կերկնցվի, պարոն Արթին, աչքդ սիրեմ, կրսե Փշիկ, գառին հոգին քեզ կանիծե, թե որ... Մարդը, բայց երբե՞ն է, որ իր տունեն կարասներն անգամ կտոր-կտոր ըրած ու դուրս նետած է։

Գինիի պես խմելիք մը իրեն ինչպես առհասարակ բոլոր եկեղեցիի անդամ եղբայրակիցներուն համար, ան օձն է, որ մտած տեղը թույնե ավելի մահաբեր բան մը կտանի։

Շալճի ու գինի, երկու ի՞նչ անհաշտ հակադրություններ, որ կրնայիք երևակայել։ Շալճին ժայռ մը, որ քլունկով ալ չի քակվիր, կմերժե հրամցվածը, գինի, ան սոսկալի բանը, որուն նախաձևն անգամ կասկածելի հապ մըն է իրապես, խաղողը, ու գինի հիմա, չէ՞, եղբայրնե՞ր, չէ՞, անկարելին կխնդրեք։

Փշիկին հետ քովիններս ալ ստիպող կըլլան, որ Արթին առնե գավաթը, միայն մեկ գավաթ գոնե, բայց մարդը միշտ նույնին կրկնությունովը կմնա, անկարելին է իրեն սպասվածը, եղբայրներս, տիրելիներս...

Ժեղանակիցներ վայրկյան մը վար դնելով իրենց գավաթները սա նաղոտ հարսնևորին փնչփնչումներուն վախճանին կսպասեն, բոլորին ալ փոփաքն է, որ բողոքական պարոնը — մենք չըսի՞նք որ եկեղեցիի անդամ մը — պզտիկ չի ձգեր զիրենք, հարսնիքի առիթով Քրիստոս ալ խմեց, կրսեն պարոն, գինին պակսելու ատեն, այն ինչ հրաշքն ալ գործեց, դուք ավետարան կկարդաք, դուք ավելի ազեկը գիտեք։

Սա տեսակ երդված տոֆի բողոքականի մը մանավանդ գինի

խմցնելը քիչ մը ամեն լուսավորչականի համար ալ հետամտած քաջություն էր, որ վերջը իրենց մեջ ըսել պարծենալու հպարտությունը պիտի մնար։

Բայց, սիրելինե՛րս, սիրելի եղբայրնե՛րս... մարդը՝ նույն համառը, անգամ մըն ալ կգտնե անոնց պատասխանելու բանաձևը։ Փշիկ ինքն ալ նույն չափով համառ մը իր ծրագիրը կփոխե, չէ՞ որ արդեն տեղական սովորությունն ալ այնպես կպահանջե շատ հարգված հյուրին համար։

Մատուցումը այս անգամ ուրիշի ձեռքով, բուն իսկ տանտիրոջ կնկան կողմե։ Նոր գինի, նոր հրամցնող մը ահա, որուն աղվոր աչքերն ալ արդեն այնքան սև ու պաղպաջուն զույգ մը գավաթ կարժեն, «նոր բղող բացի, պարոն Արթին, խուրպան, ատուկ քեզի համար բացի, խաս գինին բերի, որ մեռոն կլմանի»։

Պարոնը ջուր քրտինք մը կսրբե ճակտեն, ալ հնար կա՞ բառ, շունչ փորձելու. գինին աղվոր, տվողն աղվոր, երգն աղվոր, ձեռքը գավաթին կտանի վերջապես, քովինները զեղուն զվարթությունով մը կեռան, անուշներ, պարոն, անուշ ըլլի, անուշ ըլ... իշտե հիմա հարսնիք կլմանի... պարոնը գավաթը բերնին՝ անոր մեջինը ծծելու ատեն տարիներու կարոտով երազված սիրականի մը երեսը կծծե, էն վերջին կաթիլն ալ այո՛, ու բերանը սրբելով գողի նայվածք մը կընե քովիններուն։ Գող մը, գեհենապարտ մեղավոր մը, վերջը պիտի հասկնաք։ Շալճին գավաթ մը թույն էր, որ խմեց։

Ժողովարանին զանգակը մեկ-երկու շաբաթ վերջը, օրը երեք անգամ, օրը չորս ու հինգ անգամներ տենդոտ շեշտ մը կտարտղնե, հո՛ս եկեք, հո՛ս եկեք, շո՛ւտ վազեցեք...

Ժողովարանը իրարու վրա ամեն օր կարևոր խորհուրդներ մը կկատարվին։ Որոտագոչ աղմուկ մը եկեղեցիի անդամներուն մեջ, որոնց կարգին շատ ավելի Պ...երու տղաքն են, որ պոռալու ատենին պատերուն ծեփերը վար կառնեն, օ՜հ, չէ, եղբայրներ, չըլլար այսպես, գայթակղության սոսկալին կըսեն ասոր, դուք ինչ կարծիք ունեիք, ժողովուրդ, կըլլա՞ր այսպես, մենք զատվեցանք, որ... մենք ճշմարիտ ավետարանը եղանք որ... մենք զինք իբր պարկեշտ ու նորոգված եղբայր մը եկեղեցիի անդամ ճանչցանք որ... բայց ան հիմա մեր բոլորիս ալ խերն անիծած եղավ։

Այո՛, այո՛, շատ շիտակ կխոսին Պ...յան եղբ[illegible]երը, ջնջել, ձգել ու անունն ալ բոլորովին մոռնալ պետք է վրա գբերվի ունկընդիր ժողովրդին մեկ մասին կողմե, մյուս շատերը Բաղդիկ Պաղսարին կարծիքը կպաշտպանեն, որ Պ...երու հակառակը պնդող մեծ ձայնն ունի, սխալ եք հասկցեր կըսեր աս վերջինը, եղբայրնե՛ր, սխալ հասկացողության մը հետևանքով անմիջապես վճիռ չարձակվիր, խմվածը գավաթ մըն է միայն, ան ալ ի՛նչ ստիպումով, ի՛նչ չափ զոռով, դուք ալ ըլլայիք ուրիշ կերպ չպիտի ընեիք կարծեմ, ի՛նչ կսեք ժողովուրդ, դուք կհաճիք, բերան մըն ալ մեզի համար բացեք։

Ունկնդիրներ մեծ մասով անգամ մըն ալ Բաղդիկին թմբուկը կզարնեն, բայց բան մը չարժեր իրենց հանած ձայնը, անգամ ըսվածներու մեծամասնությունն է, որ Պ...երու կողմը կպաշտպանե, այն հայտնի պատճառով, որ լսած կըլլան, թե Բաղդիկ մոտ օրեն իր պաշտպանածին հետ խնամիական կապ մը պիտի հաստատե։ Վաղն ան երկուքին միացած աղդեցությունը ամեն հավանականությունով իրենց շահերուն սպառնացող փորձությունը պիտի ըլլա։

Ջնջել, եղբա՛յր, ջնջելը միայն գայթակղության առաջը կառնե։

Հովնան մըն ալ թող պակաս ըլլար, մանավանդ թե արդեն այսպես կպահանջեն նույնիսկ եկեղեցիին շահերը, որոնց պատասխանատվությունը ժողովրդեն առաջ, անգամ եղբայրակցության վրա կծանրանա։ Շալճին բացակա այս վերջին ժողովեն, ու նույնիսկ գեղեն ալ իր առուտուրին բերումովը, երկինքեն երկիր՝ մեղավոր հրեշտակ մը կնետվի, այնպես որ ալ ան անկումեն հետո հասարակ ժողովարանականի մը պատիվը չունենար։ Այսչափ արագ կփոխվի իր վրա ձևված համարումը, ժողով կամ ժողովուրդ այսչափ բծախնդիր միջամտության մը կարտորան պատժելու այն մեկը, որ այնպես կտեսնեին թե՝ քիչ մը լայն կնստեր ժողովարանին մեջ, ամեն օր հարսնևորի մը հագուստովը կերևար հոն, ու անոր ավելի ան անտանելիությունը, որ հիմա կխոսին, ան է եղեր, որ ժողովարանին մեջ աղոթքի ատեն, մինչ ուրիշներ աչքերնին խբելով ինքնամփոփ վերացումներու մեջ կըլլան, ինք նույն ատեն իր թարթիչներուն տակեն պահ-պահ կնիկներուն կողմը կհայի եղեր, կատարյալ բողոքական մը չէր կըսեն։ Ինք ժողովարան գալու ատենը թող կուտար, որ իր կնիկն ալ ժամ երթար, այս բանը քիչ մըն ալ բուն իսկ իր բարեկամ ազգականին ջիղերուն դպած էր օրին, բայց նա կծածկեր իր զգացումները ու կարելի է այդ իսկ պարադան ըլլար արգելիչ միակ պատճառը, որ Բաղդիկ չուզեր արտորալ իր աղջիկը Շալճիի պես կես բողոքական տունի մը հարս տալու։

Պ...ները կշահին ան, ինչ որ միտքերնին դրած էին. քաղաքեն միսիոնարն ալ եղածին հավանություն հայտնող պաշտոնական թուղթ մը կնետե անոնց առջև։

Մեկ քանի օրեր վերջը, բանադրված պարոնը տուն դարձած կիմանա բաները ու պահ մը ապուշ կապրի. կամ ավելի շիտակը, լուտ մխացողը կըլլա այն որոշումին հեղինակներուն դեմ ու անոնց անուններուն վրա կկռճտցնե ատամները։ Բաղդիկին բարեկամության չափն ալ աչքի տակ կբերե, բայց կարժե՞ փորձել բան մը, քանի որ լսած կըլլա նաև թե՝ անոնց ըսածներուն հավնողը ուրիշ բարձրագույն մարմին մը միսիոնարությունն ալ է եղեր, միսիոնարը հայ տերտերը չէ, որ մեկ դույլ գինիով յոթը մահացուները ներե։ Մարդու առուտուրին պարագաներն ալ այնպես են սա վերջին օրերը, որ քիչ մը ժիր շունչ առնել տալն անգամ վտանգավոր հավակնություն մը կխորհի։ Ձայնը վար կդնե ու տունին մեջ ինքնամփոփ խոշորկեկ գիրքի մը վրա կկախե գլուխը։

Այս վիճակին մեջ իրեն այցելող բարեկամները իրմեն այն տրպավորությունը կտանին, կվկայեն թե՝ մարդը հիմա ինչպես առաջ ալ մեղրիկ մեղեսիկ քրիստոնյան կմնա, գեշը անոնք, որ անոր պես մեկը գավաթի մը մեջ խեղդելու անիրավությունը ըրին։

Բանը հոն սակայն որ խոստովանանքի կամ վկայության մը այս կերպը ուրիշներն ալ հայտնեն ու խոսքը մինչև այնինչ ամբիոնը արձագանքե։

Անոր միակ փափագն է կորսվածը գտնել ժողովարանին մեջ, վարկի վերադարձը կամ եկեղեցիի անդամակցությունը անգամ մըն ալ — ինչո՞ւ չէ, ապաշխարհող մեղավոր մը ողջունելու համար երկինքի սերովբեներեն առաջ արդեն, հոն, քաղաքի միսիոնարն ալ պորտ կնետե։

Դատապարտված մարգը այսպես շատ օրեր բուն գործն ալ մոռցած՝ խիստ ապաշխարության մը կենթարկե ինքզինք, միշտ կաղոթե, միշտ ս. գիրքն ունի ծունկերուն վրա։ Խոշոր աղյուսի մեծությունով աստվածաշունչ մը, որ օրին մեկը միսիոնարն է նվիրեր իրեն, անոր հետ ուրիշներ ալ կան ձեռքին տակ թեև, բայց անոնք մանր գիրերով են, ինք ավելի այն մեկը կախրե գործածել, որ ոսկեզօծ վոզքին հետ խոշոր ալ տպագիր մը ունի։ Բացած եշ-սին մանրագիր վկայություններն անգամ աչքե չի վրիպեցներ, կարգ մը բառերու վրա քմայքոտ եզանակներ մը կկզկզա, որ երգարանինը պիտի ըլլան։

ՍարՐՐ՝ ան Աբրահամի կինը կամ քույրը, աս անունը գտինչի մը շեշտովը կերկարաձգվի իր բերանեն։ Սառռան, Աբրահամ մը հայտնապես սուտ մը ծամեց իր գեղեցիկ կնկան համար։ Գիշերները ս. գիրքով լրացուցած՝ առտու կանուխ դեմը եկողին ալ կպատմե որ՝ բոլոր ատենը միածին գառնուկի հետ խոսեր է, ճիշտ դեմ դեմի նստած խոսեր է գառնուկին հետ։

Ու պարոն Շալճի գիշեր մըն ալ ս. գիրքին հետ։ Գիշեր մը, սև գիշեր մը, որին հաջորդող ցորեկն ալ գիշերի մը մութովը պիտի պարուրե իր տունը։ Այն իրիկուն պարոնը — այն խոշորակազմ այն ընկերին՝ ս. գիրքին հետ կապրի նորեն, աքաղաղը երկու-երեք բերան խոսելե վերջ ինքն նույն անկյունը, ու նույն գիրքին վրա կմաքմրցնե աչքերը, որ ալ հայտնի է, թե չեն կրնար դիմադրել ու նույնիսկ գիրերն ալ չեն կրնար տեսնել։

Պարոնին կինը պզտիկը կուրծքին ծծցնելու առած՝ մեղքնալով էրկանը գալարքներուն ու հառնումին, մեղմով մը շրթունքը կերերցընե ըսելու, որ քիչ մըն ալ վաղը կարդա, մեղք ես, էրի՛կ, քիչ մըն ալ վաղը պեյե կարդալիքդ, կհծծե Վարդեր։ Գորովոտ զգացում մըն է կնկան հայտնածը, որուն պարոնը անմիջապես պատասխանելու վիճակ չունենար, մրափի խրխռուկներ մը կլսցնե գլուխին աս ան կողմը, շրջել կախելովը ուսկե ազատելու համար պահ-պահ ջղուտ շարժումով ամփոփում մը կփորձե թեև, կբանա աչքերը կարկամ ու քիչ մըն ալ ապուշի թարթվածքով, գիրքին կշիտկե, բայց նա նորեն նույն անկումները կունենա, նույն խեղճ դրության մեջ կգալարվի. կինը հեղ մըն ալ կկրկնե ըսելիքը, «քեզի մեղք է, քիչ մըլ ինծի մեղքն ա ճանըմ, ել հիմա անկողինդ գուտ, հանգիստ մը ըրե, մընացածը կրնաս վաղն ալ կարդալ, առտու ես կանուխ պիտի էլլըմ, կանուխ՝ հաց պիտի թխիմ, ևն, ևն»։

Պզտիկը ծծցնող մորը խոսքը անավարտ տակավին, նա այն տեսակ հարված մը կընդունի երեսին վրա, որ կզգա վայրկեն պես թե՝ տունին ձեղունը իր բոլոր ծանրությունով իր գլուխին կփլի, վո՜ւյ, անորեն մարդ, քոռցուցիր, քոռցուցիր, վո՜ւյ, տունս ավրավ-ավրավ... Ինչպես այս կիներ սարսափահար ու գետնե գետին ճանկռտվելու խելահեղ վիճակի մը մեջ։ Պարոնին ոտքերուն տակ, վիզեն կտրված հավ մը կցատկտե կամ վիրավորված այծ մըն է, որ կմկկա, վո՜ւյ, անորե՛ն...

Աբքին գազան մը կդառնա հանկարծ ու սև գիշերի մը ծոցին մեջ իր կնկան աչքերն ալ միևնույն գիշերին վարագույրովը կփակե։

Ձեռքին աղյուսի ծանրությունով գիրքը լողքարի մը թափովը կիջեցնե կնկան երեսին, հետևանքը անմիջապես կըլլա, կնկան աչքերը «սև ջուր մը» կիջնե ու անմիջապես արդեն կույր մը կատարյալ, որու դեմ տասը արևներ ալ բռնվին, երբեք չի տեսներ։

Խեղճ կնկան իրավ որ տունը կավրվի։ Այդ գիշերը, որ հեշտ չի լուսնար, ու բոլոր այն ցորեկները, որ ան լույս գիշերներ կանցնին երեք չորս զավակներու մայր եղող կնկան մը վրայեն, ընտանեկան աղետներու շատ մը տեսակներուն մեջ բոլորովին նորն ու ահավորն է, որ կավելցնեն։

Բայց հանցանքն ի՞նչ այս կնկան, հիմա ու առաջ ալ ի՞նչ մեղք ունենար։ Պարոնը կըսեն իր աս ապաշխարողի ծպտանքին մեջ, երբեմն նույնիսկ իր վրան գլուխը բզքտելու նեղսիրտ նոպաներ կանցնե եղեր, թշնամիները գիտեն արդեն, վերջը բարեկամ Բաղդիկին տեսակեն ալ հասկցավ, ու աս կարգով ատեն կունենա, կմտածե նաև, որ զինք ու իր կացքը չի տանողները իր գիտցածեն շատ ավելի մեծ թիվ մը ունին գեղին մեջ, ծանոթ խնդիրը շատ բան հասկըցուց, գավաթ մը գինի, գավաթ մը միայն, այնքան մը ու ավելին Քրիստոսն ալ խմեց, վկա ավետարանը ահա, որ ոչինչ ունի սուտ կամ սխալ։ Փարիսեցիները սակայն, այն վատահոգի աճպարարները, անոնց մեջ էն ցածամիտը Բաղդիկ Պաղսարը մասնավորապես գայթակղող ժողովուրդեն վախնալ կեղծելով՝ այնինչ ժողովին ատեանը ամենքեն առաջ ինք կըլլա համակերպողը իր նկատմամբ արձակած վճռին։

Բոլոր ասոնց ու այս կարգի երևույթներուն հանդեպ ինք անզոր վրիժառուի մը հուսահատությունը կունենա, կամ գործի մարդու նկատումներովը կապրի ըսեք,— ասոր անոր հետ իյնալ ճանկռտվելու փորձերը գուցե ավելին տուժել տան իրեն, լավը համբերելն է, նորեն լավագույնը միայն քրիստոնեական համակերպությունն է ապահովապես, ինչ որ իր տունը մտնող ելլողին ալ այնքան որոշ ցցուցած ըլլալու համար՝ խոշոր այն գիրքը կպահե ձեռքին մեջ ու զայն գիշերն ալ կկարդա։

Այն գիշերը, պարոնին վերին աստիճան անձկոտ մեկ նոպային, կերևի ճիշտ այն պահուն, որ միածին գառնուկը, իր կեղծավորի ցույցերեն ձանձրանալը կհայտնե իրեն ալ ևս, Վարդերի պես իր բարի կինն ալ եղջերավոր սատանա մը կտեսնե։

Սատանա այս կինը անով մանավանդ, որ մինչև ան ատեն իր հայացքներուն հետևող մը չերևալով մեկտեղ՝ միշտ ալ պատճառ

մը մնացեր է ու կմնա, որ ածած չաժածների համար հազար անուններ տան իրեն, կես-կես մըն է ըսեն, կասկածելի բողոքական մը կամ լրտես մը ժամուն հաշիվին, որ անորը կմնա կըսեն, ինչպես իր կիմը ժամանը կպահե տակավին։ Պարոնը ամեն բան մեկ անգամեն միտք բերելու համար դեռ կհիշե, որ Բաղդիկի պես մեկուն այն ցուրտ վերաբերումներուն շարժառիթն ալ իր կինն էր, որուն երես չէր տար Վարդեր ու ամեն անգամ ալ թթված դեմքով մը անցած անոր առջևեն։

Բաղդիկի աղջիկն ալ իր տունին հարս չի կրնար ըլլալ եղեր, ինչո՞ւ, որովհետև հայ կրոնքին ու սովորության մեջ այնչափ մը մոտավոր ազգականի հետ այնպես բան մը չէ տեսնված։ Մեծ հանցանքը Վարդերին, որուն քավության համար աչքերը կուտա ու կուլա միայն, այն գիշերը, այն ցորեկը ու բոլոր օրերը կուլա միայն ու կուլան տունին պզտիկներն ու ծակերուն ծղրիթներն անգամ։

Շալհիին տունը լաց ու շիվան ամեն օր, ու պահ մը ամբողջ գեղը կըլլա մղմղացողը կնկան մը գլխուն իջած այն «կարմիր ձոնին» համար։ Ոճրագործը ինք ալ բան մը կքմե՞ աչքերեն — ով գիտե, միայն թե ինք կըսեն անգամ մըն ալ ինքզինքը մեռած մը ըզգալով ժամավորի ու ժողովարանականի այնքան արդար ցասումով արձակած քարերուն տակ, կամաց մը դուրս կելլե ճգնարանեն ու կինը գեղ-գեղ մինչև քաղաք, մինչև այն ինչ քաղաքները բժիշկներու կտանի, կներկայացնե, խղճահարի ստրջանքով ապուշցած խենթ մը, քարեն փայտեն ալ օգնություն, դարման կկողկոզա, բայց պարապ հոգնություն, թեև ինք հանդիպածին իր ամբողջ հարստությունը կխոստանա։ Էն մասնագետ բժիշկներն անգամ հուսահատ իրենց անձեռնահասությունը կխոստովանին։ Մեռելի աչքեր իրապես, որ բնավ ճար չիկա դարմանելու։

Կերևակայեք հիմա թե՝ Արթին իր այս նոր մեղքին հետևանքովը ինչ տեսակ դժոխք մը կգտնե իր տունը։ Դժոխք ու ավելի բան մը ըսեք երբեմնի աս ընտանեկան խաղաղիկ բույնին, ուր հիմա էրկանը ձեռքովը կուրցած կին մը սրկե հոն քայլ փոխելու համար պզտիկներուն օգնության կդիմե ու պատերը խարխափելով կհասնի տեղ մը։

Ալ ասեղ, մկրատ չի կրնար բռնել, ա՛լ երբեք առջինին պես։ Իրկու առտու քրքրցվելիք կերակուրի մը համար երբ մառանը կփորձե մտնել, երբ անկե թոնիրին եզերքը կդառնա, զույգ ձեռքերը մարմինեն միշտ առաջ բռնած, աչքերն ալ լայն բանալու բնազդով

մը, բոլոր այս կերպերուն մեջ, ոտքերու վրա կանգնած դիակի մը պես կքաշքշվի ու գլուխը ճակատը միշտ նոր փորձություն մը ու ամէն պահուն նոր ցավով մը կխշխշա։

Մեծ տղային զատ մյուսները երեք պզտիկ խլեզներ, վերջինը ծծկան մը տակավին, ասոր մյուսներուն ալ տված նեղությունն ու սրտմաշուքները Վարդերի ոսկորը հալեցնող ցավերը կըլլան, էրիկը կտեսնա այս բոլորը ու դեռ շատ ավելիները կտեսնա, ինք որ հիմա շատ օրեր արդեն տունեն չի զատվելու ստիպողությենե կաշկանդված կմնա, տունեն դուրս ամոթն ու այպանքը կսպասեն իրեն։ Դուրսը կամ ներսը կդգա իր վիճակին ծանրությունը, բայց ինչ ընել։

Անտանելի մըն ալ ան չէ՞, որ հիմա մոտի հեռունի հաճախորդները կբերեն իրեն, մինչև իր տունը, որ իր դուրս չի կրնար ելլելուն համար պահ մը խանութին կերպարանք մը կառնե եկող երևցողներու ամեն տեսակներուն ներկայությունովը, որոնք տունին փերիշանությունը տեսնելով գեշ տպավորություն մը կտանին, շատ պզտիկը մանավանդ հավձագի մը աղտերը կձգե իր սողոսկած գետինին երեսը։

Պարոն Արթին ան տեսածներին առջև ամչցող երեսներ ալ կունենա եղեր։ Օրին մեկը կնկանը խորհրդին կդիմե, «Վարդե՛ր, խուզում, չեքիլմեզ տերտ տերլեր պունա, դուն եթե ատ աչքերովդ չես տեսնար տունին հալը, փերիշանությունը, ես ալ ճշմարիտ որ իմ աս սաղ աչքերովս չեմ տեսնար կոխած տեղս, Վարդե՛ր... տունեն ավելի քեզի կմեղքնամ, ճանրքո՛ս, տունը կնկուկ մի ձգիք, որ քիչ մը խրզմեթ ընել գիտնա»։

— Դուն գիտես, էրիկ մա՛րդ, կպատասխանե կինը, տունդ ձեռքովդ քակելե վերջ, փորձե հիմա ալ ուրիշի մը ձեռքովը շինել, ինձմե ինչու խելք կուզես, դուն քու խելքիդ հարցուր։

Վարդեր այն աղետալի գիշերին դեպքեն ի վեր միշտ այսպես քենը ժիտքեն չի հանող վիրավորված մտերիմի մը նազոտ ճվանքովը կխոսի իր ամուսնին հետ, որուն ներելու համար կսպասե, որ դերեզմանին վրա թեզ մը խոտ բուսնի ու իրեն համար աստված միայն կարնի հախ դատաստանի։

* * *

Տունը կին մը սպասուհիի ծառայությունով, ո՛վ կըրնա ըլլա ան կամ ո՛ւր կգտնվի այնպես մը։ Շալճին իր չարչիի ամենուրեքությունովը, մարդահամար պաշտոնյայի մը չափ արդեն գիտե ու կը-

ճանչնա հոս իր գեղը ու այն կողմ ուրիշ դրացի գեղեր ապրող կընիկները, անոնց նույնիսկ կապած չիթերու հետ մեջքերնին փաթթած գոտիներուն տեսակը միտք պահած։ Պապա կամ պարոն Արթին, հենց ըղունկին վրա կգրե ու ահա անմիջապես աղվորիկ հարսնուկ մը իր դեմը, որ թարմուկ կենճ մը ըլլալու հմայքին հետ ճկուն եղեգի պես հասակ մը ունի, սիրուն աչքեր մը կթթթե աղեղ բաղեղ հոնքերուն տակ։ Վարդ մը, որ Վարդաթիլեն կուգա պարոնին տունը։

Վարդաթիլ պզտիկ գեղ մը, ի՞ր դրացի, Արթին այդ տեղի վրա թռչիոտող ճնճղուկներուն փետուրներն ալ համրած՝ միտքը կուգա, որ անկե այն ինչ պարտականին վրա ունեցած առնելիքը՝ հազար ղրուշ, ուրիշ կերպով չպիտի կրնա կարգադրել։ Դեմինը խեղճ մըն է, այն տեսակեն, որ օրական հացին գինն ալ չի շահիր իր մշակի բանվորությունովը։

Օր մը սխալ մը ըրած ու կնկան ստիպանքին չդիմանալով Շալճիեն մեկ-երկու գոտի գնած կըլլա ապառիկ։ Հարյուր ղրուշ պարտք մը մեկ քանի տարիեն հազարի կբարձրանա վրա գալած տոկոսովը ու ալ հետզհետե բարին տանի առնելիքվորը։

Ջիկա, չունինք ըսողը ամեն ատեն ալ պարտականին կինը կըլլա. «Արթին աղա, պոյիդ հեյրան, աչքերուդ խուրպան, քիչ մըն ալ համբերե», Արթին ամեն անգամ ալ այս կնկան շոայլած անուշ փաղաքշանքներուն տակ՝ հմայված օձի մը պես պոչը բերանը կառնե ու հեռանալուն կնայի։

Ու հիմա ան է, որ Արթինին տունը խրզմեթ ընելու կխրկե էրիկը անմիջապես, ետնեն հուսալով նաև, թե հայտնի սույն պարտքը չինչվելե ետքը կրնա ուրիշ անհայտ շնորհքներու ալ տիրանալ, Շալճին ախբր շա՛տ առատ, շա՛տ խոջաղ մարդ։

Ու շուտ ըսելու համար իրավ է, որ ալ Արթին կմոռնա մեկ անգամեն այն մարդն ու պահանջը, հաշիվը ինքնին փակված գտնելով, արի տես, որ մարդն իր կնիկեն ալ կմոռցվի բոլորովին, ուսկե ոչ խակ բարև մը կընդունի։ Բայց ցավ, հոգ չըներ բնավ, հերիք, որ տաքիքի պես մեծ հոգե մը փրկված է, մնացածը ինչ որ ալ ըլլար։

Օդաբեր խոնախի ճոխությունով տունին հարմարած կնիկը կըլլա, անոր հետ հոն Վարդերն է միայն, որ կարճ կխոսի կամ խոսելու ատենը երբեմն անոր սուր մխոցներ մը ֆշուլլե լեզվին ծայրովը։ Բաները աչքով չի տեսնող տանտիրուհին երբեն ի վեր է, որ ականջին ու քիթին ծայրովը ֆիհոտրտա ու գեշ մուխ մը կծառանա

գլուխեն։ Այդ բաները մոտիկ դրացիներն ալ կտեսնեն այնպես, անոնց նկատմամբ բոլոր գեղին ու մինչև հեռավորներու բերանը կդառնա խոսքեր մը, Շալճին երկու կնիկ կգործածե, նոր գայթակղություն, նոր փոթորիկ մը այս, ուսկե բողոքական պարոնին տունը խլյակի մը պես կերերա վտանգավոր ջուրերու մը երեսին։ Ամբողջ գեղն է հուզվողը։ Շատեր ավելի ստույգը շեշտելու համար, կույս կնիկը բոլորովին երեսե ձգեր է կըսեն ու Վարդաթիլցիին հետ կապրի միայն, սանկ անօրենություն մը ո՛վ լսեր է կըսե ժամվորը, օ՜հ, այո՛, եղբայր, ան շնացողին պես Սոդոմի մեջ ալ չիկար կավելցնե ժողովարանականը. գավաթին մեջ խեղդվող դավանափոխը, հիմա ալ աշխարհի աչքին տակ Վարդաթիլցիին թաղարին մեջ կթաղվի։ Այն տեսակ խոշոր, բելիարի պես մարդ մը այս տեսակ փոքրություններու մեջ կխբե ինքզինքը։ Բայց աս չէ շատ զարմանալին։ Ժամեն հրաժարող պարոնը, հիմա ամենևին ժողովարան ալ չի կրնար մտնիլ, ուր ու ամեն տեղ կատաղի տրամադրություններ լարված կերեվան դեմը, պզտիկներ իր անունով շինված շերեր կպոռան մինչև իր դուռին առաջքը մոտենալու համարձակությունով, որոնց ինք ներսեն ձայներ մը երկնցնելով՝ հա՛, օղուլ, հա՛, երկու կնիկ իմ առեր, տահա իրեք ու չորս ըլ պիտի առնիմ, տահա կուզեք մարերնիդ ալ կառնիմ։

Շալճիին աս նախատինքը այս բանաձևերով, լուսավորչականները ամենքեն առաջ մատերնին փաթթած օրվան առաջնորդ վարդապետին բողոք մը ներկայացնելով կպահանջեն անպատճառ, որ կամ այն մարդը իրենց գեղեն ելլա գեղը շնացողի մը գայթակղութենեն փրկված ըլլալու համար, և կամ իրենք թույլատրած ըլլան, որ անոր հետ իրենք իրենց ուզածին պես չափվին, շնացողը, անկրոնը որ ամեն բան ուրանալով հանդերձ, հիմա ալ երկու կնիկ գործածելը արդարացնելու համար, կպնդե, որ ավետարանը կարտոնե իրեն այնպես, ավետարանին մեջ ո՞ւր կա խոսք մը, ակնարկ մը, որ երկու կնիկ ունենալը կարգիլե, կամ քանի որ հոն եպիսկոպոսին համար մեկ կնիկ ունենալու խոսքը հայտնի իր տեղը ունի՝ ըսել չէ՞ աս, որ աշխարհական մը կրնա երկուք ու երկուքեն ա՛լ ավելին ալ գործածել։ Շալճին կըսեք իր աս ծամած չամի՞ն էր, որ այնքան երկար հոգնությունով ս. գիրքին մեջ կփնտրեր, զոր ուշ գտնելու խրրսովը, կնկան աչքերը կուրցած, աս հարցումներուն պատասխանելու ժամանակ չունիմ հիմա, դուք զարմացեք անոր, որ պարոնը իր այն բանաձևը քանի՞ քանի անգամներ միսիոնարի առջև ու ամեն մարդու ալ ականջի, ըսել կրկնելե հետո անգամ մըն ալ հայ առաջնորդարանին մեջ կնետե համարձակ։ Իր այս խոսքը իր ուզածին պես ըմբռնելե խույս տվող պաշտոնական դեմքերը պահ մը անով հասկացողության բերել կհաջողի, որուն ամեն տեսակեն ալ մեծ առատությունով մը ունի իր ծոցն ու քսակը։ Շալճին Վարդաթիլցիին տեր մնալու համար ամբողջ հարստության հետ, ամբողջ կյանքն ալ վրա կուտա վերջապես ու մենք երկու բառով անոր այդ վերջինը, Շալճիին վերջին վայրկյանը փակենք։

Մարդը ազատելու համար իրեն հետամտողներեն, որոնք զինք ծամելեն քմելեն իրեն բան մը չեն թողուր ա՛լ ևս, ունեցած հարստության էն վերջին քամն ալ կծծեն, իր սիրական սպասուհիին հետ տունեն դուրս փախելով, դեմի լեռները կանհայտանա, հոն ան տեղվանքը նոր տեսակ հովվերգական կյանք մը պահ մը, բայց պահե մը վերջը այն անմատչելի ափափաներուն ծայրերն ալ ուզածը չի գտներ կամ վայելքը հոս ալ ձրի չըլլար վերջապես, այդ բարձրություններուն վրա մագիլավոր բազեներու ուրիշ խումբ մը կհալածե զինքը, որու հետևանքով նոր կրոնափոխության շրջագիծ մը կձևե վայրկյան մը, բայց ալ ժամանակ չեն տար իրեն։ Պաշտելի թռչունը գիշեր մը իր ծոցեն խլել փախցնելու դեպքով, վայրագ ձեռք մըն ալ մինչև իր ամորձիքին վրա կերկննա, կխբվի, պարոնը վայրկենապես ալ ոչ խսկ շունչ մը կրնա փորձել, հոդին այն կողմեն կթողու լեռը, ու մարմինն ալ օրեր վերջը՝ ալ բոլորովին քայքայված վիճակին մեջ, Վարդերին առջև կբերվի կնետվի։ Հեք կինը, որ բոլոր այն իրադարձություններուն տեղյակ՝ ալ բնավ չի լալ չի ցավելու համար, քար սիրտ մը սկսեր էր ունենալ, երբ այն ինչ իրկունը իր ամուսինին դիակը կձգեն առջևը, քարերը լացնող շիվան մը կփըրցընե, ա՜խ, մարդո՜ւկս, հոգի՜ս, աչքերդ տուր, որ աչքերդ տեսնայի, լոսս տուր, որ լոս երեսդ հայեի, քեզ, ո՜ր ձեռքը ըրավ էսպես...

* * *

Այս դեպքեն վերջը, չես գիտեր ինչ մը մնաց այն գեղին գեղացիին մեջ, ուր երբ մի որևէ ժողովարանական բերան բանալ, շաղակրատել փորձեր, անդիեն լուսավորչական աղբրուկ մըն ալ բոբիկ, անվարտի, անպատճառ պիտի ըսեր անոր. «Բերանդ, պարո՜ն, բերանդ, գավաթը կկլլես»։ Գավաթը չմոռցվելիք պատմություն մը մնաց այս գեղը։ Հոն անոր մեջ Շալճիեն ետքը, ուրիշներ ալ խեղդ-

վեցան ետեւ, առհասարակ հարուստ դասակարգը Խ.-ցի դավանափոխներուն, որոնք ապա իրենց պահանջատերները շոլրցնելու համար նույն տեսակ գավաթներ մը պարպել տվին անոնց, մեկ կաթիլը մեկ ոսկիի արժեքով քշելով։

Ավելի զարմանալին, ո՛վ միտքը անցներ, որ Քեսրիկի եկեղեցիին մեջ պաշտոնավարող քահանան՝ Տ. Գուրգեն ան պզտիկը ըլլար, որ իր մորը կուրծքին վրա անշահ հոր մը ըրածին վկան եղեր էր օր մը։ Շալճիին կրտսեր մանչը հիմա աղվորիկ քահանա մը Քեսրիկի մեջ, ուր կըսեն ամեն կիրակմուտի խունկը իր հորը հոգուն համար կծխե նախապես։

1907

Ո՞Վ ԱՂՈԹԵՐ

Վարդապետն անգամ մը հիվանդ, շատ հիվանդ, գոնե իր հեքն ու գալարքը այնպես կցուցնեն, քանի մը օրերու համար կթողե իր բուն սեփական տունը, որ նույն ատեն իր պաշտոնատեղին՝ առաջնորդարանն ալ է, եղբոր տունը կերթա ապրիլ. հոն կին կա, հոն աղբար աղբարորդիներ կան, որ յոթն օտարին համար ալ իրենց մարդավարի կերպերն ու կարեկցությունն ունին։ Եղբոր տունն ու տունեցիները հաճելի ամեն պայմաններով։

Եղբոր տղոց մեկը դեղագործ՝ աս ալ ուրիշ առավելություն մըն է, որ իրեն պես հիվանդի մը հարկավորած դեղերը խնամոտ ձեռքով մը պատրաստվին ու վերջն ալ նույնքան բնական, որ անփոխարեն մնան։ Եղբայրը հարգված ժողովրդական քահանա մըն է, ունի երեք-չորս հատ ժմնած տղաքներ, հարսներ, աղեկ է ժամանակը, աղքատ չըսվիր, տղոց վաստակը իրենին հետ շնորհքով տուն կապրեցնեն։ Ինչպես կըսեն, քահանային համար մեկ մեռել, երկու ծընունդ ճոխ ջրաղաց մը կարժեն։

Վարդապետը շատոնց բաժնված է անկե, իր առանձին տունտեղն ունի, հարուստ է, հարուստ անով, որ իր բուն նստած տունին մեջ կիներու բազմություն մըն ալ կա, որ իր սպասուհիներուն սիրուն տարմը պիտի ըլլա, սպասուհի՝ ու, մեկ հատ ալ չէ։ Անոնց որևէ մեկը իր ձեռքին ջուրը լեցնելու գործ մը կընե, ուրիշ մը ոտ-

քերուն ջուրը, վերջին մըն ալ անոր կուրծքին վրա Լեթեի աղբյուրեն ջուր մը կսրսկե։ Վարդապետն իր շուրջը այսքան մը ջրկիրներ ու սպասարկուներ ունենալով մեկտեղ, հիմա, ինչպես ուրիշ ատեններ ալ, երբ քիչ մը քիթը ծռի, երբ հենց հարբուխ մը կամ հազ մը ունենա թեթև, ինքզինք չի վստահելով մյուսներուն խնամքին, հոն կըլլա միշտ, ուր ծնած էր, իրիցկինն ու ասոր հարսերը մանավանդ մատաղ ըլլալու աստիճան անձնվեր ծառայություններ մը կընեն իր անկողինին բոլորտիքը։

Ան օրերը Պոլիսեն նոր դարձած առաջնորդի պաշտոնովը, ո՛վ գիտե աս անգամ ալ ի՛նչ փոխարենով գնած ան, քով եկող գացողներուն ալ վերջը չի գար։ Կուգան մեյ մը անոր նոր պաշտոնը շնորհավորելու, մեյ մըն ալ հիվանդությունը անցած ըլլալու ազնվություններով։ Անգամ մը եկողը կրնա ըլլալ, որ անգամ մըն ալ գլուխ երևցնե վարդապետին քով, այս վերջինով վարդապետը ավելի մոտեն համոզելու թե՝ անոր բացակայության օրերուն՝ ինքը միայն, ինքն էր, որ ամենեն առաջ իր սիրելի առաջնորդին վերադարձը խնդրող հանրագիրը կստորագրեր ու եղը կրակին վրա ուրիշներու ալ այնքան դժվարություններով ստորագրել կուտար։ Ու տեսնելով վարդապետը՝ թե բարի ու ազնիվ են այն ամենքը նույնիսկ իրենց կեղծավոր ու շողոքորթ խոստովանություններուն մեջ, զանոնք պատվելու համար, անգամ մըն ալ իր քմծիծաղին շնորհքները կնետե անոնց երեսին, ու ոտքի վրա սպասող տունեցիներուն երկրորդ ու երրորդ սուրճ մը կապսպրե. աս ապսպրանքներն ալ մի՛ մտածեք, որ անուշ շեշտեր մը ունենան։

Բայց մինչև ե՞րբ այսպես։ Աստծու մարդը գոնե վայրկյան մըն ալ ինք ըլլա խորհուրդը թե՝ իրեն համար օրը օրին շռայլված այն ծախքերն ու ծառայությունները քիչ մըն ալ իր քսակին մեջ գտնվածներովը փոխարինվին, քիչ մը գոնե իր ձեռքը բռնե իր երեսին, չէ, վայրկյան մըն ալ չի խորհիր այսպես, տասնոց մը անգամ չի տրամադրեր, նույն ատեն սակայն ախորժակն ալ բացված ու հետզհետե սովածի մը երախով կկլլե առջևը հրամցվածները, կով մը կուտե, դուք կուզեք, այսքանն ալ չափազանցություն համակցեք։

Այս վիճակին մեջ, անցեր է արդեն ամիսը, ալ հիվանդ չէ ամենևին. բայց նորեն չի հեռանար, ու հիմա պահանջն ալ ան, որ ճաշի սեղանին վրա. որովհետև բժիշկն ալ նույն խորհուրդը թելադրած է եղեր, ջուրը գինիի փոխվի. չէ՞ որ տեր. Հիսուսն էլ այնպես մը կպա-

հանջեր օր մը ու վայրկենապես ուզածը կըլլար։ Գինի, անպատճառ գինի ու անպատճառ՝ անխառն ըլլալու պայմանով։

Տունեցիները նեղվիլ կսկսին, կարճ պիտի ըսենք, բոլորին մեջ շատ ավելի իրիցկինն է քրթմնջողը, իրիցկինը՝ խաթուն կին մը, բայց փոխված է վերջապես։

Հակառակ վարդապետին մտերիմ վերաբերություններուն, ինք անոր երեսն ալ չուզեր նայիլ։

Իրիցկինը չես գիտեր ի՛նչ աղբյուրներե, ան մեկ-երկու օրը այնպես լսած կըլլա թե՝ վարդապետ տագրը իր մեկե ավելի տուներն ու խանութները ամբողջությամբ անոնց նվիրած է, որոնք իրեն հետ որևէ ընտանեկան կապ մը չունենալով մեկտեղ այնքան մեծ հարստության մը կտիրանան, ասդին ալ իրենց բաժին հանվածը տարապարտ հոգնություն ու հատնումները միայն, որոնց ծանրության տեսակին շունն ալ չի տանիր։ Խնդիրն ալ իրավ է, որ իրիցկինին լսածին պես է հայ սուրբը որքան որ գաղտնի ուզեր էր պահել այդ տեսակ փոխանցման գործողության մը պարագաները, բայց վերջապես հայտնվեր է բանը. այն նկատմամբ հիմա շատերն են, որ նույնիսկ իրարու մեջ հետաքրքրող մանրամասնություններ մըն ալ կըսեն։ Քահանան ու տղաքն ալ լսեր են խնդիրը, բայց ասոնք չեն հավտրցած, ինչպես ուրիշ ատեններ ալ անկարևոր գտած էին ու հավետ թշնամություններու վերագրած։ Բանին մեջ ան ալ կա՞, որ գավաթ մը ջուրի փոխարեն ահագին հարստություն կկտակվի։

Իրիցկինը ան խոսքը լսած օրն ալ համբերելու արիությունը կունենա։ Ձայն ձուն չի հաներ, բայց ալ հոգին բերանը եկած ըլլալու աստիճան խեղդվիլ մը կզգա, քահանա ամուսինն ալ որևէ փափկանկատ մտածումով անհաղորդ կպահե իր գիտցած ու զգացածներեն։

Իրիցկինը առտու մը ժամեն կդառնա ու վայրկյանին ձեռքը զբաղում մը ձգելու համար, պարտեզ կիջնա ծառերուն տակ թափթրփուք մը կժողվե. բայց հնա՞ր է, որ անշահ տագրի մը ըրած ու վերջացուցածները միտքե հանե. ան ընտանիքն ի՞նչ կապ ունի վարդապետին հետ, այն կինն ու կնկան պարագաները վարդապետին բերանը ի՞նչ համ բերած պիտի ըլլան, որ աս ալ անոնց ըրածը փոխարինելու համար անոնց իր ամբողջ ունեցածը կկտակե և կըսեն՝ օրինական պայմաններու գործադրությունով փակեր է խնդիրը։ Իրիցկինը գետին կճկած՝ ծառներուն տակ՝ ան առտուն փեշ մը չոր

թուք կժողվե ու միտքը կընե նաև, որ ծիրանիներուն ու խնձորենիներուն տակ թափածներն ալ բանի մը բերե. ան առտուն ճայն ու ճնճղուկները պարտեզին մեջ շատ գործ բացած են մեր խաթուն երիցուհիին։ Պարտեզը՝ վարդապետն ալ ահա, ասոր ետևեն դուռը բաց ձգված՝ գիրուկ, կարմիր աքաղաղ մըն ալ, ասի բոլորովին անակնկալ, որ հպարտ ու համարձակ քայլվածքով մը շիտակ բանջարանոցին վրա կհարձակի ու անմիջապես քճքճվածքին կսկսի։ Իրիցկինին համար ան երկուքն ալ հիմա նախապես անոնց ո՞ր մեկը պիտի սկսեր քճքճել ու փախցնել։

Արի տես, որ վարդապետն հիմա հոս ալ իր նազին ու պահանջներուն մեջ.

— Իրիցկին, իրիցկի՛ն, կըսե, իրիցկին, աղջի՛կս։

— Հրամմե, կլսեմ արդեն։

— Իրիցկին, խուզում, աս իրկու ալ աս խոռոզը մորթեր որ բերնակս բան մի դպնար, երկու օր է որ հիշ համ չեմ առներ կերածներես, եղով տապկե, վերջն ալ քանի մը տամլա կաթեցուր վրան. աս ալ կլսե՞ս օրհնած, հավ խրսմի գինիով որ չի տապկվի, խաշած լահանի տատ կուտա։

Հավամոլ աբեղուկը աղվո՞ր չի բացատրեր իր բերանին այնքան նրբին ու զգայնիկ քիմքը։ Խաշված հավը խաշված կաղամբի համ կուտա եղեր։ Աս ատեն իրեն ալ, տեր աստված, ով ըլլար փսփսացող մը թե՝ հապա, աղա վարդապետ, քու ան քարոզներդ ինտոր կմարսեն մտիկ ընողները, որ ջուրով խաշված շողգամեն ալ անլի, անհամ փսխեցուցիչներն են։ Իրիցկինը կպայթի, իրիցկինը շրթունքին ծայրը եղերած լուտանք մը զսպելու համար, անդին գետինները կճանկոտե։

— Ասոր հիշ ձայն չես տար, աղջիկ, կավելցնե ան՝ իր ձեռքովը խնձոր մը փրցնելով ցածկեկ տեղե մը, հարսներուն գործ չի ձգես կըսեմ, ձեռքովդ տապկես, հարսները աս արալըխ քինթ փինջ մը կընեն կարծես, գիտեմ, շատ ձանձրացուցի անոնք ալ, ես նորեն քեզի կյուվենմիշ եղեր եմ, իրիցկի՛ն, աղջիկս, մորթես, ձեռքովդ տապկես։

— Աղեկ ա, աղեկ ա, դուն մինակ հրամաններդ ըրե։

— Հրաման չէ աս, խուզիս, իրիճա հասկցիր։

— Ես ձեռքովս տապկեմ, որ դուն ալ ինչո՞վդ ուտես։

— Ա՞ռ ինչ, իրիցկին, ինչո՞վ պիտի ուտեմ, ամեն օր ինչպե՞ս կուտեի։

— Ասոր շուտիկ կեր, ասոր շան լակամանով կեր, հասկցա՞ր մի, վարդապե՛տ, ալ ասոր հերիք կըսեն, համբերության ալ վերջն է կըսեն։

Վարդապետը ափ ի բերան շանթահար կըլլա, պատասխան մը ճլտոքելու բառ մը, բանիկ մըն ալ չի գտներ, շլլիքը դանակին տակ քսվող այծի ձեն մը կհանե միայն, բա՜, բա՜, բա՜...

— Բա բայիդ ալ, փա փայիդ ալ, սյուսլի շլըխտի ան չգիտեմ ինչերուգ ալ։

Ու բախտավոր աքաղաղն ալ ան կողմեն ուռուցք մը պարպելով, իր շիկորակ կուրծքեն ճիչ մը կերկնցնե, աս ալ ապահովապես իրիցկինին ըսածը կրկնելու համար, շուտի՜կս կե՜ր...

* * *

Այդ դեպքեն վերջ, որուն ականատես վկան ու արձագանքողը վայրկյանին իր ճիտն ազատող աքաղաղը կըլլա միայն, երկար տարիներ կանցնին. մեռած է իրիցկինը, մեռած բարի քահանան իր ահուզարերուն մեջ ու նույնպես վերջացած շատոնց հավն ցին շահապը,— աքաղաղը,— անշուշտ վերջապես անբնական մահով մը, ողջ մնացողը ան վարդապետն է, որ մոտիկ իննսուն տարին կապրի։

Երկու շաբաթ չըներ որ ապրելու համառած ան եկեղեցականն ալ իր վախճանին կդիմե ու անշուք թաղումով մը գերեզման կիջեցվի։

Վրան հանդիսություններ չեն կատարվիր, ո՛չ ձայն, ո՛չ դամբանական, ո՛չ թաց թարթիչ մը գոնե, որ իր գերեզմանին շիտկված ըլլա։ Ժողովուրդը չի գնաց իսկ հուզարկավորության, չլացավ բնավ, անոր համար, որ տարիներու ընթացքով բարոյապես զինքը խեղդող մղձավանջեն կազատեր, սիրածներն ալ չլացին այն որոշ պատճառով, որ հիմա քան երբեք ավելի իրական ու անկաշկանդ տերերը պիտի ըլլան անոր հարստության։

Իսկ բուն ազգականները՝ իրիցկինին տղաքները, երբեք չի տխրեցան, նույնիսկ թաղումին ալ դժվար գնաց մեկը, որ ինքզինքնին ավելի ստույգ, ավելի հաստատուն իրողության մը առջև գտան հիմա։ Վարդապետը աս վերջիններուն գեթ քահանա աղբորն ու լուսահոգի քահանայուհիին հիշատակ, մաշած ասեղ մըն ալ բաժին չէր հանած։

Խղճամիտ բարեհիշատակը, կըսեն, իր մինչև հագհագին, միտքը պահեր կամ ստամոքսին մեջ չի մարսված գեշ թթու մը զգացեր էր ան ինչ ատենը շուտիկը, որ իրեն հրամցվեր էր։ Պահեց ան, գալարվեցավ անով, մեռավ ան շուտիկով, որ ինքն ալ էն վերջը, բուն իսկ իր ազգականներուն ըսե ու արձագանքե իր գերեզմանին խորքեն. «Մինչ ուրիշներ, ինձմե յոթն օտարներն անգամ իմ ձգած ոսկեզօծ շաքարներս պիտի ուտեն, դուք ալ շապ ու շուտիկ կերեք»։

Բայց աս գործը գիտցող կրոնավորն ալ մարդ վերջապես ու սխալող, երեսուն տարի առաջ իր գերեզմանը իր իսկ ձեռքովը պատրաստելու ատեն, մոռցած էր անոր երեսին տապանագիրն ալ իր ձեռքովը արձանագրել. այդ տեսակ գործ մըն ալ ինծի պես անպարիշտ ստահակի մը ձգեց, որ երկաթի ծայրով մը փորագրեմ տապանին երեսը.— «Ունայնություն ունայնությանց, նոյնիսկ ճաշուց ու աղաւնեաց ճաշակքն եւս ունայնություն. եկի կրօնաւոր, երթամ աշխարհական, աղօթեցեք զի ոչ յիշեսցի գործեալս իմ մեղանչական»

Բայց ո՞վ կար, որ աղոթեր, վարդապե՛տ։

1907

ՓՈՔՐԻԿ ԵՐԱԶԱՏԵՍԸ

Ու տեսա երազիս մեջ, որ թևեր ունիմ արծիվի փետուրներով, թևեր նախշուն ու լայն բացված, որ զիս ամպերուն հավասար բարձրության մեջ կբռնեին։ Մա՛յր, ըսի, ի՛նչ պիտի ըլլա երազիս խորհրդավորությունը, որ աս Նոր տարիին գիշերը անուշիկ քուն մը բերավ աչքերուս։ Բարձիս տակ վարդեր շոշափեցի ձեռքովս ու շրթունքներս ալ նույն պահուն մեղրի համով զգացի օծված։

— Ամպն ու բարձրությունը մեծություն կնշանակեն, տղա՛ս, ըսավ մայրս, Նոր տարին շնորհաբեր տարի մը պիտի ըլլա քեզի համար, երբ դուն ինքդ այդ շնորհքը քեզի պահելու արթուն նախահոգությունով, մաքուր ու ոսկիի պես մաքուր ման մը ըլլաս։

Ես անգամ մըն ալ հարցուցի մեծությունն ի՛նչ կնշանակե, մա՛յր, քանի որ ես մանուկ պատանի մը տակավին, դուն ամեն օր քու թիզովդ չափեցիր հասակս, ինչպես անմիջապես կրնայի մեծըմալ, երբ գարունին ցանված բամպակենին չեմ, երբ ուռենիին կուշտեն բուսած մորճիկը չեմ։

— Մեծ ըսելով ամեն ատեն հասակի չափ կամ տարիքի հասունություն չի հասկցվիր, տղա՛ս, մեծ ուրիշ բաներ ալ կըլլան, մեծություն միտքի, մեծություն հոգիի, մեծ տակավին բարոյական նկարագիրն ալ չափահասի մը, ինչպես քեզի պես մանուկին մեջ։

— Մեծ հոգին, մեծ միտքն ի՛նչ հապա, ավելցուցի։

— Մեծ հոգին, մեծ միտքը ան է, պատասխանեց մայրս, որ ճշմարիտը կսիրե, բարին կդավանի ու գեղեցիկին համար ալ իր պաշտանքը կբերե։

Ատ իսկ վայրկյանին ձեռքս վար առի մորս օձիքեն ու ես իմ մեջս ծրարվելով խորհիլ սկսա.— Ի՞նչպես պիտի կրնամ երեք բան նույն թափով հետապնդել ու երեքը մեկտեղ ունենալ օր մը։— Շա՛տ դյուրին, շատ հեշտ, մի՛ հուսահատիր երբեք, փոքրիկ տղա, ուրիշ կողմե ձայն մը ականջիս, առայժմ հասակիդ գործն ըրե, շարունակեց այն ձայնը, դպրոց գնա, պարկեշտ եղիր, կամքի ուժով հետապնդե մտավոր զարգացումդ, ինքզինքդ հեռու պահե ծույլերու դրացնութենեն, ան ատեն, օրըստօրեաբար աղվոր հոգի մը պիտի գա խաղա մեջդ, ան ատեն աշխարհ իր ստույգ իսկականության մեջ տեսնելու համար, գիշերն ալ ատ աչքերդ զույգ մը փայլուն արևներու շողանքներով ապահովված պիտի գտնես։

Նոր տարի՛ն, ի՞նչ աղվոր երազ, ի՞նչ գեղեցիկ հույսեր։ Այս պատճառով ահա ես ալ բնավ չպիտի զգամ սիրտ հատցնող տրտմությունը, երբ շուրջս դժվարություններ ունենամ, կամ երբ բերանս մեջ բոլոր ակռաներս մեկտեղ կոտտան։ Առայժմ, այո՛, հասակիս գործը պիտի ընեմ, մնացածը ինծի պիտի ըլլա կհավատամ։ Մեծ մարդ մը պիտի ըլլամ, ու երեք աղվորություններ մեկտեղ պիտի սիրեմ, բարին, ճշմարիտը, գեղեցիկը։

Բարին՝ որ գիտեմ ինչ պիտի ըլլա ու գեղեցիկը, որ պիտի գիտնամ, թե ուր կգտնվի։ Պիտի բաղձայի, որ աս գիշեր անգամ մըն ալ նույն քունը գար աչքերուս վրա ու նույն երազս անգամ մըն ալ կըրկնվեր։ Նոր տարին ուրիշ ինչ ուներ, որ պիտի նվիրեր ինծի պես ուսանողի մը, որ կընդունի ու կհավատա թե՝ գոտեպինդ աշխատողն է ուրեմն, որ պիտի շահի մրցանակը։

1907

ԲԱՄՊԱԿ ԲԵՐԱՆ

Խ...ցիները աս անունը կուտային ան վարդապետին, որու գըլուխին ու մորուքին մազերուն հետ հոնքերն ու քիթին վրայի աղվամազերն ալ ձյունի պես ճերմակ, աղնված բամպակի չափ ալ կակուղ կերևային։ Դեռ անոր երեսներուն միսն ալ ճերմակ, հրեշտակ մը կարծես կամ էնդեմեն եկած պատգամավոր սուրբ մը անտարակույս։ Բայց ավելի ստույգը վանահայր վարդապետ մըն էր ան, որ տարին անգամ մը մոտակա այն վանքեն այն գյուղը այցելելով, պտղի կամ հոգեբաժնի պես տուրք մը կհավաքեր ու մեկ քանի օր վերջը իր տեղը կդառնար, առջևեն վարելով բեռցված էշերու երկարաձիգ կարավան մը, որուն վերջինին վրա ալ ինք հայր սուրբը պիտի բլրանար։

Այդ ճամփան, այդ վիճակին մեկ քանի օրհնություններ բնականաբար տուրս ողորմության կամ մանավանդ առատս բերողներու հասցեին։

Բայց ինքն ալ ինչ կձգեր ետևը, զոր ի վայելելն գեղացին մխիթարվեր ոևէ դեպս։ Վանահայրը մտավոր պաշարե զուրկ բոլորովին, հազիվ կրնա աղոթք մը ծամծմել, հազիվ ավետարան մը երեք, չորս մոմերու լույսով, մնացածը իր բերնին մեջ ան խոսքերն են, որ բեմին վրայեն կարտասանե, կամ ավելի ճիշտ՝ կոնգե ստեպղինի չափ կարմիր ու խոշոր քիթի մը մեջեն, խոսքեր, որ հերվա կամ առջի տարվա ըսածներն են նորեն, էն պզտիկ շեշտը գերանի հաստությունով կխրվի ականջներու, «տուք և տացցի ձեզ, միոյն փոխարէն հազարապատիկս տացցի», ու այսչափը միայն տասն անգամ, քսան անգամ ու մեկ քարոզի մեջ, լսողին գլուխին վրա տանիքին փլիլն ալ անբնական դեպք մը չպիտի ըլլա։ Խոսքեր՝ միշտ նույնը ու ան անգամինն ալ այնպես, «վանք, վանական, անասելի խեղճության մը մեջ կգտնվին եղեր, ուրի՞շ — էշն ու էշպանը ծամ-ծամելիք չունին, բանվոր տղաքը շապիկ շապկընկեր չունին; ես պատարագի կկայնիմ, պտիկ մը բաժկցու չունիմ, ի՞նչ ունիմ, որ գալող գնացողին առջև երես ճերմկցնե. տարին տասներկու ամիս սոխ-սխտոր կըլլի ուտածնիս, անոնց ալ որպես խնձոր հասրեթը քաշեցինք, ոսպն ու ճուլպանտը քիշմիշ չամիչի պես կծամեինք, աս տարի անոնք ալ չունեցանք ու միայն ճանճոտ բակլա մը աղացինք չենկընուս տակ, բանն հոն է, որ ես բամպկոտած ծեր մը պունտան պեյլե, բակլա ծամող ակռան ալ չունիմ բերանս։ Ո՛րն ըսեի, սիրելիներս, ո՛րը

մոռնայի քանի տարի է, որ վասն վասն ծովացյալ մեր մեղաց, ըխտավորն ալ պակսեր՝ իրիկուն կըլլի, ճրագները շենցնելու ձեթը պիլե պակսած կգտնենք։ Էգին կարկուտը զարկեց, թթենիներուն վրայեն սև ճնճղուկ ըսված անհարկի չարերը անցան, նազենիմ թըթենիներն ալ աս վերջինները զարկին ջնջեցին։ Սուտ չեմ ըսեր, կարգս ու կարգավորությունս վկա, որ սուտ չեմ խոսեր, աս տարին վանքին էմեքտար քմոշն (գամբռին անունը) ալ մեր մեղքեն գայլերը տարին խեղդեցին ու անշուն գիշերներ կանցնենք հիմա, որ գեշ բան է ու գիշերը տարի կըլլի աչվընուս վրա։ Ան քմոշն ալ ե՞րբ անանկ թոլ կամ տկար պիտի գտնվեր, որ ան գայլերուն հաղթվեր, ես աղեկ գիտեմ, թե ան խեղճ էմեքտար անասումն ալ հայտնի անոթութենե ինկավ մեռավ։

Հեյ վա՜խ, հեյ վա՜խ, անանկ ալ սորվեր կապրեր մարդու հետ ու մանր տավարներուն ալ հետ, որ վանքը դի մը, ան էժտեհերի պես քմոշն ալ դիյ մը ելհասկնայինք, վա՜խ, զավալլի՛ անասուն։ Ան որ կհաչեր, Դատմա բոլոր ժայռերն ու լեռները դող կելլային։ Ուրեմն, բարեպաշտ (կերևի չըսելու համար շնապաշտ) սիրելիներս, աս տարի ալ ձեր առատ տրոքն ու ողորմությամբը բարեզարդեցեք վանքն ու նմին եղեալքները, ինչ որ տաք, ինչով ողորմիք, տվեք, հավեզեն ալ տաք նը, ի նույնս գրեսցի, խաթուն մամաներ, խաթուն հարսներ։ Դատմա վանքը հավուց ձագուց ալ կարոտ ընկավ աս տարի, բոլոր հավնոցին համար երեք խոռոզ ունեինք, երեքն ալ ուրուրները տարին, հավերն ալ ձեզնե ոմանց պես որբևայրիներ մնացին։

Ցրհնյալ ըլլի Խմիկ Խաչոյին տղան՝ Ասատուրը, երեկ չէ առջի օրը ռուպ մը գարի տալու առեն իր դուռը մեծցող ճինս շուներեն խոշոր գութիկ մըլ քմոշին տեղակալ տվավ, որ վանք խավրեցի ըսպասավորին հետ, որո ևս փոխարեն վարձս բարյաց ընկալցի, և յուր տունն ու տնվորին սերովբեիվք և քերովբեիվք պահեսցի»։ Վանահայրը ասկե ավելի չէր կրնար լոմլոմել ու ահա հացեղեն, հավեզեն և զանազանք չեղեալք ի պարկս պեսպեսս յուղվոյ անկաներ լի օրհնությամբ բերանավ, և որո ընդ առաջ եկելոցն ի միջի, ասի թե վանական կրիայքն ևս ուրախ-ուրախ ծափս հարկանեին։

* * *

Վանահայրը առատ տարիի մը հանդիպած անգամ մըն ալ կայցելե ան գեղը, ու սովորաբար միշտ նույն տունը կհյուրընկալվի, ուր հանդիպած բարձերուն հետ իր կոնակին ետևը, իր սոված բերանին համար ալ կուռ կուշտ համեր կգտնե։ Գեղին մեջ հացով տուներեն կսեպվի այն մեկը, որուն մեծավորը անով ալ անուշ ու ընտանի դեմք մը, որ ինքն ալ վանք ու վանական սիրող մը երևցած է ամեն անգամ, իր հագած կապածով նաև վարդապետե մը չէր տարբերիր, գլուխեն ոտքը սև հագեր է ու ֆեսն ալ սև ներկված փակեղի մը խմաստով, վրան թխորակ պառատ մը՝ ուրիշ շուշտակի մը տարազը կհատկանշե, վարդապետ ճիշտ, որ իր ամբողջության մեջ միայն այն ըլլալ կերևա իր հակասությունը, որ կին ունի 45—50 տարիներու երկար գիշերներու շարք մը պսակված սիրունիկ բարձրնկերի մը հետ ապրեր է։ Հողատեր մըն է, տղա ունի, հարսներ ունի, գեղը իրեն հետ ապրած պահելու պատեհությունն ալ ունի։

Վանահայրը ասոր տունին մեջ ընտանի դեմք մըն է, որ կհարգվի ալ ու հոն՝ ամեն երևալու շաբաթներով կմնա, քիչ մը կըսեն աղջկան կապ մը ունի այդ տունին հետ. ի՛նչպես, ի՛նչ թվականներով այն կապը, այդ չէր կարևորը, քանի որ մենք ապշեցուցիչը ամենեն առաջ միտք դրած էինք պատմել, այսչափ խոսք անոր շրջանակին պիտի ծառայեն։ Վարդապետը ան առավոտը քիչ մը կանուխ դուրս իջած է իր ասպնջականին տունեն, որ ան օրը ալ բոլորովին վերջ մը բերե իր պտույտներուն ու ժամ առաջ վանք դառնա, ամիսեն ավելի է, որ հեռացեր է անկե, հոն բաներն ի՛նչ վիճակ ունին, հետզհետե սիրտ նեզող մտմտուքներ կդառնան։ Վարդապետն ան վերջին օրը այցելած տուներուն մեկուն ալ թոնիրին եզերքը վայրկենային նստվածքով մը գինավետ սեղանիկի մը պատիվը ավելի բան մը կգտնե ու ոչ մեկունը կմերժե, մինչև քիթին կնգուղը գինի, գինիին կարմրություն, ու արյունի չափ կարմրություն։ Իր հետը պտտող քահանան ու ժամկոչն ալ թեև պակաս չեն խմած վարդապետեն, բայց սա շնորհազարդ ծերուկը վանքին անգույն, անհամ ջուրը միտք բերելով, ձեռքը դրված գավաթին դուրսի կողմն ալ լցելու ազահությունը կունենա։ Վերջին տունին վերջին գավաթն ալ կծծե, վերջինն ավելի համով, ավելի համով, ավելի զգլխիչ։ Մեղոք ծովացյալ վարդապետը այս հափրանքներուն մեջ հիմա անպատճառ ծով մըն ալ գինի կկոհակավորե իր շլիքեն վար տեղի մը մ՛ալ, որ չեմ գիտեր ուր կըլլա ան։

Ալ կարելի՞ է ոտքի վրա կանգ առնել, բանը քուսած է վարդապետին, պատեպատ կզարնվի, տերտերն ու ժամկոչն ալ այն կողմը այլայլեպես կխաղան թամզարա մը, որ մեռելին ալ խնդուք կբերեն,

ժամկոչը կոնակին բեռ մըն ալ ունի, իր այս ցատկտուքներուն ատենը, որ ժողված պտղին տեսակները կպարունակե, գարի, ցորեն, ճուլպանդ ու անշուշտ չորրորդ, հինգերորդ մըն ալ, որ կորեկ ու կըլկըլ պիտի ըլլան, շլիքն ու թևերն ալ խաթուն մամաներու ճախրակին կարժերն անցուցած։ Պտղիի հավաքույթի մը մեջ ի՞նչ չի գտնվիր։

Մինչև կեսօր, ալ անտեսված տուն չի մնար ետևին, լմնցուցեր են ժողվտուքնին ու տեղերնին կդառնան։ Ժամկոչը մինչև ատատեն, վեց, յոթ անգամ գացած ու դարձած է վարդապետին ասպընջական տունեն, պտղիին ամբարանոցը կա, ամեն տարի ալ արդեն հոն կհավաքվի ու ան տունեն ալ վանք կփոխադրվի մուրացածո հավաքույթի մը ան տեսակը, որ վանքին համար տարվան մը պարենի ու պաշարի պիտի ծառայե։

Վարդապետը մի՛ մոռնաք։ Լոլիկացյալ սորա կաթամբ որթատնկոց, դեռ ճամփուն մեջ, հանդիպածին հետ կատակ մը կընե, հանդիպողը կին կամ էրիկ մարդ, ամառը, ուխտին օրը, վանք կհրավիրե, տունով ընտանիքով կհրավիրե, վանքը դրախտի պես տեղ մը, աչքով տեսնալու է։ Թողելով այն մեկուն օձիքը, քիչ մը անդին կարմրրուկ հարս մը կդիմավորե, անով կհետաքրքրվի, «մեր Զաքարին հարսը չե՞ս դուն, աղջի՛կ, աստված օրհնե, բայց ինչո՞ւ զայիֆցեր ես, ձագուկս, վախնամ Կարապետը (հարսին էրիկը) շատ էզիյեթ կընե քեզի, դուն ալ իրեն ըրե. հայտե խուզում». ու բերանը երգ մը ահա, որ գինիին հանգով կվերջացնե, երգ մը, ճամփուն մեջ, տերտերն ու ժամկոչը, շատոնց տեղ հասեր, ինք միակ կքալե իր գինովի սրունքներով, դանդաչողը, զառանցողը ինք միայն։ Գավազանին երկաթ ծայրովը աջեն-ձախեն փակ տեսած դուռները բանալու փորձեր մը կընե, փողոցին հավերը առջևեն թռելու ատեննին թունդ փոշիի հետքով մը, գավազանն ալ անոնց կնետե, հիմա պահ մըն ալ անոր փընտռտուքովը կթափառի աղբակույտերուն վրա, ուր հարյուրներով հավ ու հավազգի ասոնք ավելի շաղ կըլլան, քան առաջիններ. երբ խմբովին փախելու իրենց փորձերովը վանահայր վարդապետը փոշիի ահագին ամպի մը մեջ կխեղդեն։ Կհայհոյե, կմրթմրթա, շատ բաներ կըսե անոնց տերերուն։ Բայց որո՛ւ ի՞նչ փույթ և ի՞նչ անիրավություն, որուն ինք կլլա հեղինակը։ Վարդապետ մը հավերուն հետ միշտ, կամ հավ հալածելու կտուցով մը հա-

վե՞տ, քա՞նի անգամ է, որ մենք ալ այս իրարու անընտանի չհամազգիներով կզբաղինք։

Այսպես թե այնպես տուն կհասնի մեր բամպակ բերանը, ուր քեռկին Մարիամը— վարդապետին ըսելակերպը գործածելով— մինակը նստած հաց կեփե, տղաքն ու հարսները դաշտ գացած են, այդ պահուն հացթուխ կնկան էրիկն ալ տունը չերևար։ Մինակ ինք, մինակ շուքը, մեյ մըն ալ թոնիրը իր առջև, ու քեռկին Մարիամ ինք կընե ամեն բան, խմորին կլորցնելը, խմորին բանալը, բացված խմորը թոնիրի հրաշեկ կողքին կպցնելը ու անկե ակիշին կեռով, բայց կպատահի ձեռքով ալ, կարմիր, կսկուռ հաց հանելը ինքն ու ինք կընե միայն։ Ուրիշ ատեններ երեք-չորս հոգիներով կեփվի այս տունին հացը, բայց այս անգամ քեռկին Մարիամեն զատ ուրիշ մը չկա հրաբուխի բերանի մը նմանող թոնիրին եզերքը։ Եփվելիք հացն ալ շարեկեն պակաս չպիտի ըլլա, ինչ որ այն տեսակ համբա տունի մը համար շաբաթ մը կօգտե, չօգտեր։

Ահա թե ինչո՞ւ կես օր եղեր անցեր ալ է ու քեռկինը կես մեջքով թոնիրը կմտնե, կելլե ու դեռ հեռացած չըլլար անկե։

Թոնիրը այն ինչ կողմ նեղլիկ անկյուն մը՝ վարդապետն ալ նույն գինիի մոթմոթուկն «ի բերան» ու ընտանի համարձակությամբ ներս մտած՝ նույնիսկ առանց բարևի, քեռկինի մոտը կերթա քեռին ու տղաքը կհարցնե, անոնց տունեն հեռացած ըլլալու պատճառները կհասկնա, ու ոչ ուրիշ տեղ, ոչ ուրիշ կետի վրա, արդեն սրունքներուն վստահիլ ալ չըլլար, հացթուխ քեռկինի ետևի կողմը տեղ մը գտնելով հոն կճոպնվի, ինչպես կորեկ լեցված պարկ մը, որ ինկած տեղը ալ ձև մը չունենար։ Դուք ալ կհուսամ միտքե չէիք հաներ թե՝ սա մեր մաշած ու կտրտած պարկն ալ ինչով լեցված էր ու է տակավին մարմինին մինչև այն ծայրերը, ուր եղունգները կվերջանան։

Քեռկինն աղվորիկ կին մը, բարի կին մը նույն ատեն, հայր սուրբի թարմ հաց հրամցնելու իր հարգանքին մեջ՝ անոր ներողամիտ ըլլալը կխնդրե, որ ան օրը, այն պահուն կեր մը, կերակուր չունի հանելիք առջևը, ու զինք անոթի թողեր է։

— Կուզես սա կրակին վրա անմիջապես ձվածեղ մը եռցնեմ, հայր սո՛ւրբ, ըսե՛, ուրիշ ի՞նչ կուզեիր, թան թանապուր ալ կար, աս օր իմ մեղքես հարս աղջիկ ալ կանուխ քաղհանի գացին որ...

Վարդապետը չի լսեր աս խոսքերը, վարդապետը իր գինիին երգը լմնցուցած՝ հիմա սիրերգ մըն է, որ կմրմնջե, զոր պահ-պահ

ընդհատելու դադարով, քեռկինին ետևի կողմը, անոր կռնակին դեմ ու շատ մոտը անոր մազի հյուսկեններով ծածկված սիրուն քամակին, իր գինովի ձև չափերը կընե, հացթուխը թոնիրին խորքը գըճկելու ատեն՝ իր ետևը նստողը դեռ անոր այնինչ ուռուցիկ կողմն ալ աչքե չի վրիպեցներ։

Ի՜նչ միս, ի՜նչ կլորություն, ու Ալփիարի բացատրությունով, ի՜նչ զգլխիչ ու ախորժագրգիռ գեղեցկություն մը հոն, ուր ածուխի սևությունով մազերու սքանչելի փունջեր մըն ալ կծայրանան։

— Օ՞ֆ, քեռկի՜ն։

— Ի՞նչ, մատա՜ղ հոգուդ, չես համբերեր նը, պանիրը ավելի պատրաստ էր, հիմա կուզես նը կարաս մըն ալ բանամ։

— Գինի՜, գինի՜, գինի՜, կհոհոռա զառամ ծերուկը, պանիր ալ չեմ ուզեր, գինի՝ գավազան ծերուկին, գինի՝ կյանք տվող մեռելին, օ՞ֆ, քեռկի՜ն, ես ալ քու հոգուդ մատաղ, անգամ մըլ ըսե, թե՝ ուր գացեր է քեռիս, թեզ չպիտի՞ դառնա, աս օր միտք կընեի, որ ճամփա ընկնիմ, շատ ուշացեր իմ արդեն։

Բայց ասոնք հենց խոսք ըլլալու համար է, որ կտոտռա վանականը, իր բոլոր ուշադրությունը հոն կպահե միշտ, հոն, միշտ հոն, ուր հացթուխը ամեն ծռիլ շտկվելու պահին, նոր գրգիռ, նոր կախարդանք մը կերևցնե։ Ա՜խ, Մարիամ, անգամ մըն ալ աս մծրղոնոտ ավաշը, երբ Մարիամ ճիշտ նույն ատեն, հետույքը տնկելով գլխովը թոնիրը կխորունկնա, վանականը ահա այն կողմեն մեղավոր բթամատ մը խրելով բուռ մը միս կափե, ու՝ Տե՜ր աստված, տե՜ր Սաբաոթ։

Հացթուխը վայրկենապես խրտչիլ մի զգալով այն կողմեն ընդոստ ցնցում մը կկրե, որ զինք երկու ձեռքովը թոնիրին բոց կրակին վրա կնետե, ուսկե երկու ձեռքերուն մատները վրա տալով, հրաշքով կազատի միայն, թե ոչ՝ այն վիճակին մեջ՝ կրնար ըլլար, որ ամբողջ մարմինովը ածխանար, Մարիամին շիվանն ու մղմղուկը քարերը կլացնեն, բայց ո՜վ անմիջապես վրա հասնի, որ անգամ մըն ալ անոր պատմե եղածը։

— Գե՜շ մարդ, գե՜շ վարդապետ, մազեդ մորուքեդ ալ չամչըցար։ Այսչափ, միայն այսչափ իր ճենճերած մատներուն սոսկալի ցավերուն մեջ, ուր զինք նույն պահուն գերեզմանի պատրաստելու ծանրության մը մեջ կզգացվին։ Կաշխատի, որ եղածը ծածկե իրեններեն, բայց ե՞րբ նույն կմնա այդ տեսակ որոշում մը ու ի՜նչ իրավունքով։

Վարդապետը գետնե գետին կանցնի, թափեր է գլուխեն ինչ որ ուներ, հազար աղաչանք, հազար ներողություն ու մոռացում քեռկինեն, անոր մինչև ոտքը լղելու աստիճան խնդրանքներու, ստորացումներու մեջ կգտնվի, ինքզինք արդարացնելու խոսքեր մըն ալ կկափկափե, «ես հոնկե թաշկինակս ինկած էր, պիտի առնեի, դուն ուրիշ բան հասկցար, միամիտ կնկուկ, դուն քուլրս ես, դուն քեռկինս ես, դուն բերնիս բրդոնն ու ճաշակը հայտնապես, ըսե՛, ըսե՛, ուզածդ ըսե, որ անով երդվիմ, ձեռքս խաղճիս վրա, անով կատարեմ երդումս։ Մարիա՜մ, համեստաշնորհ քույրս ու քեռկինս»։ Քույր կամ քեռկին՝ խեղճը ալ բան մը չի կրնար ընել, տեղը կմնա անեփ խմորը, երեսի վրա ամբողջ տունը, որ ան օրը մազ էր մնացեր, իր գերեզմանը պիտի ըլլար։ Քիչ վերջը էրիկ-մարդը ու տղաքը տուն կդառնան, Լհասկնան եղածը հատ-հատ ու բան մըն ալ ավելի, կարելի՞ է համբերե՜լ, սուրբերն ալ պիտի համբերեի՞ն միթե. անմիջապես տունեն դուրս կուգան ու ամեն ուղղությամբ վարդապետը կփնտռեն, որ կերևա երեսն առնել վանք փախելու հնարավորության մը ելած է, կգտնեն վերջապես, կամացուկ մը տուն կհրավիրեն ու՝ վերջինը տեսարանին։ Քեռին, վանականին գլուխը սեղմելով անուրին տակ, քեռորդիներն ալ կամ երկու տղաքը աս հյուրընկալ գեղացիին, ձեռքերնին մեյմեկ փշոտ, ահագին սարփինա, կզարնեն ու կզարնեն, հայրերնին ալ ան իր բռնածին կռնակին ու թիկունքներուն վրա իջեցվելիք հարվածներուն չափին ու տեղին ցուցումները կընե. «հայտե, յավրում, հայտե, տղաքս, թողեք բայը հուսա պահ մըլ մըխ կըյրեցեք, թեզ-թեզ կըյրեցեք, դուն, Գեյրոս, խոփ մը չինե, Մարտիկ, դուն ալ հաստ գամ մը թափե ան տեղ», ծերուկին հակափորը ցուցնելով։

Դարբնոցի աշկերտներ, որոնք իրենց շինած գործիքները ու գամերը այն տեսակ սալի մը վրա կծեծեն կլմնցնեն, որ վանական ծերուկ աբեղայի մը քամակը կըլլա, ո՞ւր պետք է լսել թե՝ ողջ տեղ չի մնար այլևս։ Քեռին տղոց մեկը անոր տրորված մարմինը պարկի մը մեջ դնելով տարբեր փողոցներով գեղեն դուրս կհեռացնե կամացուկ մը՝ ու վանք տանող ճամփուն վրա կնետե, ուսկե կամ վանք կերթա, կամ գերեզման կերթա։

Տարի մը վերջը այս դեպքեն, ան եղավ լսվածը, որ մեր երանաշնորհ բամպակ բերանը երեսի ջրիկովը, դուն ըսե մուրովը, շիփ ջիտակ գերեզման գացեր է, իր քեռկին Մարիամն ալ իր այրված մատվրներուն ցավովը անկե տարի մը ետքը այն կողմը կճամփորդե։

Լա՜ց թե զայրույթ և որո՜ւ հիշատակին։ Վանականը իր տարիքին յոթանասուներորդին մեջ վախճան յուր գտանե, քեռկինն ալ դեռ հազիվ քառասունին մեջ, խե՜ղճ քեռկին։
1907

ՁԵՐ ԽԵԼՔԻՆ ՁԻ ՊԱՌԿԻՐ

Ան օրվան պես հիմա ալ միտքս է տակավին։ Գեղը աղվոր, ալեհեր ծերուկ մը ունեինք, սուրբ Աստուր, լման ութսունամենի մը, իրավ, շատ տարօրինակ, շատ հին մագաղաթ, որ ով շփեր, շրշշըրջեր, միշտ անոր վրա, անոր բերանին մեջ նույն միատեսակ խոսքերը պիտի գտներ, որ սակայն շատ չէին հասկցվիր։

Խոսքեր ինքնատիպ կամ խորհրդավոր, ան ատեն ով մտածեր, որ անոնց իմաստին թափանցելու համար երեսունհինգ-քառասուն տարիներու երկար սպասանք մը պետք է։

Աս աշխարհքը, տղաքս, կըսեր, ան ատեն շենք շնորհք բանի պիտի գա, պիտի բարեկարգվի, երբ ան վարդապետները պսակված կնիկ ունենան, երբ կնիկ, աղջիկ կարդալ գիտնան, երբ ան դեմի ծովակեն ալ մեր դաշտեցիները օգտվելու կերպ մը հնարավորեն։ Ծերուկը, որու հետաքրքրող կենսագրությունեն մաս մը գրած պիտի ըլլամ կարծեմ երբեմն իմ «Գեղի նամակներուս» կարգին, միամիտ մենամոլությունով մը գիշերը կեսին ալ երբ իրեն ձայն հասցընող, իր անունը տվող մը ըլլար, ինք պատրաստ նույն խոսքերը պիտի կրկներ, վարդապետները... կնիկները... ծովակը...

Վերջինը գուցե հասկցվեր քիչ մը։ Ծովքին կողմեն դեպի դաշտ ջրանցք մը բացվելու կարելիությունով, գյուղացին իրավ է, որ անհունապես նպաստավորված կըլլար իր անջրդիներուն համար առատ պատրաստ ջուր գտնելով, իսկ ան առջիներուն ինչ ըսել— ինչ խոսքեր անոր, այն մեկուն ժոռատ ու շողինքոտ ծամույքին տակ։

Աղջիկ կրթել, վարդապետը կարգել, ծովքը ծակել, խենթի շաղակրատություններ պարզապես, ուրիշներ ցնդած մըն է կըսեին անոր, դեռ ինչե՜ր, որոնց կարգին մենք գեղի դպրոցին հովկուլնեբս ալ քիչ խաղ, խեղկտուքներ չէինք ըներ անոր ամեն անգամ որ զինք առանձին կգտնեինք կծկտած կամ նստած պատի մը տակ, իր մերկ թավամազ կուրծքը արևելու դիրքի մը մեջ։

Է՛, սուրբ Աստուր, կըսեր մեզմե մեկը, այսօր ինչպես, այսօր քանի ծունկ, քանի խաչ, մեր տեղն ալ ըրի՞ր բան մը։ Ես էն վերջը ու կեղծ լրջություն մը զսպած մեջս, կուզեի հասկնալ, թե Աստուր ամուն ո՞ւր կպառկի գիշերները. իրա՞վ է լսածնիս, մեզի որովհետև այնպես հավատցուցեր էին թե՝ այն ճերմակ գերեզմանամերձ ծերուկը

տարին ի բուն ժամը կպառկի ու սուրբերուն հետ կլուսցնե։ Գիշերները եկեղեցին ու սուրբերուն հե՞տ, բայց ի՞նչպես չի վախնար, ի՞նչ զարմանալի, մինչ մենք ու մեր հասակը ունեցող գեղին տղաք բոլոր ու մեծերն ալ կարելի է, հենց եկեղեցիին բակը գդակ կամ կոշիկ ալ մոռցած ըլլայինք, իրիկվա աղոթքներեն վերջը, մութին, ալ մեզի անկարելի կըլլար ետ դառնալ ու փնտռտուք փորձել։ Սուրբ Աստուր դեռ կրնա, կըսեին, գերեզմանը՝ մութին ու առանձնության մեջ, մեռելներուն ալ հետ երես երեսի խոր քուն քնանալ ու առտուն ալ Երուսաղեմե դարձողի մը պես պարծիլ։ Այդ պատճառներով էլ ահա սուրբ ըսեր էին անոր ալ, որ իր դեմքով ու դրսերևույթովն ալ ժամուն սուրբերեն չէր տարբերվեր։

Գլխուն առատ ու համակ ճերմակ մազերը ուսերուն վրա ու մինչև կոնակը կախ ձգած՝ ետևի կողմեն սուրբե մը ավելի մազեղ պատառ մը կերևար շատ հեղ մազերու այն խուրձը կրնա ճաշակով հյուսկեններու վերածած ըլլալով։

Գոտին կարկտնուկ սև զպունի մը վրա հանկուրցած՝ կաշիե պարզ փոկ մըն էր, գուլպա չուներ ոտքը, մաշած տրեխ մը, որ տարիներ ու տարիներ առաջ ճամփան գտած պիտի ըլլար կարծես, վերեն վար հին, ոտքեն գլուխը խեղճ հագուստ մը ու ամբողջությամբը սուրբ մը կամ բարիա վերջապես։

Ան ատեն հեքիաթունակ բաներ կպատմեին մեզի անոր նկատմամբ, Երուսաղեմ, էջմիածին գացեր է հետի ու բոկոտն, շատ վանք, շատ վարդապետներ ճանչցած, ան տեղերը, անոնց մոտ երկար տարիներ ծառայություններ ըրեր է։ Իր տարիքին ու մազերուն վրա խոսք բացվելու ատեն, խորունկ ախեր մը քաշելով, զիս անոնք ծերացուցին կըսեր, թե ոչ՝ քարը կմաշեր ու Աստուր իր քնարը քնճիկը չէր փոխեր։

Անոնք ո՜վ ըլլային, ո՜վ ակնարկել կուզեր.— մեյ մը գեղին քահանաները, մեյ մըն ալ ապահովապես այն անկին քահանաները, որ ինք անձամբ ու այնքան մոտեն տեսած ճանչցած ու անոնց մինչև քիթերնուն շուքը չափած ըլլալը կըսեր, ու ամենևին սուտ ալ չէր խոսեր, նույնիսկ եթե բութ զմելիով մը իր քիթն ու ականջները կտրեին։

Սուրբ Աստուր իր զույգ չուներ գեղ, քաղաք։ Առաջին ամուսնութենե մը հետո, ալ երբեք կին, կնկա փեշ չէր տեսած։

Հայ կրոնքեն ու միշտ եկեղեցիեն կբերե եղեր իր վկայությունները, ամեն անգամ, որ զինք մտիկ ընող գյուղացին իր աշխարհա-

յեցողություններուն մեջ վարանած իր կողմեն՝ իբր լեցուն գիտցողե մը, միջամտող ձայնի մըն է սպասեր։

Ու այսպես գեղը մտնող ելլող հյուր կղերներու հետ ինք բանիմաց ու համարձակ խոսողն ըլլալով, իր իսկ գեղին քահանաներուն մոլորանքները քննադատելե չէ քաշված։

Վայը կբերեր անոր գլխուն, որ քենով պատարագի կկայնի, կամ որ իրենը չեղող ծուխ մը կհետապնդե, կամ ծխատեր մըն ալ իր այցելած տունեն արբած՝ Ֆեոդալական դուրս կսողոսկի ու եկեղեցին պաշտամունքի կմասնակցի։

Ծերուկ տեսեն այդ երևույթներուն հանդեպ թեմական առաջնորդի մը սաստող տիրական ձայնին չափ աղմուկ կշինե ան անբարո մոլորածին շուրջը ու իրեն ալ ոչ մեկը կըլլա մեղադրող։ Բայց, ինչպես կըսեինք, սուրբ Աստուր իր այնքանի ահարկություններովը անանկներու մասին մեզի դեմ հակառակ ճնճղուկի անհարկիություններուն, ամեն անգամ ալ բարի կերևնար կամ մենք գոնե այնպես կըմբռնեինք։

Երբ զինք շատ կնեղեինք, երբ քիչ մը շատ համառ հարցասերներ երևայինք, «ի միջի այլոց» միայն այն մեկը հասկնալու համար թե՝ վարդապետներն ինչո՛ւ կկարգվին, կամ ի՛նչպես կրնան կարգվիլ, քանի որ մեր գեղին վարժապետը մեզի անոնց նկատմամբ շատ մը սրբազնիկ բաներ ըսեր է. «Ձեր խելքին չի պառկիր կըսեր, տղա՛ք, գործերնուդ գացեք, Աստուր ամուն այդքան մը մի՛ նեղեք, ես ձեր պապերուն պապուն ընկոզ խաղալը գիտեմ»։

Մենք իրավ է, որ գործերնուս կերթայինք, չէինք ուշանար, բայց ի՞նչ ըսել է կըսեինք, որ մեզի հետ այնքան կարճ կխոսի, մենք գպրոց կերթանք, մենք թեև տղա, բայց եթե ոչ իրեն չափ, իրմե գոնե պակաս չէ մեր ունեցած ու գիտցածն ալ եկեղեցիի կամ եկեղեցականի խնդիրով։

Ես դեռ իմ մորմես ալ շատ մը նախապաշարումներ քաղեր պահեր էի մեջս։ Անգամ մը, երբ մայրս մեր տունեն դիմացի տանիրեն հյուր վարդապետի մը փոնգտալը լսելով ինք ասդիեն խաչ հանելու ձև մը ըրավ, ես հետաքրքիր՝ բացատրություն պահանջեցի, ա՛տ ինչ, մայր, ըսի, վարդապետին հազալ փոնգալո՛ւն ալ խաչ կհանես. «ինչո՛ւ չէ, տղա՛ս, պատասխանեց, վարդապետ մը մեզի պես մի՛ հասկնար, սուրբ մարդիկ են վարդապետները, անոնց ամեն բանն ալ սուրբ է, անոնց զորքին ու հավատքին ղուրպան, անոնք

աշխարհք կուգան կերթան, բայց աշխարհք չեն գիտնար, չեն կարգվիր, կնկա երես չեն տեսնար, ան սև սուր բանը որ գլխնուն վրա կպահեն, մինչև աչքերնին չերևցնելու աստիճան, անոր համար է, որ արև, աշխարհք չերևնա աչվընուն, իրենք սուրբ են ու սուրբ մընան մինչև վերջը»։ Ան ատեն ո՛վ խելք ըներ, որ ես քիչ մը երկար քրքրեի մորս հավատքը, անոր մաքուր ու միամիտ հայացքները։

Բանին լուսաբանությունը մեր Աստուրին կմնար վիճակված, երբ ասկե կուզեինք ու նույնիսկ կաղաչեինք ալ, որ մեզի քիչ մը պարզելու ըլլա, թե վարդապետ մը ինչո՞ւ պետք է ամուսնանա, ինք ինչ ունի արդյոք լեզվին տակ, որ մեզիպեսներեն ծածկելը խոհեմություն կսեպե։ Այս նկատմամբ ինչ որ ալ ըլլար մեր ըսել ստիպելու կերպը, ինք նորեն իր մեղմուկ շեշտովը նույն բանաձևը կկրկներ. «Ձեր խելքին չի պառկեր, տղա՛ք, դուք ձեր ընկոզին ու վեգերուն խաղը խաղցեք»։

«Ինծի, գոնե ինծի հետ քիչ մը երկար խոսիր, առանձին միայն ինծի հասկցուր, Աստուր ամու, երդում քեզի, որ միայն իմ մեջս պիտի մնան ըսածներդ, վարդապետ մը կըլլա՞, որ կնիկ ունենա. ասի ե՞րբ պիտի մոռնաս, քեզի ի՞նչ որ ամեն օր ու կըսեն կյանքիդ բոլոր օրերը աս երգը հնչեցուցեր ես ականջներու»։

Ծերուկը իր հին մարդու համառությանը տեր մնալ պաշտպանելու համար խոսք չունե՞ր, ինքզինք պահելու կե՞րպ չէր գիտեր, թեև կըսեին մեծերուն առջև երբեմն ինքզինք կբանա ու կբացատրե եղեր իր հայացքները ակնարկված հարցին նկատմամբ, անոնցմե ուրիշի մը լսելու համար խոսք առնելե հետո։ Մեզի երբեք չբացվեցավ օր մը։ Ան վանքերն ինչ տեսած ըլլար, ան մութ մեկուսացված անկյուններուն մեջ որու հանդիպած ու ինչերու ականատես եղած արդյոք, որ գեղջուկ ծերուկի մը մինչև հոգիին խորերը այնքան ցավոտ ու ցնցող տպավորություն մը թողած ըլլար անոր ամեն օր ըսել ու ըսել տալու համար մենամոլ խենթի արտահայտությունով «մինչև աս չըլլա, մինչև ան չի կատարվի, մինչև մանավանդ կուսակրոն վարդապետը չամուսնանա, աշխարհքը չի շիտակիր, չի բարեկարգվիր»։

Թե ծերուկին աշխարհքը իր գեղն ու քաղաքն եղած ըլլար միայն, ասոր համար ալ զինք, իր հիշատակը չէիք ծաղրեր կհուսամ։

Օր մը Մովսեսի ու Համիտի աշխարհքն ալ այսչափ հիմակվանին պես լայն չէր կկարծեմ։

***

Անկե վերջ, քանի տարիներ անցած ըլլան կմտածեք, որ հիմա քիչ մը հասկցած ըլլայի, հիմա խելքիս պառկած ըլլար թե՝ վարդապետ մը ինչո՞ւ պետք է ամուսնանա, ինչո՞ւ անպատճառ պետք է ամուսնացած ըլլա իր պսակված օրինավոր կինը ունենալով իր կուշտին։ Բա՞ն է ան, որ քահանայի մը վերամուսնությունը առեր անցեր եք ու կուրծքերնիդ կճաթեցնեք։ Դուք հայ եկեղեցիին համար մեծագույն ծառայությունը ըրած պիտի ըլլաք, ան ատեն միայն, երբ ան կուսակրոն ըսածներուն ամուսնանալու հարցին վրա պահեք, հաստատեք ձեր վրանին ավանդականները։ Երեսունհինգքառասուն տարի անցավ, որ ես ալ այնչափ բան գիտնայի, համոզում ոսկորներուս ծուծին հետ խառնված ըլլար թե՝ վարդապետ մը ինչո՞ւ պետք է ամուսնացած ըլլա, ու որքա՜ն հույժ շահեկան խնդիր մըն է ասի մեկ օրեն մյուսը մեկդի ելլվելու համար։ Մենք ու մեզի պես հարյուրներ, հազարներ, ալ պետք չունեինք այն խոսքին, որ կըսեր մեր գեղին սուրբ Աստուրը ու կըսեն տակավին գեղեն դուրս ան հեռուները ապրող սուրբերը թե՝ «Ձեր խելքին չի պառկիր, տըղա՜ք, դուք լռել գիտցեք»։ Բայց արդյոք պիտի ներկայանա՞ լայնկեկ, թույլտու առիթ մը, որ մեջտեղ գամ համարձակ ու խոստովանիմ հայտնապես, թե ինչո՞ւ պիտի չի կրնամ լռել։

1907

ԲԱՐԵՆԻՇ ՄԸ

ԵՐԿՈՒՔԵՆ Ո՞Ր ՄԵԿԸ

Կըսես ամմա...

— Աղա Գրիգոր, քանի օր է, որ միտքս կուգաս, շատերուն հանդիպած էի, կուզեի քեզի հետ ալ սանկ քիթ-քիթի տեսակցություն մը, բարի լույս մը հիմա։

— Աստծու բարին, աստծու բա... հրամեցեք։

— Տխուր ես բայց։

— Տխուր, տրտում, ախր վիճակնիս որ չի փոխվիր, ինչ ընել, երկու օր է գլխու ցավ մ՚ալ։

— Կանցնի կհուսամ, մ՚ընեք հոգ, բժիշկ բարեկամներ ունիք։

— Մինչ բժիշկ, մինչև բարեկամ, բարեկամություն, էոմիր ըսածդ ալ կանցնի, ա՜յ աղբար, ձգե, որ բժիշկին ու անոր բարեկամության ալ չի՛ վստահցվիր հիմա։

— Իրավ է, որ մարդ նախ մեյ մը իր նախահոգ միջոցներուն վստահելու է, առողջությունը ձեռքե չի հանելու համար։

— Բժիշկն երկրորդական միջոց մըն էր, բայց դուք ալ ինչո՞ւ շատ մտմտաք։

— Չեմ գիտեր վերջապես, չեմ գիտեր։

— Դուք քիչ մըն ալ աշխարհի մարդ, չե՞ք ընդունիր թե՝ ամեն հիվանդություն չի բերեր, հիմա կներեիք, որ ես մեկ-երկու խոսք մը...

— Հրամե, նորեն ի՛նչ...

— Աս էր ըսելիքս, թե աշխարհ կարկանդակ ալ ուտե, կերևա մեր ալ կերած մարսածը սա փտտած կաղամբը պիտի մնա միշտ որ...

— Ըսել կուզեմ, քիչ մը մենք ալ ճանկռտվինք, թող պահ մը մեր ճաշակը բարեշրջում իրավցներ։ Մենք ալ մարդ էինք։

— Մա՞րդ, է՛հ, հելպեթտե մարդ։

— Տե՛ս, ինչպես պիտի բացատրեմ միտքս, աղա եղբայր, մարդ եղողը, երկու աչքով, երկու ականջով մարդ եղողը, բան կտեսնա, բաներ մը կլսե ինչ-որ գիտեք, թե մարդերու ըրածները պիտի ըլլան, օրինակ, քեզի հիմա ի՛նչ չէիր կրնար ըսել, որ մեզի պես մարդերով վերջացուցած են, ու՝ այս կերպով անոնք երկրի վրա՝ երկինքի աստծուն պես պաշտված։

— Հե՛լպեթ, հելպե՛թ, որդիք մարդկան իմաստուն, ըսված է, քանի հրեշտակս երկնքի։

— Ես հիմա ան հրեշտակներն ալ չպիտի ըսեմ, եղբա՜յր, որովհետև մարդ չեն անոնք ու երկրի վրա ալ չեն բնակիր, ես ավելի երկրի վրա ապրողներուն գործերեն պատմեմ։ Մենք ալ բան մը՝ քիչ մը մենք ալ այն մեծություններուն նմանինք, մարդիկ ամեն բանե առաջ նմանիլ կսիրեն։

— Է՛, ի՛նչ ուրեմն ըսելիքդ... խոսքը կարճ կապողն ալ հաջողեր է...

— Խնդրեմ, հանդարտ լսեցեք։

— Հանդարտ ամմա, էֆենտիմ, հրամանքս ալ բերաննիս շեքեր մը դնելու համար, մեզ մինչև Շամուշաղ տանելու ձևեր մը կընես, աղեկ ա։

— Նոր տարին ալ սկսանք, գիտեք։

— Նոր տարին, պելիհ։

— Նոր տարին, նոր բան մը։

— Նոր բա՜ն, չի հասկցա միտքդ։

— Նոր քսելով մեր քիչ մը սա աշխատած աշխարհիկությունը մերկացած՝ բարեսիրական ձեռնարկ մը... որ թաղն ու քաղաքը արդյունք մը ծափահարեն։

— Եկեղեցին շինվեցավ, ա՛լ ինչ։

— Ուրիշ բան, ուրիշ բան։

— Ետեւ ահա քահանա մը։

— Ուրիշ բան։

— Ամ տարի նոր դասարան մ'ալ։

— Ատ մեկն ալ շիտակ, բայց ուրիշ բան մը...

— Ըսե, ի՞նչ ուրիշ...

— Ըսեմ, պիտի ըսեմ, սիրելի՛ս, մենք սա քաղքցիներս ամեն բան ու շաղացին շիշքակոցն ալ ջուրին տված իսկապես գորտաղզիներ կապրինք։

Ամոթ էր, որ մենք չունենալով առանձին մեր բարձր կրթական հաստատությունը, այսպես միշտ ուրիշներուն հանձնված՝ անոնց ըրածներուն զարմացողը մնանք բերանբաց։

Այն դպրոցն ալ, որ կա, կերևա դպրոցը ս. Հակոբի մեջ, ոչ դուն քուկդ, ոչ ալ ես իմս սեպեի, այդ դպրոցը եգիպտահայ բարերարին է հայանապես, ըսե՛, դուն ալ այսպես չէի՞ր ընդուներ։

— Պելիհ, պելիհ, սրտանց կըսեմ, թե աստված մեկ օրն հազար ընե այն տեսակ խոշաղ մարդուն։

— Բայց ան օրհնյալ մարդը իրավ որ ատ գովանքներուն ալ չսպասեր, փափաքն է միայն, որ իր մինչև հոս կարկառած ձեռքն ու ձեռքինովը բուն տեղացիին ինքնօգնության ու պարտաճանաչի թելադրիչ առաջնորդողը ըլլա. ու այս կերպով կրթական շնորհքով գործ մը տեսականանա սա գետնին վրա, ուր կտեսնվի թե՝ ուրիշներ աշխարհի անդիի ծայրերեն հոս կոլոլված ու կլորված մեր ընելիքը անոնք կընեն, բայց անոնք մեր ուզածը կամ մեզի անմիջապես պետք եղածը չէ որ կընեն, է՛հ, հասկցա՞ր մի իմ աղբար, հիմա կարգն է, որ քեզի ալ, ինչպես ուրիշներուն, կարևոր առաջարկներ մը ընեմ, որոնք դուն կրնաս հատուկ մեր կողմեն հայտնված խնդրանքներ ալ հասկնալ։

— Ես զաթի կկռահեի, որ բերնիդ մեջ քար կա ամմա, ալ որ-

թրեկ մայրն ու խոշորը չէի կրնար զանազանել, գիտեի արդեն, բայց...

— Բայց քար մի՛ ըսեր գոնե, սիրելի՛ս, շաքար ըսե, մեղր ըսե, ըսե ինչ որ համ ունի քաղցր։

— Փեք ամայիպ մարդ, շա՛տ թոաֆ, ասոր անանկ կերևնա, թե շատ ուռեցուցեր ես, ե՞րբ քեզի հետ խոսքի բռնվողը շունչ կրցեր է առնել։

— Մտիկ ըրե։

Ամ նոր տարիեն սկսած դպրոցի պյուտճեն լայնցնելու ձեռնարկ մը ընենք կրթական տարեվճար մը ինչ չափով ալ ըլլա, մենք գիտենք թե՝ տարիին մեջ շատ մը ավելորդ ծախքեր ունինք, կընենք, որոնց ետեւեն ապա երկնցուցած ախ ու վախերնիս պատուհանին ապակիները կոտրտող հովերը շիներ են։ Իսկ ան, որ հիմա օգտակարին համար կառաջարկեի, հոգիի համար ալ անբացատրելի հաճույքը պիտի ապահովեն։ Ուրիշներե լսած եմ բավական, հիմա ձեզ ալ ցանկին մեջ, սիրելի՛ս։

— Աղեկ կըսես, ամմա՜, աղբար...

— Աղեկ, աղեկ, իմ խորհածներուս ոչ մեկը վատ, ոչ մեկը ջուր նետելիք, բարի կամեցողություն մը ու բավական կլլար։ Դպրոցին համար ամ նոր տարին նոր ծախքեր մը կգուշակվին։

— Բարով կըսես, ամմա՜, խուզում...

— Դպրոցին շենքը նեղնալ սկսեր է, լայնցնելու անհրաժեշտ պետք մը... Մյուս կողմեն անանկ կլսվի, թե դասատուներն ալ ֆիզիկայի ու կարգ մը ուրիշ դասերու գործնական փորձերուն համար օտար դպրոցներու դուռները մուրացիկի ստվեր մը կքաշեն ետևին, գործիք կմուրան, ան օտարներն ալ շատ դեգ խոսքերով կմերժեն մերիները, ասոնք ալ լսա՞ծ էիր։

— Կըսես, ամմա՜, էֆենտիս...

— Էֆենտիս, աղաս ալ դուն պիտի ըլլաս, քրիստոնյա եղբայր, պայմանով, որ ամոթի կարմիր մը բաժնենք մեջերնիս։ Աստծու սիրուն, կուզես սա վայրկյանին դուն ալ քու ուզած ծանրությունդ, քարդ իմ կռնակս բեռցիր։

Հիմա կանդրադառնայի՞ր թե՝ ես քարը ո՛ւր կսիրեմ պահել։ Սա ըսել կուզեի, թե դուն քու հինգ տալու ատենդ, հրաման ընեիր, որ ես ալ իմ տասս տայի։

— Աղեկ շեքքեր կծամես, ամմա՜, ա՜ պապամ...

— Ինչե՞ր, ինչե՞ր, աղա Գրիգոր, էֆենտիս, ի՞նչ պետքեր, ի՞նչ պակասներ, քաղաք մը, ամբողջ հասարակություն մը՝ մենք տակավին աղջիկներու դպրոց ալ չունինք։

Մեր աղջկները, մեր մանչերը, մենք ամենքս ամեն պարագայի տակ գիտեի՞ր, թե ի՞նչ լեցուցեր գավաթը ու կխմենք ամեն օր, դուն թերթ կառնե՞ս ձեռքդ, երբեք լսելու կըլլա՞ս այն խոսքերը, որ մեզի ուղղակի մեր հասցեին կնետեն, այդ գավառը այլասերված մըն է կըսեն, եկեղեցիին ինչպես անոր դպրոցին մեջ, մնացածը ոչնչության հավասար մոայլ պարապը կերևա հետզհետե։

Ու անանկ ալ չէ՞ մի, լուս. ժողովուրդը ո՛ւր կվազե կիրակեի առավոտը, հայ պզտիկներն ալ լուր օրերուն դեպի ո՛ր դպրոցներու կողմ «հորդան կուտան»։ Առաջքն առնեինք սա վիճակին, մերիններին տեր մնալու համերաշխ համաջան փորձն ընենք, աս տեսակ փորձ մըն ալ դրամով կըլլար, եղբայր, դրա՛մ, դրա՛մ, դրա՛մ։

— Ա՛խ, աղա դրացի էֆենտիս, իրավ, որ շատ շիտակ կըսես, շատ բարով կճառես, ամմա, գառնուկս, պոյիդ խուրպան...

— Խոսքն երկար, քիչ մը երկար ձգե, եղբա՛յր. ատ ամման, ատ կըսեսները անանկ գոհիկ հանգեր մըն են, որ բնավ չեն հարմարիր մեր սա երգածին, լայն բաց բերանդ, սանկ ոգևորող պատասխան մը դուն ալ։

— Շնորհիվդ բերան ալ ունիմ, պատասխան ալ, ամմա՛, պապուկս, դուն չես հասկնար — Դուն միայն ըսելու եղիր, վստահ եղիր։

— Վստահ ինչի՞։

— Վստահ եղիր կըսեմ, որ դուն եթե ձուկ ըսես միայն, ես գետն ու ամբողջ օվկիանոսը հասկնամ։ Խոսք ըսե, երկար ըսե, ինչպես կխնդրեի, քիչ մըն ալ ժիր հանե ձայնդ, հնչուն սոլո մըն ալ դուն լսցուր։

— Սոլո՞... ատ ինչ (բռնազբոս քրքիջ մը) էյի էա, որ ան ատենն ալ ըսեմ բամբասես թե՝ էֆենտին, Գրիգորը, թախրմ մը լոլոներ կարդաց գլխուս, իրավ որ, լավ ճարպկություն։

— Հիմա, եղբա՛յր, անանկ կըմբռնվի թե՝ դուն մեզ ափաշկարա հիմարի, ախմախի տեղ կդնես, է՛հ...

— Չէ՞, քավ լիցի ըսե, մեղա ըսե, մենք ալ մարդ ենք զահար, խուզո՛ւմ։

— Մարդ եք, մարդ ենք, հրամեր եք, ես ատ խոսքը առաջ ըսի, ուրիշ ի՞նչ, տես թե՝ ուրիշներ ինչպես կծախսեն. ինտոր կփռվին, ու մեր տեղերը կնեղցնեն։

Տալու պես կամեությունը մը, առաքինությունը մըն է, որ միշտ կախում պետք չէ ունենա հարստության չափե. հերիք որ զգացումը կա ու հոն կա ամեն բան, որուն պետք ունինք։

Դուն քուկինովդ, ես իմինովս, կլմմնար, կերթար։

— Նորեն չի հասկցաք միտքս։

— Մինչև ծուծդ ալ հասկցա, ինչպես չէ, պարզապես գեշ երազ մը ամբողջությունդ։ Քեզնե շատ պակաս ունեցողն ալ մեզ չի խաղցուց, չի խոսեցուց այսչափ։ Կճանչնայի՞ր Մինասյան Աստուր, տարին մեկ անգամեն 25 ղրշ. խոստացավ վճարել։

— Ո՞վ, ո՞վ, ան Աստո՞ւրը, ան Մինասյան տղա՞ն — հելպեթ, ինչու չի տա, հինգ տղա ունի դուրսը, որ իրեն համար կբանին։

— Տասնհինգ դահեկան ալ Սարգիսին տղան՝ Զաքարը խոսք տվավ։

— Այդչափ ես ալ կխոստանայի, անոր քեռին ողջ-մնա, հելպեթ, Համբարձում աղային հարստությունը աս ավուր օրս տեվեի քերվանով ալ չի վերցվիր։

— Երկու արծաթ ալ Հմայակ էֆենտի։

— Անցած ամառ անոր զարկած փիանոյին չափն ալ պահե՞ր ես միտքդ, սրտանց կըսեմ, թե քիչ պիլե տվեր է։

— Երկուք ալ հաճի Սողոմոնին տղան Կարապետ էֆենտին։

— Կուտար ես, երբ ես իմ ալ եկենս մեր տունը բերեի, մեր տունը տար հոգին, ու բոլոր ունեցածը ես ամփոփեի տախխային, ես ճշմարիտ որ լիրա մը կուտայի, լիրա մը, լիրա մը, լեն բաց աչքդ։

— Մարգար Պողոսյան էֆենտի, երկու որբերու մեյ մեկ ձեռք զգեստ։

— Օրթըխեն գողցողը ինդո՞ր պիտի ընե, որ արդարանա, էոյլե յա, հերիֆին հետ երկու-երեք տարի օրթախ եղավ, տունն ավրեց, կըլլա յա։

— Դեռ լսելու եղիր, Արշակ Հովհաննեսյան երկու թուփ չըթարա։

— Էտ ճանավարը, էտ քեփազե հերիֆն ալ թող հեմի այնթապցուն պարտքը տա ան, վերջը սապոնե երեսը։

Աստվածդ սիրես նե, դուն ալ քիչ մի ինծի հախ տուր, գողցիր, փախցուր, ողորմող թասլամիշ եղիր, սա ալ եղա՞վ մի, էֆենտիմ, մարդ մի ճաթեցնեք։

— Ըսե ինչ որ կրնաս, բայց քիչ մըն ալ լսե, Գրիգորյան Սարգիս տարվետարի դպրոցին կոտրած ապակիները պիտի տա։

— Է, հիմա ես լռեմ, դուն խոսիր, պեոյլետե խալթ էթմեք օլուր մի ա՜, խուզում, էտ փե...նկը իր կոտրած ճամերուն ալ ճեռեմեն պիտի տա՞ արդյոք, որ գիշերները վար կառնե հերքեսին պատուհաններեն։

— Հինգ ղրշ. Մկրտիչ աղան։

— Խոսք չունիմ ատոր, քրտինքովը ապրող պարկեշտուկ մարդ մի, վկա գրե զիս, որ ատ մեկը իր միսեն, ոսկորեն կտրեր տվեր է, աֆերի՛մ։

— Արթին Ժամկոչյան, երկու բեռ փայտ պիտի տա ամեն ամեռ։

— Սը փսխո՞ւնքը, շան լակո՞տը, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, աստված պելատ տա, հերիֆ. բայց դուն ալ լսե՞ր ես կըսեմ... ձգե, աղբարս, ձգե, ձգե, նե էսիրտե գալտրք...

— Եըլխովանենց Դավիթը երկու ջեյրեկ։

— Երեք տարի է, որ հինգ ղրշ. յուղագին խոստացեր է, չի տար, հիմա ալ նոր քեփազեռություն մը թեզելեթմիշ կընե, պու տե պեոյլե եազարրզ։

— Մեկ ոսկի անանուն ոմն։

— Մի՛ ծածկեր, ես ատ մեկն ալ կռահեցի, ատիկա ան հերիֆը չէ՞, որ յոթը տարին անգամ մը ատ տեսակ իկիտություն մը կընե, որ իր յոթը պորտերուն իֆլազությունը քավվի զահար, էֆերիմ վալլահա, իր պապը մեյմեկ խալիպ սապոն ալ չի տվեց պարտկնտերերուն։

— Հինգ զույգ կոշիկ Աճեմյան Համբարձը։

— Աստծու սիրուն ըլլի, սըվոր ալ հասկցնեիք, որ տարին անգամ մը գոնե գոգ մը փափուռ առներ կնկան համար, վերջը ուրիշներուն...

— Հովակիմ Թախթախյան սնտուկ մը քարյուղ։

— Աֆերիմ մարդ, լեզուս առվի, որ սը մարդուն մահանա մը գտնեմ, չէ՜. շատ ազնիվ մարդ, խնամուս աղբարն է, բայց ես չէ թե աս բանին համար է, որ կգովեմ, ինք զաթի էօթետեն պերու ազնիվ մարդ է, ձեռքի տակե ալ շատ բարիքներ կընե, որ իր կնիկը պիլի չի գիտեր։

— Կես ոսկի Սյումպյուլ Նազարը։

— Ան բամպակի գողը, անանկ չէ՞ մի, մեկ-մեկ հարցուր հասկըցիր, թե սա քրիստոնյա թյուճարը ամեն օր ամեն մեկ գյուղացիե քանիական օխա բամպակ կքոթե ու կուրանա անամոթաբար,

ատ ռեզիլ մարդը տասն անգամ բռնվեր է ալ, ու ինք նորեն տասնը-մեկերորդ ռեզիլությենեն վազ չէ եկած։

Աշխարհքն այսպես է, դրացի՜, մեր գեղացիները գոնե ես այսպես գտեր եմ, բարիք կընեն, իրենց չարիքները պարտկելու համար քսան դահեկանով քսան լիրայի գողության մը քավությանը կսպասեն։

Դպրոցին կտան, որ թալլված դրացիին մը բողոք լեզուն խեղճին կոկորդին մեջ կծկեն, կիրակի օր մը եկեղեցիին կուտան, որ լուր օրերու ամբողջ շարք մը՝ աղքատ քաղաքացիներե այն տված-նուն տասնապատիկը շորթեն ու մեղա չգըտնեն, իմ խորհելու կերպը ահա որ դուն ինչ ալ ըսես, աշխարհքին անունն ալ համրես, իմս պիտի մնա։

— Բայց դուն ալ բան մը, որ վերջ մը բերեմ, գիտեմ թե՝ իրավ որ երկար խոսեցա, դուն զատվե ուրիշներեն, դուն քանի որ այսչափ բծախնդիր քննադատ մը կերևաս, այնպես մը դուրս եկուր, ու խոստացիր, որ... դուն ալ, է՛հ, վաճառական մը, քու բաժինդ տուր, որ վրան սանկ երկաթագիր բարերարություն մը գրելու ատենս, տակն ալ քու պատկերդ քաշեմ։

— Էհ, իրավ որ, գեշ չես ըսեր, գեշ չես թելադրեր, ամմա, սիրելի՛ս։

— Զիս պարապ մի ձգեր վերջապես, ա ճանըս, տուր ինչպես որ կուզես, ինչ չափով որ կուզես, կամ շարժառիթդ ինչ որ ալ ըլլար։

— Օ՛ֆ, օ՛ֆ...

— Դեռ շիտակն ըսելու համար, ինչ հարկ այն ճոպոտ ակնարկներուն, որ ըրիր ասոր-անոր հասցեին։ Մարդիկ ինչ որ են, կամ մարդը ջուրե՞ն բերված արդյոք թե՝ հողեն ծնված ըլլալնուն համար է, որ ոտնվորված են, քալել գիտեն, սահմանները կանցնին, որ ուրիշինն են, կամ ձեռքեր ունին, որ հափշտակելու վարժած են, քեզի ինչ փույթ ասոնք, աղա Գրիգոր, հոգի՛ս, խոսքին վերջ մը։

— Ա՛խ, ա՛խ, կհասկնան եղեր, որ նորեն ժամ մըն է, որ նույն խոսքը...

— Շատ զոռ ընելու ալ չի գար, բարեկամ, քիչ մը երկար փախավ։

— Կհավատա՞ս, որ ըսեմ, թե սա արալբխ՝ տասնոցին անգամ կարոտը կքաշենք, տասնոցին, տասնոցին։ Շաբթվա մեջ տասն ոսկիի փալիչա մը նետվեր է առջևս, վերցնեմ ձեռքս առնեմ, մեկ տեքա, չի վերցնեմ ուրիշ տեքա։ Զիս մենամարտի ստիպող ձեռնոց մը ըլ-

լի ան կարծես, կըլլա՞, որ գետին թողնեմ։ Մարդու մը տերտը հասկընալէ վերջն է, որ կփորձեն անոր գոտին քակել։

Աս ալ այսպես է, եղբայր։

— Վերջապե՛ս։

— Ինծի մտիկ կընես, վաղը մյուս օր եկուր, ավելի շիտակը գալ շաբթուն երեցիր, ավելի իմաստուն կերպը, հիշ չի գաս նը բանը տահա արդյունավոր տըլլի ճանս։

Մենք ալ մարդ էինք զահար, էֆենտիմ, շայետ եկեր հիշ բան մը չի կրցեր էինք տալ նը, խոսք քեզի, որ դպրոցին աղքատ տղոց պունտան պեոյլե մենք մեր ունեցած ջիթեն, ջըթարաններեն վերեսիյե տալու համաձայնությյան մը գանք։ Ասոր ալ անունը ազնվություն, մարդավարություն, դուն կուզես սանկ խաբուխարճի բարեբարություն մը դիր։

Դուք ալ, սիրելի ընթերցողներս, ձեր մեջ, ձեր կուշտին, ձեր գեղը կամ քաղաքը, ունեիք եթե սա տեսակ քար տանձի տեսակներ, աստծու սիրուն ըլլար, մեկ տեղ ժողովեինք, մենք ալ մերինները կմիացնեինք, որ մեկ անգամեն անոնց մեր ուզած անունը տայինք։ Դուք արդեն հիմակվընե չե՞ք գուշակեր թե՝ ես անոնց յուրաքանչյուրին համար ինչեր ունեի շրթունքիս ծայրը։

Սա «կրսես ամմանիներ»-ը ո՞ւր չի կային։

1907

ՃՆՃՂՈՒԿՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Բարին աստված անգամ մը ինքզինք պստիկ թռչուններու խումբի մը առջև գտնելով արմանք զարմանք կհայտնե թե՝ ինչպես անոնք երկիրեն երկինք անհուն միջոց մը ճամփա կտրած իրեն կներկայանային։ Ճնճղուկներ, ամենքն ալ հողի գույն փոքրիկ ճընճղուկներ, մեկը մեջերնեն համարձակությունը կունենա իր բութ կտուցին բացվածքովը հետաքրքրող պատճառներու պատմություն մը ընել ան իրենց հանդուգն վերելքին, որուն տեսակը իրավ որ ժայռերու շահապին՝ բազեին ալ միտքեն չէր անցներ։

Երկինքի, երկրի մեծ ստեղծողը «ասոնց ի տես», կթողու վերջապես զարմանքը ու պահ մը իր գութի զգացումին տեղ կուտա այն պզտիկ բաներուն վրա ակնարկ մը ձգելու վայրկյանին։

— Գիտեմ թե՝ ես ձեզ ալ ստեղծեցի, ճնճղուկներ, կըսե, ձեռքիս կավին զանգվածովը երբ մեծություններ մը ծրագրեցի ու նետեցի երկրի վրա. մնացածը՝ այն կավեն մանր, ավելորդ փշուրներ, ձեռքս թոթվեցի ու դուք եկաք. ես ապա ինչպես մարդուն, մրջյունին, ձեզի համար ալ կյանքի աղվոր, ածան պայմաններ ապահովեցի. մացառը ձեր զբոսավայրը, մարդկային բնակարաններու այն ինչ բարձրությունները ձեր անմատչելի բույները. ա՛լ ի՞նչ ուզածնիդ. հա՛, աս ալ կար որ ինչպես դուք ալ կտեսնաք, ձեր քովերը մարդիկ երբ պատառ մը հացի համար գլուխնին քարեքար կզարնեն ու նորեն չի պարտկված անոթություն մը կուլան, ձերը բախտ մը չէ՞ որ դուք չի ցանած ալ կհնձեք. անցորդը ճամփուն շատ բան կթափե, դուք կժողվեք. դաշտին երեսը միջատն ու մարախը կար, շատ մը անոնցմե ձեզի բաժին կիյնա չէ՞, ալ ի՞նչ է ուզածնիդ։

— Մերը ուրիշ խնդրանք, տե՛ր, կպատասխանե մեկը առաջ անցնելով, մեր ըսելիքը շատ կարճ, բայց շատ բանավոր։

— Ըսե՛ք, շուտ ըսեք, վախնամ սխալ մը պիտի տաք երեսիս։

— Չէ, մեղա իմ լեզվիս։

— Է, ուրեմն, մտիկ պիտի ընեմ։

— Մերը գանգատ մը ու մեր գեղին տերտերին դեմ միայն, տե՛ր. նա անցած օր մեզի անանկ մը երևաց հանկարծ, որ մեզ ամենքս ալ զարմանքի ու զայրույթի մեջ քարացուց։

— Ձեր գեղին տերտե՞րը, ես այն մեկը բարի կրոնավոր մը կճանչնամ սակայն։

— Մենք ալ այդպես, տե՛ր, մենք ալ բարի դրացի մը գիտեինք զինք։

— Վե՞րջը։

— Իրիկվա կողմը խաչ մը ձեռքը ժամ կուգար, մենք ան ատեն սայլակներեն թափթփած հասկեր կծվենտեինք ճամփուն մեջտեղը, իրիկվա ճաշերնիս կընեինք. տերտերը մեր քովեն անցնելուն, բան մը նետեց վրանիս, պզտիկ քար մը, ու ժամ մտավ։

— Այն քարով ի՛նչ ձեզի։

— Մեզնե մեկուն թևը կոտրեցավ, խեղճ պզտիկ մը որ ինկած տեղը մնաց ոտքերու տակ, ու հիմա մեռավ կարելի է։

— Օ՛հ, գեշ բան իրավ որ. տերտե՛րը...

— Գեշ, ու շատ ալ ցավալի, տե՛ր, այն մեկը որուն ա՛լ լմըն-

ցած է բանը կըսենք, իր ընտանիքին մեկ հատն էր. երեք էին անոնք, մեկը որին փախցուց, մյուսը անժամանակ թոիչք մը փորձեց ու մեռավ. այն վերջինն ալ, բայց իրավ որ շատ բարի մնացորդ մը այն վերջինը, ժամուն գիժ տերտերի ձեռքովը լմնցավ. գութ ըրեք, տե՛ր. գութ ըրեք, մենք պզտիկ ճնճղուկներ կհավտանք, թե բարին աստված մեզի ալ կխորհի։

— Շատ լավ, շատ ճշմարիտ, ուզածնի՞դ սակայն։

— Ինչ որ դուն կուզես, տե՛ր։

— Տերտերին ձե՞ռքը կտրեի. հրաման մը շանթերուն ու կըլլար այդպես։

— Չէ՛, չենք ուզեր այդպես։

— Աչքե՞րը կուրցնեմ, հրաման մը արծիվներուն ու կըլլար այդպես անոր կոպիճներն անգամ փորել տայի, զույգ մը մութ ծակի վերածեի, ուր ալ միայն մամուկները բնակեին։

— Ան ատեն ավելի գեշ, տե՛ր։

— Ի՞նչպես։

— Կույր մը, որ չի տեսներ, կրնա ըլլալ, որ ոտքին տակ ուրիշ կյանքեր, ուրիշ թանկություններ ալ տրորե. վերջն ալ ի՞նչ ըսել անոր. կույր մը շատ աժան կարդարանա։

— Ըսել է դուք ձեր մտքինը ունեք. օ՛ն ուրեմն։

— Շնորհք, տե՛ր, շնորհք հիմա աղաչելու քեզի, որ անմիջական հրաման մը խրկես գեղին սափրիչին, որ այն անբարո տերտերին մորուքն ածիլեր։

— Ըսե, ինչո՞ւ այդպես։

— Մենք որովհետև մինչև հիմա աշխարհիկ մարդուն ներկայությունեն միայն կասկածներ ընելով կփախեինք անոր հենց հոտը առած հեռվեն, ծոցը խաչ կրող կրոնավորե մը ինչպես շարիք սպասել, արդ՝ քանի որ հիմա խաբվածներ եղանք մենք անոր մորուքին կամ դրսերևույթին պատճառովը, մենք ահա անոր այս ծպտանքին մերկացումն է, որ կուզենք քեզնե։ Այս տեսակ պատիժ մը ասկե վերջ անգամ մըն ալ պիտի նորոգեր մեր մեջ այն հավատքը թե՝ տերտեր մը, աստծու մարդը, միշտ այն բարի ու սուրբ մարդն է, որ ոտքին տակ եկած մրջյունն ալ չպիտի ուզե տրորել։ Մեր խնդիրը այսչափ միայն։

Բարին աստված կլսե ճնճղուկներուն, իրավունք կուտա անոնց, ու անմիջապես հրաման մը իրենց իսկ ուզածին պես, որ սափրիչը իր գործը կատարե, ու ճնճղուկները անկե վերջ այն մեկը անմորուք

ու անփակեղ աշխարհական մը ճանչընալով, անոր հանդիպելուն, վայրկենապես ինքզինքնին ժողվատեն ու թևերնուն վրա գտնվին։

Ասոր վրա անոնք երկինքեն երկիր զվարթ ճուվողյուններով հրապարտ վայրէջք մը կընեն, ու կխորհին, թե իրենց արևին ու բարիին համար ալ բարեգութ աստված մը կա երկինքը։ Երշանի՜կ ճնճղուկներ։

Ու կըսեն, այս դեպքեն ի վեր մարդիկ ալ շատ անգամ այն կրոնականներուն վրա ըրին պահեցին կասկածնին, ու գտան թե անմազ, լերկ փինչ մը ունին, ու գլխնուն վրա ալ ծպտանքը ամբողջացնող կասկածելի փակեղը կցուցադրեն։ Բայց մենք ալ ի՞նչ պիտի ըսեինք։ Վա՜յ այն ճնճղուկներուն, վա՜յ հեք, միամիտ ժողովուրդին մանավանդ, որ անանկներուն շուրջը կթռչկոտե, ու անոնց դուրսի կեղևանքովը ապահովված կմնա։

1908

ԱՄԱՌԻՆ ԱՐՄԱՂԱՆԸ

Հեռուն-հեռուն եզերքներե կուգամ, կըսե Պարիկը, հով կանանչ լեռներեն կուգամ, կարմիր կանանչ բլուրներու կողքերեն կուգամ։ Աս տարի կանուխ սկսա ճամփորդել, աս ամառը շատ մը, շատ մը անկոխ, անմատչելի ամայություններե անցա, շատ դժվարություններ քաշեցի, սեպ, սեգ բարձրությունները չափելու հանդգնությունովը բաբախեց սիրտս շատ անգամ, ու հաճախ գահավեժ ափափաներու կառչած՝ պահ մը միայն ան կետերուն վրա կընեի դադար մը վայրկենային, ուր վայրի կաքավն ու քարայծն ալ չեն իշխած ոտք դնել։

Ու բոլոր ատենը միշտ լինկեր մը, անձնվեր մտերիմ ուղեկից մը պահեցի հետս։ Առտվան լույսերով, ոսկի մեղուներու հետ ճամփորդեցի միջօրեի հեղձ տաքերուն, ձորամեջի մենիկ, բյուրեղիկ առվակն եղավ առաջքս, աջ-ձախս։ Իրիկվնե սկսած ու գիշերը բոլոր՝ պուրակներուն անուշիկ շահապը՝ սոխակը ունեցա առաջնորդ, անոր ձայնն օրինակեցի, անոր թևերը հագա, որ արագ ու համարձակ սավառնումով մը ուղած կողմերս թև բանամ, ու հաջողած՝ թանկագին բեռով մը դառնամ։

Գացի, գտա, ժողվեցի։ Հունձք մը՝ շա՜տ արդյունավոր, շատ հաջող, շատ հարմար ի՛մ նպատակիս։ Աս տարին հերվանեն ալ գեղեցիկ,

սքանչելի փունջ մը, որ երբեք տեսած ըլլար մարդկային աչք մը։ Ծաղի՛կ, ծա՛ղիկ, ծաղի՛կ։ Անոնց շատերը աստղերու ցողով ժմնած են, ուրիշներ առհասարակ ասմազուն երկինքին դրացի թևապարներն են մշակեր։ Անուն չունին անոնք, իմ ծաղիկներուս մի՛ փորձեք անուն հարմարցընել։ Անոնք իրենց տեղերնեն վեր առնելու ատենս, մեղուներու հարցուցի, ձայն չի կրցան հանել, անուն մը թիթեռնիկներեն խնդրեցի հասկնալ, ասոնք ալ իրենց քունքերը քերեցին միայն, չենք գիտեր ըսին, միայն թե շատ անգամ մենք մեզմե ամչցեր ենք, երբ անոնց քովերը քիչ մը մեր թևերը լարելու ըղձանքով, ծմակին ծոթրինին ու անանուխին միջնորդության պետքովն ենք սարսռացեր։ Չէ՞, իմ ժողվածներուս, իմ հատ-հատ վեր առած ծաղիկներուս մի՛ տաք անուն։ Կարմիրին, ոսկեշող դեղինին թովանքները թող չի վրիպեցնեն ձեզ ըսել, որ թաղարին վարդն ըլլա ան կամ բոսորը զգլխող շրթունքի մը կամ ձեզի շատ ծանոթ շահպրակը անտառին, ուր անիկա իր շուրջի կանանչ մթությունը օծող ծիվ մը արևի պաշտանքը ունի միայն։

Թողեիք, որ միայն ես գիտնայի ու խղճահարվեի թե՝ ան ատեն, երբ անոնցմով իմ ուզած փունջս ամբողջացուցի ու քիչ մը արտորոնք փախ եկա այն կողմերեն, ետևս ցնորակոծ բույրերու ու գույներու աշխարհք մը լացնելով, ինչե՞ր հասան ականջիս, ի՞նչ ողորմուկ կոծանքներ երկարաձգված ետևես, որ հայտնի ըսել կուզեին, «Ինչո՞ւ խլեցիր, տարիր, մեզ մեր կույս գետիններեն, անոնց ո՞վ կար արժանի քաղաքամեջը, երբ լսված ըլլար, որ մեկը մեզ իր ձեռքը կրելու կամ մեր գեղովն ու գույներովը իր ճակատը պսակավորելու անբիծ մաքրությունով մը ծնած է։ Քաղաքը, գեղը ու հավասարապես խրճիթին ու ապարանքին մեջ, ո՞վ է ան, որուն ո՛րևէ մեկ բարության համար խորհրդավոր գնահատությունը, արժանավոր վարձանքը ըլլա մեր անբաղդատելի ու անստույգ գեղեցկությունը։

Ըսե՞ք, ըսե՞ք, հով կանանչ լեռներեն կուգամ, կարմիր, կապույտ բլրակներու արևեն ու ծմակներեն ժողված ծաղկեփունջով մը կդառնամ աս տարի։ Գեղը, քաղաքամեջը, այն կին մարդերու շրջանակը մասնավորապես, ո՞վ ունեիք, ո՞վ կար, ո՞վ ի՞նչ ուներ, որ ձեռքն անոր վրա կարկառեր, ու ես զայն անոր նվիրվելու ատենս, վայրկենապես մոռցած ըլլայի բոլոր տաժանքներս։ Թող այսչափը ալ ինծի հանվեր բաժին, որ ես բոլորովին մոռցած ըլլայի իմ հոգնություններս։

***

Կնիկներու ստվար բազմություն մը, ամեն կողմերե, ձգեցին իրենց ոռքները, թողին ճախրակնին, մոռցան հայելին, սանտրը ու իրենց բուրումնավետ ջուրերը, բոլորը ան օրը անմիջապես, եղը կրակին վրա թողողը, Պարիկին առաջքը վազեց։ Մայրեր ամենքն ալ ամեն տարիքե, ամեն վիճակե, շատերն իրենց փոքրիկներուն ձեռքը բռնած՝ անոնց հետ մեկտեղ կքալեն։ Դեռ բոբիկ գլխաբաց վազողն ալ կա։ Օ՜ն, հրավեր մը կնիկներուն, երբ նույն ատեն անոնց առջև տարօրինակը ցույցի բերվելու ձայնն ալ կլսվի։

Մայրեր քաղաքե ու գյուղերու հեռավոր անկյուններեն, եկած են, կուգան, ետևե հևիհև եկողներու անվերջ տողանցք մը տեղացի տարազներու պեսպիսությամբ, զատիկ առավոտի մը գույներն ու հանդիսավորությունները կհիշեցնե։ Ծառավետ ընդարձակ դարաստան մըն է տեղը, ուր կուգան լեցվիլ։ Այր մարդ չերևնար բնավ, արուի մը ստվերն ալ չի նշմարվիր ան հոծ էգ զանգվածին քովն ու մեջերը։ Շատ լավ հասկցված է հրավերին իմաստը։ Միայն կիներն են կանչվածները։

Պարիկը գործի վրա է, Պարիկը իր թանկագին փունջը գրկած՝ զվարթ շողեր մը կցրցքնե իր շուրջը, ամեն կողմե հպելի ու ամեն կողմե հաճելի, հրավիրող ժպիտ մը կխրկե իր աչքեն ու մեղրիկ շրթունքներեն։ Արևին ան հարազատ հասկնալի լեզվով ու բանաձևով մը կխոսի։ Մեկ մեկ առջևը կկանչե, ու կարելիորեն կարգ մը կդնե իր արարին ու անոնց մեջ, որոնցմե հավետ կարևորները կընախընտրե լսել։ Ամառի արմաղանը անոր պիտի տամ կավելցնե, վերջին անգամ, երբ այն մեկը անպայման առաքինության տերը ճանչնամ, կամ որուն ինք տեր ըլլալու ստույգ ու բարձրաբարբառ վկայությունը բերե։

Ժամանակ չանցնիր ահա, գեղի կին մը կըլլա առաջին խոսողը, որուն դեռ ճամփու փոշին ալ քիթին բերանին վրայեն չէ ստկված։

— Ես ան գեղեն կուգամ կըսե, քուրի՛կ, աքաղաղին ձենովն արթնցած՝ շատ արկար ճամփա մը քալեցի, անոր համար ուր ըսին թե՝ հոն «քընծ մեզ աղեկ» մը եկեր՝ մեզի պեսներուն մուրազը պիտի տա, երբ մենք անոր մեր ցավերը ըսելով այդ ցավերուն համբերելու ժրությունիս պատմենք։

Աստված մեկ օրդ հազար ընե, քուրի՛կ, դուն կերևի հրեշտակ մ'ես, որ աստված խրկեր է քեզ մեզի։ Ըսեմ, ըսեմ, ցավս ըսեմ,

քեզի՝ որ պիտի լսես, տերտերուս ամբողջ տեսակները բանամ։ Անտեր որբ մըն էի երբեմն, տասներեք տասնչորս տարեկան կայի չիկայի, երբ մորաքույրս՝ անոր խնամքին հանձնված՝ զիս իր կոնակին էվելի բեռը՝ դեն նետելու համար, ան մեկուն ամուսնացուց, որ բերանը ակռա չունեցող ծեր մ'էր պարզապես։ Վրայես գիշերները ինչպես կանցնեին, չէի գիտեր, ցորեկի քաշանքներուս ալ վկան ու արգահատողը դրացիները կըլլային։ Գոնե ան մեկը հարուստ հացվոր մը ըլլար, որ կուշտ հաց մը ծամեի, քուրջի կտոր մը, որ մերկություն ծածկեր, չուներ, չի տվավ, չի ցցուց բան մը, որով տարիին մեջ օր մը գոնե երեսս խնդար, պարապ, բոլորովին անհիմ կասկածներու հետևանքով գլուխիս կոտրտած թակերուն թիվն ալ չեմ կրնար ըսել։ Ջալըմ մարդ մը, որուն պես գեղին մեջ ա՛լ չիկար ուրիշ մը։ Կարճ խոսեի՝ մեռավ վերջապես, ու սակայն անկե ի վեր զիս ամեն օր բզքտողը անոր գիժ աղջիկը եղած է, որ պաղերես ու օձի արյունով մեծցած տնմնա մըն է, իմ գրողս, իմ մահս, զիս մեռցնող գլխիցավը ամեն օր, որուն ես փոխարեն չարիք ընելու խորհուրդն անգամ միտքս չեմ անցուցած, աստծու դատաստանին ապավիներ եմ, ու կսպասեմ, որ ես ալ աս ճակատագրովս հող գերեզման իջնամ։

Պարիկը.— Կցավիմ վիճակիդ, աղջի՛կս, բայց դուն չես իմ փնտռածս։

Ուրիշ գեղջկուհի մը.— Կյանքիս մեջ, քուրի՛կ, միայն մեկ զատիկի առավոտ մ'եմ խնդացեր։ Դեռ աղջիկ, դեռ հորս տունը, իմ տունս, զատկի առտու մը կարմիր խնձոր մը առի դրացիի տղայեն, որ ետևս առջևս դառնալով բաներ մը կըսեր, ես նախ չէի հասկանար, բայց հասկցա վերջապես, խոսք տվի, որ հակառակ պարագային առևանգելու կերպ մը դյուրացնե։ Ծնողքս չէին ուզեր, որ ես սեր տայի անոր, բայց ես ա՛լ սիրեր էի անգամ մը, բոզկի պես թարմ, ժիր ճահիլ մ'էր, որ հարիրներու մեջ հատ մը կհամբրվեր։ Սիրեր էի, աշխարհքն աչքիս սև սիսեռ կերևար։

Բայց ո՛վ հոգիիս հրայրքեն ու այրուցքներեն հասկնար, շատ չանցած զատեցին զիս անկե ինտոր միսն եղունկեն կզատեն։ Առջևս, ոտքերուս տակ, ու ամեն կողմերս փուշ ու տատասկ դիզեցին, ծակին մեջ մուկ մը արգիլեցին, որ զիան չընե։

Վերջը-վերջը գյուղապետին տղան եղավ ամուսինս, հիմար մը այնպես, ան աստիճան, որ չեմ կրնար ըսել։ Հավարած մը, կովարած մը, խենթ մը, որ աղի հունձք մը ընելու հիմարությունով, ցորենին տեղը աղ կցաներ հորը արտերը։ Ցավուն տարին մեռավ էրիկս, ու ալ չուզեցի, որ ուրիշ անկողնի մը վերոքը գոտի քակեմ, ճակատագրիս սոսկանքը ոսկորներուս աղդած էր։ Լքված այրի մ'եմ տարիներե ի վեր, տրտունջ չեմ ըներ ու բնավ չպիտի ընեմ, վախենալով թե՝ այնպես՝ ծնողքս կցավցնեմ. հիմա նույն հորս տունը իմ պատսպարանը կմնա, ուսկե այնպես կերևա թե՝ զիս մահը պիտի կրնա զատել։ Ու այս վիճակիս մեջ ես սիրով կհամբերեմ, մանավանդ թե ա՛լ ճերմակ պառավ մը եղած եմ։

Պարիկը.— Քեզի ալ կհամակրիմ միայն, աղջիկս, բայց դուն ալ չես իմ փնտռածս։

Քաղքենուհի մը.— Մենք երեք ներեր, ես պզտիկն եմ անոնց, ու մեծ մեծ տերտերու բույն եղած է հոգիս։ Ներվտիքս ամեն պատեհություն ձեռքերնին ըսին՝ ու միշտ կըսեն ինծի համար թե՝ տունին փեսային դեմ խնտկոտ աչքերով կերևնամ։ Պարկեշտությունս կասկածի տակ ձգեցին ու դեռ կաշխատին, որ էրիկես զատեն զիս դուրս շորս հովերուն հանձնելով, բայց աստված ալ գիտե թե անմեղ մ'եմ։ Սատանան այն մեծ ներքս է, որ աս աչքերովս տեսեր եմ թե՝ կերակուր ուտելու պահուն իմ գլխավորիս գործածած գդալը կփնտռե միշտ, անոր անձեռոցովը կսրբվի, համփուն մեջ անոր կոխած տեղը կկոխե, ու ասի շատ բան կնշանակե, որ չեմ կրնար խոստովանիլ։ Աս ցավս և ուրիշներ որ ասկե ավելին են, ուրիշներու ամենեին չեմ ուզած պատմել։ Որո՞ւ պատմեի, ի՛նչ ըսեի, վերջն ի՛նչ սպասեի, ո՛վ պիտի հավատար, երբ ըսեի թե՝ մեծ շուտիկ մըն ալ ան կեսրայրս եղած է, որ գիշերը կես եղած չեղած՝ անկողինիս քովերը կբունբունա ըսելով, թե կորսված լուցկիին տուփը կամ ջրամանն է, որ կփնտռե։ Ու այս գիշերացած սատանան, ան ատեն, որ էրիկս իր արհեստին ստիպողությունովը տունեն օրերով հեռացած կըլլա։ Թող եթե չէին հավատար, ան դուռ դրացիները վկայեին, թե ինչպես է բանը ու ես ի՛նչ համբերող առաքինությունով տարեր եմ ու կտանիմ ճակատագրիս աս թուքումուր դառնությունները։

Պարիկը.— Կհավատամ ըսածներուդ, քուրիկս, բայց դուն ալ չես փնտռածս։

Ուրիշ քաղքենուհի մը.— Ցավուն տարին, մերինին կենճ-կենճ ափուշիք ըլլալե հետո, հինգ-վեց տարիներու ամուսնացած մըն էի, չորս-հինգ պզտիկներ կճվային փեշերուս տակ, անոնց օրական հացին հոգը մինչև քիթիս ծայրը կարմիր կսկծանքներ կշիներ։ Որո՞ւ աղաչեի գեթ գարեհաց մը ձեռք ձգելու հույսով։ Ազգականներ՝

կարգվիր կըսեին, ու պզտիկներս ալ անոթի ծարավ իրենց մորը քներգովը կփակեին աչվնին։

Կարգվիր, կըսեին, որ որբերն ալ իրենց ծակտիքը գտնեն, կամ մեկ գերեզման արդեն շատ է անոնց համար։ Մտիկ չըրի սակայն։ Գեղեցիկ ալ էի, չեմ ծածկեր, միտքս կուգա, որ իմ դուրս ելլալու կամ ժողվարան երևնալու օրս, հոն երկու հոգի ավելի կաղոթեին։ Զավակներուս սերովը, միայն մոր մը զգացմունքներուն անձնատուր, առի նստա, շահեցի, տունը հարս բերի, տունեն հարսներ խրկեցի, բայց ճշմարիտ որ մեկ ցավ, մեկ մտմտուքս հազարներու վերածեցի։ Բաներ ունիմ, որ չեմ կրնար ըսել, ցավեր ունիմ, որ հետս գերեզման պիտի տանիմ վերջապես, թող ան աշխարհքն ալ մեկ ցավ պակաս կարդա ու մեկ պակաս լսե։ Հիմա, քուրի՛կ, կսպասեմ, որ կանթեղին պատրույգը հատնի, ու ես մարած ճրագի մը պես անհետանամ։

Պարիկ.— Քեզի ալ կհամակրիմ, ցաված, մա՛յր, բայց քեզի ալ չպիտի տամ արմաղանս։

Քաղքուճի մը.— Տասնուվե՛ց քսան տարի է, որ ամուսինիս երեսը չեմ տեսած, ո՛ւր գացեր է, ո՛ր ջուրեր, ո՛ր ցամաքներ, ի՛նչ դըրած է միտքը կամ ի՛նչ խղճմտությունով լվացած ձեռքերը, երդում քեզի, որ այսօր ալ չեմ գիտեր։

Տղա մը անկե մնացած մեծացած, հիմա անոր հարս մը բերելու թվականեն, անկե ալ լքված եմ։ Առանձնությունը գերեզմանս եղած է, ու դուրսի աշխարհքն ալ իր արևով, դժոխքի մը ճնշումը կզգացնե հոգիս։ Խեղճ մը, ժամերը ծանուցված խեղճ մը, ճակատագրի զոհ մը, որ կայրի, կճենճերի ու չի հատնիր։ Քահանային դիմեցի, ձայնս երկնցուցի, մինչև ուր որ կարելի էր երևակայել, ամենքն ալ համբերություն ապսպրեցին։ «Զոր աստուած զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ»։ Աս խոսքով ալ շարունակ լեզվիս վրա դրին խարանը։

Աշխարհք որ այսպես կվարվի հեք կնկան մը խշխշուքներուն հետ, դուք գութ ըրեք գոնե, քուրի՛կ, կըսեն, որ մուրազ տվող հրեշտակ մըն եք, դուք բարի եղիք խոսք մը ըսել, վերքերուս շառայլին վրա, զույգ մը ձեր ծաղիկներուն թերթերեն, բալասանի մը ազդեցությունը պիտի ընե կըսեն, գո՛ւթ ըրեք։

Պարիկ.— Սխալ հասկցեր ես իմ պաշտոնս, վշտահար մայր, քեզի արցունքս միայն, բայց ո՛չ ծաղիկս, առայժմ դուն ալ մեկ կողմ։

Քաղքուճի մը.— Ես շատ խոսված քաղքենուհի մըն եմ, մաքրասերի գովված համբավ մը ունիմ։ Տնաշեն կնկա իմ մաքրասիրությունը իմ եզական առաքինությունս եղած է ու կմնամ միշտ այն, որ իմ շուրջիններս զիս օրինակելու խելքը ընեն։ Աղվոր կհագվիմ, շատ պարզ է հագուստս, կուրծքիս մեկ մանյակ միայն, ձեռքերուս զույգ ապարանջան միայն։ Տունեն դուրս չեմ ելլար, իրիկունները էրիկս երևնալու ատեն միշտ զվարթ զգվանքով մը բարևեր եմ։ Ասոր ալ ինչ կսեիք։

Պարիկ.— Պարտականություն մըն ես կատարեր, տիկի՛ն, ուրիշ ոչի՛նչ։

Ուրիշ մը.— Շատ պատեհություն ներկայացավ ինծի ու ես երբեք անձնատուր չուզեցի ըլլալ իմ շուրջիններուս։ Ամուսինս երկու ոտքով հավ մ՚ալ չարժելով մեկ տեղ, ես նորեն փորձությունը չունեցա ան իմ քովերս թևածող որիներուն դին նայել, որոնք քիչ բան ալ չխոստացան կըսեմ։ Ոսկին համբույրի մը փոխարեն ու ադամանդ հենց ժպիտի մը գին առաջարկելու սակարկությունն ալ կդյուրացնեին։ Ըսեք թե՝ տեսակ մըն ալ առաքինություն իմինիս չէ՞ որ անդրդվելի, անտեղիտալի կմնամ մինչև այսօր։

Պարիկ.— Դուն սո՛ւտ կխոսիս, խաթո՛ւն, դուն քու վարձատրությունդ խիղճդ սպասե։

Ուրիշ մը.— Իրիցկին մըն եմ, աղջկությանս ատեն սիրուն նուռնուֆար մըն էի, կարգվելիս վերջն ալ, է՜հ, բան չի կորսնցուցի ըսեմ։ Էրիկս պարզուկ համեստագործ մը, հետո քահանա ձեռնադրեցին, բայց իրավ է, որ բանիկ չէր գիտեր, ու ասի պատճառ մնաց որ ժողովուրդին մեծը պզտիկը տերտերուկիս մորուքեն, մազերեն ամեն օր մեյմեկ թել քաշեր։

Քաշեցին, քաշքշեցին, մինչև շատ անգամ երեսներն ալ ճանկելու փորձեր ըրին։ Անիրավ մարդիկ, որ բնավ վազ չեկան իրենց հարձակումներեն։

Տերտերուկս չդիմացավ ցավին, փետտած հավ դարձուցին, ո՞րն ըսեի, քո՛ւրուկ, խեղճ մարդուկս ախր աս նախատինքներով մեռավ, զիս ետևը թողելով, որ ես ամեն օր մեռնիմ։ Բայց դուն ալ տես ու վկա եղիր, որ ես դեռ ծախելու միս ունիմ, դեռ թարմ, հերվընեկ հարս մ՚ըսել եմ, ինչո՞ւ առնեմ, նստիմ, ինչո՞ւ չի կարգվիմ անգամ մ՚ալ։ Աշխարհականը քեզ չառներ, կըսեն, ան իրիցկինը մեռած քահանան ալ մեղք կսեպե առնել, բայց ան քահանան է, որ ամեն ինծի հանդիպելուն, ժամը, ճամփան, ամեն տեղ, չեմ կրնար

ըսել թե՝ ինչպես կմոլտա ու ինտոր կքերվտի։ Վերջն ալ թա եկրամներեն ա՛խ, ա՛խ մը կքաշե։ Կհասկնամ ըսածը, շիտակն ըսելով իմ սիրտս ալ այնպես կարձագանքե, բայց արգելքն ի՛նչ ըլլար, թող խաչով պսակեին, թող եկեղեցիին մեջ ըլլար պսակը։

Նա իմ քահանա էրիկիս տեղը քանի որ զույգ ոտքերով կեցած պատարագ կընե, ծուխերուն, ծխատներուն տեր կմնա իրավամբ, ինչո՞ւ ես դուրս մնամ անորն ըլլալե։ Քիչ մը մեղքս կուգա, դեռ շատ կենմ ալ կերևի։ Բան մըն ալ ինծի ըսեք, քուրի՛կ, աստծու սիրուն ըլլա։

Պարիկ.— Ասիկա իմ գործս չէ, աղջի՛կ, քու դանգատներդ Պոլիս հայ վարդապետ մը կա կըսեն, անոր հարցուր «Հանուն օրինաց»-ի այն մեկ քանի դյուցազնիկ հառաջապահներուն, որոնք իրենց փեշերը վրա չի բերված հակասությունները այն ինչ ծայրահեղություններուն հասցնելու համար, հիմա ալ կլսվի թե՝ քահանային վերամուսնությունը արգիլող վճիռներով կքնացնին խիղճերնին։ Բայց, ինչպես ըսի, ուրիշ են քու հայտնություններդ, որոնց ես չէի կրնար միջամտիլ։

Առաքինի կինն է իմ փնտռածս, ան, որ ջինջ բարությունն է, անիկա որ կրնա խրճիթներու մութ խորություններուն մեջ ալ դրախտի համեր ըմբոշխնել տալ։ Անգամ մ՝ալ ըսեի, թե՝ հասարակ բարին կամ շրջանակներու մեջ առնված պայմանավոր բարությունը չէ, որ աբժանի պիտի ըլլա իմ գնահատությանս։

* * *

Պարիկը հարյուրներ լսեց աս շարքով, հազարներ խոստովանցուց մեկ-մեկ, երբեմն առանձին ու շատը հրապարակային հայտնություններով, բայց նա ո՛չ մեկը գտավ հարմար իր նվիրելիքին։ Փունջը ձեռքը մնաց երկար մը ու անանկ կերևար թե՝ հուսահատվելով ու զայրույթով ոտքին տակ տրորեր ձեռքինը ու միայն թուք մը ըլլար վերջին նետելիքը կին մարդերու երեսին, երբ ահա ուշի մը նստած վերջին կին մըն ալ դեմը, քիչ մը անոր մոտիկ կընե։

— Ուշ մնացեր ես, տիկի՛ն։

— Ուշ, այո՛, հիմա լսեցի։

— Ինչո՛ւ, շա՞տ զբաղված էիր։

— Տարին ի բուն զբաղված մը արդեն, քույրս, շատ մը զա-

վակներ ունիմ, երեք աղջիկ, երկուք ալ մանչեր, որ իբր իմիններս զեղուն կորովով մը սիրեր եմ։

— Երկրորդ էրկա՞ն մը։

— Երկու անգամ ամուսնացա, հրամեր եք։ Իմ ու նոր ամուսինս զավակներուն բոլորին ալ խնամքը իմ վրաս, ես միշտ սիրով կատանիմ։

— Ըսել է նոր էրիկդ առջի կնիկեն ալ ունի բաներ մը։

— Երկու աղջիկ, տղա մը անկե, մնացածը բուն իմիններս։

— Հավատա՛ թե ամենքն ալ հավասար գորովով կսիրես, մորուքի մը համար չի լսված է որ կըսես։

— Թող, կուզեք, ամուսինս զար վկայեր։

— Ան չէ փնտռվածը։

— Կուզեք, դրացիներս լսեցեք։

— Անոնք ալ կկեղծեն։

— Զավակներս, մեկիկ-մեկիկ—թող անոնք խոսին։

— Ամենեն առաջ դուն ինքդ պետք էիր ապահովցնել զիս, տիկի՛ն, շիտակն ըսե, գիշերը առաջ ո՞ր մեկուն անկողինը կծածկես, կամ ցորեկը քեզնե հաց ուզելու ատեննին, նախ որո՞ւ կկիսես, կերկնցնես պատառը։

— Որպեսզի ան ակնարկածներդ զվարթ քնանան արթննան, առտուն ալ կերած խմածներեն համ հոտ առնեն, կամ հագած կապածնին ալ չըսեն թե՝ ասեղներ կմխե իրենց կռնակը, հավատա, որ կըսեմ, թե ամեն բան, ամեն անձնվիրություն նախապես անոնց համար տրամադրելի կպահեմ, որ ջանքեր կընեմ, որ զիս իմ մեջս բուն իրենց կորուսածը տեսնեն։

— Ամուսինիդ աչքը մտնելու համար կընես այդ մարդավարությունները։

— Ամուսինս զիս կսիրե արդեն։

— Ու ան երբեք առջի կնիկը չի՞ հիշեր կամ երբեք գովեստի ակնարկներ չընե՞ր անոր հիշատակին։

— Այդ բոլորին ալ սիրով մոտիկ ըրեր եմ, ու բնավ նախանձ, ես խիղճիս հետևած եմ։ Ես ամենեին պայման, փոխարեն հենակ չեմ դրած զգացումներուս, որ ունիմ, կպահեմ ինչպես ինծմե ծընվածներուն, նույնքան ու ավելի ալ թերևս, իմ նախորդիս արգանդեն իջածներուն համար։ Ան օրը երբեք հանգիստ չեմ զգա ես զիս, երբ անոնց մեկը կամ մյուսը քիչ մը տրտում, կամ չեն գիտեր ինչպես պատեն իվեր քնուկ ինկած կտեսնեմ։ Կուրնա այն աչքը, որ

միայն ինքզինք կտեսնե, փրթի այն ձեռքը, որ միայն իր բերանը կերկննա։

— Օ՜ն, ուրեմն, մեծ մա՛յր, առաջ եկուր, խնդրեմ, օ՜ն, ալ վայրկյան մըն ալ մի՛ տնտնար, քեզի պիտի ըլլա ասիկա, արմաղանիս ամբողջը, ամենքը չի մեռնող ծաղիկներ, մշտաբույր անմեռուկներ, համարձակ պարզե թևերդ, որ քեզի տամ միայն, պատիվ քեզի, որ հազարներու մեջեն դուրս եկած՝ դուն միայն հռչակվեցար արժանավորը իմ թանկագին հավաքույթիս։

Բեր որ նույն ատեն ճակատդ ալ համբուրեի ու ըսեի իմ մեծ քրոջս՝ արևին, որ ասկե վերջը իր առաջին շողերը կանուխ առավոտով քու տանիքիդ վրա խրկեր միայն։

1908

ԸՍԵ՛ ԻՆԾԻ, Ի՛ՆՉ ԿԱ

(Մորս ճիշատակին)

Դրացի աքաղաղներուն գիշերավերջի հոգնած ու խրոպոտ ճիչերեն հետո կսպասեր ձայն մըն ալ ան կողմեն լսել, ուրկե լայնկեկ տանիքի մը ծայրը՝ մարմար խաչ մը կշեշտվի մանուկ հասակի մը ճերմակ ու թևաբաց մերկության մեջ։ Սպասված այն ձայնն ալ ինք կլսեր ամենեն առաջ. այն կողմեն մեր ականջը բան մը չէր հասներ, մենք կքնանայինք տակավին, մենք կուզեինք, որ դեռ քիչ մըն ալ երկննա գիշերը մեր թարթիչներուն վրա։

Կանուխ եկեղեցի կիջնար, կանուխ՝ շատ անգամ տ. Հակոբեն ալ առաջ, եթե իր աղջիկ թոռնիկները պզտիկ, ցորեկի իրենց խաղերուն ատենը, իր գլխուն շալն ու կոշիկները հոս հոն նետած ու հեռացուցած չըլլային բնավ, որ շատ ուշ կգտնվեին, ու ինք երբեմն շատ ալ նեղսիրտ դժվարանքներով կժողվեր պզտիկներուն այն ցանած ցրվածները, որ միշտ իրենը կըլլային. ու անոնք ուրիշ ատեններ ալ համարձակ ձեռքերով իրեն վերաբերածները կառնեին գործածել, երբ պետք ունենային, կամ հաճախ անանկ ատեններ, որ ժամ կամ բաղնիք գացող կնկան մը ձևը ուզեին ներկայացնել

Այտին*, շալն ու չիթերը վրանին առած։ Այս փնտռտուքներով կուշանար երբեմն ու քնացող ան պզտիկ ստահակներուն հասցեին բաներ մը դրդրալով մեկտեղ՝ ատ իսկ պահուն նորեն անոնց անկողիններուն կողմը ձեռք մը կերկնցներ, բացվածք մը կծածկեր ու ճամփա կիյնար։ Այս սովորությունը միշտ դեպի եկեղեցի, ու այսչափ կանուխ, գեղեն բերած էր օր մը ու քաղքին մեջ ալ պահել չէր մոռնար նույնիսկ, եթե ան առավոտը կանուխ՝ երկինքեն երկիր ալ փըլած «արքայության» մը գուժը լսեր։

Ան ատեն, ուր ինք արդեն հեռացած կըլլար դեպի աղոթարան, ես ու իմիններս բոլոր, որ իրենն ալ էին, ան հավատքը ունեինք թե՝ նա հարկավ մեր կողմեն ալ կաղոթե, կամ իր առաջին աղոթքը անպատճառ իր տունին կամ տնեցիներուն համար, արևշատ կյանքի մը խնդրանքովը կվերջացնե՝ կըսեինք, մենք դեռ քիչ մըն ալ կքնանայինք։

Բայց՝ պահե մը վերջ ահա, ժամեն դարձած՝ ալ հեշտ չէինք կրնար տեր մնալ մեր բարձերուն, ցասկոտ մեղադրանքներ մը կթափեր վրանիս, որ ատեն ես զիս իմ հինգ-վեց տարեկանի վախերուս մեջ կզգայի, որ մորս սաստող ձայնը կփշրվեր ականջիս մեջ, «Մարդ մը, որ իր օրը աղոթքով չսկսի, կըսեր, ինչո՞ւ կուգա, ի՞նչ բանի կհուսա տիրանալ ա՛ն օրը, ա՛ն ցորեկը ու ամբողջ կյանքին մեջ»։

Ցավ կըներ ու միշտ անոր համար մասնավորապես, որ պզտիկներն իրեն գլուխը ծռելու ծույլի անտարբերություններ կցուցնեին, աղոթք չէին ըներ, ու կվախնար կարծես, որ մեր տունեն ու մեզնե բոլորես քեն ընող աստծո մը վրեժխնդիր բարկության դեմ մնանք օր մը չէ օր մը։

Բայց վստահ էի, թե ինք անտարակույս մեր ամբարիշտ թերացումներուն համար ալ իր աստվածին գթությունը խնդրելու սուրբ մ'ավելի բարեխոս անկեղծությունը ունի՝ այնպես ու այն տեսակ մաքուր հոգիով մը, որուն պես մայր մը կունենա վստահաբար, մայր մը՝ իմ պաշտելի մորս անձնվիրությունով, որ իր զավկին բաժին հանված դժոխքը, բոլոր իր արհավիրքներուն ամբողջությամբը, սիրով պիտի ուզեր, որ իրեն վիճակված երջանիկ հավիտենականության մը հետ փոխեր անմիջապես։

Անոր անձնվիրության չափը այլապես չէի կրնար բացատրել ու ըսի, որ նա արդեն իր ողջ կարծված կյանքին մեջ ալ շատ ապա-

* Պզտիկները աս անունով կկանչեին զինք։

ցույցներ տվավ թե՝ ինք իր զավակներուն սիրուն համար քանի-երեսուն տարիներ առաջ արդեն սկսած էր մեռնիլ ու վերջապես հինգ-վեց ամիս առաջ ալ բոլորովին փակեց իր աչքերը հոգնած, հատած իր վերջին ուժերուն անէացումովը։

Հիմա հինգ-վեց ամիս եղավ, որ ալ չեմ տեսներ զինքը, բայց անկե ի վեր վայրկյան մըն ալ չեմ մոռցեր զինքը, չեմ մոռցեր ոչ իսկ մեկ վանկը իր մեղրիկ բառերուն. իր աղոթքին բանաձևն ալ միտքս է։ Այս աղոթքը պզտիկ Զավենիս սորվեցնելու ջանք մը կըներ ան ատեն, ուր անոր ու մյուսներուն համար իր գիտցածներեն սիրունիկ հեքիաթ մը կվերջացներ։

Մորս աղոթքն ալ կհիշեմ, այո՛, ինչպես անոր անձայն առաքինությունները կհիշեի, որոնց միայն մեկուն պատմությունը, օր մը, այնքան եզական ու լուսավոր վկայություն մը պիտի մշտնջենավորեր թե՝ գեղի Հայ կինն ալ ինչ ունի երբեմն, որ աշխարհը չգիտեր, աշխարհը տակավին հասկցած չըլլար անոր այն բյուրեղիկ հայացքեն ու բարությունեն, որ կմտածես թե՝ անկասկած՝ ավուր կրոնքեն ու ներշնչումներեն ալ շատ առաջ տեղ առած ըլլան անոր հստակ ու ջինջ խորքը կուրծքին, որ դուրսեն շատ անգամ սևաներկ քուրջերու կտորվանքներով ծածկված է։

«Տե՛ր, բարի՛ լոս, բարի՛ Քրիստոս, շարը տանիս, բարին բերես, աշխարհի խաղաղություն, թագավորաց հաշտություն պարգևես։ Դուն կամի կարողն ես (կամք ընող ու կրցողն ես), աստված, կապուտիկ աստված, կարճ գիշեր, երկայն ցորեկ, կարճ լաց, երկայն խնդուք, կարճ նեղություն, երկայն հանգիստ, կարճ աղքատություն, երկայն վայելք, դուն ի՞նչ բանի կարող չես, որ չի տաս։ Լեռները քեզնե կգողան, եթկինք, գետինք քու ահեդ կսասանին, բարի՛ լոս, բարի՛ Քրիստոս, քու լոս երեսիդ զուրպան, հավատոքս հավատամք քեզի, երեսանկյալ կերկրպագեմ, զավակներուս հոգուն առողջություն, բանին, գործերուն ալ հաջողություն տուր, մուխեններին մուխթաջ չընես, ինծի ալ բարի մահ մը ու ջեն արքայություն մը պարգևես, մեր մեղքերովը մի պատժեր, մեր ննջեցյալներուն հոգեստրնուն համար ալ մեր աղոթքն ու խնդրվածքը մի՛ մերժեր, քեզի ինք ապավիներ Տե՛ր, բարի՛ լոս, բարի՛ աստված, և այլն, և այլն...»։

Ու վերջին մքն ալ իր երեսը խաչակնքելով «Հայր մերը» վերջին ըսելիքը կպահեր ու լմնցած կըլլար աղոթքը։

Անկե վերջ, պզտիկներն իր բոլորտիքը առած՝ երբ ժամեն կը-

պառնար, պզտիկներուն միշտ, որովհետև ես ա՛լ ձանձրացեր էի լսելե, իր անպատճառ գիշերվան տեսած երազները պիտի պատմեր, երազներ, որոնք մեկնել, բացատրելու համար իր շատ վստահ ու խորհրդավոր կերպերն ուներ, որ կըսեր թե՝ իր ճիշտ համոզումներուն ու փորձառությյան վրա հիմնված են։ Այնպես նախապաշարվեր էր թե՝ լուսադեմի երազներն առհասարակ ուշ կամ կանուխ որևէ կերպով իրականություններ կիսի դառնային։ Ամեն օր ալ ասա էր ըսածը, ու կամաց-կամաց, ես ալ ան օրվան պատահելիքեն նախապես բան մը հասկցած ըլլալու համար, իմ նույնիսկ չուզելովս ալ սովորություն ըրած էի գաղտուկ մը իր երեսին նայիլ, ուր եթե զվարթ ժպիտ մը նշմարեի, ինչ որ ստույգ նշանը պիտի ըլլար, ան գիշերվան գեղեցիկ երազին, ես ալ թեթև ոտքով մը գործիս կերթայի հակառակ պարագային իմ բերանս ալ չէր բացվեր կարծես։

Զիս ալ այնչափ պաշարեր էր իր երազներուն պեսպիսության վրա, նույն ատեն ճշմարիտ որ ամբողջ տունեցիները նախապաշարեր էր։

«Կարմիր ձին մը հեծված որևէ մեկերնես, գեղեցիկ բախտի մը մոտավորությունը կցուցնե, կըսեր, աղը՝ սրտի կսկծանք, եղը թափված հագուստի վրա՝ գեղ բան, հաց եփել, ճերմակ, կրսկուռ հաց ունենալ տունը՝ վերահաս հաջողության հավաստիք, պատարագ, քահանա՝ կոիվ, աղմուկ տունին մեջ, հարսնիք, թմբուկ՝ տունին մեջ մահ անպատճառ, ակառ քաշված կամ փրթած անցավ՝ կորուստ ազգականի, էգիին մեջ ծառ՝ ծաղիկ ու վազք ջուրի՝ բարի երազ և այլն...»։

Նախապաշարում թե ինչ մը, շատ անգամ իրավ է, որ ան երազներուն մեկ կամ մյուսը իրականացած տեսնելու ձախավեր անակնկալը կըլլար լացածնիս աղվոր տեսիլքի մը ետևեն սպասվածն ալ շատ քիչ պատահական կամ շատ ուշ կուգար վերջապես սմսեղ խնծիլ մը ծնցնել դեմքերու վրա։

Հետաքրքրական մքն ալ ան՝ որ գեղը, երբ թողած էր ու ալ քովերնիս քաղքենուհի մը կապրեր, այնքան երկար տարիներ անցնելե վերջն ալ իր բոլոր երազներուն հատակն ու ամբողջ ձույլը՝ գեղը կպահեր շարունակ։ Գեղը՝ իր էգիին ծառներուն հետ, գեղը՝ իր քալած ու քաղած դաշտերուն մեջ, գեղը, միշտ գեղը, ուր անպատճառ գիշերը պիտի ճամփոթդեր թևերովը իր երազներուն, ու

կանուխ լուսաբացին ալ անկե դարձած ականատեսի մը սփոյդ մանրամասնությունովը պիտի պատմեր բաները։

Հոն, այնինչ կողմ, այնինչ կանանչ առվակը նույն կմնա եղեր, որ ցամքած չէ տակավին, գեղին մեջտեղը Փիլոյենց խաչը (ուխտատեղի) ավերակներու տակ խեղդված, ս. Դավթի ալ գեղեն դուրս՝ լքված ուխտատեղի մը մնալը կողբար։ Այսպես իր կարգին Կարմիր եկեղեցիին վրա կըսեր բաներ մը, անոր մոտերը այն պատմական Ավագը տեսած կըլլար, որ աղբյուրի աղջկան հեքիաթը գիտե։

Աղբյուրի այն սիրուն պայիկը պիտի գրեմ ուրիշ անգամ, թե ինչպես ան Թլկատինցի աղջիկներեն տոնված նահատակուհի մը կմնա ամեն տարի տափի ու ծափի աղմուկներով։

Գիշերվան մը ճամփորդությունով դեպի գեղը, անկե անվերջ, բայց շատ շահեկան հուշքեր մը կբերեր, որոնց սկիզբը մինչև իր հարսնության օրերու երջանիկ առավոտը կըլլար։ Առավոտը զատիկին, որ ատեն իր գյուղացի կնկան մը զարդեղեններուն պեսպիսությունովը գեղեցկացած՝ թուչկոտ վազքով մը զատիկի պարին կերթար ու անպատճառ ինք պիտի ըլլար պարերգին առաջնորդող երգիչը։ Իր ձայնին, այնքան զմայլելի իր ձայնին հմայքով, երբ քըներգ մը կամ պարերգ մը կըլլար սկսածը, ըսածը, օձերն ալ նույն ատեն իրենց ծակերեն դուրս՝ մտիկ ընելու կելլային։

* * *

Մա՛յր, բոլոր ասոնք ու աս պատմածներուդ ամենահետին մանրամասնություններն ալ միտքս են տակավին, որոնք տունին պըզտիկներն ալ չեն մոռցեր ու անոնք մեկ-մեկ սորվեցուցած աղոթքիդ պես կհիշեն, բայց՝ քանի որ կըսեմ, միայն գիշեր մը ճամփորդելով, այնքան մը տեղեկություններ կբերեին գեղեն, որ այնքան հեռու կմնար մեզմե, հիմա ալ պահ մը վեր ա՛ռ գլուխդ ու ըսե՛ ինծի, ի՞նչ կա անդին։— Ի՞նչ ունիս գերեզմանեն, որ հունա այնքան ալ մեր մոտը կգտնվի։ Ըսե՛, Մայր, վստահ եղիր, որ չպիտի մերժեմ լսել, երբեք չպիտի ձանձրանամ ըսելիքներեդ։ Երազներուդ պես արդյոք գերեզմանեն անդիններն ալ նորեն ճշմարիտ իրականություններ՞ պիտի հուշակես, թե բացարձակ ոչնչություն պիտի ըսես պարզապես։ Հարցուկի մը պատկառոտ սարսռանքներուն մեջ ու միշտ անհուն կարևորությունով մը պիտի լսեի քեզ, Մա՛յր, ո՞րն է երազը, աս արևի՞նը, թե վազվան ստվերներուն կյանքը, որուն դուն ամիսներե ի վեր սկսվածքն ըրեր՝ դեռ մեզի բան չես ապսպրած,

մեզ հուսահատ սպասանքի մը մեջ սգավորներ կպահես, բայց դուն այսչափ երկար չէիր քնանար, Մա՛յր, դուն աքաղաղին ճիչովը ընդոստ արթնցող մը, հիմա ամպերը կպոռան ականջիդ ու բնավ չես շարժիր, վեր չես առներ գլուխդ, աղոթքի չես վազեր, երազներդ իրականություն թե ինչ, չես հայտներ մեզի... ու կզարմանամ թե՝ ինչպե՞ս կրնաս համբերել։

Այսչափ երկար ու խորունկ քուն քնանալով, մինչև հիմա աշխարհք մը ըսելիք կկախեիր շրթունքեդ. թզուկ գիշերի մը կյանքեն ամենքն ալ, հիմա ի՞նչ պիտի կրնայիր խոսիլ ան մեծ գիշերին էղքեն, անոր սոսկալի ու խավարակուլ ալքերեն, ուր մտար ու մարեցիր ճրագը ետևեդ։

Առաջին օրը ինչպե՞ս ճամփորդեցիր, որո՞ւ հանդիպեցար, ո՞ւր ըրիր հանգիստի վայրկենային դադարդ, դուն, որ արդեն շունչեդ կկանչեիր։

Այն պահուն, ուր հողն ու քարը բուռ-բուռ քու մարմինդ խփող սնոտուկին վրա թափվելով՝ գոռ թնդյուն մը կլեցներ գերեզմանդ, ի՞նչ խորհեցար արդյոք, հեք Մայր, մեղավոր հնդկուհի՞ մը կթաղեն ըսիր, թե՝ մարդիկ մահվան վրեժը կառնեն այնպես հողին տակ քեզ՝ քու մարմինդ ծեծելով։

Դուն սակայն զգացի՞ր անոնք, անդրադարձա՞ր այն եղածներուն, երդում քեզի, որ ես ավազահատ մըն ալ չնետեցի վրադ, այդպես թող ձեռքս փրթեր, Մայր, թող այդ տեսակ հիմար սովորության մը համակերպությունով աջ ձեռքես, աջ աչքես զրկվեի։ Քարերը, հողերը քու կուրծքիդ նետված, իմ դլխուս կիյնային արդեն, գերեզմանիդ քովեն դեպի տուն ես արդեն ճշմարիտ մեռել մը դարձա։ Առաջին մուտքը դժվար քայլափոխ մըն է եղեր կըսեն, հոգիս աս կողմեն այն կողմը սավառնող հրեշտակներն ալ անխուսափելի այդ դժվարություններեն պիտի անցնին եղեր անպատճառ, հոգ մի՛ ըներ։ Դուն միայն հիմա ըսելու եղիր թե՝ ի՛նչ տեսար այդ մուտքի դուռնեն անդին, գտա՞ր, համբուրեցի՞ր այն քուկիններդ, որոնց կըփափաղեիր հենց թերաստվերը տեսնել։

Հայրս ո՞ւր կմնար արդյոք, չտե՞սար, չի բարևեցի՞ր, չսի՞ր, թե երեսիս վրա իր զարկած ապտակներուն տեղը հիմա աղբեկ մորուք մը կշփե տղադ, ան ատեն, որ անել ու թընճկոտ խորհուրդ մը կճմռթկե իր միտքին մեջ։

Ես ալ ո՞ր ճամփով գայի, որ շիտակ քեզի հասնեի, հոն ալ մեկտեղ ապրեինք. առանց քու ներկայությանդ, ինծի համար այդ լույ-

սերու աշխարհն ալ տրտում դատարկություն մըն է հայտնապես, ինչպես հոս քեզ կորսնցնելես ի վեր դժոխքի մը ցավերն ունիմ հոգիս մեջ։ Միայն քեզի կհավատամ, Մայր, պահ մը վեր ա՛ռ գլուխդ ու բա՛ռ, կարճ բա՛ռ, հենց ակնարկով մը հասկցուր, թե ի՞նչ կա անդին։ Միայն քու բաածներուդ անձնատուր պիտի մնամ, Մա՛յր։

1908

Ա՜խ, ԱՍՏՎԱ՜Ծ, ԱՍՏՎԱ՜Ծ

«Թագավորն ի՛նչպես, Մամի՛, թագավորն ալ մա՞րդ է մեզի պես, ու ի՛նչպես, ան այլ հաց, ապուր կուտե՞, ջուր կխմե՞, բնակած տունն ալ ի՛նչչափ մեծ ու աղվոր արդյոք»։

Հարցումներ միշտ, այս կարգի տղա հարցումներ մը մեզնե։ Մեկը կթողնեինք, մյուսին կվազեինք, բայց շատ ավելի թագավոր Ադրալի մը առասպելական ապրելակերպն էր մեր երեք պզտիկներուս ալ մինչև մազերուն ծայրը հետաքրքրող պարագան։

Դրացի Մամիկը, քիչ մը մեջի ազդական ալ, ձմեռ երկար գիշերները, շատ լավ էր հասկցեր երեք փոքրիկներու սեղմ մը իր փեշերուն կապերու գաղտնիքը։ Նա ամեն իրիկուն նոր, պզպզուն ծրար մը կբանար մեզի, որ մենք երեկինեն քիչ մը արագ ու խանդավառ սիրով մը վերջացնենք մեզի բաժին հանած աշխատությունը։

Գիշերը կես չեղած տակավին, խճեճի ահագին բլուր մը կլմնցնեինք։ Մամին երբեմն, թեև ուրիշ դրացի փոքրիկներ ալ կուենեար մեզի հետ, բայց երեք եղբայրներ անոնց հինգին, տասին չափ գործ կտեսնայինք մենք, որովհետև հոգիի սերով մը կաշխատեինք. անոնք մինչդեռ մի որևէ բանի փոխարենով կուգային Մամիին ծառայություն մը ընել։ Տարիքն առած, բայց շատ ժիր կնկուկ մը աս Մամին, որ ինք մինակը սա չափ սեփական հող մը կմշակեր, հարուստ էր, իր մեծ դժբախտությունը այն, որ իր բոլոր գործերը ուրիշներու ձեռքով պիտի կատարվեին, իր կենճ-կենճ տղաքը, իր կակաչ կարմիր հարսները ամենքն ալ հուրն ու ջուրը տարեր, ինքն անոնց ետևեն մինչև կես մեջքով գերեզման թաղվողն էր, որ ոչչ իմնար տակավին։ Օր մը ես ալ մեռնեի ու խալբսեի աս տերտերենս. ես քար կապա եմ խածեր՝ կբսեր, բայց մեր ինչուն պետք, որ անոր տերտին տեսակներն ուզեինք գիտնալ։ Մերը այն ծրարները, Մամիին՝ սիրունիկ հեքիաթները, որոնց մեկուն կամ մյուսին մեջ աղվոր բաներ մը կելլային անպատճառ, աղջիկ մը, որ արևին հետ կմրցի, ան հովիվ տղան, որ կընե չըներ, թագավորին փեսա կելլար, այն մյուսը, որ դեպի արևելք երկար ճանապարհորդություն մը կընե, Արևին իր ցավերը պատմելով՝ անկե դարման կխնդրե ու կհաջողի ալ։ Մեր ուզածներն ահա, որ նույն ատեն կսիրեինք հավատալ թե՝ ամենքն ալ ապրված ստույգ իրականություններ են։ Մամին ալ արդեն մեզմե ուրիշ կերպ չէր սպասեր։

Ուրիշ կերպ չէր սպասեր, իրավ է, բայց ըսի, թե մեր երեքներուս ալ ուզածը ու շատ փնտռածը թագավորի մը ինչպեսն ու իրականությունն էր ավելի։ Մենք կսիրեինք ավելի, որ նա իր մեղր ու շաքար «կար ու չիկարին» ետևեն անպատճառ սանկ սյուսլի ապթանաթլի փառավոր ծիրանազգեաց մը դուրս բերե, թագավոր մը, որ մեր ալ խելքին պառկեր ու մոտերնիս անմիջապես իրականություն մը շոշափեինք, աչքերով քիչ մըն ալ անոր պոյ պոսը տեսնայինք։

Թագավոր մը, որ իր տղան կարգելու համար քառասուն օր ու քառասուն գիշեր հարսնիք բռնել կուտա, էժտեհերի պես ձիերով կպտտի, ինք ու իրենները ոսկի կհագնին ու մեկ կտորե շողուն ադամանդով մը տունի մեջ կբնակին։

Անհուն զորություն մը ունի ան, հենց որ մորուքը չանչե, լեռները ոտքի կելլան ու քաղաքներու վրա կիյնան, միայն շրթունք մը շարժելով կրնա աշխարհքը կործանել։ Ու մենք՝ պզտիկներս, անգամ մըն ալ կկրկնեինք մեր հարցումները, ան ալ մա՞րդ է մեզի պես, Մամի՛, ճիշտ մեզի պես քիթ, բերա՞ն ունի։

Դրացի կնկուկը, իրիկուն մը, ալ կերևա լմնցած տեսնելով խճեճին դեզը, որուն մենք վերջին հատն ալ բամբակի վերածեր էինք, կամ կերևա մեր հարցումներուն կարճ խոսքով վերջ մը բերելու համար, «Է՜հ, ի՛նչ գիտնամ, ըսավ, օղո՛ւլ, ես ալ մեկեն տեսե՞ր եմ մի թագավորը, թագավոր մը վո՞վ տեսած կելլի, ան մարդու չերվար, էրվա ալ, մարդ անոր երեսին չիշխեր հայելու, հապա օր մը դուն...

— Հա՛, ես նորեն կբսեմ այնպես, ան ալ մեր գեղին պզտիկ թագավորը ըսել է, չե՞ք տեսնար, անոր ալ հենց հովը աշխարհք կշրջե, ան ինչ հրաման որ ընե, անիսեթ կատարվի պիտի, հենց ըզունկին երեսը կգրե ու կելլին բաները, թուր թֆենկ ունի, իրենն է գեղը, գեղին հողն ու ջուրն ալ իրենն է, մենք ամենքս ալ ծառաները

անոր— ո՞ր բերնի ընկեր է, որ անոր առաջքը բերան բանա կամ ան խոսք մը ըսե ու մեկը թերս պատասխան մը տա անոր։ Ան իր մարդերով գիշերն ալ մեր դռներուն առաջքը կերևա, ու շատ հեղ ալ երդիքներուն վրայեն կանցնին, ես աս աչքերովս քանի-քանի՞ անգամ տեսեր եմ, հանդիպեր եմ անոր, որ գլուխը շիշ սիվրի քնե մը, վրան ալ գայլի փոստ մը առած կպտտի, ոտքեն գլուխը փիր սիլա ու կրակ, կրակ ամենքը։ Հասկցա՞ք մի, տղաքս իմ գիտցածս այսչափ միայն, դուք միայն թե՝ խելոք եղեք, անոր խոնախին առջևեն շատ մի անցնիք, անցնիք ալ նե, աչվընիդ շատ փենճերեները մի ձգեք, ես ձեզի կըսեմ, որ դուք անոր դռան շուներուն ու շանձագտոց պիլե քար քեսեկ մի՛ նետեք, ձեր անիսեթ մուժմեհել կընեն»։

Ան իրիկունն ահա Մամին ինչ հրաշեկ անուր մը կանցնե մեր շլիքին, ու մենք վայրկյան մը իր ըսածներուն վերջինին շեշտովը ինչ մութ բարդ խոհերով մեր հոգիին խափանվիլը կզդանք ու ալ չենք իշխեր անգամ շունչ հանել։

Մամին մատնանշած այն զալըմ շահապը, գեղին մեծ Աղան, որ հունա այնքան ալ մեր մոտը կապրի ու մենք երեք պզտիկներ ալ ամեն մանրամասնություններով կհասկնայինք թե՝ ով պիտի ըլլա ան, որուն մեկ հրամանն ալ լեռները կդողացնե։

Ան իրիկունը ավելի սոսկալի հայտնություն մը, երբ այս կնիկը հանկարծ վեր կելլա տեղեն ու իր սև գոգնոցին տակեն ծրար մը քակելով, մեջեն արյունի լայն լերդ ցայտքերով կետկիտված շապիկ մը կքաշե, կնետե առջևնիս, ու առանց խոսելու վայրկյան մը շեշտ մեր երեսին կնայի,— աս ի՞նչ, Մամի՛, ա՛ս ինչ ըլլի, կծեքծեքեմ ես աչքերս այն շապիկին վրա լայնցնելով,— Դեհ, գացե՛ք տե հասկցեք, կըսե, տղաքս, գացեք տե դուք ըլ էն անօրենին մարիֆեթը հասկցեք։ Էն աղան ըսպանեց, գլխավորիս շապիկն է աս, երսուն տարի է, որ հուքումեթը կտանիմ, աչքերնին կկոխեմ էս շապիկը, էս արյունով, ու նորեն օգուտ չերաց ու չիներ։ Ու վերջին խոսքը, որ այս դժբախտ այրին արին արցունքի մը մեջ կհեծծե, դեռ մինչև հիմա ալ միտքս կմնա ու չեմ մոռցեր—«Ախ, աստված, աստված, վաղը էս շապիկը պիտի հագնիմ գամ դեմդ, ան ատեն տեսնամ թե՝ դո՞ւն ալ կույր պիտի մնաս էն փաշին ու էն անօրեն դատավորին պես»։

1909

ՏՈՒՆ ԴԱՐՁԸ

Դեպի ներս, դեպի ներս, պահ մըն ալ ծունկ-ծունկի ամփոփուկ կյանքը հոն, ուր առաջին ծիծեռնիկին դարձեն ի վեր անցան մեղվընտիթակի մը տրտում պարապությունը կա, կամ ամայություն։ այնպես, ուր մարդ իր շունչին հետ վայրկյան մըն ալ իր ականջին խորքեն կոտրտած կիթառի ձայն մը, խղվրտյուն մը կլսե։

Դեպի ներս, ու վերջ մը տվեք այն հեղձ ու ցավագին թնծկանքներուն, որ ձեր տունին ստվերոտ անկյուններեն կերկննան։ Սարդ այն տեղերուն վրա պատեհություն գտեր ու հեք ճանճերուն վրա իր հաջողությունը կըմբոշխնե։ Դեպի ներս, ուր ծղրիթներն այնքան մեծ բաղմությունով— մրջյուններեն շատ ու շամբուտին գորտերուն չափ ալ անհարկի ու խլացուցիչ իրենց ժխորովը ձեր բրշակը փլան ավերակի մը երևույթին մեջ դրած են։ Ներսը մեզի կսպասեր ծերուկ մայրը, որ ամբողջ օրը ձեր դարձին կարոտովը աղոթեց, հորանջեց ու հետո երեսը պատն ի վեր ու պատին կպցուցած, հուսահատ մրափը անցուց, արթննալուն, երդիկին արևին հայեցավ մեյ մ՝ ու անգամ մըն ալ ու էն վերջը տանիքն ելած՝ ցվիքին եզերքը՝ ձեր գալիք ճամփան դիտեց անձկոտ։

Դեպի ներսը, դաշտի հեռավոր ծայրերեն ժողովված ու տղմուտ վտակներու ծանծաղ ափերեն անցած։ Ներսը, ներսի հանգիստ, փակ կյանքը պահ մըն ալ, կապելով ու մոռնալով վերքերը, որ մանգաղն ու փուշ-փուշ խոզիթուկները տվին ձեզի, ան ատեն, որ կանուխ դաշտ կվազեիք ուն մը ավելի հնձելու աճապարանքով։ Վերջին կեռնեխն ու կատարահավը գացեր են, ու դուք դուրսը կմնաք։ Ներսը ու դեռ քիչ մըն ալ եթե տնտնալ ուզեք դաշտին երեսը, մեռած արտին ու կոխկրտված հնձաններուն քովերը, ուր ալ ոչինչ չմնաց ընելիք, կասկածելի էր, որ հոն ան տեղանքը գիժ գայլերու հանդիպիք, աղվեսին ու նապաստակին ստվերներն ու թերաստվերներն անգամ ճերմակ ձյունին վրա խոլ, շորժող սևեր մը ձգած՝ սոսկում դնեին ձեր սիրտը։ Ա՛լ ձմեռ է։

Ալ ձմեռ է, ձյունը Մաստառեն ու Զաղարի կատարներեն կամաց-կամաց դաշտը կիջնե ահա, որ մեռած մրշած ինչ-որ կար հոս ու ինչ-որ կերևար հունտ երբեմն աչքառու հեռապատկերի մը վրա, անոնք ալ ծածկե, անհուն, անծիր պատանքի մը արհավիրքը ցուցադրելով։

Ատեն մը դադար տայիք հևքերու և խոնջածի ձեր մուխ ծուխ

փոնչումներուն, որ կհասկցվեր թե՝ ձեր պղնձի լայն կուրծքերեն դուրս կուտայիք։ Բայց ալ ատոնց ատենը չէր հիմա, ձմեռ է, քըրտ՛նքնիդ սրբեցեք կամաց մը ու առլի, գոհունակ շունչ մը քաշեցեք, քո՛ւ քովի տաքուկ տումին բոլորտիքը շարված։

Տունդարձ, դեպի ներստանքը, տարվան աստծուն արևն ու անձրևները ձեզի աղվոր, առատ բարիքներ ընձեռեցին, անոնցմե ձեր դուները աշխատող մշակներուն իրենց բաժինները տվեք, անցորդին ու աղքատին տվեք, գեղերեցին ու ժամուն տվեք, կայսերինը կայսեր, աստծունն ալ սա որբ լամուկներուն հանձնեցեք, որ ուզակի տեղ տանին հասցնեն։

Ու դեռ պիտի ըսեմ, ափ մը բան ալ ցվքին եզերքները կծկտող ճնճղուկներուն առաջը նետեցեք, անոնք ալ մեղք էին, «Ոչ կվարեն, ոչ կցանեն, ոչ ալ կալսել գիտեն»։ Ձեզի պես մտմտուք ալ չունին, երբ անոթնան, ցվքին ավազահատերը կկրկտեն։ Դուք քիչ մըն ալ այն ճնճղուկներուն տվեք։

Նե՛րս եկեք, խծկեցեք ձեր բրշակին հովանց ծակտիքը, դուռը միշտ փակ պահեցեք, որ հավն ու հավնագը ներս չի վազեն։ Պառավն արդեն շատ էր անոնց համար։

Գինին կթղան, կոտիկը առջևիդ առեք, քիչ մըն ալ զվարթ կատակները դրեք մեջտեղ։ Ըսեք թե՝ ինչպես օր մը, մեծ ուրական մը անցավ դիմացի Զելեմլիկի լեռնեն, ուր պահ մը ետքը ջուր տարուփ մը սկսավ իջնել, հեղեղ մը փրթավ, Կարմրցոց էգիները ավըրվեցան։ Խենթի մը ըրածը ատ ատեն, չէ՞իք հիշեր, որ գեղին ջոջերեն մեկը, Պիպի Հարոն, ինչպես հիմար վարանքի մը մեջ, գըլխուն գտակը նետեց հոսանքին առջև, որ ընթացքը ծռե իր էգիին քովէրեն գոնե հեռո անցնի. քիչ վերջը սակայն իրքն ալ, տղան ալ ու վարերը արծող իր ճեյրան եզներն ալ՝ ջուրին երեսը՝ վերի թըռչուններուն թև փետուր կաղաղակեին։

Ինքը՝ Պիպին ազատվեցավ թեև, բայց այդ դեպքեն վերջը, երբ իրե՛ պատահել անջուր առուե մ՛էկ անցնիլ. աչքը պիտի կապեին։

Ատեն կանցնի, գեղին ստահակ տղաքը, երբ Պիպի Հարոն տեսնեին, որ տեղ մը կեցած է առանձին կամ երկու երեքներու հետ, ջո՛ւր, ջո՛ւր, ջո՛ւր կպոռային, զոր լսելու ատենը, Պիպին ոտվրնեբուն բութ մատներուն վրա՝ Թութիկան կհասներ։ Դուք ուրիշ մը չպիտի՞ կրնայիք ըսել։

Դեպի ներս, թոնիրին բոլորտիքը ու տախտերուն վրա, ձեզի ի՞նչ չկար ըսելիք, խոսելիք։ Դաշտին ամեն մեկ կետը ձեզի համար պատմություն մըն է։ Հոն օր մը ձեր սիրած աղջկան ճամփուն նայած եք, որ չի դառնար, ուրիշ օր մը, բարևի խնձոր մը ղրկեցիք ու մերժում լսեցիք։ Կարոն այն փուլին վրայեն առևանգեց, փախցուց իր անուշ Նունուն։

Ա՛լ ձմեռ է, նե՛րս, դեպի նե՛րս, ու գինին առատ, ամբարները լիք, ձեզի կսպասեն, ձեզի համար են անոնք, ձեր հալալ վաստակին դուք եք տերը։ Ալ ի՞նչ ունեիք մտմտալիք։ Միայն, ինչ որ պիտի խնդրեի ձեզմե, ձմեռը, սա մեր ծռուկ Աստուրին կոնակն ալ իրեն պես ծռուկ, ճմոթկուկ բարձ մը՝ կնկուկ մը գտնեիք տայիք։

ԿՆԱՄԱՐՏ ԹԵ ՅԼԱՄԱՐՏ

Արամ Անտոնյանէն

Ի՞նչ գլուխը լար, ալ կրնա՞ր քաշել, ո՞ր մեկս կրնայինք. բաց գերեզմանն էր փնտռածը, աստված երեսին հայեցավ ու նորեն բաց դռնակ մը ցցուց առջևը։

Գեղը լեցնող մեծ դեպքի մը շուրջը դարձած ասուլիսներեն ծիվ մը բան, որ հիմա աղբյուրին հարսներուն ծրարվուկ բերվընեներեն երկնցած կերթա, հեղ մըն ալ ան ժամուն ճամփուն վրայի տոտռան մամիկներուն ժոռոտ ակռաներուն վրա կհանկուրցվի։

Չի լսված բան, չի տեսնված բան, որուն ենթական գիտնալ, որ խեցիի կտոր մը չէ ամենևին, շան լակոտ մըն ալ չէ։

***

Տարի մը միայն նշանված կմնար ան աղջիկը, անկե վերջ, Տեբոյենց հարսն էր։ Հիշողներ կային, որ հարսանիքին օրը, սանամայրը եղած էր ըսող մը թե՝ «սև հարսը խժիկ կերած պիտի ըլլեր աղջկնությյան ատենը»։ Իրավ ալ, դեկտեմբերի ճերմակ առավոտ մը, դուրսը անանկ չոր, կծու հով մը կար, որ պսակեն դարձող ան քանի մը տարեց հարսնևորներու փեսամանտիքը պզտիկ-պզտիկ, եթե գինիի ծով մըն ալ երթային ցամքեցնեին, տեղերնին, նորեն, ապահովաբար, չպիտի կրնային տաքնալ։ Անոնց դռպի հարսնե-

տուն անցքին առենը, առանց թմբուկի ու զուռնայի, անշուք, թափթփուն թափորը բռնազբոս քալվածք մը կմատներ։ Հարսնևորներուն համար քիչ տրտմություն չէր ան իսկ երևույթը, որ մեկը չէր ուզած իր դռան առջև «խոնչայի պատիվ մը» ընել պուտ մը գինիին կորուստովը, որու ի՛նչ փույթ. ցուրտ էր, մեյ մըն ալ խորհողը կխորհեր թե Տեփո-Աստուրը պատվելու տեղ, կարելի է, ավելի աղեկ մարդավարությունը ըլլար պիտի, եթե տանիքին ճնճղուկներուն ափ մը կորեկ նետեր։

Ատ օրը, կերևա, ցվքներուն եղերքը, անծեղներն ալ ծուռ թառած էին։

Գյուղին մութ ծածքերեն դուրս եկած կետայի տղա մը՝ փշոտ մորմենի մըն է կըսեին, որուն վրա թերևս կաթ մը արդև ալ չէ ինկեր, ու հիմա չի զարմանալու համար, մարդ իր երեկի փորցավը մ՚տք բերելու պետք կըզգա, որ՝ աչքի չառնված այն շատ հասարակ, շատ աննշան ու գոզիկ թուփին վրա, նանկ սիրուն աղջիկ մը կերթա «նշծաղիկի» մը անակնկալը ըլլալ։

Գեղեցիկ էր աղջիկը, գեղեցիկ մարգրիտ մը սակայն, որ ծովին անկոխ մեկ եզերքը ինկած, զինք փնտռողին չի հանդիպիր, վերջը, օր մը, դիպվածի քմայք, բորիկ հովիվի մը ոտքին տակ կուգա։ Գեղեցիկ էր, անոր միայն աչքերուն հրապույրին հանդիպողը, պարեխի «օձին անգին քարը»՝ այդ կախարդիչ շողյունը տեսնելու պատրանքը կունենար։ Այդ պատճառով կարելի է խենթ պիտի ըսեիք գյուղի տղոցմե անանկներուն, որ ատ աչքերուն սիրովը, անոնց հայած ու բևեռված որևէ մեկ կետին վրա, նույն մեռցնող աչքերը տեսած ըլլալու արբշիռ ցնորք մը կպատմեին։ Աղվոր տանձ, արշն ալ աղվոր, անլի հեգնություն մը իր տեսակին մեջ, որ հարսին երևումներեն հոգիի լուին հատնումը զգացողներուն վերջին հուսահատ ծնծնալը կերևար։ Բայց ա՛լ եղած էր ըլլալիքը ու մեկը չի կար, որ չի գիտնար, թե իրենցմե ոչ մեկունն է ան, անոր երենոս մազերուն վերջին թելն ալ իրենցը չէ։

Հանդիպում, բախտ, եկեղեցի ու բոլոր ասոնցմե առաջ, աղջիկը, որ անտեր մըն էր, անտեսված մը, և ապա նախապաշարում թե՝ անտեր մեծցած է անիկա, կրնա քած խոզ մը ըլլալ, որ գացած տունը չուզե պարտկվիլ, աչքը դուրսերը ու ետքն ալ իր տիրոջ գըլխուն հազար դժբախտություններ բերե, բոլոր այս պարագաները ու պայմաններու իրավն անիրավն հիմա հետևանքի մը հանգած ՝ՀԷրշապես, լսողը շատ ուշ մնացած կերևար իր քիթին ծակտիքը

լենցնելու թե՝ Վարդեր Տեբոյենց տղին գացեր մեկ հատիկ հարսն եղած էր։

Համեստ բարքը, խնդվտուն երեսն ու դուռ դրացնի հետ տաքուրին շողվղտանքը, Աստուրին սիրույն, գլուխը «քարին փետին» զարնելու ու դեռ ատ գլուխը, հոգին ալ, կրակին մեջ խորովելու տինճ անձնավորությունը գեղովին վկայած հատկանշությունը կմնային կնկան մը, որուն մասին սկիզբները, ինչպես հիմա, անմիջապես վերջն ալ, անսգյուտ կաթնտու մըն է ըսին, որ Աստուրին պես շվոտի ձագի մը վիճակված է։

***

Շվոտի ձագ, աս ալ իրավ այսպես, հասարակային կարծիք, հայեցողություն աս մեկ տեսակետով գոնե, սխալած չպիտի ըսեիք, կհուսամ, եթե քիչ մը համբերել գիտնայիք։ Աղջկան դեմը ելլող տղան, գեղի համայնքի մեջ անոնցմե էր, որոնք իրենց ժամուն ավազանը մկրտվելու երրորդ օրերնին, չեն ալ ուշանար, կերթան մեկե միտքե չանցած աղտեղություններու մեջ բադի կտուց մը կըխառնշտկեն։

Աս մեկն ալ այսպես, օրանեն իջնելե ետքը, շիտակ իր տեղը գացած էր, օտար դուռ մը, ուր իրեն պատվիրված գործերը եղեր էին, հովվություն՝ ամառը, ցուրտ եղանակին ալ իր տերերին հետ, անոնց որսկան շուները լեռը պտտցնելու չարքաշ, բայց ստորին տեսակե արհամարհ ծառայություն մը։

Մայրը ատ դուռներուն վրա, մեռնելեն հետո, զոր ան ատեն թաղելու համար, գեղին տերտերը քիթ փինչ մը ըրած էր, երթալով կծանրանա կացքը ու ստիպված կուգա անգամ մըն ալ իր մոտիկ ճանչվորներեն մեկուն քով լծվար մշակի տրեխը հագնիլ։

Սակայն, ո՛ր դուռ որ կերևա, ո՛ր հարուստի, ո՛ր հողտերի, սա տղան ան իր երկու ավուր տիրուն ալ քիթեն արին աղջուր կբերե։

Գեղին մեջ ծնած, լայնցած որևէ հասարակային ու ընտանեկան խնդիրներու ատեն, Աստուր իր տեղին վրա պիտի երևնար միշտ, անոր բերնեն վար գավաթ մը քամ օղիին հետ, ձեռքն ալ սըլուկ հինգնոց մը քշողը, ալ զինքը ապահովապես, աղբոր պես մը տերիմ ու կես գիշերին արթննալու պատրաստ վկա մը կրնար շինել, ինչ ատեն, ինչե որ պետք ունենար։ Ալ ի՛նչ գիտնամ, ի՛նչ տեսակ լակոտ մը, որուն համը սակայն հետզհետե հասկցված էր

ամենքեն ալ, տեղ մըն ալ ամիսը երկուք չեղած՝ զինք դուրս հրողը, վտանգավոր բան մը դուրս նետածի պես շունչ կառներ։ Ինչ ընեք, ալ ի՞նչ կար ընելիք, տարիքին քսանհինգերորդին վերջին իրիկունը, եթե չեմ սխալիր, հասարակ բանվորի որոշչեքով տեղե-տեղ շրջիկ մշակության երթալու որոշումը կուտա։ Էն ետքի խելքը, որ տուն կկանչե, և որով մեկ երկու տարի ինքնիրենը ապրելու ինքնամփոփումով մեկուն երեսը շուզեր նայիլ, մեկու մըն ալ սրունքին վրա ժանիք չի փորձեր։

Աստուր մարդ էր եղած՝ կըսեին, ինք գոնե այսպես կհավատար ու Զատկի, Ծնունդի, ինքն ալ իր տունը կառներ կմնար, որ տերտերը կարգով մը, իր տեփուրին վրա իր աղն ու հացն ալ գա օրհնե։

Այս վիճակին մեջն էր, որ քիչ մը դրամ մեկտեղած ըլլալու աջողվածքով, աղջկան մը կտուցեն բռնելու առեջքը կսարքե մտքին մեջ, բայց որո՛ւ պիտի դիմեր, քիչ մը ոչխարի ինքնագիտակցությունն ալ բավական չէ՞ր, որ կարող ըլլար ըմբռնել, անդրադառնալ թե՝ դեռ ինք հայտնի մշակ մը՝ ու էվել ոչինչ կպցուց իր անունին վրա։ Իր ետևեն զինք մարդ ճանչնալու փորձվողնեքը շատ ավելի իր մեկ քանի երկչոտ աղգականներն էին, որոնք, խեղճերը, հաղար ու մեկ պատճառներ ունեին զինք քիչ մըն ալ մարդու անունով փաղաքշելու։ Ինչ ընեին, վաղը Աստուր նորեն կկատղի, նորեն կելլե կավառ մը կփլցնե ու նորեն իրենց ճինսը պիտի ըլլի տուժողը։

Շվոտի ձագը մարդու խորհուրդ չի հարցուցած՝ երա՞զ կտեսնե, թե հավահմայե մը կարտոնվի, չգիտցվիր, կփնտռե, կգտնե ուղածը, կնշանվի ու ժամանակ վերջը աղգական ըսվածներեն հենց հարսնառի ներկայություն մը կխնդրե ու կփակե խնդիրը։ Դեմի չի համակերպվողն ալ ան աղջիկը չպիտի ըլլար հարկավ, որ իր հարտուստ ծնողքին հանկարծական անհետացումեն ետքը, մորքրոջ թևին տակ գացեր էր թաղիլ, ինչ որ հետո ասոր ալ ետևը լալու դժբախտությունն իր սուգն ավելցուցած՝ վաղին սոսկումեն ավելի բան մը կմտմտար, որ տեղեն խախտած ժայռի ահագնությունով, շիտակ իր վրա, իր բույնը տրորելու կսպառնար։ Վարդեր՝ հասուկ աղջիկ, գիտեր այս բոլորին վախճանը, այնպես որ, դուրսեն եթե հորթուկի բառաչ մըն ալ լսեր, գիտեր, թե զինք իր մութ խոռոչեն լույս աշխարհ հրավիրող ձայնը պիտի ըլլար։

***

Այդ ձայնն էր, որ Տեբռ-Աստուրեն կհասներ իրեն, որու շնորհիվ վայրկյան մը և ոչ ավելի վերջը, անոր հետ մեկ արին, մեկ մարմին, գոնե ինչպես տերտերը հանձնարարած էր ու սրկե դեռ ավելի թունդ, ավելի հանդիսավոր խոսքը շեշտված...

Սկիզբները իրար եթե հեռվեն տեսած էին ամչցածի կամ քիչ մը վախկոտի հապճեպով, թեև տղին համար չի հարմարած մտածություն, հիմա ավելի մոտեն, երես երեսի, մեկ բարձի վրա, զիրար ավելի մոտեն գնահատելու լայնկեկ պատեհությունը կար իրենց։ Հավնած էին, գգվանքին չափն ու ուժգնությունն ալ մեկեն մյուսը, ամբողջությամբ տեղը։ Թեև իրավ է, որ կինն է միշտ իր հինգ մատները էրկանը դեմ ճրագ ընողը ու վառողը, կնոջ մատուցումը միշտ ավելի շատ կփախի։

Ան տարին ահա անմիջապես Տեբոյենց տղին բրշակը շեն կերպարանք մը կառնե, հավ, կով կպահվի, օրվան առտուն անոր բրխերիկեն ալ կապտորակ բարակ մուխ մը կծառանա, դուռը բանուկ ճռինչ կերկնցնե, նշան թե՝ հոն մարդու մուտք, ելք, մարդու ստվերը կխաղա։

Ու հոն կերևան մեկ-երկուքը իր հին ընկերներեն ու նորերեն ալ անանկները, որ ստիպող պետքով մը գեղին ան օտար մեծ հոդատերեն իբր ընտանի դեմքի մը, ապսպրանք մը ընելու իր վարժ լեզվին միջնորդությունը կխնդրեն, բոլորն ալ դուրս գալու ատեննին շեն զսպվիր հոչակելու, թե Վարդեր այդ երբեմնի ամայության մեջ լքված փեթակին թագուհի մեղուն եղած է, ու կավելցնեն, անոր որևէ մեկ հպումը, շունչը, աչքերը փեշերուն հովն ու պզտիկ շարժումեն անգամ իրենցմե ինչքան ալ բևեռու աչքերով դիտված, երբեք-երբեք իրենց միաքը վայրկյան մըն ալ չի մթնեցներ։

Աստուր անգամ մը ծնած օրն է խնդացեր՝ կըսեին, նախանձի հով արտահայտությամբ, անգամ մըն ալ հիմա, որ իր ազվեսի անհույս ծակին մեջ խանրմ-խաթուն մը ունի։ Այս խանրմ-խաթունին, այս փեթակի թագուհիին իրենն էին տունին հոգը ամբողջ ու այն ծանր-ծանր աշխատությունները, որոնց տեսակը, եղանակին համեմատ—դաշտը պիտի երթար գոներ։ Գարունը քաղանքը, խոտունցը, մյուս ատեններն ալ հասկաքաղ, բամպքաղ ու վառելիքին հավքատուքը՝ հեռուն տափաստաններու երեսեն, իր գիշերվան քունը կխաղ չաքչրկանքներն էին։

Զվարթ համակերպողն էր գեղի կնկան ճակատագրին։ Գեղը, այդ առանձնուկ միջավայրը, ուր չես գիտեր, թե որ մեկնակետե սկսած է կնոջ մը ճամփորդությունը փշոտ կարկառուտներու վրայեն և ո՞ւր օր մը պիտի վերջանա այն։

Գեղը եթե էրիկ մարդ հող չի խառնշտկեր, չուզեր աղորիք երթալ, չուզեր ամառ գիշերվան ջուրի ջրտուքի վազել, աշխատություններ, զոր նորեն կինը պիտի հասներ կիսել, դուք ալ կարծեմ ինձի հետ հավանող մը պիտի ըլլայիք, որ էրիկ մարդ ըսված այդ գլեթները, անանկները մասնավորապես, որ հողագործ տուներու մեջ չեն ապրիր, տարին անգամ մը կաղամախի պես կտրտվեին ու ժիր կնձնիի մը պես ալ մարագին առիքին տակ սյուներու գործածվեին։

***

Աստուր, որ ճուվելեկ մըն էր, հիմա ծուլցած մանավանդ քիչ մըն ալ կնկանը դեպի ամեն աշխատություն պատրաստ վազքերեն, մարագը նետել փակելու չափ ավելորդ մը կդառնա հետզհետե։ Արևամոլի այս մեղկ մեկուսիկ փախչտուքներով գործե, երկարկեկ ժամանակ մը կթողու ետին ու դեպի հարսանիքին առավոտը յոթերորդ տարիի մը կատարեն կհայի։ Այսչափ ատենի մեջ երկու տղեկներու մահը լացեր են միայն, ու ալ ուրիշ առիթով ոչ իսկ կույր կասկամ մը կանցնի իրենց տանիքեն։ Կապրեին, ինչպես գեղին ճուվելեկ տնվորը կապրի, ամեն պարագայի տակ, հացը Վարդերին՝ ոսկորն ալ Աստուրեն։

***

Օրին մեկը, աշխարհքիս կրկնված պատմությունը միշտ, կինը գեշ երազե մը կարթննա։ Աստուր շեղում մը ըրած է, ամիսին շատը գնղի մոտակա գեղը կանցնե, նոր Գեղ, որ Շնթիլեն Սև Գետակով մյայն բաժնված, վերջին տեղեն վազող ծեր մը մինչև հոն չի հոգնիր։ Հիսուն-վաթսուն տարի առաջ, Թլկատինեն ծնած շենիկ մըն է եղեր, տասը-տասնհինգի չափ հողվար տուներու համախմբում մը։

Աստուր հոն է շարունակ, ուրկե գլուխը կելլե, ոտքը չելլեր, ու ամեն ատեն ալ ջանքեր մը ունի կնոջը հավտցնելու, թե հոն ծանոթ հողտեր տան մը «ճրոճերը» քաշելու կերթա, շահավետ գործ, զոր լմնցնելե ետքը, դեռ իրեն ուրիշ խոստումներ ալ կըլլան, որ ուրիշ ավելի փոր կշտացնող զբաղումներ պիտի տրվին։ Այդ պատճառով

ցերեկեն ետքը մեծավորին աչքեն հեռանալ շատ հաճելի մարդավարություն չէ եղեր։ Ու իր տունն ալ ի՞նչ ուներ, որ Վարդեր երեսի վրա պիտի ձգեր։

Կինը առաջին առիթներով կհավատա այս ըսվածներուն թեև, էր այն տարաժամ մեկնումներուն ու անհայտացումին ստիպողությունը կբանաձևեն, կբացատրեն երբեմն կրակ երդումներով շեշտված, բայց ալ օր մը, վերջ ամեն միամիտ համբերության, ամիսներու շարքի մը ետևեն, կծակի միտքը ու հոն մեկ վայրկյանեն մյուսը այնքան մը բան կլեցվի, որ խեղճը ջաղացքի քարի մը չափ ծանրցած, նստած կայնած տեղը, քթին վրա թառող ճանճին անգամ քշշ ըսելու սիրտը չունենար։

Ի՜նչ էր աս եղածը այս չափ հանկարծ, ու ի՜նչ է ան, որ նոր պիտի ըլլի, իրերու այս աստիճան փոխված կասկածելի երևույթե մը ետքը։ Ինքը ե՞րբ աղոթելու ատեն, երեսն արևելք չի դարձուց, ե՞րբ մեծ կրակի մը վրա ջուր թափելու պահուն աստված չհիշեց, կիրակնամուտքին ե՞րբ թել անցուց ասեղը ու կիրակնամուտքին խունկ չի ծխեց մեռածներու հոգուն։ Աստծու հետ այսչափ կպչուն հարաբերության մեջ, դուռ դրացնի հետ հաշտ, Աստուրին հանդեպ ալ ի՞նչ թերություն պիտի ըլլար գործածը։ Ալ ի՞նչ մեղք պիտի ունենար, որ հիմա մեկ օրեն մյուսը, կրակ կառնե գոգնոցը ու բույնին մեջ, բուն իսկ իր նստած տեղը, սև օձի մը գլուխը տեսնելու արհավիրքներով պաշարված կգտնի իր միտքը։

Երեկ կնայեր, այսօր կնայի, ամեն գիշեր շունչը կբռնե ու կըսպասե, որ մեյ մը սա դռան ձայնն առե։ Աստուր աս գիշեր ալ չի դառնար, ու ինք աս գիշերին համար ալ հույսը կտրած՝ գլուխը բարձին վրա կնետե, քուն չըլլար, դիվահար ըլլալու սոսկումներ կանցնե, բարձին վրա, անկողնին մեջ, կարիճներու զեռում մը կա։

***

Վարդեր ուշ անդրադարձավ, բայց լսեց վերջապես, ու հիմա ընդարձակը լսած է, իր մոտը ու իրմեն հեռուն անցած դարձածներուն վրա։

Էրիկը դեմի նոր գեղը հարս մը կսիրե, Շուշանը, ու կըսեն, ու լսած է նաև, որ այդ հարսին հետ այնքան կսկուծ հարաբերություն շիտկեր ու ձեռքոտեր է որ, կասկած կա թե, լքանե զինք շատ չանցած, ու զայն իրեն տեղացու մը բերե։ Շուշանը Վարդերին տե-

զացո՞ւ մը։ Ան չէ՞ ատ հարսը, որ էրիկը հողը դնելու երկրորդ առաւաուն, ձեռքը հինա դրած է եղեր, մյուս օրն ալ տղային մեկուն հետ զույգ մը արծաթ ապռման ապսպրեր է քաղաքը։ Շուշան ան երեսեալած հարսներեն, որոնց տեսակը ծանոթ թվականե մը շաբաթ մը վերջը անմիջապես սա նոր գեղին ու ան հիներուն մեջ ալ սունկի պես բուսած։ Շուշանը բոզ մըն է։

Աստուրին կինը լսած էր այս բոլորը ու վերջին մեկ-երկու ամսվան մեջ մանավանդ, ալ որևէ նոր հայտնություններու պետք չէր տեսներ։

Հիմա ինքն է, որ կրնա մեյմեկ հիշել, թե ինչո՞ւ իր մարդուկը երբեմն տուն հանդիպելուն, հանիհև ներս կիյնար ու հովի պես դուրս կիսոյանար. ամենեն չնչին դիտողություն մը ուշացումները, մոռացումները ակնարկող, անոր պատճառ կուտար, որ զինք ուտքին տակ քարի մը պես սղկեր. կերակուրը չէր հավներ, վրան մոռացված ճերմակեղենը փոխելու պահուն հագուստի մեկը-երկուքը խեղլագարի մը ըղունկներով բզիկ-բզիկ ընելու բարկանքներ մը կըցուցներ։

Շատ գիշերներ անկողին չէր գար, գալու ատենն ալ արյունոտ կամիթներու ու կոուփներու տակ, կուրծքն ու միսերն ալ իրենը չէին ըլլար։

Կհիշեր հիմա մոտավորապես այն նշանակալի օրվան իրիկունը, որ էրկանը հետ սեղան նստելու բախտավոր հանդիպումով, երբ կերակուրը կլմննար, ու մարդը դուրս թռնելու պատրվակ մը գտած՝ զինք միանակ կձգեր, ի՞նչ եղավ իր սիրտը, աչքերն ինչպե՞ս դարձան հանկարծ, ու ինտոր մահվան քրտինքներով անկողին ինկավ, որ ատենն գրացիներուն ժմնցուցած հում կաթին, հում հավկիթին ու տարած խնամքներուն շնորհիվ, միայն կրցավ աչքը բանալ, ուշաբերրիլ, ամբողջ շաբաթի մը մեռածութենեն ետքը։

Անցուց, տարավ ասոնք լոին ինքն իր մեջը, ինքզինք ուտելով. չեղավ ատեն մը, որ տերտ լար մեկու մը, միայն անգամ մը Կարմբրիի տեր Թորոսը Շնթիլ եկած տեսնելով, տուն կտանի գաղտուկ մը, «Թուզթ հայիլ կուտա», ուրկե սև հավի արյունով գծգծված երեք թղթի ծրարիկներ առնելով, ինչպես թելադրած էր քահանան, թուղթին մեկը իրենց դռան շեմքը կթաղե, երկրորդը կայրե, մյուսն ալ Սև գետակին եզերքը ջուրն ի վար կուտա։ Այդչափ, ու ավելի բան մը չէ։ Ըրածը։ Այդ փորձով, օրը հիսուն ծունկ ալ աղոթելե ետքը, կրապասեր, որ Աստուր ինքնիրենը խղճմտության գա ու «վաղն անցնի ան խարա սեվտայենն», որը, կասկած չուներ թե մեկ օրեն մյուսը իրենց օճախը պիտի մրեղեր։

Աստուր, աղնձված սիսեռ, սպասել, որ անոր վրա թափած արցունքը, անձրևները, նույնիսկ արյունը սև հավին, կանանչ ծիլ մը երևցնեն, վերադարձ մը իրենին կուշտը, սրտի պարապ հատնում մը պիտի ըլլար։ Մարդն արդեն այնքան մը առաջ տարեր, հասունցուցեր էր բանը, որ շնթլցիներուն կաղն ու կույրը ալ լարված հետաքրքրությունով սպասող կերևան թե Տեբո-Աստուր եթե ոչ այսօր, ալ վաղը անպատճառ նորգեղցի Շուշանը Վարդերին տեղացու պիտի բերե։

Այսօր վաղը ու ահա ինչ որ կսպասեին։ Բոլոր գեղացիք ցնցումի վայրկյանի մը մեջ խորունկ մռնչյուն մը կպարպեն կուրծքերնեն։

«Չի բուսնեիր բարով, Աստուր, մերդ քեզ պիտի ցկներ նը, թող բուդ մը քար ծներ»։ Ու տարևորները, որոնք տակավին իրենց պըսակին նարոտը իրենց գտակին փաթը կպահեն սրբության խնկոտ կտորի մը արժեքովը, «Փի՛ճը, փի՛ճը կըսեն, ե՞րբ լսված էր, որ փիճի մը կոխած անցած տեղը խոտ կբուսնի»։

* * *

Թող կուզե սակայն ան լերան յոթը գլխե դևերն ալ իրենց օձգլուխ ձիերն հեծած՝ այն փիճին վրա գան ուղղության հրավիրող կոչ մը ընեն, հետևանք չպիտի ունենա, տերտեր, եկեղեցի, իշխան, առաջնորդարան թող կուզե հունա Մաստառին կատարը մոռենի մըն ալ այրի, հետևանք չպիտի ունենա։ Աստուր Շուշանը իր ուղած ու սիրած կինը հոչակելով, իր խղճին հետ հանդիստ, անառիկ որևէ ձեռնձգութենե, Շուշանին բիբին մեջ հիմա իր պատկերը կտեսնե։ Վարդերն ալ արձակված աղախին մը հունա, ամեն տեղ, բաց գերեզմանի մը փնտռտուքովը կթափառի, էրկանը կողմեն իր վզին կախած դատապարտության թղթով մը, որուն մեջ սևագրված միակ ամբաստանությունն էր, թե ինքը, օր մը, տունին ու դաշտին գործերը շատ ծանրացած մեկ օրը, իր կարելիք լաթերուն մեկ մասը ստիպողաբար դրացի աղքատ կնոջ մը հանձնելե հետո, կիսոստանա եղեր անոր ափ մը ցորենով փոխարինություն մը ընել. բոլոր տարիին մեջ մեկ անգամ հանդիպած գործ մը, որ Աստուրին կինը ամենաչնչին վարձքով մը ուրիշին ընել տալու պարագային տակ

կգտնվի, ինչ որ այդ միևնույն ատեն, ուրիշ դրացնուհի մըն ալ, ջղիկ ջաղուկ, Վարդերի երեսին կատվի ճանկ մը նետած ըլլալու համար, ով գիտե երբեմն մնացած հաշվով Աստուրին ականջը կը-հասցնե։ Կինը ավազի հատով մը մեռցնելու համար ան էրիկ մարդուն ալ փնտռած պատեհությունը։ Այս դեպքով, միայն այս խայտառակ պատրվակով, գողի անունը կամրցնե կնոջ ճակտին, գող մը, կար ձև չգիտցող կին մը, որուն ինքը մինչև ան օրը համբերելու առաքինությունը ունեցեր է եղեր։

Ու խեղճ Վարդեր, երբեմնի այս խանըմ-խաթունը, ծրար մը լաթեղեն միայն անութին տակ, ամբողջ տունին միջեն բաժին հանված սեփականությունը, գեղին փափկանկատ քեհյաններուն միջամտությունով, որ վերջին պահուն արդար իրավունքի մը պաշտպան դուրս գալու վիճակին մեջ կգտնվին, տունեն դուրս հրավիրելու պահուն, հազիվ վրա կբերե ըսել. «Դուն, Տեբոյենց տղան, ըրիր ըրածդ, աստված ալ քեզի ընե, ու տիլեկ կենիմ, որ անանկ ֆառշ ու մալամաթ ըլլիս, անանկ խաղք խայտառակ՝ որ երեք ավուր տղացկանը պիլե, փորուն վրա սողալով քու սեյրդ կայնի»։ Ու ոչինչ անկե վերջը, անկե վերջը գեղացին կամաց-կամաց ինքզինքը տափկցած իրողության մը առջև կգտնե։ Կըլլի եղեր, աշխարհքի վրա չի պատահած բան չկա եղեր, կամ արդեն ի՞նչ էր եղածը։ Մարդ մը, որ ձեռքին տգեղցած վարդը կնետե, հիմա պահ մըն ալ թարմուկ շուշան մը կհոտ:տա։ Շիտակ խոսքին ի՞նչ ըսել։

* * *

Լքված կնկուկան փեշը այն դժբախտութենեն հետո հանդիպողը երկու տեսակ բան նետեց. մեյ մը պատառ մը շոր հաց, քիչ մըն ալ հոտած լորձունքով թրջված մխիթարող խոսքեր, որոնց ինք պատասխանելու համար դժվար թե այն հացի փշրունքն ալ տեղ կրնար հասցնել։

— Հոգ մի՛ներ, Վարդեր, խեղճ աղջիկ, հոգ մ՚ներ, աստված տահա պեթերեն պեյե, օղուլ։

— Տահա ըսել է ասկե պեթե՞րն ըլ կա, ի՞նչ էնիք, ի՞նչ կրնայիք, ճակատնուս գիրն էր, պիտի տանեաք, ասկե պեթերն ըլ կա եղեր։

— Հըպը ի՞նչ կըսես եա, սեֆիլ, աշխարհքի մարդ չի՞ք, եա օր էլլեր ուրիշ բան մըն ալ ըներ։

— Ալ ի՞նչ մնաց օր չեներ պիտի, Եղնա՛ր, ըսել է ձեզի ջուրչ ձեն կուգար եղածը, ալ մընը՞ց չեղածը, ո՞ր մեկդ իմ տեղս ըլլեիք նը ջուրին հորը չէիք նետվեր գիշերվա մը ցորեկվա մը մեջ։ Աստված տուշմընիս գլոխը չբերե է՛տ գալիքը։

— Կըսեն, է՛ն վերջն ըլ աղու տուեր է եղեր, հա՞։

— Է՛ն սկիզբը, է՛ն վերջը աղուի պես բաներ, հրամեր ես, հիմա եթե էսի պիտի ըլլեր է՛ն վերջս, հազար անգամ աղեկ էր օր է՛ն սկիզբը ինչ էր նը ըլլեր խալբսեի։ Մեռնելեն դիժար տերտ ըլ կա եղեր, քորս, մեռնողը ե՞րբ ամեն օր, ամեն սեթ մուխ կունենա գըլխուն վրա. գլոխս կրակ, կուրծքս կրակ, գոգնոցս ու բոլոր փեշերս կրակին մեջ։ Ո՞ւր էր է՛ն հոգիս առնող հրեշտակը, ո՞ւր էր, չե՞ք լսեր օր հիմա ես անոր ոտքը՝ ես երթայի, խոսք մը հասկցնեի։

— Է՛, դուն ինսեխ (ինչպես) ֆարդին չի գացիր, աղջիկ, աղուն ինտո՞ր տվավ։

— Ամեն օր իրիկվա հացերնիս ճրագլուսուն կուտեաք, է՛տ իրիկունն ըլ, ինտոր եղավ, մութին նստանք, բանջար եփեր էի, չի թողուց օր ճրագ վառիմ, էճելե տեղ պիտի երթամ, ըսավ, ինք մինակ ցամաք հաց շվուտեց ու դեպի դուրս նետվելը մեկ էրաց։ Ո՞ւր կերթաս, ըսի, արի մարդ (էրիկ մարդ), քիչ մըլ տունդ առ նստիր, ես ըլ ինսան եմ., կնկա աշմախ (դնչկապ) կապեր իմ, իրկուն կըլլի, էրկա ճամփուն կըհայիմ, էտին չի դարձավ հայավ, խութին ու թըզպեքն ըլ էճելե տունը թողուց։ Տեսները էլա, որ երթած կողմը հասկընամ, բան մը չերվաց աչքիս, մութ էր, տանիքը քիչ մը առի, կեցա, մեկ ըլ ահա լսեցի օր հեռուեն հեռու շուներու խորունկ ձեն մը կուգա, Նոր Գեղա շնվին իրար կբզկտեն, ըսի մտքովս, նորեն Նոր Գեղը, նորեն Շուշանին դուռը։ Տանիքեն վար էջա չէջա, սոնին տակը հավու պես չոլրա ինկա։

— Ըսել է, Վարդեր, ի՞նչ եղավ նը էտ իրկունը եղավ։

— Ճիշտ էտ իրկունը, հրամեր ես, կերակուրին վրա մկնդեղ ցաներ է, ես չիմ իմցեր։ Թեզ մի փեշերը ժողվեց, հերտկավ օր էտ սեթին լեշիս տեր չըլլի զահար։ Դրացիները վրա հասան, հում կաթ, հում հավկիթ խմցուցին, աչքս բացի, չորս-հինգ օր խելք չի կար գլոխս, վերջն ըլ կամաց-կամաց տեսա օր մազերս բուռ բուռ ձեռքս կմնան։

— Խեղճ մեսիմ, է, ինչ էնես, այ օղուլ, ի՞նչ կա օր երկինքեն կուգա, էրիկ մարդեն կելլա ու կնկան գլխուն չընկնիր։

— Կխորհեի թե ո՞ր էրիկ հեչ տարիին մեջ օր մը երկուք իր

կնիկը չի ծեծեր, ատոր համար ըլ խոսք ընել կարժե՞ր կըսեի, էկո տես օր արին-երես մարդը հասկցավ քիչ ծեծելեն չիմ սատկիր, մեկ անգամեն հընցեղ (այնպես) բան մը էնիմ օր, ըսենց, մեկ նեֆեսով խալըսի։

— Անա՛մ, անա՛մ, անա՛մ (արգահատանքի արտահայտություն մը)։

— Իշտե է՛ս ըլ է՛ս չեշիտ, քուրուկս, աստված հախ դատաստան ընե։

— Հիմա ի՞նչ պիտի էնես։ Լսեր իմ օր կըսեն քի դուն ըլ քու գլխուդ ջուր տաքցնես եղեր պիտի, շիտակ է։

— Է՛հ։

— Իրավ կըսիմ, աղջիկ, լսած օրս ըլ խնտացեր իմ ու համ հախ տվեր իմ։

— Ի՞նչ էնիմ հըպը, եղնար, քորս, տարի մի է էլին դուռը։ Էլին ձեռքը հայելեն երեսս էտիս դարձավ, ալ օր հիմա ձեռքը տալեն փրթեր գետնին ինկեր իմ նը, վո՞վ կմեղդրեր ըզիս։ Առնող մը ըլլի նը իրիկվա վաղվնկա չիմ հայիր։

— Է՛, հեչ Աստուրն ըլ միտք չե՞ս բերեր, կինե քեզ առնելու ըլլի նը չե՞ս երթար, անխելք աղջիկ, օր ինք ուզեց նը, դուն ըլ երթալու եղիր, թող Շուշանն ըլ պեյե քեզ ըլ. էս քանի տարեստանը քանի՞-քանի էրիկ մարդ կա օր մեկին տեղը երկուք-իրենք կնիկ չի պիյեր, բանդ հայիր, Վարդեր, խելքդ տուն բեր, հիմա դուն ըլ չե՞ս կարոտցեր Աստուրը։

— Էտ տեղտանը մի հարցներ, Ծ՛ղնար, հոգիս, գիտեմ օր էդ մարդը գլխավորս չէ ալ, գիտեմ օր տուշմընիս պես ու տահա գեշ բան մըն է ինծի համար, է՛հ։

— Նորեն ի՞նչ, անխելք, էհը ո՞րն է։

— Նորեն աչքս ետիս կմնա, էնոր վրա կխորհիմ, հենց որ շուքը տեսնըմ, աչքերս կկսկծան, ես ներեր իմ իրեն, բայց էն մեկուն, էն դովին մնացած քեծ շանը, էն քեծմնոտած շանը, Շուշանին, հիմի հենց փեշին շուքը տեսնայի, արինը մորս կաթին պես անուշ պիտի խմեի օր՝ էրիկ մի տերտով սատկեցնելեն, մենձ տուն մի ունուֆաղ ընելեն վերջը, հիմի ալ մեր բոնը տարտըղնող արնտերն եղավ։ Ալ վազ անցանք, մայրիկ, հիմակ ըլ վազ անցնինք ըսի տե, մենք ըլ մեր գլխուն ճարը հայիք, մարդուն մեկն ըլ ինծի մուշտարի ելեր է, կուզե առնել, բայց Տերոյենց էդ գեշ տղան մեջ է ինկեր, մարդուն, ըզիս առնող մարդուն խոսք կապսպրե, տեկենեկ

կցուցնե քի, էտ կնկան բոլորը չպիտի երթըս, էս մտքով հուքումեթը էրզուհալ ըլ տուեր է եղեր։ Էկեր կըսե քի, երկու կնիկ առնիմ, պեյիմ նը, երկու հարիր տարի մնա ես էտ բանը խապուլ չեմ էներ, պողազիս չվանը ձեռքովս կանցնիմ, ես ամենեին էտ տեղանցը չըպիտի ըլլիմ, ամմա, Եղնար, դուն կըսես քի, դուն ըլ ուրիշներուն պես ըրե, ձենդ վեր դիր, չ՛է, չէ՛, չէ՛ գլուխս վեր կառնիմ կդնիմ, ձենս վեր չեմ դնիր, Շուշանը ինծի հետ կնիկ ըլլի՞, իմ խումաս ըլլի՞, աստված խելք տա քեզի... ես գիտեմ ընելիքս...

***

Անցած Բարեկենդանին, պատընկնուկի օրը «արև բարի» օր մը, Շնթլցիները ուտիքի վերջին գնտիկին քեֆը կընեն։

Տանիքներուն վրա, ուրիշ ամեն տեղերե ավելի, գինիի տիկփոր դույլերը արագիլի վիզերով ու գլգլուն միշտ, Մայիսի հեքոտ արագիլին ստեպղին կտուցովը մոռցված երջանիկ տարիներու Բարեկենդանը կհիշեցնեն։ Գինին՝ գոմուց չամիչ խաղողինը, խոխի մեղրիկ ողկույզինը, Կարմըրդարի արևունը, Ծառուկինը, Վարդաթիլինը, ջուրի առատությամբ կհոսի ամեն տեղ։ Վայրկյան մը՝ շահագրգիռ, որ ատեն, թուխ կապույտեն ետքը, գինիին կարմիրն է, որ կվառի բոլոր այն հանդիսավորված պատկերներուն վրա, ուր հոս տղա մարդու կեծկըլտուն աչքն է, հոն կանացի շիկնոտ երեսներ մը անուշ։ Կարմիրին շեշտը ուրիշ կողմեր ալ, գոգնոցներու վրա, փեշերու ու կնկա մինչև բումբերը ծածկող լաթեղեններու վրա։ Այս մեծ գույնին հետ մեկտեղ, որ մեծ հարսանիքի մը սիրված պաշտոնական երանգն է հոս, ինչպես մյուս գեղերը, Շնթլցի բարեկենդաններուն շատերը հինին ըղձոտ հուշքովը, անդին՝ լայնկեկ բացավայր մը գրաված՝ գոմշուկներու կատաղի պայքար մը կծափահարեն։

Անոնց անասուններն ալ գինով, որով կմտածես, թե վայրկյանին խենթությունը մարդուն ու մյուսներուն մեջ շարժառիթի տարբերություն մը ունի միայն, ու ատ օրը մարդերը կարելի է քիչ մը ավելի ղվարթ անասուններ, որ գինիին ծնցուցած ցնորքներուն անձնատուր՝ օդին մեջ թռչուններ խլելու ձևեր մը կառնեն, ուրիշներ, ավելի խենթերն ալ գետնին վրա այն կողմը, հովթռուկ ճանկոտուքներով՝ հողը գրկելու ու երկրագունդը տանձի մը թեթև փոքրության մեջ կեղվել, կրծելու դիվային շարժունություն մը կերերցնեն։ Բայց պահեցեք սոսկումնիդ։

Բոլոր այս ժամանակներուն, յուղոտ կարմիր ձայներե հյուսված ոռնում մըն ալ մեջ ընդ մեջ, որուն մեկ հեղձ արձագանքը քայլ մը հեռվեն գեղջուկ պարուհիներու խումբերեն կղրկվի, իրենց այս հոգիացած բարեկենդվորներուն ներսի բոցերուն մեծ շունչը՝ երգը պիտի ըլլար ամբողջ գեղացիին վայրագ մեկ համերգը, որ տարիին մեջ մեկ անգամ միայն դուրս կպոռթկացնեն իրենց բրդոտ կուրծքերեն։

Այս վիճակով ահա պահ մը անոնք մեծ հոսանքով մը ակնարկված մրցավայրը հապճեպ արշավանք մը կընեն։ Տեսարանը հոս ավելի խելահեղիչ հանգամանք մը ունի։ Ցլամարտի տեսարան մը կատարյալ։

Երկու գոմշուկներ՝ գառագեղեն արձկված ամեհություններ, այնչափ ալ սոսկալի, որ ուրիշ ատեն բզեզ հովիվ մը զիրենք փայտե սամիի մը տակ կգճկեցնե, ան ատեն մաշված ցուլի մը չափ խոնարհ, հիմա ան իսկ հլու, խոնարհ գոմշուկներն են, որ երկու հատով մը լայն հրապարակ մը կլեցնեն։

Բոլոր ձմեռը ճարպ ու միս, առյուծի ուժ մը թխմեր են իրենց կաշիին տակ, ամբողջ ձմեռը ու աս օրվան համար տերերուն փառքը ցուցադրելու պատրաստված։ Պախուրցներն հանված են գլխներեն, ոչինչ կա արգիլող։

Նախահարձակը խարաճեհենեմը կըլլա, ու ահա դիմացինն ալ իր վես, սրտոտ կեցվածքեն ետքը, ջղուտ ոստյունով մը իր խոյանքը կընե։

Գլուխ-գլխի ուժգին հանդիպում մը առջին բախումով, լեռի մը փլուզումը ուրիշ լեռի մը վրա, որուն առաջին ահավորությունը խուլ մռնչյուն մըն է։ Իրար ետ-ետ կմղեն, ծունկ կդնեն իրարու առջև, պճեղներու տակ գետնին երեսը խրամներ կբացվին, շարժումն անգամ մըն ալ, մեկը քիչ մը տեղի կուտա, ընկրկում մը, դիմացինը քաջալերված է ասկե, բայց դեռ կորուստ չի կա հավասարակշռության։ Մեյ մըն ալ, որ առաջինեն ավելի հզոր թափով ուժերնին ճակտի վրա ամփոփած՝ միշտ առաջացում, միշտ ճակատ ճակատի, եղջյուրներու շաչյունեն բոցեր մը կժայթքեն։ Աչվնին միս արին կդառնա, ու պահ մը ալ մեկզմեկ չի տեսնելու կուրությունը կունենան, կկորսնցնեն ուղղությունին, հարվածը երկար եղջյուրներու սուր-սուր ծայրովը իրարու փորի շիտակեր են։

Գերագույն վայրկյան մը երկու կողմին ալ, երկու այս ճախնա-

ծին հրեշները պահ մը իրենց անհեթեթ ղանդվածներով քրտինքի ու իրենց մորթին երեսին ծնած շոգի ամպերու մեջ կկորսվին։

Խարաճեհենեմ ինչքան սպառնացող, ահարկու, իր մրցակիցը սակայն անանկ չերևար. վերջինը դանդաղելու ձև մը կառնե, տըկարի մեկուսացում մը, որ իրեն սուղի կնստի ու մյուս կողմեն սրվոր տերն է, որ ձեռքին հաստ ձողովը, որուն մեկ տեսակը խարաճեհենեմին տերն ունի. միջամտելու անզսպություն կցուցնե հաղթական կենդանիի քթին, բերնին ծանր հարվածներ տալով։ Կըռիվը հոս այսպես անորոշ վիճակի մը մեջ, հեռվեն ճչուն աղաղակ մըն է, որ լսելի կըլլա, հասե՞ք, հասե՞ք, հասե՞ք։

Ամբոխը այն ձայնին կողմը մեկ քալքով տեղափոխություն մը կընե, մեծ աղբյուրին գլուխը։ Այստեղ, աղբյուրին առջևի ավազանի մեջ, երկու բաներ, երկուքն ալ ջրթաթախ, երեսնին ցեխ, անճանաչելի ըլլալու աստիճան քճքճված դիմահեղություններով, վայրկյան մը մոռցնել կուտան գոմշուկներուն կատաղությունը։ Նայադներո՞ւ կռիվ, դլփիններո՞ւ կռիվ թե՝ կնկա կռիվ, որ է՛ն սարսափելին է արևին տակ։

Երկուքն ալ կին կերևան ապահովապես, մեկուն կուրծքը վերեն վար խզված՝ արյունոտած ծիծերու առականք մը ու դեռ ուրիշ մերկություն մը, ան ուղղությամբ։ Մազեր, քուրջի կտորներ, քակված գոտի մը ջուրին մակերեսը, շատ բաներ ու արյունի հետքեր ալ։

Ձայնը մարած է մեկուն, ու սա գնդակահար եղած ջրագռավի մը հուսահատությունով կթալթլա ավազանին երեսը։

Ու Վարդեր հարյուրավորներու աչքին տակ, կըսե ան իր ջախջախված տեղացուին.— Դե՜հ, հիմա ե՛լ, գնա՛, ուր պիտի երթայիր նը, անպատիվ կնիկ, ես կուրծքիդ վրա գրեցի գրածըս, եթե Աստուր շան պես լղելու ըլլի գրածներս, ես նորեն պիտի գրեմ։

* * *

Մեկ-երկու շաբաթ չանցած՝ Վարդեր ինքն ալ իր ձեռքովը ամուսին մը գտնե, լման կին, լման էրիկ։ Ո՞վ հավնեցավ, ո՞վ պըսակեց, ինչպե՞ս, ատոր ատենը չէր հիմա։ Բայց գերեզման մըն էր փնտռածը, աստված երեսին հայեցավ ու նորեն բաց դռնակ մը ցցուց իրեն։

ՔՐՈՆԻԿՆԵՐ

ՊԻԾԱԿՆԵՐՈՒՆ ԶԱՅՆԸ

Միշտ գեղը մնաց միտքս, ամեն օր գեղեն պատմեցի. քաղաքն է եղած տեղս, երբեմն ի վեր է, բայց ինչպես կպատահի հաճախ, աչքս ինքնին այն կողմը կբացվի, հողկուռ, դերբուկ այն կողմի խանարհ ցածութիւնները, որոնք կտեսնամ ալ։

Մեր գեղն է ան, որ կուգա ամեն օր աչքիս դեմ, արևը հոն հասունցած հասկերու օրերուն, ամառը ոսկի գետակի մը դեղնորակ, շողուն հեռապատկերը կպարզե. անկե առաջ, միևնույն տարածութեան վրա, զմրուխտ կանանչներու ծովն է, որ կվեռվեռի ու կերևա հոն փչող հովերուն շունչին տակ։ Միշտ գեղը միտքս, երեկի պես կհիշեմ բաները, որոնք հոն, օրին մեկը, իմ ալ աչքիս տակ հետաքրքրող հով մը ունեին։ Իրավ է, որ պզտիկ էի, շատ չէի հասկնար բացված խփված պատկերներեն, անանկներեն մանավանդ որ թուչունի կտուց մը, կամ գունագեղ փետուր մը գոնե չէին անդրադարձներ։ Բայց բոլորովին ոչխարի աչքով ալ չէի տեսնար հանդիպածը՝ դեմք մը, թուփ մը, երևույթ մը, ինչ ալ որ ըլլար, ինչով որ հենց քիչ մը արտակարգ ըսվածին թերաստվերը պահեր, անոր մոտն էի ապահովապես, ես ալ բերանաբաց շահագրգռվող մը։

Երեք հարյուր տնվոր շենլիքի մը մեջ, «աղվեսին ձագը»* իր թիզ մը հասակին չափովը, չամչուկի ստվեր մըն ալ ինք ուներ գետնին վրա։

Երսուն, երսունհինգ տարի առաջ, մեկ ժամ կար այն գեղը, մեկ հատ ալ ժամացույց։ Ժամը՝ ըսեր էին, կհասկնայի ինչ էր, ուր առտու իրիկուն կերթայի, իսկ այն ժամացույցը, որ Աղոյենց Մըղտես Ակոբը կկրեր շլիքեն մինչև գոտին ճոխ արծաթ շղթաներու փաուփաո խուրձով մը, որուն մեկ տեսակը գեղին հարբոբ կցուցադրեր— այն ժամացույցն էր ահա, որ խելքիս չէր պառկեր։

* Մեծ հորս անունին կցված հեգնոտ մակդիր մը։

Բոլոր գեղը ընդհանրապես ու գարունեն մինչև աշունին վերջը հողի-ջուրի տեր երկրագործները մասնավոր հետաքրքրութեամբ, այն մեկուն՝ Մղտեսի Ակոբին անունն ու հեռքը կփնտռեին, որ անոր ունեցածին ժամացույցին վրայով հարցում մը ընեն, անկե պատասխան մը ընդունին, այնպես որ մարդը գիշերն ալ «արին քընուն» մեջ ստիպված էր պատրաստ ձայն մը տալ զինք կանչողին, որուն ալ գիտեր ըռելիքը, պարապ չէր ձգեր. շատ հեզ թիվերու խորհրդավոր հայտնութիւն մը սոսկ խնդիրը ալ փակված պիտի հասկցվեր, որ գեղացին վայրկենապես մութին ծոցը, ոգիի մը պես կանհայտանար։

Աս ըլլար պատճառը, որ մարդը ամառ գիշերները հավի քուն մըն ալ չի կրնար քնանալ։ Ու տանիքեն կամ առիքին տակեն իր պատգամը տրամադրելի ընելու վայրկյանի մը, ձայնը միշտ նույն լուրջ շեշտին մեջ կպահեր ապահովելու համար դիմացինը, թե ինք ոչ միայն չի նեզվող մը կմնա այն տեսակ անհարկի, ապաժամ դիմումներե, հապա նույնիսկ անոր հասկցնելու թե՝ օր մը իր մեռած վիճակին մեջ անգամ կրնար համարձակ նույն հարցումն ընել, նույն պատասխանն ընդունիլ։

Մղտեսին ցորեկն ալ իր հարցուկի դերին մեջ, որևէ մեկը հուսախաբ ետ չի խրկեր. իրեն դիմողին քիչ մըն ալ այնպես կհասկցվի թե՝ պարտավորության մը պես կրսե ըռելիքը, ժամացույցը գոտիին փաթեն հանելով, անոր վրա խուսափուկ, բավական մըն ալ հպարտ նայվածք մը պտտցնելե ետքը։

Քովինները՝ ան ատեն, որ Մղտեսին ժամացույցին բացումը կընե մասունքին պարույրները խառնշտկող քահանայի մը պատկառոտ կեցվածքով, անոնք մեյ մը ցուկնին երկնցուցած իրենք ալ հոն բան մը տեսնելու ձևերը կընեն, մեյ մըն ալ գործիքին տիրոջը գոտիեն կախ շղթան կսկսին շփել, շրշշրշել, արծաթին մաքուր ըլլալը կրսեն, որ իրենց համար խորունկ հիացում մըն է, հիացում մանավանդ ան ժամացույցին կազմածին համար, որ ինքնիրենը կբանի եղեր, գիշերն ալ, ցորեկն ալ դուլ դադար չի գիտեր, ու եթե Մղտեսին հարյուր տարի ապրի, ժամացույցն ալ նույն անընդհատ գործունեությունովը կրնա հարյուր տարի ու կարելի է քիչ մըն ալ ավելի ապրիլ։ Ո՞վ շիներ է արդյոք, ան ի՞նչ իմաստուն մեկը եղած պիտի ըլլա անոր առաջին գյուտը ծրարողը, եթե աստված չէ այն երկաթի պես քանին հոգի տվողը. բայց կըլլա՞ որ հավատան թե՝

իրենց պես մարդ մըն է, իրենք, որ արորին ծակերն անգամ համրել չեն գիտեր։

Մղտեսին շուրջը այս միամիտ զարմացողներուն մեջ, որոնք իրենց տարեկից հիսունոց, վաթսունոց ծեր գոմշուկներն են, ես պակաս խենթ մը չպիտի ըլլայի զարմանալու համար մեյ մը ան ծիծեռնիկին, որ ձեռք-ոտք չունենալով մեկտեղ՝ աշխարհը կհովե, մեյ մըն ալ այն փոքրիկ արծաթ տուփիկին, որ միս ոսկոր չունենալով՝ կշարժի կըսեն, կբանի կըսեն, մարդու հետ կխոսի ալ եղեր։

Անգամ մը միտքս դրի որ, ինչ ըլլա չըլլա, ես ալ Մղտեսին մոտը, շատ մոտը, իմ սրունքներուս վրա ըլլամ. գեղին մեծատունն է եղեր. թող ըլլա. հարուստ մարդ է կըսեն, հո՞գս է, ես ալ խոշ պզտիկ մրջյուն մը չեմ ըսվիր. ինք կուզե, թող հետս ալ չի խոսի, զիս հավ-ձագ մը ճանչնա թող. միայն թե՝ ես հաջողեի ան գոտիին սատա-նան քիչ մը սանկ մոտեն տեսնալ։ Գյուտս ըրեր եմ, բայց կկասկա-ծիմ. պահ մը ես ինծի սրտապնդող մը կըլլամ, ինչո՞ւ չէ, ես ալ իրավունք ունիմ, կըսեմ, քանի որ գեղին մեծ ջուրեն մեր արտն ու այգին ջրելու համար քիչ մը բաժին ալ մենք ունինք ըսեր է մայրս, կերթամ անոր բան մըն ալ ես կհարցնեմ։ Ան օրը լուսուկան երա-զեի, ծոցս կըլլար։ Մղտեսին, ինչպես կհանդիպի, մեր դուռներուն քովերը երկար նստեր է, աչքը շեշտ իր գուլպային ասեղներուն վրա, ուրիշ կողմ չի նայիր, մինակ ինքն ու ինքն է. գուլպա ալ կհյուսե, հապա՞. գեղին մեջ մեկ հատիկ հյուսողը, որուն հավասարող չի կա կըսեին։ Լուսաբացին կանուխ գուլպային «փինչեն» սկսվածք մը, իրիկուն չեղած՝ արդեն զույգ մը մեկտեղ բանած լմնցուցած կըլլար։

Մղտեսին զիս տեսնելուն, անունս կուտա, ինձմե գավաթ մը պաղ ջուր կուզե. թո՜ւ, թո՛ղ, եթե պետք ունի, աչքերս ալ ուզե, հա-ջողեր եմ, աս գաղափարովն է որ արևը կուգա կլեցվի աչքերս։ Գա-վաթ մը ջո՞ւր էր ուզածը, ես ան ուզածեն շատ էվել՝ լեցուն վարդա-գույն կուժ մը կհրամցնեմ։ Հաճի աղան խոշորկեկ աֆերիմ մը կեր-կընցնե ինծի, որը ես վայրկենապես կարմիր խնձորի մը պես կտե-ղավորեմ գրպանս թեև, բայց ուրիշ փոխարեն մը, ժամացո՛ւյցը...

Սիրտ կընեմ ու հարցումիս բանաձևն ահա.— «Սաթը ի՞նչ է, հաճի՛ աղա»։ Մարդը երեսս կնայի զարմանքով մը, որուն մեկ ծայ-ը մեծ հոմը գորովին նմուշը կա։ «Սաթն ի՛նչ ընեիր, տղաս»։— «Մեր ջուրին կարգն է, վրա կբերեմ, չենք գիտեր որչափ պիտի վազե»։— «Ձերը չպիտի վազե, ձերը չպիտի ըլլի, կըսե. դեռ ձերը վազն ալ չէ»։ Շիտակ խոսքին ի՛նչ ըսել, իրավ է. կամ ե՞րբ մենք

օր մը մեր ժամանակը կշռելու համար ժամացույցի պես բանի պետքը միտքե անցուցեր էինք։

Լեզուս կոկորդս կփախի. հաճին ավելի զայրույթ մը չպատ-ճառելու համար, կրունկիս դիրքը կփոխփոխեմ, հեռանամ ու չի տես-նամ երեսը, մինչ ես իմ խելքովս անանկ կգուշակեի թե՝ մեկ սու-տով անոր պեխը ափիս մեջ պիտի ունենամ, երկուքով՝ գոտին ալ, ժամացույցն ալ մեկտեղ պիտի խլեմ։

Անգամ մըն ալ կնայի երեսիս։ «Դուն, կերևա թե, տղա՛, հենց սահաթս տեսնելու փափագդ էր, որ հայտնեցիր, հա՞, չըսե՞ս շի-տակը»։ Հաճին իր աս վերաբերումին անուշությունովը քիչ կմնա, որ մեռած հայրս մոռցնել տա. իր լեզուն ճիշտ հոգիս հնհնցնող մարմաջին վրա կպահե, ու չուշանար հոժարելու թեև քիչ մը պայման կխառնե իր շնորհքին մեջ։ «Սահաթս, ահա՛, տե՛ս. ամմա դուն ալ ձեր էգիին գինիեն լեցուն փարչ մը գինի պիտի բերես»։ Կընեմ խոստումս. համաձայներ ենք. սահաթը ահա, ա՛ն իսկ ժա-մացույցը, որ պահ մը առաջ արևին չափ հեռուն կմտածեի ինձմե։ Ի՜նչ աղվոր, ի՜նչ հիանալի բան, թույլ կուտա տերը, որ քիչ մըն ալ մատս մոտեցնեմ անոր. սիրուն տուփ մըն է, կափարիչ մը ունի, որ ուղած ատենը ան կափարիչը վրան կղպելու ծառայությունը կընե, կխորհիմ. մատիս ծայրովը ան կլորակ ճերմակ ապակին կշփեմ. վրան սև-մև կետանիշեր կերևան, անոնց մեջ— տեղը կարճ երկայն, զույգ մը մազի նրբությունով բարակ ասեղներ կտեսնվին, որոնք մկրատի բացվածքով մը թրքերեն ութ մը կձևացնեն. մեջեն ալ ինչ ձայն ըլլար ան,— ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ. մինչև մազերուս ծայրը կարմիր հետաքրքրությունով լեցված կզգամ... մեջե՞ն է ատ ձայնը, բայց ուսկե՞, ինչպես, հոն պզտիկ միջա՞տ մը տեղավորված ըլլա։ Մղտեսին զիս իր շնորհքին մեջ խեղդելու համար թող կուտա, որ զայն անգամ մըն ալ ականջիս տանիմ, այդ կերպով ալ ահա նույն ձայնը նորեն, ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ։ Աչքերուս քով նույն ատեն ուրիշ հարյուր աչքեր մը ունենալու ըղձանք մը կծնի մեջս, որ շատ տեսնամ. վրայինը տեսա, մեջն ալ, միջինն ալ հաջողիմ տեսնալ։ Մղտեսին չըմբռներ չափը մանուկի եռեփ անրջանքին. նա մեկեն չը՛խկ՝ խուփը վրա կբերե, ու հապճեպով մը գոտիին մեջ զետեղելու կնայի. գոտին ալ այնչափ մը ծալծլուն ու խոշոր, որ կրնա զիս պարտրկել ու դեռ աղբորս համար ալ լայնկեկ խոռոչ մը ունենալ։

Այդ եզական հանդիպումը մոռցնել կուտա ինծի ամենեն սի-րած բաներս, աշխարհիս վրա միակ երջանիկ մարդը Աղոյենց Մըղ-

տեսին ըլլալ կհավատամ. ան, որ ամեն օր այն աղվորիկ խաղալիքին հետ քուն կըլլա կարթընա, իր վիզին, իր կուրծքին վրա կպահե. ուզած ատենը ձեռքին մեջ կառնե, կշփե ու դեռ կրնա անոր մեջինները խառնել հասկնալու քմահաճույքներ ալ ունենալ։

Երշանիկ մարդը միակ, ու կավելցնեմ ես ինծի, ըսել է, շատը անոր համար է, որ ամեն հանդիպող հարգանքի բաժին մը կհանե այն մարդուն. տերտերները անոր տունը կայցելեն շատ, քաղքեն, վանքեն փրթող վարդապետներն ալ հաճախ անոր հյուրերը կըլլան, գեղացին իր բոլոր գործերը անոր տրամադրության հանձներ է, ժամացույց մը ի՞նչ հմայեակ պիտի ըլլար, կամ ի՞նչ «Թըլըսըմ», որ անոր կրողը այնչափ մը մեծատունի դիրքին տիրանար։

Ես ալ արդյոք աշխարհքն ի՞նչ ձև առնե կըսեմ, արևն ուսկե՞ելլա, որ կողմ երթա, որ ես աղվեսի ձագս ալ նանկ բան մը ունենամ օր մը վիզես անցուցած։ Ի՞նչ գինով կծախվի ան, չպիտի՞ ունենամ ատկե հատ մը, երբ մեր էգին ամբողջությունով անոր գին բերեմ, խաղողն ի՞նչ ընեմ, խնձորն ի՞նչ ընեմ, ժամացույց մը, ա՜խ...

Ան օրերը քիչ մը ավելի կանուխ շուտ-շուտ եկեղեցի կերթամ, քովս աղոթող գեղացին եղի, գոմեշի խնդրանքը կընե կապույտներու աստծուն, ես ալ կուրծքս ծեծելով՝ ժամացույց մը...

Բայց մինչև ե՞րբ սպասել այսպես։ Ձեռքս գործի կնետեմ, որ ես շինեմ հատ մը. ախրը որ քիչ մը այն համոզումը ծայր տվեր է մեջս թե՝ անոր շինողն ալ ինծի պես աչք, ականջ ունեցող մարդ մը եղած պիտի ըլլա։ Որոշումս տվեր եմ ու անմիջապես ահա գեղին փողոցները է՛ն անկոխ, անծանոթ անկյուններն արագ, հապճեպ քայլելով պտույտի կելլամ, շինելիք ժամացույցիս համար թիթեղի մը փնտռտուքն է ըրածս։

Հոս ու հոն փողոցի մը ծայրը կհասնիմ, ուր, աղբակույտի մը վրա, ճմլված ժանգոտ գավաթ մը կհանդիպի աչքիս. հը՛, ուզածս ահա, որ թիթեղ ալ է. վեր կառնեմ ու ընդոստ մեր տունին կողմերը կգտնամ ու կսկսիմ թի՛ք, թա՛ք, թի՛ք, թա՛ք, ըղունկիս կզարնիմ, մատներս կարյունին, քարը կտոր-կտոր կըլլա, հոգ չեմ ըներ, հերիք, որ թիթեղը իր գավաթի ձևը կորուսած, պահ մը վերջը Աղոյենց Մղտեսին ունեցածին նմանելու կերպեր մը կցուցնե։ Բանը որ թիթեղի ու քարի կտորտուքներով կգլխի եղեր, ան ի՞նչ միամբությունն պիտի ըլլա քիչ առաջվան հևուքներս։ Վայրկյան մը կհուսահատիմ, որ նոր փոխած քարիս տակ, գեշ ծամածռության մեջ երևցած գավաթը, գեշ մանավանդ որ տակը ծակեր ալ սկսան երևալ, կտորներ, կոտրտուքներու իրարու անհամար ուձևություններ, քարը ձեռքս՝ կծեծեմ, կծռեմ, կձևամ, եզերք կշինեմ, մեջեմեջ կանցնեմ սա կափարիչ կըլլա, ան տակինին կհարմարի։ Անհաջող ձեռնարկ մը, ինչո՞ւ։ Այս տեսածս ալ այնպես չէ՞ր մի։ Շատը լմընցած է ու մնացածն ալ դժվարություն մը պիտի չըլլա, մեջեն լըսվելիք ձայնին, ձգձգներուն համար քանի մը ճանճ կբռնեմ ողջ-ողջ, ու շուտով մը զանոնք կափարիչին տակ խմբելով՝ գոտիս կխրեմ, ապահով ըլլալով թե՝ անոնցմով ժամացույցս պիտի շինվի։

Դե՜հ դե՛ն գացեք պահ մը. առաջինը չեմ ես, գոտիս ժամացույց ունիմ, Աղոյենց Մղտեսին պես հարուստ մըն ալ ես եմ, թող պետք ունեցողն հարցնե՝ որը ըսեմ, թե քանի՞ է ժամը, կամ քանի՞ բայկոթ մեկ ժամ կընե։

Գոտիս տակը, շապիկիս ու մորթիս մեջտեղը ժամացույց մը պահած ըլլալու խնծիղը զիս լման գինով մը կերևցնե, բայց, տե՜ր աստված...

Քիչ մը կանցնի չանցնիր, ժամացույցս դուրս կբերեմ ու մեջն ի՞նչ.— ճանճերը փախեր են, հատ մը միայն մնացեր է, ան ալ կծկվեր, հոգի կուտա։

Առաջին փորձի մը հատուկ թերի մըն էր տեսնվածը, ես երկրորդի մը կխորհիմ։ Այս անգամ ճանճերուն տեղը ափ մը մրջյուն կդնեմ, ինչպե՞ս անդրադառնայի մտածել, որ մրջյունը համր միջատ մըն է, որ չպիտի կրնա ժամացույցիս ձայնին պակասը դարմանել։

Հազիվ տուփը իր միջուկներով գոտիս կտեղավորեմ, մերկ մորթիս վրա ասղնտող բաներու մը ներկայությունը կզգամ, որ զիս վերվեր կթոցնե նավիեն հալածվող հորթի մը ցատկոտուքներով։

Անմիջապես ժամացույցս կհանեմ. հիմա ալ անկե այն մրջյուններն են փախ տվողները, որոնք դուրս սողոսկելով, մորթիս վրա իրենց բույնը կփնտռեն։ Նորեն չի հաջողեցա, կմտածեմ պահ մը, զայրույթը կու

ժամացույցի մը իտեալը ինծի դեռ ինչե՛ր ընել մղելու ուժովը զրսպանակը պիտի մնա։

Գտակս ձեռքս առած, հեռուն հորիզոնաձև բռնվածք մը կընեմ ես ու կատվի թաթերով կամացուկ մը այն թռչող կարիճներուն բույնին կերթամ ուղղակի. ես զիս այն աստիճան զգույշ քալվածքի ու հավասարակշռության մեջ կպահեմ, որ երկու անգամ իրարու վրա շունչ չեմ կրնար առնել։ Բույնին քովն եմ ճիշտ. սիրտս կուրծքես կթռի ու թևերուս թուլնալն ալ շատ աղեկ նշան չեմ հավատար այն տեսակ նեղ վայրկյանի մը մեջ։

Գտակս իր բերնին կողմովը ծակին վրա կխփեմ հանկարծ, կը-գոցեմ բույնը, գտակը ծանրության մեջ ինքնին ինկած է ձեռքես, անով ոչինչ կշահիմ. քիթիս բերնիս վրա կայծե տարափի մը կսկծցնող զգայությունը կունենամ. կիճերնին ասեղի պես կխրին ու կպած տեղերնին սոված տզրուկի բերանով կկառչին։ Կուլամ վերջապես, կուլամ, մատը քթին տակ ճզմող տղային պես կճչեմ. փախիմ՝ ետևես պիտի գան, կենամ, աղաչեմ, խոսք չպիտի հասկնան, ամայի տանիք մը, անկե ո՛վ կլսեր։ Շատ չուշանար, դրացնին կինը ավել մը ձեռքը քովս կխոյանա, սիրտ կուտա ինծի, որ չվախնամ ու ինք միևնույն ատեն ավելի հարվածներով պիծակներուն կսպառնա, օդը կավլե, գետնին կզարնե, մեկ քանին թավալգլոր կզգետնե ալ թեև, բայց խեղճ կինը ինքն ալ նշավակ մը կըլլա անոնց կիճերուն. անոր հետ վերջապես իրար զիրար քաջալերելով փախելու կրունկ մը կվերցնենք։

Ան մեկ կողմ, ես ուրիշ կողմ մը, մինչև տունը, մինչև մեր դուռին շեմքը դեռ երեք-չորս կողմե հալածանք, որ կշարունակվի ետեվես, անոնք ալ ծոծրակիս վարերն ու կռնակս կխարանեն, ու բանս լմնցած կըլլա արդեն։

Շաբաթ մը երկուք, գլուխս գետնեն չեմ կրնար զատել. երեսս նայողը ջրգողվածի մը ուռուցք կտեսնա, աչքերս չեն երևար, կրնա ըլլալ, որ ականջիս ետևը փոխադրված են անոնք, ու քիթս ալ չեմ գիտեր ուր կորսված ըլլալ, գլուխս իր ամբողջության մեջ դոմ դոր ահագին ձմերուկ մը։

Երկու-երեք շաբաթ դուրսի արևեն զրկված ըլլալու դժբախտության մեջ խլուրդներու խումբ մը կփնտռեմ. կույրը ինչով մխիթարվեր։

Այդ փորձությունը սակայն ինծի այլապես ներշնչեց ու մնաց մեջս իր ամբողջությունովը թե՝ ինծի, անոր պես հասարակ կավե

զանգվածի մը համար, իրավ է, որ հեշտ չէ անմիջապես լռել մը ելլալով լուսինը խլել, բայց մրջյունին ու պիծակին վախովն ալ իտեալին հրապույրն ալ մոռնալ ու անճրկիլ թուլորեն ոսկեգեղմին հասնելու վազքի մը մեջ, ա՜ռ էր, որ չպիտի ուզեի հանձնարարել անանկներուն մասնավորապես, որոնք իրենց զպրոցի գրասեղաններուն վրա միտքի, մտավոր տվայտանքի հետևանքով անձնատու կմնան այն հուսահատ մտածության, իբր թե՝ անապատի ճամփորդին լույծ ավազը կկոխեն իրենց ոտքերուն տակ, իրենց առաջացումը արգիլող, ու գլխուն վրա ալ արևին կրակը կշամփրեր։

Դպրոցին մեջ, թե տուներու որևէ մեկ խոնարհ անկյունը, անտեսված անանուն փոքրություններ կան— որոնց մեջ գուցե բոլորովին անէացած ըլլա անձնավստահություն ըսված բանը՝ հոգիին ձիգ ջիղը, որևէ պարագայի ծնցուցած պատճառով. բայց, է՜հ, ժամանակը որքան ալ աններող ու սուղ ըլլա, դեռ պիտի բավեր ա՜յն, որ ժամացույց մը շինելու պես առաջին փորձե մը ետքը՝ երկրորդին վրա ալ խորհվեր։

Ամեն անգամ, որ գրպանիս ժամացույցին ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ, ձը՛գ խազերը կկպչին ականջիս, երեսուն-երեսունհինգ տարիներու հեռավորությունե մը տանիքին պիծակները կլսեմ, որ կըսեն ինծի. «ավելի բախտավոր չպիտի՞ ըլլայիր, որ ժամացույցին փափաքդ ճիշտ իր ատենին ավելի մարդուս կյանքին օգտակար բանի մը հետ փոխանակած ըլլայիր՝ բարձրություններու հետամուտ արծիվին թևերը սևեռակետ պահելով»։

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա

ԵՐԴԻՔՆԵՐՈՒՆ ՏԱԿ

Հիմա այլևս լմնցած է գյուղական հևքոտ աշխատությունը՝ դաշտը, այգիին մեջ ու ամեն կողմ. գյուղացին իր երդիքին տակ ամփոփված է այնպես, ինչպես մրջյունն իր բույնին մեջ, կամ մեղուն իր փեթակին խորքը։

Մեկուսացած դուրսի աշխատություններն, բայց իրա՞վ է, որ նա իր ծածքին տակ բայող կենդանիի մը թմրությունը կապրի որպես անդործ անաշխատ մեռածությունը։

Գյուղացիին հանար բաված է թե՝ նա իր գերեզմանին մեջ ալ տակավին կփորձե ձեռք-ոտք շարժել մոռցված չարչարալի աշխատություն մը հոն լմնցնելու համար։ Ու այս մեկը ո՛րչափ ճշմարիտ և վավերական։

Գյուղական տունը ուրեմն այս պահուն ալ իր եռուզեռին մեջ գործարանի մը հանգամանքն ունենա կարծես։ Հոն ճռճռը, անդին ճախրակները, ան մյուս անկյունը խճճած քաշողները, տանիքին վրա ալ չալխավուն, իրար խաչաձևող զվարթ ձայներ, ճռինչներ մը կստեղծեն, որ լսելու ատենդ կմոռանես, որ գյուղացին դաշտեն դեպի տուն՝ տեղը փոխած է միայն, բայց ոչ աշխատությունը։ Մեծ պզտիկ ձեռքերնին որևէ գործի մը տրամադրած՝ աշխատություն մը կհետապնդեն իրարու հետ համաբերտ ու լուռ համակերպության մը մեջ, որոնց շարքերուն խեղդուկ տրտունջ մը իր լաչակին տակ որոճացողը գուցե ան հարսնուկը ըլլա, որ չնայելով ձմեռի սառույցներուն, տունին շրկիրը եղած է, ու այս հեք անխոսուկ անդամը ընտանիքին՝ օրվան մեջ այնքան մը երթուղարձ կկատարե աղբյուրին ճամփուն երկայնքը, որ պահ մը կտարվիս խորհիլ թե՝ ան մեծ առվակը իրենց տունին կողմը կուզե վազցնել։

Հարսնուկը կկատարե իրեն բաժին հանված այն դժվար աշխատությունը, երբեք միտքեն չանցնելով հայտնի ընդվզում կամ ըմբոստացում։ Այն նախապաշարումը ունի, թե իրեն ճակատագիրն ալ այդ ճամփուն վրա տրված է վերջակիտվիլ։

Ընտանեկան այս բաղմանդամ համայնքին մեջ քիչ մը կարելի է այն մեկը իր հանգստության տեղը եղած ըլլա, որ հունա տաքուկ թոնիրին վրա կլորված՝ մեկ ծունկին վրա փոքրիկ թոռնիկ մը առեր կպահե, մյուս կողմն ալ իր չարչխտած մատներովը տունին կատուին կռնակը կշոյե իր փոքրիկ թոռնիկին առջև կենդանի խաղալիկ մը ապրեցնելով։ Մերուկ մայրը տունին, երջանիկ ըստ երևույթին, իրավ է, բայց թե որ կուզեք, պահ մը խոսեցուցեք զինքը ու տեսեք թե ինչ տեսակ ցավերու ամբար մը կա իր ցամքած կուրծքին տակ։

Բ

Ա՜խ այն հովիվները, դաշտի այն բանվոր մշակն ու բոբիկ գլխարաց տավարածները, որ տարվա արշալույսի պահերեն մինչև իրիկվա վերջալույսին արևի կյանք մը կապրին և բոլորովին ոգևորված տուն կդառնան։

Կուզեի ես ալ գեղացի մը ըլլար հիմա, կուզեի վճիտ ջուրով պաղ աղբյուրի մը գլուխը լացող ուռենիի մը տակ ըլլալ հիմա, կուզեի կարթը ձեռքիս հոն ձուկերը ցամաք փոխադրել ու անոնց օրհասի ընթրոստ գալարիքները տեսնալ։ Հետո կուզեի հրացանը ուսիս՝ խիտ ծառերով անտառ մը մտնալ ու աչքիս ծայրովը գիրուկ լորամարդ մը տեսնալ, որ գլուխը թևերուն տակ քաշած իր մտմտուքներուն մեջ սուղված է։

Գ

ԱՐՔԱՆ

Ժողովրդական դերբուկ դեմքերու կարգին՝ մեկն է այն, որ սակայն իր մեկ քանի առանձնահատուկ գիծերով ուշագրավ բան մը ունի, ունեցեր է, զոր մեր հետաքրքրությանը կենթարկվի։ Արքան։ Այս անունը որոշ չենք գիտեր, թե անոր որ մեկ հատկանշությունը կլուսաբանե, բայց սա ստույգ է, որ նա իր կենդ օրերուն բավական կոկոզավիզ կեցվածք մը ունեցած պետք է ըլլա հանդեպ բոլոր այն երևույթներուն և իրադարձություններուն, որոնք իրեն հետ չունենալով իսկ կապ մը, առնչություն մը, ինք անոնց մասին չոր շեշտ ու տիրական կարծիքներ հայտներ է, հեղինակորեն սկզբունք պաշտպանող ու հետապնդողի խենթ վճռականությամբ։ Այսպես ահա մեր Հակոբ աղբարը իր այդ անունին հանրացումեն տարված ու շփացած՝ մինչև հիմա ալ նույն այդ վերադիր ծաղրանունովը ապրեր է։ Հիմա կկարծենք, թե ութսունն անցուկ պիտի ըլլա ու կապրի տակավին։

Հասարակաց հոժար ծառայարկու մըն է, ու կյանքին բոլոր օրերը ամուրի ու միանակ քնացած իր բարձին վրա, իր գիշերվա երազն իսկ սահմանափակությունով, թե ինչպես առտուն սկիզբ մը ընե օրվա աշխատությանը։

Ատեն մը իբր թունդ միսիոնարական՝ ժողովարանին ժամկոչությունովը պատվեր է ինքզինք, հետո կարծեմ իր շուրջը լքուած հովերեն մը մսելով, որոշած կըլլա հայ եկեղեցիին խնկոտ ստվերամածությունները դառնալ ու հոն սպասել, որ նմանօրինակ գործ մը ալ այս վերջին տեղին վրա ունենա։ Մեկ-երկու տարի առաջ Արքան եկած էր իրեններով մեր եկեղեցիին սեփական տուներեն մեկուն մեջ սրթար ելլալ։ Հոս զինք մենք ավելի մոտեն տեսնելու

պատեհությունը կունենային ու կլսեին ու կհետաքրքրվեին բոլոր անոնց ու անոնցմով, որ այս տարեւոր աշխատությանն էին։

Հակառակ որ ան ութսուն ձմեռներու սառեն ու բուքեն ծեծվեր խարանվեր է, բայց տակավին իմ ու քու կորովին պատրանքը կուտա, երբ ամեն անգամ ահագին մեծությունով ջուրի տիկ մը քամակին՝ փողոցին մեջեն անց մը կընե, պզտիկ վարձքով մը ասորւոնոր հարկավորված ջուր տանելով։ Միջահասակ մսուտ կազմ մը ունի, բայց դեռ իր մեջքը բոլոր այդ ծանրություններուն ներքև բնավ կորացած չերևիր։ Տարիները իր աչքերուն վրա ավերք մը բերած ըլլալ կթվին, ընկճվող բան մ'ալ իր երեսներուն վրա, թե ոչ, ինչպես կակնարկեինք, ջրկիր Արքան, իր զառամ տարիքին մեջ ալ խոլ զվարթությունն ու փիլիսոփա անտարբերություն մը կպահե, ինայելով իր աշխարհքը իր շուրջը շատ մը ցավերու տակ կտվայտի։

Բեռան տակ իսկ կբարևե ան, կերգե, հեքիաթի փշրանքներ կնետե հանդիպողին, հիմար քրքիջներու պատրաստ տրամադրություն մը կպոռթկացնե մեջեն։

Մերթ ապուշ մը, պահապան մը արտերուն գլուխը, որ հեռուները ահագնագոչ կանչ մը կհասցնե։

Դ

«ՄԱՀՈՒՆ ՏԱՐԻՆ»

Մեր պապերը կպատմեին, թե այն տարին ամեն տուն լաց մը կար։ Այն տարին թաղին, գեղին քահանան էր, որ միայն արցունք չէր քամեր աչքերեն. այն տարվան գիշերն ու ցորեկն ալ տուներու անշունչ առարկաներն անգամ անհուն, անդարմանելի տրտմություններով սգավորի սևեր ունեին վրանին։ Ամեն բանուկ ճամփան այն չէր, որ շուկա կտաներ, կամ գեղ մը ուրիշ գեղի մը հետ կկապեր. ճամփան բանուկ ու բազմության աղմուկովը լեցված՝ ան էր, որ տունը գերեզմանին հետ կմիացներ։ Դագաղը բավական չէր եղած մեռնողը գերեզման փոխադրելու. տանիքին սանդուխները, կամ շատ օրեր այնքան շատ ըլլա եղեր թիվը մեռնողներուն, զոր իրենց տեղեն վերցնելու համար, փալասներ գործածվեր են, անոնց մեջ չորսի-հինգի մարմիններ տեղավորելով՝ չորս հոգի չորս ծայրերեն բռնած հունա, հասարակաց փոսը տարեր են։ Քահանան ժամանակ չէր գտներ ետեւը նայելու, կամ մեռնողին տունը երևնալով անոր գլխին վերև հոգեհանգստյան մը կատարելու։ Քահանան ու

անոր հետ դիաթաղներու խումբ մը՝ մաշտոց ու բրիչ ձեռքերնին, ոտքի վրա՝ գերեզմաննոցը կսպասեն, որ ժամանակ չի կորսվի, ու անմիջապես նոր տարվածները հողին հանձնեն։ Քահանային ու մեռելաթաղներուն հանած աղոթքի ու բրիչի ձայներու արձագանքը ասդին քաղաքամեջը լացն ու շիվանը կբլլար։ Կուլային, մաշերնին կփետտեին, գլխնուն վրա հող-մոխիր կհոսեին։ Դեռ անոնց մեջ իր ունեցած չունեցածն ալ դուրս թափող կար. ցորենը կամ տունին ամբողջ զար-զախրան դուրս կնետեին, աղքատին, անցորդին, որ «Տէր տեսցէ եւ այց արասցէ»։ Բայց տերն Եհովա ոչինչով չի ցածնար. նա իր գերանդիին մեկ շարժվածքովը հարյուրներ կթափեր իր առջևը։ Հասածն ու չհասածը մեկտեղ կհնձեր։ Մանուկը ալևոր ծերունիին հետ կպառկեցներ։

Մարդիկ, ողջ մնացող ու լացողներ, մեկ կողմեն՝ երբ մեռած մը հուղարկ կդնեին՝ այդ միևնույն ատեն փողոցին երկայնքն ալ խոշոր կաթսաներ կշարեին. «հերիսա» կեփեին տունին սիրված եղն ու գոմեշը զգետնելով, փողոցը զոհերու արյունով կոռոգեին, որ Աբրահամի և Իսահակի աստվածը, եթե հնար է, անգամ մըն ալ այս բոլորանվեր զոհերու ճենճովը հավանի վերջ տալ իր աշխարհավեր ցասումին։ Երկինք բարկացած, սակայն, ո՛չ զոհ, ո՛չ պատարագ կընդունի։ Ու այսպես ամբողջ օրեր, ամբողջ շաբաթներ նույն ճամփան, նույն դագաղն ու փալասը տենդոտ գործածության մեջ, այն կրոնի պաշտոնյան՝ քահանան իր նույն տեղին վրա ոտք գամած՝ իր աղոթողի մրթմրթուքովը հայտնի պայխուշի մը վայգուժը կղրկե իր ետին, քաղաքը։ Ու անոր ոտքին տակ երկիրն ալ իր երախին անհունությամբը մարդկային միս ու ոսկոր կպահանջե։ Ինչե՞ր, ի՞նչ սիրտ բզկթող դեպքեր այն տարին իր բոլոր գիշերներով, ան դժնդակ տարին իր արյուն ծծող արևներով, որ երկիր, աշխարհ դատաստանական արհավիրքներու ու սոսկալի վախճանի մը մատնած էր։ Ողջ մնացողը փուշ ու տատասկ կկոխեր ծաղիկները, բերան ունեցողը մեղրն ու շաքարը բարկ քացախ կկլլեր։ Քառասունհինգ—հիսուն տարի առաջ «Մահուն տարին» էր ան։ Մեր հիները անոր հուշքը որոճալով երբեմն իրենց ամեն մեկ թարթիչներեն մեյմեկ արցունք կկախեն տակավին։

Բայց ի՞նչ։ Հիմա վերջացա՞ծ կկարծեք դեպքերու այն շարքը։ Հիմա ալ ո՞ր մեկ տուն իր սուգը չունի կամ անկե առաջ իր լացն ու շիվանը չէ ըրած ու չըներ ամեն օր։

Ան օրվան դագաղն ու չգիտեմ ինչը եթե մեկե ավելի անշնչա-

ցածներ կփոխադրեր գերեզման, հիմա ավելի սոսկալի չէ՞ կմտածեք, եթե հիմա, երբեմնի կամ սովորական դաղաղին տեղը քառանիվ կառքն է, որ կխոխռա, քաոսն է, որ բերանը բացած կուլ կուտա։ Գժոխային թոհուբոհ մը, Ամերիկա ողջ-ողջ կպահանջե իր ծամույքը, ողջ-ողջ կկլլե, ու ամբողջ քաղաքներ մարսելու իր տարօրինակութիւններով դեռ կրնա ըսել, որ ափ մը աղնդեր ալ չէ իր կրափին մեջ առած ծամածը։

Մահուն տարին հիմա ալ, մահերու տարիներ՝ տաս-տասնհինգ տարիներե ի վեր։ Անիծյալ ըլլա ան, որ առաջին ճամփորդը եղավ դեպի այն դժոխքը։

Ե

ՄԱՃԱՌՈՍԸ

Փեսային հալավը խնամոտ ծրարվածքով մը մեջտեղն է, աթոռի մը վրա։ Քահանան ալ իր կարգին հարսնևորներուն գլուխը բազմած՝ հալավը օրհնելու տենդոտ արտորանք մը կցուցնե։ Նունկ կուզե, կրակ կուզե, ժամկոչին հանդիսավոր, հպարտ հրաման կընե, որ այնինչ խաչը բերե։ Ժամկոչը և ուրիշներ էփել-թեփել կհատցնեն ուղվածները։ Խնկամանը հալավի ծրարին վրա մանուշակ մուխ մը տարտղնելով, վայրկյան մը մեռելի տունի մը սուգին զգայութիւնը կուտա, բայց չէ՛։ Հարսնեատունին մեջ ուրիշ շատ մը բաներ կան, որ մոռցնել կուտան մահն ու մեռելը, մոռցնել կուտան երեկինը, երեկի վիշտը, որ հոգիդ կծածկեր. հիմա վայրկյան մը գոնե զվարթ աշխարհն է, որ կշնչես, կրնաս երգում ընել, թե դուն չպիտի մեռնիս։ Գերեզմանը հունա սատկած կատուներուն համար կարգարացնե իր գոյութիւնը։ Քահանան «խաչ ի ձեռին» ոտքի կկենա. նույն ատեն ոտքի վրա կելլեն իրենց կարմրած աչքերով բոլոր անոնք, որ այդ հարսնիքին մեջ տեղ մը գրավելու համար խնձոր մը ընդունած են։ (Զբսինք՝ թե հարսնիքի հրավիրող մը շատ ավելի հին ատեններ, հարսնեատիրոջ կողմեն խնձոր մը կընդուներ ու ասի անխուսափելի էր)։

Հալավը օրհնվելե հետո, քահանան հիմա թույլ կուտա, որ փեսան հագվեցնողները առաջ գալով պատշաճի հարկ մը վերջացնեն։ Փեսան հագվեցնելը պատիվ մըն է, ուստի ան կրնա միայն դրամի փոխարենով մը գնվիլ։

Հարսանիքին մեջ կատաղի պատվախնդրութիւն մը, մրցում մը կա, որ մարդու մեջ ամեն առենե ավելի ցայտուն հանգամանք մը ունի։

Է՜հ, ուրեմն, որևէ մեկը շեշտ առաջարկով մը մեճիտի մը տալը կլսցնե։ Քսան դրուշ, ես պիտի հագցնեմ, ոչ, կձայնե անդիեն մեկը, ես երկուք կուտամ, ես երեք կառաջարկեմ, ես լիրա մը, էֆենտիմ։

Ատեն մը կմտմտան. լիրա մը, ըսել է հինգ մեճիտ, դեռ ավելին ալ, ուր դրուշ կա։ Այսպես թե այնպես ատեն մը կդադրի եսն ու եսեսութիւնը. աճուրդի վերջին գինը առաջարկողին վրա կմնա։ Այս վերջինն է, որ Մաճառոս կհռչակվի։ Մաճառոս մնար բառին ծագումը, փեսային լաթերը հագցնողն ըսել է։ Ու ահա այդ մարդը նազոտ ու հպարտ շարժում ընելով տեղեն՝ ծրարը կբանա, շիտակն ըսելով իր հոգին ալ հիմա ծրարեն ավելի ծանրացած կզգա. վայրկյան մը կսպասե տեսնել, թե քակած քակոտած հաշիվին մեջեն բան մը պակաս ելլա, կտոր մը մոռցված ըլլա, որպեսզի քիչ մը առաջվան պազարը խանգարվի։

Ամեն բան լման է, սակայն ավելին ալ կարելի է, որ աս մսավաճառին իրեն իսկ մտքեն չէր անցներ։ Նախ շապիկը վեր կառնե, զոր երեք անգամ շլլիքին շուրջը կլոր մը դարձնելով վրան կուտա, կամ ինք կբռնե, որ փեսան հեշտ մը հագնի։ Լաթերը մեկ-մեկ այս կարգով հագվեցնելու պահուն, Մաճառոսը, որովհետև ինքն ալ հիմա պարտք մը հագավ վրան, կխորհի, թե ինչ հիլլեի բերե, որ վաղը այն ոսկին իրմեն ուզվելու պահուն՝ ուրանալ կամ, մերժելու դրութիւն մը ապահովե։ Մաճառոսչեքը՝ այն ոսկին, եթե փեսավորները հավանին մեջերնին, որ դպրոց կամ եկեղեցիի նվեր մը հանեն, լավ, եթե ոչ սովորութիւն է, որ հարսնիքը ավարտելե հետո մտերմական խնջույքի մը ծախքին հատկացնեն զայն։

ՀԻՆ ՀԱՎԱՏՔՍ

Մոռնալ, անկարելի բան է, մանկութեան օրերու թեթև, վճիտ այն տպավորութիւնները, որ ինքնին կուգային տեղ կգրավեին միտքի վրա ու սրտի վրա ալ, տարիներու ընթացքով իրենց ծաղկաբույր սխրանքեն չիյնալու պայմանավ։ Կհավատայի թե ժամուն խորանին ետեր ս. Ստեփանոս կա, կանգնած ուղղաձիգ, այնպես՝ ինչպես անոր պատկերը կտեսնեի ամեն օր. սյունեն կախված հին շքաս-

նակի մեջ, գլխուն վրա դեղինով լուսապսակ ու թևերը հորիզոնաձև քիչ մը դեպի վեր, բիբերու արտահայտությունը այն ձևով ու այնքան վառ, զգայնիկ, որ հար իմ վրա կգամվին կմնային, որ կողմ ալ դիրքս փոխել ուզեի, այդ կերպով մոտեն ու հեռվեն ալ ս. Ստեփանոս շեշտ ինծի կնայեր միայն. անոր առջև ակնածանքի պես բան մը կխաղար հոգիս, որ շատ ավելի վախի զգացումին կնմաներ, ասոր ալ տակ դժոխքի արհավիրներուն սոսկումը ծրարված։

Շատ անգամ անոր առջև քանի մը ուրիշ ընկերներով վեճի կբռնվեինք՝ ո՛չ, ձեղի չի նայեր, այդ աչքերը ուղղակի ինծի են, իմ ետևես կուգան, հեռվեն ալ զիս միայն կտեսնեն. նույն խոսքերն ու պնդումները ընկերներուս բերնին մեջ ավելի համառ շեշտերով. ետքը-ետքը այն համոզման կուգայինք թե՝ ս. Ստեփանոս մեր գեղին սուրբն է, ժամը՝ իր անունով շինված՝ իր տունն ըսել է, մենք բոլորս ալ անոր տղաքն ենք, բնական է, որ նա բոլորիս ալ վրա հավասար նայվածք պատե, ինչպես գորովազեղ հավու մը աչքերը իր թոռնիկներուն վրա։ Ամենուս ալ երեսը ճառագայթում մը կշողար այն հավասարապատիվ եղբայրակցության գաղափարեն, վեճը կըդադրեր ու ցատկտուն, զվարթ դուրս կելլեինք։

Դուրս կելլեինք, բայց ես պատերուն ու ծառերուն թողած շուքի երկարաձգումները կչափեի հասկնալու, թե ե՞րբ իրիկուն պիտի տա, ժամկոչը ձեռքը զանգակին երկնցնե, մեկ ոստումով անոր քով թռիմ, մինակ ըլլամ հետը, չեմ գիտեր ինչպես, խորանին ետևի սուրբին տղան հավտալ կսիրեմ, պզտիկ է, ձեռքի ու ոտքի մատները իմինես պզտիկ ու շատ մանկային. միայն դեմքն է, որ կխըրտընշեցնե ու կշփոթե հաշիվներս, իմ հասակակիցս ճիշտ, բայց տարբեր հանդերձով, կարմիր շապիկ մը հագած է մինչև ոտքին երեսը, այդ կարմիրը աղտոտված մոմի կաթիլներեն ու շատ ալ սևցած՝ լվացող մը չունենալու ու ոտքերն ալ բորիկ ձգված ըլլալու դժբախտությունը կխորհիմ ու կկարեկցեմ ալ սրտով, ի՛նչ կրնամ ընել, մորուք ունի անիկա, թավ պեխ մըն ալ ահա. կզատվիմ անկե. ան սուրբ մը, ես մարդ մը կմնամ նորեն. բայց ա՛լ այնքան հաճախ կայցելեի զինքը, քանի որ օր մըն ալ սրդողած չտեսա ինձմե, համարձակված էի հետը տեսակ մը խորհրդավոր ընդունելություն հաստատել։

Ես կհիշեմ, թե իրիկուն մը միս մինակ ժամուն մեջ, ամառ իրիկուն մը, որ մարդ ոտք չի դներ սեմեն ներս լվերեն վախնալով, եկողը բակը կաղոթե ու կանցնի, այն իրիկունները շատ հեղ տեր-

տերներեն ալ չեն երևնար տեղերնին, կամացուկ մը դռնեն ներս կանցնիմ, անոր ներողությունը կհայցեմ. «Ես դիտմամբ չըրի, կըսեմ, ս. Ստեփանոս, ճամփան խնկած էր, մեղքս եկավ, վեր առի, ծոցս դրի, մինչև տուն եկա՝ մեռած էր. եթե ալ շարություն կտեսես, խոսք կուտամ, որ անգամ մըն ալ, բույնի մը քով չերևնամ բնավ»։

Այն օրը թռչունի ձագ մը գտած եմ պարտեզեն տուն դառնալու ճամփուս վրա, ծիծեռնիկի ձագ մը կարծեմ, դեղին ու ցանցառ աղվամազ մը բուսեր չէ բուսեր վրան, կարմիր ու լղատ միսի բրդոն մը քիչ մը երկայնկեկ, որուն մեկ կողմը խոշոր ու տգեղ-կտուց մը տարօրինակ անկնկալ մը ըլլա, մյուս կողմեն ծղոտի բարակությամբ վարդագույն սրունքներ թել ճանկերով եզերված, ծիծեռնիկի աղաղուն ձագ մը վերջապես, հավկիթեն նոր դուրս եկած ըլլալ կերևնա, աչքերը լման չեն բացվիր, կհևա, չես գիտեր ինչո՞ւ, տաքե՛ն թե ցավեն, բույնեն գետին ինկած է ուժգնությամբ, ու գլխի տորտըրանքով մը ինծի նշան կընե, ընդհատ ու լլսվելու աստիճան նըվաղկոտ վայնոնով մը իմ նույնիսկ անունս կուտա կարծես, որ զինքը վեր առնեմ տեղեն, բույնը տանիմ, եթե կրնա ըլլալ այնպես։

Կհամակերպիմ անմիջապես, մերկ ծոցս կդնեմ, հոգ չէ, որ անոր պզտիկ ճկրտոցը ու ճանկռտուքը դիս վեր կթոցնե, արտորանքով տուն կվազեմ, որ անկե վերջը խորհիմ ընելիքս։ Տուն կհասնիմ, խեղճ կենդանին ծոցիս մեջ շնչահեղձ ու գեշ կերպով ալ տրորված կգտնեմ։

Երկար մը վրան նայելե ու ափիս մեջ շրջմրջելե ետքը դուր չի գար խղճիս, ինչպես ոտքի տակ նետել, պզտիկ փոս մը բանալով կթաղեմ, կակուղ մինիկ գերեզման մը, բույնեն ալ հանգիստ։

Ու հետո՝ աղե՞կ էր ըրածս, կհարցնեմ ինքովի, մինչև իրիկուն հոգիի տարուբերումներ, ան օրը նստած տեղս կմնամ, բերանս չի բացվեր. եթե չվերցնեի, իմ ձեռքս չդպնար, նորեն չպիտի՞ մեռներ. ո՛չ, չարություն չկա ըրածիս մեջ. իր մահվան պատճառը կամ ինքն է, որ բույնեն դուրս սողկտալու անհարկությունն ընելով ինքզինքը գետինն է նետեր, կամ այն անհոգի կաչաղակը, որ խղճալ չգիտեր, սովոր է միշտ ուրիշներուն բույնը երթալ գտնել իր սնունդը։

Սակայն ո՞ր եզերքի վրա ալ տանիմ հաստատեմ խնդիրը, իմ նախապաշարումս է, թե անկե մաս մըն ալ անտարակույս ինծի բաժին կելլե. չէ՞ր ըլլար, որ արտորանքով տուն չվազեի, ափիս մեջ բռնելու զգուշությունը ինչո՞ւ մոռցա, որքա՞ն անկեղծ էր այդ պըզտիկ անասնիկինն իր բույնը դնելու դիտավորությունս, անկե առաջ

ինչո՞ւ չպիտի խորհեի, որ գուցե չիրնամ իսկ ճանչնալ անոր ծնողաց կայքը։ Շիտակն այն է, որ մեզմակից մըն եմ. ես զինքը վեր առի սիրած բանս գտածի մը բնազդով, ծոցս դրի, որ դուրսեն տեսնող մը չպատահի, սեղմեցի, որ ձայն ճիկ չհանե, արտոքանքով դեպի տուն, որ կեր առնելու հասունության մեջ տեսնելու ատենս հայթայթեմ անոր պետք եղածը ու վերջը ինծի մտերիմ խաղընկեր մը ընեմ։

Ճիշտն ալ աս էր, ու կհասկնայի, թե սուրբին ըրած խոստովանանքս այնքանը միայն ճշմարիտ էր, որ կըսեի. «Դիտմամբ չըրի այն չարությունը»։ Մյուսները ինչպե՞ս կլլեցնել, որ արդար հայտնություններ էին, չէ՞ որ սուրբ մըն է, միտքե անցած ու բերնով չըսվածն անգամ կրնա վերլուծել։ Այն իրիկունը ժամուն լեռն ամայությանը մեջ վերջալույսին մոռված բոսոր ու նոսր շերտեր արագարագ հալելով մութը կուգար վրա, սուրբին երեսը առաջվանեն ավելի խոժոռ ու մռայլ երևույթի մը մեջ. ահռելի խռովքի մը ծամածռությունները կնշմարեի, քեն պահողի ու սրդողածի մը պես աչքերը կոպիչներեն դուրս կպռթկային. ընդոստ դուրս կնետվիմ վախես, որ հարված վրիպեցնեմ, ինծի կըսեն որ՝ սուրբին ուսերուն քովերը երևցող քարերը մեղավորներուն համար դրված են, քարերը, հինգ հատ ու ընկույզի մեծությամբ, հատկապես չարերուն համար պատրաստված։

Բայց այն ատեն ի՞նչպես կմոռնայի զարմանալ, թե այն քարերը ամեն օր ալ նույն իրենց տեղը կմնային միշտ հինգ հատով, օր մըն ալ անոնց մեկ հատը չտեսա մեկու մը գլխուն նետված ու փշրտված։ Տարիին մեջ գոնե երկու մարդ ալ մեղքը չէ՞ր գործեր այդ գյուղը, ուր շարունակ երկու տերտեր ամեն օր իրենց նորանոր արարքներով, երկու տերտեր զատ իրենց կուսակցություններով ու ժողովուրդը բարոյապես սպանելու ընթացքով, երկուքն ալ հայհոյիչ, ու իրարու դեմ հովազի վրեժներով զինված. ես այն ատեն ինչ կար, որ այնքան չարաչար կերպով ոճրագործի մը երկաթ անուրը զգացի վզիս. նույնիսկ եթե ես ինքս մեռցուցած ըլլայի ձագ ծիծեռնիկը, նույն արժեքն ունին մարդն ու ծիծեռնիկը կամ ժողովուրդն ու ճնճղուկը, վերջնույն պատժեքին համար ըսված չէ՞ եթե երկու հատը մեկանց մեկ դանկի մը վաճառվին, մարդերու վրա սպանություն գործող այն ձառագեմ կրոնավորները ինչո՞ւ ազատ մնային պատիժ։

1895

ԳԵՂՆ ՈՒ ԶՄԵՌԸ

Նույն դասական ձմեռը, նույն գժնդակ ցուրտերը, տարի մըն ալ ետ չեն մնար, գրեթե միշտ նույն ամիսին կերևնան, նույն հովերով կվազեն, նույն պաղ ճերմակ երկինքեն կկախվին, ու միշտ միևնույն տեղերը, շատ ավելի նույն անարև ծմակներն ու ծածքերը կայան կընտրեն։

Ձմեռը, ցուրտերը, պահ մը կարելի էր մտածել, թե հիմա ի՛նչ ցավագին չվաքներ ստեղծեր են այն հատած թափած տուներուն ներսերը, ուր քիչերն են, որ ամառեն ձմեռ լաթի կտոր մը կավելցնեն վրանին, քիչերն են, որ շապիկին վրա բաճկոնի պես բան մը կկոճկեն, քիչերը, միշտ քիչերը, որ թոնիրին մուխ ծուխ անթեղովը տաք բունիկ մը ունին։ Շատերը հավն ու ձագն ալ հետերնին, մեկ ափքի տակ կապրին. կան ուրիշներ, որ միևնույն տեղին վրա իրենց կովին ու հորթին համար ալ մսուրներ հարմարցուցեր են։ Այդ տեղը՝ կրակտուն կամ ձմռատուն ըսված բաժինը, գժոխային խռռոչ մը ըսվելու համար, հազար անհարմարություն ու նույնչափ տգեղություններ ունի։

Թոնիրեն խոյացող մուխը ամեն առավոտ, ձեղունին ու պատերուն երեսին վրա կառնե կամրանա, հոնտեղվանքը խայծղանի կպչուն սև մը ձգելով, ու դեռ անկե բավական մըն ալ տան մարդը կշնչե ավելին ծաքովը ամպամած կույր, գորշ փոշիին հետ։ Այստեղ գեշ հոտ մը, ուրկե դուրսի շունն ալ սիրտխառնուք մը պիտի զգար, կժնգին ջրամաններուն տակ մորացող բորբոսներեն կըտարտղվի, հոտի տեսակ մը թոնիրի խորքը շոգիացող պուտուկներեն վեր կուտա, ու բան մըն ալ իրենց կարգին թոնիրին եզերքը տաքնալու նստող լկած բրբրած պառավն ու պզտիկները կշինեն։

Այս խեղճերուն ալ բնական էր որ թոնիրը առջևին բաց տեսնելու պատեհությունով, թողեին, որ անոր կրակին վրա քիչ մըն ալ իրենց միսեն այրեր, քանի որ, ո՛վ գիտե, ե՞րբ անգամ մըն ալ անոր մոտը երթա ու կարգ մը պիտի տրվի իրենց։ Թոնիրին քովերը ուզված ատեն տեղ առնելու համարձակողը էրիկմարդը կըլլա միայն։ Տանը կատուն ու քահիան հավասար իրավունք ու մենաշնորհ կվայելեն հոս կամ տունին որևէ մեկ դռնփակ մասին մեջ համարձակ աղի կծկելու։ Կնիկները, ասոնց մեջեն ալ ահեռանկները մանավանդ որ նոր հարս կամ մանկամարդ ըլլալու գժբախտություն մը հետևանքով խոսելու խնդրելու լեզուն ալ չունին շատ, իրենց աշխա-

տության մեջ ցուրտեն եթե քիթերնին առջևնին ալ ընկած չտեսնեն, քանի որ հոն թոնիրին շուրջը տղամարդը նստեր բլրացել է իրենց համար այլևս դժվար պիտի ըլլար այն կողմը ձեռք-ոտք երկնցնել։ Այս վիճակին համակերպիլ չգիտցողները պահ մը կպատահի, որ դուռնեն տանիքեն դրացնին տունը սողոսկելով՝ անոր թոնիրին վրա քրքրցնեն ինքզինքնին, եթե հոն ալ նույնը չըլլար արդեքը։

Այս փակագիծեն ետքը, կրակտունը ամբողջության մեջ ներկայացնելու համար ըսեինք թե՝ անոր ձեղունին մեջ բաց ձգված երդիքները իբր լուսամուտներ, մեկ կողմեն եթե քիչ մը լույս կբերեն վերեն, անոնք սակայն այն միևնույն կողմեն դուրսի ամբողջ ձմեռը ներս փոխադրվելու համար դյուրին անցք մը կուտան։ Շատ անգամ հետաքրքրական էր, որ դուրսը տեղացող ձյունին առատության մասին գաղափար մը ունենալու համար, տունեցին առանց դուրս ելլելու, աչքը վրա կպահե, ինչ որ կթողվի անհոգությամբ մը, որ հալի ու ծծվի գետինեն, անոր վրա նոր թաց մըն ալ ավելցնելով։

Ջյունն ու անձրևը դեռ կրնային իրենց ներկայությունը հասկցնել կաթիլքներու միջոցով, որոնք հոս-հոն առիքեն վար իյնալու ատեն, մրախառն տարափի մը պես կթափին, մելանի ցայտքեր, ապականություններ, որոնք կրնա ըլլալ, որ օրանին մեջ քնանալու համառող պզտիկին երեսին հանդիպին, հոն աչք մը կուրցնեն։

Պատճառներու աս շարքով ահա կրակտունին հատակը հուլիսին մեջ ալ չոր չերևնար, և ուր ձմեռը առավելապես այնքան մը թաց կտեսնվի, որ կատվին թեթև թաթն ալ հետք կձգե։

Տունեցին այդ գետնին վրա քալելու ատեն ոտքը դուլպա չի էրեր։ Գուլպան ուրիշ որևէ ատեն ավելորդ հագուստ մը չէ, եթե շատերուն համար սյուս մըն է— պզտիկներուն ոտքերը քիչ մը ավելի փափուկ, բադի ոտքերուն չափ ստեպղինի կարմիր մը կներևցնեն. պզտիկները ըսեինք թե՝ իրավ որ, այդ ոտքերով, այդ ջրշրանքներուն վրա— ստիպված արդեն, ամբողջ օրը բադի մը պես կլողան։

Գիշերը հինգ տասը հոգիով ընտանիք մը, էրիկը կնկան հետ ու պզտիկները անոնց անմիջապես կուշտին, այն մերկ, տամուկ գետնին վրա կլուսցնեն, իրիկունը ձեթի կամ քարյուղի գեշ հոտը ճրագներով աշխատություն մը գլխելե հետո։ Անկողինները, քուրջի կտորվանքներով լեցված մթելներ անոնց ձեղ, աղտոտ էջերներուն վրա երակ ալ կթափվեր, չէին այրեր։ Աս քուրջերուն տակ կլուսցնեն ձմեռ երկար գիշերները, որ ատեն որչափ անգամ մը բակին շունը ձայն հանե կամ ոռնա, քնացողները իրենք ալ ներսեն խուլ,

խեղդուկ հազեր մը կը խրկեն մինչև դուրսի դուռը, որուն առաջքը մտիկ ընողը պահ մը պատրանքը պիտի ունենա ըսելու թե՝ ներսը խորունկ ջրհորի մը մեջ խոշոր-խոշոր քարեր նետելու դիվային խաղ մը կկատարվի։

Մինչև լույս առավոտ այս հեղձուցիչ հազերը, աս հիվանդի հևքն ու հռնդյունները— է՛ն իրենց հանգիստ կարծված ատենն ու անկողիններուն դոգը, կյանքը իսկապես գերեզմանին մեջ զգալու համար բան մըն ալ պակաս չեն ձգեր։

Անկողինները՝ տակեն գետնին թացովը, վրայեն ալ ճերմակ եղյամի մը ջուրովը ծանրացած՝ առատուն կծալլվին, մեկ կողմ շարվին, որ իրիկունը անգամ մըն ալ նույն վիճակին մեջ իրենց տեղերն ու տերերը գտնեն։

Որպեսզի ալ վերջ մը տայի աս մանրամասնություններուն, դուք կարծեմ պիտի կանխեիք ըսել,— չե՞ն հիվրնդնար։

Դուք երբեք տեսե՞ր եք կամ բնավ բաղդատեր ե՞ք ամռան ու ձմռան գեղացին դեմ դեմի։ Ամառը արևին հրաշագործ ճառագայթներուն տակ, ան իր դեմքին երկաթի գույնովը խոստումը կըներ, որ դեռ յոթը սերունդներու հայր պիտի ըլլա. ձմեռը սակայն, դուք անգամ մըն ալ նայեիք անոր, և տեսնեիք, թե պիտի կրնա՞ք ճանչնալ։

1908

ԴԵՊԻ ԱՐԵՎԸ

Լեռնե լեռ, թուփե թուփ՝ ճամփան բոպիկ քայլելով, ճամփան բոպիկ ու շատ հեղ գլխիբաց գլվելով Արևին ելեր կերթա ան, որ անգամ մըն ալ Արևին ըսե ըսելիքը ու պատասխանն ալ ուղղակի Արևին բերանեն լսե։ Քովի մարդերը ծանոթ անծանոթ՝ ու հեռունը գտնվող անուն շինած իմաստուն հոյակապ հեղինակություններն անգամ իր լեզվին չի հասկնալու տգիտությունով թեթև հույս մըն ալ չեն կրցած ներշնչել իրեն, ամենքն ալ, գրեթե ամենքն ալ՝ բայց իհարկե առանձին հանդիպումներու պահուն, գնա՛, ըսեր են գլխուդ ճարը գտիր, մենք ոչ ատ ցավին տեսակեն կհասկնանք, ոչ ալ բնականաբար անոր դեղ դարմանը գիտենք։ Ու մարդը այսպես վերջին նոր փորձ մը հետապնդելու կտրիճ հանձնառությունով այս նոր արշավանքին տաժանքներուն ալ կհամակերպի։ Հիմա ալ Արևին է, որ

կտանի իր տարտերը։ Արևը մեծ խմաստուն մը, Արևը մեծ ատուված մը...

Վաղորդայնի պահերուն քալելու իր արտորքներով, բավական զվարթ ըլլա կարծես, իրիկնամուտին մտածկոտ ցավին մոայլը կստվերոտե իր դեմքը, գիշերամիջին կուլա, տղու մը պես կուլա։ Ուր կհանդիպի, ուր որ գիշեր կանցնե, առտուն ետևեն շատ մը տարակուսներ կխրկեն զինք հյուրընկալողները, թեև անոնց ոչ մեկուն հայտնած կըլլա բան մը իր կյանքեն կամ իր հոգին սղոցող ցավին որակեն ու չափեն։ Շատեր խենթ մըն է, կըսեն, որ ելեր իր գերեզմանին փնտռտուքը կընե. շատեր ալ պարզ մուրացիկ մը ճանչցեր են, որ քիչ մը սակայն տարբեր եղած ըլլա սովորականեն. կան նաև ըսողներ, թե հարստությունը ջուրն ի վար տվող ավանակ մըն է, որ հիմա ալ գինովը ամեն շաբշրկանքի, իր կործանումին դարմանը կփնտռե, կարծիքներու տեսակ մըն ալ այն թե՝ խեռ, խենթ զավակներու հայր մը եղած ըլլա ան, որ զավակները իրեն հնազանդ ու համակերպած ըլլալու տըլլատումը կհետապնդե այս թափառկոտությունով։ Տարակույսներ՝ իբր թե՝ բանտեն շղթայազերծված փախստական մըն է, որ այս ճամփաներուն վրա զինքը ու իր հետքը կորսնցնելու գյուտը կծրագրե։

Ուրիշներ ուրիշ ասուլիսներու ծամույք բերվինին— ու ավելի չերևակայվածները թերևս— դժբախտ մարդ մըն է այն, կըսեն, որ խորունկ վիշտ մը ունի կուրծքին տակ, որ չիշխեր, կվախնա հայտնել, նույնիսկ իր մտերիմներուն ալ չի վստահեր, դեռ, այո՞, չէ ուզած անգամ իր կռնակին շապիկին ալ խոստովանիլ. քար մը կփնտռե, փայտ մը կփնտռե, որ անոնց խոսի ու գոնե այս քարեն ու քարի պես բաներեն լսե արձագանք մը։

Կրնա՝ կըսեն, հոտուտ ջղիկ կնկան մը հանդիպած անբախտ ամուսին մը եղած ըլլալ, որ հեշտ ու վճռական հասկացողությունով ապահարզան տվող մը կերազե գտնալ ու այս կերպն է ընտրեր։ Ահա այս ծպտանքին մեջ կպտտցնե ինքզինք, բայց քանի մը ուրիշներու համար ան ևս ճշմարիտ թե՝ իր սիրած աղջիկեն բռնորեն զատված մը ըլլա, որ, կըսեն, իր կրակված սիրտին հրայրքը մարող ջուրի մը տեսակը ունենալու ցանկությունը կհասկցնե հանդիպածին։ Շատեր ուրիշ մտածությունով մը, միգուցե, կըսեն, այլամերժ, եսապաշտ ունևորի մը նկատմամբ, կերթա այն կողմը, որ Արևին առաջքը դեռ բնավ չըսված չի լսված ամբաստանության մը ծարը քակելու։ Նույն ատեն սակայն կա ըսող թե՝ ինք այս մեկը ապրը շահագործող հոյակապված սեփական մը ըլլա թերևս, որ ճարը հատած՝ բուսերուն աղբյուրը եղող Արևեն ուղղակի իր ճակատը ուզե ճերմկցնել։

Կարծիք մըն ալ այն, որ կըսվի, թե սուտ բարեկամության հետ կեղծիքով ծպտված առաքինության դեմ գանգատ ու բողոք տանելու ճամփորդությունն է անոր ըրածը, տարօրինակ ձեռնարկ մը իրավ որ, բայց աս կարծիքն ալ որքա՞ն ստույգ կամ ի՞նչ չափով դրացի խելքի պահակելիք ճշմարտություն մը, իրա՞վ է, որ աշխարհի մեջ բուսած հասունցած ըլլան մարդիկ, գոնե մեկ հատ, մեկ հոգի, որ վեղծիքին պաշտանքին դեմ այսչափ ըմբոստ ինքնություն մը վեր առնեն ու քար արձկեն այդ կուռքին պատվանդանը համբուրողներու ուղղակի աչքերուն։

Այսպես ահա շատ բան կըսեն, անոր մասին միտքերը շատ կտրկածի ու կարծիքներու կտարվին, բայց իրապես անոնց ոչ մեկն է վավերականը, ստույգը։ Մարդը գլուխը կախ ու մտածկոտ, հապիվ քիչ մը զվարթ ան ատեն, որ արշալույսին առաջին երանգները կծրագրվին, կքալե, միշտ կքալե, գիշերն ալ Արևին ուշանալեն հուսահատ կուլա տղու մը հեկեկանքով ու բան մըն ալ չըսեր իր քովիններուն, առտուն նորեն ոտքի վրա, նորեն ճամփա ու ճամփորդ, տարին ի բուն միշտ այս ուղղությամբ միշտ արևին կողմն է, որ կառաջանա։

Շատ կերթա, քիչ կերթա, տեղ մը ահա, որ մարդիկ գրեթե ամենքն ալ վտիտ ու սմքած մարմիններով խեղճություններ, հոգմոխիր ցանելով գլխներուն վրա, իր անցքը տեսնալնուն, ժիր գոռոց մը կհասցնեն իր ականջին— ո՞վ անցորդ, բարի եղիր, մեր ցավն ալ տար հետդ, կըսեն, պարզ է, որ դուն Արևին կերթաս, նույնքան պարզ, որ մենք ալ հոս մեր ներսիդին այրող մրկող խոցեր ունինք, որ ալ հետզհետե չի տարվելիքներ կըլլան ու մեր կյանքին կըսպառնան...— Ըսեք, տե՞հ, շուտ ըսեք, թող ձեր պատմությունն ալ տանիմ, կպատասխանե անցորդը, դուք սակայն ի՞նչ ունենաք։— Մենք ալ ամենքս դժբախտ այն տարտերով, որ սա հոգերուն երեսը ինչ որ ցանենք, որքան ալ խնամք տանինք, չի բուսնիր, բուսնի ալ, մեր բերանը չի հասնիր, լոպը, մրջյունը, մարախը ալ շատ ավելի մարախի թունչով ու սոված մարախի բազմությամբ մարդերու տեսակներ հանկարծ մեր ցանքերուն վրա կիյնան, ու բան մը չեն ձգեր, որ մերը ըլլա, վերջին ցորենահատին հետ անոնք հարդի վերջին շյուղն անգամ իրենց ակռաներուն տակ կաղան։

Ըսե՛, ալ չենք կրնար համբերել, անձամբ պատմելու եղիր, ան

օձերն ու ճագարները հոս մեզի դրացի, ավելի բախտավոր, ավելի երջանիկ արև մը կապրին. աչքերովդ տես ահա, որ մեր վրա չոր ոսկորե ու կաշիե մը զատ ալ ոչինչ չի մնացեր։ Կմեռնի՜նք, կմեռնի՜նք...

Խոսք կուտա անցորդն ու ճամփան կշարունակե, անդին ցուկին կապված եղներու խումբեր, որոնք միջօրեի տաքերուն իբր թե իրենց հանգիստին ձգված, բայց նույն իրենց մեռուցիչ լուծերուն կապանքներուն տակ միշտ. ասոնք ալ հեռվեն իրենց ցավերը կպոռան.— Է՜յ, մա՜րդ, կըսեն, պատմե ան Արևին, որ մենք անխոնջ աշխատավորներ, մենք մեր տերերեն ավելի քրտինք ու արյուն թափողներ աս դաշտերուն վրա, բայց օր մըն ալ մեր հալալ վաստակին բաժինը տրված չեղավ մեզի։ Սա ցորենի արտերը ու ան հաճարի բաժինները մեր ուժերովը հունձքի բերած ենք, բայց մենք անոթի անսվաղ մեր կաշին ու միայն մեկզմեկ լղվռտելով կբավականանանք, ըսե, թող ան Արևը քիչ մը մեզի ալ խորհեր, մենք ալ կյանք մ'ունինք վերջապես, որ սնունդով կրնա ապրիլ միայն, մեզի մեր իրավունքը գոնե...

Անցորդը ասոնց ալ խոսք կուտա կանցնի անդին, կտեսնա ուրիշ բազմություն մը թշվառներու։ Երկրին թագավորը թունդ հրամաններ հաներ է, որ այն լայն, ընդարձակ դաշտին կուրծքին հսկա հողաբլուր մը շինեն իր գերիներուն անհամար շարքերը. պատվերը այնպես, որ անձնյուր բանվոր իր կրելիք հողին չափը ոչ ուրիշ միջոցով, այլ միայն իր զույգ ափերուն մեջ բռնած պիտի փոխադրե ցույց տրված տեղը. հրաման մը այնպես, որ շինվելիք այդ հողե բլուրը ամպերուն հասնող բարձրություն մը պիտի ունենա եղեր, հրաման մըն ալ այլապես, որ վերջը անոր ծայրին վրա համակ միազանգված ժայռով պալատի մը կառուցումը հնարավորվի, այս վերջին պատվերին մեկ ուրիշ ահավոր մանրամասնությունն է, թե հողը այն ինչ չափ հեռավորություն փոխադրելու ատեն մեջը սա չափ քարի կամ մեկ ավազահատի հետքն անգամ չպիտի նշմարվի, հողը աչքի թարթիչներով պիտի մաղվի, ժայռն ալ ապա փորել կոփվելու պետքով մը երկաթ մուրճին ու գչիրին տեղը ակռա եղունգ պիտի գործածե վարպետը։ Հասկցա՞ր, ո՛վ անցորդ, հասկցա՞ր հիմա մեր ալ տառապանքին ահագնությունը, գնա, ըսե ան Արևին երկուք ըսե, երեք ըսե, վերջն ալ մեծ ձայնով մը պոռա ականջին, կմեռնինք, մեռածներ ենք արդեն, դարեր ի վեր ահա դեռ ոչ իսկ ան շինվելիքին հիմերը կրցած ենք պեղել, բայց արդեն այդ բացվածքներն ալ հաղիվ մերիններուն գերեզմաններուն բացվեցին։ Ու, ո՜վ Արև, մտածե, որ բոլոր այս խոշտանգումները, բոլոր այս ուժան զոհերն ու անիմաստ զոհաբերություններն հոն միայն մեկու մը հաճույքին համար կկատարվին, ըսե՛, ա՛լ չենք կրնար համբերել։ Մինչև հիմա տրտունջով չեղավ բան մը, անեծքը չապահովեց հույս մը, հայհոյությունով չի տեսանք փոփոխություն մը, այսօր կբողոքենք ահա մեր ձայնին ամբողջ ուժովը, վաղն ալ կարգը ուրիշ ձեռնարկի մը պիտի տանք, ան ատեն, վա՜յ անիրավ ու անխիղճ գերեվարներուն...

Անցորդը կլսե ասոնք ու մեջեն ալ լացող հոգիի մը մղմղանքը ունկնդրելով, ճամփան կշարունակե։

Մարդը այս նույն ճամփուն վրա, սովորականեն ավելի թախծոտ ու հուսահատ կծկումի մը մեջ, բերան չի բանար երբեք, աջ ձախն ալ չի նայիր, կքալե առանց ամենևին իր ոտքին տեղն ալ տեսնելու, իր ցավը կամ իր հոգին հատցնող այն ինչ տեսակ վիշտերու ահագնությունը բաղդատելով հիմա իր տեսածներուն հետ, շատ պզտիկ կդտնա, պզտիկ ու նույնիսկ հեգնոտ հանգամանքի մը մեջ, բայց կքալե, դեռ ատեն մըն ալ կքալե. անդին ահա նոր երեվույթ, նոր մտմտունքներ։ Անհուն ծավալով ավերակ մը այս տեղը, ուր ծերուկ կին մը կռնակը կիսափուլ աշտարակի մը պատին տրված նստեր՝ աս ալ իր վայանքներուն մեջ կձենոտե. մարդ մարդասանք չերևնար իր շուրջը. ծունկերուն առաջը կոտրտած բերանով կարմիր կուժ մը կա միայն, որ պահ մը ճամփորդին մտածել կուտա թե՝ ջուրի սափոր մը պիտի ըլլա, բայց ո՛վ գիտե... Անցորդը ինքզինք քաշնիքաշ այս կնկան կուշտին ձգելով, կբարևե զայն մեղմով մը ու հալ խաթրը կհարցնե, կուզե անոր ովն ու ինչը հասկնալ, այս անգամ ճամփորդն ինքն է, որ կցանկանար իր այս հանդիպածովը հետաքրքրվիլ ու բաներ մըն ալ իր իսկ հարցումներովը առնելիք պատասխաններեն ըմբռնել, եթե սակայն չի մերժվի անկե. օ՜հ, չէ, ամենևին, մոր շնորհքով ազնվական բան մը ունի ան, անուշ ընդունելություն մը նույնիսկ, որուն շատը կարոտ, շատ ալ սիրազեղ գուրգուրանքի մը հոգեբանությունը կպոռթկացնե:

— Դարերե ի վեր ահա այս ավերակներուն փաթը, կըսե, ես ալ այն քարերուն պես քար մը եղած եմ, տղա՛ս, բայց իրավ է նաև, որ ես ինքս ալ այն աշտարակին ու աս բերդերուն փլվածքովը գետնին հավասրած ավերակ մը կմնամ աս տեղը, այս ամայություններուն ծոցը, բայց ալ այնպես կերևի, որ չպիտի կրնամ դիմա-

նալ, հա՛, հարցումիդ կարճ պատասխան մը ահա, պիտի մեռնիմ վերջապես, ես այլևս անեծքի մը քարացումովը հոս չպիտի կրնամ մընալ ու մամռոտիլ. հավատա, որ ես օր մը այն մայրն էի, որ բերան բացող աշխարհը ինծի միայն երանություն կուտար ու պերճանքներս կերգեր։ Աստղերուն թիվովը զավակներ ունեի, ծովի ավազներուն համրանքովը թոռներու ու թոռնորդիներու շարքեր մը մեծցուցի այս ծունկերուս վրա։ Անոնք ապա կտրիճ ժողովուրդի մը համբավով դրացի ցեղերուն սարսափը եղան, այնպես որ սա քաղաքին դուռներեն մանավանդ մոդեսն անգամ կարող չէր բնավ համարձակ մուտք մը ընել։ Տարիներ ու տարիներ համերաշխ միություն մը պահեցին մեկ մեկու հետ, մեծը՝ մեծ, պզտիկը՝ պզտիկ ճանչցան ու իրենց այս ընդարձակ բնակատեղին թշնամի ոտնձգություններե ազատ պահելու արթուն խնամքով ու ջանքերով լեռներու ստվար թանձրությունով ամուր պարիսպի մը մեջ փակեցին։ Ահագին բերդեր բարձրացուցին ամեն ուղղությամբ անոնց ամեն մեկուն մեջ սա չափ պատրաստ զորք ու զորապետներ տեղավորելով, ես ինչեր չունեի, ո՜վ անցորդ, սա աչքերս ի՞նչ փառքեր չտեսան, անոնք իմիններուս համբավը աշխարհի հեռավոր ծայրերը արձագանք կըտանեին ու կյանքը ամենուն համար ալ դրախտի համն ուներ։ Բայց օր մըն ալ ահա, աշխարհք սա չափը շա՞տ մը տեսավ ինծի ու իմիններուս համար, աս ավերակներուն մեջ բացի աչքերս—ու հարցո՛ւր թե ի՞նչ ըլլար պատճառը— պատճառը, իմ տղա՛ս, քեզի ալ ըսեմ, բայց կարճ պիտի ըսեմ, այս մեծ քայքայումին առաջին պատճառն ան միայն, որ երկու համարյուն աղբրտիք չուզեցին իրար հասկնալ. իրար բզկտելու կեցվածքի մը մեջ ծառացան իրարու դեմ, ան քովի գետը անոնց լերդ արյունն էր, որ կտաներ տարիներով, ելան ապա իրենց ձեռքերովը իրենց ամրաշեն, հոյակապ բերդերն ու դղեակները քակեցին, ու թողին, որ մնացածը քովի բարբարոս ժողովուրդները լմնցնեն։ Ան օրեն ի վեր չեմ գիտեր քանի դարեր անցեր են. իմիններուս անմտությունն է, որ նստեր կուլամ։ Շատերուն պատմեր եմ ցավս, շատերուն շատ երկար ու մանրամասն պատմեր եմ։ Հիմա քեզի ալ ահա, ո՜վ անցորդ, նայելով քու խոստովանությանդ, արևին կերթաս եղեր, գնա՛, տեսածը կորսնցնող կնկան մը տերտերուն իրականությունեն ալ խոսիր ու հասկցիր թե՝ դեռ վերը չեկա՞վ սա անողոք ճակատագրին, դեռ ինչքան մխ ու ոսկոր պիտի հալեցնեի հոգեհան այս սարսուռներուս մեջ։ Այս քարերը անգամ մըն ալ իրարու վրա չպիտի՞ դրվին, ավերակը ուշանա՞ պիտի

շինվելու, սա մեծ քաղաքը չպիտի՞ շեննա, դավակներուս ողջ մնացածները ցրված աշխարհի չորս հովերուն՝ վերադարձ մը չպիտի՞ ընեն. լսե՛, ես մայրն եմ ավնվական ցեղի մը, թող անգամ մըն ալ խնդայի, կներեի եղածին ու վերջը կմեռնեի։ Ես մայրն եմ ՀԱՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, անունս ալ միտքդ պահե։ Իսկ այն սափորը, որ կտեսնաս հոն, անով ամեն օր արյուն-արցունք մը կտանիմ կխառնեմ մոտի այն գետի ջուրերուն։ Այդ ջուրերն ալ Ախուրյանինը պիտի ըլլան, աս ալ միտքդ պահե։

Անցորդը ալ չկրնալով ինքզինք զսպել, կփղձկի վայրկյան մը ու դժբախտ այն մեծ մորը հետ հրաժեշտի ողջագուրում կրնե, խոսք կուտա, որ ինք ավելին խոսի ու պատմե Արևին, ինքն ալ որովհետև Հայ մըն էր ու արդեն իր Աղգին ցավովն էր, որ Արևելք կճամփորդեր։

1910

ԱՐԵՎԻ ՏԱՐ, ՄԱՀՍ ԽՐԿԵ

Մեր տեղապահին հետ սարդի կարճ ճամփորդություն մը մեկերկու շաբաթ առաջ, Խոյլու կերթանք, մեր գեղը։ Մեզիրեեն երկու ժամ հարավ մոտիկ շեն մըն է 2—3 հարյուր տներով, բայց որը ինծի համար տարիներե ի վեր Բևեռի մը հեռավորությունը ունի և ունեցավ մանավանդ այն տրտում իրիկուններեն ի վեր, երբ հոն մորս Թոնիրին վերջին կայծերն ալ մարեցան. անկե առաջ անհայտացածները մեր տունին մյուս հանգածներուն գերեզմանատեղերը եղած էին, մնացածը խաղողի այգի մը ու քանի մըն ալ անջրդի արտեր, ածուիկներ միայն, ասոնք ալ ես լքած եմ, որ խլուրդն ու կրիաները մշակեն, չըսելու համար թե՝ ան էգին ու արտերը ալ ինծմե մեռցվեր են, բայց որոնք իրենց այս վիճակովը ինծի հավատալու ուրախություն մը ապահովեն թե՝ ալ ես ինքս կապիտալիստ պուրժուայի մը մեղքերեն ազատ կմնամ կարծեմ։ Բոլոր գեղաբնակներու հետ ճամփուն ճամփորդն ալ գիտե, թե ինչ համ ու դույն ունին մեր էգիին թուքն ու խաղողը, որոնցմե ան ցանկապատին գող ճնճղուկն ու սարեկներն ալ ազատ հարձակումով կամ հավասարապաշտ ռակտիֆի մը համաձայն, իրենց բաժինները կը-

փախցնեն։ Իրավ որ ասոնց հերոսութիւնն ալ դուրեկան, «Մեռնողին կինը, մոռցվողին ալ մալը»...

Ան օրը, հայր Ասլանյանի ստիպումներուն չեմ ուզեր առարկել, շաբաթ օր, վաղը կիրակի, հոն պատրաստ կառքը, կգնանք արդեն, երկու ժամեն պիտի հասնինք, միայն քիչ մըն ալ իրիկնապահին դաժան ամպերուն սպառնալիքը կա, միայն թե՝ ինծի համար ուրիշ մտածություն մըն ալ— ի՛նչ սպունգ գործածել, որ համակրելի ուղեկցիս՝ սգավոր վարդապետ մը իր բոլոր կյանքին մեջ— շրթունքին ծորածներեն բան մը չի տամ պարապը ու ամբողջ խմել կարելիացնեմ։

Գարունին կուրծքեն կանցնի մեր կառքը, աղվոր է, բայց իմ հոգիս անկե չի տարվիր շատ։ Վարդապետը այնպես մըն է, որ իր հետ այսչափ սեղմորեն ճամփու ընկեր եղող մը գարունին կարմիրին ու ան կանանչներուն ալ կողմը չպիտի ուզեր նայիլ։ Այն կարմիրը մանավանդ, կարմիրին լերդ եղերերգն ու շռայլ արձակները այնքան շատ տեսանք, այնքան շատ լսեցինք, որ քիչ մը մեր մեջն ալ կարծես այն գույնին վառքեն խրտչոտ ցուլերուն խենթ ջղայնությունը պտկած եղավ։ Կարմիրին պատմությունեն բինկյանցի վարդապետն ալ գիտեր սրդյոք, նա, որ օր մը, աշխարհի մարդ տակավին— իր պաշտելի հերոսուհին ու երկու զավակները անմեղուկ, Բինկեանը վառող կարմիր բոցերուն էր, որ տվավ և ուխտեց սգավորի իր մեծ ու մեռուցիչ ուխտը։

Կառքին մեջը ու մեր մեջ բոլորովին, այո՛, գարունով չենք հեռաքրքրվիր, վարդապետը խոսքին մնացածը հիմա վերջացնելու համար կըսե, թե ինչու կայցելե այս գյուղը ու նույն գիծով ուրիշներն հետզհետե, որ դաշտամեջի հայ գյուղերուն կարևորները կըճանչցվին։

Դեպի այս առաջին տեղը գիս ալ իրեն ընկերացուցած՝ իբր թե պիտի կրնամ ես ալ իրեն խորհրդատու մը ըլլալ, չեմ գիտեր թե ինչպես կշտապե հոն ըլլալ, որ տեղին դպրոցը ազատե այն քանի մըներուն ձեռքեն, որոնք ինչպես քիչ մը ես ալ լսեր էի, տարիներե ի վեր, այլ հաճախ վերջին ատենները, առյուծի կռիվներ կմղեն այս նկատմամբ գեղին թաղական կրուբին հետ ու պատճառ կըլլան, որ երկու պատկից ու սրտով ալ մերձ կից դրացիներ իրարու հանդեպ ծառ ու ժայռ ապրին։ Առյուծնե՛րը. ուրիշ անունով մը՝ մեր այն նուշ ու շաքար «տղերքը» չէ՞ր հասկցվեր թե՝ որոնք կրնան ըլլալ, որ նա անունը չի տալիք արտասահմանեն դարձած՝ հենց դեռ առջի

օրեն ալ իշու կանկառը եղավ կոխած գետիններուն վրա բուսվածնին, մինչ երկրացին կսպասեր, որ իր կերած ցորենի տեսակներեն անոնք ավելի գեղեցիկ ու լեցուն տեսակը պիտի գան ցանել մշակել։ Կառքը կգոռգրոա, կվետվետի խորդուբորդ ճամփու մը երկայնքին, ձիերը երկու հոգիի թեթև բեռով մը հեգնոտ, զվարթ ոստոստումներ մը կընեն կառապանեն մեղմորեն մտրակված, վարդապետը կհաւանիմ թե՝ շատ լավ ատենն է գտեր կառքին վտանգավոր ծփանքներեն իմ առած ձևերուս խնդալու, ինք անվրդով կնցվածքի մը մեջ, ու կուտամ իրեն ականջս, որ իր ճամփորդի կյանքեն պատմե. եթե կրնամ լսել։ Ըսե՛, հայր Ասլանյան, վրա կբերեմ, սրվի ո՞ր մեկը քու անցած ճամփաներուդ, Պոլիսեն Էջմիածի՞ն, թե Պոլիսեն Ադանա... մոխիրը խառնշտկելու անհարկիությունը իմս, ու պահ մը ինչ պոռթկումներ անկե, որ քարին, երկաթին վրա ալ շեկ հետք մը կձգեն։

Իր ըսածին նայելով, դեպի Արարատ ոսկեգեղմին արշավանքն է եղեր ըրածնին, փնտռված խումբի մը հետ, իսկ Վոսփորեն Ադանա, ինքնակամ անձնասպանության մը խենթ խոյանքը ճշտիվ։ Խենթ վաղք մը կըսեմ, այո, դուն ան ատենները ուղղակի բոցերուն էր, որ գացիր քու վերջին զոհդ տալ, չի վախցա՞ր երբեք։

— Վախնալ ի՞նչ բանե, իմ բարեկա՛մ, կպատասխանե, ես գացի հոն, որ փոթորկոտ դատանքներու հաճախանքեն լլկված հոգիի մը պահանջը լռեցնեմ, ինծի համար այնքան սուրբ պահանջ մըն է այն, բայց կցավիմ, որ նորեն ողջ մնացի, և այս անո՛ր համար կերևի, որ կրակներու վարժված թոնիրին ծղրիդը եղած ըլլամ ես ալ։ Ակնա ու Բինկեանի կրակներեն ողջ դուրս եկող մը ալ բանե մը չի սոսկար, չի սասանիր, արիններով տապղված կաշիի մը հետ բոցերով թրծված ոսկորներն ալ իմս եղան։

— Ըսել է իրա՞վ էին ինչ որ կարդացինք այն աղետներուն վրա, թերթերը չէի՞ն չափազանցեր։

— Ես բառ չունիմ, որ իմ տեսածներուս գեթ մեկ թերաստվերը կարող ըլլամ որակել, այն թերթերուն բերածներն ալ սոսկ խորագիրներ էին ու ոչինչ ուրիշ, միայն սա գիտնայիր թե՝ 95-ի դեպքերուն էն աղեխարշը ու դժոխայինն անգամ նայելով մանավանդ Գողլուքի մեջ պարզվածներուն, անոնք բոլոր դպրոցականներու գնդակախաղին պատճառած քերթուքներն ալ չէին, կամ ուրիշ խոսքով, Լենկթիմուր և ուրիշներ բոլոր իրենց հրեշայնություններուն ուժովը հենց քիչ մը հայուն քիթը ճանկած են եղեր նայելով ան

Աստանան ու աստանացի հայը մեկ օրեն մյուսը հովերուն աստղը նետող կատաղություններուն։

Կրակը, սուրը, Սիհունը բան մը չի ձգեցին բնավ, գացի, աս աչքերովս տեսա երկաբն ալ։ Անին իր ծերացած ավերակներով ավելի շեն քաղաք մըն է մյուսեն. Աստանան անդրշրհեղեղյան հեքիաթ մը միայն։— Հայերուն կողմե ինքնապաշտպանության փորձ մը գոնե, մենք լսեցինք, որ...— Փորձ մը, հուսահատ փորձ մը միայն, ավելորդին պետք չկա հավատալու, որ գժբախտ ճակատագրականությունով մը հայ տղոց այդ կորիճ կեցվածքն ալ գիտեք, թե վերջը ինչ արժեց իրենց համար։ Գուսակալ ու էշրեֆ ըսված գազանները ամեն հաշիվ, ծրագիր ժամանակին արդեն շատ ազվոր գիտցեր են փակել։— Քիչ մը ան օրերը ըսողներ եղան թե՝ Հայերն ալ հոն խենթ բաներ մը ըրեր են Ազատության ձայներուն հավետ տղու արձագանքներով ու անտանելի. պոռչտուքներով պատասխանելով։— Բայց է ի՞նչ այդպես, եղբայր, ես քու այդ միտք պահածիդ ալ ցնորածի խոսքով մը պատասխանեմ. ի՞նչ կընեիր դուն ալ, երբ քու մեռած մոռցածներդ հանկարծ հողին կուրծքը պատռեին ու դուրս պոռթկային, ի՞նչ կընեիր, երբ նույն օրը ու հրաշալիորեն նույն ցորեկ օրին, քու մեկ թանկագին կորուստիդ գտնելը զուգագիպեր. ու մյուս կողմեն դեռ այն հավատքն ալ նետեին մեջդ թե՝ նա մեծ Հիդրային երսուն քանի տարիներու հայ միս բզքտող երեսուն քանի ակռաներն ալ քաշած՝ ծեր շան մը լքումին մեջ փակեր են զայն, ըսե, ի՞նչ կընեիր աս վայրկյաններուն. միայն ե՞րգը, միայն խենթ պոռչտուքնե՞րը կըլլային քու խծդանքիդ տեսակները, ու ասչափն ալ ինչո՞ւ շատ պիտի տեսնային պատկից մեր դրացիները, որոնց հետ դեռ առջի օրն էր որ, աղբոր աղբորորդիի համբույրներ ուխտեր փոխանակեցինք, սրվոր մեջ ի՞նչն էր անտանելիությունը Աստանացիին, չէ մի որ ան օրը մենք ամենքս ալ երեկինը չերևնալու ջանք մը կընեինք, ու շատն ալ անոր համար, որ մեր թշնամիներուն անկեղծորեն հավատալ տանք, թե ներեր ենք իրենց, հայը իրա՛վ ազնիվ, իրա՛վ ասպետի ոգիով եղբայր մը՝ նույն տրամադրություններով իրեն ձեռք պարզողներուն։

— Մերսին հասնող նավերը օգնություն մը չբրի՞ն երբեք։— Երբե՛ք-երբե՛ք. ծովին ձուկերը ավելի տաքարին զգացումներ մը ցցուցին դեպի խոշտանգված հայը, քան նա շիկամորթ ջրշունները՝ նավապետ, նավազ, որ իրենց քահանային ու քրքիջներուն ըմբոշխնումին մեջ տեսածին լուսագրելու «քեֆ մը կհանեին». միայն անոնց անտարբեր ներկայությունը հոն պատճառ եղավ, որ խլամ վանտալը ավելի համարձակ ճոճե իր սուրը։ 5—6000 մըն ալ անոնց աչքերուն տակ կջարդվին։— Ամենեն վերջը հեղ Պապիկյանն ալ վրա գնաց, անոր եղերական վախճանն ալ երբեք չսպասվածը։— Պապիկյանն ալ, այո՛, խեղճ մարդը, բայց նույն ատեն այն ընտիր ու ճշմարիտ հայը, կրակին դեմ բռնված մոմի մը պես կհալեր, երբ բաները աչքովը կտեսնար, ու մոտեն ականջովը կլսեր պատմվածները պաշտոնական դավաճանության մը տեսակին հետ թուրք ամբոխին ալ գործածած եղեռնին աննախընթաց ծայրահեղություններեն։

Պապիկյանը գնաց, որ վերապրող հայերուն արցունքը սրբե գերազոր կարողությունով մը, բայց այն մեկն ալ մեռավ ու խլամը խնդացուց, դուն ըսե, հեթանոս մտածողությամբ մը թե՝ աստված ալ անոնց էշրեֆներեն է, կամ անոնց ալլահին ու մեր աստծուն միջև մեծ անջրապետ մը կա։

— Հարցում մըն ալ մեր ծերունի հայրենակցին՝ ս. կաթողիկոսի վրա կընեմ. երկու-երեք տարի առաջ եկավ իր գեղը այցելեց, բայց ինչպես կասկածեր թե՝ շատ չանցած քիթեն պիտի գա հայրենիք ու հայրենակիցները տեսնելու երջանկությունը, միտքս է, որ նա իր զվարթ վայրկյաններուն ալ հոս, իր դեմքի վրա մռայլ ամպի մը ներկայությունը կզգացներ. ինք արդյոք երեք տարի առա՞ջ գուշակած ըլլար իր և ընկերներուն գլխուն գալիքը, մենք ան ատեն քիչ մը Համիտի հովերուն կվերագրեինք անոր այն տրտում խրոմին ձեերը։— Կաթողիկոսը իր հոգեկան լլկումներուն մեջ, կըսե, պատանքված մեռել մըն է, որ գերեզմանը չէ սակայն, կապրի տակավին, ու անհույս չըլլա ու արիություն մը կցուցնե, հակառակ որ ի տես իր ավերանքին որքանությանը ամեն օր ալ արին կփսխե։ Կաթողիկոսին ներկայությունը իր սիրական հոտին մոտն ու քովը՝ մոխրված եկեղեցիներուն տեղը կլեցնե ու ահագին մխիթարություն մը ամբողջ Կիլիկյան թեմին։

— Բոլոր այդ ժամանակներուն չե՞ք կարծեր, որ տրտմությամբ խելահեղված մըն ալ բարեկամս՝ Մ. եպիսկոպոսը եղավ, բայց ինք շատ տինճ մեկը, որ ողջ կմնա տակավին։— Ողջ ու վստահ եղիր, թե պիտի դառնա ալ նորեն, անոր մասին ձևված ամբաստանությունները սև զրպարտություն հասկընալ բացահայտորեն, գինք չի տանողները պատեհություն գտած սեպեր են, որ Հայ Ջատիկը քիչ մըն ալ իր տրյունովը կարմրցնեն, բայց չեն կրցած, ան ատենները

Եգիպտոս կգտնվեր։— Կըսեն ոմանք, թե դիտումնավոր հեռացում մըն է եղեր այդ։ Այդ մեկն ալ հայ ապերասաններու հերյուրանք, զրպարտություն, չե՞ք գիտեր թե՝ թշնամին երբ քար չի գտնա, հող կնետե երեսիդ։

* * *

Կխոսինք, կխոսինք, կխոսինք։ Ասլանյան վարդապետի տպավորություններուն նայելով, ինքն ալ անձամբ տեսած ըլլալով մեկ-տեղ Ատանան կործանող չարիքներուն ահագնությունը, անհույս մը չէ բոլորովին, ունի սրտապնդող մտածելու կերպ մը թե՝ ազգը եթե զայն վերականգնելու ներկա անկեղծ հաճախանքներուն մեջ թուլացումի մը չի միտի, ու եթե հոն վերապրելու բախտավորվածներն ալ խելքերնին գլուխնին՝ հիմա քան երբեք, խաղաղ զարգացումին, հայավայել զարգացումին ուխտող հետապնդողներն ըլլան, առաջինեն ավելի փայլուն քաղաք մը պիտի ծնի Ատանան, երկրորդ շեն Եգիպտոս մը Ամերիկյանին դրացի, կամ կուզեք, մատչելի, ճոխ մանրանկարը անդրօվկիանոսյան Ամերիկային, որ աշխարհք կկշտացնե իր կատարուն առաջադիմության ու զարգացումին ամեն բարիքներովը։

Պահ մը կփոխենք խոսքը, ռուսահայ իրականություններուն կտարվինք, վարդապետը այն կողմերեն ալ քիչ բան չի գիտեր, ու իմ մեկ հարցումիս ինք տաս պատասխանելու հեշտ հոժարություն կցուցնե։ Պոլիսեն մինչև էջմիածին հետաքրքրող, սիրուն ոդիսականներու շարք մը իր ճամփորդի տպավորություններուն գրեթե ամբողջ մանրամասնությունները կպատմե ու կհաստատե, որ ի դեպ Արարատ իրավ հույսերով լիքը արշավանք մը, իրավ ոսկեգեղմին... Իշմիրյան պատրիարք մը այն տեղը, որ միլիոնավոր հայերու անընդջանքին մեկնակետը կմնար սև տարիներու շարքի մը մեջ, չի մեռած Հայերը այդ իրենց մեկ բաղձանքին իրականացումն ալ տեսան, աղդովին արդյոք ի՞նչ երջանկություն պիտի ըլլար խմածնիս, կամ դարերու տառապանքին կսկիծը ինչպես հրաշալիորեն մեկ վայրկյանին մեջ պիտի մոռնայինք, թե որ այն ինչ կողմերե ալ բոցերու մեջ խորովվող հայ մայրերու ու փոքրիկներու հոգի տաղող ճիչերը խնայվեին մեր ականջին։

Բայց, ա՜խ, այս ժողովուրդը մեծ անեծքի մը հավիտենական նշավակը եղած ըլլա կարծես ու քիչ մը մեկը մոռնալու իր բռնաճիգ զսպումներուն մեջ տակավին, կհանդիպի հանկարծ ուրիշ ցավ մը վայել։

Վաղը, վարդապե՛տ, երբ աս օրվան սուգերն ալ դադրին չափով մը մեզնե արցունք քմելե, չե՞ք կարծեր, որ ուրիշ շիվան մը պիտի մեռցնե Հայը ուրիշ կրակի մը մեջ, որ Ատանան լափլիզող կրակներեն ավելի սպառնական ու ահավոր կթվի ըլլալ։— Գիտեմ ինչ կըսես, այո՛, կպատասխանե ուղեկիցս, ես քու ան ակնարկածներդ ալ մոտեն տեսա, շատ մոտեն շփվեցա հետերնին, այդ փորձությունները արդեն բնավ անուն չունին։— Անո՞ւն, ի՞նչպես ոչ, հայ են անոնք ալ, չէ, հայեր, բայց, որոնք, ձլե, որ ես ըսեմ քեզի թե՝ ատանացի Յախշիին բռնկցուցած կրակներեն շատ ավելի գեշ բանն է, որ ընել որոշեր են ու պիտի ընեն աս ժողովուրդին գլխուն. անոնց շոշականքները հոս ալ չե՞ք տեսնար մի, բայց սա հավետ ողորմելի խեղճությունները, «նա ասաց»-ի մը ապուշ նախապաշարումովը մուտք ճարտարվորված ամեն կողմ, սվոնց բոբիկ, գլխիբաց միսրոնարը ամեն երդիքի տակ, Համիտի անդամ մտքեն չանցածները իրենք լարված են ծանրացնել ջախջախված արդեն հայ էության լանջքին։ Դահիճնե՞րը, եթե ամենեն վերջը աս անունը պիտի տային ինքզինքնուն, ինչո՞ւ օրին, փորի վրա չեկան ու չի սողացին անոր մութ որջը, ուր ան Եըլտըզի կարմիր Վամպիրը շատ աղեկ պիտի գիտնար վարձատրել զիրենք, իրենց հայասպան գործունեությունը՝ այնքան լեցուն փոխարենով։— Բայց վստահ եղիր թե՝ հայ ժողովրդին ողջմիտ մեծամասնությունը տեղի չպիտի տա անանկներու ստեղծած հոսանքներուն ու պիտի տեսնվի, թե օր մը անոնք իրենց հռչակած փորձած ու քարոզած բարոյականներուն վրա իրենք իրենց չվաններովը պիտի կախաղանվին, թող քիչ մըն ալ ցատկըտեն, քիչ մըն ալ շաղակրատեն, ճպուռը կյանք չունի, վերջապես մենք քիչ մը խուլ մնալու համբերությունը ունենանք ու պարտքերնիս կատարենք ճշմարիտ Հայու կեցվածքներով։

* * *

Ուր որ պիտի հասնինք ահա, կառքը գեղին փողոցներուն մեջ ավելի գեշ ձև մը կառնե, բայց մենք անկե մեր շիջնալու համառությունեն հեշտ չենք հրաժարիր։ Կառքին պատուհանեն վարդապետին բարևի կերպերուն ետևեն բարև մըն ալ իմ ձեռքես կխրկե փողոցին աջ ձախը ոտքի կեցող ծանոթ անծանոթ հայրենակիցներուս,

որոնցմէ ոմանք կարոտով օծուն ժպիտներ մը ունին երեսնուն վրա ինծի իրենց պատասխանելու ձևերուն մեջ։ Կղգամ վայրկենապես, թե իմ մեջս ալ հին հուշքեր մը կձենոտին, կճանչնամ անոնք, ինչպես չէ՛, շատերը իմ տարեկիցներս, իմ խաղընկերս, մեկ քանի դեռ որքան ալ հեռավոր ազգականներ, բայց որոնց հետ կուզեմ որ վեր ցատկեմ ու հոր ու աղբոր գրկավուք մը ընեմ, այնքան անուշ ու ընտանի դեմքեր բոլորինը։ Սևերու մեջ պատատված ծերուկ կնիկներու այն խումբին մեջ մայրս տեսնալու խելահեղիչ պատրանքը կունենամ։ Ամեն կողմե այս կեցվածքը, հիանքի ու ակնածանքի լեցուն անկեղծ այս արտահայտությունները, որոնց շատերը ես վարդապետին կհանեմ բաժին, մնացածը զուտ գոհվանքը հայրենակիցներուս կուրծքերեն արտահոսված, ինծի կթողամ։ «Վարդապետին հետ մեր վարժապետն ալ է եկեր, Օվանեսը, Օվանեսը, Սառային տղեն, մեր Օվանեսը չե՞ք ճանչնար»։ Մինչդեռ գյուղին անդիի ծայրը գեղչկուհիներու այդ խղվրտյունները ակամենուս, հոն Մակար աղան և ուրիշներ մեզ դիմավորողները կբլլան, ու ինչ անձնվեր կերպեր ասոնցինն ալ ի սպաս վարդապետին մասնավորապես երբ նա կառքեն իջած՝ Մակար աղային շեմքին վրա կկոխե։

Վեր կելլանք, մեր հյուրընկալին սենյակը, ուրկե կդիտենք որ հետզհետե ամբողջ գեղն է, որ կխռնվի ու բան մը հասկրնալ հոտվրտալու հետաքրքրությունը կցուցնե։ Մակար աղան իր մանկությունեն ալ եկեղեցասեր ու եկեղեցականասեր մը— ա՜հ, թող մարիլ չի գար նոր աղանդավորներուն վրա— փառավորվածի ուռույցք մը դմբեթացուցած կերևցնե իր լանջքին վրա առաջնորդ-տեղապահ մը իր տուներ ընդունած ըլլալու հպարտությունով մը, հպարտ մանավանդ, երբ այդ ուռիթով կտեսնա թե՝ օր մ՚առաջ իրեն բարև չի տալու քիթ ընողներն ալ հիմա իր շուրջը քսվոտուք մը կցուցնեն, որ վեր հրամցվին իրմե ու վարդապետին ներկայացվին։

Ու դեռ Մակար աղան իր նայվածքին մեջ քովիններուն կարդացնել կուտա թե՝ ինքն ամեն ատենն ալ նույն մեծ մարդն է, որ պետք չէ անտեսվի, կամ իր խորհուրդներն ու աշխարհայացքի շիտակ կերպը պետք չէ որ այն նորերը հեղնանքի ու քննադատության նշավակ պահեն։ Իրավ է, որ նա իր այս պահանջներովը ոչինչ ունի ծիծաղելի, եթե այն նոր ըսվածները սրվոր լեզվեն հասկնալու հայերեն մը գիտեն, մարդը իրրև թաղականի ատենապետ՝ հին մըն է, բայց ոչ այն տեսակեն, որ նորը կատե, եթե այս նորն ալ այն տեսակը չէ, որ գիտենք, կճանչնանք արդեն։ Վերջակեն կլուսնա, խաչկալները կօծվին, տեղապահ հայր սուրբը գեղեցիկ քարոզով մը ատ ատիթով, խոհեր մը կանձրևե ունկնդիր բազմության բուն իսկ հոգիին, նույնիսկ ներկա եղող կուսակցական շեֆերու ալ սրտին վրա, եկեղեցին կավարտի, ու մենք այս վերջիններուն կորացած գլուխներուն ձևերեն օգտվելու համար կփորձենք զանոնք հասկացողության մը բերել, որոնք անխոստովանելի պատճառներով իրենք իրենց մեջ պառակտվելե հետո, մեկ մասը զատված դպրոցը կհովանավորե, մյուս մասն ալ ան առջիններեն քեն ընողները, դպրոցավարները քարկոծելու իրարու թև թիկունքներ եղած են։

Մաս մը դաշնակցական, որ դպրոցը փաթթեր է մատին տարիներե ի վեր, մեկ-երկու ուրիշներ ալ, որ նոր հասած ըլլալով Ամերիկայեն, դպրոցը կուզեն փակել, դեմիններուն սոնքանքը ընկճելու համար, ուրիշ կողմե մը հնչակյան տղաքներ ալ իրենց պահանջը կգոռան դեպի դպրոցը, ժողովուրդին մեծամասնությունը ու թաղականությունն ալ իրենց շվարքին մեջ հուսահատ՝ եկեղեցիին խաչերն ու խաչկալները շատցնելու հեճուկե մը տարված՝ դպրոցը բոլորովին ան իրար չի հասկցող տելիխանլի մրցակիցներուն քմայքին ձգած են, ու քառս մը ու բաբելոն մը կատարյալ, որուն մեջ խեղդվողները այն խեղճ պզտիկները եղեր են, անոնք, որ՝ հապա՞— ինքզինքնուն պատանեկան խումբի մը հովեր տված ժամ չեն մրտնար բնավ ու փոխ-քաքոզի պես ըսելիքներն ալ տերտերին շլլիքը փաթթեր են։

Կիրակեն ամբողջ սրվոնց ատ-կրսեներուն մեջ կխացնենք ականջնիս ու վերջապես ու հետ ուրեմն, տղա՜ք, ատոծու սիրուն, եթե ասոր չեք հավատար, հայրենիքի սիրուն, եթե աս ալ չեք լսեր, ձեր հոգիին կտոր պզտիկներուն սիրովը, թողեք ինչ որ ունիք ու համերաշխիլ գիտցեք, քարոզ մըն ալ վարդապետը Մակար աղային սենյակը ատ իմաստով, որը, հրաշք մը պատմելու համար, անհետանք չի մնար ահա, կհաշտեցնենք անոնք իրարու հետ, ու ամենքը մեկտեղ՝ թաղականության հետ։ Դպրոցը այս վերջիններուն խնամքին հանձնելու թելադրանք մը կընենք իրենց, որուն առարկող չըլլար, քանի որ կապահովեցնենք գիրենք, թե առաջիկա սեպտեմբերին բոլոր հայ դպրոցները նոր ծրագրով մը բացվելու կարգադրությունն մը պիտի ենթարկվին, որ ալ պետք չըլլա անգամ մըն ալ դպրոցը քանդոք տեղական կամ կուսակցական անիմաստ պայքարներու։

Վայրկյան մը հանգիստ տեսարանի մը առջև կթարթենք աչքերնիս

Ուրի՞շ, Գարան նենե, ուրի՞շ, ուրի՞շ։— Է, ի՞նչ գիտնամ, օղուլ, շատ միտքս չի գար հին բաները, լոս իշնա մորդ գերեզմանին վրա, օր քեզ քաղաք ճամփեց, մարդ եղար։— Ես փրոտ չեղա նե, Գարան նենե։— Աղեկ օր չեղար, տղե՛ս, փրո՞տն ինչ է, հայն ինչ է։— Ի՞նչ գիտնամ, ան ատենները շատ ավելի դուն կխնտայիր ժամ գացող հայ կնկտոց վրա թե՝ կռատունը կերթան, կուռք կպաշտեն։— Մըյեա, անա՛մ, ինտոր ըլ չես մոռցեր։ Պահ մը կմտմտա իմ մորս մտերիմ բարի պառավը, ու ահա վերջին մըն ալ իր զգացումներեն, որ պարկեշտին ու մաքուրին բյուրեղացումովը զմռսված հարյուրամյա գեղջկուհիի մը հոգիեն կքակվի ու կպոռթկա— էն ատենները, խուզի՛ս, մենք իմարներ էինք օր էդ խոսքերը կնետեինք փրոտ չըլլողներուն, կամ հայերուն ժմուն, հպը հիմա սը ձեր նոր իմաստունները՞ը ինչ են օր հեչ կըսեն էն ժամը պիլե չեն մտնար, տերտերին ըլ, տիրացուին ըլ հազար խոսքեր կհամբեն։ Էնոնց ըսածները նե փրոտը բերան կառնե, նե ըլ տաճիկը, հոգիս, դուն քաղաք ես, անկանճդ բան չի լսեր...

Ասլանյան վարդապետին հետ ցավագին նայվածք մը կփոխանակենք ու ոտքի վրա մեկնելու կպատրաստվինք. սանդուխեն վար կիջնանք որուն վերոքը՝ ծերուկ մայրը առխարխափ շարժումի մը մեջ իր ճոկանին կոթնած, մեզի անգամ մըն ալ իր ձենը կխրկե. «Բարի երթաք, օղուլ, բարի եկաք, բարի երթաք, քեզի ըլ կըսեմ, հայր սուրբ, աստված մեկ օրդ հազար ընե, օր ուր երթաս նը՝ էս չեշիտ շնորհքներ տանես, տղեքը պարըշցուցեր ես եղեր, աղեկ ես էրեր։— Ինծի ալ բան չունի՞ս ըսելիք, Գարան նենե, ալ ո՞վ գիտե, երբ անգամ մըն ալ...— Հա, տղե՛ս, դուք կերթաք, ես նորեն իմ տեղս կմընամ, որ ալ չի տարվիր, ալ չեմ կրնար քաշեր, էսչափ հեռուս խոսող չէր եղեր, պերխուտար ըլլիս, չաղա չոլուխիտ ալ բարև տար մընես, ըսե էնոնց ըլ՝ օր ալ էն Գարան նենեն հողին վրա բուռ մի հող կօլրտի— ու մահը կփնտռե, հա՛, օղո՛ւլ, սը մութ տեղերը մահս կփնտռեմ, անունն ըլ կուտամ ու ձենիկ մը չեմ առներ, գնա, արևս տար ու մահս խրկե, ջուրի պես իմ ծարվըցեր, ալ էսչափն ըլ չապրվիր, հողը ավելի հանգիստ բարձ մը ինծի. էս մութ աչքերուս ըլ զաթի գերեզմընին մութն է օր կհարմարի. բարի՞ երթաք...»։

վարդապետին հետ, երբ անոնք ոտքի կեցած զիրար ողջագուրելու ատենին կնշմարենք, թե իրենք ալ փղձկումին հեծկլտուքը կկլլեն ու հազիվ կրնան բառերը իրենց իրար հյուսված զգացումներուն թարգման ժմնցնել։ Վերջը մենք պետք տեսանք նաև, որ անոնք իրենց դաժանություններեն սրբված երեսներով անգամ մըն ալ փոխադարձ այցելություններ կատարեն իրարու տուն, նույն պահուն տեղապահին հետ անոնց առջև ատ առաջնորդությունն ալ ըրինք, որ քիչ ազդեցություն չըրավ գեղին ամբողջ համայնքին վրա, այնպես որ վայրկյան մըն ալ ես իմ անձնասիրությենես դադրած՝ չի ջսպվեցա ըսելու Հայր Ասլանյանին թե՝ իրեն հետ Ատանա մըն ալ ես գացած եղա ու գավաթ մը ջուր ալ ես ինքս նետեցի կարևոր հայ գեղ մը ավերելու սպառնացող կայծերուն վրա։

Երկուշաբթի լույս, մեզի աղգական տուն մը նախաճաշ առնելու հրավիրված՝ անկե պիտի դառնանք Մեզիրե։ Պեյրոս Կոսնանյան հին բողոքական մըն է, որ սակայն հիմա շատ մը այն ինչ տեսակ նոր լուսավորչականներե ավելին կարժե ու վկայողներ կան թե՝ նա շատ անգամ եկեղեցի կուգա ու խաչ ալ կհանե. իր տունին բարիքներեն բան մը չէ թողեր ու ամենքը հավի ու ոչխարի տուրք ըլլալով ինիին վրա փոխադրել տվեր է, բայց առավոտ տակավին, մեր ստամոքսները ուտելու մարմաջ չեն զգացներ մեզի, ես կթողում սերն ու կարագը ու Գարան նենեին կացքին կհետևիմ։ Տանտիրոջ մայրն է, հարյուրամյա մը ու ավելի ալ անշուշտ, բայց որը տակավին սույն փոքրամարմին տինճ կնիկն է, որ մեռած չըլլալու զարմանք մը կհնչեցնե մեջս։

— Օ՜հ, Գարան նենե, բարի տեսանք՝ կըսեմ, քիչ մը ժիր շեշտ մը իմս, երբ կհասկնամ թե՝ դժվար լսելու հետ, աչքերն ալ շատ չեն տեսնար, ու ալ ձեռնափայտի մը գործածությունովը կքաշկըռտվի. Գարան նենե ձայնիս պատասխանելով անունս կուտա ու մորս հնչյունին անուշ խաղերը կնետե ականջիս, քովիններուն, որոնք պատկառանք մը կհիշեցնեն իրեն,— Զգեցեք, մի՛ արգիլեք, կըսեմ, որ նա այնպես հատհատե իր զգացումները ու հայտնվի, ինչպեսը կհիշեմ, թե օր մը իմ խոլ, իմ խենթ մանկությանս կռնակին կխրկեր։— Դուն չար տղե մը էիր, գիտե՞ս։— Հա, Գարան նենե, քիչ մը իմ ալ միտքս կուգա։— Հեղ մը ձեր էգիեն կդառնայիր, մեր Լուսիկը խավող ուզեց մընեդ նե, դուն էնոր աչքերուն հող նետեցիր օր քիչ մնաց քոռնար պիտի, մորդ մեկ հատն էիր՝ ես բան չըսի նորեն, Սառոն ըլ (մայրս) զաթի շատ կսիրեի, տե՛յ կիտի օրեր։—

ՄԱԳԱՂԱՓԵՆ ԱԼ ՀԻՆ, ԹԱՆԿԱԳԻՆ

— Մի՛ գանգատիք, թե արևին տակ բոլորովին անբան, անդպիր ցեղ մը ապրած ըլլայինք, կամ այնպես, իբր թե՝ երբեմնի հին մեր գրական ածուներեն կորեկի ու կլկլի պես ոսին բերքեր միայն հնձված ամբարված ըլլային եռքիններու իբր սնունդ ու ոգեպահիկ պայմաններ։ Այսպես մի կանխեք ըսել, քանի որ մինչև հիմա բերանային ավանդություններուն հետ թուլթն ու մագաղաթը միայն կմնային խմորը մեր հայ գրականության։

Հայ գետինը ո՛վ պեղեց ու գիտցավ բան մը, հայ սեպաձևերը ո՛վ հեգեց, ու գյուտը հրուկեց նորության մը։ Դուք ալ չէի՞ք ընդունիր, թե վիթխարի զանգվածով հատորներ կան հոն, որ չեն կարդացված տակավին, չեն լուսաբանված։ Անհուն ճոխությամբ գրատուն մ՚է ան։

Գեղին գերեզմանոցին մեջն ենք։ Մեր ծերուկ տեր Հուսիկը, որուն մինչև ունքն ու աչքերու թարթիչներն ալ խաչի բամպակենի մը սպիտակությունով ձյուն ճերմակ մը կշեշտեն, ակնարկված հատորներեն առաջինի մը կողքին այսպես կկարդա.

— «Աստ ճանգչի մաճտեսի Պողոս Մելոյեան Խոշլի կոշեցեաղ, որ ապրեցաւ զամս թեֆտուն եւ երեք եւ ետ ամանաք իւր անասելի ցաւոք եւ տանջանաք, որ ճանդիպիք սմա, ասացէք Աստուած օղորմի իւր հոգուն, Աստուած արասցէ ճախ դատաստան»։

«Աստված ողորմի, աստված ողորմի իր հոգուն, վրա կբերե տերտերը խոր հառաչանքով մը, իմ մենծ տղիս աներն էր էս մարդը, հետո երբեմն ինչ օրեր ապրած, ինչ անուշ ու ծաղկունակ գարուններ, դեռ հիմա ալ էնոնց հոտն է, որ կհոտվառամ։ Մենծ տուն, համբա ռենճպեր, ախորը 15—20 զոգ բելիար գոմեշներ կթշային, ամեն մեկը մեյմեկ լեռ կվերցներ, 20—25 զոգ ալ ճերանի եզներ կպահեր, ալ կթանք հաշիվը հիսապը մի հարցներ. էնոր մեղրը ու մեղվըտունը, էնոր խաղողն ու խաղողի էգին, պարտեզները որը բսեի, մինակ հավտունը 2—3 հարյուր թև հավ ու խորոզ կգարդրնճեին։ Սելի պես գինին, սելի պես եղն ու մեղրը, երդիքեն անցնող ճնճղուկն ըսես անոնցմե մաս բաժին կվերցներ։ Միտքս է, որ իր օրովը ալ հեչ անոթի աղքատ չի մնաց գեղը, ամենքն ալ Պողոսին դուռը գործ կգտնային, կուշտ հաց կուտեին։ Ի՞նչ օրեր իրավ որ. բայց ե՞րբ հայուն ճրագը մինչև լուսաբաց վառ է մնացեր. խեղճ մարդուն վերջը հասկնայիր։ Ինքը հավատարիմ ու շատ ալ սիրական մարապան էր Խոշլի Սըլո պեկին, էտոր համար իրեն Խոշլի կըսեին, ու Խոշլի մեյ մըն էլ էն պատճառով, որ երկինքեն փախող թռչուն ճանավարներուն հետ պիլե անուշ կատակներ կըներ ու միշտ շեն հոգի մը կցուցներ։ Գեղը մինակ ինք կար ու կրնար ձին հեծնալ, ֆես դնել, չիթ զպուն ու կարմիր կոշիկներ հագնիլ, իր աղային սայլով ինք ալ իքինճի աղա մը կճանչնային, վո՞վ համարձակություն ունենար էնոր դռան շանը պիլե օշթ-քիշթ ըսել, բայց դուն ասղը տես ըսի։— Անգամ մը պեկը մարապային տունը միսաֆիր եկած, Պողոսին տղան ինչպես կըլլի մեկեն կհանդիպի տեսնալ, որ աղան իր կնկան գեշ ձեռք մը կերկնցնե, Մարսուպ Պողոսին էս մեկ հատիկ զավակը, չի տանիր էսօր, մեջքեն մանգաղը քաշելուն պես կեծկլտուքի պես աղային վրա կնետվի, բայց դիմացինը ավելի շուտ, ավելի ճարպիկ, իր երկբերան խաման Մարսուպին փորը կխոթե, ու խեղճ տղան ակնթարթի մը մեջ ափուչիք կընե։ Վերջը շատ տավա, շատ տալապա. վերջը դատ հյուքումեթ տարիներով, բայց որո՞ւ հոգ, որո՞ւ ի՞նչ պետք, մարդը թա որ Պոլիս, թա որ Մըսըր խոսք նուֆուզ ուներ, մնաց քեսեն ու խալըսավ, խալըսավ էնդին ալ զավալլի Պողոսին խոճաման տունն ու հարստությունը փճանալե վերջը, մեկ հատիկ տղան ու վերջն ալ հարսը խենթնալով ջրհորը իյնալ խեղդվելեն ետքը, ինքն ալ շատ չանցած՝ անասելի ցավոք և տանջանք էնդի դեմն անցավ, որ անգամ մըն հոն մեջտեղ դընե իր դատաստանը։ Աստված ողորմի իր հոգուն. էս տապանագիրն ալ ես ձեռքովս գրել տվի, էս իմ աչքերովս տեսա»։

«Հող էի անդրէն եւ ի հող դարձա, հէ՜յ վախ, հե՜յ վախ, որ պէտ-մուրատ եղայ»։— Ու այս քանի մը բառերուն անմիջապես վարը կնշմարվեին ձևազերծ նկարներ մը, թմբուկ մը, գուռնա մը ու մեջտեղը դագաղ մը մեռելի։ Տերտերը կբացատրե։— «Ունայն աշխարհք, անցավոր արցունքներու աշխարհք, իրավ որ սը տղեկն ալ անէճեմ, պեմուրատ գնաց։ Զորթութենց Բիբի Աստուբին էջինեկն էր, 15—16 տարեկան կար չի կար տահա։ Աստուր թաքը ծծող կծքին մեկն էր, ձմերուկը օր ուտեր, փուրն ալ ծոցը կդներ, որ իր էշն ու կովը խնդացնե։ Էճելն ըրավ, տունը հարս մի ձգել ուզեց, որ պետք չունենա դուրսե բան բանողներու, բայց կերևա թե՝ էդ միտքը աստծու ալ խոշը չեկավ, հարսնիքի օրը դեռ փեսան առագաստ չի մտած, էս հողը մտավ։ Ու ասոր պատճառը—ամա պիտի ըսել թե եազըլան

պոզուլմազ զաթի*— գեղին աղան եղավ։ Աղան՝ էն ատենները հայու հարսնիքի կանչվեր ըլ կուգար, չի կանչվեր ըլ նը հոն էր զաթի, ու էն վերի գլուխը պիտի նստեր։ Հարսը քովի Շնթիլեն կբերեին, անկե դառնալուն, գետեն էսդին, աղան Զըլփանլի փաշին եկեններեն էր կարծեմ, ճիրիտ խաղալ մը ըրավ իր սպասավորին հետ, գեղը հասնելու քարընկեց մնացեր չէր մնացեր, մեկեն ինչ ձոն գա հարսնևորներու գլխուն, աղային թոցուցած ճիրիտը շիփ-շիտակ փեսին գլխուն կուգա ու թա պեյնը կմտնա, աստված հեռու ընե, ալ հասկնայիր, թե վերջին եղածը ինչ կըլլի։ Լացողը վո՛վ, վրա գլուխ պատռողը վո՛վ, ինքզինք կորսնցնող գետ նետվողը վով—հարսը ձիու վրա—երեսին քողքը բզիկ-բզիկ ընելով, էն ըլ էն տեսակ լաց մը, շիվան մը փրցուց, որ թա օր հիմա ալ անկաձս կճնկա։ Հարսը, էն ըլ, սայքի մեռել, ու պատանքված մի իր խութնի խումաշներուն մեջ, կիսված հարսնևորները, մեկ մասը հարսը անիսեթ մերանցը դարձուցին տարին, մեկ մասն ըլ փեսան դագաղի վրա շիտակ հոս բերին։

Է՛ն օրը քարերը լացին, էն օրը երկինքը-երկիրը լացավ, էն տարին ամբողջ գեղը ու մոտի բոլոր գեղերը գլխընին հող մոխիր ցանեցին։ Վերջը երկու-երեք տարին անցավ չանցավ, արընտեր մարդասպանը ինքն ըլ շան պես օռնալեն թեսլըմեց, անանկ զարմանալի, որ աչքով տեսնողները կպատմեին թե՝ վերջը էնոր գերեզմանին մեջ ամեն օր շան գութիկ մի կմտնա եղեր ու ալ դուրս չելլար»։

Տերտերը ուրիշ մը կկարդա, այս քարին երեսը երկու խոսք միայն.

— «Ամա՛ն, ամա՛ն, էգիս ծախեցէք, ճոգուս ծխեցէք»:

«Հա՛, յա, անիծած սևերես, էգիտ ծախեն օր հոգուտ խունկ ծխեն, քու հոգիդ խո՞ւնկն ինչ ընե, քու սև երեսդ մոմն ու լո՞սը ինչ ընեն, դուն ինչո՞ւ չի լսեցիր, որ ես կըսեի, միշտ կըսեի թե՝ դուն երբ հենց դժոխքին վրա երևնաս, էն մշիները ճիշտ էն տախտային պիտի զգան, թե նոր դժոխքի մը մեջ կգտնվին, նոր ցավ, նոր խշխիշներ պիտի դաղեն իրենց հոգին։ Դեռ շատ պիտի պոռաս, շատ պիտի աղաչես, ունկին տեղն տահա մկնծիրտն ալ պիտի ուզես, որ հոգուտ ծխող ըլլի, բայց ո՞րու ինչ հոգ, հոս ո՞վ ունիս էտիդ լացող, ո՞վ էնի, որ հիշատակիդ մեռներ, ալ հոս սո՞ն մնաց, որ չի

* Արդեն գրածը չի ջնջվի (թուրք.)։

քաշեիր, ալ հիշ օճախ պուճաղ մնա՞ց որ չի մրեղցնեիր, խոճապաշի մը, բայց կարծես յոթը աշխարքի թագավոր կհրամայեիր, ինչո՞ւ— որովհետև գեղացին կը կթեիր ու փաշին կտանեիր, ինչո՞ւ— որովհետև թուր թոփ գործածողները կոնակ կպահեիր։ Թորիկ էր ասոր անունը, գեղ մը գեղով միշտ մեկ բերան իր ետին կպոռային ու անեծքներ կձգեին, ա՜խ, Թորիկ, երբ պիտի փորենք, երբ պիտի թաղենք քեզ, որ քիչ մը գեղը շունչ առնե ու հանգիստ առտու մը լուսցնե։ Ամա՜ն, ամա՜ն... օր մը աղքատ Ղազարոսին դրացի հարուստն ըլ էտ ամա՜նը, էտ օգնությունը կաղաղակեր աղվեսն ու գայլն ըլ ֆախը ընկնելու ատեն տը տեսակ պաղբրթի չաղբրթի կընեն, բայց ի՛նչ օգուտ, սուրբեր ունիս նը, էնոնց պոռա, աստված ունիս նը, էնոր շիտկվիր, էնոր վնկվնկա»։ Տերտերը հաջորդաբար.

— «Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուբ ինձ փորեցի»:

«Էսօր ճինսեն, ճիտեն ալ հեչ նեֆես չի մնաց գեղը, ու բոլորն ըլ կենճ-կենճ մեռան։ Կենճ մեռան, որովհետև՝ մահը իրենք իրենց ձեռքովը կկանչեին։ Մանոն՝ պարերնին, մեշհուր գող մի էր, Թուրանենց էգուն մեջ զարկվավ, գիշեր մը, խաղողի գողության գացած ատենը. տղեքն ըլ վերջը—Ակոբն ու Մինասը, հորերնուն գենաաթը բանեցուցին. մեկը մեկ շաբթուն, մյուսն ըլ մյուս շաբթուն մեջ զարկվավ գնաց։ Ակոբին չի գտվավ մարմինը ըսին, սպաննելե վերջ անջուր հոր մը նետեր են, Մինասն ըլ Առիկանց վերի էգուն պատին տակ գտան ու հոս բերին։ Գեղացին էն ատեն, մեզ չի թողեց, որ էսոնց վրա կարգ պաշտոն կատարենք։ Իրենց հեռվե հեռու ազգականին մեկը վերջը՝ գաղտուկ ինձի դիմեց, որ ես բան մը ընեմ, բայց շիտակն ըսելով ես ալ մերժեցի, իմ սիրաս ըլ չի տարավ, թողի, որ միայն քար մի քաշեն վրանին, հոր ու տղի վրա, ու փակեն գուբը։ Պելե՛հ, պելե՛հ, մեղքի էս գողերը իրավ որ իրենք փորեցին իրենց կորուստին գուբը։ Գեղացին էնոնց գերեզմանին քովերը մարդ մուրդ չի թաղեր, աղեկ չեն սեպեր»։

— «Լեռները թնռացին, թփերը լացին, Օրսէփին պոյովը քար կյրեցին, ամեն կիրակմրտի ճոգուն ծխեցին»:

Էսօր համար լուսահոգի հայրս կըսեր, թե տիարեն եկած շատ հարուստ պեղիրկեան մը եղեր է, որ հատուկ էս կողմերը գալով իր ձեռքովը ըռատ-ըռատ դրամ տարտըղներ է գեղացուն։

Էն տարին սով տարի մի, էն տարին աստված չի ցուցնե, սով սոսկալի տարի մի էս կողմերը, հարուստ թե աղքատ խոտաճարակներու վիճակին հասեր են, բաղեղը, խոունկը հացի տեղ գոր-

ծածվեցան։ Անոթուքենե սատկած տավրուն ու հավերուն մեռը, տախկա մի ըսես գեաթենը չի մնար եղեր, իրարու ձեռքե քաշքշելով դում-հում թերվընին նետեր են։ Սոսկալի, զարհուրելի տեսներ, հայրս էր պատմողը թե՝ մեր գեղը ու բոլոր մոտի գեղերը, էս անճանաչ խարիպին ողորմությունովը ազատեր են, բայց մարդը ազատելով հաղարավորները, ինքը վրա տվեր է, երբ դաֆիլ ցավե մը բռնվելով իր ամանաթը հոս, էս մեր գեղը թեսլիմեր է։ Օրսեփ, իրավ Օրսեփ, քընե Օրսեփ գեղեցիկը բարերար։ Ամեն գերեզմանոց գալուց առաջին հայր մերս էս մարդուն վրա կընեմ անպատճառ»։ Հո՛ն, նա՛, տապանագիրը.

— «Աչքերս քարիս վրայ, արեւս աչքերուս վրայ»։

Վերի կողմը այս քանի մը բառերուն՝ զույգ մը աչք կնշմարվի, երեսը սրբատաշ, այլ մամուռի հետքերով աբատավորված քարի մը՝ կհարցնեմ. ի՞նչ այսպես, Տեր Հայր, աչքերու ինչ հանելուկ պիտի ըլլան ասոնք։—«Հեչ կրակ կա՞, որ ջուրով չի մարի, աղա՛ս, ջուրով ալ չի նը, հողով մուքլափ չի մարի, բայց էս քարին վրինները, որ մինակ ես կընամ մեկնել, որովհետև մարդը օր մի ինծի մինակ կխոստովաներ,— էնպես կհասկցներ թե՝ սեր քաված կրակը, սեվատաքին ալաֆը, բանով միչի մարելե զատ, որուն մեջ որ բռնկեր կըվառի, գերեզմանին հողովը, գերեզմանաքարին տակ ալ չի մերիր, չածխանար, սատված չի թերե մարդուս գլխուն, ինտոր պատմեմ, ես գեռ խոստովանանք քսված էս տարիքիս մեջ շապկիս ալ չեմ հայտներ,— բայց, էհ, գուն գիս մեղքի մեջ կձգես։ Արոր Օհան կըտեին էսօր, քմ ծուխս էր, վարլի։ վարքաթքի, ոենճպեր անվոր մը, կին ուներ, տղա-աղջիկ ուներ, բայց էնդին ալ անիծած լակոտը Տեր Սահակին երեցկնոջ սեվասալամիշ եղեր էր, մեղք է կսեի, Օհա՛ն, որու կըսեի, էնի էնքան մըզըլտեր էր, որ օլանճայ մալը էնոր ուղուքին խաբճեց, սալաքնկեր եղավ, պաղչան ծախեց, կարմըրդարը ծախեց, ծախեց շատ բան, վերջն ալ ինքզինք ծախեց խալքսալ։ Տերտրուն տղաքը չի տաքին էտ բանին, երբ ա՛լ բանը աշկարա ելավ Օհան տապաբալավ քեֆի հրավիրեցին բան խրեն էգիին մեջ. հոս երկու աղբարը մինչև կեսգիշեր ուտել խմելե վերջը, մեկեն երկուքն ալ Արորին վրա կընկնին, պողազը չվան մը կձգեն, կխեղդեն, ետքը թուքի ծառե մը կախելով սուսիկ փուսիկ տաներ-նին կգտնան։ Էն օրը էս բանին վրա ու եբեք օր իրարու վրա, ինչ թոզ, ինչ տաման, ինչ արոտում, ինչ կեծկլտուքներ, քիչ էր մնացեր, որ գեղը ու բալար աշխարհը տակ վրա ըլլի։ Մարդ չի հասկ-

ցավ դեպքին սեպապը, հասկցողն ալ չուզեց ձեն հանել, մուքթահախ կըսեին։ Յանե իրիցկինն ալ ինքզինք ձեռք տվա՞վ ըսես— չէ, նե մինասիպ, սուրբի պես էքսուկեթեկ մի էր, որ ամբողջ գեղը կըվկայեր։ Անգամ մի Օհան առանձին խոստովանանքի նստած. ըսե, տերտեր, ի՞նչ ընեմ, որ վազ գամ, խալըսիմ կըսեր, ես ալ կուզեմ, բայց չեմ կրնար, քանի փորձեմ, էնքան խորունկը կերթըմ, ես անանկ հասկցեր եմ, թե քիչ մը ինք ալ ըզիս կսիրե, բայց էշկերե չի հայտներ, չի կրնար։ Խենթ ես, կըսեի, տղա, հեչ լսված բա՞ն է էտի, հեպը դուն կլացեր ես, խապար չունիս, գնա, գլխուտ ջուր դնել մի գիտցիր, որ տը մջինը մերի, կխրատեի, բայց ալ կնայեի, թե բանը բաներն անցեր, շատոնց անցեր, որ աղբյուրին ջուրովը կմերեր, ոչ ալ ջուրովը անահուն ծովերուն։ Հենց որ երեսը տեսնեմ, կըսեր, յոթը օր, յոթը գիշեր հացե ջուրե կկյրիմ, հարցնեն, ի՞նչ է անունդ. լեզուս կխածնեմ, երկու կես կընեմ, վերջին օրերուն շիփ-շիտակ խենթեցեր է կըսեին։

Անգամ մը ելան թե՝ կորսվեր է Արոր Օհանը. մինչև կես գիշեր տուն եկած չըլլիր. ախբր ինտոր մեկը կոահած կըլլի գիշեր ժամանակ ժամը կերթան կգտնտեն, հոն ժամն է, վերնատունը, իրիցկնոջ տոշկին վրա բուռ մը կծիկ եղած բուն կըլլի, ու պահ-պահ կոռնա եղեր, բայց ինչ—մարդ չէ հասկցեր, մինակ ես հասկցած էի, տապանագրին էս խոսքն ալ էն է, որ իր ողջությանը ձեռքովը փորել տվավ ու մարդ ֆարզին չի գնաց իմաստեն։ Արևը Տեր Սահակին իրիցկինը հասկցիր»։

«Գուն ալ համոզվա՞ր հիմա երբ ըսի կրակ կա, որ հալ հալով չի մերիր, չի մեռնիր։ էն գժոխքը, որ անշեջ բոց ունի, պատճառը այն է, որ էս տեղեն հոն մշտական կրակ կտարվի»։

— «Իմ աիս չի մնայ էնողին»։

Ծերունի Տերտերին բացատրության նայելով, այդ խոսքը խորագիրը պիտի ըլլա պատմությանը այն հեք աղջիկին, որ իր հորեղբորը մութ քմայքին զոհը ըլլալով, հանրատունի մը շեմքին վրա կնետվի բռնաբար, որուն՝ աղջիկը չի կրնալով տանիլ, հարսնիքին իրիկունը վերջին մը ալ կհիշե իր ընելիքը։ Առագաստի անկողնին վրա տակավին գոտի չի քակած, պատրվակով մը դուրս կելլա ենշարանեն, բարձր ցուիքի մը եզերքը կգտնա առիարխափ, ուսկե անվարան ու անմիջապես փողոցը նետվելով կտոր-կտոր կըլլա։ Աղջիկը նշանածը չի սիրեր եղեր, ու մինչև այն վայրկյանին իր հո-

դէին խշխշանը մարդու մ՝ալ պատմած չըլլար եղեր, ոչ իսկ խոսք մը այն նկատմամբ բուն իր ծնողացը ականջին։

— «Ապրեցայ եօթանասուն, չվայլեցի եօթը օր, եօթը իրիկուն, մեղօք լուսանալ Համբիկ ճիանեան, նանգի ի շիրմիս, ի մայր նող նոցիս»։ Վեց-յոթը կնիկ տեր ամուսին մըն է եղեր այս, որ յոթանասունը բարձրած ըլլալու համար շան ոսկոր կուլ տված ըլլալու է։

Յոթը կնիկ, առաջինեն մինչև վերջինը մեկ-մեկ, երկու-երկու զավակ ձգելով անցեր գացեր են, հետո այդ վեց-յոթը տեսակ խորթմայրիները իրարու հանկնակ շուն ու գայլ ապրելով Համբիկին աումը կատարյալ դժոխքի մըն են վերածեր։ Առած կնիկները երկար չեն ապրեր, երիկ մարդը որովհետև փայտի, բռունցքի տակ, աչք բանալ տված չէ անոնց, երկուքը թունավորելով մեռցուցեր է, վերջին կինը, ան ևս մեռցուցած մը, Համբիկ եկեղեցական օրենքով լրջեն ընկեր չի ունեցեր, քահանան որովհետև մերժեր է զինքը պըսակել որպես հափրացած շնացող մը, միայն ինք իր ուժովն ու անամոթությունովը անոր հետ համաձայնած կըլլա։

Առջևնիս ահագին զանգվածով խոշոր քար մը, որուն ոչ մեկ կողմը գիր գիծ չնշմարիր, կիսովի հողին մեջ թաղված՝ խոր հնություն մը կխոսի, բայց այդչափ միայն։ Տերտերը շուտ մը անոր մոտեն անցնելու ատեն ինծի ալ թույլատու չըլլար անոր նայելու, մի՛ նայիր, կըսե, աչքերուտ ալ մեղք կըլլա, հոգիիդ ալ, ատոր կուրծքին տակ յոթը գլխով դև մը կպառկի։

Ջալե՛, ուրիշ ատենի պահե հետաքրքրությունդ, կավելցընե,— բայց հայ քրիստոնյա մը չպիտի՞ ըլլար այս, այո՛, անունով միայն— ժամանակակի՞ց մը քեզի,— չէ՛, իմ մեծ հորս օրով ապրած մը,— հարո՞ւստ թե... հարուստ որ ի՞նչ, իբր թե քովը անգին քար մը ունի եղեր, որ անով է պարծենցեր— անուն մականո՞ւն— անունը շնագող սրիկա մը, բայց իր դուրսինովը այնքան պարկեշտ, որ իր անունին խաչակնքվող ալ կըլլա եղեր, ու ժամեն ալ դուրս չելլար եղեր, մնացածը միտքս ձգե, որ վերջը պատմեի։ Ջեմ պնդեր, տերտերը ուրիշ մը կկարդա.

— «Այս է տապանս ցորնուկ Թումասի, որ ծնաւ մեղօք Փրկչական թիւ 1801, եւ մեռաւ ի գիշերի Աւագ Ուրբաթի, վաղ քաջ ընդ առաւօտ, դեռ ոչ կոտորեալ զկարմիր ճաւկիթն զատիկի, պանօք ճամբորդէ, զի Տէրն բարի մեղս իւր թողցէ»։

Հարյուր, հարյուր քսան տարեկանին մեռնող գեղջուկ մը աս, կյանքին բոլոր օրերուն միս չէ կերած երբեք, պահ՝ցուչ, բարի, ժուժ-

կալ մարդուկ մը, որ իր ջուլհակի արհեստովը կրցած է բազմանդամ ընտանիք մը ապրեցնել, օր մը, ոչ իսկ մեկ օր մը մուխոտ շունչ մը դուրս չէ տված կյանքեն գանգատվողի տրտունջներով, իր մեռնելեն առաջ իր սեփական արտերեն չորս կտոր Դատեմի վանքին կտակելու առաքինությունը ունեցեր է (չունենար բարով). իր մահը ապուշ դեպքի մը հետևանքը եղած է, կրիայե շատ կվախնա եղեր, օրին մեկը իր պղտիկ թոռը իր հետը կատակելու ելած՝ գաղտուկ մը մեծ հորը վերմակին տակ կրիայի ձագ մը կքշե։ Ցորնուկ հազիվ մեկեն կիսատ ճիչ մը, կմարի, ալ տեղեն գլուխ չի վերցներ։ Տեր Հուսիկ կարծես հոգնած պահ մըն ալ հենց կկարդա ու կանցնի, ես ասոնցմե շատ քիչն է, որ կրնամ վայրկենապես իմ հուշատետրիս մեջ օրինակել։ Ինք որովհետև մասնագետ մը համբավված աս կարգի արձանագրություններ քակելու, խոսք կառնեմ, որ օր մը մեկտեղ նա՛ վանքին գերեզմանոցն ըլ այցելենք, հոն ևս պահ մը հին կրոնավորված ու հանգածներու տապանագրերը հեգելու համար։ Գուցե անոնք ավելի հետաքրքրական, քան ինչ որ այստեղինները։

***

— Եդին զիս ի գրի ներքնում եւ ի ստուերս խաւարի, հայցեսցուք տէրն ինք ողորմի։ Շիրին ոսկերք ծառայիցն աստծու։

Ռ. Ճ. Կ. Ա.

***

— Գինեաւ արբեցէք, զտէր օրհնեցէք, այս լինի ձեզ շան, որ չանէք վահ-վահ, որ ոք հոգուս պատարագ առցէ հեղ մի ի տարաշ, նա ի մեր վերի այգուն բաժակէն կուշտ գինի ըմպիցէ, եւ երիս հայր մեռս կրկնիցէ։

***

— Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ունայնութիւն է։ Ես ոչ լինիմ ձեզի պէս, այլ դուք լինիք ինձի պէս, աստ՝ղ փառացս անցաւորի։

Ա. Թ. Ն. Անշարժ եղիցի։

— Ո՞վ ասաքար, յորժամ ընթեռնուք զիմ տապանս յիշեսջիք զմեղուցեալս Սիմաւօն Միրաք: Գողացայ, գերփեցի, աղաչեմ զձեզ ներող լերուք:

***

— Լոյս առ աչս էր աչաց իմոց զի մի երբեք ննջեցից ի մահ, հանգստարան մղտեսի Գասպարի Այրօնեան:

1725 Փ. Թ.

***

— Եթէ որ չառնէք իմ խամ, իմ վրէժ այնժամ վայ իմ ոսկերացս, դուք փոտեցէք, վրէժ ի թշնամեաց, վրէժ սուրբ զի սուրբ եւ վրէժխէդիր է և Աստուած ամենեն: Ն. Գ.

***

Տեր տեսցէ եւ այց արասցէ
18 + 95

Վկայք բանուրեան զանանդելի վիշապին, որ եկեր զմիս անմեղաց 66 հոգոց և զարիւն նոցա համեալ, ոսկերք նոցա ժողովեալ ասէն եւ անդէն, կոշկոնեալ մարմին Տէր Պողոսի, ի յաղբանոցէ հանեալ, խորովեալ ոսկերս Տէր Սարգիսի, ի բոց թոնիրի հանեալ և ամենեքին արք և կանայք, ծերք և մանկունք սրածեալք ի բարբարոսաց, ասի ի միասին շեղջակուտեալք, լինին ակնդէտ աւուրն դատաստանին. տէր սոցայն դատաստան բաղցր արասցէ Ամէն:

1912

ՔԱՐԵ ԳՐՔԵՐ

Նախորդով կգրեի, որ մեր հնասիրիկ գեղերեցին հետ անգամ մըն ալ ան մեր դրացի մոտավոր վանքին գերեզմանոցը պիտի այցելենք։

Որոշումնիս չենք մոռնար, եզանակին թուլլատու մեկ օրը, օդստաս առավոտ մը կարձեմ, կանուխ ճամփա ելլինանք ու մեկ ժամը արդեն բավական կըլլա, որ մեր ծրագրված տեղին վրա գտնվինք։

Գ-ի վանքը իր ծավալուն հողերով ու այգիներով մեկն է մեր այն չորսով համրվածներեն, որոնց գոյության արժեքը, կամ կուզենք արդիական բացատրությունով, պահպանումը աբաբու բուրեն, ես աս տարիքիս ալ չեմ հասկցեր ու հասկնալու ալ պետքը չեմ զգար։

Հայ վանքե՞ր, ամեն կողմ, ամենքն ալ, ամենքն ալ մինչև օրս իրար են արժեր առ առավելն, կամ շատերն են, որ կմնան իրենց տեղերուն վրա վազը չգիտեմ ինչի վերածվելու համար հայտնորեն, եթե հիմա արդեն չեն այնպես։

Հիմա չի մոռնանք, որ Դ.-ի վանքին գերեզմանոցը կգտնվինք, միտքս դրած էի, որ այս անգամ ալ հետաքրքրականը հանեի առջևիդ, քարե գիրքերը, դուք արդեն շատ կկարդաք, ամեն օր կկարդաք թուղթե շինվածները։

Տեր Հուսիկ հոս ալ նորեն ինքն է կարդացողը կիկլոպյան քարերու կուրծքին հատ-հատ, ուշադիր հետևողությամբ ես ալ իմ դերիս մեջ կըլլամ ու ոչինչ չեմ կորսնցներ իր կարդացած ու բացատրածներեն, ըսի ու հիմա անգամ մըն ալ կկրկնեմ, թե բարի այս տերտերը միակն է, որ հիներով կհետաքրքրվի ու կրնա ամենեն դժվար ու կնճռոտ հին արձանագրություններն ալ շուրի պես կարդալ։

Առաջին շիրմաքարը ահա, որ աս տողերն ունի կողքին.

«Մեղք շաղախեալ նուաստս կոչեցայ անարժանարար աստինան կոտակ օձուրեան. աղօթեցի հանգստյազ վասն իմ եւ վանանծուքս հոգիս, իսկ ապա փոռնեալ որ մի ի շար սատանայէ, եղէ ծանակ՝ առաջին Աստուծոյ եւ մարդկանց, զեռանոս արուստուօք խլեալ ի հող, աղաչեցէք առ բարեգութն զի կարն լինիցին աւուրք տանջանացս անդ ի քաւարանի, ամէն»։

Տեր Հուսիկ ապա կպատմե, որ Սիմոն անունով աբեղայի մը պիտի ըլլա այս քարն ու այս տապանագիր արձանագրությունը։ Էն սկիզբը վանքին հովիվն է եղեր, 17—18 տարեկան բոբիկ տղեկ մը, բայց շատ գեղեցիկ։

Վանքին մեծավոր եպիսկոպոսը՝ Զաքարիա, էս հովիվ լանին աղվոր տեսքեն հմայված, քովը փոքրավոր կառնե, կարդալ գրել կսորվեցնե. դեռ հազիվ քսան-քսանհինգ տարիքին մեջ, եպիսկոպոսը զինք վարդապետ կձեռնադրե։ Վարդապետ ու ամեն բան վանքին մեջ։

Վանքը իր բոլոր կայքով-կազմով ու նույնիսկ ինքը Զաքարիան ալ էս բարեպտուղ աբեղաձագին հրամանին ու ազդեցության ներքեվին։ Եպիսկոպոսը իր պաշտոնական կնիքը անգամ իր այս

սիրականին որձակին կհանձնե, ինքը նայելով այս մեկուն, իսկապես ժամկոչի մը դերբուկության մեջ հասկնալ։ Երեկի հովիվն է հիմի գլխավոր վանահայրը, վանքին հավերն անգամ հետզհետե միայն անոր հրամանովը կածեն ու կգարգընեն։

Վերջը, երեք չորս տարի կանցնի չանցնիր, եպիսկոպոսը մորթի հիվանդութենե մը բռնված, ոմանց վկայությունով իբր թե բուն իսկ Սիմոնեն թունավորված, կվախճանի անասում ցավերով, վանքը բոլորովին աս վերջինին ձեռքը կմնա ու վերջին պատմությունը ասոր։

Սիմոն վարդապետ տարիքին մինչև 45—50-ը վկայություններ կան հաստատող, թե սրբակյաց ճգնավոր մը ապրեր է, իր պատարագը նշանավոր ու հիահրաշ անով, որ խորանին առջև կայնած պահուն «կերևա ու չերևար» եղեր կամ անպատճառ ոտքն ալ գետնեն թիզ մը վեր առնված կերևա աչքերու։ Ա՛յսպես, ա՛յսպես։

Բայց, հետո, չէ՞ որ աշխարհքիս վրա, մե՛կ է թե որ աշխարհականին սատանան, կրոնավորինը կըսեն անպատճառ երե՛ք են թիվով, որ ետևն ու առջևը կթռչկոտեն զայն կարգեն շեղեցնելու խորամանկ կեցվածքներով։

Լմնցո՛ւր, տերտեր, կիսատ մի՛ ձգեր կըսեմ։— Չէ՛, տղաս, կըպատասխանե, չըսվելիքը թող չըսվելիք մնա, ոչ իմ բերնիս կվայլե, ոչ ալ քու ականջիդ անուշ պիտի գա, ինտոր ըսեմ, կամ դուն կրնաս ըսել, որ ըսեմ, թե ճգնավորապես կրոնավորված մը օր մը հանկարծ տեսնվի իր ոչխարատունը մտած... մի՛ լսեր, մի՛ լսեր, աստված մի արասցնե։ Ու դուն տես, որ չարին պատիժն ալ շատ չուշանար։ Նույն գիշերը իսկույն վանքին սպասավորները ջորիի մը ագիեն կապելով վանքեն դուրս կարձակեն, ու ահա արժանավոր մահը անոր։ Օրեր վերջը, կըսեն, վանքին մեկ հովիվը էնոր միայն գլուխը գտնելով ցամաք ձորի մը մեջ, վանքը կբերե ու հոս միայն գլուխ մը կըլլա թաղվածը։

Էս քարն ու տապանագիրն ալ վերջը ամեն աղաչանք-պաղատանքներով իր եղբայրը արտոնվեր է շինել, շիտկըռտել։ Ի՛նչ մարդիկ, ի՛նչ մեղքեր, աստված մի՛ արասցե։

Տեր Հուսիկ ասոր կուշտին, հոն, ուրիշ քար մը կպահե աչքին.

«Մեղր՝ որ բացախեցայ, աղ՝ որ անհամացայ, սպիտակ՝ որ սեւ եմուր եղայ, Տէ՛ր, դու ինձ այց արա, անպիտան կրօնաւորեալս Մինա...»։

Ասոր ստույգ անունը անհայտ կմնա, կըսե տերտերը, բայց իր ժամանակակիցները զինք Ցախ-Սարեկ կկանչեն եղեր։ Թե ինչու ատ անունը տրված ըլլա, այսպես կհասկցվի, որ տեր Հուսիկ ատ մեկն ալ չի կրնար լուսաբանել. միայն կըսե, որ տարիին մեծ մասը քուն կըլլա եղեր ու այնքան խոր քնացող մը չորս-հինգ օր իրարու վրա գոռ շեփորներ ալ թե հնչեցվին, չարթնար, կողմն ալ չի գոխար Ցախ-Սարեկը։

Այն կողմը ուրիշ գերեզմանաքարի մը վրա.

«Ո՛վ հայ քրիստոնեայք, Աստծու սիրուն, ձեր սիրած սիրականին սիրուն, տարին հեղ մի ալ զիմ գերեզմանս այցելեցէք, ես ձեր ականջին մէկ խօսք ասեմ, դուք զացէք տիւրիւմիշ եղէք»։

Ասոր օրովը էս վանքը ուխտի եկող կնիկները վերեն վար սևազգեստված պիտի ըլլան եղեր, կըսե իմ հնապատում տեր պապուկս։ Կարմիր բան չպիտի կրեն վրա գլխնին, կարմիր գոգնոց, կարմիր լաչակ կամ մուճակ, երբե՛ք, երբե՛ք։ Ջթուկ վարդապետ, աս եղած է անունը— ի տես որևէ մի կարմրագույն շորի, կամ լաթեղենի, մեկեն երեսին վրա իյնալով կատաղած ցուլի մը ձեները կհանե եղեր, վրան գլուխը կբլքտե, մի՛ արասցե, ճիշտ-ճիշտ դև մը կդառնար, ըսե ի՛նչու էսպես.

— Ժամանակին, 18—20 տարեկան տղա մը նշանված կըլլա սիրուն աղջկա մը հետ։ Երկու նշանածներ իրարու համար հոգի կուտան, այնքան որ մեկզմեկու կսիրեն։ Աղջիկն ալ իրավ որ սիրուն, իրավ գոհար ճիշտ, կամ կապոտ օձին բերնին անգին քարը ճիշտ, վրայի հագած կապածներն ալ վերեն վար վարդի ու կակաչի գույներ ամենքը։ Բայց կըլլա՞, ե՞րբ եղած է, որ տա՝ տեսակ արև ու աստղիկ աղվորություն մը հայունը ըլլա ու քրիստոնյան վայելե միայն։ Հարսնիքեն օր մը առաջ, ճիշտ մեկ օր առաջ, տղային բուտը, Պեքիր, ան, որ արդեն գիշեր թե ցորեկ էտ աղջկան կոխած գետինները կհոտվտար ու ձեռք չէր կրնար ձգել, ինչպես կըլլա, հարսնիքի պատրաստության եռուզեռեն օգտվելով, աղջկան տանիքը կդարանի, ու մեկեն գիշերվա ժամին աղջիկը պատահմամբ տանիքը ելած, Պեքիր իր թաքստոցեն վրան կխոյանա, քուրջ կթխմե բերանը ու կփախցնե արագ մը, ինչպես ուրուրեն փախցված խեղճ հավնագ մը, ալ մնացածին խորհելու եղիր։ Մենեջ մեկ շունչով արդեն Պեքիրին զոնախը փոխադրված կըլլա, ու ատ իսկ գիշերն արդեն Պեքիրին հետ կնիքանվի զինված ծառաներու ու անձնվեր շուրջիններու մահաբույր սպառնալիքեն բռնաբար համակերպած։ Ատ օրը, ատկե

օրեր վերջն ալ ոչ ոք կհամարձակի սրտոտ գնացք մը ընել գեպի մոտը է՛ն քանասարին անկե փախցվածը ուզելով։ Կանցնի տարի մը, բուն նշանածը, խելթված ապուշության մը մեջ օր մը, ինչպես կհանդիպի Պեքիրին խոնախին պատտակեն կանցնի ու կտեսնա, որ Մենեշ վերի պատուհանը նստեր հատ-հատ բան մը կշարե թելին, ձեռքովը նշան կընե, որ հայ տղան վայրկյան մը գադար ընե ու իր ըսելիքը լսե, ու ինչ սրտի խշխշուկ խոսքեր, որ վերեն կրակե կարկուտ կտարափվին գլուխը այս անբախտ խելակորույս անցորդին։

«Ա՜խ, հոգի՛ս, կըսե, էս գեղը, էս բրշակները հե՛չ հայ մը չկա, հե՛չ մեկը, որ ձեռքին ու ոտքերուն ծերը քիչ մը կեռ ըղունկ ու կոր ճանկեր ունենա, հե՛չ հայ մի, հե՛չ հայ մի, եթե ուրիշը չհոգար, դո՞ւն ալ չպիտի... Բայց ինչո՞ւ չհավատաս, թե ես քուկդ եմ տակավին, ես կույս կոկոն տակավին, դուն եղիր կարիճը ու պիտի տեսնաս, թե աս գիշերեն շուտ չի կա՝ քո մոտդ պիտի ըլլիմ, ես հայ եմ տակավին, թե աշխարհն ալ տան, աշխարհքին թագավորությունն ալ տան, ես հայ խաչի աղջիկը պիտի մնամ, միայն դուն զիս սը կրակեն ազատելու ճարը...»։

Տղան հոտ, ատ պահուն, անխոս՝ գլխիկոր, ինչպես արնաեր հանցավոր մը, ձայն-ձուն չի կրնար հանել, ոչ իսկ կրնա լաց մը ընել, լեզու բերան առնված՝ իր տունը կուգա՝ ոտքերուն տակ սուր հրաշեկ ցամեր կոխողի անհուն գալարքներով, բան չըսեր մարդու, որո՞ւ ինչ փույթ, ո՞վ կրնար արդեն շունչ ստնել թուրք ազային արդեն օրեցօր լայնցուցած սարսափներուն տակ, կամ ավելի ճիշտ՝ ո՞վ այն սրտոտ ասպետի կուրծքով զրահված հայը, որ հենց իր ճկույթ մատը ուրիշի մը համար արնելու խիզախ պոռթկումն ընե, գայլին ճանկեն անմեղուկ գառնուկ մը փրկելու անձնվիրությամբ։ Այդ գեղն բոլորն ալ անխիղճ, բոլորն ալ անօրեն անխիղճ այդ գեղին ժամուն սուրբերն ու զորությունները ալ անպիտան, անբանացածներ ու նույնիսկ հայ գեղին ատտվածն ալ անհոգիացած տաճիկ. տղան բան մը չըսեր մարդու, խահը կընե աշխարհքեն ու շատ չանցած սեր հոգիին, սև մը ալ երեսին քաշելով, գրոնավոր կդառնա իր կյանքը բոլոր փոքրիկ անարև խցիկի մը մոայլ մեկ անկյունը սգավորելով, բայց կըսեն, իր սիրական նշանածեն ոչինչ պակաս չըլլիր իր մեջը, մինչև հոր տարիքին, ինչպես բնական, որ ծերացած ծառին մեջ ալ կմնա անպատճառ շերտ մը ծուծ ու չի մեռնիր։

Հեգ Մենեշն էլ այն կոզմը իր երկար գառագնդին մեջը կմնա

փակված ամեն օր մաս-մաս մեռնելու դժոխային տանջանքներով, ու՝ է՛ն վերջին շունչն ալ հայ կապրի ու հայ կավանդե, կըսեն։

Տեր Հուսիկ արդեն ուրիշ մը կկարդա.

«Զբնթացս կատարեցի, պաշտօնն իմ աւարտեցի, այսուհետեւ կայ և մնայ ինձ պսակ յաւիտենական»։

Հրեշտակ ի մարմնի որ ըսեր են, ճիշտ այս մեկը պիտի ըլլա, Պաղտասար վարդապետ Մելիտինցի, անարատ վարուք ու բարուք, սուրբ մը այս, որ 8, 9 տարեկանին հոս ծառայության մտնելով, վանքին հետզհետե սյունն ու շինությունն է եղեր։ Իր առաջին ու գլխավոր ձեռակերտը մատուռը պիտի ըլլա կարծեմ, հետո կարդալ լուսազբյուրին ջուրը շատցուցած ու սա դեմի լեռնակողն ալ ընդարձակ անտառ մը մշակել տված է, որ չիկա հիմա։

Ասոր վանահորության օրով վանքն ունեցեր է 500 գլուխ կթան ոչխար, վեց զույգ մատակ գոմեշ, 16 ջորի, 10—12 կով, 150 հատ մեղվի փեթակ, երկու աղորիք, մշակված հողեր ու սա չափ ալ հավ ու աղավնիներ ու սենյակներեն մեկը դպրանոց բրեր է վեց-յոթ հատ թեմական տղաքներու խմբումով, որոնք վերջը վարդապետ ու քահանա ձեռնադրված կըլլան։ Ինքն ալ անխոջ աշխատասեր մը մեկ կտոր Այսմավուրք գրած է, մեծկակ հատոր մըն ալ իր ձեռքովը Տաթևացի գրչագրած։

Միայն մեկ թերի կողմը աս վարդապետին—շատ չէր սիրեր, որ վանքը ուխտավորներ այցելեն, երբ մեկը գինք տեսնելու փափաք հայտներ, հենց որ հեռվեն իրեն գնալու շիտկված՝ «ամա՛ն, ամա՛ն, էս սանեին, էս փորցավը զիս պիտի մեռցնե վերջապես» ճուկ-ճուկ կըլլար, փորն ու կուրծքը կշփտեր։ Ու ճիշտ այն խոսքը բերնին մեջ։

Բայց սուրբ կրոնավոր մը ուրիշ ամեն բանով. տերը լուսավորե զհոգին։

— Այն մյուս կողմը ուրիշ մը կկարդացվի.

«Սատանան կրօնաւորս աղաւնի ծնայ եւ ազատ մ'առնեմ քեզ սա»։

Տերտերը՝ ասոր ընթերցումեն վերջ, ատրեն դարձի՛ր, կըսե, շարժեր ասոր վրա կենալ. կյանքի բոլոր օրերուն մեջ վանքին քոռ տընտեսուհին հետ ապրեցավ ու անցավ։ Ատ արձանագրությունն ալ հետո ժամանակակից վարդապետին մեկը գրեր է պարապ ատենները։ Մինաս պիտի ըլլա անունը, զոր գրողը խնայեր է նշանակեր։

— Ուրիշ մը ահա։

«Ո՛վ մարդ, յիշեա զվախճա՛ն քոյ» Առուքին վարդապետ. 1887.։ «Բամպակ բերան»-ը չե՞ս հիշեր, կըսե տերտերը, դուն ասոր վրա ընդարձակ ալ գրած ես եղեր, միտքդ բեր։ Գինով մեկ վայրկյանին հացթուխ կնիկ մը թոնիրը ձգելով, քիչ մնաց, որ խեղճ կնկուկը քեբաբ պիտի ըլլար, դժվարավ հոգին ազատեց։ Դուն ասոր լավը գիտես։

— Ուրիշ մը այստեղ։

«Ա՛խ վախ, ճէ՛յ վախ, օճ, օ՛ճ, օ՛ճ»։

Կարապետ վարդապետ մը հոս առաջնորդ եկած Ակնեն, թիզուկես հասակ մը ուներ, դեմքով դրսերևույթով սուրբ մը կարծես, որ քարոզելու պահուն ամեն բան գլուխ նա ախվախերը կպոռթկացներ բերնեն ու կուլար ալ ժողովրդին դեմ, կըսեին, որ Խրիմյանն է օրինակեր այսպես. բայց ներքնապես ապացուցվածն այն էր, որ տղու սիրով կաղնծվեր։

Ուրիշ մը նոթագրեմ։

«Ի նանիր բամբասիցեն զիս թշնամիք իմ, Աստուած առնէ ճախ դատաստան»։

Ասոր անունն ալ Կարապետ, Ապտլ-Մսեի վանահայրը, որուն հոս պատահեցավ մահը ու թաղվեցավ։ Նշանավոր գինով մը այս, որ բոլոր ատենը թթենիներուն տակ թութ ժողվելու մերագլի՝ ձեռքովը օդի հանել խմել ու խմցնելով անցուցեր է։ Ան ալ Եղսո ջանի մը սիրովը տոչորված երազեց։ Իր օրովը շեր մըն ալ կըսեին—Եղսո ճան, Եղսո ճան, խիյար քաղիմ, էջիդ թաղիմ, Եղսո ջան և այլն։

Ան ան է ահա։

Տեր Հուսիկ վերջին մը կհեգե։

«Անեցէք եւ բազմացարուք, ես ուզեցի որ այս պատուէրն ալ կատարեմ»։

— Մտիկ ըրե, մտիկ ըրե, կըսե տեր Հուսիկ զվարթ շեշտով մը, այս մեկը քիչ մը կարծեմ դուն ինքդ ալ պիտի ճանչնայիր, ազգապիղծ վարդապետ մը այս, որ երկուք-երեքով ալ չի բավականանալով, ալ ինտոր պատմեի քեզի, հանդիպած իր շուրջինին, իր մոտավորներուն կուրծքը ոսկի ու արծաթ մաշալլահ մը կախեց և նշան պահեց իբր իր սիրական կատուն։

Կհասկնամ իսկույն տեր հոր միտքը, բայց կըսեմ յուրովի, ավելի լավ չպիտի՞ ըլլար, որ նա տեսակ տապանագրի մը տակ ավելցվեր և սա տողերը— «Ոչ է սա մեռեալ, այլ կեայ և կապրի յիւրսն և յիսկական նմանիսն յիւրմէ սերելոց։ Սոցայն գայթակղութիւն բաւ իցէ զի ուրոյն դժոխք շինեցի վասն այս պիղծ սատակեցելոյս։ Մեծագործութիւն սորա այն, որ Բոշան խաթուն արար և նմա միայն ընծայեաց բովանդակ ինչս և հարստութիւնն իւր»։

Երկար այլևս դադար չեմ կրնար ընել այս գետնին վրա, որուն խորքեն չեմ գիտեր ինչ տեսակ հոտ դեռ անախորժ, վեր շոգիանալով քիթս կկծվեցնե, հրաժեշտ կուտամ բարի գեղերեցին, անոր ձեռքը համբուրելով. դուրս կուգամ վանքեն բավական մը հեռացած ու ճամփուն մեջ վայրկյան մը ես ինծի կմտածեմ, վաղը արդյոք իմս ի՞նչ պիտի ըլլա, իմ գերեզմանաքարիս վրա ինչ հեգնություններ, եթե ձգեմ, որ ուրիշները ետմահու գրեն։ Եվ իմս իմ իսկ ձեռքովս այսպես պիտի ուզեի արձանագրել. «Հիմար, որ՝ գեղացի ծնա ու քաղքցի ապրեցա, հիմար, որ կյանքիս մեջ միայն երեք ժամ ճամփորդեցի ու սա քաղաքը գտա, հիմար ու երկու երեսով ալ, որ վանքը թողի ու վարժատուն մը փակեցի ես դիս, ապուշ որ՝ իբր վարժապետ խաղալիք ձգվեցա բուսակենցաղ շարքերու, որոնք թաղական, խնամակալ կամ ուրիշ չգիտեմ ինչ անուններով, բոլոր ատենը մազս ու մորուքս ճերմակցուցին, դժբախտ հեքիաթյուն մը, որ չտիրացած երազիս, երբ տարիներե ի վեր անանկներու թփչորող հովերեն ազատ անկախ դպրոցի մը տիրությունը եղավ ու ոչինչ անցավ ձեռքս, դեռ շատ կրնայի ապրիլ ու արդյունավորվիլ կարելի չափով, թե որ ճիգերուս կեսը, մեծ կեսը վատնված չըլլար հնարավորելու հրաշքը, մի որևէ գերմարդկային մը, որու շնորհիվ կարելի ըլլար, որ տարիին բոլոր օրերը ավանակ ապրողներ, տարիին հենց մեկ օրն ալ մարդ ապրին ու մարդու ցուկով երկննան խառնվելու ցեղին մեկ ումետը մնացած հայ դպրոցի գործերուն. վա՜յ դժբախտիս, ինքս ալ ահա էս տերտերովը ոսկորամաշվեցա ու ավանդեցի բեմուրատ»։

Բայց թե որ մոտիկ մտերիմ բարեկամներես մեկը խնամքը ունենար գտնալու ու գրելու իմ ուզածին պես բանաձև մը, ապահովաբար սա տեսակ կարճ խոսք մը պիտի ըլլար.— «Հանգչի ասա մի ոմն մեծ յիմար, որ բոլոր իր մաքուր տենչանքն ու երազները սառույցին վրայ գրեց միայն ու սպասեց։ Եթե այն Գանիրէաքնակ Մելիքնեանները ալ չունենար իրեն նեցուկ, վա՜յ իրեն, վայը պիտի գար գլխին»։

Շա՜տ շիտակ, շա՜տ շիտակ։

1912

ՊՏՈՒՅՏ ՄԸ ԿԵՐԵԶՄԱՆՈՅԻՆ ՄԵՋ

(Քարերուն վրայի հիշատակարանները)

1. «Իշատակէ այս Մելիտոսին որդի Կարապետն Խումաշ կոչեցեալ, որ մեռաւ փրկչական թուական՝ 1820-ին, ու միայն 81 տարի ապրեցաւ»։

Հե՜յ գիտի ողորմած հոգի, էն վերջը հոս պիտի ըլլեր, բանավ, դատավ, քրտնեցավ, գայլ եղեր, լեռներն էր ընկեր, երեք տղա ունիմ կըսեր, հեչ մեկն ըլ բանի չեկավ, մեծ տղին համար գանգատ կըներ քի, կով քեռին ելեր է, օրթաճային համար ալքերը փոխեր են կըսեր, պզտիկ Թորոսը կհավներ քիչ մը—էնոր համար ըլ կուլար քի՝ վարժատուն կերթա ու խեղճ վարժապետին քիթնի վեր իսոթ կփչե։ Հե՜յ գիտի աշխա՜րհք, իրավ որ տղոց հեչ մեկն ալ բանի չեկավ։

2. «Իշատակ է այս Շողգմենց Տէբանին հարազատ որդին՝ Զաքարը, որ ի տէր հանգեաւ 1825-ին, յաւուրս սորա եղեւ մեծ երկրաշարժ եւ աւերեցան բազում տուներ, թէ՝ ի քաղաքի եւ թէ ի գեղօրէս»։

Պապուս մընե լսեր իմ օր կըսեր քի էս մարդը եկեղեցի շատ կսիրեր, ճգնավոր մարդ մը եղեր է. վանքերը կոլրտի, վերջի դեղին ժամը ղինքը երեցփոխան շիներ են. 10—15 տարի երեցփոխան մընալեն վերջը, ժամուն մեջ խաչ, սկիհ չէ մնացեր, տուն տարեր, կնկան ու հարսին զուլգ-զուլգ ապռճան ու օղեր շինել տվեր է։ Հիմա մեկն ալ չի մնաց ասոնց ճընսեն, տնվընուն տեղը պիլե անհայտ կմնա։

3. «Աստ հանգչի Դաւիթին տղան Կոկո Խոռոտը որ իր մէկ շարութեանը համար 9 տարի անկողին պառկեցաւ»։

Տե՜ ալ, պապա Խոռոզ, ելիր տե հիմա ըլ ըրե չարությունդ, գեղ քաղաք ձեռքեն զար էին ընկեր, մատնություն, մուզեվիրություն, ուրիշը կցաներ, ինքը կքաղեր, պապն օր գերեզմանեն զար, պելեշ շան չէր ըներ, հիմա ավուռ մը հողով կկշտանա։

4. Դամբանարան եւ շիրիմ ծառայ ծառայիցն անպիտան, Խուկասի Դուստր, Շողեր խաթունին, որ շինեց զտուն Աստ. իր հալալ արդեամբ։ Ով որ ընթեռնուցու զտապանագիրս, երեք անգամ հայր մերս յիշեսցէ»։

Բարեպաշտ կնիկ մըն է եղեր սըվի, անգամ մը գեղին եկեղեցին փլելու ատենը, ինքը ելավ շինեց, ծախքին կեսը իրմեն հոգաց, պակսածն ալ հավաքելու համար դուռ արդարի, դուռ մեղավորի հանգանակություն ըրավ. շատ դրամ, շատ հռչակ ժողվեց, մեկ կնիկ մը ըլլալով գեղին եկեղեցին շինեց, Խարա գեոտակին վրա մեծ ծախքով, կարմունջ մը շինեց, աղբյուր մը շինեց, որ հիմա Շողերին աղբյուրը կըսվի։

5. «Այս է տապան հանգստեան Մանուկի Դանիէլեան որ իւրում կենդանության նուէր ետ Ս. Գէորգայ վանքին մէկ չարեկնոց արտ մի, քէվ կիր խանութ մի քաղքին վաբի շուկան, 8 սահաթի ջուր գեղի վերի աղբիրէն, որոնց գումարը ինչ ալ լինի, ասացէք Աստ. օղորմի իրեն եւ բոլոր ննջեցեալներուն հոգուն»։

6. Սրվըլ Գափոյենց Մինասին գերեզմանն է. գիր բան չի կա վրան. շատ աղեկ մարդ մըն էր առաջ, բարեպաշտ մարդ մի, առտու իրկուն իր գործին տերը, հավուն պիլե քիշե չէր ըսեր, միմակ թե վերջը չի կրցավ բերել. գեղին մեջ վարժապետ, վարժատուն օղտուրմիշ չէր ըներ, վերջն ալ կրոնքը փոխեց, կարծեմ առանց տերտերու թաղեցին։

7. «Ո՛վ անցաւոր, զիս նայիր ու հաւատա, որ քու վերջդ ալ ասպիտի ըլլի, ես ալ երբեմն մօր կաթ կերայ, օրան օրուեցայ, մեծցայ, դրամ շահեցի, տղայ կարգեցի, տուն-տեղ եղայ, իմ ոչխարներուս սիւրուն դաշտը կը լեցնէին, 500 հատ մեղրի փեթակ ունէի, ախոռ մի եղ, ախոռ մի ձի. Մելիք Համբո կ'ըսէին ինծի, կերայ, խմեցի, հարաւ հիւսիս հրամաններ արձակեցի, հիմա միայն աս քարին տակը ոսկորս մնաց ինծի»։

8. «Ունայնութի՜ւն ունայնութեանց, ամենայն ինչ ունայնութիւն. ծնաւ Թումաս Սերոբեան յամի տեառն 1808-ին, մեռաւ 69-ին»։

Աս մարդուն համար կըսեին թե՝ վեց կնիկ առած էր, վերջինը ղինքը թունավորեց ու մեռավ։ Կնիկն ալ հետո մաքազին մեջ ինքզինքը կախեց։

9. «Մի՛, մի՛, մի՛ մերձենաք առ իս. ապրեցայ ցաւօք, կորուսեցայ մեղօք. իմ գերեզմանս հող ապականութիւն է. ես էի որ բամբասեցի, ես էի զրպարտեցի, ուրիշին հալալ հախը խորեցի, դրացներուս դէմ պարապ թշնամութիւններ շինեցի, եկեղեցիին իրաւունքը զոռացայ, զբաստանը ըռգակը պոռգաս անցուցի, ազգին մանկտիքներուն արիւնը մտայ. հող ապականութիւն է գերեզմանս։ Աղաչեցէք որ Աստ. չի զարնէ մեզքս երեսիս, ազոխը ես կերայ ու թոռներուս ակռաները ազատ մնան անոր ցաւէն»։

10. «Այս է շիրիմ Մահտեսի Պողոս վարժապետին, որ ցաւօք լի կեանք մը ապրեցաւ»։

Էս զավալլի վարժապետը, պապուս վարժապետն է եղեր. կըպատմեր թէ՝ ամբողջ Նարեկը գոց գիտե եղեր, Սաղմոսին մեջ առանց այբի քանի տուն որ կա, կրնա ցույց տալ։ Թուղթ նայիլ գիտե եղեր։ Անանկ բարձր ձեն մը ունեցեր է որ պոռալու ատենը ձենը Դատեմեն մինչև Մորենիկ կերթա։ Վերջը գեղացիք զինքը պաղպանջի պիտի ընեն եղեր, հայրս չէ թողեր։

11. «Սէքսէնը հինգ տարի ապրեցայ, մրայն մէկ օր խնդացի. ատ օրն ալ բարիք ըրած օրս էր։ Դանիէլ Պաղտիկեան որ թողու զաշխարհ եւ երթայ առ հայր»։

12. «Ես Գրիգոր Մահերեան, որ հանգչիմ ընդ շիրմաւս, իմ հալալ վաստակէս կտակ ըրի համարիւն ազգակիցներուս եւ պատուիրեցի տղոցս տարուէ տարի 5 քէսէ ստակ դպրատան տան 3 քէսէ ժամուն. 1 քէսէ ծեր քահանաներուն, 2 քէսէ Ս. Մովսէսի վանքին, երկու քէսէ աղբիրներուն նորոգութեան, 4 քէսէ որբ կնիկներու։ Ով որ դպնայ իմ այս կտակիս ու խորէ դրամը տղաքս թէ մօտաւոր ազինքս, մասն Յուդայի առցեն»։

13. «Ցաւօք ծնայ մեղօք մեռայ. սուտ անուն Օհաննէսս ափ մը հող դարձայ, վայ ինձ, վայ ինձ եկայ ու անցայ, բարիք մը չըրի, ոչ աղգիս, ոչ աղգականիս ոչ իսկ ընտանեացս։ Զար օրինակմ, անէծքի նշանակէտ մի գերեզմանս»։

14. «Իշատակ է այս Թուխ Մանուկի որդի Միրչան իմ հալալ վաստակիս քառասուն փարային տասը ինձի կը պահէի, տասը աղքատին, տասը դպրոցին, տասն ալ տանիքին վրայի ճեճղուկներուն»։

15. «Աստ հանգչի Սիմօն Ծաղիկեան, որդի Առաքելի Ծաղիկեանի. ով անցաւոր երբ օրը արեւ տեսնէք, զիս յիշեցէք, երբ տարին խաղաղ բարի անցնի զիս ալ իշատկեցէք. աշխարհ եկայ, բայց չառի մուրազս. երբ բոլորիդ ալ երեսը խնդալու ըլլայ, պատճառը ինչ որ է, եկէք իմ գերեզմանի վրայ ծակ մը բացէք, իմ անկաճիս ալ պոռացէք, որ քարին տակը ես ալ ձեր ուրախութեանը մասնակցիմ»։

16. «Ես Սարգիս Համբիկեան, բզէզ ծնայ, կարիճ մեծցայ, օձ մեռանեմ։ Տէր, մի յիշեր զմեղս իմ զօրն ահագին»։

17. «Հանգչի ի սմին Տ. Սահակ քհյ. Հապիպեան, եկաց զամս զիննիսուն. եւ վախճան կենաց իւրեկն, յաւուրս սորա օսմանցիք առին զԿիպրոս ի ձեռաց վենետիկցոց, ի թագաւորութեան սուլթան Սէլիմի երկրորդի»։

Ես քահանային համար կըսեն, թե ինքը օրը նշխարքով մը իտարե կրնե եղեր, վերջն ալ իր տղաքը օրը գոմեշ մը ուտեն նը, չեն կշտանար. տեյկիտի աշխարհք, տեյկիտի մարդիկ։

18. «Ամեն անգամ որ մեղք պիտի գործէք դիս յիշեցէք, ով մարդիկ. երկուշաբթի օրը կնիկս մեռաւ, երեքշաբթի տունս այրեցաւ, չորեքշաբթի կէնճ-կէնճ տղաքս հողը դրի. հինգշաբթին ցվքին քարը վրաս եկաւ, ես մեռայ։ Բոլորը իմ մեղքէս, ինծի պես մեղաւորին մեղքէն, որովհետւ 8—10 օր առաջ իմ քովս ամանաթ դրուած աղքատի ու դպրոցի փարաները իմինիս հետ խառնեցի ու հարամշահու ելայ։ Մեղք մի գործէք»։

19. «Անանուն ծառայ Պետրոս, առանց թշնամիին հախէն գալու մեռնիլը 7-ն անգամ մեռնիլ է։ Եթէ թշնամիին ձեռք չէք կրնար հասցնել, անոր տեղը խոռոչի մը շլլին քաշեցէք, վերջը մեռէք»։

20. «Այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. հող էի ի հող դառնամ»։

1912

ԿՈՒԼԻԿ ՈՒ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Գյուղացի կնկուկ մը, դեռ ոչ այնքան առաջացած տարիքով, վերջին մըն ալ, դուրս եկած իր բնակարանեն, գեղի ծերուկ վարժապետին կդիմե խնդրելու համար, որ այս վերջինը անգամ մըն ալ բարությունը ընե իր խարիպ տղուն հասցեին նամակ մը գրելով։ Վարժապետը ամեն բան ու նաև քարտուղարը բոլոր գեղին, իր այս կարգի ծառայություններուն փոխարեն կընդունի երբեմն իրեն դիմողներեն շիշ մը օղի, թարմ հավկիթ, ծխախոտ կամ ինչ-որ իր պահանջին տեսակը կըլլա։

Դպրոցին մեջ, առջևը փոքրիկ գզրոց մը, ասոր վրա հինձև կաղամար մը (տիվիթ) ու թղթեղեններ։ Իրիկնապահ, դպրոցը արձակված՝ վարժապետեն ու աս կնիկեն զատ ա՛լ ուրիշ չերևևար։

Բարևներու ու կարգ մը նախաբան խոսվըռտուքներու փոխանակութենեն հետո։

Կուլ.— Ալ թուղթեն բարևեն ալ վազ անցանք տե, պազի եկողներուն հետ էն տեսակ փուշ ու տատաշ ապսպրանքներ կընե, որ

Թա՛ հոգու տակը կարիճի խեթվածք կիմնամ։ Ես կարիճ կըսեմ, դուն տահա էվելը հասկցիր։ Բայց ես նորեն կըսեմ օր աստված շնորհը տա իրեն, ինչ ընել, էլ էլեմը ինտոր կխորհեր որ, անիծել վո՞վ, ինչ բան, մարդ կուզե՞ որ ինք իր ճիկերը փրցնե, տեղեն հանե ու ակռային տակ ձգե, չէ, ես նորեն կըսիմ, թե աստված շնորհք տա իրեն, թող ողջ մնա, թող անուս ալ չիտա կուզե։ Ես ամեն ժամ մըտնալուս էն առջի ազոթքս իրեն համար կընեմ, ես մինչև հիմա իմ տղիս համար մէր ապրերիմ իմ մորմ չիմ ապրեր։ Դուն գրե հիմա...

Վարժ.— (Աչքը ակնոց, մտիկ ընողի դիրք ու ծունկին վրա ալ գրելիքը բռնած)։ Գրիմ, ա խուզում, գրիմ ամմա... քիչ մը դուն ալ իմ ըսածը լսե, որ միշտ կրկներ իմ, միշտ ես նույն մտքին վրա կմնամ թե՝ քարին վրա էջած արզևները շատ-շատ հոն միայն մամուռ կբուսցնեն, ես շատոնց արդեն հասկցեր իմ, որ քու տղուդ սիրտը քարեն ալ ժիր է, ի՛նչ պարապ հոգնությունս... թեև ես կգրիմ՝ ըսի, չիմ մերժեր, ինչպես մինչև օրս չիմ մերժեր, բայց չէ՞ որ հետևանքն ալ խորհելու է։ Հրամմե հիմա, իշտե գիր, իշտե գրիչ...

Կուլ.— (Գոգնոցի տակեն շիշ մը օդի հանելով վարժապետին մեկ կողմը կտեղավորե)։ Էս անգամ էն տեսակ խելեմ մի խաղցուր, որ թա՛ ճիկերը բանի։

Վարժ.— Թա պեռպրեկը տի բանեցնեմ (գլուխը թուղթին պատրաստ գրելու բռնած)։

Կուլ— Հրամանքդ էս ըլ իրիճա կենիմ, որ թպխի իմ ըսածներս գրես։

Վարժ.— Էտոր ի՞նչ շյուպհե (գրիչը թուղթին վրա՝ շարժման մեջ) թպխի է՛ս անգամ հոգուդ ֆոթոկրաֆը տի քաշիմ. դուն սանկ ջուտ մը ըսելիքդ պատրաստ բերնիդ քնճիկը բռնե։

Կուլ.— Գրե, վարժապետ, առաջ-առաջ սըվի գրե թե...

Վարժ.— Ըսե, քորս, ըսե, ըսե, մի պահեր, մի պահվիր, հեմ ասանկ քիչ մըն ալ տինճ բռնե ինքզինքդ։

Կուլ.— (Թաշկինակ մը աչքին բան մը կարբե). Է՛ն առաջ սըվի գրե թե Կարապետ, յավրո՛ւս, դուն դրացի մորդ ու բոլոր աշխարհքին ցավերը զատ-զատ կշիռքի առին տե՝ մորդ ցավերը լեռ մի էվել գտան։ Ըսե՛, ի՞նտոր, ինչպես, չիմ կրնար ըսիլ, ուզիմ ըսել, լեզուս չի կրնար...

Դադար, դեմքին արագ-արագ գրիչը խոսեցնելու մեջ։

Վարժ.— Դուն շարունակելու եղիր։

Կուլ.— Ո՞ւր մնաց խոսքդ, ըսե, տղաս, ինտոր կմոռնաս, որ երթալու տարիդ էն առջի օրերը, ես էս ավուր պես կհիշեմ թե Թամարենց էգիին պիլպիլը էոթմիշ կըլլեիր, դեռ պիտի ըսեմ, թե էնկե ըլ էվել աղկեկ բաներ կախեցիր անկճիս։ Գիր գրի վրա, էն ի՞նչ խոսքեր, Կարապետ, էն ինչ մեղր ու շեքեր խոսքեր—«Մեր, անուշիկ մեր, կգրեիր, աշխարհքին վրա մեկ օրը ալ ունենամ նը ումետ Աստված, ումետ եղիր, էն մեկ օրը անպատճառ քու գլխուդ լուսնա պիտի քու ոտքերուդ ալ իրիկուն պիտի ըլլի»։

Էն ատենը էսպես կգրեր իմ տղաս։

Վարժ.— Գրեցի, շուտով ուրիշ մը դուն... (Առանց գավաթի նա կողմի շիշը վեր առած բերանին մեյ մը)։ Աս քուկդ շատ յաման է, Կուլիկ Թամ քաղքի կըսեն սըվոր, պրավո... (Ետևեն մի՛կար մըն ալ արծարծելով)։

Կուլ.— Խմողաց անուշ ըլլի, անուշ հրամմեցիր, մեր լուսահոգուն խմածեն է, մախսուս հրամանքդ համար կպահիմ քիչ մը։

Վարժ.— Աֆերիմ, էվալլա, դուն խոսքիդ դարձիր։

Կուլ.— Ինք դեռ հոս եղած ատենը մեղի կհավատցներ, թե հոն հասնիմ թե չէ, էն առջի գործս կենիշկեկ խաշլըխ մը հորս, որ մեկ կողմեն պարտկնտերերուն գերութենեն ազատի կըսեր, մեկալ կողմեն ըլ մեկ քանի արտ ու էգի ձեռք բերվի, որ խեղճ հայրը իր վերջի օրերուն, էլին դուռը մաշած թի ու բայ չըլլի։ Դուն ըլ գիտես թե, վարժապետ, էլին դուռը շարշարվողը անճախ օր էլին ճրագն է շենցուցեր, մեր ողորմած հոգին ըլ զաթի ամեն օր էս տերտովը կաղնծվեր, դուն ախր աղեկ կհասկնաս մտքիսը...

Վարժ.— Կհասկնամ, Կուլիկ, իրավ են էդ խոսքերդ տե, բայց այդ բոլորը ուրիշ ատեններ գրված պիտի ըլլան կարծեմ, դուն նոր մը ըսե։ Գրեցի, խոսելու եղիր։

Կուլ.— Նորն ըլ գիտես զաթի, հոգիս, դուն ըլ չե՞ս գիտեր, որ հոքը մեռնիլը դեռ մինչև օրս չենք գրեր իրեն, հրամանքդ էլմով մի՝ էս անգամ սը սև խապարն ըլ իմացուր իրեն, որ սև մտմտուքը տեսակ մը վերնա մեջտեղեն։ Թող տղաս ինքն ըլ գիտնա, թե մենք հոս ամեն օր միշտ, ամեն օր սև հավուն կանչն ունինք անկրճնուս մեջ, միայն՝ ինտոր ըսի, էն չեշիտ շուրութով մի գրե որ՝ հեմ մեկ կողմեն լալու ըլլի, հեմ ըլ անպատճառ խորհիլը բռնե թե՝ ալ պունտան պեռյլե տուն մի տեղով իր ումետին մնացանք, գիս ըլ չի խորհիր նը թող բարե իր կնկան ու շոճուխին խորհի ու շահելու ըլլի։

Իմ տալս փրթավ ահա. ես գետինը ընկա, թող զիս ա՛լ մեռած հասկնա։

Գրե՛, վարժապետ, նոր կուզեիր նը էս նորն ալ գրե։

Վարժ.—(Օղիին շիշը ճեղ մըն ալ բերանին). Քանի՞ ամիս կընե, որ նամակ-մամակ չի գրեր։

Կուլ.— Էս Վարդավառն որ գա, լման տարի մը կընե. յոթ-ութ տարի կա, որ միշտ զաթի էս կետիշովը կերթա, էն ըլ կլսիմ, թե քրորդուս զորովը կգրե եղեր։ Ա՜խ, պատվելի՛, Կուլիկ ի՞նչ տերտ որ չունի...

Վարժ.— Գրիմ, խուզում, գրիմ, իրավ, որ քու տերտդ աշխարհքը չունի։

Կուլ.— Ինչե՞ր, ինչե՞ր ուրիշ։ Օր մը հորը զատ, ինծի զատ կգրեր, թե դուք միայն աղոթելու եղեք, որ նը շար գազանը սատկի, մեկ օր առաջ սատկի, որ հեշտ երկիր դառնանք։ Երկիրն ըլ սանկ քիչ շատ մարդու հարմար, մարդու բնակվելիք խաղաղ բոն բրշակներ գտնանք։ Ո՞ւր է հապա իմ տղաս՝ ինք ըլ չի գիտեր, որ էն գազանը հիմա դժոխքին օռթա տիպը, ինք զետ դժոխք մի կապրի։ Գազանը ալ չիկա մեջտեղը, բայց նորեն առջի օրվան լացով է, որ մարդերնին ծունկերնուն կփետտեն։ Հիմա ավելի շատ կերթան, փեթակեն պարս տվող մեղուներուն պես կերթան հիմա ալ։

Վարժ.— Անցածները ո՞վ էր, կըսեր, թե Ծովենց Գոհարը իր մեկ հատիկ տղան, դեռ 16-ն ու 17-ն ալ չէր լմնցուցեր, դուռն դուրս հանելե վերջ խենթ դարձեր վրեն գլուխը կբդքտե. Տերն ինք այցելե։

Կուլ.— Հապա էն հարսներունը չես ըսեր, վարժապետ, ի՞նչ վիճակ էնոնք ըլ, ինչ անասում ցավերու մեջ։

Կո որ յոթը տարի, կա, որ տասը տարի, տասնհինգ տարի կղպված դուռներուն ետին կծկտած՝ կհալին, կհատնին ինտոր, որ քամգոլ հովերուն տակ տեներին ձոնը կհալի։ Ու զարմանքն հոն, որ տուն չիկա առանց էս վիճակին, կամ ալ չի մնաց մեկը, որ իր փեշն ու զոգնոցը սը կրակներեն բռնված չի տեսնա։ Ես օր գիտեմ բոլոր գեղն է էս բոցերուն մեջ։

Ես մեկը կճանչնամ, որ ամեն ախ քաշելուն, թոնրի պես հաց կեփի բերնին մեջ. թոնիր, հացի փուռ՝ ամեն կուրծք, ամեն բերան։

Վարժ.— Ախր որ բերան հիշեցիր, մեյ մըն ալ թող իմ բերանս կրակեմ, Կուլիկ (շիշը ճեղ մըն ալ բերանին): Ես ալ ունիմ էտ բոյեն, իմ ներսս ալ կրակ, ինտոր ըսեի որ... (դեպի Հովինը Հծնող նայվածքներ կարծես):

Կուլ.— Էտպես մի ըսեր, էտպես մի ըսեր, էն տինճ մարդը կա նը, դուն ես էս գեղին մեջ, հեմ դուն պետք է ամեն օր երկու ծունկ էվել աղոթես, որ զավակ չունիս, հոգու կտոր ու հոգու ցավ չունիս։

Վարժ.— Ինչո՞ւ կմոռնաս ըսել, թե կնիկ ալ չունիս (սիկար մը պրլլելու սկսած):

Կուլ.— Ալ էդ տարիքիդ մեջ... մեղա՜... ալ ունքերդ պիլե խաչի խճեճի են փոխվեր։

Վարժ.— Քու ողորմած հոգուդ վրա քանի՞ տարի էվել կարծես։

Կուլ.—Մոռցիր, մեղա՝ ըսե, ըսի։

Վարժ.— Ամմա թե խալթ կընես, հա՛... Տարիքը առած թթենին, ընկոզի ծառը ա՛լ պտուղ չե՞ն տար՝ ըսել է։ Գեղին աղբիրը քանի՞ տարվան ծեր է, որ դեռ նորեն առջի օրվան պես ջուր կուտա, գուզիս, բայց դուն, գիտեմ, չես հասկնար էսոնք, հեմ էս ըսելես ալ փյուշման եղա, դուն, հայտե քու խոսքդ գուտ նորեն։

Ըսե՛, երկար եղավ արդեն, ուրիշ մըն ալ, որ անով փակենք։

Կուլ.— Դուն էս անգամ գրե թե՝ ալ հերիք առնես կենաս, կոշիկ թոթվե ու մեկ սեթ առենջ երկիր դարձիր, հայրդ կարոտեն երբ կմեռներ, էն ետքի պահուն պատկերիդ վրա հայեցավ ու ավանդեց, ավանդելե առաջ ալ լացավ ու աղաչեց, որ պատկերդ հետը՝ աչքերուն վրա, էնպես իջեցնենք հողը։ Ճիշտ էսպես գրե։

Վարժ.— Գրեցի, ուրիշ մը պատրաստ...

Կուլ.— Վերջին խոսքն ալ սըվի եղավ թե՝ էմեկս էն ատեն հելալ կընեմ տղիս, թե որ երկիր դառնա ու օճախես մուխ հանե, թե որ իր մերը հոգա ու իրեններով պարտակ պատվավոր մարդ ապրի, թե որ հայ ապրի ու հայ կրոնքով ապրի։ Ողորմած հոգուն էն ետքի խոսքերը էսոնք դուն մե՛կ, մե՛կ էսոնք ալ գրե։

Վարժ.— Պելի՛հ, պելի՛հ, ատոնք ալ եղավ։

Կուլ.— Հա՛, խելեմ մըլ սըվոր համար զարկ, թե պարտկնտերերուն մեկը դոնեն ելա նը, մեկն ըլ երդիկեն կշնա, ու ամեն ատեն քարե կարկուտ կեշնա գլուխնուս, ալ չի դիմացվիր։

Կա ուրը ամիս, որ տնվիս միս չէ մտեր, բանճարեն զատ ալ ուրիշ ծամ ծամելիք չի մտավ բերվնիս, թոռս, շատ անգամ, երբ ուրիշ պիսեկներուն ձեռքը պանիրի շերտ մը կտեսնա ու կուգա դեմս էն տղին կերածը կպատմե, հոգիս ոլորքը կքակվի։ Գիտեմ ինչ կըլլի պզտիկիս հասկցուցածը, ու ես հուսահատ չի հասկնալ կձևացնեմ։

Վարժ.— Գրեցի, հեմ քու ըսածեդ ալ շատ աղվոր տհա։

Կուլ.— Երեք տարի կա, որ հարսը սայքի բոբիկ կոլրտի, մեկ հատ կոշիկ ունինք, որ հարս ու կեսուր փոխնիփոխ ոտքերնիս կանցնենք, կոշիկ, որ ալ մատներուս ծերերը կբռնե չի բռներ։ Եկո տես, որ առաջի օրը ինտոր եղավ, երբ տեսանք որ քընած իշու ըղունկը շատ ծռեր չորցեր է, քիչ մը ձեթ քսեցանք տակը վրան, մեկ ըլ ինչ տեսնա աչվիս—Նազարին շունը բերնին մեջ առեր ճիկերի պես կկրծեր, հիմա երկուքս ալ տեվեի ոտքով կոլրտինք։

Խեղճ, ամեն բանով ալ խեղճ, իշտե աշուն, ահա էղես կկղըպվի երբ կտեսնեմ թե մրջունն օր մրջուն է, շեն բոն մի կշենցնե, գրե, վարժապետ, դուն շիփ-շիտակ իմ ըսածներս գրե։

Վարժ.— (Քիթը միշտ կախ բուղթին վրա, արագ-արագ գրելու մեջ)։ Լմնցավ, ուրիշ մը շարունակե։

Կուլ.— Ղարտախին ետևի պատը վերեն վար ճեղքեր՝ առաջքն, որ չառնվի անպատճառ մենծ փորձանք մը գլխնուս, կրակ տան առիքին մեջտեղի գերանն ըլ պիսպիթյուն վար կախվեր է, հիմա վրայեն կատու պիլե չի կրնար անցնիլ։

Վարժ.— Գրեցի։

Կուլ.— Իրեք օր էռենջ աղային մեծ տղան՝ Ալին, գիշերանց տնվիս մտավ, հարսին սնտուկին մեջ քուրջ պիլե չի թողուց, սրբեց տարավ, հարսին օլսուն խաթ մը լաթցու ճամբե, իմ ըլ իշտե կերևա հալս, ալ աչքերս առանց կեռզլիկի չեն տեսնար։

Վարժ.— Գրեցի, թող կեռզլիկ մըն ալ ինծի խրկե։

Կուլ.— Էճելե-էճելե մնչքիս ճիպար մը խրկե, չոճուխին ըլ ղույդ մը փոթին ժմնցնե, ալ մենք մերն ըլ հոս կույտուրմիշենք։ Հա՜, սըվի հեչ չի մոռնաս, օր Հաճի Պեկը սիկառի քեհրիպալ թախըմ մի կուզե, չի խրկե նը, ինք գիտե, կըսե։ Տերտերն ըլ իրենը կուզե, չոչուխին մկրտության փարան հեչ չի մոռնար, չէ մոռցեր, կուզե ու կուզե։ Մնացածն ալ զաթի հրամանքդ գիտեիր, վարժապետ, էս անգամ թող սը մեկն ըլ հասկցնես, որ ինքն ալ ճար ճամփա մը գիտնա, հարսը սկսեր է գլուխը պատեպատ զարնել, ալ չիմ համբերեր, կըսե տասը տարին կմոտենա, տասը տարի, ու ես տասը օր իրարու վրա չեմ խնտացեր, կըսե, էրիկ ունիմ նը էն չեշիտ խորիմ, չունիմ, թե որ, էնոր կեռբեյի ապրիմ։

Ցա չէ նը ջրհոր մը երթամ նետվիմ, գրե, հոգիս, ուրուրը զաթի հավ ու հավձագ կփնտռե, էն օր գել է, էն ըլ գիշեր թե ցոքեկ իր ավը կփնտռե, էս կետը հատուկ դուն քու ուզածիդ պես գրե, մենծու-

նաց խոսք է, ըսեր են թե դեմ չի կեցուիր ո՛չ էն քարին, որ բեռն ի վար կգլտորվի, ո՛չ էն կնկան, որ տուներն դուրս կփախի։

(Վարժապետը թող այս մեկն ալ իր գործին վերջամաս ընկալ ճիգին մեջ գտնվի)։

Օրեր վերջ, արտասահմանյան այս պարոնին պատասխանը ահա.

«Տիկին, Ձեզի հետ եղող նա մյուս կնոջ հետ, որ հարս կոչվանեմ, աշխատեցեմ դուք ձեզի համար օգնել ու օգնվիլ։ Փոխնոգնությանդ դատը այս բաստավորված երկրին մեջ, այսպես կսկսի, այսպես կվերջանա.

"Help Yourself."* (???)

1913

ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՅ ԳԻՐԻՆ ՁՈՒՅԳ ՄԵԾ ՏՈՆԵՐՈՒՆ

(Ամառին նոր արմաղանը)

— Մեր փոքրիկ ակնավճիտ ծովակին արժելակողմը, Մաստառի ալաքիկ կատարին ու կողքերուն վրա մեծ, շատ մեծ բազմություն մը մայրգկային ամեն հասակե ու դասակարգե, ու ոտքի վրա ամենքը։

972

Ոտքի վրա, սեղմ, իրարու հետ մեկացած զանգված մը այնպես, ինչպես ծառի մը կամ քարաժայռի մը ծայրը դատող մեղվախմբին խիտ միաձույլ կացքը։

Բազմության մեջ նշմարելի են դուրսեցի հայեր ալ արտասահմանի իրենց տարազներով և շատ ուշագրավ։

Ի՞նչ ըլլար այսպես—Նավասարդի տո՞ն մը արդյոք, չեմ գիտեր։ Հայ գիրին հարյուրամյակի, հազարամյակի հանդե՞սը կարծես—չգիտցվիր։ Դեղփյան կամ Սինայական պատգամներու նոր հրաշակո՞ւմ գուցե—ո՛վ գիտե։

Հայեր, ամենքն ալ Հայեր և հիմարներ թերևս, որ ամեն կողմերե հոն հավաքված եկած են, կամ ծովը նեռվերու հուսահատ իրենց

* Հույսդ քո վրա դիր։

երազներեն, կամ նոր համերաշխ գործակցության մը ամրապինդ ուխտովը ու երդումովը լերան ու արևին վրա, միտքերնին դրած ըլլան, որ աշխարհ դղրդեցնող շրջում մը կատարեն նոր կյանքին վերջնական ձևը ստեղծելով։

Այսպե՞ս ուրեմն. օ՜հ, ես նորեն չեմ գիտեր բան մը, գուցե ինքս ալ հիմար զառանցող մը, մտիկ ընենք, ձայն մը այն կողմեն որ... Ամառն-Արևն է խոսողը.—

«Լսեցե՛ք, լսեցե՛ք.

Անգամ մը տարիներ առաջ, անգամ մըն ալ այսպես մոռցա, մթնցուցի ետևս անապատ ու աշխարհ, այս մաքուր բարձրություններուն վրա ձեզի հետ եղա պահ մը, ձեզի իմ ծրագրած հարցումներս ըրի, կոչ ընելով, որ ուզողը դուրս գա համարձակ ու ինծի որոշ ու վավերական գիծերով իր գործած որևէ մեկ բարության մասին իր ինքնաարտահայտությունն ընե։

Ան առաջին այցելությունովս հուսախաբված մը չեղա. էն վերջին առիթով գյուղացի խեղճ կին մըն էր հայտնվողը, հավնեցա անոր միայն, ու անմիջապես խնամքն ունեցա այդ մեկ հատիկ բարի գեղջկուհիին տալ ինչ ունեի ձեռքս, ու անձկոտ շտապանքով ձեզմե բաժանումս ըրի, երկար չկրնալով սպասել. ուզեի ալ, չպիտի կրնայի։ Չպիտի կրնայի, որովհետև դուք ան օրերը ձեր բերաններուն հետ ձեր գրպաններն ալ կղպած՝ դուրս չէիք կրնար ելլալ, կամ թե որ ելլայիք ալ, հազիվ ձեր ոտնամատներուն ծայրերը կրնայ(ք) նշմարել կամ տեսնալ կապարե այն ապարանջանը միայն, որ օրվան անեծք կառավարությունը հայրենիք դարձողներու դաստակներուն կապկապած ու կնքած ալ, զանոնք անգամ մըն ալ, որպես ոճրագործներ, այդ նշաններով երկրեն վտարելու բռնական կամք մը հռչակեր էր։

Այսպես էին ան օրերը, տեսա, ի՛նչ սև իրականություններ տակավին, հիմա պետք չունիմ վերհիշելու. դուք ավելին գիտեիք արդեն, միայն թե այս անգամ ալ ինծի համար պակաս տխրեցուցիչ չեղավ այն, որ ես նոր ճամփորդությանս ընթացքին, երբեք միտքս չանցածն էր որ տեսա։

Ճամփուս վրա, այս անգամ, անշուշտ, անլեզու բաներն ալ իրենց մտահոգության ու սև թախիծին մեջ, մարդու պես ու ճիշտ մարդերու ցավոտ շեշտերով սիրտ բզքտող պատմություններ կախեցին ականջիս, որ չի կրցավ չի լսել, ես, բնական է, որ ոտքերու տակ

ապրող պզտիկ խեղճություններուն ալ իմ հոգիես տաքուկ դորով մը բաժներ եմ միշտ։

Չի լսեի՞, չի լսեի՞, երբ փոքրիկ մրջյուններ պոռացին ետևես. «Աս ի՞նչ ցավ, աս ի՞նչ տնավեր աղետ, քանի, քանի տարի կա, որ չորս եղանակներն իսկապես սառ ձմեռ կանցնին մեր բույներուն վրայեն։ Ալ մեր շուրջը արորը չի ճռնչեր, բանվոր մշակին երգը չի լսվիր հիմա։ Երբե՞ն ի վեր է որ լքված անմշակ արտերուն կուրծքին փշուր մը հացահատին կարոտովը կաղնծվինք, տեր աստված։

Դաշտին վերը վարը սրափուշն ու տատասկը բոներ են, ասոնց հետ դեռ կաղչնան ու բողկեկն ալ տեղ գրաված մեզի մեր սովորական հունձքը չի տալե զատ, միշտ ալ մեր աշխատության ու թափառումներու պահուն, մեր ոտքերը կբզկտեն։

Եվ իրավ որ սա աչքովս տեսա թե՝ անոնց բույներուն քովերը ինչպես շատ մը անոթի մեռածներ իրենց հլունիկ գլուխնին կուրծքերնուն ծալլած, պարույկի մը ձևին մեջ, անսնունդ թփչորված տերևներու մղեղներով ծածկվեր էին։ Իսկ ողջերն ալ իրենց արանքը ու հեռուները նույնչափ արգահատելի իրենց կարկամ ու թավալգլոր շարժումներով, զբաղվեր էին մեռած ընկերներու մարմինները բույնին խորքը փոխադրելու։

Երբեմնի իրենց հավաքական խանդավառ ջանքերը ցեղին գոյության սիրով, հիմակ բոլորովին թողեր և ճարահատ՝ թաղմանական գործի մը հետ փոխանակեր էին։

Խե՜ղճ, խե՜ղճ...

Խեղճ նաև դաշտամեջի առվակը, որ իր նիհար մկաններով, ալ հոգնած հուսահատ ճամփորդ մը՝ ամեն քայլափոխի կկանչեր ետևվես. «Կամ տերս տվեք, կամ տեղս ըսեք»։

Կանդրադառնամ, և շատ արագ, հոս աս առվակը, այն կողմ իրեն պես ուրիշները կորսնցուցած շատոնցվընե իրենց ճշգրիտ տեղերն ու տերերը, խնամոտ բարի հողամշակը, ու արտերը բեղուն՝ արգավանդ ծոցերով, հոս անմիջապես ավազունքներեն կհատնին, կկմախանան, հոն կերթան հորդ խրամներու լայն պատովածքներուն խորքը թաղել իրենց աղկաղկ հեգությունը, խե՜ղճ, այո՛, առվակին, աղբյուրներուն վիճակն ալ խեղճ։

Կքալե՜մ, կքալե՜մ։ Դեպի հարավ անտառուտ լեռան մը ստորոտը գեղին պատանի նախրորդը առջևս հանկարծ։ Մենավոր նշենիի մը ստվերին տակ նստեր ինքն ու ինքը միայն, աջ սրունքին վրա մինչև ոտքին վերջածայրը կանանչ շղախոտի տերևներ վիրակապ

կհարմարցնեմ՝ թթենիի կեղևն ալ չվանի ծառայության մեջ դրած։ Վիրավորվեր է. արին, արին վրա գլուխը ու դեռ գետնին երեսն ալ շառայլ ցատքեր, փոքրիկ խճաքարերը կիսկռաված ստեպղիներու գույնովը երանգված են. եթե կըսես, արընե անձրև մը չէ հոս տարափվածը, անպատճառ եզ մը կամ գոմեշ մը մորթված ըլլալու է։ Նախորդը անկասկած որ Հայու ձագ մըն էր, երբ իր դեմը տեսավ, կաղաչե՞մ, օգնե՛, հծծեց, վրաս հարձակողները երկուք էին, ես չի կրցա դիմադրել, զենքերս տունը մոռցած, աս առուու լոկ ճոկանով մըն էի դուրս ելեր, ու ահա հետևանքը անհոգությանս։

Բայց, է՛հ, այո՛, ավելցուց, գիտեմ ինչ կըսես. նա դեմի գեղեն էին, կրնամ անուններն ալ ըսել, աջ սրունքես մինչև ոտքիս ծայրերը դանակի հարվածներով կծկծելե հետո, մեկը ոչխարները քշեց տարավ, մյուսն ալ՝ ինչ վրաս ունեի։

Հացին ծրարին հետ գտակս ու տրեխս ալ տարին, ճիշտ-ճիշտ կաղամբ կեղվեցին տարին։ Մնացածը վրաս, ինչպես կտեսնաս, սա արնաթաթախ շապիկը ու շապկընկերը միայն։

Անօրեննե՛րը, իմ գոնե թանկագին սրինգս ձգեին ինծի, ես ձեռքովս էի շիներ, բերանամասին վրա ալ նշանածիս անունը փորագրած։ Ըսե, ո՛վ Արև, հարեց վերջին մըն ալ, դուն որ է՛ն վերևի երկնուց ելեր կճամփորդես, խապար մը, խապրիկ մը ինծի, աստված կա՞ հոն, ի՛նչպես է, կըսեն հիմա անորն ալ մեր տեր Ղուկասին պպճած աչքերն են եղեր, կնային ու չեն տեսնար։

Հոս կուզեմ, որ պահ մը իմ աչքերս ալ չտեսնան։ Կքալեմ, քիչ մը ավելի արագ փարտելով ոտքերս. կփոխվի տեսարանը։

Եփրատի եզերքներեն ոչ շատ հեռու, գետնեն հազիվ թիզ ու կես վեր դեռ փլփլուկ հող զանգվածներ, որ հայ գեղի մը տունները պիտի ըլլան, տիրական դրացնությունովը այն մյուսներուն՝ պեկին ու զոլամին խոնախներուն, որ գեղին վերջոտ հոյակապ բարձրության մը մեջ, իրենց անանուն գերիներու շարքերեն պաշտվելու լիքը կեցվածք մը կիսորհրդավորեին, ես՝ այդ անանուն գերին ու պաշտվող տերերն ալ քով-քովի աս աչքերովս տեսա։

Հայ խրճիթներու անմիջապես առաջը պտղատու հաստաբուն ծառներ արմատներեն խլված, գետին նետված էին. դեռ կանանչ ու թարմ ոստերով ամենքը, գրեթե ամենքը, որ բոնարեն խողխաշված մարգերու պես եզերավերջ ճգնաժամի մը մեջ կհևային, կհոնատային փչաց հավերուն ու թուրք լամուկներուն. ի՛նչ ալ ըլլա այսպես,

կհարցնեմ անոնց մոտը ու մեջերը թափառողող կնիկան մը, որ սևերու մեջ ծվարած՝ իր քովեն քնարեն կախված քուրջի կտորներն ալ նույնքան անհամար ու ինկած ծառներուն տերևներեն ալ շատ, աչքը անոնցմե չէր զատեր, կնայեր մեյ մը սպանված ծառներուն, մեյ մըն ալ գող հավին ու թուրք լակոտներուն վայրագ ապշոպումներուն։

«Ի՞նչ այսպես— էտ ծառները, իմ աղբար, պատասխանեց կինը, և՝ ուրիշներ տակավին, որ ձգված պիտի գտնաք բոլոր տուներուն առաջը, ամենքն ալ մեզի պես անվորներու կերը սնունդը հայթայթող մեր բանվոր տղաքը ըսել էին. հոս իմս են արվոնք, այն մյուսներն ալ ուրիշներու կվերաբերին։ Տարիներու արյուն քրտինքներով ժմնցված Հայուն մալ ամենքը, որ այսպես կկտրվին, կշարդվին ափաշկարա տաճիկ պեկերու կողմե, երբ առոնք ալ հիմա իրենց բոլորտիքը շարդելիք ջնջելիք հայ չեն գտնար։

Շատը իրենք կերան հատցուցին, շատերն ալ բոբիկ գլխիբաց ելան հովերն ու ծովերը փախան. զիս շատ մի խոսեցներ. դուն միայն ա՛ն ըսե, թե՝ աստված կա՞ վերը, մեզի կնավացնեն, որ էս գալիս անօրենները վերի աստվածն ալ զարկեր մեռուցեր են, շիտա՞կ է էսի, դուն ալ կըսե՞ս էսպես»։ Այս կինը երկար չի լսելու համար իսկույն կգոցեմ ականջս ու շուտով մը ճամփաս ափ կառնեմ։

Կքալեմ, ու դեռ ինչե՛ր, ու այսպես ովքե՛ր, որ լացը պուկերնին ընդառաջեին իրենցմե անպատճառ, իրենց գեռ բնավ արև ու աշխարհ չի լսած կրակ ցավերու նոր տեսակները նետելով ականջիս։

Խոստովանիմ թե՝ այս անգամ ես ինքս ալ չի կրցա զսպվիլ, լացի, բայց որպեսզի իմ արցունքներես ալ նոր կրակ ու կայծեր չի տարափվի անոնց մեռած արդեն հույսերուն վրա, մտա մութ ամպերու ետևը, գոռուն բարկաճայթ մեծ լացեր մը ըրի—պոռացի, ճչացի ու իրավամբ այսպես որ՝ էն կուրցած աստվածը կամ ականջովը հիմա լսե օրհասված այս երկրին կողկողանքները և կամ թե որ միտքը իրավ մեռնիլ դրած է, վար գա անպատճառ ու հոս հայ գերեզմաննոցի խորքը ամբնվի, ինք քիչ մըն ալ անձամբ հաստատելով թե՝ հոս այս ծավալուն տարածություններուն վրա ինկող մեռնողները մարդկային փշրված ոսկորներե զատ ալ ինչով է, որ կծածկվին ու իրենց գերեզմանները կշինեն։ Սպանդանոց մը ամ-

բողջ երկիրը իր շառայլ երեսովը, որ ալ կաթիլ մը իսկ արյուն չի վերցներ։

Ու տակավին աս չէ ամենը։ Նոր ի՛նչ պատահած ըլլա։ Այսպես, խոսք մըն ալ այս անգամ, իմ գիշերային աղբորս՝ լուսնակին ուղղեցի։— Մի հետաքրքրվիր, ըսավ, չեմ կրնար հայտնվիլ, ես ալ կըմտածեմ այդ վարիններուն ու միշտ ամեն օր սև հուսահատությունը կըլլա մեջս խորացածը։ Երբ օր մը մտերիմ ժպիտ մը երեսս անոնց տանիքներեն կանցնեի, ասկե անկե մինչև նույնիսկ դեռատի աղվոր աղջիկներուն խբված անկողիններուն ծալքերեն հազար ու մեկ գաղտ երազ ու անրջանքներ ծրարելով ճամփաս կերթայի։ Անոնք ու այնպեսները ինծի միայն կվստահեին ինչ ունեին իրենց կուրծքին տակ, ես այդ բոլորին ալ հավատարմորեն ծառայելու եմ անպայման գործովիս մեջ, չէի մոռնար և այն մայրերը մասնավորապես, որոնք իրենց խարիպ զավկներուն ըսելիք ապսպրելիք խոսք մը կունենային, կամ որոնք իրենց մեկ անխոստովանելի տերտին լուռ լացը ընելով անկողիններու տակ, զայն տեղ հասցնելու միջոցը կփնտռեին ու չէին գտնար, իսկ հիմա՛, հիմա՛...

Հիմա ամայացած այն դաշտերուն չափ ու ավելի հայ տուներն ու տանիքն է, որ մեկացեր են հավիտենորեն քնացող ու լռող գերեզմաններուն հետ, հիմա հոն շեն օրաններու ճռինչն ու զվարթ ճլվլյունները ամայասեր ծղրիթներուն հեղձիկ հեծքերուն հետ փոխանակած՝ պահ-պահ միայն ծերերու տնքոցներն են արձագանքվողները մեռնելու արձկված անտեր գամփռերու անիծող կաղկանձներուն։ Հիմա՛... մի՛ հարցներ, ճամփադ գնա,— եղավ վերջին խոսքը լուսնակ աղբորս, ու ես բոլորովին վարանած, տրտում, իմ կրած հոգիս մենությունը քաշեցի ետևես ճամփուն երկայնքին. բայց դեռ քիչ մըն ալ մտիկ տվեք։

Ես երբեմն խորապես համոզված մըն էի թե՝ այս ցեղը, որ հայ կանվանվի, ինծի հետ ծնած ու ինծի հավասար անմեռ արև մը պիտի ապրի. ա՛խ, հիմա ինչ հիմա՛ր շեղում այսպես, որ մնալով արդեն նշավակ մը երկրի ամենակերպ չարիքներուն, խոշոր վճռական քայլերով մըն ալ հիմա ինք ելեր կդիմավորե իր անկումն իր իսկ ձեռքովը, ու ազգովին անձնասպանվելով հիմա։

Ճամփուս ընթացքին, ես բնավ չի տեսա, որ երկու հոգի իրարու հետ աղբար ու ազգական խոսեին կամ համտեստ դրացիներ համբուրեին մեկզմեկ. չի տեսա ո՛չ գեղը, ո՛չ քաղաքամեջը ընտանիքներ, որ իրարու ընդդեմ դավաճան լարվածքին վերջ տված՝ մեկուն ձեռքը

մյուսինին մեջ տաքնար, կամ մեկը մյուսին տեղն է, որ վազեր առաջ կախաղանին, անձնվիրության սխրանքեն խելահեղված։ Չի տեսա՛, չի տեսա՛։

Դուք ավելին կընեք ձեզի ու տարօրինակը, որ ձեր օճախները մրեղցնելու կարմիր տենչանքեն տարված՝ խորամանկ սպասանքներու մեջ կըլլաք. որ այն կողմե հյուսիսակը փչե ուժգնորեն. ու անմիջապես հովերուն հրարծարծ շունչին տակ բռնկցնեք ձեր կրակները, դո՛ւք։ Բայց՝ իրա՞վ հավատալ, որ ամբողջ ցեղ մը այս խելառ ջղագար հիմարությունը բաժնված ըլլա իր մեջ, որ ինքզինք բյուրավորներ արժեցնելու իր գերազոր ճիգերուն թափովը ասպետ խոյանք մը կատարեր դուրսեն թե ներսեն ապերասանված այս կույր ու համառ մոլուցքներուն հաճախանքը կասեցնելով։

Չիկա՞ր այնպես մը, կաղաչե՛մ. պահ մը դուք արտահայտվեցեք ու ես ըլլամ լսողը։ Ես ինծի ամենեին թույլատու չէի ըլլար՝ հավատալու թե պատմական մեծ ժողովուրդ մը կապրի տակավին, և որուն ինքս ալ դարեր ու դարեր անբաժան սիրահար մը եղա՝ նայելով իր ազնվական ծնունդին հետ և իր պողպատ, ամրաշեն կազմին, ու այն եզական գիտակցություններուն մանավանդ որ միայն իրենը եղան ու պիտի մնան մինչև վերջին աստղիկին անհետացումը, մեծ ժողովուրդ մը այսպես, ինքն իր մեջը վերջնական ոճրադավ համաձայնության զիջումը ըլած ըլլա որոշումով, որ ինքն իր ճակատագրին հետ տղա խաղա, ճիվաղ սատկի, ու սև անեծք մը քարանա։

Օ՛ն, ուրեմն, ձեր մեջեն մեկը հիմա, որ շուտով ինծի կարելիությունը տա հասկնալու, թե տակավին ի՛նչ միջոց ու հնարավորություններ կան, որ այս ազգը փրկելով միասին դուրսեն-ներսեն ծայրահեղված չարիքներու զահանդելի սպառնանքեն, անոր նոր կյանքի կամ նոր երջանիկ վերածնունդի մը հաջողությունը ապահովեին։

Դուրս եկե՛ք, կսիրեի լսել անգամ մըն ալ, դուք ի՛նչ ունիք. ի՛նչ հայացք, ի՛նչ համոզում, կամ՝ նոր ի՛նչ հերոսական առաքինության մը ձևը, որ ցանկացածը կարելիացնելու դեռ վերջին հրաշքը ըլլար ու մխիթարեր զիս ալ, որ կըսեի թե՝ այս ցեղին հետ կարճ հավիտենություն մը չէ, որ ապրեցա փոխադարձորեն պաշտված երկու սիրահարներու հրայրքոտ մտերմության մեջ։ Ըսե՛ք, ըսե՛ք, ես իմ այս անգամի անգին Արմաղանս անոր ոտքերուն պիտի նետեի խոկույն, որ պատիվը ըներ ինծի նոր ու աննախընթաց խելք ու

անձնվիրության մը հավատիքը տալ, ու մեկ հոգին բավական էր ու շատ արդեն, քանի որ գիտեք պատմության մեկ սադն իսկ ազգ մը փրկեց։

***

Լեռան բազմությունը դեպի առաջ ծփանք մը ընելու շարժման մեջ կմնա անխոս տակավին, ու պահ մը ոչ մեկ շշուկ, շատեր իրենց ճակատներեն ջուր քրտինք մը սրբելով փեշով, թաշկինակներով, իրարու ականջի փսփսալու ձևեր կառնեն, մեջերնին մեկը ահա, որ՝ ինքզինքին առաջին խոսողի պատիվը կընե, ծերուկ գեղերեց մը այս.

— Դո՛ւք, դո՛ւք խելքեցեք էս ժողովուրդը, ո՞վ Արև, հիմա քընած հեթանոսը անհավատ կապրին, ժամ չեն գար, պատարագ չեն առներ, իմ քարոզս ալ ջուրի ձեն կուգա անկրճնուն, էսպես՝ զաթի պիտի կործանինք. հավատա՛ զի կեցցես ըսված է։

Արև.— (Խոր հառաչանք մը)։

Գեղացի ապրած մը.— Մինչև էն մեր գ'ղին Նազաք քեհյան չէ սատկեր, էս միլլեթ ըլ էսպես իր պելաներեն նեֆես չպիտի առնե։ Հեմ հանցանքն ըլ քուվնդ օր էնոր աչքերուն լոս ես տվեր։

Արև.— (Մեղմ ծիծաղ մը)։

Ուրիշ գեղացի մը.— Էս ազգը զաթի անիծված է, անիծված։ Օր չըլլեր նը էս հալերուն չէր ի գար, հըլե դուն մեկ-երկու օր մեր գեղը էկո կեցիր, մեր քեծերուն ու որձերուն պիչիմները հասկցիր, որ վերջը համոզվիս, դուն կրնա՞ս նը հասկցիր ու վերջը համոզվիս, դուն կրնա՞ս նը չեշխտ-չեշիտ ճանավըրտիքը մեր գեղեն քշել ու Ամելքքանի ճամփուն վրա ալ քար դնել, իշտե ահա էս ազգը փրկած կըլլա։

Արև.— (Քունքերը քերելով) Ա՜խ։

Քաղքրցի հարուստ մը.— Իմ համոզումս է թե՝ մինչև որ էս ժողովուրդին ճահիլ թախըմը վազ չի գա իր պոշ լաֆերու սարխոշուքենեն ու հեր քես չի նստի իր գործին գլուխը ու տասնոցը տասնոցին վրա դնե, դրամ գիզե, միայն դրամ, ես ուրիշ բան չեմ ճանչնար, ազգն ըլ էսպես իր մեկ յախան երկուք չպիտի ընե, ընելիք ալ չպիտի ունենա։

Արև.— Միայն քու հաշիվդ գործածե այդ խելքդ։

Ուրիշ քաղքրցի մը.— Թող ամեն մարդ միայն ինքն իր վրա խորհի, իր շահին նայի, իշտե իմ բեչեթես։ Ես իմ ոգոցը ալ ամեն օր որ խրատը կուտամ, ու կըսիմ, հեմ պարծանքով կըսիմ թե՝ տղաքս

ալ քընած ըլլիս խելացի տավրանմիշ ըլլին. ես նորեն ժամուն, աղքատին մանղրը մի երկու փարա կնետիմ, ալ էտկե էվել զոհոզությանն ըլ իշությունն կըսեն։

Արև.— Ամոթ քեզի...

Կուսակցական մը.— Իմ հայացքս ահա, որ առնվազն դավանանություն պիտի ըլլա ծածկելը, ա՛յն, միշտ ա՛յն, որ կըսեմ, թե Հայը ազգովին մեր որոշ դավանություններով պլեսֆորմին հանգանակը պետք էր յուրացնել, այլապես նա արդեն կործանված մը նըկատելու է։

Արև.— Դուն գոց արձակ ըրած մը կարտասանես, աղեկ խորհիր։

Ուրիշ կուսակցական մը.— Ազգը, եղբայր, իր նորմալ վիճակը վերագտնե ան ատեն անկասկած, թե որ ինքնամփոփ իր խաղաղ աշխատանքին կամավորվի, մեր քարոզներուն խորագիրը ատ միայն, խաղաղ աշխատանքը միայն։

Արև.— Անաղ, անհամ կերակուրը բերան չի դրվիր, դուն աղեկ որ ատ ալ գիտնայիր։

Զեզոք ըսված մը.— Զոռով գարուն չի գար, խելք մը անոնց գլուխին, որ բռնաճիգ, արվեստական ծնունդին հետապնդումը կընեն։ Միայն ես չեմ ըսողը թե՝ հով ցանողը փոթորիկ կհնձե։

Արև.— Բավական լավ այդ, բայց ամբողջ մը չէ։

Ուսուցիչ մը.— Դուք կրնա՞ք քրքրցնել հարուստը, որ առատ ավչության մը զոհողությունով, տոհմային դպրոցներու թիվը բարձրանա, դպրոցներ սակայն, որ անկախացված ու ազատ ըլլային ամբոխային ախտավարակ ազդեցություններե. կփրկվեր այս ազգը միայն ատ պայմանավ. ես իմ տարիներու փորձառությունովս է, որ կմնամ համառ դավանող մը այս ձևին։

Արև.— Մոտ եկուր, համբույր մը ճակտիդ, բայց...

Մասավորական մը ուրիշ.— Ժողվել սա կուսակրոնները ծովը նետել, կամ անհրաժեշտորեն անկին քահանայությունը չնչել. ազգը մղձավանջե մը պիտի ազատի։

Արև.— Կարևոր հարց, բայց դուք ուրիշ միջոցի ալ խորհեիք։

Ուրիշ մը.— Վանքերը թե որ արձակենք ձրիակեր ագռավներեն ու ինչ ունին անոնք կրթության ծառայեցնենք։

Կպահանջեմ, որ նա քառասը որ Երուսաղեմ կանվանվի, նախ ան վերջվի մեջտեղեն։

Արև.— Այդ մասին ձեր համաձայնությունը իմս ալ պիտի ըլլա, վստահ եղեք։

Գրագետ մը.— Գրականություն, միայն գրականություն... ահա վերջին ու միակ միջոցը նոր վերածնունդին հաջողության։ Մեկ գրիչ մեկ սուր կարժե, երկու գրագետ մեկ բանակ կամբողջացնե, ասոր կա՞ր ըսելիք։

Արև.— Կա՛, ի՛նչպես ոչ, նախ խորհելու էիր թե՝ բանակն ալ իր հաղթանակի խիզախումին մեջ ըլլալու համար հացի, սնունդի պետք ունի։

Ուրիշ տիպի խորհող մը.— Ձգենք, ձգենք այլևս սա կրոնադավանական միսթիք ցնորքոտ պաշտումները, պահ մըն ալ նյութը պաշտենք, մարդկային ընկերության եթե ոչ մեկ կեսը, բայց անպատճառ մեծ մասը գոնե նյութապաշտ դպրոցին կպատկանի հիմա...

Արև.— Նախ կուզեի, որ կոշիկիդ վրա պահեիր աչքերդ բավական մը։

Այսչա՞փ, այսչա՞փ, դեռ ինչո՞ւ էն կարևորը ուշի կթողեք, ինչո՞ւ այսպես կիսատ ու առհասարակ առեղծվածային դանդաղումներ խոսքի ու խելքի. ես ուշացա արդեն, փափաքս էր, որ դեռ ձեզնե վերջին մըն ալ արտահայտվի շուտով ու ճամփաս շարունակեմ։

(Մեկը, որ արտասահմանեն կերևա ըլլալ, պատկառոտ կեցվածքով ակնածելի Հայ մը, Արևին դեմ բաց ճակատով, ժպտուն նայվածք մը փոխանակելե հետո, նշան կընե քովիններեն մեկուն, որ զինքը փոխանորդե։ Հայերեն չի գիտեր, կհայտնվի իր թարգմանիչին միջոցով)։

Արև.— Վերջի՞ն մը այս։

Թարգմանը.— Վերջին մը, այո՛, որ հայերեն չի հասկնալու իր ցավը կփափագի նախ, որ իր միակ դժբախտությունը հասկնաք, հետո բարությունը ընեք վայրկյան մըն ալ զինքը ունկնդրել, որ ծնած ու մեծցած իսկ չըլլալով Հայ հայրենիքին մեջ, բայց կրնա ձեզի ապացուցանել թե՝ իբր ազգին անձնվեր ու ճշմարիտ զավակը ու տիպար Հայ մը ապրած է մինչև օրս։

Արև.— Ուրե՛մն։

Թարգմանը.— Ինք այս մեծ Հայն է ըսողը, թե մինչև որ ցավերով կոծկոծված տառապող հայությունը չի կրնա ազատ իր գոյությունը ապրիլ վերջնական լուծումովը Հայկական կնճռոտ դատին, այս ազգը փրկանավորելու համար գործադրված որևէ միջոց կամ պայման պիտի մնան առնվազն անհետևանք կիսամիջոցներ միայն։

Ես, կըսե այս մեծ Հայը, բոլոր այն ուժերով, որ իմս են, ցվերջին շունչ Հայ խնդիրին նվիրված պիտի մնամ։ Ու թե որ էն վերջին պահուն իմ ճիգերուս հետ իմ հույսերս ալ դերև ելլեն և ապարդյուն, ինծի ալ նոր սուգ մը հարկադրելով իմ բազմաչարչար ազգակիցներուս հետ, ան ատեն ահա միայն մեկ լուցկի պիտի բռնկցնեմ իմ ձեռքովս, նախ ես ինքս պետք է մոխրվիմ, հովերուն ցանվիմ, վերջը... վերջը, ինչ որ կհասկնաք, կավելցնե։

Արև.— Քեզի, ո՛վ իմ եղբայր, քեզի ըլլա, քու միան գլուխիդ հարմար այս պսակը, որուն գեղը ու գինը թագակիրներ ցանկացին ունենալ, բայց ես անիկա արժանավորին պահեցի նվիրել։

Դուն միայն թե անունդ ըսե։

Թարգմանը.— ՆՈՒՊԱՐ է անունը։

1914

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՎԱՐԹ ԽՈՍՔԵՐ

Դուն մեծնաս նը, էս ժողովուրդին ի՞նչ ծառայություն պիտի ընես, Դավիթ։

— Ես մեծնամ նը, ուսմունքս ավարտիմ նը, Ամերիկա երթամ նը, 7 հազար լիրայի տեր ըլլիմ նը, յոթը, ութը ըլլալու ապահովություն ունենամ նը, սա քաղքցիները զիս շողոքորթել գիտնան նը, բաղնիքին մեջ ըլ մեր կնկան խզմեթ ընել գիտնան նը, տարին ըլ նահանջ հանդիպի նը, խոսք մեկ Ա.ծ. մեկ որ, ս. Հակոբին դրպրոցը կանգուն պահելու համար եթմիշը հինգ ղրշ. մաքուր փարա պիտի տամ։

— Ըսել է մենք ան ատեն շատունց արդեն մեռած պիտի ըլլինք։

— Է, դո՞ւն ինչ օգուտ հասցնել կխոստանաս, Օհաննես։

— Ես ալ Մսրի մեջ քեռի մ'ունիմ, 10 հազար լիրայի գետին մ'ունի, 25 հազարի ալ խանութ ու խանի պես շենքեր. էս քեռիս մեռնի, կնիկն ու տղաքը մեռնին, անկե ինծի մեծկակ բաժին մը միրաս ըլնի, օրացույցին մեջ տարիին գիրնըլ վի առաջը ը նու զն հանդիպի, ես ալ էս քաղքին մեջ մեծ խան մը շինել պիտի տամ, որ բոլոր իշվընին հոն կապվին։

— Շատ լավ. ճաշակի կերպ մըն ալ աս է. է, պ. Աստուր, դուն մեծնաս նը, ի՞նչ բարիք պիտի ընես աս ժողովուրդին։

— Չիս գիտես ա՛, քեզի շատ անգամ ըսեր եմ. եթե մեծնալու ըլլիմ, եթե Ած. սրտիս մուրազը տա, գրող պապ մի ունիմ՝ մեռնի, եթե քեսեն ձեռքս մնա, օրն ալ արե հանդիպի, ուխտեցիմ, որ տարին մեջ սահաթ մը, աղքատ դպրոցի մը վրա խորհիմ, կամ շինիմ, կամ փլցնիմ մեկ անգամեն։ Կրնա ըլլալ, որ վերջինը պատահի, ատ ալ ժողովուրդին բախտեն։

— Դո՞ւն հապա, Մակար։

— Եթե մեծնամ, քաղքին շենք-շնորհք մարդիկը բոլորն ալ մեռնելու ըլլին, մեյտանը ինծի մնա, մեյ մը երբ անունիս վրա քիպար անուն մը կցիմ, ժողովուրդը եթե իմ խղճիս ապավինի, ես գիտեմ ընելիքս, ան ատեն վրա իցե հղյաց և ստնտյաց, վա՜յ անոնց, որ ձմեռ պիտի ունենան առջևնին։ Վա՜յ անոնց որ առիքի մը տակ կապրին։

— Հասկցանք, պատիժ մըն ալ ըսել է դուն պիտի մեծնաս։ Քեզի գայինք, Խուկաս, բան մըն ալ դուն ըսե։

— Պարապ խոսք ինչո՞ւ կընես հետս, Խուկաս անունին ի՞նչ կվայլեր նը, ես ըլ էնի պիտի ըլլիմ։ Քեսէրիկ պիտի երթամ, իսօթ պիտի մշակեմ, վերջն ալ շոգգամի հետ պիտի խաղամ։

— Դուն ալ խոսեիր, Միքայել։

— Իմ մեկ ընկերս Գափրիելն է. անոր հետ միասին մեյ մեկ հեքիմ պիտի ըլլինք, որ ըսել է մեյ մեկ հոգի առնող հրեշտակներ պիտի մեծնանք։

— Քեզի հարցնեմ, Ամբակում, քու վա՞ղդ ի՞նչ պիտի ըլլա։

— Շատ նազար մնաց նը՝ տերտեր, եթե սակայն քիչ մը բան գիտցա ու փարա ունեցա նը, հիմա ինչո՞ւ ըսիմ։

— Բայց վերցնենք կատակը, Խունկիանոս, դո՞ւն միտդ ինչ գրած ես, ի՞նչ պիտի ուզես ընել աս ժողովուրդին։

— Եթե օդերը բաց գացին, հովերուն աշարը պիտի առնիմ, եթե ոչ, հակառակ պարագային խելքս գլուխս պիտի ժողմիմ ու երթամ պիտի ծովերը մշակեմ։

— Դո՞ւն, Սարգիս։

— Իմ ինչ ըլլիլս, ինտոր մեծնալս, ի՞նչ նկատադիր ունենալս, իմ ընտանիքիս կրթութենեն կախում ունի. եթե քիչ մը ֆարղեն գայի քի զիս իշուկ մը պիտի շինեն, պիտի աշխատիմ, որ ձի դառնամ ու ժողովրդին ձիու ծառայություն մը ընեմ։

— Բարև փյուակուլսուզ տղա, դուն չի՞ խոսեիր։

— Ես ալ կըսեմ թե՝ հայրս ինչ էր նը, ես կամ շիտակ հայրս պիտի մեծնամ, ես չէ նը շատ-շատ քիչ մը ֆարխլի ճանավար մի. հայրս սըլուկի մը պես արինը կխմեր ժողովրդին, ես ալ բնական էր, որ ժողովուրդին ոսկորը ծծեմ։

— Բան մը չի հասկցա աս ըսածներեն, ճարս քեզի մնաց, Խաչատուր. բառ մըն ալ քու բերնեդ լսեմ։

— Իմ վաղվան բանս բուրդ կերևա, վարժապետ, ես դպրոց չեմ սիրեր, ես կարդալ, գրել չեմ սիրեր, ես տունի, ընտանիքի մեջ ապրիլ չեմ սիրեր։ Միշտ ձի մը ունենամ կըսեմ. տանիքներուն վրա աղվնիկ խաղցնեմ, մեր դուռը շուն պահեմ. սենյակը հայելիին դեմը մնամ, քոլալիս ու գրավաթիս տյուզենը տամ, փողոցեն անցնելու ատենս պատուհանները նայիմ, կըսիմ, ինձմե վազ անցիր, վարժապետ։

— Վերջին խոսքը դուն ըսե, ու փակենք, Մարգար։

— Բան մըն ալ ես ըսի՞մ. բոլոր անոնք, որ աս ժողովուրդին համար գեշ մտածող են, բոլոր անոնք, որ եկեղեցի, դպրոց չեն սիրեր, առոնց համար սրտանց անձնվիրություն ցույց չէին տար, մեյ մը նախ այդ տեսակները ջուրն ի վար տվեք, ու վերջը եկեք մեզի հետ խոսեցեք, որ ձեզի ըսենք թե՝ մենք ալ մեծնանք նը, աս խեղճ ժողովուրդին համար ի՞նչ պիտի կրնանք ըլլալ։ Մեր ինչ ըլլալը հարցնելու, մեր ժողովուրդին համար ինչպես մեծնալնիս հասկնալու տեղ, ալեկ էր, որ նախ դուք ձեր դպրոցները կարգադրել գիտնայիք։

ԳԵՂԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ա.

Աշունն եկեր, ձմռան բարև կբերե, ամպերը գլխնուս վրա ձիարշավ կխաղան։ Ամպերն ուղտի, մարդու, ամեն բանի ալ նմանություն կներկայացնեն, ախպար, ճիշտ ու ճիշտ կարավան կկազմեն, գինով հարսնավորներու պես իրար կհալածեն, իրարու հաստ-հաստ ճոկաններ կնետեն, իրար կմեռցնեն, ջախջախ գանգերեն ու ցրցխտած ողներեն նոր անօրինակ կենդանիներ կծնին անմիջապես, իրենց ծնողեն խոշոր ու տարիքոտ։

Երեկ առավոտ ես զիս պահ մը անոնց մեկուն վրա երևակայեցի. վիթխարի եզ մըն էր, ամենեն ծերն ու ծանրաքայլը. ագին Մայրամ լեռը կավլեր, ցռուկը Թլանձկա բլուրեն ալ խոշոր, եթե մեր Ծովակին մեջ կայներ, վզին թալերը անկասկած չոր կմնային։

Ըրի չրի սև գավակին վրա չընկղբեցա։ Ինչ բարձր, ինչ այլայլիկ ու երազային երևույթներ։ Մազերուս տկտիքը փուշ-փուշ կըլլի՝ գլուխս կդառնա, վար նետելու փորձեր կընեմ, չեմ հաջողիր։ Կաքվուն լեռը սուրբ Ջաքար, ամենեն բարձր գարգմանակ կրող լեռները դաշտին լայն փորին վրա պզտիկ-մզտիկ պորտեր կերևին, տեղ-տեղ մութմլոր պլպլումներու բացխուփ փայլով աչքի կուգան ու չեն գար Սև գետակի օձապտույտները, Արածանիի կաղճի ալիքները։ Ծովակն իր գույնով վերի կապույտին ինկած շափյուղա կըմբռնես, ձևով՝ նման ճիշտ փիղի կաշիի մը, որ գետնին վրա բացված ըլլի, հայտնի ոտքերուն տեղը, գլխուն կողմը, մեջքը, որ Հազար-Պապային կոթնցուցած է։ Մարդն անասունեն չի տարբերիր, նախորդը նախիրի մեջ կկորսվի, աննշման կմնա. մրջյուններ չեն ասոնք, բայց անշուշտ մարդ ալ չեն, հոն լեռան կողին վրա դաշտին երեսը բան կընեն։ Այգի, ծառաստան՝ սափրիչի խանութեն նետված կեղտոտ թնճուկներու պես կերևնան, մեր գյուղն ու մյուսները իրարու մոտիկցած դրացի թաղեր եղած են։ Ու կմտածեմ, Խ. գյուղին Գամգլուխ հաջի աղան ո՞ւր կմնա, հիմա ո՞ր թոնրի եզերքը կհոհոռա, եթե իր տունն է, ի՞նչ վայրագ բերան բացած է հիմա հարսին ու

կնկան երեսին, շատ չուզեր, պզտիկ մը արցունք մը գինի, կգենկեզնա, ու սակայն ո՛չ հարսը, ո՛չ իր ադամորդին մտիկ չեն ըներ, երեկվընե արդեն ջուր հանած է նստած տեղը, կքաշվի։ Այս ալ ինչո՞ւ միտքս ընկավ։

Բայց երկնակապույտին ալ դրացի ըլլի՛լ հիանալի է։ Արծիվը սուրհանդակ կարգել, երկրի վրա ուզածիդ ու սիրածիդ հետ տուր ու առ ընել, քուլա ամպերու ծոցը պառկիլ, անոնց կույս կուրծքերուն վրա երազել, սա հարավի հորիզոնեն ժպտացող զույգ մը չնաշխարհիկ ներվտոց հետ առավոտի շաղերով օծվիլ։ Աղոթքիս մեջ չուզե՞մ, որ հոգիս այս ճամփով երկինք տանեին։ Դեռ ամպերեն վեր ինչե՞ր կան։ Այսպես աշխարհքն ելած էր մտքես, շատ հեռուն կապրեի. թե վարը մարդեր կան, որ հազար ցավերու ու բյուրավոր տերտերու մեջ կհնհնան։

Վա՜յ ինծի. մեղավորին երկինքն ալ երդիկ կըլլի եղեր ակընթարթի մեջ. մեծ եզս անտառի գոմեշի մը փոխված էր. եղջյուրներեն ահեղ հանկարծական բոցեր ժայթքեցին, աղիքներեն տիեզերք սարսեցնող գոռում-գոչյուններ լսվեցան. կռնակը կիսկոտեցավ. սրունքները բզիկ-բզիկ եղան, արևելք-արևմուտք տարտղնեցան, ուրիշներ ալ լեռ, ժայռ հորինեցին, կամուրջ կազմեցին, բան մը կայուն չմնաց ոտքերուս տակ. ու ես ինքզինքս երազի մեջ թռչող ու սթափողի մը տպավորությամբ, առջի նստած տեղս մեր ցածուկ երդիկին վրա գտա։

Անցան ժամեր, կես օրը կմոտենար, արևը խփված էր, գիշերվան չափ մութ, ալ վարն եմ։ Վերը նորեն իրարանցում ու որոտում։

Ո՞ւր են ամպերը, որ վարը երկրագործին ձեռքը ծոցը կթողուն, արտերն անշուր ու երաշտ, իրենք անհոգ անոնց վրա կծաղրեն ու խաղեր կընեն։

Ահա տարափներու փոխված՝ վար կհոսին սար-ձոր կլվան մեր աշնանացանը ու Պետիկենց խաշխաշը կբուսցնեն։

Հիմակ կհասկնաս, թե աստծո արևն ու անձրևը չըլլեր, ի՞նչ վիճակ կունենայինք։ Մարդուն բանիլ-դատիլը անօգուտ է, փեթակ չի լեցներ։ Գեղը հաստատվելես ասդին շատ ավելի խորունկցած է այս մասին համոզումս, թե մեր քրտինքն ու մեր եզները արտը չեն կրնար արգասավորել, եթե վերիններն վար չիգան ու անոնց հետ միևնույն լուծը, միևնույն սամին չանցնեն վիզերնին։ Հավիտյան օրհնյալ ըլլա իր անունը։

1894

Բ

Այս տարի գեշ անցավ։ Այսպես գուշակողները շատ են։ Գարնան դրվկները բացվեցան թե չէ՝ ժեժերն սկսան, ամեն բան գեշ ու տրտի խշխշանք։ Մեր մեծ տիրացուին խոսքով աղիտաբեր տարի մը կգուշակվի եղեր, պտուղը ֆիշ, գինին առատ, ի տեղիս ալ նիվռենդություն։

Ես այս ցվիք նստող ու հայողներուն ըսածներեն բան մը չեմ հասկնար. սա չափն իրավ է, որ այս գարնան ամպերը գլխնուս վրա որձքար դարձան. հավերուն պես, ամենուն աչքն երկինք մնաց ու վերջապես պուտ մը բան չընկավ գետին։ Աստված կուտար, որ հուլիսը զով կանցներ. շատ տեղերու համար անձրևի բարիքը բերին հյուսիսի հովերը, այդ ալ հարկավ անոր համար, որ գեղ մը գեղով հսկումի կերթային. արդրի մը ձենիկն էր, որ լսվեցավ, թե ոչ հիմա հող ու մոխիր կցանվեր գլխնուն։ Այսչափն իրավ է։ Գինին գոնե առատ ըլլեր, գավաթը պոկունքին սև ջուր կծամեինք, զվարթ ձմեռ մը կփախեր, մինչ կվախցվի նույնիսկ թե՝ կարասները դատարկ մնան այս տարի ու ծղրիդն երգե անոնց հատակը։

Գետին չինկող խոսք է, սիրելիս, աստված մարդս երկու երեսեն չի խնդացներ. հյուսիս դեմ հարավ հովերը դրած է որ՝ այն կողմեն ալ մեր էգեստանն հիվանդացնող կրակ հովերը թափին։ Գյուղական ցավերը ո՛չ մեկ են, ոչ ալ երկուք. եթե կտանին ու կդիմանան կըսեք, ալ հեղ մի այսպես են վարժվեր, հոս միսը ոսկոր եղած՝ ոսկորն ալ երկաթի պնդություն առած է։

Եկուր տես որ՝ կարկուտին ծեծածը անձրևն ալ կծեծե, խոսքը խոսք կբանա, եղբա՛յր, չեմ գիտեր թե՝ քեզի համար ինչչա՞փ շահեկանություն ուներ ներքին ընտանեկան դեպք մը, զոր շատերուն պարզեր եմ, քեզի ալ հիմա անկարելի է, որ չի պատմեմ։

Աղգականներես Մկրտիչ՝ հերու չէ, առջի տարին գեղի վերին կողմերը էգի մը զարկած էր, ամեն տեսնելուն հարսի պես երեսին կխնդար, ոսկորներեն յուղ կպզկար, այնպես աղվոր մուղայի եկած էր, որ կամաց-կամաց ալ աչվընին դրացիներուն ձեռքը չպիտի մնա՝ կըսեինք։ Գյուղային հասարակ տան մը միակ ապավենը։

Պետիկ Քահեային տղան ալ առանկ կխորհի եղեր, մինչև լույս վառ չի թողուր ճրագը, քանի մը իրեն պես գայլենիներու մզեղը մտնելով ավեր ավերակ կրնե էգին, ինչ որ աչքին դիպեր, մեծ ու մանր սիրուն թփերը, որ արյուն քրտինքովը ժմնցուցած էր, առվույտի պես քաղեր, հարդի պես փսորաեր ու կեծկլոուքի հետքովը դուրս ելեր է։

Պետիկին տղան, օռնալե՞ն տա հոգին, ասանկ այսչափ հայանի շարության հեղինակ ճանչցինք. շան ցնկնածը, դեռ փոխարեն մըն ալ չըկրցինք ընել, խոսք մը գոնե երեսին զարնելու համարձակությունն ըլլեր։

Հարուստի բուտ է, բոլորն ալ բարեկամ կմնան, ժամուն տերտերեն ըսես, սուրբ կճանչնա այն, անոր համար որ՝ Քահեային տղան է եղեր, ամեն տոնի ու տաղավարի ժամ առնողը, ժմուց ու խաշահամբուր տվողը, ի՞նչ ըսես։ Բայց որո՞ւ ըսես ու ցավերդ բանաս, տասք քու շլիքդ կկախեն. հապա սա աղբյուրին հարսներուն դրդրուքը։ Ամեն անգամ, որ այդ իրենց սիրելի գութիկին վրա պոկունք շարժես, պիծակի պես գլխուդ կթափին ու հարյուր տեղե կթժ կմխեն սրտիդ։ Աղբյուրին հարսները, կհասկնայի՞ր թե՝ մարգս ուզած ատեն փինչը վարդերու վրա ալ կպտտցնեն։ Ի՞նչ կրնար ընել եղբորորդիս, ձեռքն ալ, խելքն ալ բան մը չի դար, գեղի հասարակության խեղճերեն կսեպվի, թեև հացը չի մուրա դրաներ, անոր վիճակն ունեցողները շատ-շատ տուն մը ու այգի մը կունենան, ախորը կով մը, կրակտունն ալ կնկուկ մը, շատ չէ՞ր դուք ասանց վրա արհեստ մըն ալ ավելցուցեք, այդչափը հերիք էր, անոթի չի մեռնիր, թող ցորենի տեղը ափ մը գարի ու կորեկ կրե աղբրիքը, կապրի. վերջին խոսքն է, Պետիկին տղուն պես գայլեքը հետս ըլլեին իրմեն։

Գեղի մարդը, եղբայր, դրացինին հաճախ վատատիրտ թշնամութենեն կթվի։ Եվ որովհետև հոս իմ ու անոր հարստությունը դուրսը դաշտը՝ նետված են, մինչ քաղաք ըսված տեղերը նույն բանը հարյուր ծակ ու հարյուր բալլիքներով կփակվի, քովինին թշնամությունը կրնա քեզի հողի ու մոխրի վրա նստեցնել գիշերվան ու ցերեկվան մը մեջ, երկար ժամանակներու պետք չի կար։

Բան, թե ինչպես այդ անօրենը աչքը մեր վրա դարձուց։

Մկրտիչին աղջիկը ս. Հակոբ ելուն 13 տարեկան կըլլի, գեղի աղջկան մը նշանվելու տարիքն է, ձեռք-ոտքը մեծցեր է. շատ ուզեցին վարի գեղերեն, հայր մայր հավանություն չեն տար, տարիքը տասներեք, բայց դեռ պզտիկ է, ըսեր են, բանի գործի չի դիմանար, մարդ ես ու խխորհիս, մեծ աղջիկը այդ տարիքին մեջ կարգեց հոգատեր տան մը. տարին չանցած տեփրուկի պես չորցավ։ Ինչնոգը մը ինքը պետք չէ՞ր գիտնար ընելիքը։ Գյուղին մեջեն անցած

գարունն էր. օրը չեմ հիշեր, Պետիկ Քեհեան ալ այն մտքով խոսք կապսպրե, անոր ալ միևնույն պատասխանը՝ չենք տար ըսած են. վա՜յ, կեցիր, որ հասկնաս ու համոզվիս թե՝ կատուն ի՞նչ կրնա ընել պզտիկ մուկի մը գլխուն։

Մերժումին շարժառիթը բոլոր անկեղծութեամբ այն եղած կըլլինի, թե «մեծ տունե աղջիկ բերես, մեծ տան աղջիկ չիտաս»։ Ըսված է. վերջին տեղը կեսարին ու կեսուրեն զատ ժամ ու ժողովրդի չափ ալ տագր ու տագրորդիներ կան, ատոնց առջև սևն երեսին տարիներով հարսնութիւն՝ լեզուն սողուն ծակը պահել, ունքերը վեր չի հայիլ, ու միայն գամ գունտ հրամաններ լսել, օրվան բանտեղեն զատ մինչև կես գիշեր ալ այս տանը ամուսն հոտած կնտոց դոդոանքները ուտել։ Կեսարը անկողին մտնելու պահուն հարսը զայն տղու մը պես պիտի շահի, գոտին քակե, գուլպան քաշե, վերմակը վրան տա, ոտքերը շփոտե ու կայնի արձանի մը պես գլխուն վերև, մինչև, որ տեսնի թե՝ ծերուկին աչվընին բոլորովին խփվեցան, քուն կըլլի ճշմարիտ կերպով, կարելի է պիտի կայնի ու սպասե տակավին հասկնալու թե՝ կեսարն անուշիկ երազ մըն ալ պիտի տեսնե։ Բայց հարսը կրնա շուտով քնացնել թոռմած ծերուկը, որչափ անտանելի էր այս, ձեն ձգել ու մեղրի բառերով նենանք ըսելն ալ չի ներվելիք մեղք էր հարսին համար։ Բենչպոր տան մեջ հարս ըսվածը գերի մըն է, նույնիսկ իր գլխավորին հետ սեղան չպիտի նստի եղեր, քթին ծերը չպիտի երևնար. բայց աքաղաղին հետ թառեն իջնող, գիշերը կես անցած չանցած՝ խմոր շաղողը, աղբ թափողը, քաղհան գացողը միշտ հարսն է։

Ու այս բոլորը անոր համար որ՝ խեղճ աղջիկը մատ մը ցորեն հա՞ց դնե փորիկը. բանդ հայիր, աղբար, մեկ արգելքն ալ մենք էինք, «ցվքին ճնճղուկը կտնամպարեն չէ սատկած», թող տունը պզտիկ ըլլի, անկողինը քիչ մը կարճ ու նոսր, բրշակին մեջ համ ու հանգստութիւն գտնվի։ Ջտվինք-չտվինք, մեծավորին փափագը փորը մնաց, շատ մարդու ու միջնորդի հանձնարարեց, արդյունք չունեցավ, մենք որևէ դեմ ելլողի առջև բուրդ դրինք ականջնիս։

Ահա թե ի՜նչպես էշը փախավ ու թոմբը ծռավ. այն օրեն ի վեր Պետիկին տղան, Պետիկն ինքն ալ թշնամի մնաց մեր տանը ու մերիններուն. թող նա սակայն ընե ուզածը, կըսեմ, մեզի համար զավակ մը ակներև կորուստե մը ազատիլ, ամեն բան էր. խղճի անդորրությունը ինչի՞ հետ կփոխվեր։

1894

Գ

Հակո՜բ, սիրելիս, լեռե լեռ, թուփե թուփ, գացիր, ա՛լ չի հայեցար ետիդ։ Հուշք մը հիշեն, խոսք մը, բարև մը ինկած տեղեդ, թուղթ եթե չիկար, թռչունին հանձնեիր, թռչուն չիկար, հովերուն ըսեիր։

Խեղճ մայրիկդ դռան էտին օղիկ-օղիկ քու կարոտովդ կէրի, գնաց՝ չգրեց՝ կըսե, ո՞ւր մնաց, ո՞ւր կապրի, որո՞ւ հետ կապրի, ո՞ր ճամփաներե անցավ, ի՞նչ տեսավ ու անցավ ճամփան։ Ու ծովը, ատ մեծ ջուրը առաջին տեսնելուն, որքանի՞ արդյոք վախ անցուց, կավելցնե, ինքը, որ գյուղին ճլվըլտուն առվակին ու վտակին հոսանքեն կսոսկար։

Մայրիկդ քեզմե, քու շուքեդ, քու հիշատակեդ ալ բան մը չի գտնելով, որ գգվե կուրծքին սեղմած. շատ հեղ այգին կերթա, ու հոն վերի պատին տակը քու տնկած ծիրանիդ բունը կգրկե, տերևները կշփե ու՝ շաբաթն անգամ մըն ալ մոռցած թե՝ անոր քովը ուրիշ ծառեր ալ կան, ինքը միայն ան ծիրանին կշրե, ջուր չի գտնա, արցունքով կշրե։

Իրիկուն մը, չեմ հիշեր ո՛ր իրիկուն, մանգաղ, մատնոց մեջքս, դաշտեն կդառնայի, հոգներ էի հլլկելու աստիճան, աչքս գետինը չէր տեսներ, մայրդ դռան վրա՝ նոր դարձեր էր աղբյուրեն, ու տեսա որ լեցուկ կարմիր կուժ մը կար առջևը։ Բարև մը հաղիվ կրցա հանել բերնես. «Բարին արևդ» ըսավ, խուրպան, ջուր ահա, ծարվեր ես, խմե կուշտ-կուշտ ու պուտ մըն ալ Հակոբիս տեղը խմե։ Իրավ, ա՜յնպես ալ ծարված էի, որ կոկորդս կայրեր, խմեցի քու տեղդ ալ ու մորս անուշ կաթը հիշեցի։

Մայրդ դռան վրա նստած, քանի մը իր տարեկիցներուն ու վիճակակիցներուն հետ, իրար զիրար կհովարեին։ Մայրեր, որոնց գիտեիք թե՝ շատն է, որ լեռնեն անդին զարիպ տղոց կարոտով կաղընծին, շատերն են, որ ճամփուն ճամփորդին կհարցնեն, փախող թռչունին կձեռնեն, հողերուն երեսը ոտքի հետք կփնտռտեն, ու հովերու բերնեն զարիպին շունչը կհոտվըտան։

Հոգներ էի, երկար չէի կրնար սպասել, դրացի կնկան մեկը ատ ատեն գիս դեպի մեր տունը ճամփու կդներ միամիտ հարցումով մը, որ դեռ չեմ մոռցեր ու ան ատենեն ի վեր կսկծցնող բան մը կմնա հոգիս վրա։ «Մեր տղաքն ալ կտեսնե՞ն հիմա ան լուսնկան, որ հոն է ու այսչափ մոտը մեր երդիքներուն»։ Ես բերանս չի բացած՝

անդիեն մորդ ըսածները լսեցի։ «Այդչափ մխիթարություն կա արդեն, Կուլիկ, արևն ալ լուսունկան ալ ամեն օր, ինչպես մենք, անանկ ալ մեր տղաքը կտեսնեն։ Աստծու լոս երեսին մեռնիմ, որ այնչափ մը բան ալ մեզի տվեր է»։

Ու հետո քովինները ըսին, որ մայրիկդ շատ օր տանիքը ելած, ան ատեն, որ լուսնակը ձեր տանիքին վրա կկախվի, հոն առանձին մենախոսության պես բան մը կմրմնջե, բան մը կխրկե լուսնակին, ինչ որ իրենք բոլորն ալ կրնային ըսել ու իմ ալ հիշողությանս մեջ մնաց.

Լուսնկաթև ուսկա՞ կուգաս,
Հայր Աբրամու ծովուն վրեն.
Դուն դեղին, ձինդ դեղին,
Մորուքդ եկեր, գոտիդ դեղին,
Մատ մը հաց ամ տեղը տար,
Գուտ մը ջրիկ, զարիպես,
Երբոր տեսնես դուն ըզինք,
Թող անգամ մը կաթս իշե,
Վերջը չի լա գերեզմանս։

Մեզի գյուղացվոցս վիճակին գալով, եթե կհետաքրքրվեիր, ամառն անցավ, սիրելիս, հունձքը վերջացավ, ալ վաղը ու մյուս օրը, չենք գիտեր թե՝ ի՞նչն է, որ գեղին մարդուն համար ազվոր հույս մը պիտի ծիրանավորե, գեղի մարդուն՝ մեզի, որ ետ-ետ հրրվելով, մրջնաձին պես հողը մեզի գերեզման կփնտռենք։

Եթե կհետաքրքրվեիր իրոք, ասկե վերջը խոսք պիտի տալի քեզի, որ գեղը, գեղի մարդերը ու անոնց ապրած ավուր մթնոլորտը օրը օրին գրչի նյութ պահեի։ Վստահ ըլլայիր, որ գրելու փորձիս մեջ, ուրիշներուն պես չափազանցություններ պիտի չընեի։ Ես արդեն չեմ սիրեր պերճ շաղակրատությունները։ Այդ խենթությունը գուցե ան ատեն հարմար ըլլար, երբ մենք հոս հարսնիքի ցնծուն ազմուկներուն մեջ՝ զվարթ վայրկյաններ ըմբոշխնեինք ու ձեզ ալ հոս հրավիրելու կերպ մը չի գտնելով, ելլեինք կաշաղակներուն լեզուն գործածեինք։ Կարելի է բան մը չպիտի հասկնայիր աս առաջին նամակես, որ հուզումի մեկ ժամիս կհանդիպի գրել։ Օդը մշուշ, ձմեռը ցուրտ, աղբյուրները ցամքած, ձմեռը արջառներու հիվանդություններով սկսավ ու գարնան ցանքը ընելու համար, կերևի, տարեխին,

օձերուն ու կրիաներուն պիտի դիմենք։ Մորդ բարևին հետ ընդունե իմ ալ տաք-տաք համբույրներս։

Մտերիմդ՝

ԹԼԿԱՏԻՆՑԻՆ։

1901

Դ

Սիրելիդ իմ Վահան,

Ձմեռն անցեր է, արագիլն ու ծիծեռնակը ազվոր գարուն մը բերին։ Մարտը, հակառակ իր խենթ հովերուն, շենշող արևով մը անցավ։ Ապրիլն ալ անազմուկ ու շատ կանոնավոր անձրևներով սկսավ։ Այս երևույթը ինքնին նշան մըն է, թե բարեբեր տարի մը պիտի դիմավորենք։

«Թուղթ հայող» մեր քահանա հայրերն ալ տարբեր չէին վկայեր արդեն. տարիին գիրը բարի է, ցորենի ու գինիի շատ առատ տարի մը կցուցնե, միայն թե՝ ավելցուցած էր ծանոթ շնորհունակներեն էն հեղինակ մասնագետը, աշունին վերջը կարելի է քիթ-բերան ծամուկողներ մը ըլլան, ագահ որկորով խաղող և այլն շատ ուտելու հետևանքներով։ Օրրանին ծծկաններուն հետ զառամ ծերերն ալ պիտի կրնան, կհուսացվի, զվարթ տարի մը բոլորել։

Դաշտեցի երկրագործը վստահ ուրեմն այս բնական նպաստավոր երևույթներուն, շատոնց է արդեն, որ դուրս եկած է ընտանիքի ամբողջությամբը թոնիրի ու տախտի մգլոտ անկյուններեն, և կաղդուրված ջիղերով իր սովորական ու սիրական աշխատության գլուխը կգտնվի։

Անոնք որ ցանկ, չթիլ ունեն տնկելիք, անանկներ, որ ազբ պիտի կրեն հեռավոր արտերու ծայրերը, այգի հոտող ու մշարա կորատողները, առու բացող ու նոր պեղվածքներ ընողները, ամենքն ալ իրենց գործերուն գացած են։ Ծույլ մը՝ քաղաքին մեջ, արդարանա թերևս, բայց ծույլ գյուղացին վազը հազար լեզու ալ թափե, հա՝ ասող չըլլար իրեն։

Գեղին մեջ մեռելներուն անգամ չի ներվիր, որ անշարժ մնկուսացումով հոն կակուղ հողը գրկեն ու ծույլ քուն մը քնանան։ Գեղացին աշխատության ընդունակ ժիր ոտքեր ունի, ասոր ինքն ալ համոզվեր է, ու գիտե մանավանդ թե՝ այս ձեռքերը ատենին գոր-

ծածողին համար քարը ոսկի կդառնա ու ոտքերուն տակ ալ երաշտ անապատը ծառով-ծաղիկով կշենանա։ Երեկ իրիկուն, մեր ավագերեցին քարոզն ալ այս տեսակ ճշմարտություն մը կհաստատեր, որուն կարևոր գիծերը դեռ մտքես ալ չեմ հաներ։

«Բարին աստված աշխարհքը ստեղծելու իր մեծ գործին մեջ, երբ վերջը-վերջը մարդը կծրագրեր, անոր քունքերուն վրա զույգ մը ականջ ու դեմքին ալ աչք, բերան մը հարմարցնելով, մեյ մը իր ձեռագործին պոյին-պոսին նայեցավ, լավ է, ըսավ, բայց... այդ բայցը ան ըսել կըլլա եղեր, որ մարդուն ականջին համար շատ անուշ, շատ ախորժ ձայներ կային լսելիք, աչքին համար սքանչելի պատկեր ու տեսարաններ պատրաստվեր էին. միայն բերանն էր, որ ճար-ճարակ չունենալով անգործ ձգված էր ու պարապը դարձող երկանաքարերու պես ակռաները իրար-զիրար կկոտրտեին. հացն էր, հացահատն էր մոռցվածը այդ բերանին համար, ստեղծողը անգամ մըն ալ աչք պտտցուց իր ձեռագործին վրա, քիչ մը ընելով, գնա, ըսավ, շուտ դեն գնա, ու ատ բերանին համար ալ պետք եղած հացն ալ դուն հնարավորե, քանի որ քեզի ամեն բանի հետ այնքան ալ շենք-շնորհք ձեռք-ոտք տվի, ալ ձեռքը ամուր դաստակի մը կոթընցուցի, ոտքերն ալ նույնքան ամուր ու հաստատուն ջիղերու մեջ ապահովցուցի, հետևաբար ալ ոչինչ մի սպասեր ինձմե, գնա, դուն քեզի օգնե, դուն քու քրտինքովդ ջրե ցանածդ, մնացած պակասին համար ալ՝ շատ վերջը ինծի դիմե, ան ատեն ես չպիտի ուշանամ քեզի հասնելու, հրամայելով ամպերուն, որ արև անձրև խրկեն երկիրը, ձայն տալով երկրին, որ մեկին տեղը տասը, մեկին փոխարեն հարյուր տալու հեշտ արգանդ մը բանա, ու դեռ ապսպրեմ չորս հովերուն, որ ի դեպ ժամու շնչելու բարերար ազդեցության մը մեջ երևնան»։

Մեր փոքրիկ աղջիկներն ու տղաքը չնայելով, որ դեռ քիչ մը սառ գետին պիտի գտնան իրենց մերկ ու մանրիկ ոտքերուն տակ, շաբաթ մըն է, որ կոճղեզ ժողվելու կելլան ու պարապ ալ չեն դառնար։ Դեպի դաշտը առաջին գնացքը պզտիկներուն կողմե կոճղեզին կամ հողխնձորին հրապույրովը կսկսի, անկե վերջ անոնք վայրի ծաղիկներուն հետամուտ՝ շամչուկին ու կակաչին փնտռտուքովը պիտի ցատկեն։ Գեղի մանուկները, անանկները, որ քիչ մըն ալ դպրոցի երես կտեսնան, Զատիկեն սկսած մինչև աշունին վերջ՝ շաբաթները՝ լայն արձակուրդ մը կունենան։ Բնապատմության

ու աշխարհագրության դասերը դուրսը կսորվին ու ճշմարիտ է, որ երջանիկ դպրոցականներն են անոնք։

Երեկ, կեսօրին, տես թե՝ քանի ծերունիներ կռնակնին պատին տված ինչ դիտողություններ կընեին նորեկ արագիլներու զույգի մը վրա.

— Եկեր են մարդիկը (արագիլները) Կարուշ, բայց հալ չունին գիտես քի։

— Հելպեթ, ճամփու եկեր են, խոլա՞յ է։

— Հերվան ձագտի՞ քն են աճապ, թե անոնց մերերը։

— Զագտիքը պիտի ըլլին, միամիտ, մեր, պապ կծերանան, կմեռնին կերթան։

— Ես օր գիտեմ նը էն չափ թեզ չեն մեռնիլ, տեսես կըսեր քի, ժամուն լեկլեկը հինգ-վեց տարի ապրեր է, թել կապեր են եղեր ճովնին։

— է, պելքի, Թորոս, քիչ մը իմ ալ խելքիս կպառկի, միայն զարմանալի, որ էսքան տարին շատ շատցեր են։

Շատցեր են, հրամեր ես, լեկլեկնին ըլ, պայխուշնին ըլ շատ շատցեր են. գիշերը պայխուշ, ցորեկն ըլ լեկլեկ, երկու թռչուններն ըլ դաշտը կսիրեն, կըսեր մեր օղորմած հոգին, մի՞տդ է, տերտերանց տախտը կպատմեր. էս գեղն ըլ արթիս էրթալով թևավորները պիտի լեցնեն, ո՞ր բրշակ ու բաճա շուք կձգե քովիկը, հելպեթ, Զաքար, հելպեթ։

— Վարամ, է՛ս անգամ շատ հալ չունի էն մեկը, մերին պիտի ըլլի գիտես քի, կտնուցը ուսերուն մեջ առեր՝ խորունկ մտմտուք կցուցնե, ի՛նչ ունենա կըսես, Պողոս, խելք մըլ դուն թափե։

— Էկեր մէ՛րին է տիսշիմիշ եղողը, էրկանը ըխտիարության վրա կխորհի—եկեր պապին (արուն) կմտմտա... բայց շիտակը պիտի ըսե՞մ...

— Ըսե՛-ըսե՛, կպնդեն անդիեն ուրիշները։

— ...Պապին կմտմտա քի ես մեռնիմ նը կնիկս, որ ձեռք պիտի մնա, գիտես ա, Ակոբ էմի, գեշ բան է, ախրը, ես շատ մը էրիկ մարդերու հոգի տալը տեսեր եմ, որ վերջին շունչով մը խորունկեն ախ-վախ մը կե, կընցնեն. էտի գիտե՞ք ինչ ըսել է քի, ա՜խ, Աստուր ես կնկանս խայմախը չի կերած, դուն էնոր կարագը պիտի ուտես, շուն, շանորդի։ (Այս վերջին խոսքն անոր կուղղե, որը 60 տարեկանին մեջ կերճ հարսնուկ մը առած ըլլալով, փողոցին հավերն անգամ իրեն դեմ դատախազ կպահե)։

— Ոչ աս, ոչ ան, բան մը լսենք, (խոսքին հատակը միշտ արագիլները) գիտե՞ք ինչու կմտմտան, մարդ ըսածն ըլ, լեկ-լեկ ըսածն ըլ մեկ բանի համար կմտմտան, յա՛ աղերնին կպակսի, յա՛ եղերնին, ճշմարիտ օր աս ասանկ է. լեկլեկները եկան տեսան, որ աս տարի գեղի ջրերը, ճախիճները ցամքեր են, բերվընին բան չպիտի գիպնա, աս տարի իրենք ալ քիչվոր չեն երևնար, ցվիքներն ու բաճաները բռնելե հետո, հիմա դոր տանիքին վրա կհաստատվին, այսչափ արագիլ ինչո՞վ ապրեին, ո՛ւր երթային։

— Ի՛նչ որ ալ ըսեն, խոսին մեր սա ծերուկները, որոնք մրջյուններուն կացքին ու գնացքին վրա ալ գիտեն գուշակներ ըլլալ, մեզի համար ան եղավ ուրախարիթը, որ արագիլին ու ծիծեռնիկին թևերով ազվոր գարուն մը դիմավորեցինք, ցորենի ու գինիի առատ տարի մը պիտի բոլորի, երնե՛կ անոր, որ ուտելու խմելու նասիպ, խամեթ պիտի ունենա, երնեկ ան էրկան, ան կնկան, որ մեկ պատկով, մեկ բարձով ու մեկ օրով պիտի մեռնին, ու սակայն, վա՛յ ը անոնց, որ իրենց գերեզմանին վրա, սա տեր Հակոբը պիտի մրթմրթա։

1905

Ե

Հիմա այնքան քիչ կգրեմ, որ գրելս եմ մոռցեր, սիրելիդ իմ Արտաշես։

Թանաքամանը բաց ձգված, հոն, սարդերուն կմնա բույն ամխաներն ի վեր, գրիչն ալ մեր պզտիկներուն ձեռքը չելիկ-չելիկ-փետ կգործածվի։

Լսեր էի, թե տերտերին դեն նեռած շուրջառը օր մը ալ իրիցկինին սրունքները ծածկելու ձևին մեջ դրված է գեղը դայթակղություն մը խեղդելով, բայց ամենևին միտքս չէր անցներ տեսնել, որ գրիչ մը լքված կամ մեկուսացած որևէ պատճառով, անհարկի խլեզներ իրենց խաղին ու խեղկատակներուն պիտի ծառայեցնեն։

Օ՜հ, աս խենթ տղաքը, գիտնայիր թե՝ շատ հեղ ինչ ալ գնչ կգործածեն ձեռք անցուցածնին, որչափ հավակնոտ ու վտանգավոր քմայքներով, չուզելով անգամ նայիլ. թե ինչ կա ծայրը ան փոքրիկ ճիպոտին, կամ ան ինչ կրնա ընել ինկած տեղը։ Ես ցավեի՞ աս եղածներուն, դրացնիս տե՞ղտ գանգտեի. չէ, հոգիս, երբեք, քանի որ քիչ մըն ալ ես գիտեմ թե՝ չհագված կոշիկին մեջ մկներն ալ բույն կդնեն ու տեր կմնան անոր։

Ցեմ ցավիր, միայն թե ատեն ատեն, երբ համը կուտեին, երբ շատ աղմուկ, շատ գզվռտուքներ եղեր շուրջս, այդ խաղցողներուն մեկ-մեկ անուններ տալով, կրսեմ, ինչպես միշտ ըսեր եմ իրենց աղաչող շեշտով մը, որ կամ խաղը փոխեն, կամ գրիչը ձգեն ձեռքերնին։

Այսչափ, միայն այսչափ։ Անոնց հետ այլապես կարելի չէր վարվիլ, ի՛նչ ընել, մե՛րն են, նորեն մեր սիրածները, ամեն օր, ու՝ մանավանդ թե՝ պզտիկի իրենց տկարությունները սիսեռի հարվածի մըն ալ չպիտի կրնան դիմանալ։ Ահա թե՝ ես ինչպես ինչ փափկանկատ վերապահությունները հոգ անգամ չեմ ըներ, երբ պատահի, որ մեկը անոնցմե ուղղակի իմ աչքերուս շիտակ չելիկը, ինչպես անցածները կպատահեր ու ես նույն ատեն հարդի թեթև շյուղ մը կնետեի թարթիչներուս վրայեն անտարբերորեն։

* * *

Դուն սակայն մոռցիր ասոնք, ու պահ մը հարցնելու եղիր, եթե կուզես, ի՛նչ վիճակ ունի տուն ընտանիք, ի՛նչ ձև տուին ու կառնեն դպրոցի գործերս, կամ ի՛նչ ունեի, որ հիմա շատ-շատ շինականի մը խեղճ տկզար մը կրնամ լսցնել հոս հոն, ուր տարեցույց մը կա սիրուն ու կուզեն, որ հոն վանկ մըն ալ, միամիտ վանգյուն մըն ալ գավառի ծղրիդը խրկե իր կարգին, եթե ասոնք էին հարցնելիքներդ։

Ցավերով լեցուն տարի մը անցուցինք, սիրելիս, տուն-ընտանիք տարիին երկայնքին գժվար շունչ մը քաշեցին հաճախ, դժվար աշխատս, ու այն տեսակ անհամությունները մեջ, որ է՛ն անուշ խնձորը ձեռքերնիս, սոխի մը կծվությունովը տարին բերվընին։ Մեկը գլուխեն կանչեց, ուրիշ մը իր կուրծքն ու կողը լացավ։ Ես սոխպված՝ բժիշկն ու տերտերը մեկտեղ կկանչեի, որ մեկտեղ հնարավորեին դարմանը։ Վերջինին փեշերուն կառչողը մայրս էր շատ ավելի, մայրս երկյուղած անկեղծ դավանող մը, թե՝ քահանան ինչ-որ ալ ըլլա, աշխարհք ինչ-որ ալ ըսե, սուրբ մըն է, նվիրական գեմք մըն է ան, որ հրեշտակի իր երկու թևերը երկինքը մոռցած ըլլա անկե շապ շարժումով երկիր եկած ըլլալուն համար՝ ու վրաքի սեռեն ալ մութ ծածքերու տակ վայող թշվառներու՝ անմխիթար

սչ-ավարներու սիրովը ընտրած ըլլա հագնիլ երկնաքաղաքացիի մը շնաշխարհիկ առաքինությամբ։

Մայրս իր անչափ անկեղծ ու միամիտ հավատքը ու իրեն այլևս հավատք դարձած նախապաշարումներու սիրուն պեսպիսություն մը իր գլուխին բարձ ու հոգիին համար ալ ճրագ պահելով միասին, չի կրցավ դիմանալ ցավին, որ սրտեն բռնած էր ու շատ անողոք գելանքով մը սեղմած։ Ամբողջ վեց ամիս քաշեց, ու մենք տունով-տեղով մոռցած թե ցավեր մըն ալ մենք ունինք, վեց ամիսներու գիշերները ու ցորեկն ալ իր սնարին քովերը առինք, նստեցանք, խընամարկեցինք, քահանային հետ մենք ալ աղոթելու ելանք, օգուտ չի տեսանք բնավ, ու է՛ն վերջը, աղետալի վերջ մը, Նոր տարիին սառ շեմքը եղավ գերեզմանը հեք մորս, հո՜ն, լերան կողքին, ուսկե իր սիրական գեղին մուխը կերևնա ամեն առավոտ, և որը շատ անգամ տունին պատուհանեն ալ տեսնելուն, ա՜խ, հոն ըլլեի՝ կըսեր, հոն ապրեի, մուխ-ծուխ մըն ալ իմ թոնիրս հաներ. քաղաք եկա, քավարան մը եկա ըսել պիտի ուզեր։

Հին տարին հնհնուքներով անցած արդեն, բարեկա՜մ, երբ այս նորին առավոտն ալ մահի զանգակով մը կլուսնար, պե՞տք կա երեվակայել, թե թափված արցունքն ի՞նչ կըլլար, կամ միայն արցո՞ւնք պիտի ըլլար աչքերեն քամված։

Մայրս վաթսունն անցուկ տարիքին մեջ, որքան ալ իր գլուխը կրակ ու կարկուտ տեսած էր, խանձոտած ու խարանված գլուխը, իր սեփ-սև մազերը սակայն մեզի օրըստօրեաբար աղվոր հույս մը կներշնչեին թե՝ հարյուրամյա մը պիտի ըլլա անտարակույս, ողջ պիտի մնա զինք ամեն օր մեռցնող խշխշանքներուն մեջ ալ, ու օր մը ես ալ կենդանի մումիայի մը խնկաբույր ձեռքերը համբուրելու ծնրադիր ակնածանքովը պիտի երևնա՝ իր առջևը։ Վերջը, անակընկալ վերջը սակայն։

«Այն գարունը, որ ագռավը կբերե, չի գա բարով, կըսեր, ան օրը, որ ամպերով կսկսի, չի լուսնա խերով» իր ըսածները, որ միտքս ալ են։

Անոր մտածելու կերպն ու նախապաշարումի տեսակները իմս ալ եղած էին, ինչպես շատ անգամներ իր ըսածին, արտահայտածին բովանդակ ամբողջությունը իմ գրականությունս կմնար։ Գյուղացի անուս կինը իմ վարժապետս, գրագիտությանս ուսուցիչը, որու անհետացումովը կվախնամ, որ քանդված, անհետացած խորանի մը մութ հիշատակն ու պարապը լամ մեջս, ինչպես իր թոռ-

նիկները ան օրեն ի վեր բազմոցին ամայությունը կուլան, ուր ծալված՝ ամեն օր, երբ անոնք պիծակի կիժերով ալ թառեին իր գլխուն, ինք միշտ ներողամիտ միանձնուհիի մը անուշ ու սրբենի ժպիտը կբաշխեր, է՛ն շատ անզուսպին անգամ մեծ մոր ժպիտ մը կամ շաբրոտ հանդիմանություն մը շատ-շատ։ Խեղճ մայրս, պաշտելի մայրս, ամբողջ կյանքը ցավերով կոծկոծված չարչարանք մը եղավ։ Կուզեր, անհուն փափաք մը կհայտներ շատ հեղ, կիսկոտել ինքզինքը ու նույն ատեն երթալ երկու-երեք տեղերու վրա երևնալ ոգի մը թևերով, կամ «չըլլի՞ր, հեչ չըլլի՞ր կըսեր, որ քանի մը տարի գերեզման երթամ, Կարապետիս ու թոռնիկներուս քով ապրիմ, անկե ալ, լեռներեն անդին, ըսել կուզեր, Հակոբիս,— եղբայրներս,— երեսը տեսնամ ու քեզի դառնամ նորեն, հեչ չըլլի՞ր, հեչ էս չեշիտ բան չէ՞ եղած, տղա՜ս, դուն պազի շատ չեշիտ-չեշիտ բաներ կկարդաս»։ Խե՜ղճ մայրս, ով տար, որ աչքերս արևին խբելե առաջ, օր մը առաջ գոնե, իր ցավերուն տեսակները պատմեի այս գրիչով, ցավերը, երազները, սպասանքները, անոնց ամբողջությունը անգիր գիրք մըն էր, որ կսեղմեր իր կուրծքին վրա, այդ գիրքը ինծի հետ ինք միայն գիտեր թերթատել, Սիբիլիան մը, նվիրական մատյան մը, որուն լեզվեն ես ու ինք կհասկնայինք։ Վերջին շունչեն, երբ գլուխը Սաթենիկիս թևերուն կռթնցուցած, մեզի իր օրհնությունն ու հրաժեշտը կհծծեր, այն նույն գիրքեն անգամ մըն ալ մրմընջեց բառեր մը ախ-վախով, իր իսկ լսելու կերպովը, երեկ ձեր աչքերուն, երեկ ձեր արևին։ Մա՜յր, մա՜յր... խոսք տուր, որ է՛նդի դեմն ալ քու փեշերուդ տակ գամ, կծկվիմ, ապահովվիմ, բարի էիր, որ ինծմե առաջ գացիր ան ստվերներու աշխարհքն, ու երթալու համար, ա՛լ ես բնավ չպիտի վախնամ, ա՛լ մահեն չպիտի վախնամ։ Հոն եթե սարսափ կա, սոսկանքներ կան, հոն մայրս ալ կա ու ապահովաբար ասդինեն ավելի խաղաղիկ վիճակ մը կա ինծի համար։

1906

ԳՅՈՒՂԱՑԻ ԿԻՆԵՐԸ

(Զմոռաճ պատկեր)

Չեմ գիտեր ի՛նչ ըսեի ձեզի, ի՛նչ գրել անմիջապես, որ դուք քիչ մը երկար նայելով ձեր զարդասեղանի հայելիին, փառք տայիք աստծու, կամ միայն պոյ-պոսը տեսնելով ձեր ամուսիններուն, որ միշտ ձեզի հետ ունիք, երջանիկ օր մը անցուցած ըլլաք։

Գյուղացի մեր կնիկները իրենք իրենց այնպես մը իրավունք ունենալ կհավատան թե՝ դուք հող՝ քաղաքի ձեր շքեղ բույներուն մեջ ու սիրված վարուժաններու կուշտին, ոչինչ ունիք, որ ձեզի համար ձանձրույթ ըսվեր, ու տաղտուկ մը այն ծանրությունով, որ մեկ օրեն մյուսը մաղ կճերմակցնե։

Ես ալ կըսեի թե՝ դուք կամ ձեզնե շատերը ե՞րբ պետք կունենայիք ձեռվընիդ գոգնոցի տակ խաչկապած ու տրտում՝ մտածել, որ տունին այն կողմը դատարկ մնացին մառանին ամանները, կամ երկար դժնդակ ձմեռ մը ափ մը ածուխով պիտի անցվեր։

Ամեն կողմերե ականջիս այրող ձայնն ան եղած է, որ ձմեռը սաստիկ ըլլալուն համար գործ չկա։ Ջափազանցություն ալ չկա իրավ որ։ Իրավ է թե գյուղերու մեջ ամառն ալ հիանալի կըլլա ամեն կերպով, և սակայն հիմա ձմեռը կտիրե, որ իր հողմերով ու ճերմակ փոշիներով այնքան ապաժամ ու ահավոր, բոլորովին անսպասելի դժվարության մը մատնեց աշխատող ձեռքերու ամուր շարշըրկանքները, որոնց համագումարն արդեն կարվեր քոտ մը ոսպ կամ փեշ մը շոր ձավար։

Դժվար տարի մը իր բոլոր առավոտներով։ Ու տարօրինակն ալ ան, որ անցած եղանակներուն երբեք չսպասված օրերուն էր, որ աղետին մեկ տեսակն ալ երկինքեն կկախվեր։ Սոսկալի կարկուտը ու տեղ-տեղ չափազանց անձրևները գետինը բան մը չթողին՝ որ բույս ըսվեր, ուրիշ կողմեր մնացած լոպը ջնջեց տարավ։

Շատ սովորական խոսք մը, որ հիմա ես ալ պիտի կրկնեի թե՝ երբ երկինքն է բարկացողը, երկիրը ոչինչով կմխիթարվի։ Գյուղը հողին տվածովը կապրի, տունները ամով կպարենավորվին, կուշտ սննդեղեն մը գոնե մեր հողերուն ընձեռածովը կապահովվեր, խոսքն էվել կընեն ասոր, որ ա՛լ կարճ ըսեինք թե՝ չունևոր ու չքոտիկ խեղճության տեսակն ի՞նչ կըլլար հոն, ուր մարդն ալ գետինին մրջյուններուն հետ, առանց ուրիշ ճարի, ճարտարվեստի, շատ ավելի կամ գրեթե միշտ հողեն միայն կսպասեր կյանքը տանելի ընող պայմանները, որոնց մեկուն պակասը միայն, ճշմարիտ որ ամբողջ ընտանիքին սուգն ըսել կըլլա։

Սգավոր՝ հացի մը կարոտովը, կքված, կղպված բերաններ՝ այրող ընդարմացնող դուրսերուն մեռուցիչ ցավերով, գրող, հին տարի մը կվերջանա, ու նորն ալ ի՞նչ, որ վրանիս պիտի գա։

Բայց դուք ի՞նչ ունիք, աղնիվ քուրիկներ։ Ձեր մեծ ցավն ո՞ւսկե կսկսվեր և ո՞ւր կվերջանար, որ հոն նորեն չըլլար զվարթ

ծիծաղ մը։ Ան ատեն, որ դուք պատուհանին առաջը նստած ձեր գեմի դրացինին ջիթիկ մեկ աղջիկը կբամբասեք, որուն հով շնչած օրերն ալ պատուհանին վարագույրը ժամերով բացխփիկ շարժումի մը կերևան, ան ատեններեն ալ, ու ձեր ոսկի ու երենոս մազերուն հյուսքն ու հետուռուցքը ուզածնիդ պես հանկուրցած ըլլալու ճաշակով կսպասեք մոտեն հեռվեն բերանաբաց հիացողի մը հանդիպեցնել աչքերնիդ, ատ իսկ վայրկյաններուն, երևակայեցեք կըսեմ, որ հոս մեկը կա, որ իր ծակ գուլպան լեցնելու թել մը չվանը չի գտներ, ուրիշ մը, ըսեք աղջիկ մը, որ մեծ այպանքներու մեջ տուն կտարվի իր ամերիկացի վարժուհիեն, միայն անոր համար, որ շրջաղգեստին վարի եզերքները հենց քիչ մը թելոտած վիճակովը կմտնե դպրոց։ Դեռ նույն ատեն երևակայել ան կնկուկն ալ՝ որ իր լվացքի տաշտին գլուխը փեռեկոտած դիրքի մը մեջ, վիճակն ինչ որ ալ ըլլա, լուռ արցունք մը կխառնե օճառին փրփուրներուն հետ, երբ ան օրը այն խեղճ մայրը ստիպված կըլլա անպատճառ տունը սպասցնել իր պզտիկները, որոնց միաձև հագուստը ջուր ձգված ըլլալով, չպիտի կրնար անոնք դուրս հանել կամ դպրոց խրկել։ Խեղճության ա՜ր տեսակն էր, որ սիրտ չէր կսկծեցներ։ Դուք, աղվոր քուրիկներ, դուք, որ կկարծեմ ուրիշ ատեններ գյուղերու գարուններուն երգովն ալ երազեր ու հափշտակվեր շատ անգամ, մտիկ ըրեք հիմա, ու ես պիտի կրնայի ձեզի շատ մը ուրիշ բաներ ըսել գավառի ընդհանրապես այն ձմռուններու ներսերեն, ուր ընտանիք մը կա ու անպատճառ կա, որ ապահովապես ուրիշ ցավերով բեռնավորված մըն է, և որուն իրմեն զատ իր ստեղծողը աստվածը գիտե թե՝ կարժե՞ ապրիլ այն կյանքը, որ գավաթ մը ջուր կամ մատ մը շոր հաց ալ բռնել չէ, մնացածը ձյուն ձմեռ, շատը սոսկալի ձմեռներ, որ գարուն ալ չունին։

Հոն աղվոր աղջնակ մը, աղվոր ինչպես խաչին լուսնկան, աղվոր պաղպաջուն ինչպես աղբյուրին պարիկը, հավատայիք ըսածիս, բայց խեղճ աղջիկը, ամեն օր ալ թուքը արին կկլլե կըսեն։ Նշանվեր է, կսպասեր, որ ձմեռեն առաջ ճամփա կտրեր, ու սակայն ձմեռը ամեն երևակայելի դժվարություններու կարգին, ավելին եղավ, ավելի գեշ ձայն մը ճնկաց ականջին մեջ, «չպիտի կրնա, անկարելի է քայլ փոխել սրկե հոն», սա կանխահաս ձմեռը լերան քարայծին ու նապաստակին արահետներն ալ ահագին պատվարներով փակեր է։ Ինչե՞ր, ինչե՞ր, քաղաքացի խաթունն ե՞ր, դուք կարծեմ սա տեսակ

ահուզարերով սիրտերնիդ չէիք հատցներ, ձեր ի՜նչ ժամն էր անտանելին, երբ դուք ձեր բոլոր ժամանակը սալոն, սուարե ունիք, երբ Մնակյան կունկնդրեք ու մնացածը առաջիկա սեզոններուն Բարիզեն ու բարիզուհիներեն կսպասեք։ Դուք դեռ անով ալ երջանիկ եք, որ կյանքի այն կազդուրիչ պեսպիսութիւններուն հետ, երբեմն ալ քով-քովի սեղմվելու առիթներով զվարթ ասուլիսներ ունիք, կարդալ-գրել գիտեք բավական մը, ու կրնաք օրվան գիրքին ու գրականության վրա իրարու հետ ձեր հում կամ հասած գաղափարները փոխանակել։ Ձեր մեջ ո՞վ ըլլար ինքզինք ապերջանիկ վայողը, որ նույն ատեն միամիտ հիմարը չըսվեր, ան՝ երբ դժգոհ իր բախտեն ու բավարար պարագաներեն անիրանալի ցնորքներ կհետապնդե երկինքի լուսունկան ու երկրի Սինկափուրները երգելով։

Ականջը խոսի Ալփիարին։ Գոհ եղիք ձեր վիճակեն ան օրն իսկ, երբ թուալեթը շիտկոտել սկսած՝ կատուն՝ չարաճճի, սեղանի վրա ցատկեր ու հայելին կոտրեր, նույն ատեն բուտրային ամանին մեջ ալ թանաքամանին մելանեն գեշ ցայտքեր մը խառնելով։

Ասոնց համար, այսչափին համար ալ չէր արժեր տրտմիլ ու կուրծք բզքտել, դուք միշտ երբ այս տեսակ ժամ մը կանցնեք, մեր սա Հոռփիկ պաճին միտք բերեք, որ երեք տարի է մազերը ներկելու հինան չի գտնելով, աս ամառը ընկույզին կանաչ կեղևը շորցուցեր կգործածե։

Հիմա միայն անկեղծ զգացումներով «Ծաղիկ»-ի ու անոր բարեկամ ընթերցողուհիներուն համար ավելի երջանիկ ու բախտբեր նոր տարի մը կմաղթե Թլկատինցին։

1907

Ա՜Խ, ՀՈՌԻ՛ՓՍ, ՀՈԳԻՍ...

Նամակ մըն է այս, որ Ամերիկա հարս տարված աղջիկ մը կգրե իր մեկ մտերիմ ազգականուհիին։

Անուշիկ մորքրորդիս՝ Հռիփս,

Դեռ երկու ամիս չըներ հասնիլս, առաջին անգամ քեզի է, որ կգրեմ, քեզի՝ բայց միտքդ մնա, որ նամակս դուն միայն կարդաս ու հետո կրակը անմիջապես։ Թե ինչո՛ւ այսպես,— սպասե, վերջը հասկցիր։

Ճամփայեն գրածներս ձեռքդ հասեր են, կհուսամ։ Գրեցի, հատ մը Մալաթիայեն՝ ափհափս, երկրորդ մը Սամսունեն, վերջինն ալ երբ Մարսիլիա հասանք։ Ի՜նչ տաժանելի ճամփորդություն։ Ու ի՜նչ ճամփա այս, սիրելի Հռիփս, թե որ առաջուց գիտցած ըլլայի, թե այդ ճամփուն երկայնքին այս անխոստովանելի չարիքները պիտի դիմավորեին զիս, ավելի աղեկ, որ ջրհոր մը նետեի ես զիս ու դուրս չելլայի բնավ, եթե մինչև իսկ նշանված ըլլեի թագավորին տղուն։ Բայց դեռ քեզի ասոնք ալ չպիտի ըլլեին գրելիքներս, անուշիկ մորքրորդիս, ալ չեմ կրնար զսպվիլ քեզի գոնե չըսելու, թե ես ավելին ունիմ, ես տերտերուն սեն ու կապուտը մեկտեղ ունիմ, ես հոս հասնելուս օրեն ասդին կրակին դեմ բռնված միսի կտորին պես կեփվիմ, կխորովվիմ։ Քեզի ինչե՞ր չունիմ հայտնելիք, իմ քաղցր սըրտահատորս, հազար երնեկ, որ մարդ հեշ չէ ծներ, ծներ է թե՝ որ աղջիկ չէ ծներ, եթե աղջիկ՝ որբ չէ մնացեր, եթե ոչ՝ ես ինչո՞ւ, ո՞ր մեղքիս համար պիտի քշվեի սը ինծի համար օտար անծանոթ սեմթերը։ Հոդ թե որ ինծի համար շատ կտեսնվեր նշենիի մը շուքը, բայց գոնե փշի ծա՞ռ մըն ալ չէր գտնվեր։

Քիչ մը իրավ է, ես ալ գիտեի, թե երկիրը տղա չի մնաց, տղամարդու ստվեր անգամ չի մնաց, ու դեռ այսպես անկասկած որ օրբաներն ալ դարտկվին երթալով, բայց հոն գերեզմաննոցը գոնե կարելի չէ՞ր հանդիպիլ վերջին քարի մը, լքված, անտեր գերեզմանաքարի մը, որ մնար ու իմ պոյիս հարմարեր։ Էտ քարը ճշմարիտ որ իր բոլոր ահագնությունով ինծի համար ավելի տարվելիք ծանրություն մը պիտի ըլլար, ավելի անուշ ու պաշտելի խաչքար մը, քան այն, որ սը աչքերու ժամկոչն է, սա անտանելի շուտիկն է հիմա կուշտիս։

Սըվոր ինչի՛ն հավասովը ես ալ հիմար մը եղա և ճամփա ընկա, ես հիմար մը, հոգի՛ս, աշխարհք թող ասկե վերջ էտ անունը տա ինծի, բայց քեզի ալ ըսեմ, որ օր մը գոնե հոգը շառիր ականջիս խելք մը, անկեղծ խորհուրդ մը փսփսալու, որ ես անոր համեմատ ջուր դնեի գլուխս։ Դպրոցը մեզի շատ բան սորվեցուց, բայց երբեք, երբեք օր մը կյանքի այս կարգի փորձություններեն։ Մեր ամեն օր գոց ըրած Աստվածաշունչին ոչ մեկ երեսին վրա թելադրական խրատ մը ինծի պես միամիտի մը ուղղած։ Էն վերջը Բաղկանց Լևո՞նը դեմս, սը իշամեղո՞ւն քթիս, երեսիս վրա։ Ասոր ո՞ր տեղը էրիկ մը։ Ի՞նչ կողմը շնորհք մը, երեսին որ նայիմ յոթը օր յոթը գիշեր

դողս կբռնեմ։ Ու գոնե տարիքն ու առողջությունը քիչ մը... գոնե քթին-բերանին ձևը աղվորություն մը...

Հենց որ շրթունքներն իրարմե կզատեմ, շողինքը բերնին կողմերեն գետի մը պես կշրվեժի վարի կզակին վրա։ Ու մեղքես, ակռաներն ալ ոսկիով անագած մավզերի մը ցից փամփուշտներուն մը սարսափը կուտան։ Ըսե՛, խելոք Հռիփս, ասո՞ր համար էր, որ գըլուխս քարե քար զարկի ու դուրս ընկա պապենի օճախես։ Պատճառը այս դժբախտությանս հոտ այլևս կքնանա՞ հանգիստ, հորեղբայրս երջանի՞կ է ալ, ալ փորը չի՞ խոստեր, ալ ժանգ չունի՞ երեսը։ Էտ անսիրտ մարդը երբ այսպես միտքը դրած էր որբ աղջիկ մը հովերուն նետել կնիկեն թելադրված, կնկան քեյֆը բերելու համար, ինչո՞ւ ավելի կարճը չընտրեց։ Ավելի աղեկ, որ որձ ջորիի մը ագիին կապեր ու լեռները ձգեր, կամ ավելի կարճ, որ օրին զիս ալ հեք մորս հետ ողջ-ողջ թաղեր, քանի որ հոս ամեն օր կմեռնիմ ու թաղող ալ չունիմ։

Իրիկունները երբ գործատեղիեն տուն կդառնա՝ ետևը կարգ մը երկրացի կենճ տղամարդեր ձգած, իմ անմիջական գործս պիտի ըլլի եղեր, որ ատոնք դիմավորեմ, ձեռքս ձեռքերուն մեջ դնեմ որ... ալ ինտոր ըսեի քեզի, և պահանջ նույն ատեն, որ երեսես սանկ շաքրոտ խնդուք մըն ալ կախեմ, որպեսզի տը տեսակ սրիկաները բերվընին համտեսած ըլլին։ Մինչև գրեթե լուսաբաց կուտեն, կխմեն, կգինովնան, որ եթե իրար մեռցնող գզվռտուքներով չի վերջանա, անհրաժեշտ որ այն բոլորն ալ առանց անկողնի ու վերմակի մեզի հետ միևնույն սենյակին մեջ շնթռկին։ Սենյակ ըսվածն ալ հասկնալ կազի սնտուկ մը, որ մեր անկողնին չի բավեր արդեն, ուր սակայն անբան ավանակ էրիկ մը թույլատու կըլլի, որ հինգով, վեցով օտարականներ ալ իրենց լեշերը փռելու տեղ գտնան մեր կուշտին։ Ու առտուն ալ ես չի կրնամ իրեն հասկցնել, թե գիշերը ինչ անցավ դարձավ...

«Ի՞նչ ընենք, կպատասխանե, ա՛ կեռզյում, էս երկրին ըլ էտեթն էս է, որ դուն նոր ալըշմիլ տըլլիս, պազի ըլ ես կերթամ յաշամիշ կըլլիմ իրենց քովերը, մեր սը տելի քեարը քիսպը ասանկներեն է ու ասանկ շախաներով կշինվի. տահա ինչ ասոնք, դուն քեզի շուքուր չե՞ս իտար, որ սվոր-նվոր կնկան պես աշճությունս չես ըներ, ամեն օր տասի քսանի խղմեթ չես ըներ, հեր քեսին մեկիկ-մեկիկ քեյֆը բերելով»։

Ահա թե ո՛վ է էրիկս, քուրիկս, բայց կըսեն հարուստ մ'է, որ

լիրային հետ կխաղա, իրավ է, որ իմ մտքես չանցածները ինք միտք կձգե ու ինք իր ձեռքովը կբերե. դեռ անցածները գլխարկ մը բերած էր, որ քսան ոսկիի առած է կըսեր, ոսկի ժամացույց, ադամանդ մատանիներ, ու բոլորն ալ սուղ տեսակեն։ Լորտի կնկան մը այդ զարդը վրաս գլուխս ու շատերեն նախանձելի, բայց կհավատա՞ս, թե կհավատա՞ս, որ կըսեմ թե հագած կապածս հենց քուրջի կտոր մը, թելիս մը ըլլեր, միայն որ սը դեմինս ուզածս ըլլեր, քիչ մը կենճ կանաչ տեսնայի, քիչ մը լեզու-բերան ունենար, քիչ մը գգվանք պահեր ու բերանեն հետո սանկ երեսին վրա ալ ոսկի ժպիտ մը երևցներ ինծի։ Հարուստ է եղեր, դուն ալ չե՞ս գիտեր այդքանը ամբողջ մը չէ, որով կին մը բավականանալու առաքինությունը ունենա։

Աղջիկ մը թող ուզածը, սիրածը գտնա, թող ձմռան ձյունին վրայեն բոբիկ քալե, այդպես հավատա՛, որ գետինը սփռված վարդերու վրա կքալե։ Ա՜խ, Հռիփս, հոգիս, մեծ անեծքս քեզի բաժին ահա, նախ քու տնակդ ավերեր։

972

ՇՈՂԵՐ

Վե՞րջը.— Վերջը, շատ չանցած ձուկերուն բերանը, հեք այս հարսնուկը։

1914

ԼԵՎՈՆ
ԲԱՇԱԼՅԱՆ

ԵՐԿԵՐ

17 Թլկատիճի

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀՄԱՅԱՔԱՓ

(Նորավեպ Պոլսո կյանքէ)

Ա

Դպրոցին մեջ, «Միլվուային թոռնիկը» կանվանեին զինքը։ Դեմքը, արդարև, Միլվուայի քերթվածոց տրտմական դառնությունն ուներ։ Աչերը կփայլեին այն ապակիի գույնով, որ մասնավոր երանգ մը չներկայացներ, այլ շրջակա առարկայից գույնին ցոլացումն է զոգցես։ Դեռաբուսիկ խարտյաշ մորուք մը կշրջանակեր իր վտիտ դեմքը, որ ցցվյալ այտերը — սրածայր ոսկորներու վրա անցած տմույն կաշի,— ամենեն դյուրահաճ կնոջ իսկ համբույրը ի բաց վանելու հատկությունն ունեին։ Շրթունքը, գրեթե միշտ կիսաբաց, տարտամ ժպիտ մը ուրվագրելու համար ևեթ կմիանային, և հայնժամ դեմքին կուտային այնպիսի արտահայտություն մը, որ անմիջապես աչերուն կնայիր, տեսնելու թե աչքունքի կաթիլներ չե՞ն բաժանվիր կոպերեն։ Նայվածքն, հարաշարժ ու անստույգ, երկնակապույտի պայծառություններ ու անդնդային խորություններ ուներ փոփոխակի։ Սակայն դեմքին ամենեն ուշադրավ մասն էր ճակատը, բարձր, ուռուցիկ, որուն երկու կողմերը քներց ներակները կգծեին իրենց օձապտույտ կապտորակ ուղիներն. այդ ճակատն իր ողորկ մերկության մեջ, նույնհետայն սա զգացումը կուտար, թե սովորականեն տարբեր գաղափարաց պահարան մ'է։

Եվ, Գևորգ, սովորականեն տարբեր տղա մ'էր իրոք։ Վարժարանին բոլոր աշակերտաց մեջ իր առանձին տեղն ու դրոշմն ուներ։ Զբոսանաց ժամերու մեծաշուքնդ ուրախության կամ դասարանաց չարաճճի խաղերուն չէր մասնակցեր բնավ։ Գերառության կամ գնդամուղի ամենեն կրակոտ բառքիներուն ատեն, պարտեզին մեկ կողմը կտեսնեիր զինքը ծառի մը կոճղին վրա նստած, վեպի մը ընթերցման մեջ խորասույզ կամ մատիտ ի ձեռին թղթի մը վրա

խազխզելով։ Դասարանին մեջ, սերտողության ժամերուն, երբ աշակերտք հսկողին դուրս ելած վայրկյանեն առիթ կքաղեին հաքուցանելու համար այն դժոխային աղմուկներեն մին, որք հեգ դաստիարակն ի դասարան կշտապեցնեն այլայլակ ու բարկաճայթ, ինքն էր միայն, որ գլուխը վեր չէր առնուր գրասեղանեն։

Սակայն ինչ որ վարժարանին բոլոր աշակերտաց մեջ գերիվեր կհանդիսացներ զինքը, այն էր թե գրող մ'էր։ Շարադրության դասերուն, առաջին մրցանակը միշտ իրն էր։ Հայերենի դասատուն ամեն անգամ ներբողական խոսք մը ուներ նմա ուղղելիք։ Իրավ է, թե իր գրությանց միշտ տխուր ու մելամաղձիկ ոճը քանիցս իր վրա հրավիրած էր դասատուի ծանր դիտողություններն, բայց երբ տեսնված էր, թե այդ դիտողությունք ապարդյուն կմնային, Գևորգ մելամաղձիկ գրող հռչակվեր էր և այս պարագան աշակերտաց մեջ մասնավոր տեղ մ'էր տված իրեն։ Մյուս դասերուն մեջ ալ, ընդհանրապես առաջինն էր։ Մաթեմաթիքի մեջ միայն, երբեք չէր կրցած ուսողության դասատուին աչքը մտնել։ Իր տկարությանն իբր բարուրանք, ըստ հաճույս հառաջ կքշեր սա խոսքը. «Եթե կուզես մաթեմաթիք սովրիլ, սրտիդ մեջ խեղդե գորովը ու խանդաղատանց ամեն զգացում»։ Վոլտերեն գրած եմ դայս, կըսեր։ Ճըշմարի՞տ էր արդյոք։ Ամեն պարագայի մեջ, իր ընկերակիցներեն ո՞վ կրնար հերքել անոր ճշգրտությունը։ Երբ խնդիրը գրական նյութի մը կամ մատենագրաց վրա էր, ամեն ոք առանց վիճաբանության կընդուներ Գևորգի բարձր հեղինակությունը։

Այս նախանձելի դիրքը սակայն մեկենիմեկ եկած չէր իրեն։ Տարիներ, արհամարհանաց ու դառն զրկանաց երկար տարիներ հարկ եղած էին մինչև որ աշակերտներն հանգիստ թողած էին զինքն իր գրական գահոյից վրա բաղմելու և անկից իր վճիռներն արձակելու։

Երբ առաջին անգամ վարժարանը մտավ, տանևհինգ տարեկան էր։ Տխեղծ մանկություն մը ունեցած էր, այնպես որ իր հիվանդագին տարիներուն մեկ դույզն մասը միայն անցուցած էր դպրոցական գրասեղաններու վրա։ Իր կարգին մեջ, աշակերտաց ամենեն տարեցը ինքն էր։ Ընդհանուր կանոն, նոր եկող ամեն աշակերտ աղեկ աչքով չդիտվիր հիներուն կողմե, որք իրենց իրավունքը կհամարեին քիչ մը չարչրկել զնա. եթե նորեկը քիչ շատ զորավոր և ճարպիկ է, շուտով կուտա իր կարողության չափն և ոչ ոք կհամարձակի ձեռք դպցնել նմա. իսկ եթե տկար ու վեհերոտ է, վա՜յ

իրեն. ա՛լ հանգիստ չկա իրեն համար. այդ մատաղ գանգերուն հղացած բոլոր չարաճճիությանց զոհ կլինի։

Գևորգ շուտ ճանչցավ դպրոցական այդ ամեն դառնությունները։ Լաֆոնթեն մանկության համար կըսե թե. «Այդ տարիքն անգութ է»։ Վարժարանին աշակերտները լիովին կապացուցանեին նրբամիտ առակախոսին հայտնած այս տեսությունը։ Օր մը անոր գիրքը կգողանային, մյուս օր կաղամարին մեջ ջուր կլեցնեին, ուրիշ ատեն գնդասեղներ կզետեղեին անոր նստարանին վրա։ Գևորգ չէր տրտնջար, բողոք չէր բառնար տնօրենին. ցավագին ու արհամարհոտ ակնարկով մը կնայեր իր ընկերակիցներուն, և գիրքը կամ գրիչը նորեն ձեռքը կառնուր լռիկ։

Օր մը ֆրանսերենի դասին ատեն, ուսուցիչը տախտակին առջև հանած էր աշակերտ մը և տուն կուտար նմա ուղղագրության հատված մը, որուն մեջ կար Souffre-douleur բառը։ Ուսուցիչը հարցուց նշանակությունը. ոչ ոք գիտեր։ Գևորգ միայն մատը վերցուց և տվավ ճիշտ պատասխանը։

— Օ՜հ, չե՛մ զարմանար, դուն արդեն անձնական փորձով գիտես այս բառին նշանակությունը,— ըսավ դասատուն երգիծական ժպիտով մը[1]։

Դասատուն ալ կծաղրեր զինքը, և աշակերտք քանի մը օր խնդալու նյութ գտան, իրենց մատը փաթաթելով ուսուցչին ծաղրաբանությունը։

Այսպես տևեց այս երկու տարի։ Իր ընկերակիցներեն շատերն իրեն հետ փոխեր էին իրենց դասարանն, այլոք մնացեր էին հոն ուր էին, և շատեր հեռացեր էին վարժարանեն։ Անոնց տեղ եկողներն, իրենց անդրանիկներուն օրինակին հետևելով, նույն ընթացքը բռներ էին Գևորգի նկատմամբ։

Այդ ատեններն էր, որ պատահեցավ իր հոր մահը։ Բաստըրմաճյան Կարապետ աղան ոսկերչի միջնորդ էր Շուկային մեջ, ուր ժամանակավ խանութ և բավական լավ դիրք մ'ունեցած էր։ Փայլուն գործեր չէր տեսներ Կարապետ աղան՝ ոսկերչաց շուկային հետզհետե վատթար կացության մեջ, սակայն գեշ աղեկ կապրեցներ ընտանիքը։ Կինը մեռած էր բավական ժամանակե ի վեր, և իր այրի քրոջ, Աղավնի հանըմին, և իր Գևորգ զավակին հետ կապրեր վարձու

[1] Այդ ֆրանսերեն բառը կնշանակե անձ մը, որ ենթակա կլինի այլոց կատակներուն։

տան մը մեջ։ Աղավնի հանըմը քսաներեք տարեկան տղա մը ուներ, Ալիքսան Թումայան, որ Պոլսո վաճառատան մը կողմե Տրապիզոն ղրկված էր և անկից մերթ փոքրիկ գումարներ կղրկեր իր մորն ու մորեղբորը, որ իր բարեկեցիկ օրերուն մեջ զինքը մեծցուցած և կրթել տված էր։ Այսպես, ընտանիքը կապրեր, դյուրությամբ հոգալով Գևորգի կրթության ծախքերը։

Հորը մահը ծանր հարված մ'եղավ Գևորգի համար։ Տասնյոթ տարեկան էր այն ատեն և կզգար, թե ինչքան ծանր պիտի լիներ իրեն բաժնվիլ իր սիրական ուսումնարանեն։ Աղավնի հանըմը սակայն «բուխ-սիրտ կնիկ» էր, գործե հասկցող ու խանդաղատանոք կսիրեր եղբորորդին, իր բացակա զավակին բոլոր կարոտն անկից առնելով։ Թող չտվավ, որ Գևորգ դպրոցեն ելնե. ավելի աժան տուն մը վարձեց, տան դուռը պզտիկցուց, ակռան սեղմեց, և զավակեն ստացած ամսական երկու ոսկիովն և իր ասեղին համեստ հասույթով, սյուզենի բանելով, շարունակեց վճարել Գևորգի դպրոցական կես թոշակն և գնել անոր անհրաժեշտ գրքերը։ Երբ պետք կըլլար թանկագին մատյան մը, բառագիրք կամ բնագիտություն, Աղավնի հանըմը ցերեկը գիշերին կխառներ, և ամիս մը ետք Գևորգ կուններ իր ըղձացած գիրքը։

Դպրոցին մեջ աշակերտները կարեկցական աչքով կնայեին Գևորգին՝ իր հոր մահվընեն ի վեր, և ա՛լ չէին նեղեր զինքը։ Օր մը միայն, ընկերակիցներեն ոմանք գողցան իր դարակեն տետրակ մը, զոր միշտ գաղտնի պահած էր իրենցմե։ Գևորգ անոր մեջ կգրեր իր քերթվածները։ Սակայն երբ տեսան անոր լռիկ արտասվելը, գլուխը դարակին մեջ, արգահատանոք ետ դարձուցին տետրակը։

Իր ընկերակիցներուն վերջին չարաճճիությունն եղավ այս իրեն նկատմամբ, ի բաց առյալ այն խիստ դիտողությունը, զոր տնօրենն ըրավ նմա օր մը՝ դասարանին մեջ հաճախ վեպ կարդալուն համար, գլխավորաբար մաթեմաթիքի դասերուն։ Մանավա՛նդ զի Գևորգ հին աշակերտ եղած էր ա՛լ և իր ունեցած դիրքն իբր դասարանին ամենեն հառաջադեմ աշակերտը, և իր հեզ ու խոնարհ բնավորությունն հարգելի կընծայեին զինքն ամենուն։ Գրելու մեջ ունեցած հաջողակությունն հետզհետե սիրելի կըներ զնա տնօրենին և իր ընկերակիցներուն, որոնց շարադրությանց կամ պարգևաբաշխության ճառերուն մեծապես կօգներ։ Իրավ, ընկերակիցները կծաղրեին մերթ իր անհագ սերը բանաստեղծությանց, մասնավորապես տխուր բանաստեղծությանց համար, և չարամիտին մեկը,

Միլվուայի քերթվածոց գիրքը տեսնելով հաճախ իրեն ձեռքը, «Միլվուայի Թռնիկը» մականվանած էր զայն.— այս մակդիրը տարածված ու մնացած էր վարժարանին մեջ և երբ Գեորգ գիրք մը ի ձեռին պտտեր պարտեզին մեջ, գրագիտության դասին հառաջադեմները կըսեին, որ Գեորգ իր Վենսենի անտառին մեջ կճեմեր։ Սակայն ալ ոչ մեկուն մտքեն կանցներ արգելք լինել նորա գործոց։

Բ

Երբ վարժարանեն ելավ, տասնեվինը տարեկան էր։ Իր վեհերոտ բնավորությամբ, չհամարձակեցավ ասդին անդին իյնալ՝ հրապարակին վրա գործ մը գտնելու համար. իր գաղափարներն և ունեցած գրական կրթությունն արդեն խորշեցնել կուտային զինքն առևտրական ասպարեզեն, ուր կզգար, թե հաջողելու համար հարկ եղած կարողություններն և կորովը կպակսեին իրեն։ Ուստի սիրահոժար մտավ այն կենաց մեջ, որ մեր վարժարանաց ուսումնավարտներուն մեծ մասին կներկայանար իբր ապրուստի դյուրին և պատրաստ միջոց մը, որ բնավ դժվարություն մը չներկայացներ իրենց։ Հայերենի, ֆրանսերենի և պատմության երկրորդական ուսուցիչ եղավ թաղային վարժարանի մը մեջ, շնորհիվ իր նախկին ուսուցիչներեն միույն, որ իր պաշտպանության ներքև առած էր զինքն։ Ամսական 250 ղրուշ տվին իրեն առաջին անգամ, շաբաթը տասներկու ժամվան դասախոսության փոխարեն։ Ապրելու համար շատ քիչ էր այս։ Գեորգ դժգոհ չէր սակայն։ Իր բանաստեղծի և խորհողի գաղափարներով արհամարհանոք կնայեր կենաց վրա։ Նյութական վայելքները չէին հրապուրեր զինքն, և գիտեր ռակավապետ լինել։ Կրաղձար միայն ավելի մեծագումար դրամ ունենալ իր տրամադրության տակ, կարենալու համար գնել այն բոլոր գրական գործերն, որոնց դեղին կափարիչները ժամերով անձկանոք կդիտեր Վայսի կամ Բաբատիսի ցուցափեղկերուն ետին։ Իր գրեթե միակ վիշտն էր այս։

Տարի մը ապրեցավ այս կյանքով։ Գոհ էր։ Իր այս կենաց մեջ նյութական զրկանաց բոլոր փոխարինությունը կգտներ մտավորական անսահման գոհունակությամբք։ Հետզհետե առիթ կունենար ճանչնալու բոլոր այն մարդիկն, որք հռչակ մը հանած են գրական հրապարակին վրա, և որոնց մտերմությունը կամ մեկ սիրալիր խոսքը մոռցնել կուտար իրեն թե՝ ազատենկոթին թեները

հնության ապիկով կփայլեին, կամ ոտքին մատները, մանավանդ այն փոքրիկ չարաճճի ճկույթն հաճախ նեղ կգտներ իրեն տրված անձուկ սահմանն և ազատ օդ շնչելու աճեցուն փափագներ կունենար։ Իրավ, կրկնոցը բարակ էր քիչ մը, ամառվան և ձմռան օրերուն համար նույնն հավասարապես, ու ցուրտ օդերուն որչափ ալ պրուսացի զինվորականի ճշգրտությամբ դներ ամեն կոճակները՝ դարձյալ ակռաներն իրարու կկափկափեին մշտատև համառությամբ. սակայն ո՞վ կըսեր, թե այս վիճակն այդպես պիտի տևեր շարունակ։ Դպրոցական հառաջիկա տարեմուտին տարակույս չկար, թե ուրիշ տեղեր ալ պիտի գտներ դասախոսելու. արդեն քանի մը տեղե խոստումներ ստացած էր։

Սպասելով այդ բարօրության թվականին, կշարունակեր իր ուսումնասիրությունները և գրական աշխատությունները։ Երբոր գիշերները տուն դառնար, տղոց շարադրությունները սրբագրելեն և կարգի դնելեն հետո ձեռք կառներ իր գրիչն և թղթին վրա կթափեր իր երազատենչ մտքին ցնորքներն ողջույն, ու տառապանքներն անհուն իր սրտին զգայաթրթիռ։ Գրասեղանին առջև, սենեկին մեջ մենավորիկ, կրնար ազատ ասպարեզ տալ զինքն հուզող զգացմանց, զորս օրն ի բուն զսպած էր աշակերտաց ծաղրածու դեմքերուն հանդեպ։ Դառնությամբ լցված բողոքներ էին ասոնք ընդդեմ ճակատագրին քմահաճ խաղերուն, խորհրդածություններ մարդկային սրտի թշվառության վրա, հոգին ի վեր համբարձիկ առ վարդագույն երազներն իդեականին, սիրատենչիկ տարտամ մրմունջներով։ Զի սերը չէր ճանչեր նա։ Փողոցին մեջ, կիներն արհամարհոտ նայվածք մը միայն կնետեին իրեն, և ինքն համարձակություն չէր ունեցած երկու անգամ աչերը վերցնելու միևնույն կնոջ վրա։ Իր ընդածին համեստությամբ չէ՛ր համարձակեր իր գրվածներն ուրիշին կարդալու, և իր գրադարանին ամենեն մութ խորշերուն մեջ իրարու վրա կդիզեր զայնս։ Անգամ մը միայն, հազար վարանումներե հետո, ծածկանվան մը ներքև իր գրվածներե մին ղրկած էր առ Արևելք, որ նոր սկսած էր հրատարակվիլ այն ատեն։ Երկու շաբաթ, ամեն երեկո, օրերե ի վեր նոթի մնացած սովալլուկ մարդու անհագությամբ, տենդոտ շարժումներով բացած էր թերթը, տեսնելու թե իր գրվածն հյուրընկալվա՞ծ էր։ Օր մ՚ալ ազգային լուրերուն ներքև, Արևելքի պատասխաններուն մեջ, երկու պարտազանց բաժանորդներու ուղղեալ ազդարարության մեջտեղ, կարդացած էր թե՝ իր հոդվածը չպիտի հրատարակվեր,

որովհետև «շատ վերացական էր»։ Զզարմացավ, բախտն ե՞րբ ժպտած էր իրեն. սիրտը վարժված էր դառնությանց՝ պատանեկության մատաղ տարիներեն իսկ։ Սակայն չկրկնեց փորձն, և շարունակեց ըստ առաջնույն գրել լոկ իր սրտին պահանջմանց գոհացում տալու համար։

Իր այդ բաղդատաբար երջանիկ վիճակին մեջ, եթե իրեն մտահոգություն պատճառող բան մը կար, այն ալ իր աշակերտաց հետզհետե հանդուգն և ապերասան վարմունքն էր իրեն նկատմամբ։ Առջի ամիսներն աշակերտները շատ չհեռացան այն հարգական դիրքեն, զոր ընդհանրապես կպահեն ամեն նոր դասատուի նկատմամբ։ Սակայն, երթալով համարձակ ձևեր առին։ Իրավ է, թե Գևորգ ալ իր կողմե զորավոր ջանքեր ի գործ չէր դներ զսպելու համար աշակերտաց ըմբոստական ձգտումները։ Ի՞նչ ըներ. իր կարողությունեն վեր էր այս. ծանր էր իրեն բարկության կայծակներ թափել աշակերտաց գլխուն, կամ իր մատներուն զորության ճաշակը տալ այդ մատաղ դեմքերուն։ Աշակերտները, քաջալերյալ այս ներող ու թույլատու ընթացքեն, անհավատալի հառաջադիմություններ ընել սկսան իրենց սանձարձակ ազատության այս հաճոյական ճամփուն մեջ։ Ա՛լ այնուհետև Գևորգի դասախոսությանց ժամերը մեկ-մեկ տոն էին աշակերտաց համար, որք անհամբերությամբ կսպասեին այդ ըղձալի վայրկյաններուն։ Գևորգ ոտքը դասարանին ներս դրածին պես, ժխորը կսկսեր ձայնարկություններով, ծիծաղներով, կատվի կամ աքաղաղի ձայներով։ Իզուր կաղաչեր նա հանդարտ կենալ. ո՞վ մտիկ կըներ իրեն։ Աշակերտք, ասով ալ չգոհանալով, սկսան իրենց խաղերը փորձել ուսուցչին վրա։ Օր մը գլանաձև բոլորված թուղթ կնետեին նմա լաստիկով, ուրիշ օր մը, Գևորգ, դասարանեն ներս մտած ժամանակ, դասատախտակին վրա կավիճով նկարված տեսավ մարդու մը պատկերը, որուն երկար, անհատնում քթին վրա մարդ մը կանգնած էր՝ լարախաղացի պես ձեռքերը տարածած և ծայրեն ալ ուրիշ մարդ մը կախված էր բոլոր ուժով, ոտքերը գետնեն կտրած։ Պատկերին վրա գրված էր «Մյուսյուին քիթը»։

Վարժարանին Հոգաբարձությունը, որուն Գևորգ քանիցս գանգատած էր, կսկսեր դժգոհության ցույցեր ընել նմա, ըսելով թե՝ հանցանքն իրն էր, եթե չէր հաջողեր իր արժանապատվությունն հարգել տալ աշակերտաց։

Օր մը ալ, Գևորգ Հոգաբարձությենեն նամակ մը ստացավ, որ զինքը պաշտոնանկ կընեին, քաղաքավարական մեղմ բանաձևերով։

Իր դասախոսությանց հաշվեն երկու ամսական ուներ առնելիք։ Մտքեն իսկ չանցուց երթալ պահանջել զայն, ոչ իսկ դիմումներ ըրավ վերահաստատվելու համար իր պաշտոնին մեջ։

Ամիս մը պարապ պտտեցավ։ Այդ ամսվա մեջ ի՞նչպես ապրեցավ, չէր գիտեր։ Ուր որ կդիմեր, միևնույն պատասխանը կուտային իրեն. սպասելու էր, առայժմ պարապ տեղ չկար։

Այդ միջոցին էր, որ բարեկամ մը հանձնարարեց զինքն Հ.Օրթագեղ Զյումպյուլյան ընտանյաց, որք իրենց երկու մատաղատի տղոց համար տան դասատուի մը պետք ունեին. Գևորգի համար փրկության խարիսխն եղավ այս։ Ճիշտ իր ուզած գործն էր, դպրոցի դասախոսության տաղտուկներեն ազատ, խաղաղ, հանդարտ գործ մը, իրեն համար ալ բոլորովին հանգիստ, մասնավորապես տեղվույն մերձավորության պատճառով.— երեք ամսե ի վեր Պեշիկթաշ փոխադրված էին, շուկայի մեջ հունաց եկեղեցվույն ետին երեք սենյակներով փոքրիկ տուն մը։ Անմիջապես ներկայացավ Զյումպյուլյանց տունն, ուր տան տիրուհվույն հետ կարգադրեց իր դասախոսության ժամերը։ Շաբաթը երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ, կեսօրեն մինչև իրիկուն, ընդհանուր դասեր պիտի տար երկու տղայոց, որոց մեծը, Տիրան, տասնևչորս տարեկան էր, իսկ պզտիկը, Գոհարիկ, տասնմեկ տարեկան։ Ամսական որոշվեցավ 300 ղրուշ։

Երեկոյին, երբ Գևորգ տուն դարձավ, ի՞նչ ցնծություն հորաքրոջն ու եղբորորդուն միջև։ Բախտը վերջապես եկած զարկած էր իրենց դռան։ Գևորգ մեծ ծախք մը չպիտի ունենար, Պեշիկթաշեն Օրթագեղ քալելով պիտի երթար գար. ասկից զատ, տարակույս չկար, որ Զյումպյուլյաններուն շնորհիվ, պիտի կրնար ուրիշ ընտանիքի մը մեջ ալ պաշտոն գտնել, և եթե երեք հարյուր ղրուշ ալ անկից առնո՞ւր։

Աղավնի հանրմը սյուզենի չբանեցավ այն գիշեր։

Գ

Գևորգ եռանդմամբ սկսավ իր նոր դասերուն։ Իր աշակերտները երկու սիրուն տղաներ էին, աշխույժ ու մտացի, մին սև ու գոուզ մազերով գիրուկ պատանի մը, փոքրը շագանակագույն վար-

սերով քնքուշ ու փափկիկ աղջիկ մը, նուրբ և գունատ։ Իրավ է, թե իրենց տարիքին բաղդատմամբ շա՛տ քիչ բան գիտեին. սակայն իր հարատև աշխատությամբ և հեզահամբույր բնավորությամբ պիտի կրնար լեցնել անշուշտ անոնց դաստիարակության այս կրկնակ պակասները։

Երիտասարդին համար բարօրության և երջանկության թվական մ՚եղավ այս։ Տանը մեջ հարգանոք կընդունեին զինքն, և երբ դասախոսության սենեկին մեջ կառանձնանար իր աշակերտաց հետ, իրեն այնպես կուգար թե՝ երկնային դրախտ գտած էր ա՛լ։

Քանի մը անգամ, տիկին Զյումպյուլյան ներկա գտնվեցավ դասերուն։ Երեսունհինգ տարեկան կին մ՚էր նա, թուխ, բարեդեմ, վայելչաձև, հանդարտ երևույթով։ Աչերը միայն, սևաթույր հրավառ աչերը, կփայլեին այնպիսի թափանցանց նշույլով մը, որ Գևորգ, նորա դիմաց նստած ատեն, միշտ խոնարհ կպահեր գլուխը՝ նորա նայվածքին հանդիպելու երկյուղեն. մնաց որ, առաջին անգամ էր, որ այդչափ բարձր և գարգացյալ կնոջ մը դեմառդեմ նստելու առիթը կունենար, և այս անչափ կխռովեր զինքն, որ ամեն անգամ սիրտը կտրոփեր, երբ իր աշակերտաց մայրը սենեկեն ներս կմտներ իր դասերուն միջոցին։ Բայց իրեն համար ճշմարիտ տանջանքն այն ատեն էր, երբ տիկին Զյումպյուլյան հարցումներ կուղղեր իրեն իր աված դասերուն, իր կենաց, իր գրական ճաշակաց վրա։ Տիկինը բավական զարգացյալ միտք մ՚ուներ, կհետևեր ֆրանսական գրական շարժման, և իր գրադարանը լեցուն էր ֆրանսացի նշանավոր վիպասանաց նորագույն գործերով։ Գևորգ հայնժամ կպատասխաներ դողդոջ ձայնով մը, աչերն առանց վեր առնելու, դատավարին առջև կանգնած ամբաստանյալի մը խոնարհ դիրքով։ Այսպես, հետզհետե, ցորչափ մտերմությունը կհաստատվեր, նորա առջև կպարզեր իր ցավագին կյանքն, իր մանկության թշվառությունները, դպրոցին մեջ թե՛ իբր աշակերտ և թե՛ իբր ուսուցիչ ունեցած դառնությունները, իր անակնկալ վտարումը թաղային վարժարանեն։

Տիկին Զյումպյուլյան մտիկ կըներ, տարտամ ժպիտով մը, որ ի հայտ կբերեր զուգակ շարք մը սպիտակափայլ ակռաներու. հետո դուրս կելներ ձանձրույթի շարժումով մը։

Որովհետև կմանձրանար, այո՛։ Տանը մեջ գործ չուներ տեսնելիք, օրն ի բուն ալ գիրք չկարդացվիր. այցելությունք ալ շուտով կդմենան։ Տղաքաց փասերուն ես ներկա չէր ուզեր գտնվիլ. ամեն անգամ, որ Գևորգի ողբերգական դեմքը տեսներ, դժվարավ կրնար զսպել ծիծաղը։

Օր մը, դասի ատեն, հանակնկալս ներս մտավ սենեկեն։ Գոհարիկ ոտանավոր մը ուղած էր երիտասարդեն, և նա ալ բերած էր փոքրիկ քերթված մը դեռատի օրիորդին համար։ Տիկին Զյումպյուլյան առավ զայն աղջկանը ձեռքեն և կարդաց.

Երբ տեսնես
Գոհարիկ,
Ժամբաղիկ
Դու կուզես
Առնել յուր
Այտեն բյուր։

— Օ՜, դու նշանավոր բանաստեղծ ես եղեր, և մենք չէի՞նք գիտեր մինչև հիմա։ Առաջին ոտանավո՞ր է այս, թե ուրիշներ ունիս գրած։

— Չէ, տիկին, ուրիշներ ալ գրած ունիմ, սակայն երևան չեմ հանած, ինձ համար պահած եմ։

— Ի՜նչ գժբախտություն։ Ազգը զրկե՞լ այսպիսի տաղանդավոր արտադրություններե,—ըսավ տիկին Զյումպյուլյան ժպտելով։ —Ինձի կբերե՞ք որ կարդամ. ես շատ կսիրեմ հայերեն բանաստեղծությունները, դպրոց եղած ատենս շատ մը կտորներ գոց գիտեի։ Սակայն շատ հասարակ նյութերու վրա գրածներնիդ չբերեք, զգացումով գրված ինչ որ ունիք, բերեք, շնորհակալ կըլլամ։

Այդ օրվան հաջորդ երկու գիշերները Գևորգ մաքուր տետրակի մը մեջ խնամով արտագրեց իր քերթվածներեն տասնհինգ կտորի չափ, որոնց մեջ դրած էր իր սիրտն ողջույն, և հաջորդ շորեքշաբթի տարավ հանձնեց զայնս տիկին Զյումպյուլյանի։ Տիկինը նույն պահուն քանի մը բարեկամուհիներ պիտի ընդուներ, ուստի շնորհակալություն հայտնելով, ըսավ, որ գիշերը կկարդա զայնս, և տետրակն առնելով ընդունելության սրահը գնաց։ Այցելուներն էին երեք մանկամարդ տիկին և մեկ օրիորդ, և խոսակցությունն սկսավ աշխույժ, սիրուն, զվարճալի։ Նույն միջոցին, այցելու օրիորդն, որ տոլին վրա դրված թերթերը կթղթատեր, դիպվածով ձեռքն անցուց Գևորգի տետրակը, զոր տան տիրուհին ներս մտած ատեն անդ դրած էր աճապարանոք, և գոչեց.

— Ա՜հ, բանաստեղծությանց տետրակ մը։ Կներե՞ս, որ աչքե անցունեմ։

— Ինչո՞ւ չէ,— ըսավ տիկին Զյումպյուլյան։— Աղեկ գտար, այդ բանաստեղծությունները գրողը ներսն է, մեր Տիրանին և Գոհարիկին դասատուն, հոս բերել տամ զինքն և իրեն կարդացնել տանք, կզվարճանանք։

Երբ Գևորգ սրահեն ներս մտավ, դռան առջև մնաց շվարած, շլմորած։ Տիկին Զյումպյուլյան շարժմամբ մը հառաջ հրավիրեց զնա, և համամտության չարիմաց ակնարկ մը փոխանակելով իր հյուրերուն հետ, ըսավ.

— Կներկայացնեմ ձեզ մյուսյու Գևորգ...ը...ը... Մյուսյու Գևորգ Բաստրմաճյանը, մեր արժանավոր դասատուն, որ միանգամայն նշանավոր բանաստեղծ մ'է։ Մյուսյու Գևորգը հիմա պիտի հաճի մեզ կարդալ իր քերթվածներեն մի քանի կտոր, որք հոս կգտնվին, կանխավ ընդունելով մեր ջերմ շնորհակալիքը։

Երիտասարդը հազար գույն կփոխեր այս փոքրիկ ճառին միջոցին. կմկմալով պատասխանեց թե՝ իր գրվածները չէին արժեր այսպես հրապարակավ կարդացվելու, և թե անշուշտ ձանձրույթ պիտի պատճառեր ներկայից։ Սակայն այցելուաց և մասնավորապես տանտիրուհվույն թախանձանաց վրա, ձեռք առավ տետրակն և սկսավ կարդալ։ Զայնը կդողար և այդ դողը կոկորդեն փոխանցվելով մարմնույն բոլոր անդամներուն, ծունկերը կերերային և տետրակը կտատանվեր իր ձեռներուն մեջ։ Սակայն հետզհետե տեր լինելով իր անձին, հառաջ տարավ ընթերցումը վստահ ձայնով մը, իր բոլոր ցնորական անուրջներն, իր գիշերային մենիկ տքնությանց այս կսկծելի եղերերգությունները թափելով այդ ծիծաղկոտ սրահին մեջ։ Մերթ ընդ մերթ, սրտահույզ տողերուն, որք իր սրտին արյունովն էին գոգցես գրված, ձայնը կնվազեր, և աչերը կթրջեին։ Տիկին Զյումպյուլյան և իր հյուրերը միմյանց կնայեին ժպտալով, թաշկինակով մը ծածկած իրենց շրթունքն, հայտնի չընելու համար իրենց խնդուքը։

Երբ ավարտեց, ամենքն ալ իրենց շնորհակալություններն հայտնեցին նմա. բայց հաղիվ Գևորգ դուրս ելավ վրդոված ու այլայլած, ծիծաղն սկսավ։

— Խե՜նթ է, ի՜նչ է,— ըսավ նրբահասակ տիկին մը, որուն խաժուկ աչերը նվազկոտ փայլ մը կարձակեին,— ո՞ւրկից գտար այս տղան, կարդացած ատենը աչերն այնպես մը կդարձներ կոր, որ վախ զգացի։

— Աղեկ ժամանակին դուրս ելավ,— հարեց ուրիշ մը.— եթե քիչ մըն ալ կենար, ա՛լ չպիտի կրնայի զսպել ինքզինքս, և քա՜հքա՜հ պիտի խնդայի։

— Այսուհանդերձ աղեկ զվարճացուց մեզի։ Միմիայն դեմքն ամբողջ կատակերգություն մը կարժե։

— Քանի որ ձեռքիդ տակը այսպես գանձ մը ունեիր, ինչո՞ւ համար մինչև հիմա երևան չէիր հաներ զայն։

Այդ օրեն Գևորգի համար նոր կյանք մը սկսավ։ Իր դասի օրերուն, տիկին Զյումպյուլյան կհրավիրեր իր բարեկամուհիներեն մի քանին, Գևորգը ներս կկանչեին, և խոսեցնել կամ իր գրվածները կարդացնել կուտային իրեն։ Հետզհետե, ծիծաղն, այնպես մը ընելով սակայն, որ երիտասարդը չկասկածի։ Ավելորդ զգուշություն մ'էր այդ։ Գևորգ, իրեն համար ցորչափ մտերմությունը կավելնար, ա՛լ չէին զսպեր իրենց նորանշան և անծանոթ այս պատիվներեն շլացյալ, իր բանաստեղծական անրջոց անձնատուր բոլորանվեր, մտքեն իսկ չէր անցուցեր, թե խնդալու ի՞նչ զվարճալի առարկա մ'էր դարձած։ Տակավ առ տակավ, ամիսը մեկ-երկու անգամ, տիկին Զյումպյուլյան գիշերներն ալ թող չէր տար նմա տուն դառնալ.— ձմեռ էր, այն երկար գիշերներն ինչպե՞ս անցունելու էր։ Գևորգ ինքիրմե ելած, անասելի ուրախությամբ համակված, չէր գիտեր, թե ինչ ընե, այս պատվոց արժանի լինելու համար։ Ամեն բանե առաջ սակայն, զգացած էր, թե այսպիսի ընկերության մը մեջ ըստ պատշաճի երևալու համար պետք էր լավ հագվիլ։ Հիմակ իր գրեթե բոլոր ամսականը հագուստի-կապուստի կծախսեր նա, ամենեն էական բաներեն իսկ զրկելով ինքզինքն։ Երբ դասախոսության օրերը կհասնեին, խենթի պես կվազեր հՕրթագեղ, սրտին մեջ կրելով անբացատրելի զգացում մը, որ կդողացներ իր ձեռքն ամեն անգամ, որ կզարներ Զյումպյուլյանց տան դուռը։

Գիշեր մը, երբ նորեն ամենքն ալ հավաքված էին՝ լսելու համար Գևորգի մեկ նոր գրությունը, տիկին Զյումպյուլյան հարմար առիթ մը գտնելով Գևորգը կանչեց իր մոտ և իր քանի մը բարեկամուհյաց քով, ըսավ նմա ժպտագին.

— Այս բոլոր գրվածներդ շատ աղեկ. սակայն ինչո՞ւ սիրո տաք շունչով գրված բան մը չես հորիներ։ Ամեն բանաստեղծ իր սրտին մեկ առարկան կունենա, որուն կուղղե իր աղերսները։ Այս-

չափ հոգիին մեջ, մեկը չե՞ս տեսներ քու էլվիոդ ըլլալու արժանի։

Գևորգ, մինչև ականջները կարմրելով, պատասխան չտվավ։ Սիրտն այնքան ուժգին կբաբախեր, որ կարծես իր ցնցումներով գետին պիտի նետեր զինքը։ Քիչ մը անդին գնաց և աթոռի մը վրա նստավ մտախոհ։

Այն գիշեր չքնացավ, և մինչև առավոտ մտածեց տիկին Զյումպյուլյանի խոսքին վրա։ Է՜հ, այո՛, ինչպե՞ս չէր հասկցեր մինչև այն ատեն իր սիրտն հուզող զգացումները. կսիրեր այդ կինը, մոլեգին կերպով կսիրեր, և նա ալ, այո՛, չէր արհամարհեր զինքն։ Ա՜հ, իր երազներն իրականությո՞ւն պիտի դառնային ուրեմն։

Հաջորդ օրը, երբ տուն դարձավ, սենեկին մեջ փակվեցավ և նամակ մը գրեց առ տիկին Զյումպյուլյան, հիմարական նամակ մը, սիրո զգլխիչ խոսքերով, իր անարատ հոգվույն բոլոր զգայնությամբը, աղեկիզիկ նամակ մը, հորում կպարզեր իր սրտին խորը թաղված բոլոր կրքերը զորս արթնցուցած էր նա, այդ սերն հայցելով անկից իբր մխիթարություն իր վշտաշարշար կենաց, հայտնելով միանգամայն, թե մերժում մը կարող էր մինչև իսկ անձնասպանության մղել զինքն, եթե՝ անկից առաջ՝ խելքը չցնորեր արդեն։ Այդ նամակն հետևյալ դասին վերջը, մեկնած ատեն, տվավ Տիրանին, որպեսզի իր մորն հանձնե, ըսելով, թե իր մեկ նոր քերթվածն է։

Մյուս դասին, Գևորգ շատ համբ քայլերով ուղղվեցավ Օրթագեղ։ Սիրտը կկայտռեր ցնծութենե, և կուզեր կարելի եղածին չափ երկարել այն երջանկությունը, զոր մարդ կզգա ըղձացած նպատակի մը հասնելե առաջ։ Անցորդները զարմանոք կնայեին այդ երիտասարդին, որ ինքնիրեն կխնդար։ Զորս կողմը, թեև ձմռան աղտոտության տակ ծածկված, հիանալի կերպով գեղեցիկ կերևեր իրեն։ Տարակույս չուներ թե՝ իր աղերսն ընդունված էր, և թե նույն պահուն սիրտ մը արդեն կտրոփեր նույն զգացմամբը։ Այս մտածումներով հասավ Զյումպյուլյանց տան առջև և զանգակն հնչեցուց վստահալից. զանգակին ձայնը մեղեդի մը պես անուշ եկավ իր ականջին, իբր նախերգանքն իր երանության։ Սպասավորը դուռը բացավ, և Գևորգ կպատրաստվեր ներս մտնել, երբ մյուսն ըսավ սրտնեղությամբ.

— Վիեր մ՚էլլար, հանրմը ու տղաքները հոս չիեն, դյուս էլան, հանրմը ասաց, որ մե՛կ մ՚ալ չի գաս, տղաքները ա՛լ պետք չունին դասի։ Ծրեք հարյուր ղրուշ ալ պարտք կա եղեր, ա՛ռ։

Եվ տեսնելով, որ Գևորգ արձանացյալ կեցեր էր, ստակը նորա վերարկուին գրպանը լեցուց և դուռը գոցեց երեսին։

Օրթագեղեն մինչև Պեշիկթաշ ինչպե՞ս գնաց հետիոտն, առանց վար իջնալու, միտքն անգամ չգալով տրամվայ նստիլ։ Երբ իր տան դուռը զարկավ, հայնժամ սթափեցավ, ներս մտավ առանց բարիրիկուն ղրուցելու հորաքրոջը, դանդաչելով իր սենյակն ելավ և, լալով, հեծկլտալով, բազմոցին վրա փռվեցավ։

Դ

Անկողնին մեջ պառկած էր նա, դեմքն ավելի գունատ, քան այն դեղին բարձը, որուն վրա հանգչեցուցած է իր լղար գլուխը։ Աչերն ավելի խոռոչացած են, այնչափ ներս քաշված, որ գերեզմանի փոսի մը տարօրինակ զգայնությունը կուտան տեսնողին. և այդ փոսին խորը, մարմրուկ ցոլք մը կպլպլա, շիջանելու մոտ պատրույգի մը լույսին պես տատանոտ։ Իսկ երբ կոպերը վար կառնու դալկությամբ, մութ կապույտ գիծ մը կտեսնվի, շորս բոլորքը քաշված ճմրթկած կակուղ գծերով։ Այտերն այնքան ներս խրած են, որ կարծես թե բերանին մեջեն իրարու են միացած։ Ու բոլոր դիմագծերուն վրա հոգնություն կկարդացվի, անբացատրելի խոնջություն մը, տրտում, թախծալից, սրտամորմո՜ք։ Վերմակը քաշած է մինչև կզակը. սակայն երբ տաղտկությամբ մեկդի կնետե դայն մերթ, պարանոցը, իր մանկական վտիտ պարանոցը կերևի մոմի ճերմակությամբ, նեղլիկ սրածայր ուսերուն մեջտեղ։

Սնարին քով, ցած աթոռակ մը. երկու-երեք սրվակներու և տուփերու մեջտեղ, քանի մը ֆրանսերեն գրքեր, լիմոն մը և Կոլոնյի ջրի սրվակ մը. ավելի մոտ, գիրք մը բացված մնացած է։ Դուրյանի Տաղերն են։

Դիմացը, բազմոցին վրա, Աղավնի հանրմը, ակնոցը դրած, գուլպա կհյուսե, առանց աչերը հեռացնելու Գևորգի վրայեն. մատները մեքենարար կկատարեն իրենց գործն, և ասեղներն անխոտոր կխաղան իրենց խոլական հապճեպ շարժումները։ Մերթ ընդ մերթ, տեղեն կելնե, եղբորորդվույն քով կուգա, վերմակը լավ մը կծածկե ուսին կողմեն, և անուշ ձայնով մը, մանկան մը հետ խոսելու պես, կհարցնե խանդաղատանոք.

— Բան մը կուզե՞ս, յավրում, մեկ տեղդ կցավի՞ կոր, տաքությունդ ե՞նալ է։

Ու ձեռքը նորա ճակատին դնելով.

— Օ՜, բան մը չունիս, մե՛կ բանիկդ չէ մնացեր։ Մեկ-էրկու օրեն ալ բյուս բյուրյուն կրորնտնաս տե քեզի հետ աղվոր աղվոր ժամ մը կերթանք։ Աստվածամոր առջին մոմ մը կվառենք, անանկ մի՞, անուշի՛կս։

Գևորգ պատասխան չտար, այլ մեղմիվ կբռնե իր հորաքրոջ ձեռքն ու շրթանցը կտանի։

Հորաքույրը նորեն անցած է իր տեղը, ու Գևորգ վերստին կիյնա իր խոհանաց մեջ։ Քսան օրե ի վեր այսպես պառկած է։ Լավ չհիշեր իր հիվանդության առաջին օրերը։ Կմտաբերե միայն, որպես երազի մը մեջե, թե հիվանդ եղած է, շա՜տ հիվանդ, ու վայրկյաններ ունեցած է հորս զգացած է թե նույնհետայն, անմիջապես, կյանքը պիտի խուսափեր արդեն ու աչերը պիտի գոցվեին առհավետ։ Այդ օրերեն իրեն մնացած միակ հիշատակն է իր հորաքրոջ դեմքն, զոր միշտ իր սնարին քով տեսած է փութեռանդն, պատրաստ կատարելու իր ամենադուլզն փափագներն։ Անկից առաջ ամեն բան թաղված է համայնապարփակ մշուշի մը մեջ։

Երկու-երեք օր է աղեկ կզգա ինքզինքը։ Բժիշկն հայտնած է, թե ա՛լ իրեն գալուն պետք չկա, սակայն դեռ բավական օրեր կատարյալ հանգիստ պատվիրած է։ Գևորգի խնդրանաց վրա, թույլ աված է միայն կարդալ, սակայն ընդհատաբար, առանց գլուխը ժամերով կախ պահելու։

Կմտածե։ Գաղափարները խառնիխուռն կլցվին մտքին մեջ, առանց որոշ ուղղության մը հետևելու, առանց ինք ճշգրիտ գիտակցությունն ունենալու իր խոհերուն։ Ամենուն տիրապետող զգայնությունն է սակայն, չգիտեր ինչ խառնուրդ մը հոգնության և հանգստյան պետքի։

Ձեղունը կդիտե դարձյալ։ Իր հիվանդության օրերուն գլխավոր զբաղումն եղած է այս։ Գիտե, թե ձեղունը քանի տախտակե բաղկացած է, ո՛րտեղ ծակ կա, ո՛րտեղ՝ վարակ։ Եվ, մեքենաբար, նորեն կհամրե. մեկ, երկու, երեք... տասնևյոթն, տասնևութ։

Ձեռքը դուրս կհանե վերմակեն և Դուրյանի Տաղերը կառնու, ու հարյուրերորդ անգամը լինելով կսկսի կարդալ զայնս անձանձրույթ։ Էջերը միմյանց կհաջորդեն իր դողդոջուն ձեռքին տակ, աչերը կպղտորին, գլուխը կդառնա, սակայն ձեռքեն չի թողուր գիրքն. ինչքա՜ն համ կառնու այդ սրտի դպչող ողբերեն։ Բարեբախտաբար հորաքույրը հոն կեցած է, Գևորգի մեն մի շարժմանն

ուշադիր։ Կամաց մը տեղեն կելնե, անկողնին քով կուգա, և հուշիկ իմն գիրքն առնելով Գևորգի ձեռքեն.

— Ա՛լ հերիք կարդաս, տղաս, նայե, նորեն տաքություն եկեր է վրադ. տոքթորը ինձի ըսավ, որ թող մի տար, որ շատ կարդա. աղեկ չէ, ինչո՞ւդ պետք ատ մարդոց գրածները։ Դուն հանգիստ նայե։ Ստեղը քանի՞ օր մնաց. էկող շաբթու ա՛լ ոտք կելլաս, ան ատեն ուզածիդ խտար կարդա, ուզածդ ըրե։ Ամա ա՛լ դաս չպիտի տաս, անանկ չէ՞։ Աս գործը ճի՛շ չեկավ քեզի։ Ան ի՞նչ էր, ամեն իրիկուն տուն կուգայիր նե քյուիյուր-քյուիյուր կհազայիր։ Էս զաթը առջի օրեն չէի ուզեր, որ դասատու ըլլաս. ան ճերկելեն կառավարելը խոլա՞յ բան է, իլլե քեզի պես նազիֆ հիվանդկախ տղա մը։ Ամա դուն կտոր մը խելքիդ հավնած ես, չնեղանաս զուրցածիս, ճեմ կիտեի, որ խոսքիս մտիկ չպիտի ընես։

Ու Աղավնի հանրմը գիրքը գրասեղանի վրա կդնե, սակայն սիրտը լեցված է, այնչա՜փ բաներ ունի զրուցելիք, զորս վախցած է հայտնելե Գևորգի հիվանդության միջոցին։

Եվ ձայնն ավելի անուշցնելով.

— Հեմ մեյ մըն ալ ան տունը չպիտի էրթաս, անանկ չէ՞։ Էս քեզի բան մը չէի զուրցեր կոր ամա, քանի կերթայիր, կավրվեիր կոր։ Ան տունը քեզի աղեկ չեկավ, էս կիտեմ։ Հիվանդ էկած իրիկունդ դուն ինձի բան մը չըսիր, ամա էս ետքեն հասկցա. գիշերները քունիդ մեջ վիրա անոնց անունը պերնեդ վար չէիր ձգեր կոր։ Կիտե՞ս ինչ խտար վախցուցիր ինձի։ Փա՜ռք տիրոջը, խազասրդ անցուցիր, անկից աղեկը չիկա։ Աղեկնալուդ պես, կելլանք Տրապիզոն կերթանք. Ալիքսանս հիմակ հոն թոհաֆճիի խանութ պացեր է, վիրա կգրե, որ էլլամ էրթամ, աղեկ մը կապրինք։ Քեզի հետ կելլանք կերթանք, դուն ալ կթողուս ատ ուղուրսուզ զեհահաթը։ Ալիքսանիս հետ կաշխատիս, հեմ կբացվիս քիչ մը, հավա կառնես։ Տրապիզոն կերթանք, անանկ չէ՞, Գևորգ։

Բայց հորաքույրը կանգ կառնու հանկարծ. Գևորգի աչերն արցունքով լեցված են, և կաթիլ մը կսահի իր այտեն ի վար, երիթացյալ դիմագծերուն ոլոր-մոլոր ուղղությանն հետևելով։

— Ան ի՞նչ է ան, կուլա՞ս կոր։ Չես ուզեր նե չենք երթար, մի՛ դող էլլար։ Ալիքսանը հիմա ամեն ամիս շիտկե շիտակ իրեք ոսկի կղրկե կոր, էրկուքնուս ալ կօգտե, դուն նորեն ուզածդ ըրե։

— Չէ՛, չէ՛, հալա, կերթանք, կերթանք, քեզի հետ կերթանք ատ տեղեն։

Ու սիրտը կպոռթկա. արցունքները ուղխորեն կհոսին այտերեն վար ու կերթան կորսվիլ իր բարակ մորուքին մեջ, ու կուրծքը կհնա խուլ թառանչներով, որք կցնցեն իր վտիտ մարմինն ողջույն՝ երկարատև սարսուռներով։ Այդ հառաչանքները կարծես իրենց հետ սրտեն դուրս կքաշեն կտանին ինչ դառնություն ու մորմոք որ դիզված կա անդ, իր կենաց սկիզբեն ի վեր։

Աղավնի հանքմը չգիտե ինչ ընել։ Գոլանյի շրով Գեորգի ճակատը կշփե, դեմքը կշոյե կփայփայե ու կպաղատի նմա հանգարտիլ։

Քիչ-քիչ արցունքները կդադարին. մերթ ընդ մերթ հառաչանք մը ևեթ, կուրծքը պատռելու աստիճան ցայն, կոկորդեն կխուսափի ցավագին երկար «ախ»-ով մը։ Հետո կելնե անկողնին մեջ կնստի, և տկար ձայնով մը.

— Ինձի քիչ մը բան տայիր, հալա, անոթի եմ։

— Ծ՞խ, ա՜ռ, ապեկ, իշտահիդ բացվիլը ապեկ նշան է։ Քեզի էրթամ տաքուկ տաքուկ հավի ճուրի շորպա մը պերեմ։

Եվ դուրս կելնե Աղավնի հանքմը. ժամանա՛կ է, եղբորդվույն ազիզորմ վայը տակնուվրա ըրած է իր սիրտը, և թեզանիքովը կարբե աչերն, որք լեցված են։ Քանի օրե ի վեր հանգիստ քուն քնացած չէ խեղճ կինը, և իր բոլոր խնայողությունները բժշկին, դեղագործին և մսավաճառին գրպանը լեցուցած է. բայց հո՞գն է իրեն. մինչև թե իր Գեորգը ապեկնա, ասուված ողորմած է այնուհետև։

Գեորգ, մինակ մնալուն պես, վար կիջնե անկողնեն, կթոռ քայլերով կհասուցանե մինչև պատուհանն և մեկդի կտանու վարագույրը։ Ինչյակը պարանեզին վրա կնայի, քաղաքուտի փոքրիկ պարտեզ մը, ուր քանի մը ծառեր կտարածեն իրենց նորընձյուղ ոստերը։ Մարտի օր մ'է, բարակ անձրև մը կտեղա, գարնանամուտի այն մեղմ անձրևներեն մին, որք մեղամաղձությամբ կլնուն մարդուս սիրտը։ Քիչ մը առեն կդիտե անձրևի կաթիլներն որք ծլարձակ ոստերուն վրա իջնալով հուշիկ շրշյուն մը հառաջ կբերեն և մարգարտի պես կփողփոզին անդ։ Հակառակ դուրսի տխրության, այդ կանաչազարդ ճյուղերը զորս քսան օր առաջ տեսած էր իրենց կմախային մերկության մեջ, տեսակ մը գոհունակություն կպատճառեն իրեն։ Կզգա, թե ինքն ալ, այդ մեռած բնության նման, առողջացած է ա՛լ։ Բայց սի՞րտը, բայց իր երազնե՞ը, իր բոլոր հավատքներն ու բոլոր հմայքնե՞ը։

Ու գրելու պետք մը կզգա, իր զգացումները թղթին վրա թափելու անզուսպ, անդիմադրելի տենչ մը։ Կամաց քայլերով գրասեղանին քով կերթա, որպեսզի հորաքույրը չիմանա վարեն, թուղթ ու գրիչ կառնու և տենդահույզ շարժումներով, արագ և արագ կգրե.

«Է՞հ, ի՞նչ երազ, ա՜յս է եղեր կյանքը։ Բանաստեղծներուն երգած օդային կապույտ պարիկներն ասո՞նք են եղեր, և իդեալի ամենեն հոգեպարար անուրջներն այս խեղկատակ կերպարանաց տակ մարմին կառնու եղեր։ Սի՛րտս ինչքա՜ն դատարկ է. անկե վտարյալ պատրանքները կարծես իրենց խուսափուկ ընթացքին մեջ հետերեին տարեր են այն քիչ մը արյունը, զոր ունեի երակաց մեջ։ Այս դատարկությունը բանի մը չեմ կրնար նմանցնել։ Անհատակ անդունդի մը զարհուրելի խորությունը կզգամ հոն, ուր արձակած ձայնիդ կամ նետած քարիդ արձագանքը չես լսեր։

Դուրյանը միտքս կիյնա անդադար, ու անոր տողերուն ամենեն վսեմը թերևս միտքե չելլար ամեն վայրկյան.

Ի՞նչ, երազե մը եռք գրկել ցո՞ւրտ շիրիմ։

Ե՞ս ալ, ե՞ս ալ արդյոք պիտի գրկեմ ցուրտ շիրիմը։ Որդերն, այն մանրիկ մաքմնատանջիկ որդերն, պիտի պլլվին ի՛մ ալ դիակիս, այն բյուրաժանի բյուրաբերան հույլն, ահագին կլափ մը կազմած, պատռտ-պատռտ՝ ու կուլ պիտի տա զիս։ Սոսկա՞լ, քամնի՞լ։ Ինչո՞ւ։ Ո՞րն է լավը։— Արև արեգական տակ, մարդկային ընդհանուր ցնծության ու հրճվանաց մեջ, թաքուն անտեսանելի որդ մը այլապես դյուրագրգիռ, ո՞ղջ-ո՞ղջ, հաճույքով, փափկությամբ հատցնե՞ սիրտդ, թե իրենց անկուշտ ախորժակեն վարյալ անասնիկներու երամ մը կրծե լմնցնե զքեզ մեկ անգամեն, հողի՛ն ներքև, գերեզմանին պա՛ղ և հավերժակա՛ն միայնության մեջ»։

1888

ՂԱԼԱԹԻԱ «ԲԵԱՐ»-Ը

«Անմե՞ն ինչ ոչ կրնեմ՝ սիրտը
փառքին համար է»։

Գացե՞ր եք Ղալաթիո Բեսդը։

Ղալաթիո ամենեն անանցան ու միանգամայն ամենեն հետաքրքրաշարժ վայրերեն մեկն է ասիկա։ Կաֆե մըն է կերպով մը,

ու մյուս կաֆեներուն հետ ունեցած նմանությունը ան է մինակ, որ հո՛ն ալ անգործ ու պարապ մարդիկ կհաճախեն։ Բայց մինչդեռ Կ. Պոլսի ծովեզերյա այդ տարօրինապես ինքնատիպ թաղին մեջ այլուր պիտի գտնեք միայն դեմքեր, որոնց վրա մոլությունը դրած է իր ակներև դրոշմը և օղին ու ալքոլը փորած են բարակ ակոսներ, ու աչքերու մեջ անհագ տենչանքներու և ահռելի հուսահատության խոլ փողփողումները, վայելչազգեստ մարմիններու քով ծակծկած արմուկներ և տաբատներու ծրվիկ-ծրվիկ քղանցքներ, ու անփութությունն ու անպատկառությունը քով-քովի,— ասդին, Բեսդի մեջ, ամենքը մեկ կաղապարե թափված մարդիկ են, հանդարտ դեմքեր, խնամքով խոզանակված հագուստներ, խորհրդակիր զգուշավորություն մը, և աչքերու մեջ միշտ հույսի ցոլքը։

Անգլիացի միսիոնարուհի մը հաստատած է այս շենքը Բերշեմպե-Բազար, իբր բողոքականության ծավալման միջոց մը։ Շենքը երկու սենյակի կբաժանվի, սրճարան և ընթերցարան։ Մուտքը և ընթերցանությունը ձրի են, ու պարտավոր չես բան մը առնելու։ Խահվե, թեյ, կաթ և նմանօրինակ անվնաս ըմպելի մը կբերե քեզի սպասավորը՝ եթե ուզես. թե ոչ՝ կարող ես առավոտեն մինչև իրիկուն նստիլ հոն առանց փարա մը վճարելու։ Պատերուն վրա գրված են ս. գրքեն այլևայլ հատվածներ, հայերեն, հունարեն, անգլիերեն, թուրքերեն։ Ամբողջ մատենադարան մը կա հոն կրոնական հանդեսներու, որոնք առանձին հատորներով կազմված են, և բավական ստվար կույտ մը կրոնական տետրակներու, որոնք տեղին սպասավորը անուշ ժպիտով մը կնվիրե ձեզի. հավիտենական վերնագիրներն են ատոնք իրենց բողոքական ծագումին հատկանշական դրոշմով.— Զղջալ և Հիսուսի երթալ.— Հիսուսի նայիՆՓ.— Ամեն frիստոնեայ Քrիստոսի գործավոr.— ՀանցանՓն իմս չէ.— Ո՞յf են որ կընդունին զՆոգին սուրբ, և այլն։ Ժուժկալության ընկերության մը մասնաճյուղն է նաև Բեսդը. ընթերցատան մեջ, եռոտանիի մը վրա, որ ծանրաբեռնված է լրագիրներով ու տետրակներով, կա այն քարտերեն մին, զոր ստորագրողը ինքզինքը պարտավոր կհամարի հրաժարելու ոգելից ըմպելիե և ծխախոտե, ու լամբակեն անցընելու կապույտ ժապավենի կտոր մը։ Այդ քարտին ճակատը գրված է՝ Ամեն բան կրնամ ընել Քrիստոսով, որ զիս կզոrացնե (Փիլիպ. Դ. 13), և «Ժուժկալություն կամ քրիստոնեական շարժում մոլորությանց դեմ» վերնագրին տակ սա բառերը. «Հիսուսի օգնությամբ ոգելից ըմպելիքներե և ծխելե հրաժարելով՝ կուխտեմ այլևս չգործածել և օրինակ ըլլալ այլոց», որոնց ներքև պետք է դնել ստորագրությունը։ Մինչև հիմա Բեսդի հայ սպասավորը միայն կարծեմ քաջություն ունեցած է իր անունը փայլեցնելու այդ քարտին ներքև և իր լամբակը զարդարելու այն հուսածիծաղ ժապավենով։

Բողոքական տաճարի մը պարզությունը և մաքրությունը կտիրեն հոն։ Սպասարկությունը կլինի երկյուղած հանգստությամբ ու վայելուչ բարեկրթությամբ. սրճարանին երկու ծառաները կարծես սրբավայրի մը մեջ կքալեն։ Ու սովորություններ կան հոն, որոնք անվարժներու զարմանքն ու մերթ զայրույթը կշարժեն։ Ընթերցանության հատկացված սրահին մեջ արգիլված է սիկառեթ մը ծխել, կամ սուրճ հոն բերել տալ,— մինչ Բեսդի երկու կողմը, քիչ մը վեր կամ վար, կասկածելի գարեջրատներու խառնակեցիկ աղջիկներ— մրուրը մեծ քաղաքին ապականության — անցորդին առջև կպարզեն իրենց հոսնական նայվածքները, խենեշ և լպիրշ նայվածքը։

Հայեր ու հույներ միայն կհաճախեն Բեսդը, ավելի շատ լուսավորչական և օրթոդոքս, քան բողոքական։ Վարժարանե նոր ելած երիտասարդներ են ատոնք մեծ մասամբ, անգործ դասատուներ, գործ փնտրող գրագիրներ, պաշտոնի հետամուտ բողոքական քարոզիչներ։ Հոն կնստին ժամերով, պատուհանին մոտ, միշտ հուսալից և ակնկալու, ուշադիր՝ դռան յուրաքանչյուր բացվածքին և ներս մտնող մարդուն, որ գոգցես իրեն հետ պիտի բերե այնքան ատեն ի վեր ըղձացված դասերը կամ պաշտոնը։ Ու մերթ, քիչ մը շարժում դնելու համար կարծես այդ խաղաղիկ միօրինակության մեջ, կրոնական վիճաբանություններ կլինին, որոնց մեջ հույները աչքի կդարնեն միշտ իրենց շարժվածքին ուժգնությամբ ու ձայներուն բարձրությամբ։ Եղած չէ սակայն վիճաբանություն մը, որ կռիվով վերջանա. այդ մթնոլորտին մեջ չես գիտեր ինչ կա յուղոտ ու թմրեցուցիչ, որ կազդե ամենեն աշխույժ մարմիններուն ու ամենեն կրակոտ ուղեղներուն վրա։

Ընթերցարանին մեջ, տախտակորմով բաժանված մաս մը կա, որ Բեսդի տեսչուհիին և անոր օգնականին հատկացված է։ «Ավետարանական» միսիոնարուհիներ են ատոնք։ Իրենց մանկական ու միանգամայն վաղնջուց մագաղաթի պես ճմրթկած դեմքը պատկառանք ու կարեկցություն կազդե քեզի։ Այդ կապույտ աչքերուն խորը կյանքի ի՞նչ աղեխարշ տռամ մը կհայտնվի դիտո-

զին։ Կզգաս, թե հոգին ո՛ր աստիճան տիրապետած ըլլալու է մարմնին,— արդի ժամանակին մեջ ուր երազեն ավելի գործը, անդորրավետ խաղաղութենեն ավելի մարմնատանջիկ կրքերն ու խանդանքը, վայելքեն ավելի հեշտախտությունը, սերեն ավելի միսը կտիրապետեն հաղթապանծ,— որպեսզի այդ հեգ անգլիացի աղջիկները, կյանքին ամեն հաճույքները արհամարհելով, օտար երկիրներու մեջ գան օտար ու անտարբեր մարդերու նվիրել իրենց ամուլ ծոցի ն բոլոր խանդաղատանքը։

Երբեմն կերթայի ժամերով նստիլ այդ հանգստավայրը. Ղալաթիո անտանելի ժխորին ու եռացող ոգևորության մեջ, անշարժ արձանի մը տպավորությունը կընե այդ տունը, ուր գլուխները՝ մարմարյա սեղաններուն վրա հակած լռելյայն՝ կկարդան Արևելք, Ավետաբեր, Բյուրակն և անգլիերեն թերթեր։ Ընթերցարանին մեջ ալ մեկ-երկու հոգի կգրեն մատենադարանին առջև։ Հոգնած ուղեղներու համար հարմարագույն տեղն է ատիկա Ղալաթիա։ Հիմակ ա՛լ առջի ախորժը չունիմ այդ վայրին համար։ Օր մը սարսուռով գուրս ելած եմ անկից։

Անցյալ նոյեմբերին տեղի ունեցավ ասիկա։ Հինգշաբթի օր մըն էր, լավ կհիշեմ։ Տրտում օդ մը կար. առջի իրիկվընե ի վեր անձրև տեղացած էր, և Ղալաթիո սալահատակներուն աղտոտ կապարագույն ցեխը աչքի զարնող հակապատկեր մը կկազմեր երկրնքին պայծառ կապույտին հետ, որ թոնրնկեց ամպերեն աղատված՝ անհունության մեջ կպարվեր իր անծայրածիր մերկությունը։ Կծու ցուրտ մը կտիրեր, ու քամին բյուր սլաքներով կասղնտկեր մարմնին հոլանի մասերը։ Բեսդը մտա հանդարծ, չեմ գիտեր ինչո՛ւ։ Մարմարյա սեղանի մը առջև անցա, ուր նստած էր բարեկամներես մին, մշտենջենավոր այդ ներողամիտ հաստատության, ու պատկերազարդ հավաքածո մը առնելով սկսա մեքենաբար թղթատել։ Նույն բազմությունը հոն էր միշտ, անդույր ու անշշուկ, մեղմաձայն խոսակցությամբ զբաղած կամ ընթերցանության մեջ խորասույզ։

Այդ միջոցին ճիշտ քովս եկավ նստավ տասնինը-քսան տարեկան երիտասարդ մը, ֆրանսերեն բարևեց դիմացի բարեկամս, անգլիերեն թերթ մը քաշեց առջևն, փորձեց կարդալ և, երկու վայրկյան ետքը, արհամարհանքով մեկդի նետեց զայն և սկսավ ձեղունը դիտել։

Ուշագրավ դեմք մըն էր, բոլորովին տարբեր այն խաղաղ ու

տարտամ դեմքերեն, որոնց վարժված էր հոն նայվածքս։ Մոլորուն ու խոր աչքեր ուներ, բայց խո՛ր, այնչափ, որ բիբերուն ցոլքը այնպես կվառեր հոն, ինչպես սիկառեթի մը ծայրը գիշերվան խավարին մեջ։ Այտերը այնչափ ներս քաշված էին, ու վտիտ ա՛յնքան, որ բերանին մեջեն զիրար կհամբուրեին կարծես։ Բեղ ու մորուք չուներ դեռ. ցից կղակին վրա հազիվ կերկարեին քանի մը սև թելեր, որոնց հետ կխաղար իր սուր ու ոսկրոտ մատներով։ Նիհար պարանոցը կխրեր ուսերուն մեջտեղ, որոնք երկու կողմեն վեր կբարձրանային պատվարներու նման։ Գլուխը դրած էր եվրոպական կլոր գլխարկ մը, տեղ-տեղ ճմրթված ու ա՛յնչափ աղտոտ, որ տարակույս կունենայիր սկզբնական գույնին վրա։ Բարակ վերարկու մը հագած էր, որ հազիվ մինչև մեջքը կիջներ, և արմուկին ծակերեն միսը կերևնար դժգույն ու ողորմ, ուռուցիկ կապտորակ երակներու գալարումով մը։ Օձիք ու փողկապ չուներ, և աղտոտ շապիկի մը բացվածքեն կերևնային լանջոսկրներուն երկու խոռոչները։

Ընթերցումս թողուցի ու այդ դեմքը դիտեցի։ Այն հեղիկ մարդերուն մեջ հայհոյանք մըն էր այդ երիտասարդը։ Իր վիճակը սքողելու երևույթ չուներ բնավ, մյուսներուն պես, որոնք իրենց վերարկուն մինչև օձիքը կոճկած են միշտ՝ ծածկելու համար փողպատին պակասը կամ շապկին փեթռտուքը։ Աչվրներուն մեջ ո՛չ հույս կկարդացվեր, ո՛չ հուսահատություն. անտարբերություն միայն։ Թշվառության վարժված ըլլալու էր և ատոր մեջ կապրեր սիրահոժար։ Քոթանակ մը չէր թվեր այդ վիճակը իրեն համար, այլ պատմուճան մը։

Կերևնար, որ անգլիերեն ու ֆրանսերեն գիտեր, և սակայն անգործ ըլլալու էր՝ այդ խղճալի կացության մեջ գտնվելու համար։ Ու, մեկեն, ուզեցի գիտնալ իր պատմությունը։ Բնութենեն ու ընկերութենեն անժառանգ այդ պատյանին ներքև ի՞նչ գաղտնիք կար ծածկված։

Բարեկամիս հետ խոսակցության սկսած էի իր կարդացած մեկ հոդվածին վրա, որուն նյութը կպատմեր ինձի, երբ երիտասարդն ալ խոսքի խառնվեցավ, մեր բարքերուն հատուկ վստահալից ընտանությամբ։ Մաքուր հայերեն կխոսեր, ու կերևնար, որ քիչ շատ խնամյալ կրթություն մը առած էր։

Բարեկամս վերստին իր ընթերցանության մեջ խորասուզված էր, և խոսակցությունը վերջ գտած՝ հակառակ կամքիս, երբ երի-

տասարդը, որ երկու-երեք վայրկենե ի վեր աչքերը սեղանին մարմարին հառած էր անքթթթ սեեռումով՝

— Կներե՞ք,— ըսավ հանկարծ. և առնելով ծխախոտի տուփս, որ սեղանին վրա կգտնվեր, սիկառեթ մը բոլորեց ընդփուլթ. վառեց, և դեմքը պահ մը կորսվեցավ ծուխի հորդառատ հորձանքներու մեջ։ Ամենեն մոլեռանդ ծխողներու քով իսկ չէի տեսած այն անհագ ցանկությունը, որով ներս կքաշեր մուխը և հետո դուրս կուտար քթեն, բերնեն, աչքերով հետեելով կապուտակ պարույրներուն, անճառ երանությամբ։ Մոխիրը հետզհետե կիյնար կուրծքին վրա, շապկին բացվածքեն ներս, ու կսահեր նորածիլ թելերուն վրայեն։ Ու սիկառեթը ծխեց մինչև ծայրը, մատներն ու շրթունքները այրելու աստիճան, և երբ վերջապես հարկադրվեցավ նետել, ըղձական նայվածք մը ունեցավ աչվընեներուն խորը։

— Ֆրանսերենեն ու անգլիերենեն զատ ուրիշ լեզու ալ գիտե՞ք,— հարցուցի խոսք մը ըրած ըլլալու համար։

— Այո՛,— ըսավ կերկերյալ ձայնով մը, որ կարծես կքեղբրթեր կոկորդին ձայնական լարերը,— գերմաներեն ալ գիտեմ, քիչ մըն ալ տաճկերեն։

Նորեն նայեցա իրեն. անհանգիստ կերևնար, գլուխը այս ու այն կողմ կշարժեր, ու մերթ նայվածքը կհառեր ծխախոտիս տուփին։

— Սիկառեթ մըն ալ կշինե՞ք,— ըսի։

Պատասխան չտվավ, արդեն իր երկար մատները կխաղային ծխախոտի թելերուն մեջ, ու հաջորդ վայրկյանին իր սիկառեթին ծուխը պահ մը դարձյալ իր դեմքը կծածկեր տեսութենեն։

— Կերևնա, որ շատ կախորժիք ծխելե,— ըսի, առիթ մը ունենալու համար իրեն հետ խոսակցելու։

— Այո,— ըսավ,— կյանքիս էն մեծ հաճույքներեն մեկն է. թող որ թյուրյունը ուրիշ աղեկություն ալ ունի, անոթությունը կանցընե։

— Դեռ ճաշած չե՞ք,— ըսի անգիտակցաբար։

— Չէ՛, երեկ իրիկվընե ի վեր բերանս բան մը դրած չեմ,— պատասխանեց անփութորեն։

Այս անգամ շեշտակի նայեցա իր աչվընեներուն մեջ։ Չէ՛, կատակ չէր ըներ. իր թալկահար և գալարատանջ դիմագծերը ապացույց էին ըսածին։

— Անուննիդ շնորհ կընե՞ք,— ըսի։

— Արմենակ Սիմանյան։

Սիմանյան անունը իմացեր էի, հայ-բողոքական հասարակության մեծահարուստ ու ազդեցիկ անդամներեն մեկուն անունն էր։

— Ազգականություն ունի՞ք Սիմանյան Հակոբ էֆենդիին հետ։

— Հորեղբայրս է։

Զարմանքե զարմանք կգլորեի։ Զորս լեզու գիտեր, երիտասարդ էր, այնչափ հարուստ ազգական մը ուներ, և քսան ժամե ի վեր բան մը կերած չէր։ Ա՛լ անխորհուրդ եղա։

— Ինչպե՞ս կըլլա ուրեմն... որ այս վիճակին մեջ կգտնվիք։

— Է՛հ, ձգեցեք, չարժեր պատմել, կարևորություն չունի։

Նորեն սիկառեթ մը շինեց. և սկսավ մեծ ճարտարությամբ բերնովը օդին մեջ ղրկել ծուխի բոլորակներ, որոնք նախ թանձր ու խիտ, երթալով կանոսրանային, մինչև որ ծիրը կքայքայվեր և աներևույթ կըլլար։

Երբ սիկառեթը սպառեց, ինձի դարձավ և, ժպիտով մը, որ գերեզմանի մը եզրը բուսած ծաղկի մը տպավորությունը ազդեց ինձի՝

— Հը՛, ըսավ, կտեսնեմ, որ հետաքրքիր եք կյանքս գիտնալու։ Կեցիք պատմեմ քանի մը խոսքով։ Նախ և առաջ սա ըսեմ ձեզի, որ ես բողոքական չեմ, չէ՛, բողոքական չեմ։ Թե որ բողոքական ըլլայի, ինձի այս վիճակին մեջ չէիք տեսներ, բայց չուզեցի կամ չկրցա, ձեռքս չէր։ Ամեն ատեն ալ այս վիճակին մեջ գտնված չեմ. ես ալ աղեկ օրեր ունեցած եմ, մաքուր հագված եմ, և խմած թյուրյունս ուրիշեն մուրալու պետք ունեցած չեմ... Չէ՛ մի ըսեք, տեսակ մը մուրալ ալ աս է։ Հիմակ ալ եթե ուզեմ կրնամ ավելի մը կոթ ըլլալ. բայց անա՛նկ զզված եմ կյանքեն, անա՛նկ զզված, որ բոլորովին թող տված եմ ինքզինքս։ Քիչ մը առաջ հորեղբորս անունը տվի, զարմացաք հարկավ, որ անանկ հարուստ ազգական մը ունենալովս մեկտեղ աս վիճակին հասեր եմ. սա գիտցեք, որ իմ դժբախտությանս միակ պատճառը ինքն է։ Հիմակ կհասկնաք։

Լուսահոգի հայրս ալ բողոքական չէր։ Երբ որ հորեղբայրս բողոքականությունը ընդունած էր, հայրս, որ իր կրոնքին վրա շատ հաստատ էր, եղբորմեն բաժանված էր, ու անկից ի վեր քենով էին իրարու հետ, բնավ չէին տեսնվեր։ Հորեղբայրս բախտին բերմունքով առաջ գացած էր, խոշոր վաճառատուններ հաստատած. հայրս առջի խանութպանը մնացած էր, հինգ վաստկելով, հարյուր փառք տալով աստուծո։ Գործը այնչափ աղեկ չէր, նեղ օրեր

կունենար, բայց ակռան կսեղմեր ու եղբորը չէր դիմեր։ Ինձի ալ այդպես մեծցուց։ «Պապերուդ լուս հավատքին վրա խավի կեցիր, օգլում»,— կըսեր երկու խոսքին մեկը։ Մեռած ատեն, միտքես չելլար բնավ, տասներկու տարու էի ան ատեն, անկողնին քովը կանչեց ինձի և շատ մը խրատներ տալեն ետքը վերջին խոսքը սա եղավ. «Նստե՛ Արմենակ, զավակս, ես կմեռնիմ կերթամ կոր, աշխարհքիս վրա մինակ ես, ամուսնադ հելպեր քովը պիտի առնե քեզի, պիտի լոլոզն, պիտի անուշբերնե, ֆախատ չուրանաս հավատքդ, հարդ քեզի օրինակ, չէ նե երկու ձեռքս յախադ ըլլա»։

Հորմես բան մը չմնաց ինձի։ Ա՛ս մեռելի ծախք է, ա՛ս պարտք է, ա՛ս չեմ գիտեր ինչ է, լմնցավ գնաց։ Տասներկու տարու էի, աշխարհքս ինչ էր չէի գիտեր. մայրս արդեն մեռած էր, չըսի կարծեմ։ Նույն իրիկունը հորեղբորս կողմեն մարդ մը եկավ առավ զիս և իրենց տունը տարավ։ Չմոռնամ ըսել, որ հորեղբայրս հորս մեռելին եկած չէր։ Դրացիներ պատվական մարդ մը կարգադրած էր ամեն բան։

Մինչև ան ատեն չէի տեսած հորեղբայրս։ Գլխարկավոր, երկու քովեն մորվոք, անգլիացիի դեմքով ցուրտ մարդ մըն էր։ Դիմացը նստեցուց ինձի, քիչ մը ատեն պատեցավ սենյակին մեջ և ըսավ, որ պետք էր հետևյալ օրվան համար պատրաստվեի Բոպերդ կոլեջը մտնելու, գիշերօթիկ։

Չորս տարի կեցա հոն. կյանքիս էն անուշ, էն խաղաղ ժամանակը ան ատեն եղած է։ Դասերուս մեջ առաջիններեն չէի ալ նե, վերջիններեն չէի։ Կաշխատեի, դասատուներս և ընկերներս կսիրեին զիս. հոն սորված եմ, ինչ որ գիտեմ։ Ամսագլխուն հորեղբորս տունը կերթայի։ Շատ չէի համակրեր իրեն, բայց չէի ալ ատեր։ Միշտ առջի ցուրտ վարմունքը կբռներ ինձի նկատմամբ, հառաջադիմությանս համար գոհունակություն կհայտներ ու կհորդորեր ա՛լ ավելի աշխատիլ։ Այո՛, շատ հանգիստ էի այդ տանը մեջ, և սակայն երբ պետք կըլլար հոն երթալ՝ սիրտս կսեղմվեր։ Գլխավոր պատճառը ան կիրակի օրերու աղոթքներն էին, որ կերգվեին հոն։ Հորեղբորս մեծ աղջիկը բիանոյին առջև կանցներ, ամենուն ձեռքը մեյ մեկ երգարան, ու մեծ ու պզտիկ, դուրսեն ալ հրավիրված մեկ քանի բողոքական ընտանիք միասին կսկսին երգել ժամերով։ Գիրք մըն ալ իմ ձեռքս կուտային, երդված կտորին տեղը կցուցնեին և կստիպեին, որ ձայնակցիմ։ Եվ սակայն ի՞նչ ընեմ, ներսես չէր ի գար, օր մը ընկերացած չեմ իրենց երգերուն, հակառակ

հորեղբորս ինձի ազդած պատկառանքին։ Լեզուս բերնիս փակած էր կարծես. քիչ-քիչ գիրքը վար կառնեի, մեկդի կդնեի, ու երեսս անդին կդարձնեի։

Տասնվեց տարու եղա այսպես. թեև բաղդատաբար պզտիկ, սակայն վիճակիս կատարյալ գիտակցությունը ունեի. դժբախտությունը կհասունցնե մարդս։ Ամսագլխու մըն էր, դարձյալ տուն եկած էի։ Կիրակի առտուն, հորեղբայրս իր սենյակը կանչեց ինձի. իր դեմքին վրա այնչափ ծանրություն ու խստություն տեսած չէի երբեք, մինչև իսկ ամենեն ջերմեռանդ աղոթքներուն ատեն։— «Արմենա՛կ,— ըսավ հանկարծ խիստ ու շուտ ձայնով,— տարիքդ ա՛լ եկավ լեցավ, հիմակ չարը բարիեն կրնաս որոշել։ Մինչև հիմա ձայն հանած չէի, որովհետև կուզեի, որ նախ լավ մը վարժվիս՝ ապա ընդունիս մեր կրոնքը։ Կհասկնաս անշուշտ ըսածներս. վայելուչ է, որ դուն ալ քրիստոնյա ըլլաս։ Վաղը անունդ արձանագրել կուտամ մեր Աղգապետարանը և մնացյալ գործողություններն ալ մեկ քանի օրեն կկատարենք»։

— Ես ատանկ բան չեմ կրնար ընել,— պատասխանեցի հանդարտ, բայց հաստատ ձայնով։

Կարծեցի, որ վրաս պիտի վազեր։ Դեմքին ո՛չ մեկ գիծը փոխվեցավ, տասը վայրկենի մը չափ կեցավ, մտածեց, հետո.

— Դուն վաղը նորեն կոլեջ գնա, եկող ամսագլխուն կկարդադրենք. բայց գիտցած եղիր, որ այս բանը պիտի ըլլա։

Ան ամիսը, հավատա՛, սուտ չզրուցեմ, ամեն գիշեր երազի մեջ տեսա հայրս, որ ինձի կնայեր մերթ աղաչական, մերթ զայրացկոտ աչքերով։ Եվ բողոքակա՞ն ըլլա՞յի. չէ՛, կարելի բան չէր ատիկա։ Հաջորդ ամսագլխուն, երբ տուն դարձա, հորեղբայրս նորեն իր սենյակը տարավ ինձի և այս անգամ անուշ ձայնով մը.

— Է՜հ, Արմենակ, հարկավ մտածեցիր,— ըսավ։— Կնայիմ, որ դեռ տղա ես. աշխարհքիս վրա համառությենեն օգուտ մը չկա։ Ես քու ապագայիդ համար աղեկ խորհուրդներ ունիմ։ Տիրոջը շնորհիվ շնորհքով մարդ մը կըլլաս։ Քեզի Եվրոպա կղրկեմ իմ առևտրական գործերուս համար։

Ու կռնակս ծեծելով.

— Ե՞րբ երթանք Աղգապետարան։

— Ներեցեք, հորեղբայր,— պատասխանեցի,— արդեն ըսի ձեզի։ Ես հավատքս չեմ կրնար փոխել։

Այս անգամ գեփ դեղին կտրեցավ, կերևնար, որ նայվածքս

ու շարժվածքես հասկցավ, թե չպիտի կրնա հաղթել ինձի, թեւես թաշեց ու դռնեն դուրս հրելով՝

— Անանկ է նե ա՛լ աս տունը գործ չունիս,— պոռաց։— Գորսվե՛, մեյ մըն ալ երեսդ չտեսնամ։ Նայինք ան քու սիրած մարդիկդ ինչպե՞ս պիտի պահեն քեզի։ Հայրդ ալ քեզի պես էր, բայց վերջը անոթութենեն սատկեցավ։

Ինքզինքս զսպեցի հորս հիշատակին դեմ եղած այս նախատինքին վրեժը չլուծելու համար, սանդուղներեն վար վազեցի խենթի պես, հազիվ խելք ըրի գլխարկս առնելու փողոցին դռանը քովեն և դուրս նետվեցա։

Երիտասարդը ընդհատեց պատմությունը, գլուխը աջ ձեռքին մեջ առավ, բութամատովն ու ցուցամատովը սեղմելով քներքին երակները։ Շատ դառն հիշատակներ արթնցած էին անշուշտ մըտքին մեջ։ Զինքը ուրիշ բանով զբաղեցնելու համար սիկառեթ մը շինեցի և ծխախոտի տուփը իրեն առջև քշեցի։

— Չէ՛,— ըսավ,— հերի՛ք է, ա՛լ չեմ ծխեր, սիրտս կճմլե կոր։ Գլուխս ցավցուցի, շուտ մը պատմեմ լմնցնեմ։

Պահ մը ամփոփեց մտածումները, ու շարունակեց, այս անգամ արագ ու հապճեպ, ձեռքը միշտ գլխուն տանելով ու ափովը մազերը քներքին վրայեն ուժով տրորելով դեպի ետ, կարծես իբր վանելու համար գեշ երազի մը տպավորությունը։

— Ան օրեն մինչև հիմակ ան տունը ոտք կոխած չեմ։ Դուրս ելլալես ետքը չեմ գիտեր ուր գացի, երկու-երեք ժամ պտտեցա ասդին անդին։ Գրպանս նայեցա։ Երկու մեճիտիեի չափ ստակ կար։ Ո՞ւր պիտի երթայի, ի՞նչ պիտի ընեի։ Մտածեցի, որ մորս մեկ հեռավոր ազգականը կար, շոգենավով վար իջա և գիշերը անոնց տունը գացի։ Արմացած զարմացած մնացին, երբ ըսի, որ ա՛լ հորեղբորս տունը չպիտի դառնայի, բայց պատճառը չզրուցեցի։ Ըրածս չպիտի հասկնային, խեղճ մարդիկ էին, պիտի մեղադրեին զիս, կամ խրատ տալու պիտի ելլային։

Հետևյալ օրվընե Պոլսո սալահատակները իմ սիրական տեղանքս եղան։ Առտվընե մինչև իրիկուն կպտտեի, գիշերն ալ հոգնած դադրած անկողին կիյնայի։ Գլուխս զարնվածի պես բան մըն էի եղեր։ Դեռ ինձի պատահածը չէի կրնար կոր հասկնալ, իմ զզտիկ գանգիս մեջ չէի կրնար կոր սեղմեցնել ատոր բացատրությունը։ Գեշը ան եղավ, որ ատ տարիքիս մեջ, ուր դեռ ուրիշները բանդալոնց կմաշեցնեն գրասեղաններու վրա, ես ինքս իմ գլուխս

մնացի՝ կյանքին վրա շատ գեշ գաղափարով։ Ամսե մը ետքը, ասդին-անդին իյնալով, կրցի գործ մը գտնել կեսարացի վաճառականի մը քով. բայց չկրցա հոն մնալ. մարդը իր ուշախին պես գործածել կուզեր զիս. վարժված չէի ատ կյանքին, ձգեցի գացի։ Անկե ետքը ուրիշ տեղ գտա, բայց տեղ մըն ալ չկրցա մնալ։ Սիրտս նեղցեր էր։ Երկու-երեք ամիս ետքը արդեն ելած էի այն ազգականներուս տունեն, որոնց վրա չէի ուզեր բեռ ըլլալ, ու հոս մոտերը պզտիկ սենյակ մը վարձած էի տան մը է՛ն վերի հարկը, տանիքին տակ։

Հինգ տարի անցած է անկից ի վեր, ու չեմ գիտեր, թե ի՛նչպես ապրած եմ։ Սոսկալի վայրկյաններ ունեցած եմ. զարմանք է, որ մինչև հիմա չեմ մեռցուցած ինքզինքս։ Հետզհետե ինկա, ու գեշ ինկա։ Առջի խղճահարություններս չմնացին, կամքիս հակառակ բաներ ալ ըրի, ասդիինին-անդիինին դիմեցի, բայց ուրիշ կերպ կարելի չէր։ Զմուրացի մինակ, թեև անոթի մնացի։ Միտքես սակայն օ՛ր մը չանցուցի հորեղբորս դիմել։ Ինքը քանի մը անգամ գրեց ինձի, որ եթե ուզածը ընեի, կներեր ինձի ու նորեն քովը կառներ։ Պատասխան անգամ չտվի։ Եթե իրեն դիմելու աստիճանին ըլլամ, կբռնեմ ծովը կնետեմ ինքզինքս, կլմննա կերթա։

Հիմակ ահա այս կերպով կապրիմ, թե որ ասոր ապրիլ կըսեն։ Մեկուն մեկալին գիրերը կգրեմ երբեմն-երբեմն, ձեռքս քանի մը ղուրուշ կանցնի. հոս մոտերը ճաշարանի մըն ալ լիստաները կգրեմ և իրիկվընե իրիկուն երկու պնակ կերակուր կուտան ինձի։ Բան մըն է կերթա կոր, թող կուտամ կոր որ երթա։ Աղեկ կամ գեշ ըրած ըլլալս չեմ գիտեր, բայց խիղճս հանդարտ է։

Ոտք ելավ ընդոստ ու ձեռքս սեղմելով.

— Շատ խոսեցա ու փորս անոթեցավ,— ըսավ խնդալով։— Երթամ քիչ մը բան ուտեմ։ Մնա՛ք բարով։

Ու դռնեն դուրս ելավ, և տեսա, որ կծու ցրտին դեմ պատսպարվելու համար վերարկուին օձիքները դարձուցած և ուսերը տնկած, դիմացի փողոցն ի վար սկսավ՝ քալել աճապարանքով։

Տակավին հինգ վայրկյանի չափ մնացի Բեսդը, կարծես գամված այդ սեղանին առջև։ Վերջապես ոտք ելա։ Դուրս ելած ատենս աչքիս զարկավ դռան ճակատը դրոշմված արձանագրությունը. «Աստված սեր է», և անոր հանդիպակաց կողմը մյուս վերտառությունը. «Ամեն ինչ որ կընեմ՝ տիրոջը փառքին համար է»։

1889

ԴՐԱՑՈՒՀԻՆ

Առ Ե. Տեմիրճիպաշյան

Այն իրիկունը՝ Սկյուտարի վերջին շոգենավին ստորնահարկի սրահն ինչ։

Դեկտեմբերի ամպրոպահույզ իրիկուն մըն էր. տեղրեը կտեզար մեծակայլակ ու մենակերպ, և մութ կապարագույն կոհակներուն զարնվելով՝ եռացող պղպջակներու խուլ շառաչյուն մը հանուշ կբերեր։ Հովին—անձրևի հավիտենական թշնամուն—հորձանքները կուգային. անընդհատ խառնակել ու ավրշտկել այն ջրեղեն ֆանոնավոր սյուներն, որք միության անհատնում գծեր կհորինեին՝ երկինքեն մինչև երկիր ձգված։

Շատ քիչ բան ծանոթ է ինձ այնքան սաստկապես մելամաղձիկ, որքան վերջին շոգենավու մը ստորնահարկը, մանավանդ այդ տեսակ օդով մը։ Մեծ մասամբ շուկայի մարդիկ են անդ նստողները, հոգնած դաղրած ստեյա բազմոցներուն վրա փռելով իրենց մարմնոր խոշոր խոնջեանքը։ Տեսակ մը արհեստական գիշեր կտիրե այնտեղ, որուն լուսինն է ձեղունեն կախված լամպարն՝ իր դեղնաշարթ պլպլուքով և որուն աստղերը կկազմեն գլանիկի ծայրերն, որք սրահին ամեն կողմեն կծակեն այդ խավարը։ Ո՛չ լրագիր ֆկարդան հոն, և ո՛չ կխոսին ու կխնդան բարձրաձայն. յուրաքանչյուր ոք, իր մտածմանցը մեջ խորասույզ, անհամբեր իր ընտանեկան հարկն երթալու ի գլուխ վառարանին, անսահման հոգնության նայվածքներ կպտտցնե չորս բոլորը։ Անգիտակից թմրություն մը կպատե զքեզ այդ եղկ մթնոլորտին մեջ, որ զքեզ քու մեջդ կամփոփե և ներքին աշխարհ մը կստեղծե քեզ համար։

Բարեկամ ու ծանոթ չկար քովս, և կիսովին ետիս դարձած, զոլոշուտ պատուհանեն կդիտեի ալյաց գիսախռիվ կատարներն, որք նուգային անընդհատ զարնվիլ և խոլական գծեր ձևացնել այդ ապակվույն վրա, իզուր իրենց մոլեգնությունը փորձելով այդ գյուրաբեկ ու միանգամայն գերազանցապես հաստատուն մակերեսույթին վրա,— երբ զգացի, որ մեկը եկավ նստավ քովս. ասդին դարձա ընդոստ, ու, կես մութին մեջ, ճանչցա զինքը. Միհրանն էր, դպրոցական վաղեմի ընկերներես մին, զոր երկու-երեք շաբաթն ի վեր չէի տեսած։

— Դո՞ւն ես, Միհրան,— ըսի զվարթությամբ,— բարիրիկուն։

— Աստծու բարին,— պատասխանեց այնպիսի շեշտով, որ շատ տրամադրություն ցույց չէր տար խոսակցությունն ատկից ավելի շարունակելու։

— Ինչպե՞ս ես, աղե՞կ ես։

— Շնորհակալ եմ, հանգիստ եմ։

— Շատոնց է չես երևցած։

— Ը՞հ։

Այո՛, ակներև էր, անհանգիստ կընեի զինքը։ Շրթանցը շարժվածքեն՝ որք հազիվհազ կբացվեին քանի մը բառեր թոթափելու համար, և ձայնին թույլ ու քաշքշուկ շեշտեն կերևեր հայտնապես, թե այդ վայրկյանին նախամեծար պիտի համարեր ինքնիրեն մնալ։ Եվ սակայն շատ տարվան բարեկամներ էինք, գրեթե մտերիմ։ Դպրոցական երկար շրջան մը իրարու կապած էր զմեզ հիշատակաց անքակտելի կապերով։ Դասարանին մեջ քովս կնստեր, և որովհետև այնչափ աղեկ չէր դասերուն մեջ՝ ինձմե կընդօրինակեր իր ջարադրություններն ու պարտականությունները։ Ընկերներս և ես, ամենքս ալ կսիրեինք զինքը։ Գիրուկ ու կլոր գեմքով խոշորկեկ աղա մըն էր, բարի, չափազանց բարի, այն տիպարներեն մին, որոց կպատշաճի ժողովրդական նկարագեղ բացատրությունը. «Բերանը ա՛ղ դիր մորթե՛»։ Դպրոցեն ելլելե վերջն ալ դադրած չէր մեր բարեկամությունը։ Փաստաբանի մի գրասենյակն էր ի Ղալաթիա, բավական աղեկ վիճակ մը ուներ։ Ուրիշ ատեններ, երբ շոգենավին մեջ տեսներ զիս, օձիքս թող չէր տար, և, զվարթ ու շատրույց, մոռցնել կուտար շոգենավին գանդաղ ընթացքն ու անիվներուն դղրդյունն, որք ջուրը կծեծեն հուսահատեցուցիչ միօրինակությամբ։ Այն իրիկուն ուրեմն ինչո՞ւ հեռու կփախչեր ինձմե։

— Հոգնած կերևնաս կոր, Միհրան,— ըսի։— Չէ նե մի հիվանդ ես։

— Չէ՛, բան մը չունիմ։

Լամպին լույսով զինքը դիտեցի ուշադրությամբ։ Նույն խաղաղ ու անմեղ դիմագծությունն էր միշտ։ Աչվընեքուն մեջ սակայն խուզարկու անհանգարտություն մը կար, թարթիչներն անդուլ կելլեին կիջնեին ջղաձգաբար։ Ձախ ձեռքին ափովը ճակատը կշփեր շարունակ։

— Չէ՛, մի զուրցեր, դուն բան մը ունիս և ինձի չես ըսեր կոր։ Ինձմե բա՞ն պահել սկսար։ Քեզի այսպես տեսած չէի երբեք։ Ըսե՛, վի՞շտ մը ունիս։

— Չէ՛,— կրկնեց խուսափողական կերպիվ։

— Այդ չէեղ կհասկցվի, որ չեմ սխալեր։ Ներսիդին բան պահելը աղեկ չէ։ Ինձի չհայտնես, որի՞ պիտի հայտնես։ Ըսե՛, կմխիթարվիս, սիրտդ կթեթևնա։

Այս անգամ երեսս նայեցավ անսահման խանդաղատանքով ու ձեռքս բռնեց։ Հակառակ ցուրտին, իր ձեռքը կայրեր։

— Այո՛, աղեկ չեմ,— ըսավ։

Ու ալ չկրցավ զսպել ինքզինքը. երկար շունչ մը առավ. սիրտը պիտի պոռթկար կարծես։ Ու հուզմունքեն դողդոջուն ձայնով մը.

— Ուրիշներուն չէի զուրցեր, որովհետև վրաս պիտի խնդային, բայց քեզի կըսեմ։ Մեր սենյակը եկած ես. փողոցին վրա պատուհանին քով կնստիմ միշտ, կամ թե՝ կնստեի ասկից առաջ։ Դիմացը կարգ մը տուներ կան, որոց տակը խանութ է։ Օտարազգի ընտանիքներ կբնակին այդ տուները, չես գիտեր աշխարհքիս ո՞ր կողմերեն եկած ինկած այդ տեղվանքը։ Ղալաթիո մեջ խանութ ունեցող մարդոց ընտանիքներ են ասոնք, որք տեղվո մոտության պատճառով հանձն առած են այդ խղդուկ շենքերուն մեջ գալ մաշեցնել իրենց կյանքը։ Ծրբեմն-երբեմն պատուհաններուն վանդակներուն բացվածքեն կիներ ու աղջիկներ տեսած էի, բայց կարևորություն չէի տված։ Կճանչնաս ինձի։

«Ասկից յոթ ութ ամիս առաջ, ապրիլին էր կարծեմ, օր մը դուրսը նստած ատենս, տեսա, որ ճիշտ դիմացի պատուհանին առջև պզտիկ աղջիկ մը նստած կար կկարեր, գլուխը կախած։ Ա՛լ ավելի ուշադրություն չդարձուցի։ Հետևյալ օրը նորեն իր տեղն էր, ու կաշխատեր շարունակ, առանց գլուխը վեր վերցնելու։ Հետևյալ շաբթուն, հետևյալ ամսուն, ամեն օր անխախտ իր տեղն էր։

Քիչ քիչ նայվածքս վարժեցավ իրեն առտուն եկածիս պես, առաջին անգամ աչքս հոն կերթար մեյ մը։ Ինքն ալ իմ ներկայությունս նշմարած էր։

Կամաց-կամաց համակրություն սկսա ունենալ այդ աշխատասեր պզտիկ աղջկան համար, որ ասեղը ձեռքեն չէր թողուր։ Ուշադրությամբ զինքն սկսա դիտել։ Տասնհինգ տարեկան կար չկար, սիրուն, անուշ դեմքով. երեսը գույն չկար, ճիշտ իմ սիրածիս պես, քիչ մը նիհարկեկ, խոշոր կապույտ աչվներով. մազերը դեղին էին, բայց աչքի զարնող դեղին մը, ոսկիի գույն. առջևի կողմեն այնպես կշտկեր զանոնք, որ ամբողջ դեմքը կշրջանակվեր պզտիկ խոպոպիկներով. աստվածածնի պզտիկ դեմք մը, որ համբույրի մը մեջ

պիտի սեղմեր։ Հիվանդի այնպիսի դեմք մը ուներ, որ առաջին անգամեն սրտիս դպավ. գլուխը ծռած ատեն, ճակատին ուռեցած կապույտ երակները կերևնային սուր աչվներուս։

Հետզհետե համարձակությունս եվելցավ. եկածիս պես իրեն կնայեի, ինքն ալ ինձի կնայեր մեյ մը։ Պատուհանը դիտմամբ աղմուկով կբանայի առտուները, որ եկած ըլլալս հասկնար։ Օր մը բարևեցի զինքը գլխովս. անուշությամբ ընդունեց բարևս։ Ավելի առաջ չուզեցի երթալ։ Առտուն կուգայի զինքը կբարևեի, և, մինչև իրիկուն, ինք իր պատուհանին առջև, ես իմ պատուհանիս առջև, իրարու կժպտեինք՝ երբ ինք կարելեն կհոգներ, ես ալ գրելեն։ Քրոջ ու աղբոր պես բան մըն էինք եղեր։ Նորեն կըսեմ քեզի, պատուհանե պատուհան գռեհիկ սիրահարություն մը չէր, ինչպես կպատահի. չէ՛, պարզ բան մը, որ կբավեր իմ հանդարտ սրտիս։ Այդ դեմքին այնպես վարժված էի հետզհետե, որ եթե զինքը օր մը չտեսնեի, այնպես պիտի տխրեի, երբ իրիկունը տուն երթալով մորս կամ քրոջս դեմքը չտեսնեի։

Իր վիճակեն գոհ կերևնար. երբեմն-երբեմն քթին տակեն երգ մը կմռլտար, որուն հեռավոր շեշտերը մինչև ականջս կհասնեին։ Հետո ասեղը ցույց կուտար հուսահատությամբ. այո՛, կզգայի, իր ասեղին մեն մի հարվածը մեկ-մեկ կաթիլ կպակսեցներ իր արդեն պակաս արյունեն։ Դեղին էր, ա՜խ, շատ դեղին։

Օր մը, միտքս չելլար, ամառվան հրաշալի օդ մը կար, ինքզինքս ելած, համբույր մը ղրկեցի իրեն ձեռքովս. մատով սպառնացավ ինձի, ու համբույրս չընդունեց։ Առաջին ու վերջին հանդգնությունս եղավ այս։ Ինքն ալ չէր ուզեր մեր մտերմության հանգամանքը փոխել, և ես եղածովը շատացա։ Ո՛չ իր անունը գիտեի, ո՛չ ի՞նչ ազգե ըլլալը։ Եթե ուզեի կրնայի իրիկուն մը սպասել իրենց դռանը առջև, իրեն ո՛վ ըլլալը հասկնալ, մեր բարեկամությունն ավելցնել. չէ՛, չէի ուզեր. այդչափ երջանկությունը կբավեր ինձի։

Երկու շաբաթ առաջ, առտու մը դարձյալ եկած ատենս դիմացը նայեցա և զինքը չգտա։ Օդերը ավրվելեն ի վեր, գոց պատուհանին ետև կաշխատեր։ Սիրտս ճմլվեցավ. այն օրը ամբողջ աչքս մեյ մը թուղթիս վրա էր, մեյ մը դիմացը. հետևյալ օրն ա՛լ հոն չէր, հաջորդ օրն, ամբողջ շաբաթը։ Ինչ ընելս չէի գիտեր. կյանքիս մեջ պարապ մը կզգայի, զոր ոչ մեկ բանով չէի կրնար կոր լեցնել։

Ինքնիրենս կըսեի, թե հիվանդ ըլլալու էր մեկ քանի օրվան համար, և ասով կմխիթարեի ինքզինքս։

Այս չորեքշաբթի, երեք օր է անկից ի վեր, նորեն պատուհանին մոտ նստած էի, մեկ աչքս դուրսը։ Սքանչելի օդ մը կըներ առջի օրվան անձրևներեն ետքը. ամառվընե օր մըն էր մնացեր։ Հանկարծ փողոցեն եկեղեցական երգերու շփոթ աղմուկ մը լսեցի. բնազդաբար, պատուհանը բացի և գլուխս դուրս ծռեցի...»։

Բարեկամս կանգ առավ հանկարծ։ Շրթանցը վրա ժպիտ մը ուներ հիմակ, տարտամ, անստույգ, անբացատրելի ծալք մը, որ բառով մը չկրնար սահմանվիլ, խնդության արտահայտություն ու լալու պատրաստականություն է միանգամայն։ Ա՛լ երեսս չէր նայեր, աչվրները կարծես հիմակ կհետևեին հեռավոր տեսիլքի մը։ Ու երազի մը մեջ խոսելու պես շարունակեց.

— Այո՛, ի՛նքն էր, դիմացի աղջի՛կը, հոն պառկած, դագաղին մեջ։ Հույն քահանաներ կհետևեին դագաղին, ու ան ատեն առաջին անգամ ըլլալով հասկցա, թե հույն էր ինքն ալ։ Ճերմակ մուսլինե շրջազգեստ մը հագցուցած էին իրեն, ճերմակ տանթելներու մեջ առնված էր գլուխը, բայց իր դեմքը անոնցմե ա՛լ ավելի ճերմակ էր։ Մեռա՞ծ մի, այդ աղջիկը. չէ՛, հավատալս չէր գար։ Ինձի այնպես կերևնար, որ իրեն կես բաց աչվրները, որոնք դեպի վեր ուղղված էին, ինձի կնայեին տակավին իրենց խենթեցնող անուշությամբը, և իրեն կուսական բարակ կուրծքին վրա խաչաձև դրված ձեռքերուն մեջ ասեղ մը կար կարծես, ու մատները պիտի շարժեին զայն հի՛մակ, անմի՛ջապես։ Արևն ալ, տանթելներուն մեջեն տեղ-տեղ ստվերներ թափելով իր դեմքին վրա, կենդանության հով մը կուտար իրեն։ Մեռա՞ծ մի, չէ՛, կարելի չէր։ Իրեն շրթունքներն ալ, որոց բացվածքեն կերևնար ակռաներու շարքը, համբույր մը չէի՞ն զրկեր ինձի։

Հոն կեցած էի քար կտրած, մարմինս ավելի պաղ պատուհանին երկաթներեն, որոնց կոթնցուցած էի գլուխս։ Քահանաներուն ու տիրացուներուն խռպոտ շարականները չէի լսեր ու դագաղին ետևեն եկող մարդիկը չէի տեսներ բնավ։ Աչվրներս չէի կրնար կոր բաժնել անոր դեմքեն։ Վայրկյան մը չտևեց այս, բայց սա գիտեմ, որ տասը տարվան դեպքեր չպիտի կրնային այնքան ազդել ուղեղիս վրա, որչափ այդ բոպեական թափորը։ Ինքնիրմես ելած էի։ Դագաղը կամաց-կամաց հառաջանալով անհայտ եղավ փողոցին ծայրեն, ու ինձի այնպես կուգար, թե սրտես պատառ մը կտաներին այդ սև մարդիկը։

Չեմ գիտեր որչափ ատեն հոն մնացի այդպես. գլուխս չէի կրնար կոր բաժնել այդ երկաթներեն. այն փողոցին անկյունին մեջ բան մը պատահած էր, տխուր ու սոսկալի բան մը, խառնափնթոր երազի մը տպավորությանը պես, որ բոլոր մտածումներս կտարտղներ։

Դուռը բացվեցավ հանկարծ և ինքզինքս թոթվելով ետիս դարձա. հաճախորդ մը եկած էր կարևոր տեղեկություն մը հարցնելու. մեկ քանի խոսքով ճամփեցի զինքը. մարդը զարմացմամբ երեսս նայեցավ ու ձայն չհանած դուրս ելավ։

Դրասեղանիս առջև անցա մեքենաբար. ստիպողական նամակ մը կար գրելիք. ութ անգամ սկսա գրել. ութ անգամ ալ պատռեցի. գաղափարներս չկրցա բնավ ամփոփել։ Հուսահատությամբ մեկդի նետեցի գրիչը, սենյակին դուռը գոցեցի և կանուխկեկ տուն դարձա. տունը ըսի, որ գլուխս կցավեր քիչ մը, և պատառ մը բան ուտելուս պես անկողին մտա։

Հետևյալ օրը նամակ մը գրեցի սենյակը և գործի չիջա։

Այսօր գացի սենյակը։ Ներս մտնելուս պես նայվածքս դիմացի պատուհանին կողմը գնաց. ճիշտ նույն տեղը ուրիշ աղջիկ մը եկեր նստեր էր, ու ան ալ կկարեր գլուխը կախած, բայց կապկի ձագի պես բան մըն էր, սեփ սև, թափթփված հագուստներով. գլուխս ասդին առի, և անմիջապես գրասեղանս սենյակիս մյուս անկյունը տարի, ուրկից դիմացի պատուհանը չերևնար։ Մինչև իրիկուն անգամ մը փողոց չնայեցա, ասկե ետքն ալ չպիտի նայիմ։ Ի՞նչ ընեմ, սիրտս կտոր-կտոր կըլլա կոր քանի միտքս կբերեմ մեռնողին դեմքը։

Շոգենավը մոտեցած էր և քայլափոխներու դղորդը կզգայինք մեր գլխուն վերև խուլ շշուկով։

— Կներես,— ըսավ,— եղբայրս վերը ինձի կսպասե, երթամ գտնեմ զինքը։

Ձեռքս սեղմեց տենդային սարսուռով, և ընդհուպ տեսա իր լայն ուսերուն կորսվիլը աճապարող բազմության մեջ։

1889

ԽԱՉԱԽՃԻՆ

Մութ ու մռայլ գիշեր էր։ Դեկտեմբերի կծու հով մը կոռնար այսահար, հոն, Սկյուտար, Գարաճա-Ահմետի գերեզմանատան նոճիներուն մեջեն, որոնց գալարատանջ հեծեծյունները օդը կլեցնեին։ Գիշերապահը ժամը վեց կզարներ ս. Կարապետ եկեղեցիին մարմարյա սեմին վրա։ Գիշերվան այդ մենության մեջ, այդ մենակերպ հնչյունը, որ մեկ քանի վայրկյանը անգամ մը կկրկնվեր, մարդկության մեկ ողբը կթվեր՝ բնության ընդհանուր կոծին խառնված,— ողբը հեգ գիշերապահին, որ այդ ցրտասարսուռ գիշերով կատաղի հովի դեմ կպարզեր իր կուրծքը, ու կյանքն ալ գուցե։

Շրջակա տներուն մեջ, որոնց ուրվագիծերն ա՛լ չէին որոշվեր միահեծան խավարին մեջ, ա՛լ լույս չէր մնացած։ Ս. Կարապետ եկեղեցիին բարձրադիտակ զանգակատունը միայն կպարզեր իր ուրվատեսիլ կատարը, ու անոր ճիշտ դեմը, թափուր գետնին մեջ, ուր ժամանակավ այրած տներու փլած պատերը միայն կան ցանուցիր, հաղթ նոճի մը իր ցցունազարդ գագաթը կխոնարհեցներ մռնչող հովին տակ։

Գիշերապահի ողբը նորեն լսվեցավ բնության անհուն աղաղակին խառնված. մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛ր, հի՛նգ, վե՛ց, յո՛թը։ Այդ մարդը միանվորիկ կհսկեր բնության տագնապին։

Այդ խավարին ու մրրկին մեջ ինքը միանակ չէր սակայն։ Ս. Կարապետ եկեղեցիին դիմացի տափարակին մեջ, հաղթապանծ նոճիին տակ, մարդ մը կանգուն կսպասեր չորս ժամե ի վեր։

Քսաներեք-քսանչորս տարեկան երիտասարդ մըն էր, և ժամը հինգեն ի վեր հոն կսպասեր փախստյա ծխախոտի, զոր նույն գիշերն իսկ պիտի ստանար Էրենքյոյեն։

Բրդե հաստ կոճուկի մը մեջ փաթթված էր գլխեն մինչև ոտքը. ու նորեն, ցրտին դիմանալու համար, կես ժամը անգամ մը բերնին կտաներ ռոմի շոդրա մը, զոր իր վերարկուին լայն գրպաններուն խորքը կսահեցներ ապա։

Համբարձում Քիրեճճյան կկոչվեր, արհեստով գրաշար։ Ճեմարանին մեջ,— որ հիմա այրացավեր փլատակներու կույտ մըն է լոկ տխրատեսիլ,— իր նախնական ուսումը ստացած էր, ու տասնվեց տարեկան գործի ելած էր, ընտանիքին օգնելու համար։ Գրաշար եղած էր։ Իր շահած շաբաթական դույզն գումարը գրեթե ամբողջությամբ հորը կուտար, որպեսզի կարենար պահեր իր բազմանդամ ընտանիքը,— հայր, մայր և վեց զավակ, որոնց չորսը աղջիկ։ Հայրը դարբին էր, քիչ շատ կվաստկեր, և «վարդի պես կապրվեին»։

Օր մը, հայրը մեռավ։ Սև օրը այն օրը եղավ իրենց տանը համար։ Ան ատեն Համբարձում ութսուն ղրուշ կառներ շաբաթը։ Այդ գումարեն պետք էր տանը վարձքը վճարել և ապրեցնել, իրմե զատ, դեռ վեց հոգի։ Մայրն ու երկու հասուկ աղջիկները սկսան դուրսի կար կարել. պզտիկ մանչը, Արշակը, հաղիվ տասնմեկ տարեկան, դպրոցեն հանեցին և ժամագործի մը քով տվին շաբաթական տասը ղրուշով, որուն հինգը շաբաթ իրիկունները կբերեր մորը կհանձներ։ Եվ սակայն, երկու ամիս չանցած, հացագործը ա՛լ սկսավ հաց չտալ, և մսավաճառն ու նպարավաճառը տանը դուռը ափ առին։

Համբարձումի համար տանջանքը սկսավ, նյութական ու բարոյական ահռելի տանջանք։ Ցերեկները պանիր հաց կուտեր, և օրը քսան փարա խնայելու համար Սկյուտարի առաջին ու վերջին շոգենավերով կերթևեկեր։ Բայց ամենեն ավելի իր սիրտը ճմլող բանն էր տեսնել իր խեղճ մայրն ու մատաղատի քույրերը որ ասեղին տակ կծակծկեին իրենց մատները՝ մինչև կեսգիշերն անցած։

Չհուսահատեցավ սակայն, և գլուխը ասդին-անդին զարկավ։ Ա՜խ, եթե կարենար բացեն շահ մը ունենալ։

Այդ միջոցին էր, որ իր դպրոցական ընկերներեն մին, որ ետքեն իր սեթրի բանդալոնը աբա բոթուի փոխած էր և որուն ինչպես ապրիլը ոչ ոք գիտեր, իրեն առաջարկեց փախստյա ծխախոտ վաճառել, զոր ինք կերթար կբերեր Զինկյանեքյոյեն, Ցերքեսքյոյեն, Էրենքյոյեն և այլն։ Համբարձում վտանգը աչքը առավ, և ամեն առտու կռնակին ու կուրծքին վրա չորս-հինգ ծրար ծխախոտ կապած՝ կտաներ Պոլիս իր բարեկամներուն ու ծանոթներուն ծախելու։

Ամիս մը այսպես շարունակեց։ Ամսագլուխն, երկու ոսկի շահ մնացած էր իրեն։ Տանը մեջ սկսան քիչ մը շունչ առնել։

Ան ատեն, պատանին, մորն ու քույրերուն բեռը բոլորովին թեթևցնելու համար, հանդուգն գաղափար մը ունեցավ։ Փոխանակ միջնորդի դեր կատարելու, անձամբ ուզեց փախստյա ծխախոտ բերել տալ։ Կիրակի օր մը Էրենքյոյ գնաց, և հոն ամեն բան կարգադրեց Գամպուր Մեհմետ անուն հողատերի մը հետ։

Իրական վտանգը ան ատեն սկսավ։ Ծխախոտ փախցնելը,

Բեժիի դետերուն խիստ հսկողության տակ, դյուրին գործ չէ։ Թողեք տուգանքն ու բանտարկությունը, պետք է նաև ամեն վայրկյան մաքառիլ դետերուն դեմ և դաշույնն ու աորճանակը ձեռքե չթողուլ։ Հանդգնությունը չէր պակսեր քսանամյա պատանիին քով, և հակառակ մորը աղերսագին պաղատանքներուն, տարկե մը ի վեր Համբարձում իր հաշվին կգործեր։ Իրարու վրա շաբաթական ոսկի մը շահ կունենար, և հանգուցյալ դարբնին տունը իր բարեկեցիկ վիճակը կստանար հետզհետե։ Եվ երբ Համբարձում կտեսներ, որ քույրերը իրենց վաստակը իրենց արդուզարդին միայն կնվիրեին այլևս, ա՛լ կմոռնար իր բոլոր հոգնությունները ու բոլոր սրտադողերը։

***

Գիշերապահին ճոկանը վերստին հնչեցուց իր տխուր ու մենակերպ նվագը,— մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, հի՛նգ, վե՛ց, յո՛թը, ո՛ւթ, ի՛նը։ Այս անգամ սակայն ա՛լ առջի ուժգին ողբը չէր. հարվածները հետզհետե կտկարանային մարմարյա սեմին վրա, ու հիմա նվաղկոտ հեծեծյունի մը պես կմարեին։ Գիշերապահն ալ, բնության պես, հոգնած կթվեր։ Հովը դադրած էր տակավ։ Ցուրտը կասատկանար։

— Դեռ չեկան,— մռմռաց Համբարձում՝ ակռաներուն մեջեն ուժով հայհոյություն մը քրթմնջալով։— Արդյոք փորձանքի՞ մը հանդիպեցան։

Միևնույն վայրկյանին՝ ականջները սրեց։ Քայլափոխի մը թեթև ձայնը քիչ-քիչ կմոտենար։ Մութին մեջ զանգված մը սկսավ որոշվիլ, որ զգուշությամբ կհառաջանար։ Մարդկային ձայն մը մեղմիկ շշնջաց.

— Հո՞դ ես, Համբիկ։

— Հա՛։

Նորեկը նոճիին տակ հասավ։

— Ո՞ւր է Քելեկը,— հարցուց Համբարձում։

— Կուգա կոր։

— Շատ ուշացաք։ Վախեցա, որ ճամփան փորձանքի մը հանդիպեցաք։

— Չէ՛, փառք աստծո. ամա աս հավային... ճերմակ ջուր կա՞ քովդ։

— Չէ՛, ոմ է։ Ա՛ռ, մեջը կտոր մը ձգե։

— Տո՛ւր, ցուրտը ճիյերս անցավ։

Եվ երկար ումպ մը կուլ տվավ անհագաբար։

— Ծո մեջը բան չես ձգեր, Կոկո՛ռդ։

Նորեկը աս անունով կճանչուցվեր իր բարեկամներու շրջանակին մեջ։ «Կոկոռդ»-ը կրճատումն էր «կոկորդիլոս»-ին, որուն արժանի դատած էին զինքն իր ընկերները՝ իր երկար չորուկ հասակին ու սրածայր գլխուն համար։ Ինք խաչաղճիներու խլավուզն էր, գյուղերեն մինչև քաղաք ծխախոտ բերող բեռնակրին առջևեն կերթար հարյուր քայլ հեռավորությամբ, որպեսզի եթե դետերու հանդիպի, սուլե, և բեռնակիրը ճամփան փոխե։ Իր պաշտոնը ամենեն վտանգավորն է, որովհետև գործը միշտ դետերուն հետ է։

— Նա, Քելեկը կուգա կոր,— ըսավ Կոկոռդ՝ բռունցքներով բեղերը սրբելով։

Բեռնակիրը կհասներ։ Երեսունամյա հաղթանդամ թուրք մըն էր, որ, երկար շունչ մը առնելով, գետին նետեց իր բեռը, քառասուն օխա ծխախոտ, զոր շալակով մինչև հոն բերած էր էրենքյոյեն։

Համբարձում տվավ անոր վարձը, երկու մեճիտիե, և մարդը ճակտին քրտինքը սրբելով նորեն ճամփա ելավ՝ քալելով էրենքյոյ դառնալու։

— Աս թյությունը հիմակ ո՞ւր պիտի տանիս,— հարցուց Կոկոռդ։

— Գուզկունճուք։ Նեսիմին։ Առաջվընե խոսած եմ։

— Աստված կարողություն տա։ Բաղդեդ, հավան փեք պերպատ է, վախու պան չիկա։

— Ջաթը տերեին ճամփով պիտի տանիմ. հոն խոլճի չի կենար։ Դուն հիմա ո՞ւր պիտի երթաս։

— Սելամսըզ, քրոջս։ Վաղն իրիկուն գամ տե հաշիվը լմնցուննենք։ Կեցիր սա թյությունը կռնակդ տեղավորցնեմ անանկ էրթամ։

Ու ծխախոտի խոշոր պարկը չվանով մը հաստատեց Համբարձումի կռնակին վրա։ Հետո «գիշեր բարի» մը մռմռալով, անհետ եղավ խավարին մեջ։

Համբարձում ալ ճամփա ելավ՝ իր ծանր բեռան տակ կքած։ Անարգել անցավ Վանքին Այգիին այրած փլատակներուն մեջեն, Բոսֆա Յոլուն կտրելով՝ Խալֆային Պաղը մտավ, հետո Իճատիեի բարձունքեն սկսավ հառաջանալ դեպի Գուզկունճուքի ձորը, Ֆրենկին Լեռան ստորոտը։ Բայց հազիվ ձորին մեջ մտած էր, կանգ առավ հանկարծ։

Իրմե քսան քայլ դեպի առաջ, չորս հինգ ձիավոր դետ կսպասեին անշարժ։

Համբարձում վախկոտ չէր. գիշերվան այդ ժամուն, Ենի-Մահալլեեն մինչև Գուզկունճուք այդ տաժանելի ուղևորությունը միայնակ կատարելը ամեն մարդու գործ չէ։ Եվ սակայն սիրտը սկսավ ուժգին տրոփել։ Վեցհարվածյան ռևոլվերը գրպանն էր, և դաշույնն ալ քովեն կախված. բայց ինք միայնակ կրնա՞ր դիմադրել այդ խմբակին։ Մեկ քանի անգամ այդ տեսակ կռիվներու մեջ գտնված էր, բայց իր հետ չորս-հինգ ընկեր ալ կային ան ատեն։

Կորսնցնելու ժամանակ չի կար սակայն։ Արդեն դետերը տեսած էին զինքը, որովհետև իր վրա կհառաջանային՝ իրենց ձիերու քառատրոփ ընթացքով։

Համբարձումի համար երկվայրկյան մը անցավ, ահռելի երկվայրկյան մը։ Այն հանկարծական սրությամբ, զոր միտքը կունենա վտանգի նմանօրինակ վայրկյաններու մեջ, տեսավ իր բռնվիլը, իր քառասուն օխա ծխախոտին համար ութսուն օր բանտ պառկիլը,— որովհետև ուսկի՞ց կրնար վճարել գրավյալ փախստյա ծխախոտի յուրաքանչյուր օխային համար երկու մեճիտի կանոնադրական տուգանքը,— և այդ ութսուն օրվան միջոցին՝ իր ընտանիքին չարչարանքը և գիշերները անոթի պառկիլը գուցե։ Այդ մտածումը ի՜նչ քաջալեր տվավ իրեն, իր երիտասարդական անձնավստահ խիզախության մեջ ի՜նչ անսահման ուժ գտավ,— ինքը միայն կրնա զրուցել։ Սա իրավ է, որ երբ դետերուն մեծը խրոխտ ձայնով պոռաց իրեն, թուրքերեն.

— Կեցի՛ր։

Երիտասարդը քաշեց ռևոլվերը և պատասխանեց.

— Ճամփա բացեք, որ անցնիմ։ Թե չէ, մեկիկ-մեկիկ ձիեն վար կիջեցնեմ ձեզի։

Դետերեն երկուքը, կարևորություն չտալով այս սպառնալիքին, ձիեն վար իջան և սկսան երիտասարդին մոտենալ։

— Մի՛ մոտենաք, կզարնեմ,— գոչեց Համբարձում։

Դետերը ետ քաշվեցան երկու քայլ և վարանած մնացին։ Բայց իրենց խմբապետին հրամանին վրա, նորեն սկսան հառաջանալ, այս անգամ ռևոլվեր ի ձեռին։ Իրենք արտոնություն չունին կրակ ընելու խաչաղձիներուն վրա. այլ կարծեցին, թե երիտասարդը բնավ համարձակություն չի պիտի ունենար իր սպառնալիքը ի գործ դնելու, և հանդգնությամբ առաջ նետվեցան։

Համբարձում գլխու պտույտ մը ունեցավ. աչքերը մթագնեցան, ու, խելահեղ, պարպեց իր հրազենը։ Դետերեն մին ցավագին աղաղակ մը նետեց օդին մեջ, իր ձախ թևը բռնեց՝ ուր մտած էր գնդակը, և հետո, մռնչյուն մը արձակելով, պարպեց իր ռևոլվերը, հազիվ մեկ քայլ հեռվեն։

Ռևոլվերին պայթմանը ընկերացավ ահռելի աղաղակ մը։ Երիտասարդը ձեռքը կուրծքին տարավ, ուր մտած էր գնդակը և կռնակեն դուրս ելած, ու գետին գլորեցավ՝ իր ծխախոտի բեռան տակ ծածկված։ Դետերը անմիջապես վեր վերուցին զինքը։

Հինգ վայրկյան ետքը, իր հոգին կավանդեր՝ անհասկանալի բառեր մրմնջալով՝ մինչև գիշերապահներ ու ոստիկաններ կվազեին կուգային ճեպընթաց։

* * *

Հիմակ հովը դարձյալ կփչեր ամեհի ու արշավասույր, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ։ Բնության տանջանքն էր ատ, անհուն թառանչ մը, ուր աղլցված են կարծես ամեն ողբերն ու մորմոքները, բոլոր կոծերն ու հառաչանքները։ Իր ընթացքին մեջ կարծես իր հետ կբերեր իր կտրած անցած վայրերուն բոլոր ցավի աղաղակները և հեծկլտուքները, ու հիմակ ալ ընդքարշ կառներ կտաներ մեռնող երիտասարդին հուսկ հետին խռնչյունը։

1890

Ա՛ՅՍ Է ԵՂԵՐ

Ա.

Կղզիներեն Պոլիս վերադարձող վերջին շոգենավը ծանրադանդաղ կհառաջանար, Ֆանարաքիի բացեն, իր անիվներուն հաստաբեստ տախտակներովը ծեծելով ծովուն կապուտակ մակերևույթն, ուր մարը մտնելու մոտ արևը կուգար նույնհետայն խառնել իր բեկբեկ և շիկորակ ճառագայթները։ Շոգենավն իր ետև կթողուր լայն ակոս մը, որուն երկու եզերաց սպիտակ փրփուրները, տատանելով և օրորելով, արեգական սաստիկ պայծառությանը տակ շլացուցիչ երանգներ կփոխեին, մինչ անկե անդին, աչքը կտրածին

չափ, Մարմարան կփուվեր հալած կապարի փոգփոգումներով, հորս, հեռվեն հեռու, շոգենավի մը կամ առագաստանավի մը ուրվագիծը կուգար սև արատ մը հորինել։

Ծգոտոսի տաք և հեղձուցիչ իրիկուն մըն էր, կիրակի իրիկուն մը։ Մթնոլորտը, էլեկտրականությամբ առլցյալ, միահեծան ճնշում մըն էր, անողոք, անդիմադրելի, զոր մարդ իզուր պիտի փորձեր ի բաց թոթափել. նույնիսկ հոդ, ծովուն մեջտեղ, ընդհանուր թմրություն մը կտիրեր, ընդարմացում մը, բնության մեկ խուլ անհանգստությանը պես։

Շոգենավուն մեջ բազմությունը այնչափ լցված էր, որ շատեր ոտքի վրա մնացած էին։ Զորս կողմ, ամառային ծիծաղկոտ արդուզարդեր, պայծառ գույներով։ Հոգնություն մը կար ամեն դեմքերու վրա,— մեղկությունն այդ տաք մթնոլորտին և խոնջենքն ամառային երկար օրվան մը։

Հետսակողմի մեծ դահլիճին մեջ, ուր ամեն պատուհանները բաց էին, զվարթ բազմություն մը գրաված էր բոլոր նստարաններն և բազմոցները, ու դահլիճին խորը, մեծադիր հայելիին մեջ, խառնիխուռն կանգրադառնային կանանց ծաղկազարդ գլխարկներն։

Հայելիին ճիշտ քովը, անկյան մեջ, կիսովին ընկողմանած էր մանկամարդ կին մը, որու վրա կգառնային հաճախ ուղևորաց նայվածքները։ Երեսուն տարեկանի մոտ կին մըն էր, գեր տը շինե կաթնագույն շրջազգեստ մը հագած, որուն պարանոցին քառակուսի բացվածքեն՝ միսը կերևար սպիտակ և վարդերանգ, ժանյակներու փրփուրի մը տակ միապաղաղ փայլյունով։ Կիսաբաց բոսորածիր շրթունքը մշտատիպ ժպիտ մը ուներ, որ իր անփայլ և կենդանի այտերուն վրա երկու փոսիկներ կպատճառեր։ Աչվընները, սևաթույր լայն թարթիչներու տակ, նվաղկոտ ցոլք մը ունեին, որուն մեջ ճերմակը կկորսվեր. այդ աչքը, մրագույն ծիրով շրջանակյալ, ամբողջ ապականություն մըն էր, չես գիտեր ինչ հրավեր մը հրամայական և խուսափուկ միանգամայն, իր նայվածքին մեջ ընկղմելով գոգցեռ ցոլացված բոլոր առարկաները։ Գլխուն վրա, պուիկան գլխարկը կբարձրանար հոխորտ, պատերազմիկ և անառակ կեցվածքով, գարնանային ծաղկանց, խոտերու և շյուղերու ներդաշնակ խառնուրդի մը տակ ծածկված։ Զախ ձեռքը,— միթեն ձեռնոցով մը կիսովին պատած մինչև հառաջաբազուկը, որուն լեցուն և սպիտակ մկանունքը ևս ավելի աչքի կզարնեին ձեռնոցին ջազանակագույն թելերուն քով,— անընդհատ կխաղցներ անգուսե հովանոցի մը նրբակերտ գլուխը։ Այդ անկյանը մեջ ընկողմանած, գլուխը տախտակորմին կոթնած, իր ճապուկ և առուգաբարձ լանջքին բովանդակ գեղովը, հոն կմնար ըղձալի և գրգռիչ, արանց աչքերուն մեջ կարդալով իր հառաջ բերած հույզերուն շողը, իր հաղթանակին կատարյալ գիտակցությամբը։

Իր ճիշտ քովը նստած էր քառասունի մոտ մարդ մը, որ Արևելքի առաջին երեսը կկարդար, իր ընթերցումեն շատ գոհ անձի մը հետաքրքրությամբ։ Մերթ ընդ մերթ կդառնար իր ընկերուհուն, քանի մը խոսք կմրմնջեր, հետո վերստին կխորասուզվեր իր ընթերցմանը մեջ, ինքը միայն անտարբեր ու թերևս ալ անտեղյակ այն ցանկության հոսանուտին, զոր այդ կինը կարտաշնչեր իր մարմնեն։

Մանկամարդ կինը հանկարծ շտկվեցավ, իր դիրքեն հոգնած թերևս, հայելիին մեջ անձնավստահ ակնարկ մը նետեց, մատներով շտկեց շագանակագույն մազերու ապստամբ խոպոպ մը, որ գլխարկեն դուրս սպրդած էր, նայվածքը չորս դին պտտցուց և կանգ առավ երկու աչվըններու վրա, որք, ճիշտ դիմացի անկյունեն, իր վրա հառած էին համառությամբ։ Քսանհինգ տարեկան երիտասարդ մը նստած էր հոն։ Ծաղկատի կնոջ աչքին զարկավ անմիջապես նորա վայելուչ արդուզարդը,— կապույտ շրվիոդե հագուստ մը, բաց բաճկոնակով, ուր փողկապն հաղթանակով կպարզեր իր սպիտակ և կապույտ ծաղիկներուն խառնուրդը, փայլուն կիսակոշիկներ՝ որք թույլ կուտային տեսնել սև մետաքսե գուլպան գունավոր ծաղիկներով, և քովը, պեժ վերարկուին սնդուսին քով, հարդագույն ձեռնոցներ անհոգությամբ նետված։ Հետո նայեցավ այդ աչվըններուն, որք զինքը կդիտեին միշտ նույն մոլեգնությամբ, այդ թուխ և խնամով ածիլված դեմքին կանոնավոր և առնական գեղեցկությանը, ու աչվընները ասդին դարձուց։ Բայց իր վրա զգաց միշտ այդ ցանկության նայվածքն, որ ամեն կողմե կպատեր կպաշարեր զինքը, իր տեմոլթեին մեջ կիջներ, իր թևերուն վրա կսևեռեր, իր ուռուցիկ կուրծքին մեղմիկ ելևէջներուն կհետևեր։ Դարձյալ նայեցավ, բայց շեշտակի, իր թուլացած ջղերուն բոլոր տրփահույզ կրակը դնելով իր աչվըններուն մեջ, ու այս անգամ՝ երիտասարդը եղավ, որ խոնարհեց իր աչքերը։

Ու մինչև կամուրջ, սխրալի մեղքի մը պես գաղտագողի ու լռին մենամարտ մը սկսավ այդ կնոջն ու այդ երիտասարդին միջտեղ, նայվածքներու մենամարտ մը, մանկամարդ կինն այն ան-

տարբերությամբ, որ հետաքրքիր ուշադրությունը կպարտկեն, երիտասարդը միշտ իր կրակոտ և հետզհետե ավելի պահանջող աչքերուն բովանդակ ըղձանքովը, որուն տաքությունը կզգար նե իր մարմնույն վրա։

Շոգենավը կամուրջին մոտեցած էր, և բազմությունը կփութար դուրս ելլել՝ աղմկալի խառնակության մը մեջ։ Երիտասարդը թևին վրա առավ վերարկուն, և սպասեց մանկամարդ կնոջ ոտք ելլելուն, որուն ընկերն արդեն ծալած իր Արևելքը, գրպանը կդներ զայն խնամքով։ Դահլիճին մեջ շատ քիչ մարդ մնացած էր. մանկամարդ կինն ալ ոտք ելավ, վերջին անտարբեր նայվածք մըն ալ նետեց հայելիին մեջ, և հետևեցավ իր ընկերոջ։ Երիտասարդն ևս ոտք ելավ նույնհետայն, և հազիվ քայլ մը առած, դիմացի անկյունը թաշկինակ մը տեսավ, փութանակի առավ զայն, մուսլինե աբլիֆասիոն թաշկինակ մը, և արտորանքով մանկամարդ կնոջ մոտ երթալով՝

— Կներեք, տիկին, կարծեմ ձեր թաշկինակն է, որ մոռցեր եք։

— Ա՜հ, իմս է, շնորհակալ եմ։

Եվ, չարամիտ խնդությամբ լեցուն ակնարկ մը նետեց երիտասարդին, որ հիմակ ճիշտ անոր ետևեն կքալեր, դուրս ելլող բազմության մեջ, դիտելով անոր ձյունաթույր ծոծրակը, մտածելով մանավանդ այն մարմնույն վրա, որուն մեկ մասն էր այդ պարանոցը, հրաշակերտ մը ինքնին, անհագությամբ ծծելով զգլխիչ շունչն, որ կխուսափեր անոր երկու ուսերուն մեջտեղեն։

Կամուրջին վրա, հալիվ երկու քայլ առած, բարեկամի մը հանդիպեցավ։

— Բարիրիկուն, Գիրգորիկ,— ըսավ հապճեպով,— կճանչնա՞ս սա կինը, որ մեր առջևեն կերթա։

— Ձերմակնե՞ր հագածը. տիկին Սիմյանն է, քովինն ալ էրիկը, Սիմյան Պողոս էֆենդին։ Ինչո՞ւ հարցուցիր, Միքե՛։

— Շոգենավին մեջ դեմս նստեր էր։

— Մինչև հիմա տեսած չէի՞ր զինքը։ Ամոթ է։ Մե՛ղք, որ Բերա կնստիս։

— Իրե՞նք ալ Բերա կնստին։

— Այո։ Բայց ամառները Մեծ Կղզի կերթան. ինչպե՞ս եղեր է, որ վար իջեր են այս իրիկուն։ Տեսա՞ր, ի՞նչ հրապուրիչ կնիկ է։ Էրիկը ապուշին մեկն է։

Եվ Միքեի ականջն ի վար ծռելով, քանի մը խոսք ըսավ մեղմաձայն, մինչ երիտասարդին աչքերը կվառեին հուսալից։ Հետո, աճապարանոք բաժանվելով իր բարեկամեն, վազելով գնաց դեպի Գարաքյոյի հրապարակն, այն վայրկենին, ուր տիկին Սիմյան իր ամուսնույն հետ բաց կառք մը կնստեր։ Կառքը, շրջան մը ընելով, իր առջևեն անցավ, ու երիտասարդը վերջին անգամ տեսավ մանկամարդ կինը իր բովանդակ գեղեցկության մեջ, դարձյալ կիսովին ընկողմանած, գլուխը դեպի ձախ հակած և աչքերը միշտ իրենց խորին և հետախույզ նայվածքով։

Բ

Միքե Թումանյան, հորմե և մորմե որբ, իր ամուսնացած քրոջ հետ կապրեր ի Բանկալթի։ Իր քեռայրը բավական ունևոր խանութպան մ'էր Մեծ Շուկան։ Ինքը ծանոթ հայ վաճառատան մը մեջ արկղակալի և գրագրի պաշտոնները կվարեր, և ամիսը տասներկու ոսկի կստանար։ Անկախ դիրքի տեր, ընտանյաց բեռ չունենալով իր վրա, զվարճությունը կսիրեր և հետամուտ էր անոր։ Իր ունեցած վաղաժամ աղատությունը և ժամանակեն առաջ իր բոլոր բաղձանքներուն գոհացում տալու դյուրությունը՝ դրական մեկը ըրած էին զինքը։ Մարմնույն հափրացումը սակայն՝ չէր խեղդած բնավ սիրտը, և վարձկան վայելքներն ու դյուրին տարփանքները երբեք չէին հագեցուցած իր կրքոտ և անձնազոհության պատրաստ բնությունը։ Տարբեր միջավայրի մը մեջ ու տարբեր պայմաններու տակ, երազուն, խանդավառ, մելամաղձիկ մեկը պիտի ըլլար այս երիտասարդը, որ հիմակ կնոջ մը տեղոլթեին կնայեր ամենեն առաջ ու կխնդար սիրո վրա։

Այդ կիրակի իրիկունը սակայն, երբ տուն դարձավ ու ընթրիքեն հետո կանուխկեկ անկողին մտավ, զգաց, որ անօրինակ բան մը կդառնար իր ներսիդին։ Իր աչքերը, մութին մեջ խոշոր բացված, կտեսնեին դեռ սիրուն գլուխ մը, շագանակագույն խոպոպիկներով շրջանակյալ, թեթև իմն դեպի ձախ հակած, գոգցես միշտ ուսի մը կոթնելու բնազդական շարժումով. ու այդ հանկուցիչ դեմքին վրա, երկու սևաթույր աչքներ, որոնց մեջ զգացումը կշողար, և որք, իրենց նայվածքին ձգողական զորությամբ, զինքը կհրավիրեին վայելքի ամենեն սաստիկ հույզերուն։ Ա՜հ, իր երազն եղած էր միշտ այդպիսի կնոջ մը հանդիպիլ կյանքին մեջ. իրեն այնպես կուզար, թե ճիշտ նույն այդ կինն էր, զոր ընդնշմարած

էր իր պատանեկության ցնորքներուն մեջ, երբ արյունը կսկսեր իր առաջին ուժգնությամբը ման գալ իր երակներուն մեջ։ Հետո իր բարեկամին խոսքերն հիշեց. անմատչելի կուռք մը չէ՞ր ուրեմն այդ կինը։

Հետևյալ օրը, ու հաջորդ օրն ալ, տիկին Սիմյանի պատկերը չելավ իր մտքեն, ու իր պարտիի ու պահանջեի լայն գծերուն մեջտեղ, հաճախ կտեսներ անոր գրգռիչ ու խռովիչ դեմքը, որ գրիչը ձեռքեն վար թողուլ կուտար։ Հիմակ գիտեր անոր պատմությունը, ասդին-անդին ուղղած ճարտար հարցումներու շնորհիվ։

Սիմյան Պողոս էֆենդին հանրային վարչության մը մեջ բարձր պաշտոն մը ուներ։ Կյանքին մեջ դժնդակ սկզբնավորություն մը ունեցած էր, և հազար զրկանքներով ու անվհատ հաստատամտության հրաշքներով հաջողած էր ձեռք բերել իր արդի դիրքը։ Հինգ տարիե ի վեր ամուսնացած էր, փեսայանալով ընտանիքի մը, որ նախկին հարստության մը բեկորներովը կպահեր դեռ իր փայլն ու շուքը ընկերության մեջ։ Դուրսը հայտնապես կհավաստեին, թե Սիմյան էֆենդին երջանիկ ամուսնություն մը չէր կնքած։ Տիկին Սիմյան «շատ խոսված աղջիկ մըն էր» եղած, և ամուսնությենեն երկու տարի վերջը, դարձյալ «կխոսվեր»։ Մերերը և կիները կդատապարտեին զինքը. երիտասարդները կըսեին. «Ան Պողոս էֆենդիին պես մարդո՞ւն ալ...»։

Ամուսինը, ինքը բան մը չէր ըրուցեր։ Իր հանդարտ և դյուրահաղորդ լայն դեմքին վրա, անձկության որևէ նշան մը, ներքին խուլ մտածման մը որևէ հետք չկար։ Երբ սրահի մը մեջ իր կինը կտեսներ շրջապատյալ այրերե, ընդհակառակն դեմքին վրա գոհունակություն կարտափայլեր, կարծես ինքն ալ ճառագայթումն ստանալով այն հաղթանակին, զոր իր կինը կունենար։ Մինչև ականջները տարածվող լայն ժպիտ մը ուներ միշտ, և առույգ ու կոկորդալիր քահքահը առածի կարգ անցած էր սրահներու մեջ։ «Ապուշին մեկը», կըսեին ոմանք. «Փիլիսոփա մարդ», կըսեին ուրիշները։

Ալ այնուհետև, Միքեի հաստատուն գաղափարն եղավ դարձյալ և միշտ տեսնել այդ կինը։ Իր գեղեցիկ և վայելչակազմ երիտասարդի ներքին հանձնապաստանությունը կթելադրեր իրեն, թե տիկին Սիմյան շատ անտարբեր աչքով չէր նայած իրեն։ Եվ հետո, իր սրտին մեկ պետքն էր այդ հիմակ. այդ կնոջ պատկերը, փոխանակ հետզհետե նվաղելու, ևս ավելի պայծառ ու կենդանի գույներով կհաստատվեր իր մտքին մեջ, իր աչաց առջև, ու կհասկնար վերջապես, թե քմահաճույք մը, վաղանցուկ ու ախորժելի բան մը չէր այդ իրեն համար, հապա անդիմադրելի և անսկզբնական մը, որ կամաց-կամաց կտիրապետեր իր բոլոր մտածմանց։ Մեկ քանի կիրակի մտադրեց Մեծ Կղզի երթալ, հետո խորհեցավ, թե ա՛լ գյուղագնացությենե դառնալու ժամանակը մոտեցած էր, Բերայի Մեծ Փողոցին մեջ չկրցավ բնավ հանդիպիլ նմա, հակառակ իր երկարատև շրջագայությանց, և իրիկուն մը, Նոր Թատրոնի պենյուարի օթյակներեն միույն մեջ տեսավ զնա վերջապես։

Սև տաֆթեյե շրջազգեստ մը հագած էր, պարանոցն և ուսերը մերկ, ու հարդագույն մուսֆթեռ ձեռնոցներ կծածկեին թևերը մինչև արմուկը։ Լամպարներուն սաստիկ լույսը կցոլար այդ հոլանի մարմնո վրա, տարօրեն իմն ավելցնելով անոր գծերուն կենդանությունը, սև կերպասին խաղաղ արտահայտությանը քով։ Իր վեհ գլուխը կբարձրանար ձյունաթույր պարանոցին վրա, միշտ դեպի ձախ հակած քիչ մը. նույն լուսավառ աչքերն էին միշտ, հիմակ ավելի ընկղմյալ նայվածքով. դժգույն այտերը թեթև իմն բոսորած էին, հիմակ ավելի տաք մույնքով. նուրբ ռեգուները կսարսռային հեշտությամբ և նվաղկոտ ժպիտ մը ի վեր կհաներ իր քիչ մը հաստ և կարմրորակ շրթունքը։ Իր գերազանցությունը կզգար և կվայելեր զայն, օթյակին թավշյա տախտակեն դուրս ծռած, գոգցես ի հագուրդ զինքը դիտող աչքերուն և դիտակներուն։ Քովը ամուսինը նստած, խաղը կդիտեր ուշադրությամբ, ակներև հաճույք զգալով ֆրանսական օպերետին ստահակ խոսքերեն և թերասքող ակնարկություններեն, ինքն տալով գրեթե միշտ ծափահարությանց առաջին նշանն ու իր հավիտենական քահքահովը լեցնելով բոլոր օթյակը։

Միքեի համար, խաղը այլևս գոյություն չուներ. գետնահարկը նստած էր, Սիմյաններուն օթյակեն երկու կարգ վար, և տեսարանն իրեն համար այդ օթյակին մեջ փոխադրված, նայվածքը չէր պատեր անկից։ Արարվածը վերջացած էր արդեն, և երիտասարդը նախանձով կդիտեր այն այրերն, որք, միշնարարեն օգուտ քաղելով, եկած էին անոր ականջին մոտ խոսքեր փսփսալ, զվարճալի խոսքեր անշուշտ, որովհետև տիկինը զգուշավորությամբ կխնդաք, իր կուրծքին ընդոստ ելևէջներուն մեջ լույսին ցոլացումները փոփոխակի ստվերարկելով ու պայծառացնելով։ Երիտասարդը կսկսեր հուսահատիլ, իր կողմը չպիտի՞ նայի անգամ մը, երբ երկրորդ

արարվածին մեջտեղը, տիկին Սիմյան, դիտակը թողած, սրահին վրա ընդհանուր նայվածք մը պտտցուցած ատեն, զգաց, քան թե տեսավ երկու հրուտ աչերն, որք իր վրա հառած էին։ Հոնքերը պռստեց, կարճատեսի պաշտելի ձև մը առնելով, տեսնելու համար, թե ո՛վ էր այդ ժպիրհ նայվածքին տերը, և անշուշտ ճանչցավ կղզիի շոգենավին երիտասարդը, «թաշկինակին» տղան, որովհետև կծկված դիմագծերը թուլցան և մտերմական սիրուն ժպիտ մը ունեցավ շրթանցը վրա։

Ուրեմն մոռցված չէր. այդ էր կարևորը Միքեի համար։ Սիրտն ուրախութենեն խայտաց, և ա՛լ այնուհետև ամենեն կանոնավոր հաճախորդն եղավ Նոր Թատրոնին։ Երբեմն առիթ կունենար հանդիպելու տիկին Սիմյանի, որ զնա տեսած ատեն, միշտ նույն մտերմական ժպիտն ուներ իր շրթանց վրա։ Այդ գիշերները, Միքե, վերջին արարվածը լմընալուն պես, կսպասեր թատրոնին սանդուղքին գլուխը, բազմության մեջ ակնկառույց դիտելով տիկին Սիմյանի անցնիլը, անոր մոտեն քալելով մինչև թատրոնին դուռը, մինչև կառքն, որ կհափափեր զայն իրմե, զինքն հոն թողլով անշարժ, կառքին թավալմանը ուշադիր։

Եվ սկսավ միջոցներ խորհիլ ավելի մոտեն տեսնելու համար այդ կինը, անոր ներկայանալու, անոր հետ խոսակցելու, անոր տունը ընդունվելու համար, երբ դիպվածը, որ ամենեն գերագույն նախախնամությունն է, օգնեց իրեն ամենեն պարզ եղանակով։

Գիշեր մը այցելության գացած էր իր հեռավոր ազգականներեն միույն տունը,— ուր տարին հազիվ մեկ-երկու անգամ կերթար, նեղվելով այն հարգական դիրքեն, զոր պարտավոր էր պահել այդ հարուստ և բարձր դրից տեր ազգականներուն քով, ուր իրեն հասակակից մը չուներ,— հետզհետե եկող հյուրերուն ետևե, հանկարծ երևցավ տիկին Սիմյան իր ամուսնույն հետ։ Միքեի սիրտը սկսավ տրոփել, այնքան ուժգին, որ վախեցավ զի զովինները չլսեն։ Տիկինը հառաջացավ, տանտիրուհվույն ձեռքը սեղմեց սիրալիր կերպով, շուրջանակի թռչտուն բարև մը տվավ գլխովը, մինչ Միքե կիսովին կխոնարհեր, ընդունելով այդ ողջույնն, որուն մեջ ինքն ալ իր բաժինն ուներ անշուշտ։

Հինգ վայրկյան հետո, տանտիրուհին կներկայացներ զինքը տիկին Սիմյանի։

— Մյուսյու Միքե Թումանյան, գուզենս,— ըսավ։

Եվ դեպի երիտասարդը դառնալով՝

— Տիկին Մառի Սիմյան։

Ու հեռացավ, մյուս այցելուներուն քով երթալով։

Տիկինը գլխու թեթև շարժումով մը ընդունեց երիտասարդին խոնարհությունը, որ, արդեն անոր մոտեցած, քաղաքավարական մեկ քանի սովորական բանաձևերե հետո, կըսեր.

— Արդեն ասկից առաջ ձեզի ճանչնալու բախտն ունեցած եմ, տիկին... Մեծ կղզիի շոգենավին մեջ, երկու-երեք ամիս առաջ...

— Ա՜հ, այո՛, կհիշեմ. ձեր դեմքն անծանոթ չէ ինձ։

Իր շրթանցը վրա խաղացող ժպիտն ի սուտ կհաներ իր խոսքերը։ Երիտասարդը չպնդելու փափկանկատությունն ունեցավ, և խոսակցությունը շարունակվեցավ, կցկտուր և ընդհատ, մինչև որ եկան տիկինը հրավիրեցին պեզիկի բառթի մը։

Ժամ մը հետո, ինքն ալ տիկնոջ դեմը անցավ և մեծ գումարով սկսավ խաղալ։ Հետզհետե կկորսնցներ, բայց այդ պարտությունն այնպիսի հաճույք մը կուտար իրեն, որ մինչև առավոտ պատրաստ էր խաղալ, մինչև իր վերջին լուման, մինչև իր պատիվը, մինչև իր կյանքը։ Երկու ժամ խաղաց, և այդ երկու ժամերը շլացման պես սահեցան։ Մեն մի վայրկենի, թուղթերը ժողված ատեն, իր աչքները կհառեր տիկին Սիմյանի դեմքին վրա, այդ մագնիսացման մեջ մոռնալով իր տալիք կամ քաշելիք թուղթը։

Այնուհետև Միքե ավելի հաճախ եկավ իր ազգականներուն տունը, միշտ հուսալով այդ գտնել գեղեցիկ երազի մը պես տեսնված ու անհետացած այդ տեսիլքը, մինչև որ իրիկուն մը, անոնց խնդրանքին վրա, հանձն առավ Սիմյաններուն երթալ ինքն ալ. չէ՞ մի որ արդեն ներկայացած ու տեսնված էր անոնց հետ, քաշվելու բան մը չի կար։

Սիմյաններուն տունը, տիկինը շնորհակալ եղավ իր գալստյանը համար, միասին թուղթ խաղացին նորեն, երիտասարդը դարձյալ կորսնցուց, և, մեկնած ատեն, ուրախութենեն սարսռաց, երբ տանտիրուհին վերստին հրավիրեց զինքն իր տունը, հայտնելով, թե որչափ գոհ մնացած էր իր այցելութենեն։

Այդ օրվընե սկսյալ, այդ խորհրդավոր մոլորակին արբանյակն եղավ, իր կամքեն գերագույն զորությամբ մը ընդքարշ տարվելով անոր գծած լուսահետ պարույթին մեջ։ Տիկին Սիմյանի ամեն երեկույթներուն ներկա էր, ամեն ներկայացման, ուր կգտնվեր նա, ամեն հանդեսի, ուր կերևնար։ Իրենց մտերմությունն հետզհետե կավելնար, երիտասարդն իր տենդաբորբոք ըղձանքներովը տակավ

ատ տակալ ավելի հանդուգն, կինն իր քոդարկյալ զգուշավորությանը մեջ ավելի խրախուսող։ Հիմակ, երբ ասիթը գտներ, Միքե կգրուցեր անոր ականջն ի վար իր անզուսպ տարփանքը, և նա մտիկ կըներ, իր նայվածքովն արդեն իսկ անձնատուր։ Ինչ որ բերնովը չէր կրնար գրուցել, երիտասարդն իր ձեռաց սեղմումին մեջ կդներ, հրաժեշտի պահուն, իր ջղուտ մատներուն մեջ ամրապես պարփակելով անոր մսուտ և կակուղ ձեռքը, որուն մեղկ տաքութիւնը կքրքրեր իր ջիղերը։ Տիկին Սիմյան թույլ կուտար, ու երիտասարդն, իր տարիքին անհամբերությանը մեջ, կընդնշմարեր արդեն իսկ իր իղձերուն պակումը. արդեն նախանձն և հուսահատությունը կպաշարեին զինքը։ Մանկամարդ կինը շատ բարեկամներ ուներ, և երիտասարդը կատաղությամբ կդիտեր տիկներև մտերմությունը, զոր տիկին Սիմյան կատարեր մեկ քանի անձանց հետ։ Անառիկ բերդ մը չէր ապաքեն, այլ պաշարյալը շատ պաշտպանողներ ուներ։ Դուրսը իրեն համար կգրուցեին, թե այժմ Ք... էֆենդիին «հետ էր», քառասունի մոտ բարձրահասակ և վայելուչ պաշտոնատար մը, որ տիկնոջ երեկույթներուն ներկա էր միշտ։

Հուտ և նախանձու այս երեէջներուն մեջ, երիտասարդին գրչխալոր մտահոգությունն իր դրամական վիճակն էր։ Գիտեր, թե արդուզարդն ի՞նչ մեծ նշանակություն ունի կանանց համար, և իր գրեթե ամբողջ ամսականը կուտար Բերայի ամենեն հռչակավոր դերձակներուն, ձեռնոցի, փողկապի, կոշիկի, գլխարկի. թատրոն և նվագահանդես կերթար միշտ, և իրիկունները, պոլիշ կամ պեզիկ մեջ, միշտ կկորանցներ առանց հաշվելու, դրամական ճգնեմ հաշիվներե վեր ցույց տալով զինքն այդ կնոջ, կերպով իվիր իր վճառականի գրագրի մը դիրքը մոռցնել տալու մտադրությամբ, հաճույքի մը անձնատուր երթիլ ուզելով, քան զոհողության մը տակ ընկճված, զգալով մանավանդ, թե, իր վիճակին մեջ, տիկնոջ խաղալու հրավերը մերժելը՝ չկամություն մը չպիտի ենթադրվեր, այլ դրամի չգոյություն։ Իր գրպանը սակայն անշուշտ չէր հասկնար այդքան նուրբ հաշիվներե, որոց դեմ լռին կբողոքեր իր դատարկությամբը։ Արդեն սկսած էր ասդին-անդին պարտքեր ընել. պահ մը մտածեց իր քեռայրին փոխ առնուլ, ոսկայն շուկայի խանութպանին անխուսափելի պատասխանը։ «Ամուսիններդ ի՞նչ կընեն կոր», և անոր տալիք նահապետական խրատները ետ կեցուցին զինքն այս ձեռնարկեն։

Օր մը, գրասենյակը, այս մտատանջություններուն մեջ խորասուզված, հանկարծական գաղափար մը ունեցավ, և հանկարծական կերպիվ գործադրեց զայն, վախենալով, որ իր դատողությունը չարգիլե զինքն այդ գործեն։ Վաճառատան սնդուկեն հինգ ոսկի վերցուց, ինքզինքը խաբելով, որ ամսույն վերջը իր ամսականեն տեղը կդնե։ Եվ որովհետև շատ դժվար է կանգ առնուլ այդ զառիվայրին վրա, որուն թալկացուցիչ պտույտը կզգար արդեն իր գլխուն մեջ, հաջորդ շաբթուն հինգ ոսկի ևս առավ, հետո դարձյալ, միշտ այն մտածումով, թե ժամանակ ուներ տեղե մը դրամ ճարելու և անոնց տեղը դնելու։

Այդ ժամանակը չունեցավ երթալ, և օր մը, հանկարծ, իր տերը սնդուկին հաշիվը ուզեց։ Երիտասարդը կարմրեցավ, թոթովեց, սընդուկեն երեսուն ոսկի պակաս էր, և իր տերը նույն իրիկունն իսկ ճամփու դրավ զինքը։ Ժամանակե մը ի վեր արդեն գոհ չէր իր գրագրեն. առտուները միշտ ուշ կուգար, քնատ և թույլ, ու առջի քանադրությունը չուներ իր գործին մեջ։

Չորս ամսե ի վեր առաջին անգամ ըլլալով, Միքե սթափեցավ, ու չորս ամսե ի վեր իր վարած անգիտակից կյանքը մտքին առջև բերավ։ Մեքենային ատամներուն տակ դրած էր արդեն իր մեկ թևն, և զգաց, թե, քիչ-քիչ, իր բոլոր մարմինը պիտի թավալեր այդ ատամներուն տակ և ջախջախվեր։ Իր անկմանը մեջ, իր գահավիժած փոսին խորեն, հեռավոր աստղի մը պես տեսավ պաշտելի դեմք մը, որ հիմակ շատ հեռու էր իրմե, ու իր հեշտախտությանը մեջ, ուր զգայարանքները միտքն ընդարմացուցած էին, ապստամբություն մը չունեցավ, բառ մը չարտասանեց այն կնոջ դեմ։ Հիմակ որոշած էր. Սիմյաններուն տունը չպիտի երթար. այդ կնոջ քով այնչափ փայլուն երևալե հետո չէր կրնար հանկարծ խղճուկ և համեստ դիրք մը ունենալ։ Պոլիսը պժգալի երևցավ իր աչքին։ Մտքեն չանցուց նոր պաշտոն մը գտնել, որուն համար իր անցյալը պիտի պրպտեին. մանավանդ գիտեր հրապարակը, առաջին անգամեն մեկ քանի հարյուր գրուշ պիտի տային իրեն։ Ճիշտ այդ ատենները գավառական քաղաքի մը մեջ առևտրական շահավոր պաշտոն մը կառաջարկեին իրեն Պոլսո տան մը կողմանե. ընդունեց զայն ու անմիջապես ճամփա ելավ, առանց ետին նայելու, վախնալով իր թուլութենեն, քաջ զգալով, թե, եթե անգամ մը տկարանար, անդառնալի բան մը պիտի ըլլար այդ, գուցե ի գին իր կենաց։

Գ

Երկու տարի մնաց դուրսը, համբերությամբ, հաճույքով, չզգալով բնավ իր տաժանելի բեռան ծանրությունն։ Իրեն համար ճամփուն մեջտեղ կայք մը եղավ այդ երկարատև բացակայությունը, ու ոչ թե վերջնական հեռացում մը իր նպատակակետեն։ Երկու տարի, գիշեր ատեն մոլորած ուղևորին պես, որ հեռվեն ընդնշմարած լույսին ետևեն կվազե հուսալից, ինքն ալ իր աչքին առաջ ունեցավ հավետ ըղձալի կնոջ մը պատկերն, որն իրեն ուժ կուտար անարգել ճամփան շարունակելու։ Իր պատանեկության բոլոր կրակոտ երազներն արթնցած էին հիմա, և իր երիտասարդի գրգռված արյունն ավելի կենդանություն ու ավելի տենդ կուտար այդ երազներուն։

Գավառական այդ քաղքին մեջ, իր բոլոր ըղձանքները կույս կմնային և ավելի ևս կարծարծեին հրավառ։ Միակ նպատակ մը ուներ, դրամ շահիլ, և կշահեր, իր պաշտոնեն զատ այլևայլ գործեր կատարելով, մասնավորապես հանձնակատարություն ընելով իր քեռայրին հաշվույն։ Երբոր գրպանը լենար, Պոլիս պիտի դառնար, և այս անգամ, արդեն իր դժբախտությամբն իրավունքի մը տիրացած, վերստին պիտի սկսեր իր հարաբերությունները տիկին Սիմյանի հետ։ Վստա՜հ էր, ի՜րը պիտի ըլլար այդ կինը։ Այս մտածման մեջ, աչքերները կփակեր բնազդական կերպով, և սիրտը կսեղմվեր իր կրքին սաստկությենեն։ «Մառի՜ս, կյա՜նքս», պիտի ըսեր՝ իր կիզանուտ շրթունքներուն տակ փակելով անոր բերանը, իր աճառուտ բազուկներուն մեջ խեղդելու աստիճան սեղմելով զայն, իր կրքին գերագույն աստիճանին հասած և արդեն պատրաստ նվաղելու։ Այդ վայելքին մեջ ամեն բան պիտի մոռնար, ու նոր կյանք մը պիտի սկսեր իրեն համար, համակ խինդ և երջանկություն։ Իր բաղձանքները, այս երազատես անհագության մեջ, անօրինակ սաստկություն մը կառնեին և իր արյունը կմտրակեին։

Դ

— Ահ, դո՜ւք եք, Միքե էֆենդի, որչա՜փ ատեն է երևցած չէիք. կարծեմ դուրսն էիք։

— Այո, տիկին, գործերու պատճառով դուրս գացած էի։ Հազիվ Պոլիս վերադարձած, առաջին պարտավորությունս կնկատեմ ձեզ այցելություն տալ։

— Շնորհակալ եմ։ Կփափագեի միայն, որ մեկնած ժամանակդ ալ նույն հոգածությունն ունենայիք որպես հիմակ։ Կարելի՞ բան է հանկարծ ելլել երթալ, առանց գեթ լուր մը տալու։

— Իրավունք ունիք, տիկին։ Սակայն մի զարմանաք, եթե ըսեմ, որ դիտմամբ ըրի։ Ձեր առջևը հանցավոր գտնվելու պես հաճելի բան կա՞, տիկին։

Սիմյաններու շքեղ սրահին մեջ տեղի կունենար այս խոսակցությունը, տանտիրուհվույն և Միքեին միջև։ Բավական բազմություն կար, ոմանք խաղի սեղանին շուրջը հավաքված, այլք դաշնամուրին բոլորտիքը։

Երիտասարդին պատասխանին վրա, մանկամարդ կինը ժպտալով անոր երեսը նայեցավ։ Դեմքը ավելի թխացած էր, այտերը, ներս քաշված, ավելի կշեշտեին իր ամբողջ դիմագծության ազդու և առնական արտահայտությունը. խորն իջած աչքերուն մեջ սպառիչ կրակ մը կվառեր, իր նայվածքին տալով նվաճման և տիրապետության արտակարգ զորություն մը։

Երիտասարդն ալ իր կողմե ուշիուշով քննեց մանկամարդ կինը։ Աչքի զարնող փոփոխություն մը չէր կրած, բայց իր շարժմանցը, խոսվածքին ու նայվածքին մեջ հիմակ ավելի նվաղկոտ բան մը կար, որ զինքը տաք շնչով կենդանացնելու զգայնությունը կուտար դիմացինին։ Առաձգական գանաբեի մը վրա ընկողմանած, սկսան խոսակցիլ, իրենց շունչն իրարու խառնելով, այս անգամ կինն ավելի համարձակ ու անձնամատույց, թերևս այն մտածմամբ, թե ա՛լ պետք չկար տանջելու երիտասարդը, կարծելով մանավանդ, թե առջի անգամուն՝ Միքե իր ցուրտ և զգուշավոր վարմունքե՛ն հուսահատելով հեռացած էր։

Առջի կյանքը վերսկսավ Միքեի համար, հետզհետե ավելի բորբոքելով, ցորչափ կտեսներ իր նպատակին իրագործման մերձեցումը։ Տեսակ մը հիվանդ էր, տենդ ուներ հարաժամ, այլ իր գրգռված ջիղերուն օգնությամբ կշարունակեր իր կենցաղը։

Գիշեր մըն ալ, երբ Սիմյաններուն տունեն դուրս ելավ, այնչափ հուզյալ էր, որ փողոցին անկյունը կանգ առավ, սրտին հեքը դադարեցնելու համար։ Երկու-երեք ժամ նորեն խոսակցած էր մանկամարդ կնոջ հետ, բայց ի՞նչ խոսած էր, ի՞նչ խաղացած էր, ինչքա՞ն գումար կորսնցուցած էր, ճշգրիտ գաղափար մը չէր կա-

րող տալ։ Սիայն թե, խենթի պես կըսեր ինքն իրեն. «Վաղը ցերեկ տունը պիտի ըլլա»։

Գիշերը չքնացավ գրեթե, և մինչև հետևյալ ցերեկ սիրտը տրոփեց շարունակ, իր խոլական և հապճեպ զարկովը կուրծքը պայթեցնելու աստիճան։ Սիմյաններուն տունեն ներս մտած միջոցին ծընկերը հայտնապես կդողդողային, և սանդուղներեն վեր ելած ատեն, բարամբունքը բռնելու պետք ունեցավ։ Հետո սրահը մտավ, մինչ զինքն առաջնորդող սպասուհին, տիկնոջ իմաց տալու երթալե հետո, նորեն վար կիջներ խոհեմությամբ։ Ու առանց սրահն սպասելու, դիմացի սենյակեն անցնելով, քովի առանձնոցը մտավ, հոն տեսավ տիկին Սիմյանը **այուտայն** *երկար բեճյուտա մը հագած, ու, խոսք մը չարտասանած, թևերը բացավ ու գրկերուն մեջ առավ զինքը։*

Դուրսը անձրև կտեղար, գարնան հորդառատ անձրև մը, և շառաչմամբ կզարնվեր պատուհաններուն, ուր բյուրավոր անտեսանելի մատներ խոլական նվագ մը կհնչեցնեին։ Լայն վարագույրներ՝ կմեղմեին առանձնոցին լույսը, ուր փոքրիկ վառարան մը իր եղի տաքությունը կսփռեր։

Իր համբույրներով կծածկեր մանկամարդ կնոջ կիսախուփ աչքերները, սարսռացող ունգունքը, անոր շրթանցը վրա ծծելով իր մարմնույն բոլոր հաճույքը. հետո իր թևերուն մեջ վեր վերցուց զինքը և երկուքը միասին ինկան բազմոցին վրա, երիտասարդը արբշիռ և մոլորուն, Մառի՝ իր մինչև ոսկորներուն ծուծը ապականյալ կնոջ բոլոր ցանկությամբք։

Երբ որ ոտքի ելան, Միքե ցնցում մը ունեցավ. խառնաշփոթ բան մը կզգար իր ուղեղին մեջ, և ամեն բանե առաջ այդ սենյակեն դուրս, այդ կնոջ քովեն հեռի երթալու անդիմադրելի պետք մը։ Շեշտակի նայեցավ այդ կնոջ, զոր հինգ վայրկյան առաջ իր թևերուն մեջ հատցնել պիտի ըղձար, դառն ծալք մը արդեն շրթանց վրա, մոտեցավ, անոր ճակտին վրա ցուրտ համբույր մը դրավ, և առանց ետին դառնալու, սանդուղներեն վար վազեց։

Դուրս ելած ատեն, զարթնում մը ունեցավ, որ տարօրինակ կերպիվ կնմաներ անկման։ Հոգնություն չէր զգացածը, այլ անկե ավելի ճնշող բան մը, դառն, կսկծեցուցիչ, որ իր ուղեղը տակնուվրա կըներ։ Անձրևը տեղատարափ կտեղար, ջուրը իր ծոծրակեն ներս կսահեր՝ սարսռացուցիչ պտույտ մը ընելով իր մսին վրա, և ինք հովանոցը չէր բանար։ Ի՞նչ եղած էր իրեն. ինքն ալ չէր կարող

բացատրել։ Բայց չէ՛. այո՛, կըմբռներ, զինքն հուզող այլայլման զգացմանց մեջ, ամենուն տիրապետող զգացում մը կար,— պժգանքը. պժգանք իր իսկ անձեն։ Իր կյանքին վրա հետադարձ ակնարկ մը նետեց, և առաջին անգամ ըլլալով զղջման սուր ցավը իր սիրտը ծակեց։ Այն հաճույքն, որուն համար իր երիտասարդությունը քայքայած էր, իրեններեն բաժնված, պատիվը կորուսած, առողջությունը խանգարած, հիմակ նողկանք կազդեր իրեն։ Երեք տարիե ի վեր, երեք տարի շարունակ, զինքը կապող շղթան խորտակեց, անսահման վայելքով կոխելով իր բոլոր անձնասիրությունը, իր բոլոր փառասիրությունը։

Բանկալթիի շիտակ ճամփեն կերթար գլխիկոր, ակռաներուն մեջեն մռմռալով մերթ ընդ մերթ. «Ա՞յս է եղեր»։ Ասո՞ր համար ուրեմն իր կյանքը փչացուցեր էր։ Ու բոունցքը կգալարեր, իր իսկ անձեն վրեժ լուծելու մոլեգին խելահեղությամբ։ «Ա՞յս է եղեր»։ Ու միտքը կբերեր իր բոլոր տենդոտ երազները, իր երևակայության բորբոքումները, իր հեշտօրոր ցնորքները։ «Ա՞յս է եղեր»։ Մեկ մ՚ալ չպիտի դառնար այդ կնոջ քով, ո՜հ, չէ՛, բնա՛վ, չպիտի դառնար բնավ. չէ թե կվախնար, որ նորեն կիյնար անդունդին մեջ, այլ ինքզինքը կարող կզգար ահռելի բան մը ընելու այդ կնոջ, իր խորտակված կյանքին համարը վայրագությամբ պահանջելու անկից։ Այո՛, չպիտի երթար. իր բարոյական ուժին վրա վստահություն ուներ. կորովի բնավորություն ունեցած էր միշտ, իր անկումն իսկ ապացույց էր ատոր։

Այս որոշումն հանդարտեցուց զինքը քիչ մը, ու հիմա, սիրտը անհուն խանդաղատանքով մը լցված, ալ ակռաներուն տակեն չէր մռմռար, հապա վշտալի մելամաղձությամբ մը կմրմնջեր. «Ա՞յս է եղեր»։

Ու հյուսիսային սաստկաշունչ քամին իր երեսին կզարներ տարափը, ու հայտնի չէր, թե իր այտերն ի վար գլորվող ջուրը՝ անձրևին կաթիլնե՞րն էին, թե ոչ իր արցունքը։

1890

ՍՅՈՒԶԵՆԻԻ ՎԱՐՊԵՏ

Պարզ պատմություն մըն է ընելիքս։ Պատմություն բուն բառը չէ. մտացածին ու երևակայական դեպքերու այնպիսի ընկալյալ գաղափար մը կա այդ բառի մեջ, որ ճշտիվ չհամապատասխաներ

իմ ներկայացնելիք իրական պատկերիս։ Վերջ ու սկիզբ չունի. շատերուն ալ հետաքրքրություն չազդե գուցե։ Մեր ընտանեկան խոնարհ հարկերու մեկ պարզ դրվագն է. ու եթե բանի մը չծառայե, գեթ գաղափար մը կուտա, թե չքավոր ընտանիք մը ինչ միջոցներով կապրի Կ. Պոլսո մեր այլազան հայ ընկերության մեջ։

***

Էրկանը նամակին վրա Կարինեն Պոլիս եկեր էր Մարիամ տուտուն չորս զավակներովը, երեքը աղջիկ ու մեկը մանչ։ Հակոբ աղան հինգ-վեց տարիե ի վեր քաղաքեն Պոլիս պանդխտած, խանվեճիություն ընելով կճարեր իր ապրուստն և ավելցուցած դրամը կղրկեր հայրենիք, ամսե ամիս անդ դառնալու հույսով։ Ամիսներն ամիսներուն հաջորդեր էին, տարիներն ալ եկեր անցեր էին հետզհետե, և Հակոբ աղան, տեսնելով, որ դժվար պիտի ըլլա իր գործը թողուլ և սրտին մեջ տակավ ավելի բուռն զգալով կարոտն իր կնոջ և զավակներուն, որոց կրտսերագույնին երեսն իսկ տեսած չէր դեռ, Պոլիս կանչած էր զանոնք։ Խեղճ մարդը երկար ատեն չպիտի վայելեր այդ երջանկությունն, որ տարիներով իր երազները խռովեր ու իր սրտին առօրյա հնհնուքն էր եղեր։ Կնոջն ու զավակներուն Պոլիս հասնելեն երեք-չորս ամիս ետքը, ժանտատենդը առեր տարեր էր զինքը, գերեզմանին մեջ գտնելու այն հանգիստը, զոր իզուր որոներ էր աշխարհիս վրա։ Իր վերջին վայրկյաններու մտածումը իր ընտանիքին վիճակն եղած էր. խեղճ Մարիամը ի՞նչ պիտի ըներ իր չորս զավակներովը, այս մեծ քաղաքին մեջ, ուր ոչ ոք կճանչնար և ուր հանկարծ կմնար անօգնական և միանվորիկ։

Առջի մեկ քանի օրվան ցնցումեն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց։ Գավառացի կնոջ այն կորովի և հաստատ բնավորությամբ, որ տարակա պանդխտին տունը կանգուն կպահե գավառաց մեջ, սրտին խորը թաղեց իր վիշտը, արցունքը սրբեց և գործի սկսավ։ Իր մեծ տղան, Մկրտիչը, որ տասներեք տարու կար, բաշեց հանեց թաղային վարժարանեն և յազմաճի մը քով տարավ, որ իրենց դրացի էր։ Շաբաթականը որոշվեցավ հինգ դրուշ։ Թե՛ մորը և թե՛ տղուն ծանր եկավ վարժարանեն այս հանկարծական բաժանումը. Մարիամ տուտուն, առանց որոշ գաղափար մը ունենալու կրթության վրա, կարծիք կազմած էր, թե իր զավակը գրել

կարդալ գիտնալով միայն պիտի կրնար ճշմարիտ նեցուկ մը ըլլալ իր ընտանիքին։ Զարմանալի է արդարև, թե կրթության կարևորության մտածումն ինչ խոր արմատ կապած է հայ ընկերության ամենահետին խավերուն մեջ իսկ. ամենեն չքավոր հայը, պալքխեի թե թուլումպաճի, իրական ցավ մը կունենա իր զավակը վարժարանեն «քաշած հանած» ատեն, և դպրոցական թոշակին դժվարությունը կամ իր զավկին մեկ քանի դրուշի շահը միայն կարդարացնե զինքն հաչս իրեն և օտարներուն։ Մեր մեջ, կրթությունը պարտավորիչ ընելու օրենքի մը պետքը չպիտի ունենանք բնավ, գեթ ծնողաց համար. կարողության տեր ամեն հայ իր զավակը վարժարան պիտի տա. տարբեր բան է, թե տղան բան մը չպիտի սովրի հոն, և մեկ-երկու տարի իր գլուխը բթացնելե հետո բան բանի հոլովելով, օր մը մեկդի պիտի նետե գիրքն ու գրիչը և իր արյան մեջ զգալով հանկարծական հույզն այն անկախության և ազատության տենչին զոր հորմեն ժառանգեր և ապրած միջավայրեն ընդուներ է, ծովեզերք պիտի վազե գայլախաղներուն հետ խաղալու բոբիկ ոտներով կամ սխրանոք պիտի դիտե ջրհանին սարշավ անցքը՝ կաշմբուռն թևերու վրա համբարձիկ։

Մարիամի երկրորդ գործը եղավ տունը փոխել։ Երկու սենյակներով տուն մը կնստեին, ամսական երեք մեճիտի։ Ինքը խբրճիթի պես բան մը վարձեց, որ մեկ ընդարձակ սենյակ ու պզտիկ խոհանոց մը ուներ. տախտակամածներուն բացվածքեն երկինքը կտեսնվեր ու հովը անարգել կմտներ կելլեր ամեն ծակ ու ծուկե. բայց հանգիստը նայելու ժամանակ չէր, «գլուխը խոթելու տեղ մը ուներ», կբավեր իրեն, մանավանդ որ ամսական վարձքը երեսուն դրուշ էր միայն։

Իր էրկանը ժառանգությամբ զբաղեցավ ապա։ Հակոբ աղան բան մը չէր թողուր իր այրիին և զավակաց, բայց եթե իր վարձած սրճարանին աթոռակները, մեկ քանի կոտրած թիկնաթոռները, աղտոտ սեղաններ, մեկ-երկու երկոտասնյակ թաս ու գավաթ՝ յուրաքանչյուրը տարբեր-տարբեր տեսակե, մեկ քանի գունատ պատկերներ ճանճերու բիծերե արատավորյալ շրջանակներու մեջ, որք Ռուսիո կայսրը կամ Յորկիոս թագավորը կներկայացնեին՝ իր կնոջն և զավակներուն հետ, վերջապես խղճուկ սրճարանի մը բոլոր կահկարասիքը։ Այդ ամենը աճուրդի հանեցին, և Մարիամի ձեռքը երկու հարյուր դրուշ անցավ։

Այդ երկու հարյուր դրուշը՝ ամիս մը հազիվ կրնար բավել

իրենն։ Պետք էր, որ ինքն ալ գործի ձեռնարկեր լրջությամբ։ Կար կարել չէր գիտեր, որ օրական մի քանի ղրուշ ճարեր։ Ուրիշ բան չէր կարող ընել, բայց եթե լվացարարություն, և թաղին մեջ շուտով գտավ մի քանի հաճախորդներ։ Առջի օրը ամեն կողմե հանդիմանություններ լսեց իր անճարակության համար, պուղատան լավ չէր կրնար ընել. շիբիին համար, շիտակը, խոսք չկար. իր շղուտ ու զորավոր ձեռքներուն մեջ լաթը կճզմվեր ու կճմլվեր, ու մեկ քանի վայրկյանի մեջ ձյունի ճերմակություն մը կստանար։ Բայց քիչ-քիչ վարժվեցավ. տանտիրուհիները գոհ էին իր անխոսուկ աշխատասիրութենեն, մաքրութենեն և մանավանդ եռանդուն տոկունութենեն, որով մութին գործի կսկսեր և մութին կվերջացներ։ Թերներերան կտարածվեր իր համբավը, ու շատ տեղերե կուգային կփնտրեին զինքը։

Իր մեծ աղջկանը՝ Թագուհիին համար ալ պետք էր բան մը ընել. տասներկու տարեկան էր և արդեն ընտանեկան գործերու մեջ իր մորը աջ բազուկը. երբոր մայրը լվացքի կերթար, ինք իր տատամայր քրոջը հետ կհսկեր իրենց պզտիկ եղբորը վրա, երկու տարեկան հաստ ու կարմիր մանչ մը, ու վերեն վար կավլեր կսրբեր։ Եվ սակայն չէր կրնար այդպես մնալ մինչև վերջը։ Մարիամ գնաց գտավ սյուզենի բանող համբավավոր կին մը, որ իր քով պզտիկ աղջիկներ կառնուր, և աղաչեց, որ իր աղջիկն ալ աշակերտության ընդունի։ Թեպեր հանըմը չէ չըսավ. մինչև որ Թագուհին «վարպետ ելլար», իր բանածը տիրուհվույն հաշվույն էր։ Իրավ է, որ տանը մեջ մեծ պակաս մը պիտի ըլլար իր ցերեկյա բացակայությունը, բայց իր երկրորդ աղջիկը կրավեր հսկելու համար մատաղատի մանչուն վրա, իսկ տանը գործերը՝ առտուները և իրիկունները կրնար կարգադրել։

Մարիամ գործերը այսպես կարգադրելեն ետքը, ակռան սեղմեց ու... ապրեցան։ Ամսական իրարու վրա հարյուր ղրուշ կշահեր լվացարարությամբ։ Մկրտիչ, մեկ-երկու ամիս ետքը, շաբաթական տասը ղրուշ կառներ, և ցերեկին տասը փարայի հաց ու տասը փարայի պանիր կամ ձիթապտուղ ուտելով, մնացյալ յոթը ղրուշը կբերեր մորը կհանձներ շաբաթ երեկոյին։ Տանը վարձը վճարելե հետո, իրենց կմնար հարյուր ղրուշի չափ։ Ամեն շաբթու գլուխ, քսան օխա հացը մեկեն կառնեին, օթեկ հաց, հատը երեսուն փարայի, և շաբաթ մը կուտեին զայն. չոր հացը քիչ կուտվի, խնայողություն մըն է. հացին հետ սովորական խաբրին էր պա-

ներ կամ ձիթապտուղ, այն ալ գիշերները միայն. եթե երբեմն խաշած լուբիա ունենային, հարկինք մըն էր իրենց համար։ Տգայց հագուստներուն համար բարեբախտաբար ծախք մը չունեին. բարեսիրտ տանտիրուհիներ Մարիամի կուտային հին կոշիկներ, մաշած շրջազգեստներ, ներբանեն և քիթեն ծակած գուլպաներ, զորս մայր ու աղջիկ կձևեին կհարմարցնեին իրենց և պզտիկներուն։ Իրենց հագուստները հին էին, բայց պատռած մը կամ քակուք մը չկար վրանին։ «Ապրանք» չէր այս, գիտեր Մարիամ տուտուն, բայց ի՞նչ ըներ, ձեռքեն ի՞նչ կուգար. եթե կարենար, ամեն օր լվացքի կերթար. իր վաստակած օրական տասը ղրուշովը, ամսական երեք հարյուր ղրուշով, «վարդի պես կրնային ապրվիլ». բայց գործը ո՛ւր էր ամեն օր։ Տունը մնացած օրը երբեմն խապա կարեր կկարեր, օրական վաթսուն փարայի չափ շահելով, և անով կգներ ածուխը կամ կաղը։

Ընտանյաց բոլոր հույսը Թագուհիին վրա էր։ Թեպեր տուտուն կխոստովաներ, թե իր բոլոր աշակերտներուն մեջ ունեցած չէր այդչափ աշխատասեր ու բանիբուն աղջիկ մը. եթե ասանկ երթալու ըլլար, տարիե մը վարպետ կելլար։ Սյուզենի վարպե՞տ. այս էր իրենց երազը. մայր ու աղջիկ շատ գիշեր գլուխ գլխի տված կմտածեին այն հանգստության օրերուն վրա, զորս պիտի վայելեին այդ ըղձացյալ տիտղոսին ստացումեն ետքը։ Սյուզենի վարպետ։ Լավ բանող մը, եթե մանավանդ աբլաս բարձեր շինե, կրնա դյուրավ օրական հինգ ղրուշ վաստկիլ. սովորաբար, եթե այգքան դժվար գործեր չբանի, երեք ղրուշ կամ հարյուր փարա կրնա շահիլ. իրավ է, որ առջի շահերը մնացած չեն, շատ բանողներ ըլլալուն համար գիները կոտրած են, բայց դարձյալ Թագուհին պիտի կրնար հարյուր ղրուշ շահիլ ամիսը և այն ատեն...

Սյուզենին տեսակ մը ասեղնագործություն է բավական տարածված, որովհետև տիվալեն և անևաթոյեն ավելի դյուրին է։ Սյուզենիով կբանին ընդհանրապես բարձր, ծածկոցներ, շրջազգեստի քղանցքներ, արմայով, իփեքով, կլապտանով կերպասի վրա, Գրուսայի բարակ կտավի վրա։ Մայրաքաղաքիս մեջ բավական հարգի է, այլ ավելի շատ կղրկվի Եգիպտոս, Սուրիա, և քիչ շատ ալ Եվրոպա։ Փայտե մազի մը վրա կանցունեն կերպասը, կարկահի մը պես ձգելով, և հետո բանողը, ցուցամատին մեջտեղյա բռնակ մը անցուցած, իր հատուկ ասեղովը, որուն ծայրը կեռ է, կհյուսե թելը։ Սյուզենիին առավելությունը այն է եվրոպական գոր-

ծարաններե ելած նմանօրինակ արտադրության վրա, որ, օրինակի համար թյուլ վարագույրներուն վրա՝ ասեղները սմքած են, մինչ ձեռքով բանվածին մեջ՝ թասլախ կզարնվի, այսինքն ուլունքի պես հյուսքերը հատիկ-հատիկ են։

***

Տարին անցավ այս խեղճության ու այս հույսերուն մեջ։ Մկրտիչ շաբաթական մինչև երեսուն դրուշ «կշտկեր» հիմակ, Մարիամ ալ ավելցուցած էր իր հաճախորդներուն թիվը, բայց հանգըստությունը պիտի գար Թագուհիին վաստակին հետ մեկտեղ։ Եվ այդ օրը կմոտենար հետզհետե։ Թեպեր հանըմը հայտարարած էր, թե Թագուհին արդեն վարժված էր իր արհեստին և շատ չանցած վարպետ պիտի հաներ զայն։

Բաղձացյալ օրը եկավ հասավ վերջապես. շաբաթ իրիկուն մըն էր որոշված, «վարպետ»-ի տիտղոսը Թագուհիին տալու ձևակերպությանց բոլոր արարողությունը։ Շաբաթ մը առաջ պատրաստությունները սկսած էին. այն իրիկվան համար, «դուռ դրացին» հրավիրված էին։ Մարիամ, ամեն կերպ զոհողություն հանձն առնելով, շաբաթ առավոտնե ալյուրով հելվա մը կոխած էր և սերկևիլի անուշ պատրաստած, զոր հյուրերուն պիտի հրամցնեին. Մկրտիչ ալ իր ընկերներեն տղա մը պիտի բերեր, որ լավ արմոնիֆ կզարներ։

Իրիկվան իրենց ճաշը կանուխ ըրին։ Հրավիրյալները հետզհետե կուգային, դրացի պալըխճի Համբարձում աղան իր կնոջը և զավակներուն հետ, յազմանի խաչիկ աղային ընտանիքը, էսկիճի Սեփոն աղայի ընտանիքը և ուրիշ մեկ քանի կիներ։ Թեպեր հանըմը էն վերջը եկավ, և բազմոցին անկյունը բազմեցավ, ակնոցը հանեց քիթը անցուց, սիկառեթ մը բոլորեց և սկսավ ծխել։ Կզգար իր կարևորությունը, գիտեր, թե իր մեկ այոն կամ ոչը ինչ ահեղ նշանակություն ուներ այդ գերագույն վայրկյանին, ուստի խրոխտությամբ բազմած՝ արհամարհական նայվածքներ կնետեր չորս կողմը։ Սեննեկին մեկ անկյունը, դռան մոտ, աթոռակի մը վրա, Թագուհին կծկտած նստած էր, սպասելով այն հանդիսավոր վայրկենին, հորում բոլոր ներկայք, դատավորի պես, իրենց վճիռը պիտի տային իր վարպետությանը մասին։ Իսկ օրահի մեջտեղը, սեղանի վրա, մաղը դրված էր, կերպասին տակ ծածկված, որուն վրա պիտի կատարվեր փորձը։

Անուշը բերին, թիթեղյա ափսեի մը մեջ չորս արծաթ դգալներով, զորս Մարիամը իր բարեսիրտ հաճախորդներեն մեկեն փոխառած էր։ Չորս դգալը չէր օգտեր այդչափ բազմության, ուստի Մարիամ տուտուն մեկ կողմե դուրս կտաներ կլվար աղտոտ դգալները ու նորեն կբերեր։ Խահվեն ալ երկու անգամեն բերվեցավ։

Հետո խնդրեցին Մկրտչին բարեկամեն որ բան մը «չալե»։ Տղան նախ ալաթուրքա կեզինթի մը ըրավ, հետո ճեզայիր մը նվագեց։ «Ապրի՛ս, աֆերի՛մ»-ները չորս կողմեն տեղացին։

Վճռական վայրկյանն հասած էր։ Թեպեր հանըմը տեղեն ելավ համբաբար, ակնոցը շտկեց, սեղանին մոտեցավ, մաղը ձեռքն առավ և Թագուհիին դառնալով.

— Եկո՛ւր նայիմ, աղջիկս, մարիֆեթդ ցուցուր։

Թագուհին դողդղալով մոտեցավ, թոնախը մատն անցուց, ասեղը ձեռքն առավ, աթոռի մը վրա նստավ և ծունկերուն վրա զետեղեց մաղը։ Զգտյալ կերպասին վրա, ծաղկանց հիանալի նկար մը հյուսված էր, որուն մեկ ծայրը վարդի մը գիծերը միայն բաց մնացած էին, զորս Թագուհին պիտի լեցներ։ Նորատի աղջիկը գործի սկսավ, Թեպեր հանըմը նորեն իր տեղն անցավ, հրավիրյալք մեկ-երկու վայրկյան ուշադրությամբ դիտեցին ասեղին ելևէջը, հետո աստին դարձան, մտիկ ընելու արմոնիքին մեկ նոր նվագը, տաճկերեն երգ մը, որուն հիմա կձայնակցեին Մկրտիչը և ուրիշ մեկ քանի տղաք։

Կես ժամ հետո, վարդը ավարտված էր. ամենքը մեկեն իրենց տեղեն ելան և եկան սեղանին շուրջն հավաքվեցան. հավանության և հիացման ձայներ չորս կողմեն կլսվեին։

— Ապրիս, քրզրմ,— կըսեր Համբարձում աղան,— ապրիս, իշտե ես քեզի վարպետ հանեցի, մեկալներուն խոսք չիյնար։

— Վո՜ւյ, խերը տեսնաս հեմեն, Մարիամ տուտու,— կըսեր անդիեն ուրիշ կին մը,— աս ինչ ալլըման հյուսվածք, պոնճուխի պես փառ-փառ կվառի։

Թեպեր հանըմը տեղեն չէր շարժած. մաղը անոր առջև տարին. ակնոցը նորեն դրավ և ուշադրությամբ սկսավ դիտել բանվածքն. ամեն ոք անոր բերնեն կախված կմնար. և ահա ծանր ձայնով արտասանեց նվիրական բանաձևը.

— Է՛յ, ապրի՛ս, արթրի՛ վարպետ եղար, մարդդ խերդդ տեսնա, սա ծառքս պագ նայիմ։

Թագուհին, ուրախութենեն կաս-կարմիր կտրած, ծռեցավ անոր ձեռքն համբուրեց, և անմիջապես դուրս ելավ, որպեսզի հյուրերուն հրամցվելիք հելվան բերե, մինչդեռ սենեկին մեջ ամենքը կգովեին իր ճարտարությունը և աշխատությունը։

Հելվան բերվեցավ մեկ-երկու սկավառակի մեջ, և մեկը ուտելուն ավարտելուն պես, սկավառակին մեջ նորեն կլեցնեին և ուրիշի մը կհրամցնեին։ Հետո նորեն արմոնիքին ձայնը լսվեցավ, նորեն երգ, և կամաց-կամաց սկսան մեկնիլ։ Մկրտիչ, լապտեր մը ի ձեռին ընկերացավ Թեպեր հանըմին մինչև իր տունը. իր թևին տակ լաթի մը մեջ փաթթված խոշոր բան մը կար. «վարպետչեքն» էր այդ, այսինքն Թեպեր հանըմի տրված նվերը. սովորաբար վեց արծաթ դգալ է այդ նվերը, բայց Թեպեր հանըմ, գիտնալով Մարիամի վիճակը, հավանած էր ընդունելու մեծ թենճիրե մը, սան մը, զոր հիմա Մկրտիչ թևին տակ կտաներ։

Երբ ամենքը մեկնեցան, կրկնելով իրենց «խերը տեսնաս»-ը ու իրենք իրենց մնացին, Մարիամ գիրկը առավ իր աղջիկը, կաթոգին սեղմեց զայն իր նիհար լանջքին վրա, ու արցունքի կաթիլներ իր այտերն ի վար սկսան գլորիլ, այս անգամ սակայն գոհունակության արցունքներ, որք իր քաշված դիմագծերուն անճառ երանություն մը կպարգևեին։

1890

ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՒՅՐԸ

...Սենեկին մեջ, ամեն բան տակնուվրա էր։ Խառնիխուռն ցրված թիկնաթոռներ, երկու-երեք պարկ գիրք, սեղանի մը վրա առանյակներով մանր սրվակներ, բաց գրադարան մը, դարակներու վրա բժշկական փայլուն գործիներ, նշդրակներ, դանակներ, և այս ընդհանուր խառնաշփոթության մեջ կանգուն երեսունհինգտասնամյա տարեկան երիտասարդ մը, որ հագճեպով՝ պարկերուն մեջեն կառնուր գրքերը, կազմված մեծադիր գրքեր, և մատենադարանին մեջ կտեղավորեր կարգավ։

Անկյունը, բազմոցին վրա, ծերունի կին մը նստած էր, ճերմակ մազերով և կմրափեր։ Գլուխը, պզտիկ ցնցումներով հետզհետե խոնարհելով, ընդոստ կբարձրանար, և փակ արտևանունքը զարմացմամբ կբացվեին՝ անհանդարտ ու խռովյալ նայվածք մը նետելով չորս բոլորքը. հետո դարձյալ, արտևանունքը կգոցվեին, և գլուխը կվերսկսեր իր մեղմ վայրէջքը, մինչև որ կուգար իր ծնոտը հանգչեցնել կուրծքին վրա։

Մայիսի գիշեր մըն էր, ժամը երեքն անցած։ Սեղանին վրա բոցափայլ լամպար մը կլուսավորեր այս տեսարանը, նշդրակներուն պողպատին ցուրտ շողյունը ցոլացնելով, ստվերի մեջ թաղելով սենյակին անկյունը. պատին վրա, ծերունի կնոջ գլխույն ստվերը կնկարվեր խոլական մեծությամբ, անոր շարժումներուն հետ հետզհետե տարածվելով ու կծկելով, քթին ու ծնոտին զուգահեռական անհեթեթ գիծերը երկնցնելով ու կարճեցնելով։

— Մայր,— ըսավ հանկարծ երիտասարդը,— գնա՛ պառկե, հանգիստդ նայե։ Երկու օր է շատ հոգնած ըլլալու ես։

— Էյ սանի դուն ալ, Տրդատ, հերիք է ատչափը, քիչ մըն ալ վաղվան ձգե,— ըսավ ծերունի կինը աչքերը շփելով։

— Շիտակը, հոգնեցա. հիմակ սա գիրքերը մեկդի ձգեմ, թուղթերս մինակ տեղավորեմ, շատոնց է ասանկ երեսի վրա մնացեր են, պարապ տեղը տեղ կբռնեն։

Եվ, գրքերուն կույտին տակեն, թղթերու խոշոր ծրար մը քաշելով, բացավ զայն։ Թղթերը մեկիկ-մեկիկ աչքե կանցուներ, մեկ մասը կպատռեր կնետեր և մյուսները կդներ գրադարանին գզրոցին մեջ։

Երկու օրե ի վեր, տոքթոր Տրդատ Պարգեյան իր ընտանիքով այդ տունը փոխադրված էր, Բանկալթիի Շիտակ ճամփան։ Մինչև այն ատեն Ենի-Գաբու կնստեր, այլ տակավ իր գտած հաջողությունն և ավելի բազմաթիվ հաճախորդներ գտնելու հավանականությունն իրեն թելադրեր էին այս տեղափոխությունը։ Արդարև, առանց մեծ համբավի մը տեր ըլլալու, բավական համարում մը կվայելեր միջնակարգ ընտանյաց մեջ։ Թրպիյեեն էր[1], Փարիզեն չէր, բայց հոն ու Վիեննա գտնված էր։ Բարձրահասակ երիտասարդ մըն էր, կապուտակ աչքներով, որոց անուշ արտահայտությունն ամբողջ դեմքը կհամակեր հեզ ու տրտում մտախոհությամբ։ Աղքատները կսիրեին զինքն այն բարեհամբույր ու մարդասեր բնա-

[1] Օսմանյան Կայսերական Բժշկական Վարժարանեն։

վորության համար, որով տնանկին դռնեն դուրս կելլեր՝ առանց տանտիրոջ ձեռքը նայելու, և կարող ընտանյաց մեջ կհարգեին զինքն իր զգուշավոր բնավորության և անձնվեր եռանդին համար։

Իր ծերունի ծնողներուն և ամուրի քրոջը հետ կապրեր, որոց հանգստությունն եղած էր առաջվընե ի վեր իր միակ նպատակը։ Աղքատ ընտանիքի զավակ, իր ինքնօգնությամբ անոնց տված էր դյուրակեցիկ վիճակ մը, ու անոնց սիրույն ու գուրգուրանքին մեջ կսահեին իր հանդարտ օրերը։

Ծրարին թղթերը հետզհետե կանցնեին իր ձեռքեն, և դրադարանին գզրոցին խորը կանհետանային, կամ իրենց պատռված կտորներուն դարձդարձիկ անկումովը կերթային ավելցնել իր ոտքերուն առջև կազմված խառնափնթոր կույտը։ Դեղնած ու ծակծկված թղթեր կային ծրարին մեջ, հին նամակներ, այցաքարտեր։ Անոնց պարունակությանը վրա արագ նայվածք մը՝ կվճռեր իրենց բախտը։

Հիմակ իր ձեռքն առած էր գունատ թղթերու բարակ ծրար մը, որ գորշ ժապավենով մը կապած էր։ Անփութությամբ ժապավենը քակեց, բայց հաղիվ նայվածքին հանդիպեցան այդ նամակներուն կիսովին ավրված երկար ու բարակ գրերը, իր դիմագծերը կծկվեցան ցավատանջ։ Վայրկյան մը կանգ առավ, հետո՝ անգիտակցաբար աչքե անցուց այդ նամակները, անոնց արթնցուցած բաղմաբույլ հիշատակներուն մեջ մտացնոր, ավելի ենթադրելով, քան իրապես կարդալով անոնց ստորագրությունը, «Վերդին Միքայելյան», և ընդոստ շարժումով մը գզրոցին մեջ նետելով այդ թղթերը, պատուհանին քով գնաց և բացավ զայն։

Դուրսը խավար կտիրեր, այլ մայիսյան աստղազարդ երկնքի մը տարտամ ցոլացումովը մեղմացած։ Թեթև հով մը կփչեր, հեշտ և խնկաբուրիկ, փայփայանքի մը պես հաճոյական։ Բժիշկը, պատուհանին քով կանգուն, սկսավ մտածել, անցելույն մեջ մոլորած։

Այո՛, այո՛, շատ սիրած էր այն աղջիկը։ Իր չքավոր և աշխատալի ուսանողության տարիներուն մեջ, ան էր եղած միայն իր հոգնությունը մոռցնող ու իրեն արություն ներշնչող պատկերն։ Կհիշեր անոր նուրբ ու փափուկ դեմքը, որ իր մտքին մեջ մնացած էր անեղծ ու անջինջ, ու մանավանդ անոր լայն ու վճիտ աչքերը, իրենց սևորակ սպիտակուցին մեջ տարօրեն իմն[1] մելամաղձիկ։

1 Իմն— այստեղ նշանակում է՝ երբեմն։

Քսաներկու տարեկան էր ան, ու ինքը քսանչորս տարեկան։ Վկայական ստանալուն կսպասեր, որպեսզի կնության խնդրեր Վերդինը իր հորմեն, ճերմակեղենի խանութպան մը, որ մեծապես կհարգեր զինքը իր պարկեշտ բնավորության համար։ Եվ ահա օր մը մորմեն իմացած էր, թե «Վերդինին համար շնորհքով ուզող մը ելած էր», լավ կացության տեր ոսկերիչ մը։ Տրդատ մորը բան մը զրուցած չէր իր սիրույն և դիտավորության համար։ Այս լուրը չվրդովեց զինքը, վստահ էր, թե Վերդին պիտի մերժեր։ Եվ սակայն քիչ օրեն նշանախոսության լուրն ալ առավ։ Դիմում մը, ձեռնարկ մը չբրավ Վերդինի ծնողաց մոտ։ Կճանչնար ճերմակեղենի խանութպանը, անշուշտ բժշկական ուսանողին աղքատիկ ներկայեն ու անստույգ ապագայեն նախամեծար պիտի համարեր այդ ոսկերչին դյուրակեցությունը։ Իր վիշտը սրտին խորը թաղեց, սիրո վիշտ ու արժանապատվության ալ վիշտ, ու զգուշացավ կրկին անգամ տեսնելե այդ աղջիկը։ Դառն զարմանք մը ունեցավ միայն, ու անոր այդչափ դյուրավ հավանելուն համար արհամարհոտ կարեկցություն մը։ Վերջեն միայն իմացավ, թե հորը և աղջկան մեջտեղ ծանր կռիվներ տեղի ունեցեր էին, որոց մեջ սակայն հաղթվողը աղջիկն էր եղած։ Իր սրտին բոլոր խանդաղատանքն իր դասերուն տվավ, և իր ուսմանց տաժանելի աշխատության մեջ մոռցավ իր սերը։

Տարիներով սակայն, երջանկության և անդորր կյանքի այն հեռապատկերը, զոր իր մտքին մեջ ծրագրած էր՝ մերթ ընդ մերթ եկավ իր խորհուրդները խռովել։ Շատ կիներ և շատ աղջիկներ ճանչցավ, ու ոչ մեկուն մոտ ունեցավ իր երիտասարդության առաջին տարիներուն զգացմանց սրբությունը։ Մայրը միշտ հետամուտ էր զինքն ամուսնացնելու, և ինքը միշտ կհետաձգեր։ Տակավ առ տակավ մոռցած էր այն աղջկան վարմունքին անազնվությունը, ու կհիշեր միայն անոր նուրբ ու փափուկ հոգին՝ իր դյուրաբեկ ու գիրգ պատյանին մեջ, ու ամեն անգամ, որ մայրն ամուսնության խնդիրն առաջ կքշեր, մտքովը հետադարձ ակնարկ մը կնետեր այն խուսափուկ պատկերին։ Հարցուցած փնտրած չէր, թե ի՞նչ եղած էր Վերդին իր ամուսնութենեն հետո. հարս գացած էր հեռավոր թաղ մը, ինք վկայականն ստանալեն հետո Պոլսեն հեռացած էր բավական ժամանակ բժշկական պաշտոնով, դարձին՝ լուր մը առած չէր անոր նկատմամբ, տարիներ եկեր անցեր էին՝ իրենց հետ բերելով նոր հոգեր ու նոր մտածություններ, և ահա հիմակ

այդ դեղնած թղթի կտորներն իր մտքին մեջ կարթնցնեին հեռավոր հիշատակներ, հողմույն պես, որ մոխրին խավերը կտարտղնե՝ երևան բերելով անոնց տակ ծածկված կայծը։

Հանկարծ դուռը զարնվեցավ ուժգնորեն։ Բժիշկն ասդին դարձավ, և ծերունի կինը, որ այս անգամ ա՛լ խոր քնով կքնանար, գլուխը վեր նետեց ընդոստ, մրմնջելով.

— Ո՞վ է աս ատեն։

Հաջորդ վայրկյանին սենեկին դուռը բացվեցավ և իրենց սպասավորն երևցավ։

— Դուռը ո՞վ է, Մինաս,— հարցուց բժիշկը։

— Մեկը եկեր կհարցունե, որ նոր եկած տոքթորին տունը ա՞ս է։ Ես ալ հա՛ ըսի։

— Էյ, ի՞նչ կուզե։

— Հիվանդի համար եկեր է, աճելե է, պիտի առնի տանի ձեզի։

Բժիշկը սրտնեղության շարժում մը ունեցավ։

— Հեռո՞ւ տեղ է եղեր։

— Չէ՛, հոս մոտը, վարի փողոցը։

— Ելիր գնա, օդը շատ աղվոր է, խերու տեր կըլլաս,— ըսավ ծերունի կինը, որ կտեսներ իր որդվույն դժկամությունը։— Ես հոս կսպասեմ քեզի։ Ով գիտե ի՞նչ վիճակի մեջ են, որ ասանկ ատեն փողոցներն ինկեր են։

Հետո, սպասավորին դառնալով.

— Մինա՛ս,— ըսավ,— լապտերը վառե և ադայիդ հետ մեկտեղ գնա։

Բժիշկն ա՛լ չդիմադրեց և վերարկուն ու գլխարկն առնելով սանդուղներեն վար իջավ։ Դռանը առջև երիտասարդ մը կսպասեր, այլայլված դեմքով։

— Գործիք մը, բան մը առնելու պետք կա՞,— հարցուց բժիշկն երիտասարդին։

— Չէ՛, տոքթոր,— պատասխանեց մյուսը։

— Երթա՛նք։ Ի՞նչ է հիվանդությունը։

— Կուրծքի հիվանդություն, տոքթոր։ Երեք ամիս է անկողինն է։ Տոքթորը եկավ առջի իրիկվընե, բայց հիմակ հանկարծ շատ ավրվեցավ, իմացեր էինք ձեր հոս եկած ըլլալը, անմիջապես խելք ըրինք ձեզի դիմելու։

Եվ անխոսուկ շարունակեցին իրենց ճամփան, Մինասին լապտերին լուսովը լուսավորված։ Երկու-երեք քայլ հետո կանգ առին մեծ տան մը առջև, երիտասարդն իրարու վրա հնչեցուց դուռան զանգակը։ Դուռը բացվեցավ, և տարիքոտ մարդ մը, աչվրներն արցունքով լեցուն, բժիշկն առաջնորդեց մինչև մեծ սրահի մը դուռը, բացավ զայն, և խղդուկ ձայնով մը, որ դժվարավ կխուսափեր կոկորդեն.

— Հոս է հիվանդը։ Կինս է։ Աստծո՜ սիրուն, բան մը ըրե, տոքթոր, ձեռքե կելլա՜ կոր։

Լայն սենյակ մըն էր, լուսամփոփով ծածկված լամպարի մը աղոտ լուսույն ստվերներովը լեցուն։ Վարագույրները գոց էին։ Սենեկին մեկ անկյունը, անկողին մը կգտնվեր, ու քովը ջահակալ մը՝ դեղին սրվակներով, դգալներով, փոքր տուփերով բեռնավորյալ։ Անկողնին մեջ, սպիտակ ժանյակներով եզերյալ բարձին վրա գլուխն հանգչեցուցած էր կին մը, կիսախուփ աչվրներով, անսահման հոգնություն նկարված իր ներս քաշված դիմագծերուն վրա։ Դեմքը մեղրամոմի սպիտակություն ուներ, եթերային ու աննյութ գույն մը, որ ա՛լ այս աշխարհես չէր։ Իր գիշերազգեստին բացվածքեն վզին ոսկորները կերևային դուրս ցցված ու անոնց քով խոռոչներ հորս մորթը կկախվեր թուլորեն։

Տոքթոր Պարգևյան մոտեցավ, գորգին վրա ծունր դրավ և երբ իր նայվածքն հառեցավ այդ դեմքին վրա, իր բարոյական բոլոր քաջությանը պետք ունեցավ, որպեսզի մորմոքի, «ա՜հ» մը չարտասանե։ Բայց այդ կի՞նը, կճանչնա՞ր, իր Վերգինն էր. այդ դիմագծերը, թեև ոգեվարին ճգնաժամին մեջ գերագույն նիհարություն մը առած, կպահեին միշտ իրենց նախնի գեղեցիկ անուշությունը և աչվրները նույն այն խոռվիչ ու սևաթույր նայվածքն ունեին, որ իր մտքին ալուցը մեջ կենդանի մնացած էր։ Ժամանակ չունեցավ սակայն շարժում մը ընելու։ 922

Հիվանդն սթափած էր. իր նայվածքը չորս կողմ պտտցնելե ետք, անբացատրելի զարմացմամբ հառեց բժշկին վրա։ Իր վրիպուկ իմացականության սլացմանը մեջ ի՞նչ հանկարծական ցընցում արթնցուց իր ուղեղին արդեն թմրյալ կարողությունները, իր կյանքին անէացմանը մեջ ի՞նչ գերբնական ուժ գտավ՝ իր մտածումներն ամփոփելու և կեդրոնացնելու համար։ Ոչ ոք կրնար ըսել։ Բայց գլուխը ետ-ետ գնաց, աչվրները շողացին խնդալիր ճառագայթացմամբ. շրթունքը բացվեցավ՝ մանկական ժպիտ մը ուրվագրելով. «Ա՜խ, Տրդա՜ռ»,— մրմնջեց նվաղ ձայնով մը զոր

բժիշկն ավելի՛ գուշակեց շրթանցը շարժումեն, քան իմացավ և որ տաք շունչով մը գգվեց իր այտերը, և հուսկ հետին ճգով մը իր թևերը երկնցնելով, Պարգևյանի վզին փաթթեց զայնս, գլուխը վար քաշելով, այնպես որ անոր շրթունքը եկան հպիլ իր շրթանց, իրենց տամուկ տաքությանը մեջ խառնելով իրեն վերջին համբույրը։

Երբ բժիշկն իր գլուխն ազատեց այդ գերերկրային կաշկանդումեն, մահվան ցուրտն զգաց արդեն այդ մարմնույն շոշափման մեջ։ Ոգեվարը մեռած էր։ Իր դեմքին վրա խաղաղավետ անդորրություն մը կտիրեր հիմակ, անճառ երանություն մը գերաշխարհիկ, որ խնդուն հանգստություն մը կպարգևեր այդ մաքուր դիմագծերուն, ցավի հետքն իսկ չթողլով, և իր բաց աչվընները՝ գերագույն վայրկենին պայծառացմանը մեջ արձանացած՝ անհուն նայվածք մը ունեին, աշխարհային իրերեն վերացած, իրենց ապակենման անշարժությանը մեջ արտահայտելով սրտին վերջին հրճվանքը։ Պարգևյան նայեցավ բոլորտիքը, ոտք ելավ՝ իրականին գիտակցությունը կորուսած երազատեսի մը պես, իր ետին հավաքված մեկ քանի մարդոց ու կանանց հեկեկաձայն լացը դիտեց, և անվստահ քայլերով սենեկեն դուրս ելավ, սանդուղներեն իջավ, և դուռը բանալով դուրս նետվեցավ առանց նայելու Մինասին, որ վերարկուն ձեռքը կսպասեր և որ բան մը չհասկնալով իր տիրոջը վարմունքեն՝ լապտերը չվառած անոր ետևեն վազեց, վերարկուն թևին վրա, առանց համարձակելու խոսք մը ընել։ Երբ տուն հասան, բժիշկն իր սենյակը ելավ նույն մեքենական շարժումով։

Դռանը բացվածքեն, բժշկին մայրն արթնցավ իր մրափեն, ոտք ելավ և տղուն մոտենալով.

— Է՜յ, ի՞նչ է եղեր, Տրդատ։

Երիտասարդը պատասխան չտվավ, այլ բազմոցին մոտ երթալով, հոն ինկավ զանգվածի մը պես։

Ներունի կինը, դող ելած, զավակին քով գնաց.

— Ի՞նչ է ան, ի՞նչ ես եղեր։ Դուն շատ ավրված կերևաս կոր, երեսդ պատ է դարձեր, մոխիր կտրեր ես, ըսե՛, ի՞նչ ունիս. սի՞րտդ կխառնվի. իլիմոնաթա մը շինե՞մ. ճամփան վախեցա՞ր. չէ նե մի սիրտդ գեշ եղավ, տակնուվրա եղար, հիվանդը շա՞տ գեշ էր։

— Չէ՛, մայրիկ, չէ՛, բան մը չունիմ, անհանգիստ մի՛ ըլլար,— ըսավ վերջապես Պարգևյան։

Ներունի կինը բան մը չըսավ, իր մայրական խանդաղատանքին մեջ զգալով, թե այդ պահուն պետք չէր շատ կրկտել անոր

ներսի դին։ Բազմոցին անկյունը նստավ, զավակին գլուխն իր ծունկին վրա առավ, և սկսավ մեղմիվ շփել անոր հրատապ ճակատը։ Մերթ ընդ մերթ, երիտասարդին կուրծքեն տկար հառաչ մը կթռեր, ու անդամները կցնցվեին ջղաձգաբար։

Հետո քիչ-քիչ շնչառությունը մեղմացավ, շարժումներն հանդարտեցան, դեմքը վերստին գտավ իր սովորական արտահայտությունը՝ քիչ մը ավելի տխուր միայն, և մորը ձեռքին ճարտար շփումին տակ, որ կարծես անդորրության հոսանուտ մը կներարկեր իր մեջը, աչվընները գոցվեցան և քնացավ։ Մարմինը մի անգամ ևս ի գործ կդներ իր իրավունքները, մտքին թողլով թավալել իր սպառիչ հույզերուն ու տագնապներուն հորձանքն հարատև և հարանորոգ։

1890

Անժել

Առ Սիպիլ

Մեկ քանի անգամ մեր տանը մեջ հանդիպեցա իրեն։ Քրոջս շրջազգեստ մը կարելու համար կուգար։ Առաջին անգամեն, խոր տպավորություն ըրավ վրաս, հիացմամբ ու կարեկցությամբ խառն զգացում մը, իր գրավիչ գեղովը և մելամաղձիկ խոշոր աչվընուն անփոփոխ տրտմությամբ։ Այդ աչվընները՝ թավախիտ ծառերու ստվերներուն տակ ծածկված խորհրդավոր լճակի մը զգայնությունը կուտային ինձի, և անոնց մեջ հառելու հիմարական փափագ մը։ Ս

կտիրապետեր իր աչվընուն մեջ, և սպիտակուցը՝ այդ սևին հարակցությամբ ստվերացյալ՝ անսահման հրապույր մը կուտար անոնց։ Մութ շագանակագույն մազեր ուներ, այնչափ առատ, որ չէր գիտեր ի՛նչ ընել զայնս. երկու լայն խառնիխուռն հյուսկեններու կբաժաներ և տրոհյալ կամփոփեր ծոծրակին վրա, որ կարծես կկքեր այդ հաճելի բեռան տակ։ Նուրբ ու բարեձև հասակ մը ուներ. իր պարզ այլ ճաշակավոր շրջազգեստը կամփոփեր կուրծքին գեղեցկությունները, կաղապարելով անոր ուռուցիկ և գիրգ ցայտքը։ Բայց ամենեն ավելի սրտի կդպեր իր դեմքին անփայլ գունատությունը, և հարատև խոնավությունն իր աչվընուն, որպես թե միշտ արցունք ըլլար անոնց մեջ։

Անժել էր անունը, և քսանհինգ տարեկան ըլլալու էր։ Լուրջ ու ծանրագլուխ աղջիկ մըն էր, իր գործին միայն ուշադիր, գրեթե անխոսուն։ Երբոր խոսեր, այն ատեն կզդայիր, թե ընկերական լավագույն աստիճանի մը սահմանված էր այդ աղջիկը և պիտի կրնար իր կարողություններովը փայլիլ անդ։ Վարժարանե ելած էր անշուշտ, որովհետև մաքուր և անխառն հայերեն կխոսեր, քիչ մը ֆրանսերեն գիտեր, և բավական ալ դաշնակ կնվագեր։

Առջի օրերու զգուշավոր ծանոթությունը անցնելե ետք, շուտով բարեկամ եղեր էինք իրարու,— կամ, ավելի շիտակ զրուցելու համար, ե՛ս իրեն։ Կնահաճո մեծարանքներուս կպատասխաներ տխուր ժպիտով մը, որ ավելի կքաշալերեր զիս, քան կհուսահատեցներ, զի առիթ կուտար տեսնելու սպիտակ մանրիկ ակռաներուն գեղեցիկ շարքը։ Այն տարիքին մեջ էի, ուր նորածիլ երիտասարդության հանձնապաստանությունն և արյան կրակն ուժգին ու հորձեռանդն՝ մարդուս ընդնշմարել կուտան դյուրին հաղթանակներ ու անվաստակ հաջողություններ։ Կկարծեի, որ վերջ ի վերջո պիտի կրնայի հաղթել իր չկամությանը։ Իր վրայոք բան մը չէի գիտեր. տարտամ կերպով իմացած էի, թե անգամ մը նշանված էր, հետո նշանը ետ եղած էր, ինձի անծանոթ պատճառներով, զորս հետամուտ չէի եղած իմանալու, մանավանդ որ հազիվ յոթ-ութ ամիս է եկած էին մեր գյուղը, և շատ առանձնացյալ կյանք մը կանցուցեին, ինք, հայրն ու մայրը, գյուղին մեկ անկյունը։ Ինքզինքս արդարացնելու համար չէ, բայց սա ևս չմոռնամ ըսել, թե զիս դրդող զգացումը ցուրտ քմահաճույք մը կամ անառակություն մը չէր լոկ. գորովանաց զգացմամբ մը, ուր քիչ շատ բանաստեղծություն կմտներ, շատ դյուր պիտի ըլլար սրտիս մխիթարել այդ աղվոր տխուր աղջիկը։

Եվ սակայն առջի օրվընե ավելի հառաջացած չէի։ Ես մեծարանքներս կկրկնապատկեի, և ինք իր ժպտին տխրությունը։ Չեմ գիտեր ինչո՞ւ սակայն չէի համարձակեր երբեք խոսքե ի գործ անցնելու։ Իրմե հեռի գտնված ատենս, խոլ փափագներ կունենայի և զայնս հանկարծական թափով ի գործ դնելու հաստատ առաջադրություններ. և սակայն երբ զինքը տեսնելու առիթը կներկայանար, գաղտնի զորություն մը իրմե մեկ քանի քայլ հեռու կպահեր զիս միշտ։ Այդ գեղեցիկ արձանն իմ թևերուս մեջ ոգևորելու իղձով վառված էի, և ըղձանքիս անկարողությունը տեսակ մը բարկությամբ կլեցներ զիս։ Օր մը, ա՛լ չդիմացա, և առանց նկատելու

իր նայվածքին աղաչական արտահայտությունն՝ իմ սիրո խոսքերուս փոխարեն, իրեն մոտեցա, և ձեռքս թաղվեցավ իր մազերուն թավ հյուսկեններուն մեջ, անոնց մետաքսավետ շոշափմանը մեջ սաքսուալով։ Ոտք ելավ ընդոստ, գլուխն ազատելով ձեռքիս հպումեն, և մեղմ ձայնով մը.

— Ըրածնիդ լավ բան մը չէ, Մարտիկ էֆենդի,— ըսավ ինձի։

Իր խոնարհ դիրքը, և մանավանդ այն գառնուկի շարժումն, որով իր գլուխը խոնարհեցուցած և վեր առած էր՝ մազերն ազատելու համար, սիրտս շարժած էին, բայց այս փորձին մեջ իսկ հաջողած չըլլալուս զայրույթեն դրդյալ գոչեցի.

— Զգե՛, դուն սիրտ չունիս, անզգային մեկն ես։

Ըսի և զզջացի։ Իր լայն ու խոշոր աչվքները արցունքի խավով մը ծածկվեցան, և հանդիմանական արտահայտությամբ վրաս սևեռեցան։

— Կներեք,— ըսի զգացյալ,— եթե զձեզ վիրավորեցի։ Բայց եթե վիշտ մը ունիք, ըսե՛ք, մի՛ քաշվիք։

— Չէ՛, չէ՛, բան մը չունիմ,— պատասխանեց,— շատ աղեկ ըսիք, սիրտ չունիմ, կամ մանավանդ հիմակ չունիմ. ինձի համար ա՛լ բան մը չկա այս աշխարհիս մեջ, ո՛չ ցավ, ո՛չ ուրախություն։

— Շա՞տ վշտեր ունեցած եք,— հարցուցի՝ հանկարծակի հիշելով իր անցյալ կենաց վրա ունեցած անորոշ ծանոթությունս։

Պատասխան չտվավ։

Հետաքրքրությունս արթնցած էր։ Այդ տխուր աղջկան գաղտնիքն հասկնալ ուզեցի։

— Կարծեմ ատենոք նշանվեր եք,— ըսի վարանմամբ։— Ըսեք, ծանր վի՞շտ մը ունեցած եք։

Ինք իր վրա մեծ ճիգ մը ընելու երևույթն ուներ, և վերջապես պատասխանեց.

— Այո, վիշտեր ունեցած եմ։ Ինչո՞ւ կհարցնեք։ Տխուր պատմություն մըն է իմ կյանքս։

Եվ սպասողական դիրքս տեսնելով, շարունակեց.

— Դպրոցեն ելլելես երկու տարի ետքը նշանվեր էի։ Տասնեփնը տարեկան էի այն ատեն։ Բավական բան սովրած էի, բայց, շատերուն պես, մեծ հավակնություններ չունեի ինքզինքիս վրա։ Շատ բարեկեցիկ ընտանիք մը չէր մեր ընտանիքը։ Հայրս վաճառատան մը մեջ պաշտոնյա էր, և շատ բան մը չէր առներ։ Ուստի ուզեց ժամ առաջ ամուսնացնել զիս։ Գյուղին մեջեն երիտասարդի մը

հետ նշանվեցա։ Արսեն Տիգրանյան էր անունը։ Անունը թերևս կարդացած եք լրագրաց մեջ իր եղերական վախճանին առթիվ։ Առաջուց կճանչնայի զինքը։ Ճամփուս վրա միշտ հանդիպած էի իրեն, իր նայվածքովը լափելով զիս։ Ամեն տեղ դեմս կելլեր, և կզգայի, որ կսիրեր զիս։ Երբ մեր տունը սկսավ գալ երթալ և ընտանեկան շրջանակի մեջ որոշվեցավ մեր նշանախոսությունն, այն ատեն լիովին հասկցա իր սիրույն սպառող տենդը։ Քսանվեց տարեկան էր, և ինքն ալ վաճառատան մը մեջ գրագիր էր, բայց կարծեմ մեծ բան մը չէր առածը,— ինձի համար չեմ զրուցեր կոր այս բանը։ Գեղեցիկ չէր շատ, բայց կանոնավոր դեմք մը ուներ։ Լուրջ ու տխուր երիտասարդ մըն էր, և ժամերով դեմս կնստեր առանց խոսք մը զրուցելու, իր նայվածքին մեջ դնելով սակայն իր բոլոր սերն ու խանդաղատանքը։ Ես զինքը... բոլոր հոգովս չէի սիրեր, բայց շատ կհարգեի։

Այդ միջոցներուն էր, որ, օր մը հանկարծ դադրեցավ մեր տունը գալե։ Իմացա, որ հայրս ուրիշի մը բերնով լուր ղրկած էր իրեն, որպեսզի ա՛լ մեր տունը չիգա։ Նույն կիրակի օրը եկավ, բայց մայրս վերեն տեսավ անոր գալը, և դուռը բանալ չտվավ։ Ինձի ալ ըսին, թե ուրիշ մեկու մը հետ պիտի նշանվեի, փայլուն ու դյուրակեցիկ երիտասարդի մը հետ, որ ինձի դուրսը տեսեր և շատ հավներ է։ Ա՛լ չորս կողմես պաշարեցին զիս, և կարծես մրցման ելած էին Արսենին վրա գեշ զրուցելու համար։ Շատ բարկացոտ է եղեր. ինքզինք անգամ չկրնար ապրեցնել, ո՞ւր մնաց կինը. ասկից զատ, սուսիկ-փուսիկ մարդ մը, դիմացը նստողը վերեմ կըլլա։ Ինչ որ է, մեկ-երկու ամիս վերջը նորեն նշանվեցա։ Արսենին տված ոսկի մատանին ետ ղրկեցի։ Չընդունեց և մատանին ետ ղրկեց, ըսելով, որ իբր իրեն մեկ հիշատակը պահեմ։ Կտեսնեք, սա ձեռքի մատնիս է։ Կըսեի կոր, որ երկրորդ անգամ նշանվեցա։ Պիտի ըսեք անշուշտ, որ շատ շուտ համոզվեցա։ Թերևս իրավունք ունենաք։ Բայց մտածե՞ր եք անգամ մը մարդկային սրտին տկարությանը վրա։ Սրտիս շատ ծանր եկավ Արսենեն բաժնվիլս. մանավանդ որ տխուր նախազգացում մը ունեի, թե ի՛նչ ծանր հարված մը պիտի ըլլար այս իրեն։ Բայց, տկար գտնըվեցա։ Առջի օրերը բավական դիմադրեցի. բայց հետո ընկճեցա, և ա՛լ դիմադրելու կարողությունս չմնաց։ Այնչափ ըսին, այնչափ ըրին, որ խելքս գլխես գնաց։

Երկրորդ նշանածս երեսուն-երեսունհինգ տարեկան մարդ մըն

էր։ Շեն և ուրախ մարդ մը։ Մասնավոր դեղարան ուներ, և կըսեին, թե բավական լավ վիճակի տեր էր։ Անունը տալու պետք չի կա, հիմակ ամուսնացած և զավակներու տեր է։ Գեղեցիկ դեմքով մարդ մըն էր, առույգ և կայտառ։ Երբոր մեր տունեն ներս մտներ, ուրախությունն ալ հետը կբերեր։ Հայրս և մայրս մասնավորապես հոգի կուտային իրենց փեսացուին համար։ Իրեն նկատմամբ ունեցած զգացումներս չէի գիտեր լավ, բայց մեծ հաճույք կառնեի իրմե, այնչափ որ հետզհետե կմոռնայի Արսենին բաժանման թողած ցավալի հիշատակը և խղճահարությունը։ Առջի չորս հինգ ամիսը խիղճս միշտ կտանջեր զիս, մանավանդ որ կիմանայի, թե խեղճ երիտասարդը շատ կոտրված էր այս դեպքին վրա և բոլորովին տխուր։ Բայց հետո բավական հանդարտեցա, որովհետև մայրը, իր զավակին վիճակը տեսնելով, ուրիշ աղջկան մը հետ նշաներ էր զինքը։ Ուստի ա՛լ ինքզինքս նոր նշանածիս տված էի։ Հաճախ պտույտի կելլեինք ամենքս միատեղ, շատ անգամ ալ երկուքս միայնակ, և այնչափ կատակներ ու զվարճալի խոսքեր կըներ, որ ինքզինքս կբռնեի խնդալես չմարելու համար։ Նշանտուքն եղած լմնցած էր և արդեն հարսանիքի պատրաստություններով կզբաղեինք տանը մեջ։

Կիրակի իրիկուն մը... այդ իրիկունը մտքես չպիտի ելլա...

Խորունկ հառաչանք մը արձակեց, և, պահ մը լուռ մնալե հետո շարունակեց վերստին.

— Կիրակի իրիկուն մը, նշանածիս հետ միայնակ դուրսը կպտտեինք ըստ սովորության։ Զվարճալի պատմություն մը կըներ նորեն, և ես, իր թևեն կախված, գլուխս իրեն գլխին մոտեցուցած, ժպտալով մտիկ կընեի իր խոսքերուն... երբ հանկարծ դիմացս տեսա... Արսենը։ Մեր բաժանումեն ի վեր տեսած չէի զինքը։ Տարօրինակ կերպով դեղներ ու նիհարցեր էր։ Շեշտակի աչվըներուս մեջ նայեցավ, և իր նայվածքին մեջ ամեն բան կար, տխրություն, դառնություն, աղերսանք։ Ժպիտը կես մնաց շրթունքիս վրա։ Այլ անշուշտ տեսած էր իմ անփույթ զվարթությունս, որովհետև թևերը կախեց հուսահատությամբ և դեմքն այնչափ կծկվեցավ, որ կարծեցի, թե պիտի լա։ Ինքը կանգ առավ, և մենք շարունակեցինք մեր ճամփան. բայց քովնտի տեսա, որ ձեռքը, տենդոտ դողդոջումով մը, իր վերարկուին ետևի գրպանը կտաներ։ Չեմ գիտեր ինչպե՞ս եղավ, բայց հասկցա, թե գեշ բան մը պիտի պատահեր, աչվըներս գոցեցի և խենթի պես փաթթվեցա նշանածիս թևին՝ գլուխս

անոր ուսին կոնթցնելով, երբ հանկարծ հրազենի մը բոմբյունը լսվեցավ մեր ետևեն, հազիվ հինգ-վեց քայլ հեռվեն։

Իր աչքերն ավելի խոշորացած էին հիմակ, ու անոնց մեջ այդ ահռելի տեսարանին սարսափը կկարդացվեր այնչափ կենդանի, որ կարծես դեպքը տեղի կունենար ճիշտ այդ վայրկենին։ Իր դժգույն դեմքն ոգևորված էր և գունատ այտերուն վրա թեթև կարմրություն մը սփռված։ Զայնը հիվանդոտ շեշտ մը առած էր, շնչահատ ելևէջներով։ Ու երաղատեսի մը պես, եռոտանույն վրա բարձրացած պյութենյան քրմուհվո մը ներշնչմամբ շարունակեց իր պատմությունը, կյանքի այդ ահռելի տռամն, որ իր սպառիչ հիշատակներուն խաղալիք ըրած էր զինքն անկից ի վեր։

— Չորս կողմե վազեցին եկան։ Աչքս ետիս դարձնելու քաջությունը չունեցա։ Այդ տեղեն բաժնվելու, վայրկյան մը չանցած հեռանալու փախչելու պետքն ունեի և գրեթե բռնի կքաշեի նշանածիս թևեն, որ հոն մնալ կուզեր, հետաքրքրութենե շարժյալ։ Երբոր տուն դարձա, սրահը թողուցի զինքն, ուր հորս և մորս կպատմեր տեղի ունեցած եղելությունը, և ես, գլխու ցավ մը և ջղերու ցնցում մը պատրվակելով, սենյակս քաշվեցա, անկողնիս վրա նետվեցա ու խենթի պես սկսա լալ։

Այն գիշերը չկրցա քնանալ, ու հաջորդ շատ գիշերներ ալ։ Անկողին մտածիս պես, աչքիս առջև կուգար հանկարծ Արսենին տրտում ու լուրջ դեմքն, որ ինձի աղերսական նայվածք մը կնետեր, ու ձեռքը գրպանին տանելով, ռևոլվերը կհաներ ու բերանին մեջ կպարպեր. և ռևոլվերին ձայնը միշտ կհնչեր ականջիս մեջ, մինչև ուղեղիս խորը, մինչև սրտիս խորունկները թնդալով։ Մոռցա ըսելու, որ երբոր ճամփուն վրա եկեր զինքը վերուցեր էին, արդեն մեռած էր. ռևոլվերը բերանին մեջ պարպած էր։ Եվ ե՛ս եղեր էի իրեն մահվան պատճառը։ Ինչպե՞ս չէի հասկցեր, թե սովորական մարդ մը չէր ինքը, և թե անփութությամբ չպիտի կրնար տանիլ իր սրտին տրված հարվածը։ Այն հազվագյուտ մարդիկներեն էր, որք կա՛մ կսիրեն, կա՛մ կմեռնին։ Իրեն համար, զիս սիրելը պարզ քմահաճույք մը չէր եղած, հապա սրտի անդիմադրելի պետք մը։ Եվ ես կարևորություն տված չէի՛ բնավ այն ամենուն, ու թեթևությամբ ստանակոխ ըրած էի զինքը։ Ինչպե՞ս չէի հասկցեր իր սիրտը։ Հետզհետե կբմբռնեի իր սիրույն մեծությունը, և այս հետադարձ զղջմանս մեջ, հիմա կսիրեի զինքը, ինձի համար մեռնելե՛ն ետքը։ Դեռ նոր կհասկնայի իր անսահման սերը։ Եթե՛զ տղա, կարծեր էր, որ պիտի կրնար մոռնալ զիս, կամ թե այնպես հավատացուցեր էին իրեն. որովհետև վերջեն իմացա, որ անգամ մը միայն գացեր էր իր նշանածին և ա՛լ ոտք չէր կոխած անոր տունը։ Եվ հետո, երբոր զիս տեսեր էր ճամփուն վրա, իր ավերակ կյանքին բոլոր ոչնչությունը աչքին առջին էր եկեր, և ի գործ դրեր էր իր սոսկալի մտադրությունը։ Անշուշտ շատուց ի վեր է, որ այս մտածումն իր միտքը կտանջեր, թե ոչ ինչո՞ւ ռևոլվեր պիտի պահեր գրպանը։ Իմ աչքիս դիմացը մեռնիլ ուզեր էր, իր արյանը դատապարտությամբը պատժելու համար զիս։

Ա՛լ այնուհետև ինձի համար կարելի չէր ուրիշի մը հետ ապրիլ, նորեն ուրախ զվարթ ըլլալ։ Հաջորդ կիրակին, երբ նշանածս եկավ չերեցա իրեն։ Հայրս և մայրս իմացեր էին եղելությունը, գիտեին Արսենին անձնասպանության պատճառը, և երբոր ըսի, թե նշանտուքը ավրեն և լուր ղրկեն նշանածիս, որ ա՛լ մեյ մըն ալ մեր տունը չիգա, չկրցան դեմ կենալ։ Պարզապես կպժգայի այդ մարդեն, երբ մանավանդ մտքիս առջև կբերեի երկուքին պատկերը։ Հաջորդ ամսուն իմացանք, որ նշանածս ուրիշի մը խոսք տվեր է։

Անկից ի վեր բավական տարի անցած է։ Շատեր ուզեցին զիս, և ամենուն մերժողական պատասխան տվի։ Երբոր հայրս և մայրս շատ ետևես իյնային, Արսենին անունը կուտայի, և ա՛լ ձայն չէին հաներ։ Անոր հիշատակին նվիրեցի ինքզինքս, և այդ հիշատակովը կապրիմ։ Իրմե այս մատանին միայն մնացած է ինձի, և գերեզմանին մեջ հետս պիտի տանիմ այս մատանին։ Հիմակ հասկցաք, թե ինչո՛ւ տխուր եմ։ Սիրո խոսքեր կընեք ինձի, ձեր տարիքին անզուսպ եռանդովը, բայց կհասկնաք հիմա, թե որչա՛փ հեռու են ինձմե այդ խոսքերը։ Հորս ու մորս բեռ ըլլալ չէի ուզեր, ուստի արժանապատվություն և այլ զգացումներ մեկդի թողլով, կար կարող եղա, ինքզինքս ապրեցնելու և իմիններուս օգնելու համար։ Ուրիշ բան ի՞նչ փույթ ինձի։ Ո՛չ մեկ փափագ ունիմ, ո՛չ մեկ փառասիրություն։ Սիրտս մեռած է։

Ոտք ելավ, իր կարերը ժողվեց և ծրարին մեջ դրավ մեքենաբար, հետո ձեռքն ինձի երկնցնելով.

— Մնաք բարով,— ըսավ։

Խոսք մը չգտա իրեն պատասխանելու համար։

1890

— Ջրսեմ ըսի ամա, չպիտի ըլլա,— գոչեց Էլպիս հանըմը իր ամուսնուն։— Ինձի նայե՛, Հակոբջան աղա, սա ըսե մեր Սեդրակին, էրկու օրե ի վեր դպրոց գացած չունի։ Տունեն դուրս էլլալուդ պես, նայիս մեր յատիկյարը թրրրս-թրրրս տուն կուգա. մեյեր դպրոց կերթամ տեյի, մեզի կխաբե կոր եղեր, վերի փողոցեն քեզի կյոզեթլեմիշ կընե եղեր։ Ա՛լ անկե ետքը կրնաս նե դպրոց խրկե, պոռալուն կանչոտվելուն սոնը չի գար։ Ա՛լ չեմ դիմանար կոր, դպրոց գնա ըսելով պերանս մազ բուսավ։ Տուն[1] խոսք հասկցուր սա հայլազին։

— Հո՛ս էկու նայիմ ծո՛,— ըսավ Հակոբջան աղա տասնտասներկու տարեկան տղու մը, որ բազմոցին մեկ անկյունը կծկըտեր նստեր էր սարսափահար։

Տղան տեղեն չերերաց։

— Ծո՛, հոս չի գա՞ս, շա՛ն զավակ,— պոռաց այս անգամ այնչափ ուժով, որ տղան ընդոստ տեղեն ցատկեց և, իր նիհար ու բարակ սրունքներուն վրա գինովի պես տատանվելով, եկավ հորմեն երկու-երեք քայլ անդին կանգնեցավ։

— Չէ՛, չէ՛, հոս մոտս էկուր,— ըսավ Հակոբջան աղան անոր թևեն բռնելով և առջին քաշելով։— Սա ըսե նայիմ ինչո՞ւ դպրոց չես էրթար կոր։

Տղան չպատասխանեց, գլուխը կախած և աչվընները գետին խոնարհեցուցած։

— Ջրսե՞ս, ծո։ Աս մենք քեզի համար պոշ տեղը վիրա փարա՞ պիտի տանք դպրոցին։ Ամեն շաբթու կլոխ տուն ծառքովդ[2] վարժապետիդ կտանիս կոր քառսուն փարան։ Քառսուն փարա վաստակած ունի՞ս էմրիդ մեջ։ Հայտե՛, ըսե նայինք ինչո՞ւ դըպրոց չես էրթար կոր։ Չի պիտի ըսես, հա՞։

Եվ իր երկաթագործի լայն ու կոշտ ձեռքը այնպիսի ապտակ մը իջեցուց տղուն երեսին, որ Սեդրակ, բարձրաձայն լացի և հեծեծանքի մեջտեղ, գետինը գլորեցավ։

Էլպիս հանըմը տեղեն ցատկեց, զավկին քովը գնաց, և իր գիրկն առնելով զայն բազմոցին անկյունը տարավ, թաշկինակով մը անոր արցունքները սրբելով. հետո էրկանը դառնալով.

— Էյ տուն ալ փեֆ խայրե էս, մա՛րդ։ Կուր տետրէ բսե էոլտյուր տեմետի՛ֆ ա (զարկ ըսինք նե մեռցուր չըսի՛նք ա)։

— Քա սեոյլեսին, նեյե՞ սեոյլեմյոր (թո՛ղ ըսե, ինչո՞ւ չըսեր կոր)։

Էլպիս հանըմը գիրկն առած էր զավակը, և զայն փայփայելով.

— Էյ տուն ալ չըսե՞ս, ի՞նչ կըլլա, քեզի չպիտի ուտեն ա։

— Ի՞նչ զրուցեմ, մայրիկ,— ըսավ վերջապես Սեդրակ արցունքներուն մեջեն,— աս պատռտած լաթերովս ինտո՞ր դպրոց էրթամ, ամենքը վրաս կխնտան կոր. անցած օր վարժապետը ըսավ, որ վրադ գլուխդ քիչ մը շտկել չի տա՞ս։ Ամենքը նոր-նոր հագվեր են, ես մինակ ասանկ ծրվիկ-ծրվիկ լաթերով դպրոց կերթամ կոր։

Հակոբջան աղան, որ ալ հանդարտած էր, կնոջը նայեցավ հուսահատությամբ։ Զավկին խոսքերը սրտին դպեր էին։ Ինքն ալ, իր աղքատության մեջ, հպարտ եղած էր միշտ, և իր զավկին այդ զգացումը հաճո կուգար իրեն։ Կնոջը ձեռքեն առավ Սեդրակը, և քովը նստեցնելով.

— Մի՛ լար, տղաս, մի՛ լար, դուն վաղը դպրոց գնա նորեն, ես քեզի աղվոր ձեռք մը լաթ կառնեմ, աղվոր-աղվոր կհագնի։

Եվ սիրտն այնչափ լեցած էր, որ աչվընները թրջվեցան։

* * *

Ըսելը դյուրին էր, բայց գործադրելն ինչքա՞ն դժվար։ Գործերուն վիճակն հայտնի է, և երկաթագործը, արյուն քրտինք մտնելով, հազիվ կրնար իր ընտանյացն օրական ապրուստը հոգալ։ Ո՞ւր տեղեն պիտի կրնար քով-քովի բերել չորս-հինգ մեճիտ, զավկին ձեռք մը զգեստ առնելու համար։ Եվ սակայն պետք էր, առնելեն զատ ուրիշ ճար չիկար։

Երիկ կնիկ գլուխ գլխի տվին, և որոշեցին հայթայթել այդ գումարը, Հակոբջան աղան քիչ մը ավելի աշխատելով և Էլպիս հանըմը քիչ մը ավելի խնայողություն ընելով։ Պակսած մեկ-երկու մեճիտն ալ երկաթագործը տեղե մը փոխ պիտի առներ, և ա՛լ պզտիկ Սեդրակը չպիտի ամչնար իր ընկերներուն և դասատուներուն քով։

[1] Դու։

[2] Ձեռքովդ։

* * *

Եվ իրիկուն մը, Հակոբջան աղան տուն կդառնար խնդումերես, թևին տակ մեծկակ կապոց մը, զոր բոլոր հոգովը կսեղմեր։ Երբոր տանը դռան առջև հասավ, կմտածեր վայրկյան մը եռքը տեղի ունենալիք տեսարանին վրա։ Սեդրակ դուռը պիտի բանար, կապոցը ձեռքեն առնել պիտի ուզեր, բայց ինք չպիտի տար. ի՞նչ ըլլալը պիտի հարցներ, բայց ինք պիտի պատասխաներ, թե իրեն կյուրե բան չէ։ Հետո սենյակը պիտի երթային, և հոն, անտարբերությամբ, տղուն պիտի ըսեր, որ առնե բանա կապոցը, և այն ատեն...

Դուռը զարկավ տիրաբար։ Կսպասեր, որ, ամեն իրիկվան պես, Սեդրակը անմիջապես դուռը բանար և իր ձեռքին նայեր։ Քիչ մը ատեն անցավ, և որովհետև բացող չիկար, նորեն զարկավ, այս անգամ ուժգնակի... Է՜հ, եթե ներսեն գիտնային, որ հետը ի՞նչ կբերեր։ Վերջապես էլպիս հանըմը դուռը բացավ։ Երկաթագործն անմիջապես նշմարեց, որ կոտրածություն մը կար դեմքին վրա, երեսները կախ, շարժվածքը դանդաղ։ Էլպիս հանըմը մեքենաբար ամուսնույն ձեռքեն առնել ուզեց կապոցը, մինչ երկաթագործը, սիրտն արդեն անձկությամբ պաշարված, հարցուց մտատանջությամբ.

— Ո՞ւր է Սեդրակը, տե՞ղ խրկեր ես։

— Չէ, ներսն է,— պատասխանեց կինը կցկտուր կերպով,— ցորեկին քիչ մը քիթը կախ էկավ դպրոցեն. հիմակ կրակներուն մեջն է. պան մը չէ, տող մելլար, բեսկին նեվազիլ ըլլալու է։

Երկաթագործը, կապոցն ի ձեռին, հապճեպով սենյակը մտավ։ Բաղմոցին վրա Սեդրակ պառկեր էր, վերմակ մը վրան։ Դռանը բաղվածքեն արթնցավ, հոգնած աչքերը հորը վրա պտտցուց և նորեն փակեց։

— Ցոլո՞ւմ, ի՞նչ ունիս, հիվա՞նդ ես, մեկ տե՞ղդ կցավի կոր։

Եվ որովհետև տղան չէր պատասխաներ.

— Հայտե էլիր նստե՛ նայիմ, իմին քա՜շ զավակս, իմին ասլա՜ն զավակս։ Նայե քեզի ի՞նչ բերի։

Եվ արտորանքով կապոցը քակելով, վերարկուի մը, բաճկոնակի մը և տաբատի մը ծայրերեն բռնած՝ օդին մեջ երերցուց ուրախությամբ։

Սեդրակ աչվքները բացած էր արդեն։ Իր մարած նայվածքին մեջ անսահման հրճվանքի նշույլ մը ցոլաց, այլ քիչ հետո աչվքները նորեն փակեց։

Այն ատեն երկաթագործն հագուստները բազմոցին մեկ անկյունը նետեց, տղուն մոտեցավ, ձեռքը անոր ճակտին վրա դրավ, և մարմնույն հրատապ տաքությենեն վախցած, դարձավ իր կնոջը, որ սենյակեն ներս մտած էր.

— Էլպի՛ս,— ըսավ,— ասիկա անանկ նեվազիլի պան չէ։ Անտպա էրթամ էզանին կանչե՞մ։

— Կեցիր նայինք մինչև վաղն առտու ինտո՛ր կըլլա, անկե ետքը պան մը կընենք։

* * *

Հետևյալ առավոտ, պզտիկը ավելի ծանր վիճակի մեջ էր։ Դեղագործն և իրմե հետո բժիշկը եկան հաստատել, թե տղան կարմրուկե բռնված էր։ Համաճարակին ատենն էր այս։

Երկաթագործին և կնոջ համար, ամեն բան իրենց զավկին վրա կենդրոնացած էր, խեղճ պզտիկը կտառապեր, կոկորդեն մանավանդ, և համառաբար կմերժեր դեղ առնելը։ Հայրն ու մայրը ուրիշ միջոց չէին գտած, բայց անոր նոր հագուստները դիմացը կերևցնեին, հազար գգվական խոսքերով, կամ իր վերմակին վրա կիջնեին, որ անոնց հետ խաղա, և Սեդրակ՝ իր նողկանքը զսպելով, բերանը կբանար դգալին։

Հիվանդությունը մահացու էր սակայն։ Ութ օր չանցած խեղճ պզտիկը կմեռներ։

* * *

Անշուք հուղարկավորություն մը ունեցավ։ Երկաթագործը տգու մը պես կուլար իր մեկ հատիկ զավկին դագաղին ետևեն։

Երբոր տուն դարձավ և բոլոր բարեկամները ճամփեց, կնոջը քովն ելավ, որ վերի սենյակը քաշված էր միայնակ։ Իրիկուն եղած էր արդեն։ Ուղղակի կնոջը քով գնաց, որ բազմոցին անկյունը նստած էր լռիկ և անձայն։ Էլպիս հանըմը ծունկերուն վրա տարածած էր հեգ Սեդրակին նոր հագուստները, և զայն կդիտեր թաց աչվքներով։

Երկաթագործն ինքն ալ ձայն չի հանեց։ Կնոջը քովը նստավ,

հագուստներուն մեկ մասն իր ծունկին վրա քաշեց և ինքն ալ սկսավ լռիկ արտասվել։

Իրենց անհուն վշտին մեջ, բան մը չէին գտներ իրարու ըսելու։ Վերջապես էլպիս հանըմը, հեկեկանքի մը մեջ պոռթկալով.

— Ա՜խ,— ըսավ,— խրսմեթ չեղա՜վ, որ հագնի։

Եվ երկաթագործը, կուրծքն հևալով իր զորավոր հեծկլտուքին տակ.

— Ա՜խ,— ըսավ,— թո՜ղ մեյ մը հագներ, անկե ետքը մեռներ, պաշխա պան չէի ուղեր։ Մուրատսրզ մեռավ խե՜ղճ զավակս։

1890

ՊԱԼԸԽՃԻ ԳԵՎՈՐԳ

(Ժողովրդական բարեր)

Դատարանին մեջ տեսա զինքը, Պալըխճի Գևորգը, Բերայի պատժադատ ատենին մեջ։ Ժողովրդական այդ դասուն հանրածանոթ ու անփոփոխ տիպարն է, այն ընդհանուր դասակարգեն, որ սովորաբար ջրհանկիրներուն անունովը կճանչցվի, և որուն մեջ կշփոթվին ձկնորսները, փողոցի մանրավաճառները, երգիոնակի նվագածուները՝ լաթեռնաճիները։ Երկարատև գինարբուքները՝ ծխոտ ու գարշահոտ կապելային անկյունը, և գիշեր լուսցնող շվայտությունները՝ խոֆած բոզի մը թևերուն մեջ, դեռ իր այտերեն չեն խլած այն կարմրությունը, զոր հոն դրած է անհոգ անփույթ մանկությունը՝ արձակ ծովին ու հովին դիմաց, ու աչերուն մեջ դեռ չէ մարած երիտասարդության առաջին տարիներուն կրակը, զոր նոր սկսող կրքերը բռնկցուցած են իրենց անհագ ցանկություններով։ Առույգ ու բարեկազմ երիտասարդ մըն է, քսանևմեկ տարեկան։ Իր դասակարգի մարդոց խոշորությունը չունի, հապա այն տեսակ մը առնական շնորհը, որ ուժի և ճապուկ կորովի վրա հիմնված է։ Թուխ դեմքին վրա, ուր ածիլված մորուքը թեթև իմն կանաչորակ սպիտակություն մը թողած է, սև ու աղվոր աչվրները կվառին։ Հագուստը կապուստը՝ ավանդական տարազն է, ոչ թե սակայն ամեն օրվանը, սալթա և բոթուր, հապա «կիրակնօրվան» հագուստը, մութ կապույտ կարճ վերարկու և մոխրագույն աբա բանքա-

լոն՝ վերի կողմը լայն բոլորովին և հետզհետե նեղնալով։ Գլուխը դրած է մութ կարմիր ֆես, դեպի ձախ կողմ ծռած՝ գանգին ծայրը, գրեթե ամբողջովին բաց թողլով սև մազերն որք համաչափ կխովանան աջ կողմեն դեպի վեր։ Ֆեսին ծոպը առջևի կողմը կգտնվի, տարածված դեպի ձախ։ Մեջքը կապած է ճերմակ լայն գոտի, և հագած է գորշագույն տրեխ՝ երեսը կիսովին բաց, ձյունի պես ճերմակ գուլպան ցույց տալով։

Գևորգին հետ միևնույն կարգին վրա, անկից քիչ մը վեր, նստած է սև պասմ և կարմիր կտավե շրջազգեստ հագած կին մը, աղքատիկ երևույթով։ Երեսունն անցուկ կերևի, թեև քսանևութ տարեկան չկա դեռ։ Գլուխը գլխարկ չունի, ու սև մազերը ետևի կողմն ամփոփված են պարզությամբ, իսկ առջևի կողմեն՝ անգլիական երկու տափակ հյուսքերով դեպի վեր առնված։ Բոլորովին գունատ դեմք մը ունի, բարակ քիթով, բարակ շրթունքներով։ Աղվոր չէ. նիհար ու կարճահասակ, տափակ կուրծքով։ Դիմագծերը տարիքեն առաջ թարշամած են, այլ ցուրտ ու սպառող կրքի մը ակներև արտահայտությամբը կենդանացած։ Արծաթյա լայն օղեր կախված են ականջներեն, միակ զարդն այդ ընդհանուր անշքության մեջ։ Այդ կինը քովնտի նստած է, կռնակը Գևորգի դարձուցած, աչվրները գետին սևեռած։

Ինչո՞ւ եկած են հոն, ամբաստանելոց նստարանին վրա, դատավորներուն հետաքնին ու խորաթափանց նայվածքներուն տակ, ու խառնիճաղանջ բազմության մը ուշադիր հետաքրքրությանը մեջ։

Դասականներուն ոճովը խոսելով, էրոս կամ Կուպիտոն[1]— լավ չեմ գիտեր— բերած են հոն զիրենք, և կամ, ավելի լավ, Սերը, որ այդ դասակարգներուն մեջ,— ու թերևս հոն կերպով մը ամենեն ավելի,— իր տիրապետող ու անդիմադրելի պահանջումներն ունի, ավելի՜ բռնավոր, ավելի՜ ճիշտ ու բնական, ավելի՜ հզոր ու կենդանի, քան թավշեպատ առանձնոցներու եղկ ու յուղաթուրմ մթնոլորտին մեջ։

***

Կուզե՞ք, որ պատմեմ ձեզ Գևորգին վեպը։

Մորը հետ կբնակեր ի Չըխսալըն, իրենց սեփականությունն եղող տնակի մը մեջ։ Ապրուստը կճարեր փողոցներուն մեջ վաճա-

[1] Ըստ դիցաբանության՝ սիրո աստվածներ։ Ս. Կ.

ռելով ձուկը, զոր ինքը կորսար ծովուն վրա։ Անցյալ տարի իրենց տան մեկ սենյակը վարձու կուտան մոր մը և իր աղջկանը, ճիշտ նույն ինքն, որ դատարանին մեջ նստած էր Գևորգին կարգը։ Աղավնի էր աղջկան անունը. աղվոր չէր, բայց սև աչքերուն մեջ հրապույր չէր պակսեր։ Ի՞նչ կպատահի կրակոտ երիտասարդին ու այդ գունատ աղջկանը միջև, հայտնի չէ։ Բայց սա իրավ է, թե Գևորգի մայրը կնշմարե, որ զավակը խենթի պես սիրահարված է այն աղջկան, ու անոր ամուսնությունն Աղավնիին հետ հարմար չգտնելով՝ կհաջողի աղջիկը տունեն վռնդել մորն հետ։ Աղավնի և մայրը կերթան սենյակ մը կվարձեն երկաթագործ Տարսավիչ Մանուկյանի տանը մեջ։ Ի՞նչ թաքուն հրապույր կար այդ մռայլ աղջկանը վրա, մեզ անտեսանելի, որ Տարսավիչ ևս կսիրահարի անոր։ Գևորգի տան մեջ սկսած հովվերդությունը՝ Աղավնի կվերջացնե զայն Տարսավիչի մոտ, և տարվույս սկիզբը կամուսնանա երկաթագործին հետ, որ քսանևչորս տարեկան երիտասարդ մըն է։

Գևորգի համար ծանր հարված մը կըլլա այս ամուսնությունը։ Աղավնիին բաժանման թղթած վերջը փոխանակ սպիանալու, հետզհետե ավելի կսկծելի կդառնա իր սրտին։ Միջոցներ կփնտրե վերստին հարաբերության մտնելու Աղավնիին հետ։ Աղավնիին մորաքրոջ աղջկան, Մաննիկի կդիմե, անոր կհայտնե իր բոլոր զգացումները, խնդրելով, որ երթա հաղորդե զայնս երկաթագործին կնոջ, և Մաննիկ բարեսիրաբար կկատարե այդ պաշտոնը Աղավնիին մոտ։ Աղավնի մոռցած չէ իր առաջին սերը. բայց կպատասխանե, թե ա՛լ գոբան իրմե անցած է, հիմակ ամուսնացած է, բան մը չկրնար ընել։ Գևորգ չհուսահատիր, դյուցազնական որոշում մը կուտա ինքնիրեն։ Ջատկեն շաբաթ մը առաջ, կերթա լուսանկարն հանել կուտա, օրինակ մը կփաթթե նպարավաճառի գեղին թղթով, որուն մեջ կդնե նամակ մը ուղղյալ Աղավնիին, բացատրելով իր սիրույն սատկությունն և մահու սպառնալիքներ ընելով Տարսավիչին. հետո, տեսնելով, որ Մաննիկ, ա՛լ իր ձեռնարկներեն հուսահատած, չուզեր իր բանքերն ըլլալ, կդիմե Աղավնիին դրացի հրեա ձկնավաճառ Զելեպոնի կնոջ Եսթերի, որ իր տունը կանչելով Աղավնին, նամակն և լուսանկարը կհանձնե նմա։ Աղավնին կկարդա նամակը. իր սրտին մեջ անցած դարձածն ինք միայն կրնա գրուցել. բայց վերջապես կվախնա այն բարդ հետևանքներուն համար, զորս կրնա ունենալ Գևորգի ընթացքը, և նամակը կհանձնե էրկանը։ Տարսավիչ, որ գիտեր արդեն Գևորգի

զգացումներն իր կնոջ համար և անոր նախկին սիրահարությունն իր կնոջ հետ, առիթեն օգուտ կքաղե, և դատական իշխանության դիմելով ու Գևորգի նամակն հանձնելով, պատիվ կպահանջե և սպառնալիքներուն դեմ ալ պաշտպանություն։

Ավասիկ ամբողջ տռամն, իր բոլոր պարզության մեջ։

* * *

Դատարանին մեջ, հետաքրքրական է դիտել Գևորգին և Աղավնիին փոխադարձ դիրքն իրարու նկատմամբ։ Ձկնորսն ինքզինքը կուտե նստած տեղը. շրթունքը կբացվին կգոցվին հարաժամ. աչքերը անդուլ կդառնան իրենց կոպիճներուն մեջ, մերթ դեպի վեր ուղղված՝ բոլորովին սպիտակ գունտ մը պարզելով, և մերթ գետինը հառած անքթիթ։ Հայտնապես անհանգիստ է։ Ծանր է իրեն անշուշտ այդպես հրապարակավ պարզված տեսնել իր սրտին վերքն, ա՛լ բոլորովին կորսնցուցած իր սրբությունը, ամենուն ձեռներուն մեջ աղտոտած, թարշամած, ապուշ հետաքրքրության ճարակ դարձած։ Իր «կտրիճի» հպարտությանն ա՛լ «չկերցներ» այսպես կնկան մը գերի եղած ըլլալն, և ամեն բան կուրանա դատարանին առջև, որ սակայն չհամոզվիր։

Իսկ Աղավնի աչքերը գետնեն չբաժներ գրեթե։ Ոտքի ելլե թե նստի, նախագահի հարցմանց պատասխանե թե լուռ մնա, միշտ խնամով կզգուշանա Գևորգի նայելե, վախնալով անոր ակնարկին հանդիպելե։ Տխուր դեմք մը ունի, շատ տխուր։ Կզղջա՞ արդյոք. կհիշե՞, թե ատենոք սիրած է այն տղան, զոր հիմակ այսպես կմատնե դատավորներուն անողոք վճռին։ Ու իր նայվածքը միշտ գետինն է, սոսկալով թերևս այն դատապարտութենեն, զոր պիտի կարդար ձկնորսին աչքերուն մեջ։

* * *

Իմ մասիս, հետաքրքիր չեմ գիտնալու, թե դատարանն ի՞նչ վճիռ պիտի արձակե Գևորգին դեմ, քանի՞ ամսվան բանտարկության պիտի դատապարտե զայն։ Մեր ժողովրդական բարքերուն ուսումնասիրող և հետամուտ, ինչ որ այս դատին մեջ ամենեն ավելի ուշադրություն կգրավե, Գևորգի նամակն է ուղղյալ առ Աղավնի։ Ալեքսանդր Գյումա Որդի գեռ անցյալ շաբաթ գրքի մը

հառաջաբանին մեջ կրսեր, թե բնությունը միշտ գեր ի վերո պիտ մնա բնապաշտ վիպասաններեն։ Ո՛րչափ ալ իրականին ըմբռնում ունենանք, երբեք չպիտի կրնանք գրել նմանակ մը այդքան աղ դեցիկ ու այդքան անկեղծ, երբեք չպիտի կրնանք այդ ձկնորսի զգացումներն հայտնել նույնքան վայրագ բնականությամբ, ու իր սերը բացատրել իր հասկցած եղանակովը։ Ուստի, արվեստագետին համար ինչ անսահման հաճույք մըն է, երբ պատահմամբ ձեռքը կանցունե այդպիսի տոմյուման մը, որ ընկերության մեջ ամբողջ դասակարգին ներքին աշխարհը կպարզե իրեն առջև այնքան ճշտությամբ։

Ավասիկ Գեորգի նմանակը նույնությամբ։ Բնագրին դյուրաընթացությունը հասկացողության համար, տեղ-տեղ հարկադրված եմ միայն կետադրությունները փոփոխել, և հարցական կամ ձայնարկության նշաններ դնել՝ որք կպակսին բնագրին մեջ։ Նմանապես ցավով կզեղչեմ ինչ-ինչ բիրտ խոսքեր, որք կրնան շատերու դյուրազգացությունը վիրավորել։

«Յեյ վա՜խ.»։

«Ա՜խ, Աղաւնի՜ս, ախ, տուն ինցի խարէ՞ս օնէիր, ի՞նչ օնէիր քի ինցի ասանք ըրիր, խուշըս. բէկ աղէք, սարար չօնի էլլիէ սավաեօք, կօքտէ քի խելքըս միտքըս վըրատ է, ամա աշ թաշարսա քէրճէյէ բայա օլմաս. նասը քի էղա նէ էս արթըխ յօքիէս վաս էկա չինքի տանակը ճիյէրիս խօթեցիր, տանակին կէսը ճիյէրիս մեջ ցըքէցիր, ամա անիկա անանք չէն ընէր, էս ընէմ տէ տուն սէյիրըրէ. պարէ էրքօքնիս ալ խասէթաները կօղվինք. յասկըցա՞ր, խուշըս։ Ցըքէ քի տուն ինցի կէնէ կը սիրէս էղէր, Մաննիկը յասկօցօց, «ամա էրիկէն կը վախնայ կօր սավալլըն»։ Էկօ նայ քի էս սապրը չէմ կըրնար կօր ընէր կօր, յասկըցա՞ր, յօքիս։ Ան Տարասվիչը ըսըսնէ մէք էրկօ յեղ ինցի պըռնէլ տուվէր էկէր ամա էս յօն չը կըտնվէցա. յօն կըտնըվէի նէ, անոր տավան լըմընցած էր։ Վիրա սիրտըս առնէլ քօքա, վիրա ինցի կըսէ քի Քէորք օտքըդ պաքնէմ, սա Աղաւնին անանք ըրէ քի մէք տանակէ մը հանէ՛, ան ատէնը քէսի տավա ընէմ նէ քուրըս մէռէլըս... ինցի քաշէլ մի տար, սէրէ անոր ըրացը շատ կըլլա կօր ինցի.» (նամակը պատռած է այստեղ)։

Ան քիշերվան կրռիվին էս յօն էեի ամա, էս քանի մը լախըռտ պիտի ընէյի՝ ամենօն ալ տըպճէր պիտի, քօկին խաթէրըթ համար

ը խոսէցա, հէմ դուրսէն իմացողները իրաւ Քէորքին ըրաց լախըռտըն շատ յաղլը է պիտի ըսէյին։ Քա Աղաւնիս, մէկ օր մը Մաննիկին տունը կանչէցիր ինցի քի, «Յօ Քէորք, պաղճային մէջը յօրին կըլօխը ըրածնիս մօռցա՞ր» ըսիր։ Խուշ, տուն Քէորք ըլլաս նէ, ասօնք միտքըտ իյնա նէ ի՞նչ կըլլաս։ Իլլէ կինօվ կըլլամ կոր, անանք կըլլամ կոր քի յէմէն տուռնէդ ներս մըտնամ, մասէդ պըռնէմ տուրս հանէմ քէսի. յէմ անաք պիտի ընէմ։ Ան ատէնը էրկու էրէսլի Տարասվիչը ինցի պըռնէլ տա, էն շատ 3 տարի պառկիմ պիտի մաբուս, անկէ էտքը Տարասվիչին յալը եաման է։ Աղաւնիս, կիտէմ քի տուն ա ասիկա ըրիր տէ ամմէն օր տուղի մեջ էս, սէպէ քի մապուսն էս։ Տարասվիչը ինցի ըսավ քի Աղաւնին... անցուց, քէնէ վաղցաւ տէ. թո՜ւ, ասա՞նկ մարթ առիր, քա. յէլպէտ պաշխա տէղ ալ քու զուրցէ էշէք խաֆալըն։ Աղաւնիս, Մաննիկին յետ աղէք կընա խուշըս. աղէք կընիք է ան ֆուխարէն, յեմ ալ պէրանը շատ սըխը է»[1]։

---

1 Ծ. Կ.— Պահպանելով տեքստի լեզվական և ուղղագրական առանձնահատկությունը, ստորև տալիս ենք թարգմանությունը։

«Հեյ վա՜խ.

Ա՜խ, Աղավնի՜ս, ա՜խ, դու ինձ ո՞խ ուներիր, ի՞նչ ուներիր, որ ինձ այսպես արեցիր, աղունիկս, շա՜տ լավ, ոչինչ, դու մեղք չունես, բավական է, որ ուշ վրաս է, բայց ճաշը երբ հորդի, շերեփի կարիք չի մնում. ինչպես որ ես եղա, այլևս հոգուցս հրաժարվեցի, որովհետև դանակը սիրտս խոթեցիր, դանակի կեսը սրտիս մեջ թողեցիր, բայց այդ այդպես չեն անում, ես անեմ, որ դու տեսնես, գոնե երկուսս էլ թերթերում կգրվենք. հասկացա՞ր, աղունիկս։ Թող որ դու ինձ նորից սիրելիս ես եղել, Մաննիկը հասկացրեց, «սակայն մարդուց է վախենում խեղճը» ասաց։ Արի տես, որ ես համբերել չեմ կարող, հասկացա՞ր, հոգիս։ Այն Տարասվիչը, որ ասես մեկ-երկու անգամ ինձ բռնել տալու է եկել, բայց ես այդտեղ չեմ գտնվել, այդտեղ եթե գտնվեի, նրա դատը (հաշիվը) վերջացել էր։ Միշտ սիրտս առնել կգա, միշտ ասում է ինձ, թե, Գեորգ, ոտքդ համբուրեմ, այս Աղավնուն այնպես արա, որ մեկ դանակով դուրս բեր, այն ժամանակ քեզ եթե դատի տամ, քրոջս մեռելը... Ինձ քաշել մի տար, որովհետև նրա արածը ինձ շատ եղավ... (այստեղ նմանակը պատռված է)։

Այն գիշերվան կռվին ես այդտեղ էի, բայց մի քանի խոսք պիտի անեի, բոլորին էլ պիտի դիպչեր, քո խաթրի համար չխոսեցի, և դրսից իմացողները, իրավ, Գեորգի խոսքերը շատ իրավացի են, պիտի ասեին։ Քա, Աղավնիս, մեկ օր Մաննիկին տունը կանչեցիր ինձ. «Տո, Գեորգ, պարտեզում, հորի գլխին արածնիս մոռացա՞ր» ասացիր։ Աղունիկս, դու Գեորգ եթե լինես, սրանք միտքդ եթե ընկնի, ի՞նչ կլինիս։ Մանավանդ, երբ որ հարբեմ, այնպես եմ լինում, որ իսկույն դռնից ներս մտնեմ, մազդ բռնեմ դուրս հանեմ քեզ. այդպե՞ս էլ պիտի անեմ։ Այն ժամանակ երկերեսանի Տարասվիչը ինձ թող բռնել տա, ամենից շատ

Ստորագրություն չկա։

Ամբողջ գանձ մըն է այս նամակը, և ամեն բան կրնաս գտնել անոր մեջ, մեր ժողովրդական դասակարգին բոլոր զգացումներն ու բոլոր կրքերը։ Եվ որովհետև գիտեմ, թե ընթերցողաց մեծամասնությունն այս նամակը պիտի կարդա հարևանցի կերպով՝ առանց խորը թափանցելու, կջանամ վերլուծել զայն, քիչ մը ավելի ուսումնասիրած ըլլալով այդ բարքերը՝ թերևս ապագա ընդարձակ վեպի մը նյութերն հավաքելու մտադրությամբ։

Եվ նախ, ամեն բանե առաջ, այդ ծովու մարդոց ընդածին բանաստեղծությունն է, որ ի հայտ կուգա, ո՛չ եթերաճեմ բանաստեղծությունն, որ կապույտին մեջ կծնի ու անով կանի, անուրջներով կօրորի և պատրանքներով կհեշտանա, այլ վայրագ ու կերպով մը բիրտ բանաստեղծությունն, որ ժողովրդյան սրտին մեջ ինքնաբուխ՝ սիրո և մահվան պարագայից մեջ մանավանդ կուգա ի հանդես։ Իր վիրավոր սիրտը ցույց տալու համար, ձկնորսը նախնական պատկեր մը կգծե, սիրտ մը դաշույնով ծակված, ու ա՛լ հասկցուցած է իր տառապանքին մեծությունը։ Բացատրելու համար, թե ի՛նչպես Աղավնին մոռցած է իր առաջին սերը, ի՞նչ ավելի ազդեցիկ խոսք, քան սա նախադասությունը. «Տանակը ճիյէրիս խօթեցիր, տանակին կէսը ճիյէրիս մէջը ցըքէցիր»[1]։

Հետո այն տեսակ մը ժողովրդական նրբամտությունը, էսրոին, որ ավելի հատուկ է սակայն Շուկային՝ ուր իր առանձին որոշիչ հանգամանքն ունի, և որ կկայանա զանազան ընկալյալ սրախոսություններու, առածներու, խոսքի դարձվածքներու, բառախաղերու և այլնի մեջ։ Իրաբու ետևե երկու տաճկական առած կհիշե Գևորգ, թեև առանց մեծ նշանակության, իր խոսքին ուժն ավելցընելու համար։ Իր նրբամտությունն ավելի ի հայտ կուգա սակայն երբոր կշանա, սկզբնական միամիտ եղանակով մը, Աղավնին պաղեցնել իր ամուսնեն, անոր բերանը դնելով թշնամական խոսքեր իր կնոջը նկատմամբ, զորս Տարսավիշ չէ արտասանած

3 տարի պիտի բանտ նստեմ, դրանից հետո վա՛յ Տարսավիշին։ Աղավնիս, գիտեմ, թե դու այս արեցիր, բայց ամեն օր դողի մեջ ես, համարի, որ բանտն ես։ Տարսավիշը ինձ ասաց, թե՝ Աղավնին վիժում ունեցավ քեզնից վախենալով... Բյո՛ւ, այսպե՞ս մարդ ասիր, քա, ինչարկե ուրիշ տեղ էլ կդրուցի իշու գլուխը։ Աղավնիս, Մանոիկի հետ լավ եղիր, աղունիկս, լավ կին է— այդ խեղճը, և բերանն էլ խուփ է»։

1 «Դանակը սիրտս խոթեցիր, դանակի կեսը սրտիս մեջ թողեցիր»։

անշուշտ։ Մյուս կողմե, դիտեցեք Աղավնիին կանացի խորամանկությունը։ Նամակն հանձնած կամ հանձնել տված է դատական իշխանության. բայց պատռած է այն մասերն, որք կրնային մասնավորապես դպչիլ իրեն։

Հապա այդ մարդոց սարսա՜փը լրագիրներեն։ Ի՞նչ ցուրտ համակերպությամբ կգրե, սպանդանոց տարվող ոչխարի մը համակերպությամբ. «Պարէ էրքօլքնիս ալ խասէթաները կօղվինք»[1]։ Լրագրաց մեջ «կոխուիլը», տպագրվիլը, այդ մարդոց աչքին առջև կհամապատասխանե գոգցես կախաղան ելլալու։ Շատ անգամ ժողովրդական մարդոց բերնեն լսած եմ, գերագույն պատժո մը պես, այսինչ անպատիվ կնոջ կամ այնինչ անբարոյական մարդուն համար, թե «փիթին խասէթաները կրուեցան»[2]։ Այս զգացման՝ ժողովրդական բարքերուն մեջ անցնելուն գլխավոր պատճառներեն մ'ալ եղած է ատենոք հրատարակվող մամուլը, և տարիներ առաջ կհիշեմ հաճախ, որ Այվազյան Գևորգ էֆենդիին փողոցե մը անցած ատեն, տեսած եմ կիներ, որք աճապարանքով գլուխնին պատուհանեն ներս քաշած են, իրարու մրմնջելով. «Մամուլը կասնի կոր», որպես թե նույն ինքն Նեռը տեսած ըլլային։— Ու սոսկմամբ կմտածեմ, որ եթե Գևորգ գիտնար, որ դատարանին մեջ մասնավոր ունկնդրաց հատուկ աթոռներուն վրա ծանոթություններ խազխըղող անձը՝ ճշտիվ նպատակ ուներ դինքը «խազեթաներն անցընելու», անշուշտ փորձանք մը կբերեր անոր գլխուն դատարանեն դուրս։

Եվ Գևորգ ի՞նչ լավ գիտե, թե Աղավնին ալ նույն այդ զգացումը կտածե՝ իր ներքին կենաց հրապարակվելուն նկատմամբ, և ի՞նչպես կհայտնե իր արհամարհանքը, թո՜ւ, այն մարդուն համար, որ իր կնոջ գաղտնիքը երևան կհանե։ Հայտնի չէ, թե Տարսավիշ իրոք Գևորգին այդ տեսակ խոսք մը ըրա՞ծ է։ Գուցե սակայն երկաթագործը, գիտնալով երիտասարդին սերն իր կնոջ համար, ուզած ըլլա անոր նախանձոտ աչաց առջևեն անհետ ընել իր սիրույն ակներև նշանը։ Որովհետև, ինչպես վերը ըսինք, Տարսավիշ գիտե եղեր ամեն բան։ Գևորգի պես մարդիկ շատ չեն ծածկեր իրենց զգացումները։ Գիններատան անկյունը, երբ ալ օղին մտքերը կգերագրգռե և աչվները կմթագնե, Գևորգ քանի-քանի

1 «Գոնե երկուսա էլ թերթերում կգրվենք»։

2 «Բոլոր թերթերում գրվեցին»։

անգամ գոչած է, «Ա՜խ, Աղավնի՜», և իր լայն ձեռքը ջարդուփշուր բրած է գավաթներն ու սրվակները։ Գինետունն ամեն բան է այդ մարդոց համար, բարեկամության տեղ ու կովո ալ տեղ. հոն կերթան ուրախութենե մը ետքը, ու կերթան սուգե մըն ալ վերջը, հոն կթափեն իրենց բոլոր կրքերը։ Երբոր Գևորգ իր լուսանկարն հանել տված է, գիտե՞ք, թե օրինակ մը Աղավնիին ղրկելե առաջ՝ որո՞ւ նվիրած է...— Մեխանեճի Օհաննեսին, որ զայն կախած է իր պատյանի վրա։

Ասոր քով դրեք իրենց ողորմածությունը, գորովական գութն աղքատներուն համար։ Ի՞նչ խանդաղատանքով ֆուխարե կանվանե Մաննիկը, ինք, որ հարուստ մը չէ, սակայն և շատ անգամ երկար շարշարանքներով հագիվ օրապահիկը կրնա ճարել։

Սիրո զգացմանց նրբություններն և ուժգնությունը դիտեցեք այդ երիտասարդին վրա։ Փոխնիփոխ փաղաքշական խոսքեր, «խուշրս», «յօքիս», «խելքս միտքս վրատ է» Աղավնիին սիրտը շարժելու բացատրություններ,— «տուն ինցի կէնէ կը սիրէս էղէր»[1]. հետո հին հիշատակներուն խանդաղատանքը,— «պաղճային մէջը յօրին կըլօխը ըրածնիս մոռցա՞ր»[2]. տեղ մը, երկաթագործին կինն իր ամուսնեն պաղեցնելու ջանադրություն մը, հիշեցնելով անոր ոչինչ մեկը ըլլալը,— «ասա՞նկ մարթ առիր, քա». և ապա հանկարծ իր կիրքը կպոռթկա. այդ քաղցրությունն իր գործը չէ. ժառանգականությամբ վաստակած բոլոր վայրագությունն երևան կուգա՝ տուփանքին բոլոր սաստկությամբը, և կգոչե. «Իլլէ կինօվ կըլլամ կոր, անաք կըլլամ կոր քի յէմէն տուռնէդ նէրս մըտնամ, մասէդ պրոնէմ տուրս հանէմ քէսի յեմ անաք պիտի ընէմ»[3]։ Կրքի սաստկության շատ բացատրություններ կարդացած եմ, բայց չեմ գիտեր ինչո՜ւ այսչափ կորովի չեն երևցած ինձի։

Եվ ամենեն ավելի դիտեցեք ծովու կոհակներուն դեմ մաքառող այս տղուն գերազանց անվեհերությունը, նեղության համար ունեցած հոժարափույթ պատրաստականությունը, վտանգին առջև իր գեղեցիկ անտարբերությունն, և մահվան դեմ գերագույն արհամարհանքը։ Պա՜հ, «էրկու էրէսլի Տարսավիչը ինցի պրոնէլ տա, էն շատ 3 տարի պառկիմ պիտի մաբուս, անկէ էտքը Տարսավիչին յալը եաման է»[1]։

«Տարսավիչը մէք էրկու յեղ ինցի պրոնէլ տուվէր էկէր է ամա էս յօն չը կրտնվէցա. յօն կրտնվէյի նէ, անոր տավան լըմընցաց էր»[2]։ Կտեսնե՞ք այդ քսանմեկ տարեկան կտրիճին սրտի աղաղակը. «էս արթըխ յօքիէս վաս էկա»[3]. մահվան վտանգն ալ աչքն առած է այդ տղան, որ դեռ մանուկ՝ հորը դաշույնին հետ խաղացած է և ներկա գտնված անոր կռիվներուն, և հետո ինքն ալ անոր հաջորդած է՝ ծովուն ու ցամաքին մեջ բաժնելով արկածալից կյանքը։ Հոգիեդ ինչո՞ւ վազ անցնիս, քա՜ջ տղա, պետքի ես դուն։

Լրագիրներուն մեջ անցնելե կվախնայիր, կկարծեիր, որ շա՞տ գեշ պիտի մտածեն քու վրադ։ Չէ՛, խեղճ տղա. քու վեպդ, քու կյանքդ կարդացողները քեզ նկատմամբ պիտի ունենան զայրույթե տարբեր ուրիշ զգացում մը, որ սակայն կարեկցություն ալ չէ։

1890

ՏԵՐՏԵՐԻՆ ՈՒԽՏԸ

Ամբողջ գյուղին մեջ անոր պես կտրիճ մը չի կար։ Թորոսենց Ակո՞բը, օ՜հ, յամա՜ն, յամա՜ն։

Երբ գյուղին մեջեն կանցներ իր աշխետ ձիուն վրա նստած, հրացանը կռնակը և աջ ձեռքին մեջ սանձը ժողված խրոխտաբար, լայնիրանը ձիուն գավակին վրա շիպ շիտակ,— ամենքն ալ իրարու ցույց կուտային զինքը սքանչացման ու հպարտության շեշտով մը.

— Աստված արևը պահե՛։

Իրա՛վ ալ, աստված կլսեր գեղջուկներուն մաղթանքը։ Ոչ ոք Ակոբին պես արկածալից կյանք մը կվարեր։ Քսան անգամ քիչ էր մնացեր, որ մեռներ, և քսան անգամուն ալ ազատեր էր։ Իր կյանքը անհատնում շարք մըն էր եղած, մատաղագույն տարիքեն, հրացանի գնդակներու փոխանակության, վտանգավոր որսորդությանց,

1 «Դու ինձ նորից սիրելիս ես եղել»։

2 «Պարտեզում, ջրհորի գլխին արածներս մոռացա՞ր»։

3 «Մանավանդ, երբ հարբեմ, այնպես եմ լինում, որ իսկույն դանիցդ ներս մտնեմ, մազդ բռնեմ դուրս հանեմ քեզ. այդպե՛ս էլ պիտի անեմ»։

1 «Երկերեսանի Տարսավիչը ինձ թող բռնել տա, ամենից շատ 3 տարի պիտի բանտ նստեմ, դրանից հետո վա՛յ Տարսավիչին»։

2 «Տարսավիչը մեկ-երկու անգամ ինձ բռնել տալու է եկել, բայց ես այդտեղ չեմ գտնվել, եթե այդտեղ գտնվեի, նրա դատը (հաշիվը) վերջացել էր»։

3 «Ես այլևս հոգուցս ձեռք եմ քաշել»։

Բեժիի գետերու հետ անվերջանալի կռիվներու, լեռներու վրա և անտառներու խորը։

Գյուղական ու լեռնական կյանքի կատարյալ ու անխառն տիպար մը, այդ Թորոսենց Ակոբը։ Ինքը ունևոր ընտանիքի զավակ, գյուղին վարժարանին մեջ բավական ուսում ստացած, այնպես որ իր շրջանակին մեջ «ուսումնական» երիտասարդի համբավ կվայելեր, ամեն բան թողեր ու իր բնազդներուն ետևեն վազեր էր։ Բարձրահասակ, ջղուտ տղա մըն էր, արևեն սևցած, քիչ մը նիհար, սև գոռոզ մազերով ու կրակոտ աչքերներով։ Քսան տարեկան չիկար դեռ, սակայն գիտեր իր գավառին ամեն ծակուծուկը, ամեն հովիտները ու ամեն լեռները, ամենեն խորախոր թավուտները։ Կյանքին մեծ մասը կանցներ տունեն դուրս։ Ավելի՛ արվեստասեր, քան գործնական մարդ, իր զբաղումներուն մեջ կփընտրեր ոչ այնչափ շահավորը, որքան վտանգավորը։ Իր քաջագործությունները բերներբերան կդրուցեին բոլոր գավառին մեջ։ Գլխավոր գործը ծխախոտի մաքսանենգություն էր. բայց ոչ թե մութ գիշերին, անտառներու ստվերին կամ ձորերու խավարին մեջ կաշխատեր, հապա արձակ համարձակ, պայծառ լուսնին, լեռներեն վար իջած ատենը բարձրաձայն երգելով։ Երբ մեկ քանի ընկերներու հետ կուգար, երեք ձիու վրա հազար օխա ծխախոտ բեռցած, ինքն ամենեն առաջ կընթանար, իր ձիուն վրա կարմիր դրոշակ մը հաստատած,— իր արհամարհոտ անփութության նշանը ընդդեմ դետերուն, և կոկորդը պատռելու աստիճան կերգեր.

Այինկ.ոճք կելիպ կեչեր տաղերի[1]։

Բայց իր ամենեն սիրական զբաղումը որսորդությունն էր։ Խիստ ճարտար հրացանաձիգ, ոչ ոք կրնար անոր հետ բաղդատվիլ։ Իր հրացանը իր սիրուհին էր, գրեթե միշտ անկից անբաժան. ու կդրուցեին, թե մինչև իսկ գիշերը մեկ ձեռքով հրացանը բռնած կքնանար։ Պաշտամունքի պես բան մըն էր ատիկա ու վառոդն էր խունկը, զոր կմատուցաներ իբր նվեր այդ սրբությանը։ Ամառը, թռչունները ու իրենց շրջակա անտառներուն գիրուկ տատրակները՝ ամենօրյա ողջակեզներն էին այդ անհագ աստվածության։ Իսկ ձմեռը, օ՜, ձմեռը Ակոբին եղանակն էր. այդ ձյունապատ լեռներուն ու անտառներուն մեջ մանավանդ, ուր ծառերը սառույցե խոլական ճյուղերով կբռնավորվեին, երիտասարդը առտվընեն մինչև իրիկուն կպտտեր մեկ քանի ընկերներու հետ, և դարձին, իրենց ավարը կբլլար յոթը-ութը վարազ, հինգ-վեց եղնիկ։ Երբոր ձյուներուն մեջ շտկած իր հաղթ հասակը, հրացանը ձեռքը նշան կառներ վարազին, որ հեռվեն զիրենք կդիտեր՝ մոլեգին խոնչյուններ արձակելով, կամ ահեղ դունչովը տապալելով թևի հաստությամբ ծառեր, և երբ իր բոլոր ուշադրությունը հրացանին թիրախին վրա կեդրոնացուցած կսպասեր,— այդ ձյունազարդ տարածության վրա, կատաղի հովին տակ, որ իր երեսը կձաղկեր ձյունի փոշիներով և բեղն ու մորուքը կզարդարեր սառի զանակներով, ինքն իսկ կնմաներ բնության անխառն ու հարազատ զավկի մը, սկիթնական դարերու էակի մը, մարդկութենեն դուրս բոլորովին, քաղաքակրթության ազդեցութենեն զերծ, որ հողեն ելած մեկ բխյունով. հողին վրա կշարունակեր իր ազատ անասունի կյանքը, վայրագ ու վեհապանծ։ Որսի մեջ, դյուրինը չէր փնտրեր երբեք. գիտեր ու կտեսներ, թե ուրիշներ, փախստական եղնիկը հալածելու ատեն, հանկարծ վազքերնին կդադարեցնեին, մեղմիկ մը սուլելով. ու խեղճ միամիտ անասունը կանգ կառներ ընդոստ, գլուխը ետին դարձնելով ի լուր այդ անուշ կոչին ու նույն հետայն գնդակահար գետին կգլորեր. ու մինչև իսկ վարազը, երբ կլսեր որսորդին բարձրաձայն աղաղակը, հո՜ւբ, հո՜ւբ, հո՜ւբ, զարմացած կկենար, իր պանդույր իմացականությանը մեջ կարծես հասկնալ ուզելով այդ ձայնին նշանակությունը, չգիտնալով, թե այդ մեկ վայրկենի դադարը իր մահն էր։ Չէ՛, Ակոբին գործը չէր ատիկա. պետք էր, որ իր ճապուկ սրունքներուն բոլոր ուժովը սլանար երեքն ետևեն, ու այդ խոլարշավ վազքին մեջ, իր գնդակը երթար միվեր վարազին աչքին կամ ճիշդ սրտին վրա։

Իր գեղին պահապանն էր նաև։ Ինքն էր, որ գիշերային պահնորդ խմբին գլուխը կանցներ հաճախ։ Երբ գյուղացիները իմանային, թե Թորոսենց Ակոբը գեղին շուրջը ման կուգար այդ գիշերը. հանդարտ ու անխռով քուն մը կքնանային։ Չէ՞ մի որ շատ մը դեպքեր կարգադրացնեին իրենց վստահությունը այդ քաջաբի տղուն վրա։ Որո՞ւն մտքեն ելած էր մանավանդ եկեղեցիին դեպքը, որ պարծանքով կպատմվեր միշտ։

Գյուղացիները ժամանակ մը ի վեր զարմանքով կտեսնեին, թե իրենց եկեղեցիին պարտեզին եգիպտացորենները, որոնք դեպքո-

1 «Այինկահի»-ն կուգա կանգնի լեռներու»— իր գավառակին ու կ. Պոլսո մերձակա այդ ամբողջ նահանգին մեջ, ծխախոտի մաքսանենգությունը «այինկա» կկոչվի։

ցին հասույթներեն մին կկազմեն, օրեօր կպակսեին։ Իրողությունը Ակոբի ականջը հասած էր։ Ձայն հանած չէր, բայց նույն իրիկունը գարանակալ կսպասեր պարտեզին մեջ հաստ ծառի մը տակ։ Կեսգիշերը անցած, երկու գաղթական թուրք գաղտագողի պարտեզը կմտնեն ձի մը քշելով, կկտրեն եգիպտացորենները, պարկերով ձիուն վրա կբեռցնեն ու կպատրաստվին մեկնելու, երբ Ակոբ պահված տեղեն ելլելով, հրացանը ուղղած և գողերեն մեկուն ականջը թոցուցած էր. վիրավորը, ընկերոջը հետ, հոն թողած իրենց ձին, սրարշավ փախած էր և անգամ մըն ալ երևան ելած չէր, իբր գող բռնվելու վախեն։ Ակոբ ձին ծախած էր գյուղին մեջ և գումարը եկեղեցիին հանձնած՝ արդեն գողցված եգիպտացորեններուն իբր փոխարինություն։

***

Եթե գյուղացիներուն մեջ մեկը կար, որ Ակոբեն գոհ չէր, ան ալ իր ընտանիքն էր, իր ծերունի հայրն ու մայրը մանավանդ։ Ամեն վայրկյան դողի մեջ, թե իրենց զավկին գլուխն փորձանք մը չհասնի, ամբողջ կյանքերնին սիրտ-հատնում մըն էր։ Ամեն խրատ, ամեն պաղատանք անօգուտ կմնային։ Թորոսենց Հաճի Արթին աղան ու կինը վերջապես խորհուրդ մը հղացան իրենց զավկին անդուսպ եռանդը մարելու. որոշեցին զանի ամուսնացնել։ Ակոբ քսանհինգ տարեկան եղած էր, և ամուսնությունը մտքեն չէր անցուցած տակավին։ Իր վայրի արուի ազատ ու աստանդական կյանքին մեջ, երբեք հուզմամբ չէր նայած գյուղացի աղջկա մը շիկնոտ այտերուն։

Եվ սակայն, չհակառակեցավ հորը-մորը պաղատանքին, ու ամուսնացավ համեստ աղվոր աղջկան մը հետ։

Միայն թե Հաճի Արթինի հաշիվները սխալ ելան։ Չորս-հինգ ամիս չանցած, Ակոբ նորեն դարձեր էր իր առջի կյանքին, ժամանակը բաժնելով լեռներուն ու անտառին մեջտեղ, հազիվ մեկ քանի ժամ գողնալով անոնցմե՝ իր ընտանեկան հարկին համար։

Ան ատեն էր որ, Հաճի Արթին մտածեց, թե մեծ շարիքներուն մեծ դարմաններ պետք են։ Ուրիշ միջոց չի կար զավակը կարգի բերելու, բայց եթե քահանա ընել զանի։ Ճիշտ այդ միջոցները գեղին տերտերը գործե կքաշվեր խոր ծերության պատճառավ, որ

նահանգին Առաջնորդ Սրբազանը հովվական պտույտի մը մեջ գյուղն էր եկած ու Հաճի Արթինի տունը իջած։

Ու իրիկուն մը, Սրբազանի ներկայությանը, Հաճի Արթին ու իր կինը իրենց զավկի ոտքը ինկան, լալագին աղերսելով, որ քահանա ձեռնադրվի, մինչ Սրբազանը հայրական հորդորներով նույն խրատը կուտար։ Սրտի դպչող մաքառումը եղավ ասիկա, ու ժամերով տևեց և, կատաղի մերժումներե ետքը, Ակոբ ուրիշ բան չգտավ ընելիք, բայց եթե տղու մը պես լալ։ Այդ լացը իր պարտությունն էր։

Երեք ամիս ետքը, իր հովվական պտույտեն դարձին, Սրբազանը ձեռնադրեց զանի հանդիսավոր կերպով։ Այն վայրկենին, որ նորընծան իր ուխտերը կկատարեր, Սրբազանը անոր ականջն ի վար ծռեցավ և ըսավ.

— Ուխտ ըրե, որ ա՛լ ձեռքդ հրացան չառնես։

Նորընծան գլուխը վեր առավ, անբացատրելի նայվածքով մը նայեցավ հորը, որ եպիսկոպոսին մոտ կանգնած էր, ու տկար ձայնով մը.

— Կուխտեմ, Սրբազան,— ըսավ։

Ու աչքերը լեցան։

***

Կնոջ ընել չկրցածը՝ եկեղեցին ըրավ։ Տեր Մեսրոպ քահանան հանդարտ մարդ մըն էր հիմակ, անձայն, անշշուկ։ Իր տենդոտ գործունեության հաջորդող այդ անդորրությունը տեսակ մը թմրության մեջ խորասուզած էր զինքը։ Առջի զվարթ մարդը չէր. ժամերով կնստեր լուռ ու տրտում, դիտելով գյուղին շրջակա լեռներն ու անտառները, որոնք երկնքին տակ կփռեին իրենց հավիտենական անփոփոխ գեղեցկությունը, ազատ, անզգա ու անկարեկից։ Հետզհետե կնիհարնար. խաղաղ կյանքը կհատցներ զինքը։ Իր ներքին էությունը հաճախ կապստամբեր, ու տունեն դուրս, եկեղեցիեն դուրս, գյուղեն դուրս նետվելու խենթ գաղափարներ կունենար, առջի ամիսները մանավանդ. և սակայն հանդիսավոր վայրկենի մը մեջ իր ըրած ուխտը կկասեցներ զինքը և ձեռքերն ու ոտքերը կկտրեր։ Այդ ուխտը, իր սրտին գյուղական անխառն սրբության մեջ, իր հավատալիքին մեկ մասը կկազմեր, աննյութ ու գերբնական բան մը, ահավոր ու անողոք, որ իր վերացականությամբ կընկճեր զինքը։ Ու նայվածքը ցավագին կերպով կդարձ-

ներ իր սիրական հրացանին, որ պատին վրա կժանգոտեր հիմա։

Քիչ-քիչ, առջի ընդվզումներն ալ չունեցավ։ Իր բախտին համակերպեցավ, և անվեհեր որսորդեն ու խաչախճիեն՝ տխուր ու աննշան մարդ մը մնաց, որ կնունք կըներ ու մեռել կթաղեր։

* * *

Երեք տարի ետքը Առաջնորդ Սրբազանը նորեն հովվական պտույտի ելած էր ու Հաճի Արթենի տունը իջած։ Այն իրիկունը մեծ կոչունք կար տանը մեջ ի պատիվ Սրբազանին։ Տեր Մեսրոպ կարևոր գործի մը համար մերձակա գյուղը գացած էր և աճապարանքով ետ կդառնար՝ իրիկվան պատրաստություններուն հսկելու։ Անտառեն կանցներ՝ երբ կանգ առավ հրացանի բոմբյուններ լսելով. քիչ ետքը նշմարեց գյուղացի մը, որ որսի ելած էր, բայց անվարժ ու անճարտար, գնդակները պարապը կերթային առանց թռչուն մը գետին ձգելու։ Տերտերը մեկ-երկու վայրկյան դիտեց. կուրծքը կելլեր կիջներ փքոցի մը պես. խուլ պայքար մը կմղվեր իր ներսիդին. հետո, մեկեն, հիմարի մը պես, իր փիլոնին քղանցքները ժողվեց մեջքը խոթեց, վազեց և հրացանը գյուղացիին ձեռքեն հափշտակելով, ուսին դրավ, նշան առավ, պարպեց և տատրակ մը գետին գլորեցավ։ Տերտերը ա՛լ ինքզինքին տերը չէր. և, իրարու ետևե, տասներկու անգամ կրակ ըրավ, ու տասներկու տատրակ պառկեցուց։ Երբ ա՛լ ինքզինքը գտավ, երբ իր ոտքի ելած բնազդները հանդարտեցան իրենց հագուրդին մեջ, ան ատեն միայն մտածեց իր ըրածին ահավորությունը, ու տատրակները ժողվելով տուն դարձավ գլխիկոր։

Տունը բան մը չըսավ սակայն։ Ինք իր ձեռքով մաքրեց թռչունները, բրինձի վրա ձգեց ու փուռը դրկեց, պատվիրելով, որ գիշերվան ժամը մեկին բերեն։

Իրիկունը, սեղանի վրա, երբ մեծ ափսեի մը մեջ տատրակները բերվեցան՝ տակավին ծխաշունչ, կարմրած բրինձին վրա, Սրբազանը թևերը սոթթեց, և.

— Հը՛, սա պատվական բան կերևա կոր, հը՛,— մոլտաց անհագ նայվածքով մը, լեզուն բերանին մեջ շաչեցնելով և թուքը կլլելով։

Եվ իրոք, երբ Սրբազանը մեկ քանի պատառով կուլ տվավ ամբողջ թռչուն մը, գավասանական բառերը վերջ չգտան։

— Ծ՜ֆ, պատվակա՛ն։ Եղի պես վար կերթա կոր։ Եռ դեռ ասանկ համով կերակուր կերած չունեի։ Տերտեր, գիտցած ըլլաս, վաղն իրիկուն նորեն կուզեմ։ Զուրցե՛ բռնողին։

— Ծառա եմ, Սրբազան, ձենե հրաման կուզե մինակ։

— Ծո՛, խուլան խուլան իզին, ուղածին չափ թող բռնե։ Ըսե նայիմ ո՛վ է։

— Ձեր խոնարհ ծառան, Սրբազան։

— Ծո, վա՛յ թշվառական, դո՞ւն ես է՛յ, ինչ ընենք, ա՛լ մեյ մը ըսած գտնվեցա, ուխտեդ կազատեմ քեզի։ Բայց ասկից ետքը պատվական կտոր մը զարնելու ըլլաս նե, Առաջնորդարան դրկելու չմոռնաս։

Ու երկրորդ տատրակ մը քաշեց առջին։

* * *

Հետևյալ օրը, մութն ի լուսուն, տեր Մեսրոպ անտառն էր, հրացանը կռնակը, իր նախկին ընկերներեն մեկ քանիի հետ։ Նոր մարդ մը եղած էր, երեսը կարմրած, աչքերը վառ, հասակը ուղիղ։ Ճշտիվ այդ պահուն, եղնիկ մը երևցավ հեռվեն ծառերուն ետին, և սկսավ սրարշավ փախչիլ. տերտերը հրացանը ուղղեց, կրակ ըրավ, և անասունը գետին փռեց։ Ան ատեն ուրախության հիմարական աղաղակ մը արձակեց, որ լեռներուն մեջ արձագանք գտավ, ու սկսավ դողդողալով պագնել իր հրացանին բունը, փողը, բլթակը, ու իր խոլական հրճվանքին չկրնալով ատով հագեցում տալ, ափ մը վառոդ առավ և սկսավ ուտել ձեռքեն թափթփելով, բեղերուն ու մորուքին մեջ խառնելով, մինչ արցունքի լայն կաթիլները կուգային խառնվիլ փոշիին հետ և իր բերնի վրա, իր ռունգներուն բոլորտիքը սև խմոր մը շաղվել։

1890

ՍԻՐՈՒ ԳԻՇԵՐ

(Փարիզյան կյանք)

Գիշերվան Փարիզը՝ իմ սիրած Փարիզս է. թերևս անոր համար, որ ցերեկեն ավելի խորհուրդ ունի իր մեջ։ Երբոր արևը մարկմտնի թուա դը Բուլոնյին ետևեն, ուր երբոր կապն ու էլեկտրա-

կան կանթեղները մութին մեջ կցցվին՝ հրաշեկ չվաններու պես փուված փողոցներուն երկայնքը, քաղաքը, ցերեկվան սպառիչ գործունեութենեն գրգռված, ավելի աշխույժ, ավելի տենդոտ կերպարանք մը կառնու ամեն հոգնութենե ետքը եկող տեսակ մը գինովությամբ, որ հետզհետե պիտի արծարծվի, պիտի հրահրվի ամեն բանով, ընթրիքով, ալքոլով, նայվածքով, հպումով, գերագույն խոնջենքի մը մեջ հատնելու, սպառելու համար։

Տաք գիշեր մըն է, բայց տա՜ք, ա՛յնչափ ազդու, սաստիկ ա՛յնքան, որ շոշափելի բան մը, սրտիդ վրա ճնշող նյութական բանի մը զգայությունը կուտա քեզ։ Ասֆալթը ծանր գոլորշիներով կարտաշնչե օրն ի բուն մթերած տաքությունը։ Ամեն ոք դուրսն է, դռներուն առջև, մայթերուն վրա, պարտեզներուն մեջ, սրճարաններուն առջև, ամեն ոք տունեն դուրս մղված անդիմադրելի զգացումե մը, որ չպիտի ուզե սահմանափակվիլ չորս պատերուն մեջ, ավելի օդի, ավելի լույսի, ավելի շունչի, ավելի կենդանության ի խնդիր։ Ընթրիքի ժամն անցած է հիմակ, և բազմությունն հետզհետե կխտանա, կթանձրանա փողոցին մեջ. ամեն կողմե դուրս կելլեն, անդադար, կողմնակի գռեհներեն, ճամփաներեն, դռներեն, նրբանցքներեն, խառնվելու համար մարդկային հոսանքին, որ լայն պողոտաներուն երկու կողմերեն կհառաջանա, ծառերուն ստվերին մեջ նսեմանալով և կաղերուն պայծառ լույսին ներքև ի հայտ գալով հետզհետե։

Գետին եզերքը կիջնեմ, Սեն Միշելի կամուրջին եզերքը, Պլաս Մորեռի կողմնակի մութ ու նեղլիկ փողոցներեն, մնացորդ մը հին Փարիզին, որ ոչ քիչ-քիչ կքայքայվի ու կկերպարանափոխվի անդուլ բրիչին տակ, և ուր այս ժամուս աղմկալի կենդանություն մը կտիրե։ Շատո-Ռուժի և Պեռ Լյունեթի կապելաներուն բոլորտիքը, թիթեղյա տրապիզին առջև, պարապ գործավորներու, վոնդված սպասավորներու, անխոստովանելի աղբյուրներե ապրող երիտասարդներու խառնակ ու կասկածելի խումբ մը։ Ու քիչ մը անդին կիներ, որք պատերուն տակ կսլքտան, ընտանիքի մայրեր, որք իրենց ամուսինը կլրտեսեն, գործավորուհիներ, որք մանրիկ ու փութկոտ քայլերով կանցնին, Փարիզի գործավարուհիներ, սիրուն ճմրթված դեմքով, խուզարկու նայվածքով, համեստ ու անձնավստահ, անփոփոխելի սև պարզ շրջազգեստով, որ իրենց բարակ մեջքն ու կուրծքը կսեղմե։

Սենը, գիշեր ատեն, այդտեղ, անմատչելի շրջապատկեր մը

ներկայացնե։ Դիմացդ Նոտր-Դամը, իր հաղթ կազմվածքով, մութին մեջ կուրվագծվի, լուռ, բայց մեռած բաներ ու ահավոր ու սարսիչ լռությամբ մը. երկու կողմի բարձրադիտակ աշտարակներուն մեջտեղ, եկեղեցիին սլաքը դեպի վեր կցայտե, պչրող ու շնորհալի, դարերու հավատքին ու կրոնական հափշտակությանց այդ լքված զանգվածին տիրապետելով։ Ստվերը կշրջապատե ամբողջ շենքը, ծայրերը խեղդելով, ցցվածքները ողորկելով, սրուությունները թաղելով, ցերեկվան պայծառութենեն հազարապատիկ ավելի ուժգին ազդելով քեզ գոթական այդ հիշատակարանին ամբողջ բանաստեղծությունն ու մելամաղձությունն, որ կընկճե զքեզ։ Ոտքերուդ տակ, ջուրը կվազե մեղմ պղպջանքով մը, արագ, իր մութ երեսին վրա ցոլացնելով անհայտացնելով գետափին ու կամուրջին լույսերը. և երկու կողմդ, կամուրջներուն կարմիր ու սպիտակ լապտերները կերկարին ,անվախճան, զվարթ ճառագայթումով։ Հեռվեն, էյֆելյան աշտարակին գագաթեն, էլեկտրական դարձդարձիկ կանթեղը, երփներանգ փոփոխումներով, քաղաքին վրա կմխե իր լուսանյութ սլաքները։

Պուլվարներուն վրա, հիմակ, մարդկային հեղեղը կհոսի խիտ և կուռ։ Էլեկտրական լամպարները, օդին մեջ կախված լուսեղեն կայլակներ, իրենց թեթև անբացատրելի կապույտ լույսով աչք կխտղտացնեն, լուսնին պես դժգույն ու անոր պես իրենց բոլորտիքն ունենալով բակ մը։ Ինձի այնպես կուգա, որ բևեռային արևներն այդ չինչ պայծառությունն ունենալու են։ Սրճարանները կզեղուն բազմությամբ, պուլվարին լայն մայթին վրա պոռթկալով իրենց հաճախորդները, երեք կարգ սեղաններու առջև։ Ու ամբոխը կանցնի անընդհատ, անդադար, կողմնակի փողոցներեն թափելով պուլվարներուն վրա, այլազան ու այլատարր բազմություն մը, որուն մեջ կիները ուշադրություն կգրավեն վես ու գրգռիչ, շվայտ ու անպատկառ նայվածքներով, որք հրավերի մը պես հանկուցիչ են, իրենց անցքին վրա սփռելով մուշկի սաստիկ հոտ մը, որ ջղերդ թունդ կհանե. կանցնին ու կանցնին, զույգ-զույգ, միայնակ, լուսեղեն փոշիի մը մեջեն, որով մթնոլորտը լցված է և որ երկու կողմերու ճոխ խանութներուն ոսկեղեն նշանակները կհրդեհեն։

Երկու մայթերուն մեջտեղեն, անհամար կառքեր կվազեն իրարու ետևե, իրար հալածելու պես, իրենց կանաչ ու ճերմակ կանթեղները խոշոր աչքերու պես բացված, փայտե հատակին վրա

սահելով գրեթե անձայն, տարօրինակ կերպով ավելցնելով չորս կողմի ընդհանուր շարժումը։

Աղմուկը կբարձրանա ամեն կողմե, անորակելի ժխոր մը, խուլ, մութ ու հեռու ժխոր մը, լայն ու վիթխարի շունչը, սրտի տրոփումը գոգցես այս քաղաքին, որուն վրա գաղափար մը կարելի չէ կազմել, որ չես գիտեր ինչե՛ կբաղկանա, որուն մեջեն կանցնիս կդառնաս՝ անոր ըմբռնումն իսկ կորուսած, զոր ա՛լ չես լսեր՝ բայց եթե քաղաքեն դուրս ելլելով, արձակ ու ամայի դաշտի մը մեջ։

Ի Պլաս դը՛ լա Քոնքոռտ, տեսարանը դյութության մը կփոխվի։ Հրապարակեն մինչև Առք դը Տրիոնֆ, Շան զ՚Էլիզեի ծառուղին կերկարի իբր երկու կիլոմետր երկայնությամբ, իբր սահման ունենալով Հաղթական Կամարն, որ երկու սրունքներուն վրա կեցած անհեթեթ հսկայի մը տպավորությունը կթողու։ Լույսի զեխություն մըն է, որ կտիրե, լույս՝ ծառուղիին երկու կողմը, լույս՝ ծառերուն մեջտեղ, լույսին երգեցիկ սրճարաններուն չորս կողմը։ Երաժշտության ձայներ կհասնին, պղնձի ճայթյուններ ու աղիքի թրթռումներ՝ որք կընկերանան Պոլիուսին ու Իվեթ Գիլբեռին երգերուն։

Ա՛լ օդը ծանրացած է այն գորովանքի, գգվանքի, սիրո զգացումով, որ ամենուն սիրտը կլեցնե։ Գինովությունն սկսած է աստիճանաբար ու տաք արյունը կմտրակե, արուին ու էգին երակներուն մեջ դնելով նույն ըղձանքն, որ իրարու կմղե զանոնք, ու կենսականության զեղումն աչքերը կվառե։ Կառքերուն մեջ կանցնին քովեքով, էրիկմարդը կնոջը քով սեղմված, գլուխը անոր ուսին վրա հակած, որպես արբշիռ այն բուրմունքեն, զոր ծոծրակին բացվածքը կուտա իրեն, մերձակա գիրկընդխառնումին ցանկությամբը տենդահույզ։ Կառքին սրարշավ ընթացքովը կերթան ի Բուա դը Բուլոնյը, պուրակներուն առանձնությունը կամ ՇատոՄադրիդի ու Պավիյոն Շինուայի մասնավոր խուցերուն խորհրդապահ մենությունը փնտրելու։ Ու Շան զ՚Էլիզեի ծառերուն տակ, կողմնակի թավուտներուն մեջ, սիրահարներու զույգերը կերթան թե թեի, հետզհետե ավելնալով, միևնույն մտածմամբ վրդովված։ Ու անկեղծ տարփանքներուն քով, վարձկան տարփանքները նույն գինովությունը կավելցնեն։

Ու բոլոր այն ճամփուն վրա, որ տունս պիտի դարձնե զիս, կյանքի նույն փթթումն է, որ կտիրապետե ամեն տեղ։ Սիրո գիշեր մը պիտի ունենա հիմակ Փարիզ։ Առանձնացին խորհրդահեղ

ու բուրումնավետ հեշտության մեջ, Ամբոցներուն նամակ խոտին վրա, ձեղնահարկին տակ, ամենուրեք, ամեն հարկի ներքև, այս գիշեր, բարձին ու քարին վրա, ամեն ոք, ծերունին որպես մանուկը, ամեն ոք պիտի մոռնա պահ մը իր էությունը, հավիտենական Սիրույն անձնատուր։ Ամբողջ քաղաքը, ջղերու գրգռության մը մեջ, միևնույն ցնորքովը պիտի օրորվի։ Բարոյախոսը թող պոստե հոնքերը և կծու խոսքեր թող մոմռա։ Օ՜հ, այս աշխարհի ամեն ցավերուն, ամեն մտատանջությանց, ամեն կսկիծներուն մեջտեղ, վայրկյան մը մոռացում, ինչ գնով որ ալ ըլլա, շա՞տ է։

1891

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ

Ա.—ԿՐԻԱՆ

...Անեզր անսահման ծովուն մեջ, մեր շոգենավը կերթա անդուլ ու մենակերպ հառաջխաղացությամբ, տիտանյան կնոջ մը շնորհալից կոտրտուքով։ Մեր ոտքերուն ներքև կզգանք անոր ծածանքը գլուխեն մինչև հետույքը, կոհակին անձնատուր ու անոր լուսերանգ համբույրներուն տակ սարսռագին։ Ջուրը կճերմկի, կխշրտա չորս բոլորտիքը, գոգավոր փրփրալից ակոսի մը մեջ դեռ երկար ատեն պահելով շոգենավի անցքի դրոշմը, հետզհետե ավելի լայն ու ավելի անորոշ ծփանքներով, որք մեր ետին կկորսվին։

Արևը միահեծան կտիրե այստեղ, արձակ ու անարգել, ամեն կողմ թափելով իր պողպատի պես ցուրտ ու փայլուն ճառագայթները նոյեմբերի. ու ջուրին վրա, փայլփլուն լույսի անհատնում ճառագայթացումը կերկարի աչքը կտրածին չափ, հորիզոնին հետ խառնվելով ու այնտեղ ձևացնելով ստվերախառն բոլորակ մը։

Հորիզոնին վրա, չորս կողմ, բա՛ն մը չերևիր։ Հեռադիտակն երբեմն-երբեմն երևան կհանե, տարտամ գոլորշիներու մեջեն, հեռավոր շոգենավի մը կայմերն ու մարմինն, որք ընդհուպ կանհետին։ Լռությունը խորին, ահավոր բան մը ունի այստեղ, այդ հեզուկ անծայրածիր զանգվածին լռությունն, որ իր մեջ կխեղդե նավուն անհեթեթ կուտին խուլ գրնդյունը։

...Կերթանք անդուլ, անդադար կերթանք։ Ծովն հանդարտ է միշտ. թեթև հով մը կփչե թարմ ու աղի, մորթին վրա թողլով տամուկ եղկություն մը։ Աչքը կհոգնի նայելով ծովուն կապույտին, որ, հեռվեն հեռու, սպիտակ բլուրներով կցանցնվի։ Ու աչքին այդ հոգնությունը մտքին կազդե, անդամներուն կներգործե։ Նավուն հետսակողմը, փայտե նստարանին վրա բազմած, հոգնութենե ու ձանձրույթե ա՛լ ավելի տիրապետող բան մը կզգաս, ամբողջ մարմնույդ անէացումը, զգացումներուդ ու զգայությանցդ ընդարմացումը, թոլորագիծ շրջապատկերին անշարժությանը մեջ։

Ո՛չ կին, ո՛չ գիրք, ո՛չ դաշնակ, ոչի՛նչ. կապույտը, որ գլխուդ վերև կոսկեզօծի, ու ջուրին մեջ կանդրադառնա լուրթ երանգներով. ու փայտե նստարան մը, մութ նարնջագույն ներկված, այնտեղ դրված իբր սահման բոլոր գործունեությանդ։ Խոշոր ահագին շուն մը կա, աղտոտ երկար մազերով, որ չի մոտենար սակայն, հեռվեն կասկածոտ նայվածք մը նետելով օտարականին վրա։ Միակ հաճույքը, որ կմնա, ծխելու հաճույքը, տարօրինակ կերպով կնվազի, կցրտանա այստեղ, այս արձակ ծովուն մեջ, ու ներքին, խոր, անբացատրելի ցավի մը կփոխվի. հովն անմիջապես կտարտղնե, կցնդեցնե կապտորակ ծուխի հորձանքներեն որք բերնեդ կելլեն, ու անոնց դանդաղ ծածանումներուն ու երանգներուն աստիճանական նվազումին հետևելու զբոսանքեն կզրկե զքեզ։ Ասոր համար է, որ մարդս չի ծխեր մութ տեղ մը։ Կույրերը չեն ծխեր, և եթե ծխեն իսկ՝ մեծ հաճույք չեն առնուր։

Նավաստիները կուգան կերթան մերթ ընդ մերթ, անձայն անշշուկ, իրենց պարտականության ամենօրյա կատարմանը մեջ վաստակած այն լուրջ անտարբերությամբ, որ իրենց արևեն ու ծովեն այրած դեմքերուն վրա կտիրե։ Նավուն մեջտեղը, դունակին վրա, նավապետին գլուխը կնշմարվի գրքի մը վերև կռթնած։

Միակ զբաղումս է դիտել այդ մարդերուն աշխատությունը։ Օրվան ամեն ժամուն, արշալույսին ու վերջալույսին, երեկ որպես և այսօր, այսօր որպես և վաղը, այդ մարդիկ իրենց գործին գլուխն են, կյանք ու սնունդ տալով փայտի ու երկաթի ահագին կույտին, որ կտանի զմեզ։ Սովորական դեմքեր են, հյուսիսային Անգլիո կապույտ աչքեր ու խարտյաշ, երբեմն իսկ շեկ մազեր, ամենքն ալ առույգ, կայտառ, կորովով լեցուն։

Մեկը միայն ուշադրությունս գրաված էր առջի օրեն. պզտիկ կուզ մը, սաչափ, պեղի ու մորուքի երկար թելերով, որք իր նիհար

կապկի դեմքը կաղտոտեին։ Տարիքը... չեմ կրնար ըսել. քանի՝ թերևս իր կապույտ խոշոր աչքերուն, ոչխարի անուշ աղվոր աչքերուն նայելով. բայց եթե երեսուն, քառասուն ալ ըսեր, չպիտի զարմանայի, հոգնած ու քաշված դիմագծերը դիտելով։ Իր գործին գլուխն էր միշտ, ամեն առտու, իր հասակեն շատ բարձր ավելով մը մաքրելով երկաթյա տախտակները։ Բայց պետք էր տեսնել զինքը չվանի մը ծայրը, սանդուղը իջեցնելու կամ բարձրացնելու ատեն, առագաստները բանալու կամ ամփոփելու ժամանակ, իր բարակ երկար թևերովն անկից կախված, ու ամեն ցնցումին, իր կուզն ավելի ցցվելով երկու ուսերուն մեջտեղը, ու սուր ձայնով մը, որ իր ընկերներուն բամբ ու խոպոտ ձայներուն կտիրապետեր, զվարթ սրինգի մը պես արձակելով.

— Հո՜, հե՜հե՜յ, հե՜հե՜յ...

Ու չվանի յուրաքանչյուր քաշվածքին, իր նկուն հասակն ա՛լ ավելի կցածնար, մինչդեռ ընկերները խնդալեն կմարեին, անոր ուսերուն վրա ծանրանալով ու ջանալով ավելի տափակցնել զայն, գետնին հավասարեցնելու աստիճան։

Առջի օրն իսկ արդեն ուշադրությունս ու կարեկցությունս գրաված էր, երբ տեսա, որ քիչ մը հետո խնձի կմոտենար, նավուն հետսակողմը, ու գետինը կդներ բան մը, զոր նախ չէի նշմարած իր ձեռքին մեջ։ Այո՜, պզտիկ կրիա մըն էր, պզտիկ, ափի մը մեջ սեղմելու չափ, սիրուն, բայց սիրո՜ւն։ Բաց կանաչագույն պատյանին վրա սև գծերով քառակուսիները կանոնավորապես շարված էին։ Անասունը հինգ վայրկյանի չափ սպասեց հոն, ու հետո, պատյանին վերի բացվածքեն, պզտիկ գլուխ մը երևցավ, թոմթոկած երկար վիզով մը; կամաց-կամաց ավելի երկարելով, խարխափումի մը պես, թաղանթապատ մանր աչքերովը չորս դին դիտելով. հետո չորս թաթերը երկարեցան քիչ-քիչ, և երբ իր անասունի բնազդումովը հասկցավ, թե ա՛լ վտանգ չկար, սկսավ քալել, նախ համբ, հետո ավելի արագ, թաթերուն ու գլխին այլանդակ թավալումով մը։

Անասունը թողուցի սակայն ու սկսա նավաստին դիտել։ Գլուխը դեպի առաջ ծռած, դեմքին վրա անճառ երանություն մը սփռված, որ իր կապույտ աչերն ավելի կխոշորցներ՝ ծովու բաց լեղակի ցոլացումներով, անասունին կնայեր, լայն ժպիտով մը, որ իր բեղերուն ու մորուքին թելերուն մեջ կկորսվեր։ Իրեն մո-

տեցա. շարժումս, կրիան անմիջապես ներս քաշեց գլուխն ու թաթերն, իր պատյանին մեջ ապաստանելով։

— Շա՞տ կտիքեք,— ըսի,— ձեր կրիան։

— Մ՛հ։

Ուրիշ բան չըսավ. բայց ի՞նչ խանդաղատական շեշտով մը արտասանեց այդ ձայնարկությունը, որուն զորությունը պարզ երկաթով մը չեմ կրնար բացատրել այստեղ։ Ու անասունը առավ գետնեն և սկսավ համբուրել, խեցիին կոնակին վրա, փորին վրա լեզուն քսկռտելով, գլխուն կողմի բացվածքեն ներս խոթելով ու լզվռտելով։ Հետո բաճկոնը քակեց, ծոցին մեջ դրավ զայն, երկու թևերը վրայեն գոցելով, կրքի անսահման ուժգնությամբ մը։

Այդ անասունին համար ունեցած հիմարական սերը իր վրա զգացած համակրանքս ավելցուց։ Ու մեկ քանի հարցումներով իր պատմությունը գիտցա, իր խեղճ նախնական պարզ հոգին հասկցա։

Անգլիո հյուսիսային եզերքներուն վրա ծնած, կանուխեն որբ մնացած, իր այլանդակ կազմվածքին պատճառավ ամենուն ծիծաղին ու արհամարհանքին ենթակա, ծովու կյանքը սերած էր՝ մարդերեն հեռու ըլլալու համար։ Ծովուն որպես ցամաքին վրա մարդկային ապուշությանը զոհ, աշխարհի ամեն նավահանգիստներուն մեջ պտտցուցած էր իր սապատողի անճոռնի տգեղությունը, ամեն ազգի վարձկան տարփանքներու մեջ չկրնալով հագուիդ մը տալ իր սիքատենչ սրտին զսպված հորձանքին։ Ու ահա երկու ամիսե ի վեր, Ալեքսանդրիո մեջ այդ կրիան առած էր դեռ նոր ծնված, ու երկու ամսե ի վեր, առտու իրիկուն, ա՛լ իր կյանքը կեդրոնացուցած էր այդ պզտիկ անասունին մեջ, անոր վրա թափելով վերջապես իր հեգ տխեղծ պատյանին մեջ մթերված խանդաղատանքի ամբողջ պաշարը։ Ուրիշ անասուն մը չէր ընտրած. շուն մը, կատու մը քուկդ չեն, առանց քեզի կրնան երթալ գալ, առանց ամեն ժամու խնամքիդ պետք ունենալու. բայց կրիային համար ինք ամեն բան էր, իր պզտիկ սնդուկեն ինք պետք էր, որ հաներ զայն, քիչ մը օդ առնուլ տար, ու նորեն տեղը տաներ դներ, մնք միայն վայելելով զայն։ Ծսական տարօրինակ սեր մը, զոր այդ սկզբնական էակը կրցեր էր ըմբռնել և ի գործ դնել, միամիտ մարդու շնչին ու վսեմ հղացում մը։

...Հո՜, հե՛հե՛յ, հե՛հե՛յ...

Ու ձայնը կբարձրանար, սուր, զվարթ, լվանին յուրաքանչյուր քաշվածքին զուգաչափ, մինչ՝ իբր արձագանք՝ անոր կպատասխաներ մյուս նավաստիներուն լայն կուրծքերեն արձակված ճգի «հե՛, հե՛»-ն։

Արևը կփայլեր ջինջ ու վճիտ, ճերմակ ամպերու պարմը կխաղար հորիզոնին վրա։

Ու կուզը վազելով գացած կրիան բերած էր, բնության այս անխնա պարգևեն չուզելով անմասն թողուլ իր սիրական անասունը, համբույրներով ծածկելով անոր պատյանը, փորին կողմը, ուր խեցին ավելի կակուղ էր դեռ, ավելի բաց կանաչ երանգներով։

Այդ միջոցին կանչեցին զինքը գործի մը համար։ Կրիային նայեցավ, որ հեզիկ հանդարտիկ կպտտեր՝ իր կողմնակի նայվածքին մեջ հայտնելով իր անբանի ապուշ ուրախությունը լույսեն ու տաքութենեն, և ելավ գնաց։ Պահ մը ես ալ շարունակեցի դիտել անասունն, որ նստարանին բոլորտիքը շրջան մը բրավ իր կանոնավոր անփույթ քայլվածքով, տեղ-տեղ կանգնելով՝ թերևս զոհունակության ճիչ մը արձակելու համար, զոր ես չէի լսեր այլ կմակաբերեի իր սրածայր գլխուն երերումեն ու աչքին մաշկերուն թարթափումեն, հետո թողուցի զայն ու անդին դառնալով սկսա ծովը դիտել։

Ակռաներու կճրտուքե մը ետիս դարձա հանկարծ և... այո՛, կրիան շոգենավին խոշոր շան բերանն էր, որ իր զորեղ ակռաներուն տակ անոր դեռ կակուղ պատյանը կոտրած փորին կողմեն ու մարմինը դուրս քաշած, կուտեր այն պատառ մը միսն, որ ամփոփված էր այդ խեցիին տակ, բեղերն ու շրթունքն արյունոտ. արյան մեկ քանի կաթիլներ կաթած էին գետինը։

Շանը վրա երթալ ուզեցի, երբ տեսա հեռվեն կուզը, որ վազելով կուգար։ Աչքով փնտրեց անասունը, տեսավ քիչ մը անդին ջունը, ու, ազեռքին արդեն խելամոտ, գլխին զարկածի պես կեցավ հոն, իր կապույտ աչքերը կոպիճեն դուրս ելլալու աստիճան բացած, շրթունքն իրարմե բաժնված՝ ապուշի արտահայտությամբ մը։ Հետո դանդաղկոտ քայլերով շանը վրա վազեց, որ, բերնեն թողլով արյունազանգ պատյանը, փախավ։ Առավ զայն, ու իր ձեռքին հուսահատական կախվածքեն հասկցա, թե ազեռքը կատարյալ էր, ա՛լ անդարմանելի։ Չկրցավ լալ, բայց արցունքն

իսկ պիտի կրնա՞ր սփոփել իր սիրուն այս վայրագ ու բիրտ ոչնչացումը, իր ներսիդին հորինած գուրգուրանքի շենքին այս քայքայումը։

Քիչ մը ետքը չվանին ծայրն էր նորեն. ու նորեն, ամենօրյա սովորության զորությամբ կարձակեր իր «հո՜, հե՛հե՛յ»-ը. բայց ձայնին մեջ հիմակ պատռած բան մը կար, ճաթած սրինգի ձայն մը, որ կոկորդեն բաժնվիլ չէր ուզեր։

Ու աչքը դեռ այն կողմն էր, ուր, մաքուր տախտակամածին վրա, խեղճ անասունին արյան կաթիլները կփայլփլեին արևին ճառագայթներուն տակ։

1891

Բ.—ՄԱԹԱԲԱՆԻ ՃԳՆԱՎՈՐԸ

Հարավային Հունաստանի ժեռուտ ու լերկ ծովեզերքին ծայրը կերկարի Մաթաբանի հրվանդանը։ Անցյալ տարի այս ամսուն մեջ, իրիկուն մը, շոգենավով անցանք անոր առջևեն։ Արևը դեռ իր ամբողջ լույսը պահած, սաստիկ պայծառությամբ մը կոգևորեր հունական ծովեզերքին այդ լեռները, որք բնության ավերը կներկայացնեն, մշտնջենական տխրությունն այս աննյութ բաներուն, որոնցմե կյանքը խույս տված է։ Ո՛չ դալար, ո՛չ բնակություն, ո՛չ շարժում, ոչինչ. ծովուն դիմաց, որ կուգա իրենց կողերը ծեծել անդադրում, այլ լեռները, բողոքի մը պես բարձրացած դեպի երկինք, իրենց ամուլ ծոցին բովանդակ դառնությունը կպատկերացնեն իրենց ուրվատեսիլ ցցունքներուն և ծործորներուն մեջ։

Նավապետին քով ենք, երբոր հանկարծ կըսե մեզի.

— Մաթաբանի ճգնավորը պիտի տեսնենք հիմա։

— Մաթաբանի ճգնավո՞րը. ա՜հ, այո՛, իմացեր էի, ճգնավոր մը կա, որ այդ ամայի հրվանդանին ծայրը կրնակի, ուղևոր բարեկամներե անտարբեր ականջով լսված տարտամ պատմություն մը, որ հիմա հանկարծ մարմին կառնուր այս համատարած ամայության մեջ, ուր ուշադրությունս կետ մը կփնտրեր անով զբաղվելու, ուր նայվածքս վայր մը կորոներ՝ անոր նորությամբը լենալու համար։

Քիչ հետո, հրվանդանին առջևն ենք ճիշտ։ Եվ ահա, հետզհետե, աչքս այդ ընդհանուր մեռելության մեջ երևան կբերե ճերմակ

ներկված պզտիկ սիրուն շենք մը, ու քիչ մը անդին պզտիկ եկեղեցի մը, այն ալ ճերմակ պատերով։ Դռանը առջև պարտեզ մը կա, ուր ծառեր ու կանաչ կերևան, եկեղեցիին զանգակատունը իր տիրուն գլուխը վեր կբարձրացնե, վախկոտ, համեստ, իր վերև բարձրացող ու երկնցող ժայռերուն սարսափովը կարծես համակված։ Նեղ ճամփա մը ոլոր-մոլոր կբարձրանա շենքերուն առջևեն դեպի վեր, դեպի լեռան կատարը, ժայռերուն քմահաճույքին համեմատ փոխելով իր ուղղությունը, մերթ կորսվելով մեր տեսողութենեն ու քիչ մը վերը նորեն երևան գալով, և հուսկ ուրեմն անհետանալով լեռան ետև՝ անկե անդին առաջնորդելու համար դեպի բնակված վայրեր անշուշտ։

Բայց ճգնավո՞րը, ո՞ւր է ճգնավորը։ Հարցնելուս չմնար, նավապետը արդեն կքաշե շչակին չվանը և շչակը կարձակե մեկ քանի անգամ իր սուր ձայնը, կոչի մը պես ազդու և պահանջկոտ։ Ու նավապետը կպատմե մեզի պատմությունն այդ մարդուն, որ տասը-տասնհինգ տարիե ի վեր այդ ծակին մեջ քաշված, իրեն համար տուն մը և եկեղեցի մը շինած, մարդկության շունչը տարած է այդ գերեզմանական միայնությանց մեջ, ինքն իրեն համար առանձին կյանք մը ստեղծելով այդտեղ, դիցաբանական էակի պես բան մը։ Փոթորիկի Ոգի մը այդ մրրկահույզ ծովեզերքին վրա՝ այնպես ինչպես Վասկո դե Գամայի տաք երևակայությունը ստեղծեր է ատոնք, բանաստեղծի խոլ արարչագործություն մը, զոր այդ մարդը մեն-միայնակ իրականացուցեր է այժմ՝ դարերե ետքը՝ հունական այդ լեռներուն վայրագ շրջապատկերին մեջ։ Տասնհինգ տարիե ի վեր, Միջերկրականի այս ճամփուն վրայեն անցնող ամեն նավերը, ո՛ր դրոշակի ալ պատկանին, պարտք կհամարին Մաթաբանի առջևեն անցած ժամանակ հնչեցնել իրենց շչակը, ծովեն ողջույն մը այդ ցամաքի միանավորիկ մարդուն, հարգանքի պես բան մը, ու մանավանդ արտաքին կյանքին, դուրսի եռացող ու հարահոլով կյանքին մեկ ազդարարությունը՝ այդ անշարժ խաղաղիկ մենակյացին։ Բարեպաշտ նավապետները պարտք կհամարին հաճախ կեցնել անդ իրենց նավն, և ուտելիք դրկել ճգնավորին, անոր օրհնությամբը զորացած իրենց ճամփան շարունակելու համար անվտանգ։

Ճգնավորը չերևցավ, ու չցավեցա այս բանին համար. իրեն իրագործած բանաստեղծությունն այնքան մեծ էր, որ մարդը հարկավորաբար պզտիկ ու տխեղծ պիտի երևնար աչքիս. մինչ,

իր ճերմակ տնակին պատերուն տակ քաշված, կպահեր իր անծանոթ ու անհասկնալի էակի բոլոր հրապույրը։

Քիչ-քիչ կհեռանանք սակայն այդ ծովեզերքեն։ Մութը կսկսի կոխել, ծովուն վրայի այն ստվերոտ տարտամությունն, որ երկրնքեն կիջնե ու հետզհետե կցածնա, մինչ արևմտյան հորիզոնին վրա շառագույն դիծ մը հետզհետե կսաստկանա, կոսկեզօծվի, կհրդեհի գույներու տարօրինակ բոցավառությամբ մը։ Ծովեզերքի լեռներուն կատարները կկորսնցնեն իրենց ձիգ ուղղությունը, մութին մեջ պզտիկնալով, հալելով հաջորդաբար։ Ճգնավորին ճերմակ շենքերը միանակ կպահեն դեռ իրենց ամբողջությունը, այդ անորոշ հատակին վրա տարօրինապես կենդանի և զվարթ։

Ընթրիքի ժամն եկած է սակայն, ու վար կիջնեմ։ Երբոր ժամ մը հետո վեր կելլեմ, մութը տարածված է ամեն կողմ։ Երկնքին վրա աստղերը կպայծաղան։ Հյուսիսային աստղը, խոշոր, կփառփատի մանրադիտակաև փարոսի մը պես։ Բնության մեծ փարոսն էր, որ ո՛չ կշիջանի և ո՛չ կբայքայվի, հավիտենականությունեն ի վեր նույն տեղն անշարժ ու մարդկության ծագումեն ի վեր առաջնորդելով սկզբնական մակույկին ու արդի շոգենավին, փոթորկին և անդորրության ալ մեջ։ Արջի համաստեղության յոթն աստղերը կդիտեմ իրենց չափակցական ձևին մեջ, հին ատեն սովրված ու վերջեն մոռցված բաներ հիշելով վերստին, որք հիշողության խորեն մեկիկ-մեկիկ երևան կուգան հիմա, այս հանդարտության մեջ մտքին վերստացած վճիտ պայծառությանը շնորհիվ։

Մաթաբանը մութին մեջ ահեղ զանգված մըն է լոկ հիմա, ու անոր ստորոտը՝ կատաղաբար փշրվող կոհակներուն փրփուրին մանյակը հազիվ կերևա. օղա՛կ մանավանդ, զոր ծովն իր մոլեգնությանը մեջ կկապե այդ հսկային ոտքերուն։ Ճերմակ տնակն ու ճերմակ եկեղեցին կորսված անհայտացած են։ Ու նավին կամուրջին վրա, գիշերվան այս ժամուն, որ ամեն մարդու սրտին խորը թաղված զգացումներ կարթնեցնե, միահեծան խավարին ու լռության մեջտեղ, կմտածեմ Մաթաբանի ճգնավորի վրա։ Կյանքի խենդ չէ՞ լուծեր արդյոք այդ մարդը իր պարզ հղացումովը. մեզ տանջող բոլոր հոգերեն հեռու, բնության ևեթ անձնատուր, որ այն միայն չխաբեր զմեզ, ո՛չ հուսալիք ու ո՛չ կորսնցվելիք բան մը ունենալով, հետևաբար հատնումե աղատ, ծովն իրեն սիրուհի և ժայռն իրեն ընկեր, ու կրոնքն իրրև իրեն գերագույն միխիթարանք, խազարիկ կանցուցեն իր օրերը։ Մաթաբանի հրվանդանն,

այդ մարդուն ամբողջ հոգեկան մեծությամբը կրկնապատկված, հիմակ ավելի վեհ երևույթ մը հագած էր աչքիս առջև, ու մութն, որ ամեն կողմեն լեռը կգրկեր գերազանցապես ավելի հարմար կթվեր ինձի իբր շրջանակ ծառայելու այդ մարդուն վսեմ ու մոայլ խորհուրդին։

Այս տարի երկու շաբաթ առաջ նորեն անցա Մաթաբանի հրվանդանին առջևեն։

— Երկու ժամեն Մաթաբանի առջև ենք,— ըսավ երկրորդ նավապետը Սանտ-Անճելոյի հրվանդանին դիմաց։

Ա՜, նորեն պիտի տեսնեի ճգնավորը, նորեն՝ իր տնակը և եկեղեցին։ Ու այս մտածումը ուրախացուց զիս, հին բարեկամ մը տեսնելու, մանկության օրերու հին վայրեր ու տեսարաններ վայելելու զգայության մը պես։

Երբոր հրվանդանին առջև կհասնինք, կզգամ, որ բան մը կսպասեմ, ճիշտ ինչպես մարդ մը՝ երկարատև բացակայությենեն մը հետո՝ կսպասե միևնույն տեղը գտնել միևնույն շենքը, միևնույն տեսարանը։ Ու, կհիշեմ հանկարծ, շոգենավին շչակը պետք է որ սուլե։ Եվ սակայն ճերմակ եկեղեցին մեր դիմացն է ճիշտ, զանգակատունը դեպի վեր կբարձրացնե՝ վախկոտ իր սիրուն գլուխը, նեղ արահետը ոլոր-մոլոր կբարձրանա լեռն ի վեր, նույն տեսարանը, նույն շրջապատները, ու միայն շչակն է, որ լռա կմնա։ Բացատրություն կխնդրեմ նավապետեն ու նավաստիներեն, ու իրենց պատասխանը սիրտս կսեղմե։

Երկբայության հովը, որ ցամաքեն կփչե, ծովուն վրա ալ տարածած է իր տիրապետությունը։ Ո՛չ նավաստիներն, ու ո՛չ ալ առջի հավատքն ունին հիմա Մաթաբանի ճգնավորին համար։ Ո՛չ ուտելիք կղրկեն և ո՛չ բարև, դունակին վրայեն նավապետն իր նայվածքն անգամ չդարձներ դեպի եկեղեցիին կողմը։ Ու ցուրտ սկեպտությամբ մը, նավաստիները կխնդան մենակյացին վրա, տարակույսներ հայտնելով անոր բարքին վրա, ծաղրելով անոր հավատքը։

Սիրտս կսեղմվի, չեմ գիտեր ինչո՛ւ։ Մաթաբանը իր վեհությենեն ու պատրանքներեն բան մը կգորոնցնե հայտնապես աչքիս առջև, ու հիմա հողի սովորական կտորի մը պես միայն կերևա, որ առջի հրապույրը չունի ա՛լ։ Ե՞ս արդյոք իմ բանաստեղ-

ծությունս կորսնցուցեր եմ անկից ի վեր, թե լեռը. բայց ինձի այնպես կուգա, թե անցորդներեն ու շոգենավերեն լքյալ այդ վայրը ա՛լ իր նախկին կենդանությունը կորսնցուցած է, և ցուրտն, որ հիմակ անոր սրտին մեջ կտիրե այդ վայրի ծովափին ու անոր մենավոր բնակչին նկատմամբ՝ ցրտացուցած է նաև այդ լեռան բոլոր բանաստեղծությունը և պզտիկցուցած, գռեհկացուցած՝ ճգնավորին վայրի ու վսեմական հղացումը։

Մաթաբանը, այս երկրորդ անգամուն, ի՞նչ հմայաթափություն։

1891

Գ.—ՎՐԱՆԻՆ ՏԱԿ

Առաջին անգամ, որ տեսա զիրենք նավին կամուրջին վրա, վստահաբար խոսք ուղղեցին հայերեն լեզվով։ Օ՜, տարակույս չի կար, հայ էին, և առանց առաջուց տեղեկության նշույլն անգամ ունենալու իրենց վրա՝ պիտի կրնայի զրուցել, թե խարբերդցի հայեր էին ասոնք, որ Ամերիկայեն կդառնային։

Կխոստովանիմ, թե գուշակության այս կարողությունը մեծ արժանիք մը չէ։ Երբ որ Մարսիլիո շոգենավի մը վրա, աղտոտ անկողնի մը քով երկնցած կգտնեք մարդ մը, որ, ֆեսը գլխին, վայրահակ կմնա, տխուր, չորս կողմը անցածին դարձածին անտարբեր, մեկի դեմ հարյուր գրավ դրեք, որ հայ մըն է ան, ու խարբերդցի հայ մը, որ Ամերիկա կերթա կամ անկից կդառնա։ Գրավնիդ կշահիք։

Երեք հոգի էին, Խարբերդի շրջակա գյուղերեն, ու անմիջապես բարեկամ եղանք իրարու, այն միամիտ ու սկզբնական ընտրությամբ, զոր գավառացիները կունենան։ Մին, բարձրահասակ, աղվոր մարդ մըն էր, կապույտ աչքերով, դեղին մետաքսավետ բեղերով, որ երկու կողմեն վար կիյնային. եվրոպական դեմք մը կատարյալ։ Խմբին առաջնորդը կթվեր ու ինքը կխոսեր անոնց կողմե։ Մյուս երկուքը պահած էին իրենց գեղացիի անեղծ դրոշմը։ Մին մանավանդ, գլխիկոր հիվանդ մարդ մը, անծոպ աղտոտ ֆես մը մինչև ականջներուն վրա քաշած, բեղերուն ծայրերը կտրած, կարծես դեռ նոր ելած էր իր գյուղեն՝ հանկարծակի փոխադրված նավին կամուրջին վրա։

Իրենց պատմությունը ըրին ինձի։ Չորս տարի Ամերիկա

մնացեր էին, Ուսքրրի թելի գործարաններուն մեջ աշխատելով,— հայ պանդուխտներուն այդ անհագ Մողոքը, որ այնքան զոհեր կառնե իրենցմե։ Օր չանցնիր, որ բանվորներեն մեկուն թևը կամ ոտքը չմնա մեքենաներու տակ։ Իրենցմե մին քաշեց տաբատը և սրունքին վրա ցույց տվավ լայն կտրվածքի մը հետքը։ Ամերիկացի բժիշկ մը դարմաներ էր զինքը, մինչև ոսկորը կտրված երկու կտորները իրարու միացնելով։ Գործողությենեն ետքը սակայն, վնասված ոտքը մյուս ոտքեն կարճ մնացեր էր։

— Կաղ մնալ չէի ուզեր,— ըսավ խոսակիցս։— Նորեն բժշկին գացի, նորեն վերքս բանալ տվի, և այս անգամ վերջապես կրցավ երկու ոտքս ալ հավասար ընել։

Հոգնած ու հիվանդ կդառնային իրենց տեղը, Ամերիկայի փողոցներուն մեջ ոսկի ժողվելու պատրանքին կորսնցուցած, Նոր Աշխարհի քաղաքակրթության վրա պահելով սակայն անճառ հիացում մը, որ իրենց աչքերը խոշոր բանալ կուտար ամեն անգամ, որ կխոսեին էլեկտրական լույսին կամ լայն պողոտաներուն վրա, իրենց հայերեն խոսակցությունը համեմելով անգլիերեն բառերով, որոնք հաստ ու տափակ հնչականություն մը կառնեին իրենց բերնին մեջ։

Քիչ մը դրամով կդառնային իրենց հայրենիքը։ Ու որպեսզի ա՛լ ավելի հանգստություն կարենային տանիլ իրենցներուն, հանձն առեր էին ծմեռնամուտի այդ դժնդակ օրերուն այդ երկար ճամփորդությունը ընել նավին կամուրջին վրա, իրենց անկողնին ու վերմակին մեջ փաթաթված, անձրևին ու բուքին ենթակա։ Բարեբախտաբար, իմ միջնորդությանս վրա, երկրորդ նավապետը կտավե վրան մը կանգնել տվավ իրենց համար, որ քիչ շատ պիտի պատսպարեր զիրենք։ Վրանին առջև նստած կընեին իրենց ճաշը, չոր հացե ու ձիթապտղե բաղկացած, զոր գնել էին ի Մարսիլիա։

Փոթորկալի ծովը կտանջեր այդ ցամաքի մարդիկը, որոնք անմիջապես իրենց ապաստարանը կքաշվեին։

* * *

...Այն իրիկունը հովը դուրսը կգոռա, ահավոր, արձակ միջոցին մեջ թավալելով իր հորձանքները։ Բնության մեծ ձայնն էր, որ կբարբառի, իր ահագնությանը տակ ընկճելով քեզ։ Շոգենավին

լուծքը կդղրդի, կայմերը կշառաչեն, շղթաները կկոնչեն, կը՞ռ, կը՞ռ, կը՞ռ, դագաղը գերեզման իջեցնող չվանին ճռնչյունեն ա՛լ ավելի սաստիկ ազդելով քեզ անէության մահասարսուռ ցուրտը։ Ու ինչ որ ամենեն ավելի կուտա ինձի անգիտակից երկյուղի մոռցված տպավորությունը, խավարին արհավիրքը, որ աչքդ կլեցներ ցնորական պատկերներով, կամ կեսգիշերվան փոթորկի ազդեցությունն, որ անկողնին խորը կծկտել կուտար մանուկներուն, մատաղ տարիքներու այս սարսուռներուն վերադարձը և անբացատրելի պատկերացումներու այս հանկարծական վերածնունդը, ինչ որ գերազանցապես կուտա ինձի այս ամենուն ալ տպավորությունը, հովին սուլումն է կայմերուն, չվաններուն և ելնարաններուն մեջեն։ Օ՜հ, տարօրինակ նվագախումբը, անհունորեն երկարաձիգ։ Չէ՛, չվանները չէ, որ կարձակեն այդ խառնամանյալ ձայները, սուր, թրթռացող։ Ինձի այնպես կուգա, որ հոգի մը ունին այն խեղճ նիհար թելերը, որ հիմակ հովին մարակող ուժգնության տակ պրկվելով ու գալարվելով, ցավի աղաղակ մըն է, որ կարձակեն, տառապանքի մարգկային արտահայտություն մը։ Սարսուռ մը կվազե կհոսի այդ թելերուն վրա, որոնք ջիղ են համակ, ու իրենց գերագրգռությունը կհյուսե այդ նվագը, Պոտչեռյան երգի մը պես հիվանդ ու կենդանի։ Այդ չվանները, կապրի՞ն։

Վերնահարկի սենեկեն ելլել կուզեմ ու կամաց մը գոնեն դուրս կսպրդիմ։ Մութ է, թանձրահոծ մթություն մը, որուն մեջ հազիվ կորոշվի նավուն զանգվածը, տարտամ շրջագծով։ Կայմերուն ծայրերը կկորսվին խավարի մեջ, իրենց ո՛ւր վերջանալուն անստուգությամբը թվելով հասնիլ անհաշվելի բարձրությանց. ջոգենավին կարմիր կանթեղը միայն կփեռեկտե աղջամուղջը իր ալալուն վախկոտ լույսովը։

Հովը կեցած տեղս անշարժ կպահե զիս, անձրևի խոշոր կաթիլներ բերելով կատաղությամբ զարնելով երեսիս։ Չեմ համարձակիր քայլ մը հառաջանալ, տախտակորմին կրթնած, անոր վրա սեղմված։ Ցուրտը կսառեցնե անդամներս։ Ու խավարին մեջ բոլոր այն ձայները ահռելի համեմատություն մը կառնեն, անդնդային դժոխալուր համերգ մը, որ ականջներս կխուլցնե ու կգինովցնե զիս, ո՛չ թե մարդուն գտած ողորմելի ըմպելիներուն կամ հանդերուն գինովությունը, այլ ամբողջ զգայությունները վայրկենապես ընկճող ու խեղդող ոչնչացում մը, որ բարձրեն եկող հզոր ծաղրի

մը, արհամարհանքի մը վեհությանը ունի։ Ով ու երկինք չկա. ու մեջթ ընդ մեջթ սենեկին լուսավոր պատուհանին ցոլացումովը տեսնված սև ջուրի պատուվածքները աչքերս կողողեն գերեզմանի քերնի մը մռայլ ստվերներովը։

Հանկարծ ձեռքիս դպչող պաղ բանի մը զգայությունը կուննամ, որ էլեկտրական ցնցումի մը պես կթռթվե զիս, ու ծանոթ ձայն մը ականջս ի վար կպոռա.

— Ես ալ քեզ առնելու պիտի գայի, մքստը։ Ի՞նչ բան ունիս դուրսը սոսկալի օդին։ Եկուր քիչ մը տաքցնենք քեզի։

Խարբերդցի ճամփորդներեն մին է, դեղինը, երրորդության առաջնորդը։ Ու առանց պատասխանիս սպասելու, թևես կքաշե կտանի, պատվիրելով տախտակորմին կռթնելով քալել։ Ջոքսհինգ քայլեն, վրանին առջև ենք։

— Հե՛, — կպոռա ներսիններուն, — ծայրը քիչ մը վերուցեք։ Դուն ալ, — կբսե ինձի դառնալով, — կներես, քիչ մը ծռե նայինք։

Եթե միայն ծռելով լմննա՞ր։ Գետնի վրա կուչ գալու էր, կտավին բացվածքեն ներս սողալու համար։ Գլուխս ներս կխոթեմ այդ բացվածքեն, և երեք-չորս թև կքաշեն զիս։

— Հրամմե, էֆենդի։ Ո՛, առա՛ջ քշե անկողինը, թաց տեղը չնստի էֆենդին։

Ու ինքզինքս տեղավորված կգտնեմ։

Ներսը չպիտի կրնամ նկարագրել։ Ճրագ վառված չէր ու երեք հյուրընկալներուս դիրքն իրենց ձայնեն միայն կգուշակեի։ Ասոր օդ մը կա, ավելի ծանր հոտի մը հետ մեկտեղ։ Անկողնին վրա երկնցած եմ, կիսավին ընկողմանած, մեկ թևովս գետնին կռթնած, ոտքերս քաշած։

Անձրևը մեծաշառաչ կիյնա վրանին կտավին վրա, մանր գընդակներու պես հարվածելով զայն։ Ու հովը վրանին երկու երեսները կվերցնե ու կիջեցնե անընդհատ, բա՛ֆ, բո՛ւֆ, բա՛ֆ, բո՛ւֆ, լայն ու դաշն եզանակով մը, որուն վերելքին ու վայրէջքին միջոցը կկազմե խուլ պարապություն մը։

Ու քիչ մը առաջվան կրած ներգործությունս կաճի կասատկանա հիմա, այս սահմանափակ պատվարին մթությանը մեջ, ուր երեք հոգիներու շունչը կիմանամ առանց զիրենք տեսնելու։

— Է՛, ծո, ի՞նչ եք կեցեր, գինի մը չհրամցնե՞ք մքստրին։ Ա՜ռ նայինք։ Կներես, զավաթ չունինք, սա տամենանան բերանդ դիր ու տանի։

Մերժել կարելի չէ, պիտի վիրավորվին։ Բայց մութ է, հաստափոր սրվակը բերանիս կտանիմ ու քիչ ետքը իրենց կդարձնեմ։

— Անո՜ւշ ըլլա, էֆենդի։

— Անո՜ւշ հրամմեցիր, մըստըր։

— Անո՜ւշ, աղա,— կմրթմրթա խորեն տկար ձայն մը, խեղճ նիհարին հիվանդ ձայնը։

Ու իրենք ալ հաջորդաբար բերանին կառնեն սրվակը, իրենց կոկորդներուն կորթկորթումովը հայտնելով պարպված գինիին ահագին քանակությունը։

— Ջեթին մը տվեք էֆենդիին։

Ու ձիթապտուղի հատ մը կսպրդի ձեռքիս մեջ, յուղոտ, թոմթըրկած։

— Հայդե՛, նայինք, տղաք, բան մը երգեցեք,— կհրամայե հիմա առաջնորդը։

Ու ահա հաստ ու կոկորդային ձայն մը կբարձրանա հեռվեն, խորունկեն եկածի պես, ու Հայաստանի երգ մը կերգե ան, հեծության մը պես տրտում, աղաչանքի մը պես ողոքող։ Գիտեմ ես ալ այդ երգը։ Հաճախակի լսած ըլլալով մեր տունը եկող գավառացի ազգականներե, երգ մը հինավուրց և միշտ նոր, զոր խարբերդի ու Բալուի կիները կերգեն իրենց բացակա սիրելիներուն վրա, ախերով սկսվող ու վայերով վերջացող, ամբողջ ողբ մը, հատնում մը։

Գինիին սրվակը ձեռքե-ձեռք կանցնի նորեն։

— Դու ալ բան մը երգե, մըստըր։

Գիտեմ, ասկից ավելի մեծ զարմանք չէի կրնար պատճառել իրենց։ Ես ալ կսկսիմ նույն երգին մեկ ուրիշ տունը, որ ականջիս մեջ լեցած է մանկության օրերեն, անփորձի ու անվարժի եղանակով մը, որ չի հարմարիր բնավ երգին դողդոջուն խազերուն, հառաչանքի մը պես երկարող։

Հիմակ իրենք երեքը կսկսին, գինով դարձյալ լվալե ետքը իրենց բերանները։ Ու երգը կտարածվի, տառապանքի համանվագ մը, բացված վերքերու, սրտե հոսող արյունի, մաշեցնող կարոտներու, ըղձանքներու, հուսահատությանց կոծ մը։

Դուրսը հովը կատղած է ա՛լ ավելի և ա՛լ կարծես պիտի պատռե հիմակ վրանը, անձրևը կարծես ա՛լ պիտի ծակծկե զայն։ ցուրտը կավելնա։ Բայց ի՞նչ փույթ։ Առջի տպավորությունս անհայտացած է, ու անոր տեղը բռնած սրտի անհուն խանդաղատանք մը։ Հայրենական բաներու այդ վերհուշությունը չեմ գիտեր ի՞նչ ունի իր մեջը գորովական ու մխիթարող, որ կթեթևցնե ճնշված սիրտս։ Ա՛լ ցուրտ չէ այստեղ. զգացումներու ջերմությունը, որ այդ մարդերեն կուգա ինձի ու ինե անոնց կերթա, այդ վրանին ներքնակողմը կտաքցնե։ Միջերկրականի մեկ անծանոթ կետին վրա ըլլալու անբացատրելի երկյուղը չունիմ ալ. բան մը կա իմ ու այդ մարդերուն մեջտեղ, զորոնք չեմ տեսներ սակայն, որ իրարու կմոտեցնե, կմիացնե մեզ։ Ու հիմա ճառագայթում մը կելլե մեր սիրտերեն, որ կլուսավորե այս մութ անկյունը։

Դ.—ՔԱՐԻՍԹՈՅԻ ԾՈՑԻՆ ՄԵՋ

Քարիսթոյի ծո՞ցը։ Աշխարհագրության մեջ, ատենոք, մրցանակ առած եմ կարծեմ. բայց ո՞րչափ կպրպտեմ մտքիս խորը՝ նեղուցներու, ծոցերու, հրվանդաններու շարքին մեջ, զոր թութակորեն խառնիխուռն գոց կրնե աշխարհագրության ամեն խղճամիտ ուսանող՝. այդ անուններուն արտակարգ հնչականության շնորհիվ, չեմ գտներ այդ անունը։

Փոթորիկը չորս օրե ի վեր հալածական կվարեր զմեզ, հետզհետե սաստկանալով. հարատև ոստոստում մը՝ ալիքներու կատարեն ի կատար։ Ոտքերուդ տակ անհաստատ ու երերական հատակին այս անդուլ վերելքն ու վայրէջքը՝ ցերեկին կշլատե զքեզ, խոնջենք մը, որ նյութական հոգնութենե ալ ավելի կթուլցնե, կբրբրե։ Գիշերն է սակայն, որ ստորնահարկի նեղ խցիկներուն մեջ, կալանավորի մը պես բանտարկված, այդ հոգնությունը՝ չարավաստակություն մը կդառնա ու սրտի ճնշումի կփոխվի։ Լուծքին տախտակամածներուն չարաշուք ճարճատյունը, որուն կմիանա ղեկի դարձնող շղթայի կոկոցը, աչքերդ բաց պահել կուտա խավարին մեջ, սպասելով մոտ ու հեռու բանի մը, զոր չպիտի ուզես որոշել երբեք և որ մտքիդ մեջն է հարաժամ։

Չորրորդ գիշերը սակայն այդ անորոշ մտածումներն սկսան կամաց-կամաց կերպարանք առնուլ, հաստատ ու անողոքելի ճշմարտության մը պես, որ կրնա վայրկյանե վայրկյան գալ առջիդ տնկվիլ։ Փոթորիկը՝ կաղինի մը կեղևին պես կխաղցնե մեր շոգենավը։ Անկողնին վրա երկնցած, շոգենավին հետ կբարձրանաս, առանց կարենալու հաշվել, թե մինչև ո՛ւր. այդ բարձրության վրա կեցած պահդ՝ ամբողջ դադար մը կթվի քեզ, որ

ա՛լ վերսկսում մը չպիտի ունենա. ու ահա հանկարծ անկումը կսկսի, գահավեժ, անդնդախոր, թավալական, այն անկումներու պես, զոր երբեմն մարդ կունենա իր երազներուն մեջ, շնչասպառ սրտահատումով մը, անկում մը, որ ա՛լ անկանգնելի կթվի, իր հետ բերելով չես գիտեր ի՛նչ հանգստություն մը, զգայարանքներու ամբողջ անբարոյացում մը, վատություն մը, դասալքություն մը. ա՛լ վերստին կուվի չսկսելու, ա՛լ նորեն պատրանքներու և հուսախաբությանց չենթարկվելու ներքին մեղկ գոհունակություն մը, գոհունակությունը վիրավոր եղնիկին, որ արագ-արագ փախչելե՝ ու որսորդեն ու շուներեն անգամ մը ազատելե հետո՝ գետին կիյնա, գոնե հանգիստ մեռնելու համար։

Մտքին կատարած աշխատությունը՝ սոսկալի է այդ պահուն։ Դատողության ամբողջ տարաբախտություն մը, ու անոր տեղ ցնորական պատկերներ, հեռավոր ու մոռցված տեսիլներու վերակենդանացում մը, աննշան ու չնչին իրականություններ, որոնց վեհությունը՝ ուրիշ ատեն՝ ծիծաղելի պիտի թվեր, ու երկյուղով մը, ցավով մը, տիրապետությունն անուշ ու գողտրիկ կապերու, զոր ընդփույթ կվանես ու նորեն կդառնա կուգա, սիրտդ ուռցնելով խանդաղատանքով մը։ Աչքը, անքթիթ, մութին մեջ սեռած, մագնիսացած, խենթ անուրջներով կլեցնե խավարը, ու այդ սարսափի տպավորության տակ ընկճված՝ քունն իսկ, որ հուսկ ապա կուգա իր իրավունքները ի գործ դնել չարատանջ մտքիդ ու մարմնիդ վրա, արթնություն մըն է նորեն, ուղեղին սպառիչ գործունեությունն, որ անխափան կշարունակվի։

* * *

Առտուն երբ կելլեմ ծանր գլխով, կտեսնեմ, որ շոգենավը կեցած է։ Վեր կվազեմ։ Առաջին բանը, որ աչքիս կհանդիպի, ցամաքն է, մոտ, մեկ քանի քարընկեց հեռու։ Ո՞ւր ենք, ինչո՞ւ կեցեր ենք։ Երրորդ նավապետը կպտտի նավին կամուրջին վրա. անոր կհարցնեմ։

— Քարխաթոյի ծոցն ենք,— կըսե։— Ա՜հ, սոսկալի գիշեր մը անցուցինք։

Ու հայհոյություն մը կարձակե։

Քարխաթոյի ծո՞ցը, չեմ գիտեր։ Կհարցնեմ նավապետին։

— Նեկրոբոնդի կղզիին ծայրն ենք։

Շրջապատները վայրենավեմ բան մը ունի։ Ծովածոցը անթերի բոլորակ մը կձևացնե, կարծես կարկինով գծված խնամատ չափագետի մը ձեռքով։ Լերկ լեռներ են, որ շիպ-շիտակ ծովուն մեջ կիջնեն, մոխրագույն մակերևույթով. քիչ մը անդին տափարակի մը վրա սև կանաչ ծառերու թավուտներ իրենց մեջ կպարփակեն մեկ քանի սպիտակ տնակներ։ Խորը գյուղ մը կտարածվի, քարուկիր մաքուր շենքերով։ Ամբողջության վրա մեռելության քող մը թողված է։ Օ՜հ, չէ, ցրտացնող բան մը ունի բնության այս ամայությունը, այս անկարողությունը։

Փոթորիկն իր կատաղությանը ամբողջ լրության մեջ է։ Այդտեղ իսկ, ուր շոգենավը ապաստանած է, հովը՝ ամեհի ուժգնությամբ կուգա պատռոտել ծովը, ալիքներու երկար ու լայն շերտերով, որք բուրգի մը շեղ մակերևույթին պես կբարձրանան, քիչ մը վերջը ցածնալով ու ավելի հեռուն նորեն բարձրանալով։ Մութ կանաչություն մը տարածված է ջուրին վրա, ուր ճերմակ փրփուրները կգալարին օձակերպիկ։ Շոգենավը, իր երկու խարիսխներուն կապված, գերբնական ուժեր կթափե՝ ալիքներուն մղումին ներքև՝ ազատելու իր կապանքներեն, ու իր անկարող կատաղության մեջ կհեծե, կմռնչե, ինք իր վրա կդառնա, ասդին-անդին, գառագեղի մեջ բանտարկված առյուծի պես։ Ծովեզերքը՝ զարնող ու փշրվող կոհակներուն տակ կճերմկի. հովը կտարուբերե կոհակներեն հառաջ եկող փրփուրը և նմանօրինակ օդերևույթ մը ի հայտ կբերե,— գոլորշիի պես ջուրին վերև թռչկոտող կայլակներու ծածկույթ մը, մառախուղի հանգունատիպ։

Ծովուն բացը, հեռուն բոլորովին ճերմակ է։ Հոն ալ կատարյալ անիշխանություն է, կամ մանավանդ զահանդական իշխանությունն Արհավիրքին, բնության ամենեն խուլ ու ահռելի ուժերին շղթայազերծությունն, երկնքին ու երկրին պակուցիչ զուգավորումը բիրտ ու վեհապանծ։

Սև կետ մը կորոշվի միայն, տարտամ ու անորոշ։ Երրորդ նավապետը միշտ կպտտի այնտեղ. բարձրահասակ աղվոր տղա մը, խարտյաշ, ազնվական կերպարանքով։ Մարսիլիացի մեծահարուստ նավահարդարի մը որդին է, ատենոք Կանպիեռի սրճարաններուն ամենեն փայլուն ու առատաձեռն կենցաղասերներեն մին, զուր կարգի բերելու համար՝ հայրն ուրիշ միջոց գտած չէ, բայց եթե երրորդ նավապետի զգաստացուցիչ պաշտոն մը հանձնել իրեն։ Նավային բարձրագույն վարժարանե մը ելած է, ու առաջին

նավապետին դաս տալու չափ գիտե բոլոր ծովային գիտությունները։

— Ի՞նչ է հորիզոնին վրա սա սև կետը։

— Օ՜հ, խեղճ առագաստանավ մը։ Գիշերվընե ի վեր կմաքառի ալիքներուն դեմ, ծովածոցը մտնելու համար։ Չպիտի հաջողի։

Ու երիտասարդ գիտունի մը պարծենկոտությամբ կբացատրե ինձ հովին ուղղությունը, առագաստներուն վրա հառաջ բերելիք ազդեցությունը, չափագիտական մասնավոր բառերով։ Միտքս ուրիշ տեղ է սակայն, խեղճ առագաստանավին վրա։ Քսանևչորս ժամե ի վե՜ր. ի՜նչ տանջանք, անձրևին տակ, հովին դիմաց, չվաններու պլլված, գերմարդկային ճիգերով աշխատիլ, այնչափ մոտ ըլլալ փրկության նավահանգստին ու չի կարենալ հոն հասնիլ, ու վտանգն իր դեմ ունենալ, վերահաս, անխուսափելի։ Ու, անխորհրդաբար, կհարցնեմ նավապետին.

— Կարելի չէ՞ օգնության հասնիլ իրեն, եթե վտանգի մեջ ըլլա՜...

— Օ՜հ, ասանկ ատեն, ամեն մարդ իր գլխուն ճարը կնայի։

* * *

Նախաճաշին, սեղանին վրա, գիշերվան փոթորիկն է խոսակցության միակ նյութը։ Սեղանակիցներս ամենքն ալ ֆրանսացիներ են։ Էբեռնեն ծերունի էրիկ-կնիկ մը իրենց թոռան հետ։ Իրենց աղջիկն ամուսնացուցած են երիտասարդի մը, որ ի Քութայիս՝ Օլտենբուրգի դքսին կալվածներուն մեջ գինեշինությամբ կպարապի, և անոր մոտ կերթան իրենց վերջին օրերուն հանգիստը վայելելու։ Ծերունին հացագործ եղած է, ու առտու իրիկուն ուրիշ նյութ չունի, բայց եթե շոգենավին հացեն գանգատվիլ. երբ որ ինք էբեռնե էր... կերա՞ծ եք ճերմակ պզտիկ հացերը... Կինը իր շրթանցը վրա ունի միշտ էբեռնեի համբավավոր շամբանխայի գործարանատերին, պ. Մյուռսիեի անունը։ Պ. Մյուռսիեի նկուղներուն մեջ տակառները այսչափ են... շիշերը այսչափ... ու ամեն խոսքին վերջը, հանկերգի մը պես, ah! oui, oh! oui, իր թոմթոկած գեմքին գիծերը ա՛լ ավելի կճմրթկե։

Սեղանին իշխանուհին է փարիզցի կին մը, սևեր հագած, տաբիե մը ի վեր այրի, միջահասակ սիրուն վառվռուն կին մը՝ ածուխի պես փայլուն աչքերով։ Փարիզեն Պոլիս կուգա իր երկու պզտիկ

աղջիկներուն հետ. ամուսինը առած իր հետ տարած է՝ գերեզմանին մեջ՝ իր նյութական բոլոր կարողությունը, և խեղճ այրին կուգա Պոլիս իր մեկ ունևոր ազգականին մոտ։ Իր երկու պզտիկ աղջիկները մեկ-մեկ հրեշտակ պիտի անվանեի, եթե հրեշտակի վրա որոշ գաղափար ունենայի։ Առջի օրերը ծովախտեն հիվանդ, հետզհետե վարժվելով ծովուն տանջանքին, հիմակ բոլորովին իրենք զիրենք գտած են այս հարաբերական հանգստության մեջ, ու թռչուններու պես կճռվողեն, խաղալով, ցատկելով, պռռալով, երգելով Փարիզի երգեր, որք դեռ առջի շաբթուն ականջներս կլեցնեին պուլվարներուն վրա և սրճարաններուն մեջ։ Պզտիկը մանավանդ, սատանիկի մը հրապույրով, դուլ ու դադրում չունի։ Ի Փարիզ նվեր ստացած է գունավոր պատկերներու գիրք մը, ուր Առլկենի, Պոլիշինելի, Պտի Պուսեի, Սանդրիյոնի միամիտ ու այլանդակ պատմություններ կան, անառակ տղաքները գողցող և ուտող Մարդակերներու, չարաճճի աղջիկները փախցնող Չար Ոգիներու հեքիաթներ։ Առավոտեն մինչև իրիկուն երգ մը ունի միշտ բերանը, երգը Սիրուն Թմբկահարին, որ իշխանի մը աղջիկը կուզե կնության ու կմերժվի։ Գիրքը առջևը դրած, հարյուրերորդ անգամ ըլլալով կեղանակե այդ երգը, որ դեռ մինչև այսօր շրթունքներուս տակ կուգա երբեմն։

Ուրիշ շոգենավեր հետզհետե կուգան մեզի պես ապաստանիլ ծովախորշին մեջ։ Ամեն անգամ, որ պզտիկներն իրենց սուր աչքերով հորիզոնին վրա կտեսնեն նավ մը, որ դեպի մեզ կուգա, կվազեն մեզ իմացնել, ուրախության ծափերով։ Մինչև իրիկուն վեց-յոթը շոգենավ կհասնին, անձրևի բռնված մարդերու պես, որոնք պատշգամի մը տակ կապաստանին՝ սպասելով ամպրոպին անցնելուն։ Հեգ առագաստանավը միայն հորիզոնին վրա միշտ միևնույն տեղն է, մահվան ու կյանքին միջև տարուբեր։

* * *

Գիշերը եկած է դուրսի համայնապատկերին տալու իր անհրաժեշտ շրջանակը, խավարը։ Ծոցին խորը պզտիկ լույսեր գյուղին տեղը կորոշեն, մինչև մյուս շոգենավերուն կարմիր ու կանաչ լույսերը երկնքեն կախված լապտերներու ազդեցությունը կթողուն վրաս։ Հովը ու անձրևը իրենց սաստկության գագաթնակետին հասած են ալ դուրսը։ Սեղանատան մեջ փակված ենք ու կխոսակցինք։ Ջեղունեն կախված լամպարը օրորոցի մը պես կտատանի,

դիմացի հայելիներուն մէջ հանհունս կրկնապատկելով իր ցոլքին դողդոջումները։ Այն իրիկունը երկրորդ նավապետը եկած է մեզ հետ ընթրելու։ Նիհար բարեձև երիտասարդ մըն է, անուշ աչքերով, բարձրահասակ։ Սիրահարի մը դեմքն ունի. իրոք նշանված է ի Մարսիլիա։

Սեղանին կնախագահեմ, փարիզուհին աջ կողմը։ Զվարթ ու հաճելի ընթրիք մը, առատ գինիներով, ու սիրուն այրիին այտերը կկարմրցնեն։ «Ֆին շամբանյը» կուգա ավելցնել հեշտ թմրությունը, որով համակված ենք ամենքս, թմրությունը դուրսի փոթորկին, ներսի տաքության և ըմպելիներուն։ Նավապետը մարսիլիացիի մը զվարճաբանություններով ծիծաղը անպակաս կընեմ սեղանին վրայեն։ Ու փոթորկին ունենալիք ահռելի հետևությանցը վրա կխոսի. ո՞վ գիտե, թերևս ստիպված պիտի ըլլանք օրերով ու շաբաթներով այնտեղ մնալու. ծովեզերքի բնակիչներեն ալ վախնալու է, ամբողջ ծովահեններ են այդ կողմի մարդիկ, որք հարմար առիթի մը կսպասեն միշտ իրենց հին արհեստը ի գործ դնելու։ Ու ամեն անգամուն, փարիզուհին երկյուղի ու սարսափի ճիչեր կարձակեմ, ընդոստ շարժումներով։ Օ՜հ, շատ լավ գիտեմ, իր աչքերուն մեջ երկյուղի հետքն անգամ չիկա. բայց ի՜նչ սիրուն, ի՜նչ կանացի է վախկոտ երևնալ, զորավոր թևի մը, ուժեղ պաշտպանության մը ներքև մտնելու բնազդական դրդումով։

Նավապետն հիմա կպատմե մեզ իր հիշատակներեն հատվածներ, իր Ափրիկեի ուղևորությանց նկարագրությունը, հրատապ երկիրներու մեջ, ավազուտ դաշտերու մեջեն։ Սենեգալի վատառողջ գետաբերանները, Կամպոնի տոչորող երկինքը, Մարոկի սպիտակահանդերձ արաբները, անկոխ ու անլույս անտառները, ափրիկյան խորհրդավոր երկրին բոլոր հետաքրքրական կողմերը՝ մեր աչքերուն առջևեն կանցնին որպես մոգական լապտերի մը մեջեն։

Փարիզուհին կդիտեմ, կարմրած, ոգևորված։ Ըմպելիները գըրգռած են իր ջիղերը, չորս օրվան անդուլ փոթորիկեն արդեն իսկ անհանդարտ։ Նավապետի շրթունքեն կախված մտիկ կընեմ անոր խոսքերուն։ Երիտասարդն անցած է հիմա սևամորթներուն բարքերուն նկարագրությանը. խեղճ ու կրակ կյանք մը, ոչինչով սնանելով, բոլորովին մերկ, այրերն ու կիները։

— Ա՜հ,— կհառաչե այդ պահուն այրին,— նորեն, նորեն եր-ջանիկ են։

ՇԵՐԱՄԻ ՈՐԴԵՐԸ

Անցյալ տարվընե եկեր էր իրեն այս փափագը, որ ամբողջ աշնան ու ձմռան հետզհետե սաստկացեր, ծավալեր, անդիմադրելի ըղձանք մը դարձեր էր իր մատղաշ երևակայության մեջ, ու այս գարնան շերամի որդ պիտի պահե՞ր։ Վարպետ շերամաբույծի մը պես գիտեր արդեն ճերմակ պզտիկ հունդերուն հետզհետե կրելիք կերպարանափոխությունները, որոնց առջև ափիբերան մնացած էր, իր մանկական պարզ միտքը հմայված, ընկճած, ինչպես հրաշալի դյութավեպի մը իր վրա թողած տպավորության տակ։ Իրեն հասակակից պզտիկ դրացուհիի մը տունը, անցյալ տարի, ամեն օր ներկա գտնվեր էր այս համբրնթաց ու սքանչելի աճման, ու այն ատեն առաջադրեր էր ինքն ալ նույն արարչագործությունն ի կատար հանել. ու այս մտածումը իր տասնամյա պզտիկ աղջկա սրտին խորը արթնցուցած էր ընդհանուր, անծանոթ խանդաղատանք մը, որուն գիտակցությունը չուներ ինք, իր ճակատագրական ստեղծիչ գերին խուլ ու նորածիլ փթթումը, իր բնազդական ներքին ձայնին այս խորունկ դրդումին առջև՝ ուրախութենե արբշիռ։

972

Անցյալ տարվընե պահեր էր ուրեմն ափ մը հունդ, սիրուն, աղվոր վարդագույն տուփի մը մեջ, երկար ամիսներ պատելով զայն գուրգուրանքի ու խանդաղատանքի տաք մթնոլորտի մը մեջ, իր ամեն օրվան, ամեն ժամվան ուշադրությանն առարկա ընելով զայն։ Իր անզգաստության ամենեն խեռ ժամերուն կարելի էր ուղղության բերել զինքն, սպառնալով վարդագույն տուփին. այն ատեն անմիջապես տեղի կուտար, լուրջ կերպարանք մը առնելով։

* * *

Գարնան տերևներուն առաջին ընձյուղներուն, տենդոտ անհամբերությամբ սկսած էր հետևիլ բնության աստիճանական զարթնումին, օդին մեղմացումներուն, վախնալով սակայն լույսին հանելե իր կաթնագույն պզտիկ հունդերը, դողալով, որ որդերը չելլեն՝ դեռ թթենիի տերևները չի հասած։

Թթենիներուն ծլելուն հետ մեջտեղ հանած էր իր հունդերը։ Այն ի՜նչ ուրախություն էր, երբ իրիկուն մը իմացուց մեզ, թե որդերը սկսեր էին ելլել հունդերեն. սև պզտիկ կետ մը, որ նախ

կպիսակեր ճերմակ պղտիկ գնդիկը, հետո քիչ-քիչ կմեծնար, դուրս կսողար իր պատյանեն՝ իր ետևեն քաշքշելով զայն ընդ երկար, վերջապես գտնելով իր ազատությունը և, արձակ շարժումի հրճվանքին մեջ, խոլական հոսումներով պտտցնելով իր կակուղ լպրծուն մարմնիկը, անխոտոր դիմելով քաշվելով դեպի կանաչ տերևը, ինչպես երկաթի կտորը դեպի մագնիսը։

Ալ այնուհետև Տյուրյուկին կյանքը կեդրոնացավ այն սեղանին առջև, ուր շերամի որդերը, հարյուրի չափ, օրեօր կաճեին կուռ-ճանային, հետզհետե ավելի որոշելով իրենց մարմնին ձևը, իրենց զորշ պատյանը փոխելով մոխրագույն գեղեցիկ մորթի մը,— կենդանի խայտուցի երիզ մը փոզփոզ վետվետումներով։ Տյուրյուկին համար ամենամեծ հոգնությունն էր ա՛լ տերև ճարել իր որդերուն հարաճուն որկրամոլության։ Մեր պարտեզը թթենի չիկար. ուստի կստիպվեր իր բարեկամուհիներեն, փաղաքշական խոսքերով, աղաչանքով, պղտիկ նվերներով, թթենիի տերև գտնել առատ իրիկուն։ Երբոր որդերը, առջի օրվան տերևները կերած հատցուցած, անոնց խորշոմած ու ճմրթված երեսներուն վրայեն կպտուտքեին, ինք կհասներ հանկարծ կարմրած, քրտնած, հևիհև, լիաբուռն բերելով թթենիի տերևները՝ կանաչ մետաղական փայլփայլումներով, և իրեն համար անճառ երանության պահն էր երբոր զմեզ ամենքս գրեթե բոնի կտաներ սեղանին շուրջը, մտիկ ընելու որդին բբուկներուն միօրինակ ու հարատև խշրտուքը թարմ տերևին վրա, դիտելու անոնց երանավետ հեշտաթավալ հոսումը կենսապարգև դալարին վրա, իրենց լպրծուն մարմինն արբշռուքենե դողդողուն։

***

Որդերն ա՛լ մեծցեր էին տակավ, Տյուրյուկին մատներուն չափ երկար ու հաստ։ Կաթնորակ պատյան մը ունեին հիմա, իրարու մեջ ընդելուզյալ օղակներե կազմված։ Իրենց մարմնին հետ, իրենց ախորժակն ալ մեծցեր աճեր էր, ու հիմա որկորաժետ լափող անհագություն մըն էր եղեր, որուն առջև մեր խեղճ Տյուրյուկը ի՛նչ ընելիքը չէր գիտեր ա՛լ։ Օրը երկու-երեք անգամ սնունդ պետք էր անասնիկներուն։ Թարմ տերևները սեղանին վրա դրվելուն պես, տեսնելու էր որդերուն հրճվանքը, իրենց մարմնին քսկռտումները և տատանումները դալարին ողորկ երեսին վրա, ամբողջ գգվանք մը, փայփայանք մը, գլխու համաչափ օրորումներով, ճիշտ ինչ-

պես մարդ գլուխը վարեն վեր խուսափումներով կշարժե՝ սիրած կնոջը ձեռքին շոյանքին տակ։ Որդերուն բերանը կպտտեր նախ տերևին շուրջը, քիչ ատենեն գեղեցկահյուս ժանյակի մը փոխելով զայն։ Եվ ահա ուրիշ որդ մը, որ գլուխը կբարձրացներ տերևին մեջտեղեն, բոլորակի ծակելով զայն և հետզհետե վեր սողալով, մինչ ուրիշ գլուխներ իրենց համար տեղ կփնտրեին, հետզհետե ծածկելով կանաչը։

Տյուրյուկ ա՛յդ միջոցին կգտներ իր հանգիստը։ Դեմքին վրա անօրինակ լրջություն մը կար, իր դերին ամբողջ կարևորությունն ըմբռնած, իր աշխատության այդ կենդանի արդյունքին առջև հիացած, շլացած։ Կերպով մը նախաճաշակն էր այս այն անհուն գոհունակության, զոր ապագային պիտի զգար, երբ իր կաթովը, իր էության խորունկեն մղված կենսական հյութով պիտի սնուցաներ իր զավակները։

Այս գոհունակությունն էր, որ մոռցնել կուտար իր ամեն օրվան չարչարանքները՝ սնունդ հասցնելու համար իր անասուններուն։ Որդերուն՝ ուտելե դադրելու և խղակ կապելու օրերը կմոտենային և պետք չէր մեկ օրվան մեջ փչացնել այնչափ երկար ատենվան արդյունքը։ Ուստի անդին կվազեր կերթար, հապճեպ, փութկոտ, ու իր պղտիկ գոգնոցը տերևով լեցուն՝ հաղթական տունեն ներս կմտներ, մեծ բեռ մը ազատած ըլլալու խնդությամբ։

***

Իրիկուն մը, սովորականին պես, Տյուրյուկին սենյակը ելա՝ որդերուն վիճակը հասկնալու։ Դռան մոտ, հեծկլտուքի ձայն մը լսեցի ու ներս վազեցի։ Լայն սեղանին առջև, Տյուրյուկ ոտքի վրա, թաշկինակ մը խածատելով, կուլար ու կհեծկլտար։ Արցունքները կգլորեին իր սիրուն այտերեն վար, առատ հորդ ու հեծկլտուք մը կուգար մերթ իր կոկորդը սեղմելու։ Աչքերը, արցունքի քողով մը ստվերոտ, հառած էին որդերուն սեղանին վրա։ Վիշտը չէր այս պղտիկ աղջկան մը, որուն պեպեքը կոտրած է կամ աղվոր գրքին վրա մելան թափած, հապա ընդհանուր թախծություն մը, բուն ցավը, որ հոգվույն ալքերեն կբխի, չափահասի գիտակցական կրսկիծ մը, որ գիտե, թե անդարմանելի բաներ կան, որոնց առջև ալ մաքառիլ կարելի չէ ու անձնատուր ըլլալեն ուրիշ միջոց չիկա։

Չիս տեսածին պես, երկու թևերը բաց վրա՝ վազեց և գիրկս նետվելով ու գլուխը կուրծքիս մեջ թաղելով։

— Ա՜խ, ախպարի՛կ, կմեռնի՞ն կոր։

— Ի՞նչ, ազջիկս։

Բերանը վրա չի դնաց «որդերը» ըսելու և ձեռքս բռնելով ու առջև քաշելով.

— Նայե՛,— ըսավ։

Չորցած կոնծած տերևներու կույտի մը վրա, ուր մերկ շյուղեր փռված կկենային, որդերը իրարու փաթթված՝ սրտաճմլիկ տեսարան մը կներկայացնեին։ Լուվրի Թանգարանին մեջ հոյակապ պատկեր մը կա, Ժեռիկոյի Լը ռադո դը Մեդյուզը, հորում տասնի չափ նավաբեկյալներ, լաստի մը վրա ապաստանած, անոթության գալարումներով կտանջվին, երեսի վրա պառկած, գլուխնին դեպի վեր երերցնելով ողորմագին։ Ժեռիկոյի պատկերը միտքս չելլեր հիմա։ Որդերը նույն գալարումներն ունին, գլխու նույն ողորմագին տատանումները դեպի վեր համբարձիկ, բան մը սպասելով կարծես վերեն, երկինքեն, որ կուշանա, չի գար։ Հետո, հուսահատությամբ, վար կառնեն իրենց գլուխը, իրարու վրա կսողսկին, իրարու կփաթթվին, իրարու մարմինը կլզեն, ամենքը միասին խառնամառն անհեթեթ կույտ մը ձևացնելով, դարձդարձիկ շարժումներով չորցած տերևներուն շուրջն, որոնցմե պակսած է կենսական հյութը։ Օրհասականներու ճգնաժամ մըն է, որ աչքիս առջև տեղի կունենա։ Տյուրյուկը և իր ցավը մոռացած եմ։ Սեղմում մը սիրտս կճնշե, կոկորդս կուռցնե։ Կհիշեմ այս ցավը զգացած ըլլալ կյանքի ուրիշ դառն վայրկյաններու մեջ, ամեն անգամ, որ հանդիսատես գտնված եմ կյանքե ի մահ տանող, էութենե դեպի ոչնչությունը մոտեցնող գերագույն ժամերու ոգորումներուն։

Կզգամ, որ մեկը թևս կքաշե։ Տյուրյուկն է, որ արցունքոտ ձայնով մը կճվա.

— Բան մը չպիտի՞ ընես։

— Դուն ինչպե՞ս չկրցար գտնել։

— Ա՜խ, ամենուն ալ գացի, տալ չեն ուզեր կոր. մայրիկնին քսեր է, որ թութերը կավրվին կոր եղեր, ծառերը կտոր-կտոր եղեր են։ Ա՜խ, դուն բան մը ըրե։

— Կընե՛մ, կընե՛մ։

Ըսելս ու գուրս նետվիլս մեկ կըլլա։

Ի՞նչ պիտի ընեմ։ Չեմ գիտեր։ Մութը կոխելու վրա է։ Փոզոցներեն կերթամ մոլոր քայլերով, աչքս չորս դին դարձուցած։ Պարտեզներու քովեն կանցնիմ. ամեն ծառերը կան, տանձենիներ, սալորենիներ, ծիրանիներ, տունկեր, ծաղիկներ. թթենի միայն չիկա։

Հանկարծ, պատի մը տակ կկենամ։ Թութի ծառ մը, թութի ծառ մը հսկա, խրոխտ, որ իր տերևներն ամեն կողմ կղրկե, պատեն դուրս երկնցած։ Ճյուղերը բարձր են սակայն. պետք է պատին վրա մագլցիլ։ Չորս դիս կնայիմ, մարդ չի կա։ Մանկական հին ճարպկությունս կգտնեմ մեկ վայրկենի մեջ և պատեն վեր կշուլլվիմ։ Պատին վրա եմ, ձեռքս ինկած մեծ ճյուղ մը կկոտրեմ, վար կցատկեմ և տուն կվազեմ։

Երբոր Տյուրյուկ խենթի պես տերևները ձեռքս առնելով որդերուն վրա նետեց, ցատկեց վզիս փաթթվեցավ։ Հիմա նորեն կուլար, ու չեմ գիտեր ի՞նչ խանդաղատանք մըն էր, որ իրմե ինձի կանցներ՝ իր սրտին վրա իմ սիրտս ուռցնելով և իմ արցունքներս խառնելով իր արցունքներուն։

1892

ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ

(Ղալաթիո սալահատակեն)

Մայրն ու երկու աղջիկներն էին. մայրը պարերգ մը կնվագեր մաշած ու ծակծկված ակորդեոնի մը վրա, ու երկու աղջիկները կկաքավեին դեմառդեմ։ Ուսկի՞ց եկած էին, Բոլոնիայի կամ Հունգարիայի ո՞ր անկյունեն, չեմ գիտեր։ Երեսունը անցած ըլլալու էր կինը. ո՛չ գեղեցիկ, ո՛չ տգեղ, աննշան դեմք մը։ Դեղձան մազերը երկու լայն հյուսկեններով ծածկած էին քներքը, ու դեմքին ճերմակության վրա, զոր արևն ու հովը դեռ չէին կրցած այրել բոլորովին, երկու կապույտ աչքներ կպարզեին հոգնած անտարբերություն մը։ Ձեռքները մեքենայաբար կշարժեին նվագարանը, ինչպես կին մը, որ մրափին մեջ իսկ կշարունակե գուլպան հյուսել, և այդ ջախջախ լեզվակներեն խուլ և սուր խաղերու անքնդհատ հաջորդություն մը ականջները կվիրավորեր. մերթ ընդ մերթ օդը փքոցին պատռվածքեն ներս խուժելով, օրհասականի հոնգյունի մը պես կխորդար։ Պարերգը կշարունակվեր, հունգարական

աշխույժ ու զվարթ չարդաշ մը, որ գոգցես ամոթահար կխուսափեր այդ անտարբեր ու անողոք մատվիներուն ներքևեն, ու աղջիկները կկաքավեին։

Յոթը-ութը տարեկան երկու մանկուհիներ էին ասոնք, իրենց մոր պես դեղձան մազերով ու կապուտակ աչվիներով. մազերնին խոլ խոպոպիկներով ցանցնված էին միայն իրենց պզտիկ գլուխներուն չորս բոլորքը ու կապուտակ աչվիներուն մեջ իրենց տարիքեն շատ ավելի վեր հասկացողություն ու կրակոտ հետաքրքրություն կար։ Քանի մը անցորդներ ու դատարկապորտներ կես բոլորակ մը կազմած էին անոնց շուրջը, ու աղջիկները կկաքավեին դեմառդեմ, ոտքերնին այս ու այն կողմ նետելով, տեղերնին փոխանակելով, իրարու ձեռքի մեջ զարնելով։ Ու հետո, երկու երեք վայրկյանը անգամ մը, իրենց ճերմակ ու կակուղ ափը կերկնցնեին հանդիսատեսներուն։ Անցորդները կհեռանային նույնհետյան, դատարկապորտները կմնային անզգած։ Ու երբ տասնոց մը չէր գար արատ մը հորինել այդ մանրիկ ափերուն ճերմակությանը վրա, աղջիկները իրենց մորը կնայեին հուսահատությամբ։ Կերևա, թե նոր խրախույս մը կկարդային անոր աչվիներուն մեջ, զի կավելցընեին իրենց թախանձանքներն ու պաղատանքները, հանդիսատեսին ծունկերուն կփաթթվեին, շոյելով ու փայփայելով անոր ամեն կողմը, անոր երեսին ժպտելով՝ բանիմաց աչքերով, շնիկի մը պես քծնելով։ Օ՜, լավ սորվեր էին իրենց արհեստը. կատարելագործությունը տարիքին հետ պիտի գար անակնկալ։ Ու մայրը կշարունակեր պարերգը մաշած ու ծակծկած ակորդեոնին վրա, ու երկու աղջիկները կկաքավեին դեմառդեմ։

Հիսուն քայլ անդին կին մը կերթար պզտիկ աղջկան մը ձեռքեն բռնած սերտիվ։ Օ՜հ, անմիջապես ճանչցա զինքը. մենե էր, իր արյունեն կար մեր երակներուն մեջ։ Գավառացի պանդուխտ կին մըն էր, Մշո դաշտեն, եթե չեմ սխալիր։ Կարմիր կտավ մը ծածկած էր ամբողջ դեմքը մինչև բերանը. արևակեզ այտերը միայն կերևային ու մանրիկ սևուկ աչքերը, որոնց մեջ ցուրտ կորով մը կտեսնեի ես։ Իր հայրենիքին նախշուն հագուստը կկրեր, ասեղնագործ կապույտ մեզար ու կարմիր գոգնոց։ Մատաղատի աղջիկը մութ գույնով վերարկու մը ուներ մինչև ծունկերը, և իր մերկ պզտիկ ոտները իրենց ետևեն կը քաշքշեին առնական հաստ կոշիկները, որոնց մեկուն մեջ հանգիստ կրնային սեղմիլ իր երկու ոտքերն ալ։ Իր հասակը հազիվ կհասներ մորը մեջքը, ու գգվական

խանդաղատանքով՝ գլուխը կխորասուզեր անոր մեզարին խորերը։ Հաստատ քայլերով կընթանային երկուքն ալ, կամաց-կամաց, անուշադիր իրենց շուրջը տիրող ընդհանուր ոգևորության, այդ խաժամուժին մեջ տարօրինապես միայնակ։ Մայրը սակայն խուզարկու նայվածքներ կպտտցներ սալահատակին վրա, համառ ուշադրությամբ, և ահա հանկարծ ծռեցավ, փայտի կտոր մը առավ գետնեն և գոգնոցին ծայրը վերցնելով՝ մեջը դրավ։ Քսան քայլ անդին նորեն ծռեցավ, չորցած ճյուղ մը առավ, երկու-երեք կտոր ըրավ և գոգնոցին մեջ սահեցուց։ Այսպես շարունակեց հինգ-վեց անգամ։ Երբեմն, ծռած ատենը, փայտին կտորներեն մին գետին կիյնար գոգնոցեն, ու այն ատեն պզտիկը, աշխուժիվ թողլով մորկանը ձեռքը, կվերցներ և գոգնոցին մեջ կնետեր հաղթական կերպով, մորը աշխատությանը օգնելու բնազդական եռանդով։ Գոգնոցը սակայն չէր լենար. Ղալաթիո սալահատակին վրա՝ քաղաքակրթությունը ամլության դատապարտած է բնությունը։ Խեղճ կինն անշուշտ հասկցած էր ասիկա, որովհետև հիմա չորցած քակորի կտորներ ալ կնետեր գոգնոցին մեջ։ Եվ անշուշտ եկավ վայրկյան մը, ուր իր տխուր պարենը ամբողջացած նկատեց, որովհետև փութկոտ քայլերով սպրդեցավ կողմնակի փողոցի մը մեջ, սերտիվ բռնած միշտ աղջկանը ձեռքեն։

Ո՞ւր կերթար, Ղալաթիո ո՞ր զազրելի գոհիին խորը, ո՞ր մութ ու ժահահոտ խանին անկյունը։ Չտեսա։ Միայն թե կաճապարեր, որպեսզի գիշերը, երբ իր ամուսինը խան դառնա ցերեկվան տաժանելի հոգնածությանը տակ ընկճված ու ոսկորները կոտրտած, կինը կարենար տաք կերակուր մը տալ անոր, Ղալաթիո սալահատակին վրայեն ժողված փայտի կտորներովը։

1892

ԱՐՄԱՇԻ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ա.—ՆԻԿՈՄԻԴԻՈ ՄԵՋ

Զորեֆշաբթի, կեսօր.

Իզնիմի՜տ...

Վայրկյանի մը մեջ կայարանին հրապարակը կլեցվի կառախումբեն իջնող խայտաբղետ ու խառնափնթոր բազմությամբ։ Ի՜նչ

վլվլուկ, ի՞նչ իրարանցում։ Էրիկ մարդիկ, կիներ, տղաքներ, պառավներ, ծերունիներ, ամենքն ալ մեկ-մեկ բան շալկած կամ մեկ-մեկ ծրար առած ձեռվընին, իրար կանչելով, խնդալով, պոռալով, կանչվրտելով, կվազեն դեպի կայարանին գուռը, փոշիի ամպի մը մեջ կորսված։

Ի՞նչ կիներ են, որ կանցնին առջևես, տե՞ր աստված։ Թուլիկ ու ծփին մսի ահագին շեղջակույտեր, մեն մի քայլին օրորվելով, տատանելով. չեմ զարմանար հիմա, թե հեգ լոֆոմոթիֆը, իր 21 վագոններուն բեռը ինչո՞ւ այնչափ տաժանագին հևքով մը կքաշեր։ Հոսնական ու լրբենի բան մը կա այդ կիներուն վրա, իրենց գեշ ներկված մազերուն, գեշ գծված աչքերուն, գեշ շպարված այտերուն, ծայրահեղորեն կարմիր շրթունքներուն ու յուզոտ փոշեանգույր վզին թողած տպավորությունը, իրենցմե բուրող շղագրգիռ հոտին ներգործությունը, որ անհանգիստ կընե։

Իրենց տեսքը՝ կարգարացնե այն տարօրինակ խոսակցությունները, որք ճամփան ուշադրությունս գրաված էին արդեն, վագոնի մը պատուհանեն մյուս պատուհանը եզած խոսակցություններ, խոպոտ ճաթած ձայնով մը, այն ահռելի կերպով գռեհիկ բացատրություններով, որք տարակույս չունիմ, թե ամենեն չերմեռանդ ռամկասերներուն համակրանքն անգամ կխրտչեցնեն։

Կեյպզեի ծովեզերյա բլուրները կդիտեմ սքանչացումով, պուրակներով անշրպետված անընդհատ բերրի կանաչություն մը, որ Նորմանդիո դաշտերը կհիշեցնե ինձի, և որ Հայդար-Փաշա-Իզնիմիտի գծին ամենեն գեղեցիկ տեսարանն է, երբ հանկարծ վագոնի մը պատուհանեն դեպի մյուսը սա հատկանշական խոսակցությունը ականջիս կզարնե.

— Քա՛, տասը սահաթ է չի կրցա՞ր մեկ բանը ընել։

— Քա՛, ո՞ւր ընեմ։

— Քա՛, ատ ալ մտմտալիք բա՞ն է։ Մոռշուխա չունի՞ք։ Էս անանկ ըրի։

— Քա՛, հիչ կըլլա՞։

— Քա՛, հոգտ է հատեր, ետքեն կլվաս։

Ու կես մեջքեն վար պատուհանեն կախված, մազերը թափած, կուրծքը բաց, օդիի մը շիշը բերանը տնկելով, այդ հնարամիտ խորհրդատուն կսկսի երգել լորուստ մը, որ ապահովապես պիտի կարմրցներ մեր ջրհանկիրները։

Ծովուն շառաչյունն՝ իր ձայնը կխեղդե բարեբախտաբար։ Ծովուն այդ անբաժան ընկերակցությունը երկաթուղիին՝ հիանալի կերպով նկարագրեր է։ Ջենովայի ծովեզերքին վրա ալ վայելած եմ այդ տեսարանը, բայց հոն ծովը դարձյալ բավական հեռու է երկաթյա գիծեն ու շատ տեղ ժայռերու հատորներով պատնեշված։ Այստեղ բոլորովին մոտդ է, գրեթե ձեռքիդ տակ, մինչև գալով երկաթյա գիծերը լիզելով, անարգել, իր եռացող կաթնափրփուր ալիքներուն ցայտքերովը։

Իզնիմիտի կայարանին մեջ, այդ կիներեն մին ստ կերպով կամփոփե՝ շոգեկառքին իր վրա բրած տպավորությունը.

— Քա՛, ա՞ս է շըմենդըֆեռ, շըմենդըֆեռ ըսածնին։ Էրկու թարաֆեն կղպանքը տեղ մը, խառախոլ առասի կլմանի։

Վոյվոտայի՞ պահականոցը։

Զարեֆշաբի, Իրիկվան դեմ.

Առաջին անգամ ըլլալով, ճշմարիտ դուար մը տեսա։ Քաղաքաբնակ մարդու տգիտությամբ, այդօրինակ շատ մը բառեր կան, զորս հաճախ կգործածենք՝ առանց անոնց ճշգրիտ նշանակությունը գիտնալու։ Որչա՞փ անգամներ մեր գրչին տակեն անցեր են աս տեսակ բառեր, շահպրակ, շահոքրամ, թմբի, թեղոշ, կաղամախի և այլն, և որչա՞փ պիտի շվարեինք, եթե մեկը երկու տարբեր ծառեր ցուցնելով մեզի՝ հարցներ, թե անոնցմե ո՞րն է թեղոշը և ո՞րը թմբին։

Հունաց Պանթալեոնի վանքը տանող ճամփուն վրա։ Մեր ձիերուն ոտքերը փոշիին մեջ կկորսվին։ Հեռվեն, հանկարծ, փոշեղեն խիտ ու թանձր ամպ մը կբարձրանա ու կտարածվի, հետզհետե մոտենալով։ Մեկ կողմ կքաշվինք։ Ու ամպը կմոտենա, կհասնի մեզ, կենդանի էակի մը նման, որ զմեզ կշրջապատե չորս կողմեն,— տարօրինապես խոսուն ամպ մը, զանգակներու հնչյուններով, որոց կխառնվին հարյուրավոր ոտքերու դփոտոցներ և երկար ողբագին պոռոչյուններ։— Երկու հարյուրի չափ եզներ են ասոնք, որ վաղը Արմաշ երթալիք սայլերուն պիտի լծվին։ Ու պահ մը կկենամ, կդիտեմ այս պատկերը, այս խոսուն ամպը, Հայաստանյան գրքեն ահեղորեն կենդանի դրվագ մը, որ իրագործված է այս ճամփուն վրա։

Պանթալեոնի վանքը հունաց Արմաշն է։ Ամեն տարի հուլիս 27-ին հույն ուխտավորներու ահագին բազմություն մը դհավաքվի

այնտեղ, մինչև Փոքր-Ասիո հեռավոր քաղաքներեն։ Միայն թե, մինչդեռ Արմաշի ուխտագնացությունը տասը օր կտևե, հույները գիշեր մը կհասնին, իրենց ուխտը կկատարեն ու պատարագին կունկնդրեն, և հետևյալ առավոտ կմեկնին։

Ծերունի հույն քահանա մը, որ շատ մաքուր հայերեն կխոսի,— Օրթագեղեն հայ-հոռոմ մըն է,— կառաջնորդե ինձի եկեղեցին։ Ուշագրավ բան մը չիկա։ Իզուր կփնտրեմ վաղնջուց պատկեր մը, հնության հիշատակ մը։ Ամեն կողմ ոսկեզօծված, սրբված, ճերմկցված։ Նոր նոր փայլուն սուրբեր են, որ պատերուն վրայեն ինձի կնային իրենց արտահայտութենե զուրկ նշաձև սևեռուն աչքերովը։

— Հոս գանգեր կան եղեր, անոնք նայինք,— կըսեմ հուսախաբ, ճշմարիտ հուզում մը գտնելու փափագով։

Ինձի ընկերացող անձն ու քահանան ետ կքաշվին, քառակուսի պզտիկ շենք մը ցույց կուտան պարտեզին մեկ կողմը ու կըսեն.

— Դուն գնա նայե, մենք չենք գար։ Դուռը քաշածիդ պես կբացվի։

Իրա՞վ, այդքան սոսկալի՞ է տեսարանը։

Մինակ կերթամ ուրեմն։ Դռանը չվանը քաշած ատենս պզտիկ ընկրկում մը կունենամ։

Ներսը, պատերուն երեք երեսները հաստատված տախտակներու վրա իրարու քով շարված են հարյուրի չափ գանգեր. կողմնակի պատերուն վրա ու գետինն ալ, սնդուկներուն մեջ լցված են գանգեր, աղտոտած, սևցած, պահելով միայն իրենց աչքի խոռոչներուն արձանային պաղ նայվածքը։ Գետինը, տախտակամածին մեկ բացվածքեն, ոսկորներու պզտիկ կույտ մը կերևի։ Ասդին-անդին ալ գանգեր սփռված են։

Այս ամենը, այո՛, որևէ տպավորություն չըներ վրաս։ Բոլոր այս գանգերը, արվեստական կանոնավորությամբ մը շտկված, հարդարված, տեղավորված, հայտնապես տպավորություն գործելու համար շարված են այդտեղ, և ճիշտ ատոր համար է, որ անտարբեր կթողուն զիս։ Գանգի սնդուկի մը վրա կկարդամ, Extrait d'Absinthe, D. մարկայով. ուրիշի մը վրա Cognac 552, ուրիշ սընդուկի մը վրա Oil, և այս վաճառքի սնդուկները ա՛լ բոլորովին ցուրտ կթողուն զիս, և անոնց մեջ գտնվող առարկաները՝ տեսակ մը ապրանքներ կթվին ինձի, հավատացյալներու քսակներուն կապերը ավելի դյուրությամբ քակել տալու հնարք մը։

Զորեֆշաբթի, գիշեր.

Դեպի հայոց եկեղեցին տանող զառիվերը՝ աներևակայելի ոգևորությամբ կենդանացած է։ Այդ զառիվերին վրա և անկից վար, ընդարձակ հրապարակի մը մեջ, եկած հավաքված են շրջակա գյուղերեն, երկու հարյուրի չափ սայլ, ամենքն ալ ուխտավորները փոխադրելու համար։

Եկեղեցիին դուրսը, կատարյալ բանայիրի կերպարանք մը առած է։ Անդուլ խժլտուք մը կբարձրանա անկից, ամեն տեսակ ձայներու խառնված, բացօթյա խոհարարներ, պտղավաճառներ, հաց ու պանիր ծախողներ, լաքեռնա մը, որ լռել չգիտեր, անցնող դարձող բազմություն մը, ամեն տարազներով, ամեն ձևերով ու լապտերներու լույսեր, որք երևան կբերեն այդ ցնորական տեսարանը։

Եկեղեցիին բակին մեջ, խումբ-խումբ նստած են ուխտավորներ—ըխտավորները, կըսե տեղացին։ Գետինը գորգ մը փռած, բարձերու, վերմակներու մեջ կորսված, այդ խումբերը՝ բոլորակի շարված կճաշեն մոմի մը լուսով։ Եկեղեցիին սենյակներուն մեջ հինգ-վեց հոգինոց տեղ մը քսան հոգի խռնված, նույն տեսարանը։ Ու կերթան կուգան, կիները իրենց ճերմակեղենները ու ամանները կլվան եկեղեցիին աղբյուրեն, տղաքները կվազվռտեն, ավելի պզտիկները կճչեն, կուլան, պառավները վերմակներուն տակ կծկտած կդողդղան, ու այս ամենուն վրա թշվառության այնպիսի հով մը կա, որ սիրտդ կսեղմե։ Ու այս այսպես պիտի շարունակվի մինչև առտու, ամենքն ալ բաց օդին պառկած, խառն մերձավորության մը մեջ,— կիները, այրերը, տղաքները քով-քովի։

Բ.—ԴԵՊԻ ԱՐՄԱՇ

Հինգշաբթի, առավոտ.

Առտուն կանուխ ճամփա ելլելու է Իզմիտեն Արմաշ հասնելու համար։

Գիշերվան կառախմբով և շոգենավով եկող ուխտավորները ավելցուցած են Իզմիտի տակնուվրայությունը։ Ամբողջ քաղաքը պատրաստված է ընդունելու այս անսովոր հոգնախուռն բազմությունը, որ իր ամենօրվան խաղաղիկ ու հանդարտ կյանքը վերի-

վայր շրջած ու խառնակած է։ Պանդոկները լեփ-լեցուն են և եկողները կճամփեն։ Ամեն տուն՝ հյուրանոց մըն է արդեն։ Մեծագույն ապաստարանն է եկեղեցին, իր բակով ու սենյակներով, որք ուխտագնացության առաջին հանգրվանը կկազմեն։

Քուն չիկա։ Ամեն տեղ հապճեպ մը, արտորանք մը, անդուլ երթևեկ մը։ Ընտանիքներ, որոնք իրենց էրիկ մարդը կորսնցուցած են, մայրեր, որոնք իրենց զավակը կորոնեն, խումբեր, որոնք իրենց մեկ ընկերը կփնտրեն, պանդոկե պանդոկ, տունե-տուն հարցնելով. «Իրիկվան Թրենովը սանկ մարդ մը էկա՞վ»։

Քարավանը կկազմվի առտուն կանուխ ժամը իններին։ Հաղթ ու դանդաղ գոմեշները, գիշերն ի բուն պառկած եկեղեցիին զառիվերին երկայնքը, հոսուն տղմին մեջ, որ իրենց կաշիին վրա փայլուն ու յուղոտ խավ մը կապած է, կլծվին սայլերուն և իրարու ետեէ ճամփա կելլեն։ Յուրաքանչյուր խումբ առաջվընե բռնած է իր սայլը. կասկածոտները, ապահովության համար, իրենց հետ տարած են, առջի իրիկվնե, սայլապանին մեկ որեէ առարկան, ընդհանրապես սայլին լուծքը։

Ես շատ ուշ ճամփա կելլեմ, ժամը 2½-ին, ձիով։ Ինձի կընկերանա իր ձիուն վրա Սահակ ախպարը, ծանոթ ձիապան, բարձրահասակ կտրիճ մը, առույգ ու նիհար, մատաղ կաղնիի մը պես ճապուկ ու զորավոր, զեյպեկի տարազով, ֆեսին բոլորտիքը փաթթած գունավոր թաշկինակ մը, որ իր դեմքին խիզախ արտահայտությունը կավելցնե, իր կամարին ծայրեն ցուցնելով հաղթական՝ ատրճանակն ու դաշույնը։ Մեզի հետ կուգա նաև իզմիտցի խեղճ հայ կին մը, նույնպես ձիու վրա։ Իր ձիուն երկու քովեն մեկ-մեկ կողով կախված են, որոց մեկուն մեջ կապոցներ կան, իսկ մյուսին մեջ հեգ վեցամյա մանուկ մը, իր տղան, խուլ ու մունջ, զոր ահա երեք տարի է շարունակաբար Արմաշ կտանի՝ աստվածածնի գութը հայցելու այդ տարաբախտ պզտիկին վրա։ Ուխտդ ընդունակա՛ն, մայրի՛կ։

Շուտով կանցնինք Համիդիե փողոցեն, Իզմիտի պուլվարը, որ իրոք եվրոպական փողոցի մը չափ լայն է, երկու կողմեն ծառերով զարդարված ու բավական լայն հատակված, և դուրս կելլենք քաղաքեն։ Հոն, չնչին գնով մը, նոր բան մը կսորվիմ, թուրաֆ պատրի համար տասնական փարա կառնեն մեզմե իբր տուրք, զոր այստեղ պած կանվանեն (բաղդատել հոմանիշ հայերեն բաժ և ֆրանսերեն պեաժ բառերուն հետ)։ Շատ հին սովորություն մըն է այս, որ Միջին դարու Եվրոպայի ամեն քաղաքներուն պարսպաքներուն առջև ի գործ կդրվեր։ Ռուսիո մեջ ալ, մեծ պողոտաներուն գլուխը մեկ-մեկ փակոցներ հաստատված էին, երկու ցիցեր, որոց միջև հորիզոնական հաստատված շարժուն ձողը ուղղահայաց կբարձրանար՝ թող տալու համար անցնիլ մարդերուն և կառքերուն։ Եթե չեմ սխալիր, այդ սովորության ամենավերջին հետքերը դեռ չեն ջնջված այժմ Ռուսիո մեջ։

Մեր առջև կերկարի խճուղի մը, երկար, անհատնում, անսահման։ Արևը իր ճառագայթները անարգել կթափե ճամփուն վրա, արծաթազօծելով փոշին, որ ջուրի հարթ մակերևույթի մը պես կփռվի։ Այս փոշեղեն ծովն իր կոհակներն ունի։ Դիտա՞ծ եք, իրիկվան դեմ, քամիին վազքը ծովուն վրա. հովը իր առջևեն վտարական կհալածե պզտիկ մանտրտիկ կոհակներ, որք մութ կապույտով մը կգունավորեն ջուրին սպիտակությունը։ Այստեղ ալ, փոշիի բարակ խավ մըն է, որ դանդաղորեն կանջատվի նախ, հառաջ խաղալով, վազելով գրեթե, հետզհետե բարձրանալով ու տարածվելով։

Գյուղացիներու կառքեր, ձիավորներ, հետևակներ, ամեն վայրկյան մեր դեմը կելլեն։ Սայլերն ընդհանրապես բեռցած են փայտ, եգիպտացորեն, ծխախոտ, արմտիք, իսկ ձիերը՝ ածուխ։ Անատոլուի ճշմարիտ գյուղացիներ, առույգ, բարձրահասակ, արևեն այրած, այլատեսակ տարազներով, որոց մեջ ֆեսին փաթթված թաշկինակը, առավել կամ նվազ ծավալուն շալվարը և չվաններով կապված տրեխը՝ հարևնման են գրեթե միշտ։

Զարմանքս մեծ կըլլա սակայն, երբ կտեսնեմ, թե գրեթե ամենքն ալ հայ են. չէ՛, եթե իրենց գյուղական պարզությամբ ամենքն ալ պարտք չհամարեին ըսել մեզ. «Բարի՞ երթաք», հավիտյան չպիտի մտածեի, թե հայեր են ատոնք։ Այս զարմացումս վերջեն ավելի սասկացավ Արմաշի մեջ. է՛հ, ի՞նչ, ա՞ռ ալ հայ է, ա՞ն ալ հայ է։ Այո՛, հայ են։ Կկարծեմ, թե մարդաբան մը, եթե ուզեր հայկական բուն տիպարը գտնել մեր մեջ, անճարկած պիտի մնար այս զանազան տիպարներու անհուն պեսպիսության առջև։

Խճուղիին երկու կողմեն կերկարաձգվին ընդարձակ արտեր, որոց հունձքը ավարտված է արդեն։ Եգիպտացորենի լայնատարած դաշտ մը ուշադրություն կգրավե. պտուղները հնձված են և արճատները միայն կմնան ուղղաձիգ, արևեն չորցած, ազատված, սեցած,— կարծես ձայնարկության անվախճան նշաններ՝ հոգին

մեջ ցցված, բնության ահավոր խորհրդին անհունությունը որակելու համար։ Ծխախոտի արտերը միայն կպահեն դեռ իրենց կանաչությունը, բարակ ցողունի մը ծայրը դալար փունջով մը, որուն մեջ ճերմակ ծաղիկներ՝ խոսուն խուզարկու աչքերը կթվին լայն տերևներուն։ Անկե դուրս, բնության թմբիրն է, որ կտիրապետե, հնձված արտերուն տրտմությունն, այրած կոնծած գետնաքարշ խոտերով ծածկված։ Խճուղիին երկու կողմը, տեղ-տեղ, ծառերու պուրակներ, որոց գունատ տերևներուն մելամաղձությունը ա՛լ ավելի կթախծանա փոշիի բարակ խավին տակ։ Մացառները միայն կպահեն, ճամփուն երկու կողմը, իրենց մշտագարուն թարմությունը. բնության ժպիտն է այդ, անշարժ, անփոփոխ, ծերանալ չդիտցող կնկան մը անմեռուկ հրապույրը։ Մորմենիները իրենց փշոտ ճյուղերուն շաղապատուկով կամարներ կձևացնեն, որոց վերև կարմիր ու սև պտուղները իրենց անմատչելի առարկայի շարախնդաց հեգնությունը կնետեն մեզ կարծես։

Հինգշաբթի, կեսօր.

Երկաթուղին կընկերանա մեզ հիմա, իր գծերուն փայլփլյունը երկարելով մինչև հորիզոնը, մետաքսե մոխրագույն ժապավենի հանգունատիպ։ Վերջ ի վերջո կկտրե մեր ճամփան և մենք կթողունք զինքը անհայտանալ դեպի աջ, շարունակելով մեր գնացքը ձախակողմեն։ Լեռներու շղթան, որ աջակողմեն մեզ չի թողուր Իզմիտեն սկսյալ, կուղեկցի մեզ, միշտ հավատարիմ։ Լեռնաշղթային անընդհատ վայրէջքը ու վերելքը՝ հորիզոնին վրա կձևացնե խոլական անհավասար գիծ մը, ստվերոտ տարտամության մը մեջ բթացնելով իր ցցունքներուն և ծործորներուն եզերումները։ Հեռվեն հեռու կապույտ թանձր մուխ մը կբարձրանա, կոլորտանա, դանդաղորեն ծփանուտ ամպ մը հորինելով։ Ածխագործներուն խարույկներն են, որ կվառին լեռանցամեջերուն խորը։

Լռիկ կերթանք, մեր ձիերուն կանոնավոր գնացքով։ Դաշտանկարին անդորրութենեն ու անշարժութենեն բան մը անցած է մեզի։ Անցորդները հետզհետե կցանցառին։ Հեռվեն հեռու, փոշիի ամպ մը կհայտնե մեզ սայլի մը գալուստը։

Հիմա կբաժանվինք խճուղիեն, թողլով անոր թավալել իր փոշոտ երիզը մինչև Բաղդադ, և կմտնենք քովնտի նեղ ճամփու մը մեջ, որ Արմաշ պիտի տանի։ Այդ ճամփան մասնավորապես շինված ուղի մը չէ, այլ սայլերուն անիվներուն փորած մեկ արահետն է լոկ։ Ծառերը կշատանան կամաց-կամաց, և քիչ ետքը անտառին մեջ ենք արդեն։ Փոշին այստեղ ավելի թանձր է, կակուղ գորգի մը պես փռված մեր ձիերուն ոտքերուն տակ,— մաշված ու փտուկ գորգ մը սակայն, որուն թելերը քակվեին ու փեթռտվեին մեն մի քայլափոխի։ Կառքերեն թափած հարդի շյուղեր՝ փոշիին մեջ կպտտին, չկրնալով փախչիլ, իրենց թաթերովը իզուր ջանալով կռվան մը գտնել այդ փխրուն ու անհաստատ կույտին վրա։

Արևը կայրե զմեզ, ձիերը կհոգնեցնեն և անոթությունը կնեղե։ Պետք է տեղ մը իջնել, պատառ մը բան ուտել ու հանգստանալ։ Ժամանակ չեմ ունեցած Իզմիտեն քիչ մը ուտելիք առնելու. բայց Սահակ ախպար ապահովցուցած է զիս. «Դուն հոգդ մի՛ ըներ, հաջի՛ աղա, ես ուտելիք առեր եմ հետս»։ Եվ կիմացնե, թե քիչ մը ետքը կհասնինք Ջերքեսին խահվեն, ի Քիրեմիդ Կույուսու, ճամփուն կեսին վրա, ու հոն կիջնենք։

* * *

«Ջերքեսին խահվեն» բացավայրի մը վրա հաստատված է։ Քսանի չափ երկար ցիցեր, որոց վերև չորցած ճյուղեր շարված են, և խորը փայտաշեն խրճիթ մը. ահա սրճարանը։

Յոթը-ութ թուրք գյուղացիներ, որք քիչ մը վարը թողած են իրենց սայլերը, եկած են հոն սուրճ մը խմելու։ Ամենքն ալ իրենց ծանր ու հարգական բարևներով կընդունին զմեզ։ Խսիրի մը վրա կերկննանք և կհրավիրեմ Սահակ աղան իր ուտելիքները բերելու։

Իր ձիուն մաղախեն կբերե ինձի օխա մը հաց, հաստ թուղթե ծրարի մը մեջ ձիթապտուղ և երկու հատ ճերմակ բողկ։ Իր երեսը կնայիմ. ա՞ս է իր ծանուցած ճաշը։ Բայց ընտրություն ընելու, փափկաճաշակի խծբծանքներ փնտրելու տեղ չէ։ Սրճարանին մարդիկ բարեբախտաբար ունին խաշած հավկիթ ու խաղող։ Ախորժալի ճաշ մը կընենք, պաղուկ ջրով մը ոռոգելով զայն, սթափիչ խահվեով մը կազդուրվելով, և նորեն ճամփա կիյնանք։

Բուն անտառին մեջ ենք։ Ծառերը շարունակական հաջորդություն մը չունին, այլ տեղ-տեղ իրարմե կկտրվին բացաստաննե-

բով։ Անուշ ու առողջ բուրում մը կլեցնէ օդը, երանավետ հեշտութեամբ ուռեցնելով թոքերը։ Բարձրաբերձ ծառերու քով իրենց գլուխը կտնկեն վախկոտ մատաղ տունկեր, ավելի կանաչ, ավելի առույգ։ Երբեմն, սակայն, տեսարանը կփոխվի։ Գյուղացիներ, արոտավայր կամ արտ ունենալու համար, այրած են անտառը. ու բոլորշի բացավայրի մը մեջ, ծառերու այրած կոճղեր՝ դեռ իրենց վրա կրելով ճերմակ մոխիրը՝ մեռած բաներու շարաշուք տեսիլն ունին։ Հողը, այրած, կփռվի լերկ ու անկենդան,— ծանր վերքի մը պես՝ շրջակա գալարուն դաշտանկարին վրա։

Ճամփան կխորդուբորդի հեռազհետ, բոլորովին անխնամ, անընդհատ բազմապատկելով իր ոլորապտույտ դարձվածքները։ Հանկարծ, անտառեն ելլելով, հեռվեն կնշմարենք սայլերու երկարաձիգ շարք մը, որ գրեթե անշարժ կեցած է զառիվերի մը կողին վրա։

— Ըխտավորներն ին,— կըսե Սահակ աղան։

Ու կմտրակենք ձիերը։

Քիչ մը ետքը արդեն մեր դիմացն են Արմաշի եկեղեցիին գեղեցիկ գմբեթն ու շրջակա շենքերուն կանոնավոր շարքը։ Մեր ընկերուհին երեսը կխաչակնքե։

Երբոր ուխտավորներուն սայլերուն կհասնինք, կանգ կառնենք շնչասպառ։ Չէ՛, կարելի չէ՛ երևակայել, թե փոշին ինչ հզոր տարր մըն է այստեղ։ Եթե բնության տարրերուն նոր դասակարգություն մը ընել հարկ ըլլար, պետք է անպատճառ անոր մեջ մտցնել նաև Արմաշի ճամփուն փոշին։ Կրակին պես այրող է, ջուրին պես լուծ, օդին պես կմտնե թոքերուդ մեջ։ Երեք հարյուրի մոտ սայլերը, իրենց ծանր անիվներով, հողը կաղան, զոր ապա օդին մեջ կնետեն հովն ու գոմեշներուն հաղթ ոտքերը։ Սայլերուն հաստ կտավե վարագույրներուն տակ իզուր կապաստանին հեգ ուղևորները. փոշին ամենազոր է, ամենահաղթ, ամենուրեք, ու կպատե կպաշարե զքեզ ամեն կողմե, կոկորդդ տոչորելով ու թոքերդ այրելով։

Սահակ աղային կնայիմ։ Նայվածքիս մեջ չեմ գիտեր ինչ կա. բայց պահ մը կկենա, կդիտե առվեփ զառիվերն, որուն ստորոտեն կգառնա ճամփան, ու կպոռա հանկարծ.

— Առա՛ջ քշե։

Ձին կհամառի դեց ու քարոտ ճամփուն վրա, բայց պետք է որ փրկե զմեզ, ու կփրկե։ Տաժանելի վերելք մըն է այս, գուցե վտանգավոր, բայց գոնե մաքուր օդին մեջ մեռնելու մխիթարությունը կունենանք. մինչ անդին, փոշիին մեջ խեղդվի՞լ, ի՞նչ անփառունակ վախճան։

Երբ վանքին դռան առջև կհասնինք, ժամը յոթնուկեսն է. մեր ձիերը ուրեմն հինգ ժամեն բերած են զմեզ Արմաշ, մինչ սայլերը տասնեմեկ ժամ է, որ կքալեն ու դեռ չեն հասած։

Երբ ձիեն վար կիջնեմ, խենթի պես կվազեմ վանքեն ներս, սանդուղներեն վեր կելլեմ չորս-չորս, դեմս ելլող առաջին մարդուն թևեն կբռնեմ ու երեսն ի վեր կպոռամ։

— Ջո՞ւր, ջո՞ւր, ո՞ւր է հոս լվացվելու տեղը։

Չեմ գիտեր, թե մարդը ինչ մտածեց վրաս, բայց անմիջապես խնդիրքս կատարելու խելացիությունն ունեցավ։

Գ.— ՈՒԽՏԸ

Արմաշի ուխտագնացությունը երկու որոշ մասի կբաժնվի։ Եկեղեցին և բանայիրը։ Մեկ կողմե հոգվույն ամենեն գեղագույն ու սրբազան թռիչքները, ու մյուս կողմե մարմնին ամենեն անասնական ու բիրտ բնազդներուն ապերասան ստորնաքարշումը։

Այս բաժանումը սակայն դիտողին ու իմաստասիրողին համար է։ Ժողովուրդը միշտ սենպլիստ, միշտ պարզ, տարօրինակ խառնակության մը մեջ կշփոթե այս երկուքը։ Ու այս տրամագծապես իրարու ներհակ տեսարաններուն հարակցությունը, խառնուրդը, նույնացումը՝ իմաստասիրական ամենեն հետաքրքրական երևույթն է, զոր կընծայե Արմաշ՝ Խաչվերացի շաբթվան մեջ։

* * *

Ուխտի մը համար որոշյալ ժամանակներու մեջ որոշյալ վայր մը երթալու սովորությունը՝ նախապատմական հնության մեջ կիջորվի։ Ուխտագնացությանց ամենեն հին հիշատակությունն է Ելևսյան տոները, որք տեղի կունենային Ելլադայի Ելևսիս քաղաքին մեջ, ի պատիվ Դեմետրեի, երկրագործության խարտիշագեղ դիցուհիին։ Դեմետրեն էր, որ այն ժամանակներուն մեջ ուր մարդիկ, իրենց վայրենի կյանքին մեջ, չէին կրնար հոգեն հանել իրենց ապրուստը, կսնուցաներ մարդկությունը։ Ինքն էր, որ կբուսցներ ցորենը և կարգասավորեր արտերը։ Քաղաքակրթության դիցուհին էր կերպով մը, և ի պատիվ իրեն Ելլադայի ամեն կողմերեն կուգա-

յին, ուխտերով ու զոհաբերություններով, ու առիթ մը կըլլար այս այլազան ցեղերուն՝ զիրար ճանչնալու։

Մեր մեջ, Խորենացին կհիշե Անահիտի ուխտագնացությունը։ Ստրաբոն այդ ուխտագնացության վրա կհիշատակե այնպիսի մանրամասնություններ, որք չեն կրնար այստեղ արտագրվիլ։ Հայուհիները անդ կերթային կորսնցնել այն, զոր կին մը մեկ անգամ միայն կկորսնցնե, ու այնուհետև ավելի հարգի կնկատվեին և կնության կխնդրվեին։

* * *

Արմաշ բավական տարիներե ի վեր ուխտագնացության վայր մըն է։ Դարեն ավելի է, որ անդ կերթան աստվածածնի պատկերին առջև ծնրադրելու, անկից խնդրելու իրենց ցավերուն մեղմացումն և իրենց փափագներուն իրագործումը։ Չգիտցվիր ճշտիվ, թե ո՞ր ժամանակեն սկսած է ուխտագնացությունը. բայց ապահովապես մեկ դարեն ավելի է, որ Արմաշի բլրակեն վեր կելլեն ուխտավորներ։ Անկից առաջ վանքը հաստատված էր արդեն, բայց այդ բլրակին հրաշագործ զորությունը դեռ հայտնի չէր ժողովրդին։

Աստվածածնի պատկերն ալ, որ հրաշագործ զորություն ունի և որուն առջև կերթան երկրպագել բարեպաշտները, չգիտցվիր նորեն, թե ո՞ւսկից բերված է և կամ որո՞ւ ձեռքով նկարված։ Դիտելի է, թե ամեն վանքերու մեջ աստվածածինն է, որուն հատկացված է հրաշագործ զորությունը։ Կինը, որ վանքերու մեջ «քաղաքացիի իրավունք» չունի, պատկերի ձեին տակ կպաշտվի այդ վայրերուն մեջ։ Ահավասիկ իմաստասիրելու ուրիշ նյութ մըն ալ։

Ինչո՞ւ կուգան Արմաշ։

Ուխտի համար։ Ո՛վ որ ցավ մը ունի, նյութական թե բարոյական, ամուլ կինն, որ զավկի կըղձա, մայրն, որ աղջկան համար փեսա մը կխնդրե, ո՛վ որ տուն մը կուզե, ձիապանն, որ իր ձիերուն առողջությունը կըաղձա, երկրագործն, որ լավ հունձք մը կսպասե, կինն, որ իր սիրած անձին հավատարմությունը կցանկա, իրենց անառակ զավկին զգաստությունը հայցող մայրերը, ամենքն ալ Արմաշ կդիմեն։

Իրենց ուխտը մեկ-երկու կերպով կկատարեն։ Բուն ցավագարները, խուլերը, մունջերը, խելագարները, ջղային տագնապներով հուզված կիները, աստվածածնի պատկերին առջևի գավթին

մեջ կգրվին մինչև չորս օր, չորս գիշեր, շրջապատված իրենց մարդերեն, որք պաղատագին կհայցեն տիրամոր կարեկցությունը այդ եղկելիներուն վրա։

Մյուսները ոչխար մը կնվիրեն՝ մատաղի համար, մոմ կվառեն, կանթեղին մեջ յուղ լեցնել կուտան և «դարպաս» անվան տակ գումար մը կնվիրեն։

Ինձի համար ուխտին ամենեն հետաքրքրական և նկարագեղ կողմը կկազմեն այն զանազան արծաթե առարկաները, զորս ուխտավորները կնվիրեն աստվածածնի պատկերին և որ իրենց ուխտագնացության նպատակը ցույց կուտա։ Թևին վրա հիվանդություն ունեցողը՝ արծաթ թև մը կնվիրե, աչքի հիվանդություն ունեցողը՝ արծաթ աչք մը, սիրտ մը, ձեռք մը, ամբողջ մարմին մը, տուն մը ուզողը՝ տուն մը կնվիրե, կառք մը, ձի մը և այլն։ Այս սովորությունն ալ շատ հին է։ Աստվածաշնչին մեջ կկարդանք, թե փղշտացիները իրենց երաստանի հիվանդությանց և իրենց դաշտերն ավերող մուկերուն համար իրենց քուրմերեն պատվեր ստացան իսրայելացիներուն տապանակին նվիրելու «զպատկերս երաստանաց ձերոց, և զնմանութիւն մկանց ձերոց՝ ապականչաց երկրին»։ Այդ պատկերները ոսկիե շինվեցան։

Ուխտագնացության մասը կկազմե նաև մանկանվերը։ Ժամերգութենեն հետո, ծնողքները աստվածածնի կծախեն, դրամական նվերով մը, իրենց հիվանդ կամ անառակ զավակները, և մեկ քանի տարիներ անոր պաշտպանության ներքև թողլե հետո զայնս, ետ կգնեն։

Ահավասիկ ինչ է Արմաշի ուխտագնացության նպատակը։

Դ.—ՍՐԲԱԶԱՆԻ ՍԵՆՅԱԿԸ

Արմաշի մեջ, Խաչի ուխտագնացության ժամանակ, տիպարներու, տարազներու, լեզվի, զգացումներու արտահայտության ամենեն ճշգրիտ հանդիսարանը ո՛չ եկեղեցիին մեջ է, ո՛չ դուրսի ընդարձակ պարտեզին մեջ ուր բազմությունը կպտտի հարաժամ, ո՛չ վանական շենքերուն մեջ, ուր ուխտավորները կպատսպարվին, ո՛չ վանքին դուրսի լայնատարած հրապարակին վրա, ուր սրճարաններուն և խանութներուն մեջտեղ կվխտա ամբոխը, ո՛չ, այլ վանահոր սենեկին մեջ։ Քալեիդոսքոպ մըն է այդ սենյակն ուսկից կուգան կանցնին բոլոր բարեպաշտները, խորհրդանոց, ուր

կհայտնվին բոլոր թաքուն ցավերը, խուլ ըղձանքները, հավատքի ալացումները, հոգեկան գերագույն խանդաղատանքներն ու բոլոր ողորմ ու պզտիկ եսամոլությունները. տեսակ մը փողերանոց-սրբարան, ուր հավատքն ու դրամը իրար կխառնվին տարօրեն սերտությամբ։

Այդ սենեկին մեջ բազմած է փոխ-վանահայր տ. Օրմանյան սրբազան։ Հոն է որ, առտվան պատարագեն հետո, բարեպաշտները կուգան վճարելու իրենց դարպասը, իրենց մանուկները ծախելու աստվածածնին, հոն կուգան բերելու իրենց զանազան նվերները։

Տ. Օրմանյան սրբազանի թույլտվությամբ երկար ժամանակ անցուցի այդ սենեկին մեջ, որ ուսումնասիրության և հոգեբանության կատարյալ դիտարան մը եղավ ինձի համար։

Հաղթ ու կորովի գյուղացիներ ներս կմտնեն ու, հարգանոք համբուրելով սրբազանին ձեռքը, կնստին բազմոցներուն կամ աթոռներուն վրա։ Հետո իրենցմե մին ոտք կելլե և կուգա կամացուկ մը սրբազանին սեղանին վրա դնել իր դարպասը, մեկ մեճիտեն մինչև մեկ ոսկի և ավելի ալ։ Սրբազանը կգրե ընկալագիրը և կհանձնե նվիրատուին։ Հետո ետին կդառնա, վարագույր մը մեկդի կառնե կիսովին, թուղթ մը կքաշե և կուտա նվիրատուին։ Այդ թուղթերը՝ հինեն մնացած նվիրատոմսեր են, որոնց վերև հրաշագործ աստվածածնին պատկերը փորագրված է և տակը գրված է. «Վճարեց 100 դահեկան վասն վերաշինության եկեղեցիին, և այլն»։ Հին հանգանակության մը ավելորդ մնացած այդ թուղթերը՝ հիմա կգործածվին իբր հիշատակ մը Արմաշի, և տեսնելու է, թե բարեպաշտներն ի՞նչ խանդակաթ սրտեռանդությամբ կտանին իրենց հետ այդ թուղթերը։ Այնքան ճշմարիտ է, որ դիտավորությունն է ամեն բանի մեջ, որ գործի մը էական հիմը կկազմե։

Կիներ ներս կմտնեն, Իզմիտի գյուղերուն հատկանշական տարազովը՝ մետաքսե կարճ վերարկու, գունավոր ուռուցիկ շալվար, գլուխնին ոսկեթել յազմայով մը, ուսկից մազը կկախվի մեկ հյուսքով՝ մինչև մեջքը։ Երկյուղածությամբ կմտնեն ներս, սրբազանին կմոտենան և աջն համբուրելե հետո, իրենցմե մին մեղմով գետինը կդնեն պզտիկ կապոց մը։ Նուշ բերեր են սրբազանին կամ անձեռոցներ, զորս իրենք մաներ են, կամ գուլպաներ, զորս իրենք հյուսեր են ձմռան գիշերներուն տքնությանց մեջ։

Երկու խեղճ կիներ ներս կմտնեն, մեկ-մեկ պզտիկ լաճի ձեռքեն բռնած։

Ռոդոսթոյեն են։ Ավելի համարձակը խոսք կառնե.

— Ա՜խ, սրբազան, աստվածածնին պիտի ծախենք,— կրսե արտասվագին ձայնով մը։— Անառակ են, դպրոց չեն երթար, չեն կարդար, կփախին ծովեզերքը կերթան միշտ։

Պզտիկը, կրակոտ չարաճճի աչքերով, այս «աստվածածնին պիտի ծախենք» խոսքին վրա կսարսափի, ինքզինքը կազատե մորը ձեռքեն և կվազե դեպի դուռը, երբ կբռնեն կբերեն զինքը։ Սրբազանին հայրական հորդորներուն տակ տղան կհանդարտի ու հիմա իր աչքերը խոհուն ու մտածկոտ արտահայտություն մը ունին։

Կին մը ներս կմտնե դողդողալով.

— Ա՜խ, սրբազան, ռիճա մը ունիմ։ Ճամփան այուպպյուն մը խայիպ ըրի. բան մը չէր. ոսկիի մը նոպ նոր առեր էի ֆի հեռվեն Արմաշը տեսնամ, ճամփան նասրլ եղավ չիտեմ խայիպ եղավ։ Ճանըմ, սրբազան, սանկ եկեղեցիին մեջ ծանուցում մը ընեիք։

Վանքի դուրսի հրապարակին մեծ սրճարանին վարձակալներն եկած են ու կգանգատին, թե ոստիկանությունը թող չի տար, որ գիշերվան ժամը հինգեն հետո բաց մնան գինետունները և կարգիլե ֆիշեկ նետել։ Ի՞նչ տեսակ է այդ մարդերուն միամտությունն, որ իրենց օգիի հաշիվներուն հետ խառնել կուզեն վանահոր միջամտությունը։ Ու մանավանդ ի՞նչ ահռելի ծարավ է այն, որ չի կարենար հագենալ մինչև ժամը հինգ խմելով։

Ուրիշ կին մը, Պերայեն, շատ շնորհքով ընտանիքե մը, սրտի եսամոլ աղաղակ մը կունենա.

— Ա՜խ, սրբազան, փեմ աղեկ է Արմաշը, բայց ի՞նչ աղեկ կըլլար, եթե աստվածածինը Պերա ըլլար։

Ձեր տանը քովիկը թերևս, այնպես չէ՞։

Ու հետզհետե կուգան, տողանցությունը կշարունակվի անընդհատ. դռան առջև կարգի կսպասեն. սենյակը պարպվելուն պես՝ ներեն կլեն։ Մեկը արծաթ բուրվառ մը կբերե, ուրիշ մը մետաքսե թաշկինակներ, ամենքն ալ իրենց դարպասը։ Երկար ու կապկրպված քսակներու խորեն մեճիտիեները դուրս կելլեն։ Խորունկ մտածություններե ետքը, նվիրատուն մեկ-երկու մեճիտիե կդնե սեղանին վրա. ու հանկարծ նոր մտածում մը գալ կթվի իրեն, իր մեկ ոսէ բաղձանքը, զոր մոռցած էր, ու մեճիտիե մըն ալ կավել-

ցընե իր նվերին վրա՝ տաժանելի շարժումով մը։ Խեղճ գյուղացիներ են հաճախ, որ առատորեն կուտան իրենց դարպասը, և ուրիշներ, որոնցմե բավական գումար մը սպասել ներելի է, կշափեն-կշափչփեն իրենց նվերը։

Ու մեկ կողմե այդ հաշվված հավատքը, զոր կխորեն, կմանրեն ծայրակտուր, անոր թռիչները սանձելով ու՝ մյուս կողմե այն բնազդական անխորհրդածյալ մատուցումները, որք կըլլվին՝ սրտի անխառն ու վճիտ բխյունով մը, դիտողին համար մարդակազմության տախտակներ են, որոց վրա մերկապարանոց զետեղված են ներքին գործարաններուն ամենեն թաքուն խորշերն ու ծալքերը։

Ու Օրմանյան սրբազան, այդ ամենուն մեջ, կպահե իր վարժ ու փորձ հոգեբանի անդորրությունը։ Գրիչը ձեռքը միշտ, կգրե ու կգրե ընկալագրեր, որք հավատացյալներուն խանդին ծանրաշափն են, կքաշե իր գզորցը, որուն մեջ հատուկ խորշեր կան օսմանյան և անգլիական ոսկիներու, մեճիտիեներու, քառորդներու և մանրուքի։

Ու կուգան միշտ, ամենքն ալ իրենց աչքերուն մեջ մատնելով իրենց ներքին ցանկությունները։ Ու անոնց քով, որք պարզապես շահի ու հաջողության ակնկալություններ ունին, քանինե՞ր կան, որոց մարմինը կկրծե ցավը, որոց բարոյական տառապանքները՝ ա՛լ շատ ծանր կուգան իրենց մարդկեղեն պատյանին, սևեր հագած կիներ, որ մեռած զավկի ցավ քաշած են, հիվանդի տերեր, որոց աչքին մեջ արցունք մը կա միշտ, մայրեր, որք հուսահատորեն կդիտեն իրենց աղջիկներուն ծյուրիլը ու հատնիլը ամուրիության մեջ։ Ու դեպի սրբազանին սենյակը տանող սանդուղը՝ Գողգոթա մը կթվի ինձի, ու անկից վեր ելլողները՝ այդ խաչի շաբթուն մեջ, իրենց խաչը շալկած են կռնակնին, ցավով ու հեծությամբ։

Ե.—ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԳԱՎԻԹԸ

Արմաշի հրաշագործ աստվածածինը կգտնվի եկեղեցիին աջ կողմի գավիթին ճակատը։ Մեծադիր պատկեր մըն է, արևելյան հին նկարչության հաստ ու անճարտար գծերով ու սաստիկ, ուժգին, պոռոտ գույներով։ Աստվածածինը, գլուխը թագով մը, գիրկն առած է մանուկ Հիսուսը, նմանապես բոլորովին զուրկ մանկական շնորհե։ Այդ արտահայտութենե զուրկ պատկերին մեջ, տիրամոր խոշոր աչքն է, որ տարօրինակ կենդանություն մը ունի, աչք մը կարծես անդունդի մը վրա բացված, պակուցյալ, իր նայվածքին շեշտակի անշարժությամբ ու ցրտությամբ հալածելով զքեզ, ամեն կողմե քեզ նայելով բարեպաշտներուն գլուխները խոնարհեցնելով իր ահավոր ու գերբնական էության մը արհավիրքին տակ։

Այդ պատկերին՝ գեղարվեստական հանգամանքե զուրկ ըլլալու իրողությունը դիպվածական բան մը չէ, անճարտար վրձնի մը անկարողության հետևանքը, այլ կամովին, գիտակցաբար, աստվածածինը զրկած են իր մայրական շնորհագեղ ու վայելչածաղիկ տիպարեն, որ կտեսնվի նմանօրինակ պատկերներու մեջ։ Խորանին վրա գտնվող մյուս աստվածածինը գեղարվեստական արժեք ունեցող գործ մըն է, Վենետիկի մեջ նկարված՝ իտալացի մեծագույն վարպետներու ստեղծագործությանց ընդօրինակությամբ, այլ ժամանակին մեծ խնդիրներ ու կռիվներ եղած են՝ զայն վանքին մեջ ընդունելու համար։

Այդ հրաշագործ աստվածության դեմ է, որ տախտակամածին վրա նստած, պառկած, ծնրադրած, ընկողմանած են հարյուրեն ավելի մարդիկ, այր, կին, տղա, ծերունի, հիվանդներ և հիվանդի տերեր։ Կերևակայեմ, թե Պրոպատիկեի ավազանին եզերքը խռնվող բազմությունը ճիշտ այդ տեսարանը ներկայացնելու էր։ Երկու կատաղի խենթեր կան, վարտիքով ու շապիկով միայն, մին ձկնավաճառ մը Պերայեն ու մյուսը իզմիրցի խեղճ երիտասարդ մը, ու հուժկու մարդիկ բռնած են անոնց թևերեն ու ոտքերեն։ Խենթերը կթոթվտին, կպոռան, կոռնան. պահ մը կհանդարտին ու կվերսկսին։ Բավական թվով խուլեր ու մունջեր կան։ Հետո խեղճ կիներ, ջղային տագնապներու ենթակա։ Ուշադրությունս կգրավե ատաբազարցի ծաղկատի աղջիկ մը, գետինը պառկած. իսդեռիֆի կատարյալ տիպար մը, այնպես ինչպես տեսած եմ Փարիզի հիվանդանոցներուն մեջ, որ ակռաներու մեջեն կշշե կփրփրի, սուր աղաղակներ կարձակե, իր հիվանդության հատուկ «մեծ պարույթը» կգծե՝ գլուխը դեպի ետև ծռելով մինչև մեջքը, մինչ իր կուսական հեգ վշտաշարշար կուրծքը՝ անհանում հևքի մը մեջ՝ փքոցի մը տխուր տպավորությունը կթողու։ Իր ոտքերուն ու գլխուն վերև չորս-հինգ կիներ նստած են, արցունքով, հառաչներով, ողբական պար մը բռնած հիվանդին բոլորտիքը։

Ու անդին, աստվածածնի պատկերին առջև, ժխորը կբարձրանա, խուլ ու խորունկ բզզյունի մը պես. ուխտավորներ որք մոմեր կբերեն՝ ամեն հասակե, կուգան իրենց կարճ աղոթքը կա-

տարել պատկերին դիմաց, ծնրադրելով ու խաչակնքելով, և աստվածածնին առջև վառող կանթեղին մեջ թաթախված բամբակի կտորներ գնելով, քառասուն փարանոց թիթեղե փոքրիկ տուփերու մեջ։ Բազմությունը կսեղմվի, անհուն ճիգեր կթափին մինչև պատկերին առջև հասնելու համար, լուսարարները կպոռան, կհայհոյեն, կիներն ու աղջիկները՝ սեղմվելով՝ ճիչեր կարձակեն. հրմշտուք մը և իրարանցում մը, որ վերջ չունի, ու փոշին կբարձրանա, կծավալի, ոսկի գնդիկներու պես թռչկոտելով արևի ճառագայթներուն մեջ։ Ու ահա խենթերն են, որ կպոռան, ցավագար կիներն են, որք իրենց վայունը կնետեն։ Եվ այս՝ ամեն վայրկյան, ամեն ժամ, չորս օր, չորս գիշեր շարունակ։

Գիշերն է, որ այս տեսարանը կզգենու այն «պակուցանողական սաստկությունը», որուն վրա կխոսի Նարեկացին։ Կանթեղներն իրենց խորհրդավոր ու խոշորցնող լույսը կսփռեն այս ամենուն վրա. այն ատեն ընդհանուր պատկերը ուրվատեսիլ բան մը ունի, որ կսարսռացնե զքեզ։ Երկու-երեք հարյուր կիներ, մեկ ձայնի վրա կմրմնջեն. «Ա՜խ աստվածածին, ա՜խ աստվածածին», իրենց կուրծքերը ծեծելով, այն լալկան ձայնով, զոր մեռելներու տան մեջ կիները կունենան՝ երբ ալ կոկորդնին չորցած է երկարատև հառաչանքներեն ու աչքերնին ցամաքած։ Ու այս հեծության համանվագը, իբր թաքստոցե մը, կընկերանա այն մյուս ահեղ համանվագին, որ կսավառնի գավթին վերև։ Բոլոր հիվանդները, այդ վայրին հատուկ գերագրգռութենեն բռնված, իրենց ախտը զայրացած այս երկարատև սպասումներեն, տաքեն, ծարավեն, անոթութենեն, իրենց չորս բոլորքը տիրող տարափոխիկ հիվանդաբույր մթնոլորտեն, այսահար ոգիներու պես կտանջվին։ Ամենուն նայվածքն հառած է աստվածամոր պատկերին վրա, հայտնություն մը ընդունելու գերագույն համոզումով։ Ու բոլոր այդ երազացնոր աչքերուն կթվի հայնժամ, թե տիրամայրը կժպտի կամ կքրտնի։ Պատկերին մեջ, նայվածքը կպահե միշտ իր խոժոռ ու անզգած անդորրությունը, ու այդ հավերժաբաց կոպիճներուն ու զինքը դիտող հարյուրավոր աչքերուն մեջ հզոր մագնիսականություն մը կհատատավի, էլեկտրական հոսանուտ մը, որ ջիղերը կգրգռե ու կպրկե։

Հրաշքի մը կսպասեն ամենքը։ Խաչին կերակի առտվան պատարագին է, որ ամենքը, հավատքի ծայրագույն խանդավառությամբ մը, կսպասեն այն աստվածային զորության, որ պիտի քակե

լեզուները, պիտի շարժե անդամալույծ անդամները, որ ուղեցին խանգարյալ ծալքերուն մեջ պիտի վերահաստատե բնական կարգավորությունը։ Այս տարի հիշված հրաշքներուն մեջ, այլազգի տղա մը, տասներկու տարեկան, ի ծնե համր, սկսեր է բարբաջել։ Պետք է ըսել, թե գավթին մեջ սպասողներուն հետ կան տասնի չափ այլազգի այրերու կիներ ալ։ Հիշվեցավ նաև, թե ուրիշ համր տղու մըն ալ լեզուն քակվեր է։

Զ.—ՄԱՆԿԱՆՎԵՐ

Ժամերգութենե հետո է, որ Արմաշի եկեղեցիին մեջ տեղի կունենա մանկանվերի պատկառազդու արարողությունը։

Տասը-քսան տղաքներ, շապիկ հագած ու մոմ բռնած ձեռվընին, սեղանին առջև կարգով կշարվին։ Անառակ տղաքներ են, որոց վրա «շնորհք և իմաստություն» կխնդրվի, հիվանդոտ տղաքներ, որոց համար առողջություն կհայցվի, ու իր մեռած եղբայրներեն հետո մեկ հատիկ մնացած տղա մը, որուն վրա տիրամոր կենսապարգև գթությունը կաղաչվի։ Այս արարողության համար մասնավոր աղոթք մը չկա Մաշտոցին մեջ, այլ ս. գրքին բոլոր այն հատվածներն առնելով, որոց մեջ մանուկներու վրա խոսված է՝ Արմաշի մեջ ժամանակին շինված է այդ աղոթքը, վանահայր Գևորգ եպիսկոպոս Ալիքսանյանի օրով կամ ձեռքով։

Հետո մանուկները սեղանին վրա կառնվին, և մինչ «Մանկունք Եկեղեցվոյ, փառաբանիչք Ս. Երրորդության» շարականը կկարդացվի իրենց վրա, երեք անգամ կերկրպագեն սեղանին։ Պահպանիչ մը կփրկե արարողությունը։

Շատ հետաքրքրական ուսումնասիրություն մըն է դիտել մանուկներուն դիմագծությունն ու վարմունքը այդ արարողության միջոցին։ Ցորչափ, որ վարը, սեղանին առջև են, իրենց ետին տեսնելով իրենց մայրերը կամ քույրերը, դեռ իրենք զիրենք կզգան ընտանեկան մթնոլորտին մեջ և իրենց զգեստավորումն ու իրենց ձեռքերուն մեջ վառվող մոմերը ղվարթ ու հանդիսական փոփոխության տպավորությունը կթողուն իրենց վրա։ Բայց երբ իրենց մայրերեն բաժնվելով սեղանին վրա կելլեն, այն ատեն անօրինակ աշխարհի մը մեջ մտած ըլլալու արհավիրքը կկարդացվի իրենց աչքերուն մեջ, կարծես հողային երդիրավոր բաներեն անդառնալի կերպով կտրված, անջատված, քովնտի սարսափահար նայվածքներ

նետելով դեպի իրենց մայրերը։ Երկրպագության միջոցին, ա՜լ ավրված է այն գեղեցիկ կարգը, որ վարը տեսնողներուն գոհունակություն կազդեր։ Ոմանք, շվարած, արդեն այդ «ծախվելու» գաղափարին սարսափին տակ, կխռովին, կգժդմին, վայրի ձիերու պես կխրտչին. ուրիշներ, կարծես ըմբռնած այդ խորհրդավոր վայրկենին բոլոր վեհությունը, հասուն լրջությամբ մը կհառաջանան, կանոնավորապես ծալլելով իրենց ծունկերն ու խաչակնքելով։ Երբոր սեղանեն վար իջած են, ամենուն ալ սրտին մեջ բույն դրած է նոր գիտակցություն մը, ահավոր խորհուրդի մը մասնակցած ըլլալու խորին հավատքը։ Աստվածածնի հովանին միշտ իրենց վրա՝ փերկելով զիրենք ամեն վտանգներե ու ձախողվածներե, և այս տարտամ մտածությունները, անկերպարան այլ զգացված, իրենց դեմքին կուտան ծանրակաց խստություն մը, որ պիտի տևե։

է.—«ԵԿԵՍՑԵ»

Արմաշի եկեղեցիին մեջ ամենեն ազդական արարողությունն է իրիկվան ժամերգությունը, «Եկեսցե»-ն։ Երբ մութը կկոխե, Դպրեվանքի երեսունեն ավելի աշակերտները, իրենց սև մաքուր լայն վերարկուները հագած, կարգով կերթան եկեղեցին, ուր բազմությունը խռնված է արդեն։ Ամենքն ալ կսպասեն այն պահուն, երբ աշակերտները, իրենց ներդաշնակ ու միաբերան երգեցողությամբ պիտի եղանակեն Նարեկացիին մեծ աղոթքը, «Առ Մայրն Երանության՝ ի խորոց սրտի խոսք ընդ տիրուհվույն»։ Եվ ահա աղոթքը կսկսի դաշն, վսեմական, հեռվեն, խորունկեն եկածի պես, ու սարսուռ մը կանցնի բոլոր ներկաներուն մեջեն, անգիտակցաբար ձեռվընին բանալ տալով և աչքերնին վեր դարձնելով։ Նարեկացիին ամենեն հրաշալի հատվածն է այդ, ճշմարտապես գրական հատված, արձակ բանաստեղծություն մը իր լայն ու թավալուն հնչականությամբ.— «Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրև զօդ, մաքուր, որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, Եդեմ շնչական...»։

Ամենուն աչքերը կվառին արցունքով։ Եկեղեցիին մեջ լաստակերտները կանգուն են դեռ՝ նորոգության պատճառով, և իրենց ստվերները՝ պլպլուն լույսերուն քմահաճույքին հետ կդողդան, կվազվռտեն պատերուն վրա, վիթխարի մանուկներու թևերուն պես։

Անդին, աստվածածնի գավթին մեջ, ամենքը ոտքի ելած են, իրենց հոգիին բոլոր զորությամբը, իրենց մարմնին ամբողջական ընծայումովը ընկերանալով աղոթքին, որ կուղղվի առ տիրամայրն։ Խենթերը, ջլախտավորները կարծես սահմռկած են ու ապշությամբ կդիտեն իրենց չորս բոլորտիքը։

Քովս կին մը կա, ներկված մազերով ու շպարված դեմքով, անճաշակ, ճոխ արդուզարդ մը ըրած, որ երեսի վրա գետինը ինկած է, կուրծքը ծեծելով, հոգ չտանելով, որ իր հորդ արցունքները կավրշտկեն դեմքին բոլոր խնամյալ սնգույրները, ու իր ամբողջ էությունը հառաչ մըն է միայն, իր կուրծքեն անդուլ արձակվելով, հատնող երկարումի մը մեջ սպառելով։

Անդին աղոթքը կշարունակե.

«Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ»։

Ա՜խ, ա՜խ, ա՜խ։ Ու ձայնարկությունները կհաջորդեն իրարու, հեծկլտուքները ու թառանչները օղակ-օղակ կբարձրանան օդին մեջ, եկեղեցիին կամարներուն զարնվելով։ Խռնված բոլոր այդ ժողովուրդը, հավատքի անդիմադրելի մղման մը տակ, ամբողջ անձնամատույց հոգի մըն է լոկ, առ տիրամայրն ուղղված, անձնամոռաց աղերսանք մը, պաղատանք մը, անոր մեջ հալելու, երկրային կապերեն ազատվելու, դեպի վեր սավառնելու հզոր ըղձանքով մը։ Ու հավատքի այդ անհուն անսահման պոռթկանքին առջև, որուն նեղ կուգա եկեղեցիին հարկածածուկ շենքը, անբացատրելի խանդաղատանք մը կլեցնե հոգիս։ Ընտանի պատմությունը կուգա միտքս։ Պրըդանյի մեջ ավանդություն է, թե Իս անուն քաղաք մը ծովուն մեջ անհայտ կորսված է։ Ձկնորսները տարօրինակ պատմություններ ունին անոր վրա։ Փոթորկի օրերը, կհավաստեն, ալիքներուն խորը կտեսնվի անոր եկեղեցիներուն սլաքներուն կատարը. անդորրության օրերը, անդունդեն կբարձրանա ու կլսվի անոր զանգակներուն ձայնը, օրվան ժամերգության եղանակին համաձայն։ «Հաճախ ինձի այնպես կուգա, թե սրտիս խորն ունիմ Իս քաղաք մը, որ տակավին կհնչեցնե զանգակներ՝ համառաբար հրավիրելու սրբազան պաշտամունքներուն հավատացյալներ, որք ա՜լ մտիկ չեն ըներ»։ Ու այդ բոլոր ժողովրդին հանդեպ, որ մե՛կ մտածումով մը միացած է, խորհելով այն գերագույն զորության վրա, որ գոնե այդ վայրկենին բարի, անկեղծ, անշահախնդիր, խանդավառ ու մարդասեր կընե այդ բոլոր մարդիկն ու բոլոր կիները,

«կանգ կառնեմ մտիկ ընելու համար այդ դողդոջագին թրթռումներուն, որք անվախճան խորութիւններեն գալ կթվին ինձի»։

Ը.—ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Արմաշի վանքին դռան առջև տարածվող ընդարձակ հրապարակը, ուր տեղի կունենա բանայիրը, ամենեն խառնակ ու աղմկալից տեսարանը կներկայացնե, զոր տրված ըլլա մարդուս դիտել երբեք։ Բազմությունը, եկեղեցիին մեջ իր աղոթքը կատարելե ու Մոմը վառելե հետո դուրս կելլե անմիջապես՝ մեկ մասը բացօթյա արճարաններուն մեջ օղի խմելու և մյուս մեծագույն մասը՝ անոր օղի խմելը դիտելու համար։

Եկեղեցիին դռան քովեն անմիջապես կսկսին առժամապես հաստատված փայտաշեն խարխուլ խանութներ, աղտոտ ուտելիքներու, անուշեղեններու, շաքարեղեններու, որոց դիմաց պզտիկ տղաքներ շարված մատվրնին կլզեն։ Փերեզակներ, իրենց ապրանքները գետինը փռած, կիներու մեծ բազմություն մը հավաքած են իրենց գլուխը. գեղացի աղջիկներ, գունավոր տպածոներու, ուլունքներու, ապարանջաններու, ածան մատանիներու և օղերու տեսքեն հրապուրված, երկար սակարկություններով կտապլտկին իրենց պչրասիրության դրդումին և գեղացիի հաշվագիտության միջև։

Այդ խանութներու շարքը կերկարաձգվի մինչև Արմաշի գյուղը, որուն տուները, վերջին հրդեհեն այրած, հիմա ամբողջովին շինված են։ Այս «շինված» բառը սխալ ըսի. «հյուսված» պետք է ըսել. տուներուն մեծ մասին արտաքին երեսը ճիշտ կողովի մը պես հյուսված է։

Բանայիրը դուլ ու գաղրում չունի։ Երբ գիշեր կըլլա մանավանդ, ամբողջ հրապարակը կլցվի բազմությամբ, լույսերով, թմբուկի ու փողի, լաթերեայի ու քեֆի ձայներով, երգերով, աղմուկով։ Բայց բուն Բանայիրի՝ «արհեստագիտական» տեսակետով՝ այս հանրային զվարճությունը իր տեսակին մեջ շատ վար կմնա մեր Պոլսի ծանոթ տոնախմբություններեն, բացի թերևս իրենց ֆիշեֆեն, որ շատ լավ է, ոչք կտրածին չափ բարձրանալով երկնքին մեջ. ու Պոլսի ճոխարտաճները, եթե կուզեն օդի մեջ ուրացող լու-

սեղեն ցայտքին ազդած հաճույքը կրկնապատկել, թող իրենց մթերքը այս կողմերեն բերել տան։

Ինչ որ ներողամիտ իմաստասերին համար այս տեսակ հանդեսներու արդարացումը կկազմե, ժողովրդին նախնական տիպարներուն առույգ ու անխառն զվարճությունը, դրամին դեմ ազնվական արհամարհանք մը, որ մեկ օրվան մեջ տարտղնել կուտա այնքան օրերու տաժանքին վաստակը, ու այն խրոխտ գիտակցությունը, որ զվարճացողներուն կուրծքը կուռեցնե և աչքերը կվառե՝ իրենց մարմնական բոլոր բովանդակ գերազանցության տեսարանովը, իրենց սկզբնական կրքերուն ազատ ու կտրիճ արտահայտությամբը,— այդ ամենը կպակսի այստեղ։

Այդ բոլոր գեղացիները զվարճանալ չեն գիտեր. ներկա գտնվեցա պզտիկ կռվի մը խումբ մը ատաբազարցի երիտասարդներու և լաթերեաճիներու միջև. տղաքները քառասուն փարա տվեր էին նվագածուներուն և կպահանջեին, որ ժամ մը շարունակ նվագեն։ Ասկից զատ, պարել չեն գիտեր, որովհետև ինձի համար պար մը չէ երկու հոգիի դիմացն դիմաց կանգ առնելն ու իրենց մարմինը անճոռնի կերպով կոտրտելը։ Ահ, Պոլսեն եկած երիտասարդներու խումբ մը կար, ջրհանկիրներ կամ ձկնորսներ, հինգ-վեց հոգի, որք թե թեի տված պար բռնած էին. իրենց գլուխը երիտասարդ մը կգտնվեր, ծանոթ տիպարին ամենեն գեղեցիկ օրինակներեն մին, բարձրահասակ ու կարշնեղ. տեսնելու էր, թե ի՜նչ շնորհով ու վայելչությամբ իր պարին արագ վազքին մեջ իր հետը կքաշեր կտաներ իր պարակիցները, նայվածքը անճառ խնդությամբ մոլորուն, գլուխը բարձր, արհամարհոտ ու վեհ, ժպիտը շրթունքեն անսպակաս, ու ի՜նչ անտարբեր ու անփույթ առատաձեռնությամբ քառորդ ոսկի մը կփակցներ նվագածուին ճակտին։

Ու հետո, պետք է ըսել, շալվարը զոր հագած են այդ բոլոր գյուղացիները, չես գիտեր ինչ լուրջ ու ծանրադանդաղ բան մը ունի, որ բնավ չի հարմարիր այդ թեթևաթռիչ ու արագոտն պարերուն, ու անոր լայն ու փոթփոթ խիստ ծալքերը՝ օտար տեղե բռնի բերված ու չընտելացած բանի մը տպավորությունը կթողուն՝ օդի սեղմեն զվարճությանց և երգիտնակին թեթև ու ցատկոտուն նվագածության մեջտեղ։

Եվ սակայն հոս է բազմության մը առավելությունը, որ միշտ, գիտողին համար, ընկերային ուսումնասիրության լավագույն միջոցն է և ան է, որ ճշտագույն ծանոթություններ պիտի տա ժողո-

վերդի մը բարքերուն, բնավորության, սովորությանց, տարազին, լեզվին վրա։ Ժողովուրդը այդտեղ է, որ պիտի երևի իր ինքնությանը համարձակ ու անծածկույթ տեսարանին մեջ։ Փափկանկատի դյուրազգացությամբ պետք չէ հեռու քաշվիլ ամբոխեն, նույնիսկ իր աղտոտության ու գռեհկության միջավայրին մեջ։ Մեծագույն դասը, անոր մեջ պիտի գտնենք։

Բազմության մեջ ամենեն ավելի ուշադրություն կգրավեն կիները, իրենց ավշային նիհար դեմքով ու շատ նուրբ, գրեթե աթենական դիմագծությամբ, որ այդ ցեղին հին ազնիվ սերունդի մը շառավիղն ըլլալու ապացույցը կրնա նկատվիլ։ Էրիկմարդիկ ալ բարձրահասակ են, բարեկազմ ու վայելուչ։ Տղաքները... Օ՜հ ատաբազարցի և իզմիտցի փողոցի պզտիկ տղաքները. կարելի չէ երևակայել ավելի անառակ, ավելի չարաճճի, ավելի արթուն ու խելացի սերունդ մը։ Պզտիկները հին նավաստիներու պես կծխեն ու կհայհոյեն սրամիտ խոսքերով, աշխույժ կատակներով։ Այս լաճերը քար կհանեն, բարեկա՜մ, Մալթա կղզիին պզտիկներուն, որք ատեն մը իրենց տեսակին մեջ աննման ըլլալու ապահովությունը տված էին մեզ։

* * *

Տասը հազար հոգի կհաշվեն այս տարի Արմաշ եկող ուխտավորներու բազմությունը։

Տասը հազար հոգի, համեմատապես շատ սահմանափակ տեղի մը մեջ, հինգ-վեց օր շարունակ պիտի ուտեն, պիտի խմեն, պիտի քնանան, իրենց բնական պետքերը պիտի հոգան, պիտի լվացվին, պիտի քալեն, պիտի նստին։ Ու այն ատեն գաղափար մը կունենաք այն աղտոտության վրա, որ կտիրե չորս կողմ ու այն խժլդուքին վրա, որ անընդհատ կտևե, գիշերեն մինչև արշալույս և արշալույսեն մինչև գիշեր։

Ուխտավորներուն մեծամասնությունը Իզմիտի գյուղերեն եկած է, գլխավորապես Ատաբազարեն, որուն բնակիչներն անմիջապես կարելի է ճանչնալ իրենց նեղ ու երկար ֆեսերեն, ու հետո Պարտիզակեն, Մեծ-Նոր-Գյուղեն, Ջենգիլերեն, Բրուսայի գյուղերեն և Պոլսեն, Թեքիրդաղեն, Մալկարայեն, Ջորլուեն և այլն։ Թուրքիո ամեն քաղաք իր մեկ ներկայացուցիչն ունի գոնե։

Վանական վարչությունը, այս ամբողջ ժողովուրդը տեղավորելու համար, բնականաբար անկատար միջոցներ ունի միայն իր

ձեռքը։ Նորաշեն թաղը, որ եռահարկ մեծ շենք մըն է, Վանքին ձախակողմին ընդարձակ թևը, նորաշեն դպրանոցը, զոր հարկ եղած էր ուխտավորներուն հատկացնել, և շերմատունը չեն բավեր։ Արմաշի գյուղին գրեթե բոլոր տունները լեցված են, և ասոր հետ մեկտեղ ընտանիքներ կան, որք ստիպված են գիշերը բաց օդին անցընել վրաններու տակ։

Վանքի ձախակողմի թևին երկար ու ընդարձակ ճեմելիքը, որուն վրա բացվող սենյակները հատկացված են դյուրակեցիկ ընտանիքներու, վաչկատուն ցեղերու կայքի մը կնմանի։ Գիշերը այդ ճեմելիքը, անզոր լույսերու կեսստվերին մեջ թաղված, անհավատալի կենդանությամբ կոգևորվի։ Խումբ-խումբ նստած, փսիաթներու վրա, իրենց կերակուրը կպատրաստեն կիները, ժրաջան աշխատելով, այրերը օդի խմելով ու պոռալով կանչելով։ Պառավ մը վերմակի մը տակ կծկտած, կդողա, մինչդեռ նորածին մը, որ մեկ պատեն մյուսը ձգված օրորոցի մը մեջ կատանի, իր ցավագին պզտիկ ճիչերը կխառնե ընդհանուր աղմուկին։ Ու երբ գիշերը հառաջանա, այդ միևնույն խսիրին վրա, աղտոտ վերմակներու տակ, քովեքով պիտի պառկին մանուկն ու պառավը, երիտասարդներն ու մանկամարդ կիները։

Երբ իրիկուն կըլլա, վանքին ներսի հրապարակը խարույկներով կցանցվի։ Կիներ իրենց իրիկվա ճաշը կպատրաստեն պտուկներու մեջ։ Անոնցմե մեկուն կմոտենամ ու կհարցնեմ.

— Ի՞նչ կեփես, խաթո՛ն։

— Ոսպ կեփեմ, հաճի աղա,— կպատասխանե։

— Պա՞հք ես։

— Մեղա՜ տեր, պահքն ավրել կըլլա՞։

Ուրիշ կին մը խարույկին վրա դրած է սան մը ուսկից անուշ հոտ մը կուգա։

— Ի՞նչ է եփածդ։

— Խազ մը։

— Վա՜յ, պահք չե՞ք։

— Այս իրիկվան համար չէ, աղա (օրն ուրբաթ էր), կիրակի օրը պիտի ուտենք։ Մենք հայ քրիստոնյա ենք, մեր պահքը կպահենք։

Ա՛լ ուրիշներուն չեմ հարցներ։

Եկեղեցին, գիշերը, օթևան մը դարձած է։ Խսիրներուն վրա

պառկած կքնանան հարյուրավոր այրեր ու կիներ, ու տաքը, հոտերը, փոշին՝ անտանելի մթնոլորտ մը կկազմեն այնտեղ։

Բազմության զբոսանքին այս զանազան եղանակներուն մեջ, ուր, ինչպես ըսի, օդին ու թմբուկը իրենց անկապտելի գերազանցությունը կպահեն, ինձի համար ամենեն նոր և ուշագրավ բանն է այն նվագահանդեսը, զոր ատաբազարցի կիներ կուտան գիշերը, վանքին ներսի հրապարակին մեջ։ Խումբ մը կիներ, որոց մեջ մանկամարդները կխառնվին պառավներուն, աղու ներդաշնակ ձայնով մը կերգեն... եկեղեցական շարականներ, այնպիսի կարգավորությամբ, որ մեր ամենեն ծանոթ «դպրաց դասերուն» նախանձը պիտի շարժեր։ Ու մինչ թմբուկը դուրսը կորոտա, մինչև լաթերնան մինչև հոս կղրկե իր զառածած ու եղծված երաժշտությունը, մինչև գինովներուն ձայնարկությունները՝ ջախջախ համերգության մը պես՝ օդը կպատռեն, հոս, այդ կիներուն բարակ և անուշ ձայնը եկեղեցական երգեցողության թրթռուն ելևէջները կոլորտկե։ Ինձի կհայտնեն, թե Ատաբազարի բոլոր կիները, փոխանակ իրենց տուներուն մեջ ուրիշ երգեր երգելու, ժամերգությունը կեղանակեն։ Հետաքրքիրներու շրջանակ մը կազմված է իրենց չորս դին, ու կիները կերգեն միշտ, աստեղազարդ երկնքին տակ, ծառերուն սոսավյունն իրենց ձայնին ընկերանալով։ Քրիստոնեության առաջին դարերու վերկենցաղումն է կարծես այդ փառաբանությունը այդ արձակ օդին, ու այդ աղոթքներուն մեջ սեղմված աղերսներն ու պաղատագին կոչերն՝ ինձի այնպես կուգա, որ ավելի շուտ, ավելի շիտակ պիտի հասնին այն տեղն, ուր կուղղվին։

Թ.—ԳԵՂԻ ՏԱՐԹԱՆՔՆԵՐ

Իրիկվան խաղաղությունը կիջնե, լայն ու դանդաղ, Արմաշի բլուրներուն ու անտառներուն վրա։ Արևը քաշված է լեռներուն ետին, ու ստվերները հովիտներեն կբարձրանան՝ աստիճանաբար փոխելով արտերուն, բացատաններուն, ծառերուն գույնը. քումայթ ցորենաստանները մութ խարտիշություններ կհագնին, և ծառերը ավելի թավ կանաչությամբ մը կթավշանան։ Բլուրե մը նախիր մը կիջնե վար, պզտիկ ու բոբիկ հոտաղներու հետ, իր մութ գիծերը այլանդակորեն քակելով ու վերստին կազմելով։ Անոնց զանգակներուն ձայնը միայն կլսվի ընդհանուր լռության մեջ, տատանոտ

հնչյուններով, որոնք պղնձին երեսներուն վրա գնդակիկներուն տարուբերումով կկետկետվին։

Վանքին այգիին քովիկը, խոշոր ծառի մը տակ նստած ենք։ Մեզի կմոտենա գյուղացի պատանի մը, ու առաջին խոսքերեն՝ մտերմության պես բան մը, անկապ ու անբոնազբոս, կհաստատվի իրեն ու մեր միջև։

Ինքը Արմաշեն չէ. Օրթաքյոյեն, Զենգիլերի ու Մեծ-Նոր-Գյուղի միջև գտնվող Օրթաքյոյեն է, ու վանքին այգիին պահպանությանը համար եկած է։ Տասնյոթը տարու կտրիճ մըն է, թուխ գույնով, սև ու մտացի աչքերով, շատ խելացի ու կորովի դիմագծությամբ մը։ Հագված է գավառին սովորական տարազը, ուռուցիկ շալվար մը մինչև ծունկերը, սեղմ զանգապաններ, որոնք ջղուտ ազդրերը կկաղապարեն, ու կարճ թիկնոցակ՝ թևերուն ու թիկունքին վրա մետաքսով բանված։ Քովեն կախված է խոշոր դաշույն մը։

Հարցումներ կուղղենք իրեն, ու ինք կպատասխանե, նույնիսկ կանխելով մեր հետաքրքրությունը, որ անհարկի չերևար իրեն։

— Ինչո՞ւ մինչև Օրթաքյոյեն բերել տվեր են քեզի այգիին համար։

— Է՜հ, ի՞նչ ընեն. աս Արմաշի գեղացիները մա՞րդ են. այգի մը պահել անգամ չեն գիտեր։ Այգիին խերը անիծեր վար ձգեր են. երեք տարի աշխատելու է, որ շենքի-շնորհքի գա։ Մեր գեղը գալու եք տեսնելու համար, որ այգին ի՞նչպես կըլլա։

Ու, ծայրագույն արհամարհանքով մը.

— Մարդ չեն աս գեղացիները։ Ինչի՞ս գեղն է, որ էրիկմարդուն ալ, կնամարդուն ալ շալվարը մեկ է. մա՞րդ է մի, կնի՞կ է մի, չես կրնար հասկնալ։ Մեր գեղին կնիկները տեսնելու է, ի՞նչ շնորհքով կհագվին, ի՞նչ աղեկ խումաշներե շալվարներ ունին։

«Այս տեղի կնիկներն ալ կնիկ չեն, կշարունակե. չափան առած՝ նայիս արտերը կերթան հող կփորեն, կհերկեն, կդատին։ Մեր գեղին մեջ կնիկ մը արտը երթա աշխատի՞. իրա՜վ որ կմեռցնեն ան իր տեղը։ Մեր կնիկները տանը մեջ կաշխատին. դուրսի գործերը իրենց չենք ձգեր։ Մարդ չեն աս գեղացիները»։

— Մինա՞կ ես աստեղը։

— Չէ՜,— կըսե,— ինձմե մեծ ընկեր մը ունիմ, ան է, որ այգիին վրա կաշխատի։ Ան հոս չէ հիմակ, գեղը գացած է։ Հոն կընակի։ Ես գիշերները հոս կպառկիմ։

Ու ցույց կուտա չորս գերանի վրա շարված տախտակներով ձեւացած տնակ մը։

— Դուն կարգվա՞ծ ես։

— Չէ, նշանված ալ չեմ, աղբարներուս կարգին կսպասեմ։ Ընկերս կարգված է։ Արմաշեն աղջիկ փախցնողը ան էր, չե՞ք գիտեր,— կրսե հպարտությամբ։

— Չէ՛, չիմացանք։

— Հապա՛, տարի մը եղավ։ Այգիին համար հոս կանչված ատենը, տուն մը կբնակեր։ Տանը աղջկանը կհավնի, աղջիկն ալ իրեն, իրար կսիրեն։ Աղջկանը հայրը, մայրը դեմ կեցան, աղջիկներուն համար տաճա մենծ տեղ կփնտրեն եղեր։ Անոնք ալ խոսք մեկ կընեն։ Իրիկուն մը, ընկերս Օրթաքյոյեն երկու կտրիճ բերել տված էր, երկուքն ալ ձիու վրա, սա վերը կեցած։ Մութը կոխելուն, աղջիկը եկավ. հետը երկու պզտիկ աղջիկ ալ կային. անոնց հետ պտտելու համար դուրս ելած էր։ Մեյ մըն ալ անոնք ձգեց, վազելով ձիավորներուն քովը գնաց, ընկերս ալ հոն էր ու թռան գացին։ Շիտակ մեր գեղը հասան, բարեկամները, ընկերները դավուլներով, զուռնաներով առջևին ելան. ա՛լ հարկ հարկինք։

— Ինչո՞ւ։

— Էյ պատիվ է ատանկ բան ընելը. աղջիկ փախցնելը կտրիճություն չէ՞։ Գեղեն ելան Քարցի գացին. անտեղի տերտերը աղեկ մարդ մըն է, պսակեր է զանոնք։

— Ապրի՜ Քարցիի տերտերը։

— Մեկ քանի շաբաթ ետքը ելան նորեն Արմաշ եկան։ Եղածը եղած էր։

— Աղջիկը աղվո՞ր է։

— Հա՛, շատ խաս աղջիկ է։ Վաղն առտու որ գալու ըլլա, ձեզ կցուցնեմ։

* * *

Հետեւյալ առտուն չկրցինք երթալ՝ տեսնելու համար նորատի հարսը, բայց Արմաշեն դարձին, կառքին մեջ, նորեն առիթ ունեցանք իր վրա խոսելու։ Անտառին մեջ, հայ երիտասարդ մը, որ ընկերոջը հետ ձիու վրա խոզակ կիջեցներ Իզմիտ, ճամփեն հոգնած՝ խնդրեց մեր կառքին մեկ անկյունը նստիլ, ու ընդունեցինք։ Խոսքե խոսք, այդ առեւանգության դեպքին հասանք։

— Էրիկ կնիկ հիմա երջանիկ են,— ըսավ երիտասարդը։— Աղջկանը հայրը, մայրը հաշտվիլ կուզեն, բայց անոնք շատ գոհ են իրենց եղած տեղը։

— Ձեր գեղը ասանկ դեպքեր չե՞ն պատահիր։

— Չէ՛,— ըսավ ան տրտմությամբ,— մեր գեղը աղջիկ փախցընել չի կա, մեր մեծերեն ատանկ բան տեսած չենք։ Մերինները կմեռնին։

— Ինչպե՞ս թե կմեռնին։

— Ինչպե՞ս պիտի մեռնին. սրտերնին կդնեն կմեռնին։ Ամեն մեկ քանի տարվան մեջ ասանկ չորս հոգի մեռան։ Աղջիկ մը, մանչ մը իրար ուզելու որ ըլլան և հայրերնին թող չի տա, ձայն ձուն չեն հաներ. բայց քիչ մը ատեն, նայիս երկուքեն մեկը, աղջիկը կամ մանչը, սրտին ցավեն կհատնի, կմեռնի։

* * *

Այս երկու գյուղացիներուն պատմության մեջ՝ իրենց գյուղերուն ամբողջ նկարագիրը խտացած է։ Մեկ կողմեն արի, խիզախ, տիրական,— մյուս կողմեն թույլ, նկուն, վատորեն համակերպող։

Ամեն տեղ, վանքի մոտ ապրող գյուղացիները այսպես շարափոխված են, թե՛ մեր մեջ և թե՛ Եվրոպա։ Մինչդեռ մյուս գյուղացիները բնության հետ ամենօրյա ոգորման մեջ կփնտրեն իրենց հացը, անոր հաղթահարելով կվաստկին իրենց ապրուստը,— այդ ոգորման և հաղթանակի մեջ իրենց ֆիզիկական ու բարոյական ուժը զորանալով,— անդին վանքի գյուղացիները՝ ամեն բան վանքեն և ուխտավորներեն սպասելով, բնութենեն ձեռք քաշած, մեղկացած ու այլասերված մարդիկ են։

Ժողովրդական հայ խոսք մը կա, որ կրսե. «Հինգ բան կա, որ աստծո անեծքը կկրեն. Երուսաղեմի թերջիման, էջմիածնի դռնապան, վանքի գեղական, էշերու քարան, կիներու դիվան»։

Ուրիշ գյուղացի մըն էր, որ ասիկա ըսավ ինձի կառախումբին մեջ։

Ժ.—ՄԵԿՆՈՒՄԸ

Խաչին երկուշաբթին արդեն ուխտավորները կսկսին մեկնիլ Արմաշեն։ Սայլերը եկած լեցված են վանքին դուրսի հրապարակը,

ու գոմեշները, գետինը պառկած, Թրեքի ահագին կույտերու նմանությունը կուտան։

Երեքշաբթի սակայն ա՛լ Արմաշը կպարպվի։

Առջի իրիկվընե ամեն մարդ մեկնելու պատրաստությամբ կըզբաղի։ Վերջին անգամ մը վանքը և շրջակաները պտտելու համար դուրս կելլեմ։ Բանալիրը, վերջին ճգով մը, կկրկնապատկե իր շինծու կենդանությունը և արվեստակյալ ոգևորությունը։ Թմբուկը կթնդա կատաղաբար, զուռնաները ջլախտավոր խաղեր կարձակեն, ու լաթերնաները կհամառին իրենց հոգնած ու մաշված հանկերգները տարտղնելու չորս կողմ։

Վանահայր սրբազանին կերթամ հրաժեշտ առնելու։ Հաշվեհարդարությունը սկսած է այնտեղ, և ապրանքներուն ցուցակագրությունը կպատրաստվի։ Հինգ-վեց հոգի գործի գլուխ են։ Մեկը ոսկիները կհամրե, խնամքով իրարմե զատելով օսմանյաններն ու անգլիականները. ուրիշ մը մեճիտիեները, ուրիշ մը քառորդ և մանրուքները, մինչ անդին մեկ-երկու հոգի զբաղած են նվիրված իրեղեններուն՝ գուլպա, թաշկինակ, անձեռոց, սրբիչ, խորանի ծածկոցներ, սփռիչներ և այլն, ցանկը պատրաստելու։ Դրամները, ծրարներու մեջ դրվելով, պիտի կնքվին և Դպրեվանքին խնամակալության պիտի ղրկվին, որ հետո Դպրեվանքին ծախքերուն համար մեկիկ-մեկիկ նորեն Արմաշ պիտի ղրկե այդ ծրարները։ Ինչ դրական մարդիկ, այդ խնամակալության անդամները։

Դրամատան մը ամբողջ գործունեությունը կա հիմա այդ սենեկին մեջ։ Ոսկիներուն և մեճիտիեներուն հնչյունը, կանոնավոր և համաչափ անկումներով շրը՛խ, շրը՛խ, շրը՛խ, բանքայի մը ստորնահարկին գաղափարը կուտա քեզ։ Մանր դրամները համրելը ավելի դժվար է, ամենքն ալ յուղոտ, աղտոտ մոմի կաթկթունքներով պատած։

Ուրիշները կկշռեն աստվածածնի պատկերին առջև կախված արծաթյա առարկաները, արծաթ դրամները և կգնահատեն նվիրված զանազան գոհարեղեններու արժեքը։ Մյուս կողմեն, կարձանագրվի նվիրված ճերմակեղեններուն թիվը— վաթսունևչորս զույգ գուլպա, 13 հատ ճերմակ թաշկինա՛կ, 8 հատ մետաքսե թաշկինա՛կ և այլն։

Հանկարծ ուրախության ձայն մը կբարձրանա. վեց հարյուր ոսկի՛։ Այս տարվան ամբողջ հատույթը վեց հարյուր ոսկի՛ եղած

է։ Քա՜ռք տյառն։ Ամենուն դեմքը կփայլի, կվառի։ «Աղեկ տարիներեն» է այս տարին ալ։

Ու, չեմ գիտեր ինչո՛ւ, դուրս ելած ատենս, սիրտս սեղմված է։ Հինգ-վեց օրվան աղոթքներուն, պաղատանքներուն, հավատքի հոգեցունց արտահայտությանց, խոլ խանդավառությանց, միստիկական հափշտակությանց արդյունքին այդ մաղված, թորված էությունը հիմա պզտիկ քսակի մը մեջ պիտի սեղմվի, պիտի ամփոփվի ու անոր վրայեն պիտի չափեն բոլոր եռանդները, բոլոր արցունքները, բոլոր հառաչանքները, ա՛լ կորուսած իրենց անհուն մեծավայելչությունն ու գերագույն վեհությունը, որ, եկեղեցիին մեջ, հուզմամբ կուռեցներ սիրտս։

***

Եկեղեցիին դռանը առջև կեցող մուրացկաններու կողմե պատգամավորություն մը եկած է վանահոր ներկայանալու և գանգատվելու, թե այն իրիկունը վանքին խոհանոցեն կերակուր չէ տրված իրենց։ Եկեղեցիին առջև, այդ մուրացկանները կույտ մը կկազմեն, «կաղաց, կուրաց, գոսացելոց». շատ նուրբ հոգեբաններ, որք այսպես, տոնավաճառե տոնավաճառ պտտող փերեզակներու պես, կհետևին բարեպաշտներուն ամեն տեղ, այսօր Արմաշ, վաղը Երուսաղեմ, մյուս օր գուցե Մուշ։

Մեկ քանի հոգիներ՝ ուրիշ գանգատ մը ունին վանահոր ներկայացնելիք։ Մատաղի համար ոչխար բերած են վանքին. այդ ոչխարները, հիսունի չափ, պզտիկ հոտ մը կազմած են, որ վանքի դուրսի պարտեզին մեջ կարածի։ Նվիրատուները կպահանջեն, որ իրենց ոչխարները իրենց աչքին դիմաց կտրվին և աղքատներու բաժնվին։ Զարմանալի է ժողովրդին այդ հավատքը, որ դրական շոշափելի օրինակներու վրա միայն կրնա գտնել իր ներքին հոգեկան դրդումին գոհացումը։

***

Երեքշաբթի առտու երբոր ճամփա ելլել կպատրաստվիմ, չորս օրվան վանական կյանքը, զոր անցուցած եմ, վրաս այնպիսի տպավորություն մը թողած է, որ ինձի այնպես կուգա, թե տարիներով բնակած մեկ տեղես պիտի բաժնվիմ։ Այնքան իրավ է, որ

ժամանակը՝ գործ չունի զգացումներու հետ։ Այսինչ անձը, այնինչ տեսարանը, այնինչ միջավայրը, որոց հետ արագանցուկ հաղորդակցության մը մեջ գտնված ես, իրենց բաժանումովը — ու թերևս ճիշտ այդ բաժանման պատճառովն իսկ սրտիդ մեջ այնպիսի վշտեր կթողուն, որք վերլուծության չեն դիմանար թերևս, այլ կան ու կմնան, անհանգիստ ընելով ու խռովելով զքեզ ետքեն։ Կմտածես, թե այն անձը երջանկության մեծագույն բաժինը պիտի կրնա տալ քեզ թերևս, թե այն վայրը անշուշտ՝ կյանքի անդորրությունը պիտի պարգևեր քեզ, ու դուն կթողուս կերթաս, չկրնալով կանգ առնել, արդեն ընտրած ճամփուդ մեջ շատ հառաջացած, երբ ալ ետ դառնալն անկարելի է, ըղձական նայվածք մը միայն նետելով ետիդ։

Կխոստովանիմ, թե Արմաշի վանքին իմ վրաս թողած այս տպավորությունը կպարտիմ. տ. Եղիշե վարդապետ Դուրյանի, որ իր բարոյական մեծությամբը կլեցնե այդ վանքը։ Ա՜հ, ճշմարիտ եկեղեցականը, նոր օրերու սուրբ մը, որուն վրա ավելցած է հայոց մեծագույն գիտնականներեն մին։ Իր խուցը ճշմարիտ վանականի խուց մըն է, ո՛չ անոնցմե, ուր անձնդյուր ծուլությունը և որովայնապարար հանգստությունը կտիրեն, այլ ուսումնասիրության, անխոնջ աշխատության, հարատև զարգացման վայր մը, ուր պատկառանքով կմտնես և երկյուղածությամբ դուրս կելլես։

Հրաժեշտ կառնեմ իրմե ալ, քաշվելով հայտնելե զգացած իրական հուզումս։ Մնաք բարով մըն ալ եղբայր Պետրոսին ու եղբայր Ներսեսին, վանքի ճշմարիտ եղբայրներ, որք Դպրանոցին աշակերտներուն և միաբաններուն հոգերովը կզբաղին, պարկեշտ, աշխատող, ժրաջան մարդիկ, ու դուրս կելլեմ։

Հետզհետե ճամփա կելլեն սայլերը ու արդեն մեկնողներուն անշարժ շարքը հազիվ կորոշվի դիմացի բլուրին վրա։ Հինգ հարյուր սայլի քարավան մը կկազմվի։

Մեկնելե առաջ, վերջին անգամ մը եկեղեցին կերթամ։

Ուխտավորները վերջին անգամ մը կուգան ոտքի վրա մոմ մը վառել ու հապճեպով աղոթք մը կատարել։ Անդին, աստվածածնի պատկերին առջև, տախտակամածին վրա կգտնվին դեռ մեկ քանի հիվանդներ ու բարեպաշտներ, որք կհամառին շնորհ մը, աստվածային հայտնություն մը ընդունելու։ Ջուզելով մեկնիլ անկից առանց իրենց ցավերուն դարմանը գտած ըլլալու, իրենց աղոթքըն հիմա ավելի բարձրաձայն ուղղելով դեպի վեր, բողոքի մը, պահանջումի մը պես։ Ու այդ հոգևորապես անժառանգներն, ընկերները բոլոր, որոց բաժին չէ ինկած ընդհանուր շնորհաբաշխութենեն, կպայքարին, կոգորին իրենք իրենց հետ, հառաչանքներով ու հեծկլտուքներով։

Ու երբ քիչ մը հետո վանքին պարսպեն դուրս կելլեմ, դուրսի հրապարակին տաղավարները վար առնված են, գինետունները գոցված, նվագարանները մեկնած, աղմուկն և ոգևորությունը անհայտացած։ Արշալույսին խաղաղությունը կտիրե ամեն կողմ, և ուխտավորներուն դեմքին վրա ալ կտիրե այդ խաղաղությունը։ Ամենքն ալ, տարվա մը համար, իրենց հաշիվը մաքրած են իրենց խղճին հետ։ Արմաշը, հեռվեն, ինձի կթվի հիմա սրբազան հալոց մը, ուր բոլոր այդ մարդոց հոգեկան աղտոտությունները, պզտիկությունները, գծծությունները զտված ու մաքրված են քիչ մը ատենվան համար գոնե, գուցե մեկ քանի ժամվան համար միայն։ Դեռ սայլերեն վար չիջած, կեղծիքն ու չարությունը, երկու ամենեն զզվելի մոլությունները, պիտի գան իրենց առջի տեղը բռնել այդ մարդերուն սրտին մեջ։ Ի՜նչ փույթ։ Լավ է, որ մարդս երբեմն, ի՜նչ միջոցով որ ըլլա, կանգ առնե պահ մը, մտիկ ընելու ձայնին, որ իր ներսիդիեն կուգա, և որ, անցնելեն իսկ հետո, պահ մը թրթռումը պիտի թողու գոնե, աղնիվ բյուրեղի պես։

1892

ԶՐԻ

(Պարզ պատմություն)

Արթուն ու մտացի դեմքով, նիհար, սևուլիկ պզտիկ տղա մըն էր, որ շատ իրիկուններ մեր տունը կուգար՝ պզտիկ եղբորս հետ հաջորդ օրվան դասերը պատրաստելու, նույն վարժարանին նույն կարգին աշակերտ երկուքն ալ։

Իր ծնողքը ծանոթ էր ինձի հարևանցի կերպով։ Երբե՞ն ի վեր։ Ո՞վ գիտե։ Միևնույն գյուղի մեջ ծնած ու մեծցած անձերու բնական մտերմությամբ, իր հայրը, ամեն անգամ որ փողոցը տեսներ զիս, բարև կուտար, ու մայրը՝ երբոր իրենց տանը առջևեն անցնեի՝ պատուհանեն մեր տնեցիներու որպիսությունը կհարցներ միշտ։ Ո՜չ իրենց տունը գացած էի,— մոխրագույն փայտաշեն տուն մը,—

և ո՛չ ալ իրենք մեր տունը եկած էին։ Բայց չէ՞ մի որ «գեղին տղաքներեն» էի։ Ու նահապետական հին բարքերու մնացորդ մը, որ նախնի հավաքական հասարակությանց մեկ աղոտ շարունակությունն է անշուշտ, ամբողջ գյուղը նկատելով մեկ ընտանիք մը և զիս անոր անդամներեն մին, այդ մարդն ու այդ կինը վարժվեր էին իրենցմե մեկը նկատելու զիս։ Ու վստահ եմ, թե եթե անծանոթ մը հարցներ այդ կնոջը, թե ուսկի՞ց կճանչնար զիս, վստահորեն պիտի պատասխաներ. «Պզտիկուց կճանչնամ. ձեռքս մեծցեր է»։

Մեծնալուս հետ, իրենց պարզուկ մտերմությունն ինձի հետ՝ քիչ-քիչ պակսեր էր։ Խեղճ կինը, պատուհանեն, ա՛լ կքաշվեր հարցնելու մեր տնեցիներուն որպիսությունը, և մարդն ալ, շոգենավին մեջ կամ դուրսը ինձի հանդիպած ատեն, ա՛լ առջի հայրախնամ ու հոգածու ձևերը չուներ՝ զիս բարևելու ժամանակ։

Վերջերս, շա՜տ ինկած կտեսնեի խեղճ մարդը։ Գլուխը կախ էր միշտ, և օրվան ապրուստի մտմտուքը, որ հիմա մեր խանութպաններուն դեմքը կշարչրկե և տարիքեն առաջ կփոթթե անոնց դիմագծերը, կքած էր անոր հասակը։ Ու իր բարևին մեջ խուսափողական բան մը կար, նեղության մեջ գտնվող բոլոր այն անձերուն շվարումն ու անհանգստությունն, որք պիտի ուզեին կարելի եղածին չափ քիչ տեսնվիլ, որք պատերուն տակեն կքալեն միշտ, ու գլուխնին միշտ անդին կդարձնեն, վախնալով գուցե, որ իրեն դեմքին վրա չկարդացվին իրենց սիրտը ճանկոտող հոգերը, ու թերևս առնելիքավորներե փախչելու երկարատև վարժությամբ մը։

* * *

Անոր տղան էր, որ իրիկունները շատ հեզ մեր տունը կուգար՝ պզտիկ եղբորս հետ հաջորդ օրվան դասերը պատրաստելու։

Շատ քիչ տեսած եմ այդչափ շնորհքով պզտիկ տղա մը։ Միշտ մաքուր ու կոկիկ հագված էր. հագուստները հին էին, բայց պատրուվածք մը կամ արատ մը չի կար վրան. իր խոհուն դեմքին վրա տարիքեն առաջ եկած լրջությունը իր նուրբ ու կանոնավոր դիմագծերուն կուտար պզտիկ զորավոր կամքի արտահայտություն մը։ Եվ ի՜նչ քաղաքավար, ի՜նչ նուրբ կերպով բարեկիրթ, առանց մեկե մը գաս առած ըլլալու, բոլորովին տարբեր այն տղաքներե, որք իրենց մեծերեն սորվեր են նստելու և ելլելու մեկ քանի կտորբրդուճ կանոններ, որոց տակ չեն կրնար պարտկել իրենց կոշտ ու

գռեհիկ զգացումները։ Թշվառության ու զրկանքի մեծ դպրոցին մեջ իր աչքերը բացած, կանուխեն հասկնալով, թե ընկերությունը իրեն իրավունք չէր տված ուրիշներու պես ազատորեն դուրս տալու իր ներսիդիեն եկած մանկական դրդումները, ինքն իր վրա ամփոփված տղեկ մըն էր, կարելի եղածին չափ քիչ խոսելով ու քիչ շարժելով։ Մանրիկ սև աչքերուն մեջ փայլող կրակը միայն ցույց կուտար, թե մարմրած ու անգույն տղա մը չէր այդ պզտիկը, և թուխ դեմքը, բարակ շրթունքը և սուր կզակը կհայտնեին, թե կամքի ու որոշողության տեր հոգի մը ուներ արդեն։

Ժամանակ մը ի վեր ա՛լ չէր գար մեզի։ Մեր գյուղին վարժարանին հոգաբարձությունը, ելմտացույցի նեղության պատճառով, հարկ դատեր էր վարժարանին բարձրագույն կարգը ջնջել և տղաքները ցրվել էին։ Եղբայրս հիմա մասնավոր բարձրագույն վարժարան մը կերթար։ Օր մը լուր հարցուցի իրեն իր ընկերոջ վրա։

— Ա՜խ, եղբայր, շա՜տ կմեղքանամ կոր զինքը,— ըսավ։— Անցյալ օր տեսա, որ մինակը կուլար կոր. հայրը կարողություն չունի եղեր զինքը մեր վարժարանը դնելու։ Ի՜նչ ալ աղեկ էր դասերուն մեջ, միշտ առաջին կելլեր. մեղք եղավ իրեն։

Խե՜ղճ պզտիկ։

Շաբաթ մը ետքը իմացա, որ կրցեր էր ընդունվիլ ազգային հանրային վարժարանի մը մեջ։ Ուրախ եղա։ Հայրը, ճար ճարակ ընելով, կհոգար անոր առտվան և իրիկվան շոգենավի ծախքը, ցերեկվան համար պզտիկը իրեն հետ կտաներ՝ խնամքով ծրարված կապոցի մը մեջ՝ քիչ մը հաց և պանիր կամ ձիթապտուղ, զոր ցերեկվան հանգստին աճապարանքով կուլ կուտար, պատի մը տակ քաշված։

Երբեմն իրիկունները ուշ ատեն կհանդիպեի իրեն շոգենավին գլուխը։ Գրքերու և տետրակներու կույտ մը ուներ միշտ թևին տակ։ Հետաքրքրությամբ տեղեկություններ կհարցնեի իր վրա։ Այո՛, գոհ էր նոր վարժարանեն, կամաց-կամաց սկսած էր վարժվիլ։

— Աշխատե՛,— կըսեի միշտ իրեն։

— Գիշեր ցերեկ կաշխատիմ,— կպատասխաներ։

Ու իր աչքերը, իր խելացի սևուկ աչքերը կվառեին։ Ըսել չէր ուզեր անշուշտ, բայց չէ՞ մի, որ հայրը և մայրը իրեն կսպասեին։

***

Իրիկուն մը, մեր տունը.

— Գիտե՞ս,— ըսավ պզտիկ եղբայրս,— ան տղան վարժարանեն ելեր է։

Գիտեր, որ կհամակրեի այն պզտիկին, և իր վրա միշտ տեղեկություն կուտար ինձի։

— Վա՞յ,— հարցուցի,— ինչո՞ւ համար։

Իր պատմությունը կսկծալի էր, սրտի դպչող. պատմություն մը շատ տխուր, ընկերական անարդարության դեմ սրտմտեցնող, զայրացնող, ըմբոստացնող։

Իր գացած հանրային բարձրագույն վարժարանին մեջ, ձրի ընդունված էր տղեկը։ Իր դասընկերները, որք իրենք գիտնալու չէին այդ պարագան, որևէ կերպով մը հասկցեր էին իրողությունը և իրենց մանկական անգիտակից չարությամբն օր մը սոսկալի նախատինքի մը պես երեսին նետեր էին այդ «ձրի» բառը. կնախանձեին այդ պզտիկեն, որ իրենց խաղերուն չէր մասնակցեր, որ տչքը իր գրքերեն չէր բաժներ միշտ։ Տղան, լալու աստիճան հուզված, չէր պատասխանած։

Օր մը սակայն, երբոր իր դասը չէր կրցեր պատրաստել,— գուցե առջի գիշերը տանը մեջ մոմ մը ունեցած չէին վառելու համար,— դասատուն, որ այդ պաշտոնին գլուխը կգտնվեր՝ եկեղեցիին մեջ աղքատին ձգած տասնոցներուն արդյունքովը, տղուն երեսն ի վեր պոռացեր էր.

— Ամո՞թ է, այստեղ ձրի եկեր ես, պետք է, որ քեզ եղած շնորհքը արդարացնես։

Տղան ձայն ձուն չէր հաներ. իրիկունը, տունեն ներս մտած ատենը, լալով մորը գիրկը նետվեր էր, իր ամբողջ էությամբը դողդղալով ու հեծկլտալով, ցավագին հանկերգի մը պես մրմընջելով.

— Չէ՛, մեկ մըն ալ չեմ երթար հոն, միսերս ալ կտրեք, չեմ երթար։

Եվ պզտիկին ահռելի կսկիծին առջև, հայրն ու մայրը տեղի տվեր էին։

Մեկ քանի օր ետքը շոգենավին գլուխը տեսա զինքը. իր հորը քով կեցեր էր։

Զիս տեսնելուն պես կամաց մը քովս եկավ։

— Ան ի՞նչ է եղեր,— հարցուցի անտարբեր երևույթով մը,— վարժարանեն ելեր ես։ Ի՞նչ կընես կոր հիմա։

— Մեկ քանի օր է, հորս հետ շուկա կերթամ կոր։

— Եղբայրս պատմեց, թե ինչո՛ւ վարժարանեն ելեր ես,— ըսի վարանումով մը։

Իր փայլուն սև աչքերովը երեսս նայեցավ ուղղակի, և կամաց մը.

— Ի՞նչ ընեմ,— ըսավ,— ա՛լ չէի կրնար մնալ հոն։

Ավելի բան մը չկրցավ ըսել. դեմքը կարմրեցավ ու աչքերը լեցան։

Այդ միջոցին հայրը ետին դարձավ, տղան փնտրելու պես, և պզտիկը շուտով անոր քովը գնաց։ Հայրը զավակին տվավ պզտիկ տոպրակ մը և երկուքը մեկտեղ անհայտացան դեպի շոգենավը խուժող բազմության մեջ։

Խե՜ղճ պզտիկ. իր աչքին մեջ լեցված արցունքը, զոր իմ դիմացս զսպեր էր, հիմա անշուշտ ազատորեն կվազեր իր այտեն վար, բազմության մեջ աննշմարելի։

1892

ՓԱՓՈՒԿ ՄԱՐԴԻԿ

(Իրական պատմություն)

Խորդուբորդ ճամփեն կերթային երկուքն ալ, քով քովի, անտարբեր անձրևին, որ հեղեղի պես կտեղար և անուշադիր տղմուտ ջրակույտերուն, որոնց մեջ կկորսվեին իրենց տրեխները։

Շաբաթ մըն էր, որ մտքերնին դրեր էին երթալու տեսնելու իրենց հիվանդը, հիվանդանոցին մեջ, և հազիվ այդ կիրակին կրցեր էին քիչ մը ժամանակ գտնել։

Հիվանդը՝ մեկուն փոքր եղբայրն և մյուսին եղբորորդին էր։ Մեկ քանի ամիս էր, որ դրսեն եկեր էր, դեռ իրեն գործ մը չորոշած։ Իր եղբայրն ու հորեղբայրը Պոլսո մեկ մութ ու խոնավ խա-

նին անկյունը խահվեհիությունն կընեին և անոնց մոտ կանցըներ իր ժամանակը։ Պողոս էր անունը։ Քսանը նոր անցուցած էր։ Խոշոր ու առույգ տղա մըն էր, արձակ օդի ու արձակ դաշտերու վարժված, որ կխեղդվեր խանին այդ մութ ու խոնավ անկյունը, դեռ չկրնալով բանի մը գործածել իր հաղթ բազուկները։ Մեծ եղբայրը ու հորեղբայրը կգուրգուրային իրեն վրա. է՛հ, թող քիչ մը հանգիստ ըներ, քիչ մը պտտեր. քիչ վերջը պիտի գար սպառող հոգնությունը, որ դուլ ու դադարում չպիտի ունենար, և որ պիտի կքեր իր շիպշիտակ հասակը ու թոռմեցներ այտերուն կարմիրը։

Իրիկուն մը, Պողոս, ինքզինք անհանգիստ զգալով, անկողին մտեր էր։ Քիչ մը տաքություն ուներ։ Առտուն չէր կրցած գլուխը բարձեն վերցնել։ Տաքությունը շատցած էր։ Բան մը չէ, ըսին նախ, վաղը կանցնի։ Հետևյալ օրը երիտասարդը ավելի տկար էր. մարմինը կայրեր կարծես տաքության մեջ։ Եղբայրը գրեթե միշտ անոր քովն էր։ Իր խանութին վրայի սենյակը կպառկեին, ինք, եղբայրը ու հորեղբայրը, կամարակապ պզտիկ սենյակ մը, որ գետնահարկին հետ սանդուղով մը հաղորդակցության մեջ էր։ Խահվեհին օրը հարյուր հեղ կելլեր կիջներ այդ սանդուղեն, անտեսելով իր խահվեին պատրաստությունը, որ անուն հանած էր խանին մեջ ու խանեն դուրս, և հաճախորդներուն դժգոհությունը հրավիրելով իր վրա։

Հիվանդը երթալով ծանրացավ։ Եղբայրն ու հորեղբայրը շվարեր մնացեր էին։ Ի՞նչ ընեին։ Իրենց գիտցած բոլոր ընտանեկան դեղերը գործածեր էին ու հիվանդին վիճակը նույնն էր միշտ, հետզհետե ավելի ալ վատթարանալով։ Խեղճ տղան օրեօր կհալեր, ինքզինք կորսնցուցած, ցնորական զառանցանքներով, որոնց մեջ կարտասաներ միշտ իր նորատի կնոջն ու մեկ հատիկ զավկին անունները։

Հետո օր մը եկավ, որ հիվանդին տերերուն սիրտը վլվլուկն առավ։ Ձեռքեն ելլելու վրա էր խեղճ տղան։ Առջի կտրիճեն՝ հիմա չորացած մարմին մըն էր մնացեր, անընդհատ կրակի մը մեջ այրելով հատնելով օրեօր։ Պետք էր բան մը ընել հիվանդին համար։ Հիվանդանոցը ներկայացավ իրենց մտքին իբր գերագույն ապավենը, ուր օր մը, ճորով ճորով, հագվեցուցին հիվանդը, երկու թեեն մտան ու խանեն մինչև հիվանդանոց տարին։ Տժգանելի ճամփորդություն մը եղավ այս, հարյուր տեղ կանգ առնելով ճամփան, դադարներով, որ վերջնական հանդրվաններու, հուսկ հետին դադարներու բովանդակ կսկծանքն ունեին։ Երբ վերջապես հիվանդանոցին դռնեն ներս մտան, իրենց թվեցավ, թե անդառնալի բան մը տեղի կունենար հոն ու իրենց բաժանումը տաժանելի եղավ, արցունքներով ու հառաչանքներով։

***

Այն օրեն ի վեր չէին կրցած երթալ տեսնել իրենց Պողոսը։ Ինչպե՞ս ձգեին իրենց խանութը։ Կիրակի առտուն միայն կրցան իրենց փափագը կատարել, ու երկուքը մեկ հիվանդանոցին ճամփան բռնեցին։

— Ի՞նչ կուզեք,— հարցուց տարեց մարդը ծանր ձայնով մը նորեկներուն, որ իրենց տրեխները հանած դռան մոտ կեցած էին, գլուխնին ծռած, ձեռք ձեռքի վրա։

— Մեր Պողոսին համար եկանք հարցնելու,— ըսավ հիվանդին հորեղբայրը, որ ավելի համարձակություն ունենալ կթվեր։— Ի՞նչ եղավ։

— Հա՛, հասկցա, սա Պողոսին,— և բան մը մրմնջեց դեպի նստող երիտասարդը, որ իր սիրուն մորուքը կշոյեր սիրելաբար, գլուխը բարձր բռնած, ինքզինքեն կատարելապես գոհ մարդու մը ապուշ երանությամբ։

Երիտասարդը շտկվեցավ և խոսքը նորեկներուն ուղղելով, բարձրաձայն ու արհամարհոտ, շուտ շուտ.

— Դուք ամոթ չունի՞ք, բե, աս ինչ սերսեմ մարդիկներ եք։ Ձեզի բարերարություն ընելն ալ ճշմարիտ հանցանք է։ Ան վիճակին մեջ մարդ հիվանդանոց կբերե՞ն։ Դուք ե՞րբ մարդ պիտի ըլլաք։

Ու խոսքը տարեց մարդուն ուղղելով, կբացատրեր անոր հիվանդությունը, ֆրանսերեն բառերով, մինչ երկու մարդիկը, դռան մոտ կանգնած, բան մը չէին հասկնար այս բարկութենեն, միամտորեն նայելով երիտասարդին, որ կշարունակեր իր զայրացկոտ զրուցվածքը, աղնվական լայն շարժումով մը ձեռքը օդի մեջ բարձրացնելով ու իջեցնելով։

Ու նորեն դեպի երկու մարդիկը դառնալով.

— Ամչցե՛ք, բե, ամչցե՛ք, դուք մարդ ըլլալիք չունիք։ Ես արդեն եկած ատեն զրուցեցի. ասիկա գլուխ չի հաներ։

Երկու մարդերուն դեմքին արտահայտությունը քիչ-քիչ կփոխ-

վեր. կարծես կըմբոնեին, թե ծանր բան մը եղած էր։ Պողոսին եղբայրը, գլուխը վեր առնելով, հարցուց.

— Է՛յ հիմա ինչպե՞ս եղավ մեր Պողոսը, աղա՛։

Ալ դիմանալիք բան չէր ասիկա. երիտասարդը տեղեն ցատկեց և ձեռքը դեպի առաջ նետելով.

— Դահա չհասկցա՞ք, բե, վայ սերսեմ ճերիֆ։ Մեռա՛վ, բե։ Գալուն էրթեսի օրը մի, իշյուճճի օրը մի, մեռավ։ Ես զաքը տեսածիս պես ըսի, որ պիտի մեռնի։

* * *

Ձայն ձուն չհանեցին երկուքն ալ։ Կամացուկ մը հագան իրենց տրեխները, գետնեն բարև մը տվին և դուրս ելան գողի պես։

Ու ետ դարձան խորդուբորդ ճամփեն, ա՛լ ավելի ուժով սեղմած իրարու ձեռքեն։

1892

ՁԱՐԹՈՆՔ

(Նորավեպ)

Մնունդի խթման գիշերը՝ այն մեծապանծ գիշերներեն մին է, ուր Փարիզ ինքզինքը կմոռնա։ Ինքզինքը մոռնալու ըղձանքն, որ առաջ, հավատքի դարերու երկար հաջորդության մը մեջ բարեպաշտներուն գլուխները կխոնարհեցներ այդ գիշերը գոթական կաթողիկեներուն մռայլ կամարներուն տակ և անոնց աչքերը կվառեր գերերկրային հրաշափառ տեսիլներու շլացումովը, հիմա անոնց թոռներուն մեջ փոխված է նույնչափ զորավոր հրայրքի մը,— վայելքն իր ամենեն նյութական ու ամենեն հեշտական ձևերուն տակ, անձնատվություն այն ամեն հաճույքներուն, որք ուղեղը կգրգռեն ու ջիղերը կցնցեն. բանականության հրաժարում մը։

Սկզբնական նույն զգացումն է, որ տարբեր ձևի տակ կվարե մարդկությունը։ Պետք է, որ մարդս երբեմն-երբեմն ավելի սաստիկ զգա, ավելի ուժեղ վայելե։

Միևնույն ցողունը՝ տարբեր ծաղկով մը,—

կըսե բանաստեղծը։

Սրտի նույն պետքը՝ տարբեր գոհացումով։

«Ձարթոնք» (Réveillon) կանվանե այդ գիշերը Ֆրանսացին։ Ու իրավ զարթնումն է այս իր բնավորության ամենեն շենշող, ամենեն խայտախտիղ, ամենեն զվարթ ու բարեմիտ հատկությանց։ Գլխիկոր կնեռվի հաճույքին մեջ։ Անհաշիվ, անխնա վատնում մըն է այս, առանց հաշիվ բռնելու, առատաձեռն հարուստի մը պես, որ մսխելուն հաճույքով կշատանա։ Մեկ խորհուրդ մը ունի միայն. կարելի է եղածին չափ շատ զվարճանալ, ու այն մտածումը, թե միևնույն վայրկենին բյուրավորներ են, որ իրեն պես կխորհին ու կգործեն, կթեթևցնե իր սիրտը, երանությամբ կլեցնե զայն։ Օդը էլեկտրականությամբ մը գերհագեցած է կարծես, բոլոր աչքերուն մեջ վառող կրակին տաքությամբ և բոլոր սրտերուն աշխույժ տրոփման ավյունովը։

* * *

Սենյակեն ուշ ատեն, շատ ուշ, դուրս կելլեմ այն գիշերը պտույտ մը ընելու քաղքին մեջ։

Անձրևը կուգա ցերեկվընե ի վեր, անվերջ անդադրում, ու հիմա, քաղաքին ընդհանուր լուսավորության մեջ, մայթերուն տալով ցոլացիկ ապակիի վետվետումներ, և իր լուսանյութ հեղուկի հոսումովը, զվարթ ոգևորություն մը կսփռե։

Ամեն ոք դուրսն է։

Ամենքն ալ կերթան միևնույն բնազդեն վարված, համախումբ ուրախության այն խորին զգացումովը, որ անծանոթները իրար կմոտեցնե և անոնց միջև կհաստատե թաքուն մտերմության կապ մը։ Բազմություն կա բուլվարներուն վրա, փողոցներուն մեջ, թատրոններուն մեջ, սրճարաններուն մեջ, հոն ուր աչքը, ականջը, կոկորդը և որովայնը վայելք մը կրնան գտնել։

Մեծ սրճարաններուն և գիշերվան ճաշարաններուն առջև կառքերը կուգան իրարու ետևե կանգ առնել։ Շքեղ հագված կիներ, որոց մարմինն ամբողջ բույր մըն է և տեսքը՝ վայելք մը, վար կցատկեն թեթևոտն, ժպտուն, ծիծաղկոտ դեմքով ու կրակոտ աչքերով, երթալու դեպի մասնավոր խուցերն ու զվարթ խումբեր Ռեյոնը պիտի կատարեն։

Գարեջրատունները լեփ-լեցուն են։ Ամեն ոք կերթա նույն գիշերվան ավանդական «սուպ օ ֆռոմաժ»-ը կամ «սուպ ա լ՝ օնյոն»-ը խմելու։ Իսկ ուտելիքի խանութներուն առջև բազմությունը լեցված

է. ամենեն ճարտար խոհարարները իրենց տաղանդը թափած են խնամելու իրենց պատրաստությունները, և ցուցափեղկին ետին՝ տապակած հավերու, խորտիկներու ու համադամներու արվեստական շարքը անցորդներուն նայվածքը կգերե։

Կերգեն, կխնդան, բարձրաձայն կխոսին, քալելով խմորեղեններ ու կարկանդակներ կուտեն. շատեր իրենց թևին տակ խոշոր խոստումնալից ծրարներով՝ կվազեն դեպի հոն, ուր զվարթ ընկերներ ու ընկերուհիներ իրենց կսպասեն անշուշտ։

Բուն Ռևեյոնը՝ կեսգիշերեն ետքը զվարթ «սուպե» մը ընելն է, բայց մինչև այն վայրկյա՞նը ու անկե՞ ետքը...

Բազմության հետ կերթամ անհոգ, աննպատակ։ Չորս կողմի խժլգուկը կգինովցնե զիս՝ ապսենթի տխուր գինովությամբ մը։ Օ՜հ, բազմության մեջ մինակ ըլլալ, մենությանց ամենեն զարհուրելին, ամենեն ազդականը։ Բոլոր թաքուն թելերը, որոնք կխաղցնեն այդ մարդիկը, չկան ինձի համար. թատերաբեմին վրա ի՞նչ տարօրինակ ապավորություն մը պիտի ըներ խամաճիկն, որուն թելը կտրած է և անշարժ կմնա, մինչ իր քովինները կցատկրտեն ու կկուտրտվին։

Կողմնակի փողոց մը կնետվիմ ու կհառաջանամ։ Շան զ'Էլիզեի մոտ կգտնեմ ինքզինքս։ Կառքերը, շքեղ, մուշտակազգեստ կառապանին քով վայելչորեն հագված սպասյակներով, սրարշավ կերթան դեպի գեղեցիկ թաղերը, ապարանքներու խրոխտ դռներուն մեջ անհետանալու։ Գոց փեղկերուն ետին, ճաշակն ու դրամն ի՞նչ մոգական հրաշագործություններ կատարած են։ Վալսը հիմա, որուն մարմրող արձագանքները կհասնին պատուհանեն, ի՞նչ հեքեր կուտա պարուհիներուն կուրծքին գրգռանուշ իգականությանը, ու ի՞նչ հիացական անշարժություններ՝ անոնց ժպիտներուն։

***

Շատ քալած ըլլալու եմ, որովհետև կզգամ, որ ծունկերս ա՛լ կգժվարանան զիս տանելու։ Համարաքալ ետ կդառնամ դեպի Քառթիե-Լատեն, Էշոլիեի սրճարանը կմտնեմ ու անկյուն մը կքաշվիմ։

Կիներու ու երիտասարդներու խելխոլ բազմություն մը լեցված է այդ սրճարանը, որ Ֆլաման հին ճաշակով շինված է, կտորկտոր գունավոր ապակիներով, որոնց մեկուն վրա միջին դարու

ասպետ մը ներկայացված է զրահավոր, և մյուսին վրա դղեկուհի մը։ Ձեղունը ծխոտ գերաններու վրա հեցած է. կաղնեփայտե ամբարպիդ սեղաններ կամբողջացնեն սրճարանին հին կարգուսարքը, որ կհիշեցնե հոլանդացի վարպետներու նկարները։

Անընդհատ կմտնեն ու կելլեն։ Ահռելի ժխոր մը կա կոկորդալիր պոռչտուքներու, բարձրաձայն քահքահներու, աղմկալի խոսակցությանց։ Կիները սեղանե սեղան կպտտին, հոս գարեջուր մը խմելով, հոն «Բենեդիքթին» մը, անդին «Բավառուազ» մը։ Մութը պատած է չորս կողմ, և երշիկի, սոխի, կաղամբի բարակ հոտը օդին մեջ ծավալած են։

Սպասավորը խոշոր բաժակ մը գարեջուր դրած է առջիս։ Ոսկեգույն հեղուկին վրա՝ ճերմակ փրփուրին աստիճանական քայքայումը կդիտեմ, գզված նուրբ թիֆթիքի թելերու պես, զորս հովը կառնե կտանի կամաց-կամաց։

Կես ժամը անգամ մը բազմությունը կփոխվի. հիները կերթան ուրիշ գարեջրատուներու մեջ պարպելու իրենց բաժակները, ու նոր կիներ ու նոր երիտասարդներ կուգան անոնց տեղը բռնելու։ Վերջ ու վախճան չունեցող իրարանցում մը ու վայնասուն մըն է այս։

Ի՞նչ ունին այդ մարդիկը։ Իրավ ուրա՞խ են ամենքն ալ։ Չէ՛ հարկավ։ Բայց, ա՜հ, իրարմե կառնեն իրենց ոգևորությունը. տեսակ մը սուրբ-գուիտոնյան մոլեկան պար է այս, որ զիրենք ընդքարշ կառնե կտանի, ալեծածան դանդանավանդով մը. յուրաքանչյուրը հոն կդնե մաս մը իր զեղումեն, իր ըղձանքեն, իր կտղանքեն, ու ամբողջությունը մոլուցք մըն է հիմա, որ մեջը եղողները կբորբոքե ու դուրսը մնացողին համար անհասկանալի բան մը կդառնա։ Հեռվեն դիտողի մը համար, որ նվագարանին ձայնը չլսեր, ինչքա՞ն անիմաստ բան մը պիտի թվեր պարողներու դարձդարձիկ վազքն ու համաչափ ծեքծեքումները։ Երաժշտության ձայնն, որ այդ մարդերուն ականջին մեջ կհնչե ու կխանդավառե զանոնք, չհասներ մինչև օտարականին ականջը։ Այդ երաժշտությունը, որ վաղնջական հին նվագի մը անուշությունն ունի, անոնց մտքին մեջ կարթնցնե դարավոր անցյալ մը, հինավուրց ժառանգականություն մը, վերհիշումներ միատեղ կրված ցավերու, քովեքով վայելված ուրախությանց,— ամբողջ աշխարհի մը հիշատակներու, որք իրենց համար միայն այնքան զորավոր են։

***

Կեսգիշերը շատոնց անցած է, երբ, երկարատև թմրութենե մը արթնցածի պես, սրճարանեն դուրս կելլեմ։

Անձրևը կշարունակե միշտ իր կայլակներու լուսեղեն պարը մայթին վրա, կազին հորդ պայծառությանը մեջ ցատքտող բեկբեկումներով։ Պանթեոնի մեծ հրապարակին վրա մթությունը իջած է, ահավոր ու սարսռազդեցիկ բան մը առնելով շրջակա խոշոր շենքերեն։ Իրավագիտական վարժարանը, Սենտ-Ժընըվիևի մատենադարանը, Սենտ-Ժընըվիևի եկեղեցին, Հանրի Դ.-ի լիսեն իր բարձր աշտարակով, ու Պանթեոնը մանավանդ, հիշակերտ-գերեզման, որ ցուրտ վեհությունն ունի թափուր վիթխարի շենքերուն։

Դիմացի փողոցին մեջ կմտնեմ, պատին տակեն երթալով կամաց-կամաց, օձիքս դարձուցած, գլուխս կախ, անուշադիր անձրևին, որ կտեղա, միշտ կտեղա։ Կազի լամպարի մը լույսը ետևես կզարնե, ու ստվերս կերկննա, կերկննա, թաց մայթին վրա խոլական տատանումներով, ու հանկարծ կքաշվի, կկծկի, ոտքերուս տակ սողոսկելով ու հոն անհետանալով։

Փողոցին անկյունը հանկարծ քովես կին մը հազիվ լսելի շշուկով մը կըսե, ինձի.

— Անուշիկս, ինձի նայե...

Առանց իսկ գլուխս դարձնելու ճամփաս կշարունակեմ, երբ նույն ձայնը, այս անգամ ողորմուկ, հուսահատական շեշտով մը, կկրկնե.

— Ինձի նայե կըսեմ։

Գիշերվան այդ ժամուն, երբ ամենքն ալ, ամենեն անժառանգներն անգամ, ընդհանուր խնջույքին փշրանքներովն իսկ խաբուսիկ երջանկություն մը կվայելեն, իրոք շատ անբախտ ըլլալու է այդ խեղճ կինը, որ, անձրևին տակ, դեռ կհամառի անցորդի մը «կառչելու»։

Կարեկցութենե շարժած, օձիքս շուտ ազատելու համար, թերևս իսկ իրեն առիթ տալու համար բաժին մը ունենալ երջանկութենեն զոր ես չեմ կրցած վայելել,— չեմ կրնար որոշել,— ձեռքս գրպանս կտանիմ և ճերմակ դրամ մը սահեցնելով իր ձեռքին մեջ, ճամփաս կշարունակեմ։ Կտեսնեմ, որ կինը ետևես կուգա։ Թերևս մեր փողոցը կբնակի։

Մեր տանը դռանը առջևն եմ, զանգակը կքաշեմ. դուռը կբացվի, և զայն չգոցած, նույն կինը ետևես ներս կսպրդի։ Մեր ձեղնահարկին անծանոթ բնակներեն մի՞ն է արդյոք։

Սենյակիս դռան առջև կանգ կառնե ինքն ալ։ Լուցկի մը կվառեմ, որ իր դեմքը կլուսավորե։ Դեռ բերանս չբացած, դեմքիս արտահայտութենեն կկռահե ըսելիքս, որովհետև, զարմացմամբ մը.

— Ա՜հ, մեկտեղ գալու համար չէ՞ր։

Եվ ծեծ ուտող շան մը նայվածքով ու խղճուկ շեշտով մը.

— Ձգե՛ քիչ մը տաքնամ, կմսիմ կոր։

Ներս կմտնենք միասին։ Աշտանակիս վրա քիչ մը մոմ մնացած է, կվառեմ զայն, և աթոռ մը կուտամ իրեն, որ նստի։

Քանի՞ տարեկան կա. աղվո՞ր է, թե տգեղ։ Տարիքը մեծ ըլլալու չէ. երեսո՞ւն. կերևա, բայց ըլլալու չէ։ Բավական բարձրահասակ, նիհար, շագանակագույն մազերով, ճերմակ մորթով, խաժ խոշոր աչքերով, որոնք դեմքը կլեցնեն։

Շմինեին մեջ ածուխ կա բարեբախտաբար, կբռնկցնեմ ու քիչ ետքը զվարթ բոց մը կլափլիզե սև կտորները։

Կինը աթոռը կքաշե շմինեին առջև, իր թրջած կոշիկները երկընցուցած, ամբողջ մարմինը մերթ ընդ մերթ սարսռալով զգացած տաքին երանավետ դողեն։

Թիկնաթոռի մը մեջ թաղված, կմտածեմ։ Մինակ ըլլալ կուզեի և այդ կինը կխանգարե իմ մենությունս։ Սրտնեղություն մը կզգամ։ Պա՜հ, հիմա քիչ մը պիտի տաքնա, կոշիկները պիտի չորցընե և ելլե երթա։

Իր նայվածքն իմ նայվածքիս կհանդիպի։ Աչքն է միայն կենդանի իր ամբողջ դեմքին վրա, խոշոր հիվանդ աչքեր, որոնց ճերմակը ախտավոր բան մը ունի կարծես, պտղած գիծերու պես, ու նայվածքը՝ անասունի ու մանկան նայվածքի միամիտ պարզությունն ունի, անգիտակից համակերպություն մը։

Այդ նայվածքը անհանգիստ կընե զիս։ Գուշակե՞ց արդյոք սրտնեղությունս։

— Բան մը կերա՞ծ ես,— կհարցնեմ հանկարծ, այդ մտածումեն ազատելու համար։

— Չէ՛,— կպատասխանե չոր կերպով։

Պահարանին մեջ քիչ մը ուտելիք կա ու կես շիշ գինի. շմինեին վրա կդնեմ և իրեն կհրամցնեմ։

Անհագորեն կուտե, լեզուն շաչեցնելով, գինին կուլ տալով անախորժ ձայնով մը։

Երեսը քիչ մը գույն եկած է հիմա տաքեն ու գինիեն։

Գլխարկը կհանե ու շմինիին վրա կդնե, թույլ շարժումով մը մազերը շտկելով։

— Չե՞ք խոսիր կոր,— կըսե ինձի։

— Դուք խոսեցեք, ես մտիկ կընեմ։

Անտարբեր ձայնով մը կսկսի խոսիլ ասդիեն-անդիեն։ Շատ մարդ կար այն իրիկունը դուրսը, բայց ամենքն ալ խենթ ու խելառ բաներ ընելու համար։ «Լուրջ» մարդիկ չկան։ Ջորա-հինգ օրե ի վեր մարդ մը գտած չէ։ Հույսը այդ իրիկվան վրա դրած էր։ Տանտերը զինքը շատ նեղը դրած է։

— Մտիկ չե՞ք ըներ կոր,— կըսե հանկարծ։

Ու ավելի զբոսական նյութ մը ձեռք կառնե։ Անցյալ գիշեր Բյուլիե գացեր է, մինչև ետքը պարեր է։ Շատ զվարճացեր է, բայց շա՜տ։ Լյուսին հետն էր, պզտիկ Լյուսին. կճանչնա՞ք, ան, որ Ռիվ դը Մորբոնի անկյունը կկենա. վալս մը խաղացած ատենը գետինը ինկեր է, մեկ քանի ուսանողներ եկեր վերցուցեր են զինքը և ուսերնուն վրա պտտցուցեր են. խնդալեն մարելու բան էր։

Պահ մը լռություն կտիրե դարձյալ սենյակին մեջ։ Փողոցեն կանցնի երիտասարդներու գինով խումբ մը, որ սենյակին ապակիները դղրդեցնելու աստիճան կպոռչտա Պոյուանի մեկ երգը։ Աղջիկը պատուհանին կմոտենա, վարագույրը մեկդի կառնե, պահ մը դուրսը կդիտե ու ասդին կդառնա։

— Ես գիտեմ այդ երգը։

Ու անուշ պզտիկ ձայնով մը կերգե.

Papa c'était un lapin
Qui s'appelait J. B. Chopin
Et qu'avait son domicile
A Bell'ville;
L'soir avec sa p'tit'famille
I's'balladait en chantant
Des hauteurs de la Courtille
A Ménilmontant[1].

---

1 Հայրիկը մի նապաստակ էր,
Նրա անունը Ժ. Բ. Շոպեն էր,
Եվ բնակարանն էլ
Բելվիլում էր։
Ս. Կ.

Երեկոյան իր փոքր ընտանիքի հետ
Պարում, ցատկռտում էր երգելով,
Կուրվիլի բարձունքից
Մինչև Մենիլմոնտան։

Երգը կավարտե և հուսահատությամբ կուգա տեղը կնստի։

— Տխո՞ւր եք,— կհարցնե։

Ձեռքի խուսափողական շարժում մը կընեմ։

— Իրողությունը սա է, որ,— կըսե ժպտալով,— այնչափ բան ըսի և բերաննիդ չի բացիք։

Խե՜ղճ աղջիկ։ Ի՞նչ ըսեմ սակայն իրեն։ Ի՞նչ անդունդներ կբաժնեն զմեզ իրարմե։ Իր խեղճ կյանքը մտքիս առջև կբերեմ, իր գիշերահաց ոգիի թախծալից կյանքն, որ, պատառ մը հացի համար, ստիպված է ժամերով մայթերուն վրա պտտելու ձյունին ու անձրևին, անցորդներուն արհամարհանքին և կարգ մը խստությանց ենթակա։ Ուրկե՞ սկսելով, ի՞նչ թավալգոր վայրէջքով մը, հասած է այդ աստիճանին,— չէ՛, այդ հատակին, ուրկե անդին ա՛լ աստիճան չկա։ Ու հետո զգացման ի՞նչ նույնություն կա մեր երկուքին միջև այդ ժամուն, ի՞նչ ունի իր վրա, որ կարենա այդ տխրության վայրկենին հարմարիլ։ Կրնա՞ ըմբռնել, թե ժամանակին չէ եկած։

Կրակը մարելու մոտ է և մոմն ալ հատնելու։ Խռովիչ լություն մը կտիրե սենյակին մեջ։ Դուրսը ձայն-ձուն չկա։

Կինը ոտքի կելլե նորեն, պատուհանին մոտ կերթա և պահ մը դուրսը կդիտե։

— Անձրև կուգա կոր միշտ,— կըսե։— Ա՜խ, ինչպե՞ս պիտի երթամ։

— Հեռո՞ւն կնստիք։

— Այո՛, բավական հեռու, քալելով իբր կես ժամ ճամփա։

Ու ինձի կնայի դարձյալ իր հայցական խոշոր աչքերովը, անասելի մորմոքումով մը լեցուն։ Խե՜ղճ աղջիկ. ի՞նչ կըլլա. մնաց, որ մեկ-երկու ժամեն կլուսնա։

— Հոս անցուր գիշերը,— կըսեմ իրեն մեկենիմեկ։— Ես թիկնաթոռի վրա կերկննամ։

Աղջիկը պահ մը կմտածե և հաստատ ձայնով մը.

— Չէ՛, չէ՛,— կըսե,— չեմ ուզեր ձեզի անհանգիստ ընելկամաց-կամաց կելլեմ կերթամ։

Ա՛լ առջի անփույթ անտարբերությունը չկա դեմքին վրա։ Զինքը շրջապատող տրտմութենեն բան մը անցած է իրեն, և կրակարանին առջև անցնելով ու ածխացած կտորները խառնշտկելով.

— Իրա՛վ, հավատա՛, տխուր բան է աս, բայց շատ տխուր,— կըսե ցածր ու խորունկ ձայնով մը։

Ու, աչքերուս մեջ նայելով ուղղակի և կարծես հոն կարդալով այն կանացի նուրբ խելամտութեամբ, զոր բոլոր կիներն ալ ունին՝ էն բարձրեն մինչև էն ցածր, կշարունակէ.

— Միտքս կուգա մեր Ծնունդը, մեր գյուղին անկյունը։ Կեսգիշերին, երբ եկեղեցիեն կդառնայինք լապտերներով, ձյուներուն վրայեն ցատկելով ցատկռտելով, սեղանին մեջտեղը տնկված էր Ծնունդի ծառը, վառված մոմերով և ոսկեգույն ընկույզներով։ Ապուրը կմխար ամաններուն մեջ, ու ամենքս սեղանին բոլորտիքը կշարվեինք։

Աթոռը կառնե ու ճիշտ քովս կուգա կնստի։ Կզգա, թե ներքին ի՞նչ ձայնի մը կպատասխանե։

— Բոլորը տունեն էին, ու բարեկամներ ու ծանոթներ, ամենքս մեկ սիրտ, մեկ հոգի։ Բախտը այսպես ուզեր է, որ բաժնվիմ անոնցմե։ Դեղ հով մը առեր հոս նետեր է զիս։ Հիմա միտքս կուգա, թե ի՞նչ եղած են անոնք, ի՞նչ կընեին հիմա։

Իր խոսքերը մտիկ կընեմ, բերնեն կախված։ Ու ինձի այնպես կուգա, որ զմեզ իրարմե բաժնող անդունդը հիմա կլեցվի, խելահեղ արագությամբ մը, ու ա՛լ իրարմե հեռու չենք։

Ճրագը հանկարծ կմարի. բոցը, մեռնող օձի մը լեզվին պես համրոլոր տատանումներով իր չորս բոլորքը լիզելե հետո, կշշե ու կմարի։

Բայց սենյակը մութ չերևնար ինձի։

1893

ԱՂԱՎՆԻՆԵՐԸ

(Նորավեպ)

Ա

Երեք ծերունիներ էին ասոնք ու անհիշատակ ժամանակներե ի վեր կբնակեին գյուղին մեկ ծայրը, այն մինավորիկ հին տունը, որուն կարմիր գույնը բորբոսած բալի երանգներ առած էր հիմա։ Փեղկերը գոց էին միշտ, ու հարաժամ գոց նաև հաղթական դուռը իր երկաթյա խոշոր գամերով ու մեծազանգված չախչախով.— դուռ ու պատուհան վերջին մնացորդները հին բարքերու և հին ժամանակներու, երբ կյանքը՝ տան մեջ արգելափակ՝ դուրս նայելու կվախնար, մինչ հիմա դուրս կպոռթկա անոնցմե։

Ծերունիները այդ տանը հարմար բնակիչներն էին, ամենեն պատշաճ նկարն այդ շրջանակին։ Որչա՞փ ատենե ի վեր կբնակեին հոն, ի՞նչ կընեին, ինչո՞վ կապրեին. մութ խնդիրներ զորս ամենոք ուզած կերպով մեկնել կրնար ու չէր հաջողեր։

Կիրակիե կիրակի կտեսնեին զիրենք փողոցը։ Նախ տանը էրիկմարդը, երկար սև ճյուպպե մը հագած, որուն մեջ կկորսվեր իր գունդուկլոր հասակը, մինչև ականջներուն կեսը ծածկած իր ֆեսով, որուն հնավուրց անխախտ ձևը՝ փայտյա կաղապարի մը օժանդակությունը կմատներ. ոտքերը մեսք ու կաշիե լայն կալոշ՝ քառակուսի ծայրով։ Ձեռքը ուներ միշտ երկայն համրիչ մը, դեղին սաթե գնդակներով և սադափե խաչելությամբ մը։ Թևին տակ հաստ հովանոց մը։ Իր թոմթոկած այտերը կկախվեին երկու քովեն, եփած հոդի գույն առած, իրարու վրա բարդվող խորշումներով։ Աչքը, խռովացյալ գորշ հոնքերուն տակ կորսված, կպահեր ծանր ու դաժան արտահայտություն մը։ Ճերմակ առատ բեղերը, երկու կողմեն վար դարձած, կիսաբոլորակ մը կձևացնեին իր հաստ շրթունքներուն վրա։

Ինքն առջևեն կերթար, ետին ձգած իր երկու քույրերը, երկու կոկիկ պառավներ, իրարու քիթեն ինկած, երկուքն ալ պարզ ու վայելուչ կերպով հագված,— սև շրջազգեստ, գլուխնին քողք մը ձգած, կոնակնին սև շալ մը։

Ու սրտահույզ բան մը կար այդ երեք ծերունիներուն անցքին մեջ, կամացուկ քայլելով տուներուն տակեն, ամեն քայլի ուշադրություն ընելով իրենց կոխած տեղին, միևնույն հեռավորությունը պահելով միշտ իրարմե, կարելի եղածին չափ թեթև կոխելով գետնին վրա՝ ուշադրություն չհրավիրելու ակներև փափագով մը, առանց իրենց չորս դին նայելու։ Անցորդները պատկառանքով կդիտեին այդ կորաքամակ ծերունիներուն անցնիլը, գլուխնին վայրահակ, իբրև թե հողը դեպի իրեն քաշեր զիրենք։ Փողոցին մեջ այդ խումբը տարօրինակ տպավորություն մը կթողուր, հին թանգարանի մը պատեն վար առնված ու կենդանացած պատկերի մը տպավորությունը, վերկենցաղում մը անհետացած սերունդի մը, մոռցրված բարքերու, սովորություններու, տարազներու, տեսակ մը հարություն վաղնջուց քաղաքակրթության մը։

Եկեղեցիին մեջ իրենց տեղը անխախտ էր։ Ժամկոչը ծերունիին

ձեռքին կառներ հովանոցը ու կալոշները կհաներ, ու միենոյն մը առած, նույն մինդերը տարիներե ի վեր, կտեղավորեր զանի աջակողմի գավիթին անկյունը։ Կիները վերնատունը կելլեին, տոտիկ-տոտիկ, աղմուկ չհանելու ծայրահեղ մտատանջությամբ մը, կանթեղին մեջ յուղ լցնել կուտային՝ դրամը կամացուկ մը սահեցնելով ժամկոչին ձեռքը, առանց ուրիշե տեսնվելու, և կերթային վանդակին առջև ծնրադրել իրենց մինդերներուն վրա։

Վերադարձը նույն կանոնավորությամբ տեղի կունենար։ Ժամուն դուռը կեցող ազքատները վստահ էին, որ երեքեն ալ զատչատ պիտի ստանան իրենց կիրակնօրյա բաժինը։

Երբ երկաթագամ խոշոր դուռը իրենց վրա կփակվեր դղրդումով, արտաքին կյանքը կդադրեր իրենց համար։ Մասնավոր աշխարհ մը կսկսեր հոն իրենց առջև, երկյուղածությամբ, լռությամբ, ազոթքով, անէացմամբ շինված կյանք մը, որուն հեռավոր արձագանքները հազիվ երբեմն-երբեմն դուրս կելլեին և գյուղին մեջ բերնե-բերան կպտտեին։

Ամբողջ գյուղը գիտեր սակայն, թե տանը մեջ աղավնետուն մը կար, պարտեզին վրա նայող պատշգամի մը քովը, և թե ծերունին առավոտեն մինչև իրիկուն իր աղավնիներուն հոգերովը զբաղած էր։

Այս սերը մեկենիմեկ եկեր էր ծերունիին, իր կյանքին վերջին տարիներուն։ Օր մը երկու աղավնի թռելով ներս մտեր էին տանը պարտեզին վրա նայող մեկ պատուհանեն, ու հոն մնացեր էին, ա՛լ չուզելով մեկնիլ։ Այդ տանը խորին հանդարտությո՞ւնը հրապուրեր էր զիրենք, ուղեկորույս մոլորյալնե՞ր էին։ Սա իրավ է, որ պատուհանին մեկ անկյունը թառեր ու ա՛լ անկից չէին բաժնվեր։ Ծերունին, ավելորդապաշտությամբ մը, պահեր էր զանոնք, ու քիչ-քիչ անոնց համար սրտին խորը սեր մը սկսեր էր, որ հիմակ իր ամբողջ կյանքը կլեցներ։

Այդ սերը՝ ավերակներու մեջ բուսնող առույգ տունկի մը ծլարձակումը և փթթինազարդությունը ունեցեր էր տակավ։ Ամուսնացած ու զավակի տեր, կինն ու մեկ հատիկ զավակն ալ տարիքեն առաջ մեռեր էին, ու իր սիրտը, ամեն աղապատանքե զուրկ, թափուր ու ամայի կմնար, երբ այդ ճերմակ ու փափուկ թռչունները եկեր

էին իրենց գիրդ ու անուշակ անմեղությունն ու զվարթությունը բերել իրեն,— գոգցես հոգիները իր անհետացած սիրելիներուն։

Քիչ-քիչ իր կյանքին միակ զբաղումը, միակ մտածումը, միակ նպատակը այդ աղավնիներն էին եղեր, որոնք տարվե տարի կշատնային։ Առտուն կանուխ անոնց քովն էր, անոնց ուտելիքին ու խմելիքին կհսկեր, աղավնետունը կմաքրեր, կզարդարեր, անոր բաժանումներ կավելցներ։ Մարդուն և անասուններուն միջև ընտանությունը կշատնար։ Խմբովին կուգային թառիլ անոր գլխուն, ուսերուն, թևերուն վրա, իրենց վարդագույն բերնովը անոր շրթունքեն կտցելով իրենց ուտեստը, անոր ձեռքերեն առկախուկ։ Ու ինք, թռչուններեն պաշարված, անոնց մեջ կորսված, սիրտը կուռեր հրճվանքեն, իր նայվածքը ա՛լ կկորսնցներ իր հնավուրց ու դժգոհ մարդու խիստ ու դժնե արտահայտությունը, թաց խանդաղատանքով մը լենալով։

Գիշեր մը ծերունին ընդոստ արթնցավ խուլ շշուկե մը, որուն անմիջապես հաջորդեցին ճարճատյուններ։ Մուխի հոտ մը կսկսեր ծավալիլ սենյակին մեջ։ Հասկցավ վտանգը, ցատկեց ելավ անկողնեն, աճապարանքով հագվեցավ կիսովին, և սենյակեն դուրս նետվեցավ։ Մուխը, թանձր հորձանքներով, պատեր էր չորս դին։ Իր երկու քույրերն ալ, արթնցած ու հագված, դեպի իրեն կուգային խելահեղ։ Վարի հարկեն ճարճատյունները կշատնային, և հրդեհի լույսը պոռթկաց հանկարծ, հին ու չոր տախտակներեն դեպի վեր գալարվելով։

— Ամա՜ն աստված, փախի՛նք,— ըսավ փոքր քույրը,— մեջը պիտի էրինք։

Կրակը կսպառնար քիչ ատենեն սանդուղը հասնիլ և վերին հարկին ու դռան մեջտեղ ոևէ հաղորդակցություն կտրել։

— Ա՜խ,— ըսավ մեծ քույրը հեծեծանքով,— ամա՛ն, աղբա՛ր, անդո՜ւկս, անդո՜ւկս։

Ծերունին պահ մը կեցավ, հետո մուխին մեջ անհայտ եղավ, պոռալով.

— Դուք վար իջեք, ես ետևնուդ կհասնիմ։

Դեպի իր մեծ քրոջ սենյակը կերթար վազնիվազ, երբ մեկեն իր ընթացքը փոխեց և շնչասպառ երթալով պարտեզին վրա նայող մեծ սենյակը, աղավնետուն քով փոցեց։ Աղավնիները ամենքն ալ

ելեր արթնցեր էին, իրենց թառերուն վրա կանգնած, զահանդյալ, սարսուռ մը վազելով իրենց ճերմակ փայլուն կռնակեն վար, իրենց անասունի բնազդովը վտանգը զգացած, առանց կարենալու որոշել, թե ո՞ւսկից պիտի գար ան։ Ծերունին պատուհանի վարագույրը քաշեց պատռեց, գետին փռեց, մեկիկ-մեկիկ առավ թռչունները, փայփայական խոսքեր ուղղելով անոնց և լաթին վրա դնելով։ Մուխը հիմա սենյակը կուգար կլեցներ ու վտանգը վայրկյանե վայրկյան զարհուրելի սպառնալիք մը կդառնար։ Պետք էր աճապարել։ Ծերունին լաթին չորս կողմեն վերցնելով ձեռքն առավ և սկսավ խենթի պես սանդուղներեն վար վազել։

Հապիվ տանը դուռը հասած էր, բոցերը կպաշարեին սանդուղը։

Տունը հիմա չորս կողմեն կվառեր, չոր ռետինի մը պես, իրեն հետ մոխիր դարձնելով ինչ որ տարիներե ի վեր սերունդներ դիզեր էին հոն, պերճանքի առարկաներու, կահերու և անոթներու ամբողջ հավաքածո մը։

Երկու պառավները լալագին աչքերով կդիտեին այս փճացումը իրենց ամբողջ ստացվածքին և այն տանը, ուր տարիներե ի վեր կանցներ իրենց խաղաղիկ կյանքը։

— Ա՜խ, սնդո՜ւկս, սնդո՜ւկս,— կհեկեկար մերթ ընդ մերթ մեծ քույրը։

Ծերունին անտարբերությամբ կդիտեր տեսարանը։ Ինչ փույթ, եթե մեկ վայրկյանի մեջ կքայքայվեր իր ամբողջ հարստությունը և ծերության օրերուն հանգիստը։

Իր աղավնիները ազատա՞ծ էին։

Եվ խենթ հրճվանքով մը կհամբուրեր թռչուններուն գլուխները, գգվելով, շոյելով զանոնք։ Հետո ուզեց մեկիկ-մեկիկ համբուրել զանոնք, և հանկարծ ցավագին ա՜խ մը արձակեց։

Աղավնիներեն մին պակաս էր։

Բ

Աղետքին հաջորդ օրը և հետևյալ օրերը շարունակ, ծերունին կտեսնվեր միշտ, որ իր տանը մոխրակույտին մեջ ման կուգար թափառական, ձեռքի գավազանովը շարունակ խառնելով մոխիրները։ Առջի բերան կարծվեցավ, թե հալած ոսկիի կամ արծաթի հետքեր կփնտրեր, բայց իր տարօրինակ կերպարն ու վարմունքը քիչ-քիչ սկսան ուշադրություն գրավել։ Առջի կոկիկ հագված մարդը չէր, որուն խիստ նայվածքը պատկառանք կազդեր ամենուն։ Անվստահ, երերուն քայլվածք մը ուներ, հագուստները խառնափընթոր, և միամիտ ժպիտ մը կար միշտ շրթունքին վրա։ Աչքը տարտամ ու անորոշ արտահայտություն մը առած էր, կենդանությենե ու իմացականությենե զուրկ, ստվերով լեցուն։ Օր մըն ալ համարձակեր էին հարցնել իրեն, թե ի՞նչ կփնտրե այդպես շարունակ։

— Թռչուններես մին չեմ գիտեր ինչպես կորսվեր է ան գիշերը,— պատասխաներ էր միամտությամբ,— կփնտրեմ, որ թերևս գտնամ մոխիրներուն տակեն։

1893

ԿԱՂԱՆԴՉԵՔԸ

(Կաղանդի պատմություն)

Ճակատը ապակիին կոթնցուցած, ձեռքերը գրպանը, Հակոբ կդիտեր անձրևին սեղմ ու բարակ գիծերն, որոնք անդադար կիջնեին, կտրուկ, շեղակի։ Հովը երբեմն կտարտղներ անոնց կանոնավոր շարքը, մառախուղի փոշիի պես տարուբերելով, օդին մեջ տարտամ պարույրներ ու խառնակ ուրվանկարներ ձևացնելով անոնցմով։

Իր միտքն ալ այդ տարուբերման ու խառնակության մեջ էր, կես ժամե ի վեր, որ հոն կեցած կմտածեր նույն գիշերը ընելիքին վրա։

Գավառեն Պոլիս եկած էր, և երեք տարիե ի վեր կաշակերտեր Իրավագիտական վարժարանին։ Կետիկ Փաշայի մեկ անկյունը վարձած էր համեստ խանութպանի մը տան մեջ այդ սենյակը, ուր կապրեր իր հույսերուն և զրկանքներուն հետ։ Զրկանքները հույսերեն ավելի իրական էին։ Մեկ քանի մանր մունր դասերե զորս կրցած էր գտնել, հազիվհազ պետք եղածը կվաստակեր անոթությենե ու ցրտե չմեռնելու համար։ Մնաց որ այն ամուր հոգիներեն մին էր, որոնք տառապանքին մեջ կմխվին ու նոր ուժ կքաղեն անկից շարունակելու իրենց ճամփան։

Եթե անդորրության ու խաղաղացման վայրկյաններ ուներ, իր դրացիներուն այցելության գացած իրիկուններն էին անոնք։ Տան-

տերը, Գևորգ աղան, աղեկուկ ու լռին մարդ մըն էր, որ դարբնութիւն կըներ։ Կինը մեռած էր, երեք զավակ թողլով իրեն. երկու պզտիկները մանչ էին, տասը և ութը տարեկան. առջինեկը, Աղավնին, արդեն հասուկ կսեպվեր, քսանը անցած թերևս։ Ինքն էր տունը դարձնողը, և պզտիկներուն զգալի ընել չէր տար մոր պակասը։

Հակոբ հաճախ կերթար այդ տունը. դարբինը շատ կհարգեր զինքը և միշտ խոսք մը կգտներ իրեն հետ. «Ըսած խոսքեն համ մը կառնես, բան մը կսորվիս», կըսեր միշտ Գևորգ աղան։ Պզտիկները անկիւն մը կխաղային, իսկ Աղավնի անընդհատ կար կկարեր դուրսի համար, աշխատելով լեցնել տանը պետքերը, որոնց չէր հասներ հայրը իր աննշան ավուրշեքով։ Ինքը խոսքի չէր խառնվեր շատ. երբեմն իր խոշոր, վճիտ աչքերը կվերցներ Հակոբի վրա, ու անմիջապես վար կառներ, շարունակելով իր կարը։

Հակոբ իր գրգռված ջիղերուն հանդարտությունը կգտներ այդտեղ. դարբինը կհարգեր, պզտիկները կսիրեր, ու կհիանար մանկամարդ աղջկանը վրա, անոր պայծառ համբերատարությանը ու աննվաճելի անխռովությանը վրա։

Անձրևին անդուլ վայրէջքը կդիտեր միշտ, կարծես իպնոսացած։ Այն իրիկունը Կաղանդ էր, իրեն հոգը չէր, թե ինչպե՞ս պիտի անցներ զայն, այդպես գրպանը պարապ, բայց ի՞նչ պիտի ընեին իր դրացիները։ Գևորգ աղան տասնևհինգ օրե ի վեր հիվանդ պառկած էր, և Հակոբ շատ աղեկ գիտեր, որ Աղավնի հազիվհազ կհասներ անոր ապուր մը և իրենց չոր հաց ճարելու։ Պզտիկները, ի՞նչ պիտի ըլլային պզտիկները առանց պտուղի, ու մանավանդ Աղավնիի սիրտը ինչքա՜ն պիտի արյուներ անոնց առջև մեկ-մեկ ոչ պտուղ դնել չկարենալուն համար։

Իր վիճակն ալ շատ գեշ էր. ամսականները կանխիկ առած և բարեկամներուն պարտք ըրած էր ձմռան հագուստ առնելու համար, և հինգ-վեց օրե ի վեր պանիր հացով կանցըներ։

Պետք էր սակայն բան մը ընել, գոնե պզտիկ տոպրակ մը պտուղ տանիլ պզտիկներուն։ Ուսկից դրամ գտներ, բոլոր բարեկամներուն պարտք ուներ, ու անոնք ալ ունևորներ չէին։

Մեկ քանի վայրկյանե ի վեր գաղափար մը մտքին մեջ կպըտուտքեր։ Հանկարծ, աճապարանքով, գրասեղանին վրայեն հինգվեց կտոր գիրք առավ, թևին տակը դրավ և սանդուղքեն վազելիվազ վար իջնելով դուրս ելավ։

* * *

Մութը կոխած էր երբոր Հակոբ, վերարկուին տակ ծրար մը ծածկած, Գևորգ աղային դուռը զարկավ։ Մութին մեջ Աղավնի եկավ դուռը բացավ. Հակոբ, անդաստակին մեկ անկյունը կամացուկ մը սահեցնելով իր ծրարը, քովի սենյակը անցավ անմիջապես, ուրախ ձայնով մը գոչելով.

— Շնորհավոր Կաղընդ և բարի տարի. ամեն տարի բարով հասնիք։

— Շնորհակալ եմ, որ մեզի չմոռցաք, մյուսյու Հակոբ,— պատասխանեց Աղավնի բռնազբոսիկ ժպիտով մը։

Սրահին մեջ, բազմոցին մեկ անկյունը, երկու պզտիկները կծկտած էին, լուռ, իրենց աչքերուն մեջ մեծ մարգու տխրությամբ մը, մտիկ ընելով երգիոնակի զվարթ խաղերուն, որոնք գուրսեն, հեռվեն։ Բազմոցին մյուս անկյունը կարի կողով մը կար։ Մերկ սենյակին մեջտեղը կրակարանի մը վրա ածուխի մեկ քանի կտորներ համրաբար կմոխրանային։ Սեղանի վրա լամպար մը աղոտ կերպով կլուսավորեր այս տեսարանը։

Հակոբ գնաց պզտիկներուն քով նստավ, մինչդեռ Աղավնի, ի՞նչ ընելիքը չգիտցողի պես, սենյակին մեջ մեյ մը ասդին կերթար, մեյ մը անդին, աթոռ մը մեկ տեղեն վերցնելով մյուս տեղը դնելով, վառարանին մարմրող ածուխները տակնուվրա ընելով, լամպարին պատրույգը բարձրացնելով։

— Ինչպե՞ս եղավ Գևորգ աղան,— հարցուց Հակոբ։

— Ինչ է նե անանկ է, առտվընե մինչև իրիկուն կտնքա կոր։

— Դո՞ւք ինչպես եք, օրիորդ Աղավնի։

— Է՜հ, ի՞նչ պիտի ըլլանք, կերթանք կոր։

Լռությունը տիրեց նորեն, ծանր, խռովիչ։ Աղավնի կպտտկեր միշտ սենյակին մեջ, մինչդեռ Հակոբ նստած տեղը կերերտկար։

Մեկենիմեկ, ոտքի ելավ։

— Օրիորդ Աղավնի,— թոթովեց,— իրավ որ չեմ համարձակիր կոր... դրացիի պարտականություն... հոգ չէ... պզտիկներուն համար...

Ու հանկարծ սենյակեն դուրս ցատկեց, չիմանալով Աղավնիի «Ո՞ւր կերթաք կոր»-ը, գնաց դռանը քովեն առավ տոպրակը և բերավ բազմոցին վրա պարպեց ընդոստ շարժումով մը։ Խնձոր-

ներ, թուզեր, կաղիններ, չամիչներ, ընկույզներ խառնիխուռն թափեցան։

— Կերե՛ք, տղա՛ք, ձեզի համար է,— ըսավ երիտասարդը ձայնով մը, զոր իզուր կջանար ամուր պահել։

Պզտիկները ուրախության աղաղակներով անոնց վրա նետվեցան։ Հակոբ, իբր թե անոնց հրճվանքը դիտելու զբաղած, գլուխը անդին չէր դարձներ։

— Ա՜խ, ի՞նչ է աս, մյուսյու Հակոբ, կվայլե՞,— ըսավ Աղավնի հուզված ձայնով մը,— աս ի՞նչ ձանձրություն... կամչցունեք կոր մեզի... շատ շնորհակալ ենք... ամա... ամա...

— Աստուծո սիրուն, օրիորդ Աղավնի, խոսքը մի՛ ընեք, չէ նե հիմա կելլամ կերթամ։ Ըրածս մեծ բան մը չէ, խոսքը անգամ չարժեր. մեղք են, չոճուխները թող քիչ մը խնդան, ասանկ իրիկուն է։

Եվ իրավ պզտիկներուն ուրախությունը տեսնելիք բան էր։ Նարինջները, խնձորները ձեռվընին առած՝ սենյակին մեջ կվազվըռտեին՝ գետինը թափած ընկույզներն ու կաղինները ժողվելու։ Իրենց բերկրանքը անօրինակ խանդաղատանքով մը կլեցներ մանկամարդ աղջիկը, որ, այտերը կարմրած, աչքերը արցունքով լեցուն.

— Ա՜խ, մյուսյու Հակոբ, ինչպե՞ս շնորհակալ ըլլամ ձեզի,— կշարունակեր։— Մենծ աղբոր մը ըրածը ըրիք։ Ըրածնիդ չի պիտի մոռնամ։

Հետո տխուր շեշտով մը.

— Ամչցուցիք մեզի,— հառաչեց։— Մենք ալ պետք էր քի բան մը ընեինք ձեզի, ամա, գիտե՛ք ա... ի՞նչ կաղընդչեք կրնամ ընել ձեզի։

Իր սիրուն գլուխը երկու ձեռքերուն մեջ առավ, ու, այդ շարժման մեջ, մազերը, որոնք թուլ կապով մը ամփոփված էին, քակվեցան ուսերն ի վար ինկած ծալ-ծալ, կոհակավետ սև խոպոպներու հորդությամբ մը։ Աղավնի զանոնք աշխուժիվ ժողված ատեն, անոնց վրա զգաց Հակոբի տարփոտ ու գորովալիր նայվածքին տաքությունը, ու, մեկենիմեկ, իր կարի կողովին մեջեն մկրատ մը առնելով անոնցմե փունջ մը կտրեց ու երիտասարդին երկնցնելով, վեհերոտ դողդոջուն շարժումով մը.

— Կուզե՞ք,— ըսավ,— աս ալ թող իմ կաղընդչեքս ըլլա։

ՄԱՆՐԱՆԿԱՐ

Պատուհանիս քով նստած, ուշադրությամբ կնայիմ քովի պարտեզը, ուր խումբ մը տղաք, զորս դպրոցական արձակուրդը բերած միացուցած է, թատերական ներկայացում մը կկազմակերպեն։

Պարտեզին մեկ անկյունը տախտակներով գոցված է, և վրան ծածկված տերևախիտ ոստերով։ Առջին, գույնզգույն կտավներե կարված վարագույր մը կա։ Բեմը կներկայացնե ասիկա։ Դիմացը, հենարաններու վրա հաստատված երեք-չորս կանգ տախտակ հանդիսականներուն հատկացված են։

Հանդիսականները հետզհետե կուգան, ներկայացման համար որոշյալ ժամեն շատ առաջ։ Մուտքն է յոթը պիլիա, զոր կգանձե պարտեզին դրան առջև կեցած տղա մը, թատերական խմբին գանձապետը։ Հսկողությունը խիստ է. դուռը գոցված է զորավոր պարզունակով մը, որ ամեն անգամ շառաչաձայն կքաշվի, երբոր դուրսեն տղա մը իր պիլիաները կխաղցնե ձեռքին մեջ։ Դուրսը մեծ բազմություն խռնված է պզտիկ մանչերու ու աղջիկներու, որոնցմե սակայն շատ քիչերը կարող կըլլան ներս մտնել, իրենց ետևեն քաշելով մնացյալներուն ըղձական նայվածքները։

Հանդիսականները արդեն լեցուցած են նստարանները, և անհամբերության նշաններ կսկսին երևան գալ իրենց մեջ. գլուխները ետին կդառնան ամեն վայրկյան. մեկու մը կսպասեն։

Մեկենիմեկ դուռը կբացվի, և տղա մը, ուրիշներե շրջապատված, ներս կմտնե հաղթական։

— Մարդակյա՜ն է, Մարդակյա՜ն է,— կպոռան հանդիսականները ուրախության շեշտերով։

Թատերապետն է ինքը, և քովինները՝ դերասանները։ Վերեն նայվածք մը կնետե հանդիսականներուն վրա, իր գերազանցությանը համոզված, իր առաջ բերած հուզման անտարբեր, ու թատրոնին քովի դռնեն ներս կմտնե, մինչ ընկերները իրեն կհետևին գլխիկոր։

Ներսը պատրաստություններ կտեսնվին անշուշտ, որովհետև աղմուկը անպակաս է հոն։ Հանդիսականները ա՛լ ձայն չեն հաներ։

Զանգակ մը կզարնվի, և ահա վարագույրը կբարձրանա։

Դերակատարները խենթ ու խելառ հագուստներ հագած են, երեսնին ածուխով կամ ալյուրով սևցուցած։ Չեմ իմանար, թե ի՞նչ կըսեն իրարու։ Մարդակյանը միայն կտեսնեմ, որ մեջերնին

անշարժ կեցած է, ձանձրացած կերպաքանքով մը։ Երբեմն-երբեմն ձեռքի փայտը քովը գտնվողներուն գլխուն կամ կռնակին կիջեցնե, ու հանդիսականներուն մեջ ծիծաղ մը կսկսի մանկական կլկըլունքներով, որոնք նստարանե նստարան կերկարաձգվին։

Մեկեն աղմուկ մը կբրդի։ Տղա մը դրսեն հաջողեր է ներս մտնել առանց մուտքը վճարելու։ Բոլոր հանդիսականները ոտքի կելլեն և տղուն վրա կհարձակվին, դուրս վանելու համար։ Իրենց վնաս մը եղած չէ, բայց քանի որ իրենք վճարեր են, չեն ընդունիր, որ ուրիշ մը ձրիաբար կարենա մասնակցիլ իրենց վայելքին։

Ներկայացումը կշարունակվի, թույլ, անհոգ։ Թատերապետն ու դերասանները, կերևա թե հասույթեն գոհ, հոգ չեն տանիր զվարճացնելու վարի միամիտները, որոնք աչվընին խոշոր բացած, բան մը կուզեն հասկնալ թատերաբեմին վրա եղած շարժումեն, երթևեկներեն, խնդուքներեն, գոչումներեն, որոնց իմաստը կխուսափի իրենցմե։

Տղա մը, որ կերևա, թե յոթը պիլիա չունի ամբողջ, չորս պիլիա ճարած և ներս ընդունված է պայմանավ, որ հանդիսականներուն ետևոքը ոտքի վրա կեցած հետևի ներկայացման։ Երբեմն-երբեմն հոգնած, կամացուկ մը կհառաջանա և կփորձե կոթնիլ վերջին նստարանին, որուն վրա բավական տեղ կա։ Հանդիսականները միաբերան թող չեն տար. ինչո՞ւ պիտի նստի, քանի որ իրենցմե վար է ան, իրենց պես յո՞թը պիլա չէ տված։ Ու տղեկը, կարմրած, նորեն կերթա պատին տակը շարունակել իր կայքը, նախանձոտ նայվածքով։

Մեյ մըն ալ վարագույրը վար կիջնե։ Թատերապետը հարկ չի համարիր ա՛լ ավելի հոգնիլ հանդիսականներուն համար, որոնք, իրենց շահագործված ըլլալու ստուգության վերջապես համոզված, դժգոհության ձայներ կբարձրացնեն։

Թատերապետն ու դերասանները դեպի դուռը կերթան։ Հասույթը բաժնելու կարևոր ժամը եկած է։ Բայց ո՞ւր է գանձապետը. մեջտեղ չիկա։

Դուրսը կեցող տղաքները կհայտնեն իրողությունը։ Գանձապետը պիլիաները գրպանները լեցուցած, փախած գացած է։ Զգելով անդին իր ընկերները, թատերական խումբը, շահագործել հասարակությունը, ինքն ալ իր կարգին զանոնք շահագործած է՝ հասույթը առնելով փախչելով։

Պիլիաները ամբողջ փերեզակին պիտի տանի անշուշտ, որը տասը փարայով տղուն ձեռքեն պիտի առնե ամենքն ալ։

Ի՜նչ մանրանկար մեծերու աշխարհքին։

1895

ԿԱՂԱՆԴ

Կաղանդ...

Աչքս գոց, կնայիմ...

Ո՞րն է այս երկիրը։ Երբեք եղած չեմ հոս, բայց անծանոթ չէ ան ինձի։ Տեսնելուս կճանչնամ զայն խոկույն, սիրտս անոր կերթա մեկեն. ընտանի, սիրտ, ներքին բան մը կա անոր ու իմ միջև։ Երկար երազանքներու մեջ, երևակայությունը անոր տարփոտ ճարտարապետը եղած է, մտքին հարաժամ փայփայանքները կերպավորած, սրտին խանդուն ըղձանքները զայն դաստակերտած են ինձի համար, տարտամ ու որոշ միանգամայն։ Ես հոս մագլցած չեմ այդ լեռներն ի վեր, աղբյուրին մեջ չեմ լողցած, եկեղեցիին բակը իմ խաղերս չէ տեսած, դաշտերուն մեջ ծաղիկ չեմ քաղած, ու այդ տանիքները իմ խոնջ մարմինս չեն պատսպարած։ Բայց լեռան բոլոր ծերպերը գաղտնիք չունին ինձի համար, աղբյուրին ջրին կարկաչը ականջներուս մեջ կկլկլա՝ ծանոթ հանկերգի հծծյունով, եկեղեցիին զանգակատան բարեկամ բարև մը կուտամ, ծաղիկներու հոտ մը ուղեղիս կազդե ընդփույթ, ու երդիկին տակ ծիծեռնակի հին բույնը կփնտրեմ։

Իրա՛վ երբեք եղած չե՞մ հոս։ Ուրիշներու մեջ, իմ արյունս կրող մարդերու մեջ ապրած եմ այստեղ, ու անոնցմե ինձի ա՛յնքան խորապես անցած է իրենց կրած ուղղակի տպավորությունը այս երկրեն, որ, անկից հեռու թեև, հոն երազած եմ միշտ, երազական կրկին կյանքով մը։ Դարերու ուժով ժառանգություն մը, համառ ու կենսալից, ցավին մեջ դրած իր արմատները ու անոր կազդուրիչ հյութովը սնած ու ուռճացած, արհամարհած է միջոցը ու հեռավորությունը, ու հողին, ուսկից բխած է, անմիջական հաղորդակցությունը հաստատած է անկից անջատված էակներուն մեջ։

Մասնավոր տեսուն մը չունի տեղը, որ աչքիս դիմացն է։ Քա-

գաք մը չէ ան, ո՞չ ավան Ֆը կամ գյուղ մը։ Ընդարձակ ու բյուրակերպ տարածություն մըն է։ Գիծով մը ու սահմանով մը չորոշվիր։ Լեռներ ու դաշտեր, ու նորեն լեռներ ու տափարակներ՝ ջրի ընթացքներով ժապավինված, բլուրներ ու ծործորներ, քաղքի փողոցներ ու գյուղի ճամփաներ պարտեզներու մեջէ, քարե տուներ ու հարդածածուկ խրճիթներ։ Անուններ դնել կաշխատիմ յուրաքանչյուր կետին, զանազանել այս համախառնումը, Մշո դաշտ, Շատախ, Կարին, Հավավ, Բասեն, Սիփան, Կամրկապ, Հայոց Ձոր, Լուսոնք, Արածանի, Արտամետ, Գրգուռ, Մորենիկ, Վարդենիս, Բյուրակն, Տալվորիկ... բայց կշփոթվին, իրար կխառնվին, իրարու մեջ կընդելուզվին, ու քիչ-քիչ մեծ անուն մը կմնա ամենուն վրա թեատարած,— Հայաստան։

Ձյուն կա ամեն կողմ, հորդ, թավ ու կակուղ, անաղարտ բաներու սրբությամբ մը փալփլող։ Լեռ ու դաշտ ծածկած է ան հոգածու տարփանքով, քաղաք ու գյուղ թաղված են անոր մեջ մսկոտ հաճույքամբ մը։ Բուխերիկներ միայն կծակծկեն զայն դեսուդեն, օդին մեջ ղրկելով մուխի զվարթ հորձանքներ պալան-պալան։ Ու ցուրտ չէ այս ձյունը, տաքցնող բան մը կելլե անկե, և մտերմության, գուրգուրանքի ու խրախճանության հրավեր մը կհածի անոր վրա։

Ցնծություն մը կխաղա այս ամբողջ տարածության վերև։

Ու մարդիկ, որ կտեսնեմ դիմացս, կխնդան, ու կիները կժըպտին, ու պզտիկները, թևերնին վեր, կպարեն։ Լույս, աղմուկ, ոգեվորություն ամեն կողմ։

Կեսգիշերվան զանգակները կհնչեն ավետավոր, Նոր տարիի գալուստը իմացնելով. կհնչեն հրճվալիր, իրարու ղրկելով, մոտե մոտ, իրենց գանգյունները. ու բերկրության երգի մը, գոհաբանության ալելուայի մը պես կտարածվի, կբարձրանա, կսավառնի ասիկա։

Ու սեղաններ կտեսնեմ, սեղաններ ամեն կողմ, ու անոնց չորս կողմը շարված են պառավներ ու ծերունիներ իրենց զավակներով, հարսներով ու թոռներով։ Ու առատությունը հղփանքով մը կզեղու այդ սեղաններուն վրա. ճոխ ու բարի բնության մը պարգևած բոլոր բարիքները կուտակված են հոս ժիր ու չարքաշ մարդերու ձեռքով։ Գինիի պոզիկը հոն է հաղթապանծ, ու հողե կուռիկներու մեջ կխընդա ան իր ցոլացիկ կարմրությամբը։ Սախերու մեջ ձագուց մեղրը իր ճերմակությունը կփռե։ Ու իրարու վրա դիզված, բուրգի պես

կբարձրանան նուշը, ընկույզը, չամիչը, պնդուկը, ամպրավը, թուզն ու պաստեղը, մալաղի տանձն ու մալաշիկը, նանիկը, ապաստիկը, խնձորները, որոնց քով շարված են խաղողները, ձմեռնուկը, կաղըմպոտը, էծու պտուկը, անկուտ քիշմիշը, աբելին։

Ահա ոտքի կելլե պառավը, որ սեղանին գլուխը բազմած է, գինիին կուռիկը ձեռքը կառնե, անոր մեջ կձգե իր ճակատին պըսպրղուն ոսկիներեն հատ մը, ճավռաշ մը, ու դողդոջուն ձեռքով կբարձրացնե բաժակը. ձայնը ամուր է սակայն, ու օրհնաբեր խոսքերը իր շրթունքներեն կելլեն հույսերով լեցուն։

— Ձեզ ողջություն, շնորհավոր տարի ու բարի կաղանդ. ամեն տարի բարով հասնինք, ուրախ սրտով։ Դառնիկ դատինք, քաղցրիկ ուտինք։ Աստուծո օրհնենքը ամենուս վրա։ Ամենքս հասնինք մեր մուրադին։

Ու կաթիլ մը կխմե գինիեն, հետո ամենուն կխմցնե պուտպուտ, ու ամենքը կարգավ կհամբուրեն իր ձեռքը, մինչ ան կշարունակե իր օրհնությունները ու մաղթանքները, լավագույն օրերու վստահությամբ մը, որ իր նիհար կուրծքը կուռեցնե։ Կոճղն է ան տարիներեն զարնված, բայց միշտ ամուր ու տևական, հողին մեջ տարածած իր կենսալիր արմատները, որոնք իր գործը պիտի վերսկսին. վերանորոգման, շարունակության ավիշը կբարձրանա իր կանանչ ճյուղերն ի վեր, որոնք դեպի առաջ, դեպի վեր կխոյանան հույսի թռիչքներով։

Սեղան մը, հեռուն, կհնա իր բեռին տակ։ Ինչպե՞ս համրել անոր վրա Գավաշի քաղցրը, Մոկաց մեղրը, Կարկառի զարտեն, Սպայկերտի տրմսը, Շինիձորի մլտիկը, Խիզանի խնձորը, Կարճկանի փոխինդը, Կյուզալտերեի ոուփը, Բզնունիքի ղայութը, Մշո դաշտի բաղարջը, Մոտկանի միրգը, Բաղեշի զարկած քաղցրը, ու պտուղներուն կույտը, որ կբարձրանա խայտաբղետ։

Անդին, տաքուկ քյուրսիին շուրջը, որոնց տակ շարված են կրակով լեցուն հողե թաղարներ, շալե բարձերու ու հաստ գորգերու վրա նստած՝ ուրիշ խումբ մը Նոր տարիի հացը կբաժնե, մինչդեռ, ավելի հեռուն, թոնիրին բոլորտիքը, պրկիշին առջև, բազմաթիվ ճյուղերու բաժնված հսկա մոմի մը լույսով, ամբողջ ընտանիք մը լոլեին գալուստը կտոնե։

Փողոցին մեջ երգ մը կվազվոտե հիմակ։ Խումբ մը տղաք, ճիտերնին մեկ-մեկ տոպրակ անցուցած, ձյուներուն մեջեն կանց-

նին ցատկրտելով, դոներուն զարնելով ու երգելով ձայնով մը, որ կաշխատին ողորմուկ ընել.

Այսօր կախ է,
Վաղը կաղընտ է.
Տանտիկին, տանտիկին,
Ելիր գնա մարագն ի վար,
Կարճ բռնե, երկայն կըլրե,
Կամացուկ, որ մատդ չկըլրես։

Ու տանտիկինը դուռը կբանա, ու տուպրակները կլեցվին թութով, պաստեղով, ընկույզով, բլիթով, ու «շե՛ն կեցի»-ները կթափեն մանկական բերաններեն։

Կաղանդի կորկոտը ու յոթնազգի ապուրը անդին սեղանի մը շուրջը հավքած են խոսող խնդացող բազմութիւն մը։ Բայց աչքս անոնցմե կբաժնվի ու կհառի քիչ մը հեռուն, աղվոր հարսի մը վրա, որ տանը գոմին դռանը առջև կեցած, կկաղնտե արջառները, կուկուլ նետելով անոնց բռնալիր. չէ՞ մի որ տունեն են անոնք ալ, ու տարին ի բուն աշխատեցան նույն վաստակին համար, արութիւն և առատութիւն հացին համար դատեցան անոնք ալ իրենց տերերուն հետ քով քովի։ Կինը մեկ ձեռքով կշոյե հիմակ գոմշուկի մը ճակատը, մինչ անասունը, իր բարի աղվոր աչքերը խնդութիւնամբ լեցուն, անոր մյուս ձեռքին մեջ կուտե հատիկները։ Ու հարսը կերգե.

Եկե՛ք, սիրուն բուշիկներ,
Սիրամ ու կարմիր գույներով,
Ձեզի ալ տամ հատիկ կեր,
Որ կաղընդչեք եմ բերեր.
Դուք ալ ապրիք տարիներ
Ձեր սիրական զավակով,
Համբուրե՛մ ձեր ճակատներ,
Սյուսլյու պուռմա կոտոշներ։

Ու կծռի, խանդակաթ համբույր մը կդնե անասունին ճակտին վրա, որ, գգվանքին տաքութենեն հաճ, գլուխը կերկնցնե՝ շոյանքներ խնդրող պաղատանքով մը։

Վայելքին ու մոռացման մեծ երանութիւնը կտարածվի ամեն կողմ, անշրպտելով երեկվան ցավերը ու վաղվա հոգերը։ Մեծ դադարն է ասիկա, անհետացնելով հոգնութիւնները ու զրկանքները, գալիք օրերուն համար նոր ուժեր պատրաստելով, ամրապընդելով արի հավատքը, որ դարերե ի վեր այդ հողին կկապե զիրենք՝ վհատիլ չգիտցող վստահութիւնամբ մը, տկարանալ չգիտցող կորովով մը։ Ու մարդիկը, որ կտեսնեմ դիմացս, կխնդան, ու կիները կժպտին, ու պզտիկները, թևերնին վեր, կպարեն։

Վերջին երևույթը, որ աչքիս առջև կպարզվի, կհոլովի ձյունոտ ճամփաներու մեջև, ծառերով եզերված՝ որք իրենց կնգումի մուշտակին տակ կսիգան։ Նորատի կիներու տողանցութիւն մըն է ան, որ գեղեն կերկարի, առտվան մթնշաղի, դեպի աղբյուրը։ Ամենքն ալ կերթան, երկյուղած ու պատկառոտ, ձեռվընին հատիկներով լեցուն, ջուրը կաղընտելու, ջուրը սրբազան ու բարերար։ Մայրն է ան ուսկից բարիքները կբխին, որ կարգասավորե ջանքերը ու կպտղաբերե հոգնութիւնները։ Ու նորատի հարսերը, աղբյուրին գլուխը կեցած, որ իրենց առաջին շիկնոտ տարփանքները տեսան, ջրին մեջ կնետեն հատիկները՝ բնութիւնան մեծ ամուսնութիւնը կատարող, բեղմնավորման մեծ խորհուրդը տոնող քրմուհիներու պաշտամունքով մը։ Ու հատիկները առնող տանող ալիքներուն խոխոջը զվարթ խնդումի մը պես կցնծա։

Քիչ-քիչ այս ամենը սավերին մեջ կթաղվի, շրջագիծները ու պատկերները կանհետանան ու ամեն բան աներևույթ կըլլա խավարին մեջ, որ աչքերս կլեցնե։

Տեղութիւն մը կանցնի, զոր չեմ կրնար որոշել երազանքի մեջ կորսված։ Ծրբոր անկից կսթափիմ ու աչքերս կհառեմ դարձյալ մութին մեջ, նույն տարածութիւնն է, որ երեան կուգա, նույն շրջանակն է, որ կգծագրվի, նույն լեռները ու նույն դաշտերը, նույն փողոցները ու նույն գյուղի ճամփաները։ Բայց ինչո՞ւ անունը, որ ամենուն վրա կտարածվի սավառնաթև, արյուն կկաթկթե։

Ձյունը նորեն պատած է ամեն կողմ. բայց ահռելի ցուրտ մը կելլե անկե, չար ու անողոք։ Լեռները խոժոռ ու դաժան կնային, ու տարսուռ մը կվազե անոնց վրա։ Հովը կփչե կատաղաբար, երբեմն սուր՝ ագռավներու կռինչի մը պես, ու երբեմն բուերու, հազարավոր բյուրավոր բուերու հուլուլմանը պես վայող։

Լռութիւն մը կտիրե, ա՛լ չխոսող բաներու ահավոր լռութիւն մը։ Հովն է, որ միակը կձայնե, ու անոր մեջ մորմոքներ կհեծկըլտան ու կսկիծներ կհառաչեն։

Մա՛րդ չկա դուրսը։ Ամայութիւնը իր սոսկումը կսփռե ամեն

կողմ։ Ամեն բան թախծություն մը հագած է, ա՛լ չապրող բաներու խորին թախծությունը։

Մոխիրի համ մը կա օդին մեջ։

Դաշտերը մերկ են, ու ծառերը, կմախքներու պես կանգուն, անձկագին գալարումներով կդողդղան անոնց մեջ։

Տունները իրարու վրա սեղմված, սմքած են, ու ցավը ու անձկությունը կպտտին անոնց վերև։

Սուգի երկիրն է ասիկա, հյուրամերժ ու անխնդում։

Բայց ահա երդիկի մը տակ սեղան մը կտեսնես։ Բազմություն մը նստած է անոր շորս բոլորտիքը, մեծ մայրը իր զավակներով, հարսներով, թոռներով։ Կաղանդի սեղան մըն է ասիկա, բայց ո՛չ Նոր տարիի հացը կա վրան, ո՛չ պտուղներու կույտը, ո՛չ մեղր ու ո՛չ գինի։ Թոնիրին մեջ կրակը մարած է շատոնց։ Կանթեղ մը կպլպլա միայն անկյուն մը, ու անոր տատանոտ լույսն է միայն կենդանի այստեղ։

Որովհետև այդ բոլոր մարդիկը չե՞ն խոսիր, չե՞ն երերար, չե՞ն նայիր։

Աչքերս կհառեմ։

Ա՜հ, մեռած են։

Ու ի՜նչ մահով։

Մեծ մոր աչքերը փորված են, ու անոնց խոռոչը կբացվի, կխորունկնա ահավոր։ Վզին վրա լայն վերքի մը շուրջը արյունը փխտացած է, սև ու փայլուն։ Իր քովը, անդրանիկ զավակը իրեն կոթնցուցած է իր գլուխը, որ մարմնեն անջատված է։ Իր պզտիկ հարսը դիմացը նստած է ծիծերը կտրված ծունկերուն վրա սեղմված նորածինի մը դիակը։

Ու ամենքն ալ այսպես ահռելի վերքեր ունին, ու կյանքը խույս տված է ամենեն։

Բայց չէ՜. երեք պզտիկ ահա կշարժին։ Ողջ են։ Հագուստ չունին գրեթե, իրենց ոտքերը բոբիկ են, սեղանին վրա բան մը չիկա ուտելիք, բայց պողպատի ամրությամբ կեցած են հոն ու կհսկեն սգավոր տան վրա։ Ու ժամերով, ժամերով արթուն, պզտիկ պահապանները կնային իրենց մեռելներուն, գիտակից աչվքներով, որոնք կվառին։

Ու իրենց աչքերը անհամար բաներ կզուրցեն իրենց անկենդան սիրելիներուն։ Անոնց դեմքերուն վրա պայծառություն մը կտիրե հիմակ, ու մեծ մայրը, ոտքի կանգնած, անհուն վստահությամբ մը ուռեցած, դողդոջուն ձեռքերը առաջ նետած, իր օրհնությունը ու հավատավոր մաղթանքները կղրկե պզտիկներուն, որոնք իրեն կնային միշտ, գիտակից աչվքներով, որոնք կվառին։

1898

ՅԵՂԻՆ ԶԱՅՆԸ

Միսիս ***-ի հետ-միջօրեի թեյին էր։ Ընդարձակ սրահին մեջ հավաքված կանացի բազմության զվարթ ոգևորությունը կխնծզար ախորժական խժլտուքով, որուն մեջ մերթ ընդ մերթ մանկամարդ անգլուհիներուն սրտաբաց ու մատղաշ ծիծաղին բոժոժումները կերկարաձգվեին։

Հունիսի արև մը դուրսը կլուսերփներ թեթև մառախուղը, որ ամառնամեջի այդ օրն իսկ՝ կփաթթեր, կպարուրեր մոտակա հորիզոնները, հավատարիմ գուրգուրանքով մը։ Արևուն ճառագայթները կուգային կհալեին այդ փոշեղեն բակին մեջ, որ, քիչ մը հեռուն, ամեն բան կշրջապատեր խարտյաշ շամանդաղներու խտացումով մը։

Մինակության բոպեն մը օգտվելով, կդիտեի, ապակեվոր պատշգամեն, պարտեզը, որ աչքիս առջև կփռեր իր անգլիական բարեձևությունը։ Կարմիր ու վարդապիսակ ճերմակ ժերանիումներու փառփառ ու դիմացկուն գույներուն պոռթկումովը պոռոտ ածուներու մեջտեղ, մարգագետին մը, հստակ ու պարզ, իր կակուղ, հորդ ու թավ կանանչությունը կզեղուր։ Հյուսիսի այն յուղոտ ու թավշային կանանչը, ա՛յնքան ուժով ու հյութեղ, այնքան պատկերի, ներկի կանանչ մը, որ ա՛լ արհեստական կթվի։

— Օ՜հ, ինչ աղեկ հանդիպում,— ըսավ հանկարծ քովս ի վեր տանտիրուհին, որուն ետև բարձրահասակ մեկը կեցած էր,— ձեզի կներկայացնեմ տր. Ջեյմս Քլարքը, որ վերջերս Հայաստանեն դարձավ։ Անշուշտ շատ բաներ պիտի ունենաք իրարու ըսելիք։

Ներսիդիես դժգոհություն մը ունեցա այս ներկայացումեն։ Ո՜ւհ, հարկ պիտի ըլլար նորեն ողբալի հարցումներու տարափ մը կրել, ապուշ հետաքրքրություններ դոհացնել, վիրավորիչ տարակույսներ փարատել, արգահատանքներ կուլ տալ։ Օ՜, անգլիացի պառավ աղջիկներուն ժոռատ ու նվաստացնող կարեկցությունը՝

զոր միսիոնարներ անդագար կարծարծեն կեղծավոր արցունքներով և զոր մեր գործիչներեն շատերն ալ սնուցած են ախմարոբեն, մեր ազգային զարհուրելի տոամին մեջ ուրիշ բան չգտնելով ի տես դնելիք, բայց եթե լալկան ու ձեռնամած պաղատանքներու թոթովում մը։ Օ՜, այն ամուլ ու ըմբոստացնող հետաքրքրությունը, զոր ստիպված ես կրել, որ անողորմ դանակի մը պես նորեն ու նորեն վերքերուդ մեջ կմխրճի, ցավերուդ սրբությունը կպղծե, Տանջանքներու Մյուզեի մը հանդիսատեսին շահագրգռությամբը՝ դեռ չլրսված մանրամասնություն մը, անտիպ չարչարանք մը կակնկալե, բերնեդ, տեսակ մը ախտավոր ու մարդկային հաճույք գտնելով՝ իր խաղաղ ապահովությանը մեջ՝ ուրիշներուն տառապանքին ահավորությանը առջև։

Տոքթորը քայլ մը հառաջացավ, ու ձեռքս սեղմելով անգլիացի ճենթլմենի մը հատուկ այն տաք, առնական և ուղղամիտ սեղմումովը, որուն մեջ ա՛լ վերապահում չիկա.

— Պարոն,— ըսավ,— ուրախ եմ, որ հայու մը ձեռքը կսեղմեմ և առիթ կունենամ հայտնելու ձեր ցեղին համար ունեցած սքանչացումս։

Երեսուն-երեսունհինգ տարեկան առույգ մարդ մըն էր, իր երկայն ու պիրկ սրունքներուն վրա ամրապինդ։ Սկովտիացի մը, ապահովապես, այն շատ մտացի, շատ խոհուն արտահայտությամբ, որ այդ դնդերոտ, կորովի ու հաղթական ցեղին բարձր նյութականությունը կմեղմե ու կկատարելագործե։ Իր խած ու բարի աչքերը՝ երկար ու հետապնդող նայվածքով, իր թրթռուն շրթունքները՝ կենդանությամբ լեցուն, իր լայն ու գմբեթարդ ճակատը ներուժ մտավորություն մը կսփռեին ամբողջ դեմքին վրա, սրբագրելով գործողության մարդուն հայտարար հակիրճ ու կտրուկ կերպերը և տիրապետող ու ամուր շարժվածքը։

— Նախ ըսեմ ձեզի, որ,— սկսավ, երբ առանձնացանք ապակեզոր պատշգամին մեկ անկյունը՝ ուր մատաղ արմավենիներ, պտերներ ու ասբիտիսթրաներ, դեղին ու կապույտ լայն թազարներու մեջե, իրենց զեղուն բուսականությունը կսկսեին բոլորշի,— ես միսիոնար մը չեմ, և եթե Հայաստան գացի, այսինչ կամ այնինչ հարանվանության փառքին՝ նոր «դաշտեր» գտնելու նպատակով, երկնքին, անգլիացի նվիրատուներուն և սովամահ թշվառներու հոգիներուն մինչև պարտի պահանջեի ծիծաղելի ու անարգ հաշ-

վեկշիռ մը բռնելու նպատակով չէր, ո՛չ ալ նպաստ բաշխելու որբերու և այրիներու։ Չէ՛։ Ձիս առաջին անգամ հոն քաշողը եղավ ճանկնալու, ըմբռնելու տարօրինակ պետք մը։

Երբոր ջարդերուն առաջին լուրերը եկան Անգլիա, ես ալ, շատերու պես, նախ, հեռավոր ուշադրություն մը նվիրեցի այդ եղելությանց, որոնց վավերականությանն ալ, կխոստովանիմ, շատ կկասկածեի, մինչև այն օրը վերջապես, ուր, պաշտոնական տեղեկագիրներեն հետո, ա՛լ կարելի չէր տարակուսիլ աղետին ճշմարտությանը ու ահագնությանը։ Երբ հետզհետե հասան բոլոր մանրամասնությունները, երբ մութին մեջեն իրարու ետևե մեջտեղ բերվեցան դեպքերը, նորանշան բան մը անցավ իմ մեջս։ Հակառակ ամեն փաստերուն, չէի կրնար կոր հավատալ այսպես ամբողջ ցեղ մը բնաջինջ ընելու կարելիությանը, այսպես կազմակերպված, սիստեմատիկ վայրագության մը, սահմռկած մնացած այն «ինչո՛ւ»-ին առջև, որ միտքս կլլկեր հարաժամ։

Ազատ մարդ մըն էի, անկախ, և որոշեցի անմիջապես Հայաստան երթալ։

972

96-ի գարնանն էր, որ հասա հոն։ Առաջին երեք-չորս շաբաթը վարած կյանքիս վրա բան մը չի կրնար գաղափար մը տալ ձեզի։ Արհավիրքը իմ մեջս էր ու իմ շուրջս։ Արյան մեջ կքալեի կարծես. հողը դեռ անով թաց էր, անձրևով թուրմ մարգագետնի մը պես, որ ոտքերուդ տակ կճխլտա։ Աչքս կարմիր կտեսնես։ Մահվան ամեն ծամածռությունները, ցավին բոլոր գալարումները, տանջանքին բոլոր զգայումները տեսա, այո՛, տեսա, ա՛լ ա՛յնչափ անոնց ամենօրյա միօրինակ պատմությունները լսեցի։ Ջախջախված գանգերու, ուղեղի լխպիքներու, փխտացած արյան, հոշոտված անդամներու, պոռթկացող փորոտիքներու խառնամառնում մը աչքես չէր հեռանար ամենուրեք։

Երբ այս անցյալեն հիվանդ՝ ներկայովը զբաղվիլ ուզեցի, տեսա, որ ցավելու, կրելու կարողությունս զոր ա՛լ բթացած կկարծեի, կվերարծարծեր նոր սաստկությամբ մը։ Ավերակներու երկիր մըն էր բոլորտիքս, ուր կիներ, տղաքներ ու ծերունիներ խլյակներու պես, կթափառեին աննպատակ, ա՛լ բանի մը չսպասող, ա՛լ ամեն բանե հրաժարած էակներու խորին տրտմությամբը։ Ա՛լ բան մը չիկար ընելիք այդ երկրին մեջ. մահը լավ տեսած էր գործը, քայքայումը կատարյալ էր. անոնց որ դեռ կանգուն էին, ուրիշ դեր վերապահված չէր թվեր, բայց եթե կարգավ իրար թաղել, գե-

բեզմանական լռության մեջտեղ, որ հետզհետե կիջներ։ Ուրիշ բան չէր թվեր մնալիք այդ ամբողջ երկրին, բայց եթե անօրինակ մեռելաստանի մը հիշատակը ընդհանուր մարդկության խղճին վրա։

Կպատրաստվեի Անգլիա դառնալ։ Ընկերական անլուր խնդիր մը ուսումնասիրելու, գիտնականի հետաքրքրություն մը գոհացնելու եկած էի, ու տեսածես զահանդյալ, լսածներես խելացնոր, դատելու, խորհրդածելու, եզրակացնելու կարողությունս կորսընցուցած, գեշ ու այրող ըմպելիք մը խմած մարդու մը պես դանդաչելով, սիրտս պատառ-պատառ ու ա՛լ մշտնջենապես կորսնցուցած կարեկցելու սուրբ հրճվանքը, մե՛կ փափագ մը ունեցա— հեռանալ այդ անեծքի երկրեն։

Պատրաստություններս տեսնելու վրա էի, երբոր հանկարծ արտակարգ երևույթ մը աչքիս զարկավ։ Բնության վերակենդանության հետ, տարօրինակ բան մը տեղի կունենար կոր։ Հոն ուր մահը իր անճողոպրելի ու վերջնական թաթը դրած կկարծեի, կյանքի խլրտում մըն էր, որ կսկսեր տակավ առ տակավ, վախկոտ, բայց համառ։ Նորեն անցա այն տեղերեն, զորոնք մշտնջենական անշարժության դատապարտված կհավատայի, ու տեսա, որ կենդանությունը գլուխը կվերցներ ու չորս դին կնայեր։

Ա՛լ մնացի հմայված։ Ասիկա նույնչափ և ավելի արժանի էր հետազոտության, որչափ առջինը։

Երկրագործը, դրացի քյուրտեն արոր մը փոխ առած, հերկին վրա էր գլխիկոր ու փութաջան, կոշկակարը իր խանութին մոխիրներուն և փլատակներուն մեջեն հերյուն մը գտած ու փողոցի մը անկյունը գործի սկսած էր, խանութպանը իր շալակը մեկ քանի ծրար՝ կարտորար դեպի խնդրանքները, արհեստավորը նորեն ծալապատիկ նստած էր կոտրած թեզկեաճի մը առջև, որ սակայն կարտադրեր, ուսուցիչը տղաքներու խումբ մը ժողված խարխով ախոռի մը անկյունը, կկարդացներ զանոնք, վաճառականը ոտքի վրա ապսպրանք մը կհամարձակեր։ Ճղճիմ, նիհար, արգահատելի գործեր անշուշտ, բայց ասիկա կյա՛նքն էր, որ ծայր կուտար, առաջին քայլերը դեպի շարժումը, դեպի ոգևորությունը։ Մարդկության սկզբնավորության պես բան մը։ Զարթնումն էր, վերածնունդը, ու ամենքն ալ քիչ-քիչ անոր գինովութենեն կբռնվեին։ Ամենօրյա ճիգն էր, որ կսկսեր, անդուլ, բանիմաց ամբողջական ճիգը, որ ընկերությունը կշինե, որ հառաջդիմությունը կստեղծե։ Դեմքերուն վրա, այն թախծությանը քով, որ չի փարատիր, որ

մորթին փակած է դարերե ի վեր, հավատքին լրջությունը կար նորեն, ու կամքին պրկումը։ Աշխատանքին լծված էին, ազատարար ու մխիթարող վաստակին, ինչպես մարդ փրկության խարխսխին կպլլվի։ Ապրի՛լ կուզեին կոր, ու պիտի ապրեին։

Ան ատեն էր միայն, որ հասկցա ջարդերուն վայրագ տրամաբանությունը։ Ստորին, անընդունակ, ապիկար ցեղ մը, մրցելու անկարող և ատկից զատ ուրիշ միջոց չունենալով, իր ուժեն օգտված էր զինքը շրջապատող բարձրագույն ցեղ մը ոչնչացնելու, անոր վազքը կեցնելու, անոր կողոպուտովը քիչ մը ատեն ևս ապրելու համար, վերջնական անհետացումեն առաջ։ Բնական բան մըն էր ասիկա, քաղաքակրթության հառաջագույն վիճակ մը, որ այդտեղ կվերանորոգվեր, անձավներու խորհրդին մեջ ապրող արյունալի մարդկության կրկնությունը։

Բայց այն մարդիկը, ըսի, ապրիլ կուզեին կոր, ու պիտի ապրեին։ Ասոր կամքը ունեին, հակառակ ամեն բանի, ընդդեմ ամեն բանի, ու ոչինչ կրնար կեցնել զիրենք։ Տառապանքին մեջ նոր ուժ մը կստանային, անոր մեջ մուխ մը կգտնեին. անկից կառնեին իրենց հյութը, իրենց կենսունակությունը,— ձյունածաղկին պես, որ ձյունին տակ կփթթեցնե իր առողջ ու աղվոր թերթերը։

Ու քիչ-քիչ ես ալ բռնվեցա, վարակվեցա այն վերականգնումի, դարմանումի տենդեն, որ այդ բոլոր մարդիկը կթոթվեր։ Ես ալ իմ պզտիկ բաժինս ունենալու էի ընդհանուր շարժումին մեջ դեպի վերստացումները, իրենց հետ, իրենց քով։ Ու նույն հետայն որոշեցի որբանոց մը հաստատել, կամ ավելի ճիշտ՝ տուն մը, ուր քսանի չափ որբեր հավաքեի և զանոնք բարոյապես զինեի այն ծանր, անխնա, ոգի ի բուին ոգորումին համար, որ իրենց կսպասեր այդ արության ու տոկունության հողին վրա։

Պտտած ամեն տեղերուս մեջ, Մալաթիան մասնավորապես իս հանկուցած էր իր աննման գեղեցկությամբը, գետին եզերքը ուռճալիր ծառերու տակ կորսված տուներովը, ուր ժիր ու խելացի ժողովուրդ մը, աղետքին մեջ ամենեն ավելի սաստիկ հարվածված, նորեն ոտքի կելլեր հաստատ առաջադրություններով։ Հոն հաստատվեցա, ու շատ չանցած գտա իմ ուզած տղաքս։ Սովորական տիպարը ունեին ամենքն ալ, ամենքն ալ դժգույն, նիհար, սև ու խիտ մազերով, շատ կարծր, շատ նեղ, բայց շատ համառ ճակատով, տարօրինապես մտացի ու կրկտող սև աչքերով, որոնց շուրջը մրագույն ծիր կա միշտ, այն տարիքեն առաջ արթնցող զգացողու-

թյան ախտավոր ծիրը, կհասկնա՞ք, որ խելացի ցեղերու հասկանելն է սակայն։ Բարեբախտություն ունեցա գտնելու հայ կին մը, Փոքր-Ասիո մեկ ամերիկյան կոլեջին մեջ կրթված, որ իմ ծրագիրս հասկնալու և գործադրելու ընդունակ գտնվեցավ։ Բայց ես էի, որ կկարդացնեի տղաքը, իրենց խաղերուն ու մարզանքներուն կառաջնորդեի ժամերով, ու կխոսեի իրենց երկարորեն, տունը թե դուրսը, իրենց հայրենիքին վրա, իրենց կոչումին վրա, իրենց գերին վրա։ Ու գոհ էի գործես, իրենց մեջ արթնցող կայծին տաքութենեն։

Օր մը մոտակա գյուղացիներ տղա մը բերին ինձի, զոր ճամփուն եզերքը բռներ էին, միս մինակ քարի մը վրա հանգչած առեր։ Հակառակ բոլոր բաղձանքիս, ստիպված էի մերժել այդ կարգի բոլոր դիմումները, որովհետև տեղ չունեի. բայց երբ տղան մոտեն զննեցի, անմիջապես վար դրի զինքը։ Կորյունի պես բան մըն էր. գոռոզ առատ մազեր ուներ, երկու կողմեն ուռուցիկ ճակատով, կրակե աչքերով։ Ուրկի՞ց էր, ո՞ւր կերթար, չկրցավ որոշ բան մը ըսել։ Կհիշեր միայն, թե հոտաղ մըն էր ինքը, օր մը քյուրտեր լեռան վրա իր նախիրը քշեր տարեր էին՝ իրեն մեկ քանի հարված տալե ետքը. գյուղը դառնալուն՝ արդեն մոխիր դարձած գտեր էր զայն, ու ա՛լ կենդանի էակ մը չկար հոն, ամենքն ալ սպանված կամ փախած. ինքն ալ ճամփա ելեր էր՝ իրենները գտնելու հույսով, ու անկից ի վեր կթափառեր. ձմեռ մը եկեր էր, գարուն մը անցեր էր, ու ան այսպես կերթար լեռնե լեռ, գյուղերե ու քաղաքներե անցնելով, առանց կանգ առնելու։ Ինչպե՞ս ապրեր էր. չէր գիտեր, ապրեր էր։ Ուրկի՞ց կուգար. ձեռքովը լայն շարժում մը կբներ, դեպի հյուսիս, Դերսիմի լեռնաշղթան։

Ա՛լ ամբողջ հոգածությունս իրեն նվիրեցի։ Խեռ, անհանգարտ, ապստամբ տղա մըն էր։ Ութ-ինը տարեկան ըլլալու էր, բայց անհավատալի ուժ մը ուներ, վայրի կատվի դյուրաթեքություն մը։ Երեք անգամ վարժուհիին ձեռքեն փախավ, անոր երեսը ճանկոտելով ու շրջազգեստը բզկտելով։ Երեք անգամուն ալ գյուղացիները գտան զինքը հեռուները ու նորեն ինձի բերին։

Քիչ-քիչ սակայն կակուղցավ, մարդոտեցավ։ Կերպարանափոխությունը սկսավ այն օրեն, երբ սկսանք իրեն կարդալ սորվեցնել։ Հարավային Ամերիկայի բամբասներուն մեջ, երբ վայրի ձիերու որսորդը լազգան կնետե ու անասունը իրեն կքաշե, ձին կվրնջե, կուրացե, կծառանա փախչելու, երթալու կատաղությամբ մը։ Ան

ատեն որսորդը անոր ռնգունքը կբանա, կմոտեցնե և իր շունչը կուտա հոն բոլոր ուժովը։ Ա՛լ անասունը իրեն է, և իր տիրոջը կհետևի ան՝ հեգ ու հլվատարիմ, առանց սանձի. անոր շունչը ունի իր մեջ։ Ինչ որ մեր բոլոր քաղցր խոսքերը, անուշ վարմունքը չհաջողեցան ձեռք բերել իրեն առջին դրված այդ պզտիկ գիրքը կրցավ ներգործել Սաքոյին հոգվույն մեջ. մեր շունչն էր, որ իր մեջ անցած էր, ու ա՛լ մեզ կկապեր զանի։ Հիմա ժամերով իր գրքին վրա գլուխը հակած, կաշխատեր քակելու գրերուն իմաստը, սորվելու մոլեգին ցանկությամբ մը։ Հակառակ մեր բոլոր հորդորներուն, կհամառեր կմնար իր դիրքին վրա, առանց մասնակցելու մյուս տղոց խաղերուն։

Բան մը չէր գիտեր, վայրի տունկի մը պես մեծցած՝ ազատ բնության մեջտեղ։ Մեկ քանի շաբաթ ետքը, սկսանք իրեն խոսիլ տիեզերքին վրա, աստուծո վրա, Հիսուսի վրա։ Ան աչքերը մեզի պիշ, մտիկ կբներ, հասկնալու տենչով մը, որ իր դեմքը կմթագներ։ Իրեն կըսեի, թե գերագույն էակ մըն էր, որ բնության բոլոր բարիքները ստեղծեր էր մեզի համար, թե անոր երախտապարտ մնալու էինք, որովհետև միշտ կհսկեր մեր վրա, ու աղոթելու էինք անոր, անոր ուղղելու էինք մեր մաղթանքները, որովհետև պիտի տար մեզի ինչ որ իրմե խնդրեինք։

Իր կրկնապատկված ուշադրությենեն կհասկնայի, թե ամբողջ ցնցում մըն էր, որ կկատարվեր իր էությանը մեջ։

— Ըսե, Սաքո, դու ալ բան մը ուզե աստուծմե։ Ի՞նչ կուզես, որ տա քեզի։

Գլուխը ծռեց ու պատասխան չտվավ։ Ի՞նչ կանցներ իր մտքին ալքերուն մեջ։ Եղունգներովը՝ ծունկին վրա բացված գիրքը կքեղրթեր, առանց ինձի նայելու։ Վայրկյաններ անցան։ Կթողվի զինքը իր ներքին աշխատությանը հետ։ Հետո, մեկեն, նորեն գլուխը վեր առավ, իր վառող աչքերը ինձի հառեց ու ըսավ.

— Կուզեմ, որ խելք տա ինձի։

Ծ՛, գիրկս առի զինքը, ու սեղմեցի զինքը թևերուս մեջ, անկուշտ համբուրելով իր աչքերը, որոնք հիմա թաց էին։ Ցեղին ձայնն էր, որ կխոսեր իր բերնովը։ Անգիտակցաբար, բնականորեն, կխնդրեր այն զենքը, որ պիտի ապրեցներ զինքը ներկա քաղաքականության մեջ, միակ ուժը, որ իրեն անհրաժեշտ էր։ Արյունին մեջ ուներ այդ պետքը դեպի խմացականությունը, դեպի գիտու-

թյունը, դեպի հառաջդիմությունը, դեպի հաղթանակը։ Ատո՛վ էր, որ իր ցեղը տեսեր էր, ու պիտի տեսեր։

Չէ՛, այդ ձգտումովը, դեպի այդ հորիզոնները լարված կամքով մը, վախ չկա, որ հայությունը կորսվի, պարո՛ն, հարեց տոքթորը ոտքի ելլելով։ Ամիսե մը նորեն Հայաստան պիտի դառնամ։

1898

ԼՏՈՒՏ

Տիկ. Զ. Ե.-ին

Ետքեն է, որ սորվեցա այս բառը։ Ու մինչև հիմա ալ չեմ գիտեր, թե որչափ շիտակ է ան, և իրոք իմ մանկությանս զմայլելի ու աննման չեքլեմպի՞ճն է։ Իրերու և առարկաներու համար գրքերե առնված ու բանասերներե գործածված ա՛յնքան բառեր կան մեր մեջ, որոնց վրա կխնդա հայ գյուղացին, երբոր իր առջև կգործածես զանոնք։ Իրարու նմանող բաներու հատկացված են ատոնք՝ իրենց հմտությունը գրքերե քաղող ուսումնականներու կողմե, բայց բուն նշանակության քովն ի վեր կսլքտան։ Մեզի համար, որ դպրոցին մեջ սորվեր ենք մեր լեզուն, թաղար պետք է ըսել ծաղկամանին։ Կհիշեմ, որ Ալեքսանդրոպոլի մեջ, հայ պառավի մը մատնանիշ ընելով իր պարտեզին անկյունը ծաղկաման մը՝ ըսի իրեն.

— Օ՜, թաղար ալ ունիս։

— Թաղա՞ր,— զարմացավ պառավը ժպտելով։— Տո՛ւնդ չքանդվի, թաղարը էն ամանն է, որուն մեջ թոնիրեն ավելցած մոխիրը կդնենք։

Բայց եթե լտուտը շիտակ բառն ալ ըլլա, ինձի բան մը չըսեր, իմ մեջս չարթնցներ այն անորակելի սխրանքը, որ հիշողությանս մեջ կապված է չեքլեմպիճին հետ։ Այս ներդաշնակ բառն է միայն, որ անմիջապես կպատկերացնե ինձի անուշ վայրի պտուղը, պտղիկը պիտի ըսեի, որ ծառի վրա կբուսնի և որուն չափ համով բան ես չեմ ճաշակած երբեք։

Իմ քիմքս կճանչնա բոլոր բարիքները, զոր առատաձեռն բնությունը շռայլեր է՝ մարդուս զգայական հրճվանքին համար։ Շատ

տեղ եղեր եմ, ու գիտեմ Երևանի ասքերին, Կ. Պոլսո չավուշը, Զարճուի սեխը, Քենթի կեռասը, Եգիպտոսի մոսը, Մոնթրեոյլի դեղձը, Պոցդամի ելակը, Գրոզնիի ձմերուկը ու Սեն-Մարսել-դ՝Յուրֆեի անզուգական ռեն-գլոտը, որ աստվածուհիներու համար ստեղծված է անշուշտ։

Բայց ի՛նչ են ասոնք չեքլեմպիճին քով։

Ես բոլոր համերը գիտեմ։ Լապոնիո սառնամանիքներուն մեջ, Հաբարանտա, ճաշակեր եմ ռեն-սթեքը, հյուսիսի եղջերուին ծխած զիստը, որ կարծեմ ամենեն համեղ ուտելիքն է, զոր մարդկային խելքը խլած ըլլա բնության գաղտնիքներեն, և ինձի ծանոթ է Քուրի բերանը, Պանքի եղերքին վրա, մարտ ամսուն, նոր ճեղքված սերուկայի փորեն հանված թարմ խավիարը, գորշ պզտիկ մարգրիտի նման, որ երկնային պարգև մըն է իրոք։ Ես վայելած եմ էլբրուսի ծաղկավետ ու խնկաբույր լանջերուն վրա արածած գառնուկը, ուսկից ավելի ախորժելի միս մը գտնելու համար պետք է երթալ, կրսեն մինչև Պաթակոնիո մշտադալար արոտավայրերը, զորոնք կավլե օվկիանոսին աղի հովը, բայց ի՛նչքան հեռու է, ավա՜ղ, Մագելլանի հրվանդանը։ Ինձի համար գաղտնիք չունի Վոլգայի սթերլետը, ու Գոլֆ-Սթրիմի խնամոտ տաքությանը մեջ մեծցած շեթլանդյան սդակոսը։ Իրենց տեղին վրա ըմբոշխներ եմ Լանգդոգի պարարակ սագի լյարդը, որ ֆրանսական հանճարին ամենեն պանծալի ստեղծագործություններեն մին է ապահովապես, ու Լիմբֆիորդի հսկա ոստրեները, որոնցմով երանությունը կարծես բերանդ ի վար կհոսի։ Իմ ախորժակս գգվեր փայփայեր են նորվեգիական Ֆինսեին կատարը որսացված կաքավը՝ ուռճալիր հավամրգիով սնած, Զանգվի պզտիկ կարմրախայտները ոսկի պիսակներով աստեղացած՝ զոր կարկանդակի պես կուտե մարդ, Սքագերրաքի ֆիորգներուն չըլլալիք քարիտեսները, և Կամչատկայի բիապչիքը, զոր բալխիրները երեք ամիս շարունակ ձյուներուն վրայեն սուրալով կբերեին Մոսկվա կամ Պետրոգրադ։ Ու ձեզ չեմ մոռնար, ո՜վ Ռեշտի շիլա-փլավ, զոր պարսիկ վարպետ մը սիրողաբար հրաշակերտեր էր, և քե՛զ, Սևանի իշխան ձուկ, սաճի վրա սոխի հետ խորոված և քչիկ մը մրկա՛ծ։

Եվ սակայն ասոնցմե ոչ մեկը ինձի առթած է այն անասնական խորունկ բերկրանքը, զոր մանկությանս ինձի կուտար չեքլեմպիճը։

Ամեն բանե առաջ, հազվագյուտ էր ան, բոլոր ազնվական

բաներուն պես, ու չէիր կրնար մեկ քանի փարայով կամ զուրուշով գնել զայն անկյունի մրգավաճառեն։ Իր հմայքը անոր մեջն էր, որ պետք էր անձամբ դատիլ ու հոգնիլ զայն գտնելու համար, ու ծառն ի վեր մագլցիլ՝ հասնելու համար իր անմատչելիութեան։ Գողտուկ բաներու անդիմադրելի հրապույրն ուներ ան. բայց ի՜նչքան մեծ էր վարձատրությունը, երբ ձեռքդ իր վրա կդնեիր ու գրպաններդ անով կլեցնեիր։

Հասած չեքլեմպիճը մութ մանիշակի առողջ գույն մը ունի, մուղտ ցոլքերով։ Միսը—ա՜հ, միսը—թեթև կանանչորակ, մեղմ ու փխրուն, շաքրոտ թեթև համ մը ունի, ո՜րքան ավելի բարձր մեղրին կոպիտ քաղցրութենեն, ու վայրի ծաղկի առողջ բուրմունք մը. միակ թերությունը թերևս այն էր, որ— ինչո՞ւ, ո՞վ տեր, անթերի բան չկա այս աշխարհիս վրա,— կորիզը շատ խոշոր է. բայց իմ մատաղ գայլի ակռաներս ինչպե՞ս կփշրեին անոր կակուղ անհարթ փայտը և մասնավոր համ մըն ալ անկից կհանեին։

Ափսոսանքով մը կհիշեմ, որ չեքլեմպիճի ծառ չկար ամեն տեղ։ Ես մեկ քանի հատ կճանչնայի Վանքին Այգիին գերեզմանատունը, մին մանավանդ Դուրյանի շիրիմեն ոչ հեռու, ու հատ մըն ալ, բարձրաբերձ ու մեծապայծառ, Իճադիեեն Քուզգունճուք տանող ձորին մեջ, բլուրին ստորոտը սայթաքող սապատող կածանեն քիչ մը անդին, դաժան մորմենիներով շրջապատված, որ անոր կույս առանձնությունը կպաշտպանեին թույլերուն ու վախկոտներուն դեմ։ Գուրգուրանքով կհետևեի իմ մտերիմ ծառերուս տերևորման, ու հետո պզտիկ կանանչ գնդիկներուն սննալուն։ Ու երբ կուգային ամռան բարեբաստիկ օրերը ու ծառերն ի վեր շուլլվելով կրնայի իմ հունձքս կատարել ու գրպաններս լեցնել մինչև բերանը, ասիկա պաշտամունքի ծիսակատարության մը պես էր ինձի համար։ Անկյուն մը կքաշվեի, մարդերուն անհարկի նայվածքներեն ու մանավանդ ծակաշք ընկերներու պահանջկոտութենեն հեռու, ու անձնատուր կըլլայի վայելքին հեշտությանը...

* * *

Ա՜յնչափ ման եկա տնկից ի վեր աշխարհիս վրա, և ոչ մեկ տեղ չհանդիպեցա չեքլեմպիճի։ Ի զուր փնտրեր եմ զայն օտար երկինքներու տակ, ճամփաներուն երկայնքը ու անտառներուն եզրը։ Ու թերևս լավ է, որ չեմ գտներ զայն վերստին, անգամ մը ևս

չկրելու այն սրտաճմլիկ ցավը, որ հասուկ տարիքի թույնն է և Հիասթափում կկոչվի, ու թերևս շնորհապարտ պետք է ըլլամ բարեխնամ դիպվածին, որ զայն կպահե իր հեռավոր և անվերադառնալի քաղցրությանը մեջ, իմ Մանկությանս պես։

1927

ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՏԵՆ

Փարիզ, 1939

Կյանքիս մեջ առաջին և—գեթ այդպես կհուսամ—վերջին անգամ ըլլալով բանտ գացած եմ... Լապոնիայի մեջ...

Ասիկա սովորականեն դուրս արկած մըն է, զոր կուզեմ պատմել, մանավանդ որ, անձնական դեպքի մը առավել կամ նվազ շահեկան արժեքեն ավելի, մեծ պատերազմին ատեն դաշնակից երկիրներուն մեջ թուրքահպատակ հայերու կացության մասին ստույգ վավերագրի մը առավելությունն ունի։

Երբ 1914-ի հոկտեմբերին Թուրքիա մեկենիմեկ պատերազմին մեջ մտավ՝ Գյոբենի և Քրեսլաուի կողմե Սև ծովու ռուս նավահանգիստներուն անակնկալելի ռմբակոծումով, Պետրոգրադ կընակեի քիչ ատենե ի վեր։ Շատ չանցած, հրավեր ստացա ներկայանալու ոստիկանության, որ ռուսական խիստ—այն ատենվան համար—ու կասկածոտ ռեժիմին բերումով, օրը օրին ուներ ամեն տան իսմ օթելի մեջ ապրող օտարականներուն և նորեկներուն ցանկը, և որ ինձ հայտնեց, թե, իբր թուրքահպատակ, այսինքն՝ թշնամի երկրի մը պատկանող անձ, պարտավոր էի բնակության մասնավոր արտոնություն մը ձեռք բերել։

Պատերազմը ծագելուն պես, ակներև էր արդեն բոլոր հայության, ինչպես և Թուրքիո հայերուն խոր համակրանքը Դաշնակիցներուն դատին հանդեպ։ Պատերազմի առաջին ամիսը Փարիզ էի, երբ Մաքենն հրատարակեց ռուսական զգայացունց հեռագիրը, որ կիմացներ, թե՝ Կովկասի փոխարքան, կոմս Վորոնցով—Դաշքով, հրովարտակ մը ուղղած էր հայերուն՝ կոչ ընելով իրենց բոլոր ուժովը հարելու ռուսական դատին և խոստանալով իրենց բոլոր

բաղձանքներուն գոհացումը հավարտ պատերազմին։ Վերջին երեվան եկավ, թե այդպիսի հրովարտակ մի բնավ գոյություն չուներ և թե հեռագիրը ծայրե ի ծայր շինծու էր։

Ի՞նչ աղբյուրե կբխեր այդ լուրը, Մաքեն ի՞նչ պայմաններու մեջ էր հրատարակած զայն, ասիկա գաղտնիք մնաց։ Բայց թե հայերը, մանավանդ Թուրքիո ասպարեզ իջնելեն հետո, սրտանց Դաշնակիցներուն հետ էին, ասիկա ամեն կասկածե վեր փաստ մըն էր։ Հետևաբար, ինձի համար դժվար չեղավ ստանալ Պետրոգրադ բնակությունս շարունակելու արտոնությունը։ Վերջին, ռուս կառավարությունը, ինչպես և բոլոր դաշնակից երկրները, ընդհանուր տնօրինություն մը պիտի ընեին՝ Թուրքահպատակ հայերը «թշնամիներուն» ցանկեն դուրս հանելու։ Ըսեմ այս առթիվ, թե՝ տարի մը հետո, Պետրոգրադի զինվորական վարչության հետ մոտիկ հարաբերություն ունեցող հայ սպա մը ինձ հաղորդեց, թե՝ երկու Թուրքահպատակ հայեր, որ իբր վաճառական կճամփորդեին, ձերբակալված էին՝ լրտեսության ամբաստանությամբ, Պետրոգրադի պատերազմական ատյանեն դատված, մահվան դատապարտված և «մաքրագործված»։ Ավելի չուզեց ըսել, և չկրցա իմանալ ու մինչև հիմա ալ չեմ գիտեր թե՝ որո՞նք էին այդ երկու հայերը և իրենց վերագրված ոճիրը մինչև ո՞ր աստիճան ճիշտ էր։

Ամիս մը հետո, իմ Թուրք հպատակությունը նոր դժվարության մը առջև դրավ զիս։ Պետության ռազմանյութ հայթայթող մեծ ընկերության մը կողմե, որուն գլխավորները բարեկամներ էին, ինձմե խնդրվեցավ Անգլիա երթալ՝ կապար, անագ և մեքենաներ գնելու Ռուսիո համար։ Անմիջապես ընդունեցի, առանց մտածելու ճամփորդության բոլոր վտանգներուն։

Սակայն, ի՞նչ վավերաթուղթով Անգլիա պիտի մտնեի պատերազմի ատեն։ Թուրք անցագիրս անշուշտ չէր բավեր, մանավանդ որ պայմանաժամը շատոնց լրացած էր և հնարավորություն չունեի զայն վերանորոգելու։ Թուրք դեսպանատունը և բոլոր հյուպատոսարանները փակված էին և դեսպան ու հյուպատոս երկրեն հեռացած։ Առիթ ունեցած էի անձամբ իրազեկ ըլլալու այս իրողության։ Ասքորիա օթելին մեջ, ուր կապրեի, սենեկապանս օր մը ինձ լուր տված էր, թե՝ իմ հարկիս վրա մի քանի սենյակներ հատկացված էին Թուրք հյուպատոսներու, որոնք հետզհետե Պետրոգրադ կբերվեին Ռուսիո զանազան քաղաքներեն՝ Օդեսայեն, Թիֆլիսեն, Բաթումեն, Բաքուեն, Ռոստովեն և այլն, և Ֆինլանդիայի

վրայով Շվեդ պիտի ղրկվեին, անկից Գերմանիո-ճամփով Թուրքիա վերադառնալու համար։

Օր մը նրբանցքին մեջ հանդիպեցա իրենց ողորմելի հոտին, երբ մեղմաձայն կխոսակցեին, և, չեմ գիտեր ինչո՛ւ, չարախնդաց հաճույքը տվի ես ինձի՝ իրենց խոսք ուղղելու Թուրքերեն.

— Հանգիստ ճամփորդեցի՞ք, էֆենդիներ,— հարցուցի։

Իրենց վատառողջ ճարպի մեջ ծանրաբեռն անբան աչքերը խոշոր բացած, իրարու նայեցան ու պատասխան չտվին։

— Ե՞րբ ճամփա պիտի ելլեք,— շարունակեցի՝ առերևութապես անտարբեր կասկածին և մանավանդ զահանդյալ սարսափին, որ ակներևորեն կպատեր զիրենք։

Ու իրենց խայծ մը նետելու մտքով, ավելցուցի.

— Ես Թուրքիո հպատակ եմ։

Բառ մը չարտասանեցին, բայց, իրարու ետևե, հալածական երեի պես, իրենց սենյակը մտան խուճապով և դուռը փակեցին ամրորեն։

Ամեն անգամ, որ այս միջադեպը միտքս կուգա, ներքին խնդուք մը կողողե զիս ցնծությամբ։ Հյուպատոսները իրենք ալ մոռցած ըլլալու չեն անշուշտ թակա՞ղը, զոր իրենց լարեց ռուս գաղտնի ոստիկանությունը՝ Ասքորիայի մեկ նրբանցքին մեջ։

Նմանօրինակ ուրիշ խաղ մը պատմելու հաճույքին չեմ կրնար դիմանալ այստեղ։

1920 հոկտեմբերին, երկարամյա բացակայութենե մը հետո, Կովկասեն Կ. Պոլիս անցեր էի՝ Ֆրանսիա գալու համար։ Առտու մը, Սկյուտարեն Կամուրջ կերթայի Շիրքեթի շոգենավով։ Քովս նստած էր Թուրք մը, ավելի հատկանշական պիտի ըլլար ըսել «տաճիկ» մը, անտարակույս պետական պաշտոնյա, կարճահասակ, թիկնեղ, դժգույն, կլոր հոծ մորուքով, մին անոնցմե, որոնց համար մերինները կըսեն, թե՝ «թույն կվազե երեսեն» և զոր Թուրքերը իրենք ալ կորակեն բառով մը, որ բնակարաններու ամենեն անհրաժեշտ անկյուններեն մին կնշանակե։ Բեշիկթաշի բացերը, անցանք Դաշնակիցներու պատկառելի նավատորմիղին առջևեն, որմե քիչ հեռու խարսխված էր հելլենական Ավերոֆ զրահավորը, հույներուն փառքն ու պարծանքը։

Քովինիս դարձա և ըսի մեծ լրջությամբ.

— Վա՜հ, վա՜հ, վա՜հ, ա՞ս ալ մի տեսնելու էինք։ Ես երկար տարիներե ի վեր Կ. Պոլսեն բացակա էի, նոր վերադարձած եմ,

ու այս տեսարանը սիրտս կճմլեր։ Ինկիլիզներուն ըսելիք չկա, ծովը իրենցն է, ֆրանսացիներուն և իտալացիներուն ալ հայդե աչք գոցենք, բայց սա հելլենական տաշտը ի՞նչ գործ ունի այստեղ։

Թուրքերը, որ պետք է ընդունիլ, հումորի ըմբռնումն և հոգին ունին, շատ զվարճալի սրամտությամբ մը՝ թեքնե (տաշտ) մակդիրը փակցուցած էին հելլենական զրահավորին։

Մարդը ձայն չհանեց, բայց ես շարունակեցի.

— Սիրտ պետք է, որ դիմանա ասոր։ Հեյ, վա՛խ, ո՞ւր մնաց օսմանյան փառքը, սալթանաթը։ Այս օրերո՞ւն ալ պիտի հասնեինք։

Բառ մը չելավ իր կղպված շրթունքեն։ Բայց եթե նայվածքով կարելի ըլլար մարդ մը սպանել, տեղն ու տեղը շանթահար կիյնայի դիտապաստ։

Ժամանակ է, սակայն, Պետրոգրադ վերադառնալու։

* * *

Անգլիա մտնելու արտոնության հարցը կրցա հաջողությամբ լուծել։

Ռուս բարեկամի մը միջոցով, որ կարևոր պաշտոն մը ուներ Պետրոգրադի անգլոռուսական առևտրական սենյակին մեջ և սերտ հարաբերությամբ կապված անգլիական դեսպանի, այս վերջինը բարի եղավ ջերմ վկայական մը տալու ինձ, որուն մեջ կհայտարարեր, թե՝ ես իրեն հանձնարարված էի իբր ամեն կերպով պատվավոր և վստահելի անձնավորություն մը, որ Անգլիա կերթար զուտ առևտրական գործերով, և անգլիական իշխանություններեն կխնդրեր ինձ շնորհել աջակցություն և պաշտպանություն։

Այս հանձնարարականով զոտեպնդված, անմիջապես ճամփա ելա։ Պատերազմի ատեն, Ռուսաստանեն Անգլիա երթալը գյուրին գործ չէր։ Բոթնիո ծոցը, ուր գերմանական սուզանավեր երևան եկած և իրենց սարսափը սփռած էին, փակված էր, այնպես որ ինձի արդեն ծանոթ սովորական անցքը, Ապոյե շոգենավով Ստոկհոլմ, դադրած էր։ Հարկ էր երկաթուղիով երթալ նախ, երկու օրեն, Ֆինլանդայի հյուսիսային ծայրագույն բնակավայրը, Թորնեո, համանուն գետին բերանը, ուր կսկսի Լապոնիայի տափաստաններուն սառնային ամայությունը։

Ուշ էր արդեն, երբ Թորնեո հասանք։ Ավանին միակ օթելին մեջ տեղ ձգելու տեղ չկար, այնպես որ շատ շատեր հանձն առին

անգաստակին կամ նրբանցքներուն մեջ գիշերել աթոռներու վրա, հաջորդ առտուն անցնելու համար հանդիպակած եզերքը, շվեդական Հափարանտա ավանը, որ կամուրջով մը կբաժնվի Ֆինլանդայեն, և անկից երթալու համար Քարունգիի կայարանը։

Թորնեո, որ սովորական ատեն անշան վայր մըն էր, պատերազմին պատճառով բանուկ պողոտա մը դարձած էր, միակ անցքը հարյուրավոր ճամփորդներու, որոնք պաշտոնով, առևտրով կամ առավել կամ նվազ խոստովանելի նպատակներով Ռուսաստանեն Շվեդ, Նորվեգիա, Անգլիա կամ Ֆրանսա կերթային կուգային ամեն օր։

Ամբողջ գիշեր մը շոր աթոռի մը վրա անցընելու հեռանկարը գործիս չէր գար, ու պետք էր ճար մը գտնել։ Դուրս ելա և սկսա շորս կողմը դիտել։ Քիչ մը անդին բալխիր մը տեսա՝ առույգ ձիու մը լծված, և անոր առջև կանգուն մարդ մը, որուն թավամազ գլխանոցին մեջեն աչքերն ու քիթը միայն կերևնային և որ մինչև ոտքը ծածկված էր բրդոտ մորթերով։ Անոր մոտեցա և, իրարու ետևեն, գիտցած բոլոր լեզուներովս հարցուցի, թե տեղ մը կճանչնա՞ր, ուր կարենայի գիշերը անցընել։

Մարդը ֆինլանդերենեն զատ ուրիշ լեզու չէր գիտեր, և անճար շարժումներ եղան իր պատասխանները։ Այն աստեն դիմեցի լեզվի մը, որ ամենուն մատչելի է։ Գլուխս ափիս դրի կիսահակ, աչքերս գոցեցի բոպե մը, և ամբողջ դիմագծությունս հարցական նշան մը դարձավ։ Իր գլխանոցին սովերներուն արանքեն փայլող աչքերուն քթիթը ինձ հայտնեց, որ միտքս հասկցած էր։ Բալխիրին ծածկոցը բացավ, նստեցուց զիս, մուշտակիս օձիքը դարձուց և գլուխս անոր մեջ թաղեց, արջի մորթ մը դրավ ուսերուս, ուրիշ երկու մորթի մեջ ալ մարմինս փաթթեց, իր գահակին վրա տեղավորվեցավ. մտրակի շաչյուն մը, ու բալխիրը ճամփա ելավ սրարշավ։

Լույսերն ու բնակությունները ընդհուպ անհետացան և մխրճվեցանք համայնապարփակ խավարին մեջ։ Ձին գլուխը առած կերթար, ո՞ւր։ Ճամփա չկար։ Ձյունը— ի՞նչ ձյուն— ծածկած էր ամեն բան, ու անոր հորդ առատությունը ակռուելով կհասնեցանք։ Ժամանակը կարծես կանգ առած էր։ Տա՞սը վայրկյան, քառո՞րդ մը, կե՞ս ժամ էր, որ ճամփա ելած էինք։ Ո՞ւր էր վախճանը այս անհատնում անապատին, ուր, մեծ արձակագրի մը անմնան պատկերացումը գրգռելով, գլուխներ լուծյուններու

կհաջորդեին»։ Վախը չէր, որ կպաշարեր զիս, հապա նորանշան սոսկումը կորսված ըլլալու այս բևեռային անսահմանության մեջ, շրջապատված ու պարուրված ամեհի բնության մը դաժան ու դրժխեմ ուժերեն, ընկճված, ճղմված, ջախջախված այս պակուցանողական անծանոթեն, ուր հյուլեի ոչնչություններ էինք։

Բալխիրը մեկենիմեկ կանգ առավ տան մը առջև, ո՞ւրկից ո՛ւր, որուն դռան վերևի պատուհանեն աղոտ լույս մը կնշուլեր։ Մարդը վար իջավ և դուռը զարկավ։ Մանկամարդ կին մը բացավ զայն, մեզ ներս ընդունեց՝ քարյուղի լամպար մը ձեռքը, և հավանության նշաններ ըրավ մարդուն արտասանած խոսքերուն։

Փնտրած օթևանս գտած էի, բայց պետք էր վերադարձի մասին մտածել, և մնչկատակը վերսկսավ։ Կառախումբը հաջորդ առաւուն ժամը 8-ին կմեկներ Քարունգիեն, և բալխիրը գալու զիս առնելու էր 7-ին։ Ֆը՛շ-ֆը՛շ-ֆը՛շ, անիվներուն արագ հոլովումը պատկերացնել հավակնող շարժումի մը հետ, շոգեկառքը եղավ, և ժամացույցիս վրա մատնանշված 8 թվանշանս մեկնումի, իսկ 7-ը բալխիրին վերադարձին ժամերը որոշեցին։ Մարդուն աչքերը ինձ ապացուցին, թե խոսքը կարծվածին չափ ալ բացարձակ անհրաժեշտություն մը չէ։ Գալով իր վարձքին, արևելցիի կասկածամտության մնացորդ մը ինձ թելադրեց դրամ ցույց տալ իրեն և հասկցնել, թե երթուղարձը միասին պիտի վճարեի Թորնեռ։ Ասոր ալ հավանեցավ և մեկնեցավ։

Քիչ հետո, մաքուր սենյակի մը մեջ էի, մաքուր անկողնի մը առջև, որուն դիմաց լայն շմինեի մը խորը խոշոր կոճղ մը կվառեր՝ լուսապայծառ ճարճատյունով։

Հաջորդ առտուն Թորնեռ էի ճիշտ ժամանակին, նախագծված պլանս կետ առ կետ գործադրված, և բալխիրներով անցանք սահմանային կամուրջը դեպի Հափարանտա և անկից Քարունգի։

Սեղմ ձյուն կտեղար, ավելորդ առատությամբ մը. ծածկելու ա՛լ ի՞նչ բան մնացած էր։ Կհիշեմ, որ, ճամփուն երկայնքը, բըրդեղեններու մեջ պարփակված աղջիկներ, որոնք դպրոց կերթային, մեզ կբարևեին արքունիքին վայել խոնարհությամբ մը, ծնրադրության սիրուն շարժումի մը մեջ դնելով իրենց բոլոր ծաղկատի շնորհը։ Ի՜նչ ժողովուրդ։ Քանի-քանի անգամ ճամփորդած եմ Սկանդինավյան երկիրները, և կկարծեմ, թե արդի քաղաքակրթության գագաթնակետին վրա կգտնվին անոնք, մանավանդ Շվեդ։ Մարդկային բարձրագույն առաքինությունն ունին նախ, ան, որուն մեջ կբովանդակվին բոլոր մյուս բարեմասնությունները,— մաքրությունը։ Ամեն բան մաքուր է հոն, և ամեն մարդ մաքուր է։

Գիտեմ, թե հյուսիսային երկիրներու մարդոց համար ավելի դյուրին է մաքրության տպավորություն մը տալ, քան հարավային երկիրներու մարդոց։ Տարիներով Մանչեստր ապրած հայ բարեկամ մը ինձ պատմած է, թե սափրիչին աթոռեն ելլելուն, վարսավիրան անգամ մը ըսած էր իրեն. «Դուք որ հիմա ածիլվեցաք և պիտի ելլեք երթաք, ավելի շատ մազ ունիք ձեր երեսին վրա, քան սա անգլիացին, որ ներս կմտնե, ածիլվելու համար»։

Բայց միայն արտաքին մաքրությունը չէ շվեդին հատկանիշը։ Ընդհանուր բարեկարգությունը, մարդկանց միջև տիրող համեստաշխությունը, անհատներուն ծայրագույն պարկեշտությունը և բարեկրթությունը, ամենուն ալ խորին գիտակցությունը այնքան իրենց պարտքին, որքան իրենց իրավունքին, գիտության ընձեռած բարիքներուն թափանցումը բոլոր խավերուն մեջ, այն արդյունքը առաջ բերած են, որ մարդկության երազած մտատիպարին իրականացումը կկարծես տեսնել ամեն քայլիդ։

Քարունգիեն Բերգեն երեք օրվան ճամփա էր, ամբողջ Շվեդի երկայնքեն և հետո ամբողջ Նորվեգիո մեջեն։ Լիճ ու անտառ, անտառ ու լիճ անընդհատ պահվըտուք կխաղան երկաթուղիին հետ։ Մեկ քանի ժամը անգամ մը դադար կայարաններու մեջ, կերակրվելու և կազդուրվելու համար։

Լայն ու երկայն սեղանի մը վրա շարված են քսան երեսուն տեսակ աղանդերներ, որոնց կարգին, Հյուսիսային Շվեդի մեջ, Լապոնիայի եղջերուներուն ծխած միսը (rենսpեf), աշխարհիս ամենեն համեղ ուտելիքներեն մին, և ծխած սոմոնի ծաղկաթույր շերտեր՝ ակնապարար առատությամբ։ Սովորական հացի տեղ, գորշ մոխրագույն տեսակ մը տափակ, փխրուն և ծակոտկեն պաքսիմատ՝ հաճարի ալյուրե, Սկանդինավյան երկիրներուն և Ֆինլանդային հատուկ, որ կուզեմ հավատալ, թե շատ առողջապահական է, բայց համի և քիմքի հետ գործ չունի ըստ իս։ Սպասավոր չկա. ամեն մարդ պնակ մը, դանակ մը և պատառաքաղ մը կառնե և ափսեներուն մեջեն կվերցնե ուզած ուտելիքը, ուզածին չափ, որչափ անգամ որ կրնա, և, երբ ճաշը ավարտե, որոշված միօրինակ գինը կվճարե ճաշարանատիրոջ։ Կհիշեմ, թե այս վերջինը ի՜նչ արհամարհանքով կնայեր ինձ ընկերացող օտարականներուն, որոնք, շատ բնական բան մը ընելու պես, չէին քաշվեր

իրենց բերանի պատառաքաղը խոթելու ափսեներուն մէջ՝ իրենց ընտրած կտորը առնելու համար։

Մեկ օր Բերգեն, և երկու օրվան նավագնացութենե մը հետո, Հյուսիսային ծովուն մեջեն անվտանգ Անգլիա։

Երբ դեկտեմբերի 19-ին, շաբաթ կեսօրեն հետո մեր նորվեգական շոգենավը Նյու-Քյասլի քարափին մոտեցավ, անգլիացի պաշտոնական մը, երկու ոստիկանի ընկերակցությամբ, ներս մտավ և ճամփորդները հրավիրեց շարք կազմել և մի առ մի ներկայացնել իրենց անցագիրները։ Երբ կարգը ինձի եկավ, իրեն երկնցուցի անցագիրս, հետն ալ դեսպանի վկայագիրը։ Ակնարկ մը նետեց անոնց վրա և ինձի ըսավ.

— Խնդրեմ, մեկ կողմ քաշվեցեք և սպասեցեք։

Սիրտս կըրճ ըրավ։ Թուրք հպատակությանս փորձանքն էր, որ կվերսկսեր։

Վավերագրերու քննությունը մեկ քանի ժամ տևեց, և ճամփորդները իրարու ետևե մեկնեցան։ Երբ ա՛լ մարդ չմնաց, անգլիացի պաշտոնատարը իր մոտ հրավիրեց զիս և ըսավ.

— Դուք թշնամի օտարական մըն եք, պարոն, և ձեզ թույլ չեմ կրնար տալ Անգլիա մտնելու։ Պետք է ետ դառնաք այս շոգենավով։

— Չե՞ք ուզեր նկատողության առնել,— ըսի,— թե ձեր դեսպանը, իմ թուրք հպատակությունս հիշելով հանդերձ, չէ վարանած զիս հանձնարարելու անգլիական իշխանությանց բարյացակամության։

— Ասիկա ներքին քաղաքականության գործ մըն է, և դեսպանին գրությունը չի բավեր։

Անտարակույս։ Դիմացինս Ընդհանուր Ապահովության մարդ մըն էր, հարկավ, և Պետրոգրադի դեսպանին հանդեպ չէր, որ պատասխանատու էր։

Սկսա լեզու թափել։ Բացատրեցի, թե անարդարություն պիտի ըլլար Թուրքիո քրիստոնյա հայերը չջոկել բուն թուրքերեն, թե հայերը ամենուրեք ապացույցը կուտային իրենց բուռն համակրանքին՝ Դաշնակիցներուն դատին համար, և թե դեսպանը իր պաշտոնին բերմամբ ատոր իրազեկ ըլլալով և ատոր վրա հիմնվելով է, որ գրած է իր հանձնարարականը։ Մյուս կողմե, պետք էր գիտնալ, թե ես հաճույքիս համար չէր, որ Անգլիա կուգայի՝ ամեն դժվարության դիմագրավելով, հապա Անգլիո դաշնակից երկրի մը ռազմական պետքերուն համար։ Անգլիո շահերը նույնն էին Ռուսիո շահերուն հետ։

Անգլիացին հանդարտությամբ մտիկ կըներ ինձ, դեմքին վրա որևէ նշան ցույց չտալով իմ պաշտպանողականիս հառաջ բերած ազդեցությանը։

Մեկեն նոր փաստ մը մեջտեղ դրի։

Կյանքին մեջ տարօրինակ զուգադիպություններ կան։ Շոգենավին վրա, իմ կարգիս սպասելու ժամանակ, նույն առտվան Դեյլի Նյուզը գնած էի աչքաբաց լակոտե մը, որ լրագիրներու ծրար մը թևին տակ՝ շոգենավ եկած էր, և անոր մեջ հաճությամբ կարդացեր էի պրոֆ. Կ. Թումայանի կնոջ (զվիցերուհի) մեկ նամակը խմբագրության ուղղված, որով անգլիական կառավարությենեն կպահանջեր, ուժգին շեշտերով, անմիջապես տնօրինություն մը ընել «թշնամի օտարական» չնկատելու Թուրքիո հպատակ հայերը։ Հոդվածը մատնանիշ ըրի անգլիացիին, որ ուշադրությամբ կարդաց զայն, և ավելցուցի.

— Տեսեք, Թուրքիո հայերուս խնդիրը արդեն ուշադրության առարկա է, անով կզբաղին հիմա, հանրային կարծիքը իրավամբ վրդովված է և օրեօր որոշման մը կսպասե՝ մեզ ազատելու համար մեր մասին տիրող անիրավ և անարդարանալի կասկածեն։

Մարդը գլուխը վերցուց և ինձի նայեցավ։ Դեմքին գիծերը կարծես թե սկսեր էին քիչ մը կակղիլ։ Կոխելու ատեն էր։

— Պետք է հասկնաք,— վրա բերի՝ ձայնիս մեջ դնելով այնքան համոզողական ուժ, որ կարելի էր ինձի,— թե ես ետ չեմ կրնար դառնալ և պարտավոր եմ կատարել ինձի հանձնված կարևոր պաշտոնը։ Քանի որ հարցը մեջտեղ դրված է, թույլ տվեք ինձ ցամաք ելլելու, և իմ պարագաս հաղորդեցեք Ներքին գործերու նախարարության։

Խնդիրը անգամ մը Անգլիա ոտք դնելուն վրա էր։ Վերջեն ողջ ըլլային Լոնդոնի բարեկամներս։

Իմ պերճախոսությունս ու կերպարա՞նքս էր որ ակնկալած արդյունքս հառաջ բերին, դեսպանին հանձնարարակա՞նը, տիկին Թումայանի բարեդեպ նամա՞կը։

— Օլ ռայթ,— ըսավ՝ առաջին անգամ ժպտելով։

Ու ավելցուց.

— Ձեզի հիմա կտանին կայարանին օթելը, ուր կմնաք, մինչև

որ ինձմե լուր առնեք։ Պետք չկա դուրս ելլելու։ Օթելը ճաշարան ունի։

Հասկցա։ Տեսակ մը բանտարկություն էր ասիկա, շատ փափկանկատությամբ ինձի պարտադրված, բայց որքա՞ն ժամանակ պիտի տևեր։

— Այսօր շաբաթ կեսօրեն հետո պաշտոնատունները փակ կըլլան,— ըսի,— վաղն ալ կիրակի է, այնպես որ...

— Օ՜, հոգ մի՛ ընեք,— պատասխանեց՝ այս անգամ խնդալով,— հոն ուր պիտի դիմեմ՝ շաբաթ-կիրակի չկա։

Խե՞լքս ո՛ւր էր։ Ընդհանուր Ապահովության պաշտոնատունը, աշխարհածանոթ Ինքելիճրնս Սրվիսը, մանավանդ պատերազմի ատեն, միշտ բաց ըլլալու էր, հարկավ։

Ու հրահանգ տվավ իր մարդոցմե մեկուն՝ զիս առաջնորդելու մոտակա կայարանին օթելը, ուր ընդունելության պաշտոնյան, որուն ականջին բաներ մը փսփսացած էր ուղեկիցս, զիս տարավ գեղեցիկ սենյակ մը ընթրիքի համար պատվերս ընդունեց։ Ոչ մեկ խոսք, ոչ մեկ ժեսթ, ոչ մեկ վարմունք կրնային ենթադրել տալ, թե հսկողության ներքև էի։

Հետևյալ առավոտ, կազմ ու պատրաստ, սենյակիս մեջ լրագիրներու ընթերցումով զբաղած էի, երբ դուռը զարնվեցավ, ներս մտավ ինձի ընկերացած ոստիկանը, ինձմե խնդրեց իրեն հետևիլ, և մեկ քանի փողոց անդին տարավ զիս պաշտոնատուն մը, ուր գրասենյակի մը մեջ գտա նորեն անգլիացի պաշտոնատարը։

— Գիտե՞ք ինչ,— եղավ իր առաջին խոսքը,— Լոնդոն ձեր պարագան իմ հայեցողությանս կթողու կոր։

— Օ՜,— ըսի զվարթությամբ,— այն ատեն գործս եղած է։ Որքան կարելի է մեկը դատել իր արտաքին երևույթեն, կարծեմ վտանգավոր մարդու մը կերպարանք չունիմ։ Ամեն պարագայի մեջ, բոլոր ուժովս կրնամ ձեզ հավաստել, թե արժանի եմ ձեր վստահության և անկարող եմ ոևէ պատասխանատվություն հրավիրելու ձեր վրա։

— Այն ատեն, ազատ եք շարունակելու ձեր ճամփորդությունը։

— Պայման մը կա՞։

— Ոչ մեկ։ Լոնդոն ո՞ւր պիտի իջնեք։

— Սավոյ օթելը, ուր կբնակեի արդեն անցյալ սեպտեմբերին։

— Կրավե ներկայանալ ձեր թաղին ոստիկանության և արձանագրվիլ այնտեղ։

... Շեորհակալության ջերմ խոսքերով ոտքի ելա մեկնելու համար, երբ կեցուց զիս.

— Պզտիկ ձևակերպություն մը կա ընելիք։ Խնդրեմ ձեր բթամատը սա թամփոնին դրեք և սա թուղթին վրա դրոշմեցեք։

Զզվանքի ակամա շարժում մը ունեցա։

— Կյանքիս մեջ առաջին անգամ է, որ այսպիսի բան մը կպահանջվի ինձմե,— ըսի,— կարելի չէ՞ր արդյոք ինձի խնայել այս շարագործի ժեսթը։

— Օ՜հ, չէ՛,— ըսավ,— ասիկա միմիայն շարագործներուն հատուկ բան մը չէ. ինքնությունը հաստատելու պարզ միջոց մըն է լոկ։

Պետք էր ընդունիլ։ Ինքելիճրնս Սրվիսի ո՞ր արշիվին ալքերուն մեջ են հիմա անունս և բթամատիս դրոշմը։

Կես ժամ հետո կայարանն էի արդեն և իրիկունը Լոնդոն։

Երբ, հագվելե հետո, իջա Սավոյի լուսաշող և պերճապայծառ ճաշասրահը, որ կշարունակեր ժամադրավայրն ըլլալ Լոնդոնի բարձր ընկերության, բոլոր ներկաները ուրախ-զվարթ Թիբերտի կերգեին, միաբերան, նվագախումբին հետ։ Business as usial[1]։ Այս էր օրվան նշանաբանը։ Անգլիացիները, ընդհանրապես, դեռ գաղափար չունեին, թե ի՛նչ էր պատերազմը։

Հետևյալ առավոտ ներկայացա Պոու Սթրիթի ոստիկանատունը, ուր հետմիջօրեին բնակության արտոնագիր մը տվին ինձի, խնդրելով միայն իմաց տալ, եթե Լոնդոնեն հեռանայի՝ 50 մղոնի շրջանակե մը անդին։

* * *

Տասը ամիս մնացի Լոնդոն։

1915-ի հոկտեմբերի վերջը, Ռուսիո բարեկամներես հրավեր ստացա փութով վերադառնալու Պետրոգրադ, ուսկից Բաթում պիտի երթայի՝ ռուսական բանակին երեք միլիոն պայթուցիկ խնձոր (grenade) հայթայթելիք մեծ ձեռնարկի մը գլուխը անցնելու համար։ Վերադարձի պատրաստությանս մեջ, առաջին հոգս եղավ անցագրի հարցը, և այս անգամ, շնորհիվ հայ բարեկամի մը, նախկին օսմանյան պաշտոնատար, Լոնդոնի ռուսական դեսպանատ-

1 Գործը գործ է։— Ս. Կ.

էր, որ ստացա ջերմ հանձնարարական մը՝ ռուսական իշխանությանց ուղղված, և, գործը ավելի ամուր կապելու համար, ռուս հյուպատոսարանեն ալ արտոնագիր մը Ռուսիա մտնելու՝ դեսպանին գրության վրա հիմնված։

Նորեն Նյու-Քյասլ, նորեն Հյուսիսային ծովուն գորշ տրտմության մեջ, գերման սուզանավերուն ահաքրտնությունը, բարեբախտաբար առանց հետևանքի, ու նորեն Հարավային Նորվեգիայի ֆիորդներուն անվերջ ժանյակներուն զմայլանքը։ Ստավանգերի առջև չէ՞ր, որ, վերջալույսին ցոլքերուն տակ, ծովը կվխտար մեդուզաներով, որոնք, Կ. Պոլսի ճերմակ կակղամորթերեն տարբերելով, շիկորակ գույն մը ունին, այնպես որ ջուրին մեջ անդադար բացվող ու գոցվող հսկա վարդերու ալեծածան պար մը կկազմեին։

Բերգեն, Քրիստիանիա, որ այն ատեն դեռ Օսլո չէր, ամբողջ Շվեդը, Հափարանտա, և ճամփորդներու բազմության մը հետ նորեն Թորնեռ։ Անցագիրներու քննության տաղտկալի գործողությունները վերսկսված էին, ժանդարմերիի հարյուրապետի մը ձեռքով։ (Ցարական ռեժիմին տակ, ժանդարմերին Ընդհանուր Ապահովության—Օխրանա—գործադիր իշխանությունն էր լոկ)։

Երբ կարգը ինձի եկավ, հարյուրապետը աչք մը նետեց ներկայացուցած թուղթերուս վրա, և զանոնք նույնհետայն ինձի վերադարձնելով, կրկնեց ծանոթ հանկերգը.

— Դուք մեզի հետ պատերազմող երկրի մը հպատակն եք, և թույլ չեմ կրնար տալ, որ Ռուսիա մտնեք։ Անմիջապես Հափարանտա վերադարձեք։

Ռուս դեսպանին նամակն ալ ճըլխ ելած էր։ Այբբենգիմեն վերսկսելու էր։

Անշուշտ Թուրքիո հպատակ էի, բայց ցեղով ու կրոնքով հայ էի, ասիկա որոշակի հիշատակված էր ներկայացուցած վավերագրերուս մեջ, և Թուրքիո հայերուն համար բոլոր դաշնակից երկիրներուն, ինչպես և Ռուսիո մեջ ընդհանուր կարգադրություն մը եղած էր զանոնք «թշնամի» չնկատելու։

— Կարծեմ այդպիսի բան մը ես ալ իմացա,— խոստովանեցավ հարյուրապետը ուղղամտորեն,— բայց ես այդ մասին ոչէ հրահանգ ստացած չեմ։

— Խնդրեմ, ուշադրության առեք միանգամայն ձեր դեսպանի նամակը և ձեր հյուպատոսին արտոնագիրը։ Ձեր Լոնդոնի դեսպանը չէր կրնար զիս հանձնարարել, եթե...

— Ես Լոնդոնի դեսպանին հետ որևէ գործ չունիմ,— ընդմիջեց զիս անհամբերությամբ։— Ես իմ գնդապետիս միայն պատասխանատու եմ։ Ձե՞ք ուզեր Հափարանտա վերադառնալ։

— Ո՛չ,— ըսի վճռաբար։— Ես պետք է Պետրոգրադ երթամ, պետությունը շահագրգռող կարևոր գործերու համար։

— Այն ատեն սպասեցեք սա քովի սենյակը։

Ճամփորդները, մեկիկ-մեկիկ, իրենց գործը ավարտած, կըշտապեին դեպի կայարանը, ուր կառախումբը պատուհանես կերևնար, պատրաստ։ Սպասման տաղտուկը ինձի համար հրճվանքի մը փոխված էր ի տես ամենեն զարմանահրաշ վերջալույսին, զոր կյանքիս մեջ երբեք վայելած ըլլամ և որ հորիզոնը կհրդեհեր՝ գույներու և ձևերու մեծափարթամ և հարանորոգ ճոխությամբ մը։ Հիացումես հանկարծ արթնցա շոգեկառքին կրկնակի սույլերեն, որոնք սիրտս ճանկոտեցին, և կառախումբին մեկնումին դղրդյունեն։ Գիտեի, որ օրը մեկ կառախումբ միայն կմեկներ Թորնեռյեն։

Մտածումներուս թելը չվերագտած, ռուս հարյուրապետը քովս էր։

— Պարտք կհամարիմ իմացնել ձեզի,— ըսավ,— թե՝ իբր թշնամի, ձերբակալված եք և պետք է բանտ երթաք։

— Ձերբակալվա՞ծ, բա՞նտ։ Ինչո՞ւ համար։ Եթե թույլ չեք կրնար տալ ճամփորդությունս շարունակելու, թողեք, որ Շվեդ վերադառնամ։

— Այլևս ուշ է։ Ձերբակալված եք։

— Բայց եթե դուք ինձ ազդարարեիք, որ Հափարանտա չվերադառնալու պարագային, զիս բանտ պիտի դնեիք, վայրկյան մը իսկ չէի կենար այստեղ։

— Ես ձեզի առաջուց ըսի։ Ա՛լ ուրիշ խոսք չունիմ ավելցնելիք։

Ընդվզումի անդիմադրելի պոռթկում մը ունեցա։

— Ինչպե՞ս կրնաք զիս ձերբակալել,— պոռացի,— երբ մեր կամավորներուն արյունը ուղխորեն կհոսի ձեր զինվորներուն հետ քով-քովի, նույն դատին համար։

Հա՞րկ է ըսել, թե ռուսերեն կխոսակցեինք, և այս «ուղխորեն հոսող արյունի» պարբերությունը, որ ռուս լրագրե մը միտքս մնացած էր, շատ ընտիր և «գրական» ձև մը ուներ, որ, սակայն, բնավ չտվավ սպասած արդյունքը։

— Այո՞,— հարցուց հարյուրապետը՝ չոր ծամածռությամբ մը,

ու դուրս ելավ, երկու զինվոր կանչեց, որոնց հրամայեց սնդուկներս և զիս խուզարկել և հետո զիս բանտ առաջնորդել։

Ուրիշ բան չկար ընելիք, բայց եթե համակերպիլ։

— Թույլ կուտա՞ք գոնե,— ըսի հարյուրապետին,— որ հեռագիր մը ղրկեմ Պետրոգրադ։

— Անշուշտ,— ըսավ,— ատիկա ձեր իրավունքն է։

Ցարական ռեժիմը հարգեց օրենքը։ Անգլիացի գրող մը, Պրայլի Հոճեց, որ պատերազմեն առաջ գիրք մը հրատարակած է «Երեք Դրոշակի Տակ» անունով, հայերուն շատ նպաստավոր, կըսե. «Ռուսական բռնավորությունը ողնահարավոր է, Թուրքականը՝ կոտրած ողնահար ունի, իսկ պարսկականը՝ բնավ ողնահար չունի»։

Հեռագիրս խմբագրեցի և քովի հեռագրատան հանձնեցի։ Այդ միջոցին զինվորները տակնուվրա կընեին սնդուկներս, գրավելով ինչ որ գիրք էր և գրված Թուրք։ Գիրք ըլլալով, միայն և միայն ունեի Վերհարնի Քերթվածները ֆրանսերեն։ 1903-ին ալ, երբ առաջին անգամ Ռուսիա գացի, ռուս գրաքննության հետ գործ չունենալու համար հետս առած էի միայն մեր Առձեռն բառարանը, որ ընթերցումներուն ամենեն հաճելիներեն եղած է միշտ ինձի և որուն լուսանցքները կլեցնեի նոթերով և դիտողություններով։ Իսկ գրությունները լոկ առևտրական վավերագրեր և հաշվեցույցեր էին։

— Այդ գիրքը կրնաք ինձի ետ տալ,— ըսի անտարբեր ձայնով մը,— պարզապես բանաստեղծություններ են։

Զինվորներեն մին Վերհարնը առավ՝ «բանաստեղծություն» բառեն զգալապես ազդված, գլխիվար բացավ, զարմանքով նայեցավ կարճ ու երկայն տողերուն, տարակուսանքի ակնարկ մը փոխանակեց ընկերոջը հետ, և հատորը ետ տվավ ինձի։ Բալխիր մը քիչ հետո մեզ երեքս և սնդուկներս տարավ քարաշեն միահարկ շենք մը, որուն արտաքինը բանտի ոևէ դժպհի երևույթ չուներ։

Ֆինլանդա ինքնավար երկիր մը ըլլալով, Ռուսիա անշուշտ բանտ չուներ հոն։ Բայց սահմանագլուխներուն վրա, ուր Ռուսիա իրեն կվերապահեր պետական ապահովության գործը, ռուս ժանդարմերին իրավունք ուներ «փոխ առնելու» ֆինլանդական բանտը։

Զինվորները զիս հանձնեցին ֆինլանդացի բանտապահին, որ բարեբախտաբար քիչ շատ ռուսերեն կխոսեր, ստորագրություն մը առին անկից և ելան գացին։ Բանտապահը քառորդ ժամու մը չափ զիս մինակ թողուց իր սենյակին մեջ, և հետո եկավ զիս հրավիրեց իմ «բանտս», ուր կգտնվեր արդեն իր կինը, բարի դեմքով և անուշ

աչքերով տարեց ֆինլանդուհի մը, որ ռուսերեն բառ մը չէր գիտեր։

Այս «բանտ»-ը հաճելի տպավորություն թողուց վրաս։ Բավական լայն ու բարձր սենյակ մըն էր, որ լույսը կառներ երկաթյա ձողերով զրահավորված անմատչելի պատուհանե մը։ Մեկ անկյունը շատ շնորհքով մահճակալ մը կար, ճեփ ճերմակ սավանով, հաստ ծածկոցներով և բարձով մը, որուն երեսը շրջանակված էր ասեղնագործություններով։ Շրմինեին մեջ փայտի առատ կրակ մը հեշտ տաքություն մը կսփռեր խուցին մեջ, որուն կեդրոնը սեղան մը կար մեկ աթոռով, և անկյուն մըն ալ լագան մը, սկահ մը և կուժ մը՝ աթոռակի մը վրա։ Ջեղունեն կախված էր էլեկտրական մերկ լամպ մը, որուն տված լույսը բավարար էր։ Ամեն կողմ, անստգյուտ մաքրություն։

Հայտնի էր, որ զիս սովորական չարագործի մի տեղ չէին դրած, և «պատվո հյուր»-ի մը վայել ընդունելությունը կընեին ինձի։ Բանտապահին կինը, նշաններով, կրցավ ինձի հասկցնել, թե իր հարսնության բարձի երեսն էր, որ տված էր ինձի։ Ի՞նչ ազնիվ հոգածություն։

Սնունդի հարցն ալ կարգավորվեցավ նույն բարեհարմար պայմաններուն մեջ։ Ժամերը անցեր էին, և ընթրիքի ատեն էր։ Քիչ հետո ինձ ներկայացավ քաղաքին ճաշարանին գարսոնը, երկար ճաշացուցակով մը, պատվերս ստանալու համար, և կես ժամ ետքը սեղանիս առջև էի, ախորժելի ընթրիքի մը դիմաց, որուն ըսելիք չկար։ Ռենսքեֆը պակաս էր միայն. գարսոնը ինձ բացատրեց, թե ռենսքեֆի պահանջը այնքան ավելցած էր, որ եղջերուներուն ճետը փրկելու համար, ատեն մը ի վեր անոնց սպանդը արգիլված էր։

Ժամը 10-ին ատենները բանտապահը ներս մտավ և ինձ ըսավ, թե ճիշտ 10-ին լույսը պիտի մարեր դուրսեն. այն ատեն միայն նշմարեցի, թե, իրոք, էլեկտրականության կոճակը դուրսն էր։ Հետո դուռը բացավ և իր ծանր տրցակեն խոշոր բանալի մը ջոկելով, դուրսի փականքի մեջ դրավ։

— Ի՞նչ է ան, պիտի կղպե՞ք,— ըսի տհաճությամբ։

— Անշուշտ օրենք է։

Ի՞նչ հարկ կար կղպելու։ Եթե նույնիսկ զիս դուրս վռնդեին, քայլ մը չէի հեռանար ու հոն կառչած կմնայի. ո՞ւր պիտի երթայի այդ անծայրածիր սառնարանին մեջ, ուր ցուրտը զրոյեն վար երեսունի հետ ելևէջ կխաղար։ Բայց երբ երկաթյա ծանր դուռը փակ-

ղնեցավ և բանալին չարաձայն ճռնչեց կղպանքին մեջ, այն ատեն մ'այն խելքի եկա, թե այդ ապավենը, ինչ որ ալ ըլլար, բանտ մըն էր։

* * *

Վեց օր կեցա այդ բանտին մեջ։

Բանտապահին կինը, միշտ խնդումերես, ամեն առտո նախաճաշս կբերեր, հետո ալ մեկ քանի օր առաջվան Նովոյե Վրեմյան, ռուսական մեծ օրաթերթը. հետո անկողինը կշտկեր, խուցին ժողվելուքը կրներ, ու ժպտելով կելլեր կերթար։

Ճաշը և ընթրիքը կերկարաձգեի որչափ որ կրնայի։ Նովոյե Վրեմյան կկարդայի ծայրե ի ծայր, և մեկդի կնետեի հուսահատ, ես, որուն օրական տասը թերթ չէր բավեր առաջ՝ պատերազմին ընթացքին հետևելու համար։ Շուտով լմնցուցած էի ռուսական պատկերազարդ շաբաթաթերթին, Նիվայի, 1902-ի հավաքածոն, ո՞վ գիտեր ո՞ր բանտարկյալին կողմե թողված, զոր ինձի բերած էր բանտապահին կինը և որուն մարտ 16-ի թվին մեջ ուշադրությունս գրաված էր Ռուբոյի մեկ փորագրությունը՝ «Հայ գյուղի մը թալանը քյուրտերու կողմե»։ 1902-ին։ Մեկիկ-մեկիկ կարդացել էի ինձմե առաջ այս խուցին մեջ ապրողներուն խազխզած արձանագրությունները չորս պատերուն վրա, ամենքն ալ տրտունջներ իրենց հանդեպ կատարված անիրավության դեմ և սրտաճմլիկ հառաչանքներ դեպի լույսը, դեպի ազատությունը։ Ի՞նչ ընել։ Գրել կարելի չէր մտածումներուս հորձանքին մեջ, ուր զայրույթը և զզվանքը իրարու կհաջորդեին փոխնիփոխ։

Փրկությունս Վերհարնը եղավ, որուն քերթվածները հայերենի կթարգմանեի ժամերով, առանց ընկրկելու անասելի դժվարություններեն, որոնց տեղյակ են իրազեկները. ընդհակառակը, խոչընդոտները որքան մեծ ըլլային, այնքան ավելի համառությամբ կմխրճվեի անոնց մեջ, մինչև ամեն բան մոռնալու աստիճան, բոլոր էությամբս անձնատուր ամբողջական ճիգին, որ կպրկեր ուղեղս։ Ավելորդ է ըսել ո՞ր չափով կթարգմանեի, բայց երբեմն ալ ես ինձ կպարտադրեի հանգավոր թարգմանության սպառիչ խոնջենքը։ Այդպես է, որ թարգմանեցի կաղնիներուն նվիրված երկար քերթվածը։ Ամեն դժվարությանց հետզհետե հաղթելու, ուղած հարուստ և անբռնաղբոս հանգերս գտնելու և գտտարելության մատնելու բերկրանքը երբեմն ճաշեն մինչև ընթրիք կտանեին զիս անզգալաբար։ Ջաշխատած ժամերուս ու անկողնիս մեջ ալ, չափեր ու հանգեր էին, որ կլլկեին միտքս։ Հատած մը օրերով տանջեց զիս.

Ջմռան գիշերն իր մաքուր սրկիհն երկինք կամբառնա.
Ես ալ սիրտս կամբառնամ, գիշերական սիրտս, տե՛ր։

Իմ ընտրած չափիս մեջ, 4—3, 4—3, որ ըստ իս ամենեն ավելի կհարմարի ֆրանսական ալեքսանդրենին, այս «Ես ալ սիրտս կամբառնամ»-ը կոպիտ սխալ մըն էր. տրսք շեշտ չէր կրնար առնել. իսկ եթե շեշտը սիրին վրա դրվեր ըստ կանոնի, ինչպես հաջորդ հատածին մեջ, այն ատեն չափը կփոխվեր 3—4-ի, ինչ որ անճարակություն մըն էր։ Կրնայի՞ ըսել «Սիրտս ես ալ կամբառնամ». բայց ալե՛ ալ շեշտ չառներ։ Լավագույն պիտի չըլլա՞ր ըսել «Ես ալ իմ սիրտս կամբառնամ». այստեղ ալ մեկ շունչով սիրտս ըսելու ճիգը և մանավանդ հաջորդ բաղաձայնին հետ կարծր բախումը ինձի բոլորովին տհաճելի էին։ Ո՞ւր կմնար մեծ բանաստեղծին պատվերը՝ «Ամեն բանե առաջ երաժշտություն»։ Չեմ գիտեր, թե ինչի՛ կայանք տվի վերջապես, ու երբեք ալ պիտի չգիտնամ։

Բանտարկությունս, սակայն, երկու միջադեպ ունեցավ։

Երրորդ օրը, ընթրիքեն քիչ առաջ, բանտապահին կինը մեկենիմեկ դուռը բացավ իր քստմնելի բալթիքովը, կին մը դեպի ներս հրեց, և անմիջապես ելավ գնաց՝ նորեն դուռը կղպելով։

Ներս մտնողը խեղճուկրակ աննշան աղջիկ մըն էր, ճերմկոտիկ, խարտյաշ մազերով։ Գերմաներենեն զատ ուրիշ լեզու չէր գիտեր, որուն կխառներ, սակայն, աղճատ ռուսերեն մը։ Սաչափը կրցա հասկնալ, թե Ռուսիո Բալթիկյան նահանգներեն գերմանուհի մըն էր, Ռիգա ծնած, և իր ծննդավայրը կուզեր վերադառնալ, բայց անցագիրը կանոնավոր չըլլալով, Թորնեոյի մեջ զինքը վար դրած և բանտարկած էին, մինչև որ հարկ եղած քննությունները կատարվեին Ռիգա։ Շաբաթե մը ավելի էր, որ պզտիկ խուցի մը մեջ կսպասեր ու կսպասեր։ Ինձի բախտակից էր։

Բանտապահին կինը ինչե՞ մղված զայն իմ մատս բերած էր։ Իմ ձանձրո՞ւյթս փարատել, մեր երկու դժբախտությունները միացնելով մեզի համար մխիթարա՞նք մը ստեղծել, այդ խեղճ կիսաքաղց աղջիկը իմ առատ սեղանիս մասնակի՞ց ընել տալ էր միտքը։ Ինձի համար ամենեն տանելին այս վերջին պարագան էր, և երբ

ընթրիքը բերին, ինձի սեղանակից ըրի իմ անկոչ հյուրս, որուն գերմանական ախորժակը մարախի պես մաքրեց սրբեց ամեն բան։

Մեկ ալ հանկարծ դուռը բացվեցավ, և բանտապահը ներս մտավ խենթի պես, մինչդեռ իր կինը դուրսը կեցած էր հանցավորի դիրքով։ Մարդը, ֆինլանդական բառերու բարկաճայթ պոռթկումով մը, գերմանուհիին թևեն բռնեց դուրս նետեց բրտորեն, ու, ինձի դառնալով, ռուսերեն՝

— Տեսա՞ք սա կնոջս ըրածը։ Խելքին եկած ըլլալու է։ Այսչափ տարի է հետս է, դեռ գաղափար չունի, թե բանտը ի՛նչ ըսել է։ Ա՜խ այս կիները, այս կիները...

Ու դուռը վրայես կղպեց, իր կնոջ հասցեին լուտանքներու և հայհոյանքներու գոռում-գոչումով մը։

Հետևյալ առտուն, հանդուգն մտածում մը ունեցա։ Այս բանտարկության ձանձրույթը պետք էր խզել։ Բանտապահը կանչել տվի և իրեն ըսի.

— Ձեր ֆինլանդացի ոստիկանապետը ռուսերեն գիտե՞։

— Գիտե։

— Խնդրեմ, գացեք իրեն իմացուցեք, թե իրեն ըսելիք մը ունիմ և զինքը տեսնել կուզեմ։ Թող ձանձրություն չառնե մինչև հոս գալու, և ոստիկան մը ղրկե զիս առաջնորդելու իրեն մոտ։

Կես ժամ ետքը, ֆինլանդացի ոստիկան մը եկավ առավ զիս և տարավ ոստիկանապետին մոտ, մաքուր և լուսավոր գրասենյակի մը մեջ։

— Պարոն ոստիկանապետ,— ըսի իրեն,— դուք գիտեք, որ ես շարագործ մը չեմ, հապա քաղաքական բանտարկյալ մը։

— Գիտեմ։

— Ինձի վերագրված ամբողջ հանցանքը անցագրի անկանոնություն մըն է։ Պետրոգրադ հեռագիր տված եմ և ժամե ժամ լուրի կսպասեմ, որպեսզի ճամփորդությունս շարունակեմ։ Բայց այս բանտարկությունը ծանր կճնշե իմ վրաս և պետք ունիմ քիչ մը օդ առնելու, ման գալու և սափրիչին երթալու։ Խնդրեմ, ոստիկան մը նշանակեցեք, որ ինձի պտույտ մը ընել տա քաղաքին մեջ և զիս սափրիչի մը խանութը տանի։

Պաշտոնատարը ակնհայտ զարմանքով մը մտիկ ըրավ ինձ, քիչ մը մտածեց, հետո՝

— Կարելի է,— ըսավ։

Քաջալերված այս հաջողութենեն, որուն, շիտակը, չէի սպասեր,— բայց ի՞նչ կկորսնցնեի փորձ մը ընելով,— շարունակեցի.

— Քանի որ այնքան ազնիվ գտնվեցաք այս արտոնությունը շնորհելու ինձ, կարելի չէ՞ որ ինձի պատիվ ընեիք հետս ճաշելու քաղաքին ճաշարանը, որուն խոհարարին տաղանդը գնահատելու առիթն ունիմ ամեն օր։

Ու տեսնելով, որ կվարաներ՝

— Մի՛ մոռնաք որ,— ավելացուցի,— ես ֆինլանդական օրենքին առջև ոևէ կերպով հանցավոր չեմ։ Ես ձեզի համար ազատ ու պատվավոր մարդ մըն եմ և առանց անպատեհության կրնաք ընդունիլ հրավերս։

Պատվական ֆինլանդացին իր հավանությունը հայտնեց, և, ժամ մը, ոստիկանին հետ ձյուներուն մեջ պտտելե և սափրիչին մոտ գործս տեսնելե հետո, զինքը գտա ճաշարանին մեջ, ուր պարագային հարմար ճաշ մը ըրինք, շամպանյայով։ Այս անգամ ինքն էր, որ ինձի ընկերացավ մինչև բանտ, ուր նորեն ծակս մտա, բայց կազդուրված և թեթևցած։

Վեցերորդ օրն էր, իրիկվան դեմ, որ լույսը ծագեցավ։

Բանտապահը ներս մտավ ճառագայթող դեմքով մը, և.

— Ֆրե՜յ,— գոչեց ուրախությամբ։

Ֆինլանդերեն գիտնալու պետք չկար՝ հասկնալու համար, որ ազատ էի։ Մեկ քանի վայրկյանեն պատրաստ էի, բալխիրը դռան առջևն էր, մնաք բարովս ըսի բանտապահին ու կնոջը, որոնք գեշ հիշատակ մը պահած ըլլալու չեն ինձմե, և քիչ հետո կայարանն էի, ուր վերստին գտա իմ ժանդարմերիի հարյուրապետս։ Այս անգամ բարեկամաբար ձեռքս սեղմեց և ըսավ.

— Կշնորհավորեմ։ Պետրոգրադեն հեռագիր ստացա, որ ձեզի վիզա տամ, և ազատ եք ձեր ճամփան շարունակելու։ Ահավասիկ ձեր անցագիրը՝ Ռուսիա մտնելու վիզայով, և ահա ձեր թուղթերուն ծրարը։ Կառախումբը արդեն պատրաստ է, մեկնելու ժամը մոտ է, և կրնաք երթալ տեղ բռնել։ Պետրոգրադ ո՞ւր պիտի իջնեք։

— Նորեն Ասթորիա։

— Օհո՜։ Եթե Պետրոգրադ գալու ըլլամ, իրիկուն մը լավ ընթրիք մը կընենք։

Ռուսական «լայնսիրտ բնավորության» մեկ անգիտակից արտահայտությունն էր ասիկա։ Բայց հարյուրապետը, եթե հույսը իմ վրա դրած էր հաճոյալի երեկույթ մը անցընելու, կրնար երկար սպասել։

Նորեն ամբողջ Ֆինլանդան, ձյունին տակ ծածկված, ու ճամփուն երկայնքը միշտ սպիտակափառ վայրի սիներ, որոնք իրենց կարմիր հատիկներու ողկույզներուն խնդությունը կդնեն ճերմակ բնանկարին վրա։ Բիելիոստրովի կայարանին մեջ, որ Ֆինլանդայի և Ռուսիոյ սահմանագլուխն է, նորեն անցագրի քննություն և նորեն խուզարկություն, բայց այս անգամ ճակատս բաց է և սիրտս հանդարտ։ Միայն թե թուղթերս նորեն գրավեցին։ Ասոր չզարմացա. Թորնեոյի մեջ անգլիերեն, ֆրանսերեն ու հայերեն գիտցող ժանդարմ գտնվելու չէր, և իմ գրություններուս քննությունը ռուսական ոստիկանության թողված էր անշուշտ։ Ամեն պարագայի մեջ, ինձի ստացական մը տվին, վրան դնելով թիվը, նումերը, առանց որու ռուսական պաշտոնագիր մը մեռած թուղթ մըն է, և խոստացան մեկ քանի շաբաթեն հասցեիս ղրկել գրավված գրությունները։

Պետրոգրադ հասնելուս իմացա, որ իմ պարագայիս համար Պետական Դումայի անդամ Պ. Մ. Բաբաջանյանն էր, որ դիմում կատարած էր Ներքին գործերու նախարարության, և դյուրությամբ ձեռք բերած՝ խնդրած արտոնությունս։ Պաշտոնատունե պաշտոնատուն, վե՜ց օր պետք եղած էր, սակայն, Պետրոգրադեն հեռագիր մը ղրկելու համար Թորնեո։

Ամիսն անցավ, և ձայն ձուն չկար թուղթերես, որոնց պետք ունեի։ Ռուսական սրահի մը մեջ, այդ մասին կխոսեի, երբ զորավար մը, որ բրիջի ընկերս էր, ռուսերուն հատուկ դյուրահաղորդ և հաճոյակատար փութկոտությամբ ըսավ ինձի.

— Այդ կարգի թուղթերը Պետրոգրադի զինվորական քաղաքապետության կերթան։ Ձեզի բառ մը տամ քաղաքապետին, որ մոտիկ բարեկամս է, և անմիջապես կստանաք զանոնք։

Զինվորական քաղաքապետության մեջ զիս շատ լավ ընդունեցին, բայց ըսին, թե ճամփորդներե գրավված թուղթերը հոն չէին գար, հապա Պատերազմական գործերու նախարարության գրաքննության գրասենյակին կղրկվեին։

Այս վերջին պաշտոնատան մեջ, իմ հարցումիս պատասխանեցին, թե սխալ տեղ եկեր էի, և պետք էի դիմել զինվորական սպայակույտին։

Սպայակույտին շեֆը հոյակապ մարդ մըն էր, առնական գեղեցկության այն հրաշալի տիպարներեն մին, որ Ռուսիս հատուկ էին։ Շատ սիրալիր կերպով մտիկ ըրավ զիս, ոտքի ելավ, և, ուսիս զարնելով՝

— Հարգելի պարոն,— ըսավ ինձի ժպտելով,— եթե ձեր թուղթերը այնքան կարևոր ըլլային, որ հոս իյնային, դուք ի վիճակի չէիք ըլլար գալու անձամբ փնտրելու զանոնք։

Շատ շիտակ։ Սպայակույտը պատերազմական գաղտնիքներու հետ կապ ունեցող գործերով կզբաղեր անշուշտ, և եթե իմ թուղթերս հեռվեն թե մոտեն այս մարզին հետ առնչություն ունեցած ըլլային, իմ բնակությունս շատոնց սահմանափակված կըլլար չորս ամուր ու սեղմ պատի մեջ, Թորնեոյի բանտեն քիչ մը տարբեր։

Պաշտոնատունեն դուրս ելլելուս ատեն, տարօրինակ մտածում մը ունեցա դռնապանին խորհուրդ հարցնելու։

— Այդ կարգի թուղթերը Պետրոգրադի Ֆինլանդական կայարանին գրաքննչին քովը կըլլան,— ըսավ ինձի անվարան։— Հոն դիմեցեք։

Իրա՜վ ալ, ժամ մը հետո թուղթերս ետ ստացա նշանակված պաշտոնատունեն, ուր ինձմե ներողություն խնդրեցին զանոնք ուշացուցած ըլլալնուն համար։

Ա՛լ իմ թուրք հպատակությունս զիս հանգիստ թողուց մինչև 1916-ի վերջը, երբ նորեն Պետրոգրադ վերադարձա, ութ ամիս Բաթում բնակելե հետո։

Օր մը դարձյալ հրավեր ստացա ոստիկանության ներկայանալու, ուր ինձ իմացուցին, թե Պետրոգրադ պատերազմական շրջան հայտարարված ըլլալով—գերմանացիները սկսած էին հառաջանալ ռուսական հողին վրա,— հոն չէի կրնար ապրիլ և պետք էր հեռանայի հիսուն կիլոմետր շրջանակե մը անդին։ Այս անգամ ալ Պետական Դումայի ուրիշ մեկ անդամին միջնորդությամբ էր, որ ազատեցա այս անպատեհությենեն։

1939

ԱՌԱՆՁԱՐ

ԵՐԿԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՄՈՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

Ընկերոջս՝ Հ. Աղասերին

— Բարի լույս, Չորպաճի՛։

— Բարի լույս, Հյուսնի շավուշ։

Եվ խոր հառաչանքով մը հազիվ գլուխս վեր առած էի տոմարներուս վրայեն, երբ այցելուս արդեն սիգարեթներես մեկը վառած ու աթոռ մը գրաված էր, իսկ վաճառականոցիս ծառան դեպի մոտակա սրճարանը կփութար սուրճ ապսպրելու։

Մեր քաղաքին ոստիկանատան շավուշն էր այս մտերմական հյուրը, որ վաճառականոցիս ճամբան սորված էր ամիսներ առաջ դատական գործի մը առթիվ։ Պաշտոնապես թեև երեք այցելուններու պատիվը կբավեր, բայց Հյուսնի շավուշ այն սիրալիր էակներեն է, որոնք պաշտոնական առթիվ մը ծանոթանալե ետքը անպաշտոն այցելություններու առիթը չեն փախցներ։ Ամեն անգամ, երբ պարտականությունը զինք այս կողմերը բերե, չի մոռնար հանդիպել ինծի, ինչպես ինք կըսե «չորպաճիին* սիգարան ու սուրճը խմելու»։

Պիտի հարցնեք, թե ի՞նչ գործ ունի ոստիկանության կամ դատարանի հետ։ Դա՞տ։ Աստված չընե. տունս տեղս կուտամ, դատ չեմ բանար... Թուրքիո մեջ։ Իմս դատական փորձանք մըն էր և պատճառը, կրնա՞յիք երևակայել... մորուքի սանտր մը։ Այո, թեև փղոսկրե, բայց վերջապես մորուքի սանտր մը։

* Չորպաճի— ապուր տվող։ Ժամանակին ենիչերիները տված են այս տիտղոսը քրիստոնյա հարուստներուն. բառին այս ծագումը կարծես պերճախոսորեն կբացատրե արդեն անոր փոխաբերական իմաստը։

* * *

Մեր շուկային մեջ էն նշանավորներեն մեկն է Առաքելին եվրոպական ապրանքներու խանութը և ինք Առաքելն ալ իմ վաղեմի բարեկամս։ Հաճախ կերթամ նստիլ իր խանութը, երբեմն գործով, երբեմն ալ լոկ բարեկամական տեսակցության համար։ Քանի մը ամիս առաջ դարձյալ նստած էի հոն, երբ խանութին դուռը հանկարծ ուժգին բացվելով մեկը ներս խուժեց։ Հսկա հասակ մը կապույտ պատմուճանի մը մեջ պարուրված և սպիտակ խոշոր փաթթոց մը, որու ներքևեն մոխրագույն, լայնածավալ մորուք մը կախված էր, հազիվ տեղ թողնելով զույգ մը կոկան աչքերու և տափակ քթի մը։

Առաջին ակնարկով իսկ դժվար չէր գուշակել, որ գյուղական մոլլա մըն էր եկողը։ Չբարևեց և առանց ուշադրության իսկ արժանացնելու Առաքելի ժպտալի բարևն ու նստելու հրավերը, ձեռքը մեջքի լայն գոտիին մեջ խոթեց և սանտր մը հանելով նետեց անոր առջևը։

— Դրամս ետ տուր։

Որոտաձայն արձակված այս կտրուկ հրամանին առջև Առաքել պահ մը ապշած մնալե հետո, սանտրը սկսավ զննել։ Ես ալ զարմացած՝ տեղես ելա և ընկերացա իրեն։ Փղոսկրե սանտր մը, որ արդեն թնճուք բռնած էր և ատամին մեկն ալ կոտրած։

— Ի՞նչ է, հոճա էֆենդի, ի՞նչ է պատահեր,— հարցուց Առաքել շվարած։

— Ի՞նչ պիտի պատահի, դեռ կհարցնե՞ս ալ,— պատասխանեց հոճան նույն բարկացայտ շեշտով,— անխիղճ, անհավատ, խաբեր ես դիս. այս սանտրը ոչ թե 35 դրուշ՝ 35 փարա իսկ չարժեր. մեկ անգամ մորուքիս զարկի ատամին մեկը թափեցավ և մորուքես ալ փունջ մը մազ փետեց։

— Տեր աստված, շատ բան լսեր էի, բայց այս տեսակ փորձանքի դեռ չէի հանդիպեր,— բացականչեց Առաքել հայերեն, գլուխը թոթվելով և հոճային դառնալով թուրքերեն շարունակեց.

— Հոճա էֆենդի, աստված վկա, որ այս սանտրը առաջնակարգ տեսակե է և ես շատ աժան ծախեցի ձեզի, ուրիշ տեղ ասկե վարնոցը 40-ի ալ չէիք կրնար առնել։

Եվ երկու հայ վաճառականներս մեր ամբողջ լեզվանությունը թափելով փոխատացություն մը սկսանք, հոճայեն հոճա

էֆենդին, որ իր մորուքին այդ փետումին մեջ սանտրը հանցանք չուներ։ Սանտրի ուրիշ զանազան տեսակներ վկայության բերինք ապացուցանելու համար իր գնածին գերազանցությունը, սակայն իզուր, մարդը մեղմանալու ամենափոքր տրամադրություն մը իսկ չէր ցուցներ և միշտ ոտքը գետին զարնելով դրամը կպահանջեր սպառնագին։

— Այս ապրանքը խանութը չի մնար, երբ ալ ըլլա կծախվի,— ըսավ վերջապես Առաքել առանց իր քաղցր շեշտը փոխելու,— և ես ձեր խաթերը համար առանց խոսք ընելու ետ կառնեի զայն, եթե ատամը կոտրած չըլլայիք. բայց հիմա ես որո՞ւ կրնամ ծախել այս կոտրած սանտրը...

— Ես չեմ կոտրեր, լիրբ, ինչո՞ւ սուտ կխոսիս,— պոռաց մոլլան ավելի կատղած,— առած ատենս կոտրած է եղեր, ով գիտե փակցուցեր ես, ի՞նչ ես ըրեր, խաբեր ես զիս։ Վերջապես ալ երկար խոսք չեմ ուզեր, կա՛մ դրամս ետ կուտաս և կա՛մ... դուն գիտես։

Ամեն համբերություն սահման ունի ըսեր են, մինչև անգամ խանութպանի և հայ խանութպանի համբերությունը։ Իմ համբերությունս արդեն վաղուց հատած էր, վերջապես Առաքելին ներսն ալ համբերանք չմնաց։ Զայրագին գզրոցը քաշեց, մեջեն յոթը հատ հինգնոց առավ ու հոճային նետեց։

— Առ ու կորսվե, ձեզի պեսներուն հետ առուտուր ընելը փորձանք է. կերեի, թե կյանքիդ մեջ առաջին անգամն ըլլալով մորուքիդ սանտր կգարնես. սանտրս ի՞նչ հանցանք ունի, երկաթ ըլա չի դիմանար այդ աղտոտ մորուքիդ...

Հազիվ այս խոսքերը Առաքելի բերնեն ելած էին, երբ մոլլան.— Վա՛յ շունշանորդի կյավուր, մորուքի՞ս կհայհոյես,— աղաղակեց ու անոր վրա խոյացավ։

Անմիջապես օձիկ-օձիկ փայլակներ շողացին աչքերուս առջև, ջղերս պրկվեցան և պահ մը արձանացած մնացի։ Հարձակվի՞լ լիրբ անպիտանին վրա, գետին տապալելով լավ մը տփել և ոտքեն քաշելով դուրս նետել... Բայց ոտքերս առանց վճռիս սպասելու հանկարծ փողոց նետեցին զիս... Ու շնչասպառ վաճառանոցս հասա, առանց ետևս նայելու։

Քանի մը ժամ ետքը միայն իմացա պատմության շարունակությունը։ Խեղճ Առաքելը սաստիկ ծեծ կերած էր հոճայեն և ուրիշ ազատվելու ելլա փողոցեն ոստիկան հասավ։ Ոտքերեն

ու արյունլվա վիճակի մեջ ոստիկանատուն տարված էր։ Այս տխուր լուրին տպավորությանը տակ բավական մեծ խղճի խայթ զգացի բարեկամս վտանգի բոպեին լքած ու հեռացած ըլլալուս համար, բայց այդ խղճահարությունս երկար չտևեց։

Ի՞նչ պիտի ըլլար օգուտը, եթե վերջին վայրկյանին զգացումս ոտքերուս վրա հաղթանակը տաներ և հոն մնացած ըլլայի. շատ շատ գետին պիտի փռեինք փուճ կենդանին ու լավ մը ծեծեինք, բայց վե՞րջը. ատով խնդիրը ավելի պիտի մեծնար, թուրք խուժանը ներս պիտի թափեր և եթե անոր ձեռքեն ողջ պրծեինք, հետո կառավարության ձեռքը իյնալով զնդաններու մեջ էշ նահատակ պիտի ըլլայինք։ Իսկապես նոր կհասկնայի, թե ի՞նչ ահռելի վտանգ էր, որ անցուցած էի, և իրիկունը, երբ դեպքը մորս պատմեցի, խեղճ պառավը ամբողջ գիշերը աչք չփակեց և առտվան առաջին զանգակի ձայնին ժամ փութաց ս. Թորոսին առջև ջուխտ մը մոմ վառելու։

Հաջորդ օրը կեսօրին ետքը վաճառանոցիս մեջ քանի մը հաճախորդներու հետ զբաղված էի, երբ խոպոտ ձայն մը հանկարծ ընդհատեց մեզ։

— Թորոս օղլու Կարապետը ո՞վ է։

Ծերուկ զապթիյե մըն էր, որ աննկատելի կերպով ներս մտած և սրունքները լարած կանգնած էր սենյակին մեջտեղը։

— Ես եմ, ի՞նչ կա, ի՞նչ կուզեք,— հարցուցի տագնապալի շարժումով։

— Դո՞ւն ես, ուրեմն քալե՛ հետս, քոմիսեր պեյը քեզ կուզե։

Սարսուռ մը սողաց գլխուս մազերեն մինչև ոտքիս եղունգները և սիրտս մեքենական մուրճի պես զարնել սկսավ։

— Ձի՞ս կուզե ըսիք, չեմ կարծեր, չի կրնար ըլլալ... ի՞նչ պիտի ընե զիս։

— Ատ իր գիտնալիք բանն է, քեզի չվերաբերիր,— ըսավ զապթիյեն վայրահակ, եռանկյունի գլուխը վեր ցցելով և ցուցամատը բարձրացնելով։

— Այո, այդպես է, իրավունք ունիք, բայց ես գործ չունիմ ոստիկանության հետ... բան մը չեմ ըրած... կաղաչեմ... սխա՞լ եկած չըլլաք...

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, ե՞ս սխալ դուռ զարնեմ,— պատասխանեց ծերուկը հոխորտ ծիծաղով մը ժոռատ լինդերը ցուցնելով.— էհ, վնաս չունի, ե՛լ երթանք, եթե սխալած ըլլամ, կառնեմ, նորեն

տեղդ կբերեմ քեզ, բան մը չես կորսնցներ։ Բայց լա՛վ նայե ինծի. երեկ չէ, որ ես այս պաշտոնիս մեջ մտած եմ, արդեն 15 տարի է, քեզի պես շատե՜րը տարած բերած եմ։ Այս խանին անունն ի՞նչ է,— Ահմեդ աղա խան է, այնպես չէ՞, քու անունդ ալ՝ Թորոս օղլու Կարապետ է, այնպես չէ՞, էհ շատ աղեկ, քոմիսեր պեյն ալ ինծի ըսավ— «Ահմեդ աղա խանին մեջ հայ վաճառական Թորոս օղլու Կարապետը կառնես, ինծի կբերես», և ես ալ ահա եկած եմ. հիմա դուն ըսե, սխա՞լ եկած եմ, թե ճի՜շտ,— ու կրկին շարունակեց իր սրտագին ծիծաղը,— հա՛, հա՛, հա՛, հա՛...

— Չէ, ինչպես կտեսնեմ չեք սխալած, ներեցեք, բայց կտեսնեք, որ հիմա քիչ մը գործ ունիմ, քոմիսեր պեյին ծառայական հարգանքներս մատուցեք, վերջացնելուս պես կուգամ։

— Չէ, տե՛ս, ատ չեմ կրնար ընել. մեզմե վեր օրենքը կա, օրենքի հակառակ չեմ կրնար գործել, քեզ հետս չառած այս դռնեն դուրս չեմ ելլեր։ Վնաս չունի, դուն գործդ վերջացուր, դեռ ժամանակ կա, ես ալ քիչ մը շունչ առնեմ, սիգարա մը, սուրճ մը խմեմ. մեկ շունչով սերայեն մինչև հոս եկա, քիչ տեղ չէ, ան ալ տաքին. երիտասարդ ժամանակս հոգնություն, ցուրտ, տաք ի՞նչ է, չէի գիտեր, օրինակի համար Մոսկոֆի պատերազմին մինչև մեջքս ձյունի մեջ օր ու գիշեր կքալեի, ամենևին հոգս չէր, բայց հիմա ա՛լ երիտասարդ չեմ։

— Խնդրեմ, խնդրեմ, զապթիյե աղա, նստեցեք, սիգարեթ մը հրամեցեք, ծո, Թադո՛ս, սուրճ մը ըսե։

— Ես զապթիյե չեմ,— դիտել տվավ քոմիսեր պեյին խղճամիտ գործակատարը, որու հետ այն ատեն մտքես իսկ չէի կրնար անցնիլ, որ այնչափ պիտի մտերմանայինք ետքեն,— ինծի կրսեն Հյուսնի չավուշ. չէ՞իր ճանչնար զիս, տարօրինակ բան, այս քաղքին մեջ զիս չճանչցող չկա, շուկայեն անցած ատենս, մեծեն մինչև փոքրը, ամենքն ալ բարև կուտան, ամեն կողմե սուրճի կհրավիրեն, բայց ես այնչափ ժամանակ չունիմ, որ ամենքին ալ խաթրը չկոտրեմ։

Կարծեմ ավելորդ է ըսել, թե հակառակ Հյուսնի չավուշին հայտնած կասկածներուս, առջի բոլորին իսկ հասկցած էի քոմիսերի այս հրավերին շարժառիթը։ Երեկվան դեպքին համար էր, ես շատ պարզ էր, միայն սա պարզ չէր, թե ի՞նչ դեր վիճակված էր ինծի այդ խնդրին մեջ և ահա այս մութ կետն է, որ կվախցներ զիս։ Բայց քիչ մը ետքը, երբ Հյուսնի չավուշ սիգարեթս ու սուրճս

համտեսելի հետո իր այնքան տևական բարեկամության հիմքը դրավ, թեև քիչ մը քողարկյալ կերպով՝ բայց և այնպես հայտնեց, որ ես իբր վկա կկանչվեի։ Ասոր վրա սրտիս մուրճը բավական դեզոք կպատմեմ, ասով ի՞նչ վնաս կրնա հասնիլ ինծի, ընդհակառակը, թերևս Առաքելին ալ օգուտ մը տամ։

Անմիջապես գործերս կարճ կապելով ընկերացա Հյուսնի չավուշին։ Ճամբան բազմավաստակ ծերուկը քանի մը խոշոր դրվագվուշին։ Ճամբան բազմավաստակ ծերուկը քանի մը խոշոր դրվագներով պատկերացուց ինծի իր փառավոր կյանքը, Մոսկոֆի պատերազմին մեջ իր կատարած անկարելի սխրագործություններեն սկսած մինչև իր արդի պաշտոնին անհնարին դժվարությունները։ Իսկ ես, թեև անընդհատ հիացական բացականչություններ կհեղհեղի, բայց ճիշտն ըսելով, շատ քիչ բան կրցա լսել, որովհետև միտքս այդ պահուն զիս սպասող անծանոթին վրա կշարչարվեր։

Երբ վերջապես սերային ընդարձակ բակեն անցնելով շենքին դռնեն ներս մտանք,— վեր պիտի ելլենք,— ըսավ Հյուսնի չավուշ՝ առաջին հարկին սանդուղները ցուցնելով։ Բայց հազիվ ոտքս առաջին աստիճանին վրա դրած էի, երբ մեկը փեշես բռնեց.

— Է՛յ, ո՞ւր կքշես այդ աղտոտ ոտքերով։

Սովորական տարազով Թուրք մըն էր, ձեռքի գավազանով մը, որու ծայրը սագի փետուրներու փունջ մը կապված էր։ Առանց խոսելու ժամանակ տալու իր այդ տարօրինակ վրձինը հապճեպով թափ տվավ կոշիկներուս վրա ու ափը բանալով տասնոց մը պահանջեց։ Նոր նկատեցի, որ միևնույն տեսակ գավազաններով զինված քանի մը հոգի կային դռան մոտ, և Հյուսնի չավուշ բացատրեց, որ ասոնք կապալով առած էին կառավարական շենքին մաքրության հսկելու գործը։ Մաքրասիրական և ելևմտական այդ կրկնապես հանճարեղ Թուրք գյուտին առջև հիացած և գրպանս ալ մանրուք չունենալուս՝ տասնոցի տեղ քառասունոց մը տվի և առաջին հարկը ելանք։

Հոս սանդուղին գլուխը գտնված դուռ մը բանալով Հյուսնի չավուշ հանդիսավոր բարև մը ղրկեց ներս և ինծի դառնալով՝

— Ջորպաճի, հոս կհանգստանաս, մինչև որ քեզ կանչեն,— ըսավ ու ինք դարձյալ վար իջավ։

Այս սենյակը, ինչպես տեսքեն կհասկցվեր՝ հաստատության խանվե-ճանախին պիտի ըլլար։ Մեկ անկյունը կոթնած էր սուրճի վիթխարի մոտ ծխախը, քովը հին սեղան մը սքճափայլ ջրով լի

խոշոր տաշտով մը, ֆինճաններով, ճեզվաններով, նարկիլիներով, աղտոտ քուրջերով և այլ հարակից իրեղեններով բեռնավորված։ Մյուս անկյունը հասարակ փայտե տախտ մը, որու վրա կիսովին ծալլված անկողին մը կհանգչեր թերմաշ կապերտի մը մեջ փաթթված, մոտը աղտոտ սնտուկ մը. մեկ պատի երկայնքին նստարան մը, որու վրա հոգնած դեմքերով ու այլազան հագուստներով մարդերու շարք մը կօրորվեր, յուրաքանչյուրն իր գլուխը աջակողմյան դրացիին ուսին հանգչեցված։ Իսկ ասոնց դիմացը խսիրի մը վրա դեմ առ դեմ ծալապատիկ նստած էին երկու փաթթոցավորներ, որոնք երկյուղած լռությամբ մը խաղող ու պանիր կուտեին։

Հազիվ աթոռ մը գտած էի, երբ խահվեճին, իր պաշտոնական հագուստեն ավելի մաշած դեմքով ծերուկ մը, մոտեցավ.

— Ջորպաճի, շաքարո՞վ կխմեք, թե՞ պարզ։

Այդ տրամադրության և այդ մաքրազարդ մթնոլորտին մեջ ոչ շաքարովին ախորժակ ունեի և ոչ ալ պարզին, բայց և այնպես մարդուկին ափը քառասուններոց մը դնելով՝ պարզ մը ապսպրեցի և աչքերս փակելով դեղի պես վար տվի։

Այդ ծակին մեջ մեկ ժամե ավելի սպասել հարկ եղավ։ Շոգեն ու սրտնեղութենես թերևս ճաթեի, եթե ներսի կյանքը շուտով շահեկան ոգևորություն մը չտանար։ Սրճագործին աշկերտները անընդհատ կմտնեին ու կելլեին ձեռքերնին սուրճի սարքերով, գրասենյակներու ծառաներ կուգային, որը նարկիլե տանելու, որը սուրճ ապսպրելու և որն ալ ապտեսքի բպրբմ լեցնելու, միևնույն ատեն չմոռնալով առիթեն օգտվիլ և ոտքի վրա իրենք ալ բաժակ մը սուրճ խմել փոխադարձաբար թարմ նորություններ հաղորդելով իրարու։ Երբեմն ալ դուռը կես մը կբացվեր և բարձրաձայն անուն մը կտրվեր, որու վրա նստարանի շարքեն մեկը կքակվեր, իսկ մյուսները մոլտալով ու աչքերնին շփելով վայրկյան մը իրարու երես նայելե հետո՝ բացված տեղը անմիջապես կփակեին ու կրկին կշարունակեին իրենց ալեկերպ ծածանումը։ Վերջապես իմ անունս տրվեցավ և իսկույն վեր ցատկելով հետևեցա ոստիկանի մը, որ զիս վարի հարկը սենյակ մը առաջնորդեց։

Ընդարձակ սենյակ մըն էր, բակին վրա նայող երկու մեծ պատուհաններով։ Մեկ անկյունը իրարու վրա դիզված էին խոշոր սնտուկներ, որոնց անխուսափ բերաններեն պաշտոնական թղթերու փոշոտ կապոցներ դուրս կթափեին։ Պատերը զարդարված էին ոստիկանի հին համազգեստներով, սուրերով, գոտիներով ու զանազան մեծության մտրակներով։ Միակ նշանը, որ ոստիկանական թանգարան մը կամ ավելորդարան մը մտած չէի, երկու գրասեղաններ էին, որոնցմե մեկուն ետևը գրագիր մը նստած էր, իսկ մյուսին ետևը՝ քոմիսերը։ Քոմիսեր Օսման պեյը թեև դեմքով ծանոթ էր ինծի, բայց այդ պահուն բավական պիտի դժվարանայի ճանչնալ զինք, եթե ածխագույն թավ պեխերը և սեղանի տակ երկնցած տիտանական ոտքերը չըլլային։ Ճակատը կարմիր թաշկինակով մը կապած էր, որու տակեն գետնախնձորի կեղևները մինչև աչքերուն վրա կկախվեին։ Աջ ձեռքը գլխուն նեցուկ տված, ընկողմանած իր թիկնաթոռին վրա և ճակտին հարդարանքն ու առջևը գրասեղանին վրա շարված գետնախնձորները կմատնեին, որ խելքին պտուկը լավ վիճակի մեջ չէր։

Քանի մը քայլ հառաջանալով գետնամած բարև մը տվի և կանգնեցա։

— Հը, ի՞նչ կուզես,— մոլտաց առանց դիրքը փոխելու։

— Պեյ էֆենդի, կանչած էիք զիս, ատոր համար եկած եմ։

— Ո՞վ ես դուն։

— Ծառանիդ՝ Կարապետ Թորոսյան։

Ասոր վրա ուժգին փնչելով շտկվեցավ և սեղանին վրայեն թուղթ մը ջոկելով.— Հա՛, Ահմեդ աղա խանը վաճառական Թորոս օղլու Կարապետը դո՞ւն ես։

— Այո, էֆենդի, ծառանիդ եմ։

Եվ պահ մը ձեռքի թուղթը կարդալե ետքը՝

— Խանութպան Մամաս օղլու Առաքելը կճանչնա՞ս։

— Այո, պեյ էֆենդի, կճանչնամ։

— Որչա՞փ ժամանակե ի վեր կճանչնաս։

— Տղայութենե ի վեր կճանչնամ։

— Ուրեմն լավ բարեկամնե՞ր եք։

— Այո, տեր իմ։

— Իսկ Հաճիքեոյցի մոլլա Հասան էֆենդին ալ կճանչնա՞ս։

— Ոչ, այդ անունով անձնավորություն մը չեմ ճանչնար։

— Չե՞ս ճանչնար, տարօրինակ բան. մենք քեզ իբր վկա կանչած ենք, որովհետև երեկ, երբ Առաքել ըլլալիք շունը մոլլա էֆենդիին հայհոյած է իր խանութին մեջ, դուն ալ հոն գտնված ես։

— Այո, երեկ Առաքելի խանութին մեջ ցավալի դեպքի մը ականատես եղա, բայց մոլլա էֆենդին առաջին անգամն ըլլալով տեսա հոն, անունն ալ մինչև հիմա չէի գիտեր։

— Է, լավ, Առաքելը ինչո՞ւ հայհոյեց մոլլա էֆենդիին։

— Ներեցեք, տեր իմ, Առաքելը ոչ մեկ հայհոյություն չըրավ, ընդհակառակը շատ մեծ քաղաքավարությամբ ու քաղցրությամբ կվարվեր մոլլա էֆենդիին հետ. բայց մոլլա էֆենդին... քիչ մը... մոլլա էֆենդին արդեն նախապես... գրգռված տրամադրության մեջ ըլլալուն... այդ տխուր դեպքին պատճառ եղավ։

— Այսինքն, խոսքին թուրքերենը՝ պարզապես ըսել կուզես, թե հանցավորը Առաքելը չէր, այլ մոլլա էֆենդին։

— Ա...յո։

— Այսինքն մեկ խոսքով ըսել կուզես, թե Առաքել կոչված էյաֆիր սրիկան մոլլա էֆենդիեն ավելի լավ մարդ է։

— ՈՐ

— Ինչո՞ւ լռեցիր, պատասխան չտա՞ս։

— Պեյ էֆենդի, ես այդ տեսակ հանդուգն վճիռ մը չեմ կրնար արձակել. ինչպես քիչ առաջ ըսի, մոլլա էֆենդին ես չեմ ճանչնար, կրնա շատ ազնիվ ու պատվական մարդ ըլլալ, բայց երեկվան դեպքին մեջ... իրավունքը իր կողմը չէր։

— Ասոր նայե, ասոր նայե,— դարձավ քոմիսեր պեյը իր քարտուղարին հեգնական ծիծաղով մը,— դիմացս կանգներ փաստաբանություն կընե. մոլլա էֆենդին կրնա լավ մարդ ըլլա եղեր, բայց ինք չի ճանչնար եղեր, կարծես թե դեռ վիճաբանելիք խնդիր մը ըլլար պատկառելի, սուրբ մոլլայի մը և... հայ խանութպանի կտորի մը համեմատությունը, հա՛, հա՛, հա՛, հա՛. ինծի նայե, դուք շատ երես եք առեր, ձեր չափը վաղուց մոռցեր եք, բայց ես ձեզի նորեն այնպես մը սորվեցնեմ ձեր չափը, որ հավիտյան չմոռնաք։

Եվ գլխով նշան մը տվավ քարտուղարին, որ անմիջապես դուրս ելավ, իսկ ինք գլխուն կապը քակելով գետնախնձորի կեղևները նորոգել սկսավ։

Քիչ մը ետքը քարտուղարը դուռը բացավ և ներս մտան երեկվան մոլլան ու Առաքելը։

Մոլլան բուռն շարժուձևերով քովես անցավ և խոժոռ ակնարկով մը զիս չափելե ետքը գնաց նստավ քոմիսերին քով, որ արդեն տեղեն ելած և աթոռ մը պատրաստած էր։ Իսկ Առաքե՞լը. օ՜հ, մի հարցնեք, խեղճ մարդուն տեսքը պարզապես աղիքներս գալարեց։ Գլուխը ահագին փաթաթի մը մեջ կորսված, աջ թևը անբնական կերպով կողին փակած, դողդոջ քայլերով և ոգարմ ու պաղատագին

նայվածք մը ուղղելով երեսիս, քիչ մը անդին գլուխը կախեց ու կանգնեցավ։

— Հա՛, ատամիդ ցավը դեռ չանցա՞վ, Ֆերաբա, ատ որչափ բան ես փաթթեր գլուխդ, կարծես վիրավորված ըլլաս և ան ալ թնդանոթի ռումբով,— մոնչեց քոմիսերը երկու ձեռքով փառահեղ պեխերը շտկելով և զիս ցուցնելով՝ հարցուց.

— Ա՞ս է քու վկադ։

— Այո, պեյ էֆենդի,— թոթովեց Առաքելը խղճուկ ձայնով։

— Աս երեկ հո՞ն էր,— դարձավ քոմիսերը հոճային։

— Կարծեմ... այո, այո, հոն էր,— պատասխանեց հոճան դարձյալ խոժոռ ակնարկ մը սևեռելով ինծի։

— Է, ուրեմն շատ աղեկ. հիմա ծայրեծայր և կատարյալ ճշտությամբ պիտի պատմես ինչ որ տեսած ես,— հրամայեց Օսման պեյ խոսքը կրկին ինծի ուղղելով,— բայց լավ ուշադրություն դրե, կատարյալ ճշտությամբ կըսեմ, կհասկնա՞ս։

— Այո, էֆենդիմ, շատ լավ կհասկնամ և վստահ եղեք, որ ուստ ճշմարտությունը պիտի ըսեմ,— պատասխանեցի խոնարհություն մը ընելով։

— Բայց ոչ հայու ճշմարտությունը, աս ալ հասկցա՞ր,— ավելցուց խոշոր ցուցամատը սպառնագին ճոճելով,— այլ բուն ճշմարտությունը, այն ճշմարտությունը, զոր հոճա էֆենդին արդեն հայտնած է. եթե տարբեր բան պատմելու ըլլաս, 32 ատամդ կոկորդդ կթափեմ։ Սկսե՛ նայինք։

Եվ սկսա մանրամասնորեն պատմել ամբողջ դեպքը, բնականաբար կարելի եղածին չափ մեղմ բացատրություններ փնտրելով հոճա էֆենդիին վարմունքը նկարագրելու համար։

Պատմությունս քանի կհառաջանար, հոճան ալ նույնքան ավելի կանհանգստանար իր աթոռին վրա, իսկ քոմիսերը, որ ճակատին գետնախնձորները շփելով դեմքի դժկամակ ծամածռություններ կըներ, հանկարծ ընդհատեց զիս.

— Ինծի՛ նայե, կո՞ւյր ես, չե՞ս տեսներ, որ գլուխս կցավի. քու դատարկաբանություններդ լսելու ես ո՞չ կարողություն ունիմ և ո՞չ ալ ժամանակ. կարճ կապե և միայն սա հարցումիս պատասխան տուր. աս հայը ի՞նչ հայհոյություն ըրավ հոճա էֆենդիին։

— Հայհոյությո՞ւն... բայց, պեյ էֆենդի, կարծեմ քիչ առաջ ըսի, որ ես հայհոյություն չեմ լսած։

— Լիրը անհավատ, ինչո՞ւ սուտ կխոսիս, մորուքիս չհայհո-

յե՞ց,— պայթեցավ վերջապես մոլլան և տեղեն վեր ցատկելով հարձակողական դիրք մը առավ։

— Մի հուզվիք, հոճա էֆենդի, կաղաչեմ մի հուզվիք, ի՞նչ կարևորություն ունի ատոր վկայությունը,— միջամտեց քոմիսերը և թևեն բռնելով դարձյալ տեղը նստեցուց մոլլան։

Այդ միջոցին բաց պատուհանեն ձայն մը լսվեցավ.—

— Պեյ էֆենդի, կհրամայե՞ք։

Թուրքի գլուխ մըն էր, որուն քոմիսերը ձեռքի նշանով մը պատասխանեց և դուռը բացվելով շրջուն պաղպաղակավաճառ մը ներս մտավ իր ամբողջ կարգուսարքով։

— Լավ ժամանակին եկար, էոմեր,— ըսավ քոմիսերը,— գլուխս կցավի, առատորեն երկու պնակ լեցուր, մեկը հոճա էֆենդիին, մյուսը ինծի։

Պաղպաղակին առաջին գդալը արդեն մեղմեց հոճային զայրույթը, իսկ քոմիսերը իրարու ետևե քանի մը խոշոր գդալ կլլելե հետո ինծի դառնալով.

— Դուն քու կյավուրի խելքովդ սուտ վկայությամբ իբր թե բարեկամդ պիտի ազատես, բայց նորեն կըսեմ, նպատակիդ չհասնելե զատ՝ այս ընթացքով դուն ալ իշու արքայության պիտի արժանանաս։ Հիմա կորսվե դնա, քեզի մտածելու ժամանակ կուտամ, որպեսզի գալ անգամ նույն սուտերը չկրկնես, կհասկնա՞ս, քու ըսածդ ալ, ըսելիքդ ալ արդեն մեկ փարայի կարևորություն չունին, խնդիրը շատ պարզ է։ Ուրեմն, գնա կորսվե՛, մինչև որ նորեն կանչեմ քեզ։

Կրկին գետնամած բարև մը տալով և Առաքելին հետ դարձյալ ցավագին ակնարկ մը փոխանակելե ետքը, դուրս ելա։

Երկրորդ հրավերը չուշացավ։ Հազիվ երեք օր անց, Հյուսնի չավուշը վերստին սիկարա մը ու սուրճ մը խմեց վաճառանոցիս մեջ և իր անսպառ կենսագրութենեն նոր դրվագներ պատմելով՝ առաջնորդեց զիս քոմիսեր պեյին քով։

Միևնույն սենյակին մեջ հարցաքննությունը նույն ուղղությամբ կրկնվեցավ, միայն թե այս անգամ գործը հանդիսավոր կերպարանք մը առած էր։ Մոլլային հետ ուրիշ երեք անծանոթ մարդեր ալ կային, որոնք ապշեցուցիչ մանրամասնություններով ճոխ վեպ մը պատմեցին, որուն վերջաբանը այն էր, թե Առաքելը ամենաազատ բացատրությամբ մը հայհոյած էր հոճա էֆենդիի նվիրական մորուքին։ Առաքելը նույն սրտաճմլիկ վիճակին մեջ էր, ավելի նի-

հարցած ու տժգույն, սակայն այս անգամ չէին թողած, որ գլուխը կապե, և ոչ իսկ ակռայի ցավի պատրվակին տակ, որովհետև հոճան սկզբեն ի վեր կուրանար ծեծի խնդիրը։ Իսկ այս վերջին հարցաքննության ամբողջ ընթացքին մորուքը անբնական կերպով վեր կբռներ, անշուշտ ավելի ուժ տալու համար հայհոյանքի ամբաստանության։ Պահ մը համարձակեցա պնդել, որ դեպքի միջոցին Առաքելի խանութին մեջ ինծմե զատ դուրսեն մարդ չկար, հետևաբար ուրիշ վկա չէր կրնար ըլլար, բայց այս անխոհեմությանս միակ արդյունքը այն եղավ, որ հոճան ու իր վկաները կատաղի լուտանքներով վրաս վազեցին, սակայն քոմիսերը ուժգին ապտակ մը իջեցնելով երեսիս, փրկեց զիս անոնց ձեռքեն։ Ի վերջո քոմիսերը հայտնեց, որ գործը հարցաքննիչ դատավորին պիտի հանձնվի, որովհետև հոճա էֆենդին դատ կուզե բանալ։

Այս նոր սպառնալիքին տակ սենյակեն դուրս ելած էի, երբ Հյուսնի չավուշ թևես բռնելով խահվե-օճախին տարավ զիս և հոն անկյուն մը քաշելով, սկսավ բացատրել, թե ի՞նչ մեծ փորձանքներ պիտի գային թե Առաքելին և թե իմ գլխուս, եթե խնդիրը դատարանի առջև ելլեր։ Ու զիս պահ մը սարսափի մեջ թողնելե ետքը հայտնեց, որ ինք կրնա մեզ այդ բոլոր երևելի և աներևույթ փորձանքներեն ազատել, եթե պզտիկ գումար մը, 15 ոսկի, իր տրամադրությանը տակ դնեինք։ Պատասխանեցի, թե խնդիրը Առաքելեն կախված է, քանի որ այն է ամբաստանյալը։ Ասոր վրա գնաց Առաքելն ալ բերավ և մեզի սպառնացող վտանգները անոր ալ մեկիկ-մեկիկ բացատրելե հետո պահ մը մեզ առանձին թողուց, որպեսզի խորհրդակցինք։

Կկարծեի, թե Առաքելը վայրկյան մը իսկ չպիտի վարաներ փրկության այդ առաջարկը ընդունելու։ Բայց Հյուսնի չավուշը 4—5 անգամ գնաց եկավ և դեռ մեր խորհրդակցությունը չէր վերջացած։

— Ը՛ռ, աղբար, ինչ կըսես, ինչպե՞ս տամ, 15 ոսկին ինծի համար դրամագլուխ մըն է։

Այս էր իր միակ պատասխանը, զոր անդադար կհեղեղեր կողկողագին ծունկերը ծեծելով։ Վերջապես պատրաստակամություն հայտնեցի 3 ոսկին ես իմ քսակես տալու, սակայն ատոր ալ միակ արդյունքը այն եղավ, որ իր հանկերգին 15 թիվը 12-ի իջեցուց և այս անգամ ալ կկրկներ.

— Ծո, աղբար, ինչ կրսես, ինչպե՞ս տամ, 12 ոսկին ինծի համար դրամագլուխ մըն է։

Ալ բարկացած ու հուսահատած դուրս ելա և տուն դնացի։

Հաջորդ առավոտ վաճառանոցիս մեջ նստած միտքս կտանջեի, գեթ ես իմ պոչս ազատելու միջոց մը գտնելու համար։ Ի՞նչ ընել։ Որ կողմը կդառնայի, չէի կրնար լուծել այն կույր հանգույցը, որով իմ պոչս կապված էր Առաքելի պոչին։ Հիմարը չէր ուզեր 12 ոսկիի ղոհողությունը հանձն առնել իր կաշին փրկելու համար, իսկ ես ալ այդ պատճառով ավելի կդժվարանայի ամբողջ գումարը քսակես վճարելու։ Գործերնիս թերևս այս առտիճան չդիշնար, եթե սկիզբեն խելք ըրած ու քանի մը թուրք վկաներ գտած ըլլայինք։ Այդ կարգի վկաներ վարձել մահմեդականի մը դեմ թեև դժվար, բայց անկարելի չէր։ Դատարանի դռան առջև փոքրիկ, աղտոտ սրճարանի մը մեջ միշտ նստած են մարդիկ, որոնց արհեստը վկայությունն է։ Ամեն բանի մասին կրնան վկայել. սովորական վկայության նվազագույն սակը 5 ղրան է, ինչպես կտեսնեք ոչ շատ սուղ, իսկ քրիստոնյայի նպաստ մահմեդականի դեմ վկայելու համար այս սակը կբազմապատկվի խնդրին մեծության և քրիստոնյայի քսակին ծանրության համեմատ։ Բայց մենք այս ամենատես և ամենուրեք մարդերեն ա՛լ չէինք կրնար օգտվիլ, որովհետև արդեն հայտնած էի, որ ինծմե զատ մարդ չկար խանութը դեպքին ականատես։

Տակավին այս մտատանջության մեջ էի, երբ ոստիկան մը մտնելով տոմսակ մը հանձնեց։

Առաքելն էր։ Երեկվան սպառնալիքները կերևի, թե բանտի գիշերվան մեջ դիվային համեմատություններ առնելով հաղթանակը տարած էին 12 ոսկիի դրամագլուխին վրա։ Թշվառականը վերջապես կընդուներ առաջարկված միջոցը, սակայն պայմանով, որ... 5 ոսկին ես տայի։ Այս պայմանը բավական զայրացրեց զիս, բայց ատով դբաղվելու ատենը չէր. անմիջապես վազեցի Հյուսնի շավուշը դտա։

Այս անգամ ալ աս տարբեր երգ կերգեր։ Հայտնեց, որ գործը արդեն հարցաքննիչ դատավորին հանձնված էր և այլևս անկարելի էր առջևը առնել։ Բայց քիչ մը ետքը ավելցուց, որ բոլորովին ալ անկարելի չէ, որ ինք դարձյալ կրնա խնդիրը փակել, եթե միայն նախկին գումարը 20-ի բարձրացնենք։ Որովհետև հարցաքննիչ դատավորը Պոլսո իրավաբանական վարժարանը նոր ավարտած

երիտասարդ մը ըլլալուն նյութապես դեռ չէր պարարտացած և 5 ոսկիով կարելի էր ձեռքը յուղել։

Առաքելս քիչ մնաց կաթված իջեցներ, երբ այս նոր լուրը իրեն հաղորդեցի։ Քանի մը րոպե անբարբառ մնաց և երբ վերջապես բերանը բացվեցավ, փոխանակ պատասխան մը տալու, բռունցքով գլուխը կհարվածեր՝ սանտրը և մասնավորապես մորուքի սանտրը հնարողին ալ, շինողին ալ յոթը պորտը հայհոյելով և իրեն ծանոթ բոլոր սուրբերու անունով կերդնուր այլևս սանտր չծախել։ Իմ բաժինս 5 ոսկիի բարձրացնելով, հազիվ կրցա զինք համոզել, որ մնացած 15 ոսկին տա և նույն օրն իսկ դրամը հանձնեցի Հյուսնի շավուշին։

Չորս օր ամբողջ լուր չելավ գործեն և Առաքելը բանտեն տոմսակ տոմսակի ետևե կղրկեր իր ամբողջ մաղձը իմ վրաս թափելով, որ անխելքությամբ 20 ոսկի ալ ակռայի վարձք տված էի շնեղրուն։ Սակայն հինգերորդ օրը կոչնագիր մը հասավ հարցաքննիչ դատավորեն և այդ ակռայի վարձքին կատարած հրաշքին վայելքը ամեն բան մոռցուց։

Մոլլան, իր վկաները, Առաքելը ամենքն ալ հոն էին, երբ ներս մտա։ Այս անգամ Առաքելը աթոռի մը վրա բազմած էր և ինծի ալ իսկույն նստելու հրաման տրվեցավ։ Հարցաքննիչ դատավորը, վայելուչ երիտասարդ մը եվրոպական վերջին նորաձևությամբ հագված՝ նուրբ թուրքերենով և մեծ քաղաքավարությամբ դարձյալ ընդհանուր հարցաքննություն մը կատարեց, իսկ քարտուղար մը ընդեղանուր արագ ճղճղոցներով յուրաքանչյուրիս խոսածը կարձանագրեր։ Բայց պատմությունը այս անգամ շատ համառոտված էր գրրեր։ Բայց պատմությունը այս անգամ շատ համառոտված էր և մոլլային վկաններեր իրենց վկայության տարօրինակ փոփոխություն մը տված էին, որի խորախորհուրդ իմաստը վերջը միայն կրցա հասկնալ։ Առաքելը այս անգամ հոճա էֆենդիին ոչ թե մորուքին հայհոյած էր, այլ մորուքին միմիայն մեկ թելին։

Կարճառոտ հարցաքննությունը վերջանալե հետո հարցաքննիչ դատավորը խնդրեց, որ պահ մը դուրս ելլենք։ Դուրսը միջանցքին մեջ հոճա էֆենդին ժպտալի բարևով մը մոտեցավ մեզի և ձեռքը Առաքելի ուսին դնելով՝ ըսավ.

— Ծո, գնա աղոթք ըրե, որ ինծի պես բարի մարդու մը հանդիպեցար, թե չէ գիտե՞ս ինչ կըլլար վիճակդ, և բերանը Առաքելի ականջին մոտեցնելով՝ ավելցուց.— Ալ վաղը խանութդ որ գամ, հարկավ նոր սանտր մը կնվիրես։

Առաքել սանտրի անունը լսելուն թեև ցնցվեցավ ու քայլ մը ետ գնաց, բայց և այնպես խոստացավ այդ նվերն ալ ընել։ Քանի մը բոպե ետքը կրկին ներս կանչվեցանք և հարցաքննիչ դատավորը ձեռքը թուղթ մը առնելով, հիանալի առոգանությամբ ու հանդիսավոր ոճով մը կարդաց իր վճռագիրը, զոր իբր թանկագին հիշատակ մը պահած եմ մինչև այսօր և ուրկե հետևյալ էական կտորը առաջ կբերեմ թարգմանաբար, որչափ որ կարելի է թարգմանել անթարգմանելի հրաշակերտ մը։

— «Նկատելով, որ ըստ իր վկային՝ ամբաստանյալը հոճա էֆենդիին մորուքին համար միայն աղտոտ ըսեր է, ինչ որ իսկապես հայհոյություն չի կրնար համարվիլ և մյուս կողմե նկատելով, որ ամբաստանիչին վկաները թեև նախապես ոստիկանության առջև կվկայեին, թե խանութպան Առաքելը հոճա Հասան էֆենդիի մորուքին հայհոյած է, սակայն ետքեն իրենց արդարացի հուզումը հանդարտելով և հիշողություններին ավելի պարզվելով հարցաքննիչ դատավորին առջև իրենց նախկին վկայությունը սրբագրելով վկայեցին, որ ամբաստանյալը ամբաստանիչին ոչ թե ամբողջ մորուքին, այլ մորուքին միմիայն մեկ թելին հայհոյած է։

Նկատելով, որ ամբաստանյալը հայհոյանքը արտաբերելեն անմիջապես հետո նախատյալին արդարացի զայրույթին հետևանոք իրեն արժանի պատիժը արդեն մասամբ մը կրած է։

Նկատելով, որ այդ պատիժը տրված միջոցին ըստ ամենայն հավանականության մորուքին հայհոյված թելը կրնա փրթած ու ինկած ըլլալ, որով բնականաբար հայհոյությունն ալ հետը միասին ինկած կըլլա։

Նկատելով վերջապես, որ ամբաստանյալը քանիցս աչքերը անկեղծ զղջումի արցունքով լեցված և պաղատագին ներողություն խնդրած է ամբաստանիչեն և հոճա էֆենդին ալ իր նվիրական աստիճանին և առաջնաշարդ անձին վայել գթասրտությամբ նեբել կուզե։

Հարցաքննիչ դատավորը խնդիրը մանրամասնորեն քննելե հետո այսպիսով փակված կնկատե զայն և ամբաստանյալն ալ ազատ կարձակե առժամանակյա ձերբակալութենեն»։

ԲՈՒՐԴԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՍ

Անցյալ օր հին թղթերս խառնելու ատեն՝ ծոցի տետրակ մը անցավ ձեռքս։ Թեև շատ ժամանակ չէր անցեր վրայեն, բայց կողքերը արդեն մաշած էին և դժգունած թերթերը հազիվ կցուցնեին դեռ իրենց վրա մատիտով նշանակված խառնիխուռն նոտերն ու հաշիվները։ Անմիջապես մյուս թղթերը կրկին իրենց փոշոտ հանգստարանին մեջ զետեղելով, բազմոցիս վրա կերկննամ ու կսկսիմ թերթել այդ թերմաշ տետրակս, ուր հիշողություններս ամփոփած էի առևտրական շատ նշանավոր ճամփորդության մը միջոցին։ Խեղճ հիշատակարանս ինչպե՞ս կուզեիք, որ նոր մնար, երբ ձիուս թամբեն սկսած մինչև հարդի պարկը՝ հազար ծակուծուկ մտած էր վտանգավոր ձեռքերու չհանդիպելու համար։

Հենց առաջին երեսին վրա կկարդամ— 1897 ապրիլ 20-ին մեկնեցա Կարինեն և նույն տարվան հուլիս 18-ին հասա Ճիզրե։ Բերաննիդ այդչափ խոշոր մի բանաք, դեռ ավելի զարմանալին կա. ճամփու ծախքիս ամբողջ գումարը հասած է 120 օսմանյան ոսկիի, որմե 100 ոսկիին առջև նշանակված է անցագրի ծախք։

Պատմեմ։

Ա.

Ծննդավայրիս՝ Կարնո Սանասարյան վարժարանը հազիվ ավարտած, միակ իդեալս էր անցնել Եվրոպա և համալսարանական կրթություն մը ստանալ։ Դեռ փոքր հասակես գրական ընդունակություն մը կտեսնվեր մեջս և շաբաթը առնվազն երեք արձակ և մեկ ոտանավոր բանաստեղծություն կարտադրեի։ Այդ արտադրություններս տետրակի մը մեջ հավաքած, մեծ ոգևորությամբ հորս կկարդայի և աստուծո օրը քանի մը անգամ իրեն բացատրելով մեջս բռնկող երկնային հուրին զորությունը, կաշխատեի համոզել, որ ազգին և մարդկության շահերը կպահանջեին զիս վերջապես Եվրոպա ղրկել։ Մարդը իզուր կջանար գլխես հանել այդ «հիմարությունները», իր նյութական անկարողությունն ու ծերությունը առարկելով։ «Այնչափ զոհողություններով վերջապես զավակ մը հասցուցի, որ գործիս գլուխն անցնի, ծերությանս նեցուկ դառնա, անոր ալ խելքը հեռուներն է», կգանգատեր խեղճ ծերունին հանդիպած ծանոթին ու կհառաչեր։ Վերջապես անակն-

կալ դիպված մը բախտս վճռեց։ Հայրս մեռավ օր մը, կարծես ուզելով յուր մահովը հարկադրել ինծի, որ չէր կրցած խոսքով հասկցնել։ Ծրագիրներս մեկ հարվածով տակնուվրա եղան, մեր ընտանիքին ամբողջ բեռն իմ ուսերուս վրա իյնալով, ստիպվեցա հուսահատորեն այրել բանաստեղծություններուս տետրակը և հորս կտավեղենի խանութը նստիլ։ Չեմ գիտեր, այդ անտիպ գործերուս ոչնչացումով հայոց գրականությունը օգուտ ըրավ թե վնաս, բայց այն ատենները վստահորեն կրնայի ըսել, թե գեշ չեղավ ինծի համար։ Գրչի տեղ հորս արշինը ձեռք առնելով, քիչ ատենեն համոզվեցա, որ առևտուրի ավելի շնորհք ունեի, քան բանաստեղծության։ Առևտուրի դիցուհին առջի օրեն ժպտեցավ ինծի և կարճ միջոցի մը մեջ հորս համեստ գործը բավական ընդարձակելով, շուկայի վրա ինչպես կըսեն՝ «պատվավոր ազգային մը» դարձա, թաղական ընտրվելու չափ պատվավոր։

Այս վաղահաս հաջողությենեն քաջալերված՝ արդեն սկսեր էի իդեալներու նոր շրջան մը թևակոխել։ Կերազեի գործս հետզհետե ընդարձակել, մեծ հարստություն մը դիզել և դրամի զորությամբ հաջողցնել այն բոլորը, ինչ որ չվիճակվեցավ գրչով իրագործել։ Սակայն ո՞րու մտքեն կանցներ, թե մոտավոր ապագան կծիծաղեր վրաս...

Արդեն 1894 թվականին առևտրական հրապարակը կայուն վիճակ մը ստացավ, և իմ գործերս ալ սկսան կաղալ։ Շատ անգամ ամբողջ օրեր խանութիս մեջ կհորանջեի առանց հինգ փարայի առուտուր ընելու. բայց այդ միջոցին որո՞ւ հոգն էր առուտուրն ու օրվան շահը։ Աշնան հովերուն հետ ծիծաղկոտ ձայներ կուգային հեռուներե, հայերը օրը քանի մի անգամ խորհրդավոր բաներ կփսփսային իրարու ականջի, ու բոլորիս դեմքերը ուրախությենե կճառագայթեին։

Վրա հասավ 95 թվականը. մայիսի արևը սրտերնիս ավելի կենդանացուց։ Մեր փսփսուքները լսելի խոսակցություններու փոխվեցան, ուրախ լուրերը՝ կարծես անթել հեռագրով ամեն կողմերե տարտամորեն, բայց ժամը ժամին կհասնեին մեզի և մեկ օրեն մյուսը անհամբեր զիրար շնորհավորելու բախտին կպատրաստվեինք։ Քաղաքին մեջ լեռներեն իջած ժանտատեսիլ մարդերու բազմություն մը կդիմվեր, շուկային մեջ անցուդարձ կընեին ասոնք, սպառազեն ու դաժան նայվածքներ կնետեին մեր ապրանքներուն ու մեր վրա։ Անծանոթ տագնապ մը կբարդվեր օդին մեջ, մեզ

սրտապնդող հույսերը սակայն դեռ շատ մեծ էին, մտքերնես կծիծաղեինք վայրենության այդ ամբողջ թափորին վրա։ Բայց ավերտիսներուն շուտով բոթեր ալ սկսան խառնվիլ և սարսափի ու ակնկալության տարօրինակ զգացումի մը տակ ճմլվելու վրա էինք, երբ վերջապես փոթորիկը փրթավ ու քշեց տարավ հույսն ալ, հուսահատությունն ալ։

Այդ օրերուն, կամ ինչպես Կ. Պոլսո հայ թերթերը կգրեին՝ «տնտեսական տագնապին» ատեն, առուտուրի հոգերեն ալ բոլորովին ազատեցա։ Անծանոթ հաճախորդներու խուժան մը առանց մեզի հարցնելու սրբած տարած էր ինչպես շատ շատերուն, այնպես ալ իմ խանութիս ամբողջ ապրանքը, մինչև անգամ տախտակները, խավաքարտներն ու խանութի փեղկերն ալ. փողերը սակայն չբերին մինչև այսօր... Այս մասին այնքան ալ չեմ ցավիր, որովհետև ուրիշ շատ հայ խանութպաններ ապրանքներուն հետ միասին իրենք ալ գնացին ու ալ չդարձան, ես գոնե տեղս մնացի դրամագլուխիս մեկ մասին հետ։

Բ

Այսպես մեկ անգամեն շահ-վնասի մտմտուքներեն ազատվելե ետքը, մոտ երկու տարիե ի վեր տունս փակված արձակուրդ կընեի։ Ու ես միայնակ չէի, մեծ մասը այն հայերուն, որոնք կրցեր էին «տնտեսական տագնապեն» գեթ գլուխնին ազատել՝ շնորհիվ վեհափառ սուլթանին իրենց թզենիներուն տակ պառկած, ունեցողը պատրաստեն կուտեր, չունեցողը... ծոմ կպահեր։

Այս վիճակը սակայն երթալով անտանելի ու տագնապալի կդառնար ինծի համար։ Դրամագլուխս արդեն բավական նիհարցեր էր, հազիվ դեռ քանի մի հարյուր ոսկի կմնար. խանութս նորեն շտկել չէի համարձակիր. դուրսերը երթալ գործ որոնելու համար անկարելի էր, որովհետև անցագիր չէին տար։

Ելք մը գտնելու համար գիշեր-ցերեկ գլուխս կճաթեցնեի, երբ կյուրակի օր մը եկեղեցվո բեմեն մեր առաջնորդական տեղապահը մաղթանքներու տարափով մը ժողովուրդին ավետեց կայսերական կարգ մը շնորհներ, որոնք պատրիարքարանեն հաղորդված էին։ Առանց մեջեն ինծի համար ամենեն կարևորը հայերուն տրված երթևեկի ազատությունն էր։ Ուրեմն կարելի էր անցագիր մը ձեռք բերել։

Նույն օրը մեր տունը եկավ Զավուշյան Սարգիսը, որ շուկայի դրացիս և ամենամոտ բարեկամներս էր. իրեն ալ խանութը դարտըկեր էին, և ինք ալ ինծի պես դրամագլխեն ուտողներեն էր։

— Է՜, ինչ ըսիր նայինք այսօրվան լուրերուն,— հարցուց Սարգիսը ներս մտնելուն պես։

— Ի՞նչ ըսեմ, Սարգիս, սիրտս քիչ մը հանգստացավ, եթե քիչ մը ատեն ալ այսպես պատրաստեն ուտենք, շուտով բերանիս քամիին պիտի բանանք. ես կմտածեմ անցագիր մը ձեռք ձգել ու Կովկաս երթալ գործ փնտրելու։

— Կովկա՞ս, չէ՜, ես արդեն գործ մը գտեր եմ, եթե բանիդ կուգա մեկտեղ ընենք։ Աս Հայաստանի կողմերուն համը փախավ ալ, ասկե վերջը ապահով գործ չենք կրնար տեսնել հոս. մեզի հանգստություն չպիտի տան, բարեփոխության ալ հույս մը չկա հիմակուհիմա. ինծի մնա՝ ամենեն լավ ճամբան աս կողմերեն հեռանալն է. երթանք Միջագետքի կողմը, ուր հայեր շատ չկան, հետևաբար հալածանքն ալ քիչ կըլլա։ Ես վաղուց տեղեկություն առած եմ, որ Ճիզրեի շուրջը բուրդի լավ գործ կա. այնտեղերեն վաճառականները ամեն գարնան մեծ քանակությամբ ոչխարի և այծի բուրդ կգնեն և քելեկներով* Տիգրիսի վրայեն Բաղդադ կիջեցնեն, անկե ալ Եվրոպա կղրկեն շոգենավերով։ Մենք ալ երթանք Ճիզրե այս գործը փորձենք. դուն քանի մը հարյուր ոսկի ունիս, այդչափ մըն ալ ես կդնեմ, գործի կսկսինք. ի՞նչ կըսես։

Ի՞նչ ըսեի. այն տեսակ կացության մը մեջ կգտնվեի, որ երկար բարակ մտածելու ընդունակությունը վաղուց էի կորսնցուցեր։ Անմիջապես հավանությունս տվի և քանի մը օրեն սկսանք պատրաստություն տեսնել. կարելի եղածին չափ շուտով մեկնելու և մայիսին անպատճառ Ճիզրե գտնվելու համար։

Հակառակ կայսերական շնորհներուն՝ անցագիր հանելը այնչափ ալ դյուրին չեղավ։ Ամբողջ երեք շաբաթ այս դռնեն այն դուռը վազեցինք, քանի մը զույգ կոշիկ մաշեցուցինք և քանի մը տասնյակ ալ մեճիտիեներ** կերցուցինք աջ ու ձախ։ Առաջնորդարանեն վկայական մը պետք էր, մուխթարեն (թաղապետ) թուղթ մը ապացուցանելու համար, որ պետական տուրքերը ամբողջովին

* Քելեկ— այծի տիկերով շինված տեսակ մը նավ, որով կկատարեն ճամբորդություն ու փոխադրություններ Տիգրիսի վրա։

** Մեճիտիե— թրքական արծաթ փող մոտ 2 ռուբլի արժողությամբ։

վճարած էինք և երաշխավոր մը՝ Ամերիկա չփախչելու համար։ Վերջապես այս բոլոր ձևակերպությունները լրացնելե ետքը՝ անցագիր տրվելու հրամանը ելավ և գնացինք ներկայացանք անցագրի քարտուղարին։

Քյաթիպ (գրագիր) էֆենդին ալ անհրաժեշտ համարեց իր կողմեն քանի մը հարցափորձ ընել և մարդահամարի տոմարը բացավ մեր անունները գտնելու։ Իմ անվանս արձանագրությունը համապատասխան էր ծննդյան թուղթիս. իսկ երբ կարգը եկավ Սարգիսին, էֆենդին տոմարին մեջ կարդաց.

— Սարգիս Զավուշյան, ծնած 1309 ռեճեպ 19-ին.— քանի մը րոպե մատներուն վրա հաշիվներ ըրավ և ապուշ ակնարկ մը ուղղելով ընկերոջս երեսին, հարցուց.

— Ուրեմն դուն վե՞ց տարեկան ես։

— Վե՞ց տարեկան, ինչ կըսեք, էֆենդի,— գոչեց Սարգիս ինքնիրմե ելած։

— Ի՞նչ կպոռաս, հիմար, չհաշվե՞ս, 1309-ին ես ծներ, հիմա 1315 թվականն է, քանի՞ տարի կընե։

Իսկապես տոմարին հաշվովը 30 տարեկան ընկերս 6 տարեկան կդառնար. ակներև էր, որ արձանագրության ժամանակ պաշտոնյան սխալվեր էր։

— Տոմարը սխալ է, էֆենդի, խնդրեմ ուղղեցեք, ես ինչպե՞ս կրնամ 6 տարեկան ըլլալ,— ըսավ Սարգիս վրդոված ձայնով։

— Լեզուդ քաշե՛, շո՛ւն,— պոռաց էֆենդին կատղած՝ խոշոր թանաքամանը աջ բռունցքին մեջ առնելով,— պետական տոմարը սխալ չի կրնար ըլլալ. ինչպես այստեղ գրված է, այնպես ալ անցագրի մեջ կգրեմ ձեռքդ կուտամ. կուզես առ, չես ուզեր մի՛ առներ։

Ընկերոջս տաք բնավորությունը գիտնալով՝ անմիջապես գուշակեցի, որ մեզի համար շատ վտանգավոր ընդհարում մը տեղի պիտի ունենար. ուստի, Սարգսին թևեն քաշելով, միջամտեցի.

— Ի՞նչ ափեղցփեղ դուրս կուտաս, ծո՛, էֆենդին իրավունք ունի. իհարկե, պետական տոմարը չի կրնար սխալ ըլլալ. դուն ես շուտ մեծցեր, լուր չունիս։

Այս խելոք միջամտությանս վրա քյաթիպ էֆենդին քիչ մը հանդարտեցավ. խնդրեցի, որ միմիայն իմ անցագիրս գրե և գործերնիս վերջացնելե հետո դուրս ելանք։

Զայրույթեն Սարգիսին բերանը չէր բացվեր, խեղճը ամբողջ

կյանքին մեջ անցագրի պետք չէր ունեցած, որովհետև դեռ բնավ չէր ճամբորդած և հետևաբար մտքեն իսկ չէր անցներ, թե մարդահամարի տոմարը կրնար այդչափ պզտիկցուցած ըլլար զինքը։ Հիմա՝ վեց տարեկանի անցագիր առնել, ինք իր ոտքը թակարդի մեջ ձգել կնշանակեր. իսկ այդ շատ ակնհայտնի սխալը ուղղել տալը, եթե ոչ անկարելի՝ գեթ երկար ժամանակի կարոտ էր, մինչդեռ մենք մայիս ամսուն անպատճառ Ճիզրե պետք է գտնվեինք, օր առաջ քրդերու հետ ապրանքի մասին պայմանավորվելու համար։ Արդեն ապրիլ 19 էր, 10—12 օրվան ճամբա ունեինք առջևնիս, մեր վաղեմի ծանոթ կարավանապետ քուրդ Ալի աղայի կարավանը հաջորդ օրը պիտի մեկներ. ուստի որոշեցինք, որ ես մեկնիմ, իսկ Սարգիսը մնա առայժմ։

Հաջորդ օրը իրիկվան դեմ արդեն մեր կարավանը քաղաքի դռնեն դուրս կելներ։ Երբ դռան մեջ մտանք՝ քովնտի սենյակներեն խումբ մը մարդիկ անմիջապես մեր վրա թափեցան. յուրաքանչյուրը մեկ ճամբորդի մոտեցավ, ծերունի զապթիյե մը ալ իմ ձիուս սանձեն բռնեց։ Ես արդեն անցագիրս բացած՝ պատրաստ բռնած էի ձեռքս և իսկույն պարզեցի։

— Այդ ի՞նչ է, անցագի՞ր է, խոթե գրպանդ, ատոր տեղը քսակդ հանե,— ձայն տվավ զապթիյեն գլուխը շարժելով։

Դժվար չէր միտքը հասկնալ, հանեցի հինգ ղրուշնոց մը դրի ափը։

— Դե՛ հիմա գնա՛, բարի ճանապարհ,— ըսավ ու ձիուս գլուխը բաց թողուց։

Գ

Ճանապարհի վրա մեր առաջին հանդիպելիք քաղաքը Բաղեշն էր։ Կարինեն մինչև հոդ 8 օր տևեց. ճամբան ամեն քայլի կհանդիպեինք Համիդիե հեծելազորքերու, որոնք ամբողջ օրը ձիու վրա՝ դաշտերն ու ուղիները կշափշփեին, «վնասակար տարրերը» ջնջելու, հայ գյուղացիները ցորենի, գույքի, անասուններու ծանրաբեռնութենեն ազատելու և երկիրը միշտ այդպես խաղաղ պահպանելու պաշտոնով։ Կարավանին մեջ միակ հայն էի ես, սակայն կարավանապետ Ալի աղան հորս վաղեմի բարեկամն էր, տարիներով մեր ապրանքները փոխադրած էր, այդ պատճառով չէր կրնար տանիլ, եթե մեկը մինչև իսկ ծուռ նայվածք մը նետեր

վրաս։ Քառասուն տարիե ի վեր այդ ճամբաներու վրա կբաներ, մոտիկ հարաբերություններ ուներ քուրդ ցեղապետներու հետ, այդ պատճառով ալ հասարակ քրդերը կքաշվեին իրմե։ Ահա այս մարդուն պաշտպանությանը շնորհիվ առանց գլուխս ճամբան թողնելու հասա Բաղեշ։

Մեր կարավանին գլուխը արդեն քաղաք մտած էր, իմ ամբողջ իրեղեններս ու անկողինս ձիուս վրա բարձված էին և ես ալ ատոնց վրա թառած՝ բավական բարձր դիրք մը ունեի, ուրկե, օրորվելով կդիտեի գեղեցիկ ձորի մը երկու շրթներուն վրա սփռված Բաղեշը։ Սակայն այդ բանաստեղծական դրությունս երկար չտևեց։ Առաջնիս ձգված կամուրջի մը գլուխը աղմուկ մը բարձրացավ հանկարծ։ Ոստիկաններու և ծխախոտի ու հանրային պարտքի դեսերու խումբ մը հարձակում էր գործեր կարավանին վրա. մեկը անցագիր կհարցներ ճամբորդներեն, մյուսը ջորեպաններուն վրան-գլուխը կխուզարկեր, որ չլինի թե առանց թղթադրոշմի նամակներ փոխադրեն, իսկ ուրիշներ ճամբորդներուն իրեղենները դուրս կթափեին արգիլված ծխախոտ և մաքսե փախցված ուրիշ ապրանքներ փնտրելու։ Ես հանգիստ որտով մոտեցա. ինչու պիտի վախնայի, փառք աստուծո, կանոնավոր անցագիր ունեի և քովս ալ արգիլված բան մը չկար, երբ ոստիկաններու գլխավորը հանկարծ ձիս նշմարեց. քանի մը բոպե աչքերը դեմքիս սևեռեց և բերանը խոշոր մը բանալով վրաս վազեց պոռալով.

— Ամա՛ն, թութո՛ւն, թամ պու խընդիր տիր (ամա՛ն, բռնեցե՛ք, հենց այս խողն է)։

Այս տարօրինակ աղաղակի իմաստին վրա մտածելու ժամանակ իսկ չունեցա, մեկ ակնթարթի մեջ բոլոր ոստիկանները վրաս թափեցան ու ձիս ձիեն վար առնելով ճամբուն եզերքը քաշեցին։

— Ո՞ւրկե կուգաս,— հարցուց գլխավոր ոստիկանը, դժվարին որս մը բռնած շան մը պես հևալով։

— Էրզրումեն, էֆենդի, ահավասիկ անցագիրս։

Անցագրիս վրա հարևանցի ակնարկ մը ձգեց ու գրպանը դրավ ծիծաղելով.

— Այդ բոլորը լավ ես սարքեր, աղվես կյավուր, ընկիր առջևս, հիմա անմիջապես ոստիկանատուն պետք է երթաս։

— Բայց ինչո՞ւ, էֆենդի, պատճառը հասկնանք։

— Քալե՛, չո՛ւն,— որոտաց փոլիս էֆենդին աքացի մը տա-

լով ետևես,— հիմա ժամերով քեզի բացատրություն տալու պարտականություն չունիմ, ոստիկանատուն երթանք, կիմանաս։

Ալ հասկցա, որ բերան բանալու չէր գար, ուստի գլուխս կախած սկսա քալել, մինչդեռ անդին ոստիկան մը ու քանի մը դետեր սկսեր էին իրեղեններս տակն ու վրա ընել։ Քաղաքին մեջեն իմ անցքս բավական հանդիսավոր էր, չորս ոստիկաններով շրջապատված կհառաջանայի, իսկ գլխավոր ոստիկանը առջևես իր հոյակապ փորը կտաներ, աջ ու ձախ գոռոզ ակնարկներ նետելով։ Իսկ երբ ոստիկանատուն հասանք՝ ըրած տպավորությունս աննկարագրելի էր։ Փսփսուքներ փոխանակվեցան ինծի ընկերացող ոստիկաններուն ու հոն գտնվողներուն միջև և գիս անմիջապես ոստիկանության քոմիսերին առջևը հանեցին։

Քոմիսերը երկայնահասակ, ալեխառն մազերով մարդ մըն էր, այն դեմքերեն, որոնց վրա բնությունը առաջի օրեն ապշության կնիքը կդրոշմե։ Գիս ձերբակալող հաստափոր ոստիկանը առջևես մտավ, իր գլխավորը բարևելե ետքը՝ մոտեցավ և բան մը ըսավ ականջին։ Ժպիտ մը փայլեցավ քոմիսերի նիհար, զառամած դեմքին վրա, նարկիլեի ծխափողը բերնեն հանեց և իր օգնականին դառնալով՝

— Շո՛ւտ, շո՛ւտ, սա անցյալ օր Ախլաթեն եկած թուղթը բերեք։

Քոմիսեր էֆենդին թուղթը ձեռքը բռնած՝ մեյ մը վրան կնայեր, մեյ մը երեսիս։ Դեմքին ժպիտը ավելի բացվեցավ և վտիտ այտերուն վրա հրճվանքի ջղաձգություններ սկսան նշմարվիլ։ Ինծի համար տանջող հանելուկ մը եղող այդ բաղդատությունը ավարտելե ետքը հանկարծ օգնականին դարձավ։

— Կարդամ, անգամ մըն ալ դուք համեմատեցեք։

«Միջահասակ, ոչ շատ գեր և ոչ ալ շատ նիհար, թուխ մազերով, ճակատը բավական լայն ու դուրս ցցված, ճակատին տակը երկու աչքեր, աչքերուն վրա զույգ մը հոնքեր, քիթ մը, բթին տակը բերան մը և գլխին երկու քովերն ալ երկու ականջներ»։

Օգնականը լարված կլսեր, ճպռոտ աչքերովը անդադար դեմքս խուզարկելով. երբ ընթերցումը ավարտեցավ, աջ ձեռքը կուրծքին դրավ ու պատասխանեց.

— Հավատքս վկա, նմանությունը կատարյալ է։

Իսկ ես այլևս չկրնալով տանել անշարժ արձանի դիրքը՝ բերանս բացի։

— Խնդրեմ, էֆենդի՛, այս ի՞նչ հանելուկ է, որո՞ւ կնմանեցնեք զիս։

— Լո՛ւռ, լի՛ռբ, ձայնդ կտրե՛, քեզի բան չհարցուցինք,— պոռաց քոմիսերը նստած տեղեն թիզ մը վեր թռչելով. հետո քանի մը անգամ նարկիլեն կլկլացուց, աչքերը ավելի խոժոռեց և ցուցամատը շարժելով՝ հրամայեց.

— Հիմա ամեն մեկ հարցումիս կետ առ կետ և ամենայն ճշտությամբ պատասխան պիտի տաս. կիմանա՞ս։

— Այո, էֆենդի, պատրաստ եմ,— պատասխանեցի թեմենահ* մը ընելով։

— Ո՞ւրկե կուգաս։

— Էրզրումեն։

— Ո՞ւր կերթաս։

— Ճիզրե։

— Ի՞նչ ընելու։

— Բուրդ գնելու։

— Էրզրում բուրդ չկա՞ր։

— Կար, բայց ոչ նույն քանակությամբ և նույն գներով։

— Ինչո՞ւ Տիարպեքիրի վրայով չգնացիր։

— Ինծի ըսին, թե այս ճամբան ավելի մոտ է և ավելի հարմար։

— Ո՞վ ըսավ։

— Բարեկամներ։

— Ի՞նչ են այդ բարեկամներուդ անունները։

— Հիմա անունով, մականունով չեմ կրնար հիշել, թե որոնք էին ինծի այդ խորհուրդը տվողները, էրզրումի մեջ ունեցած հայ և թուրք ծանոթներս էին։

— Բնիկ էրզրումցի՞ ես։

— Այո, էֆենդիմ։

— Ասկե առաջ ճամբորդա՞ծ ես երբեք։

— Էրզրումի նահանգին մեջ ճամբորդած եմ, բայց նահանգեն դուրս չեմ ելեր։

— Ո՞րտեղեր եղած ես և ո՞ր թվականին։

— Հինգ տարի առաջ անգամ մը Երզնկա գնացած եմ առևտրական գործով, անգամ մըն ալ Ալաշկերտ։

---

* Թեմեննահ— թրքական բառ։

— Ալաշկերտ ինչո՞ւ գնացիր։

— Կտավեղեն տարի ծախելու։

— Ճիշտը խոսե՛։

— Զուտ ճշմարտությունը կըսեմ։

— Է՛, լավ, ո՞ւրկե կուգաս հիմա։

— Էրզրումեն, էֆենդիմ։

— Ատ անգամ մը ըսիր հասկցանք, միևնույն բանը միշտ չեն կրկներ։

— Բայց ի՞նչ ընեմ, էֆենդի, երբ դուք միևնույն հարցումը կընեք։

— Միևնույն հարցումը կընեմ, որ նոր բան ըսես. Ախլաթի կողմերը չե՞ս եղած բնավ։

— Ամենևին։

— Իսկ խոովարարապետ Սերոբը չե՞ս ճանչնար։

— Անունը նոր կլսեմ։

— Հիմա ո՞ւր երթալու միտք ունիս։

— Տիգրիսի եզերքը գտնվող Ճիզրե քաղաքը պիտի երթամ բուրդ գնելու։

— Նորեն նույն խոսքերը կը կրկնես, անպիտա՛ն,— պոռաց հանկարծ քոմիսերը ոտքը գետին զարնելով,— Տալվորիկի կողմերը երթալու դիտավորություն չունի՞ս։

— Կաղաչեմ, էֆենդի՛, Տալվորիկ ես ի՞նչ գործ ունիմ. ինչպես ըսի և ինչպես անցագրիս մեջ ալ գրված է՝ ուղղակի Էրզրումեն կուգամ ու Ճիզրե կերթամ բուրդ գնելու։

— Սո՛ւտ է, սո՛ւտ, բոլորը սուտ է, շա՛ն որդի, ինչպես կերևի՝ դուն առանց ծեծ ուտելու ճշմարտությունը չպիտի խոսիս,— գոչեց քոմիսերը ոտքի ելնելով,— մենք քու մասիդ վաղուց տեղեկություն ստացած ենք, ինչպես քիչ առաջ տեսար՝ մինչև անգամ դիմագծությունդ ալ ունեինք։ Դուն Սերոբի մարդերեն ես, այս ձմեռ Ախլաթի գյուղերը թափառեր ես և հիմա ալ Տալվորիկ կուզես երթալ. միայն Ալաշկերտ երթալդ չէինք գիտեր, ան ալ իմացանք քիչ առաջ։ Ձեռքես չես կրնար ազատիլ, ես քեզ շաբաթ մըն է փնտրել կուտամ. եթե խելք ունիս ըրածներուդ ու գիտցածներուդ ամբողջը անուշությամբ խոստովանե, ես ալ կաշխատիմ կերպով մը ազատել քեզ. ապա թե ոչ գործդ մինչև կախաղան կհասնի։

— Բայց կաղաչեմ, էֆենդի, դուք զիս ուրիշ մեկու մը տեղ կդնեք. մինչդեռ ես կանոնավոր անցագիր ունիմ. Էրզրումի մեջ

ծանոթ մարդ եմ, կրնաք իմ ծախքովս հեռագիր մը տալ անմիջապես և ստուգել...

— Սո՛ւս, սո՛ւս, երկար խոսք չեմ ուզեր ես,— ընդմիջեց քոմիսերը բարկությամբ,— հիմա գնա՛ ներս, այս ըսածներուս վրա խորհե, քեզի երկու օր միջոց կուտամ։

Եվ դառնալով ոստիկանին՝ հրամայեց.

— Առե՛ք ներս։

Անմիջապես դիս բռնելով վար իջեցուցին. վրաս գլուխս խուզարկեցին և փոքրիկ սենյակ մը հրելով դուռը վրայես փակեցին։

Դ

Սենյակը բավական մութ էր և փայտե կոպիտ նստարան մը միայն կար մեջը. բայց ես ճամբու հոգնություններեն և կրած հանկարծակի հուզումես այնպես ուժասպառ եղած էի, որ այդ նստարանին վրա փռվելուս պես աչքերս փակվեցան։ Շատ խռով քուն մը անցուցի։ Էրզրումը, ճամբու տպավորություններս, քիչ առաջվան հարցաքննությունս, Ճիզրեի բուրդի հակերն ու քոմիսերի սպառնացած կախաղանի պատկերը իրար խառնվելով սարսափելի մղձավանջի մը տակ կճնշեին զիս։ Կեսքուն, կեսարթուն վիճակի մեջ դեռ երկար պիտի մնայի, եթե մեկը հանկարծ չսթափեցներ զիս։ Աչքերս բացի, ծերունի դպրթիյե մը, որու աչքերեն ջուրն ու ճպուռը այնպես կհոսեին, ինչպես խեժը Արաբիայի արմավենիներեն՝ կանգնած էր սնարիս քով, ձեթի ճրագ մը ձեռքը։

— Ե՛լ, հե՛, ե՛լ, ճրագ եմ բերեր,— կը կրկներ մարդը զիս ցնցելով։

Շտկվեցա նստա, արդեն մթներ էր. սաստիկ անոթություն կզգայի և միևնույն ժամանակ ծխելու մեծ ախորժակ։ Հանեցի մեճիտիե մը տվի ծերուկին, խնդրելով, որ քիչ մը հաց, պանիր, քիչ մըն ալ ծխախոտ բերե ինծի։ Ճրագին աղոտ լույսովը երբ արծաթին փայլը տեսավ, ծերուկին աղբերահոս աչքերը նշուլեցին. «գլխուս վրա» ըսավ ու դուրս գնաց։ Քիչ ետքը վերադարձավ ապսպրածներս բերելով, բայց դրամին ավելցածը ավելորդ է ըսել, թե գրպանը մոռցավ։

— Իմ անունս Օսման չավուշ է, այստեղի պահապանն եմ ես,— ներկայացուց ոստիկանը ինքզինք,— երբ բանի մը պետք ունենաս, ըսե, անմիջապես կգտնարեմ։

— Լավ ուրեմն, Օսման չավուշ, շնորհակալ եմ քու բարությանդ համար. ես այսօր կարավանով Էրզրումեն եկա, զիս քաղաքի մուտքին առջև բռնեցին հոս բերին. իսկ իրեղեններս չեմ գիտեր ինչ եղան, չե՞ս կրնար գտնել բերել քովս։

— Տեսնեմ,— պատասխանեց Օսման չավուշ գլխովը տարակուսական նշան մը ընելով ու գնաց։

Կես ժամու չափ հետո կրկին ներս մտավ և մոտենալով՝ կամացուկ մը, կարծես կվախնար, որ լսեն.

— Իրեղեններդ փոլիսներու սենյակն են. մյուս բաները անկարելի է առնել, բայց անկողինդ թերևս կարողանամ բերել, եթե շներուն առջև քիչ մը ոսկոր նետեմ։

Ինծի ալ ամենեն ավելի անկողինը պետք էր, ուստի առանց երկար-բարակը փնտրելու հարցուցի.

— Որչա՞փ պետք է, Օսման չավուշ։

— Կարծեմ չորս ճերմակով կլինի։— Պատասխանեց բարեսիրտ չավուշը նույն զգույշ ձայնով։

Չորս ճերմակը տվի, անկողինս եկավ. փայտե նստարանին վրա փռեցի, տեղավորվեցա, որովհետև կտեսնեի, որ անչափ ալ շուտ չպիտի կրնայի ազատիլ այդ հյուրընկալ օճախեն։

Այսպես երկու օր անցուցի, քոմիսեր էֆենդիին շնորհած պայմանաժամը լրացած էր, ուստի զիս կրկին իր տեսությանը արժանի ըրավ։ Առաջին հարցաքննությունը կետ առ կետ կրկնվեցավ երկրորդ տպագրությամբ, միակ փոփոխությունն ու հավելումը ապտակի և գավազանի հարվածներուն մեջ կկայանային։ Հակառակ այդ բոլոր ճիգերուն, ճարպիկ ոստիկանապետը չկրցավ սակայն «նոր բան» մը ըսել տալ ինծի և զիս կրկին իմ ճգնարանս ճամբեց, այս անգամ առանց պայմանաժամի։

Եվ իրոք, անկե վերջը կարծես իմ գոյությունս ալ մոռցվեցավ, ցերեկները կմթնեին, գիշերները կլուսնային, բայց ես իմ սովորական Օսման չավուշես զատ մարդու երես չէի տեսներ։ Այս կացությունը ամբողջ չորս շաբաթ շարունակվեցավ. քանի մը անգամներ քոմիսերին նամակ գրած էի, կուսակալին ալ երկու աղերսագիր, սակայն ձայն-ձուն չելավ։ Բուրդի ժամանակը կանցներ, բայց ո՞վ էր ալ Ճիզրեի բուրդին մասին մտածողը, երբ հիմա իմ բուրդիս հետ կաշիս ալ աճուրդի կհանեին։ Կատաղության, թախծության, հուսահատության ժամեր իրարու կհաջորդեին. երանի կուտայի Սարգսին, որ չկրցավ հետս գալ և կանիծեի սև բախտս, որ մարդահամարի պաշտոնյան իմ ծննդյան թվականս ալ սխալ չէր արձանագրած. վեց տարեկան չէ, թող վեց ամսական դարձնեին զիս, միայն թե այս վիճակին չհասնեի։

Վերջապես օրին մեկն ալ խցիկիս դուռը բացվեցավ և Օսման չավուշի տեղ նոր դեմք մը երևցավ։ Ներս մտնողը երկարահասակ մարդ մըն էր, եվրոպականի և թրքականի խառնուրդ տարազով, մեջքը կուզ, երկար ալեխառն մորուքը կուրծքը կավլեր և մեկ աչքն ալ կույր էր։ Ժպիտը շրթունքներուն՝ մոտեցավ ինծի։

— Բարև՜, դուն մեր Էրզրումցի Սահակ աղային տղա՞ն ես եղեր։

— Այո՛,— պատասխանեցի այս ծանոթության վրա զարմացած և քիչ մըն ալ ուրախացած։

— Ես այսօր իմացա. է՜, ինչպե՞ս է նայինք հայրդ։

— Հայրս վաղուց մեռած է։

— Չէ՜, ճանըմ. վա՜խ, վա՜խ, խեղճ Սահակ աղա, ի՜նչ լավ բարեկամներ էինք. Էրզրում եղած ժամանակս ամեն օր խանութը կերթայի սուրճ խմելու, դուն այն ժամանակ դեռ երեխա էիր, երբեմն խանութ կբերեին, գիրկս կառնեի, կսիրեի քեզ, բայց չես կրնար հիշել, շատ փոքր էիր.

— Խնդրեմ, կրնա՞մ ձեր անունը հարցնել։

— Ինծի Պայրամ աղա կըսեն. կուսակալին տան ծախսարարն եմ,— պատասխանեց հոս անծանոթ բարեկամը կոր քամակը շտկել փորձելով։

— Ուրեմն, Պայրա՜մ աղա, քանի որ հանգուցյալ հոս այդչափ մոտ բարեկամն եք, կաղաչեմ ճար մը ըրեք վիճակիս։ Էրզրումեն ելա, Ճիզրե կերթայի բուրդ գնելու, այստեղ քաղաքին եզերքը ձերբակալեցին զիս և հոս բերին։ Չեմ գիտեր, որո՞ւ կնմանեցնեն ու ծանր ամբաստանություններ կընեն վրաս, մինչդեռ ես անմեղ երիտասարդ մըն եմ, կանոնավոր անցագիր ալ ունիմ։

— Ես ալ արդեն ճիշտ ատոր համար եկած եմ,— պատասխանեց Պայրամ աղան մտերմորեն քովս նստելով,— կտոր մը աղ ու հացը տասը տարվան իրավունք ունի ըսեր են, ես ալ քու հորդ հետ այնչափ տարի աղ ու հաց կերած եմ, չեմ կրնար մոռնալ. երբ հոս լինելդ իմացա, անմիջապես վազեցի եկա, որ ճար մը ընեմ քեզ ազատելու։ Ես ձեռքես եկածը չեմ խնայեր, բայց պետք է, որ դուն ալ իմ խորհուրդներս լսես։

— Ինչ որ պետք է ընել, խնդրեմ ըսեք, անմիջապես կատարելու պատրաստ եմ։

— Շատ բան պետք չէ. բայց գիտես, որ հիմա առանց ստակի գործ չի դառնար, ամեն բանի ճոթը ասոր կապված է,— ըսավ Պայրամ աղան բութամատն ու ցուցամատը իրար շփելով։

— Անշուշտ, բայց որչա՞փով կվերջանա գործս։

— Շա՛տ չէ, հարյուր կարմիրդ կերթա։

— Հարյո՛ւր կարմիր, ի՞նչ կըսեք, Պայրա՛մ աղա,— բացականչեցի ինքնիրմես ելած,— ատ անկարելի է, չեմ կրնար տալ, կարողութենես վեր է։

Եվ չկրնալով վայրկենական զայրույթս զսպել, շարունակեցի։

— Ի՞նչ, անմեղ տեղը ամբողջ ամիս մը բանտարկվիմ, ծեծ ուտեմ, տանջվիմ, գործես մնամ և դեռ հարյուր ոսկի ալ տուգանք տամ. չէ՛, անկարելի է, չեմ կրնար, փարա մը չեմ տար. անմիջապես հեռագիր կուտամ Պոլիս ուղղակի վեհ. սուլթանին, վիճակս կպարզեմ, արդարություն կխնդրեմ։ Դեռ անցյալները իրադե ելավ, որ հայերը ազատ ըլլան ուղած տեղերնին ճամբորդելու...

— Հանդա՛րտ, հանդարտ, տղա՛ս, հանդարտ խոսե,— ըսավ Պայրամ աղան հայրական շեշտով մը՝ թևս բռնելով,— բարկությունը լավ բան չէ, այդ խոսքերը չըլլա, թե ուրիշի առջև ալ ըսես, հետո գործդ ավելի կծանրանա։ Սուլթանին դիմելդ ալ օգուտ մը չունի. անոր հոգը հատեր էր, քու հեռագի՞րդ պիտի կարդար. ես քեզի ինչ որ կըսեմ՝ մտիկ ըրե՝ քու օգտիդ համար է. ստակներդ ես չպիտի առնեմ գրպանս դնեմ. պետք եղած տեղերը պիտի տամ, որ ազատես։

— Քա՛վ լիցի, Պայրա՛մ աղա, այդ տեսակ կասկածներ չունիմ ես, բայց այդչափ մեծ գումար չեմ կրնար տալ, ունեցած չունեցածս 200 ոսկի է, անոր 100-ը տամ, ինծի ի՞նչ կմնա։

— Է՛հ, ըսածներուս վրա խորհե, ես պետք է երթամ, գործ ունիմ. երբ ժամանակ գտնեմ, կրկին կուգամ,— վերջացուց Պայրամ աղան ու բարևելով դուրս ելավ։

Գլուխս ձեռքերուս մեջ առած՝ բավական երկար մտածեցի։ Պայրամ աղայի հորս հետ ունեցած բարեկամության շատ հավատալս չէր գար, պարզապես կտեսնեի, որ մարդը լոկ միջնորդ մըն էր քոմիսերին՝ թերևս ալ կուսակալին կողմե։ Բայց ինծի ի՞նչ անոր անձնավորությունը կամ հորս հետ ունեցած հարաբերությունը, երբ խնդիրը դրամին գլուխն էր և միմիայն դրամով պիտի կրնայի

փրկվիլ։ Վերջապես այն եզրակացության հանգեցա, որ պետք էր տալ ու օձիքս ազատել. շա՜տ-շա՜տ վերջին փորձ մը միայն կարելի էր ընել փրկանքին քանակը զեղչելու։ Այդ միջոցին Օսման չավուշս ներս մտնելով, ան ալ միևնույն խորհուրդը կուտար։

— Պայրամ աղային մտիկ ըրե, անոր ձեռքը շատ բան կա, քեզի պես շատերը ազատեր է, շատերը կախաղանի տակեն առեր է և հավատքս վկա, գեշ մարդ ալ չէ։

Հաջորդ առավոտ Պայրամ աղան կրկին եկավ. դարձյալ նույն հայրական խրատները, իմ կողմես դարձյալ քիչ մը ընդդիմություն և վերջ ի վերջո 80 ոսկիի կապեցինք, դրամն ալ կանխիկ վճարեցի։ Հորս բարեկամը խոստացավ գործս նույն օրը անպատճառ վերջացնել։

Ամբողջ օրը սենյակիս մեջ անդադար կճեմեի, ամենափոքր ոտնաձայն մը լսելուս իսկույն դռան մոտենալով։ Սակայն իզուր, օրը երեկոյացավ և Օսման չավուշս զատ եկող գացող չեղավ։ Գիշերը հազար ու մեկ տանջանքներով լուսցուցի, վերջապես հաջորդ առավոտ Պայրամ աղան իր դեմքը ցցուց։

— Է՜, կշնորհավորեմ, տղաս, գործդ վերջանալու վրա է, մեկ ժամեն կուգամ, քեզ կհանեմ,— ըսավ դռնեն ու կրկին աներևութացավ։

Այդ մեկ ժամը, ա՜հ, ջորեպանի ժամե մը ավելի երկար տևեց, մինչև որ Պայրամ աղան կրկին եկավ ու զիս սենյակեն դուրս հանեց։

— Է՜հ, տղա՛ս, գիտես ինչ քաշեցի մինչև արձակմանդ հրամանը ձեռք բերի. գործդ այնչափ ծանր էր, որ եթե Պայրամ աղային խաթրը չլիներ, հազար ոսկիով ալ չէիր կրնար տակեն ելնել. ինչ որ է, փառք աստուծո, ազատեցար. հիմա նախ քոմիսեր էֆենդիին քով պիտի երթանք, շատ հեզությամբ խոսե հետը և չի մոռնաս շնորհակալություն հայտնել։

Մեր քոմիսեր էֆենդին այս անգամ բոլորովին փոխված էր, մինչև անգամ աթոռ առաջարկեց ինծի և Պայրամ աղայեն ոչ նվազ հայրական շեշտով հայտնեց, որ Էրզրումեն տեղեկություններ ստացված էին իմ մասիս, մանավանդ հորս բարեկամ Պայրամ աղան ալ բարեխոսած էր, ուստի կրնայի ճամբաս շարունակել։ Հետո քանի մը խոսքով սուլթանին անհուն գթությունը, կուսակալին արդարասիրությունը բացատրեց, չմոռնալով իր սրտի ու մտքի քանի մը առաքինություններն ալ հիշել և անցագիրս

տված, պատվիրելով, որ քովի սենյակը տանիմ, Բաղեշեն անցնելս ետևը արձանագրել տալու համար։

Քոմիսեր էֆենդիս անհուն երախտագիտություններ ու սրտագին շնորհակալություններ հայտնելե հետո Պայրամ աղային հետ քովի սենյակը մտանք վիզեի արարողությունը կատարել տալու համար։ Սենյակին մեջ միայն երկու աղտոտ գրասեղաններ կային, որոնց առջև երկու գրագիրներ նստած եղեգե գրիչները կտաշեին իրարու հետ խոսակցելով։ Ցերեկվան ծույլ պաշտոնի և ցոփության գիշերներու մեջ այլանդակված դեմքերով, Ասիան Եվրոպայի հետ զորով հաշտեցնել ուզող տարազով՝ թուրք քյաթիպի երկու հարազատ տիպեր, որոնք չեն նկարագրվիր, այլ միայն լույս աչքերով պետք է տեսնել։ Մեկը մանավանդ շատ ակնախտիղ տեսարան մը կպարզեր իր հագուստներուն հարուստ երփներանգությամբը. պարսկական կարմիր շալե ժակետ մը, կապույտ թավիշե բաճկոն մը դեղին կոճակներով, բաց-կանաչ փողկապ մը և ճերմակ տաբատ մը։ Ջուխտակ գրագիրները հազիվ գրիչները տաշեր վերջացուցեր եղունգներուն վրա կփորձեին, երբ միջանցքեն մահմեդական աղոթքի բարձր աղաղակ մը սկսավ։ Պաշտոնատան մոլլան էր, որ միջանցքին մեջ կեսօրվան էզանը կուտար. զանազան սենյակներե, պաշտոնյաները սկսան դուրս թափիլ, մեյմեկ ջրաման ձեռքերնին, լվացքի և աղոթքի միակ անգանցառելի պարտականությունը կատարելու։ Պայրամ աղան և մեր երկու գրագիրներն ալ անշուշտ ետ չպիտի մնային այդ սրբազան պարտականութենեն։ Ուստի ես դռան առջև կես ժամեն ավելի սպասեցի, մինչև այդ ալ վերջացավ։

Քյաթիպները տեղերնին նստան ու իրենց ընդհատված խոսակցությունը սկսան շարունակել, առանց վրաս իսկ նայելու։

— Վերջապես լավ քեֆ ըրինք,— սկսավ գույնզգույն էֆենդին, ետևը պատուհանին մեջ դրված ջրի փարչ մը գլխուն քաշելե ետքը,— ամբողջ գիշերը չքնացանք, հիմա ապուշի պես եմ։

— Ո՞ւր էիք որ,— մեջ մտավ մեր Պայրամ աղան։

— Էֆենդիմ, Իզզեթ պեյի տունը հրավիրված էինք, Ֆերիտե հանըմը բերեր էր, ամբողջ գիշերը խաղցուցինք, օղին ալ առատ էր. է՛հ. ա՛լ մի հարցներ, հարսնիք էր, հարսնիք,— պատասխանեց էֆենդին ուրախութենեն աղտոտ ատամները ցույց տալով։

— Ֆերիտեն գեշ կնիկ չէ, հապա դուք անոր մայրը տեսնեիք, շան քածը հուրի էր, հուրի. քանի՞-քանի՞ անգամ խաղցուցեր եմ. հե՛յ, ջահիլ ժամանակներ, հե՛յ,— հառաչեց Պայրամ աղան և հուզմունքեն բաց աչքն ալ գոցվեցավ։

— Հապա կերակուրները, Պայրամ աղա,— ավելցուց գրագիրը,— մարդը 10 տեսակ կերակուր էր պատրաստել տվեր, բայց ի՞նչ-ի՞նչ կերակուրներ, մանավանդ փլա՛վ մը բերին բերնիդ արժանի...

Եվ տեսնելով, որ քյաթիպ էֆենդիին գիշերվան տպավորություններուն նկարագրությունը դեռ շատ պիտի երկարեր, կամաց մը մոտեցա և խնդրեցի, որ գործս վերջացնե։

— Ալլա՛հ, ալլա՛հ, համբերե՛, քիչ մը շունչ առնենք, խո չպայթեցար,— պոռաց էֆենդին երեսիս։

Բարեբախտաբար Պայրամ աղան միջամտեց.

— Վնաս չունի, գրե՛, տուր, էֆենդին իմ բարեկամիս տղան է. և ինծի մոտենալով ականջիս փսփսաց,— «ճերմակ մը դիր ձեռքը»։

Էֆենդին ճերմակը տեսնելուն պես ամեն բան մոռցավ և գրիչը ձեռք առնելով գործս վերջացուց։

Բեռնակիր մը գտնելով անկողինս ու իրեղեններս ալ վերցնել տվի և սրտահույզ բոպեն հասավ հրաժեշտ առնելու իմ երկու աչքի լույսերես՝ Օսման չավուշեն ու Պայրամ աղայեն։ Օսման չավուշը չորս մեճիտով գոհացուցի, իսկ Պայրամ աղային ափը հինգ ոսկի դնել հարկ եղավ։ «Բարի ճանապարհ, չմոռնաս Պայրամ աղայի լավությունը»,— պատվիրեց ետևես հորս բարեկամը։

— Մի՞թե կարելի է մոռնալ...

Ե

Ոստիկանության հյուրանոցեն քաղաքի հյուրանոց մը փոխադրվելով, Ճիզրե գնացող կարավան մը փնտրելու ետևե էի, երբ հանկարծ սաստիկ տենդ մը բռնեց զիս։ Գլուխս նույն օրը բարձի վրա դրի և երկու շաբաթեն հազիվ կրցա բարձրացնել։ Այդ վիճակին մեջ բժիշկը թույլ չէր տար ճամբա երթալ, ուստի շաբաթ մըն ալ սպասել հարկ եղավ։ Ուղղակի Ճիզրե գնացող կարավան չէր գտնվեր, այդ պատճառով ստիպվեցա Սղերդի կարավանեն միանալ։

Հազիվ էի Սղերդ հասած և խան մը իջևանած էի, երբ ոստիկան մը գալով անցագիրս առավ և ինձ ալ պատվիրեց, որ շուտով ոստիկանատուն ներկայանամ։ Հոգնած ու զբաղված լինելով նույն

օրը չկրցա այդ պատվերը կատարել, բայց մինչև երեկո ոստիկանին մեկը գնաց, մյուսը եկավ, հայտնելու, որ քոմիսեր էֆենդին գիս կուզեր։

Հաջորդ առավոտ ելա գնացի։ Շատ կսխալեի կարծելով, թե ամեն ապաշխարանք վերջացուցած էի։ Այստեղի քոմիսեր էֆենդին ալ իր նուրբ օրենսգիտությամբ, բոլորովին նոր բան մը մեջտեղ հանեց—Ամերիկա չփախչելու համար մարդու երաշխավորություն չի ընդունվիր, այլ օրենքով պետք է անպատճառ հիսուն ոսկի հնչուն դրամ դրվի կառավարության սնտուկը։

— Լավ, բայց, էֆենդի՛, ինծի այս անցագիրը տվողները այդ օրենքը չգիտե՞ին։

— Ես ուրիշներու ըրածը չեմ գիտեր, ես օրենքը միայն գիտեմ,— վճռական կերպով պատասխանեց ոստիկանապետը, որ Պոհթանցի քուրդ մըն էր,— անցագիրդ կմնա հոս, մինչև որ 50 ոսկին բերես։

— Խնդրեմ անցագիրս տուր, էֆենդի՛, երթամ գործիս, կուշանամ. եթե օրինական սխալ մը պատահած է, և եթե պատասխանատուն ես եմ՝ հետո էրզրում վերադառնալուս կտուժեմ։

— Կյավուրին նայե՛, կյավուրին. մարդ պիտի խաբե խելքովը. էրզրում-մերզրում ես չեմ ճանչնար, եթե վաղը ելնես ասկե Ամերիկա փախչիս, պատասխանատուն ես եմ, ոչ թե դուն կամ էրզրումը։

Ալ ի՞նչ ըսեի այդ գլխով մարդուն, որ Ամերիկա փախչիլս այնպես հեշտ կերևակայեր, կարծես Սղերդը մեծ նավահանգիստ մը լիներ և օրը քանի մը շոգենավ ճամբա հաներ դեպի Նև-Յորկ։ Անցագիրս թողուցի ու դուրս ելա, սաստիկ բարկացած և ուխտ ընելով, որ այլևս փարա մըն ալ չտամ։ Նույն օրը հեռագիր տվի Բաղեշ՝ կուսակալին ու քոմիսերին և խնդիրը պարզելով տնօրինություն խնդրեցի։ Սակայն անցավ 10 օր և ոչ մեկ պատասխան չեկավ։

Քուրդ քոմիսերն ալ իր Պայրամ աղան ուներ, որ ամեն օր քովս կուգար, այն զանազանությամբ միայն, որ աս առանց հոս հետ ծանոթ ելնելու կբանակցեր հետս և առհասարակ ավելի անկեղծ կխոսեր։ Ոստիկանապետը իմացեր էր Բաղեշ իմ գլխես անցած դարձածները, 80 ոսկիին պատմությունը և բարկացեր էր, թե ինչ է, Պիթլիսի քոմիսերը ատամներ տանի, ես չունի՞մ, ինծի ինչո՞ւ բան մը չի տար։

Խնդրի ներքին երեսը այսպես պարզվելե հետո, տեսնելով, որ Բաղեշեն կամ ուրիշ տեղե մը օգնության հույս չկա, ստիպվեցա ուխտս դրժել և 10 ոսկիի կրկին գնել անցագիրս Սղերդի քոմիսերեն։

Ընդամենը 17 օրի չափ ալ Սղերդ օդափոխություն ընելե ետքը, կարավան մը գտնվելով մեկնեցա և հուլիս 18-ին վերջապես հասա Ճիզրե։

Անցյալեն փորձված՝ հասնելուս օրը անմիջապես ոստիկանատուն ներկայացա, անցագիրս ցույց տվի, խանի սենյակս վերադառնալով երկար նամակ գրեցի Սարգիսին և իրրև բուրդի վաճառականությենես գոյացած առաջին վաստակ՝ 120 ոսկիին հաշիվը ներփակեցի։

Քիչ մը հանգստանալե հետո գնացի բուրդի միջնորդներեն քաղդեացի Աբդիշոյին՝ հայտնելու, թե եկեր եմ ապրանք գնելու։

— Դա՞լ տարվան համար,— պատասխանեց մարդը քահ-քահ խնդալով,— շա՛տ կանուխ ես եկեր։

ԿԱԵԱՂԱՆԵՆ... ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Գաղթականի առաջին կազանդն ու ծեուռդն էր, որ կանցնեինք։ Տարին բացող այս հանդիսավոր օրերուն՝ ամեռը գրեթե ամեն տարի իր էն կատաղի պահեստի մրրիկներն ու քամիները իրենց շղթաներեն կարձակե, կարծես վախնալով, որ սիրո մեծ ավանդությունը մոռցնել կուտա մարդոց՝ խրճիթին ու պալատին տարբերությունը։ Եվ դեռ միամիտ բանաստեղծները՝ անշուշտ իր ճերմակ գիմակեն խաբվելով՝ ծերուկի մը կնմանեցնեն բնության այս անգութ հերթապահը, որուն բարձրացուցած աղմուկն ու իրարանցումը սակայն էն հուժկու երիտասարդներու լեգեոններ իսկ պիտի չկրնային հանել։ Մանավանդ այն տարին, անպիտանը հարկով զգալով տաճկահայ գաղթականներուս ներկայությունը՝ արտասովոր հրահանգներ տված էր իր մեծ ու պզտիկ գործակալներուն։ Մեզ պիտի վախցներ խելքովը, հա՛, հա՛, հա՛, մեզ, որ աստուծո ստեղծած էն ահարկու շարիքներուն դեմ ոգորած էինք և արյուն-ծովերու փոթորիկներեն ճողոպրած։ Խարխուլ ապաստարաններուն մեջ, կիսամերկ և պարապ ստամոքսով՝ կուշտ-կուշտ

խնդացինք վրան ամբողջ երկու ամիս. արտասահմանի այդ հյուրընկալ անկյունին պարգևած կյանքի ապահովության զգացումը այնչափ մեծ էր մեր մեջ, որ կրնար առնվազն յոթը այդպիսի ձմեռներու միահամուռ հարձակումին դիմադրել։ Վերջապես Ճրագալույցի գիշերը, հիմարը ալ թող տվավ մեր օձիքը, լուսամուտեն կամ պատին մեկ ճեղքեն նշմարած էր անշուշտ, որ այդ գիշեր մինչև անգամ մեր օջախին մեջ կրակ կփայլեր։

Ինչպես տերտերը ժամուն մեջ ծանուց՝ «բարեպաշտուհի տիկին մը» այդ օրը ածուխ բաշխել կուտար գաղթականներուն, «իր ննջեցելոց հոգուն»։ Չեմ գիտեր, թե ննջեցյալներու հոգիներուն օգուտ մը տվա՞վ այդ ածուխը, բայց մինչև օրս չեմ մոռցած այն մեծ օգուտն ու հաճույքը, զոր ան մեր մարմիններուն պարգևեց։ Այդ անակնկալ գանձին վայելքը կարելի եղածին չափ երկարելու համար, խումբ մը երիտասարդներ որոշեցինք բոլորիս բաժինները միացնել և միայն մեկ սենյակի մեջ վառելով ամենքս ալ հոն հավաքվիլ։ Խնայողական այս հաշիվը սակայն ճիշտ չելավ, ինչպես առհասարակ ամեն աղքատի հաշիվ։ Միևնույն երկրի զանազան հեռավոր անկյուններեն, իրարու բոլորովին անծանոթ և միայն օտարության մեջ հասարակաց տառապանքով մտերմացած երիտասարդներ վառ կրակարանի մը շուրջ երբ կբոլորին, ցրվիլն ալ նույնչափ հեշտ չի կրնար ըլլալ։ Ուստի նստեցանք ու նստեցանք, մինչև որ գիշերին հետ ածուխի ամբողջ պաշարն ալ ճերմկցուցինք։

Խոսակցությունը՝ հայրենի երդիքին տակ անցված կաղանդներու և ծնունդներու կարոտալի վերհիշումներովը նախաբանված՝ անակնկալ զուգորդություններով հետզհետե ծավալեցավ ու կենդանացավ։ Կրակին տաքությունը հալեցուցած էր ամենքիս ալ լեզվին ու հիշողության կապանքները և ահա յուրաքանչյուրը իր հիշատակներեն դեռ չպատմված դրվագներ կհաներ, իրեն իսկ զարմանք պատճառելու աստիճան հորդ առատությամբ մը ու ամբողջ խոսակցությունը անզգալաբար կփոխվեր տեսակ մը թաքուն մրցումի, որու միակ մրցանակը ընդհանուր հետաքրքրությունն էր։ Ու երբ արդեն հիշեցի, թե տաճկահայեր էինք մրցակիցներս, ավելորդ չէ՞ր ըսել, թե նյութի նեղություն չէ որ կբաշխինք։ Ամեն տաճկահայ, որ մեր սա ոչ վառելիք և ոչ ալ մարելիք հայրենի օջախեն հեռու չէ ապրած՝ լոկ իր վերջին տարիներու կյանքեն ինչեր ըսես չի կրնար պատմել։

Կարգով իրար հաջորդեցին մեկը մյուսեն ավելի տխուր ու տարօրինակ ինքնակենսագրական պատմություններ և ես ալ իմ կարգիս Բուրդի վանառականությունս պատմեցի։ Ավարտելես հետո արդեն սկսած էի հաղթանակս կարդալ հպարտորեն ունկնդիրներուս դեմքերուն վրա, երբ հանկարծ լռությունը ընդհատեց ընկեր մը, որուն կպատկաներ վերջին հերթը։ Մեր շրջանակին մեջ նորեկ մըն էր ան, միշտ տեսակ մը երազուն տրամադրության մեջ ու սակավախոս. իր կյանքեն այնչափը միայն գիտեինք, որ հեռու տեղերե կուգար։ Անապատցի դրած էինք անունը։

— Պետք է խոստովանիլ, որ քու պատմությունդ ամենեն հետաքրքրականն էր,— դարձավ ինծի Անապատցին իր հազվադեպ չոր ծիծաղը շրթունքներուն,— բայց հաղթանակը քեզի չպիտի ձգեմ, թեև քեզի պես վարպետ պատմող մը չեմ։ Կենսագրություն չէ, որ պիտի պատմեմ, որովհետև ազգային տեսակետով ան շատ է աղքատ ձերիններուն հետ չափվելու համար։ Ես շատ հեռվեն՝ անապատներու խորերեն միայն հետևեցա մեր հայրենի կիսավեր բույնը տարտղնող մրրկին և հենց այդ պատճառով ալ իմ տանջանքս ավելի կսկծալի եղավ թերևս, զուտ հոգեկան տանջանք մը։ Ահա այդ տանջանքի օրերեն պզտիկ միջադեպ մը կուզեմ պատմել ձեզի։

— Պատմե՛, պատմե՛,— գոչեց ամբողջ խումբը մեկ բերան, ուրախացած, որ այդ չխոսը այսպես ինքնահոժար բերանը կբանար և ամենքս ալ՝ ինչպես կըսեն՝ ամբողջ մարմնով ականջ կըտրած մտիկ ընելու պատրաստվեցանք։

* * *

Բաղդադ կգտնվեի հայկական վերջին սարսափներու միջոցին,— սկսավ Անապատցին,— արաբական խալիֆաներու առասպելահոչակ մայրաքաղաքը, ուրկե կմեկնեին երբեմն այդ սարսափներու հրահանգները։ Այն օրերեն ի վեր կշարդեն, հոգնած, պատրաստած դահիճներուն նորեր հաջորդելով անընդհատ։ Ինչ հսկայաքայլ հառաջադիմություն սակայն։ Այն ատենները շարդի հրամանը տանող սուրհանդակ մը կամ պատուհասի բանակի մը առաջնորդող Ամիրան, առնվազն ամիսի մը պետք ունեին Տիգրիսի այդ հեռավոր ափերեն մինչև ակունքը բարձրանալու համար։ Այդ միջոցին մեջ գուժը, որ թևեր ունի՝ սովորաբար աղետեն առաջ

կհասներ թշվառներուն երկիրը և ալևոր կրոնական մը կարող կըլլար. կոր քամակը երերցնելեն դահիճներուն դեմ երթալ, թանկագին ընծաներով ու իր ծերուկի լացովը ողոքելու անոնց սրտերը։ Եվ եթե այսպիսի աղերս մը ապարդյուն ալ անցներ, ժողովուրդը գեթ օր առաջ ամուր ու անառիկ տեղեր կապաստաներ։ Իսկ հիմա՞։ Հիմա՝ նոր խալիֆան երկու աշխարհամասերու սահմանին վրա իր փոսքը փռած՝ թե՛ այս կողմի և թե՛ այն կողմի գործողությունները այնպիսի հրաշալի արագությամբ մը կվարե, որ ոչ միայն ուրիշներուն՝ այլ պետք եղած ժամանակ ինքզինքին իսկ կրնա հավատացնել, թե պատահածը ուրիշ բան չէ, բայց եթե բնական անխուսափելի աղետ մը։ Նոր քաղաքակրթությունը ուրիշ շատ մը բաներու հետ ջարդերն ալ դյուրացուց։ Էլեքտրական հոսանքը՝ մահվան ձեռքին պես աներևույթ՝ ուղղակի դահճապետին շորս պատերեն ակնթարթի մեջ անոր կամքը կհասցնե ամեն կողմ։ Եվ ահա զոհերը իրենց էն աներկևան մեկ պահուն կիյնան արյունլվա, արևծագին դեռ կանգուն գյուղեր ու ավաններ արևու մուտքը ալ չեն տեսներ։ Շնորհիվ գիտության՝ նորանոր գյուտեր ապագային անշուշտ ավելի պիտի կատարելագործեն այս սիստեմը։ Սակայն խոսքիս թելը չխճճիմ, դառնամ պատմությանս։

Բաղդադի կողմերը կոտորած չեղավ. հայերու թիվը այնքան չնչին էր հոն, որ սուրը պատյանեն հանել չէր արժեր։ Կառավարական շրջաններու հպումեն վարակված քաղաքացի ժողովուրդին մեկ մասը թեև քիչ մը ժանիքները կրճտեց, սակայն Հայաստանեն հասած լուրերը ընդհանրապես բոլորովին հակառակ տրամադրություն մը զարթուցին արաբներու մեջ։ Անապատի ըմբոստ զավակը, երբ պատահմամբ ոտքը քաղաք կոխեր, հեռավոր անծանոթ բախտակից մը գտած ըլլալու սրտառուչ շահագրգռությամբ մը հանդիպած առաջին քաղաքացիին կուղղվեր սա միամիտ հարցումով.— «Ինչպե՞ս վերջացավ Էրմաններու պատերազմը Սուլթանին դեմ»։

95-ի ջարդերուն ատենն էր. առավոտ մը շուկա ելած էի գործով, երբ ծանոթ հայ զինվորական դեղագործ մը հանդիպելով լուր տվավ, թե Էլ-Կատիֆի մեջ զինվորական բժիշկ դոկտոր Սարգիսը քաղաքական շատ ծանր ամբաստանությամբ մը ձերբակալված և նախորդ իրիկունը Բաղդադ բերված էր դատվելու։ Ավելի բացատրություն մը չկրցավ տալ, որովհետև դոկտորին քով մարդ չէին ձգեր։ Հանկարծակիի եկա։ Էլ-Կատիֆ պզտիկ քաղաք մըն

է Պարսից ծոցին եզերքը. ի՞նչ կրնար ըլած ըլլալ խեղճ մարդը հոն, ուր ապահովաբար իրմե զատ ոչ թե հայ, այլ ուրիշ քրիստոնյա մը իսկ չկար։ Մզկիթի վրա՞ հարձակիլ, զորանո՞ց գրավել. մինակը այս տեսակ բան մը փորձելու համար դոկտոր Սարգիս յոթ գլխով դև մը և կամ խենթ մը ըլլալու էր, մինչդեռ զինք լավ ճանչնալուս՝ հաստատ գիտեի, որ երկուքեն ոչ մեկն ալ չէր։

Մեկնություն մը գտնելու ճիգիս մեջ խորասուզված՝ ճամբաս կշարունակեի, երբ հանկարծ անունս կանչվեցավ բարձր ձայնով։ Շուրջս նայեցա. հայրենակից հարյուրապետ մըն էր, որ զիս կկանչեր սրճարանե մը։ Ներս մտա. երկու ուրիշ սպաներ ալ նստած էին քովը, մեկը հեծելազորքի երիտասարդ հիսնապետ մը, իսկ մյուսը վիթխարի հասակով ու պարտապանաց փորով թնդանոթաձիգ հազարապետ մը, որ սաստիկ բարկություններեն մարմնին բոլոր անդամները պատերազմական վիճակի մեջ դրած կպոռպռար.

— Ապերախտ շունը, փատիշահին հացը ուտեն ու դավաճանություն ընե՞ն. չէ՛, ա՛լ հերիք է, բոլոր կյավուրները պետք է քշել բանակեն։

— Նստե՛, նստե՛,— ըսավ ինծի հայրենակիցս շինծու ծի՛ազով մը,— լավ լուրեր ունիմ քեզի հաղորդելիք։

— Ի՞նչ լուր,— հարցուցի աթոռ մը առնելով,— հայրենիքե՞ն։

— Չէ, չէ, տեղական լուր է. քանի մը օրեն լավ տեսարան մը պիտի ունենանք զորանոցի հրապարակին վրա, քու դոկտոր Սարգիսիդ շնորհիվ։

— Ի՞նչ է պատահեր, ասոլվածդ սիրես։

— Ի՞նչ պիտի պատահի. մարդը լավ առուտուրի է ձեռք զարկեր, բայց չէ կրցեր գլուխ հանել։ Անգլիական պետության հետ բանակցություն է սկսեր Էլ-Կատիֆը ծախելու. 200,000 անգլիական ոսկիի սակարկեր են, 90,000 ոսկին արդեն կանխիկ ստացեր է, իսկ մնացած 110,000-ին համար ալ մուրհակ է առեր։ Ասկե զատ, Զեյթունի ապստամբներուն օգնելու խոստում ալ առեր է Անգլիայեն։ Սակայն Էլ-Կատիֆի պահակազորքին գնդապետը իրմեն վարպետ փրթելով գործը հասկցեր է և զինք անմիջապես ձերբակալելով հոս է զրկեր։ Քանի մը օրեն պիտի կախեն զորանոցի հրապարակին վրա, քեզ ալ կհրավիրեմ հանդեսին ներկա գտնվելու։

Ապուշ կտրեցա։ Բժիշկ մը, որ երկիրներ կրնա ծախել. տերաստված, դեռ ինչեր պիտի լսեինք։ Մարդը այնպիսի ձևով մը հա-

զորդեց լուրը, որ կարծես այդ քամբախտ էլ-Կատիֆը տուն մը կամ արտ մը ըլլար։ Զարմացումս բացեիբաց պիտի հայտնեի, սակայն երբ անգամ մը հետս նստողներուն երեսները նայեցա, համարձակությունս փախավ հանկարծ։ Երեքին ալ դեմքերը դժոխային կատաղություն մը կարտահայտեին. մանավանդ հազարապետին սոսկալի փորը փուքի մը պես կելևէջեր ու կֆշֆշար, մեկ վայրկյանեն մյուսը զայրույթի նոր ժայթքում մը սպառնալով. իսկ տակի խեղճ աթոռը սրտաճմլիկ ճիչեր կարձակեր, մսի այդ վիթխարի բուրգին ծանրութենեն։

— Ներողություն,— դարձա վերջապես հայրենակցիս՝ հարցումի անվտանգ ձև մը գտնելով,— բայց այդ քաղաքին բանալիները ինչո՞ւ էին հանձներ դոկտոր Սարգիսին։

— Ի՞նչ բանալի,— շտապեց պատասխանել հիսնապետը,— էլ-Կատիֆ պարսպապատ քաղաք չէ, մինչև անգամ ամրություններ ալ չունի։

— Ուրեմն դոկտորը ինչպե՞ս պիտի հանձներ քաղաքը անգլիացիներուն։

— Ի՞նչ դժվար բան է,— մռնչեց հազարապետը,— զինվորական բժիշկ է, ամբողջ պահակազորքը կթունավորեր, երկիրը կմնար անպաշտպան և անգլիացիները հանգիստ, հանգիստ կգրավեին։

— Պիտի կախեն, բայց ափսո՛ս,— հառաչեց հիսնապետը,— ա՛խ, իմ ձեռքս տային, ձիուս պոչին կկապեի և այնչափ կքշեի, մինչև ամենամեծ կտորը ականջը մնար։

— Չէ՛, չէ՛, այդ դեռ քիչ է,— վրա բերավ սիրելի հայրենակիցս,— իմ ձեռքս տային, ցիցի վրա կնստեցնեի կամ աքցանով մը միսեն ամեն օր մեկ կտոր կփրցնեի և կամ ավելի լավը...

— Ո՛չ աս, ո՛չ ան,— ընդհատեց հազարապետը որոտաձայն,— մեղք չէ՞ ձեռքերուս, որ շան դիակին վրա այդչափ աշխատանք թափեմ. թնդանոթ մը լավ կլեցնեի, այդ անպիտանն ալ «խոզի գնդակ» մը շինելով բերանը կկոխեի և կրակը տվածիս պես բո՛ւմ...

Հոս՝ կատաղի ոմբաձիգը բոունցքին հետ փորն ալ այնպիսի բուռն թափով մը առաջ նետեց, որ մարմնին ալ հավասարակշռությունը կորսնցնելով՝ կռնակի վրա գետին փռվեցավ։ Պարզված տեսարանը ջարդի կատարյալ մանրանկար մըն էր, սա տարբերությամբ միայն, որ հոս զոհերը անշունչ առարկաներ էին, իսկ կյավուրի պիղծ արյունին փոխարեն ջարդուփշուր եղած նարկիլներու դեղնած ջուրն էր, որ կհոսեր։ Երկու սպաները, սրճարանին երեք սպասավորները և ես միացած՝ հազիվ կրցանք ոտքի հանել ահեղ հերոսը։ Նստարանի մը վրա ինկավ, աչքերը պայթելու աստիճան շնչասպառ ու երեսը խոզի ապուխտի պես կարմրած։ Ամբողջ տասը րոպե խեղդվելու չափ հազաց և ոմբաձգության այս ձախող փորձեն ծայրահեղորեն մոլեգնած՝ հայհոյանքի տարափ մը փսխեց։

— Կյավուր շուն շանորդի, խրնգիր, էշ, սրիկա, դավաճան, թնդանոթին մեղք չէ՞, մեղք չէ՞ վառոդին. ոտքերը կկապեմ, վիզը չվան մը կանցնեմ և հրեայի մը ձեռքը տալով՝ ամբողջ քաղաքը պտըտցնել կուտամ քաշկոտելով։ Շա՛ն ծնունդ քեզի։

Երևակայված ահռելի պատիժներու տպավորության տակ՝ մազերս՝ փուշ-փուշ եղած էին, երեսիս գույնը նետած և դեռ շատ հավանական էր, որ վախես կաթվածահար ըլլայի, եթե այս գերազանցորեն կատակերգական տեսարանը վրա չհասներ։ Հիմա ալ գերմարդկային ճիգեր կընեի ծիծաղս զսպելու, ուստի փորձանք մը չհանելու համար փութացի դուրս նետվիլ այդ սարսափելի զինվորական ատյանեն։

Շաբաթ մը ետքը մեյմըն ալ իմացանք, որ դոկտոր Սարգիսը անպարտ արձակված է։ Քանի մը ընկերներով անմիջապես քովը գնացինք ամբողջ դեպքին ստուգությունը իմանալու։

Էլ-Կատիֆի պահակազորքին գնդապետը և քանի մը ուրիշ պաշտոնյաներ թշնամացած էին դոկտորին և այդ հրաշակերտ զրպարտությունը հերյուրած՝ զինք մեջտեղեն վերցնելու համար։ Սակայն Բաղդատի մյուշիրը* խնդրին էությունը հասկնալե ետքը, իր մեկ «էշրեֆ սահաթ»-ին** խորհուրդը հղացած էր մեկ անգամեն երկու բարերարություն ընելու։ Տարիներե ի վեր պոլսեցի հույն աղջիկ մը կպահեր քովը՝ իբրև իր տղայոց դաստիարակուհի։ Այդ՝ դոկտորին հասկցուցած էր, որ ազատումի մեկ միջոց մը միայն կա... այդ աղջկան հետ ամուսնանալ և իրեն փեսա դառնալ։

— Ի՞նչ ընեմ, ես ալ ընդունեցի,— ըսավ դոկտորը խղճալի ձայնով մը։

Ընկերներս միաբերան իրենց հավանությամբը վավերացուցին այս խելացի որոշումը։

---

* Մյուշիր— մարշալ, բանակի հրամանատար։

** Էշրեֆ-սահաթ— բարի ժամ։

— Իհարկե, եղբայր, իհարկե, լավ եք ըրեր,— ես ալ իմ կարգիս մխիթարեցի խեղճ մարդը,— ամուսնությունը, եթե մինչև իսկ բռնի ալ ըլլա, կախաղանեն լավ է վերջապես։

Դեռ նստած էինք, երբ խումբ մը զինվորականներ եկան շնորհավորության, որոնց շարքին մեջ և մեր թնդանոթաձիգ հազարապետը։ Դոկտորը ստիպվեցավ անգամ մըն ալ պատմել ծայրեծայր դիպուածը անցածը, ավելորդ է ըսել՝ արձակման պատճառը միայն Մյուշիր փաշային արդարադատությանը վերագրելով։ Սակայն ամեն մարդ լսած էր արդեն առաջիկա հարսանիքին լուրը։

— Ես այդ լիրբ գնդապետը վաղուց կճանչնամ,— ըսավ մեր հազարապետը՝ պատմությունը լմննալուն պես,— անձնական թշնամությունը հագեցնելու համար ամեն ստորնության կզիջանի շանորդին. ես արդեն դեպքը լսելուս պես ըսի, թե անպատճառ զրպարտություն է։

Ականջներուս հավատալս չէր գար, հազարապետին երեսը նայեցա շեշտակի, ինք ալ իմ երեսս կնայեր և ի վերջո ես էի, որ ստիպվեցա աչքերս վար առնել։

* * *

— Բայց, տղայք, տաք երկիրները հիշեցուցիք ինձի ու ես սկսա մրսիլ,— ըսավ Անապատցին իր տարօրինակ պատմությունը վերջացնելով։ Եվ ձեռքովը առկայծ կիրակին վրա նետեց ածուխին վերջին մնացորդը, զրադաշտյան մոգպետի մը լրջությամբ մաղթելով։

— Աստված ողորմի բարեպաշտուհի տիկնոջ մեռելներու հոգուն և մեզ ալ օր առաջ անոնց շարքը անցնե՝ իր անհուն ողորմությանը արժանացնելու համար։

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Մարգար Ժամհարյանի հիշատակին

1

Գյավուր-Բողա՞ն։

Անունը վրան։

Ոչ մեկ հայ կհանդգնի երբեք թափանցել այդ գաժան գոհնեբուն մեջ, ուր քաղքին թրքության է՛ն հարազատ մասը խտացած է։

Հսկայական աղբակույտ մը, որու մեջ հյուղակները—ավելի որջերու քան մարդկային բնակարաններու նման — այնպիսի ծամածուռ ու անկարելի դիրքերով խրված են, որ կարծես անծանոթ տիտան մը ժամանակին ամբողջ քաղաքը ավլած և աղբյուսը իր վիթխարի թիովը միջնաբերդի բարձունքեն վար նետելով ակամա հիմնադիրը եղած է այս թաղին։

Իրիկուն է։

Գյավուր-Բողանի համբավավոր մեգերաներեն պառավ Ֆաթման ըստ սովորականին նստած է իր խրճիթին շեմին վրա, ոչ թե վերջալույսը վայելելու, այլ անցորդները դիտելու և մանավանդ պաշտպանելու համար իր հավերը, որոնք օրվան այս պահուն մասնավորապես ենթակա են փողոցի լակոտներուն քարկոծումին։ Գրկին մեջ հանգստավետ դիրքով մը բազմած է իր սիրասուն թոռնիկը, մերկ, ցեխոտ սրունքները մամիկին ծունկերուն վրա կախած և ձվաձև ճղճիմ գլուխը անոր կուրծքին հանգչեցուցած։ Մորթը աղտի սավար խավի մը տակ կորսված, եռանկյունի լայնանիստ քթով, մանրիկ, ճպռոտ աչքերով երեխա մը, որուն մերկությունը աղտոտ շապիկ մը միայն կծածկե, իսկ գլուխը նույնչափ աղտոտ գդակ մը, որու վրա սակայն խնամոտ ձեռքեր մետաղե կիսալուսին մը և բազմաթիվ ուլունքներ ու հուռութներ կարած են չար աչքե զերծ պահելու համար։

Ու պառավը դժվարին կացության մեջ է։

Կշանա մեկ կողմե հայհոյանքի ուժով իր հավերը պաշտպանել փողոցի քարազեն որսորդներուն դեմ, մյուս կողմե անույշ լեզվով ողոքել իր թոռնիկը, որ նորաբողբոջ ցուցամատովը միջնաբերդի զույգ աշտարակներուն միջև փայլող արևուն շիկակարմիր սկավառակը կցուցնե շեշտակի և կպահանջե վայրկենաբար իրեն բերել այդ խոշոր, աղվոր սեխը։

Իսկ արևը՝ այդ փոքրիկ որկրամոլ բռնավորին վտանգավոր ախորժակեն սարսափահար՝ արագ քայլով դեպի մարը կփախչի։

Փոքրիկ Դուրսունը թեև դեռ հազիվ երեք տարեկան, բայց արդեն բեկ տիտղոսը ստացած էր իր մամիկեն։ Ոչ միայն որովհետև ամեն թուրք ավելի կամ պակաս բեկ կծնի արդեն, այլև Ֆաթման իր փոքնառու աչքերով այժմեն իսկ գտած է այն բնորոշ նշանները, որոնք կխոստանան առանձնապես արժանի հանդիսացնել իր թոռնիկը այդ տիտղոսին։

Ահա այդ կարգի խոստմնալից նշաններու ճոխ հավաքածոյին վրա կուգար ավելնալ նաև Դուրսուն բեկին այս իրիկվան խորհրդաւորհուրդ պահանջը և այս առթիվ զգացած ներքին հրճվանքն է պատճառը, որ պառավը փոխանակ սրտնեղելու և հանդիմանելու, ընդհակառակը, ջերմ համբույրներով կլվա իր թոռնիկին անլվա դեմքը և հետևյալ բացատրությամբ կզսպե անոր հոյակապ ախորժակը։

Երկու մինարեներուն միջև փայլող այն կլորակ բանը սովորական սեխ մը չէ, այլ համակ ոսկիե վիթխարի սեխ մը, որ հեռո՜ւն, շատ հեռո՜ւն շղթայով մը կախված է երկինքեն և որուն ան միայն կրնա տիրանալ, ով որ իր ձին մինչև հոն քշելու և իր սուրին մեկ հարվածովը այն շղթան կտրելու արիությունն ու ուժը ունենա։

Այս խորհրդաստ բացատրության վրա լակոտը թաթիկներովը աչքերը կսրբե և արևը պահ մը ապշությամբ դիտելե ետքը.

— Անա՜, ադ ըսածդ ես չե՞մ կրնար ընել, երբ որ քիչ մը մեծանամ բարձիս դահդահին վրա կհեծնիմ, բարձիս մեծ սուրը կառնեմ կերթամ շղթան կկտրեմ, կրնամ չէ՞, անա՜։

— Հարկավ կրնաս, հոգի՜ս, հարկավ կրնաս. միայն թե առաջ լավ ձի հեծնել և լավ սուր խաղցնել պետք է սորվիս։

Իսկ այս հավաստիքին վրա Դուրսուն բեկ արդեն հափշտակված՝ խլնոտ շրթունքները կլզե, որովհետև անմիջապես աչքին առջև կպատկերանա այն ցանկալի օրը, երբ ինք ձիուն վրայեն սուրի ուժգին հարվածով մը շղթան կկտրե և... ոսկեղեն սեխը փա՜թ վար կիյնա մեջեն չորս կտոր եղած, կրծվելու պատրաստ։

Բայց ապագա հերոսը հանկարծ կսթափի իր անուշ երազանքեն սուր ճիչ մը արձակելով։

Խոշոր ու սև շուն մը, որ փողոցին վերի ծայրը դիզված մեծ աղբակույտը մութը կոխելե առաջ վերջին անգամ մըն ալ քրքրելու զբաղած էր, իր բարերարուհին նկատելուն պես գործը ընդհատած և պոչը փարտելով վազած ու մեկ ոստումով անոր գիրկը նետած էր իր առջևի թաթերը։

Պառավը, որ այս անգամ նույնպես հանկարծակիի եկած է այդ սովորական ողջույնեն, կռուփի հարվածով մը շունը կվանե և կշանա սրտապնդել իր թոռնիկը, որ կոկորդալիր կհեկեկար, աչքերեն ու քթեն առվակ մը հոսեցնելով դեպի բերանը։

— Մի վախնար, ձագս, մի՛ վախնար, Փափազն է, շուն Փափազը։

Շունը, որ քանի մը քայլ հեռանալով պոչը ոտքերուն մեջ առած ապշությամբ կնայեր, չկրնալով մեկնություն մը տալ իրեն եղած այս կոպիտ ընդունելության, իր անունը լսելուն պես կամաց-կամաց կսկսի նորեն մոտենալ։

— Ծո Փափա՜զ, մունդաս Փափազ, եկո՜ւր։

Պառավին այս անակնկալ հրավերին վրա շունը վերստին պոչը կտնկե և մոտենալով իր կողը կսկսի քերել անոր սրունքներուն վրա։

Ֆաթման մեկ ձեռքով Փափազին գլուխը կբռնե, իսկ մյուս ձեռքով իր սարսափահար թոռնիկին աջ դաստակը առնելով անոր թաթիկովը կսկսի շան կռնակը հարվածել։

— Ջա՜րկ, մի վախնար, զա՜րկ սա շան գյավուրին։

Դուրսուն բեկ սկիզբը դեռ կվախնա ու կշարունակե լալ, ջանալով ետ քաշել ձեռքը։ Բայց տեսնելով, որ անասունը ձայն, ծպտուն չի հաներ, հետզհետե կսրտապնդի և վերջապես ազատ ձեռքով կսկսի իջեցնել իր հարվածները։ Ֆաթման իր դասավանդությունը կատարյալ ընելու համար գետնեն ճպոտ մը կգտնե և թոռնիկին ափին մեջ կդնե, իսկ լակոտը այս զենքով ավելի խրախուսված, իր անզոր բազուկներուն ամբողջ ուժը կթափե տքալով ու քիթը վեր քաշելով։ Եվ ի վերջո կատաղությունը այն աստիճանի կհասնի, որ ճպոտը մեկդի նետելով, շանը մեկ ականջը կբռնե և բոլոր ուժովը կսկսի քաշել։ Խեղճ Փափազը ա՛լ չկրնալով դիմանալ կաղկանձելով կփախչի, իսկ հաղթական Դուրսուն բեկը հրճվանքի բացականչություններ կարձակե անոր ետևեն և թևերը շարժելով մամիկեն կպահանջե ետ բերել զայն։

Ֆաթման իր աննման թոռնիկին քաջասրտության այս նոր ապացույցեն զգլխած, պինդ մը կուրծքին կսեղմե զանի և անոր թևերն ու ձեռքերը կհամբուրե բացականչելով.

— Թևերդ զորանան, կտրիճ ձագս, թևերդ զորանան։

Այդ միջոցին փողոցին ծայրեն աղմուկ մը կբարձրանա։

Ճերմակ փաթթոցավոր երկու լակոտներ վազելով ու պոռալով կմոտենան և պառավին առջևը կնետեն չոր խոտի ու փայտի կտորվանքներու խոշոր տրցակ մը։

— Ծո, աս ի՞նչ է, ո՞ւրկե կուգաք այսպես հևալով,— կհարցնե Ֆաթման զարմացած։

— Անա՛, գյավուրի լակոտ մը ծեծեցինք, քթեն, բերնեն արյուն բերինք շան ձագին և աս ձեռքեն խլեցինք։

Կպատասխանեն թզուկ հոճաները մեկ բերան, բերած տրցակնին ցույց տալով։

Ֆաթման ոտքի կելնե և մեկ ձեռքով տրցակը կշռելե ետքը.

— Ապրի՛ք, տղաքս, շատ ապրիք, տեսեք, եթե ամեն օր այսպես լեցուն ձեռքով գաք՝ շատ աչքս կմտնեք, հա՛։ Բայց հայրերնիդ ո՞ւր է։

— Բաբաս այսօր քիչ մը ուշ տուն պիտի գա, տեղ մը գնաց, բայց մենք անոթի ենք, անա՛,— կպատասխանե մեծ տղան։

— Ելա՛վ, եկեք ներս, քիչ մը հաց տամ,— կըսե պառավը և ալարը առնելով տղոց հետ տուն կմտնի։

Ներսը մինչդեռ տղաքը հացի մեյմեկ շերտ խածնելով իրենց շահատակության մանրամասնությունները կպատմեն, Ֆաթման և իր մանկամարդ հարսը հիացումե հիացում գլտորելով վերջապես այն աստիճան կոգևորվին, որ մեյմեկ կտոր ալ պանիր կնետեն անոնց առջևը։

Ձեթի ճրագը արդեն սկսած է նշուլել և հարսը օջախին մեջ տղոց բերած փայտին կրակովը ընթրիքի պտուկը կեռացնե, երբ դռնեն ներս կմտնե երիտասարդ հոճա մը. Ֆաթմայի որդին, հարսին ամուսինը և տղոց հայրը։

Ֆաթման անոր ընդառաջ փութալով.

— Հոճա՛, ո՞ւր մնացիր, եկո՛ւր տես տղաքդ ի՞նչ են բերեր,— և տղոց դառնալով—ծո՛, մեյմըն ալ պատմեցեք, հայրերնիդ լսե։

Ու տղաքը հազիվ ավարտած իրենց դյուցազներգությունը, պառավը, որ դիտմամբ է՛ն վերջվան պահած էր ամենամեծ անակընկալը, հաղթության նշանի մը պես Դուրսուն բեկը գլխուն վրա բարձրացնելով կբացականչե.

— Հապա աս պզտի՞կս, չեք հարցներ, թե ինչե՞ր ըրավ, ինչե՞ր, ինչե՞ր։

Եվ հեքիաթի մը ճոխությամբ կպատմե բեկին թարմ սխրագործությունները, արևուն փախուստեն սկսած մինչև Փափազին պարտությունը, հետևյալ վերջաբանով.

— Միշտ ըսեր եմ և նորեն կկրկնեմ, որ նմանը չտեսնված կտրիճ մը պիտի ըլլա աս ձագուկս։

Հոճան իր երեք զավակներուն ևս իրենց արժանի քաջալերանքը տալե հետո, ինք ալ իր կողմեն կավելտե, թե կոտորածին ավարը այս իրիկուն բաժնված և քսան հատ կարմիր ոսկի բաժին ինկած է իրեն։

Այս ավետիսին վրա քիչ մնաց ուշաթափ ըլլան կիները, որոնք աչքերնին կփակեն ու չեն կրնար քսան հատ ոսկին մեկտեղ երևակայել և անպատճառ տեսնել կուզեն։ Բայց հոճան խոհեմություն կհամարե առայժմ հինգ հատեն ավելի մեջտեղ չհանել, խոստանալով մնացածն ալ մաս առ մաս ցուցնել։

Ընթրիքի դգալներուն աղմուկը հազիվ դադրած՝ փոքրիկները արդեն անմեղության քունը կխոկան, հարսը քովի խցիկին մեջ հեշտանքի անկողինը կփռե, Ֆաթման ամանները կլվա։

Իսկ հոճան չիբուխ մը քաշելե հետո զուրանը ձեռք կառնե և ձեթի ճրագին աղոտ լույսին տակ—թեև ճրագի ամենեին պետք չունի, որովհետև գոց գիտե արդեն—հուզված ու գեղեցկաձայն կեղանակե.

«Փառաբանե անուանը քո տիրոջդ՝ բարձրելույն,

Որ ստեղծած է ամեն ինչ և ճավասարակշռություն հաստատած ամեն բանի մեջ,

Որ որոշած է ամենքին ճակատագիրը և որ ամենքը դեպի նպատակ մը կվարե...»։

Դուրսը մութ գիշերներին մեջ շներու ամբողջ ոհմակը կատաղորեն կհաչե, հեռավոր խուլ ու չարաշուք ոռնումի մը դիմելով։

II

Մարթան դռան առջև անհանդարտ շարժումներով փողոցին երկու ծայրերը կդիտե։

Շաբաթ մը կա, որ ամբողջ ընտանիքով տաք կերակուր չեն դրած բերաններին։ Փայտը արդեն ամեն տարի սուղ, այս աշնան աղքատին համար անմատչելի նյութ մը եղած է։ Եկեղեցիեն քիչ մը բրինձ բաժներ էին, և թշվառ կինը այս երեկո տաք ապուր մը կուզեր կերցնել իր սիրելիներուն, այդ պատճառով մեծ որդին՝ տասներկու տարեկան Արամը՝ ղրկած էր փողոցներեն քիչ մը վառելիք հավաքելու։

Բայց օրը արդեն իրիկուն եղած է և տղան դեռ մեջտեղ չկա։

Ա՛լ հուսահատ՝ շարշաֆը վրան կառնե տղուն ետևեն երթալու համար, երբ ան վերջապես կհայտնվի։

Հագուստները բզկտված, դեմքը արյունլվա և խոշոր, գեղեցիկ սև աչքերեն մեկը ուռած՝ ներս կմտնե դռնեն։

Մայրը զարհուրած վրան կվազե։

— Տղա՜, ատ ի՞նչ է, ի՞նչ ես եղեր։

Փոքրիկը ձեռքերովը դեմքը կծածկե։ Այտերուն վրա արցունքները դեռ չեն չորցած, բայց մորը ներկայության ավելի կփղձկի և բուռն հեկեկանքով հազիվ կթոթովե։

— Մայրի՜կ... թուրք տղաքը ըրին... շատ փայտ հավաքեր էի... մեյդանեն... կուգայի... երկու... թուրքի տղա... դեմս ելան... փայտը ուզեցին... չտվի... ուզեցին խլել... փախա... ետևես վազեցին... չկրցան հասնիլ... վերջեն... վերջեն... մեծ բախավոր թուրք մը դեմս ելավ... բռնեց ինծի... տղոց ձեռքը տվավ... փայտս խլեցին... ինծի ալ... ծեծեցի՜ն։

— Ա՜խ հոգիս, աստուծմե գտնան, ի՜նչ կրնանք ընել, աստուծմե գտնան,— կհառաչե Մարթան աչքերը լեցված և ձեռքը ծունկին զարնելով. իսկ պզտիկ տղան, երկամյա Տիգրանը՝ մորը փեշին փակած՝ ահռելի լաց մը կփրցնե։

Ու մինչդեռ խեղճ կինը բակին մեջ մեծին վերքերը լվալու և փոքրիկին ձայնը կտրելու տագնապին մեջ է, դուրսեն կուգա ամուսինը, որ այս տեսարանին առջև ավելի զայրացած, քան հուզված՝ կպոռա։

— Աս ի՞նչ է, կնի՜կ, ի՞նչ կըլլանք նորեն։

— Բան չկա, ոտքդ պագնեմ, գնա ներս, նստե,— կպատասխանե կինը վախի և աղերսանքի շեշտով մը։

— Ի՞նչ ըսել է բան չկա,— կգոռա մարդը ձայնը ավելի բարձրացնելով,— աս ի՞նչ արյուն է, աս ի՞նչ լացուկոծ է նորեն։

— Սիրտդ թունդ մի հաներ, մեծ բան մը չէ եղածը,— կշանա հանդարտեցնել Մարթան,— Արամը թուրքի տղոցմե ծեծ է կերեր, քիթը արյուներ է քիչ մը։

— Թուրքի լաճերու ո՞ւր է հանդիպեր, ի՞նչ գործ ունի դուրսերը, չի՞ կրնար շնթռկիլ, տունը նստիլ, ինչո՞ւ կթողուս, որ դուրս ելլա։

— Կաղաչեմ հերիք է, ա՜լ մի պոռար. մենք ի՞նչ հանցանք ունինք. տղան դուրս ղրկեր էի, որ փողոցներեն քիչ մը ցախ ժողվե, ապուր մը եփեմ իրիկունը, տուն գալու ատեն թուրքի լաճեր ծեծեր, ժողվածը ձեռքեն առեր են։

— Օ՜խ, շատ աղեկ են ըրեր, ապուր չէ չոռին մեծը ուտեինք տե, օր մը առաջ սատկեինք, ազատեինք։

Այս խոսքերով դառնացած սրտին ժահրը քիչ մը թափելե հետո մարդը ներս կերթա, պատուհանին առջև կնստի և գլուխը կախ կծխե ու կհազա։ Արհեստով ոսկերիչ է ինք, վարպետ արհեստավոր և ընտանիքի գորովագութ հայր, բայց ահա ամիս մը առաջ Ցարին ձեռքերը հանկարծ երկնցան և մեկ հարվածով խանութեն իր հարստությունը և տունեն իր երջանկությունը հափշտակեցին։

Մարթան իր տղուն վերքերը լվալե ու փաթթելե ետքը քովի սենյակը անկողին կդնե զանի փոքրիկին հետ։

Վիշտերը խեղդած է ամենքին ալ ստամոքսի պահանջը։ Տղաքը հոս խոր քունի մեջ կհանգչին, մարդը անդին նստած տեղը վշտակոծ գլուխը կուրծքին վրա կհակե։ Եվ ամեն ինչ կլռե։

Ու խորին լռության մեջ հանկարծ ձայն մը կբարձրանա մեղմ ու տխրանույշ.

Քամին ելավ էրան էրան,
Մշո մայրեր սևավորան։

Մարթան՝ տղոց սնարին քով իր վշտին մեջ ընդարմացած՝ մեկեն կսթափի։ Պահ մը ուշադիր մտիկ կընե, մշեցի գաղթական կիներն են, որ կերգեն քովի տնեն.

Հաղարապետ ընկավ թաղեր
Ծառեր կտրեց, տարավ ճղեր,
Մայրիկ, մայրիկ,
Մայրկա դարդեր սարերով են
Անուշ, անուշ։

Ու կրկին փղձկելով կսկսի արտասվել, ձեռքերը իրար միացուցած և աչքերը հառած առաստաղին, ուր մրոտ գերաններու միջև սարդերը հապճեպ իրենց ոստյանները կհյուսեն վաղվան որսին համար։

ՎՇՏԻ ԾԻՍԱՂԸ

Սեբաստիան գրավված էր։ Երկար դիմադրութենե հետո խարդախությունը վերջապես բացած էր անոր դռները ահարկու ասպատակին առջև։

Այդ առաջին իրիկունն, որ քաղաքին սև պարիսպներն ու աշտարակները լուռ էին ու ամայի և արտակարգորեն գեղեցիկ վեր-

ջալույսի մը ցոլքերուն տակ մռայլ տեսիլքի մը պես կբարձրանային դաշտին մեջեն։ Թաթարական բանակը իր վրաններով շուրջանակի ծածկած էր ամբողջ դաշտը, մարդոց ու անասուններու վայրենի ժխորով մը պղծելով պատերազմի իրիկվան մելամաղձությունը։ Վրաններեն մեկուն տակ նստած էր Ան, որու ձայնը Ասիայի հեռավոր տափարակներեն ի մի հավաքած էր մարդկային այդ հեղեղը և մինչև հող քշած։ Լենկթիմուրը։ Բերանը երկար չիբուխին դրած տխուր կմտորեր, աչքերը մերթ Ալիսի կարմրորակ ալիքներուն հառելով և մերթ դժբախտ քաղաքին, որու ուրվագծերը հետզհետե կլուծվեին թանձրացող մթության մեջ։ Քովը անբարբառ կանգնած էին իր գլխավոր զորավարները աչքերնին անքթիթ անոր սևեռած։ Հանկարծ գլուխը վեր առավ և մատով նշան ըրավ զորավարներեն մեկուն, որ իսկույն առաջ անցնելով գլուխ տվավ և կանգնեցավ ձեռքը կուրծքին։ Խալիլն էր աս, Խալիլը, որ դժոխքի կրակ տիտղոսը կկրեր բանակին մեջ։

— Ով Խալիլ,— խոսեցավ Լենկթիմուր,— գիտես, թե որչափ սուղի նստավ մեզի այս անօրեն քաղաքին անբարտավան դիմադրությունը։ Մեր քաջերեն շատերը ինկան անոր պարիսպներուն առջև, իսկ անդին օսմանցի Բայազիդը ժամանակ շահեցավ կայսրություն մը ձեռացնելու։ Արդ, անլուր և անօրինակ պետք է ըլլա իմ վրեժխնդրությունս այս անգամ։ Քու վարժ ձեռքերուդ կհանձնեմ անոր գործադրությունը։ Վաղը արևի ծագումեն մինչև մուտքը քեզի ժամանակ. քաղաքը պետք չէ հիմնահատակ կործանես և բնակիչները պետք չէ բնաջինջ ընես, այլ այնպիսի դաս մը պետք է տաս, որ մնացողները այլևս բան մը չունենան այս աշխարհի վրա և ապրելու ախորժակը կորսնցնեն։ Գնա՛, վաղը վերջալույսին կսպասեմ տեղեկությանդ։

Հաջորդ իրիկուն Լենկթիմուր դարձյալ նստած էր նույն դիրքի մեջ, երբ Խալիլ ներկայացավ և այսպես խոսեցավ.— «Ով մեծաղոր խաքան, հրամանդ գործադրված է։ Այսօր արևածագեն մինչև արևապատք մեր զորքը արձակեցի անօրեն քաղաքին վրա. սպանություն, թալան, բռնաբարում հաշիվ չունեին. բոլոր իշխանները սաստիկ տանջանքներով սպանվ տվի և պահակազորքեն 4000 ընտիր կտրիճներ ողջ-ողջ թաղել տվի։

— Իսկ հիմա ի՞նչ կընեն սեբաստացիք,— հարցուց Լենկթիմուր անվրդով։

— Օ՜հ, տեսնելու բան է, թե ի՛նչպես կռնան ձագերնին կորսնցուցած շներու պես։

Այս պատասխանին վրա մռայլության նոր խավ մը պատեց խաքանին դաժան դեմքը։ «Ուրեմն հրամանս դեռ գործադրված չէ,— գոռաց,— գնա՛ և վաղը արևի ծագումեն մինչև մուտքը շարունակե վրեժի գործը»։

Երկրորդ իրիկունը Խալիլ հաղթական ներկայացավ իր տիրոջը.— «Ով ամենազոր խաքան, կամքդ կատարվա՛ծ է։ Այսօր մեր զորքը կրկնապատիկ կատաղությամբ լրացուց երեկվան պակասը։ 5000 կիներ հրապարակով խայտառակելե հետո ձիերուն պոչերուն կապել տվի և բաց դաշտի մեջ արձակելով կտոր-կտոր ընել տվի, 7000 մանուկներ մեկտեղ հավաքելով մեր ձիավորներուն կոխոտել տվի և հիմա սեբաստացիք այնպիսի վայնասուն մը փրրցուցած են, որ քարերը կդողան»։

— Ոչ, դեռ չէ կատարված հրամանս,— պոռաց Լենկթիմուր կատաղութենեն առամները կրճտելով,— գնա՛ և վաղը արևի ծագումեն մինչև մուտքը վերջին ալյմանաժամ քեզի։

Երրորդ իրիկունը Խալիլ այլայլած մտավ իր տիրոջ վրանը և անոր ոտքերուն փաթթվեցավ.— «Ո՛վ տեր, ներե ինձի, այլևս իմ ուժես վեր է այս անօրեն քաղաքը պատժել։ Այսօր աննկարագրելի մոլեգնությամբ շարունակել տվի ավերումի և սպանության գործը, անհավատներու գանկերեն հսկայական բուրգ մը կանգնել տվի և վիթխարի հիշատակարան մը անոնց ոսկորներեն։ Կողոպտելու, թալանելու ա՛լ բան չմնաց։ Բայց... բայց հիմա... ողջ մնացողները... փողերով ու թմբուկներով փողոցները ինկած կերգեն, կպարեն ու կխնդան։

Դիվային ժպիտ մը շողաց Լենկթիմուրի շրթունքներուն վրա.— «Կեցցե՛ս, հրամանս այս անգամ գործադրված է,— բացականչեց ան,— ոտքի ե՛լ և հանդիսավոր մուտքս պատրաստե տեսարանը դիտելու»։

ՆՈՐԱՎԵՊԻՆ ՆՈՐԱՎԵՊԸ

Այդ կիրակի օրը շատ ուշ արթնացավ Ատոմ Որբունի։ Փողոցը արդեն սկսած էր աղմկիլ եկեղեցիեն վերադարձողներու բազմութենեն, երբ ան դեռ անկողնին մեջ կռնակի վրա երկնցած, աչ-

քերը բաց՝ անհանդարտ երազանքի մը մեջ էր։ «Է, ասանկ չըլլար,— գոչեց հանկարծ ընդոստ ոստումով մը մահճակալեն վար ցատկելով,— մինչև որ գրիչս ձեռքս չառնեմ, բան մըն ալ պիտի չկրնամ որոշել»։

Գուլպաներն ու տաբատը հագավ և մոտեցավ լվացքի սեղանին, շտապիկին թևերը սոթտեց, բայց հանկարծ ետ դարձավ քըմծիծաղով մը. «Չէ՛, մուսաներս կփախչին, ավելի աղեկ է լվացվելե առաջ գործս վերջացնեմ»։

Ժակետն ալ հագավ և դիմացի պատին վրա զետեղված հայելիին առջև ձեռքի խնամոտ շոյանքով մը երկար մազերն ու սիրուն, թարմ մորուքը շտկելե ետքը գրասեղանին գլուխն անցավ։

Մոպասանի նորավեպերու հատոր մը սև ու ճերմակ թղթի թերթեր ցիրուցան փռված էին սեղանին վրա՝ լապտերի մը շուրջը, որուն ցամքած պատրույգը կվկայեր, որ գիշերը մինչև ուշ ատեն տենդոտ տքնություն մը տեղի ունեցած էր հոն։ Եվ իրոք, Ատոմ Որբունի, թեև նոր մտած գրական ասպարեզը, բայց արդեն փայլուն ներկայացուցիչներեն մեկը Պոլսո գրական նոր ուղղության՝ գիշերը Մոպասանի հուզիչ նորավեպերեն մեկը խոր հառաչանքով մը փակելե ետքը՝ անոր ազդեցութենեն ներշնչված սկսած էր գրել նորավեպ մը, որ հակառակ կես գիշերը երկու ժամ անց երկար հսկումի մը՝ դեռ չէր վերջացած։ Գիշերը շատ խռով քուն մը ունեցած էր. իր դեռ կիսատ նորավեպին հերոսները՝ մեկը իր դեմքին նկարագրութենեն դժգոհ, մյուսը իր զգացումներուն ոչ բավական զորավոր պատկերացումեն նեղացած՝ քանի մը անգամ խթած արթնցուցած էին խեղճ գրագետը, որ ամեն անգամ բարձին տակեն թուղթ ու մատիտ մը հանելով, իր սնարին քով պզտիկ սեղանի մը վրա սպասող մոմին լույսին տակ՝ թելադրված սրբագրությունները կնոտագրեր։ Սակայն զինքը ամենեն ավելի տանջողը նորավեպին վերջավորությունն էր։ Քանի մը տեսակ վերջաբան միևնույն ժամանակ եկած պաշարած էին իր բազմաշարշար երևակայությունը, մեկը մյուսեն ավելի «աղվոր», մեկը մյուսեն ավելի սրտահույզ, ու հիմա չէր գիտեր, թե ո՞րը ընտրեր։ Եվ սակայն պետք էր վերջապես ավարտել գրությունը, ամիս մը կար, որ իր ստորագրությունը չէր երևցած թերթերուն մեջ։

Գրասեղանին առջև անցնելով, Ատոմ Որբունի ձեռքին մեջ հավաքեց անթիվ անգամ ջնջված ու սրբագրված թղթերը, զորս ինքն իսկ դժվար պիտի կարդար, եթե արդեն հաճախակի ընթեր-

ցումով գոց ըրած չիներ։ Ամբողջությունը անգամ մը աչքե անցուց, գիշերվան նոտագրության համաձայն անգամ մըն ալ սրբագրեց, հետո կրկին կարդաց ու աթոռեն վեր ցատկեց, հիացումեն չկրնալով ինքզինքը բռնել։

— Ըսելիք չկա, աղվոր է. ա՛խ, մեյ մը սա անպիտան վերջավորությունն ալ հարմարցնեի...

Ու անմիջապես երևակայեց իր այդ խազխազված էջերը թերթի մը առաջին սյունակներուն մեջ մաքուր ու մասնավոր խնամքով մը տպված ու տակը խոշոր տառերով Ա. ՈՐԲՈՒՆԻ... Հապա այն ահագին տպավորությունը, զոր իր շուրջը պիտի սփռեր։ Քանի՜ ծանոթներ փողոցին մեջ ձեռքը պիտի սեղմեին՝ «Ատ ի՛նչ աղվոր գրած էիք, մյուսյու Որբունի» բացականչելով. քանի-քանի՜ աղջիկներ պիտի արտասվեին ծածուկ ու քանի անուշ ժպիտներ պիտի քաղեր ծանոթ օրիորդներե... Ու վաղվան այս երանավետ հեռանկարեն զգլխած՝ Ատոմ Որբունի սկսած էր սենյակին շրջանը ընել ավելի ցատկելով, քան քալելով, երբ հանկարծ սենյակին դուռը բացվեցավ։

— Մեղա՛,— գոչեց տարիքը առած կին մը ներս մտնելով,— կես ժամ է դուռը կզարնեմ, չե՞ս իմանար, ի՞նչ կընեիր։

— Գործ ունիմ, մայրիկ, մի խանգարեր զիս,— պատասխանեց բանաստեղծը սրտմտած ձայնով մը։

— Կիրակի օրով ի՞նչ գործ է նորեն, տղա, ժամ ալ չեկար։ Աստուծմե չե՞ս վախնար, մինչև այս ատեն քնա՞լ կըլլա։

— Զիս հանգիստ ձգե կըսեմ, մայրիկ, չե՞ս հասկնար։

Մայրը հանկարծ սեղանին վրայի լապտերը նկատելով.

— Վայ, ձունը գլխուս, գիշերը նորեն լուսցուցեր ես. պիտի մեռնիս դուն, տղա, կամ պիտի խենթանաս կարդալուն երեսեն. քեզի քանի՞ անգամ ըսեր եմ, որ կես գիշերվընե առաջ տեղդ պառկիս։

— Տե՛, լավ, մայրիկ, հա՛ հերիք է, ալ աստվածդ սիրես գնա, քու խելքդ ամեն բանի չի հասնիր,— վրա բերավ Ատոմ ձայնը ավելի բարձրացնելով։

Խեղճ կինը լապտերը առավ ու դուրս ելավ,— «Դուն մինակ քու խելքիդ ես հավներ, խոսք մտիկ չես ըներ»,— մրմռալով քթին տակեն։

— Ո՜ւֆ, դե եկո՛ւր գրականությամբ պարապե ասանկ մար-

դոց մեջ,— զայրացած աղաղակեց Որբունի սենյակին դուռը ետևվեն փակելով և կրկին գրասեղանին առջև անցավ։

Գլուխը ձեռքերուն մեջ առած՝ պահ մը հուզումը հանդարտեցուց, մտածումները ամփոփեց ու գրիչը ձեռք առավ։ Քանի մը տող գրեց, ջնջեց, նորեն գրեց, սակայն անիծված վերջավորությունը չէր կազապարվեր, ու միտքը հետզհետե լարվելով՝ բանաստեղծը սկսավ բարձր ձայնով մենախոսել։

— Ամուսնացնե՞մ թե չամուսնացնեմ, ամուսնացնե՞մ թե չամուսնացնեմ... ամուսնացնեմ... չէ, չամուսնացնեմ...

Բայց ձայն մը հանկարծ սթափեցուց զինքը... սենյակին դուռը կրկին կբախվեր, արագ ու ամուր հարվածներով։

— Տե՛ր աստված,— պոռաց Ատոմ բարկությամբ աթոռը տակեն քաշելով,— ի՞նչ է նորեն, մայրիկ, զիս հանգիստ չպիտի՞ թողուս։

— Դուռը չբանաս, ծո՛,— լսվեցավ դուրսեն։

Ատոմ ճանչցավ անմիջապես իր ընկեր Տիգրան Ասապյանին ձայնը. աճապարանքով մը թղթերը հավաքեց գզրոցին մեջ խոթեց ու գնաց դուռը բացավ։

— Ատ ի՞նչ կընեիր ներսը, ծո՛,— հարցուց նորեկը իր նուրբ ձեռնափայտի գլխովը Ատոմին մորուքը խառնելով,— դուռը կզարնեմ, կզարնեմ, չես իմանար, ետևեն ալ ամուր մը փակեր ես։

— Խելքը վրան է քի դուռին ձայնը իմանա,— ձայն տվավ մայրը, որ միջանցքին մեջն էր,— զաղեթային բան կգրե նորեն։

— Զգե՛, ախպար, մի՛ հարցներ,— պատասխանեց Որբունի դուռը գոցելե հետո՝ գլուխը թոթվելով,— բան մը սկսած եմ գրել, չեն թողներ, որ վերջացնեմ. մեկը կելնե, մյուսը կմտնե սենյակս...

— Զըլլա՞ թե ես ալ կխանգարեմ քեզ։

— Չէ՛, չէ՛, ամենևին, կաղաչեմ նստե, աղեկ որ եկար, գրությունս վերջացնելու վրա եմ, միայն թե վերջավորությունը չեմ գիտեր ինչպե՞ս բերեմ. հիմա դուն խորհուրդ տուր ինծի։

— Շատ աղեկ. գրածդ մեյ մը կարդա՛, նայինք։

Ատոմը թղթերը գզրոցեն հանեց, ձեռքին մեջ այս կողմ, այն կողմ դարձուց տատամսոտ շարժումներով ու պատասխանեց.

— Չէ՛, բարեկամ, երեկ գիշեր սանկ կես ժամվան մեջ աճապարանքով մը գրած եմ, դեռ չեմ ալ սրբագրած, ավելի աղեկ է չկարդամ։

— Վնաս չունի՛, ճանը՛մ, կարդա՛, ես ալ բան մը գրած եմ, բերի, որ կարդամ քեզի։

— Անանկ է նե, առաջ դո՛ւն կարդա։

— Ա՛լ շատ նազ չեն ըներ, կարդայիր պիտի, կարդա՛։

— Չէ՛, չէ, հրատարակվելեն ետքը կարդաս ավելի աղեկ կըլլա. տպագրվածը ավելի զորավոր ազդեցություն մը կընե մարդու վրա, քան ձեռագիրը. հիմա մինակ սկիզբը կարդամ, ետքեն ալ պարունակությունը բերանացի պատմեմ, դուն կարծիքդ հայտնե։

Ատոմ իր աթոռին վրա ավելի լավ տեղավորվեցավ, քանի մը անգամ հազալով կոկորդը մաքրեց ու սկսավ.

— Առտվան անուշիկ զովությունը հեշտորոր զեփյուռին թեթև թևերովը ամառվան աղվոր բնությունը սկսած էր գգվել և արևը իր մոր արգանդը արյունելով դուրս կսողար ու պուրակին սաղարթախիտ ծառերուն մեջեն պրիսմակվելով իր բոց ասեղները կցրցքներ ծովուն լուրթ հայելիին վրա։ Օդին մեջ հասմիկի ու մեխակի գինովցնող բույր մը ցանցնված էր ու թռչունի աղվոր այգերգներ դարձդարձիկ պտույտներով խոլ հոսանք մը կվազցնեին եթերին մեջ։ Այդ պահուն համակ թույր ու բույր էակ մը՝ ծովուն եզերքը ժապավինող արահետին նուրբ փոշիները իր երկնային ոտքերուն քնքուշ հպումովը սարսռեցնելով կճեմեր։ Կարծես Ատղիկն ըլլար, որ առտվան մշուշին մեջ իր լոգանքը առնելե ետքը իր շրջագայությունը կկատարեր։ Արշալույսի մեղկ ճառագայթ մը կհամբուրեր իր կնոջական կաթ ծոծրակը, ուր ինկած մազի սիրուն գանգուրները իրենց զինով, հեշտանքոտ շոյանքը կուտային անոր փափուկ միսերուն։

— Ինտո՞ր է,— հարցուց Ատոմ Որբունի, թղթերը գրպանը խոթելով։

— Շարունակե՞ս։

— Սկիզբը աս է, մնացածը բերանացի պիտի պատմեմ, դուն հիմա ասչափին համար կարծիքդ հայտնե։

— Փե՛ք խրյախ է, անկեղծորեն կըսեմ. մանավանդ սա արևի ծագումի պատկերը սքանչելի է, սակայն «իր շրջագայությունը կկատարեր» նախադասությունը աղվոր չէ փախեր. գրվածքին «effect»-ը կկոտրե կոր. առանկ հինցած, banal բացատրություններ գործածելե պետք է խուսափիլ։ Զորօրինակ, ատ նախադասությունը սապես փոխես ինտո՞ր կըլլա— «իր գեղեցկությունը կթափորեր բնության մեջեն»։

— Ո՜հ, ատիկա հրաշալի պատկեր մըն է,— գոչեց Որբունի, տեղեն վեր ցատկելով.— «իր գեղեցկությունը կթափորեր», այսինքն թափորի մը հանդիսավորությունովն ու սրբությունովը կպտտցներ բնության մեջեն... սակայն «թափորել» բառ կա՞։

— Ատ ալ խո՞սք է,— պատասխանեց Տիգրան Ասապյան քիչ մը վիրավորված,— եթե չի կա, կշինենք, ուրիշ բառ շինողները մեզմե ավելի գրագետ չեն յա։

— Ատոր տարակո՞ւյս կա,— ըսավ Ատոմ ու անմիջապես գրպանեն թուղթը հանելով որոշված սրբագրությունը կատարեց. և լսած գովեստներեն ոգևորված ոտքի ելավ ու ձեռքը Ասապյանի ուսին դնելով.

— Հիմա նորավեպիս պարունակությունը պատմեմ, մտի՛կ բրե։ Ատ՝ ինչպես շատ գեղեցիկ կերպով գտար, իր գեղեցկությունը թափորող աղջիկը, որուն անունը Նվարդ դրած եմ՝ զավակն է հարուստ ընտանիքի մը, որ ծովեզերյա գյուղ մը ամառանոց ելած է։ Նվարդ, որ կրթված, զգայուն ու բանաստեղծական սրտի տեր աղջիկ մըն է (կերևակայես, անանկ չէ՞, մեր... Վարդանուշին պես հրեշտակային բան մը), սովորություն ունի ամեն առտու պտույտ մը կատարել ծովուն ափը։ Ատ պտույտներեն մեկուն միջոցին կհանդիպի Մուշեղին, ձկնորս երիտասարդ մը, որ իր առնական ու արևելյան տիպար գեղեցկությամբ կազմվածքովը Նվարդին սիրտը կգերե։ Տղան ալ աղջկան աղվորությենեն կհափշտակվի և վերջապես օր մը պուրակին մեկ առանձնությանը մեջ իրարու սիրտ կբանան։ Սակայն աղջիկը երբ իր սերը ծնողքին կհայտնե, ասոնք սաստիկ կբարկանան ու խստիվ կմերժեն իրենց հավանությունը։ Հիմա՛, իշտե, հոս եկեր կեցեր եմ. չեմ գիտեր, ամուսնացնե՞մ թե չամուսնացնեմ։ Մեյ մը սապես կմտածեմ, աղջիկը օր մը նավարկելու կերթա, հանկարծ նավակը շրջվի և Մուշեղ ալ, որ մոտերը ձուկ կորսա, արկածը տեսնելով ծովը նետվի և աղջիկը ազատե, ու ասոր վրա ծնողքը հուզված իրենց աղջիկը իր ազատարարին տան։ Մեյ մըն ալ կմտածեմ սանկ tragique կերպով վերջացնեմ. Նվարդ իր ծնողքին հետ քաղաք վերադառնա, ծնողքը խիստ հրսկողություն ընեն վրան, անանկ, որ ալ Մուշեղը չկրնա տեսնել և սրտին ցավեն թոքախտի ենթարկվելով մեռնի։ Մուշեղն ալ իր սիրուհին մահվան լուրը առնելուն ինքզինքը ծովը նետե կամ խենթենա...

— Ատ խենթենալը ձգե,— գոչեց հանկարծ Տիգրան Ասապյան, որ բավական սրտնեղությամբ մտիկ ըրած էր ամբողջ պատմությունը։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա որ,— հարցուց Ատոմ զարմացած։

— Բան մը չի կա, միայն թե իմ նորավեպս ալ խելագարությամբ կվերջանա, դուն ուրիշ բան մը ընտրե։ Արդեն քուկինդ տեղ-տեղ անչափ նման է իմ նորավեպիս ,որ կարծես թե ինծմե առած ըլլաս։

— Ինչպե՞ս կրնամ քեզմե առած ըլլալ ծո, խըյանե՛թ, երբ դեռ երեսը չեմ տեսած գրածիդ։

— Ըսել չեմ ուզեր, թե ինծմե առած ես։ Ատ նմանությունը երկուքնուս ալ գրական նույն դպրոցին պատկանելնես հառաջ կուգա. և արդեն տարբերություններ ալ շատ կան. զորօրինակ, իմ նորավեպիս աղջկան անունը Սաթենիկ է, տղուն անունը Միհրան. իմ նորավեպիս մեջ աղջիկն ու տղան վերջալույսին կսիրահարին, մինչդեռ քուկինդ մեջ արշալույսին. դուն անտառի մեջ ես սիրահարեցուցեր, մինչդեռ ես նավակին մեջ և այլն։ Սակայն վերջավորությունները իրարմու նման ըլլան նե աղեկ չըլլար։

— Ինչպե՞ս պիտի ընես. իմ կարծիքովս ամուսնացնելը պաղ կփախչի. ատ տնսակ վերջավորությունը հին ռոմանթիկ դպրոցին հատուկ է, մինչդեռ նոր, իրապաշտ ուղղությունով վեպերը միշտ tragique վերջավորություն մը կունենան։

— Ուրեմն չամուսնացնե՞մ, կըսես. խենթացնելն ալ քո նորավեպիդ մեջ կա. հապա ինչպե՞ս ընեմ. ծովուն մեջ խեղդեմ տղան։

— Ատիկա էն աղեկն է, քանի որ տղան ալ ձկնորս է արդեն։

— Իսկ աղջի՞կը, թոքախտե՞ մեռնի, թե ատրճանակով ինքզինքը սպանե։

— Ատրճանակո՞վ. ատիկա ալ գեշ չէ, սանկ դյուցազներգական բան մըն ալ կմտնա մեջը... սակայն չէ, թոքախտե թող մեռնի, ատանկ ավելի քնքուշ կըլլա և ավելի սրտառուչ. մանավանդ նկարագրական աղվոր պատկեր մըն ալ կրնաս դնել մեջը, թե ինչպես աղջիկը հիվանդությենեն սանկ մեղրամոմի պես կհատնի։

— Իրավ, ատիկա խըյախ վերջաբան մը կըլլա, ուրեմն լմընցավ, հիմա քուկինդ կարդանք,— գոչեց Ատոմ ուրախությենեն ծափ զարնելով։

Ու երկու բարեկամներ սկսան կարդալ մյուս նորավեպը, որ իսկապես հեղինակին քիչ առաջ թված տարբերություններով միայն

կզանազաններ առաջինեն։ Եվ ավելորդ է հիշել, թե ընթերցանության պահուն Ատոմ Որբունի տոկոսով հանդերձ կհատուցաներ ի ընկերոջ գովեստները։

* * *

Երկու օր հետո խմբագրատունե մը կելներ Ատոմ Որբունի, թերթ մը ձեռքը և երանության ժպիտը շրթունքներուն։ Փողոցներեն հաղթական քալվածքով մը կանցներ և իրեն այնպես կթվեր, թե բոլոր անցորդներուն ուշադրությունը իր վրա դարձած էր, այդ պատճառով գետին կնայեր, համեստության դեմ չմեղանչելու համար։ Նորավեպը այդ օրը լույս տեսած էր թերթի մը մեջ, խմբագրության կողմե հետևյալ ծանոթությամբ.

«Մեր ներկա թվով կհրատարակենք մեր տաղանդավոր աշխատակից Ա. Որբունիի մեկ հոյակապ ու գողտրիկ էջը, որ վստահ ենք, թե հուզումի արցունքներ պիտի խլե մեր զգայուն ընթերցողներու աչքերեն»։

Եվ միևնույն թերթի միևնույն համարին մեջ հետևյալ ծանոթությունն ալ կար.

«Մեր վաղվան թվով պիտի հրատարակենք մեկ վսեմ նորավեպը մեր հանրածանոթ աշխատակից Տիգրան Ասապյանի»։

ՀՈՍՀՈՍՆ ՈՒ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԸ

Մելիք-Քյալլաբաշյան ինք ալ ճշտիվ չէր կրնար ըսել, թե փրկչական ո՞ր թվականեն ի վեր հաստատված էր Լայպցիգի Դյուֆուր փողոցին թիվ 6 տան այդ բարձունքը։ Այսքան միայն կհիշեր, որ նոր եկած ատենները տանտիկնոջը մեկհատիկ որդին, որ հիմա ամուսնացած և տղու մը ալ տեր էր՝ իր բացակայությանը հաճախ սենյակը մտնելով իրեղենները տակնուվրա կըներ։ Իսկ Ֆրաու Այզըլե (այսպես կկոչվեր տանտիկինը) այդ անհիշատակ ժամանակներեն ի վեր իր սիրական կատուներուն բազմաթիվ սերունդները փայփայելու երջանկությունը վայելած էր։ Վաղեմի այս ուսանողը ինչ որ պատմեր միջոցը տարիներով կհաշվեր, ժամանակի մյուս պզտիկ չափերը կարծես գոյություն չունեին իրեն համար։

Շուշեցի էր պարոնը. տեղին բեալական գպրոցը ավարտելեն

պես վճռած էր արտասահման անցնիլ «մտավոր պաշար ձեռք բերելու և ապագայում մեր հասարակական խավար ասպարիզում լուսավորության դամբար հանդիսանալու»։ Նյութական միջոցները կպակսեին, բայց աղոր ալ ճարը գտնվեցավ։ Բագվի մեջ ունեցած քանի մը բարեկամներուն միջնորդությամբը հաջողեցավ բարեբար մը գտնել և հասավ Լայպցիգ։ Քանի մը ամիս պանսիոնի մը մեջ ապրելով գերմաներենը քիչ մը սորվելե հետո՝ երբ կարգը եկավ համալսարան մտնելու, դժվարին և տանջող հարց մը բուն դրավ անփորձ երիտասարդին գլխուն մեջ—ի՞նչ մասնագիտություն ընտրել։ Դասախոսություններու ցանկը ձեռքը՝ ժամերով կմըտմըտար։ Երևակայեցեք երեխա մը, մեկը մյուսեն ավելի հրապուրիչ զանազան պտուղներով բեռնավորված սեղանի մը առջև՝ ադոնցմե մեկնումեկը ընտրելու կաշկանդումեն շվարուն։ Ճիշտ նույնն էր Մելիք-Քյալլաբաշյանին ալ վիճակը. վիճակ մը սակայն՝ ուրկե արդար լինելու համար պետք է ըսենք՝ անցած են ու պիտի անցնին բոլոր ուսանողները գրեթե առանց բացառության։ Ինք նախապես մտադրած էր բնական գիտություններու հետևիլ, լա՜վ. բայց մի՞թե նվազ հետաքրքրական էր զորօրինակ պատմությունը, իսկ գրականությո՞ւնը, մաթեմաթի՞կը, բժշկությո՞ւնը, որ փայլուն ապագա կխոստանար, հապա հասարակական գիտությո՞ւնը, որ անհրաժեշտ էր յուրաքանչյուր հասարակական գործիչի համար, և այլն, և այլն։ Երկար մտատանջութենե ետքը՝ ժամանակ չկորցնելու փութկոտությունը ստիպեց զինք բնական գիտություններու արձանագրվիլ, մինչև հաջորդ կիսամյակ վերջնական ընտրություն մը ընելու վերապահությամբ։ Հաջորդ կիսամյակին գործը բժշկության շրջեց, սակայն ադ ալ հոգեկան անդորրություն մը չբերավ իրեն, հետևաբար զինք տանջող հակամարտ ախորժակներու մղումին անձնատուր՝ շարունակեց տաժանելի տեղափոխությունը, մինչև որ բոլոր ֆակուլտետներու շրջանը ընելե հետո՝ շնչասպառ եկավ թառեցավ հասարակական գիտություններու վրա։ Հոն ալ մնաց։ Այս երկար շրջանին մեջ արդեն քանի մը բարերարներ հուսահատաբար դադրեցուցած էին ռուբլիներու առաքումը, սակայն Մելիք-Քյալլաբաշյան ամեն անգամին ալ արշավանք մը կատարելով դեպի Բագու, վերադարձած էր ստիպենդիայի նոր ավարով մը։ Եվ ամեն անգամ, որ այս կարգի դրամական տագնապներու—կամ իր իսկ բացատրությամբը—«փողային կրիզիսներու»—մատնվեր, չէր կրնար զսպել զայրույթի քանի մը ար-

ցականություններ իր հանգուցյալ հորը հասցեին։ Անհեռատես մարդը, ելեր իր դրամները վատներ էր Շուշիի շրջակայքը կալվածներ գնելու, որոնց հասույթը հազիվ կգոցեր իրենց տան տարեկան ծախքը։ Մինչդեռ եթե այդ գումարով Բագվի մեջ հողեր գնած ըլլար, այսօր հոն քանի մը փոս փորել տալով պիտի կրնային կնյաշի պես ապրիլ, առանց «բուրժուա շանորդիներին» բերան ծռելու։

Սակայն ճշմարտության դեմ մեծ մեղանչում մը ըրած պիտի ըլլայի, եթե իր կենսագրության այս համառոտ գլուխը փակեի, առանց շեշտելու, որ Մելիք-Քյալլաբաշյան ծույլ մը չէ։ Չեք կըրնար գտնել խոսակցության նյութ մը, որ զինք լռության դատապարտե։ Ամեն բանի կհետաքրքրվի և ամեն ճյուղե ալ կկարդա, թեև հաստ հատորներե շատ չի ախորժիր և ավելի կսիրե բրոշյուրները, որոնք այնչափ շուտ կվերջանան և այնչափ ալ ճոխ մթերք կհայթայթեն վիճաբանության ու թղթակցություններ գրելու։

* * *

Եթե կար բան մը, որ բնավ չէր զբաղցներ շուշեցի այս ինտելիգենտին միտքը՝ ան ալ ապահովաբար իր սեփական կյանքն էր, իր ո՞ւրկե գալը և ո՞ւր երթալը։ Ուստի շատ կսխալիք, եթե կկարծեք, թե այս պահուս իր սենյակին մեջ ճեմելով այդ ջուխտ մը անախորժ հարցումներու մասին կմտածեր ան։ Մարդուն մտածումը արդեն վաղուց սկսած էր խրտչիլ իր անցյալին մթությունների մեջ խորասուզվելե, իսկ ապագային մեջ աչքերը ալ ուրիշ բան չէին ջոկեր, բայց եթե աղոտ ու սրտառուչ հեռապատկերը գիտության պարիսպներուն վրա վերջին շունչը փչող ուսանողի մը։ Մանավանդ որ գլուխն ալ առհասարակ մտածելու վիճակի մեջ չէր այսօր։ Գիշերը ուշ ատեն վերադարձած էր ռուս ուսանողության երեկույթեն և այդ պատճառով բավական ուշ արթնցած, այսինքն՝ ժամը 12-ին։

Ճաշի տեղ նախաճաշով գոհանալե ետքը, սենյակին մեջ վերվար կքալեր «մի օպերա շվացնելով»։ Տաբատը և ժակետը միայն հագած ըլլալով՝ օձիքին բացվածքեն կուրծքի թավ անտառին մուտքը կերևնար։ Այդ անխնամ վիճակին մեջ ավելի աչքի կզարներ զարաբաղցի հայու իր անխարդախ տիպը։ Հասակը չէր կրնար երկարությամբը պարծենալ, բայց լայն թիկունքն ու մկանուտ

թևերը անթերի առողջություն մը կավետեին։ Դեմքին մազերը՝ կարծես բնութենեն իրենց հատկացված սահմանները նեղ գտնելով՝ սկսեր էին ոտնձգություններ ընել դեպի դրացի խոպան մասերը։ Գլխուն ծամերը մանավանդ՝ վայրենի դեղեցկություն մը կցուցադրեին իրենց խենթ աճումովը, լերան գագաթը բուսած մացառքի նման, որուն դպած չէ բնավ պարտիզպանին հատոցը։ Իսկ սենյակը իրեն հակապատկեր մը չէ, որ կպարզեր այդ պահուն։ Սեղանին վրա, գրքերու շեղջակույտին ստորոտը կհանգչեր նախաճաշի ափսեն. սենյակի չորս կողմը ցիրուցան աթոռներեն մեկուն կոնակեն կախված էր շապիկ մը, մյուսին վրա աղտոտ վարտիք մը, երրորդին վրա սեցած օձիք մը։ Գործածութենե նոր ելած զույգ մը գուլպաներ հատակին վրա կսողային. բազմոցին վրա զգեստին դեռ չհագնված մասերը կսպասեին, թևնոցներեն մեկը սեղանի գրքերուն բարձունքեն, մյուսը՝ սեղանին տակ, կարծես զիրար կփնտրեին։ Անկողինը իր արտասովոր տակնուվրայությամբ գիշերվան հուզումները կպատմեր։ Դռան ետև կախված էին երկու վերարկու և բազմաթիվ մաշած տաբատներ, զանազան կիսամյակներու փառքին անփառունակ վկաները։

Մելիք-Քյալլաբաշյան այս շքեղություններու մեջ անտարբեր՝ իր ճեմքը կշարունակեր, երբ հանկարծ սենյակին դուռը բաղխվեցավ.

— Հեռայն (մտեք),— պոռաց շուշեցին քնատութենե ավելի խոպոտած ձայնովը։

Սակայն բաղխումը կրկնվեցավ և ինք սրտնեղած՝ դեպի դուռը կուղղվեր բանալու, երբ լսեց տանտիկնոջ ձայնը, որ կես ֆրանսերեն, կես գերմաներեն՝ կըսեր.

— Մտե՛ք, մտե՛ք, ներսն է պարոնը։

Դուռը բացվեցավ. երիտասարդ մըն էր եկողը, մաքուր սև զգեստներ հագած՝ խնամոտ արդուզարդով մը, իսկ դեմքը առաջին ակնարկին կհիշեցներ սափրիչներու խանութները կախված հայտարարություններու պատկերները։ Գլխու արագ հակումներու ընկերացած ժպիտով մը՝ տանտիկնոջ «Մերսի, մադամ, մերսի» մը ուղղեն հետո՝ ներս մտավ։ Նույն անույշ ժպիտը երեսին, եղեգե ձեռնափայտն ու սիլինդր գլխարկը ձեռքը, նուրբ մեջքը ուղղանկյուն մը կազմելու աստիճան ճկելով բարևեց Մելիք-Քյալլաբաշյանը։

— Պատիվ ունիմ ինքզինքս ներկայացնելու Ձեզ. Սուրեն Շա-

վարշ, շրջանավարտ Կեդրոնական վարժարանեն։ Հոս եկած ես ուսանելու։ Ժընևեն անցնելուս՝ Ձեր ազնիվ բարեկամներեն պարոն Լիլավյան, որուն հետ ծանոթանալու հաճույքը ունեցա՝ հաճեցավ ազնվորեն Ձեր հասցեն և Ձեզի ուղղված հանձնարարական նամակ մը տալ ինծի։ Արդ՝ կխնդրեմ, որ կարդաք զայն և չզլանաք ինծի Ձեր թանկագին աջակցությունը, որուն համար հավիտյան երախտապարտ պիտի մնամ Ձեզի։

Եվ այս ամբողջը գրեթե մեկ շունչով արտասանելե ետքը՝ նամակը տվավ Մելիք-Քյալլաբաշյանին, որ բերանն ու աչքերը խոշոր-խոշոր բացած՝ շլմորած մնացած էր այս մուտքի ճառին տպավորության տակ։ Քիչ մը սթափեցավ, երբ նամակը ձեռքն առավ։

— Խնդրեմ նստե՛ք,— ըսավ իր անհավատալի հյուրին դառնալով և շվարուն արտորանքով մը՝ աթոռները գրավող իրերը հավաքեց ու պահարանին մեջ փակեց։— Ներողություն, սպիտակեղենս փոխել եմ, այդ պատճառով սենյակս մի քիչ անկարգ դրության մեջ է։

— Ո՞հ, կաղաչեմ,— հարեց քաղաքավարի հյուրը աթոռ մը առնելով,— ընդհակառակը ես պետք է ներողություն խնդրեմ, որ ասանկ անսպառեհ ժամանակ մը Ձեզ անհանգիստ ըրի, սակայն ուրիշ կերպ չէի կրնար ընել, որովհետև բոլորովին անծանոթ եմ քաղաքին։

Մելիք-Քյալլաբաշյան հանձնարարական նամակը կարդալե ետքը, ինք ալ իր կողմեն քաղաքավարի ըլլալու ճիգով մը խոսակցությունը բացավ։

— Թույլ ե՞վեք հարցնել, որտեղացի՞ եք։

— Բնիկ մայրաքաղաքացի եմ,— պատասխանեց նորեկը ինքնագոհ շեշտով մը։

— Այսինքն Կոստանդնուպոլսե՞ց։

— Այո, այո, Պոլիսեն։

— Ի՞նչ եք ուզում սովորել։

— Գլխավորաբար գրականություն,— պատասխանեց Սուրեն Շավարշ ու ձայնը խորհրդավոր կերպով մը ցածցնելով՝ ավելացուց,— և... քիչ մը սոսիալիսթություն։

— Ուրեմն հասարակական գիտությունն՞ր էլ եք ուզում լսել։

— Ո՛չ, ո՛չ,— գոչեց մայրաքաղաքացին վիրավորված ձևով մը, սխալ հասկնալով հասարակական բառին իմաստը, որ Պոլիս գործածական չէ,— հասարակ գիտությունները արդեն Պոլիս Կեդրոնականին մեջ սորված եմ, իսկ հոս եկած եմ բարձր գիտություններ սորվելու։

Ու կրցածին չափ շեշտեց «բարձր» բառը։

Ղարաբաղցին, որ «հոսհոսների լեզվին» այնչափ ալ ծանոթ չէր՝ շատ բան մը չհասկնալով այս թյուրիմացութենեն՝ չծանրացավ վրան ու իր հարցումները շարունակեց։

— Ուղիղ Պոլսե՞ց եք գալիս։

— Այո, սակայն ճամբան բավական ուշացա. ամիսի չափ ստիպվեցա Մարսեյլ մնալ զանազան կարևոր գործերու համար, շաբաթ մըն ալ Ժընև նախկին դպրոցական ընկերներս վար դրին. անպիտանները այնչափ կարոտցեր էին զիս, որ դեռ երկար կուզեին քովերնին պահել, բայց ես չկեցա, ըսելով, որ օր մը առաջ աշխատություններուս պետք է սկսիմ։

— Գերմաներեն իմանո՞ւմ եք արդեն։

— Շատ քիչ բան մը, գրեթե չեմ գիտեր. Պոլսո գերմանական վարժարանը հաճախող բարեկամներես սանկ քանի մը բառեր սորված եմ ֆրոյլայն, ֆրաու, fнս, մուքըր, լիպե, թոխքըր. բայց կարծեմ դժվար չպիտի ըլլա սորվիլը։

— Ասենք էնքան էլ հեշտ չի, բայց վերջապես կարելի է սովորել, մանավանդ որ տաճկահայերդ լեզուներ հեշտ եք սովորում։

— Այո, այո, աղեկ ըսիք,— հաստատեց տաճկահայը մեծ հրճվանքով,— զորօրինակ ես հայերենե զատ գիտեմ ֆրանսերեն, թուրքերեն, անգլերեն և քիչ մըն ալ հունարեն, որ շատ դյուրությամբ սորված եմ։

— Ուրեմն կմնա՞ք այստեղ,— հարցուց ռուսահայը, խոսակցությունը իր բուն նպատակին դարձնելու դիտումով։

— Այո՛, այո՛, առնվազն կիսամյակ մը պիտի անցնեմ հոս, թեև մտադիր եմ Գերլին ալ երթալ, սակայն հետո երբ լեզուն լավ մը սորված ըլլամ։ Անշուշտ ինծի համար ավելի դյուրին էր Փարիզ ուսանիլ, որովհետև ֆրանսերենի մեջ շատ զորավոր եմ, սակայն ես կուզեմ գերմանական կրթություն առնել. գերմանական կրթությունը այսօր աշխարհի մեջ առաջինն է. անանկ չէ՞։

— Անշուշտ այդպես է. ուրեմն սենյակ պիտի վարձեք, թե ուզում եք պանսիո՞ն մտնել, լեզու սովորելու համար։

— Լեզուն փանսիոնի՞ն մեջ կսորվեցնեն։

— Դրսում էլ կարելի է սովորել, բայց, իհարկե, ավելի հեշտ

կլինի պանսիոնում, էնտեղ առիթ ունեք խոսելու, իսկ դրսում դա մի քիչ դժվար կլինի։

— Անանկ է նե փանսիոն կմտնամ, սակայն դրամական տեսակետով տարբերություն մը կընե՞։

— Ինչպե՞ս։

— Ըսել կուզեմ փանսիոն մտնալը աժան կնստի, թե սենյակ վարձե՞լը։

— Նու, ասենք տարբերությունը էնքան էլ մեծ չէ, բայց լավ պանսիոնը, իհարկե, մի քիչ թանկ կլինի, ամսական գոնե մի 100 մարկ կպահանջեն։

— Ի՞նչ կըսեք, եղբայր, ատիկա ահագին գումար մըն է,— գոչեց Սուրեն այլայլած,— հարյուր մարքով Պոլիս տուն մը կապրի. չէ, սիրելիս, ես այդչափ ստակ չեմ կրնար տալ։

— Բայց դրսում էլ դրանից պակասով հազիվ թե կարողանաք ապրել, իհարկե, եթե չեք ուզում վատ ապրել։

— Ինչ կըլլա, եղբայր, ուսման սիրուն քիչ մըն ալ գեշ կապրիմ. Փարիզ ընկերներ ունիմ, որոնք առանց ստակի կապրին, ես նորեն ամսական 60—70 ֆրանկ մը ստանալու հույս ունիմ։

— Նու— դա ջոկ հարց է, էդ դեպքում շատ էժան սենյակ պետք է վարձեք։

— Այո, այո, կարելի եղածին չափ աժան. կաղաչեմ մի խնայեք Ձեր աջակցությունը, որովհետև ես իմ գլխուս բան մը չեմ կրնար ընել, ոչ լեզու գիտեմ, ոչ ալ քաղաքին ծանոթ եմ։

— Ես սիրով կանեմ, միայն թե էսօր, էգուց չէ կարելի մի այդպիսի սենյակ ճարել, պետք է երկար ման գալ և կամ լրագրում հայտարարություն տալ։

— Ալ դուք գիտեք, կաղաչեմ ինչպես որ պետք է անանկ ալ կարգադրեցեք, շնորհապարտ կկացուցանեք զիս։

— Դուք ո՞րչափ ժամանակ ի վեր Եվրոպա եք,— խոսակցության նյութը փոխեց պոլսեցին, իր գործը արդեն կարգադրված համարելով։

— Ես... բավական ժամանակ է ինչ այստեղ եմ,— պատասխանեց հավիտենական ուսանողը, խոսակցության այս փոփոխումեն զգալապես սրտնեղած,— բայց սկզբում զանազան առարկաներ եմ լսել, էնպես, ընդհանուր կրթության համար, այնպես որ իսկապես մասնագիտությամբ պարապվելս հազիվ մի քանի տարի կլինի։

Ու այս անախորժ հարցուփորձին շարունակությունը խափանելու համար անմիջապես տեղեն ելնելով հարցուց.

— Թեյ խմո՞ւմ եք։

— Կաղաչեմ, չափազանց ազնիվ եք, ինչու ավելորդ հոգնություն կքաշեք. արդեն առանց ադոր ալ բավական նեղություն բարդեցի վրանիդ։

— Ոչինչ, նեղության բան չկա, ես ինքս էլ եմ ուզում խմել,— ըսավ Մելիք-Քյալլաբաշյան ու սկսավ թեյի պատրաստություն տեսնել։

Այդ առիթեն օգտվելով Սուրեն Շավարշ թերթերու ծրար մը հանեց գրպանեն ու սկսավ աչքե անցնել։

Երբ հյուրասեր ղարաբաղցին թեյը վրա դնելով կրկին իր տեղը նստավ, շատ ուրախացավ տեսնելով, որ իր անխորհուրդ հյուրը զբաղում մը գտած էր և փութաց ընդհատված խոսակցությունը այդ նյութին վրա դարձնել։

— Պոլսական թերթե՞ր եք կարդում։

— Ո՜հ, կներեք անքաղաքավարությանս,— գոչեց Սուրեն թերթերը ժողվելու շարժում մը ընելով,— չեմ կարդար, միայն հարևանցի կերպով մը կնայիմ, թե գրական ի՞նչ նորություններ կան։ Մարսելյեն մեկնելու օրերս Լայպցիգ poste nestante հասցե տված էի, հոս հասնելուս պես նամակատուն հանդիպեցա, առի, սակայն դեռ չէի բացած։

— Ոչինչ, ոչինչ, խնդրեմ կարդացեք,— քաջալերեց Մելիք-Քյալլաբաշյան։ Հոսհոսին ուզածն ալ ադ էր. անմիջապես թերթերեն մեկը երկնցուց անոր։

— Եթե կհետաքրքրվիք, մեկ հատն ալ դուք աչքե անցուցեք, զորօրինակ սա հոդվածը գեշ չէ։

Ղարաբաղցին ակնարկ մը նետեց ցույց տրված հոդվածին վրա, որ Ճամբու նոթեր վերնագիրը և Ֆանթազիո ստորագրությունը կկրեր։

— Ինչացո՞ւ է էդ Ֆանտազիոն, Պոլսում հայտնի գրո՞ղ է։

— Բավական հայտնի,— ըսավ հոսհոսը և պահ մը խորհրդավոր կերպով ժպտելե հետո ավելցուց,— ձեզի պես բարեկամե մը ինչ պահեմ. ատիկա իմ գրական անունս է. աղվոր ծածկանուն է, չէ՞. սակայն պիտի աղաչեի, որ մարդու չըսեք, որովհետև ընդհանրապես հոդվածներս մեծ աղմուկ հանած են, ամեն ոք կհետաքրքրվի իմանալու, թե ո՞վ է գրողը. բայց ես չեմ ուզեր, որ

Ես ըլլայս գիտնան, ասանկ ավելի խորհրդավոր կըլլա։ Կաղաչեմ, եթե կհաճիք, դուք ալ կարդացեք և ձեր հեղինակավոր կարծիքը հայտնեցեք. թեև ասիկա աղվոր գրություններես չէ, մեկ մասը շաբաթկաթին մեջ և մյուս մասն ալ Մարսելյ գրված թռուցիկ բաներ են։ Ափսո՜ս, որ լավագույն հոդվածներս հիմա քովս չեն, պայուսակիս մեջ են. սակայն անգամ մը տեղավորվիմ նե անոնք ալ կբերեմ ձեզի։

Տարաբախտ շուշեցին քաղաքավարության համար ստիպված էր կամ կարդալ և կամ կարդալ ձևացնել։ Մինչդեռ հարևանցի ակնարկով մը հոդվածին երկարությունը չափելու վրա էր, հանդիպեցավ նախադասության մը, որ կարծես աչքերն ու ուղեղը միանգամայն վիրավորեց։ Շշմած դեմքով մը քանի մը անգամ կարդալե հետո դարձավ հեղինակին։

— Ախր սա ի՞նչ է նշանակում, ի՞նչ եք կամեցել ասել էս ֆրազով. Ու գարեջուրի գավաթները իրենց բյուրեղի ճնշուն շռինդովը եղբայրորեն իրարու զարնվելով անհուն տրտմությունով մը ճառաչեցին։

— Այո՛, իրավունք ունիք հարցնելու,— բացատրեց Սուրեն ուսուցանողի լրջություն մը հագնելով,— որովհետև ատիկա չափազանց գրական նկարագրություն մըն է, ատիկա պետք եղածին պես հասկնալու համար պետք է, որ ներկա ըլլայիք մեր այդ հավաքումին։ Մարսելյեն մեկնելուս նախընթաց բարեկամներս ինծի ոգեբերթ մաղթելու համար սրճարանի մը առանձնասենյակը ժողովված էին, անոնցմե մեկը իր աղվոր, հնչական ձայնովը Վերհարնի մեկ նոր սքանչելի կտորը կկարդար և այդ հոգեզմայլ տողերուն հեշտաբոր տպավորությանը տակ՝ մեր հիացումի ընդարմացումը գարեջուրով կդողդողացնեինք։ Բաժակները անընդհատ իրարու կհաջորդեին ու կերևակայեինք, որ այդ բաժակները իրարու զարնվելով սանկ հառաչանքի պես ձայներ մը կհանեին։ Սանկ պահ մը երևակայեցեք ու ան ատեն պիտի հասկնաք, անանկ չէ՞։

— Նու, չորտ եվո զնայետ, հասկանալի է,— մրմռաց Մելիք-Քյալլաբաշյան թավ հոնքերը կիտելով։

Եվ քիչ մըն ալ հոդվածին պոչեն, ծայրեն կարդալե հետո՝ թերթը սեղանին վրա դրավ, քթին տակեն խնդալով։

— Ինտո՞ր է, հավնեցա՞ք,— հարցուց անմիջապես Ֆանթազիոն։

— ...Վատ չի, միայն թե, տաճկահայերդ խոսքեր շատ եք գործածում, դրանով գրվածքի էներգիան կորչում է. այ, օրինակ, այստեղ մի խոսք կար, որը ես մինչև անգամ չկարողացա կարդալ։

Եվ թերթը կրկին ձեռքն առնելով հիշյալ բառը գտավ ու ծիծաղը հազիվ զսպած՝ ցցուց հոդվածագրին։

— Ասիկա չկրցաք կարդալ,— բացականչեց Սուրեն զարմացած,— սակայն շատ պարզ է տպված, խոյանք։

— Ի՞նչ է նշանակում դա։

— Խոյա՞նք. կնշանակե խոյի պես վրա վազել. ատիկա խոյանալ, խոյ (այսինքն արու ոչխար) բառերեն կծագի և ֆրանսերեն élan, élancement բառերուն կհամապատասխանե։

— Որ էդպես է, ասենք ոչխարի նման վազ տալ պրծնի գնա, էլ ի՞նչ եք այդպիսի տգեղ խոսքեր թխում, մեր լեզուն արդեն առանց այն էլ բավական տգեղ է, իսկ այդպիսով դուք նրան ավելի եք տգեղացնում։ Այ, օրինակ, մի ուրիշ խոսք— և դեմքի սոսկալի ծամածռությամբ մը արտասանեց— ժո-ղո-վր-դա-կան. Ֆո՛ւյ, ի՛նչ վատ խոսք է, այդ մեր անպիտան կոնսոնանտները երբեմն մի այնպիսի դիսոնանցիա են առաջ բերում, որ կրթված ականջները չեն կարողանում տանել. ինչո՞ւ գործ չածել ուղղակի պոպուլեր խոսքը, որը բոլոր կուլտուրական լեզուներում ընդունված է և վեր կենալ էդ տեսակ սարսափելի խոսքեր թխել։

— Ի՞նչ խոսք պետք է գործածել ըսիք,— հարցուց խեղճ հոսհոսը, որ ապշած մտիկ կըներ դժբախտ հայ լեզվի այս տարօրինակ բարենորոգչին քննադատությունները։

— Պ, ո, պ, ու, լ, ե, ր,— հեգեց Մելիք-Քյալլաբաշյան, ցուցամատովը օդին մեջ գրելով,— դա անպայման ավելի սիրուն խոսք է, քան թե մեր էդ անիծված ժողովրդականը։

— Հա, փոփյուլե՞ր ըսել կուզեք,— գոչեց պոլսեցին պահիկ մը մտմտալե ետքը,— բայց, եղբայր, ատիկա ֆրանսերեն է... Ուրեմն կուզեիք, որ հոդվածը ֆրանսերե՞ն գրեի,— ավելացուց, մտքեն իսկ չկրնալով անցնել, թե լեզու մը գեղեցկացնելու համար կարելի է սեփականը վտարելով օտարեն բառեր մուրալ,— ֆրանսերեն ալ նույնչափ հաջող կրնամ գրել, սակայն «Արևելք»-ը ֆրանսերեն հոդվածներ չի տպեր։

Այս միջոցին Մելիք-Քյալլաբաշյան թեյ լեցնելու զբաղած ըլլալով, ուշադրություն չդարձուց վերջին խոսքերուն վրա։ Իսկ հոսհոսը, թեյեն քանի մը ումպ խմելով, կոկորդը կազդուրելե և

Միջանկյալորեն ռուսական թեյին հակիրճ ներբողյան մը կարդալե ետքը՝ ավելի ոգևորված շարունակեց.

— Ի՞նչ կըսեք, եղբա՛յր, սրտերնիս հրաբուխի մը կնմանի, որ սակայն բռնության կափարիչներուն տակ ճնշված՝ չի կրնար կոր ժայթքիլ։ Պոլիս անանկ խըյախ գրիչի տեր տղաք ունինք որ, սակայն խեղճերը չեն կրնար կոր գրել, տաղանդնին խորշակահար ծաղիկի նման կցամքի կերթա... ազատությո՛ւն չկա, ազատությո՛ւն, ապա թե ոչ սանկ երկու տող գրեին նե ամբողջ հայ ազգը ոտքի կհանեին։

— Բայց մի՞թե ձեզ արգելում են հասկանալի լեզվով գրել. ես կարծում եմ, որ մեղավորը մենակ տաճկաց ցենզուրը չէ. ձեզ փչացրել է ֆրանսիական գրականական խոհանոցը, ձեր ամբողջ բելլետրիստիկան մի ինչ-որ ֆանտաստիկական աննորմալ բան է, ձեր հենց ամենալավ գրողները սեփական ինիցիատիվա չունեն, իրանց իմպուլսները ստանում են Պարիզի ժոնգլեորներից, ինքներդ ձեզ համար թխել եք մի տեսակ՝ էսպես ասած գրականական ժարգոն, որից խեղճ ժողովուրդը, իհարկե, ոչինչ չի հասկանում. էլ ո՞ւմ համար եք գրոտում. պետք է աշխատել պարզ գրել, որքան կարելի է պարզ, էնքան պարզ, որ մինչև անգամ... կարդալ չիմացողը կարդա և հասկանա։

— Կաղաչեմ, բարեկա՛մ, ի՞նչ կըսեք, ատիկա կարելի բան չէ, ժողովուրդը ի՞նչ կհասկնա բարձր գրականութենեն. զորօրինակ կոշկակար մը անշուշտ բան մը չի կրնար հասկընալ Վերլենեն, սակայն ադոր համար կուզե՞ք որ Վերլեն արտադրած չըլլար իր անմահ էջերը։ Բանաստեղծությունը երկնային բան մըն է, իրենց ամբողջ էությունովը ամպերեն ալ վեր սավառնող էակները միայն կրնան ըմբռշխնել անոր գեղեցկությունները։

— Այ ձեր սխալը հենց էդտեղ է,— ըսավ գրգռված Մելիք-Քյալլաբաշյան, որուն ղարաբաղցիի համառությունը բռնած էր,— բոլոր գրականությունների մեջ իսկական պոեզիայի աղբյուրը, էսպես ասած, գլխավոր ֆակտորը հենց ինքը ժողովուրդն է եղել։ Այսպես, գրականության պատմության մեջ մենք տեսնում ենք, որ զանազան էպոխաներում ստեղծված բոլոր շկոլաներն էլ իրանց հիմք են ունեցել պոպուլեր, կամ ինչպես դուք եք ասում, ժողովրդական պոեզիան։ Օրինակ, մեզանում էս վերջերս մի նոր պոետ է դուրս եկել, մի ջահել տղա՝ Ավետիք Իսահակյան, գուցե ծանոթ է ձեզ, ես ունեմ մոտս նրա բրոշյուրը, եթե ուզում եք կարող եք

վերցնել կարդալ. ժողովրդական մոտիվներ է գրում, բայց անպիտանը էնքան կենդանի է գրում, որ կարծեք հենց կյանքից խլած լինի։

— Այո, այո, անկե քանի մը ոտանավորներ կարդացած ըլլալս կհիշեմ, սանկ տողեր մը ունի, որոնք շատ աղվոր են,— և պոլսական ձևով սկսավ արտասանել.

Ով կյանք ունի, թարթ էլ ունի,
Թարթին թարման յար էլ ունի,
Մենակ ես եմ քամփախտ ծներ,
Սիրտս թարթոտ ու ճար չունի։

— Սակայն ատոնք գրական մեծ արժեք մը չունին, համեմատության իսկ չեն կրնար դրվիլ Վերլենի կամ Վերհարնի հետ։

Մելիք-Քյալլաբաշյանին գլուխը պետք եղածեն ավելի ուռած և ջիղերն ալ բավական գրգռված ըլլալով՝ ալ չկրցավ կենալ քաղաքավարության նեղ սահմանին մեջ։

— Հենց էդ Վերլենների նման պսիխոպատները չե՞ն ձեր տունը քանդողները, նրանց վայել տեղը ոչ թե գրականական կարիերան է, այլ գժատունը։

Հոսհոսը՝ իր պաշտած բանաստեղծին հասցեին ուղղված այս նախատինքեն վիրավոր՝ ալ չշարունակեց։

Պահ մը լռություն տիրեց, որ ղարաբաղցիին ձանձրույթ արտահայտող նո՞ւ, դա՞-երովը միայն կխանգարվեր։ Սակայն, ինչպես հին փիլիսոփաները ըսած են, հոսհոսությունն ու հարատևությունը իրարու բոլորովին հակառակ առաքինություններ են։ Ուստի շատ չանցած, մեր հոսհոսին ալ լռության համբերությունը հատնելով, խոսակցության խզված թելը հանգուցեց։

— Պարոն Մելիք-Քյալլաբաշյան, կարծեմ դուք ալ կգրեք, կներեք համարձակությանս, կրնա՞մ ձեր կեղծանունը հարցնել։

— Ոչ, ես պսևդոնիմ չեմ գործածում,— պատասխանեց շուշեցին նկատելի դժկամությամբ մը, մանավանդ տեսնելով, որ խոսակցությունը կրկին իր վրա կշրջվեր։

— Սակայն կգրեք, չէ՞։

— Երբեմն թղթակցություններ եմ գրում, իսկ հոդվածներ ավելի սակավ. էս վերջերս իմ մի երկար հոդվածը դուրս եկավ «Մշակ»-ում, կոնսումֆերայնների մասին։

— Կներեք, ինչի՞ մասին։

— Կոն-սում-ֆերայններրի։

— Դժբախտաբար ռուսերեն չեմ հասկնար, կհաճի՞ք թարգմանել։

— Դա ռուսերեն չէ, դա մի գերմանական խոսք է, նշանակո՞ւմ է... էսպես ասած... դրա համար հայերեն խոսք չկա, ինչպե՞ս թարգմանել... նու, ասենք, ուսելեղենների և այլ կյանքի պիտույքների մագազինների ֆերայններ... ընկերություններ։

— Այո, այո, հիմա կհիշեմ կոր,— վրա բերավ հոսհոսը, որ ոչ բան մը կհիշեր և ոչ ալ տրված բացատրութենեն բան մը հասկցած էր,— շատ աղվոր գրած էիք և կարծեմ սանկ պարագային համար ակնարկություն մըն ալ ըրած էիք ապագա Հայաստանի մասին։ Դուք ռուսահայերդ ավելի գիտական գրիչ մը ունիք, իսկ մենք ավելի գրական։ Ժընև իմացա, որ ձեր բարեկամ պարոն Լիլավյանն ալ լուրջ գրող մըն է, շիտա՞կ է, ձեզմե աղեկ չըլլա, սակայն շատ աղնիվ երիտասարդ մըն էր։

— Այո, նա մշտական գրում է և մեր լավ տղերանցից մին է, մեր ինտելիգենցիային պատիվ է բերում։

— Ղարաբաղցի չէ՞, ուրեմն։

— Այո, ինչպե՞ս չէ։

— Հապա ըսիք թե ինտելիգիացի է,— ըսավ Սուրեն Շավարշ, մտմտուքով մը գլուխը վեր տնկելով,— ուրեմն Ղարաբաղի քաղաքներեն մեկն է ատիկա. հա, իրավ որ աշխարհագրութենեն ատանկ քաղաք մը կհիշեմ Ղարաբաղի մեջ. Ինտելի՞գիա ըսիք, թե Ինտելիգցիա։

— Ինտելիգենցիա մի՞թե չեք հասկանում,— ըսավ զարմացած ինտելիգենտը, որ բան մը չէր հասկցած այդ խոսքերեն,— իսկ դուք էդ ի՞նչ քաղաքի մասին էիք հարցնում։

— Իշտե ադ Ինտելիգենցիա քաղաքի մասին։

Մելիք-Քյալլաբաշյան շառաչուն քրքիջ մը փրցուց.

— Ախր էդ ինչե՞ր եք ասում. Ղարաբաղում էդպես քաղաք չկա. մենք երկուսս էլ շուշեցի ենք. ես ասացի, որ նա մեր ինտելիգենցիային պատիվ է բերում, իսկ դուք՝ ինչպես երևում է՝ կարծել եք, թե դա մեր քաղաքի անունն է։ Ինտելիգենցիա նշանակում է ինտելիգենտ մարդիկ, ֆրանսերեն կարծեմ ասում են ինտելիժանտ...

— Ախ, այո, հիմա հասկցա. էնթելիժան ըսել կուզեք,— բացականչեց հոսհոսը ձեռքը ճակատին զարնելով ու սաստիկ կաքաջրած,— ֆրանսերեն բառերը դուք միշտ ռուսերենի ձևով կարտասանեք, այդ պատճառով աղեկ չեմ հասկնար։

Եվ երկուքն ալ բավական խնդացին այս զվարճալի թյուրիմացության վրա. բայց պոլսեցին շուտով նոր հարցում մը մեջտեղ գլորեց, իր ամոթահարությունը ծածկելու համար։

— Անվայել չըլլա հարցնելը, սակայն կարծեմ Ղարաբաղի հայ մելիքներուն ցեղե՞ն եք դուք, ինչպես արդեն ձեր մականունն ալ ցույց կուտա։

— Ո՛չ, ո՛չ,— պատասխանեց ղարաբաղցին, որ դեռ կշարունակեր խնդալ։

— Խնդրեմ, ի՞նչ կպահեք ինծմե, թեև ցարդ զիրար ճանչնալու բարեբախտությունը չենք ունեցած, սակայն կրնաք վստահ ըլլալ, որ մատնիչ մը չեմ ես, և մանավանդ որ հիմա ազատ երկրի մը մեջ ենք, փառք աստուծո, ալ ի՞նչ կվախենաք։

— Վախենալու ոչինչ չկա. դա խոմ մի վտանգավոր բան չէ, որ ուղիղ լիներ, կասեի էլի։

— Պահեցե՛ք, եղբա՛յր, պահեցե՛ք, վնաս չունի,— ըսավ հոսհոսը գլուխը շարժելով,— խոհեմությունը ատանկ կպահանջե, սակայն վստահ եմ, որ քիչ ատենեն, երբ ավելի մտերմանանք, սըրտերնիդ համարձակորեն պիտի բանաք ինծի։

Ինտելիգենտի հոգին բերանն էր հասել, աթոռին վրա անհանգիստ շարժումներ կըներ, կհորանջեր, կփնչեր, ժամացույցը կնայեր և մեկ խոսքով, միտքն ընկած ամեն անուղղակի միջոց գործ կդներ իր ձանձրույթն ու սրտնեղությունը հասկցնելու համար։ Սակայն դիմացինը տեղեն շարժվելու ամենադուլդն հավանականություն մը անգամ չէր ընծայեր, ուստի ալ ճարահատ, ինք ոտքի ելավ.

— Կներեք, ամենայն սիրով դեռ կնստեի ձեզ հետ, բայց դժբախտաբար երկու ժամ միմյանց ետևից դասախոսություն ունեմ, այնպես որ կներեք...

— Ո՛հ, կաղաչեմ, կաղաչեմ,— ըսավ հոսհոսը տեղեն ցատկելով,— արգելք չըլլամ ձեր գործին. արդեն ես ալ կուզեի երթալ կայարանեն պայուսակներս առնելու, կրնա՞մ հոս բերել զանոնք, մինչև որ սենյակ մը վարձենք։

— Խնդրեմ, իհարկե, կարող եք, միայն թե երկու ժամից հետո բերեք, երբ ես տանը կլինեմ, որպեսզի... տանտիկինը դժվարություն չհանի։

— Շատ աղեկ, իսկ սենյակին խնդիրը չեք մոռնար, անանկ չէ՞։

— Ո՛չ, ո՛չ։

— Սանկ աղվոր, մաքուր, կոկիկ, աժան սենյակ մը,— և խնդալով ավելցուց,— եթե տունին մեջ աղվոր աղջիկ մը ըլլա նե, ալ ուրիշ բան չեմ ուզեր, որովհետև գիտեք օրիորդներուն հետ խոսակցելով մարդ ավելի շուտ կսորվի լեզուն։

— Շատ լավ, շատ լավ, էգուց կտեսնենք։

Սուրեն-Շավարշ-Ֆանթազիո գլխարկն ու ձեռնափայտը առավ, Մելիք-Քյալլաբաշյանին ձեռքը սեղմեց սրտագին շնորհակալություններ հայտնելով, մեջքի նույն ճկունությամբ խոնարհություն մը ըրավ և արդեն սենյակին դռնեն դուրս կելներ, երբ ռուսահայի ցը՛ն ականջներուն հասավ։

— Ինչպե՞ս, ի՞նչ ըսիք,— հարցուց՝ ետ դառնալով։

— Ոչինչ, բան չասացի,— պատասխանեց Մելիք-Քյալլաբաշյան, որուն սիրտը դող ինկավ այս վերադարձեն։

— Չէ, հիմա բան մը կըսեիք ցի էր, ի՞նչ էր։

— Ցը, մի՞թե ձեզ մոտ գործածական չէ, ցտեսությունն է կրճատած։

— Ցտեսություն-ին կրճատումն է ուրեմն, ո՛հ, ինչ աղվոր գյուտ. ասկե վերջ ես ալ ատիկա կգործածեմ անպատճառ. ուրեմն ցը, սիրելի բարեկամ։

Ու կրկին ձեռքը սեղմելով մեկնեցավ։

— Այ, ես քո հերն անիծած, հոսհոս շանորդի,— պոռաց ինտելիգենտը երկար շունչ մը առնելով,— հոգիս հանեց էլի՞. սա որ էստեղ մնա, կսպանի ինձ։

Եվ բազմոցին վրա փռվեցավ այնպես ուժասպառ, որ կարծես եզան սայլ մը քաշած ըլլար։

ՀՈԳՈՒՍ ՀԱՄԱՐ

Հա՛ն-գա՛-նա՛-կո՛ւ-թյո՛ւն։

Չկա բառ մը հայ լեզվին մեջ, որ ասոր չափ անախորժություն և տեսակ մը արհավիրք պատճառեր ինծի։ Իր հինգ լեցուն վանկերուն թավ հնչյունը ամեն անգամ որ ականջիս հասնի, ծանր փայտե զանգվածեղ թակի մը հինգ հարվածները կզգամ գանկիս վրա, աչքերս կմթագնին ու տրամադրությունս վայրկենաբար զերոյին 25 աստիճան վար կիջնե։

Պատճառը սակայն սխալ չկռահեք։ Դուռս միշտ բաց է այս սոսկալի բառով զայն բաղխողներուն առջև և քսակս ալ նույնչափ բաց։ Ու կվստահացնեմ ձեզ, որ պարծանքի համար չեմ ըսեր աս և արդեն պարծենալու մեծ պատճառ ալ չունիմ, որովհետև դրժբախտաբար դուռս փոքր է ու քսակս համեմատաբար շատ ավելի փոքր։ Ուրեմն բոլորովին հակառակ պարագային մեջ պետք է փնտրեք վերոհիշյալ բառին ինծի ազդած սոսկումին պատճառը այսինքն, երբ ինծի կվիճակվի զայն բերան առնել ու դռնե-դուռ իյնալ։

Անցյալին մեջ հաճախ կատարած եմ այս կյանք մաշող դրբնբացեֆի արարողությունը և շատ անգամ կրածս բարոյական տառապանքներեն ուժաթափ, քանի մը օր անկողին ինկած ու մեծամեծ երդումներով ուխտած եմ ալ չկոխել ազգային գործունեության այդ ճյուղին վրա։ Սակայն ընկերներս ազգային գերագույն պարտականության և անձնվիրության հանդիսավոր կոչումներով ու հորդորներով ամեն անգամին ալ ուխտս ոտնակոխ ընել տված են ինծի։ Բա՜յց, բայց ըսված է, որ ամեն համբերություն սահման ունի, հետևաբար և ազգային մուրացկանի համբերությունը։ Իմ հեզ ու գլխիկոր համբերությունս ալ, ասկե յոթ տարի առաջ, հանգանակության մը կիսուն, հանկարծ ամեհի կատաղությամբ մը ծառացավ և այնպիսի ահավոր վճռական երդում մը ընել տվավ ինծի, որ այն օրեն ամբողջ յոթ տարի կրցա վերջապես հավատարիմ մնալ ուխտիս։

Եվ սակայն բան մը, որուն մինչև այսօր ալ խելք չեմ կրցած հասցնել, սա ընկերներուս տարօրինակ ընթացքն է։ Այս երանելի մարդոց համար կարծես մինչև իսկ հաճույք մը ունի ազգային մուրացկանությունը։ Առիթը ներկայանալուն՝ կամ ինչպես իրենք կըսեն՝ պարտականության կոչը հնչելուն պես, փողոցն է այս հինգ հոգինոց խումբը։ Արդեն երկար տարիներու փորձառությամբ յուրաքանչյուրը այնչափ լավ սերտած է իր դերը, որ տեսակ մը զինվորական կարգապահություն կտիրե մեջերնին։ Գիտեն, թե փողոցին մեջ ի՞նչ կարգով պիտի քալեն, դուռը ո՞վ պիտի զարնե, ո՞վ պիտի ըլլա մուտքի ճառը արտասանողը, հանգանակության տոմարը ներկայացնողը, պահեստի խոսողը, նվերը գանձողը կ այլն, և այլն։ Ու այս ամբողջ դժվարին գործը այնպիսի երկայ-

նամոությամբ, հմտությամբ ու վարժ ձևերով կկատարեն, որ չճանչցող մը արհեստին մեջ ծնած պիտի կարծեր զիրենք։ Զորօրինակ՝ շատ անգամ կպատահի, որ իմաստուն ու հեռատես մեծ-աղա մը— և մեծ-աղաներեն ո՞ր մեկը իմաստուն ու հեռատես չէ— ասոնց ճառերեն հուզվելու որևէ տրամադրություն ցույց չտալե զատ, ընդհակառակը ինքն ալ՝ իր կողմեն երկարաշունչ ճառ մը կսկսի ապացուցանելու համար, թե ձեռնարկված հանդանակությունը օգուտ մը չունի, մինչև իսկ վնասակար հետևանքներ կրնա ունենալ, ավելորդ է և մեկ խոսքով պարզապես տղու գործ է։ Իսկ ընկերներս առանց վշտանալու, առանց գրգռվելու, առանց վհատելու, պաղարյուն լրջությամբ մը կշարունակեն։ Վերջավորությունը ան կըլլա, որ մեծ-աղան օձիքը ազատելու համար կհանե, բան մը կուտա։ Բայց ինչ որ ըլլա այդ «բան»-ին քանակը, դեմքերնին միշտ նույն գոհունակ հանդարտությունը կպահե և հանգանակությունը «ճաջող» կհամարեն, եթե մինչև անգամ ամբողջ շաբաթ մը դռնե-դուռ շրջելե հետո, այս թափառումի միջոցին մաշած իրենց հինգ զույգ կոշիկներուն նորոգությանն իսկ չբավելիք գումար մը միայն հավաքած ըլլան։

Ահա բարոյապես զմռսված այս արարածներեն են, որ դեռ հանգիստ չեն թողներ զիս։ Ամեն առթիվ կպախարակեն, կդատապարտեն «դասալքություն», անտարբերության ու անպարտաճանաչության մեղադրանքներ կնետեն երեսիս և կջանան համոզել, որ այս անգամ ալ դրժեմ «անիմաստ» ուխտիս ու կրկին մեջերնին մտնելով՝ խումբին անդուլդ մնացած թիվը ջուխտեմ։ Ես, իհարկե, ուժգնորեն կբողոքեմ այս ծանր ամբաստանություններուն դեմ, յոթ տարի առաջվան դեպքը կհիշեցնեմ իրենց, և իրենց գործնական դպրոցին մեջ սորված ամբողջ փաստաբանությունս կգործածեմ ինքզինքս արդարացնելու։

Սակայն պետք է խոստովանիմ, որ շատ անգամ բավական կազդվիմ իրենց խոսքերեն, ներքնապես կթուլանամ ու խղճի խայթի պես բաներ մը կզգամ։ Մանավա՞նդ երկու պատկերներ կան, քուրջերու մեջեն հանված հինգ ոսկիին և պզտիկ քսակի մը մեջ զետեղված հինգ հատ նոր, պսպղուն քառասուն փարանոցի անմոռանալի պատկերները, որոնք ամեն անգամ, որ .աչքիս առջև կուգան՝ խիղճս ալ կսկսի ընկերներուս կողմը բռնել ու քիչ կմնա կրկին ուխտադրուժ ըլլամ։

Ուստի շատ տանջվելե ու շատ մտածելե ետքը՝ որոշեցի մեկուսացմանս շարժառիթն եղող վերջին կիսատ հանգանակությունս իր իսկությամբն ու ամբողջությամբը պատմել ընթերցողներուս և ինքզինքս անոնց դատաստանին հանձնել։

Ա.

Եղեռնին հաջորդող երկրորդ կիրակին է։

Ժամուն զանգակները կղողանջեն մեռելական հանդիսավորությամբ մը, ծանր ու դանդաղ։ Հայոց թաղին օրերե ի վեր ամայացած փողոցներեն առաջին անգամն ըլլալով մեծ բազմություն մը կանցնի, ուրվականներու պես անաղմուկ ու անշշուկ և հոյակապ եկեղեցին տաղավար օրերու խռնումով մը կլեցվի։ Պատարագի կիսուն՝ մեր ծերունի վարդապետը քարոզի կկենա։

— Հա՛յ ժողովուրդ, մեռնողները մեռան, ազատեցան, աստված անոնց հոգուն պիտի ողորմի, մնացողներուն վիճակն է դրժվար։ Գյուղերեն քանի մը հազար խեղճեր քաղաք թափած են, անոթի, մերկ, անպատսպար. քաղաքին մեջ ալ գործ ու վաստակ դադրած է, խեղճությունը ամեն կողմ բռնած։ Ձմեռը վրա կհասնի, մեր սև բախտեն՝ այս տարի ամեն տարվընե ավելի խիստ։ Ջքավորներուն օգնելու համար հանձնաժողով մը կազմած ենք, որ տնե-տուն շրջելով հանգանակություն պիտի ընե. բայց օգնության պետքը անմիջական է, այս օրեր արդեն քանի մը սովամահներու դիակը բերին գերեզմաննոց. այդ պատճառով հիմա անմիջապես պնակ պիտի պտրտցնենք մեջերնիդ։ Քրիստոնեական ողբությունն ու եղբայրսիրությունը այս օրերուն համար են մանավանդ։ Տվե՛ք, օգնեցե՛ք, պատառ մը հաց ունեցողը թող իր անոթի դրկիցին հետ բաժնե, երկու ձեռք հագուստ ունեցողը մեկով իր դրացիին մերկությունը ծածկե։ Թշվառությունը մեծ է, մեր կարողությունենեն շատ վեր, բայց ինչ ընենք. աստուծմե զատ օգնական չունինք, զիրար պահենք պահպանենք, մինչև որ աստուծո այցելությունը հասնի...

Ալ չկրցավ շարունակել, հեկեկանքը խեղդեց իր ծերուկ ձայնը։ Դիմացեն՝ կանանց վերնատունեն՝ արդեն փրթած էր լացը, և վայրկենապես բոլոր սրտերը կփղձկեին, ու ամբողջ եկեղեցին կուլար մեռելի տան մը պես։ Խեղճերը, անլաց ու անմռունչ թաղեր էին իրենց ինկած սիրելիները, բայց հիմա, անհուն վիշտերնին

քովքովի բերած, արդարության աստծուն սեղանին առջև՝ աչքերնուն մեջ ժահրացած արցունքը կպոռթկար...

Պատարագի ավարտումեն ետքը պնակներու բովանդակությունը հաշվեցինք։ Պղինձ, ոսկի դրամներ, կանացի հասարակ զարդեղեններեն սկսած մինչև թանկագին գոհարեղեններ՝ իրար վրա դիզված սրտաշարժ կույտ մը կկազմեին։

Ամբողջ արդյունքը 1500 ոսկի գնահատվեցավ։

Բ

Կարոտելոց նպաստամատույց հանձնաժողովին զիս ալ անդամ ընտրած էին։ Ընկերներս այս անգամ բացառաբար պետք չունեցան լեզու թափելու, որ ուխտս դրժեմ։ Ներկա ահռելիորեն բացառիկ կացության առջև անցյալի բոլոր երդումներս ու ուխտերս իրենք իրենց կլուծվեին ու մոռացության կմատնվեին։ Կիրակի օրվան պնակներու բովանդակությունը և մեր հանգանակության պտույտին նախընթաց դեպք մը մանավանդ, այնպիսի բուռն եռանդ մը ներշնչեցին ինծի, որ ընկերներս իսկ զարմացան։

Նույն կիրակի օրը, կեսօրեն ետքը, առաջնորդարանի մեջ վարդապետին նախագահությանը տակ նիստ գումարած, հանգանակության ժապավինյալ տետրակը և դիմումներու ցանկը պատրաստելու զբաղած էինք, երբ դուռը զարնվելով մեկը ներս մտավ։

Կին մըն էր։ Կանխահաս պառավութենե ընկճված, չոր ու նիհար կազմվածքով, աղքատիկ հագված, միջավար կին մը, որ երկչոտ քայլերով մոտեցավ ու վարդապետին աջը առավ։ Առջի բերան ամենքս ալ հավատացած էինք, որ նպաստ խնդրելու եկած էր, սակայն մեր այս կասկածը ընդհանուր ապշության տեղի տվավ, երբ կինը իր ոսկրոտ մատներով քուրջի քանի մը հանգույցներ քակեց և մեջեն հինգ ոսկի հանելով՝ վախվխելով մը հայր-սուրբին առջև սեղանին վրա դրավ։

— Ի՞նչ է աս, զավա՛կս,— հարցուց վարդապետը շվարած։

— Հայր սուրբ, ծառա եմ կարգիդ,— պատասխանեց կինը դողդոջ ձայնով մը,— ես այրի կին մըն եմ, տուներու մեջ լվացք կընեմ։ Ակռայես կտրելով քիչ մը ստակ կավելցնեի, որ Երուսաղեմ երթամ, Քրիստոսի գերեզմանը համբուրեմ, սուրբ լույսը տեսնեմ։ Բայց որ աղքը հիմա սև օրի մեջ է, ունեցած չունեցածս բերի, որ խեղճերուն բաժնեք։ Ես, փառք աստծու, դեռ աշխատելու կարողություն ունիմ, մեկ գլուխ կին եմ, ինչպես ըլլա կապրիմ. կաղաչեմ, հայր սուրբ, քիչս շատի տեղ ընդունեցեք։

Հայր սուրբը փորձեց խոսիլ, բայց ձայնը չելավ, ձեռքով նշան ըրավ կնոջ, որ մոտեցավ ու առջևը չոքեց, և ծերունին ջուխտ ձեռքերը անոր վրա տարածած՝ սրտագին պահպանիչ մը կարդաց։

Գ

Մեր հանձնաժողովը հաջորդ առավոտ իսկ սկսավ իր պտույտը։ Ամենեն առաջ Գոճամանյան Նազարեթ էֆենդիին դուռը ափ առինք։ Էֆենդին մեր քաղաքին էն մեծ վաճառականը և էն ազդեցիկ հայն էր, ուստի իր մեծապատիվ անունն ալ մեր ցանկին առաջին տողը կգրավեր։

Սպասավոր մը դուռը բացավ և մեզ առաջնորդեց արևելյան շքեղությամբ կահավորված մեծ հյուրասենյակը։ Քանի մը վայրկյան հետո ներս մտավ էֆենդին և ետևեն ալ կինը իր պզտիկ տղուն հետ։ Նազարեթ էֆենդին հիսունի մոտեցած, միջահասակ, գիրուկ, ճաղատ գլխով մարդ մըն է, հայ վաճառականի սովորական տիպ մը, որ նկարագրվելու արժանի առանձնահատկություն մը չունի։ Իսկ տիկինը նիհար, դժգույն, տխուր նայվածքով, բայց շատ համակրելի կին մը։

Քաղաքավարության պահանջած պայմանադրական բանաձևերու փոխանակութենեն ետքը, փողոցին մեջ մտքես պատրաստած մուտքի ճառովս մեր այցելության նպատակը պարզեցի և ընկերներս մեկն ալ անմիջապես հանգանակության տոմարը ներկայացուց։

Գոճամանյան էֆենդին խոր հառաչ մը արձակեց, տոմարը առավ, քիչ մը պրպտեց ու ըսավ.

— Ձեր նպատակին ըսելիք չկա, շատ գովելի է, բայց ինչ օգուտ, ինչ օգուտ... Ինչպես գեղացիին առածը կըսե՝ ջաղացը ջուրը տարավ, մենք ջախջախը կփնտրենք։ Ո՞ր մեկուն տանք, ո՞ր մեկուն հասնինք, ալ լմնցանք, լմնցանք...

— Էֆեն՛դի, անշուշտ աղետը ահռելի է,— պատասխանեցի ես,— և մեր կարողութենեն շատ վեր զայն արմատապես դարմանել, սակայն մյուս կողմե՝ չենք կրնար ձեռքերնիս ծալլած նստիլ ու մարդոց ճանճերու պես կոտորվիլը դիտել։

— Ուզենք չուզենք պիտի կոտորվին, ուզենք չուզենք... Ինչ

կրնանք ընել, բան մըն ալ չենք կրնար ընել, շատ բան կրնայինք ընել, բայց ալ ուշ է, բանը բանեն անցավ։ Քսան տարի է կպռոայինք, կկանչեինք, կհասկնա՞ք, քսան տարի, թե ատ զգեկությունններուն, ատ թեթևսոլիկությունններուն վերջը աղետալի կըլլա, սակայն չկրցանք խոսք հասկցնել։ Մարգարեությունները կատարվեցավ. անոնք որ խեղճ ժողովուրդին արյունը մտան, ան մեզի «հին գլուխ», «թրքասեր» և այլն ըսող ազգասերներ, հիմա անոնք թող երթան ճար մը խորհին, որ մարդիկ ճանճի պես չկոտորվին... Ա՜խ,— ավելցուց էֆենդին, կրկին հառաչելով և լուսնափայլ գլուխը շողացնելով,— ախ, աչքերնի՞ն կուրանա, աչքերնի՞ն...

— Նազարե՛թ, էֆենդի,— պատասխանեցի ես,— հիմա անօգուտ է անցյալի մասին խոսիլ, ներկան այնչափ տխուր է, որ ամեն բան մոռցնել կուտա մեզի։

— Ի՞նչ, մոռցնե՞լ մի կուտա, ա՞յս անգամ ալ մոռնանք, ա՞յս անգամ ալ խելքերնին գլուխնին չգա,— պոռաց էֆենդին, տեղեն վեր ցատկելով,— աստված մարդու բախտը առնելե առաջ խելքը կառնե ըսեր են նե շիտակ է. անխելքության երեսեն աս օրին հասանք և դեռ չենք ուզեր խելքերնիս գլուխներս ժողվել, ձեռքովնիս մեր գերեզմանը կփորենք. դեռ անցած օրն էր, որ հազիվ կրցանք կառավարության բարկությունը քիչ մը իջեցնել, թուղթ ստորագրելով, թե խռովարարները իրենց արժանի պատիժը գտան և հիմա վեհափառ սուլթանին շնորհիվ անդորրությունն ու խաղաղությունը կատարյալ է։ Մեր վարդապետ ըլլալիք՝ հեռու կարգեն՝ ցնդածն ալ հետս էր, իսկ երեկ նորեն ամեն բան մոռցած, ելավ ափեղցփեղ դուրս տվավ. բարկութենես քիչ մնաց վրան պոռայի ժամուն մեջ։ Այդ խոսքերը եթե կառավարության ականջը հասնին՝ և չըլլար, որ չհասնին, ինչ պիտի մտածե, ըսե՛ք կաղաչեմ, չպիտի՞ ըսե պարզապես, թե ասոնք մեծով պզտիկով դեռ նույն խելքին կծառայեն, դեռ չեն խրատված...

— Բայց, Նազարեթ էֆենդի, ի՞նչ ըսավ, որ խեղճ վարդապետը։

— Ի՞նչ ըսավ, հոն չէի՞ք, լսեցի՞ք, ի՞նչ ըսել է «մեռնողները մեռան ազատեցան, աստված մնացողներուն ողորմի, շուտով աստուծո այցելությունը հասնի». կառավարությունը ապուշ չէ, այդ խոսքերուն միտքը ինծմե քեզմե լավ կհասկանա և դեռ ան տեսակ հետևություններ կհանե, որ խելքե մտքե չի անցներ։ Հիմա խոշորացույցով կդիտեն մեզ, խոշորացույցով, ե՞րբ պիտի հասկնանք ասիկա։

Ես ալ չկրցա պատասխանել, հին գրժված ուխտերս մեծ ու պզտիկ բոլոր երդումներով հանդերձ վայրկենաբար գլխուս մեջ խուժեցին, և ես ստիպվեցա էֆենդին թողնելով ասոնց դեմ ճակատել։

Սակայն մեր պահեստի խոսողը անմիջապես օգնության հասավ իր թալմ լեզվովը, մյուսներն ալ հետզհետե մեջ մտան, և ահա մեր դիմումը կնճռոտ վիճաբանության մը փոխվեցավ։ Վիճաբանություն մը, որուն ինչով վերջանալիքը շատ դյուրին, բայց ե՞րբ վերջանալիքը անկարելի էր նախատեսել։

Բոլորովին անակնկալ օգնություն մը բարեբախտաբար փրկեց մեզ։ Տիկին Գոճամանյան, որ մինչև այդ ատեն՝ լռիկ նստած մտիկ կըներ, հանկարծ ամուսինին դարձավ հուզված.

— Մեղա, դեռ պիտի քաշքշե՞ս. մարդիկը բաներնին գործերնին ձգած քու խրատներդ մտիկ ընելու չեն եկեր, բան մը պիտի տաս, տուր, չպիտի տաս, պարապ տեղը գլուխնին ինչո՞ւ կցավցընես։

— Հազար անգամ ըսած եմ, որ դուն իմին գործերուս չխառնվիս,— մոլտաց էֆենդին, քովընտի խոժոռ ակնարկ մը նետելով կնոջը երեսին։ Բայց և այնպես խոսքն ալ կարճ կապեց և ոտքի ելնելով հանդիսավոր կերպով մը ըսավ.

— Իմ կարծիքովս աս հանգանակությունն ալ խոհեմություն չէ, կառավարության կասկածը կրնա հրավիրել, ես՝ թեև վաղուց ուխտ ըրած եմ աս ազգին գործերուն չխառնվիլ, բայց նորեն չկըրցա համբերել և անցած օրը վարդապետին պատվիրեցի, որ հիմակուհիմա հետաձգե հանգանակությունը, մինչև որ կառավարության բարկությունը քիչ մը անցնի, սակայն աս անգամ ալ խոսքս մտիկ ընող չեղավ։ Ինչ որ է, հիմա որպեսզի չխոսվի, թե Նազարեթը ստակ տալե կփախչի, և քանի որ ելած մինչև տունս եկած եք, չեմ ուզեր ձեզ պարապ ճամբել։ Մինակ թե տեսրակին մեջ անունս չգրվի, ով գիտե ինչ կըլլա, ինչ չըլլար։

Եվ քսակը հանելով ավելցուց.

— Արդեն երեկ ժամուն մեջ ոսկի մը ձգեցի պնակը, անկե զատ մեր տիկինն ալ իր 20 ոսկինոց ապարանշանն է ձգեր, այնպես որ...

— Տեր աստված, դեռ պիտի խոսի՞ս ադոր վրա, քեզի ի՞նչ,

ես իմ ապարանջանս եմ տվեր,— ընդհատեց տիկինը ավելի գըրգռված։

— Ինծի՞ ինչ, հա, անանկ է յա, հորդ տունեն բերիր 20 ոսկինոց ապարանջանը...

— Հա, հարկավ հորս տունեն բերի,— պատասխանեց տիկինը ու բարկացած դուրս ելավ։

Նազարեթ էֆենդին քսակը ձեռքը, գլուխը երերցնելեն, պահ մը կնոջը ետևեն նայելե ետքը, հանեց երկու ոսկի դրավ սեղանին վրա ու շարունակեց.

— Ասկե ավելին չեմ կրնար տալ, աս ոչ առաջին անգամն է և ոչ ալ վերջին։ Մինակ թե՝ ինչպես ըսի՝ չեմ ուզեր, որ տետրակին մեջ անունս ըլլա. իմ ձեռքովս ալ չեմ ուզեր գրել, դուք գրեցեք քրիստոնյա ոմն 2 ոսկի կամ ավելի ճիշտը՝ 23 ոսկի, երեկվան մեկ ոսկին ու տիկնոջս ապարանջանն ալ մեկտեղ հաշվելով։

Փա՛ռք քեզ աստված, վերջապես դուրս ելանք, շնորհակալություն հայտնելով, շնորհակալություն մը, զոր ինք թերևս նվերին համար կարծեց, մինչդեռ անտանելի քարոզեն ազատելնուս համար էր։

Կարծեմ մոռցա հիշելու, թե էֆենդիին ութ տարեկան պզտիկ որդին, որ մորը հետ ներս եկած էր, սկզբեն մինչև վերջը հետևեցավ մեր խոսակցության, ուշադրություն գրավող հետաքրքրությամբ մը։ Իսկ երբ մենք սանդուղներեն վար կիջնեինք, ինք թըռչունի պես վար թռավ մեր կողքեն և տան դուռը բանալով սպասեց։

Դուրս ելնելու միջոցին— պարոն Տիգրան— ըսավ մեզմե մեկուն և առանց խոսք մը ավելցնելու, պզտիկ քսակ մը երկնցուց։

— Աս ի՞նչ է, Արամ,— հարցուց պարոն Տիգրանը։

— Ան տղոց տուր,— պատասխանեց փոքրիկը անմեղ շփոթումով մը։

Քսակին ամբողջ պարունակությունը հինգ հատ արծաթե նոր կտրված փալփլուն քառսուն փարանոցներ էին։

— Ո՞ր տղոց,— հարցուցի ես, պզտիկ դունչը բռնելով։

— Ան տղոց, որ կըսեիք, թե հայր-մայր չունին, հայրերնին, մայրերնին թուրքերը մեռցուցին, իմ հայրիկս չմեռցուցին, նորեն կուտա ինծի, բայց անոնք ա՛լ հայրիկ չունին, որ տա, անանկ չէ՞...

Ուղեղս տանջող խուժանը մեկենիմեկ հալածական դուրս փախավ գլխես, և ամենքս ալ գրկեցինք փոքրիկը ու համբուրեցինք։

Դռան առջև կեցած, դեռ կնայեր մեր ետևեն, կարծես չէր ուզել ներս երթալ, այլ մեզի հետ գալ կուզեր, աչքով տեսնելու այն տղաքը, որ ալ ոչ հայր ունեին, ոչ մայր... երբ վերեն՝ պատուհանեն հորը ձայնը թնդաց.

— Ծո՛ Արամ, ներս եկուր, կմրսիս։

Դ

Նազարեթ էֆենդիեն ետքը, կարգը Մելքոն աղա Լուլույանինն էր։ Ամբողջ քաղաքին մեջ եզական տիպ մը, որ ամեն բանով արժանի է ընթերցողներուս մոտեն ներկայացվելու պատվին։

Ապահով եմ, որ այս ինքնօրինակ ազգայինը իմ նկարագրությամբս ճանաչելե հետո, եթե երբեք օր մը մեր քաղաքը այցելեք, պիտի ուզեք անպատճառ անձամբ ալ տեսնել զինք։ Ուստի ձեզ ավելորդ դժվարություններու չմատնելու համար, նախ և առաջ պիտի պատվիրեմ, որ չըլլա, թե Մելքոն աղա Լուլույան անունով փնտրեք զինք։ Աս, լոկ պաշտոնական և քաղաքավարական հորջորջում մըն է, զոր շատերը չեն իսկ հասկնար, այլ պետք է տալ այն անունը, որով ան հանրածանոթ է։ Պարզապես— Լուլո՝ Մելքոն։

Սակայն այս քիչ մը արհամարհական և շատերու համար թերևս ծիծաղաշարժ անվանակոչությունը, աննշան կազմվածքով և մարմնական պակասություններով, ճղճիմ արարած մը թող չպատկերացնե ձեր առջև։ Ընդհակառակը. Լուլոնց Մելքոնը այնքան պատկառելի է իր արտաքինով, որ եթե օրին մեկը դիպվածով դիմացնիդ ելներ, կարգաթող կամ ծպտված եպիսկոպոս մը պիտի կասկածեիք զինք։

Գլուխ մը, այնչափ խոշոր, որ ամեն ուսերու գործ չէ կրել, համապատասխան հաստությամբ վիզ մը, կարծես Քրիստոսի լուծ կրելու համար ստեղծված. լայնանիստ թիկունք մը, գրեթե քառակուսի. փոր մը, որ շարժուն վիճակի մեջ՝ յուղով լցված տիկի մը պես կհարվի։ Իր սահմանները հետզհետե ընդարձակող, լայնաբաց ճակատ մը, այտերը դեղնագույն՝ բայց լեցուն. աչքերը՝ թեև քիչ մը անգույն ու անկենդան, բայց խոշոր-խոշոր. մեծ ակնոցին տակ թամբի ձև առած պարարտ քիթ մը. բարակ, շեկ բեխեր, բերանը՝ կարծես սակավ գործածութենեն կծկված, իսկ կլոր, մսուտ, երկհարկանի կզակը միշտ մորուքի սաղմերով սև-

ցած։ Ափսոս սակայն, որ մսեղեն այս հոյակապ շենքը իր բնական գեղեցկութենեն շատ բան կկորսնցներ՝ զինք ծածկող պատյանին անշքությանը երեսեն։ Հասարակ կտորե լայն շալվար մը և մինչև ծունկերը իջնող, կասկածելի գույնով, մեծ վերարկու մը միայն կկազմեն հագուստին արտաքին ամբողջությունը։ Գլուխը կծածկե ֆես մը, որ տարվան չորս եղանակներուն հետ գույն կփոխե, իսկ ոտքերը կպատսպարեն այն տեսակ կոշիկներ, որոնցմե՝ իր ամբողջ կյանքին մեջ՝ առավելն 10 զույգ կարենալ մաշելու համար, Լուլոնց Մելքոնը ջրհեղեղեն առաջ՝ Մաթուսաղաներու դարուն պետք է ծնած ըլլար, ան ատեն ալ կարծեմ կոշիկի պետք չպիտի ունենար։ Եթե կա բան մը, որ անհասկանալի հակադրություն մը կպուռա այս շատ համեստ արդուզարդին քով, ան ալ Լուլոնց Մելքոնին ակնոցն է... ոսկի՞ ակնոցը։

Չէ՛, պարապ տեղը գլուխնիդ մի տանջեք. այդպես անցողակի կերպով չեք կրնար լուծել այս հանելուկը։ Ես, որ ձեզմե շատ ավելի կհետաքրքրվեի ու կտանջվեի այս հոգեբանական առեղծվածով, յոթ տարի շարունակ, գրեթե ամբողջ տրամադրելի ժամանակս, գերմանացի պրոֆեսորի մը համբերությամբ, ասոր լուծումին վատնելե ետքը, վերջ ի վերջո հույսս կտրելով, ելա 500 ղրուշի մրցանակ մը հաստատեցի այս նպատակին համար։ Մրցանակը բարեբախտաբար ես շահեցա վերջերս, բոլորովին դիպվածով։ Ահա թե ինչպես։

Օրին մեկը, հեռավոր գյուղե մը քաղաք կվերադառնայի ձիով, երբ խումբ մը հայ գյուղացիներու հանդիպեցա, որոնք քաղաքին մեջ առուտուրնին վերջացուցած՝ գյուղերնին կվերադառնային, իրենց պարապ էշերուն հեծած։ Այս հեծելագունդին էն առջևեն կհառաջեր՝ մեծկակ սև իշու մը վրա աշտանակած՝ տարեց գյուղացի մը, որ գավազանին ծայրը խոտի տրցակ մը կապած, տակի անասունին աչքերուն առջև երկնցուցած էր։ Անմիջապես ուշադրությունս գրավեց այս նորօրինակ գործիքը, և երբ մոտեցանք, ձիս կեցուցի ու մեկնություն խնդրեցի գյուղացիեն։

— Չհասկցար, հա՞, աղա ջան,— պատասխանեց գյուղացին հպարտ ծիծաղով մը, և գավազանը ուսը դնելով՝ էշը կեցուց,— հա՛, հա՛, հա՛, չհասկցար, հա՞, ճելպեք չես հասկնար, քաղքցի չենք, ամա մենք ալ մեզի կյորե խելք ունինք։ Սաղ իրեք տարի խելք եմ մաշեցուցեր ասոր համար, աս որ չըլլի անիրավը փետի պես եղած տեղը կկենա։ Հա՛, տե՞ս։

Եվ սկսավ գավազանին հակառակ ծայրովը կենդանիին վիզը խթել և սրունքներովը կողերը հարվածել ուժգնորեն։ Սակայն անասունը, փիլիսոփայի մը մտախոհությամբ, անշարժ կեցած, հորիզոնը կդիտեր։ Հետո մոգական գավազանին դարձյալ նախկին գիրքը տվավ, և ահա չորքոտանի փիլիսոփան մեկենիմեկ սթափեցավ, զոհնչ մը արձակեց ու տռչիկ տալով՝ Պեգասոսի պես արշավասույր հառաջ սլացավ ամբողջ խումբին ծիծաղներուն առջևեն։

Ինչ հեղակարծ, հանճարեղ գործողություն էր, որ այդ վայրկյանին ուղեղիս մեջ կատարվեցավ, ես ինքս ալ չեմ գիտեր։ Միայն այսչափ գիտեմ, որ՝

— Ակնոցը, ակնոցը,— պոռթկաց հանկարծ բերնես։

Սիկիլիացի փիլիսոփային «էվրիկա՜ն» ավելի խանդավառ աղաղակ մը, զոր խեղճ գյուղացին սխալ հասկնալով, իր հրեզեն ավանակը կրկին կեցուց պահ մը ու պոռաց հեռվեն.

— Ո՞ր Ակնոցը, աղա, ո՞ր Ակնոցը, իմս է, իմս, աստված վկա իմս է. իրեք տարի է անիրավին դարտ ու բալան կքաշեմ։

Ու անմիջապես իր գավազանին ամբողջ մոգական ուժը գործածելով, փախավ քառարշավ։

Կխոստովանիմ, որ այս մեծ գյուտիս առիթ տվող դիպվածը շատ վայելուչ չէ, բայց ի՞նչ կրնամ ընել, երբ իրողությունը աս է։ Ասկե զատ, գիտական հետազոտության պահանջները կաբելի չէ միշտ հաշտեցնել գեղեցկագիտության պայմաններուն հետ։ Նյութես շեղելու վախս չըլլար, կրնայի անմիջապես կարգ մը օրինակներ շարել ցուցնելու համար, որ շատ մը մեծ ու աշխարհ հեղաշրջող գյուտեր, ասկե տվելի պակաս վայելուչ ու պակաս լուրջ դիպվածներու պարտական ենք։ Ասով մեկտեղ, քավլիցի ինձի, նմանության ոևէ եզր մը փնտրել Լուլոնց Մելքոնին և գյուղացիին անարգ աշխատավորին միջև։ Միմիայն գավազանին ու ակնոցին միջև է, որը հանգիտություն մը կգտնեմ, և գյուտս ալ հոդ է ահա։ Եթե օր մը Լուլոնց Մելքոնը անձամբ տեսնելու վայելքին այժմանանք, վստահ եմ դուք ալ պիտի վավերացնեք իմ այս գյուտս։ Եզեմ մարդը, հակառակ իր մարմնին զժվար տեղափոխելիությանը, ամբողջ օրը ոտքի վրա է, կանցնի, կդառնա, առանց աջ ու ձախը նայելու, աչքերը միշտ իր ակնոցին ոսկի շրջանակներուն սևեռած։

Սովորաբար պատի տակերը և ամայի փողոցները կնախընտ-

րե իր երթևեկին համար, որովհետև առանձնություն սիրող մարդ մը է և ամբողջ քաղաքին մեջ ոչ մեկ մտերիմ բարեկամ ունի։ Ազգային կյանքեն ու գործերեն ալ հեռու կապրի, միայն կիրակիե-կիրակի ժամուն մեջ կտեսնվի, դռան մոտ, կոշիկ հանելու տեղը, անկյուն մը կծկտած և հայr-մերը երգվելուն պես կանհետանա։ Թաղական կամ հոգաբարձու ընտրվելու փառասիրությունն իսկ մինչև այսօր չէ կրցած մուտք գործել այս մարդուն մեջ։

Մեր քաղաքին էն հարուստ հայն է. մինչև անգամ Նազարեթ էֆենդիեն ալ հարուստ, և ինչպես կխոսվի, առնվազն երկու անգամ հարուստ։ Այս մեծ հարստությունը գլխավորաբար հայրն է դիզեր այնպիսի գործով մը, զոր ինչպես կպատմեն, լուսահոգին բարեգործություն կկոչե եղեր։ Դրամ փոխ կուտա եղեր նեղության մեջ եղողներու և կգրավե այն բոլոր ապերախտներուն կալվածները, որոնք իրմե առած դրամը ժամանակին չէին վերադարձներ։ Որդին ալ, թեև մեր ծերերը կպնդեն, որ հորը կես հաջողությունն իսկ չունի, բայց արդեն պատրաստ ժառանգած ըլլալով բարեգործական այս ձեռնարկությունը, հորորդիական հարազատությամբ ու ժրաջանորեն կշարունակե զայն։ Եվ ահա ամեն բարեգործությանց վարձահատույցն աստված, ինչպես հորը, այնպես ալ որդիին, վարձքը տալու համար, առանց անոր իր քովիկը ժամանելուն սպասելու, այս կանխիկ աշխարհին մեջ, իսկ լիուլի կվարձատրե զինք ու հարստությունը ահագին համեմատություններով կաճի ու կաճի։ Եթե կա բան մը, որ հասարակաց կարծիքին քիչ մը անհասկանալի ու անարդար կթվեցնե աստուծո այս շռայլությունը Լուլոնց Մելքոնի նկատմամբ, ան ալ սա մտածումն է, թե ի՞նչ պիտի ընե այդչափ հարստությունը։ Որովհետև Մելքոնը աշխարհ մտած չէ և մտնելուն հույս ալ չկա, քանի դեռ չեն փոփոխված այն օրենքները, որոնք Ադամեն սկսած մինչև այսօր պարտավորիչ են բոլոր այդ աշխարհը մտնողներուն համար։ Այն անբառնալի պատճառով, որ բնությունը խեղճ մարդուն մարմինը ճոխաբարդելու իր արտասովոր եռանդին մեջ մտահան ըրած է... մեկ կետը։ Է՞հ, ինչ ընե— ամեն գեղեցկություն մեկտեղ չըլլար— ըսեր են։ Եվ անզավակ ու անժառանգ այս մարդը, իր ամբողջ ուժն ու ուշը հայրական ժառանգությունը աճեցնելու սեռամտածումին նվիրած, բնավ ուշադրություն չի դարձներ իր հաճույքին ու հանգիստին։ Չնայելով, որ պալատանման տուներու սեփականատներ, ինք միշտ իր հորենական հին ու անշուք տանը մեջ կապ-

րի, ոմանց կարծիքով օջախին բախտը չփախցնելու համար, թեև հանրությունը ժլատ հաշիվներու մեջ կփնտրե ադոր ալ պատճառը։ Իր անձին ու ներքին կյանքին մասին հազար տեսակ մանրավեպեր կշրջին բերնեբերան, ժլատ, ավելի ծիծաղելի և միևնույն ժամանակ խորհրդավոր արարածի մը խառնուրդ տիպը ստեղծելով իրմեն։ Ամեն տարի լուր մը կտարածվի հանկարծ, թե Լուլոնց Մելքոնը փակված ու կնքված խոշոր ծրարի մը մեջ, գաղտնորեն իր կտակը հանձնած է Նազարեթ էֆենդիին, իր մահեն ետքը բանալու և գործադրելու պայմանով։ Եվ ահա ամբողջ ժողովուրդը անհամբեր կտակին բացվելուն կսպասե, սակայն Լուլոնց Մելքոնը տարին ողջառողջ կբոլորե և հաջորդ տարին նոր լուր մը կձայնձընվի, թե կտակը փոխեր է։ Ավելցուցե՞ր, թե՞ պակսեցուցեր։ Այդ մասին որչափ մարդիկ, այնչափ կարծիք։

Այս ներկայացումեն հետո ընթերցողներս թերևս հարցնեն, թե ի՞նչ խելքով մեր հանգանակության ցանկին երկրորդ տեղը բազմեցուցած էինք այսպիսի մարդու մը անունը։ Իրավ որ, եթե հասարակաց կարծիքին նայեինք, ազգային թուղթի ու թանաքի աննպատակ վատնում մը պիտի ըլլար այդ անհուսադրելի անունին առհասարակ որևէ տողի մը վրա արձանագրությունը։ Իսկ ընկերներս թեև այդ աստիճան հոռետես չէին, բայց դարձյալ իրենց փորձառությամբ խորհուրդ կուտային վերջին երեսը մտցնել, եթե տեղ ավելնար։ Սակայն ես, որ այսօրվան ուսումնասիրություններս դեռ չէի կատարած Մելքոնի մասին, բոլորովին տարբեր կմտածեի։

Այդ մարդը, իր մասին շրջող բոլոր աննպաստ զրույցներուն հակառակ, շողոքորթ, շաղակրատ, հասարակ տեսակեն վաշխառու մը չէր ներկայանար իմ աչքիս։ Իր լռիկ, մնջիկ, առանձնասեր բնավորությունը, տարօրինակ զարտուղություն մը, զոր կրցած էր իր արհեստին հետ հաշտեցնել՝ իր խոշոր զանգվածին մեջ կորսրված բարության խորհրդավոր խորշ մը կասկածել կուտար ինծի։ Այս կասկածիս ավելի ուժ կուտային ամեն տարի նորոգվող կտակին պատմությունը և մանավանդ նախընթաց օրինակ մը, որ դեռ չէր մոռցված։ Մելքոնին լուսահոգի հայրն ալ, ինչպես հիշեցի, պակաս բամբասված ու ատելի մեկը չէր եղած, բայց այդ միևնույն մարդը Հայաստանի մեծ սովին ատեն, հանկարծ 100 ոսկիի նվիրատվությամբ մը ամենքը ապշեցուցած և գրեթե ազգային բարերարի մի լուսապսակովը մեռած էր։ Արդ՝ ի՞նչ իրավունք ունեինք

չհուսալու, որ որդին, մյուս հատկություններուն հետ, այդպիսի անակնկալի մը ընդունակությունն ալ կրնար ժառանգած ըլլար հորմեն. մանավանդ որ ներկա կացությունը անհամեմատ ավելի ցնցող էր, քան մեծ սովը։ Հասարակաց կարծիքը շատ արդար չէր թվեր ինծի, բայց և այնպես մինչև իսկ այդ կարծիքին մեջ հույսի նշույլ մը կար, բարեգործական խոշոր կտակի մը ակնկալությունը։ Գալով բամբասանքներուն, եթե այդչափ բարակը փնտրեինք, քանի՞ հոգի կրնայինք ջոկել մեր մյուս հարուստներեն, որ արդար վաստակով հարստացած ըլլային ու իրավունք ունենային Մելքոնին վրա քար նետելու... Ու նույնիսկ հասարակության այս ծայրահեղորեն խիստ վերաբերումն էր թերևս, որ մարդը խրտչեցուցած ու մեկուսացուցած էր։ Հավաքելով, դիզելով ի՞նչ պիտի ըներ վերջ ի վերջո, քանի որ իրմե զատ մեկը չուներ։ Չէ՞ որ ինքն ալ մարդ էր վերջապես, հարկավ կմտածեր այս անխուսափելի հարցի մասին. ընդունելով նույնիսկ, որ սիրտ չուներ, բայց և այնպես խելք ունենալուն վրա ոչ ոք կկասկածեր։ Մեկ խոսքով, չեմ գիտեր ինչ անբացատրելի նախազգացում մը կվստահեցներ զիս՝ թե այդ մարդեն բան մը պիտի ելնե այս անգամ և մեծ բան մը։ Այս մասին 90 տոկոս հույս ունեի, իմ մտածումս էր միայն այդ մեծ բանին համար ծրագիր մը գտնել և ատ ալ գտած էի արդեն, մեծ որբանոց-արհեստանոց մը։

Ահա այս խորհրդածություններուս և այս խոշոր ակնկալության կոթնելով էր, որ Լուլոնց Մելքոնին անունը մեր հանգանակության ցանկին մինչև երկրորդ տողը կրցա հանել։ Նախ այն մտածումով, որ այս անսովոր պատիվը անոր անարգված ու ստորնացված արժանապատվությունը պիտի գգվեր ու բարձրացներ, և երկրորդ՝ ես ինքս կհատնեի գործը ժամ մը առաջ գլուխ հանելու անհամբերությենես։

Ե

Նորակառույց երկհարկանի, գեղեցիկ, մեծ շենք մը, ընդարձակ պարտեզ-բակով մը շրջապատված։ Արտաքին հոյաշեն դռան եբկու փեղկերը կոնակի վրա բացված են մուտք տալու համար ժողովրդի հոսանքին, որ դեռ կշարունակվի։ Ներս մտնողներու առաջին նայվածքը կգրավե ներքին դռան ճակատին, դալար ոսկեբով գրասանգված, սպիտակ մարմարի վրա ոսկեզօծ տառերով հետևյալ արձանագրությունը.—

Հաստատությունս այս կառուցավ համի Տյառն 1897 և տոմարական թվականիս հայոց ՌՁԽԵ-ՌՁԽԶ. հառաջնորդության Տ. Ներսիսի բարեջան ծայրագույն վարդապետի Տարոնեցվո և արդար արդյամբ և ծախյուք բարեժառանգ և բարեսեր Աղա Մելքոնի Լուլուլյան, հանուն որո կոչեցավ Որբանոց-Արհեստանոց Լուլուլյան։

Կարդալ գիտցողները այս հուշատախտակին հանդեպ կկենան պահ մը և գլխու ոգևոր օրորումներով կկարդան զայն, ներբողական բացականչություններ փոխանակելով իրենց քովիններուն հետ։ Դիտելու արժանի են մանավանդ ծերերը. նախ համր ակնարկ մը կվերցնեն տախտակին, կարծես տեղը նշան ընելու համար, և ապա ծանրաշարժ արարողությամբ մը ակնոցնին հանելով քթերնուն կդնեն ու առնվազն քառորդ ժամ մը ակնապիշ կմնան, կարծես յուրաքանչյուր տառի վրայեն կանցնին աչքովնին, ճիշտ այն երկյուղած դժվարությամբ, որով Նարեկի նոր գլուխ մը պիտի կարդային։ Իսկ ան այբուբենները իրենց տգիտության վրա ողբալու ժամանակ չեն ունենար, անմիջապես կբոլորվին քանի մը հաճոյակատար հայրենակիցներու շուրջը, որոնք ինքնաբերաբար ինքզինքնին ասոնց տրամադրության տակ դրած են և միևնույն ժամանակ առիթեն կօգտվին, գրաբարի կասկածելի հմտությունները հրապարակ փռելով իրենց ունկնդիրները ապշեցնելու։ Հանդիսավոր շեշտով մը կկարդան արձանագրությունը, աշխարհաբարի կթարգմանեն, մեկնություններ կուտան, բացատրություններ կավելցնեն իրենց կողմեն, այնպիսի կարևոր ձևերով, որ կարծես հեթական նորագյուտ բևեռագիր մը լուծեին։

Դռան առջև խռնված այս ամբողջ բազմությունը հետզհետե ներս կուղղվի։ Բայց վերջին խումբերը ալ չեն կրնար հառաջ շարժիլ։ Ներքնագավիթը արդեն լեցված է, հոս ալ ամեն ոք կշանա արմուկով ճամբա բանալ դեպի ներս, սակայն իզուր։ Փողանցքին մեջ բազմությունը անթափանցելի պարիսպ մը երկարած է, մինչև դիմացի մեծ սրահը, որու լայնաբաց դռնեն երգի ու ճառի ձայներ դուրս կխուժեն փոփոխակի։ Շատերը արդեն ներս անցնելե հուսահատ՝ ետ կդառնան, գեթ շենքին մյուս մասերը պտտելու։

Սրահին մեջ ասեղ ձգելու տեղ չկա. բոլոր աթոռները գրավված են, իսկ ետեի շարքերը ոտքերու մատներուն վրա կոխելով՝ կարծես իրարու ուս կուզեն բարձրանալ, բան մը տեսնելու համար։ Ներքնակողմը մեծ, կլորակ սեղանի մը շուրջը կիսաբոլորակ

մը կկազմեն ազգային վարչական մարմիններու անդամները, իրենց մեջտեղը ունենալով ծերունազարդ վարդապետը։ Դիմացը՝ դրպրոցական փայլուն նստարաններու վրա շարված են 7—15 տարեկան 50 տղայք, նոր համազգեստներու մեջ ժպտուն, իսկ երկու կողմը տեղ բռնած են ազգային վարժարաններու երկսեռ աշակերտները, իրենց ուսուցիչներուն հետ։

Նորաշեն հաստատության բացման հանդեսն է։ Հանդիսավոր պատարագեն հետո, զոր առաջնորդը մատուց հատկապես հաստատության բարերարին ծնողներուն հոգուն համար, հոգեհանգիստ կատարվեցավ անոնց գերեզմանին վրա, և ամբողջ բազմությունը դեպի նոր շենքը ուղղվեցավ։

Տնօրհնենքեն ետքը, վարդապետը բնաբան առնելով Հիսուսի խոսքը՝ «Ամեն, ասեմ ձեզ, որովհետև արարիք միում եղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք», հուզված ու հուզիչ շեշտերով բացատրեց բարեգործության հանդերձյալ կյանքի մեջ գտնելիք վարձատրությունը և անոր վսեմ ու անխառն հաճույքները նույնիսկ այս աշխարհիս վրա, վեր հանեց բարձր առաքինությունները օրվան բարերարին, որ հազարավոր ոսկիներու ծախքով այս հոյակապ շենքը կանգնած էր և հարուստ կտակով մը անոր գոյությունը մշտնջենապես ապահոված. հայտնեց, որ թեև նոր հաստատությունը առայժմ 50 որբեր միայն ունի, բայց շենքը կրնար 150 հոգի պատսպարել, ու այդ թիվը շուտով պիտի լրացներ. և խոսքը կնքեց սրտագին առատ մաղթանքներով, մեծ բարերարին ու անոր դաստակերտին համար։

Հետո հաջորդաբար խոսեցան քաղաքական ժողովի, թաղական և ուսումնական խորհուրդներու ատենապետները։ Ազգային վարժարանի աշակերտներեն մեկ քանին արձակ և ոտանավոր ուղերձներ կարդացին։ Աշակերտական երգեցիկ խումբը մեջընդմեջ կերգեր, արտասանություններ կըլլային, և մինչև իսկ վարտիքնին կապել չգիտցող մանկապարտեզի անույշ, թլվատ պզտիկներ իրենց մեներգներով ու տրամախոսություններով հանդեսի փայլին կնպաստեին։

Իսկ ժողովուրդը, աննկարագրելի խանդավառութենեն կարծես մոլեգնած, յուրաքանչյուր ճառ կամ ուղերձ որոտընդոստ ծափահարություններով ու գոռ աղաղակներով կվավերացնե— «Կեցցե՜ բարերարը, կեցցե՜ աղա Մելքոնը, կեցցե՜, կեցցե՜» երկարաձիգ

բացականչությունը պարբերաբար շենքը կցնցե ու ամբողջ թաղին մեջ կարձագանքե։

Իսկ օրվան հերոսը... մեծ բարերա՞ը... անուններու պատահական նմանությո՞ւն մը լոկ, թե՞... բայց չէ, չէ, կասկած չկա, սա մեծադիր լուսանկարին նայեցեք, որ ոսկեզօծ շրջանակի մը մեջ՝ դիմացի պատը կզարդարե, ան է, ան է, ճիշտ ու ճիշտ մեր Լուլոնց Մելքոնը։ Բայց ինք ո՞ւր է, չըլլա՞ թե... կտակը բացված ըլլա վերջապես։ Հոս է, հոս, ահա, հոն, վարդապետին աջ կողմը։ Մեծ բազկաթոռի մը վրա կծկտած, իր մարմնին պատկառելի զանգվածը ամփոփելու, պզտիկնալու անկարելի ճիգին մեջ է կարծես։

Խեղճ առանձնասեր, համեստ մարդը շվարած է այս արտասովոր ցույցերուն առջև, որոնց միակ առարկան ինք է։ Ձեռքերը կուրծքին, գլուխը վայրահակ, ոչխարային խոշոր, բարի աչքերովը հազիվ երբեմն գաղտագողի ակնարկ մը կսպրդեցնե դիմացը շարված տղոց վրա։ Բայց դեմքը հոգեկան անպարագիր երանության մը ակներև ճառագայթումովը կցոլա։ Մինչև իսկ արտաքինն ալ անհավատալի այլակերպության մը ենթարկված է։ Մեծ վերարկուն ու շալվարը դերձակի խանութեն նոր ելած ըլլալու խրոխտ երևույթը ունին. ֆեսին ձևն ու գույնը բոլորովին տարբեր են, և սովորաբար ածելիի կարոտ երեսը այսօր հղկված մարմարի պես կփայլի։ Բոլոր աչքերը իրեն ուղղված են, ամեն շարքերու մեջ փսփսուք մը ու երբեմն լսելի բացականչություններ կթռչտին իր հասցեին։ Բոլոր ատելությունները, բոլոր արհամարհանքները, բարեգործության այդ մեկ հարվածովը փշրված էին և տեղի տված ճիշտ այն զգացումին, զոր երկար ատեն ատված ու հալածված սուրբի մը տեսքը պիտի արթնցներ դարձի եկող հալածիչներու սրտին մեջ։ Հիմա, ամենեն ավելի անոնք էին խանդավառողները, որոնք ամենեն ավելի բամբասած էին զինք. ոչ ոք մտքեն կանցներ, թե մարդն է, որ փոխված է, ոչ, այլ ընդհակառակը ամենքն ալ այն զգացումը կխանդաղատեր, թե ան միշտ այսպես բարի եղած է, միշտ այնպես հեզ, և միայն իրենք են, որ չեն կրցած ճանչնալ ու անարդար դատաստանով դատած են խեղճ, անխոսուկ, բարեսիրտ մարդը։ Ու հիմա արդար քավության և հանդիսավոր հատուցումի օրն է— կեցցե՜, կեցցե՜ Աղա Մելքոն, կեցցե՜ բարերարը։

Հապա ե՞ս։ Է՞հ, մի հարցնեք, գրեթե օրվան երկրորդ հերոսն

եմ։ Հանդիսին տոնապետությունը ստանձնած, կանցնիմ, կդառնամ, հրամաններ կարձակեմ, կարգադրություններ կընեմ, հպարտ, ուրախ, ոգևոր։ Չէ՞ որ ես էի հասարակաց կարծիքին կողմեն տգիտաբար աղբանոց նետված այս խոշոր մարգարիտը երևան հանողը...

Խեղճ բարերարը վերջապես կստիպվի ոտքի ելնել, համբ, հանդիսավորի դերին մեջ չմնալու համար։ Սակայն հազիվ լսելի ձայնով մը քանի մը խոսք միայն կկարենա թոթովել։

— Սիրելի հայրենակիցներս, շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, աստված մեզմե դեռ շատերը աս ուրախության արժանացնե։

Բայց այս անպաճույճ, կցկտուր խոսքերը բոլոր ճառերեն ավելի տպավորություն կգործեն, և բազմությունը բուռն ծափահարություններու ընկերացած, միաբերան ամեն-ներով կձայնակցի իրեն։

Այս միջոցին համազգեստավոր 50 տղայքը խմբովին երգ մը կերգեն բարերարին ձոնված, ապա տեղերնեն կելնեն և կարգով կմոտենան ու իրենց «բարերար-հայրիկին» ձեռքը կհամբուրեն։ Աղա Մելքոն Լուլույանը, հակառակ իր ամբողջ ամոթխած ճիգին, չի կրնար իր արցունքը զսպել, խոշոր տղու հեկեկանքով կուլա ու մեկիկ-մեկիկ կգրկե իր նոր զավակները, որոնք նույնպես կփղձրկին։ Աստված ղինք ամուսնական երջանկութենեն զրկեց, բայց ահա այսօր 50 որդի մեկեն կպարգևե։ Բայց չէ միայն ուրախության արտահայտություն չէ այդ արցունքը, որ տղայության շրջանը անցնելեն ի վեր թերևս առաջին անգամն ըլլալով իր գիրուկ այտերը կթրջե։ Իր հեկեկանքին մեջ ցավագին շեշտ մըն ալ կա, դառն մորմոքը, որ այսչափ ուշ կթևակոխեր հոգեկան այս անճառ երանության աշխարհը, մինչդեռ անոր բանալիները վաղուց ի վեր իր գրպանին մեջ կժանգոտեին։

Վարդապետը, կրկին քանի մը խոսքով և պահպանիչով հանդեսը կփակե ու իր քովիններուն հետ բարերարը կառաջնորդե դեպի առաջնորդարան, ուր թաղական խորհուրդի կողմե հացկերույթ մը պատրաստված է անոր ի պատիվ։ Սակայն հանդիսականները դյուրավ ճամբա չեն տար. իրար հրելով, հրմշտկելով, ամենքն ալ հառաջ անցնիլ կուզեն, մոտեն տեսնելու այն մարդը, զոր ասկե առաջ հազար անգամ տեսած էին զզվանքով ու ծաղրանքով։ Տարեցները՝ ձեռքը կթոթվեն, քանի մը խոսք ուղղելով,

մեկ քանին նույնիսկ կհամբուրվին հետը, մինչև անգամ քանի մը մայրեր իրենց պզտիկները գրկած կմոտենան, որ ձեռքը համբուրել տան...

Այս տեսարանին առջև ակամա խորհրդածություն մը պաշարեց գլուխս։

Եթե կյանքի կրկեսին մեջ բոլոր մարգիկ, առանց բացառության, միմիայն իրենց անձնական ուժով ու արժանիքներով մըրցելու հարկադրված ըլլային, մեր անմահ բարերարներեն քանիքանինե՞ր անծանոթ ու անհիշատակ կորսված պիտի ըլլային հասարակ մահկանացուներու այն անփառունակ զանգվածին մեջ, զոր ժամանակի հոսանքը անդուլ կքշե կտանի հավիտենական մոռացության անդունդը... Եվ այս տեսակեն դեռ որչափ մարդիկ կան մեր մեջ, որոնք, նորածինները բաշխող ժամկոչ-աղբոր և կամ կույր բախտին սոսկ մեկ քմահաճույքին շնորհիվ, այսօր ի վիճակի են առանց քրտինքի, առանց զրկանքի, առանց նեղության, լոկ ձեռքի մեկ շարժումով, իրենց անունները քանդակել տալու ազգային երախտագիտության ապառաժին վրա, այն անուններուն զոր, որոնց տերերը տիտանի ճիգերով, զրկանքի կյանքով ու հոգեմաշ տառապանքներով միայն կրցած են հոն արձանագրվիլ։ Որչափ կան այսպիսիներ, որոնք սակայն չեն մտածեր, չեն ուզեր...

— Ո՞վ է...

Ականջիս թմբուկը թակող այս անդնդային խուլ ձայնը հանկարծ այնպես մը ցնցեց զիս, որ ամբողջ գեղեցիկ պատկերը վայրկենապես աչքես անհետանալով, փոխարենը Լուլոնց Մելքոնին խարխուլ տան դուռը ցցվեցավ առջևս...

Նազարեթ էֆենդիին տունեն ելնելե ետքը, երևակայությունս՝ պզտիկ Արամին դեպքեն թոխչք առած՝ սկսած էր հույսի ոլորտներուն մեջ թևապարել, հետևաբար չէի նկատած, որ արդեն Մելքոնին տունը հասած էինք ու ընկերներս դուռը կզարնեին։

— Կարծես Մելքոնին ձայնն էր, չէ՞,— հարցուցի ընկերներուս, խելքս գլուխս ժողվելով։

— Հարցնելու պետք կա՞ր,— պատասխանեց անոնցմե մեկը, հանգանակության տոմարը անութեն հանելով,— ուրիշ ո՞րու բերանն է ինկեր այդ տեսակ ձայն հանել։

Տունն էր ուրեմն։ Հրճվանքի կտիկ մը անցավ մարմնես. սիրտս սկսավ տրոփել, շուտով պիտի վճռվեր, քիչ առաջվան տե-

սիլքս անմիտ ցնո՞րք մըն էր լոկ, թե իրականության նախագուշակ մտապատկեր մը։

Այդ միջոցին դռան վերև պատուհանի նմանող պզտիկ դռնակ մը բացվեցավ և նշմարվեցավ դեմք մը, որուն արարածներու ո՞ր դասին պատկանիլը չկրցանք որոշել, որովհետև դռնակը վայրկենաբար կրկին փակվեցավ։ Հինգ րոպեի չափ սպասեցինք, հուսալով, որ այս լրտեսումեն հետո բացումը չպիտի ուշանար, սակայն իզուր։ Քանի մը ուժգին բախում, երկրորդ հինգ րոպե մը ևս սպասում, կրկին քանի մը ջղաձգային բախում և վերջապես ոտքի ձայն լսվեցավ դռան ետև, ու ցանկալի մուտքը բացավ մեկը, որ քիչ առաջ վերևի ծակեն մեզ լրտեսողը ըլլալ կթվեր։

Գյուղացիի տարազով, նիհար, երկայնահասակ երիտասարդ մըն էր։ Կարմիր մազերով, երեսը դեղնագույն բիծերով արատավոր, քիթը՝ կարծես ճակատն ի վեր մագլցելու խոլ ճիգով մը՝ վեր պրկված, ոունգերուն ամբողջ գաղտնիքը կցուցադրեր։ Պղտորկապույտ աչքերեն մեկը կիսով չափ փակ էր, և դեմքը ընդհանրապես քունեն նոր արթնցածի տպավորությունը կգործեր։

— Աղան տունը չէ,— ըսավ տարօրինակ արարածը, առանց մեր հարցումին սպասելու և դռան փեղկը բռնած, ոտքերովը այնպիսի անհանգիստ շարժումներ կըներ, որ կարծես թե դուռը վայրկյան մը առաջ փակելու անհամբերութենեն կպարեր։

— Ինչպե՞ս թե տունը չէ,— գոչեցինք գրեթե ամենքս միաբերան։

— Տունը չէ, քիչ մը առաջ դուրս ելավ։

Պահ մը իրարու երես նայեցանք ապշած։

— Հապա ո՞ւր է,— հարցուցի ես, կասկածոտ նայվածք մը կախելով մարդուկին երեսն ի վար, որ ըստ երևույթին՝ Լուլոնց Մելքոնին սպասավորը ըլլալու պատիվը ուներ։

— Չեմ գիտեր, ըսավ, որ այսօր շատ ուշ կուգամ, կարելի է հեչ չգամ ըսավ,— պատասխանեց գյուղացին և մատներով սկսավ դռան բանալիի ծակին հետ խաղալ։

Առջի բերան կարծեր էի, թե աչքին մեկը կույր է, սակայն սխալս շուտ նկատեցի, որովհետև քիչ մը ետքը փակ աչքը մեկենիմեկ բացվեցավ և փոխարենը անմիջապես մյուսը փակվեցավ։ Կերևնա թե խնայողության համար աչքերը հերթով կբանցըներ։

Ընկերներս ճարահատ, ետ դառնալու հակամետ էին, բայց

ես առանց ընդդիմությունի դնելու— վնաս չունի, մենք կսպասենք, կարելի է քիչ մը ետքը կուգա— ըսի և կիսաբաց դուռը սպասավորին ձեռքեն հրելով ներս մտա, ընկերներս ալ առանց առարկության հետևեցան ինծի։

Սպասավորը այս անսպասելի որոշումս լսելուն պես, այնպիսի տագնապով մը ներս քշեց, որ եթե ուրիշ կասկած չունենային՝ պիտի կարծեինք, թե մեզ գողի տեղ դնելով տանիք կվազեր հավար կանչելու։ Բայց, երբ խարխուլ սանդուղքներեն վեր ելանք, ան կրկին մեզ դիմավորեց, բավական հանդարտած դեմքով, և մտցուց սենյակ մը, որ կերևնա թե իր աղային դահլիճն էր։

Գրեթե քառակուսի, բավական մեծ սենյակ մը, երեք պատուհանով, որոնցմե երկուքը ետևի փողոցը կնայեին, իսկ մյուսը բակին վրա։ Պատերը անհիշատակ ժամանակներե ի վեր ծեփիչի գոյությունը մոռցած կերևնային։ Կահկարասիքի ամբողջությունը կկազմեին հասարակ, գունաթափ կապերտ մը, որ հակառակ իր բռնի առաձգության՝ չկրնալով հատակը ամբողջովին ծածկել, տակի խսիրին մեկ մասը մերկ ձգած էր։ Դիմացի պատին երկայնքին արևելյան բազմոց մը բարձերով, կողմնական պատերու տակ քանի մի հինումին աթոռներ, իսկ սենյակին մեջտեղը կլորակ մեծ սեղան մը, որու վրա սիգարետով լեցուն կերակուրի պնակ մը և քանի մը մոխրամաններ ամայությունը պարտկելու կաշխատեին։

Ընկերներս բազմոցին վրա շարվեցան, իսկ ես աթոռ մը առնելով բակին վրա նայող պատուհանին առջև տեղ բռնեցի, ուրկե կարելի էր դուրսի դռան վրա հսկել։

Քաղաքավարի սպասավորը, մեզի սիգարետ հրամցնելե ետքը, կրկին անհետացավ։

— Է՜հ, ի՞նչ խելքով ներս մտար,— հարցուցին ինծի ընկերներս։

— Հապա ի՞նչ կուզեիք որ ընեինք, ե՞տ դառնայինք։

— Անշուշտ ավելի լավ էր ետ դառնայինք,— ըսավ Տիգրանը,— ուրիշ անգամ կրնայիք կրկին գալ։

— Ինչպե՞ս թե ուրիշ անգամ, այս հաշվով հիսուն անգամ ալ գալու ըլլանք, աղան տունը չպիտի գտնենք. դուք ինծի ան ըսեք, երբ որ դուռը զարկիք, ո՞վ է— պոռացողը տանտիրոջ ձայնը չէ՞ր։

— Տարակույս չկա, որ Մելքոնին ձայնն էր,— պատասխա-

նեց մեր գանձապահը,— անպիտանը անպատճառ ներսը պահվըտած է։

— Թող պահվտի. ես հիմա զինք մեջտեղ կհանեմ,— ըսի ինքնավստահ շեշտով մը։

— Ինչպե՞ս կհանես։

— Ինչպե՞ս, շատ պարզ կերպով, հիմա պատրվակ մը բռնելով ամբողջ տունը կշրջիմ. դուք ալ հոս տան դռան վրա կհսկեք, որ չըլլա թե գաղտագողի դուրս փախչի, և ուր որ է երևան կելնե։

— Բայց ատ քաղաքավարության հակառակ է,— դիտել տվավ մեր քաղաքավար ատենադպիրը։

— Կեցցե՞ս դու, ի՞նչ ալ աղեկ գտար քաղաքավարությունդ ծախելու տեղը, հապա ո՞ր քաղաքավարության համաձայն է տունը ըլլալ և այցելուները խաբել...

— Եվ ան ալ այսչափ ապուշ կերպով,— ավելցուց մեր գանձապահը, որ ինծմե պակաս գրգռված չէր երևնար։

— Զգե, աղբար, ձգե ի սեր աստծո, ել գործերնուս երթանք,— սկսան հորդորել մյուսները,— գետինն անցնի ինքն ալ, իր տալիք ստակն ալ. մենք արդեն առաջուց ըսինք քեզի, որ այդ խոզեն մազ մը անգամ չի փրթիր։

— Չէ, անկարելի է. սա դռնեն դուրս չեմ ելներ, մինչև որ չխայտառակեմ անպիտանը,— եղավ իմ վերջնական վճիռս։

Ընկերներս չորս կողմե վրաս թափած դեռ կշանային համոզել զիս, երբ բարեբախտաբար սպասավորը կրկին ներս մտնելով վիճաբանությունը ընդհատեցավ։

Սուրճ կբերեր։ Իսկ այսչափ շուտ սուրճ բերելը «վայրկյան մը առաջ կոռվեցեք գնացեք»-ի պատկերավոր թարգմանությունն է մեր կողմը։

Սուրճեն ումպ մը առի, խմվելիք նեկտար չէր. բանի մը չնմանող համը կմատներ, որ արդեն քանի մը անգամ եփված պաղած և վերջին անգամ կրկին տաքցված էր ի պատիվ մեզի։ Ընկերներս համը ճաշակելե հետո իրենց բաժակները ետ տվին, իսկ ես իմս պատուհանին մեջ դրի և սիգարետ մը վառելով՝ անքաղաքավար ծրագրիս գործադրությունը հառաջաբանելու նպատակով՝ քաղաքավարի խոսակցություն մը սկսա սպասավորին հետ, որ սուրճի ափսեն բռնած՝ բաժակիս կսպասեր։

— Աղբար, անունդ ի՞նչ է։

— Ղունկիանոս է, բայց Խնկո կըսեն,— պատասխանեց գյուղացին, շնորհալի ժպիտ մը փորձելով։

— Այս սուրճը դո՞ւն ես եփեր, Խնկո աղբար։

— Հրամանք ես, աղա ջան։

— Կեցցե՞ս, այսպես սուրճ կյանքիս մեջ դեռ չէի խմեր։

Ղունկիանոսը այս compliment-ես շողոքորթվելով, սկսավ իր ուրախությունը կենդանի կերպով արտահայտել, սագի պես մեյ մը մեկ ոտքին վրա կկենար, մեյ մը մյուս ոտքին, ամեն անգամին ալ համապատասխան կողմի աչքը խփելով։

— Է, աղաղ քեզի ամսական ի՞նչ կուտա։

— Ամսական չեմ առներ, լուսահոգի հայրս ժամանակին աղային հորմեն ստակ էր փոխ առեր, չէր կրցեր տալ, պարտքը երթալով շատցեր էր, աղան մեր տունն ու հողը պիտի ծախեր, բայց մայրս ու աղբարներս շատ աղաչեցին, շատ լացին, աղան խղճաց, չծախեց. շատ լավ մարդ է. աստված գործը հաջողե։ Հիմա տարվե-տարի ցորեն կուտանք պարտքի տեղ, տոկոսի տեղ ալ աղային ծառայություն կընենք. ձմեռը մեծ աղբարս կուգա կծառայե մինչև ցանքի ատենը, գարնան ալ ես մինչև կալուկասի վերջանալը։ Բայց անցածները մեր գեղացի Դուրսունին մանչը կալին մեջ դանակով զարկեր է աղբորս, աղոր համար չկրցավ գալ աս ձմեռ, ամիս մըն է պառկած է։ Մեր աղան շատ քրիստոնյա ողորմած մարդ է, շատ, շատ— կրկնեց Խնկո պարզամիտ հիացումի անկեղծ շեշտով մը,— ուրիշը ըլլար, ունեցած չունեցածնիս ծախեր էր, բայց աղան չծախեց, մեղքցավ մեզի. աստված երկար կյանք տա մեր աղային։

— Ամեն,— պատասխանեցի ես, գլխուս շարժելով։

— Ափսոս, որ աս տարի գյուղ չկրցա երթալ,— ավելցուց Ղունկիանոսը,— ձմեռները գեղին ժամը տիրացություն կընեմ։

Արդեն առաջին հարցումիս պատասխանեն հասկցած էի, որ դիմացինս հասարակ գյուղացի մը չէր, քանի որ իր անունին ստուգաբանությանն իսկ հմուտ էր, սակայն իր այս անմեղ փառասիրությունը անուշադիր չթողնելու համար բացականչեցի.

— Ի՞նչ կըսես, ուրեմն կարդացող ես։

— Հրամանք ես, յոնճալուցի Համբարձում վարժապետին քով եմ կարդացեր,— պատասխանեց տիրացու Խնկոն, հանկարծ երկու աչքերը մեկեն բանալով և այնպիսի հպարտ ձևով մը, որ կարծես թե աշխարհահռչակ պրոֆեսորի մը անունը կուտար։

Նկատեցի, որ Համբարձում վարժապետին աշակերտը վտան-

գավոր ախորժակ մը ցույց կուտար իր ուսանողական սխրագործութիւնները պատմելու, ուստի խոսքը իմ բուն նպատակիս շրջելու համար՝ անմիջապես ոտքի ելա, սուրճի բաժակը ափսեին մեջ դրի և հարցուցի.

— Տիրացու Խնկո, աղաղ մինակ մարդ է, սա ահագին տունը ի՞նչ կընե։

— Ի՞նչ ընե,— պատասխանեց Խնկոն, որին տիրացու տիտղոսը մեծ փոխարինութիւն մը եղավ իր ինքնակենսագրութիւնը չկարենալ շարունակելուն համար,— պապուն օջախն է, չի ուզեր ձգել։

— Եթե չի ուզեր ձգել, գոնե թող նորոգել տա, աս ինչ է, ավերակ է դարձեր։

— Շատ ստակ կերթա, աղա ջան, շատ ստակ, 100 տարվան տուն է։

— Հարյուր տարվան, ուրեմն կատարյալ հնութիւն է, լավ որ ըսիր, ես հնութիւններով շատ կհետաքրքրվիմ, երթանք մեյ մը շենքին բոլոր մասերը ցույց տուր տեսնեմ։

— Բան չկա տեսնելու, աղա ջան, հեչ բան չկա,— ըսավ Խընկոն շփոթած և տան տարիքը հայտնելուն չարաչար զղջացած,— ավերակ է, ամենեն նոր սենյակը աս է։

— Վնաս չունի, ես կուզեմ տեսնել։

Խեղճ տիրացուն վայրկյան մը շվար մնալե հետո հանկարծ— հիմա կուգամ— ըսավ ու սենյակեն դուրս վազեց այնպիսի շտապով մը, որ դռան առջև սուրճի բաժակներեն մեկ քանին ափսեեն վար ցատկելով ջարդուփշուր եղան։

Ընկերներս, որ մեծ զվարճութիւամբ ականջ կդնեին մեր խոսակցության, այս տեսարանին առջև ընդհանուր քրքիջ մը արձակեցին, բայց միևնույն ժամանակ կարեկցութիւններին շարժվեցավ, և կրկին սկսան հորդորել զիս, որ հրաժարիմ անգութ դիտավորութենես։ Իմ սիրտս ալ պակաս չէր շարժած անմեղ տիրացվին դժընդակ դերին վրա, բայց բարկութիւնս ավելի մեծ էր։

— Դուք մի խառնվիք, քաղաքավարի տեղերնիդ նստեցեք, միայն թե չմոռնաք դուրսի դռան վրա հսկել։

Ես առանց Խնկոյի վերադարձին սպասելու ճամբա ելա... մեր ապագա բարերարին գյուտը ընելու։

Հյուրասենյակեն դեպի տան ներքին կողմը տանող ճամբան շատ ապահով չէր երևնար։ Ցած, նեղ, ծուռումուռ փողանցք մը,

որու ծայրը մթության մեջ կկորսվեր, առիքը տեղ-տեղ կասկածելի կերպով փոր տված էր, և պատերուն վրա կախարդական խաղերու ձևով ճյուղավորված ճեղքերը կարծես մոտալուտ աղետի մը սպառնալիքը կխմբագրեին։ Վարանումի մեջ էի, երբ մութին մեջ բանի մը խլրտիլը նշմարեցի ու հանկարծ մեկը ցատկեց առջևս... փառք աստուծո, սատանա չէր, ընդհակառակը, սուրբ... Ղուկիանոսն էր։

— Կտեսնա՞ս, աղա ջան, պտտելու տեղ չէ, ամբողջ ավերակ է,— ըսավ, իր եկած կողմը ցույց տալով։

— Ավելի լավ, արդեն ես ալ ավերակներու սիրահար եմ,— պատասխանեցի տիրացվին կռնակը ծեծելով։

Վտանգավոր կիրճը անցնելով ողջ-ողջ տան ներքնակողմը թափանցելե ետքը, ալ առանց շատ վստահելու Խնկոյի կիկերոնությանը վրա, ձեռքովս կբանայի հանդիպած բոլոր դռները և ոստիկաններուն իսկ նախանձը շարժելիք աչալրջությամբ մը կխուզարկեի ամեն ծակուծուկ։ Սենյակներեն մեկ քանիի մեջ կոտրտած անպետք կահկարասիներ թափված էին, մեծամասնությունը բոլորովին դատարկ էր, միակ բնակիչները սարդերն էին, որոնք պատերն ու առաստաղները անխռով ցանցած, բարդավաճ գաղթականություններ հիմնած էին։ Խնկոյին հարցուցի, թե աղան ի՞նչ վարձ կառներ ասոնցմե, բայց որոշ տեղեկություն մը չկրցավ տալ։ Վերջապես հասանք պզտիկ սենյակ մը, զոր մյուսներու հետ համեմատելով՝ բավական շքեղ կահավորված կարելի էր համարել։

Հատակը հասարակ խսիրով մը ծածկված, մեկ անկյունը կապերտի մը վրա անկողին մը փռված էր, քովը պզտիկ, աղտոտ սնտուկ մը, որու վրա աշտանակ մը և կաշեկազմ հին Նարեկ մը դրված էին։ Դիմացի անկյունը փայտե կոպիտ նստարան մը և պատերեն մեկուն վրա ալ պահարանի մը դռնակը կերևնար։

— Աղային սենյակն է,— ըսավ Խնկոն և անկողնի սնարին վերև կախված պատկեր մը վար առնելով, թևովը վրայի փոշին սրբեց ու ձեռքս տվավ։ Փայտե շրջանակի մեջ անցված, հին, դեղնած լուսանկար մըն էր, վրայի պզտոր ապակիին տակեն հազիվ կնշմարվեին խոշոր տղամարդ մը և կարճահասակ կին մը, երկուքն ալ տեղական տարազով, փայտե արձաններու պես քովքովի կանգնած։

— Ո՞վ են ասոնք, տիրացու։

— Մեր աղային հայրն ու մայրը,— պատասխանեց տիրացուն երկյուղածությամբ։

Ուրիշ առթիվ անշուշտ ավելի ուշադրությամբ կդիտեի Լուլոնց Մելքոնին այդ զույգ հեղինակները, սակայն հիմա մեր փընտրածը իրենց գլուխգործոցն էր, ուստի շուտ մը Խնկոյին վերադարձուցի լուսանկարը— աստված հոգինին լուսավորե— մրմընջալով, և սկսա սենյակը աչքե անցնել։ Անկողինը պարապ էր, իսկ սնտուկին կամ պատի պզտիկ պահարանին մեջ հավաքվելիք բան չէր փնտրածս։ Կարծես արդեն սկսած էի հավատալ, որ իսկապես աղան տունը չէր, երբ ննջասենյակին դիմացը փոքրիկ դուռ մը նշմարելով, քայլերս հոն ուղղեցի բնազդաբար։

Խնկոն, որ մինչև այդ ատեն համակերպական հանդարտությամբ մը կընկերանար ինծի, երբեմն առաջ անցնելով, երբեմն ետ մնալով՝ քայլերուս այս վերջին ուղղությունը նկատելուն պես կարծես խելքը գլխեն թռավ։ Հանկարծ մեկ ոստումով առջևս անցավ, երեսը ինծի դարձնելով թևերը պարզեց ու ողորմուկ ձայնով մը ճչեց։

— Հոդ բան չկա, աղա ջան, հոդ բան չկա... իրք է... բան է...

Այս շփոթությունը տարտամ նախազգացումս որոշ կասկածի փոխեց, և քայլերս ավելի արագեցի. իսկ Խնկոն առանց դիրքը փոխելու ետ-ետ կերթար, մինչև որ դուռը հասանք... Ընդհատ, խղդուկ շնչառության մը նմանող մշմշոց մը կլսվեր ներսեն։ Արդեն ձեռքս երկնցուցած էի, երբ տիրացուն կոնակը դրան տվավ, թևերը ինծի ցցեց, մեկ ոտքը վեր վերցուց և հուսահատ աղաղակ մը արձակեց... վայրկյան մը կարծես՝ լեզուն կապվեցավ, բայց անմիջապես գերագույն ճիգ մը ընելով, կրցավ շարունակել.

— Հոս բան չկա, հոս... չէ, աստված վկա, բան չկա...

Տարակույս չկար, գտած էի. բայց այդ պահուն հավատարիմ ծառան կես սպառնական, կես պաղատական՝ այնպիսի սրտառուչ դիրք մը առած էր, որ անմիջապես զգացի, թե իր դիակին վրա կոխելով միայն կարելի պիտի ըլլար խորհրդավոր դռնեն ներս անցնիլ։ Ձեռքս քաշեցի ու ետ դարձա, մանավանդ որ անպիտանը այն տեսակ հաստատություն մը ապաստանած էր... որու անբռնաբարելիությունը միջազգային օրենքով նվիրագործված է։

Երբ կրկին հյուրասենյակը մտա, կարոտելոց նպաստամատույց հանձնաժողովին անդամները ծիծաղելով տեղերնեն ցատկեցին.

— Հա, ի՞նչ եղավ։

— Ոչինչ, ելեք երթանք։

Խոժոռ դեմքով տրված այս լակոնական պատասխանիս վրա զարմացած իրարու երես նայեցանք, և անձայն վար իջանք։

Խնկոն ուղտի քայլերով վազեց դուռը բացավ. դեմքը իր նախկին անուշությունը առած էր վերստին, միայն թե աչքերը հիմա ավելի ստեպ կփոխեին իրենց հերթը, և ժպիտ մը վեր քաշած էր բերանին մեկ անկյունը։

— Տիրացու, ինծի նայե,— ըսի դուրս ելնելու միջոցին,— երբ աղաղ տուն գա, մեր կողմեն հատուկ բարև ըրե և ըսե, որ մեզի սպասե, ժամ մը ետքը նորեն պիտի գանք։

Բայց հանկարծ միտքս ընկավ սուրճի բաժակներուն մեծ աղետը, որու պատճառը ես եղած էի, և որու երեսեն խեղճ տիրացուին ծառայությունը կըներ տարին մըն ալ երկարել, ուստի խոյուին երկու հատ հինգ ղրուշնոց հանելով դրպանես՝ ավելցուցի.

— Առ աս և սուրճի կոտրած բաժակներուն տեղ նորերը գնե, որ աղաղ չբարկանա վրադ։

Տիրացուն սկիզբը մերժելու շարժում մը ըրավ, բայց շուտ մը առավ դրամը և շնորհակալ բարևով մը պատասխանեց.

— Գլխուս վրա, աղա ջան։

Արդեն ճաշի ժամանակ էր։ Փողոցին մեջ ընկերներուս հետաքրքրությանս արդյունքը հաղորդելե հետո՝ ըսի.

— Դուք գնացեք ճաշեցեք, միայն հանգանակության տոմարը ինծի տվեք։

— Ի՞նչ պիտի ընես,— հարցուցին ապշած։

— Ի՞նչ պիտի ընեմ, փողոցին մեջ պիտի սպասեմ մինչև խայտառակին օձիքը ձեռք անցնեմ։

— Հապա եթե տունեն դուրս չելնե՞։

— Շան պես կելնե. չտեսնի՞ք ինչ պատվիրեցի սպասավորին, դիտմամբ ըսի ժամ մը հետո նորեն պիտի գանք, որ վախեն տունեն դուրս փախչի։

Այս անգամ առարկություն չըրին, տոմարը հանձնեցին ու գնացին, կեսօրեն ետքը հանգանակությունը շարունակելու համար առաջնորդարան ժամադրություն տալով։

Է

Տունեն քիչ մը հեռու, դիմացի կողմը գտնվող պզտիկ փողոցի մը անկյունը դարանակալ կսպասեի, հանգանակության տոմարը ձեռքս, աչքս շեշտակի դռան վրա սևեռած։ Ճիշտ այն որսորդին պես, որու հալածած աղվեսը, բռնվելու վրա, հանկարծ անմատչելի ծակ մը կփախչի ու ինք՝ հրացանը ձեռքը, ծակին առջև կհամառի կատղած։

Խուլ զայրույթ մը ջիղերս կկրծեր։ Որբանոց-արհեստանոցի սպանիական դղյակը, շինվելուն պես ալ վայրկենական խորտակումով մը վար իջած էր, բայց հույսս դեռ ոչ բոլորովին փարատած։ Անտրամաբանական, անարդարանալի կույր հավատք մը դեռ կշարունակեր այն ակնկալության տակ պահել միտքս, թե երբ այդ մարդուն հետ երես-երեսի գամ, խոսիմ, նկարագրեմ, բացատրեմ, պիտի կրնամ համոզել զինք և գեթ նշանակելի գումար մը փրցնել։ Մտքիս մեջ անգամ մըն ալ սկսա վերարտադրել այն ճառը, զոր հատկապես այս դիմումին համար պատրաստած և արդեն քանի մը անգամ մշակած էի։ Այս անգամ բորբոքված տրամադրությունս ամբողջական վերհարդարում մը տուն տվավ, մեղմ, թույլ մասերը կռեց, պրկեց և տեղ-տեղ այնպիսի սրտաշարժ դիմառնություններ ավելցուց սրակոտոր զոհերու և տառապող թշվառներու բերնեն, որ ոգևորությանս մեջ, իբր թե արդեն մարդուն առջևը ըլլայի, լսելի ձայնով արտասանել սկսա, բարեբախտաբար փողոցին մեջ անցուդարձ չկար, թե չէ...

Բայց ահա դուռը բացվեցավ... ինք է։ Հնարքս իր նպատակին հասած էր, ժամացույցս նայեցա, քսան րոպեեն ավելի չէի սպասած։ Կամացուկ մը գլուխը դուրս հանելով, գողի մը պես, փողոցին երկու կողմը լրտեսելե ետքը, դուռը քաշեց և հապճեպ քայլերով, ըստ իր սովորության, պատի տակեն թավալիլ սկսավ։ Իմ կողմս կուգար։ Անմիջապես թաքստոցես դուրս ցատկեցի և հանդարտորեն, կարծես զինք նշմարած չըլլայի, առջևը ելա։

Զիս տեսնելուն պես հանկարծ ցնցվեցավ, ետ ու առաջ քանի մի շփոթ շարժումներ ըրավ, բայց շուտ մը ինքզինք ժողվեց և խորին մեծարանքով մը բարևեց զիս։

— Բարև, Մելքոն աղա, քիչ մը առաջ նպաստամատույց հանձնաժողովի մյուս ընկերներուս հետ ձեզի եկած էինք, սակայն դժբախտաբար պատիվ չունեցանք ձեզ տեսնելու։

— Այո,— պատասխանեց Մելքոն աղան. ձեռքերը չփնչփնալ և աչքերը գետին խոնարհած,— քիչ մը գործ ունեի, դուք նոր գացեր էիք, ես տուն եկա. մանչը լուր տվավ։

— Կցավիմ, որ քիչ մըն ալ չենք սպասած. հիմա կրնա՞նք պզտիկ տեսակցություն մը ունենալ, շատ չի տևեր, քանի մը րոպեի գործ է։

— Կաղաչեմ, հրամեցեք։

Գրպանեն բանալի մը հանելով, դուռը բացավ և միասին տուն մտանք։

Մեզի ծանոթ հյուրասենյակին մեջ զիս բազմոցին վրա հյուրասիրելե և սիգարետ մը հրամցնելե ետքը, տանտերը խնկոյին ձայն տվավ, որ սուրճ բերե։ Սուրճի անունը լսելուն պես ստամոքսս դող ելավ, և անմիջապես խնդրեցի, որ ավելորդ նեղություն չկրեն, պատրվակելով, թե արդեն քիչ մը առաջ խմած էինք, և թե բժշկական պատվեր ունեի սուրճ շատ չգործածելու։

Մելքոն աղան ալ առանց այդ խնդրին վրա ծանրանալու՝ աթոռ մը առնելով սեղանին ծայրը նստավ, և ես կրցա անմիջապես գործի սկսիլ։

Զգացումիս ու պերճախոսությանս ամբողջ թափովը հիշեցուցի այն սոսկալի հարվածը, որ մեր գլխուն իջած էր, նկարագրեցի անոր ամբողջ ահռելի հետևանքը. քանի մը օրվան մեջ սերունդներու աշխատության արդյունքը ոչնչացած, բազմաթիվ շեն գյուղեր մոխրակույտերու վերածված, բյուրավոր ժիր ու կտրիճ դատկաններ անվաստակ ու հացի կարոտ, հազարավոր այրիացած մայրեր ու որբացած մանուկներ անոք, անօգնական։ Բացատրեցի մարդու և հայու՝ մեր նվիրական պարտքը շուտափույթ օգնության ձեռք կարկառելու այս թշվառներուն, մանավանդ այն փոքրիկ անմեղ, դժբախտ հրեշտակներուն, որոնք գիշերները զիրար գըրկած՝ սալահատակներուն վրա կպառկեին, իրենց մայրերու ուրվականներուն հետ զառանցելով և ցերեկը փողոցի շուներուն հետ կմրցեին սնունդի թափթփուքներու համար։ Ծանրացա կրկնակի պարտականության վրա այն բախտավորներուն, որոնք անձնապես զերծ մնացած էին հարվածեն, որոնք դեռ առատ միջոցներ ունեին ապրելու, վայելելու և պետք է, որ ուրիշներն ալ գեթ սովեն փրկեին։ Շեշտեցի մասնավորապես այն մեծ դերը, զոր ինք առանձնապես կրնար այս պահուս կատարել խոշոր նպաստով մը թե՛ այս աշխարհի վրա անթառամ հիշատակ և թե՛ հանդերձյալին

մեջ հավիտենական երջանկություն ապահովելով։ Ցույց տվի, թե ինչ անբավելի մեղք, ինչ սարսափելի ոճրագործություն պիտի ըլլար անտարբերությունը այս միջոցին, երբ մինչև իսկ աննշան զոհողություններով մարդկային կյանքեր կարելի է փրկել ամեն վայրկյան։ Եվ վերջապես բարոյական այս բոլոր նկատումները մեկդի թողնելով, խնդիրը զուտ նյութական շահու տեսակետով քննեցի։ Չէ՞ որ աշխարհը անցավոր է, իսկ ինք անզավակ ու անժառանգ. մինչև հիմա ո՞վ կրցած էր հոս դիզած հարստութենեն հետը բան մը տանիլ անդիի աշխարհը գերեզմանի գետնուղիով, փոխադրության միակ և չափազանց շահավոր միջոցը կմնար դարձյալ բարեգործությունը, որ բյուրապատիկ տոկոսով վճարելի փոխանակագիրներ կուտար երկնային դրամատան վրա։

Խոսած միջոցիս Լուլոնց Մելքոնին դեմքը կդիտեի ուշադիր, խոսքերուս տպավորությունը նախագուշակելու համար։ Ձեռքերը կուրծքին կապած, գլուխը կախ, կարծես ավետարանի տակ բռնած ըլլար՝ անշարժ նստած էր, լուռ աղոթողի մի խոկմունքով։ Երբ խոսքս ավարտեցի, ոտքի ելա և հանգանակության տոմարը բանալով՝ սեղանին վրա, առջևը դրի։

— Աստված ինք ողորմի, մարդոց ողորմութենեն ի՛նչ կելնե։

Այս մրմունջը միայն լրցա լսել բերնեն։ Առանց երեսս նայելու, մեծ վերարկուին կոճակը քակեց, տակեն արույրե դիվիք–դալեմ* մը դուրս ելավ, գրչամանեն գրիչ մը հանեց, դիվիք–դալեմը սեղանին վրա դրավ. թանաքամանին բերանը բացավ, գրիչը քանի մը անգամ թաթխելով լավ մը տոգորեց և վերջապես տոմարը առջևը քաշելով, գեղագրության վարժությունը ընող աշակերտի մը խնամքով սկսավ գրել։

Այս սովորական, աննշան մանրամասնությունները այդ պահուն այնպիսի խորհրդավորություն մը առած էին աչքիս առջև, որ կարծես ճակատագիրս գուշակող վհուկի մը արարողությունները ըլլային։ Իսկ երբ գրիչը շարժիլ սկսավ, ուժգին տրոփում մը առավ սիրտս, շունչս բռնվեցավ և ականջներս գրչածայրի ճզոցին լարված՝ կարծես ճիգ կթափեին աչքերես առաջ գուշակելու անոր ավրված կտուցեն դժվարությամբ ծորող՝ հազարավոր թշվառներու համար գրեթե ճակատագրական թվանշանները։ Ու ճզոցը դադրելուն պես տոմարին վրա հարձակեցա։

* Դիվիք-դալեմ— մանավորապես գոտի մեջ կրելու համար մեռաղե շինված, երկար փողով թանաքաման մը։

...Մեյ մը տոմարին կնայիմ, մեյ մը գրողին երեսը... գլուխս սկսավ պտույտ գալ, աչքերուս վրա մթություն մը իջավ, դիվահարի պես պատուհանին առջև վազեցի, տոմարը լույսին բռնելու... չէ, աչքերս չէին խաբեր զիս, մագաղաթային նոտրագրով մը դրոշմված էր.

Հոգուս համար մեկ արծաթ մենիտ։

ՏԱՍԸ ՏԱՐԻ ԵՏՔԸ

Հայ գրողի մը հիշատակներեն

Լևոն Սարգսյանին

Խա՜ղ որ տարօրինակ մարդ է եղեր սա Արտավազդ Ղարիբյանը։

Երեք տարի կար, որ մտերմացած էինք և սակայն ակնարկություն մը իսկ չէր ըրած, թե գրող ալ եղած էր ժամանակին։ Այո՛, գրող և ան ալ ոչ հասարակ տեսակեն, ինչ որ ավելի անհասկանալի կըներ իր այս անտեղի գաղտնապահությունը, զոր պարզ դիպված մը եկավ երևան հանելու։

Կովկասյան հայ հանդեսի մը հին թիվերը փոխ առած էի բարեկամե մը, զորս թղթատելու ատեն հանդիպեցա արևմտյան բարբառով քանի մը պատկերներու թարգմանությամբ։ Ասոնցմե մեկուն վրա հարևանցի ակնարկ մը բավական եղավ, որպեսզի անմիջապես իրարու ետևե կարդայի ամենքն ալ, ճշմարիտ հափշտակությամբ։ Ինծի համար պարզապես գրական հայտնություն մը եղան այդ սակավաթիվ էջերը, որոնց ինքնատիպ ու կուռ ոճը հզոր բարձրաքանդակի մը պես դուրս կցցվեր ռուսահայ հանդեսին սովորաբար տափակ մակերեսեն և որոնց ներքին հորինվածքին անանց գեղեցկություն մը տված էր զգացումի ու սրամտության սերտ շաղապատումը։ Բնականաբար հիացումիս չափ բուռն եղավ նաև զարմանքս, որ տարբներե ի վեր հայ գրականության ուշագիր հետևող մը ըլլալովս հանդերձ՝ բնավ բան մը չէի կարդացած այդ անծանոթ տաղանդեն և ոչ ալ անոր անվան հիշատակությանը հանդիպած էի գրական ոևէ ուսումնասիրության մեջ։ Արդյոք երևելի գրողի՞ մը սկսնակի ծածկանունն էր այս

Թաթարը, թե տարաժամ թոռման նորափթիթ տաղանդի մը։ Անզուսպ հետաքրքրությունս ապահովաբար պիտի կրնար գոհացնել հանդեսներուն տերը, որ ժամանակին իբր բաժանորդ անշուշտ ինք ալ կարդացած և հետաքրքրվելով իմացած ըլլալու էր այս գաղտնիքը։ Ուստի նախ անոր դիմեցի։

— Ինծի՞ կհարցնես,— պատասխանեց մարդը ծիծաղելով։

— Հապա որո՞ւ հարցնեմ։

— Նույն ինք Թաթարին, որուն հետ ես ամեն օր

— Ինչպե՞ս, ի՞նչ կըսես, ո՞վ, Արտավա՞զդը։

— Կզարմանամ, որ նոր կիմանաս։

— Իրա՞վ կըսես, վա՞յ անպիտան։

Ավելորդ է ըսել, թե նույն իրիկունն իսկ մտերիմս քովը վազեցի, բացատրություն պահանջելու։

* * *

Մինակ գտա զինք իր սենյակին մեջ։ Գիշերվան երկար վերարկուով ընկողմանած էր բազմոցին վրա, մեկ ձեռքը գիրք մը բռնած, իսկ մյուս ձեռքը երկար չիբուխ մը, ուրկե բարձրացող ծուխի բալանները թափանցիկ ամպի մը մեջ պարուրած էին զինք։

— Բարի իրիկո՛ւն, պարոն Թաթար,— գոչեցի վրան վազելով։

Այս անակնկալ հորջորջումեն կարծես ցնցվեցավ հանկարծ, գլուխը վեր առնելով, նկատելի շփոթումով մը երեսս նայեցավ, բայց իր միշտ արթուն պատրաստաբանությունը անմիջապես օգնության հասավ իրեն։

— Հա՛, գեշ չէր նմանությունդ, այս կերպարանքիս տակ իրավ որ բավական կնմանիմ Թաթարի, եկո՛ւր նստե՛ նայինք։

— Ի՞նչ նմանություն, անպիտա՛ն, ի՞նչ նմանություն, դեռ կշարունակե՞ս թաքնությունդ, չհասկանալու մի՛ զարներ, գրագետ Թաթարին է ակնարկությունս. գաղտնիքդ երևան հանեցի, գիտցած եղիր, ալ ձեռքես չես կրնար ազատվիլ։

— Օ՜, ինչ մեծ գյուտ ես ըրեր, թուղթի մուկ,— պատասխանեց հեգնական բացականչությամբ մը,— ես արդեն կսպասեի ադոր այն օրեն, երբ ամսագիրներու հին թիվերը տեսա քովդ, բայց զիս ո՞վ մատնեց քեզի։

— Քեզի ինչ, մատնողը մատնեց, բայց շիտակը շատ վիրավորված եմ այս անտեղի գաղտնապահությանդ համար և մանավանդ չափազանց վշտացած, որ այդպիսի խոստմնալից տաղանդ մը ամլության դատապարտած ես։

— Վիրավորվելու բան չկա, սիրելի՛ս. այդ մասին եթե մինչև հիմա բնավ խոսք չեմ բացած քեզի, ադոր պատճառը գաղտնապահությունը չէ, ի՛նչ գաղտնապահություն կրնա ըլլալ հոն, ուր գաղտնիք չկա։ Միակ պատճառը ան էր, որ ինծի համար շատ ծանր է խոսիլ կյանքիս ամենամեծ ոգևորության և ամենադառն հիասթափության շրջանը կազմող այդ օրերու մասին, քրքրել վերք մը, զոր տասն երկար տարիներ հազիվ կրցան փառով մը ծածկել։ Եվ հետո չէի ուզեր իմ տխուր փորձառությանս օրինակովը առաջին քայլերուդ իսկ վհատություն պատճառել քեզի, որ— քու բացատրությունդ քեզի վերադարձնեմ — այնչա՛փ խոստմնալից տաղանդ մը կբերես մեր գրականության։

— Զարմանալի՜ բան, այդ ինչ տեսակ դժբախտություն պիտի ըլլա, որ կրցած է այս աստիճան ընկճել քեզ. իրավ ես ալ, նորընծա գրող մը ըլլալով հանդերձ՝ արդեն շատ մը խոշընդոտներու կհանդիպիմ, սակայն դեռ չեմ կրնար երևակայել այնպիսի կացություն մը, որ կարենար զիս վերջապես վհատեցնել։ Բայց ինչ որ ալ ըլլա, անպատճառ պիտի լսեմ պատմությունդ, թերևս միասին կարենանք ճար մը խորհիլ այդ խոր վերքդ բուժելու և գրականության վերադարձնելու տաղանդդ, որ՝ անկեղծորեն կըսեմ, շատ բարձր է այս բառին մեր մեջ ունեցած ընթացիկ իմաստեն։

Հոս ժպիտ մը լուսավորեց Թաթարի դեմքին մռայլությունը։

— Է՜հ, անցած ըլլա, ա՛լ այդ մասին մտածելն իսկ ավելորդ է. լավ կզգամ, որ իր բեղմնավորությունը անդարձ կորսնցուցած է իմ մեջ այն բնատուր ուժը, զոր ատենոք տաղանդ կկոչեին։ Թուղթի վրա հոսելու, լույս աշխարհ գալու միջոցեն զրկվելե հետո, ան ներքին ճամբաներ բացավ իրեն և սկսավ դեպի էությանս անծանոթ խորքերը սորսորիլ։ Իսկ գալով զայն այս վիճակին հասցնող պատճառներուն, պետք չկա սարսափելի դժբախտություններ երևակայելու, ընդհակառակը պիտի ապշիս, երբ ըսեմ, թե գլխավոր պատճառը մինչև իսկ բարեբախտություն մըն էր, այնպիսի բան մը, որ դեռ մինչև այսօր ալ իդեալը կմնա խեղճ հայ գրողներու. այսինքն՝ գրական վարձատրությունը։ Բայց կտեսնեմ, որ ինչպես ըսիր՝ ա՛լ ձեռքդդ ազատելիք չունիմ, մինչև ծայրեծայր չպատմեմ այս գրական կենսագրությունս. ուրեմն մտիկ ըրե, թերևս իբր գրելու նյութ կծառայե քեզի և ադով՝ ապագային

մեր գրականության պատմագրին ալ իբր ոչ անշահեկան վավերաթուղթ մը։

***

Արդեն գիտես, որ Պոլիս առած եմ ուսումս, հետևաբար հարկ չկա ավելցնել թե գրական գործունեությունս ալ դպրոցական գրասեղանեն սկսավ։ Հոն ինչպես հիմա՝ այսպես ալ իմ ժամանակս, գրեթե ամեն աշակերտ ուղղագրություն սորվելե առաջ գրականություն ընելու կելներ։ Դեռ թաղային դպրոցի մեջ գրագետ աշակերտի համբավ հանած՝ ինքնավստահ ու հպարտ փոխադրվեցա միջնակարգ վարժարան մը։ Բայց ի՜նչ ահռելի հիասթափում։ Աստվա՜ծ իմ։ Ես որ ամեն անգամ քերթողի գրիչս ձեռք առնելու համար մուսային այցելությանը պետք ունեի անհրաժեշտորեն, հոս այնպիսի մրցակիցներու կհանդիպեի, որոնց մուսաները կարծես քթերնուն պես անբաժան էին իրենցմե։ Իմ շան տանջանքով տողված երկու երես արձակիս դեմ՝ ասոնք առնվազն վեց երես կարտադրեին, վրան ալ քանի մը ոտանավոր։ Գրիչը ձեռքես նետեցի, կատաղորեն զայրացած Պառնասի դեմ, որ ապահովաբար մինչև այն օրը քթիս խնդացեր էր, իր էն անպետ և հավանորեն կաղ մուսային հանձնելով իմ գրական ճակատագիրս։ Կերևա, թե այս զայրույթս հասավ հասցեին և պետք եղած տպավորությունը ըրավ, որովհետև տարին չբոլորած ոչ միայն նոր դասընկերներուս հետ չափվելու վիճակին հասա, այլև առաջնակարգ դիրք մը ստեղծեցի լուսավոր գաղափարի մը հղացումով։ Թերթ մը հրատարակել դասարանին մեջ։ Խանդավառ ոգևորությամբ ողջունվեցավ այս հանրօգուտ առաջարկս, մանավանդ որ ստորին դասարաններու մեջ ըլլալով տակավին համարձակությունը չունեինք ձեռագիր ներկայացնելու խմբագրություններուն, մինչդեռ անտիպ գրվածքներու պահեստները օրըստօրե կմեծնային։

Եվ ահա քանի մը օր վերջ լույս տեսավ առաջին թիվը, ճակատին վրա «Ներշնչարան, զուտ գրական հանդես» զարդագիր տիտղոսով։ Այս զուտ գրական շաբաթաթերթը— անշուշտ չմոռնալով պայմաններու տարբերությունը— կերդնում, որ ո՛չ մեկ բանով վար կմնար Պոլսո նմանօրինակ ոևէ հրատարակութենե մը։ Մինչև իսկ կրնար պարծիլ բացառիկ առավելությամբ մը անոնցմե շատերուն և Կովկասի բոլոր հայ թերթերուն վրա, այսինքն բաժանորդի ցավ չուներ, որովհետև միայն մեկ օրինակ կհրատարակվեր... ձեռագիր, և ձեռքե-ձեռք կկարդացվեր։ Միակ ծախքը, թուղթին հայթայթումը, հարուստ ընկեր մը իր վրա առած էր ազգապիրաբար։

Սկիզբը Ներշնչարանի յուրաքանչյուր թիվը 16 երեսե կբաղկանար, բայց կարճ միջոցի մեջ ստիպվեցանք հետզհետե կրկնապատկել, եռապատկել, քառապատկել այս ծավալը և դեռ կարելի չեղավ գեթ մերձավոր հավասարակշռություն մը հաստատել անոր էջերուն խնդրանքին և հոդվածներու ահագին մատուցումին միջև։ Եվ ինչպե՞ս կարելի ըլլար։ Տասնվեց հոգի էինք, ասոնցմե ութը արդեն իրենց սրբազան ուխտը ըրած էին գրականության. բայց հանդեսին հրատարակությունը մյուսներուն ալ փառասիրությունը գրգռեց և ահա՛ ամբողջ դասարանը վարակվեցավ։ Պարզապես ախտ էր, կարծես տեսակ մը գրական հարբուխ, որ հազալու, փռնգտալու փոխարեն արձակ ու ոտանավոր արտադրել կուտար։

Մեջերնիս մինակ մեկն էր, որ կրցավ մինչև վերջը չոր ու առողջ մնալ։ Զափազանց աշխատասեր, ընդունակ և սրամիտ տղա մը, որ երբեք տող մը իսկ գրելու փորձությունը չունենալե զատ, ընդհակառակը, շարունակ կծաղրեր մեզ։ Այդ բացառությունն ալ այնչափ զարմանալի չպիտի թվի քեզի, երբ հայտնեմ, որ կեսարացի էր տղան։

Բնավ մտքես չելներ, սերտողության ժամու մը, երբ ամենքս ալ խորին լռության մեջ կաշխատեինք, հանկարծ այս անպիտանին ձայնը լսվեցավ ուսուցչական ամբիոնեն։

— Պարո՜ն գրագետներ, կաղաչեմ, ձեր թանկագին վայրկյաններեն մեկը ինծի նվիրեցե՛ք, շատ կարևոր ծանուցում մը ունիմ ընելիք։

Եվ երբ ամենքիս ուշադրությունը իրեն դարձավ, նույն հանդիսավոր շեշտով հայտարարեց.

— Մինչև հիմա որչափ թուղթ որ մրոտեր եք, բերեք ինծի. պատրաստ եմ ամենն ալ գնելու լավ գնով։

— Ի՞նչ պիտի ընես, պիտի հրատարակե՞ս։

— Չէ՛, Վոսփորի վրա թուղթե կամուրջ մը պիտի շինեմ... մուսաներու համար։

Ուրիշ օր մը, երբ հավաքված՝ ապագա գրական մեծագործությանց ծրագիրներ կշինեինք, ան ալ մեկուսի նստած մտիկ կըներ, քթին տակեն ծիծաղելով։

— Ծո՛, դո՞ւն ինչ պիտի ըլլաս, Ղայսերցի,— հարցուցի իրեն։

— Ե՞ս,— պատասխանեց կատարյալ լրջությամբ,— առաջները մտադիր էի հորս առաջարկը շարունակել, բայց հիմա կմտածեմ, որ ավելի շահավետ ձեռնարկություն մը պիտի ըլլա գործարան մը բանալ և ազգին դագաղ ու պսակ հասցնել իր սովամահ գրագետները թաղելու համար։

Երկու տարի անխափան շարունակվելե ետքը դադրեցավ Ներշընչարանը, դասարանին մեջ ծագած գժտություններու պատճառով։ Բայց ալ պետքը չէինք զգար ձեռագիր թերթին, արդեն սկսած էինք տպագիր թերթերու մեջ արշավել։ Մանավանդ ես Պոլսո մեջ հայ թերթ չթողուցի, ուր գեթ քանի մը անգամ չփռեի անունս կամ ծածկանուններս ոևէ մեկը, սիրային ոտանավորեն սկսած մինչև թաղական պատուհասող հոդվածի տակ. այնպես որ երբ ընթացավարտ եղա, այդ բոլոր թերթերը ջերմ շնորհավորություններով ողջունեցին «իրենց տաղանդավոր աշխատակցին դպրոցական փայլուն ընթացքե մը հետո կյանքի ասպարեզը թևակոխելը»։

Սակայն այդ անիծյալ ասպարեզը շուտով հասկցուց մեզի, որ ինք մեր երևակայած վարդ ու աղջիկ երգելու բուրաստանը չէր և ոչ ալ ցնորքի ճարտարապետներուն թողված ազատ գետին մը։ Հազիվ քանի մը ամիս անցած՝ գրականության ուխտադիր մեր տղոցմե անոնք, որ հարուստ ծնողք կամ պաշտպան ունեին, մեկիկ-մեկիկ գացին տեղավորվիլ առևտրական գրասենյակներու մեջ. մյուսներն ալ իրենց վկայականները ուսերնին զարկած՝ պաշտոն որսալու ետևե էին։ Մինակ ես մնացի շուկայի քերականությունը արհամարհող։ Աշակերտության շրջանեն ելնելես ի վեր գրագետի դիրքս ավելի բարձրացած էր. հետևաբար ավելի մեծ ոգևորությամբ կշարունակեի խմբագրատուններու շրջանը ընել և ամենքին ալ անխտիր ու անարծաթ բաշխել տաղանդավոր աշխատակցությունս։

Բայց խեղճ այրի մայրս, որ հայ հարուստի մը տունը աղախնություն ընելով կրցած էր վերջապես զիս այդ տարիքին հասցնել և դիպլոմա մը առնել տալ, բոլորովին տարբեր հույսեր դրած էր վրաս։ Գիշեր, ցերեկ կհորդորեր, կթախանձեր, որ ալ վերջ տամ դատարկաշրջությանս և գործի մը մտնելով՝ մարդ ըլլամ։ Ամբողջ տարի մը միակ առարկությունս գործ չըլլալու պատրվակն էր. բայց օրին մեկն ալ եկավ ավետեց, թե իր աղային շնորհիվ լավ գործ մը գտած էր ինձի. գրագրի պաշտոն մը Ալեքսանդրիա հայ վաճառականի մը քով։ «Չորս ոսկի ամսական և սենյակ, տարվե-

տարի ալ պիտի ավելցնե», կկրկներ ուրախացած։ Դեռ փախուստի ճամբա մը կար. «բայց, մայրիկս, ինչո՞ւ մեկենիմեկ, ելնեմ օտար երկիր երթամ, կեցիր նայինք, կարելի է հոս գործ գտնեմ ղազեթաճիի մը քով»։ «Ա՜խ, ես ի՞նչ ըսեմ ան ղազեթաճիներուն, որ քու խելքդ, միտքդ առեր, ձրի կբանեցնեն», հառաչեց դժբախտ կինը սիրտը լեցված և լացավ, աղերսեց, որ ձեռքե չփախցնեմ այդ հազվագյուտ գործը, աղան շուտով պատասխանի կսպասեր։ Խոսք տվի անպատճառ երթալ, եթե քանի մը օրվան մեջ չկրնայի Պոլիս գործ մը գտնել։ Ալ անկարելի էր օձիքս ազատել։

Հաջորդ օրը ամբողջ համարձակությունս մեկ տեղ բերի և անմիջապես դիմում ըրի խմբագիրներուն, հայտնելով, որ նյութական կացությունս ա՛լ չէր ներեր ձրի գրել, և եթե կփափագին աշխատակցությանս շարունակմանը, կամ վարձատրություն մը պետք է սահմանեն և կամ պաշտոն մը տան խմբագրության մեջ։ Ամենքն ալ ճիշտ նույն ոճով և նույն սիրալիր դարձվածքներով՝ կարծես իրարմե սորված ըլլային՝ պատասխանեցին, թե դժբախտաբար իրենք ալ նույն նյութական պատճառներով առայժմ չպիտի կըրնային համակրելի տաղանդիս գնահատության այդ գործնական ապացույցը տալ, բայց եթե հաճեի ժամանակ մըն ալ շարունակել աշխատակցությունս, ապագային կհուսային բան մը ընել։ Բերանս չբացվեցավ։ Այն հեռանալն էր, որ հեռացա և երդում ըրի ա՛լ տող մը չգրել ադոնց թերթերուն, եթե նույնիսկ տաղանդավոր տիտղոսը ճանճարեղի բարձրացնեին և գրելիք հոդվածներս ալ կանխավ ամիս մը շարունակ հայտարարեին իրենց տպարանին էն խոշոր տառերովը։

Այս դիմումներես դուրս մնացած էր միայն այն ժամանակվան ամենամեծ օրաթերթը, որուն բնավ չէի աշխատակցած, որովհետև անոր հրատարակիչը սիրված չէր նոր երիտասարդության մեջ և մյուս բոլոր թերթերու կողմե կհալածվեր։ Ասոր պատճառը գաղափարի տարբերություն չկարծես, մեջտեղ գաղափար չկար, որ տարբերություն ըլլար. ամենքն ալ իրար կարժեին. միայն թե այս վերջինը՝ իր արհեստին մեջ հինցած գայլ մը, ճամբա չէր տար մյուսներուն. ասկե նախանձն ու չարախոսությունները։ Ովը իյնողը օձին կփաթթվի ըսեր են. վերադարձիս ասոր խմբագրատան առջևեն անցնելու ատեն պահ մը կեցա և մտածեցի։ Վերջին փորձ մը. երեսիս ամչկոտության քողը ա՛լ պատռած էր, մերժումեն անդին ի՞նչ կար, աս գոնե այն առավելությունը ուներ,

որ նյութական անձկության հանկերգը չպիտի կրնար կրկնել. իր թերթը ամենեն տարածվածն էր և քանի մը հազար բաժանորդ ունի կըսեին։

Ներս մտա։

Տեր և տնօրենը իրեն չափ ահագնածավալ անգլիերեն թերթի մը վրա ծռած, լուրեր քաղելու զբաղած էր։ Հազիվ բարեհաճեցավ գլուխը վեր առնել և ապուշ դեմքով մը խնդիրքս լսելե ետքը.

— Է՛, բեր նայինք, աղվոր բան ըլլա նե առանց ստակի ալ կտպենք,— պատասխանեց ու սկսավ գործը շարունակել։

Փրկվա՜ծ էի։

Նույն իրիկունն իսկ հայտնեցի մորս, թե պատրաստ էի Ալեքսանդրիա երթալ։ Տեր և տնօրենին անմոռանալի պատասխանը վայրկենապես բուժած էր գրախտս, ինչպես կոպիտ գամ մը, որ նշտրակի փրկարար դերը կկատարե դիպվածով։ Ա՛լ այնուհետև գրականության անունը լսելու ջիղերս ոտքի կելնեին և մինչև Պոլսեն հեռանալս երբ աչքիս հայերեն թերթ մը հանդիպեր, բզկտելս կուգար պարզապես։

Ծովային խաղաղ ճամբորդությունը և պատմական հիշատակներով հարուստ նոր երկրի մը տեսքը բարոյական ապաքինումիս բավական նպաստեցին։

Ամեն բանե ավելի վաճառականին տեսիլքն էր, որ ողբերգական գույն մը կուտար ապագայիս հեռապատկերին։ Արդեն առջի օրեն կերևակայեի ճաղատ գլխով, հաստափոր մեկը, որ ամեն առտու կանուխ «բարի լույս»-ի փոխարեն «ծո՛, շուն-շանորդի»-ով մը պիտի ողջուներ զիս, ամբողջ օրը գյուղացի ծառայի մը պես հեգհև պիտի բանեցներ և ամեն իրիկուն ալ քշելու, վռնտելու սպառնալիք մը պիտի դներ հետս իբր անկողնի ընկեր։ Պոլսո մեջ տեսածս օրինակներեն դատելով՝ տարբեր տեսակ չէի կրնար պատկերացնել հայ վաճառական էֆենդիի կամ աղայի տիպը։ Եվ այս արդարացի երկյուղս այն աստիճան մեծ էր, որ երբ մեր նավը Պոլսո նավահանգիստեն կբացվեր, սարսուռ մը պատեց ամբողջ մարմինս, աչքիս թվեցավ, թե նավաստիները՝ ձեռքերնին պարաններով վրաս կվազեին զիս կապկպելու և թևերովս օդին մեջ այնպիսի հուսահատ շարժումներ ուրվագծեցի, որ կարծես նոր Փարավոնի մը գերի կտարվեի։

Սակայն բախտս, վերջին պահուն կարծես ինքն ալ արգահատելով սրտաշարժ վիճակիս, հանգամանքներուն հրաման փոխանցած էր այնպես մը զուգորդվիլ, որ կարելի եղածին չափ նվազ դժնդակ ըլլար մեծանուն և բազմանուն հեք բանաստեղծիս գրականութենե վաճառականություն փոխանցումը։ Որչափ մեծ եղավ զարմանքս ու մխիթարությունս, երբ ծանրաբարո, բայց պարզ ու բարեսիրտ ծերունի մը ելավ դիմացս։ Քաղցրությամբ ընդունեց զիս և հայրական շեշտով մը երկար, բարակ բացատրեց նոր պաշտոնիս պարտականությունները, մեծ հույսեր տվավ ապագայիս մասին, որոնց իրականացումը միմիայն իմ ցույց տալիք աշխատասիրութենես ու հավատարմութենես կախված պիտի ըլլար։

Հանգուցյալը բնիկ զմյուռնացի էր։ Աղքատի զավակ, փոքր հասակեն առևտրական ասպարեզը նետված էր և Անգլիո մեջ շարքաշ ու համառ աշխատությամբ իրեն դիրք մը ստեղծելե հետո Եգիպտոս հաստատվելով՝ գլխավորաբար բամբակի գործով կըզբաղեր։ Աստված հոգին լուսավորե՜, երբեք չեմ կրնար մոռնալ զինք, որու նման հազիվ թե հատ մըն ալ գտնվի մեր վաճառական դասակարգին մեջ։ Ի՜նչ մեծ համբերություն ու հոգածություն ցույց տվավ, մինչև որ քիչ շատ վարժվեցա գործին և գործածելի վիճակին հասա։ Բանաստեղծին վաճառականություն սորվեցնելը, ճշմարիտ որ կապիկին ասավածաբանություն և կամ արջին նկարչություն սորվեցնելու չափ բան մըն է։ Եվ ոչ մեկ պատրաստություն ունեի. թեև մաթեմատիկի բոլոր առարկաները՝ տոմարակալությամբ հանդերձ՝ վկայականիս մեջ իրարու տակ շարված էին, դիմացինին «քաջալավ»-երով, բայց եկուր տես, որ անմիջական պարզ հաշիվ մը ընելու համար երեսներով թուղթ կմրոտեի, թվաբանության, ալգեբրայի, երկրաչափության, եռանկյունաչափության հիշողությանս հատակը մնացած կտորվանքները օգնության կկանչեի և ի վերջո էֆենդիս էր, որ կգտներ լուծումը, մտավոր կարճ հաշվով մը։ Մայր ու ձագ տոմարներու ծննդաբանության խելք հասցնելու համար ամիսներ հարկ եղան։ Ֆրանսերեն, այո՛, Զոլայի արձակը և Վերլենի ոտանավորը վարժ կթարգմանեի և սակայն առևտրական հասարակ նամակ մը չէի կրնար հասկնալ։ Իսկ անգլիերենը, որ մեր գործառնությանց համար անհրաժեշտ լեզու մըն էր՝ բնավ չէի գիտեր։ Աշկերտության այս տաժանելի շրջանը եթե կրցա անցնիլ, ադոր ամբողջ արժանիքը էֆենդիս կպատկանի. միմիայն իր անսահման երկայնամտութենեն ամչնալով և իր ազնվութենեն ընկճվելով էր, որ

ատամներս սեղմեցի, վիզս ծռեցի և անտրտունջ ու անընդհատ տանջանքով վերջապես պաշտոնս ինքնագլուխ կատարելու կարողությունը ձեռք բերի։

Այս պայմանները սկիզբի տարին կատարյալ անգրականության ենթարկած էին զիս։ Պակասավոր մեքենայի բազմաշարշար աշխատանքն դուրս ոչ մեկ բանով կզբաղեի և ամբողջ ազատ ժամանակս սրճարանները կանցնեի։ Այդ տարվան մտավոր միակ վաստակս եղավ անգլիերեն լեզուն, զոր էֆենդիս հանձնարարությամբ ստիպված էի սորվիլ մասնավոր ուսուցիչ մը։ Բայց երկրորդ տարին մեջս զգալի փոփոխություն մը ծայր տվավ, որուն գլխավոր շարժառիթը անգլիերեն լեզուն էր։ Տարվան մը մեջ այս լեզուն այնքան սորված էի, որ կարդացածս առանց դժվարության կհասկնայի։ Ծերունի ուսուցչիս խանդավառ խոսակցությունները իր ազգային գրականության վրա և դասագրքիս մեջ գտնված գրական հրաշակերտ հատվածները ընթերցանության փակված ախորժակս կրկին բացին։ Մյուս կողմե զբաղումիս դժվարությունները հաղթահարած էի, նոր պայմաններու հետ քիչ շատ հաշտված։ Օրվան մեջ բավական ազատ ժամեր կունենայի և էֆենդիս ոչ մեկ դիտողություն կըներ, եթե գործ չեղած ատեն գիրք մը տեսներ ձեռքս. ընդհակառակը, ինք ալ սիրահար էր ընթերցանության։

Մասնավոր ախորժակով կկարդար անգլիական վեպեր և շատ անգամ, երբ վաճառատան մեջ առանձին նստած կըլլայինք՝ խոսք կբանար իր նախասիրած հեղինակներուն մասին։ Հափշտակությամբ կսիրեր ճառել մանավանդ անգլիական ազգին մեծությանը վրա։ Գրական նուրբ ճաշակ կամ մտավոր մեծ պաշար չուներ, բայց իր հայու առողջ դատողությունը մեծապես օգտված էր Անգլիո մեջ անցուցած կյանքեն. հետևաբար իր խոսակցությունը միշտ մասնավոր շահեկանությամբ ու հաճույքով կփնտրեի։

Կամաց-կամաց ոտքս սրճարանեն կտրեցավ և ամեն իրիկուն ընթրիքեն հետո վաճառատան վերի հարկը գտնվող պզտիկ սենյակս առանձնացած կկարդայի։ Այս ընթերցումներուս, որոնք առանց առաջադրած նպատակի, լոկ կրավորական հետաքրքրությամբ մը հառաջ կտարվեին սկիզբը ոևէ կարևորություն չէի տար, և ոչ իսկ մտքես կանցնեի, թե կպարապիմ։ Եվ սակայն այս ընթացքով՝ շատ չանցած՝ Դիքենսի, Ստերնի, Սվիֆտի, Թեքերեի, Շեքսպիրի, Բայրընի գլուխգործոցները անզգալաբար իրարու հաջորդեցին և մեծ ազգի այս մեծ մտքերուն հետ հանդարտ

հաղորդակցությունը մեջս այնպիսի հեղաշրջում մը առաջ բերավ, որ ես ինքս ալ զարմացա։ Չէ՞ որ Պոլիս ալ կկարդայի և անհամեմատ ավելի մեծ եռանդով ու անհամեմատ ավելի շատ. բայց ինչո՞ւ այն ատեն ոչ մեկ հեղինակի ոգիին կրցած էի այնպես թափանցել, ինչպես հիմա. ոչ մեկ գործ այնքան մտածել տված էր ինծի, որքան հիմա։ Այս հարցերը զիս հետզհետե այնպիսի խորհրդածություններու մղեցին, որոնք կատարյալ հայտնություններ էին ինծի համար։

Արդարև նոր չէր, որ կկարդայի. մինչև իսկ այսօրվան կարդացածներես շատերը Պոլսեն ծանոթ էին ինծի ֆրանսերեն թարգմանությամբ։ Արդեն նկարագրեցի, թե դրախտը ի՛նչ մեծ թափով կճարակեր մեր վարժարանին մեջ, գրելու հետ զուգընթացաբար և նույն տարապայման համեմատությամբ հառաջ կտանեինք նաև ընթերցանությունը։ Ֆրանսերենը քիչ շատ հասկնալու վիճակին հասնելուս պես սկսած էինք կարդալ։ Կկարդայինք առանց ընտրության, առանց սիստեմի, պարզապես ինչ որ ձեռքերնիս անցներ։ Յուրաքանչյուր նոր հատորի ընթերցումին կհաջորդեր բուռն վիճաբանություն մը. դասարանին մեջ օրվան հերոսը ան էր, որ նոր հեղինակի մը մասին ճառեր և մեջերնիս տեսակ մը մրցում կար կարդացված գրքերու քանակությամբ իրար գերազանցելու։ Այս մրցումեն ետ չմնալու և վիճաբանությանց մեջ հաղթական հանդիսանալու համար հաճախ դաս չէինք պատրաստեր ու գիրք կկարդայինք, չսիրված դասերու միջոցին միշտ գիրք մը կար առջևնիս թաքցված։ Մեր աշակերտության շրջանին Պոլսո գրական նորաձևությունն էր ֆրանսական բնապաշտ դպրոցը։ Հայ մամուլին մեջ ուժգին պայքար մը կմղվեր նոր գրողներու և հիներու միջև։ Նորերը թարգմանություններով և ուսումնասիրություններով կջանային ծանոթացնել մեր հասարակության այդ նոր ուղղությունը, զոր խանդավառորեն կփառաբանեին ու կպաշտպանեին։ Իսկ հիները գայթակղած՝ անբարոյական, ապականիչ, խենեշ կգտնեին այդ դպրոցին արտադրությունները և հասարակությունը կզգուշացնեին անոնցմե։ Ճիշտը ըսելով՝ երկու կողմն ալ շատ քիչ ծանոթ էին խնդրին էությանը և ծայրահեղության մեջ կիյնային։ Մենք որ ուշադիր հետևողներ էինք օրվան գրական կյանքին, բնականաբար չէինք կրնար անտարբեր մնալ այս մեծ պայքարին և իբր նորագույններ՝ անշուշտ նորերու կողմը պիտի անցնեինք, մանավանդ որ մեր գրականության ուսուցիչն ալ նորերու

խումբին կպատկաներ։ Այս նորաձևության հրապույրը ավելի գրգռեց մեր կարդալու մոլուցքը։ Զոլայի և իր դպրոցին մյուս ներկայացուցիչներուն ստվար գործերը հատոր-հատորի ետևե կլափեինք այնպիսի տենդոտ հապճեպով մը, որ միայն աչքերնիս կգործեր, իսկ մտքերնիս՝ ժամանակ չգտնելով այդ չափե դուրս սեռնդը մարսելու՝ վերի-վերո խառնափնթոր գաղափարներու, տարտամ զգացումներու և աղոտ պատկերներու քաոս մը կդառնար։ Եվ ահա այդ քաոսին անմիջական արտադրությունը կըլլար այն կանխահաս, ճոզած գրականությունը, որուն հոյակապ մեկ կոթողն էր մեր անմոռանալի Ներշնչարանը։

Շատ ժամանակ չէր անցած այդ օրերու վրայեն, բայց և այնպես այժմ կզգայի, թե ի՞նչ ահագին տարբերություն կար այն ատենվան և հիմակվան ընթերցումներուս միջև։ Այս բաղդատությունը առիթ մը եղավ, որ քակեի զանազան թերթերու մեջ լույս տեսած գրություններուս հավաքածու ծրարը, զոր Պոլիսեն հետս բերած էի և մինչև այն օրը դարակիս մեկ անկյունը մոռցած։ Հազիվ համբերությունը ունեցա մեկիկ-մեկիկ աչքե անցնելու ասոնք և հետո ամենն ալ մեկեն վառարանիս մեջ նետեցի։ Անցյալի գրական այդ փառքերս, որոնցմով այնքան ատեն պարծեցած, սոնրացած էի՝ հիմա պարզապես կզզվեցնեին, կխպնեցնեին զիս։ Կյանքի ոչ մեկ շունչ, ճշմարիտ ներշնչումի ոչ մեկ նշույլ, իրական զիտողության ոչ մեկ հետք, գաղափարի ոչ մեկ ուժ. մեկ ծայրեն մյուսը սնամեջություն, արվեստականություն, կեղծություն, թեթև ոճի մը շպարին տակ պարտկված։ Եվ ասոնք տխուր ապացույցներն էին, թե ինչպես կկարդայինք ժամանակին։ Որովհետև գիրքն էր, որ կներշնչեր մեզ և ոչ թե կյանքը, զոր չէինք գիտեր, չէինք ճանչնար. իսկ գիրքը այն այլանդակ եղանակով, որով մենք կկարդայինք՝ ուրիշ բան չէր կրնար տալ մեզի, բայց եթե մեծ գաղափարներու հարևանցի և հաճախ ծուռ ըմբռնումով կազմված վատույժ մտքեր, մեծ զգացումներու խուսափուկ հպումով ծնած տկար ու հիվանդ զգայություններ։ Ու սիրտս զայրույթով և ատելությամբ կլեցվեր մեր ուսուցիչներուն ու խմբագիրներուն դեմ, երբ կմտածեի, թե անոնք էին, որ ձեռք-ձեռքի տված ստեղծեր էին այն վատառողջ միջավայրը, ուր այնքան սերունդներ խաթարվեցան և դեռ կխաթարվին։ Նոր կըմբռնեի, թե ինչ մեծ բարիք մը եղած էր ինծի համար, ինչ որ մինչև հիմա չարիք կկարծեի և կօրհնեի ճակատագիրս, որ զիս այդ խաթարիչ միջավայրեն

փրկած էր։ Մոտ մեկուկես տարվան դադարե մը ետքը վերստին գործելու սկսած միտքս կնմանցնեի այն արտին, որ կարճատև տնտեսագիտությամբ մը տարիներ շարունակ իրարու վրա մշակվելե ուժասպառ, վերջապես ժամանակ մը իսպառ կթողվի և հետո կրկին սերմ ընդունելով՝ առջինեն տասնապատիկ ավելի ատոք ու առատ հունձք կուտա։ Իսկ այդ դադարն ալ ապարդյուն չէր անցած։ Գործնական ասպարեզն ուր թեակոխած էի՝ զիս իրականության հանդեպ դրած և աչքերս բացած էր կյանքի մեծ գիրքը կարդալու, մարդերն ու իրերը ուսումնասիրելու։ Անցյալիս մասին զգացած ցավս կմեղմանար այն մտածումին առջև, թե դեռ ուշ չէր, առանց շատ երկար խարխափելու՝ վերջապես գտած էի ուղիս և դեռ երիտասարդ էի։ Այս դիպող ինքնաճանաչությունը իսկական տաղանդի մը գրավականը թվեցավ ինծի և նոր կորովով մը զլապնդված՝ ինքզինքս ժողվեցի ու ամբողջ էությամբս փարեցա գործիս։ Ծրագիրս որոշ էր. մեկ կողմեն նյութական անկախ դիրք մը ստեղծել, մյուս կողմեն կարդալ, ապրիլ, դիտել և կյանքի ու մտքի կուռ պաշարով կրկին իջնել գրական ասպարեզը։

Այս որոշումը տալուս հաջորդ օրը բոլորովին նոր մարդ մը դարձած էի։ Մինչև այն ատեն խուլ պայքարով հոգիս ավերող երկու ներհակ պահանջները վերջապես հաշտված էին իրարու հետ և կազդուրիչ ու շենցնող հավասարակշռություն մը հաստատած մեջս։ Գործի ատեն ճշտապահ ու եռանդուն պաշտոնյան էի, իսկ ազատ ժամերուս ժրաջան ուսանող մը։ Այս փոփոխությունը անշուշտ չէր կրնար աննկատելի մնալ էֆենդիս աչքերուն, փոխադարձաբար ինք ալ սկսավ օրստօրե ավելի ընկերական ձև մը տալ իր վերաբերումին և ամսու գլխուն իբր հնչուն ապացույց իր դոհունակության՝ սովորական 4 ոսկիի փոխարեն 6 ոսկի դրավ ափս։ Ես ալ իմ կողմես ամսական այդ 2 ոսկին մորս հատկացուցի, որուն մինչև այն օրը չէի կրցած կանոնավոր կերպով օգնել, և գրեցի իրեն, թե հույս ունեի շուտով նյութական վիճակս ավելի բարելավել և զինք ալ քովս բերել տալ։ Շնորհակալություններով ու օրհնենքներով լի պատասխանը, զոր իրմե ստացա, առաջին ճշմարիտ ուրախության արցունքները խլեց աչքերես։ Տգետ ու պառավ կնոջ մը մայրական սրտեն բխած այդ անպաճույճ տողերը շատ ավելի մեծ երանություն պատճառեցին ինծի, քան Պոլսո խմբագիրներուն գրած բոլոր ուռուցիկ գովեստները։ Ու այսպես բոլոր պայմանները նպաստավոր կերպով դասավորված կխոստա-

նային ամեն դյուրություն ընծայել ծրագրիս իրագործումին. կմնար միայն չմոլորիլ, չշեղիլ և հարատևել։ Բայց իզուր չէ, որ ըսված է.— մարդս կառաջադրե, պարագաները կտնօրինեն։

Իմ՝ բազմաթիվ ծածկանուններովս հանդերձ՝ պոլսահայ թերթերեն մեկենիմեկ հեռանալս բնականաբար չէր կրնար անտարբեր թողնել ընթերցող հասարակությունը, որու մեջ ինքզինքին իմ «հիացողներս» անվանողներ ալ քիչ չէին։ Դպրոցական ընկերներս և բարեկամներս անոնք, որոնց հետ թղթակցություն ունեի և մինչև իսկ խմբագիրներին ոմանք քանի մը անգամ հարցուցած էին այս լռությանս պատճառը և զիս հրավիրած վերստին ձեռք առնել գրագետի գրիչս։ Խմբագիրներու աներեսությունը պատասխանի անգամ չէի արժանացուցած, իսկ մյուսներուն ձեռքեն օձիքս ազատած կկարծեի զբաղումներուս չափազանց շատությունը և մուսաներուս բացակայությունը պատրվակ բռնելով։ Սակայն վերջերը այս իմաստով նամակներ՝ կարծես խոսք մեկ ըրած, տարափի պես սկսան տեղալ։ Մանավանդ նախկին ջերմ հիացողներս ոմանք սրտառուչ շեշտով մը կհարցնեին, թե հերիք չէ՞ր այսքան քենը, թե դեռ մինչև ե՞րբ պիտի լռեի, մինչև ե՞րբ պիտի զրկեի զիրենք իմ ազվոր տողերուս անմոռանալի վայելքեն։ Այս վտանգավոր գլխացավություններեն վերջնապես ազատվելու համար ստիպվեցա քանի մը մտերիմներուս համառոտակի պարզել մեջս տեղի ունեցած փոփոխությունը և կտրուկ կերպով ծանուցանել, թե ուխտ ըրած էի տող մը իսկ չգրել մինչև 5 տարի, այսինքն՝ մինչև 30 տարիքը թևակոխելս։

Բայց այս փորձանքը հազիվ փարատած՝ նոր փորձություն մը վրա հասավ։ Այդ օրեր՝ առաջին անգամն ըլլալով, նամակ մըն ալ Թիֆլիսեն ստացա, մեր Ներշնչարանի բազմավաստակ խմբագրության մեկ ջոջ անդամեն, որ հիմա իր հորը քով վաճառականություն կըներ։ Մեր բաժանման թվականեն սկսած իր հակիրճ կենսագրությունը ընելե ետքը՝ գրական խոշոր նորություն մը կհաղորդեր։ Հասարակական և փիլիսոփայական գիտությանց մասնագետ համալսարանավարտ երիտասարդ մը Թիֆլիսի մեջ շատ լուրջ ամսագիր մը հիմնած էր, որու նպատակը պիտի ըլլար եվրոպական իմաստով գրականություն մը ստեղծել մեր մեջ։ Խմբագրին գլխավոր իղձերեն մեկը ըլլալով իր հանդեսին մեջ քովը տեսնել արևելյան և արևմտյան հայ գրագետները, խնդրած էր իրեն, որ Թուրքահայ աշխատակիցներ գտնե, ինքն արդեն աշ-

խատություն մը պատրաստելու վրա էր— ընդարձակ ուսումնասիրություն մը Թուրքահայ նորագույն գրականության մասին— և ինծի ալ կխնդրեր, որ իմ աշխատակցությունս նվիրեմ այդ փառավոր հրատարակության, որ անտարակույս կոչված էր մեր գրականության մեջ նոր դարաշրջան մը բանալու։ Ու այն բոլորեն ետքը կուգար զգլխիչ վերջաբանը, թե խմբագիրը՝ իր ընդգրկած նոր ուղղության իբր գրավական, իրեն սկզբունք ընտրած էր վարձատրել իր բոլոր աշխատակիցները, որով վերջապես իրականացման շավիղին մեջ կմտներ խեղճ հայ գրողներու վաղեմի երազը։

Նամակին հետ զրկած էր նաև նորածին հանդեսին անդրանիկ թիվը։ Աչքերուս հավատալ չէր գար, երբ առաջին անգամ ձեռքս առի մոտ 200 էջե բաղկացած այդ մեծադիր հատորը, կատարյալ եվրոպական հանդեսի մը արտաքինով։ Բովանդակությունը իրավ է, որ դեռ շատ թերություններ ուներ, մասնավորապես լեզվի, ոճի և գրական արժեքի տեսակետով, բայց վերջապես մեծ հառաջադիմություն մըն էր Պոլսո մեր սնամեջ թերթերուն վրա. ասոր մեջ լրջության, հիմնավորության ակնհայտնի ձգտում մը կար և հետո գրական վարձատրության սկզբունքը, որ պարզապես հեղափոխություն մըն էր մեր գրականության համար։ Ինչպես կտեսնես այս անակնկալ նորությունն ու իրեն ընկերացող առաջարկը ամեն հանգամանք ունեին զիս փորձության տանելու, բայց ուխտս դեռ այնչափ թարմ էր, որ տատանումս մեկ օրեն ավելի չտևեց և Թիֆլիսի ընկերոջս ալ նույն պատասխանը տվի, ինչ որ մյուսներուն տված էի։ Ու այդ նամակը գրածս պահուն մտքես իսկ չէի կրնար անցնել, թե շուտով ինքնաբերաբար պիտի հերքեի զայն։

Շաբաթ մը հազիվ անցած՝ պոլսական թերթի մը ազգային լուրերու բաժնին մեջ մոտավորապես հետևյալ տողերը կգտնեի իմ մասին.

— Մեր տաղանդավոր աշխատակիցը— Արտավազդ էֆենդի Զարիբյան— որ ինչպես գրական այնպես ալ առևտրական հրապարակին վրա կարճ միջոցի մեջ իրեն փայլուն դիրք մը ստեղծեց. հավաստի աղբյուրե կիմանանք, թե հիմա զբաղած է գրական երկարաշունչ աշխատության մը պատրաստությամբ։ Սույն բերկերաբերթ լուրը անշուշտ մեծ հրճվանք պիտի պատճառե մեր ազնիվ ընթերցողներուն, որոնց համար դառն զրկանք մը եղած էր համակրելի գրագետին երկարատև լռությունը։ Ի սրտե հաջողություն կմաղթենք մեր տաղանդավոր աշխատակցին և կհուսանք, թե ի

մտոտ բախտը պիտի ունենանք վայելելու իր մեծ գործը, որ անտարակույս պատահար մը պիտի ըլլա մեր գրականության համար։

Ա՛լ կրնաս երևակայել ապշությունս, զայրույթս ու զզվանքս։ Կիրակի առավոտ մըն էր, երբ այդ թերթը ստացա, պզտիկ սենյակիս մեջ կպտուտկեի, կատաղությունս ինքզինքս ուտելով։ Պոլիս գրած նամակներուս մեջ չկար ոևէ կետ մը, որ թյուրիմացությամբ այդ տեսակ եղրակացության մը տեղի տար և արդեն լուրը այնպիսի վավերական ձևով մը հաղորդված էր, որ թյուրիմացության կամ ուրիշ ոևէ մեղմացուցիչ պարագա չէր վերցներ։ Բայց մարդիկը լավ ճանչնալուս՝ գլուխ ճաթեցնելու հարկ չմնաց այս այլանդակ հանելուկը լուծելու համար։ Պոլիս ընկերներուս գրած այն պատասխանս թե՝ վճռած էի մինչև հինգ տարի բան չգրել, խմբագրի մը ականջը հասած էր և այդ հանճարեղ հոսհոսն ալ այնքան պարզ նյութե մը այս շքեղ առասպելը հյուսած, ադով թևերս ուռեցնելու և զիս կրկին ձրի աշխատակցության հրապուրելու դիտումով։ Այս ենթադրությունս, որ ետքեն ստուգվեցավ ալ՝ իրենց գագաթնակետին հասցուց գարշանքս ու ատելությունս այն խմբագիր կոչված արարածներուն դեմ։ Ես հազիվ կրցած էի վրայես թոթափել իմաստակություններու, թեթևսոլիկություններու, սնապարծություններու ծիծաղելի տարազը և ահա անոնք՝ Պոլիսեն մինչև Եգիպտոս ձեռքերնին երկարած՝ կուզեին զայն կրկին հագցնել ինծի։ Ու վրեժխնդրության անզուսպ զգացումը, որ սիրտս կմրկեր, վայրկենապես գաղափար մը ծնավ մտքիս մեջ. մեր խմբագիրներու այդ անճոռնի բարքերեն կծու երգիծանություն մը ձևել և հրատարակել տալ շաբաթաթերթի մը մեջ, որ իմ մասին այս լուրը հրատարակող թերթին անհաշտ հակառակորդն էր։ Առանց երկար մտածելու գրասեղանիս առջևն անցա և քանի մը ժամ ետքը արդեն պատրաստ էր ուզածս։ Գրգռությունս արդեն գլխուս մեջ դիզած էր նյութը իր բոլոր մանրամասնություններով. կմնար միայն թուղթի վրա թափել և ադ ալ մեկ շունչով կրցա ավարտել։ Սակայն արդյունքը այն աստիճան հաջող էր, որ հանկարծ մտքս փոխվեցավ։ Ինչո՞ւ չղրկել Թիֆլիսի հանդեսին, ինչո՞ւ կրկին երևալ Պոլսո թերթերու մեջ, ըլլա նույնիսկ ծաղրելու համար զիրենք. մանավանդ, երբ ասով ալ կրնայի նպատակիս հասնիլ, քանի որ այդ հանդեսը անշուշտ կմտներ Պոլիս և վերջապես ինչո՞ւ փախցնել առիթը գեթ անգամ մըն ալ ռուսահայ խմբագրի մը հետ գործ ունենալու։ Անմիջապես մաքուրի քաշեցի գրածս,

նամակ մըն ալ գրեցի խմբագրին, հայտնելով, որ այս առաջին փորձս եթե ընդունելություն գտներ, պատրաստ էի շարունակելու, և հաջորդ առավոտ կանուխ պոստին հանձնեցի։

Առանց գրական ոևէ դիտավորության, առանց ամենադուլզն ճիգի ու խնամքի, լոկ վրեժխնդրական նպատակով և գրեթե ափհափ գրված այս փոքրիկ պատկերը ապշեցուցիչ անակնկալ մը եղավ ինծի համար։ Հանդարտությունս վերստին գտնելե ետքը կրկին և կրկին կարդացի սևագրությունը, զոր պահած էի, և տպավորությունը յուրաքանչյուր ընթերցումիս ավելի մեծցավ։ Կենդանություն, սուր դիտողություն և հոգեբանական ճշտություն, որոնց նշույլն իսկ չէի գտներ շան տանջանքով թիված հին գրքվածքներուս մեջ, ամենքն ալ կարծես ժամադիր եղած էին հոս։ Բայց և այնպես այս հաջողությունս այնչափ հանկարծական ու պատահական էր, որ տակավին չէի հուսար, թե պիտի կրնամ շարունակել և այս մասին չէի ալ մտածեր։ Խմբագրին ըրած խոստումս իրական խոստում մը ըլլալե ավելի գրչի վարժության արդյունք էր, տեսակ մը խայծ, զոր ամեն սկսնակ կգործածե իր մտքի նախախայրիքին համար խմբագրի մը հյուրընկալությունը որսալու։ Որովհետև մինչև այսօր թեև գրական ամեն տեսակ հավակնություն ունեցած էի, բայց եթե կար բան մը, զոր մտքես իսկ չէի անցուցած, ան ալ երգիծաբանությունն էր։ 9ՀՀ

Սակայն առաջին նամակը, զոր ստացա հասարակական և փիլիսոփայական գիտության մասնագետ խմբագրեն՝ բավական եղավ մեջս շեշտելու գրական այս ինքնահայտնության գիտակցությունը։ Կգրեր, թե գրվածքս արդեն հրատարակված էր և մեծ ընդունելություն գտած, թե մատս խոշոր վերքի մը վրա դրած էի և կխնդրեր, որ շարունակեմ այնքան մեծ հաջողությամբ սկսած աշխատակցությունս։ Միայն թե՝ չեմ գիտեր ինչո՞ւ չէր ղրկած հանդեսին այն թիվը, ուր գրվածքս լույս տեսած էր։ Անմիջապես գրեցի, որ այդ թիվը հղե և խոստացա շուտով նոր գրվածք մը հասցնել։ Նամակս ստանալուն պես ղրկեց սկիզբեն ի վեր հրատարակված բոլոր թիվերը։ Անդրանիկ գրվածքս ամբողջությամբ և անփոփոխ հրատարակված էր, բայց տպագրական սխալներով բավական աղավաղված։ Եվ ահա այդ սխալներեն մեկուն է, որ պարտիմ գրական քիչ մը տարօրինակ անունս։ Հարձակողական զայրագին ներշնչումս ինքնաբերաբար Թաքուռ ահարկու ծածկանունը դրած էր ձեռագրիս տակ, իսկ գրաշարը, թերևս համեղ

հայհոյանք մըն ալ մրմռալով իմ ուղղագրական տգիտությանս վրա՝ ռ-ն ր-ի փոխած էր։ Այնուհետև ես ալ սկսա Թաթար ստորագրել, մտածելով, որ տառի մը փոփոխությունը շատ բան չէր պակսեցներ բառին սարսափեն։

Երկրորդ գրվածքիս պատրաստությունը կարծես շատ ավելի հեշտ եղավ։ Նյութը տրամաբանորեն ներկայացավ մտքիս, իբրև շարունակությունն ու լրացուցիչ մասը նախորդին, այսինքն Պոլսո նորագույն գրագետի տիպը։ Իսկ ասոր համար բավական էր պատկերացնել իմ իսկ անցյալը, որպեսզի առաջինեն ավելի հաջող գործ մը երևան գար։ Եվ անցյալեն այս երկու պատկերներու գրավոր վերարտադրությունը տարօրինակ հեղափոխություն մը առաջ բերավ ուղեղիս մեջ։ Բազմաթիվ բնորոշ դեմքեր ու դեպքեր հիշողությանս աչքերեն դուրս կժայթքեին խուռներամ, կզարմանայի, որ Պոլիս շարունակ նյութի պակասութենե տառապած էի և ուշադրություն իսկ չէի դարձուցած ասոնց վրա, իրապաշտ գրող մը ըլլալու հավակնությամբս հանդերձ՝ առօրյա կյանքի շրջանակեն դուրս, արտաքո կարգի բան մը նկատած էի նյութը։ Մինչև այն ատեն անտեսված կյանքի այս դիտողությունները գեթ այնուհետև արժեցնելու տագնապով անմիջապես մասնավոր գրպանի տետրակ մը գնեցի, որու մեջ սկսա արձանագրել վայրկենաբար ինչ որ միտքս կիյնար։ Բայց ալ այնուհետև մնաք բարով ծրագիր, ուխտ և այլն. այս պզտիկ, անմեղ տետրակը եկավ ամեն բան տակնուվրա ընելու։

Գլուխս, որ մեկ կողմե հում նյութեր կամբարեր, իսկ մյուս կողմե նոր գրվածքներու ծրագիրներ կսարքեր անոնցմե, ալ տեղ չուներ վաճառականական հաշիվներու համար։ Վաճառատան մեջ ստեպ-գործ կընդհատեի հանկարծածին միտք մը նոտագրելու համար, հաճախ շրջապատս բոլորովին մոռնալով ապագա պատմվածքներուս հետ կապրեի։ Էֆենդիս սկիզբը լուռ ապշությամբ մը կդիտեր այս երկրորդ հեղաշրջումս, բայց տեսնելով, որ ընթացքս օրըստօրե կգեշնար, սկսավ մեզմ դիտողություններ ընել, հարցնել, թե ի՞նչ ունիմ։ Զանազան խուսափողական պատասխաններով կշանայի խնդիրը չմեծցնել, սակայն մյուս կողմե կզգայի, որ այդ-կացությունը կարելի չէր շարունակել։

Այդ միջոցին հասավ երկրորդ գրվածքիս հրատարակությունը երկու նամակով հանդերձ, մեկը հանդեսին խմբագրեն, մյուսը Թիֆլիսի ընկերես։ Խմբագիրը իր նամակը կսկսեր «Պարոնյանը

հարություն առավ» խանդավառ բացականչությամբ և կվերջացներ սրտագին «ապրեք»-ով մը։ Իսկ ընկերս կնկարագրեր, թե որչա՜փ մեծ եղած էր իր ապշությունը, երբ դիպվածով մը իմացած էր, որ Թաթարը ոչ այլ ոք էր, բայց եթե ես։ Անհասկանալի ու վիրավորական կգտներ, որ իր նամակին մերժողական պատասխան տալով հանդերձ, ձեռքի տակե սկսած էի կատարել իր առաջարկը։ Սակայն գտած հաջողությանս հրճվանքը այնքան մեծ էր իր մեջ, որ սիրով կներեր ինծի այդ տգեղ վարմունքս և կթախանձեր, որ շարունակեմ մշակել գրական այն դժվարին սեռը, ուր մեկ ոստումով կրցած էի եզական դիրքի մը հասնիլ։

Այս նամակներուն տպավորությանը տակ, պզտիկ սենյակիս շուրջը քանի մը խոշոր քայլեր և մտքիս մեջ կարճառոտ հաշիվ մը բավական եղան ընելիքս վճռելու։ Թողնել պաշտոնս և ամբողջովին գրականության նվիրվիլ։ Երկու գրվածքս միասին 25 տպագրական երես եղած էր, հետևաբար արդեն 25 ռուբլի առնելիք ունեի, յուրաքանչյուր ամիս միջին հաշվով 20-երեսնոց բան մը ղրկելով 20 ռուբլի կրնայի ստանալ, քովն ալ քիչ մը դրամ կար, այս ձևով 5—6 ամիս խնայողությամբ դժվար չէր ապրիլ։ Իսկ այդ միջոցին մեջ գրվածքներս գեղեցիկ հատոր մը կազմելու չափ կըլլային. այն խանդավառ ընդունելությամբ, զոր գտած էի՝ մեկենաս մը և առնվազն 1000—1500 օրինակի սպառումը արդեն ապահովված կարելի էր համարել, ադկե գոյանալիք հասույթով փառավորապես կրնայի ապրիլ մինչև երկրորդ հատորիս հրատարակությունը և այսպես շարունակաբար։ Անշուշտ սկիզբները քիչ մը պիտի նեղվեի, բայց ո՞ր ասպարեզին սկիզբը դյուրին էր։

Նույն օրն իսկ դիմեցի վաճառականիս, ամեն բան պարզեցի և խնդրեցի, որ զիս արձակե պաշտոնես։ Մարդը նախ հանկարծակիի եկած՝ ապուշ երեսս նայեցավ, հետո գլուխը կախեց և պահ մը մտախոհ մնալե ետքը՝ երկար խրատական մը սկսավ։ Բամը մտախոհ մնալե ետքը՝ երկար խրատական մը սկսավ։ Բացատրեց, թե ադոնք ամենքը իրավ աղեկ բաներ էին, բայց ոչ մեր մեջ, թե մեր ազգը այդ տեսակ բաներու հարգ ու արժեք չի տար, թե տարակույս չկար, որ վերջը թշվառ պիտի ըլլայի ու պիտի զղջայի։ Բայց իզուր, ոչ մեկ ազդեցություն ըրավ վրաս. պատասխանեցի, թե մինչև այն օրը ամեն ճիգ թափած էի այդ որոշումին չհանգելու համար, բայց դիմադրական ուժս ալ վերջապես սպառած էր և ալ ինքզինքիս տերը չէի, թե հետևաբար ավելի կնախընտրեի սիրած ասպարեզիս մեջ նյութապես տառա-

պիլ, քան այդ կեղծ կացությունը, զորով շարունակելով թե՛ ինքս բարոյապես տանջվիլ և թե՛ իր գործին վնասել։

— Է՛հ, դուն գիտես, գնա, բայց վստահ եմ, որ օր մը պիտի հիշես այս ըսածներս ու շարաչար պիտի զղջաս,— եղավ բարեսիրտ ծերուկին վերջին խոսքը։

Պաշտոնիս հետ միասին կկորսնցնեի նաև վաճառատան վրայի պզտիկ սենյակս, ուր մոտ երկու ու կես տարվան բազմահիշատակ կյանք մը անցուցած էի։ Հաջորդ օրը կոկիկ կահավորված սենյակ մը վարձեցի հույն ընտանիքի մը քով և հոն փոխադրվեցա։

Նոր սենյակիս միակ պակասությունը ան էր, որ մեջը շնորհքով սեղան մը չկար աշխատելու. ուստի երբ շուկա ելա քանի մը անհրաժեշտ պիտույքներ գնելու, կահկարասիներու վաճառանոցի մը ցուցափեղկին մեջ աչքիս զարկավ գեղեցիկ գրասեղան մը, որու առջևեն չկրցա անտարբեր անցնիլ։ Պատկերազարդ հանդեսներու մեջ շատ անգամ նախանձոտ հիացումով տեսած էի եվրոպացի նշանավոր գրողներ շքեղ գրասեղաններու առջև մտախոհ։ Արդ՝ երևակայությունս պահ մը սենյակս փոխադրեց այդ գրասեղանը. օ՜հ, ի՜նչ մեծ շուք մը կավելցներ ան իմ գրագետի կյանքիս։ Մյուս կողմեն սակայն նիհար քսակս կազդարարեր, որ անմիշտ շռայլություն մը պիտի ըլլար այդպիսի սուղ բան մը գնել. բաժնվելու միջոցիս վաճառականը 100 ֆր. նվեր տված էր, բայց այդ 100 ֆր. նեղ օրերու մեջ 100 ցավիս դարման կրնար ըլլալ։ Այս վարանումներով նույն օրը չեմ հիշեր քանի անգամ անցուդարձ ըրի վաճառանոցին առջևեն և վերջին անգամին ինքզինքս հանկարծ ներսը գտա։ 100 ֆրանքին վրա տակավին 20—25 ֆրանք ալ դրի, բայց գրասեղանն ալ սենյակս փոխադրվեցավ։

Չեմ կրնար նկարագրել այն անճառ երանությունը, որով հոգիս ողողված էր հաջորդ առտուն, երբ աչքերս բացի։ Առաջին ակնարկս հանդիպեցավ գրասեղանիս, որու փայլփլուն չնարակին մեջեն կարծես մուսաներու գլուխները զիս կողջունեին և հրճվանքիս մարմինս խտղտաց, երբ հիշեցի, որ տակս վաճառատուն չկար, որ հաստ ու բարակ տոմարներու թնճուկը ալ ինծի չէր սպասեր, որ ալ անկախ ու բոլորանվեր գրագետն էի վերջապես։

Նոր գրասեղանիս վրա քանի մը օրվան մեջ նոր պատմվածք մը ավարտեցի Պոլսո հայ ուսուցիչներու կյանքեն, ընդարձակ նամակով մը պատմեցի խմբագրին, թե ինչպես գրականության սի-

ռուն համար ստիպվեցա թողնել խոստմնալից ասպարեզ մը և խնդրեցի, որ նախ՝ վարձատրության խնդիրը կարգադրե անհապաղ և երկրորդ՝ վերջ մը տա տպագրական սխալներու, որոնք երկրորդ գրվածքիս ալ չէին խնայած։

Այնուհետև ժամանակացույց մը շինեցի և սկսա կանոնավոր զբաղումի։ Առտվան ժամերը հատկացուցի գրական աշխատություններուս, հետմիջօրեն ընթերցանության, իսկ իրիկունը տրճարանի մեջ օրվան թերթերը կարդալու, բարեկամներու հետ տեսակցելու և կյանքը ուսումնասիրելու։ Այս ծրագրով ամբողջ երեք ամիս հասաովի մը պես անհոգ ու խաղաղ կյանք վարեցի։ Երկրորդ ամսուն սկզբները նամակիս պատասխան ստացա խմբագրեն. կգրեր, թե երրորդ գրվածքս ալ նախորդներուն պես լավ ընդունելություն գտած էր և Թաթար անունը մեծ ժողովրդականություն շահած, վարձատրության մասին կխոստանար շուտափույթ կարգադրություն ընել և կխնդրեր, որ անպատճառ ամեն թվի բան մը հասցնեմ։ Արդեն նոտեր առած էի Պոլսո հայ ընտանեկան կյանքեն ընդարձակ պատմվածքի մը, մինչև երկու ամիս ևս ալ վերջացնելով ղրկեցի։ Այս վերջինով միասին՝ գրվածքներս արդեն մոտ 200 երեսնոց փոքրադիր հատոր մը կրնային կազմել, ուստի խընդրեցի, որ աշխատի մեկենաս մը գտնել։

Արդեն սկսած էի հաշիվներ ընել, թե մոտավորապես որչափ զուտ շահ կրնար ձգել այս առաջին հատորիս հրատարակությունը, երբ տանտերս եկավ հիշեցնելու, որ ավելի անհետաձգելի հաշիվներ ունեի կարգադրելիք։ Սենյակիս վերջին ամսվան վարձը պետք էր վճարել, մինչդեռ գանձարանիս վիճակը քննելով տեսա, որ սնանկությունը մոտալուտ էր։ Տանտիրոջս խնդրեցի ամիս մը սպասել, բացատրելով, որ Ռուսաստանեն ամեն օր դրամի կսպասեի, բայց Սև ծովի փոթորիկներուն պատճառով նավը կուշանար։ Մարդը համոզվեցավ, բայց իմ հավատքս օրըստօրե կթուլնար, կասկածը կսկսեր բույն դնել մտքիս մեջ։ Երկու ամիսեն ավելի անցած էր խմբագրին այն նամակեն ի վեր, որով կխոստանար շուտով կարգադրել վարձատրության խնդիրը և սակայն դեռ կրսպասեի։ Երկտողով մը կրկին հիշեցուցի անոր իր խոստումը։ Այդ օրեր խոսակցության մը մեջ իմացա, որ Կովկասի էն տարածված օրաթերթը նույնպես սկսած էր վարձատրել իր աշխատակիցները. անմիջապես նամակ մը գրեցի Թիֆլիսի ընկերոջս, որ իմ կողմես

հիշյալ օրաթերթի խմբագրության դիմե և աշխատակցությունս առաջարկե որոշ վարձատրության մը փոխարեն։

Ամիսը լրացավ, բայց խմբագրեն պատասխան չելնելե զատ, այս անգամ հանդեսն ալ չստացա։ Իսկ մյուս հույսս բոլորովին ի դերև ելավ. ընկերս կգրեր, թե օրաթերթին խմբագրությունը չէր ընդունած առաջարկս, մոտ 3000 վճարող բաժանորդ ունենալով հանդերձ՝ դարձյալ նյութական անձկության պատրվակը առաջ բշելով. «Որովհետև, կմեկներ իր կողմեն սրամիտ բացատրությամբ մը, այդ խմբագրության ժառանգական անդամները որոշած են ՔՔերթին տարեկան ամբողջ հասույթը մեջերնին բաժնել և եթե բան մը ավելնա՝ աշխատակիցներու վարձատրության հատկացնել. սակայն այս հաշվով մինչև հիմա դեռ բան մը չէ ավելցած»։

Վիճակս անտանելի էր։ Տանտիրոջ պարտք, ճաշարանին պարտք և քսակս վաղուց դատարկ։ Բայց լավատեսության դեռ բավական պաշար կար մեջս. տանտերս դարձյալ մեկ կերպ լոլոշ՝ցի, ճաշարանապետին նոր սուտ մը կլլեցուցի և աչքս ցրվիլի ճամբուն վրա՝ կսպասեի։

Այս ընթացքով կրցա ամիս մըն ալ անցնել. հանդեսը եկավ, երկու ամսվանը միասին հրատարակված կրկնակ թիվ մը, ուր ամբողջությամբ լույս տեսած էր վերջին գրվածքս, բայց խմբագրեն դարձյալ ո՛չ նամակ կար, ո՛չ դրամ։ Ալ անկարելի էր համբերել. այս ինչ խայտառակություն, ուրեմն մարդը իր շռայլ գովեստներով պարզապես քթիս կխնդար ու կշահագործեր զիս և կարծես աս բավական չլար, գրվածքս ալ այնպիսի ձևով մը հրատարակեր էր, որ արյունս գլուխս ցատքեց։ Ամբողջ բառեր ու նախադասություններ բաց թողված, լեզուն կես արևմտյան, կես արևելյան ծիծաղաշարժ խառնուրդի մը վերածված և ծայրեծայր տպագրական սխալներով աղավաղված։ Բայց այն սխալներեն չկարծես, որոնք մինչև այսօր ալ ճակատագրական չարիքի մը պես անխուսափելի են ռուսահայերու ձեռքով տպագրված բոլոր թուրքահայ գրվածքներու մեջ, այլ այն տեսակ անլուր, այլանդակ, բարբարոս սխալներ, որ կարծես պարսիկ բեռնակիր մը գրաշար ափհափված էր հատկապես այդ գրվածքս շարել տալու համար։ Չէ՛, ալ տանելու բան չէր աս. մտքի ուժ, աչքի լույս թափե, շարշարվե, գրե, ամիսներ շարունակ տնեն դուրս ճաշարանապետին, տնեն ներս տանտիրոջ ու տանտիկնոջ թթու երեսը տես, և ետքն ալ կոպեկ մը չդրկելե զատ, մտքի սիրասուն զավակներուդ աղճատված դիակները նետեն առջևդ։ Անմիջապես նամակի մեջ թափեցի այս ամբողջ դառնությանս թույնը, տպագրական սխալներեն ալ՝ միայն էն խոշորները ջոկելով, քանի մը երեսնոց ցանկ մը կազմեցի... սակայն բարեբախտաբար նամակագրոշմի դրամ չունենալուս իսկույն չկրցա պոստը տանիլ։

Քանի մը ժամ ետքը, երբ բարկությունս քիչ մը իջավ և հանդեսին մյուս հոդվածները աչքե անցուցի, խնդրին գաղտնիքը պարզվեցավ ու խղճահարությենես նամակը պատռեցի։ Վերջին երեսներուն մեջ կոչ մը կար ընթերցողներուն ուղղված, ուր խմբագիրը թվելե հետո այն բոլոր զոհողությունները, որոնց գնով կրցած էր իր հանդեսը այնքան ատեն անխափան հրատարակել, կհայտարարեր թե՝ բաժանորդներու այն չնչին թվով, որ անհրաժեշտ ծախքերու մեկ չորրորդն իսկ չէր փակեր՝ այլևս անհնարին էր շարունակել, որովհետև արդեն մինչև վիզը պարտքերու մեջ էր խրված և հասարակության զգացումներուն կոչում կըներ, որպեսզի տար վերջապես 1000 բաժանորդի այն նվազագույն թիվը, առանց որու անկարելի էր հավասարակշռել հանդեսին ելևմուտքը։ Այս կոչին ընթերցումեն ետքը խմբագրին դեմ զգացած զայրույթս տեղի տվավ խորին կարեկցության և գլուխս ձեռքերուս մեջ առած երկար մտածեցի։ Ինչո՞վ էր մեղադրելի խեղճ մարդը. իր պատկանած հասարակության ծառայելու ամենագովելի առաջադրություններով ճամբա ելած էր և ամեն դժվարություններու անձնվիրաբար կուրծք տված, բայց նույն այդ հասարակության անցնցելի անտարբերությունը վերջապես կշլատեր ու վհատության կմատներ զինք։ Իմ աչքիս առջևը չէր այդ հասարակության մեկ նմուշը. ամբողջ Եգիպտոսի մեջ ինծմե զատ միայն մեկ հոգի կստանար հանդեսը, ան ալ գրեթե զորով ես բաժանորդ գրած էի վերջերը և այս երկու օրինակները ձեռքե-ձեռք ու մինչև իսկ քաղքե-քաղաք պտտելով, առնվազն քանի մը տասնյակ ձրի ընթերցողներու կողմե կկարդացվեին։ Արդ՝ ի՞նչ ըներ խեղճ խմբագիր մը այս ձրիակեր հասարակության մեջ, ինչպե՞ս կարենար իր խոստումները հարգել ու իր պարտքերը վճարել։ Չէ՛, մեծ անիրավություն էր քիչ առաջվան զայրույթս, եթե ես կտառապեի, ան ինծմե ավելի կտառապեր, գեթ իմ պարտքերս դեռ մեջքես վեր չէին ելած, մինչդեռ անոր խեղդվելուն հինգ-մատ կմնար։ Վերջապես խմբագիր ու աշխատակից իրար լավ գտած էինք, երկուքս ալ լուսավորության նահատակներ էինք նույն ապերախտ հասարակության մեջ։

Այս խորհրդածությունները այրած սիրտս բավական մխիթարեցին և վսեմ հպարտության զգացում մը ներշնչեցին ինծի։

Սակայն դժբախտաբար միջոց չունեցա այս հպարտությունը վայելելու։ Տանտերս անվերջ ձգձգումներիս հուսահատած, վերջնագիրը կոխեց.— «Կա՛մ մինչև երեք օր պարտքդ կհատուցանես և կա՛մ դատարան կդիմեմ»։ Վերջին փորձ մըն ալ ըրի գեթ 15 օր ևս պայմանաժամը երկարելու, բայց անօգուտ։ «Ո՞ւրկե պիտի առնես, ո՞ւր պիտի տաս, կպոռար մարդը երեսիս, գործ չունիս, վաստակ չունիս, ես քեզի պես դատարկապորտին ալ սենյակ չունիմ, պարտքդ վճարե, դուրս ե՛լ»։

Ճարահատ վազեցի էն մտերիմ բարեկամիս մոտ, Պոլսեցի տղա մը, որ մորը հետ Ալեքսանդրիա հաստատված՝ վաճառականի մը քով գրագրություն կըներ աննշան վարձատրությամբ։ Այդ միջոցին անոր քով ալ այդչափ դրամ չկար, հետս եկավ երաշխավոր ըլլալու, բայց տանտերս անոր ալ պատասխանը տվավ.— «Ես քեզ ո՞ւրկե կճանչնամ, ի՞նչ գիտնամ, թե դուն ալ անոր պես բան մը չես»։

Սենյակիս մեջ աչք մը պտտցնելե ետքը՝ «ուրիշ ճար չի մնար, ըսավ ընկերս, սա գրասեղանդ տանինք ծախենք, պակսածն ալ ես կլրացնեմ, աս շան բերանը գոցենք, դուն ալ մեր տունը կփոխադրվիս, մինչև որ վիճակդ որոշվի»։

— Գրասեղա՞նս ծախել, բայց ի՞նչ կըսես, այնքան հիշատակներ ունիմ անոր հետ կապված,— բացականչեցի հուզումս դողացող ձայնով։

— Է, արթնցիր, հերիք զառանցես, հիշատակները փոր չեն կշտացներ, խայտառակություն պիտի ելլե,— պատասխանեց ընկերս ուսս ցնցելով, և առանց հավանությանս սպասելու, գնաց բեռնակիր մը բերավ ու գրասեղանը շալակը տալով տարավ կես գնով ծախեց։

Ընկերոջս սենյակը փոխադրվելիս քանի մը օր ետքը մեծ հրապարակին վրա գտնվող սրճարաններեն մեկուն պարտեզը նստած էի գլխիկոր ու տխուր։ Քիչ մը առաջ նամակ առած էի անկե, որու մասին երկար ատենե ի վեր չէի մտածած, զոր բնավ հաշվի առած չէի վերջին ծրագիրներուս ու որոշումներուս մեջ։ Մայրս էր գրողը։ Վաճառականին քովեն ելնելս, զոր աշխատած էի գաղտնի պահել իրմե, վերջերը իմացած էր իր բոլոր պարագաներով և վիշտ ու արցունք կաթող տողերն ետքը կհարցներ,

թե շա՞տ կտեսնեի մինթ թշվառ մոր մը արտին միակ մուրացը։ Որ ուրիշ բան չէր, բայց եթե իր մեկ հատիկ զավկին երջանկությունը տեսնել ու այնպես մեռնիլ։ Այս նամակին տպավորությանը տակ հոգիս անհուն թախիծով մը համակված էր, սիրտս ճմըլված, մտքիս գործունեությունը կանգ առած, երբ ձեռքի մը հպումը զգացի գլխուս վրա։ Նախկին գործատիրոջս փաստաբանն էր։ Ան ալ իմացած էր վիճակս և քովս նստելով սկսավ խրատել, որ վերջ տամ այդ անել ընթացքիս ու գործի մը մտնեմ։ Նախկին պաշտոնս արդեն բռնված էր, բայց եթե ուզեի ինք կխոստանար շուտով գործ մը գտնել ինծի։

— Շնորհակալ եմ, ես գոհ եմ իմ գործես,— պատասխանեցի խոսակցությունը կարճ կապելու համար։

— Ի՞նչ գործ, գրականությո՞ւնդ. է՛, միամիտ տղա,— բացականչեց արգահատական ժպիտով մը.— մեղք ես, մեղք, մեր մեջ գրականության երեսեն անոթի մեռնողներ շատ եղած են, բայց անով ապրող մը դեռ չենք տեսած։ Ամսական քանի մը երես սեցնելու և քանի մը ֆրանկ առնելու համար ո՛վ գիտե որչափ կշարչրկես ուղեղդ, մինչդեռ եթե դատարանին մեջ պարզ ընդօրինակիչ մը ըլլաս, երեսին 30 սանտիմ կառնես առանց գլուխդ հոգնեցնելու և ամիսը քիչեն քիչ 8—10 ոսկի կրնաս շահիլ։ Եկուր խոսքիս մտիկ ըրե, այդ տեսակ պաշտոն մը գտնեմ քեզի։

— Խնդրեմ, իրավունք չունիք զիս վիրավորելու, ես մեքենա չեմ,— պոռացի երեսին այնպիսի բարկությամբ մը, որ մարդը ապուշ կտրած ձգեց հեռացավ։

Հաջորդ առտու ցրվիչը հանձնարարված նամակ մը բերավ. Թիֆլիսեն էր, հանդեսին խմբագրեն։ Վերջապե՞ս։ Ջղային շտապով մը ծրարը պատռեցի, մեջեն ի՞նչ ելնե կհավնիս. երկար նամակ մը և... 4 ռուբլի թղթադրամ։ Իր նյութական ողորմելի կացության նկարագրութենեն ետքը՝ կհայտներ, թե այդ պայմաններու մեջ այլևս անկարելի էր աշխատակիցներուն վճարել, բայց իմ գրվածքներս բացասաբար պիտի շարունակեր վարձատրել երեսին 50 կոպեկի հաշվով, և դեռ կխնդրեր, որ չհուսահատիմ ու գրիչը ձեռքես չձգեմ։ Բոլոր գրվածքներս միասին 80 տպագրական երես եղած էին, որ այս հաշվով 40 ռուբլի կըներ, իսկ ասկե զեղչելով իմ երկու տարվան բաժանորդագրությանս արժեքը և այն մեկ բաժնեգինը, զոր ես գանձած էի, կմնար ճիշտ 4 ռուբլի։

Նույն օրն իսկ գացի փաստաբանեն ներողություն խնդրեցի և

անոր միջնորդությամբը դատարանին մեջ ընդօրինակիչի պաշտոն մը ստացա։

Ահա, սիրելիս, թե ինչպես հեռացա գրական ասպարեզեն։ Եթե շարունակեի՝ ըստ ավանդական սովորության, ձրի գրել, անշուշտ չէի կրնար ամբողջովին գրականության նվիրվիլ, սակայն վստահ եմ, որ մինչև այսօր ալ գրող կմնայի։ Բայց ահա օրին մեկը դիպվածը զիս կապեց խմբագրի մը հետ, որ առանց իր քսակը կշռելու, կարճամիտ լավատեսության մը կոթնած՝ գրական վարձատրության խիզախ նորությունը ներմուծեց մեր գրականության մեջ. ես ալ նույնքան կարճամիտ լավատեսությամբ մը անոր հույսերուն վրա հույս դնելով կյանքի ուղեգիծս փոխեցի և շատ չանցած երկուքս ալ պատժվեցանք չարաչար։ Ան, որ գրականության միջնորդ ծնած ըլլալ կկարծեր, հիմա, ինչպես կլսեմ, Բագվի մեջ նավթային միջնորդությամբ կամ իրենց բառով **մաքլերությամբ** կզբաղի, իսկ ես, որ գրագետ ծնած ըլլալ կկարծեի, ինչպես կտեսնես՝ հասարակ գրագիր մըն եմ այսօր։

10 դեկտ., 1903

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբլիֆասիոն, ապլիֆասիոն— *ասեղնագործության տեսակ*
Ազ— *ագի, պոչ*
Ազազուն— *զոր, վտիտ*
Ազոխ— *խակ խաղող՝*
Ալ խապերի զառնատան *(Թրք.)*— *տեղեկությունը զուռնայից վերցրու*
Ալաֆ *(Թրք.)*— *բոց*
Ալլբման *(Թրք.)*— *աննման*
Ալպանֆ— *ամոթանք, նախատինք*
Ալֆ— *չարք, ոգի*
Ալրշմիշ— *վարժված, սովոր*
Ախբարմա *(Թրք.)*— *փոխադրություն*
Ակիշ— *երկաթե կեռ, որ հաց ու կրակ են հանում թոնրից*
Աղապատանֆ— *կարեկցություն*
Աղեկեղիկ— *սրտահույզ, սրտաճմլիկ*
Աղեխարշ— *սրտաշարժ*
Աղեել— *բամբակը գզել, մեկին նախատել*
Անայիպ *(Թրք.)*— *տարօրինակ*
Անառատ— *մկանուտ, թիկնեղ*
Անելե *(Թրք.)*— *շտապ*
Ամանաք *(Թրք.)*— *պահ տալ, պահ տված*
Ամա ալ *(Թրք.)*— *այլևս*
Ամա— *սակայն*
Ամուճա *(Թրք.)*— *հորեղբայր*
Այար *(Թրք.)*— *չափանիշ, աստիճան*
Այսահար— *դիվահար*
Այրացավեր— *այրված, ավերված*
Անդույր— *անզգամ, տհաճ*
Անեաթո *(Թրք.)*— *ասեղնագործության տեսակ*
Անկ— *ոտնկ, կանթ*

Անկեվիս— *ականջներս*
Անկեվել— *ականջ դնել*
Անգնդյուր— *փսփկակյաց, բարեկեցիկ, դատարկություն*
Անեռուկ— *անճար, խեղճ, աղքատ*
Անուր— *անասունների քթին անցկացրած երկաթե օղ*
Անվարտի— *փողոցային*
Աղար— *տասնորդ*
Ալխած— *նեխած*
Ալշեռություն *(Թրք.)*— *խոհարարություն*
Աշքրն *(Թրք.)*— *կարոտ*
Ապա— *գյուղական հագուստ*
Ապաքեն — *արդարև, հիրավի, ճշմարիտ, ստույգ*
Ապերասան— *անսանձ, անզուսպ, ըմբոստ*
Առասի *(Թրք.)*— *մեջտեղ*
Առթել— *պատճառել*
Առլեփ— *զառիվայր, զառիթափ, դարավար*
Առղա — *ակռա, ատամ*
Առուզաբարձ— *կտրիչի պես բարձր*
Ասլան *(Թրք.)*— *առյուծ*
Ասմազան— *երկնագույն*
Ավ— *մայր կամ մեծ մայր*
Ավ *(Թրք.)*— *որս*
Ավազ— *մեղմաձայն, կարկաչյուն*
Ավրվել— *փչանալ, վատանալ*
Ավան *(Թրք.)*— *բուռ*
Ավուրշեք— *օրավարձ*
Ատեն— *ժամանակ*
Արզև— *անձրև*
Արքխ *(Թրք.)*— *այլևս*
Արմազան— *նվեր, ընծա*
Արշիվ— *արխիվ*
Արտասրն *(Թրք.)*— *փնտրում ես, որոնում ես*
Արնգան— *արյունագույն*
Ափափա— *ժայռոտ, անանցանելի տեղ*
Ափանիք— *անցնել, անհետ կորել*
Ափերիմ *(Թրք.)*— *կեցցես, ապրես*

Բ

Բալխիր— *սահնակ*
Բայանալ— *պատրաստել, տեղ ճարել*
Բայկար— *բահի կոթ*
Բանդալան *(Թրք.)*— *տարատ, շալվար*
Բանայիր *(Թրք.)*— *տոնավաճառ*
Բարամբունք— *վանդակաձող*

Բարիա (պարիա) — *Հնդկաստանում ապրող մի ցեղ*
Բառքի— *պարտիա*
Բրուկ— *կատար՝ հավի, աքլորի*
Բեհյուար *(Թրք.)*— *կանացի տնային խալաթ*
Բիանո *(Թրք.)*— *դաշնամուր*
Բիլիար— *հսկա, ահեղ*
Բղխյուն— *բխող*
Բղող— *գինու կարաս*
Բողկիկ— *մի տեսակ խոտ*
Բոն— *բույն*
Բյուսբյուրեան *(Թրք.)*— *բոլորովին*
Բոքուր— *շալվարի տեսակ*
Բոսբայոլու *(Թրք.)*— *փոստային ճանապարհ*
Բրլշակ, բրշակ— *ավերակ*
Բրտոն— *հացի պատառ*
Բուեբունալ— *ուշանալ*
Բուտ— *շան ձագ (հայհոյանք)*
Բուտար— *ճախարակի մաս*

Գ

Գամ— *մեխ*
Գայթում— *սայթաքում*
Գալյախազ *(Թրք.)*— *կայծքար*
Գանաբե *(Թրք.)*— *նստարան, բազմոց*
Գենգենալ— *աղաչել, պաղատել*
Գիշերանած— *գիշերով ման եկող, թափառող*
Գրճել— *կռանալ, կուչ գալ*
Դեբ— *ծանրաշարժ, ծույլ*
Գլուավ— *կուլ գնաց, կլլվեց*
Գվվել— *խցկվել, մնալ*
Գեդիկ— *քուֆթա*
Գոգոզավիզ— *ամբարտավան*
Գոզցես— *կարծես, թեկուզ*
Գաղգոքա— *տառապանք, բառացի լեռան անուն, որտեղ խալվեց Քրիստոսը*
Գաեն, գոքն— *փողոց, հրապարակ*
Գուզցե— *քայքայված պառավ կին, ծեր տղամարդ*
Գշիր— *փորիլ*
Գաբիկ— *քութիկ, շան լակոտ*

Դ

Դայ— *տարիքն առած, դախացած*
Դանդաշիլ— *դողդոջալ*
Դանդաղկոտ— *երերուն, ցնդած*
Դզ— *համառ, անուղղելի*
Դեղնաշորբ— *գեղնավուն*
Դեմլեմեշ *(Թրք.)*— *կաթեց*

Դեաեր— հսկիչներ, մաքսանենգներ հետապնդող
Դերբուկ— քարքարոտ, խորդուբորդ
Դմպլիկ— փոքրիկ թմբուկ
Դենդյուն— դղրդոց, աղմուկ, թնդյուն
Դրանդի— տան դռան շեմք
Դուար— տավար
Դույզն— չնչին
Դում— թոնրի կափարիչ, խուփ
Դունակ — նավի կամրջակ, ավազակույտ
Դուրել— հարթել
Դոլ— աման
Դոմ տոր— շիփ-շիտակ
Դոր— դուրան, հարթ տեղ

Ե

Եգերգած— դեպի եզերքը, դեպի հորիզոնը գրված
Եղկ— թույլ, գալջ
Եթմիշ (թրք.)— յոթանասուն
Եկեն (թրք.)— զարմիկ
Եկրամ— երիկամ
Երակ— կարճատև հորդ անձրև
Երիթանալ— չորանալ, գոստանալ, պնդանալ

Զ

Զաթի, զաթը (թրք.)— արդեն
Զալըմ (թրք.)— անգութ, անխիղճ
Զախրա— ձմռան պաշար
Զանար (թրք.)— անշուշտ, բնականաբար
Զանանդել— սարսափել, վախենալ, զարհուրել
Զայիֆ (թրք.)— նիհար, վտիտ
Զան— կռահել, կռահում
Զավալը (թրք.)— խեղճ, թշվառ
Զանգպան— կանացի երկար գուլպա, սոնապան
Զենաաթ (թրք.)— արհեստ, զբաղմունք
Զգածյալ— համակված, պարուրված
Զգայռում— ժայթքում
Զիան (թրք.)— վնաս
Զմելի— դանակ, գրչահատ
Զպուն— պարեզոտ, երկար զգեստ
Զոթնչ— զոռոց

Է

Էզանը— դեղագործ
Էգիյեթ (թրք.)— նեղություն
Էլ (թրք.)— օտար

Էժդեհեր— ամբարհամ, հսկա
Էկեր (թրք.)— եթե
Էնելե (թրք.)— շտապ, հապշտապ
Էնդի դեմեն— անդրաշխարհ
Էշկերե (թրք.)— ափաշկարա, բացեիբաց
Էոշյուր (թրք.)— տուրքի չափ, տասնորդ
Էսմրիդ մեջ— կյանքիդ մեջ
Էողի— կողք, մեջք
Էսկիճի— հնակարկատ, վերանորոգող
Էսկուկեթիկ— անճար, խեղճ ու կրակ
Էվել— ավելի
Էրթմիշ (թրք.)— թուլունի ծլվլոց
Էփել-թեփել— ափաթ-թափալ, ոչ մտացածին արարք
Էօթետեն (թրք.)— այն կողմից

Ը

Ըլ-էլ (ես ըլ—ես էլ, դուն ըլ— դուն էլ)
Ըխթիար (թրք.)— ծեր հալիվոր
Ըղձակաթ— սպասիկ փափագ, խանդակաթ
Ըյնի— ընկնի
Ընցածին— բնածին, ընդարույս
Ընդոստնել— ոտնակոխել, ոտնահարել
Ըռզակ (թրք.)— ուռեցվածք, մալ, մուլք
Ըստկցնել— սպիտակեցնել

Թ

Թա (թրք.)— մինչև
Թալթալ— տապլտկիլ
Թախըմ (թրք.)— կարգուսարք, խումբ նաև ծխափող
Թալկանար— նվազուն, մարվող
Թասլախ— տափակ, լայնաղեմք
Թավ— ժամանակ, միջոց
Թարաֆ եթրաֆ (թրք.)— շուրջ, շուրջ բոլոր, չորս կողմ
Թեզկեան— հաստոց, դազգահ
Թելթելիկ— եղունգի կողքին գոյացած թելանման միս
Թենեքե— կաթսա
Թեսլրմեց— հանձնվեց
Թեսլիմ— անձնատրություն, հանձնվել
Թերս— հակառակ
Թեֆ— դափ
Թրպխի (թրք.)— ճիշտ
Թրկիչ— մի տեսակ թթու խոտ
Թխպի, թղպա— դևի անուն
Թյուճնա (թրք.)— վաճառական, առևտրական
Թյուլ— շղարշ
Թմրուկ— ճախարակի մաս

Թենկանք— *թնկթնկոց, լաց*
Թենկոտ— *կնճռոտ, բարդ*
Թոաֆ *(թրք.)*— *զարմանալի, տարօրինակ*
Թոնաֆիեճի— *գալանտերային վերաբերող իրեր վաճառող*
Թոնրնկեց— *տեղատարափ*
Թոնախ— *եղունգ*
Թոշտուն— *ոստոստուն, թեթևակի, հարևանցի*
Թոսուն *(թրք.)*— *կտրիչ, վայելչատես*
Թորեթմիշ *(թրք.)*— *հյուծել*
Թոուն — *պանրի մեջ գոյացած մանր որդ*
Թուլումպանի— *հրշեջ, ջրհանկիր*
Թեապարիկ— *հեավոր հավերժահարս*

Ժ

Ժմեցնել — *հասնել, ժամանակին անել*
Ժոռատ— *ատամները թափած*
Ժպիրճ— *լիրբ, լպիրշ, անամոթ*

Ի

Իզիճ— *հրաման*
Ի խնդիր— *համար*
Իլլե— *մանավանդ, անպայման*
Ինշ խտար— *որքան*
Իշտան *(թրք.)*— *ախորժակ*
Իշտե *(թրք.)*— *ահա*
Իշյուճնի— *երրորդ*
Իսդեռիֆ— *հիստերիկ*
Իսոր— *ընդեղենի տեսակ՝ ճակնդեղ նաև պղպեղ*
Իտարե *(թրք.)*— *խնայողություն*
Իրինա *(թրք.)*— *խնդրանք*
Իցցուն— *հիսուն*
Իֆեֆ— *մետաքս*
Իրինճի *(թրք.)*— *երկրորդ*
Իֆլազություն *(թրք.)*— *սնանկություն*

Լ

Լաթեռնա— *նվագարանի տեսակ՝ երգիոնակ*
Լամբակ— *տղամարդկանց բաճկոնի օձիքի վրա բացված անցք՝ կոճկելու համար*
Լամուկ— *թուրքի կամ քրդի տղա*
Լաֆ *(թրք.)*— *խոսք*
Լաստիկ— *ռետին*
Լիստա— *ցուցակ*
Լիպիֆ— *լիկած, ապականած, թրջած*
Լիմաճ— *լրիվ, ամբողջ*
Լմենալ— *վերջանալ*

Լոլե— *կաղանդ, ամանոր, նոր տարի*
Լոլիկացյալ— *թրջված*
Լոզքար— *ծանր քար հողն տանիքը ամրացնելու*
Լոմլմել— *ծամել*
Լոպ— *թրթուրի մի տեսակ*
Լորուստ— *դոհհիկ երգ*
Լրություն— *ամբողջություն, լիություն*
Լուսերփնել— *լուսերանգվել*
Լուսունկան— *լուսնկա*

Խ

Խազ— *սագ*
Խազա— *փորձանք*
Խազասրզ— *առանց փորձանքի*
Խաթ *(թրք.)*— *հարկ, հարկաբաժին, ծալք*
Խաթե *(թրք.)*— *փորձանք*
Խաթրխ— *հացի հետ ուտվող սառը խորտիկ (երշիկ, պանիր և այլն)*
Խաթրլի *(թրք.)*— *պատվավոր*
Խալբսավ— *վերջացավ*
Խաղախորդ— *կաշի դաբաղող*
Խասմա *(թրք.)*— *դաշույն*
Խանվենի— *սրճեփ*
Խայիպ ըրի— *կորցրի*
Խայծղուն— *խեժանյութ*
Խանդանֆ— *նախանձ, չարակնություն*
Խաշլբղ *(թրք.)*— *ծախսելիք գումար*
Խաչախնի— *ծխախոտի մաքսանենգ*
Խապա— *կոպիտ*
Խառախոլ— *ոստիկանատուն*
Խառնամանյալ— *խառն-խուռն, խառնակ, շփոթ*
Խավի— *հաստատ, ամուր, տոկուն*
Խարահեեեեեեեմ *(թրք.)*— *սնաղծոխք*
Խելեմ (քալեմ) *(թրք.)*— *գրիչ, մատիտ*
Խելաֆի— *խելոք*
Խելխոլ— *խենթ, հիմար*
Խեեեշ— *ցոփ-հեշտասեր*
Խեցեվենիռ— *հասարակական վճռով արտաքսված*
Խզմեթ *(թրք.)*— *ծառայություն*
Խզտել— *պատռել*
Խբրս *(թրք.)*— *բարկություն, զայրույթ*
Խիպ— *ամոթ, ամոթանք*
Խլավուզ— *հետախույզ, առաջնորդող, միջնորդ*
Խնին— *բամբակի կեղծուղ*
Խնդվառն— *թովուն*
Խնծիղ— *հրճվանք, ուրախություն*

Խնծղալ— ծիծաղել
Խշխիշ— բարձր տաքություն, տոթ, խիստ շոգ
Խոզիքուկ— խոտի տեսակ, որի հունդը փրչոտ է
Խոքություն— հիվանդություն, տկարություն
Խոլայ (Թրք.)— հեշտ, դյուրին
Խոլեի— հսկիչ, մաքսանենգներին հալածող ժանդարմ
Խոնապաշի (Թրք.)— տանուտեր, գյուղապետ
Խոշ— անուշ, դուրեկան, քաղցր
Խոռոզ (Թրք.)— աքլոր, աքաղաղ
Խոտոնց— խոտհունձ
Խոբել— գողություն անել, խաբեբայել նաև պակասեցնել, նվազեցնել
Խորխ— լորձունք նաև օձի կաշու հանելը
Խորհրդահեղձ— շատ խորհրդավոր
Խոֆած— ցնցած, զառամած
Խոդոտիլ— խուտուտ տալ, խլրտել
Խրիկ— հավի ծանր ոտնակապ
Խրինա (Թրք.)— ասեղնազարդ
Խուզում (fուզում) (prf.)— գառնուկս, ձագուկս
Խումաշ— կերպաս, թանկարժեք կտոր

Ծ

Ծամոցք— ծամելիք
Ծվեռել— ծվեն-ծվեն անել, պատռոտել
Ծպտանք— արտաքին տեսքը փոխել (ծպտվել)

Կ

Կազ (Թրք.)— նավթ
Կաղակուրտել— կաղալով քայլել
Կաղամար— թանաքաման
Կայտոռիլ— ցատկոտել, կայտառել
Կաշմբուռն— հուժկու, ուժեղ
Կառսոն (Թրք.)— տղա (մատուցող)
Կասկամ— բու
Կավաս— ավազի թումբ
Կարեկ— կորեկ
Կեզինեի (Թրք.)— նախերգանք, նվագի վրա եղանակ պտորող
Կեղերչ— կաղկանձ, ցավագին տրտունջ
ԿեՀիշկեկ (Թրք.)— լայն, լայնկեկ
Կեռզլիկ (Թրք.)— ակնոց
Կեռզյում (Թրք.)— աչքս, սիրելիս
Կ'սորե (Թրք.)— համեմատ, համաձայն
Կեռեռ (Թրք.)— ջահել, երիտասարդ
Կետել— անասունների թունավոր ճանճից փախչելը
Կերպիզ իվիք (Թրք.)— մի կերպ, մի գնով
Կզկզալ— դողդոջալ, կմկմալ, կակազել

Կզեիկ— բամբակի ծվեն
Կրորեռեռաս— կհանգստանաս, կլավանաս
Կլմանի— կնմանի
Կզտանք — տոփանք, ցանկություն, բորբոք
Կյոզեթմիշ (Թրք.)— ուշադիր հետևել, ուշադրություն դարձնել
Կյորե (Թրք.)— համեմատ, համաձայն
Կյուվենմիշ (Թրք.)— ապավինել, վստահել
Կբզա— բաժակ
Կիճ— խայթոց
Կնճռում— ճերմակ կզաքիս
Կոպիճ— քարի մանրուք, խիճ
Կոտիկ— հողե փոքր աման
Կավոծուծ— խոշոր մողեսի տեսակ
Կսկուծ— պինդ, ամուր
Կսկուռ— փափուկ, սպիտակ հաց
Կտուց— կույտ
Կրկռել— քրքրել, փորփրել, տնտղել, որոնել
Կունեռուկլոր— գունդուկլոր, թմբլիկ

Հ

Հալա— հորաքույր
Հախ— իրավունք
Հաճ— հաճելի, գոհ, հավան
Համբա— ունևոր, հարուստ
Համրոլոր— տարտամոլոր, կամաց-կամաց, դանդաղ
Համտերտ— վշտակից, միանման ցավով տառապող
Հայլազ (Թրք.)— անպետք, ծույլ
Հայել— նայել
Հայրատ (յայրատ) — վավաշոտ, պագշոտ, ցանկասեր
Հանկուցիշ— հրապուրիչ, հմայիչ
Հանեռուս (յանեռուս) — անհունության մեջ, հավերժ
Հարամշանու— ոչ արդար վաստակ
Հարեն— հայրեն, ոտանավորի տեսակ
Հարկենք— տուրքեր, տուրքերի տակ թողնել
Հարկինք— կոչունք, խնջույք, կերուխում
Հարճափել (հափճափել) — հափշտակել, խլել
Հավանմա— թռչունների թռիչքից գուշակություն անող
Հավա (Թրք.)— եղանակ
Հավ— նախնի, պապ
Հափրանք— կշտություն, հագուրդ, նաև զզվանք զեխ կյանքից
Հելպեթ (Թրք.)— անշուշտ, իհարկե
Հեկրո— հակառակություն
Հեշտախտություն— վավաշոտություն, ցանկասիրություն
Հեռկելե— նախիր, հոտ
Հեռասկոզմ— ետևի կողմ

Հեռտ— համարձակություն
Հերտկել— հեռանալ, կորչել
Հերքես, հերքել (թրք.)— ամեն մեկը, յուրաքանչյուրը
Հափիմիզին տե տինի ու էօմրի (թրք.)— բոլորիս հավատքն ու կյանքը
Հիլլե— ախտ, ցավ
Հիշ— բնավ, երբեք, ոչինչ
Հյուքյումեթ (թրք.)— կառավարություն
Հնոնուք— մտատանջություն, հոգս, երկբայություն
Հողկուտ— հողակույտ
Հոտոտ— հոտավետ
Հոսնական— պոռնկական
Հովարտա— առատաձեռն, շռայլ, մսխող, ուտող, խմող
Հովկուլ— դատարկապորտ, դատարկախոս
Հովցուկ— տաք ջուրը զովացնող, սառը ջուր, նաև դեռատի
Հորս (յորս)— երեսնիվեր մեջքի, կոնակի վրա պառկել
Հուղկահար— կողոպտիչ, ավազակ
Հունա— այնտեղ
Հուսա— այստեղ
Հուսկ— վերջին, ամենավերջին
Հրիտակ— կտակված ժառանգություն

Ձ

Ձառացեմ— խոժոռադեմ, տխրադեմ
Ձոն— ձյուն

Ղ

Ղաֆիլ (թրք.)— անակնկալ

Ճ

Ճաճրմ— հոգիս
Ճապուկ— կակուղ, դյուրաթեք, դյուրաշարժ
Ճառուտ— փոքրիկ բահ
Ճավռաշ— թուի
Ճեզայիր— արևելյան նվագի եղանակ
Ճեմիշ (թրք.)— արտաքնոց
Ճետ— արու զավակ ժառանգորդ
Ճինս (թրք.)— ցեղ, տոհմ
Ճրլխ (թրք.)— հոտած, փչացած
Ճիեր (թրք.)— լյարդ, սև թոք
Ճիպար— ցավացած տեղը լաթով դեղ դնել
Ճիրան— ջեյրան
Ճյուղպեն (թրք.)— աղամարգու լայն ու երկար վերարկու՝ թուրքական
Ճուղպանց— բույսի մի տեսակ
Ճուկնուկ— հասակով մեկ ուղիղ բարձրանալը
Ճառակ— որձ բազե
Ճոճռ— բամբակ մաքրող մեքենա

Մ

Մալամաթ (թրք.)— թափթփված, ցրված, տարածված
Մախսուս (թրք.)— դիտմամբ, հատկապես
Մաղասուր— լորձաթաղանթներից հոսող լորձանք, խորխ
Մանառոս— նորափեսային ընկերացող երիտասարդ
Մամուկ— սարդի մի տեսակ և բույսի մի տեսակ
Մայրուք— մանրուք
Մանկուր— անասունների վզից կախված հաստ փայտ, չփախչելու համար
Մանզր (թրք.)— դրամի մանրուք
Մարզակ— փոքր տեսակի գերան
Մարախ— մորեխ
Մարիֆեթ (թրք.)— շնորհք, շնորհալի վարմունք
Մեխանեճի— գինեվաճառ
Մեղեսիկ— թանկագին քար, բաց մանուշակ
Մեղկ— թույլ, անկորով
Մենիտին— թուրքական դրամ, 100 զորուշ
Մեյեր (թրք.)— մինչդեռ
Մեշհուր (թրք.)— նշանավոր
Մեսարիֆ (թրք.)— ծախս
Միսաֆիր (թրք.)— հյուր
Մեսք (թրք.)— հողաթափ
Միլլեթ (թրք.)— ազգ, ժողովուրդ
Մինասիպ (թրք.)— պատշաճ, հարմար
Մինդեր (թրք.)— բազմոց
Մոռշուփա (թրք.)— թաս, բաժակ, գավաթ
Մորուք— մորուքավոր
Միրաս (թրք.)— ժառանգություն, բաժին
Մծղնատ— պիղծ
Մղմղուկ— մորմոք
Մյա՜— մեղա՜
Մոլատել— մոլեգնել, կատաղել
Մոռենի— մորենի
Մուրանալ— ճահճանալ
Մուլլախ (թրք.)— անպատճառ, անպայման
Մուզեվիրություն (թրք.)— մատնություն, լրտեսություն
Մույնք— բարեձևություն, վայելչություն
Մռուզ— խոժոռ, մռայլադեմ
Մրեզ— փոքրիկ ոչիլ
Մրզցնել— փոշիացնել, փշացնել
Մրճռտ — մրոտ, մուր քսված
Մրշատ— փոշիացած

Յ

Յազի (թրք.)— ճակատագիր
Յազմանը (թրք.)— կանացի գլխաշոր պատրաստող համ վաճառող

Ցախա (Թրք.)— օձիք
Ցաշամիշ (Թրք.)— ապրած
Ցատիկյար (Թրք.)— հիշատակ
Ցավրում (Թրք.)— զավակս, ծագումս

Ն

Նազարաթ (Թրք.)— կրկներգ
Նազիֆ— նուրբ
Նամետ— թաց, խոնավ, տամուկ
Նայատ— ջրային ոգի, հավերժահարս
Նասրլ (Թրք.)— ինչպես
Նավի— խայթող, թունավոր ճանճ
Նաված— նայվածք
Նմա (Թրք.)— նրա
Նոթի— անոթի, սոված
Նե էսիրտե զալտրֆ (Թրք.)— ինչ օրի ընկանք
Նեֆես (Թրք.)— շունչ
Նր— որ և թե շաղկապների դերն է կատարում։ Երթամ նը—որ գնամ, թե գնամ
Նրկե— այնտեղից
Նիֆահ (Թրք.)— պսակ, պսակադրություն, մահմեդականների մոտ
Նորբնձյուղ— նորաբողբոջ
Նույնենտայն— խկույն, շուտով
Նուֆուզ (Թրք.)— հոգի, շունչ, ընտանիքի անդամ

Շ

Շախա (Թրք.)— կատակ
Շանապ (Թրք.)— բազե
Շանոֆրամ (Թրք.)— մեխակ
Շանպրուկ— ծաղիկի տեսակ
Շադփադփ— դատարկախոս, շաղակրատ
Շայեթ երկեր (Թրք.)— եթե հանկարծ
Շրմենտրֆեռ (Թրք.)— երկաթուղի
Շրմինե (Թրք.)— վառարան, բուխարի, ծխնելույզ
Շիշ սֆվրի ֆեշե (Թրք.)— շամփուրի պես սուր թաղիք (գլխարկ)
Շլլիֆ— շլինք, պարանոց
Շյմար— խոսակցություն, շփոթ, կոիվ
Շյուսե (Թրք.)— կոշում
Շյուպեե (Թրք.)— կասկած
Շեվին— շները
Շողզում— շաղգամ
Շողիֆ— լորձունք
Շողոտ— լորձունքոտ
Շեղականֆ— կոտրտվել, նազեր անել, ինքն իրեն ցույց տալ
Շվոտ— ալք
Շուշտակ— կինը մեռած քահանա, որ վարդապետ է դառնում

Շուտիկ— վերք
Շուտվտանֆ— ուրախ, սիրալիր վերաբերմունք
Շուֆուր (Թրք.)— փառք տալ

Ո

Ողորմ— ողորմելի, խեղճ, թշվառ
Ոսիճ— փուչ, դատարկ
Ոռիճ— ագռավ

Չ

Չալվաղու— բրդոտ, մազոտ
Չաղա շոլախ (Թրք.)— երեխաներ
Չամշակ— վայրի խոտ
Չափա (Թրք.)— բրիչ
Չենկ— կոշնակ, զանգ
Չեկեկ (Թրք.)— ծնոտ
Չեշիտ (Թրք.)— տեսակ, կերպ
Չեֆիլմեզ տեռտ տեռլեռ պունա (Թրք.)— անտանելի դարդ կասեն սրան
Չեֆլեմպիճ (Թրք.)— վայրի ծառի պտուղ՝ ոսպի ձևի, մուգ կանաչ
Չիքի (Թրք.)— ճմրթել, ճմռել (լվացքի ժամանակ)
Չողրա (Թրք.)— փայտյա սրվակ
Չոճուխ (Թրք.)— երեխա
Չոռպա (Թրք.)— ապուր

Պ

Պազի պազի (Թրք.)— երբեմն երբեմն
Պալրխճի (Թրք.)— ձկնորս
Պակուցյալ— սարսափահար, զարհուրած
Պաղրքի շաղրքի (Թրք.)— գոռում-գոչում
Պաղպանջի— այգեպան, բաղվանչի
Պանդույր— ապուշ, անխելք
Պաշխա (բաշխա) (Թրք.)— ուրիշ, այլ
Պատար— լիություն, կատարելություն
Պարույր, պարույտ— գալար, բոլորակ, ոլորք
Պարույկ— շրջան, բոլորակ
Պարտկել— տեղավորել
Պաֆ— պահք, պաս
Պեզիրկեան (պարս.)— վաճառական
Պեզիկ (Թրք.)— թղթախաղի տեսակ
Պեթեր (Թրք.)— ավելի վատը, վատթարը
Պելա (Թրք.)— փորձանք
Պելել (Թրք.)— ձրի
Պեյե (պեյին) (Թրք.)— ուղեղ
Պեսպրիկ— տիկնիկ, խաղատիկնիկ
Պեսիկ— հասակակից
Պերխուդար— բարությամբ վարձատրվել
Պիլե (բիլե) (Թրք.)— անգամ

Պիլե-պիշե (Թրք.)— գիտենալով
Պիլիա— փոքր քարե գնդակ (խաղալիք)
Պիշիմ (բիշիմ) (Թրք.)— տեսք, կերպարանք
Պիսպիթյուն (Թրք.)— ամբողջովին
Պոզմա (Թրք.)— շինծու, կեղծ
Պոյպոս— բոյ-բուսաթ
Պոնոուխ— ուլունք
Պոշ (բոշ) (Թրք.)— դատարկ, անպետք
Պոիկան— գլխարկի տեսակ
Պոիշ— թղթախաղի մի տեսակ
Պտեր— վայրի ձարխոտ
Պրոպատիկե— պրոպատիկեի ավազան (ըստ քրիստոնեական ավանդության այդ ավազանը մտնող անդամալույծները բուժվում են)
Պուղատա (Թրք.)— լվացք
Պուճտան սոնրա (Թրք.)— սրանից հետո

Ջ

Ջլթիկ— վրան գլուխը պատառոտված, հին շորերով

Ռ

Ռեզիլ (Թրք.)— խայտառակ
Ռդտենկոբ— տղամարդու զգեստ
Ռոմ— անկյունաքար
Ռուպ— ռուբ, դոշաբ

Ս

Սաբան (Թրք.)— պարսատիկ
Սախ— հեկ, սոնապան, սրունքի պահպանակ, մեծ աման
Սալթա և բոբոր— տղամարդու հագուստի տեսակ (Պոլսի ձկնորսների սովորյա հագուստը)
Սայա (Թրք.)— շնորհիվ
Սայմի (սանմի) (Թրք.)— իբր թե
Սան— կաթսա
Սարխոշ (Թրք.)— հարբած
Սարփինա (սարբինա)— որթի ճյուղերը պահող ձող
Սափքմիշ (Թրք.)— խելքը թոցրած
Սափլի— կոթով փոքր դանակ
Սեբրի— հագուստի տեսակ
Սելե— ուռիով գործած փոքրիկ կողով
Սեյր (Թրք.)— դիտել
Սեպապ (Թրք.)— պատճառ
Սեպված— համարված, կարծված
Սերկելի— փռված-տարածված
Սերսեմ— հիմար, անխելք, ապուշ
Սեֆիլ (Թրք.)— խեղճ

Սբրդը պյուրուն (Թրք.)— եղած-չեղածը, ամբողջը
Սկկե— այստեղից
Սվոր— սրան
Սբրա (Թրք.)— հերթ
Սբարվել— պատսպարվել
Սիզանք— հպարտությամբ, գոռոզությամբ քայլել
Սլուկ— տգրուկ
Սյուտայի— խալաթ
Սմսեղ— խորամանկ, տականց գործող
Սյուսլի—սալբանաբլի (Թրք.)— սեթևեթանքով, պչրանքով
Սյուսլա բուտմա (Թրք.)— զարդարուն, ապարանչան, ալորուն
Սնդուս — մեռաքսյա փայլուն կերպաս
Սողկտալ— սողոսկել
Սողքալ— սողալով ընթացք առնել
Սոֆի (սոֆու) (Թրք.)— մոլի
Սուկես— սիսեռի կես
Ստամբակ— փողոցային տղա
Ստրջանք— ափսոսանք, զղջում, ապաշխարհություն
Ստև— մաղ՝ այծի, ուղտի
Սուս (սյուս) (Թրք.)— զարդ, զարդարանք
Սվլել— կուչ գալ, կծկվել, լռել մնալ
Սևտա (Թրք.)— սեր
Սևտալամիշ (Թրք.)— սիրահարություն, սիրահարված

Վ

Վարանք— վարանում, շվարում, երկմտություն
Վարլի վարաբլի (Թրք.)— ունևոր, հարուստ
Վարուժան— արու թռչուն
Վիրտ— միշտ, շարունակ, անընդհատ
Վնկանան— վիճակ հանող, վիճակահանված (Համբարձման տոնին)

Տ

Տախտա (դախտա) (Թրք.)— վայրկյան, բոպե
Տալ (Թրք.)— ճյուղ
Տամենան— հաստափոր սրվակ, մեծ շիշ 3—4 լիտր տարողությամբ
Տամլա— տամլա սել օլուր, ախար կիտեր կյոլ օլուր (Թրք.)— կաթիլ-կաթիլ հեղեղ է լինում, հոսում լիճ է դառնում
Տամնի (Թրք.)— կտուր սարքող
Տանբել, դանտել— ժանյակ
Տավի տալաբա (դավի դառաբա) (Թրք.)— վեճ, աղմկալի դրություն
Տավրանմիշ (Թրք.)— համարձակվել
Տատ (Թրք.)— համ
Տարակա— տարագիր
Տարմ— խումբ, երամ

Տիլիխանլի (Թրք.)— երիտասարդ
Տեղացու— նոր կին, կնոջը փոխարինող
Տե՛յ գիտի— հե՛յ գիտի (բացականչություն)
Տեեր— տանիք
Տեվե (Թրք.)— ուղտ
Տետե— մայրիկ
Տետիմ տեմետիմ (Թրք.)— ասած-չասած, ասեցի-չասեցի
Տերե— ձոր
Տեփուր— փայտե սինի
Տրլրռում— բժժանք, կախարդանք, հուռութք
Տիլեկ (Թրք.)— աղաչանք, խնդրանք
Տինճ (դինջ) (Թրք.)— հանգիստ, խաղաղ
Տիսշիմիշ (Թրք.)— հորդած
Տիվալե— ասեղնագործության տեսակ
Տիրվրտան— տերերի
Տյուզեն (Թրք.)— ուղղվիր
Տյուպյուն— հեռադիտակ
Տոշկուկ — բույսի տեսակ
Տորտրանք— դանդաղորեն շարժվել
Տոֆյուման— դոկումենտ, փաստաթուղթ
Տրապեզ— սեղան
Տուպարա (դուբարա) (Թրք.)— խաբել, խաբխբել
Տուրմ— թոների հողե կափարիչ
Տուրուկ— տոպրակ, պարկ

Ր

Ռեժի — ծխախոտի մենաշնորհի ընկերություն Թուրքիայում (առաջներում)
Ռեշեթե (Թրք.)— դեղատոմս
Ռինա— խնդրանք

Ց

Ցռուկ— քիթ, դունչ
Ցրյխված— ցրիվ գալ, մտամոլոր դառնալ

Ու

Ուզածիդ խտար— ուզածիդ չափ
Ուծանալ— այլասերվել, ձուլվել
Ուղխորեն— ամբողջապես, հեղեղի նման
Ուղտուրալ— անպետք
Ումեռ (ումուտ) — հույս
Ույռուրմիշ (Թրք.)— մոգոնված, հնարված
Ուն— բուռ
Ունուֆազ (Թրք.)— փոքր, մանր
Ուշախ— ծառա, աղախին
Ուր— կթանի ծիծ (կովի)

Փ

Փակիշ— դռան սողնակ, նիգ
Փառփառ— փայլուն, շողշողուն
Փարտել— լայնորեն բացել
Փեռեկտված— պատառ-պատառ եղած
Փեսամանտիկ— փեսային ուղեկցող երիտասարդներ
Փերեզակ— շրջող մանրավաճառ
Փեֆ աղեկ (Թրք.)— շատ լավ
Փերտե (Թրք.)— վարագույր
Փիանզո (Թրք.)— վիճակախաղ
Փին— բիճ, ընկեցիկ
Փիր— վարպետ, ուստա, նաև մեծ
Փխտանալ— մակարդվել
Փյուսկրլսրզ (Թրք.)— անպուխ, ծոպ չունեցող
Փողար — փողահար, փող փչող
Փրոտ— բողոքական
Փուլ— փլվել, կործանվել
Փուլիշա— կանացի ճակատազարդ

Ք

Քաղանֆ— քաղհան
Քամ— քամած, մնացուկ
Քամզոլ— կիսագոլ, գաղջ, տաք չուրը սառով պաղեցնել
Քարփակ— արտի միջի քարակույտ և անշաղախ պատ
Քարյոտ— նավթ
Քեծ— քած, էգ
Քեճյա (Թրք.)— գյուղապետ, ռես
Քեհրզար— սաթ
Քեսկին նեվազիլ— ուժեղ հարբուխ
Քեղրթել— կեղևել
Քեվրան— քարավան
Քեփազե (Թրք.)— խայտառակ
Քրզրմ, կրզրմ— աղջիկս
Քրտուկ— հնդկահավի փքվելը և կոտրատվելը
Քի-որ — որպեսզի
Քիպար— հպարտ, նուրբ, նազիկ, նրբիրան
Քիսե (ֆեսե) (Թրք.)— քսակ
Քիվկիր (ֆյավկիր) (Թրք.)— կեբակրի քափը քաշող մետաղյա աման
Քղլիկ— գյուղական հագուստ
Քմիլ— քամիլ
Քյար (Թրք.)— օգուտ, շահ, վաստակ
Քներց— քունք
Քնծոր— իբր թե
Քոքանակ — ներքնաշապիկ
Քորուկ— հարավակողմի շույտ

Քվքվանք— *սրտի խորքից հեծեծանք*
Քումայթ— *արմավագույն, մուգ կարմիր գույն*
Քրավաք *(Թրք.)*— *փողկապ*
Քրքցնել— *փշրել, մանրել, քրքուր դարձնել*

Օ

Օթեկ— *քարթու*
Օլանեա *(Թրք.)*— *առձեռն ունեցվածք*
Օլորտել— *ման գալ, պտտել*
Օղլում— *որդիս, տղաս*
Օղիկ-օղիկ— *գալարվելով սպառվել, հատնել*
Օղտուրմիշ *(Թրք.)*— *կարդացնել տվեց*
Որ— *որ (շաղկապ)*
Որան— *օրորոց*
Որբանա (orբաննա) *(Թրք.)*— *միջնեկ*
Որվեցա— *օրորվեցի*

Ֆ

Ֆախ *(Թրք.)*— *թակարդ*
Ֆախատ— *սակայն, բայց և այնպես*
Ֆառշ— *արտահայտություն*
Ֆարիզի *(Թրք.)*— *տարբեր, չոկվող*
Ֆարդին *(Թրք.)*— *կռահել, գուշակել*
Ֆիշենկ— *փամփուշտ*
Ֆոխարե, ֆաւfարե— *աղքատ, խեղճ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեք դիմանկար — Կ. Դանիելյան 3

ԹԼԿԱՏԻՆՅԻ
(Հովհաննես Հարությունյան)

Պատմվածքներ

Էմիլե 26
«Վասն մեղաց մերոց» 29
Այգիս փշենին 32
Ճախրակին առաջը 39
Վերջին տեղը 42
Տանիքին աղջիկը 46
Մե՞ղքը, մե՞ղքը 49
Պատկերին տղան 53
Ինչպե՞ս կնպաստեն 57
Դրացիներս 62
Կավը չի փոխվիր 70
Գավաթ մը միայն 74
Ո՞վ աղոթեր 98
Փոքրիկ երազատեսը 103
Բամպակ բերան 105
Ձեր խելքին չի պակիր . . . 112
Բարենիշ մը 116
Ճնճղուկների դատաստանը . . . 124
Ամառին արմաղանը 127
Ըսե՛ ինծի, ի՛նչ կա 136
Ա՜խ, աստվա՜ծ, աստվա՜ծ . . 142
Տուն գարձը 145
Կնամա՞րտ թե ցլամարտ . . . 147

Քրոնիկներ

Գիծակներուն ձայնը 162
Պատկերներ 169
Հին հավատքս 175
Գեղն ու ձմեռը 179
Դեպի արևը 181
Արևս տար, մահս խրկե . . . 187
Մագաղաթեն ալ հին, թանկագին 198
Քարե գիրքեր 206
Պտույտ մը գերեզմանոցին մեջ . 214
Կուլիկ ու վարժապետը . . . 217
Հիշատակի հայ գիրին զույգ մեծ տոներուն 223
Ժողովրդական զվարթ խոսքեր . 233

Գեղի նամակներ

Գեղի նամակներ 236
Գյուղացի կիները 249
Ա՜խ, Հոի՛փս, հոգիս... . . . 252

ԼԵՎՈՆ ԲԱՇԱՅԱՆ

Պատմվածքներ

Հմայաթափ 258
Ղալաթիո «բեսդ»-ը 275
Դրացուհին 286
Խաչափուհին 292
Այս է եղեր 297
Գյուղենիի վարպետ 311
Վերջին համբույրը 318
Անժել 325
Նոր զգեստը 332
Պալբխեի Գևորգ 336
Տերտերին ուխտը 345
Սիրո գիշեր 354

Միջերկրականի հիշատակներ . . 355

Շերամի որդերը . . . . . 375 Երկու կիներ . . . . . .

Արմաշի ուխտագնացությունը . 381

Զրի . . . . . 413 Մանրանկար 43
Փափուկ մարդիկ . . . . . 417 Կաղանդ 43
Զարթոնք . . . . . 420 Ցեղին ձայնը 44
Աղավնիները . . . . . 428 Լուտ 452
Կաղանդչիքը . . . . . 433 Թուրքահպատակի մը արկածները . 45

ԱՌԱՆՁԱՐ

(Գյուլումճյան Միսակ)

Պատմվածքներ

Մորուքի սանտրը . . . . . 478 Նորավեպին նորավեպը 52
Քուրդի վաճառականությունս . . 493 Հոսհոսն ու ինտելիգենտը . . . 5
Կախաղանեն... ամուսնություն . . 511 Հոգուս համար 5
Երկու պատկեր . . . . . 518 Տասը տարի ետքը 57
Վշտի ծիծաղը . . . . . 525 Բառարան 61

Թլկատինցի. Լևոն Բաշալյան, Առանձար

ԵՐԿԵՐ

ТЛКАТИНЦИ, ЛЕВОН БАШАЛЯН, АРАНДЗАР. Сочинения
(На армянском языке) Издательство «Советакан грох», 1982

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան, *նկարիչ՝* Մ. Ռ. Սասոյան, *գեղ. խմբագիր՝* Գ. Խ. Գյուլամիրյան, *տեխ. խմբագիր՝* Ս. Մ. Սիմոնյան, *վերստուգող սրբագրիչ՝* Հ. Ա. Կարապետյան

ИБ—2149.

Հանձնված է շարվածքի 17. 8. 1981 թ.։ Ստորագրված է տպագրության 15. 3. 1982։ Չափսը 60×84 1/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 30,8 հրատ. մամ., 36,27 պայմ. տպ. մամ.։ Պատվեր՝ 1325։ Տպաքանակ՝ 51000։ Գինը՝ 2 ռ. 90 կ.։ «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. А. Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.